



ԱԼԵՔՍԱՆԴԻ
ՄԱԿԵԴՈՆԱՅԻ

9(47.525)
6h-87

ԱԼԵՔՍԱՆԴԻ ՄԱԿԵԴՈՆԱՅԻ

2350



ԵՐԵՎԱՆ «ՀՍՏՍՍՏՍՆ» 1987



Ռուսերենից թարգմանեցին
Ա. Ե. ՍԱՐԳՍՅԱՆԸ
Ռ. Բ. ՄԱՎԻՍԱԿԱՆՅԱՆԸ
Խմբագիր՝ Ռ. Մ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ա.Ռ.Ս.ՋԱԲԱՆ

Ա. 870 Ալեքսանդր Մակեդոնացի /Ռուս. թարգմ. Ա. Ե. Սարգսյանը, Ռ. Բ. Մավիսակյանը.— Երև. Հայաստան, 1987.— 654 էջ, 1 թ. նկ., 1 քարտեզ:

Առաջին անգամ աշխարհարար մեկ հատորով ընթերցողին ենթաներկայացնում Ալեքսանդր Մակեդոնացու կյանքին և արշավանքներին նվիրված անտիկ պատմության դասական աշխատությունները:

Գրքում ընդգրկված են Արիանոսի «Ալեքսանդրի արշավանքը» և Ռուֆուսի «Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը» աշխատությունները: Հրատարակվող գրքում կան շատ հետաքրքիր տվյալներ, որոնք վերաբերում են Հայաստանի և հարևան երկրների պատմությանը: Այդ երկերը ավելի քան երկու հազար տարի դրավել են պատմաբանների և փիլիսոփաների ուշադրությունը: Գիրքը հաղեցած է անհրաժեշտ մեկնաբանություններով:

Հրատարակվում է պատմաբանների, ընթերցող լայն շրջանների համար:

Ա. 0504010000
701 (01) 87 61—88

ԳՄԴ 63.3(0)3



Սույն գրքով առաջին անգամ հայ ընթերցողին են ներկայացվում Ալեքսանդր Մակեդոնացուն նվիրված պատմական երկու աշխատությունների՝ աշխարհաբար թարգմանությունները՝ մ. ր. II դարի հույն պատմիչ Արիանոսի Փլաբիոսի «Ալեքսանդրի արշավանքը» և առաջին դարի հռոմեացի պատմիչ Կուրցիուս Ռուֆուսի «Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը»:

Հույն պատմիչ Արիանոսը (մոտավորապես մ.ր. 95—180) եղել է իր ժամանակի նշանավոր մարդկանցից մեկը. նա ստացել է հիմնավոր կրթություն, աշակերտելով ստոյիկ փիլիսոփա Էպիկտետոսին: Արիանոսի կենսագրական մի շարք տվյալներ հավաստի են. զիտեմք, որ նա զբաղեցրել է բարձր պաշտոններ, զբել է աշխարհագրական, պատմական, ռազմական, փիլիսոփայական և այլ բնագավառներին վերաբերող բազմաթիվ աշխատություններ (հմմտ. ՀՍՀ, հ. 2, էջ 59), բևե դրանց մեծ մասի վերնագրերն են միայն հասել մեզ:

Ներկա գրքով նախ տրվում է Արիանոսի Փլաբիոսի «Ալեքսանդրի արշավանքը»: Աշխատության վերնագիրը հայերեն կարելի է բարգմանել նաև «Ալեքսանդրի անաբասիս», ինչպես որ տրվում է ՀՍՀ հանրագիտարանում, բայց թարգմանիչները հիմք են ընդունել ռուսերեն թարգմանության «Поход Александ-

բա» ձեր, ընդունելով, որ *արշավանք* բառը շատ ավելի մատչելի է ժամանակակից ընթերցողին:

«Ալեքսանդրի արշավանք» աշխատությունը բաղկացած է յոթ մասից (ինչպես հեղինակն է գրում՝ զբից): Ի՞նչ սկզբնադրյալներ է ունեցել Երկրորդ դարի պատմիչը՝ Ալեքսանդրի կյանքը և արշավանքի մանրամասները շարադրելիս: Նա ամենից առաջ հենվել է ինչպես աշխարհակալի նամակների, նրա զորավարների հաղորդած տեղեկությունների, այնպես էլ՝ արժույթի հիշատակարանի վրա: Ահա քե ինչու Արիանոսի գիրքը Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների պատմությունը ուսումնասիրողների համար դարեր շարունակ եղել է հույժ արժեքավոր և վստահելի մի աղբյուր, որ միաժամանակ մեծ արժեք է ներկայացնում նաև հայոց պատմության տվյալ շրջանը հետազոտողների համար: Աշխատության մեջ ստույգ տեղեկություններ են հաղորդվում Ալեքսանդրի ուղևորության մասին: Այս աշխատության մեջ հարուստ տեղեկություններ կան նաև Միջին Ասիայի հնագույն ժողովուրդների մասին: Քարգմանության համար հիմք է ծառայել 1962 թ. ուստերեն ակադեմիական հրատարակությունը, որը նվիրված է եղել հայազգի նշանավոր գիտնական, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտ Հովսեփ Օրբելուն:

Կենսագրական սուղ տվյալներ են մեզ հասել հռոմեացի պատմիչ Կուրցիուս Ռուֆուս Քվինտուսի մասին: Անհայտ են նրա ինչպես ծննդյան, այնպես էլ մահվան րվերը, քեև անվիճելի է, որ Ռուֆուսն առաջին դարի պատմիչ է: Կուրցիուս Ռուֆուսի «Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը» ամբողջությամբ չէ, որ հասել է մեզ: այս աշխատությունը բաղկացած է եղել 10 մասից (զբից, ինչպես հնում ընդունված էր սեսի), որի առաջին երկու մասերը չեն պահպանվել: Մեզ հասած հաջորդ ութ զբերը նույնպես լրիվ չեն ավանդվել: Նրանցում առկա են պակասող մասեր, որոնք երևում են շարադրանքից: Անտեսելով պատմիչի հոետորաշունչ ոճը, լեզվական հանախաղեպ խնդրումները, ուշադրությունը պետք է

սեննել ուղղակիան դեպքերի նկարագրության վրա, որ տրվում է ամենայն մանրամասնությամբ: Աշխատության մեջ, ինչպես և Արիանոսի՝ գործում, Ռուֆուսը կարևոր տեղեկություններ է հաղորդում Մակեդոնացու ժամանակաշրջանի (մ.թ.ա. IV դար) Հայաստանի մասին: Այնպես որ այս աշխատությունը ևս օգտակար կլինի հայոց պատմության հին շրջանով հետախոսողներին:

Սույն նախաբանում մենք նպատակ չունենք կեննել այն հարցը, քե ինչպիսին է պատմիչների վերաբերմունքը նկարագրվող դեպքերի և առաջին հերքին, բնականաբար, Ալեքսանդր Մակեդոնացու նկատմամբ: Այդ ամենի մասին ընթերցողը կիմանա զբի ընթերցումից. օրինակ, Ռուֆուսը Ալեքսանդրի հաջողությունները ոչ քե Մակեդոնացու տաղանդին է վերագրում, այլ պարզապես բախտին և այլն: Ժամանակակից ընթերցողի համար անտիկ պատմիչների գործերը արժեքավոր են ամենից առաջ հաղորդած հավաստի տեղեկություններով, իսկ այդ առումով հայ ընթերցողին ներկայացվող սույն զբի երկու աշխատություններում էլ, ինչպես նշվեց, կարևոր հիշատակություններ, տեղեկություններ կան Հայաստանի և հայերի, Սովետական Միության հնագույն ժողովուրդների մասին:

Ներկա բարգմանության համար հիմք է ծառայել Մոսկվայի համալսարանի 1963 թ. հրատարակած ուստերեն գիտական բարգմանությունն ու զուգահեռ տրվող բնագիրը: Ինչ խոսք, որ ինչպես Կուրցիուս Ռուֆուսի, այնպես էլ Արիանոս Փլաբիոսի աշխատություններում կան կրկնություններ, երբեմն հակասություններ, բավական երկար քվարկումներ, բազմաթիվ անուներ, մանրամասներ, բայց դրանք էլ իրենց «արդարացումն» ունեն. ժամանակակից ընթերցողին արժե հիշեցնել, որ գործ ունենք շուրջ երկու հազար տարի առաջ գրված պատմական մեծարժեք աշխատանքների հետ, որոնք նույն անձի և պատմական միևնույն շրջանի մասին ներկայացնում են ըստ հնարավորին հավաստի տվյալներ և այդ առումով անզնահատելի են համաշխարհային պատմագրության գանձարանում:

Հարկ է նշել, որ V դարում հունարենից քարգմանվել է
կեղծ-կախարհենեսին վերագրվող «Պատմութիւն Ալեքսանդրի Մա-
կեդոնացոյ» երկը, որը հելլենիստական դարաշրջանի գրակա-
նության գլուխգործոցներից մեկն է և միջազգային հանաչում
ունի: Հայերենը հնագույն քարգմանություններից է: Աշխարհիկ
բովանդակությամբ երկի առաջին քարգմանությունն է այն և
վերագրվում է Խորենացուն: Այդ երկը դառեր շարունակ եղել է
մեր ժողովրդի ընթերցանության ամենասիրված գրքերից մեկը
և բազմիցս խմբագրվել է հայ գրականության նշանավոր հե-
ղինակների՝ Խաչատուր Կեչառեցու, Գրիգորիս Աղբամարցու,
Հովասափ Սեբաստացու և այլոց կողմից, նոխացվել հարյու-
րավոր հայկական բանաստեղծություններով, կաֆաներով: Այդ
առումով Ալեքսանդրի պատմության հայերեն քարգմանությու-
նը եզակի գործ է. այն և՛ հնագույնն է, և՛ բանաստեղծական
ներմուծումներով հարստացած:

Մասնագետների կարծիքով, հայերեն քարգմանությունը իր
ամբողջությամբ, հնությամբ և անխաթարությամբ նախաբնագրի
արժեք է ձեռք բերում, հանախ օգնելով վերականգնել հունարեն
բնագրի կորած և աղավաղված մասերը:

Բանասիրական գիտությունների թեկնածու Հասմիկ Սիմոն-
յանը աշխարհի տարբեր գրապահոցներում ցրված ձեռագրերի
համեմատությամբ պատրաստել և հրատարակության է հանձնել
«Ալեքսանդրի վարի» գիտաֆենակական լիակատար բնագիրը, որը
լույս կտեսնի մոտ ապագայում:

Հույս ունենեմ, որ ներկա քարգմանությունը կհետաքրքրի ոչ
միայն պատմաբաններին, Հայաստանի պատմական անցյալով
հետաքրքրվողներին, այլև առհասարակ ընթերցող լայն շրջան-
ներին:

ԱՐՏԵՄ ՍԱՐԳՍՅԱՆ
բանասիրական գիտությունների
թեկնածու

ԱՐԻԱՆՈՍ

ԱԼԵՔՍԱՆԴՐԻ
ԱՐՇԱՎԱՆՔԸ





ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Եւ Փիլիպոսի որդի Ալեքսանդրի մասին հաղորդում եմ լիովին արժանահավատ այն տեղեկութիւնները, որոնք միանման պատմում են և՛ Պաղոմեոսը՝ Լազոսի որդին, և՛ Արիստորուլոսը՝ Արիստորուլոսի որդին: Այն դեպքերում, երբ նրանց միջև համաձայնութիւն չկա, ես ընտրել եմ այն, ինչն ինձ թվացել է ավելի հավաստի և հիշարժան: (2) Ուրիշները նրա մասին այլ կերպ են պատմում: Ընդհանրապես չկա մի մարդ, որի մասին գրած լինեն այդքան շատ ու հակասական բաներ: Պաղոմեոսը և Արիստորուլոսը ինձ ավելի հավաստի են թվում. Արիստորուլոսը ուղեկցել է Ալեքսանդրին նրա արշավանքների ընթացքում, Պաղոմեոսն էլ է ուղեկցել նրան, և բացի այդ, նա ինքն էլ է եղել արշա ու նրա համար ստեղծ ավելի ամօթ է, քան ուրիշ որե՛ մեկի: Եվ քանի որ նրանք երկուսն էլ զրել են արդեն Ալեքսանդրի մահից հետո, ապա ոչինչ չի ստիպել նրանց խեղաթուրել դեպքերը և դրանից նրանք ոչ մի շահ չէին կարող տկնկալել: (3) Ուրիշ գրողների գործերում ես կան տեղեկութիւններ, որոնք ինձ թվացին հիշատակութեան արժանի և բնավ ոչ անհավանական. ես զրի առա դրանք որպէս Ալեքսանդրի մասին պատմող գրույցներ: Եթե որե՛ մեկը զարմանա, թե ինչու է իմ մեջ միտք հղացել գրելու Ալեքսանդրի մասին, երբ այդքան շատ մարդիկ արդեն գրել են նրա մասին, ապա թող նախ վերջնա՛յնքի նրանց բոլոր գրածները, ծանոթանա իմ գրածի հետ և այնժամ արդեն թող զարմանա:

Պատմում են, որ Փիլիպոսը մահացել է, երբ Աթենքում արքունոս էր Պիթոդեմոսը: Ալեքսանդրը, լինելով Փիլիպոսի որդին, ընդունում է արքայական իշխանութիւնը և մեկնում Պելոպոնես: Այդ ժամանակ նա մոտ 20 տարեկան էր: (2) Այնտեղ նա ժողովի է կանչում Պելոպոնեսում բնակվող հելլեններին և դիմում նրանց խնդրանքով, որ իրեն հանձնեն պարսիկների դեմ արշավանքի հրամանատարութիւնը, որը նրանք արդեն վստահել էին Փիլիպոսին: Նրա խնդրանքը հարգեցին բոլորը, բացի լակեդեմոնացիներից, որոնք պատասխանեցին, թե իրենց հայրերը ավանդ են թողել ոչ թե զնալ ուրիշների հետևից, այլ լինել առաջնորդներ: (3) Որոշ հուզումներ եղան և Աթենքում: Աթենացիք, սակայն մահու շափ սարսափեցին, երբ Ալեքսանդրը մի փոքր մոտեցավ նրանց, և որպէս Ալեքսանդրի նկատմամբ տաժած հարգանքի նշան, համաձայնեցին էլ ավելիին, քան տրված էր Փիլիպոսին: Վերադառնալով Մակեդոնիա, Ալեքսանդրը սկսեց Ասիա կատարվելիք արշավանքի պատրաստութիւններ տեսնել:

(4) Գարնան սկզբին նա մեկնեց Քրակիա տրիբալների և իլիրիացիների դեմ կովելու, քանի որ նրան հայտնի էր դարձել, որ իլիրիացիներն ու տրիբալներն ապստամբել են, և, բացի այդ, գտնում էր, որ տնից այդքան հեռու ճանապարհ ընկնելուց առաջ պետք չէ թիկունքում թողնել մինչև վերջ չհնազանդեցված զրացիների: (5) Նա պատրաստվում էր Ամփիպոլիսից ներխուժել այսպէս կոչված «անկախ թրակացիների» երկիրը. նրա ձախ կողմում մնացել էին Փիլիպի քաղաքը և Օրբելոս լեռը: Ասում են, որ Նեստոս գետն անցնելուց հետո, տասներորդ օրը նա մոտեցել է Հեմոս լեռանը: (6) Այնտեղ, կիրճում, որտեղ ճանապարհ էր ձգվում դեպի լեռը, նրան դիմաւորել է «անկախ թրակացիների» և զինված լեռնեցիների ամբոխը: Նրանք զբաղվել էին Հեմոս լեռան դադաթը և պատրաստվել փակելու զորքի հետագա ուղին, (7) հավաքել էին սայլերը և շարել իրենց առջևում, որպէսզի զրանք պատվար դառնան և դրանց միջոցով կարողանան հետ մղել թշնամուն, և թե հարձակվի Բացի այդ, նրանք մտադրվել էին բաց թողնել այդ սայլերը մակեդոնական փաղանգի վրա, ևրբ այն սկսեր բարձրանալ լեռան ամենաթեք մասը: Նրանք համոզված էին, որ ինչքան սերտ լինի փաղանգը, որի վրա

վերևից պետք է դահավիժեն սալերը, այնքան ավելի շուտ այդ սալերը իրենց անկման ուժով կցրեն այն:

(8) Այդ ընթացքում Ալեքսանդրը պլան կազմեց, թե որն է ամենաանվտանգ եղանակը լեռան մյուս կողմը անցնելու համար: Երբ նա տեսավ, որ ստիպված է վտանգի դիմել, քանի որ այլ անցում չկա, ապա հոպլիտներին հետևյալ հրամանը տվեց. երբ սալերը վերևից սկսեն գալ նրանց վրա, թող զինվորները այն տեղերում, որտեղ ճանապարհը լայն է և կարելի է քանդել զինաշարքը, վազեն տարբեր կողմեր այնպես, որ սալերն ընկնեն մարդկանց միջև: (9) Իսկ եթե տարածվելու հնարավորություն չլինի, թող նրանք ընկնեն գետին՝ կաշն մեկը մյուսին և ամուր ծածկվեն վահաններով. այդ դեպքում նրանց վրա եկող սալերը արագ ընթացքի հետևանքով շատ ավելի հավանական է, որ կթռնեն նրանց վրայով և վնաս չեն պատճառի: Այդպես էլ պատահեց, ինչպես Ալեքսանդրը ենթադրել և նախանշել էր: (10) Ոմանք ցրվեցին տարբեր կողմեր, մյուսներին սալերը, զորվելով վահանների վրայով, մեծ վնաս չպատճառեցին. ոչ մի մարդ չսպանվեց: Մակեդոնացիները գոտակնդվեցին, տեսնելով, որ սալերը, որոնցից նրանք ամենից շատ էին վախենում, իրենց վնաս չհասցրին, և աղաղակով նետվեցին թրակացիների վրա: (11) Ալեքսանդրը նետածիգներին հրամայեց հեռանալ աջ թևից և կանգնել փաղանգի դեմ, որտեղից այն ավելի խոցելի էր, և թրակացիներին դիմավորել նետերով՝ որ կողմից էլ նրանք մոտենան. ինքն էլ ազենմոսի, վահանակիրների և ազրիանացիների հետ միասին տեղ զրավեց ձախ թևում: (12) նետածիգները, խոցելով առաջ նետվող թրակացիներին, կասեցրին հարձակումը: Փաղանգը, զործի անցնելով, առանց դժվարության հետ շարժեց թևի և վատ զինված բարբարոսներին, այնպես որ նրանք, չսպասելով ձախից հարձակման անցած Ալեքսանդրին, դեն նետեցին զենքերը և լեռան վրայից փախան, ով ուր կարող էր: (13) Նրանցից զոհվեց շուրջ հազար հինգ հարյուր հոգի. ողջ մնացածներից քչերին գերեցին, քանի որ նրանք ավելի արագ էին վազում և լավ զիտեին տեղանքը: Որպես ռազմավար վերջորին բարբարոսներին ուղեկցող բոլոր կանանց, երեխաներին և գույքը:

Ալեքսանդրն այդ ավարն առաքեց ծովափնյա քաղաքները, հասնարարելով Լիսինիոսին և Փիլոտեսին տնօրինել այն: Ինքն էլ, անցնելով Հեմուսը, առաջ շարժվեց տրիբալների վրա և հասավ Կզգին գետին: Հեմուսով ընթանալու դեպքում այս գետը գտնվում է Խստրոսից երեք օրվա հեռավորության վրա: (2) Սիրմը՝ տրիբալների արքան, շատ ավելի վաղ իմանալով Ալեքսանդրի արշավանքի մասին, նախապես տրիբալների կանանց և երեխաներին ուղարկել էր Խստրոս՝ պատվիրելով անցնել Խստրոս գետի կղզիներից մեկը: (3) Այդ կղզին կոչվում էր Պակե: Նույն այդ կղզում, Ալեքսանդրի վրա հասնելուց շատ առաջ հավաքվեցին նաև թրակացիները, որոնք բնակվում էին տրիբալների հարևանությամբ: Սիրմը նույնպես յուրայինների հետ փախավ այնտեղ: Իսկ տրիբալների մեծամասնությունը հետ շարժվեց զեպի այն գետը, որտեղից նախորդ օրը դուրս էր եկել Ալեքսանդրը:

(4) Երբ Ալեքսանդրն իմացավ, թե ուր են գնացել տրիբալները, հետ դարձավ և շարժվեց նրանց վրա: Նա շրջափակեց տրիբալներին, երբ ճամբար էին դնում: Հանկարծակիի եկած՝ տրիբալները դիրք բռնեցին գետամերձ անտառում: Ալեքսանդրն ինքն առաջնորդեց զինվորներին, դասավորելով նրանց խորությամբ: Նետածիգներին ու պարսատիկավորներին նա դրեց առջևում, հրամայելով նրանց նետեր ու քարեր տեղալ բարբարոսների վրա: Նա հույս ուներ այդպիսով նրանց անտառից բաց տեղանք դուրս բերել: (5) Եվ իրոք, հայտնվելով նետերի տարափի տակ, նրանք դուրս սողացին և ճեպով ուղղվեցին դեպի նետածիգները, հույս ունենալով ձեռնամարտի բռնվել նրանց հետ, մանավանդ որ նետածիգները վահաններ չունեին: Ալեքսանդրը անտառից խորամանկությամբ դուրս բերելով տրիբալներին, հրամայեց Փիլոտեսին վերցնել Վերին Մակեդոնիայում հավաքագրած հեծյալներին և նետվել հակառակորդի աջ թևի վրա, որն արտագրոհի ժամանակ ամենից շատ էր առաջ ընկել: Հերակլիդեսին և Սոպոլոտին նա հրամայեց ձախ թևի վրա տանել Բոտիայից և Ամփիպոլիսից եկած հեծյալներին: (6) Հետևակալիններին ու մնացած հեծելազորը, որը ձգվել էր հետևակի առջև, նա տարավ հակառակորդի կենտրոնի վրա: Մինչ երկու կողմերից շարունակվում էր նետածիգությունը, տրիբալները տեղի չէին տալիս, բայց երբ ամրակուռ փաղանգը սկսեց ճնշում գոր-

ծաղրել, և երկու կողմերից հարձակվեցին հեծյալները, գործելով արդեն ոչ թե տեղերով, այլ արորելով ձիերով, արիբալները անտառի կողմից շրջվեցին դեպի գետը: (7) Փախուստի ընթացքում զոհվեց 3000 մարդ. այս անգամ էլ կենդանի մնացածներին քշեին գերեզման, որովհետև գետի մոտերքում անտառը խիտ էր և վրա հասած գիշերը թույլ չտվեց մակեդոնացիներին կանոնավոր հետապնդում կազմակերպել: Մակեդոնացիները, ըստ Պտղոմեոսի, կորցրին 11 հեծյալ և մոտ 40 հետևակային:

3

Այդ ճակատամարտից երեք օր անց Ալեքսանդրը մոտեցավ Իստրոս գետին: Դա եվրոպական գետերից ամենամեծն է: Այն հոսում է շատ ու շատ երկրների միջով, սահմանագիծ կազմելով ամենաաղմուկալից ցեղերի միջև: Նրանցից շատերը կելտական ցեղեր են: (2) Նրանց երկրից էլ սկիզբ է առնում Իստրոսը: Հենց նրա ակունքների մոտ են նալրում քվադներն ու մարկոմանները, ապա յազիգները, սավրոմատների ցեղը և հետո անմահությունն պարզեղ գեթերը: Հետո սավրոմատների մեծ մասը և հետո՝ սկյուֆները՝ մինչև գետաբերանը, մինչև այն տեղը, որտեղ Իստրոսը հինգ բազուկներով թափվում է էլքսինյան ծովը: (3) Իստրոսի վրա նա հանդիպեց հինգ ռազմականների, որոնք էլքսինյան ծովով և գետով նրա մոտ էին եկել Բյուզանդիայից: Դրանց վրա տեղավորելով նետաձիգներին ու հոպլիտներին, նա նավարկեց դեպի այն կղզին, ուր փայտել էին թրակացիներն ու արիբալները, և փորձեց ասի իջնել, սակայն ամենուրեք, որտեղ էլ փորձում էին կանգնեցնել նավերը, նրանց դիմավորում էին բարբարոսները: (4) Իսկ նավերի թիվը քիչ էր, զորքն էլ նավերի վրա մեծաքանակ չէր. ուղղաբերձ ասիերը քիչ տեղերում էին ափին մոտենալու հնարավորություն տալիս, իսկ կղզու մոտով անցնող գետը, երկու կողմից սեղմված, այնքան սրընթաց էր հոսում, որ խաբիսը գցելն անհնար էր:

(5) Այդ ժամանակ Ալեքսանդրը հեռացրեց իր նավերը և որոշեց Իստրոսն անցնելով հարձակվել Իստրոսից այն կողմ ապրող գեթերի վրա: Նա արդեն տեսել էր, որ նրանք մեծ բազմությամբ հավաքվում են Իստրոսի ափին, մտադրվելով խանգարել նրա գետանցմանը. (նրանք ունեին մոտ 4000 հեծ-

յալ, իսկ հետևակը 10 000 զինվորից ավելի էր): Բացի այդ նա շատ էր փափագում լինել այն կողմում: (6) Նա ինքը նավ նստեց, հրամայեց դարման լցնել պարկերը, որոնցից վրաններ էին պատրաստում, և տեղում սկսեց մեկական ծառից փորված մակույկներ հավաքել (դրանք հսկայական քանակություն էին կազմում, քանի որ ափարնակները Իստրոսում ձուկ էին որսում այդ մակույկներով, այցելություններ կատարում, իսկ շատերն էլ դրանցով էին ավազակություն անում): Հավաքելով հնարավորին չափ շատ այդպիսի մակույկներ, նա դրանցով այնքան զինվորներ ուղարկեց, ինչքան հնարավոր էր գետանց կատարելու համարման միջոցներով: Ալեքսանդրի հետ միասին գետն անցան 1500 հեծյալ և մոտ 4000 հետևակային:

4

Գետանցը կատարեցին գիշերն այն տեղում, որտեղ խիստ աճում էին հացաբույսեր և դրանց հետևից ափին մոտեցող մարդիկ չէին երևում: Լուսաբացին Ալեքսանդրը հետևակը տարավ հացահատիկի դաշտով, հրամայելով զինվորներին թեք պահել սարիսները և թեքելով հասկերը՝ ճանապարհ բացել: Այդպես նրանք գուրս եկան անմշակ տարածություն: (2) Հեծյալները գալիս էին հետևից՝ մինչև փաղանդը շանցավ հացահատիկի դաշտով: Երբ զորքը հայտնվեց խոպան հողի վրա, Ալեքսանդրն ինքն առաջնորդեց հեծալազորը աջ թևի վրա, իսկ Նիկանորոսին կարգադրեց շարել հետևակը առաջ ձգված ուղղանկյունով: (3) Գեթերը չդիմացան հեծյալների առաջին իսկ գրոհին. նրանց անհավանական էր թվում Ալեքսանդրի հանդգնությունը, որն այդպիսի հեշտություններ, մի գիշերվա մեջ, առանց կամուրջներ գցելու անցել էր գետերից մեծագույնը. սարսափելի էր հոծ ֆաղանգը, մոլեգին՝ հեծյալների հարձակումը: (4) Սկզբում նրանք նետվեցին դեպի իրենց քաղաքը, որն Իստրոսից մոտ մեկ փարսախ հեռավորության վրա էր: Բայց երբ նրանք տեսան, որ Ալեքսանդրը արագ շարժվում է իր հետևակով, անցնելով գետի երկայնքով, որպեսզի հետևակը չհայտնվի օղակի մեջ և չընկնի նետաձիգների պատրաստած ծուղակը, իսկ հեծյալները գնում են առջևից, գեթերը թողեցին իրենց վատ ամրացված քաղաքը՝ իրենց հետ ձիերի վրա տանելով այնքան երեխաների

և կանանց, ինչքան ձիերն ի վիճակի էին տանելու: Նրանք սուրացին ինչքան հնարավոր է գետից հեռու, դեպի ամալի տափաստանները: (5) Ալեքսանդրը գրավեց քաղաքը և այն ամենը, ինչ թողել էին գեթերը: Նա հրամայեց Մելեագրոսին և Փլիպպոսին փոխադրել այդ ավարը, իսկ ինքն ավերեց քաղաքը և Իստրոսի ափին զոհ մատուցեց Աես-փրկչին, Հերակլիսին և հենց իրեն՝ Իստրոսին, նրա համար, որ նա թույլ էր տվել իրեն գետանց կատարել: Դեռ մութը չընկած, նա բոլորին ողջ ու առողջ հասցրեց ճամբար:

(6) Այդտեղ Ալեքսանդրի մոտ ժամանեցին Իստրոսի մոտակայքում ապրող այլ անկախ ցեղերի, ինչպես նաև տրիբալների արքա Միրմի կողմից ուղարկված դեսպաններ: Դեսպաններ եկան նաև Հոնական ժովածոցի մոտ բնակվող կելտերի կողմից: Կելտերը բարձրահասակ ժողովուրդ են և իրենց մասին էլ բարձր կարծիքի են, Բոլորն էլ ասացին, որ եկել են բարեկամական կապեր հաստատելու Ալեքսանդրի հետ: Նրանք բոլորն էլ նրա հետ դաշինք կնքեցին: (7) Կելտերին նա նաև հարցրեց, թե ինչի՞ց են աշխարհում ամենից շատ վախենում: Նա հուսով էր, որ իր անվան հուշակը հասել է կելտերին և նրանցից էլ այն կողմ, և նրանք կասեն, որ ամենից շատ վախենում են իրենից:

(8) Կելտերի պատասխանը նրա սպասելիքները շարդարացրեց: Նրանք բնակվում էին Ալեքսանդրից հեռու, անանցանելի տեղերում, գիտեին, որ Ալեքսանդրին չեն հետաքրքրում և պատասխանեցին, որ ամենաշատը վախենում են, որ երկինքը իրենց վրա փոչ գա: Իսկ Ալեքսանդրի մոտ նրանք դեսպաններ են ուղարկել այն պատճառով, որ հիացած են նրանով և ոչ թե վախից կամ շահադիտական նկատառումով: Ալեքսանդրը նրանց բարեկամներ անվանեց, դաշինք կնքեց նրանց հետ և հետ ուղարկեց, նշելով միայն, որ կելտերը պարծենկոտ են:

5

Նա շարունակեց իր ուղին դեպի ազրիանացիներն ու պեոնները: Այստեղ նա լուր ստացավ, որ Կլիտոսը՝ Բարդիլեոսի որդին, պառակտվել է իրենից, նրան է միացել Գլավկիտոսը՝ տավրանտների արքան: Նրան հայտնեցին, որ ճանապարհին պատրաստվում են նրա վրա հարձակվել նաև ավտարիատները: Այդ

պատճառով նա որոշեց շուտափույթ հետ դառնալ: (2) Լանգարոսը՝ ազրիանացիների արքան, որը դեռ Փլիպպոսի կենդանության օրոք իր բացահայտ համակրանքն էր արտահայտել Ալեքսանդրի հանդեպ և իր կողմից նրա մոտ դեսպաններ էր ուղարկել, այժմ ներկայացավ նրան և իր հետ բերեց իր ունեցած ամենագեղեցիկ և լավագույն զինահանդերձանքով վահանակիրներին: (3) Իմանալով, որ Ալեքսանդրը հարցուփորձ է անում, թե ինչ ժողովուրդ են ավտարիատները և ինչ թիվ են կազմում, նա ասաց, որ ավտարիատների նման մարդկանց պետք չէ հաշվի առնել, որովհետև այդ երկրում նրանք ամենախաղաղասեր ցեղն են, նա ինքը կներխուժի նրանց երկիրը: Թող ավելի շատ մտածեն սեփական գործերի, քան պատերազմների մասին: Ալեքսանդրի խնդրանքով նա ներխուժեց այնտեղ և, ներխուժելուց հետո, թալանեց երկիրը, տարավ գերիներ և ավար:

(4) Ավտարիատները ստիպված էին իրենք հոգալ իրենց մասին: Ալեքսանդրը Լանգարոսին մեծ պատիվների արժանացրեց և նրան այնպիսի նվերներ տվեց, որոնք մակեդոնական արքաների մոտ ամենապատվալուրն էին համարվում: Նա Լանգարոսին խոստացավ, որ երբ նա ժամանի Պելա, կնույթյան կտա իր քրոջը՝ Քինային:

(5) Լանգարոսը վերադարձավ տուն, հիվանդացավ և մեռավ: Ալեքսանդրը ուղղվեց դեպի էրիզոն դետը, Պելա քաղաքը, որը, որպես երկրի ամենապաշտպանված քաղաք, զբաղեցրել էր Կլիտոսը: Ալեքսանդրը մոտեցավ քաղաքին, ճամբար դրեց էորդալիկոս գետի մոտ և որոշեց հաջորդ օրը գրոհով գրավել պարիսպները: (6) Կլիտոսի զորքերը զբաղեցրել էին քաղաքն օղակած սարերը, որոնք վեր էին բարձրանում նրա վրա և ծածկված էին խիտ անտառներով: Եթե մակեդոնացիները զնային գրոհի, կարելի էր նրանց վրա հարձակվել բոլոր կողմերից: Տավանտների արքա Գլավկիտոսը Կլիտոսին շնորհակալացավ: (7) Ալեքսանդրը ընդհուպ մոտեցավ քաղաքին: Իսկ թշնամիները սրախոլխոլ անելով զոհաբերույթյան դատապարտված երեք տղայի, նույնքան էլ աղքատ և երեք սև ոչխար, առաջ նետվեցին, մտադրվելով մակեդոնացիների հետ ձեռնամարտի բռնվել, սակայն նրանց հետ ընդհարվելուն պես իսկույնեկեթ նահանջեցին, թեև իրենց զբաղեցրած դիրքը ամուր էր, և այնպիսի հապճեպույթյամբ, որ իրենց


րերած դոհերը մնացին գետնին փոված և ընկան հակառակորդի ձեռքը:

(8) Այդ նույն օրը Ալեքսանդրը փակեց նրանց քաղաքում և ճամբար դնելով պարիսպների մոտ, որոշեց շրջապատել քաղաքը ամբուստներով ու պաշարել այն: Հաջորդ օրը մեծաքանակ զորքով հայտնվեց Գլավկիտոսը՝ տավրածների արքան: Ալեքսանդրը հասկացավ, որ այդ զորքով ինքը չի կարողանա գրավել քաղաքը. քաղաքում հավաքվել էին լավագույն զինվորները, և եթե գրոհեր, ապա ստիպված կլինեիր գործ ունենալ նաև Գլավկիտոսի զորքի հետ: (9) Նա Փիլոտեսին ուղարկեց պարեն բերելու, կարգադրելով նրան ճամբարից վերցնել բեռնակիր անասուններ և անհրաժեշտ քանակությամբ հեծյալներ պահակախմբի համար: Գլավկիտոսը, տեղեկանալով Փիլոտեսի արշավախմբի մասին, սլացավ նրա հետևից և զբաղեցրեց սարերով օղակաձև շրջապատված այն դաշտավայրը, որտեղ Փիլոտեսի ջոկատը մտադրվել էր պարեն հայթայթել: (10) Ալեքսանդրը տեղեկություն ստանալով այն մասին, որ երբ գիշերը վրա հասնի՝ հեծյալները և քարավանը հայտնվելու են վտանգի մեջ, ինքը նրանց օգնության շտապեց, իր հետ տանելով վահանակիրների, նետածիգների, ազրիանացիների և մոտ 400 հեծյալ: Զորքի մնացած մասը նա չհեռացրեց քաղաքից. ամբողջ զորքի հետքաշումը հնարավորություն կտար քաղաքում գտնվածներին ձգտելու միանալ Գլավկիտոսի հետ: (11) Գլավկիտոսը, տեղեկանալով Ալեքսանդրի մոտենալու մասին, լքեց սարերը, և Փիլոտեսի ջոկատը բարեհաջող պատսպարվեց ճամբարում: Իսկ Կլիտոսն ու Գլավկիտոսը մտադրվել էին գերել Ալեքսանդրին՝ օգտվելով ճանապարհների բացակայությունից: Նրանք տեղ գրավեցին լեռնային բարձունքների վրա, այնտեղ ուղարկելով մեծ թվով հեծյալների, բազմաթիվ տեղավորների, պարսատիկավորների և բավականին էլ հույսալիցների: Քաղաքում մնացածները պատրաստվում էին միանալ հեռացածներին: (12) Այն վայրը, որտեղ գտնվում էր Ալեքսանդրի անցարանը, նեղ էր և անառապատ. մի կողմից կտրված էր գետով, մյուս կողմից վեր էր խոյանում մի շատ բարձր սար, լիովին վիհապատ, այնպես որ նույնիսկ շորս զինվոր չէին կարող անցնել շարքով՝ վահանները ձեռքներին:

Ալեքսանդրը շարեց իր ջոկատը փաղանգի ձևով՝ 120 մարդ խորսթյամբ: Յուրաքանչյուր թևում նա 200 հեծյալ դրեց և հրամայեց լուսթյամբ և կայծակնային արագությամբ կատարել հրամանները: (2) Սկզբում հույսալիտներին կարգադրեց ուղիղ վեր քարնըցնել նիզակները, հետո ըստ ազդանշանի թեքել դեպի առաջ, իսկ հետո իրար ընդհուպ մոտեցնելով՝ թեքել աջ և հետո նախ: Սրբնթացորեն փաղանգն առաջ շարժելով, նա հրամայեց զինվորներին մեկ աջ շրջադարձել, մեկ ձախ: (3) Այս ձևով կարճ ժամանակահատվածում կատարելով տարբեր զորաշարժեր և զորաշարվածքներ, նա շրջեց փաղանգը դեպի ձախ, վերադառավորեց նեպի ձևով և շարժեց թշնամու վրա: Սրանք սկզբից ապշահար դիտում էին, թե ինչ արագությամբ ու կարգապահությամբ է կատարվում այդ ամենը: Ալեքսանդրի հետ ճակատամարտ նրանք շտվին և լքեցին մոտակա բարձունքները: (4) Նա մակեդոնացիներին հրամայեց ռազմակոչ արձակել և նիզակներով խփել վահաններին: Տավանտներին էլ ավելի վախեցրեց այդ ռազմակոչը, և նրանք շուտափույթ իրենց զորքերը հետ քաշեցին դեպի քաղաք:

Օրհն

(5) Ալեքսանդրը, տեսնելով, որ բարձունքը, որի մոտով ճանապարհն է անցնում, պաշտպանված է փոքրաթիվ թշնամիներով, հրամայեց իր պահակախմբին և շրջակայքին՝ վերցնել վահանները, հեծնել ձիերը և արշավել դեպի այդ բարձունքը: Եթե նրանք, ովքեր պահում են այն, տեղից չշարժվեն, թող ջոկատի կեսը ցած թռչի ձիերից, խառնվի հեծյալներին և կովի հետին: (6) Թշնամիները, տեսնելով, որ Ալեքսանդրը հարձակվում է, թողնեցին բարձունքը և աչից ու ձախից անհետացան լեռներում: Ալեքսանդրը իր շրջակայքից գրավեց բարձունքը, ազրիանացիներին և նետածիգներին՝ թվով մինչև 2000 հոգի, ուղարկեց նրանց մոտ, իսկ վահանակիրներին կարգադրեց գետն անցնել և մակեդոնական զնդերին՝ հետևել նրանց. զետանցից հետո ձախ շրջադարձ կատարել և շարվել խիտ փաղանգով: Ինքը մնաց առաջապահ դիրքում, որպեսզի բարձունքից հետևի թըշնամու տեղաշարժերին: (7) Իսկ սրանք, տեսնելով գետն անցնող զորքը, քաշվեցին լեռները, որպեսզի հարձակվեն վերջապահ մասի վրա, որն անհշատվել էր Ալեքսանդրի հետ միասին: Իսկ նա նրանց մոտենալու պահին իր ջոկատով նետվեց նրանց վրա, իսկ



փաղանդը ռազմակոչ էր արձակում, ասես գետն արդեն անցել էր: Թշնամիները փախչում էին՝ խուսափելով իրենց նեղող զինվորներից: Այդ ժամանակ Ալեքսանդրը ազրիանացիներին և նեոտաձիգներին վազբով զեպի գետը ուղարկեց: Իսկ ինքը կանխեց նրանց և առաջինը անցավ գետը: (8) Տեսնելով, որ թշնամիները ճնշում են գործադրում վերջապահ գործի վրա, նա կարգադրեց գետափին մեքենաներ տեղադրել և նրանցից տեգեր արձակել այնքան հեռու, ինչքան կարող են նետել մեքենաները, իսկ նեոտաձիգներին՝ կանգ առնել գետի մեջտեղում և նետեր արձակել: Գլավկիոսի զինվորները չհամարձակվեցին մոտենալ այն տեղին, ուր արդեն թափվում էին նետերը: Մակեդոնացիք բարեհաջող գետն անցան: Նահանջի ժամանակ ոչ ոք չզոհվեց:

(9) Երեք օր անց Ալեքսանդրն իմացավ, որ Կլիտոսի և Գլավկիոսի զորքերը անհոգ կյանք են վարում. պահակախմբեր չեն նշանակված, ճամբարի առջև ոչ պաշտպանական ցցապատներ չեն դրել, ոչ էլ խրամ, թվում է, բոլորը մտածում են, թե Ալեքսանդրը սարսափահար փախել է: Ռազմաճակատի գիծը անմտորեն ձգված էր երկարություն: Ալեքսանդրը գիշերն աննկատ անցավ գետը, իր հետևից տանելով վահանակիրներին, ազրիանացիներին, նեոտաձիգներին և Պերդիկոսի ու Քենոսի զնդերը: (10) Մնացած զորքին հրամայված էր հետևել իրենց: Հարձակման համար հարմար պահ ընտրելով և շսպասելով բոլոր ուժերի միավորմանը, նա հակառակորդի վրա նետեց նեոտաձիգներին և ազրիանացիներին: Փաղանջից հանկարծակի հարձակվելով այնտեղ, որտեղ թշնամին առավել թույլ էր և որի շնորհիվ նրանց հարվածը ավելի ուժեղ էր, նրանք մի մասին կոտորեցին անկողիններում, ուրիշներին, ովքեր փորձում էին փախչել, առանց դժվարության բռնեցին, այնպես որ շատերը հենց տեղում գերվեցին ու սպանվեցին. մյուսները զոհվեցին անկանոն նահանջի ժամանակ: (11) Քիչ մարդ գերի ընկավ: Ալեքսանդրի զինվորները հետապնդեցին թշնամուն մինչև տավրանտների երկրի լեռները: Նրանք, ովքեր խույս տվեցին հետապնդողներից, փրկվեցին՝ զեն նետելով զենքերը: Կլիտոսը սկզբում փախավ իր քաղաքը, բայց հետո այրեց քաղաքը և մեկնեց Գլավկիոսի մոտ՝ տավրանտների երկիրը:

Այդ ժամանակ թերեհական վտարանդիներից մի քանիսը գիշերը վերադարձան Թերե: Որոշ մարդիկ քաղաքում նրանց ապստամբության հրահրեցին Կադմեյան զորանոցից նրանք զուրս կանչեցին Ամինտոսին և Թիմոլայոսին և սպանեցին նրանց Կադմեայի պարսպի տակ, երբ նրանք ոչ մի վատ բան չէին ենթադրում: (2) Ներկայանալով ժողովրդական հավաքին, նրանք համոզում էին թերեհացիներին հեռանալ Ալեքսանդրից, բողբոջվելով հնուց ի վեր զեղեցիկ ազատության անունով, և հրապուրելով, որ վերջ ի վերջո նրանք կթոթափեն մակեդոնացիների ծանր լուծը: Քանի որ նրանք ապացուցում էին, թե իբր Ալեքսանդրը մեռել է Իլիրիայում, նրանց ճառերը ամբոխին ավելի համոզիչ էին թվում: (3) Նրա մահվան մասին լուրն ահագնանում էր և գալիս էր տարբեր կողմերից: Իսկապես քիչ ժամանակ չէր անցել այն պահից, որ նրա մասին ոչ մի տեղեկություն չէր ստացվել: Եվ ինչպես որ սովորաբար լինում է նման դեպքերում, մարդիկ առանց տեղեկանալու, թե իրականում ինչ է կատարվում, ամեն ինչ պատկերացնում էին այնպես, ինչպես իրենք էին ցանկանում:

(4) Երբ Ալեքսանդրը տեղեկացավ Թերեի դեպքերին, որոշեց, որ բնավ չի կարելի դրանց վերաբերվել արհամարհանքով: Նա վաղուց կասկածի տակ էր առել Աթենքը և դառնում էր, որ թերեհացիների հանդուգն քայլերը հենց այնպես չեն ավարտվի, եթե նրանց միանան վաղուց արդեն մտովի անջատված լակեդեմոնացիները, ինչպես նաև մյուս պելոպոնեսացիները և էտոլացիները, որոնց չէր կարելի ապավինել: (5) Անցնելով էորդեայով և էլիմեայով, նա անցավ Ստրիմփեա և Փարավիոս լեռները և յոթկորոգ օրը ժամանեց Փելինոս, որը Թեսալիայում է գտնվում: Այնտեղից զուրս գալով, նա վեցերորդ օրը ներխուժեց Բեովոտիա: Թերեացիներն իմացան, որ Ալեքսանդրը անցել է Գարպասով, երբ նա իր ողջ զորքով արդեն Օնհիոսում էր: (6) Ապստամբության պարազուխները այնժամ հայտարարեցին, որ դա Մակեդոնիայից եկած Անտիպատրոսի զորքն է. նրանք պնդում էին, թե Ալեքսանդրը մահացել է, և խեթ էին նայում նրանց վրա, ովքեր հայտարարում էին, թե զորքը ինքը Ալեքսանդրն է առաջնորդում: Նրանց ասելով, դա ուրիշ Ալեքսանդր էր՝ Աերոպոսի որդին:

(7) Ալեքսանդրը շարժվելով Օնհեստեսից, հաջորդ օրը մոտեցավ թերեացիների քաղաքին՝ այն հողակտորին, որը նվիրված էր Իռայտսին, որտեղ էլ ճամբար խփեց: Նա թերեացիներին ժամանակ տվեց մտածելու և իր մոտ զեսպանություն ուղարկելու: (8) Սրանք, սակայն, միտք անգամ չունեին խաղաղ բանակցություններ սկսելու. ավելին, հեծյալներ և բավական քանակությամբ թեթևազեն զինվորներ, արտագրոհի էլնելով, վազեցին մինչև ճամբարը և սկսեցին նետահարել առաջավոր դիրքերը: Մի քանի մակեդոնացիներ սպանվեցին: (9) Ալեքսանդրը թեթևազեն զինվորներ և նետածիզներ ուղարկեց, որպեսզի հետ շարտեն հարձակվողներին: Սրանք ճարպկորեն հետ շարտեցին հարձակվողներին, երբ նրանք մոտենում էին բուն ճամբարին: Հաջորդ օրն Ալեքսանդրը իր ողջ զորքով մոտեցավ Գարպասին, որտեղից ճանապարհ կար դեպի էդեփերոս և Ատիկա, սակայն պարիսպների տակ չկանգնեց և Կադմեայից ոչ հեռու ճամբար խփեց, որպեսզի մակեդոնացիները անմիջապես կարողանային օգնություն ցույց տալ Կադմեայում գտնվողներին: (10) Թերեացիները հսկում էին Կադմեյան. այն շրջապատել էին կրկնակի ցցապարիսպով, որպեսզի ոչ ոք զրսից չկարողանար օգնել այնտեղ փակված ջոկատին և որպեսզի այդ ջոկատը չկարողանար արտագրոհի էլնել, երբ թերեացիները մարտի բռնվեին քաղաքի վրա հարձակվող թշնամու հետ: Գտնվելով Կադմեային մերձակա ճամբարում, Ալեքսանդրը (նա ցանկանում էր խաղաղությամբ և ոչ թե զենքով ավարտել գործերը թերեացիների հետ) դանդաղում էր: (11) Թերեացիներից նրանք, ովքեր հասկանում էին, թե ինչն է լավագույնը ընդհանուր բարօրության համար, ցանկանում էին զնալ Ալեքսանդրի մոտ և ներում խնդրել՝ Թերեի ժողովրդից՝ հետ կանգնելու համար: Վտարանդիները և նրանք, ովքեր հակված էին վտարանդիների կողմը, գտնում էին, որ Ալեքսանդրից իրենք ոչ մի լավ բան չեն տեսնի: Նրանց մեջ հատկապես բռնվտացիները ամեն կեղծ համոզում էին ժողովրդին պատերազմի էլնել: Ալեքսանդրը զենուս չէր հարձակվում քաղաքի վրա:

8

Պտղոմեոսը՝ կազոսի որդին, պատմում է, որ Պերդիկոսը, որը պաշտպանում էր ճամբարը և իր ջոկատով գտնվում էր նրա առջևում՝ թշնամու ցցապատից ոչ հեռու, շապասելով գրոհի

զնալու Ալեքսանդրի հրամանին, ինքը, առաջինը, ինքնակամ նետվեց այդ ցցապատի վրա, չարդուփշուր արեց և հարձակվեց թերեացիների առաջավոր ջոկատի վրա: (2) Նրան հետևեց Ամինտոսը՝ Անդրոմենոսի որդին, քանի որ նա կանգնած էր Պերդիկոսի կողքին: Տեսնելով, որ վերջինս արդեն անցել է ցցապատը, նա հարձակման տարավ և իր գունդը: Տեսնելով այս և վախենալով, որ թերևս թերեացիները նրանց կտրեն հիմնական ուժերից, և նրանք ստիպված լինեն կռվել միայնակ, Ալեքսանդրը գրոհի տարավ մնացած զորքը: (3) Նետածիզներին և ագրիանացիներին նշան տվեց անցնել ցցապատից այն կողմ. աղիմոսը և վահանակիրներին նա պահում էր զեն նրանց դիմաց: Պերդիկոսը, որը փորձում էր անցնել երկրորդ ցցապատը, նետահար ընկավ: Նրան ծանր վիճակում տարան ճամբար: Նա ղեկավարությամբ ապարիսպից: Նրա հետ ներխուժած զինվորները Ալեքսանդրի նետածիզների հետ մեկտեղ թերեացիներին բռնեցին հովիտը, որով անցնում էր դեպի Հերակլեսի տաճարը ձգվող ուղին: (4) Նրանք գնում էին թերեացիների հետևից, որոնք նահանջեցին ընդհուպ մինչև տաճարը. այստեղ թերեացիները ճիշերով շրջվեցին, և մակեդոնացիները սկսեցին փախչել: Ընկան նետածիզների հրամանատարը՝ կրեոտացի էվրիբոտոսը, 70 նետածիզներ: Մնացածները հասան մինչև մակեդոնական աղիմոսը և արքայական վահանակիրները: (5) Ալեքսանդրը, տեսնելով, որ զինվորները փախչում են, իսկ թերեացիները նրանց հետապնդելով խախտել են զորաշարքը, նրանց վրա նետեց շարք կազմած փաղանգը, որն էլ նրանց բռնեց Գարպասից այն կողմ: Թերեացիները այնպիսի սարսափով էին փախչում, որ խռնվելով քաղաքի դարպասի մոտ, չհասցրկցին փակել այն: Նրանց հետ միասին քաղաք ներխուժեցին և այն մակեդոնացիները, որոնք վազում էին անմիջապես նրանց հետևից. պարիսպների վրա էլ ոչ ոք չկար, քանի որ քաղաքից դուրս շատ պահակակետեր էին դրված: (6) Մոտենալով Կադմեային, մակեդոնացիները բաժանվեցին. մի մասը Կադմեյան պահող ջոկատի հետ մտավ ստորին քաղաք՝ Ամփիոնոսի տաճարի մոտ, իսկ մյուս մասը՝ մազլեցելով պարիսպների վրայով, որոնք արդեն զրավել էին նրանք, ովքեր քաղաք էին թափանցել փախստակների հետ, վազեցին նետվեցին դեպի ագորա: (7) Որոշ ժամանակ թերեացիների ջոկատները զենուս դիմանում էին Ամփիոնոսի տաճարի մոտ: Իսկ երբ մակեդոնացիները սկսեցին բոլոր կողմերից նրանց

նեղել, և հայտնվեց Ալեքսանդրը մեկ այստեղ, մեկ այնտեղ, թերեացի հեծյալները փախչելով դուրս նետվեցին քաղաքից դեպի հարթավայր. հետևակալիները զուխներն ազատում էին, ով ինչպես կարողանում էր: (8) Եվ այժմ սկսվեց արդեն շղիմադրող թերեացիների անկանոն կոտորածը, ընդ որում զայրույթով լի էին ոչ այնքան մակեդոնացիները, ինչքան փոկեացիները, պլատեացիները և բեովտացիները: Ոմանց բռնում էին իրենց տներում. մի մասը փորձում էր դիմադրել, մյուսները գթություն էին հայցում, ընկնելով զոհասեղանների վրա: Բայց խղճահարություն չկար ո՛չ կանանց, ո՛չ էլ երեխաների հանդեպ:

9

Հելլադային վրա հասած այդ արհավիրքը ցնցեց մնացած հելլեններին ոչ պակաս, քան այդ գործի անմիջական մասնակիցներին: Գրավված քաղաքի մեծությունը, նվաճման սրընթացությունը, անսպասելի պարտությունը և անսպասելի հաղթանակը ցնցեց ամեն բան: (2) Այն, ինչ պատահեց աթենացիների հետ Միգիլիայում, քաղաքի համար մեծ դժբախտություն էր, քանի որ զոհվեցին շատ մարդիկ, սակայն աթենացիների զորքը պարտություն կրեց հայրենիքից հեռու, ընդ որում դաշնակիցներից ավելի շատ մարդ զոհվեց քան իրենցից, և աթենացիները չկորցրին իրենց քաղաքը: Հետագայում դեռ երկար ժամանակ նրանք դիմադրում էին լակեդեմոնացիներին, պատերազմում էին նրանց դաշնակիցների և մեծ արքայի դեմ: Ո՛չ տուժածները ունեին անուղղելի աղետի այդպիսի զգացում, ո՛չ էլ մյուս հելլեններն էին այդքան ցնցված նրանց դժբախտությունով: (3) Հյուսպոտամաքոսի մոտ աթենացիները կրկին պարտություն կրեցին ծովի վրա, սակայն քաղաքը, անարբված միայն Երկար պատերի կործանումով, բազմաքանակ նավերի հանձնումով և իշխանություն կորստով, պահպանեց իր վաղնջական տեսքը, շուտով նորից ստացավ իր նախկին ուժը, այնպես որ վերականգնեց Երկար պատերը, կրկին սկսեց իշխել ծովի վրա և իր մասնակցությունն ունեցավ լակեդեմոնացիներին ծայրահեղ վտանգից փրկելու գործում, որոնք մի ժամանակ ահեղ էին և քիչ էր մնում ոչնչացնելին իրենց քաղաքը: (4) Ակադայի և Մանտինեայի մոտ կրած պարտությունը ցնցեց լակեդեմոնացիներին ավելի շուտ իր անսպասելիությամբ, քան զոհվածների քանա-

կով: Հյամինոնդոսի զխավորությամբ բեովտացիների և արհադացիների հարձակումը Սպարտայի վրա վախեցրեց լակեդեմոնացիներին և նրանց դաշնակիցներին ավելի շատ նման տեսարանի արտասովորությամբ, քան վտանգի մեծությամբ: (5) Պլատեայի գրավումը մեծ արհավիրք չէր. քաղաքը փոքր էր և քիչ մարդիկ գերվեցին, քանի որ շատերը վաղուց արդեն փախել էին Աթենք: Մելոսի և Սկիոնոսի՝ փոքր կղզի-քաղաքների գրավումը հաղթողներին ավելի շուտ անպատվություն բերեց, և առանձնապես մեծ անակնկալ չէր ամբողջ Հելլադայի համար:

(6) Թերեացիների ապստամբությունը՝ սրընթաց և անխոհեմ, քաղաքի գրավումը՝ արագ և հարձակվողներին դժվարություն չպատճառող, պարտվածների կոտորածը՝ այնպիսին, ինչպիսին կարող են կազմակերպել միայն հին ատենությունից զրդված ցեղակիցները, քաղաքի բոլոր բնակիչների ստրկացումը, այն ժամանակներում Հելլադայում առաջինն իր հիշրությամբ ու ռազմական փառքով. այս դեպքերը բացատրվում էին որպես աստվածային զայրույթ, և նման բացատրությունը զուրկ չէր հավանականությունից: (7) Շատ ժամանակ հետո թերեացիները պատժվեցին հելլեններին Պարսկական պատերազմում դավաճանելու, զինադադարի ժամանակ Պլատեայի գրավման և այդ քաղաքի բոլոր քաղաքացիներին ստրկության մատնելու համար, նրանց խորհրդով այն մարդկանց կոտորածի համար, որոնք հանձնվել էին լակեդեմոնացիներին (զա արվել էր հելլեններին ոչ պատշաճ ձևով), այն վայրերի ամայացման համար, որտեղ հելլենները, ընդհարվելով պարսիկների հետ, կանխեցին Հելլադայի զլխին կախված վերահաս վտանգը, այն քանի համար, որ նրանք ցանկացան կործանել Աթենքը, երբ լակեդեմոնացիները և նրանց դաշնակիցները քննարկում էին այդ քաղաքի ստրկացման հարցը: (8) Պատմում են, որ մինչև Թերեի կործանումը եղել են աստվածային շատ նախանշաններ, որոնք այն ժամանակ արհամարհվել են, իսկ հետագայում էլ վերհիշվել և սկսել են մտածել այն մասին, որ կատարվելիքը իրենք վաղուց կանխագուշակել էին:

(9) Այդ գործին մասնակից դաշնակիցները, որոնց Ալեքսանդրը հանձնարարեց վճռել Թերեի ճակատագիրը, որոշեցին հաղմեայում կայադր թողնել, իսկ քաղաքը քանդել հիմնովին, հողը, բացառությամբ սրբավայրերի, բաժանել դաշնակիցների միջև, երեխաներին, կանանց և կենդանի մնացած թերեացիներ-

րին, բացի քրմերից, քրմուհիներից, Փիլիպոսի կամ Ալեքսանդրի
և մակեդոնացի պրոկսենների բարեկամներից, ստրկության վա-
ճառելու (10) Պատմում են, որ Ալեքսանդրը, հարգելով Պինդա-
րոսին, պահպանել է բանաստեղծի տունը և փրկել նրա ժառանգ-
ներին: Ավելին, դաշնակիցները որոշում կայացրին վերականգ-
նել Օրբոմենոսը և Պլատեան ու շրջափակել դրանք պարսպով:

10

Երբ մնացած հելլեններն իմացան թերեացիների դժբախտու-
թյան մասին, ապա արկադացիները, որոնք արդեն ճամփա էին
քնկել թերեացիներին օդնելու, որոշեցին մահապատժի ենթարկել
նրանց, ովքեր հրահրել էին իրենց այդ օգնությունը ցուցաբերե-
լու: Էլեացիները վերադարձրին իրենց վտարանդիներին, քանի որ
նրանք Ալեքսանդրի բարեկամներն էին: (2) Էտոլական ցեղե-
րից յուրաքանչյուրը հատուկ ղեսպանություն ուղարկեց ներման
աղբերով: Նրանք, համապատասխան թերեացիներից ստացված
տեղեկությունների, նույնպես ապստամբել էին: Աթենացիները
մեծ զազոնածիսություններ էին անում, երբ նրանց մտա, ճա-
կատամարտից անմիջապես հետո, Թերեից մարդիկ ժամանեցին:
Նրանք սարսափահար թողեցին զազոնածիսությունները և սկսե-
ցին իրենց ունեցվածքը ազարակներից բաղաբ տեղափոխել:
(3) Գեմադեսի առաջարկով, ժողովրդական հավաքը Ալեքսանդ-
րի մոտ 10 մարդուց բաղկացած ղեսպանություն ուղարկեց,
որոնց ընտրել էին միայն աթենացիներից, լավ իմանալով, որ
նրանք հատկապես մոտ են Ալեքսանդրին: Նրանք պետք է հա-
ղորդեին նրան հետևյալը. աթենական ժողովուրդը ողջունում է
նրա բարեհաջող վերադարձը իլիրիացիների և տրիբալների երկ-
րից (ողջույնը մի քիչ ուշացել էր) և ուրախ է, որ նա պատժել է
թերեացիներին նրանց ապստամբության համար: (4) Ալեքսանդ-
րը սիրալիրությամբ պատասխանեց ղեսպանությանը, բայց
ժողովրդին դիմեց նամակով, որով պահանջում էր իրեն հանձնել
Գեմուսթենեսին, Լիկուրգոսին և նրանց կողմնակիցներին: Սա
պահանջում էր նաև իրեն հանձնել Հիպերիոդոսին, Պուլիեկտոսին,
Հարեթոսին, Քարիզեմոսին, Էթիալտոսին, Գրոթիմոսին և Մի-
րոկլեոսին, (5) որովհետև նրանք մեղսակից են Քերովնեսա բա-
ղաբին պատահած դժբախտությանը և, ավելի ուշ՝ Փիլիպոսի
մահից հետո, իր և Փիլիպոսի հիշատակի հանդեպ նրանք ան-

վայել են պահել իրենց. նա հայտարարեց, որ թերեացիների
պատահումն մեզ նրանք մեղավոր են ոչ պակաս քան այն մար-
դիկ, որոնք ապստամբության են հանել թերեացիներին: (6)
Աթենացիները այդ մարդկանց չհանձնեցին, իսկ Ալեքսանդրի
մոտ կրկին ղեսպանություն ուղարկեցին՝ աղաչելով գթասիրտ
զանվել այն մարդկանց նկատմամբ, որոնց պահանջում է իրեն
հանձնել: Քաղաքի հանդեպ տածած հարգանքից էր, թե նրանից,
որ զբաղված էր Ասիա կատարվելիք արշավանքով և չէր ցան-
կանում հելլենների մոտ իր մասին այնպիսի տպավորություն
թողնել, որ ստիպեր նրանց զգուշանալ իրենից, Ալեքսանդրը
ողբում զտնվեց: Նա հրամայեց քսոսրել միայն Քարիզե-
մոսին՝ միակ մարդուն նրանցից, որոնց պահանջում էր հանձնել
իրեն: Քարիզեմոսը մեկնեց Ասիա՝ Գարեհ արքայի մոտ:

11

Ավարտելով այս գործերը, Ալեքսանդրը վերադարձավ Մա-
կեդոնիա: Նա ղո՛հ մատուցեց Օլիմպիական Զևսին. դա սահմա-
նել էր զեո Արքելայոսը, և էղևում կազմակերպեց տոնական
մրցումներ, որոնք կոչվեցին Օլիմպիական և, համաձայն
որոշ մարդկանց պատմածների, մրցույթներ կազմակերպեց նաև
Մուսայի պատվին: (2) Այդ ժամանակ նրան հայտնեցին, որ
Քլեբիալում գտնվող թրակացի Օրփեոսի՝ էպորոսի որդու ար-
ձանը ամբողջ ժամանակ քրտնեցով է ծածկվում: Որոշ գուշակ-
ներ մի բան էին ասում, մյուսները՝ այլ բան, իսկ տելեմնոսցի
Մերիտանդրը, որը նույնպես գուշակ էր, ասաց Ալեքսանդրին.
«Եթե զախիր՝ կանխագուշակումն այս նշանակում է, որ նպիկա-
կան և լիրիկական պոետներին, ինչպես նաև նրանց ստեղծագոր-
ծությունները կատարողներին մեծ գործ է սպասվում՝ ստեղծել
երկեր, որոնցում պետք է փառաբանվեն Ալեքսանդրը և նրա
գործերը»:

(3) Երբ եկավ դարունը, Ալեքսանդրը մեկնեց Հելլեսպոնտոս,
Մակեդոնիայի և հելլենների կառավարումը հանձնարարելով
Մեթիպատրոսին: Նա իր հետ տարավ հեռակայանների՝ թեթևա-
լուն ուղևորների և նետածիգների՝ 30.000-ից քիչ ավելի,
իսկ հեծյալների՝ 5000-ից ավելի: Նրա ճանապարհը անցնում էր
Քերկիրից լճի մոտով դեպի Ամփիպոլիս և Ստրիմոն գետի
բերանը: (4) Անցնելով Ստրիմոնը, նա շրջանցեց Պանդեոն լե-

որ, ուղղութիւն վերցնելով դեպի Արդերա և Միրոնեոս հելլենական ծովափնյա բաղաճնները: Այնտեղից նա եկավ դեպի Հերբոս գետը և, առանց որևէ դժվարութեան, անցավ այն, իսկ այնտեղից Պետրկոսով գնաց դեպի Սև գետը: (5) Անցնելով Սևը, տնից ճամփա բնկնելուց բնդամենը 20 օր հետո, նա ժամանեց Սևտոս: Գալով Հելեոնտոս, նա զոհ մատուցեց Պրոտեսիլայոսի գերեզմանին. կարծիք կա, որ նա Ագամեմնոսի հետ Իլիոն դնացած հելլեններից առաջինն է ոտք դրել Ասիայի մայրցամաք: Իսկ այդ զոհարերութեան իմաստը հետևյալն է. թող իր ափ իջնելը ավելի հաջողակ լինի, քան Պրոտեսիլայոսինը:

(6) Պարմենիոնին հրամայված էր մեծաքանակ հետևակալիներ և հեծյալներ ուղարկել Սեստոսից Արիդոս: Անցումը կատարվեց 160 տրիերներով և բազմաթիվ փոխադրանալերով: Սովորաբար պատմում են, որ Ալեքսանդրը ուղևորվելով Հելեոնտոսից, ափ իջավ «Աքայական» նավահանգիստ». անցման ժամանակ նա ինքն էր ղեկավարում ծովակալական նավը և, հասնելով Հելլեսպոնտոսի մեջտեղը, Պոսիլոնի և ծովահարսերի պատվին զոհարերեց մի ցուլ և ոսկե գավաթից զինի հեղեց ծովը: (7) Պատմում են, որ նա առաջինը, լրիվ սպառազինված, ոտք դրեց ասիական հողի վրա: Այն տեղում, որտեղ նա թողել էր նվրոպան, և այն տեղում, որտեղ ափ իջավ Ասիայում, նա զոհասեղաններ կառուցեց Չևսի՝ ափ իջնելու հովանավորողի, Աթենասի և Հերակլեսի պատվին: Գալով Իլիոն, նա զոհ մատուցեց Իլիոնի Աթենասին, նրան նվիրաբերեց լրիվ ռազմահանդերձանք և կախեց տաճարում, իսկ փոխարենը որոշ բաներ վերցրեց սրբազան գեներալից, որոնք պահվում էին դեռ Տրոյական պատերազմի ժամանակներից: (8) Ասում են, որ ճակատամարտի ժամանակ զրանք տանում էին իր առջևից: Պատմում են, որ Չևսի և ընտանեկան օջախի հովանավորողի զոհասեղանին նա զոհ մատուցեց Պրիամոսին, աղաչելով նրան այլևս չղայրանալ Նեոպոլիտոսի տոհմի վրա, որից էլ և ինքն էր սերում:

12

Երբ նա գնում էր Իլիոն, Մենետոսը՝ նավավարը, նրա զլխին ոսկե պսակ դրեց: Նույն բանն արեցին Միգեոսից ժամանած ավենացի Քարետոսը, մյուս հելլենները, ինչպես նաև տեղի

բնակիչները: Ինքն էլ պսակներ դրեց Աթիլեսի գերեզմանին, իսկ Հեֆեստիոնեսը, ասում են, Պատրոկլեսի գերեզմանին է պսակներ դրել: Պատմում են, որ Ալեքսանդրը Աթիլեսին բախտավոր է անվանել, քանի որ ապագա ժամանակների համար նրա փառքը գովարանել է այնպիսի մի պոեա, ինչպիսին Հոմերոսն է: (2) Ալեքսանդրը իսկապես իրավունք ուներ այդ հարցում: Աթիլեսին նախանձելու: Նա ամեն ինչում բախտավոր էր, բայց այդ հարցում նրա բախտը չէր բերել, և ոչ ոք մարդկությունը չէր պատմել Ալեքսանդրի գործերի մասին պատշաճ կերպով: Նրա մասին չէր գրվել ո՛չ արձակ, ո՛չ էլ շափածո, նրան շէին գովարանել Երգերում ինչպես Հիերոնեսին, Հելոնոսին, Փերոնեսին և շատ արիշների, որոնց նույնիսկ չի կարելի համեմատել Ալեքսանդրի հետ: Ալեքսանդրի գործերի մասին ավելի քիչ գիտեն, քան հին ժամանակների ամենամանջան ղեկավարի մասին: (3) Կյուրոսի զեկավարած 10.000-ի արշավանքը Արտաքսերքսես արքայի գեմ, Կլեարքոսի և զինվորների աղետները, որոնք նրա հետ միասին գերի էին ընկել, այդ զորքի վերադարձը Քսենոֆոնի առաջնորդությամբ շատ ավելի հայտնի էին մարդկանց Քսենոֆոնի շնորհիվ, քան Ալեքսանդրը և նրա գործերը: (4) Մինչդեռ Ալեքսանդրը արշավանքի էր մեկնել իրենից բացի ոչ ոքի վրա հույս չդնելով. նա փախուստի չէր դիմել մեծն արքայից, ենթարկել էր ցեղեր, որոնք իրեն խոչընդոտ էին հանդիսացել ծով դուրս գալու ճանապարհին: Չկա ուրիշ մեկը, որ մեն-մենակ կատարած քնի այդքան և այդպիսի գործեր. ո՛չ հելլեններից, ո՛չ էլ բարբարոսներից որևէ մեկին հնարավոր չէ համեմատել նրա հետ՝ կատարածի չափերով ու վեհությամբ: Հենց դա էլ իմ մեջ ցանկություն առաջ բերեց գրել նրա մասին, ես չեմ կարծում, թե արժանի չեմ մարդկանց ներկայացնելու Ալեքսանդրի գործերը: (5) Ահա թե ինչու, ասում եմ, ձեռնարկեցի այս երկասիրությունը: Թե ով եմ ես, ինքս գիտեմ և կարիք չունեմ հայտնելու անունս (այն առանց այդ էլ անհայտ չէ մարդկանց), նշելու հայրենիքս և իմ տոհմը և խոսելու այն մասին, թե ինչ պաշտոն եմ ունեցել հայրենի երկրում: Բայց ահա թե ինչ կհայտնեմ ես՝ ինձ համար այս զբաղմունքը դարձել է թե՛ հայրենիք, թե՛ տոհմ և թե՛ պաշտոն, և դա սկսվել է դեռ երիտասարդ հասակից: Ուստի գրեալում եմ, որ ես արժանի եմ տեղ գրավելու հելլեն գրողների առաջին շարքում, եթե Ալեքսանդրն առաջինն է պատերազմողների մեջ:

(6) Իլիտնից նա ժամանեց Արիստրա, որտեղ կանգնած էր Հելլենսպոնտոսով անցած իր ամբողջ զորքի ճամբարը: Հաջորդ օրն արդեն Պերկոտեում էր, իսկ մեկ օր էլ անց անցավ կամպասկոսով և ճամբար խփեց Պրակաիոս գետի ափին, որը հոսում է Իդեական լեռներից և ծով թափվում Հելլենսպոնտոսի և էլիքսինոսի միջև: Այնտեղից նա եկավ Հերմոտոս, շրջանցելով Կոլոնոս քաղաքը: (7) Զորքից առաջ նա հետախույզներ էր ուղարկել Արաբեոսի որդու՝ Ամինտոսի զլխավորությամբ: Նրա հետ էր ապոլլոնիացի «ընկերներին» իղոսը, որի հրամանատարը Սոկրատեսն էր՝ Սափոնոսի որդին, ինչպես նաև այսպես կոչված «վաղողների» շորս ջոկատ: Բնակիչների իրեն հանձնած Պրիպոս քաղաքի մոտով անցնելիս նա իր «ընկերներից» մեկի՝ Պանեզորոսի՝ կիկազորոսի որդու հետ կայազոր ուղարկեց քաղաքը գրավելու:

(8) Պարսիկների զորավարներն էին Արսամը, Թեոմիթրը, Պեաիներ և Նիփատը: Նրանց հետ էր Սպրիթրիդատը՝ Հոնիայի և Լիդիայի սատրապը և Արսիտոսը՝ Հելլենսպոնտոսի մոտի Փոյուզիայի կառավարիչը: Նրանք ճամբար էին դրել Զիլեա քաղաքի մոտ բարբարոսների հեծելազորի և հելլեն վարձկանների հետ միասին: (9) Իրադարձությունների քննարկման ժամանակ, նրանց տեղեկացրել էին, որ Ալեքսանդրը անցել է Հելլենսպոնտոսը: հողոսցի Մեմնոնը խորհուրդ տվեց մակեդոնացիների հետ մարտի մեջ չմտնել, քանի որ մակեդոնացիների հետևակը զգալիորեն ավելի ուժեղ է, և ինքն Ալեքսանդրն էլ զորքի հետ է, այն դեպքում, երբ Գարեհը բացակայում է: Անհրաժեշտ է նահանջել, ոտքի տակ տալ ձիերի համար կեր հանդիսացող շոգանկանությունը, այրել բերքը և շինայել նույնիսկ հայրենի քաղաքները: Ալեքսանդրը չի կարողանա մնալ մի երկրում, որտեղ պարեն չկա: (10) Արսիտոսն էլ, ասում են, պարսիկների ժողովին հայտարարել է, թե ինքը թույլ չի տա, որ կրակի մատնվի իր հպատակներից թեկուզ մեկի տունը: Պարսիկները բռնեցին Արսիտոսի կողմը: Նրանք կասկածում էին, որ Մեմնոնը գիտակցաբար ցանկանում է ձգձգել պատերազմը, ձգտելով արժանանալ արքայի մեծարանքներին:

Ալեքսանդրն այդ ժամանակ մոտենում էր Գրանիկոս գետին, իր հետևից մարտակարգով տանելով զորքը: Նա հոպլիտներին շարել էր կրկնակի փաղանգով, հեծյալներին դասավորել թևերից, գումակին էլ կարգադրել էր գալ հետևից: Հետախուզությունը դեկավարում էր Հեգեկոբոնը: Նրա հետ էին երկար նիզակներով զինված հեծյալները և շուրջ 5000 թեթևազեն մարդիկ: (2) Ալեքսանդրն արդեն մոտ էր Գրանիկոս գետին, երբ նրա մոտ եկան հեծյալ հետախույզները և հայտնեցին, որ դիմացի ափին կանգնած են մարտի պատրաստ պարսիկները: Այնժամ Ալեքսանդրը ողջ զորքը դասավորեց մարտական պատրաստության վիճակով: Նրան մոտեցավ Պարմենիոնը և ասաց հետևյալը.

(3) «Արքա, ինձ թվում է, որ տվյալ իրադրությունում լավ կլինի մենք դետի այս ափին ճամբար խփենք և մնանք ինչպես կանք: Զեմ կարծում, թե թշնամին, որի հետևակը զգալիորեն զիջում է մերին, համարձակվի բանակ դնել մեր մոտեքքում, դրանով իսկ նա մեր զորքին հնարավորություն կտա հեշտություն գետանց կատարել արշալույսին: Եվ մենք կանցնենք գետը ավելի շուտ, քան նրանք կհասցնեն շարք կանգնել: (4) Իսկ այժմ, ըստ իս, վտանգավոր է ձեռնարկել այդ գործը. չէ որ չի կարելի զորքը ձգված շարքով անցկացնել գետով: Երևում է, թե այստեղ ինչքան շատ խոր տեղեր կան, ափերն էլ, ինչպես տեսնում ես, բարձր են և զառիթափ: (5) Իսկ եթե զինվորները սկսեն անցնել անկանոն ձևով կամ սյունաշարով, այդ դիրքում նրանք ամենաթույլն են, ասպա նրանց վրա, երբ նրանք սկսեն դուրս գալ գետից, կհարձակվի թշնամու կանոնավոր շարք կազմած հեծելազորը: Առաջին իսկ անհաջողությունը ծանր կլինի և՛ մեր ներկա վիճակի համար, և՛ կասկածի տակ կզրվի ամբողջ պատերազմի ելքը»:

(6) «Ես գիտեմ այդ, Պարմենիոն,— պատասխանեց Ալեքսանդրը,— բայց ես ամաշում եմ, որ առանց զվարություն անցա Հելլենսպոնտոսը, իսկ այս շնչին առվակը (այդպես արհամարհական անվանեց նա Գրանիկոսը) խանդարելու է մեզ գետանց կատարել հենց հիմա, այնպես, ինչպես կանք: (7) Ես կանցնեմ գետը. դա պահանջում է թե՛ մակեդոնացիների փառքը, թե՛ վտանգի հանդեպ ունեցած իմ արհամարհանքը: Պարսիկներն էլ ողի կառ-

ենն՝ իրենց մակեղանացիներին արժանի հակառակորդ կարծե-
լով, քանի որ տակավին նրանք մակեղոնացիներից ոչինչ չեն
տեսել, որ արդարացներ նրանց սարսափը մեր հանդեպ»:

14

Այդ ասելով, նա Պարմենիոնին ուղարկեց ղեկավարելու ձախ
թևը, իսկ ինքն անցավ աջը: Աջ թևի առջևում կանգնած
էր Պարմենիոնի որդին՝ Փիլոտեսը, իր հեծյալ «ընկերների», նետա-
ձիգների և ազրիանացի տեղանետների հետ: Նրա հետևում կանգ-
նած էր Արաբեսոսի որդին՝ Ամինտոսը, հեծյալ նիզակակիրների,
Սոկրատեսի պետների և իղոսների հետ: (2) Նրանց կողքին «ըն-
կերների» շարքում կանգնած էին վահանակիրները՝ Նիկանո-
րոսի՝ Պարմենիոնի որդու ղեկավարությամբ, նրանց հետևում՝
Օրոնտոսի որդի Պերդիկոսի փաղանգը, նրանց հաջորդում էին
Պոլեմոկրատոսի որդի Քենոսի, Անդրոմենոսի որդի Ամինտոսի
փաղանգները, և նրանք, որոնց առաջնորդում էր Ամինտոսի որ-
դի Փիլիպոսը: (3) Զախ թևում առաջինը կանգնած էին թեսալա-
ցի հեծյալները, որոնց հրամանատարն էր Հարպալոսի որդի Կա-
լատոսը: Նրանց հետևում դաշնակիցների հեծյալներն էին, որոնց
առաջնորդում էր Մենելայոսի որդին՝ Փիլիպոսը, իսկ նրանց հետե-
վում թրակացիներն էին Աղափոնեսի ղեկավարությամբ: Կողքին
հետևակն էր՝ Կրատերոսի, Մելեագրոսի և Փիլիպոսի փաղանգ-
ները, որոնք զբաղեցնում էին ողջ ուղղամաշարքի գրեթե կեսը:

(4) Պարսիկների հեծելազորը մոտ 20 հազար էր, հետևակը
20 հազարից քիչ պակաս՝ կազմված օտարերկրյա վարձկան-
ներից: Նրանք հեծելազորը շարել էին գետափի ձգված գծով, իսկ
հետևակը՝ հեծյալների հետևում: Ափից սկսած, տեղանքը հետըզ-
հետե բարձրանում էր: Այն տեղի դիմաց, որտեղից նրանք տեսել
էին Ալեքսանդրին (նա հեշտությամբ նկատվում էր նաև շնորհիվ
իր հիասքանչ զինահանդերձի և իրեն շրջապատողների երկշտ
ակնածանքի), իրենց ձախ թևում նրանք գետափին խիտ շարել
էին հեծյալ ջոկատները:

(5) Նրա զորքերն էլ որոշ ժամանակ, շարվելով հենց գե-
տի մոտ, հանգիստ կանգնած էին և պահպանում էին խոր լուռ-
ություն, սարսափելով նրանից, ինչ հիմա պիտի կատարվեր: Պար-
սիկները սպասում էին, թե երբ պետք է մակեղոնացիները սկսեն
գետանցը, որպեսզի հարձակվեն գետից դուրս եկողների վրա:

(6) Ալեքսանդրը ցատկեց ձիու վրա, հրամայեց շրջապատող զին-
վորներին հետևել իրեն և գործել արիաբար: Առաջ ուղարկեց
հեծյալ հետախույզների և պետների՝ Արաբեսոսի որդի Ամինտո-
սի ղեկավարությամբ, ինչպես նաև մեկ հետևակային գունդ, որի
առջևից գնալու էր Սոկրատեսի իղոսը Փիլիպոսի որդու՝ Պաղո-
մենոսի գլխավորությամբ. այդ օրը իղոսը դարձավ ամբողջ հեծե-
լազորի առաջատարը: (7) Իսկ ինքը՝ Ալեքսանդրը, առաջնորդե-
լով աջ թևը, շեփոտների և ուղմի աղաղակների ներքո մտավ գե-
տը, ամբողջ ժամանակ ուղղամաշարքը պահելով հոսանքի հանդեպ
թեթևությամբ, որպեսզի պարսիկները չկարողանային հարձակվել
նրա վրա կողքից, երբ նա դուրս կգար գետից, իսկ ինքը մար-
տի մեջ կմտներ հնարավորին շափ հոծ շարքով:

15

Պարսիկները վերևից նետվեցին ափին մոտեցած Ամինտոսի
և Սոկրատեսի առաջատար ջոկատների վրա. մի մասը գետի
առափնյա բարձունքներից տեղեր և նիզակներ էին նետում գե-
տը, մյուսները, ուլքեր ներքևում էին կանգնած, ուղղակի մտնում
էին ջուրը: (2) Զիավորները խառնվեցին իրար. մի մասը փորձում
էր դուրս գալ ջրից, մյուսները խանգարում էին դրան: Պարսիկ-
ները նետում էին մեծ քանակությամբ տեղեր, մակեղոնացիներ-
ը կոպում էին նիզակներով: Մակեղոնացիները քանակով քիչ
էին և առաջին գոտեմարտում նրանց վիճակը լավ չէր, քանի որ
նրանք հակահարված էին տալիս թշնամուն ոչ թե ամուր գետնին
կանգնած, այլ գետի մեջ կանգնած և ներքևից, իսկ պարսիկնե-
րը կանգնած էին գետափի բարձրությունների վրա: Բացի այդ,
այստեղ շարված էր պարսկական հեծելազորի լավագույն մասը
և նրա հետ մեկտեղ կոպում էին Մեմնոնի որդիներն ու ինքը՝
Մեմնոնը: (3) Մակեղոնացիներից առաջինները՝ պարսիկների
հետ գոտեմարտի բռնված քաջերը, թրատվեցին, բացի նրանցից,
որոնց հաջողվեց շրջվել Ալեքսանդրի կողմը, որն արդեն մոտե-
նում էր, իր հետևից տանելով աջ թևը: Նա առաջինը նետվեց պար-
սիկների վրա, խոյանալով դեպի այն վայրը, որտեղ կուտակվել էր
նրանց հեծելազորը և որտեղ կանգնած էին նրանց զորավարները:
(4) Նրա շուրջը դաժան ճակատամարտ սկսվեց, և այդ ժամանակ
մակեղոնացիների գնդերը մեկը մյուսի հետևից, արդեն ահալեց
զոժարությամբ, անցան գետը: Կոպում էր հեծելազորը, բայց
այն ավելի շատ նմանվում էր հետևակի՝ ճակատամար-

ախ: Ձին ձիու վրա կը նետվում, մարդը՝ գոտեմարտում մարդու հետ: Մակեդոնացիները ձգտում էին պարսիկներին լրիվ հեռացնել ափից և բշել դեպի հարթավայր, իսկ պարսիկները՝ խանգարել նրանց ափ ելնել և կրկին ջուրը բշել: (5) Այստեղ էլ բացահայտվեց Ալեքսանդրի գինվորների գերազանցությունը՝ նրանք ոչ միայն ավելի ուժեղ և փորձառու էին, այլև դինված էին ոչ թե տեղերով, այլ հոսի փայտից կոթ ունեցող ծանր նիզակներով:

(6) Այդ ճակատամարտում Ալեքսանդրի նիզակն էլ կոտրվեց. նա մի ուրիշը խնդրեց Արեոոսից՝ արքայական ասպանդակապահից, բայց նրա նիզակն էլ թեժ կռվում կոտրվել էր, և նա ճարպկորեն մարտնչում էր մնացած կեսով: Յուրջ տալով այն Ալեքսանդրին, նա խնդրեց դիմել ուրիշի: «Ընկերներից» մեկը՝ կորնթոսցի Գեմարատոսը, ավելց նրան իր նիզակը: (7) Ալեքսանդրը վերցրեց այն. տեսնելով, որ Գարեհի փեսան՝ Միհրդատը, շատ է առաջ եկել, իր հետևից բերելով սեպաձև շարված հեծյալներին, նա ինքը նետվեց առաջ և հարվածելով Միհրդատի դեմքին, վայր գցեց նրան: Այդ ակնթարթին Ալեքսանդրի վրա նետվեց Ռեսակը և դաշույնով հարվածեց նրա գլխին: (8) Սաղավարտը կոտրվեց, բայց և իր վրա վերցրեց հարվածի ուժը: Ալեքսանդրը նրան էլ տապալեց, զրահը նիզակով շարդեց և այն Ռեսակի կուրծքը խրեց: Սպիթրիդատը հետևի կողմից դաշույնը արդեն բարձրացրել էր Ալեքսանդրի վրա, բայց Կլիտոսը՝ Դրոպիդոսի որդին, կանխեց նրան և ուսից կտրեց դաշույն բռնած նրա ձեռքը: Այդ ընթացքում հեծյալները, ովքեր ինչպես կարողացել էին գետն անցնել, սկսեցին հավաքվել Ալեքսանդրի շուրջը:

16

Պարսիկներին, որոնց զեմբերին ամեն կողմից նիզակներով խփում էին (հարվածները հասնում էին թև՝ մարդկանց, թև՝ ձիերին), հետ նետեցին հեծյալները. նրանց մեծ վնաս հասցրին նաև թևթևազեն հետևակայինները, որոնք խառնվել էին հեծյալներին: Պարսիկները սկզբում քաշվեցին այն վայրը, որտեղ առաջին շարքում կռվում էր Ալեքսանդրը, բայց երբ իրենց զորքի կենտրոնը տեղի տվեց, հեծելազորը երկու թևերում, բնականաբար, ճեղքվեց, և սկսվեց համատարած փախուստը: (2) Զոհվեցին մոտ հազար պարսիկ հեծյալներ: Հետապնդումը երկար շտեկեց, քանի

որ Ալեքսանդրը դիմեց օտարերկրացի վարձկաններին: Նրանց զանգվածը մնացել էր այնտեղ, ուր սկզբում տեղաբաշխել էին, կենդիվ ոչ այնքան ողջամտությունից, որքան հանկարծահատաբարափից: Ալեքսանդրը նրանց վրա տարավ հետևակը, իսկ հեծելազորին հրամայեց ամեն կողմից նրանց վրա հարձակվել: Միքսիլոլով նրանց մեջ, նա կարճ ժամանակում կոտորեց բոլորին: Ոչ մեկին չհաջողվեց փախչել, էթի չհաշվենք նրանց, որոնք թաքնվեցին դիակների մեջ. մոտ 2000 հոգի գերվեցին: (3) Պարսիկ զորավարներից զոհվեցին Նիփաթը, Պետրոնը, Լիդիայի սատրապ Սպիթրիդատը, Կապադովկիայի փոխարքա Միթրոբուզանը, Գարեհի փեսան՝ Միհրդատը, Գարեհի որդին՝ Արտաքսերքսեսի թոռը, Արբուսիլը, Փանակը՝ Գարեհի կնոջ եղբայրը, և օտարերկրացիների առաջնորդ Օմարը: Արտաքսերքսեսի գաշտից փախավ Փոյուզիա և այնտեղ, ինչպես ասում են, ինքնասպան եղավ, քանի որ պարսիկները նրան մեղավոր էին համարում իրենց պարտություն համար:

(4) Մակեդոնացիներից ընկան 25 «ընկերներ», որոնք զոհվեցին առաջին գոտեմարտում: Նրանց պղնձե արձաններ կանգնեցրին Դիոսում. Ալեքսանդրի հրամանով դրանք պատրաստեց Կիսպոսը, որը և նրա արձաններն էր պատրաստում: Միայն նրան էին արժանի համարում այդ աշխատանքի համար: Մնացած զոհված հեծյալների թիվը 60-ից ավելի էր, իսկ հետևակայիններինը՝ մոտ 30: (5) Նրանց Ալեքսանդրը թաղեց հաջորդ օրը՝ զենքերով և մեծարանքով: Նրանց ծնողներին և երևխաններին ազատեց հողալին, ունեցվածքային և այլ հարկերից, ինչպես նաև հարկադիր աշխատանքներից: Վիրավորների հանդեպ ամենայն հոգատարությամբ ցուցաբերեց. ինքն այցելեց բոլորին, ուսումնասիրեց վերքերը, հարց ու փորձ արեց, ով ինչպես է վիրավորվել և ամեն մեկին հնարավորություն տվեց և՛ պատմել, թե ինչ է արել, և՛ թև զուլի գովել: (6) Եվ պարսից զորավարներին նա թաղեց, թաղեց և հեղին վարձկաններին, որոնք ընկան իր թշնամու դեմ համատեղ կռվելիս: Իսկ նրանց, որոնց գերի էր վերցրել, ձեռք ու ոտքը շղթայեց և ուղարկեց Մակեդոնիա աշխատելու, քանի որ նրանք հեղիններ լինելով, դեմ էին կանգնում հեղինների համընդհանուր որոշմանը և կռվում էին բարբարոսների կողմից ընդդեմ Հելլադացի: (7) Նա Աթենք ուղարկեց 300 ձեռք պարսկական ազմական հանդերձանք, որպես նվեր Աթենաս Պալլասին: Մակագրությունը նա հրամայեց անել հետևյալ կերպ. «Ալեքսանդրը՝ Փիլիպոսի 2— Ալեքսանդր Մակեդոնացի 33

որդին, և բոլոր հելլենները, բացի լակեդեմոնացիներից, խլեցին Ասիայում բնակվող բարբարոսներին»:

17

Նա Կալատոսին սատրապ նշանակեց նրանց վրա, ում կառավարել էր Արսիտոսը: Բնակչությանը հրամայեց վճարել նույն հարկերը, որոնք վճարել էին Դարեհին: Այն բարբարոսներին, որոնք իջնելով սարերից նրան հանձնվեցին, կարգադրեց վերագառնալ իրենց տները: (2) Զելիտներին ներեց, տեղեկանալով, որ նրանց ուժով են ստիպել միանալ բարբարոսներին, և Պարմենիոնին ուղարկեց Դասկիլիոնը գրավելու: Պարմենիոնը գրավեց կայազորի լքած Դասկիլիոնը:

(3) Իսկ ինքը շարժվեց դեպի Սարգես: Երբ մինչև Սարգես գնալ 70 ասպարեզ կար, նրան ներկայացավ Միթրենը՝ Սարգես միջնաբերդի թրուրաբոսը, ինչպես նաև քաղաքի նշանավոր մարդիկ: Նրանք հանձնեցին Սարգեսը, իսկ Միթրենը հանձնեց միջնաբերդը և այնտեղ գտնվող գանձերը: (4) Ալեքսանդրը ճամբար խփեց Հերմոս գետի մոտ: Հեռավորությունը Հերմոսից մինչև Սարգես մոտ 20 ասպարեզ էր: Նա Ամինտոսին՝ Անդրոմենոսի որդուն՝ ուղարկեց Սարգես՝ գրավելու միջնաբերդը, Միթրենին նա իր հետ տարավ, պատվի արժանացնելով նրան: Սարգեսի բնակիչներին և մնացած լիդիացիներին թույլատրեց ապրել իրենց հինավուրց օրենքներով և նրանց ազատություն պարգևեց: (5) Ինքն էլ մտավ միջնաբերդ, որտեղ տեղավորված էր պարսկական կայազորը: Տեղը նրան անառիկ թվաց. շատ բարձր, բոլոր կողմերից զառիթափ այդ վայրը շրջափակված էր նաև եռակի պարսպով: Նա որոշեց միջնաբերդում Օլիմպիական Զևսին տաճար և զոհասեղան կառուցել: (6) Երբ նա ուսումնասիրում էր, թե որ տեղը դրա համար կլինի ամենից հարմարը, հանկարծ ամառվա այդ եղանակին ձնաբուրբ սկավեց և ամպրոպ ճաթեց, իսկ երկնքից ջուր թափվեց այն տեղը, որտեղ լիդիական արքաների պալատն էր: Ալեքսանդրը որոշեց, որ իրեն վերևից նշան է ուղարկված, թե որտեղ պետք է կառուցել Զևսի տաճարը, և համապատասխան կարգադրություններ արեց: (7) Նա Սարգեսի միջնաբերդի կառավարիչ նշանակեց «ընկերներից» մեկին՝ Պավսանիոսին, իսկ հարկերի և տուրքերի բաշխման գործը հանձնարարեց Նիկիոսին: Ասանդրոսին՝ Փիլոտեսի որդուն, նշանակեց լիդիայի և մնացած մարզերի, Սպիթրիդատին՝ ենթակա մարդերի կառավարիչ և թողեց նրան այնքան հեծելազոր և թեթևազեն հետևակային, որքան

ավելի իրազրույթունում անհրաժեշտ էր թվում: (8) Կալատոսին և Անրոպոսի որդի Ալեքսանդրին ուղարկեց Մեմնոնի մարզը, նրանց հետ ուղարկելով պելոպոնեսցիներին և մեծ քանակությամբ այլ դաշնակիցներին, բացի ագրիանացիներից, որոնք մնացին Սարգեսում միջնաբերդը պաշտպանելու:

(9) Այդ ընթացքում Եփեսոսում գտնվող վարձկաններին լուր հասավ Գրանիկոսի մոտ տեղի ունեցած հեծելազորի ճակատամարտի մասին և նրանք փախուստի դիմեցին, եփեսոսցիներից իրենց վերջին տրեքերը: Նրանց հետ գնաց նաև Ամինտոսը՝ Անտիոքոսի որդին, որը Մակեդոնիայից փախել էր Ալեքսանդրի պատճառով: Ալեքսանդրը նրան ոչ մի վատ բան չէր արել, սակայն Ամինտոսը ատում էր նրան և գտնում, որ իրեն պատիվ չի բերում Ալեքսանդրից հանդուրժել որևէ անբարյացակամություն:

(10) Ալեքսանդրը Եփեսոս ժամանեց չորս օր անց, վերադարձեց վտարանդիներին, որոնց բշի էին քաղաքից նրան համակրելու պատճառով, ոչնչացրեց օլիգարխիան և վերականգնեց դեմոկրատիան: Հարկերը, որոնք եփեսոսցիները տալիս էին բարբարոսներին, հրամայեց վճարել Արտեմիսին: (11) Ժողովուրդը ազատվելով օլիգարխիայի սաբսափից, նետվեց սպանելու նրանց, ովքեր բերել էին Մեմնոնին, թալանեց Արտեմիսի տաճարը, վայր ցրեց տաճարում կանգնեցված Փիլիպոսի արձանը և քանդեց պարսյում գտնվող քաղաքն ազատագրած Հերոպիթեսի գերեզմանը: (12) Միրթակեսին, նրա որդի Պելագոնտեսին, Միրթակեսը և զբայրների երիտանդիները դուրս արեցին սուրբ տաճարից և քաղաքում սպանեցին: Ինչ վերաբերում է մյուսներին, ապա Ալեքսանդրը արգելեց նրանց հետապնդել և պատժել: Նա հասկանում էր, որ ժողովուրդը, եթե նրան թույլատրեն, մեղավորներին հետ նաև անմեղներին կսպանի, ուստի շարսրտությունից, ուստի էլ թալանի նպատակով: Եվ եթե Ալեքսանդրը բարի համբավի է արժանի, ապա ի միջի ալլոց, իհարկե, և իր՝ Եփեսոսում ցուցարկած այն ժամանակվա վարքի համար:

18

Միևնույն ժամանակ նրա մոտ եկան Մագնեսիայի և Տրալեսի քաղաքացիները՝ հանձնելու իրենց քաղաքները: Ալեքսանդրը նրանց մոտ ուղարկեց Պարմենիոնին, տալով նրան 2500 օտարերկրացի հետևակայիններ և մոտավորապես այդքան էլ մակեդոնացիներ և մոտ 200 հեծյալ «ընկերներ»: Ազափոկլեսի որդի Ար-

քիմաքոսին ոչ պակաս ուժերով ուղարկեց դեպի էոլական քաղաքները և այն հոնիացիների մոտ, որոնք դեռևս գտնվում էին բարբարոսների իշխանութիւն տակ: (2) Նա հրամայեց ամենուր ոչնչացնել օլիգարխիան, վերականգնել դեմոկրատական վարչակարգը, բոլորին թուլատրել ապրել իրենց օրենքներով և վերացնել բարբարոսներին տրվող տուրքերը: Ինքը մնաց Եփեսոսում, զոհ մատուցեց Արտեմիսին և նրա պատվին հանդիսավոր շքերթ կազմակերպեց, որին մասնակցում էր ամբողջ զորքը՝ զինված և շաքի կանգնած, ասես ճակատամարտի պատրաստ: (3) Հաջորդ օրը վերցնելով մնացած հետևակը, նետածիգներին, ազդիանացիներին, թրակացի հեծյալներին, «ընկերների» արքայական իզուսը և դրա հետ միասին ևս մեկ այլ իզուս, նա արշավի ելավ դեպի Միլետ: Կայազորի լքած այսպես կոչված արտաքին քաղաքը գրավեց առանց կանգ առնելու, ճամբար խփեց այնտեղ և որոշեց պաշարել ներքին քաղաքը, շրջափակելով այն պարսպով: (4) Բանն այն է, որ Հեղեստրատոսը, որին արքան հանձնարարել էր Միլետի պաշտպանութունը, նախկինում Ալեքսանդրին գրել էր, թե հանձնում է քաղաքը: Այժմ նա համարձակ էր դարձել, քանի որ պարսկական բանակը արդեն հեռու չէր և սկսել էր մտածել, թե ինչպես պահպանի քաղաքը պարսիկների համար: Նիկանորոսը՝ հելլենական նավատորմի հրամանատարը, կանխեց պարսիկներին. նա իր 160 նավերով նրանցից երեք օր շուտ մոտեցավ Միլետին և խարխիս զցեց կադե կղզու մոտ, որը Միլետի մոտերքում է: (5) Պարսկական նավերն ուղացան: Նավապետները տեղեկանալով, որ Նիկանորոսն արդեն հասել է կադե, խարխիս զցեցին Միկալե լիստն մոտ: Ալեքսանդրը մինչ այդ գրավել էր կադեն այն հաշվով, որ այդտեղ ոչ միայն հանգրվան կլինի նավերի համար. այդտեղ նա ափ էր իջեցրել մինչև 4000 թրակացի և ուրիշ օտարերկրացիների:

Բարբարոսները 300 նավ ունեին, (6) այնուհանդերձ Պարմենիոնը խորհուրդ էր տալիս Ալեքսանդրին ծովային մարտի բռնելու: Նա հուսով էր, որ հելլենները ընդհանրապես ուժեղ են ծովում, բացի այդ նման համոզման նրան բերել էր աստվածային խորհրդանշանը. տեսել էին, թե ինչպես էր արծիվը իջել Ալեքսանդրի նավախելին: Նա գտնում էր, որ հաղթանակը մեծ օգուտ կրերի ընդհանուր զործին, իսկ պարսութունը մեծ վնաս չի հասցնի, քանի որ պարսիկները առանց այդ էլ գերիշխում են ծովում: Նա ասաց, որ ինքն անձամբ ցանկանում է նավ բարձրանալ և մաս-

նակցել ճակատամարտին: (7) Ալեքսանդրը պատասխանեց, որ Պարմենիոնի կարծիքը սխալ է, իսկ խորհրդանշանի մեկնությունը հավանականություն չունի: Անիմաստ է փոքրաքանակ նավատորմը մարտի հանել անհամեմատ ավելի մեծի դեմ և անփորձ նավաստիներին ուղարկել ծովային զործում հմուտ կիպրոսցիների և փյունիկացիների դեմ: (8) Նա չի ցանկանում, որ մակեդոնացիների արիությունն ու փորձառությունը բանի պետք չզան այդ կասկածելի իրարանցման մեջ և բարբարոսների աչքի առջև: Եվ պարսութունը ծովի վրա մեծ վնաս կհասցնի, քանի որ կնսեմացնի իրենց մինչ այդ ձեռք բերած ռազմական զործերի փառքը: Թացի այդ հելլեններն էլ ծովային այդ անհաջողությունից ողևորված հուզումներ կառաջացնեն և կասպտամբեն: (9) Լավ կշռատեղիով այդ ամենը, նա հայտարարեց, որ այժմ ծովային ճակատամարտն անժամանակ է: Իսկ աստվածային խորհրդանշանին նա այլ մեկնարանություն տվեց. արծիվն, իհարկե, ուղարկված է հանուն իրեն, բայց քանի որ նա դեռին էր իջել, ապա դա ավելի շուտ նախանշում է, որ ինքը կհաղթի պարսից նավատորմին ցամաքից:

Այդ ժամանակ հայտնվեց Գլավկիպոսը՝ ամենահարգված միլետացիներից մեկը: Նրան Ալեքսանդրի մոտ էին ուղարկել ծովագնորդը և օտարերկրյա վարձկանները (սրանց գլխավորապես հանձնարարված էր քաղաքի պաշտպանությունը), ասելու, որ միլետացիները համաձայն են բացել իրենց դարպասներն ու իրենց նավահանգիստները հավասարապես թե՛ Ալեքսանդրի և թե՛ պարսիկների առջև և խնդրում են այդ պայմանով դադարեցնել քաղաքի պաշարումը: (2) Ալեքսանդրը հրամայեց Գլավկիպոսին անմիջապես վերադառնալ և հայտնել միլետացիներին, որ նրանք պատրաստ լինեն. լույսը բացվելուն պես ճակատամարտը կըսկսվի: Պարսիպաների մոտ նա կանգնեցրեց մեքենաները. կարճ ժամանակ անց պարսիպաների մի մասն արդեն քանդված էր, իսկ մյուս մասը՝ սաստիկ խարխլված, և նա իր զորքն այդ ավերակների և անցքերի միջով առաջնորդեց քաղաք: Միկալեի մոտ գտնվող պարսիկները ոչ միայն տեսնում էին, այլև գրեթե ներկա էին նրան, թե ինչպես են մակեդոնացիները զրոհով վերցնում իրենց բարեկամների ու դաշնակիցների քաղաքը:

(3) Նրկանորոսն էլ Լադեից տեսնելով, որ Ալեքսանդրի զորքը գրոհի նեավեց, նավերն ուղղեց Միլետի նավահանգիստը, թիավարելով ամի կրկայնքով: Նավահանգիստի մուտքի մոտ, ամենանեղ վայրում, նա խարխսի գցեց, իրար մոտ հավաքելով տրիերները և նավաքթերն առաջ ուղղելով. այժմ նավահանգիստը փակ էր պարսկական նավատորմի համար, և միլետցիները պարսիկներից օգնութեան հույս ալլես չունեին: (4) Մակեդոնացիների ճնշման տակ, որոնք վրա էին տվել բոլոր կողմերից, միլետցիների և վարձկանների մի մասը նետվեց ծովը, և շրջված վահաններով լողալով հասավ քաղաքից ոչ հեռու գտնվող անանուն մի կղզյակի: Մյուսները նստեցին մակույկները, շտապելով խույս տալ մակեդոնական տրիերներից, սակայն բռնվեցին նավահանգիստի մուտքի մոտ: Մեծամասնությունը զոհվեց հենց քաղաքում:

(5) Գրավելով քաղաքը, Ալեքսանդրն ինքը շարժվեց դեպի կղզի, որտեղ ամրացել էին փախստականները. նա կարգադրեց ամեն մի տրիերի ցուղիին աստիճան դնել, որպեսզի նավերից բարձրանան կղզու զառիվայր ամբի վրա, ինչպես պարսպի վրա կրարձրանային: (6) Երբ նա կղզու վրա տեսավ մեռնելու պատրաստ մարդկանց, նրան համակեց խղճահարուստները նման վեհանձնություն ու հավատարմություն ցուցաբերած մարդկանց հանդես: Նա նրանց հաշտություն առաջարկեց՝ պայմանով, որ ծառայեն իրեն: Գրանք հելլեն վարձկաններն էին, թվով 300 հոգի: Իսկ միլետցիներին, որոնք փրկվել էին քաղաքի գրավման ժամանակ, նա բաց թողեց և ազատություն շնորհեց:

(7) Բարբարոսները ամեն օր Միկալեի մոտ խարխսի էին բարձրացնում և մոտենում հելլենական նավատորմին, հուսալով նրանց նավաստիներին ճակատամարտի մեջ ներգրավել: Գիշերը նավակայում էին Միկալեի մոտ, սակայն անհարմար տեղում, քանի որ ստիպված էին ջուր բերելու համար գնալ հեռու՝ մինչև Մեանդրոս գետի ակունքները: (8) Ալեքսանդրի նավերը պահպանում էին միլետյան նավահանգիստը, շթույլատրելով բարբարոսների նավերին ներխուժել այնտեղ, իսկ Միկալե նա ուղարկեց Փիլոտեսին՝ հեծյալներով և երեք հետևակային զնդերով, կարգադրելով, որ ոչ ոքի թույլ չաան նավերից ամի իջնել: Պարսիկները, գտնվելով իրենց նավերի վրա, հայտնվեցին պաշարված քաղաքի վիճակում և ջրի ու ալլ պարենի անբավարարության պատճառով նավարկեցին Սամոս: Այնտեղ պաշար վերցնելով, նրանք կրկին վերադարձան Միլետ (9) և նավահանգիստի դիմաց բաց

ծովում կանգնեցրին բազմաքանակ նավեր, հույս ունենալով բաց ծով բաշել մակեդոնացիներին, հինգ նավ էլ մտան Լադե կղզու և նավահանգիստի միջև եղած նեղուցը, հուսալով զավթել Ալեքսանդրի գրեթե դատարկ նավերը: Նրանք խմացել էին, որ նավաստիներին մեծամասնությունը ցրվել է նավերից, ոմանք վառելիք, ուրիշները մթերք, երրորդներն էլ անասնակեր ճարելու հրամանով:

(10) Նավաստիների որոշ մասն իրոք բացակայում էր, բայց ներքանք, ովքեր մնացել էին, կազմեցին տասը նավի լրիվ անձնակազմ, և Ալեքսանդրը, տեսնելով մոտեցող պարսկական հինգ տրիերները, փութով նրանց դեմ ուղարկեց այդ նավերը, հրամայելով խփել հակառակորդի նավերին ցուղիներով: Հինգ նավերի մեջ գտնվող պարսիկները տեսնելով, որ մակեդոնացիները, հակառակ իրենց սպասածին, գալիս են իրենց վրա, դեռ հեռվից շրջվեցին և փախան դեպի մնացած նավերը: (11) Այդ փախուստի շեղացում գրավվեց իսացիների դանդաղընթաց մի նավ՝ իր անձնակազմով. մնացած չորսին հաջողվեց հասնել յուրայիններին: Այդպես էլ, ոչնչի չհասնելով, պարսիկները հեռացան Միկալե:

Ալեքսանդրը որոշեց ցրել իր նավատորմը: Այդ ժամանակ նա բավականաչափ դրամ չուներ և զիտակցում էր, որ իր նավատորմը պարսկական նավատորմի հետ չի կարող զուլս դնել, իսկ վտանգի ենթարկել իր զորքի նույնիսկ մի մասը, նա չէր ցանկանում: Բացի այդ, նա գտնում էր, որ նվաճելով Ասիան ցամաքափն ուժերի միջոցով, նա արդեն նավատորմի կարիք չի ունենա, իսկ մերձծովյան քաղաքների գրավումով նա կկործանի պարսկական նավատորմը, քանի որ նրանք ոչ մի տեղ չեն կարողանա քաղցնել թիավարների և նավաստիների կազմը և Ասիայում ապաստանելու տեղ չեն ունենա: Եվ արժիվ հայտնվելը նա բացատրեց որպես խորհրդանշան, որը կանխագուշակում էր, որ ինքը ցամաքափն է հաղթելու նավատորմին:

(2) Ավարտելով այդ գործերը, նա մեկնեց Կարիա, քանի որ նրան հայտնել էին, որ Հալիկաոնասում մեծ քանակությամբ բարբարոսներ ու օտարերկրացիներ են հավաքվել: Հրեթացս վերցնելով Միլետի և Հալիկաոնասի միջև գտնվող քաղաքները, նա Հալիկաոնասից ամենաշատը հինգ ասպարեղ հեռավորության վրա

համարար խփեց, ասեա պատրաստվում էր երկարատև պաշարման: (3) Քաղաքը բնականից անառիկ էր, իսկ այն տեղերում, որտեղ թվում էր, ինչ-որ բան է պահասում բացարձակ անվտանգութեան համար, Մեմնոնը (Գարեհը նրան նշանակել էր Ստորին Ասիայի կառավարիչ և ամբողջ նավատորմի հրամանատար) վաղուց ամեն ինչ ամրացրել էր՝ ինքն անձամբ ներկա լինելով աշխատանքներին: Քաղաքում մեծ քանակությամբ վարձկան և պարսկական զորք էր թողնված. նավահանգստում կանգնած էին տրիերները, իսկ նավատարները՝ ռազմական գործողությունների ժամանակ կարող էին մեծ օգնություն ցույց տալ:

(4) Հենց առաջին օրը, երբ Ալեքսանդրը մոտեցավ պարսպաներին, ղեպի Միլասա տանող դարպասներից դուրս պրծան զինվորները, նետեր արձակելով և տեղեր շարտելով: Ալեքսանդրի զինվորները առանց դժվարության նրանց քաղաք բռնեցին:

(5) Մի քանի օր անց Ալեքսանդրը իր հետ վերցնելով վահանակիրներին, «ընկերներին» հեծելազորը, Ամինտոսի, Պերդիկոսի և Մելեագրոսի հետիոտն զնդերը, և դրանց հետ միասին նետածիղ-ներին ու ազրիանացիներին, շրջանցեց քաղաքը, ուղղվելով ղեպի այն կողմը, որը նայում էր Մինդոսին: Նա ցանկանում էր ստուգել, թե արդյոք այստեղ պարսպը հարմար կլինի՞ գրոհի համար և չի՞ կարող արդյոք սրբնթացորեն, նախքան իրեն կնկատեն, դրավել Մինդոսը: Եթե Մինդոսը իր ձեռքում լինի, դա մեծ օգնություն կլինի Հալիկաոնասի պաշարման գործում, իսկ Մինդոսի բնակիչները խոստացել էին իրեն հանձնել քաղաքը, եթե նա գիշերը աննկատ մտանա: (6) Ինչպես պայմանավորվել էին, նա կեսգիշերին մոտեցավ պարսպաներին, սակայն քաղաքում գտնվողներից ոչ ոք քաղաքը նրան շփոթեց, իսկ ինքը շուներ ոչ մեքենաներ, ոչ էլ սանդուղքներ, քանի որ հույս ուներ քաղաքը գրավել ոչ թե գրոհով, այլ դավաճանությամբ: Այնուհանդերձ նա մոտեցրեց մակեդոնացիների փաղանգը և հրամայեց քանդել պարսպը: Մակեդոնացիները տապալեցին աշտարակներից մեկը, բայց այն ընկավ առանց պարսպը վնասելու: (7) Քաղաքացիները եռանդուն սկսեցին պաշտպանվել: Հալիկաոնասից շատերը ծովով օգնության փութացին: Գրավել Մինդոսը սրբնթացորեն, առանց նախապարաստության, անհնարին եղավ: Ալեքսանդրը հետ դարձավ, շհասնելով իր նպատակին, որի համար արշավել էր, և կրկին զբաղվեց Հալիկաոնասի պաշարմամբ:

(8) Նա առաջին հերթին լցնել տվեց քաղաքի առջև փորված

30 կանգունից ավելի լայնությամբ և 15 կանգուն խորությամբ խանգակը, որպեսզի հեշտությամբ մոտեցնի աշտարակները, որոնցից նա պատրաստվում էր նետահարել պարսպաների վրա կառուցվող զինվորներին, ինչպես և մյուս մեքենաները, որոնք ըստ նրա պետք է հեշտությամբ խորտակեին պարսպաները: (9) Խանգակը լցվեց առանց դժվարության և մեքենաներն էլ արդեն մոտեցրել էին, երբ պաշարվածները գիշերով գրոհեցին, նպատակ ունենալով այրել աշտարակները և մյուս մեքենաները՝ թե նրանք, որոնք մոտեցվել էին, թե՛ նրանք, որոնք ուր որ էր պետք է մոտեցնեին. մակեդոնական պահակախմբին օգնեցին գրոհի ժամանակ արթնացածները և թշնամուն առանց դժվարության հետ քշեցին պարսպաների հետևը: (10) Նրանցից մոտ 170 մարդ զոհվեց, սպանվեց և նեոպաղոմեոսը՝ Արաբոսի որդին, Ամինտոսի եղբայրը, նրանցից մեկը, որն անցել էր Գարեհի կողմը: Ալեքսանդրի մոտ զոհվեց 16 հոգի, իսկ մոտ 300 հոգի էլ վիրավորվեցին, քանի որ թշնամու գիշերային գրոհի ժամանակ նրանք հնարավորություն չունեին մտածել, թե ինչպես պաշտպանեն իրենց վերջերից:

21

Մի քանի օր անց Պերդիկոսի զնդից մե՛ վրանում ապրող երկու մակեդոնական հույժտներ կոնծելիս սկսեցին զուխ գովել և հպարտանալ իրենց քաղաքործություններով: Եվ նրանց համակեց փառամոլությունը, մի կողմից էլ զինին խփեց զլխներին, և նրանք զինվելով՝ ինքնազուխ բարձրացան միջնաբերդի կողմից Միլասային նայող պարսպի վրա: Նրանք ավելի շատ ցանկանում էին փայլել իրենց խիզախությամբ, քան վտանգավոր գոտեմարտի բռնվել թշնամիների հետ: (2) Քաղաքից նկատեցին երկու մարդու, որոնք խենթի պես պարսպին էին բարձրանում, և նետվեցին նրանց վրա: Մակեդոնացիները սպանեցին մոտեցողներին, իսկ նրանց վրա, ովքեր կանգնեցին հետվում, սկսեցին տեղեր նետել, բայց և՛ թվային գերակշռությունն էր թշնամու կողմը, և՛ նրանց տեղ էլ ավելի նպաստավոր. հալիկաոնասցիներ վազում էին և վերջից տեղեր նետում: (3) Այդ ընթացքում Պերդիկոսի զինվորները ևս մեկը վրա հասավ, քաղաքից էլ նոր մարդիկ մոտեցան և պարսպի մոտ թե՛ կռվ սկսվեց: Մակեդոնացիները կրկին հետ նետեցին դարպասից դուրս եկածներին և քիչ էր մնում գրավելին

բաղաբք: (4) Պարիսպներն այդ ժամանակ այնքան էլ լավ չէին պաշտպանվում. հիմնահատակ փլված երկու աշտարակները և նրանց միջև ընկած միջնորմը հեշտ ճամփա կրացրե զորքի համար դեպի քաղաքի ներսը, եթև այն ամբողջովին կովի մեջ մըտնելու: Երրորդ շարդված աշտարակն էլ միանգամից կփլվեր, եթև մի քիչ տակից փորեին, սակայն հալիկառնասցիները ներսի կողմից քանդված պարսպի փոխարեն ազլուսից շուտափույթ նորը կառուցեցին կիսալուսնի ձևով: Սրա կառուցումը նրանց համար դժվար չէր՝ աշխատող ձեռքերը շատ էին:

(5) Հաջորդ օրը Ալեքսանդրը մտեցրեց մեքենաները: Քաղաքից կրկին փորձեցին գրոհել մեքենաներն այրելու նպատակով: Պարսպին մոտ գտնվող պաշտպանական կառույցների մի մասն այրվեց: Այրվեց և մի փայտյա աշտարակ, բայց մնացածը անվնաս պահեցին Փիլոտոսի և Հելլանիկոսի զինվորները, որոնց էլ հանձնարարված էր այդ շինությունների պաշտպանությունը: Իսկ երբ այդտեղ հայտնվեց Ալեքսանդրը, թշնամիները նետեցին ջահերը, որոնցով դուրս էին եկել օգնություն, իսկ շատերն էլ վալը գցեցին և իրենց զենքերը ու փախան հետ՝ դեպի քաղաք: (6) Երկու է, հալիկառնասցիները սկզբում առավելություն ունեին, քանի որ նրանց դիրքը ավելի բարձր էր: Նրանք ոչ միայն հարվածներ էին տեղում մեքենաները պահպանող մարդկանց ճակատին, այլև հնարավորություն ունեին հարվածելու քանդված պարսպի երկու կողմերից կանգուն մնացած աշտարակներից երկրորդ պատին մոտեցող թշնամուն, ինչպես նաև կողքերից՝ բացի թիկունքից:

22

Մի քանի օր անց, երբ Ալեքսանդրն իր մեքենաները կրկին մտեցնելով ներքին ազլուսե պարսպին, ինքն էր դեկավարում գրոհը, քաղաքից համընդհանուր արտագրոհ սկսվեց: Մի մասը դուրս էր գալիս փլված պարսպի միջով, որտեղ ինքը՝ Ալեքսանդրն էր գտնվում, մյուսները՝ եռակի դարպասներով, որը մակեդոնացիների համար կատարյալ անակնկալ էր: (2) Առաջինները սկսեցին մեքենաների վրա ջահեր և այլ այրվող նյութեր նետել, որոնք բռնկվելով՝ մեծ հրդեհ կառաջացնեին, բայց երբ Ալեքսանդրն իր զորքով եռանդազին նետվեց նրանց վրա, նրանք ճարպկորեն խույս տալով մեքենայի աշտարակից իրենց վրա նետվող մեծ

քարերից և նետերից, փախան քաղաք: (3) Քիչ մարդ չըտնվեց: Ետեքը դուրս եկան քաղաքից, և նրանք կովեցին արիաբար: Մի մասը զոհվեց մակեդոնացիների հետ բռնված ձեռնամարտում, մյուսներն ընկան փլված պարսպի մոտ, քանի որ միջանցքը այդտեղ չափազանց նեղ էր նման քանակություն մարդկանց համար, իսկ ավերակների վրայից անցնելն էլ դժվար էր:

(4) Եռակի դարպասներից դուրս եկածներին դիմավորեց Պողոմեոսը՝ արքայի թիկնապահը, Ադեոսի և Թիմանդրոսի զինգրի և որոշ քանակություն թեթևազենների հետ: Նրանք էլ առանց դժվարության ստիպեցին հետ փախչել քաղաքից դուրս եկածներին: (5) Փախստականները ստիպված էին նահանջելու անցնել խրամի վրայով գցված նեղ կամրջով: Կամրջը շարդվեց այդ քանակություն մարդկանց ծանրություն տակ: շատերը խրամի մեջ ընկան և զոհվեցին՝ կոխտվելով յուրսքիների կողմից կամ էլ խոցվելով վերևից հարվածող մակեդոնացիներից: (6) Ամենամեծ կոտորածը սկսվեց հենց դարպասի մոտ: Սարսափից այն փակել էին ժամանակից շուտ, վախենալով, որ փախչողներին կրնակելու հետևող մակեդոնացիները քաղաք կմտնեն, և այսպիսով փակեցին յուրայիններից շատերի վերադարձի ճանապարհը: Մակեդոնացիները նրանց կոտորեցին հենց պարիսպների մոտ: (7) Քաղաքը ուր որ էր, արդեն նվաճելու էին, եթև Ալեքսանդրը ավարտի աղդանշան չտար: Նա գնացանկանում էր պահպանել Հալիկառնասը և հալիկառնասցիներից բարեկամական առաջարկներ էր սպասում:

Պաշարվածները մոտ հազար մարդ կորցրին, Ալեքսանդրը՝ 40 մարդ: Նրանց մեջ էին թիկնապահ Պողոմեոսը, տաքսիբաթոս Քլեարթոսը, քիլիարթոս Ադեոսը և ուրիշ ոչ պակաս նշանավոր մակեդոնացիներ:

23

Պարսկական զորավարներ Օրոնտոբատը և Մեմնոնը հասկացան, որ ստեղծված իրավիճակում նրանք չեն կարող երկար դիմանալ պաշարմանը: Պարսպի մի մասը քանդվել էր, մի մասն էլ խաբսված էր. արտագրոհների ժամանակ շատ զինվորներ զոհվեցին, շատերն էլ վիրավոր էին և ի վիճակի չէին կուլելու: (2) Հաշվի առնելով այս ամենը, նրանք գիշերային երկրորդ պահակաժամին այրեցին փայտե աշտարակը, որը իրենք էին

կառուցել հակառակորդի մեքենաների դեմ պայքարելու համար, ինչպես նաև այլ կառույցները, որտեղ նրանց զինապահեստներն էին: Կրակի մատնեցին նաև պարիսպների մոտ գտնվող տները: (3) Աշտարակից և ղինանոցից կրակն ուժգնորեն տարածվելով, ընդգրկեց նաև այլ շինություններ, մյուս կողմից էլ քամին էր կրակը քշում դեպի այդ կողմը: Մարդկանց մի մասն անցավ կղզու վրայի միջնաբերդը, մյուսները Սալմակիզա կողմող միջնաբերդը: (4) Կատարվածի մասին Ալեքսանդրին հայտնեցին փախստակները, ասինք ինքն էլ էր տեսել հսկա հրդեհը: Թեև արդեն կեսգիշերին մոտ էր, նա այնուամենայնիվ ոտքի հանեց մակեդոնացիներին՝ կարգադրելով սպանել գերված հրձիգներին և կենդանի թողնել այն հալիկառնացիներին, որոնց գտել են տներում:

(5) Արդեն լուսացել էր. Ալեքսանդրը տեսավ պարսիկների և վարձկանների զբաղեցրած բարձունքները և որոշեց, որ շարժե դրանք պաշարել. ելնելով տեղանքից, այդ պաշարման վրա բիշ ժամանակ չէր ծախսվի, իսկ նրանք իր համար արդեն մեծ նշանակություն չունեին, երբ ինքն արդեն գրավել էր ողջ քաղաքը: (6) Նա թաղեց այդ գիշեր զոհվածներին: Այն մարդկանց, որոնք կցված էին մեքենաներին, հրամայեց տանել Տրալես. քաղաքը հավասարեցրեց հողին, և այստեղ և մնացած Կարիալում Պըտղոմեոսի հրամանատարության տակ թողնելով 3000 վարձկան հետևակայինների և մոտ 200 հեծյալների, մեկնեց Փոյուզիա: (7) Համայն Կարիայի տիրուհի նա նշանակեց Ադային՝ Հեկատոմանոսի դստերը՝ Իզրիոսի կնոջը, որը նաև նրա եղբայրն էր, սակայն կարիացիների սովորույթի համաձայն ամուսնացել էր քրոջ հետ: Մահանալիս, Իզրիոսը նրան էր հանձնարարել երկրի կառավարումը, քանի որ Ասիալում, ղեռ Շամիրամի ժամանակներից սկսած, ընդունված էր, որ կանայք ղեկավարեն տղամարդկանց: Իսկ Պիկսոդարը նրան զրկել էր իշխելու իրավունքից և ինքը զբաղեցրել նրա տեղը: (8) Պիկսոդարի մահից հետո արքայի հանձնարարությամբ կարիացիներին կառավարում էր Օրոնտոբատը՝ Պիկսոդարի փեսան: Ադային հաջողվել էր պահել միայն Ալինդոսը՝ կարիական մայր ամրոցը: Երբ Ալեքսանդրը ներխուժեց Կարիա, նա դիմավորեց Ալեքսանդրին, հանձնեց նրան Ալինդոսը և ասաց, որ նրան համարում է իր որդին: Ալեքսանդրը վերագործրեց նրան Ալինդոսը, շարժամարհեց իրեն շնորհված որդիական անվանումը և երբ գրավեց Հալիկառնասը ու նվաճեց

մնացած կարիական հողերը, Ադային հանձնեց աճբողջ երկրի կառավարման իրավունքը:

24

Ալեքսանդրի հետ պատերազմի գնացածների մեջ կային այնպիսիները, որոնք ամուսնացել էին արշավանքի մեկնելուց անմիջապես առաջ: Ալեքսանդրը որոշեց, որ դրա մասին չի կարելի մտառնալ. նա նորապսակներին Կարիայից ուղարկեց Մակեդոնիա ձմեռն իրենց կանանց հետ անցկացնելու: Նրանց հրամանատար կարգեց Պտղոմեոսին՝ Սելևկոսի որդուն, արքայական թիկնապահներից մեկին, ինչպես նաև զորահրամանատարներից Քլեմոսին՝ Պոլեմոկրատոսի որդուն, և Մելեագրոսին՝ Նեոպտոլոմեոսի որդուն, որոնք իրենք էլ նորապսակներ էին: (2) Նա հրամայեց նրանց, որ երբ տուն վերադառնան՝ իրենց հետ տանելով տուն ուղարկվածներին, զբաղվեն հավաքագրությամբ և հավաքեն հնաբավորին չափ շատ հեծյալներ ու հետևակայիններ: Ալեքսանդրի այդ վարմունքը, մյուսների հետ միասին, փառաբանեց նրա անունը մակեդոնացիների մոտ: Նա ուղարկեց նաև Կլեանդրոսին՝ Պոլեմոկրատոսի որդուն, Պելոպոնեսից զինվորներ հավաքագրելու համար:

(3) Պարմենիոսին ուղարկեց Մարդես, նրա տրամադրության տակ ղնելով «ընկերներին» հիպարբիան, թեսալական հեծյալներին, այլ դաշնակիցների և գումակը, և պատվիրեց գնալ Մարդեսից Փոյուզիա: Իսկ ինքը գնաց Լիկիա և Պամփիլիա, որպեսզի ձգվափը գրավելով, թշնամու համար անօգուտ դարձնի նրանց նախատրմը: (4) Առաջին հերթին նա վերցրեց իր ճանապարհին ընկած Հիպարնոսը. դա մի անառիկ տեղ էր, որը պաշտպանվում էր օտարերկրյա վարձկան զորքերով: Այդ օտարերկրացիները գուրս եկան միջնաբերդից և հանձնվեցին Ալեքսանդրին: Հետո նա ներխուժեց Լիկիա. պայմանագիր կնքեց տեղիսոսցիների հետ և, անցնելով Քսանթոս գետը, գրավեց Պինարամոսը (Քսանթոս և Պատարամոս քաղաքները նրան հանձնվեցին հոժարակամ) և այլ ավելի փոքր քաղաքներ, թվով մինչև 30:

(5) Ավարտելով այդ գործերը, նա ձմեռվա կեսին ներխուժեց Միլիաս կողմող մարզը: Այն գտնվում էր Մեծ Փոյուզիայում, սակայն, պարսից արքայի կարգադրությամբ, այն միացված էր Լիկիային: Այստեղ ժամանեցին փասալիսների ղեսպանները՝ Ալեքսանդրի զլխին ոսկե պսակ ղնելու և նրանից բարեկամություն ազբրսելու նպատակով: Այդ մասին իմանալով, Ստորին Լիկիայի

շատ քաղաքներ դիտարկելու նպատակով ուղարկեցին: (6) Ալեքսանդրը հրամայեց փաստիկներին և լիկիացիներին հանձնել իրենց քաղաքները այն մարդկանց, ում ինքն այդ նպատակով նրանց մոտ կուղարկի: Բոլոր քաղաքները հանձնվեցին: Որոշ ժամանակ անց ինքն անձամբ ժամանեց Փասելիս և օգնեց բնակչությանը քանդել իրենց երկրում պիսիդյանների կառուցած հզոր ամրությունը. բարբարոսները այդտեղից ասպատակություններ էին կատարում և վնասում դաշտերում աշխատող փասելիսներին:

25

Սրբ նա դեռ Փասելիսում էր, նրան տեղեկացրին, որ նրա դեմ շար դիտալորություններ ունի Ալեքսանդրը՝ Աերոպոսի որդին՝ «ընկերներից» մեկը և այդ ժամանակվա թեսալական հեծելազորի հրամանատարը: Այդ Ալեքսանդրը Հերոմենոսի և Արաբեսոսի եղբայրն էր, որոնք եղել էին Փիլիպոսի սպանության մասնակիցը: (2) Այն ժամանակ կասկած էր ընկել նաև նրա վրա, սակայն Ալեքսանդրը ներեց նրան, որովհետև Փիլիպոսի մահից հետո նա առաջիններից մեկը եկավ իր մոտ և զրահ կապելով, նրա հետ պալատ մտավ: Հետագայում նա վախելում էր Ալեքսանդրի հարզանքը: Ալեքսանդրը նրան ուղարկեց Թրակիա որպես ստրատեգ, իսկ երբ Կալատոսը՝ թեսալական հեծելազորի հրամանատարը, նշանակվեց ստրատա, Ալեքսանդրը թեսալական հեծելազորի հրամանատարությունը հանձնեց նրան: Նրա դավադրության մասին իմացան հետևյալ կերպ:

(3) Դարեհը, երբ իր կողմն անցած Ամինտոսից ստացավ այդ Ալեքսանդրի ուղարկած նամակներն ու հանձնարարությունները, ծով ուղարկեց պարսիկ Սիսինին՝ հավատարիմ մի մարդու, իբր ուղարկել է Փոյուզիայի սատրապի՝ Ատիզիայի մոտ, իսկ իրականում նրա համար, որ հանդիպի Ալեքսանդրին և երզվի նրան, որ եթե նա սպանի Ալեքսանդր արքային, ապա ինքը կդառնա Մակեդոնիայի արքա և ի լրումն թագավորության կատանա ևս հազար տաղանդ ոսկի: (4) Սիսինը գերի ընկնելով Պարմենիոսին, պատմեց նրան, թե ինչու է ուղարկվել: Պարմենիոսը պահակախմբի հսկողության տակ նրան ուղարկեց Ալեքսանդրի մոտ, և Ալեքսանդրը նրանից իմացավ նույնը: «Ընկերներին» խորհրդի հավաքելով՝ նա հարց բարձրացրեց, թե ինչ որոշում կայացնեն Ալեքսանդրի վերաբերյալ: (5) Որոշեցին այսպես. նախկինում էլ խելացի բան չէր հեծելազորի հրամանատարությունը տալ ան-

ժամանակի մարդու: Իսկ այժմ անհրաժեշտ է շուտափույթ նրան վերացնել, քանի դեռ թեսալացիները նրա հետ ընդհանուր լեզու չեն գտել և նրան չեն մղել ընդդեմ Ալեքսանդրի: (6) Նրանց վախեցրել էր նաև աստվածային մի նախանշանակ: Մի անգամ, դեռ Հալիկաոնասի պաշարման ժամանակ, Ալեքսանդրը կեսօրին պռուկեց հանգստանալու, և նրա գլխավերևում զիլ ծվլլոցով սկսեց պտույտներ տալ մի ծիծեռնակ: Նա նստում էր մահճի վրա մեկ յայտեղ, մեկ այնտեղ և սովորականից բարձր ձայներ հանում: (7) Ալեքսանդրը հոգնածությունից բոլորովին չէր կարողանում քթնանալ և միայն ձեռքով թեթևակի բշտում էր ծիծեռնակին, որն իր ծվլլոցով նրան հանգիստ չէր տալիս: Թռչնակն ամենևին էլ չէր վախենում և միտք էլ չուներ հեռանալու: Նա նստեց Ալեքսանդրի գլխին և թռավ գնաց միայն այն ժամանակ, երբ լիովին արթնացրեց նրան: (8) Ծիծեռնակի վարքը Ալեքսանդրին խորհրդավոր թվաց, և նա այդ մասին պատմեց Արիստանդրին՝ տեղմեսոսցի գուշակին: Արիստանդրն ասաց, որ ծիծեռնակը նրան հայտնել է այն մասին, որ ընկերներից մեկը նրա դեմ դավ է նյութում, սակայն հայտնել է նաև, որ այդ շար մտադրությունը կբացահայտվի: Չէ որ այդ թռչունն ապրում է մարդկանց հետ, համակրում է նրանց և թռչունների մեջ ամենից շաղկերատն է:

(9) Համադրելով սա պարսիկի պատմածին, նա Պարմենիոսի մոտ ուղարկեց Ամփոտերոսին՝ Ալեքսանդրի որդուն՝ Կրատերոսի եղբորը: Նրա հետ մարդիկ դրեց Պերգամոսից, որպես ուղեկցորդներ: Ամփոտերոսը տեղացու շորեր հագավ, որպեսզի ճանապարհին իրեն չճանաչեն և աննկատելի ժամանեց Պարմենիոսի մոտ: (10) Ալեքսանդրից նա նամակներ չէր բերել. Ալեքսանդրը որոշել էր բացելից չգրել այդպիսի գործի մասին: Նա բանավոր հայտնեց իրեն տրված հանձնարարությունները: Ալեքսանդրին բռնեցին և կալանքի տակ առան:

26

Շարվելով Փասելիսից, Ալեքսանդրը իր զորքի մի մասը լեռներով ուղարկեց դեպի Պերգամոս. նրանց համար ճանապարհ էին բացում թրակացիները, բայց այդ գործը ծանր էր ու երկար: Ինքն էլ իր զորքով գնաց ծովափով: Այստեղով հնարավոր էր անցնել, եթե փչեր հյուսիսային քամին. հարավայինի դեպքում ծովափով գնալն անհնար էր: (2) Իսկ այժմ, հարավային կողմից ոչ առանց աստվածային հոժարակամության, ինչպես որոշեցին Ալեքսանդրն

ու նրա կողմնակիցները, փշեց շոր բորեասը, և նրանք անցան արագ ու առանց հոգնելու: Երբ նա դուրս եկավ Պերգամոսից, հանապարհին նրան դիմավորեցին լիազոր դեսպաններ Ասպենդոսից, որոնք հանձնեցին քաղաքը, բայց խնդրեցին այնտեղ կալավոր լինողները (3) Այդ խնդրանքը բավարարվեց: Ալեքսանդրը հրամայեց նրանց 50 տաղանդ մուծել զինվորներին վարձատրելու համար և հանձնել ձիեր, որոնք նրանք պարտավորվում էին բուծել արքայի համար: Համաձայնության գալով զրամի և ձիերի վերաբերյալ, դեսպանները հեռացան:

(4) Ալեքսանդրը շարժվեց դեպի Սիդե: Սիդեացիները սերում են էոլական Կուսից: Նրանք իրենց մասին հետևյալն են պատմում. երբ Կուսից առաջին վերաբնակիչները Պոտեցիլ են այդ հողին և ափ իջել, նրանք հանկարծակի մոռացել են հսկանական լեզուն և միանգամից սկսել են խոսել բարբարոսների լեզվով, բայց ոչ այն լեզվով, որով խոսել են դրացի բարբարոսները, այլ իրենց մինչ այդ չսոված լեզվով: Այդ ժամանակից ի վեր սիդեացիները խոսում են մի լեզվով, որը նման չէ հարևան բարբարոսների լեզվին: (5) Կայսրը թողնելով Սիդեում, Ալեքսանդրը շարժվեց Սիլիսո: Դա մի անառիկ տեղ էր, և այնտեղ կանգնած էր օտարերկրյա վարձկանների և տեղացի բարբարոսների կայսրը: Սիլիսոը նա միանգամից շկարողացավ վերցնել. դեռ ճանապարհին նրան հայտնել էին, որ ասպենդոսցիները բնավ չեն ցանկանում կատարել սահմանած պայմանները, ձիերի համար ուղարկված մարդկանց մերժում են, զրամ չեն մուծում, գյուղերից ամեն ինչ տարել են քաղաք, Ալեքսանդրի բանքերների առջև փակել են դարպասները և վերանորոգում են պարիսպները այն տեղերում, որտեղ խարխլվել են: Կսելով այս ամենը, Ալեքսանդրը շրջվեց դեպի Ասպենդոս:

27

Ասպենդոսի զգալի մասը գտնվում էր անառիկ զառիվայր լեռան վրա, որի մոտով հոսում է էվրիմեդոնտոս գետը, լեռան շուրջը, ցածրադաշտում շատ տներ կային շարված, որոնք շրջափակված էին ոչ բարձր պարսպով: (2) Տեղեկանալով Ալեքսանդրի մոտենալու մասին, բոլոր տեղաբնակները լքեցին իրենց տները, գտնվելով, որ ցածրավայրը պահել չեն կարողանա, և բարձրացան լեռը: Ալեքսանդրը իր զորքով տեղավորվեց լքված պարսպի հետև-

ում, ասպենդոսցիների լքած տներում: (3) Տեսնելով հանկարծակի ժամանած Ալեքսանդրի զորքը, որը շրջապատել էր նրանց, ասպենդոսցիները դեսպաններ ուղարկեցին՝ նախկին պայմաններով հաշտություն աղերսելով: Իր առջև տեսնելով անառիկ ամբողջ և հասկանալով, որ ինքը պատրաստ չէ երկարատև պաշարման, Ալեքսանդրը, այնուհանդերձ, չհամաձայնեց նախկին պայմաններին: (4) Նա որպես պատանդ պահանջեց իրեն հանձնել ամենաազդեցիկ մարդկանց, այն ձիերը, որոնց մասին արդեն պայմանավորվել էին, և հարյուր տաղանդ ոսկի՝ հիսունի փոխարեն: Ասպենդոսցիները պարտավոր էին ենթարկվել Ալեքսանդրի նշանակած սատրապին, ամեն տարի մակեդոնացիներին հարկ առնել և դատական կարգով լուծել այն հողերի հարցը, որոնք նրանք ուժով խլել էին հարևաններից և որի համար էլ նրանց մեղադրում էին:

(5) Ասպենդոսցիները համաձայնեցին այդ ամենին, և Ալեքսանդրը շրջվեց դեպի Պերգամոս, իսկ այնտեղից գնաց Փոյուսիս: Նրա ճանապարհը անցնում էր Տելմեսոս քաղաքի մոտով: Քաղաքի բնակիչները ծագումով բարբարոս պիսիդիներն էին, բնակություն էին հաստատել մի շատ բարձր, ամեն կողմից դառիթափ վայրում: Քաղաքի կողմից անցնող ճանապարհը վատն էր: (6) Լեռը քաղաքից իջնում էր մինչև ճանապարհը, որը նրա ստորոտն էր, իսկ դիմացից մի ուրիշ լեռ էր բարձրանում՝ ոչ պակաս զառիթափ: Այս լեռները ճանապարհի վրա դարպասի նման մի բան էին ստեղծել: Գրավելով այդ լեռները, մի փոքրիկ ջոկատով կաթելի էր անցուղին անմատչելի դարձնել: Տելմեսոսցիներն էլ զբաղեցրին երկու լեռները, ամբողջ ժողովրդով նետվելով դեպի ջին: (7) Տեսնելով այդ, Ալեքսանդրը հրամայեց մակեդոնացիներին ճամբար խփել առանց զենքերը հանելու: Նա որոշեց, որ անմեսոսցիները տեսնելով իրենց, ամբողջ ժողովրդով չեն մնա գիշերելու բաց երկնքի տակ. մեծամասնությունը կգնա քաղաք, որը շատ մոտ է, և լեռների վրա կմնա միայն պահակախումբը: Ինչպես նա ենթադրում էր, այդպես էլ եղավ. մեծամասնությունը հեռացավ. տեղում կանգնած էին միայն պահակախոսները: (8) Նա անմիջապես սրանց վրա տարավ նետաձիգներին, տեգանտոսների ջոկատները և այն հոպլիտներին, որոնք թեթևազեն էին: Տելմեսոսցիները շփոթանալով սրընթաց հարձակմանը և լքեցին այդ վայրը: Ալեքսանդրն անցավ կիրճը և ճամբար խփեց քաղաքի մոտ:

Այստեղ նրա մոտ սելզերի կողմից դեսպաններ եկան: Սրանք նույնպես բարբարոսներ էին, պիսիդներ: Նրանց քաղաքը մեծ էր, մարդիկ էլ ռազմատեն: Նրանք վաղուց արդեն թշնամություն էին սնունդ տելմեսոսցիների հետ, և այդ պատճառով Ալեքսանդրի մոտ դեսպանություն ուղարկեցին, խնդրելով նրա բարեկամությունը: Ալեքսանդրը նրանց հետ հաշտություն կնքեց. այդ ժամանակներից ի վեր նրանք մշտապես հավատարիմ մնացին Ալեքսանդրին: (2) Հասկանալով, որ անկարող է արագ գրավել Տելմեսոսը, նա հարձակվեց Սագալասի վրա: Սա էլ փոքր քաղաք էր: Եվ այստեղ ապրում էին պիսիդներ, որոնք բոլոր պիսիդներից ամենառազմատենչն էին: Իսկ այդ ժողովուրդը ընդհանրապես ռազմատենչ է: Նրանք սպասում էին Ալեքսանդրին, զբաղեցնելով քաղաքի առջևի բլուրը, որտեղից թշնամուն դիմագրավելը ավելի վատ չէր, քան պարսպի վրայից, այնքան անառիկ էր այն: (3) Ալեքսանդրը մակեդոնացիների հետևակը շարեց հետևյալ կերպ. աջից, որտեղ ինքն էր ղեկավարում, կանգնած էին վահանակիրները, իսկ նրանց հետևից, մինչև ձախ թևը, տարածված էին հետևակային «ընկերներ»: Ստրատեգներից ամեն մեկը կանգնած էր այն շարքում, որն այդ օրը իրեն էր բաժին ընկել: (4) Ձախ թևի հրամանատարությունը նա հանձնեց Ամինտոսին՝ Արաբոսի որդուն: Առջևում՝ աջ թևում, կանգնած էին նետաձիգները և ազրիանացիները, իսկ ձախում՝ տեղերով դիմված թրակացիները՝ Սիտակոսի հրամանատարությամբ: Այդպիսի անհարմար տեղում հեծյալները ոչ մի օգուտ չէին տա: Պիսիդներին օգնության եկան և սելմեսոսցիները:

(5) Ալեքսանդրի ռազմիկները գրոհելով լեռը, որը պաշտպանում էին պիսիդները, արդեն բարձրացել էին այն տեղը, որտեղ բարբարոսները ջոկատներով երկու թևերից նետվեցին նրանց վրա: Նրանք այստեղ հեշտությամբ կարող էին վազել, իսկ թշնամիների համար շատ դժվար էր բարձրանալը: Նետաձիգները իրենց վատ հանդերձանքով առաջինը բախվեցին թշնամու հետ և փախան, սակայն ազրիանացիները աներեք մնացին: (6) Մակեդոնական հետևակն արդեն մոտ էր, իսկ նրա առջևից գալիս էր Ալեքսանդրը: Ծրք գործը հասավ ձեռնամարտին, բարբարոսները դոտեմարտելով թեթևազեն հոպլիտների հետ, ընկնում էին բազմաթիվ վերքերից: Նրանք չդիմացան: (7) Նրանցից զոհվեց

մոտ 500-ը... նրանք թեթևազեն էին, լավ գիտեին սելդան-քը, և նրանց համար խույս տալը դժվար չէր: Մակեդոնացիները՝ մանրազեն, ճանապարհներին անտեղյակ, առանձնապես համառություն չէին ցուցաբերում թշնամուն հետապնդելիս: (8) Փախուղներից կրնկակոխ հետևելով, Ալեքսանդրը գրոհով վերջրեց բազալը: Նրա զորքից սպանվեց Կլեանդրոսը՝ նետաձիգների ստրատեգը, և էլի 20 մարդ: Ալեքսանդրը արշավեց մնացած պիսիդներ վրա: Նրանց ամրոցներից մի քանիսը վերջրեց ուժով, մյուսները իրենք հանձնվեցին:

Այնտեղից նա Ասկանիա լճի կողքով, որում աղը նստվածք է տալիս, արշավեց Փոյուզիա: Տեղաբնակները օգտվում են դրանից և ծովի աղի կարիք չեն զգում: Հինգերորդ օրը նա հասավ Կելենն: Այդ քաղաքում միջնաբերդը բոլոր կողմերից զառիվայր լեռ է: Որպես կայազոր Փոյուզիայի սատրապը այստեղ նշանակել էր հազար կարիացիների և հարյուր հելլեն վարձկանների: (2) Նրանք էլ Ալեքսանդրի մոտ դեսպաններ ուղարկեցին տեղեկացնելու, որ եթե մինչև պայմանավորված օրը, որն իրենք հայտնում են, օգնության չգա, ապա իրենք կհանձնեն ամրոցը: Ալեքսանդրին դա ավելի շահավետ թվաց, քան բոլոր կողմերից անառիկ ամրոցը պաշարելը:

(3) Նա Կելեննն պահպանելու համար թողեց մոտ հազար հինգ հարյուր զինվոր, մնաց այդտեղ տասը օր, Փոյուզիայի սատրապ նշանակեց Անտիգոնոսին՝ Փիլիպոսի որդուն, իսկ նրա փոխարեն գաշնակից զորքերի հրամանատար նշանակեց ստրատեգ Բալակրոսին՝ Ամինտոսի որդուն, և արշավեց Գորդիոն: Պարմենիոնին հրաման ուղարկեց այնտեղ իրեն դիմավորել զորքով: Պարմենիոնն էլ նրան դիմավորեց զորքով: (4) Մակեդոնիա ուղարկված նորապսակները եկան Գորդիոն, նրանց հետ միասին եկավ և իրենց հավաքագրած զորքը Պտղոմեոսի՝ Սելևկոսի որդու, Քենրոսի՝ Պոլեմոկրատոսի որդու և Մելեագրոսի՝ Նեոպտղոմեոսի որդու հրամանատարությամբ: Հետիոտն մակեդոնացիները 3000 հոգի էին, հեծյալները՝ 300, մոտ 200՝ թիսալացի զինվորները, էլեացիները՝ հարյուր հիսուն, նրանց առաջնորդում էր էլեացի Ալկիոսը:

(5) Գորդիոնը գտնվում է Փոյուզիայում, Հելլեսպոնտոսին հարակից, և ընկած է Սանգարիոս գետի մոտ: Սանգարիոսի

ակունքները գտնվում են Փռչուղիայում: Այն հոսում է բյութանիական թրակացիների երկրով և թափվում է Վրասիայան ծովը: Այստեղ Ալեքսանդրի մոտ ղեկավարությունն եկավ Աթենքից, աթենացիներին ազատ արձակելու խնդրանքով, որոնք կովել էին պարսիկների կողմից և գերի էին ընկել Գրանիկոսի մոտ ու այժմ գտնվում էին Մակեդոնիայում՝ երկու հազարանոց կալանավորների ամբոխի մեջ: (6) Պատվիրակները վերադարձան ձեռնունայն: Ալեքսանդրը գտնում էր, որ եթե պարսիկների դեմ իր պատերազմելու ժամանակ հելլենները, Հելլադային հակառակ, շինվախեցել և անցել են բարբարոսների կողմը, բավական է սարսափը իր հանդեպ թևկուղ մի քիչ թուլանա, և իր համար դա կարող է ազետարեր լինել: Նա պատվիրակներին պատասխանեց, որ զան և խնդրեն նրանց համար այն ժամանակ, երբ իր ձեռնարկումը երջանիկ ավարտ կունենա:



ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

1

Այդ ընթացքում Մեմնոնը, որին Դարեհ արքան նավատորմի հրամանատար և ողջ ծովափնյա շրջանի կառավարիչ էր նշանակել, որոշեց պատերազմական գործողությունները տեղափոխել Մակեդոնիա և Հելլադա: Նա գրավեց Քիոսը, որը նրան հանձնեցին դավաճանություններ, և այնտեղից նավարկեց դեպի Լեսբոս: Միտիլենցիները չհնազանդվեցին նրան, բայց Լեսբոսի մյուս բազմաքանակները նա իր կողմը գրավեց: (2) Սրանց հետ հարցերը կարգավորելուց հետո նա գնաց դեպի Միտիլեն քաղաքը, շրջապատեց ծովից ծով կրկնակի ցցապատներով, հինգ ամբույթուն կառուցեց և իսկույն ցամաքի կողմից դարձավ իրադրություն տերը: Նրա նավատորմի մի մասը հսկում էր նավահանգիստը, իսկ մնացած նավերը նա ուղարկեց Սիգրիո հրվանդան, որտեղ գտնվում էր Քիոսից, Գերեստոսից և Մալեայից եկող բեռնատար նավերի պաշտպանությունը, կարգադրելով նրանց հսկել անցատեղը և կտրել միտիլենցիներին ծովից եկող ամեն տեսակ օգնության ճանապարհը:

(3) Բայց նա այստեղ հիվանդացավ և մահացավ: Նրա մահը, այդ ժամանակվա մյուս իրադարձությունների շարքում, ևս մի հարված էր արքային: Ավտոթրադատուր և Փառնաբազը՝ Արտավազի որդին, որին Մեմնոնը մեռնելիս հանձնել էր իր պաշտոնը՝ մինչև Դարեհի նոր կարգադրությունը (Փառնաբազը Մեմնոնի եղբորորդին էր), եռանդուն կերպով սկսեցին պաշարումը: (4) Միտիլենցիները կտրված էին ցամաքից, ծովից նրանց հսկում

էին բազմաքանակ նավերը, որոնք փակել էին նավահանգիստը: Տեսնելով, որ այլևս ելք չկա, նրանք Փառնաբազի հետ եկան հետևյալ համաձայնութեան. ուղղմական դաշինքի համաձայն Ալեքսանդրի կողմից եկած բոլոր օտարերկրացիները պետք է լքեն Միտիլենը, միտիլենցիները շեղվալ են հայտարարում Ալեքսանդրի հետ կնքած բոլոր պայմանագրերը և դառնում են Դարեհի դաշնակիցները, ինչպիսին Դարեհ արքայի հետ կնքած Անտալիդյան հաշտութեամբ էին: Նրանց վտարանդիները կվերադառնան և կստանան այն ունեցվածքի կեսը, որը նրանք ունեին մինչև իրենց հեռանալը: (5) Այդ պայմաններով միտիլենցիները պարսիկների կողմն անցան: Փառնաբազը և Ավտոթրադատոսը քաղաք մտնելուն պես այնտեղ մտցրին կայազորը, նրա հրամանատար նշանակեցին Հոտոսցի Լիկոմեդոսին, իսկ քաղաքի միանձնյա տիրակալ դրին Դիոգենեսին՝ վտարանդիները մեկին: Նրանք միտիլենցիներից պահանջեցին նաև դրամ. մի մասը բռնագրավեցին ունեւորներից, իսկ մի մասն էլ՝ քաղաքի գանձարանից:

2

Վերջացնելով այս գործը, Փառնաբազը օտարերկրացի վարձկաններով նավարկեց Լիկիա, Ավտոթրադատոսն էլ շարժվեց դեպի մյուս կողմերը: Այդ ժամանակ Դարեհը ուղարկեց Թիմոգեսին՝ Մենտորի որդուն, հրամանով: Փառնաբազից վերցնել օտարերկրացիներին և բերել արքայի մոտ, և որ Փառնաբազը տնօրինի այն ամենին, ինչին տնօրինում էր Մեմնոնը: (2) Փառնաբազը նրան հանձնեց օտարերկրացիներին և մեկնեց Ավտոթրադատոսի մոտ՝ նավատորմը վերցնելու: Հանդիպելով իրար, նրանք պարսիկ Դաթամի հրամանատարութեամբ տասը նավ ուղարկեցին Կիլիկիայի կղզիներ, իսկ իրենք մոտ հարյուր նավով շարժվեցին դեպի Տենեդոս: Խարիսիս զցելով այսպես կոչված Բորեյան նավահանգստում, նրանք առաջարկեցին տենեդոսցիներին շեղվալ հայտարարել բոլոր այն պայմանագրերը, որոնք վերջիններս կնքել էին Ալեքսանդրի և հելլենների հետ, իսկ Դարեհի հետ ապրել խաղաղութեամբ, ինչպես և որոշված էր Անտալիդյան պայմանագրով: (3) Տենեդոսցիները շատ ավելի հակված էին Ալեքսանդրի և հելլենների կողմը, սակայն սովյալ պահին նրանք վճռեցին, որ կարող են փրկվել միայն միանալով պարսիկներին: Հեղբուքոսը, որին Ալեքսանդրը հրամայել էր նորից նավատորմ կազմել, դեռ

չունեի այնքան նավեր, որպեսզի հույս դնելին նրանից շուտափույթ օգնություն ստանալու վրա: Այսպիսով Փառնաբազը ստիպեց տենեդոսցիներին անցնել իր կողմը ավելի շատ վախից, քան համար կամքով:

(4) Հենց այդ ժամանակ էլ Պրոթեոսը՝ Անդրոնիկոսի որդին, Անտիպատրոսի հրամանով էվրեայում և Պելոպոնեսում ուղղմանավեր էր հավաքում, որոնք պետք է պաշտպանեին կղզիները և բուն Հելլադան, եթե, ինչպես հայտնվում էր, այդտեղ գային բարբարոսները: Տեղեկանալով, որ Դաթամը տասը նավով կանգնած է Սիփնոսի մոտերքում, ինքը տասնհինգ նավով գիշերը ելավ Քադկիսից (այն, որ գտնվում է էվրիպոս կղզում): (5) Լուսաբացին նա հասավ Կիթնոս կղզին, մի ամբողջ օր անցկացրեց այնտեղ, որպեսզի ավելի ճշգրիտ տեղեկություններ հավաքի այդ տասը նավի մասին և գիշերը կայծակի նման նետվի փյունիկացիներին վրա: Հստակորեն իմանալով, որ Դաթամն իր նավերով կանգնած է Սիփնոսում, նա նավարկեց այնտեղ, և գիշերը, լույսը չբացված, հարձակվեց ոչինչի չկասկածող թշնամու վրա, գերեվարեց ութ նավ իրենց անձնակազմով: Դաթամը դեռ Պրոթեոսի հետ ճակատամարտը չսկսած, երկու տրիերներով խույս տվեց և փախավ նավատորմի մյուս մասի մոտ:

3

Ալեքսանդրը մտավ Գորդիոն և բարձրացավ միջնաբերդ, որտեղ գտնվում էր Գորդիոսի և նրա որդի Միդասի թագավորական պալատը: Այստեղ նա շատ էր ուզում տեսնել Գորդիոսի սայլակառքը և լծի վրայի հանգույցը: (2) Այդ սայլակառքի մասին տեղի բնակիչները մի հանրահայտ պատմություն էին պատմում: Հին ժամանակներում Փոչուդիայում ապրել է աղքատ Գորդիոսը: Ունեցել է մի փոքրիկ հողակտոր և մի զույգ լծկան հզ. մեկով վօր է արել, մյուսով՝ սայլապանություն: (3) Մի անգամ, երբ վարանելիս է եղել, նրա լծի վրա նստել է մի արծիվ և չի հեռացել այնքան ժամանակ, մինչև նա չի արձակել հզը: Գորդիոսը սարսափահար գնացել է Երևմտսոսյան գուշակների մոտ՝ պատմելու աստվածային այդ նշանի մասին: Տեղեկությունները կարողանում էին մեկնաբանել աստվածային նախանշանակները, և գուշակության կարողությունը նրանց ցնդում ժառանգաբար անցնում էր տղամարդկանց, կանանց, երեխաներին: (4) Մոտենալով տեղեկություն շրջանի գյուղերից մեկին, նա հանդիպում է ամանը ջուր լցնող մի

աղջկա և պատմում նրան արծվի հետ կատարված դեպքը: Այդ աղջիկն ինքը զուշակների ցեղից էր: Նա պատվիրում է Գորդիոսին, վերագառնալով նույն տեղը, զոհ մատուցել Զևս արքային: Գորդիոսն էլ խնդրում է նրան գնալ իր հետ և բացատրել, թե ինչպես պետք է անի զոհաբերությունը: Նա զոհաբերությունը անում է այնպես, ինչպես աղջիկն է ցույց տալիս. ամուսնանում է աղջկա հետ և նրանցից ծնվում է Միդաս որդին: (5) Նրբ Միդասն արգեն գեղեցիկ ու բաշ մի այր էր, Փոյուզիայում երկպառակություններ սկսվեցին, որոնցից տառապում էին բոլորը: Նախագուշակություններ էին եղել, որ սալակառքով նրանց մոտ է դալու մի թագավոր, որն էլ վերջ է տալու երկպառակություններին: Մինչ նրանք դատազություններ էին անում զրա մասին, սալակառքով ժողովրդական հավաքին ներկայացավ Միդասը՝ հոր և մոր հետ միասին: (6) Այդտեղ, համադրելով նախագուշակման հետ, Միդասին ընդունեցին այն անձնավորության տեղը, որի մասին բարբառել էր աստվածությունը՝ թե նա սալակառքով է դալու: Միդասին թագավոր կարգեցին: Միդասը վերջ տվեց երկպառակություններին, իսկ հայրական սալակառքը դրեց միջնաբերդում որպես շնորհակալական նվիրաբերում Զևս արքային՝ առաքված արծվի համար: Այդ սալակառքի մասին ահա թե ինչ են պատմում. ով կարողանա քանդել նրա լծի վրայի հանգույցը, նրան վիճակված է տիրել Ասիային: (7) Հանգույցը վայրի բալի մատղաշ կեղևներից էր հյուսված, և ո՛չ սկիզբն էր երևում, ո՛չ վերջը: Ալեքսանդրը շարժողացավ լուծել հանգույցի հանելուկը. հանգույցն էլ շքանդված թողնել շքանկացավ, քանի որ դա կարող էր հուզմունք և խոսակցություններ առաջացնել ժողովրդի մեջ: Ոմանք պատմում են, որ նա կտրատել է հանգույցը թրով և ասել. ահա և հանգույցը քանդվեց: Իսկ Արիստորոլոսը գրում է, թե նա առեղից հանել է արգելքը, այսինքն՝ ցցիկը, որն անցնում է առեղի միջով ու պահում հանգույցը, և հանել է լուծը: (8) Թե ինչպես է իրականում Ալեքսանդրը լուծել հանգույցի հետ կապված հարցը, ես հաստատել չեմ կարող: Համենայն դեպս, նա և նրա ուղեկիցները սալակառքից հեռացան համոզված, որ Ալեքսանդրի պարագայում հանգույցի հետ կապված զուշակությունը իրականանալու է: Նույնը հենց այդ գիշեր հաստատեցին երկնային խորհրդանշանները՝ կալծակն ու որոտը: Ուստի հաջորդ օրը Ալեքսանդրը զոհաբերություն արեց աստվածներին, որոնք խորհրդանշան էին ուղարկել և թելադրել իրեն՝ ինչպես քանդել հանգույցը:

Հաջորդ օրը նա մտավ Անկյուրա՝ Դադատիայի քաղաքներից մեկը: Այստեղ նրա մոտ դեպանություն ժամանեց պապուզոնցիների կողմից՝ հայտարարությամբ, որ իրենց ժողովուրդը հանձնվում է Ալեքսանդրին, նրա հետ բանակցություններ է սկսում, բայց և խնդրում է զորքով իրենց երկիրը շինել: (2) Ալեքսանդրը կարգադրեց, որ նրանք ենթարկվեն Կալատոսին՝ Փոյուզիայի սատրապին, իսկ ինքը շտապեց Կապադովիա և ամբողջությամբ գրավեց Հալիս գետի այս կողմը գտնվող հողերն և ավելի շատ տարածություններ գետի այն կողմում: Կապադովիայի սատրապ նշանակեց Միթիկոսոսին, իսկ ինքը գնաց գեպի Կիլիկյան դարպասները: (3) Հասնելով այն տեղը, որտեղ ճամբար էին խփել Կյուրոսը և Քսենոֆոնը, նա տեսավ, որ Դարպասը գրավել է ուժեղ պահակախումբը: Նա այստեղ թողեց Պարմենոնին՝ ժանրաղեն զնգերով, ինքը իր հետ վերցնելով վահանակիրներին, նետաձիգներին ու աղբիանացիներին, զիշերը՝ առաջին պահակաժամին, մոտեցավ Դարպասին, հույս ունենալով հանկարծակի հարձակվել պահակալին ջոկատների վրա: (4) Այնուհանդերձ նրա մոտենալը նկատեցին, բայց դա շագղեց նրա խիզախ ձեռնարկի ելքի վրա: Պահակախումբը, տեսնելով, որ իրենց վրա է դալիս ինքը՝ Ալեքսանդրը, փախուստի դիմեց, լքելով պահակակետերը: Հաջորդ օրը լուսաբացին նա իր ողջ զորքով անցավ Դարպասները և ներխուժեց Կիլիկիա: (5) Այնտեղ նրան հայտնեցին, որ Արսամը, որը նախկինում մտածում էր պահպանել Տարսոսը պարսիկների համար, այժմ, տեղեկանալով Ալեքսանդրի՝ Դարպասներն անցնելու մասին, պատրաստվում է թողնել քաղաքը, իսկ տարսոնցիներն էլ վախենում են, որ նա սկզբում կթալանի քաղաքը և հետո միայն կլքի այն: (6) Լսելով այդ մասին, Ալեքսանդրը այրուձիով ու թևեռակներով ամենաարագընթաց ջոկատներով սլացավ գեպի Տարսոս: Արսամը, տեղեկանալով նրա արքեթաց մոտենալու մասին, Տարսոսից հապճեպ փախավ Դարեհ արքայի մոտ, չհասցնելով որևէ վնաս պատճառել քաղաքին: (7) Ալեքսանդրը, ըստ Արիստորոլոսի պատմածի, հիվանդացավ հոգնածությունից: Ուրիշները պատմում են, որ նա բերտիների մեջ կորած, տաքացած նետվել է Քիդոսո գետը, ցանկանալով լողալ և զովանալ: Քիդոսոը հոսում է քաղաքի մեջտեղով, այն սկիզբ է առնում Տավրոս լեռան աղբյուրներից, հոսում է այդ

մաքուր տեղանքով, և նրա ջուրը սառն է ու շինչ: (8) Ալեքսանդրը ջրակծկումներ ունեցավ, ջերմութիւնը սաստիկ բարձրացավ և սկսվեց շրնդհատվող անքնութիւնը: Բոլոր բժիշկները, բացի արարնացի Փիլիպոսից, գտնում էին, որ նա չի ապրի: Այդ բժիշկը Ալեքսանդրի մերձավորն էր, ամեն ինչում, ինչ վերաբերում է բժշկութիւնը, լիակատար վստահութիւն էր վայելում, և, ընդհանրապես, նա բարի համբավ ուներ զորքում: Նա որոշեց Ալեքսանդրին լուծողական տալ. վերջինս կարգադրեց, որ տան: (9) Փիլիպոսը սկսեց գավաթի մեջ դեղ պատրաստել, և այդ ժամանակ Ալեքսանդրին Պարմենիոնից նամակ հանձնեցին, որտեղ նա Ալեքսանդրին խորհուրդ էր տալիս զոլուշանալ Փիլիպոսից: Նա լսել էր, որ իբր Դարեհը կաշառել է Փիլիպոսին, որպեսզի նա թունավորի Ալեքսանդրին: Կարդալով նամակը և դեռ այն ձեռքում բռնած, նա վերցրեց դեղով գավաթը և նամակը տվեց Փիլիպոսին կարգալու: (10) Ալեքսանդրը խմում էր, իսկ Փիլիպոսը այդ ընթացքում կարողում էր Պարմենիոնի նամակը: Միանգամից պարզվեց, որ Փիլիպոսը անհանգստանալու ոչինչ չունի իր պատրաստած դեղի համար: Նամակը նրան չվախեցրեց. նա միայն խորհուրդ տվեց Ալեքսանդրին ապագայում ևս լսել իրեն. եթե նա լսող լինի, ապա կապաքինվի: (11) Ալեքսանդրը առողջացավ. նրա հիվանդութիւնն անցավ: Փիլիպոսին նա ապացուցեց, որ ինքը հավատարիմ ընկեր է. շրջապատողները տեսան, որ իր ընկերների հարցում նա զերծ է կասկածներից և քաջութիւնը է նայում մահվան աչքերին:

5

Դրանից հետո նա Պարմենիոնին ուղարկեց դեպի մյուս Դարպանները, որոնք գտնվում են Կիլիկիայի և Ասորեստանի սահմանի վրա, կարգադրելով նախապես զրավել անցումը և պահել այն: Նա Պարմենիոնին տվեց դաշնակիցների հետևակը, հելլեն վարձկաններին, թրակացիներին, որոնց առաջնորդում էր Սիտակոսը, և թեսալական հեծելազորը: (2) Ինքը ավելի ուշ թողեց Տարսոնը և առաջին իսկ օրը ժամանեց Անքիալոս քաղաքը: Պատմում են, որ այն հիմնադրել է ասորեստանցի Սարդանապալը: Դատելով նրա շրջագծից և պարիսպների հիմքից, երևում էր, որ քաղաքը մեծ է հիմնադրվել՝ նկատի առնելով, որ նրա կարևորութիւնը դեռ կմեծանա: (3) Սարդանապալի մահաբձանը գտնվում էր Անքիալոսի պարիսպներից ոչ հեռու: Նա կանգնած էր ձեռքերը պահած այնպես, ինչպես սովորաբար պահում են, երբ ծափ են

առաջ: Նրա տակ ասորերեն գրված մահագրութիւն կար: (4) Ասորեստանցիներն ասում են, որ դա բանաստեղծութիւն էր հետեւյալ բովանդակութիւնով. «Սարդանապալը՝ որդին Անակիւզարաքի, մի օրում կառուցեց Անքիալոսը և Տարսոնը: Իսկ դու, անցորդ, կե՛ր, խմի՛ր ու զվարճացի՛ր: Մյուս բաները կյանքում դրան էլ շարժեն», այսինքն այն ձայները, որ արձակում են ծափ տվող ձեռքերը: Մեր «զվարճացիրը» փոխարինում է մի բառով, որը ասորերենում ավելի թեթևամիտ իմաստ ունի...

(5) Անքիալոսից Ալեքսանդրը ժամանեց Սուլե, այնտեղ կաշառք մտցրեց և բնակիչներին վրա տուգանք դրեց՝ 200 տաղանդ արծաթով, քանի որ նրանք չափից ավելի շատ էին բարեհաճ պարսիկների հանդեպ: (6) Այստեղից, վերցնելով մակեդոնական հետևակի երեք զունդ, բոլոր նետաձիգներին ու ազրիանացիներին, Ալեքսանդրը նետվեց սարերը պահպանող կիլիկիացիների վրա: 500 օր շարունակ նա ջարդում էր մեկին, պայմանավորվում մյուսների հետ, իսկ հետո վերադարձավ Սուլե: (7) Այնտեղ նա իմացավ, որ Պտղոմեոսը ու Ասանդրոսը ջախջախել են էրոնտորատին, որը պահպանում էր Հալիկաոնասի միջնաբերդը. և իր իշխանութիւն տակ պահում Մինդոսը, Կալնոսը, Փերոն և Կալիպոլիսը: Նրանք հպատակեցրել էին նաև Կոսը և Տրիոպիոնը: Նրանք գրում էին, որ Օրոնտորատին պարտութիւն են մատնել մեծ ճակատամարտում. նրա հետևակից սպանվել էր 700 մարդ, իսկ հեծյալներից՝ 50, զերի էլ վերցված էր 1000-ից ոչ պակաս: (8) Ալեքսանդրը Սուլեում զոհ մատուցեց Ասիլիպոսին, նրա պատվին կազմակերպեց հանդիսավոր երթ ամբողջ զորքի մասնակցութիւնով, ինչպես նաև ջահերով վազք, կազմակերպեց մարմնամարզական ու մուսայական մրցումներ և Սուլին դեմոկրատիա շնորհեց: (9) Ինքը շրջվեց դեպի Տարսոն, իսկ հեծելազորին ուղարկեց Փիլոտեսի հետ, հրաման տալով նրան անցնել Ալեյա դաշտավայրով դեպի Պիրամոս գետը: Իսկ ինքը հետևակի ու արքայական իղոսի հետ եկավ Մեգարսոս և զոհ մատուցեց Մեգարսոսյան Աթենասին: Այնտեղից նա եկավ Մալոս և Ամփիլոքոսին, որպես հերոսի, հոգեհանգստի զոհ մատուցեց: Քաղաքում երկպառակութիւններ տեսնելով, նա դադարեցրեց դրանք և վերացրեց քաղաքացիներից հարկի գանձումը, որը նրանք տալիս էին Դարեհ արքային, որովհետև մալոսցիները Արգոսից գաղթածներ են, իսկ իր ցեղը ծագումով արգոսական հնրակներին էր:

Նա ղեռ Մալոսում էր, երբ նրան հայտնեցին, որ Գարեհը իր ամբողջ զորքով ճամբար է դրել Սոքոսում: Այդ վայրը գտնվում է ասորեստանյան երկրում և Ասորեստանյան դարպասներից ամենաշատը երկու օրվա հեռավորություն ունի: Ալեքսանդրը հավաքեց «ընկերներին» և նրանց տեղեկություններ հայտնեց Գարեհի և նրա զորքի մասին: Նրանք որոշում ընդունեցին անհապաղ հարձակվել (2) Ալեքսանդրը շնորհակալություն հայտնեց նրանց, արձակեց խորհուրդը և հաջորդ օրը արշավեց Գարեհի և պարսիկների վրա: Երկրորդ օրը նա անցավ Գարպասով և ճամբար խփեց Միրիանդրոս քաղաքի մոտ: Գիշերը ամպրոպ ճայթեց, իսկ հետո փոթորկախառն ու հորդառատ անձրև տեղաց: Դա Ալեքսանդրին ստիպեց ճամբարում մնալ:

(3) Գարեհը ամբողջ ժամանակը անց էր կացնում զորքի հետ: Նա ասորեստանյան երկրում շուրջըրըր ձգվող մի հարթավայր բնորեց, որը հարմար էր մեծ բանակի և հեծելազորի գործողությունների համար: Ամինտոսը՝ Անտիոքոսի որդին, որը փախել էր Ալեքսանդրից Գարեհի մոտ, նրան խորհուրդ տվեց չլքել այդ վայրը. այդ լայնարձակ տարածությունը ձեռնառու էր պարսիկներին իրենց մեծ զորքով ու հանդերձանքով: (4) Այդպես էլ Գարեհը մնաց: Բայց քանի որ Ալեքսանդրը հիվանդության պատճառով Տարսուսում շատ երկար մնաց, բավական երկար Սուլեում, որտեղ նա զոհեր էր մատուցում ու շքերթ կազմակերպում, և քիչ ժամանակ չժախսեց լեռնային կիլիկիացիներին հնազանդեցնելու վրա, ապա Գարեհին դա մոլորություն մեջ գցեց: Նա ինքն իրեն սիրով հավաստիացրեց այն, ինչն իրեն առավել հաճելի էր: Փառաբանված շողորթիների կողմից, որոնք վշտի պահին միշտ կան և կլինեն թագավորական պալատում, նա որոշեց, որ Ալեքսանդրը այլևս առաջ չարժվել չի ուզում (5) և կանգնած է անորոշության մեջ, տեղեկանալով, որ ինքը՝ Գարեհն է մոտենում նրան: Ամեն կողմից Գարեհին շարունակ ասում էին՝ չափից դուրս մեծարելով նրան, որ նա կտրորի մակեդոնական բանակն իր հեծելազորով: (6) Ամինտոսը, ճշմարիտ է, պնդում էր, որ Ալեքսանդրը կգա այն տեղը, որտեղ իր տեղեկությունների համաձայն կլինի Գարեհը, և խորհուրդ էր տալիս մնալ այդ նույն տեղում: Սակայն Գարեհը հետևեց վատթարագույն խորհրդին, որովհետև տվյալ ուղիին դա նրան հաճելի էր: Եվ, թերևս, աստվածային ինչ-որ կամք

տարավ նրան այնպիսի մի վայր, որտեղ ոչ նրա հեծելազորը, ոչ մարդկանց մեծ բանակը իրենց նետերով ու տեգերով չէին կարող մեծ օգուտ բերել, որտեղ նա չէր կարող ցուցադրել իր զորքի ամբողջ շքեղությունը և որտեղ նա իր ձեռքով Ալեքսանդրին ու նրա բանակին մատուցեց դյուրին հաղթանակ: (7) Հավանաբար մակեդոնացիներին վիճակված էր խելու պարսիկների գերիշխանությունը Ասիայում, ինչպես ժամանակին պարսիկները խել էին այն մարերից, իսկ մարերն էլ ավելի վաղ՝ ասորեստանցիներից:

Այսպես կոչված Ամանյան դարպասների մոտ գտնվող սարն անցնելով, Գարեհը գնաց դեպի Իսոս և, ինքն էլ այդ մասին չկասկածելով՝ հայտնվեց Ալեքսանդրի թիկունքում: Տիրանալով Իսոսին, նա բռնեց հիվանդության պատճառով այնտեղ թողնված մակեդոնացիներին և դաժանորեն խեղդելով, մահապատժի ենթարկեց: Հաջորդ օրը նա մտանցավ Պինարոս գետին: (2) Երբ Ալեքսանդրը լսեց, որ Գարեհը իր թիկունքում է գտնվում, այդ լուրը նրան անհավանական թվաց, և նա «ընկերներից» ոմանց երեսուն թիանոց նավով ուղարկեց հետ՝ Իսոս, համոզվելու, թե արդյո՞ք այդ լուրը համապատասխանում է իրականությանը: Երեսուն թիանոց նավով նավարկելով ծովով, որտեղ անհամար ծովածոցեր կային, նրանք հեշտությանը պարզեցին, թե որտեղ են գտնվում պարսիկները, և Ալեքսանդրին լուր բերեցին, որ Գարեհը նրա ձեռքում է:

(3) Ալեքսանդրը խորհրդի հրավիրեց ստրատեգներին, իշարքոսներին և դաշնակից զորքերի առաջնորդներին: Նա ասաց, որ նախորդ ճակատամարտերի փառապանծ կլքը պետք է նրանց քաջություն ներշնչի, որ նրանք, որոնք միշտ հաղթողներ են եղել, պետք է կռվեն նրանց դեմ, ովքեր մշտապես պարտվել են, որ իրենց ինքն աստվածն է առաջնորդում, Գարեհին դրդելով զորքը փակել կիրճում, որտեղ մակեդոնացիների համար բավականաչափ տեղ կգտնվի ծավալելու հետևակը, իսկ պարսիկներին իրենց մեծ բանակն անօգուտ կլինի, որ հակառակորդը չի կարող նրանց հետ համեմատվել ո՛չ ֆիզիկապես և ո՛չ էլ բարոյապես. (4) վաղ ժամանակներից զինվորական գործում և վտանգներում հրժեշտ մակեդոնացիները բախվելու են պարսիկների ու մարերի հետ, որոնք վաղուց ի վեր թաղվել են պերճանքի մեջ. իրենք՝ ազատ մարդիկ. պիտի ընդհարվեն ստրուկների հետ: Ինչ վերա-

բերում է հելլեններին, որոնք այստեղ կհանդիպեն հելլենների, պետք է հաշվի առնել, որ նրանք նույն գործի համար չեն ճակատամարտելու. մի մասին վարձել է Դարեհը, ընդ որում ոչ մեծ վճարով, մյուսները, որոնք նրա զորքում են, կամավոր ոտքի են ելել Հելլադայի պաշտպանության համար: (5) Իսկ բարբարոսները՝ թրակացիները, պեոնները, իլիրիացիները և ագրիանացիները՝ Եվրոպայի ամենաուժեղ և քաջասիրտ բարբարոսները, կմտորենչեն Ասիայի ամենաթույլ ու փափկասուն ժողովուրդների դեմ: Բացի այդ Ալեքսանդրն ինքը կտանի նրանց Դարեհի դեմ, (6) և դա ևս մի առավելություն կլինի: Մեծ պարզև է սպասվում նրանց այդ ճակատամարտում. նրանք հաղթելու են ոչ թե Դարեհի սատրապներին, ոչ թե Գրանիկոսի մոտ դուրս բերած հեծելազորին, ոչ թե 20.000 օտարերկրյա վարձկաններին, այլ պարսիկներին և մարերի ընտրյալներին, ինչպես նաև Ասիայում բնակվող և պարսիկներին ու մարերին ենթարկվող ցեղերին, անձամբ ներկա գտնվող պարսից ամենամեծ արքային: Այդ ճակատամարտով նրանց համար կավարտվի Ասիայի հնազանդեցումը և վերջ կարվի նրանց բազմաթիվ տանջանքներին: (7) Հետո նա հիշեց իր ամբողջ զորքի նախկին փայլուն գործողությունները, առանձին կրտորիճների քաջագործությունները, որոնցից յուրաքանչյուրին նա անունով էր դիմում: Նա անդրադարձավ նաև վտանգների հանդիպ ունեցած իր անձնական արհամարհանքին, բայց այնպես, որ ոչ մեկին չվիրավորի: (8) Ասում են, նա հիշեց նաև Քսենոֆոնին և նրա հետ գտնվող 10.000 հոգուն, որոնց համեմատել անգամ չի կարելի իր զորքի հետ ո՛չ թվով, ո՛չ էլ ընդհանրապես նշանակությունը: Նրանք չեն ունեցել ո՛չ թեսալական, ո՛չ բևովտական և պելլագոնեսական, ո՛չ մակեդոնական կամ թրակիական հեծելազոր, ընդհանրապես չեն եղել այնպիսի հեծյալներ, ինչպիսիք ունի Ալեքսանդրը, չեն եղել նետաձիգներ ու պարսատիկավորներ, քացի փոքրաթիվ կրկնացիներից և հողոսցիներից, դրանց էլ Քսենոֆոնը շուտափույթ հավաքել էր վտանգի պահին: Այնուհանդերձ նրանք արքային իր ամբողջ զորքով գետին տապալեցին Բաբելոնի մոտ, հաղթեցին վերադարձի ճանապարհին իրենց հանդիպած ցեղերին և տուն եկան: Մի խոսքով, նա ասաց ամեն ինչ, ինչ նման պարագաներում լավ առաջնորդը ճակատամարտից առաջ ասում է լավ զինվորներին: Բոլորը նետվեցին նրա ձեռքը սեղմելու և, ոգևորված նրա խոսքերով, պահանջեցին, որ նա իրենց մարտի տանի:

Ալեքսանդրը կարգադրեց կերակրել զինվորներին և առաջ՝ զնայի Դարպասներն ուղարկեց փոքրաթիվ հեծյալներ և նետաձիգներ՝ նախապես նորից ուսումնասիրելու ճանապարհը, որով նա արդեն անցել էր: Գիշերը նա իր ամբողջ զորքով հարձակում սկսեց, որպեսզի գրավի այդ Դարպասները: (2) Կեսգիշերին մոտ նա կրկին ամրացրեց թիկունքի անցումները և հինց այդտեղ, իր զինվորներին հնարավորություն տվեց գիշերվա մնացած մասը հանգստանալու, ժայռերի վրա նա ուժեղ պահակախմբեր դրեց: Լուսաբացին նա Դարպասներից իջավ գետի ճանապարհը: Քանի գետ բոլոր կողմերից կիրճեր էին, նա զորքը տանում էր շաքայտունով: Դուրս գալով աղատ տարածություն, նա վերադասավորեց հոպլիտների գնդերը, տանելով մեկը մյուսի հետևից. զորքի մի կողմից լեռն էր, ձախից՝ ծովը: (3) Նրա հեծելազորը գետևա շարված էր թիկունքում՝ հետևակի մոտ, բայց երբ բոլորը դուրս եկան լայն տարածություն, նա շարեց զորքը ճակատամարտի համար: Աջ թևում՝ լեռան մոտ, առջևից կանգնած էին հետևակի աղեմուր և զրահակիրները, որոնց հրամանատարն էր Նիկանորոսը՝ Պարմենիոնի որդին: Նրա կողքին էր Քենոսի գունդը, նրա հետևի կողմից՝ Պերդիկոսի գունդը: Նրանք շարված էին մյնչև հոպլիտների կենտրոնը՝ աջ թևում: (4) Ձախ թևում առջևից կանգնած էր Ամինտոսի գունդը, նրա հետևում՝ Պտղոմեոսի գունդը և նրանց կողքին՝ Մելեագրոսի գունդը: Ձախ թևի հետևակի հրամանատարությունը ստանձնել էր Կրատերոսը. ամբողջ ձախ թևի հրամանատարն էր Պարմենիոնը: Նրան հրամայված էր թովից չհեռանալ, որպեսզի զորքը չընկնի բարբարոսների շրջապատման մեջ, որոնք իրենց մեծ քանակության շնորհիվ հույս ունին շրջանցել մակեդոնացիներին:

(5) Լուր ստանալով, որ Ալեքսանդրը մոտ է և պատրաստ հակատամարտի, Դարեհը հրամայեց հեծելազորին (այն բաղկացած էր մոտ 30 000 հեծյալներից), նրանց հետ միասին նաև թեթևազեններին (նրանք 20 000 էին), անցնել Պինարոս գետի այն կողմը, որպեսզի առանց խոչընդոտների շարի մնացած զորքը: (6) Մակեդոնական հետևակի դեմ, առջևում, հոպլիտներից շարեց մոտ 30 000 հելլեն վարձկանների, իսկ երկու կողմերից այսպես կոչված կարդակների՝ թվով 60 000. սրանք նույնպես հոպլիտներ էին: Այդքան մարդ մի շարքով կարող էր տեղավորվել միայն

այն վայրում, որտեղ նրանք շարված էին: (7) Լեռան մոտ, որը գտնվում էր ձախից, նա Ալեքսանդրի աչ թևի դիմաց շարեց մոտ 20 000 զինվոր. նրանցից ոմանք հայտնվեցին Ալեքսանդրի զորքի թիկունքում: Բանն այն է, որ լեռը, որի մոտ նրանք շարված էին, մի տեղում ներս էր ընկած՝ իր ձևով հիշեցնելով ծովածոց, և ապա պայտի նման առաջ էր ցցված: Այդ պատճառով էլ նրանք, ովքեր կանգնած էին լեռան ստորոտին, այդպիսով հայտնվեցին Ալեքսանդրի աչ թևի թիկունքում: (8) Թեթևագեղների ու հոպլիտների մնացած բազմությունը, ըստ ցեղերի շարված անիմաստ խոր շարքով, գտնվում էր հելլեն վարձկանների ու բարբարոսների հետևում: Ասում են, Դարեհի զորքը շուրջ 600 000 է եղել:

(9) Ալեքսանդրը առաջ էր ընթանում և, երբ տեղանքը մի քիչ լայնացավ, նա առաջ մղեց հեծյալներին՝ այսպես կոչված «ընկերներին», թեսալացիներին ու մակեդոնացիներին: Նա շարեց նրանց աչ թևում, որտեղ և ինքն էր գտնվում: Պելեպոնեսցիներին և մնացած զաշնակիցներին նա ուղարկեց ձախ թևը՝ Պարմենիոնի մոտ:

(10) Դարեհը, շարելով իր հետևակը, հեծելագործին վերադարձի ազդանշան տվեց, որին նա ուղարկել էր գետի այն կողմը, որպեսզի անարգել դասավորեր իր զորքը: Հեծելագործի մեծ մասը նա դրեց աչ թևում՝ Պարմենիոնի գիմաց՝ դեպի ծովը, բանի որ հենց այնտեղ հեծելագործի համար ավելի շատ տարածություն կար, բայց մի մասը տարավ ձախ թև՝ դեպի լեռը: (11) Սակայն այստեղ տեղի նեղ լինելու պատճառով, հեծյալներն օգուտ տալ չէին կարող, և նրանցից շատերին նա կարգադրեց սլանալ դեպի աչ թևը: Ինքը՝ Դարեհը գտնվում էր ամբողջ ուղղամշարքի մեջտեղում. այդ տեղը հատկացված էր պարսից արքաներին՝ համաձայն սովորույթի, իսկ նման կարգի պատճառը բացատրել է Քսենոֆոնը՝ Գրիլլոսի որդին:

9

Այդ պահին Ալեքսանդրը նկատեց, որ համարյա ամբողջ պարսկական հեծելագործը տեղափոխվել է ծովի մոտակայքում գտնվող իր ձախ թևի դիմաց, որտեղ կանգնած էին միայն պելոպոնեսյան և այլ զաշնակից հեծյալները: Նա շուտափույթ ձախ թևն ուղարկեց թեսալական հեծելագործը, հրամայելով անցնել ոչ թե ամ-

բող զորքի ճակատով, որպեսզի թշնամին նկատի նրա տեղաշարժը, այլ աննկատ՝ հետևակի թիկունքով: (2) Աչ թևում նա հեծյալներից առաջ տեղադրեց «վազողներին»՝ Պրոտոմաքոսի հրամանատարությամբ, և պեոններին՝ Արիստոնեսի հրամանատարությամբ, հետևակից էլ՝ նետաձիգներին՝ Անտիոքոսի առաջնորդությամբ: Ազրիանացիներին՝ Ատալոսի առաջնորդությամբ, փոքրաթիվ հեծյալների և նետաձիգների նա պայտածև շարեց իր թիկունքում՝ լեռան մոտ, որը հետևում էր գտնվում, այնպես որ աջակողմյան ճակատը բաժանվեց երկու թևի, որոնցից մեկը ուղղված էր Դարեհի և գետի այն կողմը գտնվող բոլոր պարսիկների դեմ, իսկ մյուսը՝ իր թիկունքում, լեռան մոտ շարվածներին: (3) Հետևակից ձախ թևի առջևում կանգնած էին կրետացի նետաձիգները և թրակացիները, որոնց զեկավարում էր Սիտակոսը: Նրանց առջևում ձախ թևի հեծելագործն էր: Օտարերկրյա վարձկանները կանգնած էին ամենավերջում: Քանի որ աչ թևի ուղղամշարքը նրան բավականին խիտ չլից և պարսիկների շարքը, ըստ նրեությունից, այդ տեղում ավելի հեռու էր ձգվում, Ալեքսանդրը հրամայեց կենտրոնից աննկատ աչ թևն անցնել «ընկերների» նրկու հեծյալ իդոսների, անթեմուսականին, որի առաջնորդն էր Պերիդոսը՝ Մենեսթիոսի որդին, և այսպես կոչված «Սպիտակահողի», որոնց առաջնորդն էր Պանտորգանոսը՝ Կլեանդրոսի որդին: (4) Նետաձիգներին, ազրիանացիներին մի մասին և հելլեն վարձկաններին նա տեղափոխեց իր կողմը՝ աչ թևի առջևում, այդ կերպ այն պարսիկներից ավելի հեռու ձգելով: Լեռան հետևում շարված ջոկատները դեռ ներքև չէին իջել: Ալեքսանդրը նրանց դեմ ուղարկեց ազրիանացիներին և փոքրաբանակ նետաձիգներին, որոնք հեծտությամբ քշեցին նրանց, ստիպելով ստորաից վազել դեպի գագաթը: Այստեղ Ալեքսանդրը տեսավ, որ կարող է լրացնել շարքը այդ ջոկատների դեմ հանված զինվորներով, և որ այստեղ իր 300 հեծյալները բավական են:

10

Այդ ձևով շարված զորքը նա որոշ ժամանակ առաջ տարավ կանգառներով. նա գտնում էր, որ դանդաղ ու հանգիստ առաջ շարժվելը լավ է: Դարեհը նրան ընդառաջ զուրս չեկավ: Նրա բարբարոսները կանգնած էին այն կարգով, ինչպես նախապես
5— Ալեքսանդր Մակեդոնացի 65

յարժեւ էին, և նա սպասում էր Ալեքսանդրին՝ գետի հաճախ զառի-
վայր փեղերին: Այն տեղերում, որտեղ անցումն ավելի հարմար
էր, նա հրամայել էր ցցապատ անցկացնել: Դա միանգամից Ալեք-
սանդրին և իր զինվորներին ցույց տվեց, որ Դարեհը վախենում
է: (2) Երբ պարսկական ճամբարն արդեն մոտ էր, Ալեքսանդրը
ձիով անցավ ամբողջ ուղղաշարքի առջևով, հորդորելով ուղ-
միկներին քաջասիրտ լինել: պատշաճ հարգանքով նա տալիս էր
ոչ միայն առաջնորդների անունները, այլև անուններով դիմում
էր իւրբոսներին, լոբազոսներին և այն վարձկան օտարերկրացի-
ներին, որոնք հայտնի էին իրենց կոչումով ու արիւթյամբ: Ի
պատասխան ամեն կողմից գոչումներ լսվեցին և պահանջեցին
չհասպաղել ու հարձակվել թշնամու վրա: (3) Նա զինվորներին
առաջնորդեց ուղմերթի կարգով, և թեև Դարեհի զորքն արդեն
երևում էր, սկզբից գնացին քայլքով, որպեսզի շարքը չխախտվի
և ալիքածն գիծ չզառնա՝ ինչպես դա լինում է վազքի ժամանակ:
Հայտնվելով նետի թեղիի հեռավորութան վրա, Ալեքսանդրին
շրջապատող զինվորները և ինքը՝ Ալեքսանդրը, գտնվելով աչ
թևում, առաջինը վազքով գետը լցվեցին, որպեսզի իրենց սրբն-
թաց ճնշումով վախեցնեն պարսիկներին և ժամանակից շուտ
ձեռնամարտի բռնվելով՝ շատ շուտով նետերի հարվածներից:
Ստացվեց այնպես, ինչպես Ալեքսանդրը ենթադրում էր: (4) Հենց
բանը հասավ ձեռնամարտին, պարսկական զորքի ձախ թևը դի-
մեց փախուստի: Ալեքսանդրը և նրա ուղմիկները այտեղ փայ-
լուն հաղթանակ տարան, բայց նրա աչ թևը ճեղքվեց հենց այն
պատճառով, որ (5) նա, հապճեպ նետվելով գետը և ձեռնամար-
տի բռնվելով, փախցրեց այտեղ կանգնած պարսիկներին: Կենտ-
րոնում գտնվող մակեդոնական զորքն այնքան էլ շտապ շանցով
գործի: Զինվորները, հաճախ հայտնվելով զառիթափ վայրերում,
չկարողացան ճակատի ուղիղ դիծը պահել: Ճեղքվածք առաջա-
ցավ, և Դարեհի հելլեն վարձկանները նետվեցին մակեդոնացիներ-
ի վրա հենց այն տեղում, որտեղ նրանք տեսան, որ շարքն
առավել կտրտված է: (6) Գործը թեժ բնույթ կրեց. վարձկաննե-
րը ջանում էին մակեդոնացիներին գետը նետել և հաղթանակ
կորզել նաև իրենց արդեն փախչող զինակիցների համար: Մա-
կեդոնացիներն էլ ջանում էին հետ շմնալ Ալեքսանդրից, նրա
ակնհայտ հաջողութունից և շմթագնել փաղանգի փառքը, որի
անպարտելիութան մասին ամբողջ ժամանակ գոչում էին:

(7) Դրան գումարվեց երկու ազգերի՝ հելլենների և մակեդո-
նացիների միջև ծավալված մրցութունը: Այստեղ գոհվեց Պրո-
զոմեոսը՝ Սելևկոսի որդին, մեծ արիւթյան տեր մի մարդ, և
մոտ 120 ոչ պակաս պատվավոր մակեդոնացիներ:

Այդ ժամանակ աչ թևի գնդերը, տեսնելով, որ իրենց դեմ
կանգնած պարսիկները արդեն փախչում են, դենքները շուտ տվե-
ցին Դարեհի վարձկան օտարերկրացիների դեմ, օգնութան հաս-
նելով իրենց նեղն ընկած ընկերներին: Նրանք գետից հետ շարտե-
ցին թշնամուն և, զգալիորեն առաջ շարժվելով պարսկական զոր-
քերից այն վայրում, որտեղ ճեղքվածք էր առաջացել, հարձակ-
վեցին թևից և շարժեցին օտարերկրացիներին: (2) Թեսալական
հեծելազորի դեմ հանված պարսկական հեծելազորը, քանի դեռ
մարտը շարունակվում էր, շսպասեց գետի մոտ. գետն անց-
նելով, համարձակորեն նետվեց թեսալացիների վրա: Այստեղ
հեծելազորի թեժ մարտ սկսվեց, բայց պարսիկները երերացին,
կոր իմացան, որ Դարեհը փախուստի է դիմել, իսկ վարձկանների
տեղան էլ ճեղքել և կտորել է հետևակը: (3) Այնժամ փախուս-
տը դարձավ վերջնական և համբուհանուր: Պարսիկների նահան-
ջի ժամանակ ծանրազեն հեծյալների բեռան տակ խիստ
տուժեցին ձիերը, հեծյալներն էլ, ամբոխով նահանջելով նեղ ճա-
նապարհներով, վախեցած ու անկարգ, ոչ այնքան տուժեցին հե-
տապնդող թշնամուց, որքան իրար կոխկրտեցին: Թեսալացիներ-
ը, ի գեպ, նրանց եռանդով նեղն էին գցել, այնպես որ այդ փա-
խուստի ժամանակ հեծյալներից ոչ պակաս հետևակայիններ կո-
տորվեցին:

(4) Դարեհը հենց տեսավ, որ նրա ձախ թևը երերաց Ալեք-
սանդրի առջև և որ այստեղ ճեղքվածք առաջացավ, միանգամից,
առանց երկար մտածելու, մարտակառքով փախուստի դիմեց իր
մեծատոհմիկների հետ: (5) Քանի դեռ հարթավայր էր, նա սու-
բում էր մարտակառքով՝ փրկվելով թշնամուց, բայց երբ սկսվե-
ցին անդունդներն ու անանցանելի տեղերը, նա խելույնեթ իջավ
մարտակառքից, նրա մեջ թողնելով վահանն ու հանդերձան-
քը: Նույնիսկ աղեղը նա թողեց մարտակառքում և փախավ ձիով.
կանխահաս դիշերը նրան փրկեց գերի ընկնելուց: (6) Քանի դեռ
ըստ էր, Ալեքսանդրը կրնկակոխ հետապնդում էր նրան, իսկ երբ

այնքան մթնեց, որ այլևս հնարավոր չէր ոտքի տակ ոչինչ տեսնել, նա հետ դարձավ ճամբար, իր հետ վերցնելով Գարեհի մարտակառքը՝ վահանի, հանդերձանքի և աղեղի հետ միասին: (7) Նրա հետապնդմանը խոչընդոտում էր նաև այն հանգամանքը, որ փաղանգի առաջին իսկ ճեղքվածքի ժամանակ նա նետվեց այնտեղ և սկսեց հետապնդել Գարեհին այն ժամանակ միայն, երբ տեսավ, որ օտարերկրացի վարձկանները և պարսից հեծելազորը գետից հետ են շարժվել:

(8) Պարսիկներից զոհվել էին Արսամը, Ռոմիթրը և Ատիդիան՝ սրանք Գրանիկոսի մոտ կռվող հեծելազորի հրամանատարներն էին: Զոհվեցին նաև Սավակը՝ Եգիպտոսի սատրապը, և Բուբակը՝ մեծատոհմիկներից: Սպանվածների թիվը հասնում էր 100.000-ի, ընդ որում հեծյալները 10 000-ից ավելի էին: Այդ ժամանակ Ալեքսանդրի հետևից կրնկակոխ գնացող Լագոսի որդի Պաղոմեոսը պատմում է, որ երբ իրենք հետապնդում էին Գարեհին, հայտնվեցին ինչ-որ անզունդի մոտ և դիակների վրայով անցան այն: (9) Գարեհի ճամբարը վերցրեցին միանգամից, առանց կանգնելու: Գերեցին Գարեհի մորը և կնոջը, որը նրա քույրն էր, մանկահասակ սրզուն, երկու զուտորերին և ուրիշ հավասար արժանիքների վարսիկների կանանց: Պարսիկների մեծամասնությունը հասցրել էր ունեցվածքի հետ միասին իրենց կանանց ուղարկել Դամասկոս: (10) Գարեհն էլ Դամասկոս ուղարկեց զրամի զգալի մասը և այլ իրեր, որոնք ուղեկցում էին արքային նույնիսկ պատերազմ դնալիս, որպեսզի այնտեղ էլ նա կարողանար շքեղություն մեջ ապրել: Այդ իսկ պատճառով ճամբարում ընդամենը դեռ 3000 տաղանդ: Դամասկոս ուղարկված մնացած ունեցվածքը շուտով ընկավ Պարմենիոնի ձեռքը, որն ուղարկվել էր այնտեղ այդ նպատակով: Այդպես վերջացավ այս ճակատամարտը, որը տեղի ունեցավ աթենացի արքունտոս նիկոկրատոսի օրոք, մեծակտերին ամսում:

12

Ալեքսանդրը հաջորդ օրը, թեև սրով վիրավորված էր աղբրից, այցելեց վիրավորներին, հրամայեց հավաքել զոհվածների դիակները և մեծ շուքով թաղեց՝ իր ողջ շքեղությունը ասես ճակատամարտի պատրաստ ամբողջ զորքի ներկայությամբ: Իր ճառում նա փառաբանեց բոլոր նրանց, ում քաջազործությունները ինքն

էր տեսել ճակատամարտի ժամանակ կամ լսել էր ուրիշներից, և զրամական պարգևներով մեծարեց յուրաքանչյուրին ըստ իր աստիճանի: (2) Նա Կիլիկիայի սատրապ նշանակեց Բալակրոսին՝ նիկանորոսի որդուն, արքայական թիկնապահներից մեկին, իսկ նրա փոխարեն թիկնապահ վերցրեց Մենևտոսին՝ Դիոնիսոսի որդուն: Ընկալաբար զոհված Պաղոմեոսի՝ Սելևկոսի որդու փոխարեն նրա զնդի հրամանատար նշանակեց Պոլիպերոնտոսին՝ Սիմիոսի որդուն: Նա սուլեացիներին զիջեց տուգանած 50 տաղանդը, որ նրանք դեռ պարտք էին մնացել իրեն, և ազատ քրձակեց նրանցից վերցված պատանդներին:

(3) Նա շիթղեց առանց հոգատարության ո՛չ Գարեհի մորը, ո՛չ էլ նրա կնոջն ու երեխաներին: Ալեքսանդրի մասին գրողները ոմանք պատմում են, որ այն նույն գիշերը, երբ նա վերադարձել է Գարեհին հետապնդելուց, մտնելով իր համար հարմարեցված վրանը, մոտակայքում լսել է կանանց լաց ու աղաղակ: (4) Նա հարցրել է, թե ինչ կանայք են դրանք և ինչու են գտնվում այդքան մոտ: Ինչ-որ մեկը պատասխանել է. «Արքա, դա Գարեհի մայրն է, կինը և զավակները: Նրանց հայտնել են, որ քեզ մոտ է Գարեհի աղեղը և հանդերձանքը և որ դու բերել ես Գարեհից շնացած վահանը: Նրանք ողբում են Գարեհին, որպես մեռածի»: (5) Լսելով այդ, Ալեքսանդրը ուղարկել է Լեոնատոսին՝ «ընկերներից» մեկին, հանձնարարելով հայտնել, որ Գարեհը ողջ է և որ զենքը և հանդերձանքը նա թողել է ուղմակառքի մեջ փոխուտի ժամանակ, որ Ալեքսանդրին հաջողվել է վերցնել միայն դրանք: Լեոնատոսը, մտնելով կանանց վրանը, հայտնել է նրանց Գարեհի մասին, ասել, որ Ալեքսանդրի կարգադրությամբ նրանք արքայավայել կմեծարվեն և նրանց հետ կվերաբերվեն սրպես Թագուհիների և Թագուհիներ էլ կկոչվեն, քանի որ Ալեքսանդրը Գարեհի դեմ պատերազմում է ոչ թե անձնական թշնամանքից նրանց, այլ օրինական կարգով հետ է վերադարձնում Ասիայում իր իշխանությունը: Այդպես են պատմում Պաղոմեոսը և Արիստորոսը: Պատմում են և այլ կերպ: (6) Ալեքսանդրը հաջորդ օրը ինքն է կեկել կանանց մոտ Հեփեստիոնեսի՝ ընկերներից մեկի ուղեկցությամբ: Գարեհի մայրը, լիմանալով թե նրանցից որն է արքան (երկուսն էլ նույն կերպ էին հագնված), մոտեցել է Հեփեստիոնեսին և փովել նրա առջև, քանի որ նա ավելի երևելի է թվացել նրան: (7) Հեփեստիոնեսը հետ-հետ է գնացել, և մոր մոտ գտնվող կանանցից մեկը մատնացույց է արել Ալեքսանդրին և

ասել, որ Ալեքսանդրը նա է: Դարեհի մայրը իր սխալից շվարած հետ է գնացել, սակայն Ալեքսանդրը ասել է, թե նա չի սխալվել, որ իր ուղեկցին էլ են անվանում Ալեքսանդր: (8) Ես գրանցել եմ այս պատմությունը ոչ որպես լիովին ճշմարտացի, բայց, ըստ իս, դա այնքան էլ անհավանական չէ: Ինչևիցե, ես գովաբանում եմ Ալեքսանդրին կանանց հանդեպ ունեցած իր կարեկցանքի համար և ինչպես նաև ընկերոջ հանդեպ ունեցած հարգանքի և վստահության համար: Եվ եթե Ալեքսանդրի մասին գրողները միանգամայն հավանական են համարել, որ Ալեքսանդրը ասել և գործել է այդպես, ապա այդ բանի համար ես ևս գովաբանում եմ Ալեքսանդրին:

13

Դարեհը իր սակավաթիվ շքախմբով ողջ գիշեր արշավեց, փախչելով Ալեքսանդրից: Հաջորդ օրը ամբողջ ժամանակ հավաքելով ճակատամարտից փրկված պարսիկներին ու օտարերկրացի վարձկաններին (հավաքեց միայն 4000 հոգի), նա շտապեց Քապսակոս քաղաքը և Եփրատ գետը, որպեսզի հնարավորության շափ շուտ անցնի իրեն Ալեքսանդրից բաժանող Եփրատը: (2) Ամինտոսը՝ Անտիոքոսի որդին, Քիմոդոսը՝ Մենտորի որդին, փնեբցի Արիստոմեդեսը և աքարնացի Բիանոքոսը, որոնք բոլորքն էլ իրենց զինվորների հետ միասին թշնամու կողմն անցած փախստակներ էին (գրանք մոտ 8000 էին), ուղղմի դաշտից ուղղակի փախան սարերը և հասան փյունիկյան Տրիպոլիս քաղաքը: (3) Այնտեղ նրանք զավթեցին այն հանված նավերը, որոնցով նախկինում տեղափոխվել էին Լևսոսից: Նրանք իջեցրին այնքան նավ, ինչքան իրենց կարծիքով բավարար էր անցումը կատարելու համար, իսկ մնացածներն այրեցին հենց տեղում՝ նավաշինարանում, որպեսզի հնարավոր չլինի արագորեն հասնել իրենց: Նրանք փախան Կիպրոս, այնտեղից էլ Եգիպտոս, որտեղ Ամինտոսը՝ մոլի բանասարկուն, սպանվեց տեղացի բնակիչների ձեռքով:

(4) Փառնաբազն ու Ավտոթրագատոսը այդ ամբողջ ժամանակ մնացին Քիոսի մոտակայքում: Քիոսում կայազոր թողնելով՝ նրանք մի քանի նավ ուղարկեցին Կոս և Հալիկաոնաս, իսկ իրենք 100 ամենատարագրնթաց նավերով գնացին Սիփոսոս: Այնտեղ մի տրիերով նրանց մոտ եկավ սպարտանական արքա Ագիստոսը:

Ինչգրելով պատերազմի համար իրեն դրամ տալ և հնարավորին շուտ շատ ծովային և ցամաքային ուժեր իր հետ Պելոպոնես տանելու համար: (5) Այդ ժամանակ լուր եկավ Իսոսի ճակատամարտի մասին: Սարսափած Փառնաբազը 12 տրիերներով և 1500 օտարերկրացի վարձկաններով ուղևորվեց Քիոս, վախենալով, որ քիոսցիները, տեղեկանալով պարտության մասին, ապստամբության կրարձրացնեն: (6) Ագիստոսը Ավտոթրագատոսից ստացավ 30 տաղանդ արծաթով և 10 տրիեր, որն էլ Հիպիոսի հրամանատարությամբ ուղարկեց Տենարոն՝ իր եղբոր՝ Ագեսիլայոսի մոտ, ինչգրելով հաղորդել նրան, որ նա լրիվ վճարի նավաստիների վարձը և հնարավորին շափ շուտ գնա Կրետե, այնտեղի գործերը կարգավորելու: Ինքը՝ Ագիստոսը մնաց կղզիներում, իսկ ավելի ուշ մեկնեց Հալիկաոնաս՝ Ավտոթրագատոսի մոտ:

(7) Ալեքսանդրը Կելեսիոսի սատրապ նշանակեց Մենոնին՝ Կերդիմոսի որդուն, տալով նրան երկրի պաշտպանության համար գաշնակիցների հեծելազորը, իսկ ինքը գնաց Փյունիկիա: Ծանապարհին նա հանդիպեց Ստրատոնեսին՝ Հերոստրատի որդուն, աբադցիների և Արադի հարևանությամբ ապրող ցեղերի արքային: Ինքը՝ Հերոստրատը, իր նավերով մեկնել էր Ավտոթրագատոսի հետ. մնացած փյունիկացիները և կիպրոսական արքաները նույնպես մեկնել էին Ավտոթրագատոսի հետ:

14

Երբ Ալեքսանդրը դեռ գտնվում էր Մարաթոնում, Դարեհի կողմից նրա մոտ գեասպաններ եկան՝ նամակ և բանավոր խնդրանք բերելով Դարեհից. ազատ արձակել մորը, կնոջը և զավակներին: (2) Նամակում ասված էր հետևյալը. Փիլիպոսը Արտաքսերքսեսի հետ բարեկամության ու դաշինքի մեջ էր: Արտաքսերքսեսի որդի Արսեսի գահակալության ժամանակ Փիլիպոսը առաջինը անարգար վարվեց Արսեսի հետ, թեև պարսիկները նրան ոչ մի վատ բան չէին արել: Այն ժամանակվանից ի վեր, երբ ինքը՝ Դարեհը դարձավ պարսիկների արքան, Ալեքսանդրը ոչ մեկին չէր ուղարկել նրա մոտ հաստատելու վաղեմի բարեկամությունն ու դաշինքը: Դրա փոխարեն զորքով ներխուժել էր Ասիա և մեծ չարիք հասցրել պարսիկներին: (3) Ինքը՝ Դարեհը կովի է ելել պաշտպանելու իր երկիրը և փրկելու հայրերից ժառանգած իր իշխանությունը: Առավաժներից ինչ-որ մեկին ցանկալի է եղել ճակատամար-

տի ելքը որոշել այնպես, ինչպես եղավ: Ինքը՝ արքան խնդրում է Ալեքսանդրին վերադարձնել գերի ընկած մորը, կնոջը և զավակներին, ցանկանում է բարեկամանալ Ալեքսանդրի հետ և դառնալ նրա դաշնակիցը: Նա խնդրում է Ալեքսանդրին պարսից դեսպաններ Մենիսկի և Արսիմի միջոցով պատասխան ուղարկել, որոնց հանձնարարված է հավաստիացնել Ալեքսանդրին և ներանից բարեկամության և համերաշխության երաշխիք ստանալ:

(4) Ալեքսանդրը պատասխանից նամակով և Դարեհի կողմից եկածների հետ միասին ուղարկեց Պերսիպոսին, կարգադրելով նրան նամակը հանձնել Դարեհին, սակայն ոչինչ չբննարկել նրա հետ: Ահա Ալեքսանդրի նամակը. «Ձեր նախնիները ներխուժել են Մակեդոնիա և մնացած Հելլադան և մեծ շարիքներ են գործել, թեև մեր կողմից ոչ մի վիրավորանք չեն տեսել: Ես՝ հելլենների առաջնորդս, ցանկանալով պատժել պարսիկներին, ներխուժեցի Ասիա՝ Ձեր կողմից հրահրված: (5) Դուք օգնեցիք Պերսիսթոսին, որը վիրավորել էր իմ հորը: Օբոսը զորքը ուղարկեց մեր իշխանության տակ գտնվող Քրակիա: Հայրս մեռավ զավագիրների ձեռքով, որոնց դուք էիք համախմբել, որի մասին էլ բոլորին պարծենում եք ձեր նամակներում: Դու Բագոչի օգնությամբ սպանեցիր Այսոսին և խլեցիր իշխանությունը անարդարացիորեն և հակառակ պարսկական օրենքների: Դու անարդարացի ես պարսիկների հանդեպ, դու հելլեններին անվայել նամակ ես ուղարկել, (6) կոչ անելով իմ զեմ պատերազմի, դու դրամ ես ուղարկել լակեդեմոնացիներին և ուրիշ հելլեններին. նրանց և ոչ մի քաղաքը այդ դրամը չի ընդունել, բայց լակեդեմոնացիները ընդունեցին, և բոլոր դեսպանները կաշառեցին իմ կողմնակիցներին և փորձեցին կործանել Հելլադալում իմ հաստատած խաղաղությունը: Ես կովի ելա բո զեմ, որովհետև թշնամական գործողությունները ինրդ սկսեցիր: (7) Ծակատամարտում նախ ես հաղթեցի բո զորավարներին ու սատրապներին, իսկ այժմ՝ և՛ քեզ, և՛ բո զորքին, և տիրում եմ այս երկրին, քանի որ աստվածները այն ինձ են տվել: Ես կհոգամ բո մարդկանց մասին, որոնք փրկվելով ճակատամարտում, անցել են իմ կողմը. իրենց կամքին հակառակ չէ, որ մնում են ինձ մոտ, և կամավոր ինձ հետ կզնան կովելու: (8) Այժմ ես ողջ Ասիայի տիրակալն եմ. արի ինձ մոտ: Եթե վախենում ես, որ ես քեզ որևէ շարիք կպատճառեմ, ապա ուղարկիր բո մերձավորներից որևէ մեկին՝ քեզ համար անվտանգության երաշխիք ստանալու: Երբ ինձ մոտ գաս, ես քեզ կվերադարձնեմ, բո խնդրանքով:

և՛ մորդ, և՛ կնոջդ, և՛ զավակներդ և կտամ այն ամենը, ինչ նշանկանաս: (9) Ինչ որ ինձնից խնդրես, բոնը կլինի: Հետագայում, երբ ինձ գրելիս կլինես, գրիր որպես Ասիայի արքայի և ոչ թե՛ դիմիր որպես քեզ հավասարի: Եթե քեզ որևէ բան է հարկավոր, այդ մասին ասա ինձ, որպես նախկինում քեզ պատկանող ամեն ինչի տիրոջ: Հակառակ դեպքում ես քեզ կհամարեմ ինձ վիրավորող: Իսկ եթե դու պատրաստվում ես վիճարկել ինձ հետ թագավորությունը, ապա կանգնիր և պայքարիր դրա համար և ոչ թե՛ քախիք, որովհետև ես կհասնեմ քեզ, որտեղ էլ որ լինես»:

15

Այսպիսի պատասխան ուղարկեց նա Դարեհին: Տեղեկանալով, որ կոթենի՝ Արտաբազի որդու հետ Դարեհի Դամասկոս ուղարկած զրամը պահապան պարսիկների և ամբողջ արքայական կահարասու հետ միասին բռնագրավել են իր զինվորները, նա հրամայեց Պարմենիոսին հետ՝ Դամասկոս ուղարկել այդ ամենը և պահել այնտեղ հսկողության տակ: (2) Նա կարգադրեց իր մոտ բերել գերի ընկած հելլեն դեսպաններին, որոնք մինչև ճակատամարտը Դարեհի մոտ էին եղել: Դրանց մեջ էին սպարտացի էվզիկլեսը, թերեացիներ Քեսալիսկոսը՝ Իսմենիոսի որդին, Դիոնիսոսը՝ օլիմպիական խաղերի հաղթողը, և աթենացի Իփիկրատեսը՝ ստրատեգ Իփիկրատեսի որդին: (3) Երբ նրանք եկան Ալեքսանդրի մոտ, նա միանգամից ազատ արձակեց Քեսալիսկոսին ու Դիոնիսոսը՝ որոսին, չնայած որ նրանք թերեացիներ էին. նա ափսոսում էր Քերեն և երկուսի արարքն էլ ներելի էր համարում. իրենց հայրենիքը մակեդոնացիների կողմից ստրկացված անտեղում՝ նրանք թե՛ իրենց, թե՛ քաղաքի համար օգնություն էին հայցում նույնիսկ պարսիկներից և Դարեհից: (4) Հանգելով երկուսի համար այս զթասիրտ որոշմանը, նա ասաց, որ նրանց նաև ազատ է արձակում ելնելով երկուսին էլ վերաբերող նկատառումներից. Քեսալիսկոսին՝ հարգելով նրա տոհմը, որը թերեթևաբանալիորեն մեկն էր, իսկ Դիոնիսոսը՝ օլիմպիական խաղերում տարած իր հաղթանակի համար: Իփիկրատեսին նա պահեց իր մոտ և մեծ պատիվների արժանացրեց, ինչպես Աթենքի հանդեպ ունեցած իր բարյացակամության, այնպես էլ նրա հոր պայծառ հիշատակի համար: Երբ Իփիկրատեսը հիվանդացավ ու մահացավ, նա Աթենք՝ բարեկամներին ուղարկեց նրա

աճյունը: (5) Լակեզեմոնացի էվֆրիլեսը այն ժամանակ Ալեքսանդրի հանդեպ բացահայտորեն թշնամաբար տրամադրված բազաբի ներկայացուցիչն էր. նա չկարողացավ իր արգարացման համար ներկայացնել որևէ ծանրակշիռ փաստարկ, բայց նրան էլ Ալեքսանդրը սկզբում հսկողություն տակ էր պահում, բայց ոչ շղթաված, իսկ ավելի ուշ՝ իր երջանկության գազաթնակետին, նրան ամբողջովին ազատ արձակեց:

(6) Գուրս գալով Մարաթոսից, նա գրավեց իր հետ գաշինք կնքած Բիրլոսը և Սիդոնը. սիդոնցիներն իրենք կանչեցին Ալեքսանդրին, բանի որ ատում էին պարսիկներին և Գարեհին: Այնտեղից նա ուղևորվեց Տյուրոս: Ծանապարհին նրան դիմավորեցին ամբողջ բազաբի կողմից ուղարկված տյուրոսցի ղեկավարները, ասելու, որ տյուրոսցիները կանեն այն ամենը, ինչ Ալեքսանդրը հրամայի: (7) Նա շնորհակալություն հայտնեց բազաբին և ղեկավարներին (դրանք նշանավոր տյուրոսցիներ էին և նրանց հետ էր Տյուրոսի արքայազնը. ինքը՝ Ադվեմիլիոս արքան նավով հեռացել էր Ալտոթրագատոսի հետ). և խնդրեց նրանց, վերադառնալով Տյուրոս, հայտնել տյուրոսցիներին, որ ինքը ցանկանում է մտնել քաղաք և զոհ մատուցել Հերակլեսին:

16

Տյուրոսում կա Հերակլեսի տաճար, ամենահինը, որը հայտնի է մարդկանց: Սակայն այն նվիրված չէ արգոսցի Հերակլեսին՝ Ալկմենեի որդուն: Տյուրոսում Հերակլեսին պաշտել են շատ սերունդներ այն բանից առաջ, երբ Կադմոսը հեռանալով Փյունիկիայից, հիմնադրեց Թեբեն և աղջիկ ունեցավ Սեմելն անունով, որից էլ ծնվեց Զևսի որդին՝ Դիոնիսոսը: (2) Հետևաբար Դիոնիսոսը Կադմոսի թոռն էր և կաթակոսի՝ Պոլիդորեսի որդու՝ Կադմոսի թոռան ժամանակակիցը: Իսկ արգոսցի Հերակլեսը էդիպոսի՝ Լայոսի որդու ժամանակակիցն էր: Եվ եզրիպտացիները մեծարում են Հերակլեսին, բայց ոչ այն Հերակլեսին, որին մեծարում են տյուրոսցիներն ու հելլենները: (3) Հերոդոտոսը պատմում է, որ եզրիպտացիները Հերակլեսին դասում են իրենց 12 աստվածների շարքը: Բայց չէ որ ավենացիները նույնպես մեծարում են ուրիշ Դիոնիսոսի՝ Զևսի և Կորայի որդուն: Գաղտնածիտությունների ժամանակ կատարվող երգերը նվիրված էին այդ Դիոնիսոսին, այլ ոչ թե թերևականին: (4) Իսկ ինչ վերաբե-

րում է Քարեսի իրերիացիների մոտ մեծարվող Հերակլեսին (այնպես չէ նույնիսկ մի քանի ժայռեր կոչվում են հերակլեսյան), ապա նա կարծում էր, որ դա տյուրոսյան Հերակլեսն է, որովհետև Քարեսը հիմնել են փյունիկացիները: Հերակլեսի այնտեղի տաճարը փյունիկյան ոճով է և փյունիկյան ձևով էլ նրան զոհեր են մատուցում: (5) Ինչ վերաբերում է Հերիոնեսին, որի մոտ էվրիսթեսը ուղարկել է արգոսցի Հերակլեսին բռնադրավելու Հերիոնեսի կովերը և նրանց քշելու դեպի Միկենք, ապա բառագիր Հեկատեոսըն ասում է, որ այստեղ խոսք անգամ չի կարող լինել իրերիացիներին երկրի մասին, և Հերակլեսը չի ուղարկվել էրիթիոս կղզի, որը գտնվում է Մեծ ծովի սահմաններից դուրս. մայրցամաքում՝ Ամբրակիայի և Ամիլիոքիայի միջև ապրել է Հերիոնես արքան, և այդ մայրցամաքից է Հերակլեսը քշել տարել կովերին, ընդ որում դա աննշան սխրանք չէր: (6) Գրան ևս կավելացնեմ, ըստ իմ տեղեկությունների, որ այդ վայրը առատ է բաղամթիվ արտավայրերով և այնտեղի կովերը չափազանց գեղեցիկ են: Հնարավոր է, որ էվրիսթեսին էլ է հասել էպիրոսյան կովերի համբավը և որ էպիրոսի արքան կոչվել է Հերիոնես: Իսկ Եվրոպայի կղզիներևակիցող իրերիացիների արքայի անունը էվրիսթեսը իմանալ չէր կարող այնպես, ինչպես չէր կարող իմանալ գեղեցիկ են արգոսք այնտեղի կովերը: Ինչ-որ մեկը ցանկացել է ծածկել իր անհավատալի պատմությունը առասպելական հերոսաբանքով և զործողության մեջ է ներքաշել Հերային, ստիպելով նրան էվրիսթեսի միջոցով նման հանձնարարություն տալ Հերակլեսին:

(7) Ահա հենց այդ տյուրոսյան Հերակլեսին էլ Ալեքսանդրը ցանկացավ զոհ մատուցել: Երբ ղեկավարները այդ մասին լուր բերեցին Տյուրոս, քաղաքացիները որոշեցին, որ ամեն ինչ կանեն, ինչ կհրամայի Ալեքսանդրը, սակայն պարսիկներից կամ մակեդոնացիներից ոչ մեկին բազաբ չեն թողնի. ներկա պայմաններում դա ամենապատշաճ պատրվակն էր և ամենաճիշտ վարքագիծը անորոշ ավարտ ունեցող պատերազմի պայմաններում: (8) Երբ Ալեքսանդրին հայտնեցին տյուրոսցիների պատասխանը, Լազարյույթով բռնկված՝ հետ ուղարկեց ղեկավարներին, և հավաքելով «ընկերներին», զորքի առաջնորդներին, տաքսիարքոսներին ու իլարքոսներին, դիմեց նրանց հետևյալ ճառով:

«Բարեկամներ և դաշնակիցներ, վտանգավոր է արշավանք ձեռնարկել Եգիպտոս (չէ որ ծովում իշխում են պարսիկները) և հետապնդել Դարեհին, մեր հետևում թողնելով այս քաղաքը, որի վրա հույս դնել չի կարելի, իսկ Եգիպտոսն ու Կիպրոսն էլ պարսիկների ձեռքում են: Դա վտանգավոր է ընդհանրապես և հատկապես Հելլադալում գործերի իրադրութեան համար: Եթե պարսիկները կրկին տիրեն ծովափնյա շրջաններին, իսկ մենք այդ ընթացքում զնանք Բարելոն և Դարեհի դեմ, ապա նրանք, իրենց տրամադրութեան տակ ունենալով ավելի մեծ ուժեր, պատերազմը կտեղափոխեն Հելլադա. լակեղեմնացիներն էլ միանգամից կսկսեն մեր դեմ պատերազմել: Աթենքն էլ մինչ այժմ հրաժարվում էր պատերազմից ավելի շատ մեր հանդեպ ունեցած վախից, քան համակրանքից: (3) Եթե մենք կործանենք Տյուրոսը, ապա ամբողջ Փյունիկիան կլինի մերը և, բնականաբար, մեր ձեռքը կանցնի փյունիկյան նավատորմը, իսկ այն պարսիկների մոտ ամենամեծը և ամենահզորն է: Փյունիկիայի թիավարներն ու նավաստիները, իհարկե, չեն կովի ուրիշների համար, երբ իրենց քաղաքները մեր ձեռքում լինեն: Նման հանգամանքներում Կիպրոսը դյուրութեամբ կմիանա մեզ կամ առանց որևէ դժվարութեան կգրավվի մեր նավատորմի առաջին իսկ հայտնվելուն պես:

(4) Մովում մեր տրամադրութեան տակ ունենալով մակեդոնական և փյունիկյան նավերը և միացնելով Կիպրոսը, մենք հաստատուն կդարձնենք մեր ծովային գերիշխանութունը, և այնժամ արշավանքը դեպի Եգիպտոս դժվարութուն չի ներկայացնի: Իսկ երբ մենք նվաճենք Եգիպտոսը, ապա ո՛չ Հելլադալում և ո՛չ էլ տանը չի մնա կասկած հարուցող որևէ բան, և այդ ժամանակ էլ մենք կզնանք դեպի Բարելոն, լիովին հանգիստ լինելով մեր տնային գործերի համար: Իսկ մեզ ավելի կհարգեն այն բանից հետո, երբ մենք պարսիկներին լրիվ կտրենք ծովից և, դրան ավելացրած, խլենք նրանցից Եփրատի այս կողմի հողերը»:

Այդ ճառը հեշտութեամբ համոզեց բոլորին Տյուրոսի վրա հարձակվելու անհրաժեշտութեան մեջ: Իսկ նրան այդ բանում համոզել էր աստվածային ինչ-որ խորհրդանշան. հենց այդ գիշեր նա

նրազ էր տեսել, թե մոտեցել է Տյուրոսի պարիսպներին, և Հերակլեսը սեղմել է նրա ձեռքը և քաղաք տարել: Արիստանդրը այսպես էր մեկնաբանել դա. Տյուրոսը կգրավվի դժվարութեամբ, չէ որ Հերակլեսն էլ իր սխրանքները կատարել է դժվարութեամբ: Իրոք, Տյուրոսի պաշարումը դժվար գործ էր երևում: (2) Այդ քաղաքը զբաղվում էր կղզու վրա, ամեն կողմից ամրացված բարձր պարիսպներով, իսկ իրադրութունը ծովում այն ժամանակ ավելի բարենպաստ էր տյուրոսցիներին համար, քանի որ ծովում դեռ իշխում էին պարսիկները և իրենք՝ տյուրոսցիներն էլ շատ նավեր ունեին: (3) Այնուհանդերձ Ալեքսանդրը գրավեց Տյուրոսը: Նա որոշեց հողաթմբով միացնել մայրցամաքը կղզուն: Նրանց միջև գտնվող անցատեղում ծովի հատակը ճահճային էր. մայրցամաքի մոտակայքը տղմոտ ու ծանծաղ էր, իսկ քաղաքի մոտ, շրտեղ ավելի խոր էր, խորութունը հասնում էր ամենաշատը երեք շաղկապի: Այնտեղ շատ քար և անտառանյութ կար, որն էլ դարձավ էին քարերի վրա: Դժվար չէր տիղմի մեջ ցցեր խփելը, և հենց այդ տիղմն էլ դարձավ կայնոզ նյութ, որը թույլ չէր տալիս քարերը տեղից շարժել: (4) Մակեդոնացիները ջերմեռանդորեն գործի անցան, մանավանդ որ Ալեքսանդրն ինքն էլ էր ներկա աշխատանքներին. նա ցույց էր տալիս, թե ինչ էր պետք անել, ողևորում էր մարդկանց խոսքով, դրամ տալիս նրանց, ովքեր առավել շանասիրութեամբ էին աշխատում, աշխատող թեթևացնելով նրանց աշխատանքը: Մինչ հողաթումբը մայրցամաքի մոտ էին կառուցում, գործը հեշտ էր առաջ զնում. խորութունը մեծ չէր, և աշխատողներին ոչ ոք չէր խանգարում: (5) Իսկ երբ նրանք հասան ավելի խոր տեղերին և հայտնվեցին քաղաքի մոտակայքում, ապա նրանց վիճակը վատթարացավ, քանի որ նրանց սկսեցին նետահարել բարձր պարիսպների վրայից: Մակեդոնացիները հանդերձավորվել էին ավելի շատ աշխատանքի, քան ճակատամարտի համար: Տյուրոսական տրիբունները մերթ այստեղ, մերթ այնտեղ մոտենում էին հողաթմբին (տյուրոսցիները դեռ իշխում էին ծովում) և հաճախ խանդարում էին զինվորներին՝ շարունակելու իրենց աշխատանքը: (6) Մակեդոնացիները հողաթմբի վրա, որն ազդեն հեռացել էր դեպի ծովի խորքը, դրեցին երկու աշտարակ և այդ աշտարակների վրա տեղադրեցին մեքենաները, քողարկելով դրանք կաշվե ծածկոցներով և մորթիներով՝ պաշտպանելու աջգոյն նետերից, որոնք պարիսպների վրայից արձակում էին տյուրոսցիները: Այդ աշտարակները պետք է աշխատողներին

պաշտպաններն նետահարուժուներն: Հուսով էին նաև, որ իրենք, նետեր արձակելով այդ աշտարակներից, հեշտությամբ հետ կմղեն նավերով մոտեցող տուրոսցիներին, որոնք հարձակվում էին հողաթուժը կառուցողների վրա:

Ի պատասխան զրան տուրոսցիները հետևյալը հնարեցին. նրանք մի նավ վերցրին, որով ձիեր են տեղափոխում, բռնեցին այն շոր փաշտով և տարբեր տեսակի այրվող նյութերով, նավաքթին երկու կալմ գրեցին և շրջափակեցին հնարավորին շափ մեծ տարածություն: Այդ շրջափակեցներում լցրեցին ծղոտ և շատ ջահեր: Բացի այդ նրանք գրեցին նաև ձյութ, ծծումբ և ընդհանրապես այն ամենը, ինչ կարող էր նպաստել մեծ հրդեհի առաջացմանը: (2) Երկու կալմերին էլ ամրացրեցին երկուական առաջատաձող և դրանցից կաթսաներ կախեցին, որոնց պարունակությունը թափվելով, պետք է ավելի բորբոքեր բոցը: Նավախելին նրանք ծանր բնո գրեցին, որպեսզի այն նստի ծանրության տակ, որից էլ նավի քիթը պետք է բարձրանար: (3) Դրանից հետո նրանք սպասեցին, մինչև քամին փչեց հողաթմբի կողմը և, կապելով այդ նավը իրենց տրիներներին, տարան այն քարշակով: Մոտենալով հողաթմբին և աշտարակներին, նրանք այրեցին վառվող նյութը և, միաժամանակ հնարավորին շափ արագ նավը քաշելով տրիներներով, բաց թողեցին դեպի հողաթմբի եզրը: Այրվող նավի վրա գտնվող մարդիկ հեշտությամբ փրկվեցին, նետվելով ծովը: (4) Նույն պահին ահռելի բոցն անցավ աշտարակներին, առագաստաձողերը կոտրվեցին և կրակի մեջ թափվեց այն ամենը, ինչ նախատեսված էր կրակը թեժացնելու համար: Տրիներները խարխախ գցեցին հողաթմբից ոչ հեռու և զրանց վրայից սկսեցին նետեր արձակել դեպի աշտարակները, և աշտարակներին մոտենալը վտանգավոր դարձավ նրանց համար, ովքեր զբաղված էին կրակը մարելով: (5) Եվ երբ բոցը կլանեց աշտարակները, քաղաքից դուրս վազեց մարդկանց ամբոխը: Նրանք մակույկներ նստեցին և տարբեր տեղերում մոտենալով հողաթմբին՝ առանց գովարության քաշեցին հանեցին կողքերից հողաթումբը ամրացնող ցցերը և կրակի մատնեցին բոլոր մեքենաները, որոնց դեռ նավի կրակը չէր կլանել: (6) Ալեքսանդրը կարգադրեց վերսկսել հողաթմբի կառուցումը մայրցամաքից և շինել այն ավելի լայն,

որպեսզի հնարավոր լինի նրա վրա ավելի շատ աշտարակներ տեղադրել, իսկ շինարարներին կարգադրեց նոր մեքենաներ պատրաստել: Մինչ դրանք պատրաստվում էին, նա՝ վերցնելով վահանակիրներին ու ազրիանացիներին, մեկնեց Սիդոն, հավաքելու իր բոլոր տրիները, որոնք արդեն այնտեղ էին, որովհետև հաշվի առնելով տուրոսցիների գերիշխանությունը ծովում, Տյուրոսի պաշարումը անհույս էր դառնում:

Այդ ժամանակ Հերոստրատը՝ Արագի արքան, և էնիլոսը՝ Բիրլոսի արքան, տեղեկանալով, որ իրենց քաղաքը գտնվում է Ալեքսանդրի իշխանության ներքո, թողեցին Ավտոթրագատոսին իր նավատորմով և իրենց նավերով եկան Ալեքսանդրի մոտ: Նրանց հետ էին նաև սիդոնական տրիներները, այնպես որ նրանք հավաքել էին մոտ 80 փյունիկյան նավեր: (2) Այդ նույն օրերին տրիները եկան նաև Հոդոսից. այսպես կոչված Պերիպոլոսը և նրա հետ ևս 11 նավ, երեք տրիեր՝ Սուլից և Մալուսից, տասը՝ Լիկիայից, իսկ Մակեդոնիայից՝ հիսուն թիանոց մի նավ, որով ժամանեց Պրոթեոսը՝ Անդրոնիկոսի որդին: (3) Կարճ ժամանակ անց 120 նավով Սիդոն ժամանեցին նաև կիպրոսական արքաները. նրանք գիտեին Իսոսի մոտ Դարեհի պարտության մասին և վախեցած էին այն հանգամանքից, որ ամբողջ Փյունիկիան արդեն գտնվում էր Ալեքսանդրի իշխանության ներքո: Ալեքսանդրը ներքեց նրանց անցյալում գործած մեղքերի համար, քանի որ նրանք իրենց նավատորմը միացրել էին պարսկական նավատորմին ավելի շուտ անհրաժեշտությունից, քան անձնական որոշումից ելնելով:

(4) Մինչ հավաքում էին մեքենաները և նավերը պատրաստում նավարկության ու ծովային մարտերի, նա իր ունեցած հեծյալ իդոսներին, վահանակիրներին, ազրիանացիներին ու նետածիգներին հետ գնաց Արաբիա, դեպի այն լեռը, որը կոչվում էր Անթիլիբանան: (5) Ցեղերի մի մասին հնազանդեցնելով ուժով, մյուսների հետ համաձայնության գալով, նա տասը օր հետո վերադարձավ Սիդոն և հանդիպեց այնտեղ Կլեանդրոսին՝ Պուլմոկրատոսի որդուն, որը վերադարձել էր Պելոպոնեսից 4000 հելլեն վարձկաններով:

(6) Երբ նախատորմը պատրաստ էր, նա նավեր նստեցրեց այն-
քան վահանակիրներին, ինչքան իր կարծիքով բավական էր այն
դեպքում, եթե ծովային մարտում գործը չավարտվեր նավերի
մասնկրներով և ձեռնամարտ սկսվեր, և նավերով Սիդոնից մեկնեց
Տյուրոս, նախատորմը տանելով մարտական կարգով: Ինքը զբա-
նջվում էր աչ թևում, որը շարժվում էր առջևից, և նրա հետ էին
կիպրոսական ու փյունիկիական արքաները՝ բացի Պնիթագորո-
սից, որը Կրատերոսի հետ տանում էր ամբողջ շարքի ձախ թևը:
(7) Տյուրոսցիները մինչ այդ էլ գիտակցում էին, որ եթե Ալեք-
սանդրը ծովով գա իրենց դեմ, ապա իրենք պետք է ծովային ճա-
կատամարտ տան, սակայն նրանք ամենեկին չէին սպասում ոչ այդ
քանակությամբ նավերի (նրանք չգիտեին, որ Ալեքսանդրը տի-
րել է կիպրոսյան և փյունիկյան ամբողջ նախատորմին), ոչ էլ, որ
նրանք կհայտնվեն լրիվ գինակարգով: (8) Քաղաքից ոչ հեռու
Ալեքսանդրի նավերը կանգ առան բաց ծովում, կարծես տյուրոս-
ցիներին ճակատամարտի էին հրավիրում: Իսկ հետո, երբ նրանց
դեմ ոչ ոք չէլավ, շարքով առաջ շարժվեցին թիակների աղմկոտ
ճողփյունի ուղեկցությամբ: Տեսնելով սա, տյուրոսցիները հրա-
ժարվեցին ծովային ճակատամարտից. նրանք իրենց նավա-
հանդիստների մուտքերի մոտ իրար գլխի հավաքեցին այնքան
նավեր, որքան կտեղավորվեր այնտեղ, և դրանցով փակեցին
մուտքերը, որպեսզի թշնամու նավատորմը չներխուժի այնտեղ:
(9) Ալեքսանդրը մոտեցավ քաղաքին. տյուրոսցիները ոչ մի
գիմադրություն ցույց չտվեցին: Ալեքսանդրը որոշեց Սիդոնի կող-
մը նայող նավահանգիստը չզբաղվել, տեսնելով, որ մուտքն այն-
տեղ նեղ է, և բացի այդ այն խցկված է դեպի իրեն բլթերը ուղղած
տրիերներով: Փյունիկացիները հարձակվեցին նավահանգստի
մուտքից հեռու կանգնած երեք տրիերների վրա և խորտակեցին
դրանք, շարժելով նավերի բլթերով: Այդ տրիերների անձնակազ-
մը հեշտությամբ փրկվեց, լողալով հասնելով հարազատ ափ:
(10) Ալեքսանդրի նավատորմը կանգ առավ կառուցված հողա-
թմբից ոչ հեռու՝ քամուց պաշտպանված տեղում: Հաջորդ օրը նա
հրամայեց, որպեսզի նավարքոս Անդրոմաքոսի գլխավորած կիպ-
րոսական նավատորմը փակի Սիդոն ուղղված նավահանգստի
մուտքը, իսկ փյունիկացիները՝ հողաթմբի այն կողմում գտնվող,
Եգիպտոսի կողմը ուղղված նավահանգիստը: Այստեղ էլ նրա
վրանն էր:

Կիպրոսից և ամբողջ Փյունիկիայից նրա մոտ էին հավաքվել
բազմաթիվ մեքենա կառուցողներ, որոնք շատ մեքենաներ սար-
քեցին: Այդ մեքենաների մի մասը կանգնած էր հողաթմբի վրա,
մյուսները՝ ձիեր տեղափոխող նավերի վրա (այդ նավերը Ալեք-
սանդրը իր հետ բերել էր Սիդոնից), մի մասն էլ այն տրիերների
վրա, որոնք աչքի չէին ընկնում իրենց արագաշարժությամբ: (2)
Երբ ամեն ինչ պատրաստ էր, նա ձեռնաշեն հողաթմբի վրայով
մոտեցրեց մեքենաները: Մեքենաներով բարձրված նավերն էլ խա-
բիսի գցեցին պարսպի մոտ, տարբեր կողմերից փորձելով պա-
րսպի մեջ ճեղքեր բացել:

(3) Տյուրոսցիները հողաթմբի կողմի պարսպի ելուստների
վրա փայտե աշտարակներ դրին, որպեսզի դրանց վրայից հետ
ձգեն թշնամուն: Որ կողմից էլ մոտենում էին մեքենաները, տյու-
րոսցիները հարվածում էին դրանց, բոցավառ նետեր արձակում
ուղղակի նավերի վրա, այնպես որ մակեդոնացիները վախեցան
պարիսպներին մոտենալ: (4) Հողաթմբի կողմից կրով ամբաց-
ված մեծ քարերից նրանց պարիսպները համարյա 150 ոտնաչափ
բարձր էին և համապատասխան լայնությամբ ունեին: Մեքենա-
ները պարիսպներին մոտեցնող մակեդոնական բեռնատար նա-
վերին հարմար չէր այդ տեղից մոտենալ քաղաքին, քանի որ ծով
նետված մեծաքանակ քարերը խանգարում էին հարձակվել մոտ
տարածությունից: (5) Ալեքսանդրը որոշեց հանել դրանք ծովից:
Գա դժվար գործ էր, քանի որ ստիպված էին գործել նավերի վրա-
յից և ոչ թե ամուր զետնի վրա կանգնած: Բացի այդ պաշտպա-
նական պատեր ունեցող տյուրոսական նավերը սկսեցին որսալ
տրիերների խարիսխները. նրանք կտրեցին խարիսխների ճո-
պանները, և թշնամու նավերն արդեն չէին կարողանում տեղում
մնալ: (6) Ալեքսանդրը մի շարք երեսունթիանոց նավերի վրա
նման պատեր դրեց և թեք գծով շարքի խարիսխների առջև, որ-
պեսզի հետքշեն մոտեցող նավերը: Այնուհանգերձ ջրասույզները
շարունակում էին կտրել խարիսխների ճոպանները: Մակեդոնա-
ցիները սկսեցին խարիսխներ նետել ոչ թե ճոպանից, այլ շղթայից
կապված: Այստեղ արդեն ջրասույզները ոչինչ անել չէին կարող:
(7) Հողաթմբից պարանի օղակներ նետելով, մակեդոնացիները
քարերը հանեցին ծովից, ապա մեքենաներով բարձրացրին դրանք
և նետեցին բաց ծով, որտեղ արդեն դրանցից ոչ մի վնաս չկար:

Երբ պարսպի առջևի խոշընդոտն այդ ձևով ոչնչացվեց, նավերը անարգել մոտեցան պարսպին:

(8) Հայտնվելով անհլանելի իրադրության մեջ, տյուրոսցիները որոշեցին հարձակվել Սիդոնի կողմն ուղղված նավահանգստի մոտ կանգնած կիպրոսական նավերի վրա: Դրանից շատ առաջ նրանք մեծ շափերի պատանդներով վարադուրել էին նավահանգստի մուտքը, որպեսզի այդ ձևով թաքցնեն անձնակազմի արիերներ նստելը և կեսօրին մոտ, երբ նավաստիները ցրվեցին անհետաձգելի գործերով, Ալեքսանդրն էլ քաղաքի մյուս կողմում կանգնած նավախմբից սովորաբար հեռանում էր իր վրանը, (9) հարձակվեցին երեք պենտերներով, այդքան էլ տետրերով ու յոթ արիերներով: Անձնակազմը բաղկացած էր ամենափորձառու թիավարներից և զինվորներից, որոնք պետք է կռվեին տախտակամաների վրա. այդ զինվորները հիանալի զինված էին և ծովային մարտերում փորձված: Մեղքում նավերը կամացուկ շարժվում էին թիերի օդնությամբ՝ նավը նավի հետևից, թիավարների ղեկավարները լուռ էին: Բայց երբ նրանք ուղղվեցին դեպի կիպրոսցիները և արդեն տեսանելի դարձան, նրանք բարձր զուլտնով, քաջալերելով միմյանց և համահավասար խփելով թիերով, սլացան կիպրոսցիների վրա:

22

Պատահեց այնպես, որ այդ օրը Ալեքսանդրը, հակառակ իր սովորության, երկար շմնաց իր վրանում և շուտով վերադարձավ նավերի մոտ: (2) Հանկարծակի հարձակվելով նավամատուցյում կանգնած նավերի վրա, տյուրոսցիները հայտնարեցին, որ որոշ նավերի վրա ընդհանրապես մարդ չկա, մյուսների վրա էլ՝ հատուկ կենտ, որոնք էլ մոտակայքում էին, արդեն նրանց զուլտնների և բուռն գրոհի ներքո նավերն էին բարձրանում: Պենտերոսին՝ Պնիթադորի արքային նրանք առաջին իսկ ընդհարման ժամանակ միանգամից ծովի հատակն ուղարկեցին, ինպես նաև ամաթուսցի Անդրոկլեսի և թուրիացի Պասիկրատեսի արիերները: Մնացած նավերը նրանք սեղմեցին ափին և ծանր վնասվածքներ հասցրին:

(3) Ալեքսանդրը, տեսնելով, որ տյուրոսական արիերները դուրս եկան նավահանգստից, հրամայեց իր նավերի մեծ մասին, որոնց վրա համեմատաբար շատ նավաստիներ էին բարձրացել, կանգնել նավահանգստի մուտքի մոտ, որպեսզի այնտե-

ղից տյուրոսական ուրիշ նավեր դուրս չգան: Իսկ ինքը, վերցնելով իր պենտերները և ամենաշատը 5 արիեր, որոնց անձնակազմը շուտափուլի իրենց տեղերն էին գրավել, նավարկեց քաղաքի շուրջը և հարձակվեց նավահանգստից դուրս եկած տյուրոսցիների վրա: (4) Պարիսպների վրա կանգնած մարդիկ տեսնելով առաջընթացող թշնամու նավերը և գրանց վրա հենց իրեն՝ Ալեքսանդրին, սկսեցին ձայնել իրենց նավերի անձնակազմներին, որպեսզի նրանք հետ վերադառնան: Մարտի ազմուկի մեջ նրանց ձայները չէին լսվում, և տյուրոսցիները սկսեցին նահանջի ազգանշան ազդանշանի հետևից տալ: Նավերից Ալեքսանդրի մոտենալը ուշ նկատեցին և շրջվելով նետվեցին նավահանգիստ: (5) Քլեթրին հաջողվեց փախչել. մեծ մասը ստիպված մարտն ընդունեց: Հակառակորդի նավերի մի մասը Ալեքսանդրը շարքից հանեց. մեկ պենտեր և մեկ տետրեր գրավեցին հենց նավահանգստի մուտքի մոտ: Քիչ մարդ սպանվեց. տեսնելով, որ նավերը գրավված են, նրանք առանց դժվարության՝ լողալով հասան նավահանգիստ:

(6) Այժմ, քանի որ նավատորմը տյուրոսցիներին ոչնչով չէր օգնում, մակեդոնացիները կարողացան մեքենաներն ընդհուպ մոտեցնել պարիսպներին: Հողաթմբի վրա կանգնած մեքենաները պարսպին զգալի վնաս չէին հասցրել՝ այնքան այն ամուր էր: Մի քանի մեքենաներով բեռնված նավեր էլ մոտեցրին քաղաքի այն կողմից, որը դեպի Սիդոն էր նայում: (7) Երբ այստեղ էլ արգելուքի չհասան, Ալեքսանդրն ամեն կողմից շարունակելով իր փորձերը, անցավ դեպի Եգիպտոս նայող հարավային պարսպին: Այստեղ, վերջապես, պարսպի մի մեծ հատված խտրվեցին՝ նրա մի մասը շարժվեց և փլվեց: Այնտեղ, ուր պարիսպը փլվել էր, օգտագործելով ամեն մի հնարավորություն, կամրջակներ գցեցին և կարճ ժամանակի ընթացքում փորձեցին գրոհի անցնել, սակայն տյուրոսցիները հեշտությամբ հետ շարժեցին մակեդոնացիներին:

23

Երեք օր անց, սպասելով մինչև քամին գազարի, Ալեքսանդրը մարտի կոշիկով հետևակի հրամանատարներին, մեքենաները նավերով քաղաքին մոտեցրեց: Նախ պարսպի նշանակալի մասը խաբիւլեցին: Երբ բացվածքն արդեն բավականաչափ լայն էր, Ալեքսանդրը կարգադրեց մեքենաներով բեռնված նավերին հետքաշվել (2) և երկու ուրիշ նավերի, որոնք կամրջակներ էին տանում, մոտենալ այդ տեղին: Նա ծրագրել էր կամրջակները գցել

պատի բացվածքի մեջ Այդ նավերից մեկի վրա էին վահանակիրները Ադմետոսի հրամանատարութեամբ, մյուսի վրա էր Քենոսի գունդը՝ այսպես կոչված հետիոտն «ընկերները»։ Իսկ ինքը պատրաստվում էր վահանակիրների հետ բարձրանալ պարսպի վրա, որտեղ դրա կարիքը զգացվեր։ (3) Տրիերներին նա հրաման տվեց, որ մի մասը շարժվեն դեպի երկու նավահանգիստները, եթե տյուրոսցիները որոշեն նրանց դեմ ինչևէ և ուժով դուրս պրծնել այնտեղից։ Իսկ այն նավերին, որոնց վրա մեքենաների արկերն էին և որոնց տախտակամածների վրա էին գտնվում նետածիգները, նա հրամայեց նավարկելով պարիսպների շուրջը հարմար տեղերում կառանել, իսկ եթե այդպիսի տեղեր չգտնվեն, ապա խարխիս գցեն նետահարման հեռավորութունից դուրս, որպեսզի ամեն կողմից հարվածներ ստացող տյուրոսցիները չկարողանան հասկանալ, թե ինչ է անհրաժեշտ անել խուճապի այդ պահին։

(4) Երբ նավերը Ալեքսանդրի հետ մոտեցան քաղաքին և պարիսպների վրա կամրջակներ նետվեցին, վահանակիրները կամրջակներով աշխուժորեն բարձրացան պարսպի վրա։ Այստեղ Ադմետոսը մեծ արիություն ցուցաբերեց։ Ալեքսանդրը գնում էր զինվորների հետևից, անձամբ մասնակցելով գործին, և միաժամանակ նայում էր, թե ով է ճակատամարտում աչքի ընկնում խիզախությամբ։ (5) Պարիսպը նախ զրավվեց այն տեղում, որտեղ կարգադրություններ էր անում Ալեքսանդրը. նա առանց դժվարության հետ շարժեց տյուրոսցիներին, հենց որ մակեդոնացիները անցան կամրջակները և ամուր սուր դրին գետնի վրա։ Ադմետոսը առաջինը բարձրացավ պարսպի վրա։ Կոչ անելով յուրայիններին՝ հետևել իրեն, նա իսկույն ընկավ նիզակով խոցված, բայց (6) Ալեքսանդրը, գնալով նրա հետևից, «ընկերների» հետ միասին նվաճեց պարիսպը։ Եվ քանի որ այժմ իր իշխանության տակ էին շինասված աշտարակներն ու միջնապատնեշները, ապա նա ուղղակի պարիսպների վրայով ուղղվեց թագավորական պալատ, որովհետև այնտեղից ամենից ավելի հարմար էր քաղաք իջնելը։

24

Իրենց նավերով դեպի Եգիպտոս նայող նավահանգստի մոտ կանգնած փյունիկացիները ներխուժեցին նավահանգիստ, ջարդելով շղթաները, որոնցով այն փակված էր, և ծանր վնասվածքներ հասցրին այնտեղ կանգնած տյուրոսական նավերին. մյուս-

ների վրա հարձակվեցին բաց ծովում, որոշ նավերի էլ «նղմեցին» ափին։ Կիպրոսցիները մի այլ նավահանգիստ մտան Միլոնի կողմից, որը շղթաներով փակված չէր, և այդ մասում իսկույն տիրացան քաղաքին։ (2) Շատ տյուրոսցիներ, տեսնելով, որ պարիսպը գրավված է, լքեցին այն և հավաքվելով այսպես կոչված Ադենտրիայում, այնտեղից հարվածեցին մակեդոնացիներին։ Ալեքսանդրը նրանց դեմ գնաց վահանակիրների հետ միասին. մարտնչողները սպանվեցին, իսկ փախչողների հետևից սկսվեց հետապնդումը։ (3) Սարսափելի մի սպանդ սկսվեց։ Քաղաքն արդեն գրավված էր ոչ միայն նավահանգստի կողմից, այլև քաղաք էր ներխուժել նաև Քենոսի գունդը։ Մակեդոնացիները կատաղել էին. նրանք տանջահար էին եղել երկարատև պաշարումից, և նրանք չէին մոռացել, թե ինչպես տյուրոսցիները Միդոնից եկող իրենց հայրենակիցներին բռնել էին, դրել պարսպի վրա և ամբողջ ճամբարի աչքի առջև սրախողխող արել ու նետել ծովը։ (4) Տյուրոսցիներից զոհվեց 8000 մարդ, մակեդոնացիներից գրոհի ժամանակ ընկավ Ադմետոսը՝ քաջարի մի մարդ, որն առաջինը ելավ պարսպի վրա, և նրա հետ 20 վահանակիրներ, իսկ ամբողջ պաշարման ընթացքում՝ մոտ 400 հոգի։

(5) Նրանց, ովքեր թաքնվել էին Հերակլեսի տաճարում (այստեղ էին Տյուրոսի զլխավոր կառավարողները, Ադմիլիկես արքան և որոշ ուխտագնացներ Կարթագենից, որոնք ըստ հինավուրց սովորույթի եկել էին մետրոպոլիս Հերակլեսին երկրպագելու), Ալեքսանդրը ներում չնորհեց. մնացածներին ստրկության մատնեց։ Վաճառվեցին Տյուրոսում գերված մինչև 30 000 տյուրոսցիներ և օտարերկրացիներ։ (6) Ալեքսանդրը զոհ մատուցեց Հերակլեսին և նրա պատվին շքերթ կազմակերպեց, որին մասնակցեց լրիվ զինավառ զորքը. նավերը նույնպես մասնակցեցին Հերակլեսի պատվին կազմակերպված շքերթին։ Ալեքսանդրը սրբազան տաճարում մարմնամարզական մրցումներ և ջահերով վազք կազմակերպեց։ Պարիսպը քանդած մեքենան նա նվիրատվեց տաճարին, ինչպես նաև Հերակլեսի տյուրոսական սրբազան նավը, որը նա բռնագրավել էր ճակատամարտի ժամանակ։ Այդ նավն էլ նա նվիրաբերեց Հերակլեսին։ Նավի վրա մի մակագրություն կար՝ նրա կամ ինչ-որ մեկի հորինած, սակայն հիշատակության անարժան, այդ պատճառով ես այն մեջ չեմ բերում։ Այդպես գրավվեց Տյուրոսը, ամենացի արքունտոս Նիկետոսի օրոք, հեկատոմբնոն ամառում։

Երբ Ալեքսանդրը դեռ զբաղված էր Տյուրոսի պաշարմամբ, Դարեհի կողմից նրա մոտ դեսպաններ եկան հետևյալ առաջարկություններով. Դարեհը Ալեքսանդրին է տալիս 10.000 տաղանդ մոդ, կնոջ և զավակների համար. Եփրատից սյն կողմ ընկած ամբողջ տարածքը մինչև Հելլենական ծովը պատկանում է Ալեքսանդրին. Ալեքսանդրը կնուսթյան է առնում Դարեհի դստերը և բարեկամության ու դաշինքի մեջ ապրում Դարեհի հետ: (2) Երբ դեսպանները «ընկերներին» ժողովին շարադրեցին այդ ամենը, պատմում են, իբր Պարմենիոնը ասել է Ալեքսանդրին, որ եթե ինքը լիներ Ալեքսանդրը, ապա ուրախությամբ կդադարեցներ պատերազմը այդ պայմաններով և հետագայում իրեն չէր ենթարկի վտանգների: Ալեքսանդրը պատասխանել է, թե ինքն էլ հենց այդպես կվարվեր, եթե Պարմենիոնը լիներ, բայց բանի որ ինքը Ալեքսանդրն է, ապա Դարեհին կպատասխանի հետևյալ կերպ. (3) նա Դարեհի դրամի կարիքը չունի և ամբողջ երկրի փոխարեն միայն նրա մի մասը չի ընդունի. և դրամը և ողջ երկիրը պատկանում են իրեն: Եթե նա Դարեհի աղջկա հետ ամուսնանալ ցանկանա, ապա կամուսնանա առանց Դարեհի համաձայնություն: Նա հրամայում է Դարեհին ներկայանալ իրեն, եթե վերջինս իր հանդեպ բարի վերաբերմունք է հայցում: Դարեհը, լսելով այդ, հրաժարվեց բանակցություններ վարել Ալեքսանդրի հետ և կրկին սկսեց պատերազմի պատրաստություն տեսնել:

(4) Ալեքսանդրը որոշեց արշավել Եգիպտոս: Ամբողջ այսպես կոչված Պաղեստինյան Ասորիքն արդեն իր ձեռքում էր, բացի Գազա քաղաքից, որի կառավարիչն էր ոմն ներքինի՝ Բատ անունով: Նա հավաքել էր արաբ վարձկանների, նախապես պարենամթերքի պաշար կուտակել, որը կբավականացներ երկարատև պաշարման դեպքում և, հույսը դնելով տեղանքի անառիկության վրա, որոշել էր չհանձնվել Ալեքսանդրին:

Գազան ծովից ամենաշատը 20 ասպարեղ հեռավորության վրա է գտնվում: Գեպի քաղաքը տանող ճանապարհը սրսուռ ավազներիով է ծածկված, քաղաքի մոտ ծովի հատակը տղմատ է ու կաշուն: Գազան մեծ քաղաք է. այն գտնվում է բարձր թմբի վրա, որը շրջափակված է նաև ամուր պարսպով: Դա Փյունիկիայից Եգիպտ-

տոս տանող ճանապարհի վերջին քաղաքն է, անապատի սկզբին:

(2) Ալեքսանդրը, մոտենալով քաղաքին, առաջին հերթին ճամբար խփեց այն տեղում, որտեղ պարիսպը նրան առավել թաշիլի թվաց, և հրամայեց հավաքել մեքենաները: Մեքենա կառուցողներն այն կարծիքին էին, որ գրոհով գրավել պարիսպը անհնար է թմբի բարձրության պատճառով, (3) սակայն Ալեքսանդրը գտավ, որ դրա դրավումը այնքան ավելի անհրաժեշտ է, որքան ավելի դժվար է: Նման գործողությունը կապշեցնի հակառակորդին անսպասելիությամբ, իսկ իրենց համար անհաջողությունը անպատվություն կլինի ողջ Հելլագայի և Դարեհի առջև: Նա որոշեց քաղաքի շուրջը իր թումբը կառուցել, որպեսզի այդ բարձունքից էլ՝ հավասար Գազայի թմբին, իր մեքենաները մոտեցնեն պարիսպներին: Թումբը կառուցվեց քաղաքի հարավային կողմից, որտեղ պարիսպն առավել մատչելի էր թվում:

(4) Երբ որոշեցին, որ հողաթումբը բավականաչափ բարձրացվել է, մակեդոնացիները հավաքեցին մեքենաները և սկսեցին մոտեցնել Գազայի պարսպին: Այդ ժամանակ Ալեքսանդրը պատակը գլխին զոհ էր մատուցում. նա արդեն պատրաստվում էր կատարել ընդունված ծիսակատարությունը առաջին կենդանու վրա, երբ հանկարծ մի ինչ-որ գիշատիչ թռչուն, թռչելով զոհասեղանի վրայով, նրա գլխին մի քար գցեց, որը տանում էր իր ճիրաններով: Ալեքսանդրը գուշակ Արիստանդրին հարցրեց, թե ինչ էր նշանակում այդ թռչունը: Արիստանդրը պատասխանեց նրան. «Արքա, դու կգրավես քաղաքը, սակայն վախեցիր այդ օրից»:

Լսելով այդ, Ալեքսանդրը որոշ ժամանակ մնաց մեքենաների մոտ, սակայն հեռու նետերի հասանելիությունից: Իսկ երբ քաղաքից մեծ արտադրոհ սկսվեց, երբ արաբները սկսեցին այրել մեքենաները և, բարձրության վրա գտնվելով, հարվածել մակեդոնացիներին, որոնք հակահարված էին տալիս ներքևից, երբ նրանց սկսեցին նեղել կառուցված հողաթմբից, Ալեքսանդրը կա՛մ դիտավորյալ արհամարհեց գուշակի խորհուրդը, կա՛մ էլ, կռվելով ինքնամոռացության մեջ, մոռացավ նրա գուշակության ձախե և, վահանակիրներին ղլխավորելով, օգնության նետվեց այն վայրը, որտեղ մակեդոնացիներին հատկապես շատ էին նեղում: (2) Նա կանխեց հողաթմբից նրանց խայտառակ փախուս-

տր, ինքն էլ վիրավորվեց ուսից՝ կատապուլտից արձակված նետով. նետը ծակել էր թե վահանը և թե դրահը: Տեսնելով, որ Արիստանդրի խոսքերը վերքի կապակցութեամբ իրականացան, նա ուրախացավ, քանի որ գուշակութունը ենթադրում էր նաև քաղաքի գրավումը:

(3) Վերքը դժվարութեամբ բուժվեց: Մովով բերեցին մեքենաները, որոնց օգնութեամբ նա գրավել էր Տյուրոսը: Ալեքսանդրը հրամայեց շրջապատել քաղաքը երկու ասպարեղ լայնութեամբ և 250 ոտնաչափ բարձրութեամբ թմբով: (4) Երբ մեքենաները պատրաստ էին և բարձրացվեցին թմբի վրա, նրանք խարխուլեցին պարիսպների զգալի մասը, բացի այդ շատ տեղերում գետնի տակ անցուղիներ փորեցին, որտեղից հողն աննկատ հեռացրեցին: Պարիսպը հայտնվելով փոսերի վրա, շատ տեղերում փլվեց: Մակեդոնացիները նետահարում էին աշտարակներում գտնվող դիմվորներին: Երեք գրոհից հետո քաղաքի բնակիչները դեռևս դիմադրում էին, թեև սպանվածներն ու վիրավորները շատ էին: (5) Չորրորդ անգամ Ալեքսանդրը մակեդոնական զորքը ընդհանուր գրոհի տարավ: Մի տեղում տապալեցին տակից փորած պարիսպը, մեկ այլ տեղում ավելի շատ խարխուլեցին այն մեքենաներով, որպեսզի հեշտ լինեի աստիճաններով մուտք գործել բացվածքի միջով: (6) Պարսպին աստիճաններ էին հենում: Մակեդոնացիների միջև քաջագործութեան մեծ մրցակցութուն սկսվեց՝ ով առաջինը կբարձրանա պարսպի վրա: Առաջինը բարձրացավ Նեոպտոլեմոսը՝ «բնկերներից» մեկը՝ ծննդով Հակիդցի: Երանից հետո մեկը մյուսի հետևից գնացին ջոկատները իրենց առաջնորդների հետ: (7) Պարիսպների ներսում հայտնված մակեդոնացիները ջարդեցին բոլոր դարպասները՝ ում որը պատահեց, և քաղաք թողեցին ողջ զորքը: Գազալի բնակիչները, թեև քաղաքն արդեն գրավված էր, շարունակում էին կռվել և բոլորը զոհվեցին, ամեն մեկը կռվելով այն տեղում, ուր իրեն նշանակել էին: Կանանց և երեխաներին Ալեքսանդրը ստրկացրեց: Նա քաղաքը բնակեցրեց շրջակայքի բնակիչներով. այն Ալեքսանդրի համար դարձավ ռազմական ամրոց:



ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

1

Ալեքսանդրը գնաց Եգիպտոս, ուր դեռ սկզբից էլ պատրաստվում էր գնալ, և, դուրս գալով Գազալից, յոթերորդ օրը ժամանեց Եգիպտական Պելուզիում քաղաքը: Փյունիկիայից նրա նավատորմը նույնպես ուղևորվեց Եգիպտոս և իր նավերին նա հանդիպեց արդեն Պելուզիումի նավահանգստում: (2) Պարսիկ Մաղակը, որին Գարեհը նշանակել էր Եգիպտոսի սատրապ, պարսկական զորք չունեի, և նա, տեղեկանալով Իսոսի ճակատամարտի ելքի, Գարեհի խաչտառակ փախուստի և Ալեքսանդրի՝ Ասորիքը, Փյունիկիան և Արաբիայի զգալի մասը գրավելու մասին, Ալեքսանդրին անարգել թողեց մտնել երկիր և նրա քաղաքները: (3) Ալեքսանդրը կայազորը մտցրեց Պելուզիում, նավերին կարգադրեց գետով ռարձրանալ մինչև Մեմփիս, իսկ ինքը ուղևորվեց Հելիոպոլիս՝ Նեղոսը մնաց նրա աջ կողմում: Այն վայրերը, որոնցով անցնում էր նրա ճանապարհը, կամավոր ենթարկվում էին նրան: Կտրելով անապատը, նա հայտնվեց Հելիոպոլիսում, (4) իսկ այնտեղից գնալ անցնելով՝ ժամանեց Մեմփիս, որտեղ տարբեր աստվածների զօհեր մատուցեց, այդ թվում և Ապիսին, և մարմնամազդական ու մուսայական մրցումներով տոնախմբութուն հաստատեց: Այդ տոնախմբութեանը մասնակցելու եկան նշանավոր մարդիկ Հելիոպոլից: Մեմփիսից նա գնաց գետնի վրա՝ դեպի ծով, իր հետ տանելով վահանակիրներին, նետածիգներին, ազդեցիկներին, իսկ հեծյալներից՝ արքայական իզոսը, որը կազմված էր «բնկերներից»: (5) Գալով Կանոբոս, նա նավարկեց Մարիա ծովածո-

ցի շուրջը և այի իշով այն վայրում, որտեղ այժմ գտնվում է Ալեքսանդրիա քաղաքը, կոչված Ալեքսանդրի անունով: Տեղը նրան շափազանց հարմար թվաց քաղաք հիմնելու համար, որն իր կարծիքով այստեղ պետք է ծաղկեր: Նրան անհազ ցանկություն համակեց իրագործելու այդ մտահղացումը, և ինքն անձամբ նշաններով դժագրեց, թե որտեղ տեղադրել ագորան, որտեղ և ինչ աստվածների տաճարներ կառուցել (դրանք նվիրված էին հելլենական աստվածներին, կար նաև Եգիպտոսի Իսիդային նվիրված տաճար) և որ տեղերով տանել պարիսպների շրջագծեր: Այդ ստիժով նա զոհ մատուցեց, և այն բարենպաստ եղավ:

2

Գոյություն ունի նաև մի այսպիսի պատմություն, որն իմ կարծիքով լիովին հավանական է: Ալեքսանդրը ցանկացավ շինարարներին նշաններ թողնել, որոնցով նրանք պիտի տանեին պարիսպը, սակայն նրանց ձեռքի տակ ոչինչ չկար գետնի վրա նշաններ անելու: Այդ ժամանակ շինարարներից մեկը հնարք գտավ՝ վերցնել ամբողջ ալյուրը, որը զինվորները բերել էին տակառների, և շաղ տալ գետնին այն տեղերում, որտեղ մատնացույց կանի արքան, և, այդպիսով շրջագիծ անել, որով և նախատեսվում էր շրջափակել քաղաքը պարսպով: (2) Այդ դեպքի կապակցությամբ գուշակները մտածմունքի մեջ ընկան, հատկապես տեմեոսցի Արիստանդրը, որը շատ դեպքերում ճիշտ գուշակություններ էր անում Ալեքսանդրին: Նա ասաց, որ քաղաքը լիության մեջ կապրի, այդ թվում և երկրային բարիքներով:

(3) Այդ ժամանակ ծովով Եգիպտոս եկավ Հեգեյոքոսը և հայտնեց Ալեքսանդրին, որ տենեդոսցիները հեռացել են պարսիկներից և անցել են նրա կողմը (նրանք միացել էին պարսիկներին իրենց կամքին հակառակ) և որ Քիոսում ժողովուրդը ներս է թողել մակեդոնացիներին, հաղթելով նրանց, որոնց Ալլտոթրադատոսը և Փաննաբազը գրել էին քաղաքին իշխելու: (4) Այստեղ էլ բռնվել էր Փաննաբազը, ինչպես նաև Արիստոնիկոսը՝ մեթիմնացի բռնակալը, որը մտել էր քիոսյան նավահանգիստ հինգ ձուվահենական խղճուկ նավերով, շիմանալով, որ նավահանգիստն արդեն գտնվում է մակեդոնացիների ձեռքում: Նավահանգիստը հսկող պահակախումբը խաբեց նրան, ասելով, որ այդտեղ խոսիսի է պցիլ Փաննաբազի նավատորմը: (5) Բուրթ ծովահեններին տեղնուտեղը սրախողխող արեցին, իսկ Արիստոնիկոսին, քիոսցի

Ապոլլոնիդոսին, Փիսինոսին, Մեգարեոսին և ուրիշներին, ովքեր նպաստել էին Քիոսի պառակտմանը և այդ ժամանակ իրենց իշխանությունն առնելով, զուգույն պահել կղզին, Հեգեյոքոսը բերեց Ալեքսանդրի մոտ: (6) Քարեոսին, որը տեոքինում էր Միտիլենում, նա վճնդեց: Միտիլենի և Լեսբոսում գտնվող այլ քաղաքների հետ նա դաշինք կնքեց, իսկ Ամփոտերոսին 60 նավով ուղարկեց դեպի Կոս, որովհետև Կոսի բնակիչները նրանց կանչել էին: Իսկ ինքը՝ գալով այդտեղ, Կոսը գտավ արդեն Ամփոտերոսի իշխանության ներքո: (7) Հեգեյոքոսի բերած զորիների մեջ չկար միայն Փաննաբազը, որը փախել էր Կոսից՝ սպրդելով պահապաններից: Ալեքսանդրը բռնակալներին, քաղաքների կառավարիչներին նորից հետ ուղարկեց. թող իրենք՝ քաղաքները վարվեն նրանց հետ, ինչպես ցանկանում են: Իսկ Ապոլլոնիդոսին և նրա համախոհ քիոսցիներին ուժեղ հսկողության տակ ուղարկեց Եգիպտոս կան էլեփանտին քաղաքը:

3

Ալեքսանդրին Ամոնի մոտ Լիբիա մեկնելու բուռն ցանկություն համակեց: Նա ուզում էր հարցում անել աստծուն: Ասում էին, թե Ամոնի գուշակությունները ճշգրտորեն կատարվում են և որ հատկապես նա է գուշակել Պերսեսին և Հերակլեսին. մեկին, որ Պոլիդեկեսը նրա դեմ է ուղարկելու Գորգոնային, մյուսին էլ՝ թե նա կգա Լիբիա Անթեոսի մոտ և Եգիպտոս՝ Բուսիբիդեսի մոտ: (2) Ալեքսանդրը ձգտում էր նմանվել թե՛ Պերսեսին և թե՛ Հերակլեսին. ավելին, սերվելով այդ երկուսի տոհմերից, նա իր ծագումը հասցնում էր Ամոնին, ինչպես Հերակլեսի և Պերսեսի ծագումը առասպելները հասցնում են Զևսին: Եվ այսպես, նա մեկնեց Ամոնի մոտ, հույս ունենալով, որ ճշգրիտ կիմանա այն, ինչ վերաբերում է իրեն, կամ էլ առնվազն կկարողանա առել, որ պարզել է:

(3) Մինչև Պարեոնիոս, ինչպես պատմում է Արիստոբուլոսը, նա անցել է 1600 ասպարեղ ծովի երկայնքով՝ անապատով, օակայն տեղ-տեղ ոչ լրիվ անջուր, և հետո շրջվել է դեպի մայրցամաքի խորքը, որտեղ գտնվում էր Ամոնի գուշակության տաճարը: Ծանապարհն անցնում է սորոն ավազներով ծածկված ջրազուրկ անապատով: (4) Սակայն Ալեքսանդրի և նրա ուղևորների գլխին առատ անձրև է թափվել, և դա վերագրվել է աստվածային միջամտությանը: Աստվածային միջամտությանն են վերագրել նաև հետևյալը. այդ երկրում, երբ հարավային բամին

սկսում է փշել, ճամփան համարյա լրիվ ծածկվում է ավազով՝ ասես ծովում հեռքերն անհետանում են և անհնար է կոահել, ուր գնալ այդ ավազների միջով. ճանապարհ ցույց տվող նշաններ չկան, չկան ոչ սարեր, ոչ ծառեր, ոչ էլ անշարժ բլուրներ, որոնցով ճամփորդները որոշեն իրենց ուղղութիւնը, ինչպես նախաստինները՝ աստղերով: (5) Ալեքսանդրի զորքը թափառում էր, ուղեկցողներն էլ շփոթում էին ճանապարհը: Պտղոմեոսը՝ Լագոսի որդին, պատմում է, որ զորքի առջև երկու խոսող օձեր են հայտնվել: Ալեքսանդրը հրամայել է ուղեկցողներին վստահել աստվածութեանը և հետևել դրանց, և օձերը նրանց ցույց են տվել դուշակի մոտ գնալու և հետ դառնալու ճանապարհը: (6) Իսկ Արիստոբոլոսը պատմում է, և ամենից հաճախ հենց այդպես էլ պատմում են, որ զորքի առջև երկու ագռավներ են թռել և որ հենց դրանք էլ ծառայել են Ալեքսանդրին որպես ուղեկցողներ: Այն, որ աստվածութեանը աջակցել է Ալեքսանդրին, ևս կարող եմ հաստատել. դա ինքնին էլ ճշմարտանման է: Այս պատմութեան իսկութեանը կասկածի տեղիք է տալիս տարբեր վարկածների առկայութեան պատճառով:

4

Տարածքը, որտեղ գտնվում է Ամոնի տաճարը, ամեն կողմից ավազներով շրջապատված անշուր մի անապատ է, որի մեջտեղում գտնվում է մի փոքրիկ տարածութիւն (ամենայայն տեղում այն չի անցնում 40 ասպարեզից), ամբողջովին ծածկված պլատոնաձև ծառերով, ձիթենիներով և փյունիկյան արմավենիներով, և այդ վայրը միակ տեղն է, որտեղ վաղորդյան ցող է լինում: (2) Այստեղի աղբյուրը ոչ մի բանով նման չէ այլ տեղերի աղբյուրներին: Կեսօրին նրա ջուրը սառն է, իսկ խմելիս ասես սառուց լինի: Երբ արևը թեքվում է դեպի երկոտ, այն տաքանում է, երկոտից մինչև կեսգիշեր անընդհատ տաքանում է և կեսգիշերին համարյա եռման է: Կեսգիշերից սկսած ջուրը հետզհետև սառչում է, լուսաբացին այն արդեն սառն է լինում և կեսօրին՝ ամբողջովին սառցանման: Այդ փոփոխութիւնները կատարվում են աստիճանաբար և ամեն օր: (3) Այդ վայրում աղ էլ կա, որը պատրաստի վիճակում փորում հանում են հողից: Ամոնի բրմերը աղը տանում են Եգիպտոս: Ճամփա ընկնելիս, նրանք աղը զրնում են փյունիկյան արմավենու տերևներից հյութով զամբյուղիկներով մեջ և նվիրում արքային կամ ուրիշ որևէ մեկի: (4) Աղի

բյուրեղները մեծ են (լինում են և երեք մատնաչափից ավելի) և մաքուր ինչպես բյուրեղապակի: Եգիպտացիները և այլ բարեպաշտ մարդիկ զոհ մատուցելիս օգտագործում են այդ աղը, գտնելով, որ այն ծովային աղից ավելի մաքուր է: (5) Ալեքսանդրը հիացավ ու զմայլվեց այդ վայրը տեսնելով: Նա հարցում արեց աստծուն և լսելով պատասխանը, որն, ըստ իր ասածի, իր սըրտովն էր, վերադարձավ Եգիպտոս նույն ճանապարհով, ինչպես պատմում է Արիստոբոլոսը: Պտղոմեոսը՝ Լագոսի որդին, ասում է. թե նա ուրիշ ճանապարհով է գնացել դեպի Մեմփիս:

5

Մեմփիսում Ալեքսանդրի մոտ բազմաթիվ դեսպանութիւններ էկան Հելլադայից, և շեղավ մի մարդ, որին նա բաց թողներ՝ չկատարելով նրա խնդրանքը: Անտիպատրոսը զորք էր ուղարկել՝ մոտ 400 հելլեն վարձկաններ Մենետոսի՝ Հեգեսանդրոսի որդու հրամանատարութեամբ, և մոտ 500 հեծյալ Թրակիայից Ասկլեպիդոսի՝ Էլնիկոսի որդու գլխավորութեամբ: (2) Ալեքսանդրը զոհ մատուցեց Զևս արքային, հանդիսավոր շքերթ կազմակերպեց, որին զորքը մասնակցում էր իր լրիվ հանդերձանքով, և մարմնամազական և մուսայական մրցույթներով տոնախմբութիւն սահմանեց: Եգիպտոսի հարցերը լուծեց հետևյալ կերպ. եգիպտոսին երկու եգիպտացի նոմարքոսներ նշանակեց՝ Դոլոասպին և Պետիսին, և նրանց միջև բաժանեց եգիպտական հողերը: (3) Երբ Պետիսը հրաժարվեց իր պաշտոնից, Դոլոասպը վերցրեց ամբողջ իշխանութիւնը: Թրուարքոսներ նա նշանակեց «ընկերներին»՝ Մեմփիսում Պանտալեոնտեսին՝ Պյուլոնայից, Պելուզիումում՝ պելացի Պոլեմոնեսին՝ Մադակլեսի որդուն: Օտարերկրացիներին հրամանատարութիւնը հանձնեց էտոլացի Լիկիդեսին. նրանց զբաղիր նշանակեց Իվզնոստասին՝ Քսենոֆոնի որդուն՝ «ընկերներին» մեկին, իսկ «գիտորդ»՝ էսբիլեսին և էգիպտոսին՝ Քալկիզեսի որդուն: (4) Հարևան Լիբիայի կառավարումը նա հանձնեց Ապոլլոնիդոսին՝ Քարինոսի որդուն, իսկ Հերոպոլիսին սահմանակից Արաբիային՝ Կլեոմենեսին՝ Նավիրատիսից: Նրան հրամայված էր թույլատրել նոմարքոսներին կառավարել իրենց շրջանները իրենց սովորութիւնների համաձայն, իսկ իրեն՝ հավաքել ներքին տուրքերը, որոնք նրանց հրամայված էր տալ: (5) Եգիպտոսում մնացող զորքի ստրատեգներ նա նշանակեց Պակիստեսին՝ Մակարտատոսի որդուն և Բալակրոսին՝ Ամինտոսի որդուն, իսկ

նաւարքոս նշանակեց Պուլմոններն՝ Քերամենեի որդուն։ Արի-
րոսի փոխարեն թիկնապահ նշանակեց Լեոնատոսին՝ Օնատոսի
որդուն։ Արիքսոսը մահացաւ հիվանդութիւնից։ (6) Մահացաւ
նաև Անտիոքոսը՝ նետաձիգների պետը. նրա փոխարեն նետաձիգ-
ների պետ նշանակեց կրեատացի Օմբրիոններին։ Դաշնակից հետե-
լակի հրամանատար, որն առաջ Բալակրոսի հրամանատարու-
թյան տակ էր, նա նշանակեց Կալանոսին (Բալակրոսը մնաց Եգիպ-
տոսում)։ (7) Ասում են, Ալեքսանդրը Եգիպտոսի իշխանութիւնը
բաժանել է շատ մարդկանց միջև, հիանալով այդ երկրի բնու-
թյամբ, որն իրենից բնական ամբողջ էր ներկայացնում։ Այդ իսկ
պատճառով նա անվտանգ չէր համարում Եգիպտոսի ամբողջ իշ-
խանութիւնը մեկ մարդու հանձնելը։ Ըստ իս, հոռմեացիները
Ալեքսանդրից են սովորել աշխուրջ հետեւել Եգիպտոսին, դրա հա-
մար էլ նրանք կուսակալներ են ուղարկում այնտեղ ոչ թե սենա-
տորների, այլ միայն հեծյալ դասի մարդկանց։

6

Ալեքսանդրը զարնան առաջին նշանների հետ Մեմփիսից
գնաց Փյունիկիա։ Մեմփիսի մոտ Նեղոսի և նրա բոլոր ջրանցքնե-
րի վրա կամուրջներ էին նետել։ Ժամանելով Տյուրոս, նա իր նա-
վատորմն արդեն այնտեղ գտավ։ Տյուրոսում նա կրկին զոհ մա-
տուցեց Հերակլեսին և մարմնամարզական ու մուսայական մըր-
ցուկներով տոնախմբութիւն կազմակերպեց։ (2) Այստեղ Աթեն-
քից ժամանեց նաև Պարալոսը՝ ղեսպաններ Դիոփոնտեսի և Աքիլ-
լեսի հետ։ Դեսպանութիւնը կցված էր նաև Պարալոսի ողջ շքա-
խումբը։ Նրանք Ալեքսանդրից ստացան այն ամենը, ինչի համար
եկել էին. նա ազատ արձակեց նաև Գրանիկոսի մոտ զերի ընկած
աթենացիներին։ (3) Քանի որ լուրեր եկան Պելոպոնեսում տեղի
ունեցող հուզումների մասին, նա այնտեղ ուղարկեց Ամփոտեթո-
սին օգնելու այն պելոպոնեսացիներին, որոնք պարսիկների հետ
պատերազմի ժամանակ հավատարիմ էին մնացել իրեն և չէին
լսել լակեդեմոնացիներին։ Նա հրամայեց փյունիկացիներին և
կիպրոսացիներին ուղարկել լրացուցիչ ևս 100 նավ, շահված նրանք,
որոնք Ամփոտեթոսի հետ Պելոպոնես էր ուղարկել։

(4) Իսկ ինքը շարժվեց երկրի խորքը, ղեպի Քապասակոս և Եփ-
բատ գետը, Փյունիկիայում տուրքերը հավաքելու համար թողնե-
լով բերոացի Կոյրանոսին, իսկ Ասիայում, Տալրոսի այս կողմի

հողերում՝ Փիլոքսենոսին։ Իր մոտ եղած դրամի կառավարիչ նրանց
փոխարեն նշանակեց Հարպալոսին՝ Մաքատոսի որդուն, որը նոր
էր վերադարձել փախուստից։ (5) Հարպալոսը առաջին անգամ
փախել էր ղեռ Փիլիպոսի թագավորութիւն ժամանակ, որովհետև
նվիրված էր Ալեքսանդրին։ Այդ նույն պատճառով փախել էին
Պաղոմեոսը՝ Լագոսի որդին, նեարքոսը՝ Անդրոտիմեսի որդին,
էրիզիտոսը՝ Լարիթոսի որդին, և նրա եղբայրը՝ Լաոմեդոնտոսը։
Ալեքսանդրը սկսեց կասկածամտորեն վերաբերվել Փիլիպոսին
այն բանից հետո, երբ Փիլիպոսը կնութիւն վերցրեց Էվրիզիկա-
յին և արհամարհեց Օլիմպիային՝ Ալեքսանդրի մօրը։ (6) Փիլի-
պոսի մահից հետո, բոլոր նրանք, ովքեր փախել էին, վախենա-
լով նրանից, վերադարձան, և Ալեքսանդրը Պաղոմեոսին թիկնա-
պահ նշանակեց, Հարպալոսին՝ զանձապետ, նա ղինվորական
ժառանգութիւն պիտանի չէր իր ֆիզիկական թուլութիւն պատճա-
ռով, էրիզիտոսին՝ դաշնակիցների հիպարքոս, Լաոմեդոնտոսին էլ՝
նրա եղբորը, որը երկու լեղու գիտեր և ճանաչում էր պարսից գի-
բը, նշանակեց պարսիկ գերիների վերակացու։ Նեարքոսին դարձ-
րեց Լիկիայի և Լիկիայի սահմանակից՝ մինչև Տավրոս սարած-
վող մարդի սատրապ։ (7) Իսոսի ճակատամարտից քիչ առաջ Հար-
պալոսը լսեց Տավրիսկոս անունով մի սրիկայի և փախավ նրա
հետ։ Տավրիսկոսը մեկնեց էպիրցի Ալեքսանդրի մոտ՝ Իտալիա,
որտեղ էլ մեռավ։ Հարպալոսը փախավ Մեդարիս։ Ալեքսանդրը
համոզեց նրան վերադառնալ, երդվելով, որ այդ փախուստի հա-
մար նրան չեն նվաստացնի։ Այդպես էլ եղավ. Ալեքսանդրը Հար-
պալոսին կրկին զանձապահ նշանակեց։ Լիզիայի սատրապ ուղար-
կեց Մենանդրոսին՝ «ընկերներից» մեկին, (8) իսկ օտարերկրա-
ցիների հրամանատար, որը մինչ այդ Մենանդրոսն էր, նշանա-
կեց Կլեարքոսին։ Նա Ասորիքի սատրապ նշանակեց Ասկիապիդո-
րոսին՝ Էվնիկոսի որդուն, Արիմոսի փոխարեն, որն Ալեքսանդրի
կարծիքով չափազանց ծուլորեն էր զբաղվում այն ամենի պատ-
բասութիւններով, որ հրամայված էր նրան երկրի խորքն ուղե-
վորվող զորքի համար։

7

Ալեքսանդրը ժամանեց Քապասակոս այն տարվա հեկատոմբեոն
ամսին, երբ Աթենքի արքունտոսը Արիստոփանն էր։ Մինչ նրա մո-
տենալը գետի վրայով երկու կամուրջ էին գցել։ Մազելը, որին

Դարեհը տալով 3000 հեծյալ և (...հետևակ), այդ թվում 2000 հեծյալն վարձկաններ, հանձնարարել էր գետի պաշտպանությունը, ամբողջ ժամանակ գետը հսկողություն տակ էր պահում, (2) այդ պատճառով մակեդոնացիները չկարողացան կամուրջը հասցնել հանդիպակաց ափը և վախենում էին, որ Մազեյի զինվորները կսկսեն քանդել կամուրջը այն տեղից, որտեղ այն ավարտվում էր: Մակայն Մազեյը, լսելով Ալեքսանդրի մոտենալու մասին, փախավ իր ամբողջ զորքով: Մազեյի փախչելուն պես կամուրջների շինարարությունը ավարտեցին, և Ալեքսանդրը իր զորքով անցավ գրանց վրայով:

(3) Այնտեղից նա շարժվեց մայրցամաքի խորքը, դեպի այսպես կոչված Միջագետք. Եփրատը և Հայաստանի սարերը մնացին ձախ կողմում: Եփրատից նա ուղղակի Բաբելոն չգնաց, որովհետև մյուս ճանապարհին զորքը կարող էր առատորեն ճարել ամենինչ. այստեղ և՛ ձիերի համար խոտ կար, և՛ զինվորների համար սննդի պաշար, բացի այդ, տոթն էլ այս կողմերում այրող չէր: (4) Ծանապարհին բռնեցին Դարեհի մի քանի զինվորներ, որոնց տարբեր ուղղություններով ուղարկել էին հետախուզության: Ներանք հայտնեցին, որ Դարեհը կանգնած է Տիգրիսի մոտ և որոշել է Ալեքսանդրին թույլ շտալ գետանց կատարելու նա ավելի մեծ զորք ունի, քան Կիլիկիայում ճակատամարտելիս: (5) Լսելով դա, Ալեքսանդրը շուտափույթ շարժվեց դեպի Տիգրիս, բայց հասնելով գետին, չգտավ ո՛չ Դարեհին, ո՛չ էլ Դարեհի թողած պահակախումբը: Նա դժվարությամբ գետանց կատարեց, որովհետև հոսանքը չափազանց արագ էր, բայց այդ գետանցի ժամանակ նրան ոչ ոք չխանգարեց:

(6) Այստեղ նա զորքին հանդիստ տվեց. հենց այդ ժամանակ էր, որ լուսնի համարյա լրիվ խավարում տեղի ունեցավ: Ալեքսանդրը զոհ մատուցեց Լուսնին, Արևին և Երկրին, որոնցից, ինչպես ասում են, կախված էր այդ երևույթը: Արիստանդրը լուսնի խավարումը համարեց բարենպաստ նշան մակեդոնացիների և Ալեքսանդրի համար: Ծակատամարտը, ասաց նա, տեղի կունենա հենց այդ ամսում, և զոհաբերությունները հաղթանակ են կանխագուշակում Ալեքսանդրին: (7) Թողնելով Տիգրիսի ափերը, Ալեքսանդրը անցավ Ասորիստանով, նրա ձախ կողմում Գորդիոսյան լեռներն էին, աչից՝ Տիգրիսը: Գետանցից շորս օր հետո «վազողները» հայտնեցին նրան, որ հարթավայրի վրա թնշամու հեծ-

յալներ են երևում, բայց դժվար է գուշակել քանի հոգի են: Նա առաջ անցավ՝ զորքը շարելով մարտակարգով: Հետ սուրացին և սորիչ «վազողները»: Սրանք ավելի ստույգ էին հետախուզել. ըստ սրանց, հեծյալները կարծես հազարից ավելի չէին:

8

Վերցնելով արքայական իղոսը, «ընկերներին» մեկ ջոկատ, իսկ «վազողներից»՝ պեոններին, Ալեքսանդրը սրբնթաց առաջ նետվեց, մնացած զորքին հրամայելով հետևել իրեն՝ սովորական քայլերով: Տեսնելով Ալեքսանդրի արագ մոտեցող զորքը, պարսից հեծյալները ձիերի ամբողջ թափով հետ սլացան. Ալեքսանդրը սկսեց համառ հետապնդումը: (2) Մեծ մասը փրկվեց, մի քանիսը, ում ձիերը հոգնել էին, սպանվեցին, մի քանիսին էլ ձիերի հետ միասին գերեցվին: Նրանցից էլ իմացան, որ Դարեհը մեծաքանակ բանակով գտնվում է մոտակայքում:

(3) Դարեհին օգնության էին եկել բակտրիացիների հարևան հեղիկները, իրենք՝ բակտրիացիները և սողգերը: Նրանց բոլորի առջնորդն էր Բեսը՝ բակտրիական երկրի սատրապը: Նրանց հետ էին նաև սակերը՝ դրանք սկյութական ցեղեր էին, այն սկյութներից, որոնք բնակվում են Ասիայում. նրանք չէին ենթարկվում Բեսին, այլ Դարեհի անմիջական դաշնակիցներն էին: Նրանց առաջնորդը Մավակն էր. սրանք նետածիգ հեծյալներ էին: (4) Արաքոսիայի սատրապ Բարսանդը բերել էր արաքոսիացիների և այսպես կոչված լեոնային հեղիկների: Սատրապը՝ Արիայի սատրապը, բերել էր արիացիների: Պարթևներին, վրկանցիներին և ապուրներին, որոնք բոլորն էլ հեծյալներ էին, բերել էր Քրատաթերը: Մարերի հրամանատարն էր Ատրոպատոսը. մարեշի հետ էին կազուսիները, աղվանները և սակեսիները: (5) Կարմիր ծովի ափից եկած մարդկանց տնօրինում էին Օոնոտրատը, Արիոբարդանը և Օրբսիներ: Սուսիանների և ուրսերի հրամանատարն էր Օբսաթը՝ Արուլիտի որդին: Բուպարը առաջնորդում էր քաբելոնացիներին. բաբելոնացիների հետ էին ռարտաքսվածները՝ կարիացիները և սիտակենները: Հայերին ղեկավարում էին Պրեստոսը և Միթրավստը, կապադովկիացիներին՝ Արիակը: (6) Գնդախորհրդի և Միջագետքի ասորիներին առաջնորդում էր Մազեյը: Ասում են, Դարեհի բանակում եղել է մինչև 40 000 հեծյալ, մինչև 1.000.000 հետևակային, 200 մանգաղակիր մարտակառք

և ոչ մեծ թվով փողեր՝ 15 գլուխ, որոնց իրենց հետ բերել էին հնդիկները Ինդոս գետի այս ափից:

(7) Այս զորքով Գարեհը ճամբար էր խփել մի բուրբուղին հարթ վայրում, Գավգամելայի մոտ, Բումել գետի մոտակայքում, մոտ 600 ասպարեզ հեռու Արբելա քաղաքից: Հեծելազորի համար անհարմար տեղերը պարսիկները վաղուց հարթեցրել էին մարտահատքերի և հեծելազորի համար: Եղան մարդիկ, որոնք հավատացրեցին Գարեհին, թե պարսիկները Իսոսի մոտ ճակատամարտում զիջեցին, քանի որ չէին կարող լայնորեն ծավալվել կիրճի նեղ պայմաններում: Եվ Գարեհը դյուրությամբ հավատաց դրան:

9

Երբ բռնված պարսիկ լրտեսները այդ ամենը հայտնեցին Ալեքսանդրին, նա շորս օր անընդմեջ մնաց այն տեղում, ուր ստացվել էին այդ տեղեկությունները, զորքին ճանապարհից հեռո հանգրստանալու հնարավորություն տվեց և ամրացրեց ճամբարը խանդակով և ցցապատներով: Նա որոշեց այստեղ թողնել զուսակը և այն զինվորներին, որոնք անմարտունակ էին, իսկ մարտի գնալ նրանց հետ, ովքեր կարող են կռվել և որոնց մոտ բացի զենքից ուրիշ ոչինչ չկար: (2) Երկրորդ զիջերային պահակաժամի մոտ նա զորքով առաջ շարժվեց, որպեսզի արդեն առավոտյան ընդհարմի բարբարոսների հետ: Գարեհը, երբ հայտնեցին Ալեքսանդրի մոտենալու մասին, զորքը դասավորեց ռազմաշարքով: Ալեքսանդրը ևս իր զորքը տանում էր ռազմաշարքով դասավորված: Զորքերը իրարից հեռու էին մոտ 60 ասպարեզ, սակայն միմյանց չէին տեսնում, քանի որ նրանց միջև բլուրներ կային:

(3) Երբ Ալեքսանդրը հայտնվեց թշնամուց 30 ասպարեզ հեռավորության վրա, և նրա զորքը արդեն սկսեց իջնել այդ բլուրներից, նա, նկատելով բարբարոսներին, կանգնեցրեց իր զորքը: Հրավիրելով իր «ընկերներին», ստրատեգներին, իլարքոսներին, դաշնակից զորքերին և օտարերկրացի վարձկանների առաջնորդներին, նա սկսեց խորհրդակցել նրանց հետ այն մասին, թե արդյոք ինքը պետք է միանգամից տանի զորքը թշնամու վրա, (4) ինչպես ցանկանում է մեծամասնությունը, թե Պարմենիոնի խորհրդով ճամբար խփի այստեղ և զննի տեղանքը: չկա՞ արդյոք որևէ կասկածելի և ռազմական զործողությունները դժվարացնող հանգամանք. օրինակ, բողարկված փոսեր, գետնի մեջ խրած սուր

ցցերով: Լավ և ավելի ճշգրիտ է ուսումնասիրել թշնամու շարքերը: Պարմենիոնի կարծիքը հազթեց. ճամբար խփեցին նույն կարգով, որով պետք է գնային ճակատամարտի:

(5) Ալեքսանդրը, իր հետ վերցնելով թիթևազններին ու հեծյալ շրջակայքներին», շրջայց կատարեց և զննեց գալիք ճակատամարտի ողջ տարածքը: Վերադառնալով, նա կրկին հավարեց զորավարներին և ասաց նրանց, որ ինքը կարիք չունի նրանց ոգեվորելու ճակատամարտից առաջ. նրանք վաղուց ոգևորված են իրենց արիությանը և բազմիցս ցուցադրած փայլուն քաջագործություններով: (6) Նա միայն խնդրում է բոլորին քաջալերել իրենց ենթականերին: Թող լուրագոսն ասի իր լուրսի զինվորներին, իլարքոսը՝ իր իզոսին, տաքսիարքոսները՝ իրենց գնդերին, հեռեակի հրամանատարներից ամեն մեկը՝ իր փաղանգին, որ այս ճակատամարտում նրանք կռվելու են ոչ թե կելեսիբայի, Փյունիկիայի կամ Եգիպտոսի համար, ինչպես նախկինում, այլ ամբողջ Ասիայի համար. պետք է որոշվի, թե ո՞վ է իշխելու այնտեղ: (7) Պետք չէ նրանց ոգևորել քաջագործության երկարաշունչ ճառերով. նրանք օժտված են բնատուր քաջությամբ. անհրաժեշտ է միայն ներշնչել նրանց, որ ամեն մեկը վտանգի պահին հիշի զորաշարքի կարգի մասին, պահպանելով խիստ լուսություն, երբ անհրաժեշտ է՝ լուռ առաջ շարժվի և բարձրաձայն գոռա, երբ անհրաժեշտ լինի գոռալ. և որ ամեն մեկը արձակի ամենաահեղ գոչյունը, երբ դրա ժամանակը գա: (8) Թող իրենք՝ հրամանատարները շեշտակիորեն կատարեն հրամանները, սրբեթացորեն հաղորդեն դրանք շարքերով, և թող հիմա ամեն մեկը հիշի, որ մեկի վրիպումը վտանգի տակ կզնի բոլորին, իսկ փորձանքը հարթվում է պարտքի հանդեպ ունեցած պատասխանատվությանը:

10

Այդքան կարճ ճառ ասելուց հետո և զորավարներից լսելով հավաստիացումներ այն մասին, որ ինքը կարող է ապավինել նրանց, Ալեքսանդրը կարգադրեց, որպեսզի զինվորները ճաշեն և հանգստանան: Պատմում են, որ Պարմենիոնը մտել է նրա վրանք և սկսել համոզել նրան պարսիկների վրա հարձակվել զիջերք. նրանք կհարձակվեն ոչնչի չսպասող մարդկանց վրա, որոնք միանգամից խուճապի կմատնվեն և մթությունից ավելի շատ կվախենան: (2) Նա պատասխանել է Պարմենիոնին, ուրիշներն էլ են

լսել այդ խոսակցութիւնը, որ Ալեքսանդրի համար ամօթաբեր է հաղթանակ գողանալը. իրեն պատշաճ է հաղթել բաց մարտում, առանց խորամանկութիւնների: Այդ մեծադղորդ բառերը վկայում են ոչ այնքան փառասիրութեան, որքան վտանգի մեջ զուսպ քաջութեան մասին: Ինձ թվում է, որ այստեղ եղել է նաև ճիշտ հաշվարկ: (3) Գիշերը շատ անսպասելի բաներ կարող են կատարվել թե՛ նրանց համար, ովքեր լավ են նախապատրաստվել մարտին, և՛ թե՛ նրանց համար, ովքեր դրան պատրաստ չեն. գիշերը կարող է կործանել ուժեղներին և, երկու կողմերի սպասելիքներին հակառակ, հաղթանակը հանձնել թուլին: Նրան՝ քաջարի ուղամիկին գիշերը պետք է վտանգավոր թվար: Եթե Գարեհէր պարտվեր, ապա գիշերային հարձակումը կազատեր նրան այն խոստովանութիւնից, որ ինքը վատ զինվոր է և վատ զորք է ղեկավարում, (4) Իսկ եթե մակեդոնացիներին անսպասելի պարտութիւն բաժին հասներ, ապա թշնամու համար շրջապատում ամեն ինչ իրենն էր, հարազատ էր, և նա գիտեր տեղանքը. մակեդոնացիները ծանոթ չէին տեղանքին և շրջապատված էին միայն թըշնամիներով, որոնց ոչ փոքր քանակութիւնը իրենց գերիներն էին. գիշերը գերիները Գարեհէի զինվորների հետ միասին կհարձակվեին իրենց վրա ոչ միայն այն դեպքում, եթե իրենք պարտութիւն կրեին, այլև այն դեպքում, եթե իրենց հաղթանակը լիարժեք չլիներ: Այս բոլոր հանգամանքները հաշվի առնելու համար էլ ես գովաբանում եմ Ալեքսանդրին և հավասար շափով գովաբանում եմ նրա՝ իր հանդէպ ունեցած հարգանքի զգացումի հստակ արտահայտութիւնը:

11

Գարեհէի զորքը ողջ գիշեր մնաց նույն դասավորութեամբ, ինչպես սկզբից շարված էր, քանի որ նրանց ճամբարը հուսալի ամրութիւններով շրջափակված չէր, իսկ, բացի այդ, նրանք վախենում էին գիշերային հարձակումից: (2) Ի դեպ, պարսիկներին այդ ժամանակ չափազանց վնասեց և՛ լրիվ սպառազինված երկարատև կանգառը, և՛ հանդ վտանգի պահի սովորական սարսափը, բայց ոչ այն սարսափը, որը միանգամից է առաջանում, այլ այն, որը արդեն երկար ժամանակով տիրում է հոգուն և ստրկուցնում նրան:

(3) Նրա զորքը շարված էր հետևյալ կերպ (Գարեհէի կողմից կազմված զորքի դասավորման պլանը, հետագայում, քստ Արիս-

տորուզոյի, ընկել էր մակեդոնացիների ձեռքը). նրա ձախ թևում կանգնած էր բակտրիական հեծելազորը և նրա հետ միասին դահերն ու արաքոսիացիները. նրանց կողքին էին պարսիկները՝ հեծյալներն ու հետևակայինները մեջընդմեջ. պարսիկների հետևում կանգնած էին սուսիաները և վերջապես կադուսիները: (4) Ձախ թևը ձգվում էր համարյա մինչև զորքի մեջտեղը: Աջ թևում կանգնած էին զինվորներ Կիլիսիիայից և Միջագետքից, ինչպես նաև մարեր, նրանց հետևում՝ պարթևները և սակերը, ապա՝ տասպուրներն ու վրկանցիները, այնուհետև՝ աղվաններն ու սակեսիները, որոնք նույնպես հասնում էին մինչև զորքի մեջտեղը: (5) Իսկ մեջտեղում, որտեղ գտնվում էր Գարեհէ արքան, կանգնած էին արքայի բարեկամները, «սերկիկի կրող» պարսիկները, հնդիկները, «գաղթական» կոչվող կարիացիները և նետածիգ մարդերը: Ուրախը, բարեկունացիները, Կարմիր ծովի մարդիկ և սիտակները տեղափոխված էին խորքում: (6) Առջևում, ձախ թևում, Ալեքսանդրի աջ թևի դիմաց, գտնվում էր սկյութական հեծելազորը, մոտ հազար բակտրիացիներ և հարյուրի շափ մանգաղավոր մարտակառքի Փղերը և մոտ 50 մարտակառք կանգնած էին Գարեհէի արքայական իղոսի մոտ: (7) Աջ թևի առջևում շարված էին հայկական և կապադովկական հեծելազորները և 50 մանգաղավոր մարտակառք: Հելլեն վարձկանները կանգնած էին Գարեհէի մոտ՝ նրա և նրա հետ գտնվող պարսիկների երկու կողմում. նրանց շարել էին մակեդոնական փաղանդի դիմաց որպես միակ զինվորների, որոնք կարող էին դիմակայել այդ փաղանդին: (8) Ալեքսանդրի զորքը դասավորված էր հետևյալ ձևով. աջ թևը զբաղեցնում էր «ընկերների» հեծելազորը, առջևում կանգնած էր արքայական իղոսը իրենց իլարքոս Կլիտոսի՝ Դրոպիդոսի որդու հետ, նրա հետևում էր Գլավկիոսի իղոսը, Արիստոնեսի իղոսի կողքին, ապա Սոպոլիդոսը՝ Հերմոդորոսի որդին, այնուհետև Հեթակիդեսը՝ Անտիոքոսի որդին, նրա հետևից Գեմետրիոսը՝ Ալփիմենոսի որդին, նրա կողքին գտնվում էին Մելեագրոսի զինվորները՝ արքայական իղոսներից ամենավերջինը այն էր, որի հրամանատարը Հեզեղոքոսն էր՝ Հիպոստրատոսի որդին: «Ընկերների» ողջ հեծելազորի հրամանատարն էր Փիլոտեսը՝ Պարմենիոնի որդին: (9) Մակեդոնական փաղանդում, հեծելազորի կողքին զբաղեցնում էր վահանակիրների աղեմոսը, իսկ նրա հետևում՝ ալլ վահանակներ: Նրանց հրամանատարն էր Նիկանորոսը՝ Պարմենիոնի որդին: Նրա կողքին կանգնած էր Քենոսի՝ Պոլեմոկրատո-

սի որդու գունդը, այնուհետև Պերդիկոսի՝ Օրոնտոսի որդու, հետո Մելեագրոսի՝ Նեոպոլիտոսի որդու, այնուհետև Պոլիպերոնտի- սի՝ Սիմիոսի որդու գունդը, այնուհետև Ամինտոսի՝ Փիլիպոսի որ- դու գունդը: Այդ գնդի հրամանատարը նույնպես Սիմիոն էր, քանի որ Ամինտոսին ուղարկել էին Մակեդոնիա զորք հավաքագրե- լու: (10) Մակեդոնական զորքի ձախ թևը դբադեցրել էր Կրատե- րոսի՝ Ալեքսանդրի որդու զորքը (Կրատերոսը ղեկավարում էր նաև ձախ թևի ողջ հետևակը): Նրա կողքին էր գտնվում դաշնակից հեծելազորը Էբիգիոսի՝ Լարիբոսի որդու առաջնորդությամբ: Նը- բանց կողքին ձախ թևում կանգնած էր թևասլական հեծելազո- րը, որի հրամանատարն էր Փիլիպոսը՝ Մենելայոսի որդին: Ողջ ձախ թևի հրամանատարը Պարմենիոնն էր՝ Փիլիոտեսի որդին. նրա շուրջը կանգնած էին փարսալցի հեծյալները, որոնք կազմում էին թևասլական հեծելազորի մեծամասնությունը և նրա լավագույն մասը:

12

Այդպես էր շարված Ալեքսանդրի զորքի առաջապահ մասը: Մրա հետևում նա տեղադրել էր մեկ այլ շարք, այն հաշվով, որպես- զի երկու ճակատ ունենա: Հետևում կանգնած այդ ջոկատների հրամանատարներին հրամայված էր, որ եթե նրանք նկատեն, որ պարսկական զորքը շրջապատում է մակեդոնացիներին, լրիվ շրջվեն և դիմադրավեն բարբարոսներին: (2) Այն դեպքում, եթե ստիպված լինեին ծավալել կամ խտացնել փաղանգը, աջ թևում, արքայական իդոսի կողքին, պայտածն շարված էր ազրիանացի- ների կեսը Ատալոսի ղեկավարությամբ, նրա հետևում՝ մակե- դոնացիները Բրիստոնեսի հրամանատարությամբ, հետաձիգների կողքին այսպես կոչված «օտարերկրացի վետերանները» իրենց հրամանատար Կլեանդրոսի հետ: (3) Ազրիանացիների ու հետա- ձիգների առջև կանգնած էին հեծյալները՝ «վաղողները», և պեոն- ները՝ Արևտոսի և Արիստոնեսի առջև: Բոլորի առջևում էր վարձ- կանների հեծելազորը Մենիդոսի հրամանատարությամբ: Իսկ ար- քայական իդոսի և բոլոր «ընկերների» առջևում գտնվում էր ազ- րիանացիների և հետաձիգների մյուս կեսը, ինչպես նաև Բալակ- րոսի տեղանտները: Նրանք շարված էին մանդաղակի մարտա- կառքերի դիմաց: (4) Մենիդոսին և նրա մարդկանց հրամայված էր, որ եթե թշնամու հեծելազորը սկսի շրջանցել իրենց թևը, շրջ-

վեն և հարձակվեն նրա վրա կողքից: Այդպիսին էր Ալեքսանդրի զորքի դասավորությունը աջ թևում:

Ձախից պայտածն շարված էին թրակացիները Սիտալիոսի հրամանատարությամբ, նրանց կողքին՝ դաշնակից հեծելազորը Կոլրանոսի ղեկավարությամբ, նրա հետևից՝ հեծյալ օզրիաները Ադալիոնոսի՝ Թերիմոսի որդու հրամանատարությամբ: (5) Իսկ բոլորի առջևում այստեղ կանգնած էր օտարերկրյա վարձկան հե- ծելազորը Անդրոմաքոսի՝ Հիերոնեսի որդու ղեկավարությամբ: Գումակի պաշտպանության համար նշանակված էր թրակիական հետևակը: Ալեքսանդրի ամբողջ զորքը բաղկացած էր 7000 հեծ- յալից ու մոտ 40.000 հետևակայինից:

13

Երբ զորքերը մոտեցան իրար, երևաց, որ Գարեհը իրեն շրջա- պատող պարսիկ «սերկելի կրողների», հնդիկների, աղվանների, «գաղթական» կարիացիների ու հետաձիգ մարդերի հետ միասին կանգնած է Ալեքսանդրի ու արքայական իդոսի դիմաց: Ալեքսանդ- րը աջ շարժեց իր աջ թևը, իսկ պարսիկները նրա վրա շարժեցին իրենց ձախ թևը, որն անցնում էր Ալեքսանդրի աջ թևից այն կողմ: (2) Սկյութ հեծյալներն արդեն ընդհուպ մոտենում էին Ալեք- սանդրի առաջատար ջոկատներին, սակայն Ալեքսանդրը շարու- նակում էր աջ շարժվել և համարյա արդեն դուրս էր գալիս այն տարածության սահմաններից, որը որպես ճանապարհ մաքրել էին պարսիկները: Գարեհը վախեցավ՝ չլինի՞ թե մակեդոնացի- ները դուրս գան կտրտված տեղանք, որտեղ նրա մարտակառ- քերը բանի պետք չեն լինի, և ձախ թևի առջևում շարված հեծ- յալներին հրամայեց շրջանցել թշնամու աջը, որն առաջնորդում էր Ալեքսանդրը, և հնարավորություն չտալ նրան ավելի հեռու տա- նել իր թևը: (3) Դրան ի պատասխան Ալեքսանդրը Մենիդոսին հրամայեց նրանց վրա ուղղել իր հրամանատարության ներքո գտնվող վարձկան հեծելազորը: Սկյութ հեծյալներն ու իրենց կցված բակտրիացիները սլացան դեպի Մենիդոսի հեծելազորը և հետ քշեցին նրան, քանի որ թվապես զգալիորեն գերազանցում էին Մենիդոսի փոքրիկ ջոկատին: Ալեքսանդրը հրամայեց սկյութ- ների դեմ հանել Արևտոսի ջոկատը, պեոններին և օտարերկ- րացիներին: (4) Բարբարոսները սասանվեցին: Բալատրիացիների մեկ այլ ջոկատ, մոտենալով պեոններին ու օտարերկրացիներին,

ստիպեց յուրային փախստականներին հետ վերադառնալ սկսվեց հեծելազորի թեժ կռիւլ: Ավելի շատ Ալեքսանդրի զինվորներից դճվեցին. բարբարոսները ճնշում էին իրենց քանակով և, բացի այդ, իրենք՝ սկյութները և նրանց ձիերը լրիւ պաշտպանված էին զրահով: Չնայած դրան, մակեդոնացիները գրոհ գրոհի հետևից ընդունեցին և, հարձակվելով ջոկատներով, խախտեցին թշնամու շարքերը:

(5) Այդ ժամանակ բարբարոսները Ալեքսանդրի վրա բաց թողեցին իրենց մանգաղակիր մարտակառքերը, հույս ունենալով իրենց հերթին խախտել նրա փաղանգը: Այստեղ նրանք լիովին խաբվեցին: Մարտակառքերի մի մասին, երբ նրանք մոտենում էին, տեղերի տարափով դիմավորեցին «ընկերներին» հեծելազորի առջևում կանգնած ադրիանացիներն ու Բալակրոսի մարդիկ, մյուսների կառապանների ձեռքից խլեցին սանձերը, նրանց ցած գցեցին, իսկ ձիերին սպանեցին: (6) Մի բանիսին հաջողվեց անցնել շարքերի միջով. զինվորները, ինչպես նրանց հրամայված էր, ճանապարհ բացեցին սուրացող մարտակառքերի առջև: Այս դեպքում ավելի հաճախ և՛ մարտակառքերն էին անվնաս մնում, և՛ հակառակորդը, որի վրա դրանք նետվում էին առանց վնաս պատճառելու. այնուամենայնիւ Ալեքսանդրի զորքի ձիապանները և արքայական վահանակիրները նրանց գերեցին:

14

Երբ Գարեհը ոտքի հանեց իր ողջ հետևակը, այնժամ Ալեքսանդրը հրամայեց Արևտոսին հարվածել՝ շրջապատելու նկատառումով, իր աջ թևն անցնող հեծելազորին: (2) Իսկ ինքը դեռ ձգված շարքով տանում էր իր զինվորներին, սակայն երբ իր աջ թևը շրջափակողներին օգնության եկան հեծյալները, որի հետևանքով բարբարոսների առաջավոր գծում ճեղքվածք առաջացավ, Ալեքսանդրը շրջվեց այդ կողմը և, սեպաձև շարելով հեծյալ «ընկերներին» և այդտեղ գտնվող հետևակը, վազքով ռազմակոչով նետվեց ուղիղ Գարեհի վրա: (3) Մի կարճ ժամանակահատված ճակատամարտը ձեռնամարտի ձևով էր ընթանում, իսկ երբ Ալեքսանդրի հեծելազորը հենց իր՝ Ալեքսանդրի զխավորությամբ վճռականորեն ճնշում գործադրեց թշնամու վրա, նեղելով նրան և իրենց նիզակներով հարվածելով նրանց դեմքերին, երբ մակեդոնական կուռ փաղանգը՝ սարիսները պատրաստ, նետվեց պար-

սիկների վրա, Գարեհը, որ վաղուց արդեն վախեցած էր, ընկավ արսափի մեջ, և նա առաջինը շրջվեց ու դիմեց փախուստի: Վախեցան նաև մակեդոնացիների աջ թևը շրջանցած պարսիկները, քանի որ նրանց վրա վճռականորեն նետվեց Արևտոսի ջոկատը:

(4) Այդտեղ սկսվեց պարսիկների համատարած փախուստը. մակեդոնացիները հետապնդում էին նրանց և սպանում փախչողներին: Միմիտը իր գնդով շկարողացավ Ալեքսանդրի հետ նետվել փախչող թշնամու վրա. նա կանգնած մնաց նույն տեղում և շէր զազարեցնում մարտը, քանի որ նրան զեկուցեցին, որ ձախ թեվում մակեդոնացիների վիճակը ծանր է: (5) Նրանց գիծը այս մասում ճեղքված էր. այդ ճեղքվածքի միջով հնդիկների և պարսկական հեծելազորի մի մասը հասել էր մակեդոնացիների գումակին: Այստեղ թեժ կռիւ սկսվեց: Պարսիկները քաջաբար հարձակվում էին մարդկանց վրա, որոնք մեծամասնությամբ անդին էին և չէին սպասում, որ հնարավոր էր թափանցել իրենց մտ՝ ճեղքելով կրկնակի ճակատը: Գերի բարբարոսները միացան պարսիկներին և նրանց հետ միասին հարձակվեցին մակեդոնացիների վրա: (6) Հենց այդ կատարվածի մասին հայտնի դարձավ առջևի գծում կանգնած ջոկատների առաջնորդներին, նրանք, ինչպես և իրենց հրամայված էր, անցան պարսիկների թիկունքը, շատերին տեղն ու տեղը սպանեցին, քանի դեռ նրանք կռվում էին գումակայինների հետ: Մնացածները երեքացին և փախուստի դիմեցին: Պարսիկների աջ թևում դեռ չգիտեին Գարեհի փախուստի մասին, և հեծյալները, շրջանցելով Ալեքսանդրի զորքի ձախ թևը, հարձակվեցին Պարմենիոնի զինվորների վրա:

15

Քանի որ սկզբում մակեդոնացիների վիճակը կասկածելի էր թվում, ապա Պարմենիոնը հապճեպ զեկուցց ուղարկեց Ալեքսանդրին, որ ինքը աքցանի մեջ է և օգնության կարիք ունի: Ալեքսանդրը, ստանալով այդ զեկուցյցը, դադարեցրեց հետապնդումը և, հետ դառնալով, իր «ընկերներին» հեծելազորի հետ միասին արշավեց դեպի բարբարոսների աջ թևը: Սկզբից նա հարձակվեց թշնամու փախչող հեծելազորի վրա, պարթևների, հնդիկների մի մասի և պարսիկների ամենաբազմաքանակ և ուժեղ ջոկատների վրա: (2) Սկսվեց հեծելազորի կռիւ՝ այդ ողջ ճակատամարտում ամենաթեժը: Բարբարոսները, խորքում շարված իրենց ջոկատներով, շրջվեցին ու հարձակվեցին Ալեքսանդ-

րի զինվորների վրա, կանգնելով նրանց դեմ առ դեմ. նրանք տեգեր չէին վերցնում ձեռքները, չէին պտտվում, ինչպես դա սովորաբար լինում է ձիամարտում: Ամեն մեկը խոցում էր նրան, ով իր դիմաց էր կանգնած, դրա մեջ տեսնելով անձնական փրկության միակ միջոցը: Հապճեպորեն խոցում էին և իրենք էլ ընկնում. խղճահարուժյուն չկար ո՛չ մեկի, ո՛չ մյուսի մոտ. արդեն կոպում էին ոչ թե ուրիշի հաղթանակի համար, այլ անձնական փրկության: «Ընկերներից» մոտ 60 հոգի ընկան այստեղ. վիրավորվել էին Հեփեստիոնեսը, Քենոսը և Մենիդոսը. սակայն այստեղ էլ Ալեքսանդրը հաղթեց:

(3) Նրանք, ովքեր մխրճվել էին Ալեքսանդրի զինվորների շարքերը, զիմացին անկասելի փախուստի: Ալեքսանդրը պատրաստ էր հարձակվել հակառակորդի աջ թևի վրա, սակայն թեսալական հեծելազորը այնպես փայլուն էր կոպում, որ Ալեքսանդրը այդտեղ անելիք չուներ. երբ Ալեքսանդրը հարձակվեց նրանց վրա, աջ թևի բարբառոտներն արդեն փախուստի էին դիմել, այնպես որ նա հետ դարձավ և կրկին նետովեց Դարեհին հետապնդելու: Քանի զեռ լույս էր, նա հետապնդում էր նրան: (4) Պարմենիոնը իր զինվորներով առաջ էր շարժվում, հետապնդելով իրենց ջարդած թշնամուն: Ալեքսանդրը, անցնելով կիկոս գետը, ճամբար խփեց, որպեսզի մարդիկ ու ձիերը մի փոքր հանգստանան: Պարմենիոնը զբաղվեց բարբարոսների ճամբարը, նրանց գումակը, փղերը ու ուղտերը:

(5) Ալեքսանդրը, մինչև կեսգիշեր հանդիստ տալով իր հեծյալներին, փութով կրկին շարժվեց առաջ, դեպի Արբելա, որպեսզի այնտեղ ձեռքը զցի Դարեհին, դրամը և ողջ արքայական ունեցվածքը: Նա Արբելա ժամանեց հաջորդ օրը, ճակատամարտից անմիջապես հետո, ընդհանուր հաշվով անցնելով մոտ 600 առյուծաբեղ: Դարեհին նա Արբելայում շրջեց: Ոչ մի բույս այստեղ չհայտնվեց, Դարեհը ավելի հեռու էր փախել. դրամը և ողջ ունեցվածքն ընկավ հաղթողների ձեռքը. կրկին զբաղվեց Դարեհի մարտակառքը. Ալեքսանդրը կրկին վերցրեց նրա վահանը և նրա աղեղը:

(6) Ալեքսանդրի մարդկանցից սպանվել էին հարյուրը, իսկ վերքերից և այն բանից, որ նրանք ջլատվել էին հետապնդման ժամանակ, սատկեցին հազարից ավելի ձիեր՝ «ընկերների» հեծելազորի ձիերի համարյա կեսը: Ասում են, բարբարոսներից զոհվել էին մինչև 30.000 մարդ, իսկ զերի էին վերցվել անհամե-

մատ ավելի շատ մարդիկ. գերվել էին նաև փղեր և մարամիկառքեր, որոնք չէին կոտորվել մարտի ժամանակ:

(7) Այսպես ավարտվեց այդ ճակատամարտը: Այն տեղի ունեցավ ավենացի արքունտոս Արիստոփանեսի օրոք, պիանեպսիոն ամսում: Կատարվեց նաև Արիստանդրի կանխագուշակումը, որ Ալեքսանդրը պիտի ճակատամարտի ու հաղթի հենց այն ամսում, երբ տեղի է ունենալու լուսնի խավարումը:

16

Դարեհը ճակատամարտի դաշտից անմիջապես սլացավ Մարաստան, ճանապարհ ընտրելով հայկական լեռներով: Նրա հետ փախչում էր նաև բակտրիական հեծելազորը այն տեսքով, ինչպես այն շարված էր ճակատամարտի համար: Փախչում էին արքայի բարեկամները և մի քանի մարդ՝ այսպես կոչված «սերկեվի կրողները»: (2) Փախուստի ժամանակ նրանց միացան մոտ 2000 օտարերկրացի վարձկաններ, որոնց հրամանատարներն էին փոկեացի Պատրոնեսը և էտոլացի Գլավկիոսը: Դարեհը Մարաստան էր փախչում, մտածելով, որ, ըստ իր հաշվարկների, Ալեքսանդրը ճակատամարտից հետո կշարժվի դեպի Շոշ և Բարելոն. այդ վայրերը լրիվ ընակեցված են, գումակի համար ճանապարհը դժվարին չէ, իսկ Բարելոնն ու Շոշն էլ, իհարկե, պարզ են պատերազմի ձախուրդությունների և դժվարությունների դիմաց: Իսկ Մարաստան մտնելը մեծ զորքի համար դժվար էր:

(3) Եվ Դարեհը շտապվեց: Ալեքսանդրը Արբելայից շարժվեց ուղիղ Բարելոն: Նրբ նա հեռու չէր Բարելոնից և տանում էր դորք մարտական շարքով, նրան նվերներով ընդառաջ դուրս եկավ Բարելոնի ողջ բնակչությունը կառավարիչների ու քրմերի հետ միասին: Քաղաքը, միջնաբերդը և զանձարանը հանձնեցին Ալեքսանդրին: (4) Մտնելով Բարելոն, Ալեքսանդրը հրամայեց բաբելոնացիներին վերականգնել տաճարները, որոնք Քսերքսեսը հրամայել էր քանդել. այդ թվում նաև Բելի տաճարը, աստծու, որը հատկապես պաշտված էր բաբելոնացիների կողմից: Բաբելոնի սատրապ նշանակեց Մաղեյին: Նրան թողած զորքի հրամանատարությունը հանձնարարեց ամփիպոլիացի Ապոլոգորոսին, իսկ տուրք հավաքելու գործը՝ Ասկլիպիոգորոսին՝ Փիլոնեսի որդուն: (5) Հայաստանի սատրապ նա ուղարկեց Միթրենին, որը Սարգեստում իրեն էր հանձնել միջնաբերդը: Բարելոնում նա, իհարկե, հանդիպումներ էր ունենում քաղղեացիների հետ, կատա-

րում նրանց բոլոր ցանկովթյունները բարեխոսական տաճարների վերականգնման ուղղությամբ և, ի դեպ, զոհ մատուցեց Բելին նրանց ցուցումներով:

(6) Հետո նա մեկնեց Շոշ և արդեն ճանապարհին հանդիպեց Շոշի սատրապի որդուն և սուրհանդակին՝ Փիլոքսենեսի նամակով. Փիլոքսենեսին Ալեքսանդրը ճակատամարտից անմիջապես հետո ուղարկել էր Շոշ: Փիլոքսենեսը այդ նամակում գրում էր նրան, որ Շոշի բնակիչներն իրեն են հանձնում քաղաքը և որ ողջ գանձարանը լիովին պահպանված է Ալեքսանդրի համար: (7) Բաբելոնից մինչև Շոշ Ալեքսանդրը հասավ 20 օրում. ոտք դնելով քաղաք, նա բնդունեց գանձարանը՝ 50 տաղանդ արծաթ և այլ արքայական գույք: Այնտեղ նրա ձեռքն ընկան նաև շատ ուրիշ առարկաներ, որոնք Քսերքսեսը տարել էր Հելլադայից. դրանց թվում Հարմոզիոսի և Արիատոգիտոնեսի պղնձե արձանները: (8) Ալեքսանդրը դրանք հետ ուղարկեց աթենացիներին, և այժմ այդ արձանները գտնվում են Աթենքում, Կերամիկոսում, այնտեղ, որտեղից սկսում է Ակրոպոլիսի բարձունքը, զբեթե Մետրոնի դիմաց և էվդանեմոսի զոհասեղանից ոչ հեռու էլևսինյան գաղտնիքների նվիրյալը գիտի, որ էվդանեմոսի զոհասեղանը գտնվում է հարթատեղում:

(9) Այստեղ Ալեքսանդրը զոհ մատուցեց հայրենական ծիսակատարությունների համաձայն, շահերով վազք կազմակերպեց և մարմնամարզական մրցումներով տոնակատարություն սահմանեց: Շոշաստանի սատրապ նա թողեց պարսիկ Արուլիտին, Շոշի միջնաբերդի թրուարքոս՝ Մազարին՝ «ընկերներից» մեկին, իսկ ստրատեգ՝ Արքելայոսին՝ Թևոդորեսի որդուն. ինքն էլ գնաց պարսիկների դեմ: Դեպի ծով նա ուղարկեց Մենետոսին՝ Ասորբքի, Փյունիկիայի և Կիլիկիայի հյուպարքոսին, (10) հանձնարարելով նրան ծով հասցնել երեք հազար տաղանդ՝ արծաթով, որպեսզի նա դրանից Անտիպատրոսին ուղարկի այնքան, ինչքան անհրաժեշտ կլինի նրան լակեդեմոնացիների դեմ պատերազմելու համար: Այդ ժամանակ եկավ Ամիհետոսը՝ Անդրոմեդոսի որդին, Մակեդոնիայից իր հետ բերած զորքի հետ: (11) Այդտեղ գտնվող հեծյալներին Ալեքսանդրը ուղարկեց «ընկերների» հեծելազորը, իսկ հետևակայիններին բաշխեց գնդերի միջև, ըստ ցեղերի: Ամեն մի իղոս նա բաժանեց երկու լոքոսի, առաջ հեծյալ լոքոսներ չկային, իսկ լոքագոսներ նշանակեց այն «ընկերներին», որոնք իրենց արիությունը արժանացել էին այդ նախապատվությանը:

Դուրս գալով Շոշից և անցնելով Պաստիգրիս գետը, նա ներթափանց ուքսերի երկիրը: Ուքսերից նրանք, ուլքեր բնակվում էին հարթավայրերում և ենթարկվում էին պարսկական սատրապին. միանգամից հնազանդվեցին Ալեքսանդրին, սակայն պարսիկներին չենթարկված այսպես կոչված լեռնային ուքսերը լուր ուղարկեցին Ալեքսանդրին, որ իրենք թույլ կտան նրա զորքին անցնել Պարսկաստան, եթե միայն նրանից տուրք ստանան, որպիսին նրանք անցման համար ստանում էին նաև պարսից արքայից: (2) Ալեքսանդրը հետ ուղարկեց նրանց, հրամայելով գնալ դեպի այն կիրճերը, որոնց վրա իշխելը նրանց թույլ է տալիս կարծել, որ Պարսկաստան տանող անցուղին գտնվում է իրենց իշխանության ներքո: Այնտեղ նրանք Ալեքսանդրից կստանան սահմանված զնարք: Նա վերցրեց արքայական թիկնապահներին, վահանակիրներին և մոտ 8000 այլ զինվորների և գիշերով գնաց, բայց ոչ հալանի ճանապարհով. նրա ուղեկցորդները շոշեցիներ էին: (3) Անցնելով քարքարոտ զովար ճանապարհով, նա արշալույսին հարձակվեց ուքսերի գյուղերի վրա, մեծ ավար վերցրեց և շատ մարդկանց կոտորեց, վրա հասնելով այն ժամանակ, երբ նրանք դեռ անկողնում էին: Մյուսները փախան սարերը: Իսկ ինքը շտապ շարժվեց դեպի կիրճերը, որտեղ ուքսերը հույս ունեին դիմավորել նրան ողջ ժողովրդով, որպեսզի ստանան սահմանված վճարը: (4) Իսկ Կրատերոսին մինչ այդ նա ուղարկել էր զբաղեցնելու այն բարձունքները, որտեղ, ինչպես ինքն էր կարծում, նահանջելու էին ճնշման տակ ընկած ուքսերը: Ինքը մեծ արագությամբ շարժվեց առաջ, զբավեց անցուղիները և բարձունքից իր զորքը ռազմաշարքով տարավ բարբարոսների վրա: (5) Ալեքսանդրի սրընթաց հայտնվելուց ահաբեկված, զրկված բարենպաստ դիրքերից, որոնց վրա նրանք ամենից շատ էին հույս դնում, ուքսերը դեռ ձեռնամարտը չսկսած՝ փախուստի դիմեցին: Ոմանք փախուստի ժամանակ ընկան Ալեքսանդրի զինվորների հարվածներից, շատերը ջախջախվեցին, վայր ընկնելով գաղիվայր ճանապարհից: Իսկ մեծամասնությունը, փախչելով լեռները, դուրս եկավ Կրատերոսի զինվորների դիմաց և կոտորվեց: (6) Ստանալով այդպիսի ընդունակ Ալեքսանդրից, նրանք զովարությամբ թույլտվություն ստացան մեալ իրենց հողում, դրա համար տարեկան տուրք վճարելով Ալեքսանդրին: Պտղոմեոսը՝ Լագոսի որդին, ասում է, որ Դա-

րեհի մայրը համոզել է Ալեքսանդրին թույլատրել իրեն ապրել այդ երկրում: Նրանց վրա դրված տուրքը հետևյալն էր՝ ամեն տարի 100 ձի, 500 բեռնակիր անասուն և 30.000 ուշաքար, ուրսերը դրամ չունեն և հող էլ չեն մշակում. նրանք մեծամասնությամբ խաշնարածներ են:

18

Այստեղից նա Պարմենիոնի հրամանատարության տակ լայն, անցանելի ճանապարհով պարսիկների վրա ուղարկեց զուսակը, թեսալական հեծելազորը, դաշնակիցներին, օտարերկրացի վարձկաններին և ընդհանրապես ողջ ծանրազեն զորքը: (2) Ինքն էլ մակեդոնական հետևակով, «ընկերներին» հեծելազորով, «վազող» հեծյալներով, ազրիանացիների ու նետածիգների հետ արագորեն շարժվեց լեռների միջով: Մոտենալով Պարսկական դարպասներին, նա այնտեղ հանդիպեց Արիոբարզանին՝ պարսից աստրապին՝ զորքով, որը հաշվվում էր մինչև քառասուն հազար հետևակային և մինչև 700 հեծյալ: Արիոբարզանը պատնեռել էր Դարպասները և նրա առջև ճամբար դարկել, որպեսզի թույլ չտար Ալեքսանդրին անցնել Դարպասներով:

(3) Ալեքսանդրը նույնպես այդտեղ ճամբար խփեց: Հաջորդ օրը նա շարեց զորքը և տարավ դեպի պարսպը, սակայն տեսնելով, որ զրոհով պարսպը հնարավոր չէ վերցնել, վերադարձավ ճամբար: Տեղանքն անառիկ էր. բացի այդ էլ զինվորներից շատերը վիրավորված էին, քանի որ թշնամին վերևից խփում էր նրանց մեքենաներից: (4) Այնուհանդերձ գերիները պատմեցին նրան, որ կա մի այլ ճանապարհ, որով հնարավոր է շրջանցել Դարպասները և հայտնվել նրա մյուս կողմում, բայց որ այդ ճանապարհը դժվարին է և նեղ: Ալեքսանդրը ճամբարում թողեց Կրատերոսին իր գնդով, Մելիագրոսի զունդը, սակավաթիվ նետածիգներով և հինգ հարյուր հեծյալներով, և հրամայեց նրան գրոհել պարսպը, (5) հենց որ նրան հայտնի դառնա, որ Ալեքսանդրն արդեն շրջանցել է և մոտենում է պարսկական ճամբարին (դա իմանալը դժվար չէր լինի, քանի որ նրան ազդանշան կտային շեփորները): Ինքը երթի ելավ գիշերը և անցավ հարյուր ասպարեզ. այդտեղից, հետևելով գերիներին, նա շրջվեց դեպի Դարպասները, իր հետ վերցնելով վահանակիրներին, Պերդիկոսի զունդը, բոլորովին թեթևազեն նետածիգներին, ազրիանացիներին, «ընկերներին» արքայական

իզոսը և էլի մեկ հեծյալ տետրաքեիա: (6) Ամինտոսին, Փիլոտոսին և Քենոսին նա հրամայեց մնացած զորքը տանել հարթավայր և կամուրջ դրել այն դետի վրա, որը պետք է անցնեին Պարսկաստանի ճանապարհին: Իսկ ինքը գնաց դժվարին, անհարթ ճանապարհով, ընդ որում ճանապարհի մեծ մասը նա զորքը տարավ վազքով: Բարբարոսների առաջին պահակակետը նա ջարդեց, կռվելով մինչև լուսաբաց. սպանվեց նաև երկրորդ պահակակետը զինվորների մեծ մասը: (7) Երրորդ պահակախմբի մարդկանց մեծ մասը փախավ, և նրանք փախան ոչ թե Արիոբարզանի ճամբարը, այլ, սաստիկ վախից, ուղղակի ժլեկեցին լեռները, այնպես որ արշալույսին Ալեքսանդրը հարձակվեց թշնամու ճամբարի վրա բոլորովին անսպասելիորեն: Նրա խանդակի վրայից անցնելու հետ միաժամանակ շեփորները ազդանշան տվեցին Կրատերոսի զորքին, և Կրատերոսը մարդկանց զրոհի տարավ պարսպի վրա: (8) Պարսիկներն ընկան թշնամու երկու դժի մեջտեղը և փախուսածի դիմեցին, նույնիսկ մարտի մեջ լմտնելով: Սակայն բոլոր կողմերից նրանց ճանապարհը փակված էր. մի կողմից սեղմում էր Ալեքսանդրը, մյուս կողմից վրա էին տալիս Կրատերոսի զինվորները, այնպես որ շատերը ստիպված էին հետ դառնալ ճամբարի պարսպների հետևը, սակայն ճամբարն էլ արդեն մակեդոնացիների ձեռքում էր: (9) Ալեքսանդրը կանխատեսելով, թե ինչ է պնդելու, այստեղ թողեց Պտղոմեոսին հետևակայինների երեքհազարանոց ջոկատով, այնպես որ բարբարոսների մեծ մասը ուղղակի ընկավ մակեդոնացիների ձեռքը և կոտորվեց. մյուսները զոհվեցին, խուճապահար փախուստի ժամանակ ընկնելով զառիթափ տեղերից: Ինքը Արիոբարզանը մի քանի հեծյալների հետ փախավ ասրերը:

(10) Ալեքսանդրը կրկին նույն փութկոտությամբ զորքը տարավ դեպի գետը, որտեղ նրան սպասում էր պատրաստված կամուրջը, և հեշտությամբ զորքով անցավ մյուս ափը: Այնտեղից նա արագորեն շարժվեց դեպի Պերսեպոլիս, այնպես որ հասցրեց գալ այդտեղ ավելի շուտ, քան պահնորդները կկարողանային թաքանել դանձարանը: Նա իր ձեռքը դրեց նաև Պասարգադքի գանձաբանը. այն գտնվում էր Կյուրոս Մեծի պահեստարանում: (11) Պարսկաստանում նա աստրապ նշանակեց Բրասպերտոսին՝ Թեոմիթի որդուն: Կրակի մատնեց պարսից արքաների պալատը, թեև Պարմենիոնը խորհուրդ էր տալիս պահպանել այն, ի միջի այլոց և այն պատճառով, որ լավ չէ սեփական ունեցվածքը

փշացնել, և նաև այն պատճառով, որ Ասիայի բնակչությունը չի ընդունի նրան որպես Ասիայի տիրակալի, որը հաստատակամբ են որոշել է իր ձեռքում պահել իշխանությունը, այլ միայն որպես մի մարդու, որը հաղթարշավով անցել է երկրով: (12) Ալեքսանդրը պատասխանեց, որ նա ցանկանում է պատժել պարսիկներին այն բանի համար, որ ներխուժելով Հելլադա, նրանք ավերել են Աթենքը և այլևի տաճարները, և հելլեններին պատճառած սմեն մի շարքի համար նրանք այժմ պատասխան են տալիս: Ըստ իս: այնուհանդերձ, Ալեքսանդրը գործում էր ոչ խելամտորեն, և այդտեղ ոչ մի պատիժ էլ չկար հին պարսիկների համար:

19

Ավարտելով այդ գործերը, Ալեքսանդրը առաջ շարժվեց դեպի Մարաստան, բանի որ տեղեկացավ, որ Գարեհը գտնվում է այնտեղ: Գարեհը հետևյալ ժրագիրն ուներ՝ եթե Ալեքսանդրը մնա Շոշում ու Բարելոնում, ապա ինքն էլ կմնա այստեղ՝ Մարաստանում, սպասելով, չի ծագի արդյո՞ք Ալեքսանդրի մերձավորների մոտ որևէ դավադրություն նրա դեմ: Իսկ եթե Ալեքսանդրը նետվի իր հետևից, ապա նա կգնա երկրի խորքերը պարթևների մոտ, Վըրկանաց երկիր, ընդհուպ մինչև Բակտրիա, ոչնչացնելով շրջապատում ամեն ինչ և այդպիսով անհնար դարձնելով Ալեքսանդրի հետագա առաջխաղացումը: (2) Կանանց, իր ամբողջ ունեցվածքը և ծածկասալները նա ուղարկել էր այսպես կոչված Կասպիական դարպասներ, իսկ ինքը զորքով հանդերձ, որը տվյալ պարագայում կարողացել էր իր մոտ հավաքվել, մնաց էկրատանում: Լսելով այդ մասին, Ալեքսանդրը մեկնեց Մարաստան: Ներխուժելով պարսիկների երկիրը, նա իրեն ենթարկեց նրանց և սատրապ նշանակեց Օքսաթրին՝ Շոշի սատրապ Աբուլիտի որդուն: (3) Երբ նրան ճանապարհին հայտնեցին, որ Գարեհը որոշել է գալ իրեն ընդառաջ և կրկին ճակատամարտել, և, որ նրան են միացել դաշնակիցները՝ սկյութներն ու կազուսիները, նա կարգադրեց, որ բեռնակիր անասունները, նրանց պահակախումբը և մնացած գումակը գնան հետևից, իսկ ինքը մնացած զորքով, որը գտնվում էր լրիվ մարտական պատրաստության վիճակում, գնաց թշնամու վրա: Տասներկուերորդ օրը նա ժամանեց Մարաստան: (4) Այնտեղ նա իմացավ, որ Գարեհի զորքը մարտունակ չէ, որ ո՛չ կա-

զախները, ո՛չ էլ սկյութները նրան օգնության չեն եկել, և որ Գարեհը որոշել է փախչել: Այնժամ Ալեքսանդրը ավելի շտապեց: Երբ մինչև էկրատան երեք օր էր մնացել, ճանապարհին նրան հանդիպեց Բիսպանը՝ Օքոսի որդին, որը պարսիկների թագավորըն էր եղել Գարեհից առաջ: (5) Նա հայտնեց Ալեքսանդրին, որ Գարեհն արդեն հինգերորդ օրն է, ինչ փախել է, մարտից հափըշտակելով 7000 տաղանդ. նրա տրամադրությունն տակ կա մոտ 3000 հեծյալ և մոտ 6000 հետևակային:

Գալով էկրատան, Ալեքսանդրը հետ՝ դեպի ծով ուղարկեց թեալական հեծելազորը և մնացած դաշնակիցներին: Նա լիովին վճարեց նրանց պայմանավորված գումարը և դեռ իր կողմից էլ ավելացրեց 2000 տաղանդ: (6) Նա հրամայեց կազմել այն մարդկանց ցուցակը, որոնք իրենց ցանկությունը կուղենային առաջիկայում ևս ծառայել իրեն. այդպիսիների թիվը քիչ չէր: Էպոկիտոսին՝ Պոլիդոսի որդուն նա հրամայեց մեկնողներին հեծյալ պահակախմբով ուղեկցել մինչև ծով. թեսալացիները իրենց ձիերը թողնեցին Ալեքսանդրին: Մենետոսին նա գրեց, որ սրանց ծով հասնելուն պես նա հոգ տանի տրիերներով նրանց էվրեա հասցնելու մասին: (7) Պարմենիոնին նա հանձնարարեց Պերսեպոլիսում մեքք բերված զրամը տեղափոխել էկրատան, այն դնել միջնաբերդում և հանձնել Հարպալոսին: Հարպալոսին նա թողեց գանձապետ: Դրամի պահպանության համար նրան տվեց մոտ 6000 մակեդոնացի, ինչպես նաև ոչ մեծ քանակությամբ հեծյալներ ու թեթևազեն զինվորներ: Իսկ ինքը՝ Պարմենիոնը, օտարերկրացիների, թրակացիների և այլ հեծելազորի հետ (բացի «ընկերներից» բաղկացած հեծելազորից) պետք է կաղուսիների երկրով շտապի Վրկան: (8) Արքայական իղոսի հրամանատար Կլիտոսին նա հրաման ուղարկեց (Կլիտոսը հիվանդության պատճառով մնացել էր Շոշում), որ նա էկրատան գալուն պես վերցնի զրամի պահպանության համար այնտեղ թողնված մակեդոնացիներին և գնա դեպի պարթևները, որտեղ և ինքն էր պատրաստվում ուղևորվելու:

20

Ալեքսանդրը, վերցնելով հեծելազորը, որը բաղկացած էր «ընկերներից», «վազողներից», վարձկան հեծյալներից, որոնց հրամանատարն էր Էրիգիոսը, մակեդոնական հետևակը (բացի այն

զինվորներից, որոնց թողել էին դրամի պահպանություն համար), նետածիղմներին ու ազդիանացիներին, սլացավ Դարեհի հետևից: Նա շատ էր շտապում. շատ զինվորներ, տանջահար եղած, հետ էին մնում. ձիերը ուժասպառ վայր էին ընկնում: (2) Նա, միևնույն է, գնում էր և տասնմեկերորդ օրը ժամանեց Թագա. այդ վայրը Կասպիական դարպասներից մեկ օրվա հեռավորության վրա է գտնվում, եթե սլանան այնպես, ինչպես Ալեքսանդրը: Դարեհը նրանից առաջ էր անցել. նա արդեն իր հետևում էր թողել Կասպիական դարպասները: Շատերը, ովքեր փախել էին Դարեհի հետ, լքել էին նրան այդ փախուստի ընթացքում և վերադարձել էին իրենց տները. քիչ չէին նաև այնպիսիները, ովքեր հանձնվել էին Ալեքսանդրին: (3) Ալեքսանդրը, տեղեկանալով, որ շատ մոտ է գտնվում Դարեհին, հինգ օր մնաց այդտեղ և զորքին հանգիստ տվեց. Մարաստանի սատրապ նշանակեց պարսիկ Օբսիդատին, որին Դարեհը Շոշում բանտարկել էր. այդ հանգամանքը Ալեքսանդրին հավատ էր ներշնչել Օբսիդատի հանդեպ: Իսկ ինքը գնաց պարթևների վրա. (4) առաջին օրը ճամբար խփեց Կասպիական դարպասների մոտ, երկրորդ օրը անցավ Դարպասներով և առաջ էր շարժվում, քանի դեռ երկիրը բնակեցված էր: Նա այստեղ պարեն կուտակեց, լսելով, որ առջևում անապատ է, և անասնակեր ճարելու համար ուղարկեց Քենոսին հեծյալների և հետևակայինների փոքրաթիվ ջոկատի հետ:

21

Այդ ժամանակ Դարեհի ճամբարից նրա մոտ ժամանեց Բագիստանը՝ ազնվազարմ բարելոնացիներից մեկը, և նրա հետ՝ Անտիբելը՝ Մազեյի որդիներից մեկը: Նրանք հայտնեցին Ալեքսանդրին, որ հեծելազորի քիլիարքոս Նաբարդանը, որը փախել էր Դարեհի հետ, Բեսը՝ Բակտրիայի սատրապը, և Բարսանդը՝ արաբոսիացիների ու դրանդների սատրապը, ձերբակալել են Դարեհին: (2) Լսելով այդ մասին, Ալեքսանդրն այնպիսի շտապեց. վերցրեց միայն «ընկերներին» և «վազող» հեծյալներին, հետևակայիններից ընտրեց ամենաուժեղ ու արագաշարժ մարդկանց և շարժվեց, չսպասելով անասնակերի համար գնացած Քենոսի ջոկատի վերադարձին: Մնացած զորքի ղեկավար նշանակեց Կրատերոսին և հրամայեց նրան հետևել իրեն, առանց ճանապարհի մեծ հատվածներ կտրելու: (3) Իր ջոկատի մարդիկ ուժեղին միայն զենք և երկու օրվա պարեն: Ալեքսանդրը գնաց ամբողջ գիշեր և

հաջորդ օրը՝ մինչև կեսօր: Զորքին կարճատև հանգիստ տալուց հետո նա կրկին տարավ այն ողջ գիշեր և լուսաբացին ժամանեց այն ճամբարը, որտեղից իր մոտ էր եկել Բագիստանը: (4) Թշնամիներին նա շփեց, իսկ Դարեհի մասին տեղեկացավ, որ նրան կալանավորի նման տարել են ծածկասալով: Նրա իշխանությունն անցել է Բեսին, և Բեսին հրամանատար են հռչակել բակտրիական հեծելազորը և այլ բարբարոսներ, որոնք փախել էին Դարեհի հետ, բացի Արտաբազից, Արտաբազի որդիներից և վարձկան հելլեններից: Նրանք Դարեհին հավատարիմ էին մնացել, սակայն անկարող խանգարելու տեղի ունեցածը. Այդ պատճառով նրանք թողել էին գլխավոր ճանապարհը և ամեն մեկն իր համար հեռացել էր լեռները, շցանկանալով մասնակից դառնալ Բեսի և նրա կողմնակիցների դիտավորությանը: (5) Իսկ Դարեհին ձերբակալողները հետևյալ ծրագիրն էին մշակել. եթե նրանք տեսնեն, որ Ալեքսանդրը հետապնդում է իրենց, նրանք Ալեքսանդրին կհանձնեն Դարեհին և դրա համար առատորեն կպարգևատրվեն. իսկ եթե նրանք իմանան, որ նա հետ է վերադարձել, ապա իրենք կհավաքեն հնարավորին լափ մեծ զորք և համատեղ ուժերով կամբասպոններին իրենց իշխանությունը: Այժմ բոլոր կարգադրություններն անում էր Բեսը և որպես Դարեհի բարեկամ, և որպես այն երկրի սատրապ, որտեղ այժմ տեղի էին ունենում բոլոր իրադարձությունները:

(6) Լսելով այդ մասին, Ալեքսանդրը որոշեց ուժ չխնայելով շարունակել հետապնդումը: Մարդիկ ու ձիերը հյուսվել էին անընդհատ լարված հետապնդումից, բայց նա, միևնույն է, առաջ էր շարժվում: Անցնելով ճանապարհի զգալի մասը գիշերով և հաջորդ օրվա առաջին կեսում, նա կեսօրին մոտ հայտնվեց բնակավայրում, որտեղ նախորդ օրը կանգ էին առել Դարեհին տանողները: (7) Տեղեկանալով, որ բարբարոսները որոշել են շարունակել ճանապարհը գիշերով, նա սկսեց հարց ու փորձ անել տեղաբնակներին, շփոթեց նրանք այնպիսի կարճ ճանապարհ, որով կարելի է հասնել փախստականներին: Նրանք պատասխանեցին, որ գիտեն, սակայն այդ ճանապարհին ջուր չկա և այդ պատճառով այն լքված է: Նա հրամայեց առաջնորդել իրեն այդ ճանապարհով: Գիտակցելով, որ հետևակայինները չեն կարողանա հետևել իրեն, քանի որ ինքը վարդաբաշտվով է գնալու, նա ձիերից իջեցրեց 500 հեծյալներ և, ընտրելով ամենակտրիճ հետևակայիններին և հետևակի առաջնորդներին, հրամայեց նրանց

ծի նստել, իրենց մոտ պահելով հետևակայինի սովորական գն-
քերը: (8) Նա վահանակիրների հրամանատար Նիկանորոսին և
ագրիանացիների առաջնորդ Ատալուսին հրամայեց մնացածներին
տանել այն ճանապարհով, որով անցել էր Բեսը, ընդ որում տալ
նրանց հնարավորին շափ թեթև հանդերձանք, իսկ մնացած հե-
տևակին հրամայեց շարքով հետևել նրանց: (9) Ինքը ճանապարհ
ընկավ երևոյից առաջ և սլացավ վարգով: Գիշերը մոտ 400 ա-
պարեզ անցնելով, նա արշալույսին դուրս եկավ բարբարոսների
ղեմ հանդիման: Նրանք գնում էին առանց զենքի ու անկանոն, և
նրանցից միայն բշերը նետվեցին պաշտպանության: Հենց միայն
Ալեքսանդրի տեսքից մեծամասնությունը փախավ տառանց մարտի
մեջ մտնելու: Նույնիսկ նրանք, ովքեր որոշել էին կովել, տեսնե-
լով, որ մի քանի հոգի սպանվեցին, դիմեցին փախուստի: (10)
Բեսը և նրա համախոհները փորձում էին սալլով իրենց հետ տանել
Գարեհին, սակայն երբ Ալեքսանդրը արդեն հասնում էր նրանց,
Սատիրարզանը և Բարսանդը Գարեհին բազմաթիվ վեր-
քեր հասցնելով, լքեցին նրան և իրենք փախան 600 հեծյալ-
ներիով: Քիչ անց Գարեհը վերքերից մեռավ, ավելի շուտ, քան
Ալեքսանդրը տեսավ նրան:

22

Ալեքսանդրը Գարեհի աճյունը ուղարկեց Պարսկաստան, կար-
գադրություններ անելով թաղել նրան արքայական գերեզմանո-
ցում, որտեղ թաղված էին և պարսից մյուս արքաները: Պարթև-
ների և վրկանաց սատրապ նշանակեց պարթև Ատմինա-
պին, որը Մազակի հետ իրեն էր հանձնել Եգիպտոսը: Տղեպողեմո-
սին՝ Պիթոթանոսի որդուն, որն «ընկերներից» մեկն էր, թողեց
այդտեղ հետևելու, թե ինչ է կատարվում Պարթևաստանում և
Վրկանում:

(2) Այսպես եղավ Գարեհի վերջը, որը վրա հասավ աթենա-
կան արքունիության Արիստոփոնտեսի օրոք, հեկատոմերոն ամսում:
Չէր եղել մի մարդ, որն իրեն պատերազմում այդպես վախկոտ ու
անխոհեմ պահեր: Իսկ, ընդհանրապես, նա դաժանություններ չի
գործել, գուցե պարզապես այն պատճառով, որ առիթներ չեն եղել:
Հազիվ էր նա հասցրել գահին բարձրանալ, երբ ստիպված եղավ
պատերազմել մակեդոնացիների ու հելլենների դեմ: Նույնիսկ ցան-
կություն դիպրում հնարավոր չէր ծանակել սեփական հպատակը և-
րին, գտնվելով վտանգի մեջ, որն ավելի մեծ էր իր համար, քան

նրանց: (3) Իր կյանքի ընթացքում նրա գլխին մի փորձանքը մյու-
ս հետևից էր թափվել: Հենց սկզբից, երբ նա իշխանության գլուխ
անցավ, շունչ բաշելու ժամանակ շունեցավ: Միանգամից նրա
սատրապները շարվեցին Գրանիկոսի մոտ տեղի ունեցած հե-
ծելազորի ճակատամարտում, իսկույն թշնամու ձեռքն անցան
Հեմիան, Էտիդան, Երկու Փոյուզիանները, Լիդիան և Կարիան, բա-
ցի Հալիկաոնասից, սակայն շուտով զրավվեց և Հալիկաոնասը,
(4) և դրան ավելացրած նաև ողջ ժովափնյա շրջանները, ընդ-
հույ մինչև Կիլիկիա: Այնուհետև իր անձնական պարտությունը
Թոսի մոտ, որտեղ մայրը, կինը և զավակները նրա աչքի առջև
գերվեցին: Փյունիկիայի և ողջ Եգիպտոսի կորուստը, խայտառակ
փախուստը, առաջիններից մեկը Արբելայի մոտ, և միայն բար-
բարոսներից բաղկացած մեծ զորքի կործանումը: (5) Այդ ժամա-
նակվանից ինչպես փախստական թափառում էր իր տիրության
մեջ և մեռավ, ամենավճռական պահին մատնված իր մերձա-
վորների կողմից: արքա և միաժամանակ տեղից տեղ տարվող
անարգված կալանավոր, նա դարձավ իր ամենամերձավոր մարդ-
կանց բանասարկությունների զոհը: (6) Այսպիսին էր Գարեհի ճա-
կատագիրը կենդանության օրոք: Երբ նա մեռավ, նրան արքայա-
վայել թաղեցին: Նրա զավակները Ալեքսանդրից այնպիսի բարե-
կեցություն և դաստիարակություն ստացան, որը նրանք կարող
էին ստանալ միայն Գարեհից, եթե նա արքա մնար: Ալեքսանդրը
նրա փեսան դարձավ: Երբ Գարեհը վախճանվեց, նա մոտ 50
տարեկան էր:

23

Ալեքսանդրը սպասեց մինչև իր զորամասերը, որոնք հետա-
պնդման ժամանակ հետ էին մնացել, հասան իրեն և մեկնեց Վր-
կան: Այդ երկիրը գտնվում է Բակտրիա տանող ճանապարհի ձախ
կողմում: Այն ծածկված է բարձր, անտառախիտ լեռներով: Նը-
րանց հետևի հարթավայրը տարածվում է մինչև Մեծ ծովը: Ալեք-
սանդրը Վրկան մեկնեց, տեղեկանալով, որ Գարեհի մոտ ծա-
ռայության մեջ գտնվող օտարերկրացիները փախել են սարերը
տապուրների մոտ: Նա ցանկանում էր միանգամից հնազանդեց-
նել նաև տապուրներին: (2) Նա իր զորքը բաժանեց երեք մասի-
զորքի ամենամեծ և ամենաթեթև մասը նա տարավ ամենակարճ
և լափազանց դժվար ճանապարհով: Կրատերոսին իր գնդով և

Ամինտոսի զնդով, բոլոր նետածիգներով և սակավաթիվ հեծելազորով նա ուղարկեց տապուրների դեմ: Էրիգիոսին նա հրամայեց օտարերկրացիների և մնացած հեծելազորի հետ միասին զնալ երթնեկելի ամենաերկար ճանապարհով, վերցնելով սալերը, դումակը և մնացած ամեն ինչը:

(3) Անցնելով առաջին սարերը և ճամբար խփելով այնտեղ, նա վերցրեց վահանակիրներին, ամենաարագաշարժ մակեդոնացի հետևակալիններին, իր մոտ եղած նետածիգներին և նրանց հետ զնաց դժվարին, համարյա անանցանելի ճանապարհով: Այն տեղերում, ուր նրան թվում էր, թե որևէ վտանգ կա, նա պահակակետեր էր թողնում, որպեսզի սարերում ծվարած բարբառոսները չկարողանան հարձակվել նրանց վրա, ովքեր այս ճանապարհով անցնելու են: (4) Ինքը նետածիգների հետ անցնելով կիրճը, ճամբար դրեց փոքրիկ գետի ափին: Այստեղ նրան ներկայացան և հանձնվեցին Դարեհի բիլիարբոս նաբարզանը, Վրկանի ու Պարթևաստանի սատրապ Թրատաթերնը և այլ երևելի մարդիկ Դարեհի շքախմբից: (5) Ալեքսանդրը ճամբարում շորս օր մնաց, սպասելով ճանապարհից հետ մնացածներին: Բոլորն առանց խոչընդոտների տեղ հասան բացի ազրիանացիներից, որոնք կազմում էին պահակալին վերջնապահ զորքը. նրանց վրա հարձակվել էին սարերում ծվարած բարբառոսները. սակայն նրանք փութով թաքնվել էին, չդիմանալով տեղերի ու նետերի հարվածներին:

(6) Ելնելով այդտեղից, Ալեքսանդրը գնաց Վրկան, ուղղություն վերցնելով դեպի վրկանների Զաղբաբարտա քաղաքը: Այստեղ նրան միացավ Կրատերոսի զորքը, որը Դարեհի օտարերկրացի ջոկատներին չէր հանդիպել, սակայն երկիրը, որով այն անցել էր, մասամբ նվաճվել էր, մասամբ էլ բնակչությունը ինքն էր հանձնվել: Այստեղ հայտնվեց նաև Էրիգիոսը՝ սալերով և դումակով: (7) Քիչ անց Ալեքսանդրին ներկայացան Արտաբազը, նրա որդիները՝ Կոֆը, Արիոբարզանը և Արեսաժը, և նրանց հետ միասին Դարեհին ծառայած օտարերկրյա զորքերի ղեսպանները, ինչպես նաև Ավտոթրադատոսը՝ տապուրների սատրապը: Ավտոթրադատոսին տվեց նրա սատրապությունը. Արտաբազին և նրա որդիներին մեծարանքներով ընդունեց, հաշվի առնելով նրանց ազնվատեսմիկությունն ու Դարեհի հանդեպ պահպանած հավատարմությունը: (8) Իսկ հելլեն վարձկանների ղեսպաններին, որոնք իրենց ողջ զորքի համար խաղաղություն էին խնդրում, պատասխանեց, որ նրանց հետ ոչ մի պայմանագիր չի կնքի, քանի

որ բարբառոսների հետ Հելլադայի դեմ պատերազմելով, նրանք մեծ վերավորանք են հասցրել և խախտել հելլենների վճիռները: Թող նրանք բոլորը ներկայանան և հանձնվեն Ալեքսանդրի ողբամաթոթյանը կամ էլ փրկություն փնտրեն ինչպես կարող են: (9) Դեսպանները պատասխանեցին, որ նրանք իրենց և մնացած բոլորին հանձնում են Ալեքսանդրի կամքին. նրանք խնդրում են իրենց ընկալած հրամանատար տալ, որն անարգել կուղեկցի իրենց Ալեքսանդրի մոտ. իրենց ջոկատում կլինի հազար հինգ հարյուրի շափմարդ Ալեքսանդրը նրանց մոտ ուղարկեց Անդրոնիկոսին՝ Ազիոսի որդուն և Արտաբազին:

24

Ինքը զնաց մարդերի դեմ, իր հետ վերցնելով վահանակիրներին, նետածիգներին, ազրիանացիներին, Քենոսի և Ամինտոսի զնգերը, «ընկերներին» հեծելազորի կեսը և հեծյալ տեգանետներին՝ նա արդեն այդպիսի գունդ էլ ուներ: (2) Նա նվաճեց մարզերի երկրի զգալի մասը. փախուղներից շատերը կոտորվեցին. դիմադրողների մեծ մասը գերի վերցվեց: Վաղուց որևէ մեկը պատերազմով չէր մտել նրանց երկիրը, որովհետև դժվար է այդտեղ թափանցելը. մարդերը աղքատ ժողովուրդ էին և այդ պատճառով ուղղմանը, նրանք չէին վախենում, որ Ալեքսանդրը կներխուժի իրենց երկիրը նույնիսկ այն ժամանակ, երբ Ծա արդեն շատ էր մոտեցել: Դա էլ հեշտացրեց նրանց հանկարծակիի բերելը: (3) Շատերը փախան լեռները, իսկ նրանց երկրում լեռները շափազանց բարձր են և զառիվայր, հույս ունենալով, որ զոնն այնտեղ Ալեքսանդրը չի հասնի: Իսկ երբ նա այդտեղ էլ հասավ, նրանք դեսպան ուղարկեցին Ալեքսանդրի մոտ, և թե իրենք հանձնվեցին, թե նրան հանձնեցին իրենց երկիրը: Ալեքսանդրը զթաց նրանց, իսկ նրանց սատրապ նշանակեց այն Ավտոթրադատոսին, որին նշանակել էր տապուրների սատրապ:

(4) Վերադառնալով ճամբար, որտեղից նա արշավել էր մարզերի երկիրը, նա այդտեղ հանդիպեց հելլեն վարձկաններին և Դարեհ արքայի մոտ ուղարկված լակեդեմոնական դեսպաններին՝ Կալիստրատիդոսին, Պավսիպոսին, Մոնիմոսին, Օնոմանտոսին և Եթեմացի Դրոպիդոսին: Նա կալանավորեց սրանց և նրանց վրա պահակություն դրեց, իսկ Սինոպիցի եկած դեսպանությունն ազատ արձակեց, որովհետև Սինոպեն չէր մասնակցել համահելլենական

դաշինքին և, գտնվելով պարսկական իշխանության նեշքո, անպատշաճ ոչինչ չէր արել իր արքայի մոտ դեսպանությանն ուղարկելով: (5) Նա ազատ արձակեց նաև այն հելլեններին, որոնք պարսիկների մոտ ծառայության էին անցել մինչև Մակեդոնիայի հետ խաղաղության և դաշինքի հաստատումը. ազատ արձակեց նաև բաղկիսցիների դեսպան Հերակլիդեսին: Մնացածներին հրամայեց իր մոտ ծառայության անցնել: Նրանց հրամանատար նշանակեց Անդրոնիկոսին, որը բերել էր նրանց և գործով ցույց տվել իր վեհանձնությունը, փրկելով այդ մարդկանց:

25

Ավարտելով այս գործերը, նա գնաց Զադրաբարտա՝ Վրկանի ամենամեծ քաղաքը, որտեղ և գտնվում էր արքայական պալատը: Այնտեղ 15 օր անցկացնելով և, ինչպես հարկն է, ղոհեր մատուցելով աստվածներին և մարմնամարզական մրցումներով տոնախմբություն հաստատելով, նա գնաց պարթևների մոտ, իսկ այնտեղից գեպի Արիայի սահմանները և Սուսիա, Արիայի քաղաքը, որտեղ նրան ներկայացավ Սատիրարզանը՝ արիացիների սատրապը: (2) Ալեքսանդրը նրան թողեց սատրապությունը, սակայն նրա հետ ուղարկեց Անաքսիպոսին՝ «ընկերներից մեկին», որին տվեց 40 հեծյալ տեղանետներ, որպեսզի բնակավայրերում պահակակետեր դրվի, դրանց մոտով անցնող զորքի արիացիներին նեղացնելուց խուսափելու համար:

(3) Այստեղ նրա մոտ եկան ինչ-որ պարսիկներ, որոնք հայտնեցին, որ Բեսը հագել է գերագույն խուլքը և պարսկական արքայազգեստը, իրեն ոչ թե Բես է անվանում, այլ Արտաքսերքեսս, և ասում է, թե ինքը Ասիայի արքան է: Նրա մոտ են հավաքվել Բակտրիա փախած պարսիկները, շատ բակտրիացիներ, և նա սպասում է սկյութ դաշնակիցների ժամանմանը:

(4) Ալեքսանդրն արդեն ձեռքի տակ ունենալով իր ողջ զորքը, անհապաղ գնաց Բակտրիա, ուր Մարաստանից նրա մոտ ժամանեց Փիլիպոսը՝ Մենելայոսի որդին, վարձկան հեծելազորով, որի հրամանատարն ինքն էր, Ալեքսանդրի մոտ մնալ ցանկացող թեսալացիների և Անդրոմաքոսի վարձկան օտարերկրացիների հետ: Նիկանորոսը՝ Պարմենիոսի որդին՝ վահանակիրների հրամանատարը, հիվանդությունից մահացավ: (5) Ալեքսանդրը արդեն պատրաստվում էր մեկնել Բակտրիա, երբ լուր ստացավ, որ

Սատիրարզանը՝ արիացիների սատրապը, սպանել է Անաքսիպոսին և նրա հեծյալ տեղանետներին, ղինել է արիացիներին և հավաքել նրանց Արտակոանա քաղաքում, որտեղ գտնվում էր արիացիների արքայական պալատը: Տեղեկանալով Ալեքսանդրի առաջադրած մասին՝ նա որոշել էր իր զորքով գնալ Բեսի մոտ, որպեսզի նրանց հետ միասին հարձակվի, որտեղ որ հարկ լինի, մակեդոնացիների վրա: (6) Այդպիսի լուր ստանալով, Ալեքսանդրը շուտով Բակտրիա, այլ «ընկերների» հեծելազորով, հեծյալ տեղանետների, նետածիղջների, ազրիանացիների և Ամինտոսի ու Քեյնոսի գնդերի հետ փութով շարժվեց Սատիրարզանի և արիացիների վրա (մնացած զորքը նա թողեց տեղում Կրատերոսի հրամանատարությամբ): Երկու օրում մոտ 600 ասպարեզ անցնելով, նա մոտեցավ Արտակոանա քաղաքին:

(7) Սատիրարզանը իմացավ, որ Ալեքսանդրը մոտ է. սարսափած նրա արագընթաց առաջխաղացումից, նա փախավ մի քանի արիացի հեծյալների հետ, սակայն ղինվորների մեծ մասը լքեց նրան այդ փախուստի ժամանակ, քանի որ նրանց էլ հայտնի դարձավ, որ Ալեքսանդրը մոտենում է: Ալեքսանդրն իմանալով, թե ով է մասնակցել այդ ապստամբությանը և այժմ լքել իր բնակավայրը, նրանց հետևից բոլոր կողմեր սրընթաց հետապնդում կազմակերպեց. մի մասին նա մահապատժի ենթարկեց. մյուսներին՝ ստրկացրեց: Արիացիների սատրապ նշանակեց պարսիկ Արսակին: (8) Իսկ ինքը զորքով, որը թողել էր Կրատերոսի հետ և որն այժմ ժամանել էր, գնաց զարանգների երկիրը և հասավ այն վայրը, ուր գտնվում էր նրանց արքաների պալատը: Այդ ժամանակ այդ երկիրը կառավարող Բարսանդը՝ Գարեհին սպանողներից մեկը, տեղեկանալով Ալեքսանդրի հայտնվելու մասին, փախավ Ինդոս գետի այն կողմում ապրող հնդիկների մոտ: Հնդիկները բռնեցին նրան և հետ ուղարկեցին Ալեքսանդրին, որը մահապատժի ենթարկեց նրան Գարեհին զավաճանելու համար:

26

Այստեղ Ալեքսանդրին հայտնի դարձավ Փիլոտեսի՝ Պարմենիոսի որդու զավազության մասին: Պտղոմեոսը և Արիստոբոլոսը պատմում են, որ այդ մասին նրան հայտնել են նաև առաջներում, ղեռ Եղիպտոսում, սակայն Ալեքսանդրը ոչնչի չի հավատացել. հին բարեկամությունը, իր կողմից Պարմենիոսին՝

Փիլոտեսի հորը ցուցաբերած պատիվը, հենց իրեն՝ Փիլոտեսին ցուցաբերած վստահությունը. այս ամենը գաղտնի ամբաստանությունը դարձնում էր հավատ շնորհնչող: (2) Պարմենուսը՝ Լագոսի որդին, պատմում է, որ Փիլոտեսին բերել են մակեդոնացիների ժողովին. Ալեքսանդրը տաքացած նրան մեղադրել է, Փիլոտեսը՝ պաշտպանվել: Ելույթ են ունեցել մարդիկ, ովքեր բացահայտել են դավադրությունը. նրանք բերել են Փիլոտեսին և նրա համախոհներին մերկացնող բացահայտ հանցանշաններ, սակայն ամենաշատը նրան մերկացրել է իր իսկ խոստովանությունը, որ ինքն իմացել է Ալեքսանդրի դեմ կազմակերպվող դավադրության մասին և չի ասել նրան ոչ մի բառ, թեև օրը երկու անգամ եղել է Ալեքսանդրի մոտ նրա վրանում: (3) Փիլոտեսին և այդ դավադրության մյուս մասնակիցներին մակեդոնացիները սպանեցին տեղերով, ինչ վերաբերում է Պարմենիոսին, ապա Պոլիդամանտոսը՝ «ընկերներից» մեկը, Ալեքսանդրի նամակով ուղարկվեց Մարաստանի ստրատեգներ Կլեանդրոսի, Սիտալիոսի և Մենիդոսի մոտ. նրանց էր անցնում մինչ այդ Պարմենիոսի ղեկավարած զորքի հրամանատարությունը: (4) Նրանք էլ սպանեցին Պարմենիոսին, զուցի այն պատճառով, որ Ալեքսանդրին անհավանական էր թվում, որ Պարմենիոսը մասնակցած չլիներ իր որդու ծրագրերին, իսկ զուցի և այն պատճառով, որ եթե նա մասնակցած էլ չլիներ, ապա այժմ՝ որդու մահից հետո, սարսափելի կլիներ նրան ողջ թողնելը. նրան շափազանց բարձր էր գնահատում ոչ միայն Ալեքսանդրը, այլև ողջ զորքը, ոչ միայն մակեդոնական, այլև օտարերկրյա. հաճախ հերթով և առանց հերթի նա Ալեքսանդրի հրամանով ղեկավարում էր զորքը ի հաճույս ընդհանուրի:

Պատմում են, որ այդ նույն ժամանակ դատարանի առջև են կանգնել նաև Ամինտոսը՝ Անդրոմենոսի որդին, Պուլմոնեսը, Ատալոսը և Սիմիոսը՝ Ամինտոսի եղբայրները, որպես Ալեքսանդրի դեմ կազմակերպված դավադրության մասնակիցներ. նրանք Փիլոտեսի մոտ ընկերներն էին: (2) Ամբոխին մեղադրանքը ավելի արդարացի թվաց այն բանից հետո, երբ Պուլմոնեսը՝ Ամինտոսի եղբայրներից մեկը, փախավ թշնամու կողմը: Իսկ Ամինտոսը մնացած եղբայրների հետ ներկայացավ դատի. եռանդով

պաշտպանվեց մակեդոնացիների առջև, և նրան արդարացրեցին: Արդեն արդարացված, նա տեղն ու տեղը դիմեց ժողովին՝ թույլատրել իրեն գնալ կղբոր հետևից և բերել նրան Ալեքսանդրի մոտ: (3) Մակեդոնացիները թույլատրեցին: Ամինտոսը նույն օրը մեկնեց և բերեց Պուլմոնեսին: Դա նրա վառայից հանեց ամեն մի կասկած: Սակայն, շուտով, ինչ-որ մի բնակավայրի պաշարման ժամանակ, նա վիրավորվեց նեոտից և վերքից մեռավ, այնպես որ արդարացումը նրան ոչինչ չտվեց, բացի բարի անուհից:

(4) Ալեքսանդրը «ընկերների» գլխին կարգեց երկու հիպարբոս՝ Հեփեստիոնեսին՝ Ամինտոսի որդուն և Կլիտոսին՝ Դրոսիդոսի որդուն և «ընկերների» զունը բաժանեց երկու մասի. նա չէր ցանկանում այդքան մեծ հեծելազորի հրամանատարությունը, առավել ևս որ իր նշանակությամբ ու խիղախությամբ ամբողջ հեծելազորում այն առաջին տեղն էր զբաղում, հանձնել մեկ ժարդու, նույնիսկ ամենամերձավորին: Ալեքսանդրը եկավ այն ժողովրդի մոտ, որ հնում կոչվում էին արխասպներ, իսկ հետո վերանվանվել էին էվերգեթներ, քանի որ նրանք աջակցել էին Կյուրոսին՝ Կամբիզի որդուն, սկյութների դեմ նրա կատարած արշավների ժամանակ: (5) Ալեքսանդրը հարգանքով վերաբերվեց նրանց, ում նախնիները օգնել էին Կյուրոսին: Համոզվելով, որ նրանց հասարակական կյանքը ամենևին նման չէ տեղացի մյուս բարբարոսների կյանքին, որ նրանք էլ Հելլադայի լավագույն մարդկանց հավասար պահպանում են արդարություն, նա անձեռնմխելի թողեց նրանց անկախությունը և ընդլայնեց նրանց երկիրը հարևան հողերով, ինչքան կցանկանան, իսկ նրանք շատ չէին ուզում, այսինքն դա էլ իրենք չէին ուզել: Այդտեղ նա զոհ մատուցեց Ապոլոնին: Կասկածելով Դեմետրիոսին՝ իր թիկնապահներին մեկին Փիլոտեսի դավադրության մասնակցությունը, նա ձեռքակալեց նրան, և Դեմետրիոսի փոխարեն թիկնապահ նշանակեց Պողոմենոսին՝ Լագոսի որդուն:

Ավարտելով այս գործերը, նա գնաց Բակտրիա՝ Բեսի դեմ, ճանապարհին իրեն ենթարկելով դրանգներին ու զեդրոսցիներին: Նա իրեն ենթարկեց նաև արաբոսիացիներին, իսկ նրանց սատրապ նշանակեց Մենոնին: Նա հասավ մինչև արաբոսիացիների

հարևան հնդիկների երկիրը: Զորքը հյուսվել էր, անցնելով այդ երկրներով: Խոր ձյուն էր նստած, և սնունդը չէր բավականացնում, (2) Տեղեկանալով, որ արիացիները կրկին ապստամբել են, բանի որ նրանց մոտ էր գնացել Սատիրարզանը Բեսից ստացած երկու հազարանոց հեծելազորով, նա նրանց դեմ ուղարկեց պարսիկ Արտաբազին, իսկ «ընկերներից»՝ էրիգիոսին ու Կարանոսին: Պարթևների սատրապ Թրատաթերինն հրամայեց նրանց հետ միասին հարված հասցնել արիացիներին: (3) Տեղի ունեցավ դաժան ճակատամարտ էրիգիոսի ու Կարանոսի ջոկատների և Սատիրարզանի զորքի միջև. բարբարոսները չընկրկեցին մինչև էրիգիոսի հետ միաժամանակ չընկավ Սատիրարզանը, որի դեմքին նիզակով հարվածել էր էրիգիոսը: Դրանից հետո նրանք գլխապատառ փախան:

(4) Ալեքսանդրը մոտեցավ Կովկաս լեռանը, որտեղ քաղաք հիմնադրեց, և այն անվանեց Ալեքսանդրիա: Այդտեղ ըստ իր սովորության զոհեր մատուցեց իր սիրելի աստվածներին և անցավ Կովկաս լեռով: Այդ երկրում նա սատրապ նշանակեց պարսիկ Պրոքսին և որպես «վերակացու» զորքով թողեց Նիլոսենեսին՝ Սատիրոսի որդուն՝ «ընկերներից» մեկին:

(5) Կովկաս լեռը, ըստ Արիստոբուլոսի, Ասիայի լեռներից ամենաբարձրն է. նրա զգալի մասը, գոնե այդ տեղում, զուրկ է բուսականությունից: Այդ լեռը ձգվում է մեծ տարածություն վրա, այնպես որ Կիլիկիան Պամփիլիայից անջատող Տավրոսը համարվում է Կովկասի լեռնաձյուղավորումը, ինչպես նաև Կովկասից ճյուղավորվող մյուս բարձր լեռները, որոնք տարբեր ժողովուրդների մոտ տարբեր անուններ ունեն: (6) Այդ Կովկասի վրա, ըստ Արիստոբուլոսի, աճում է միայն տերեբինտ և քեքերթ: Այնուամենայնիվ այստեղ մարդկանց թիվը քիչ չէ. նրանք մեծ քանակությամբ ոչխար ու անասուն են պահում: Ոչխարները շատ են սիրում քեքերթը. եթե ոչխարը հեռվից քեքերթի հոտն առնում է, վազում է դեպի բույսը, պոկում ծաղիկը, հանում արմատը և ուտում այն: (7) Այդ պատճառով Կիրենայում ոչխարի հոտերը հնարավորին չափ հեռու են քշում այն վայրերից, որտեղ քեքերթ է աճում: Որոշ տեղեր նույնիսկ ցանկապատում են, որպեսզի ոչխարները, եթե նույնիսկ մոտենան բույսին, չկարողանան ներս մտնել: Կիրենայում քեքերթը բարձր է գնահատվում:

(8) Բեսի մոտ էին գտնվում Դարեհի ձերբակալմանը մասնակցած պարսիկները, մոտ յոթ հազար բակտրիացիներ և դահերը՝

Տանախից այն կողմ բնակվող ժողովուրդ: Նա ամառացրել էր Կովկասի ստորոտի հողերը. իր և Ալեքսանդրի միջև ընկած մարտը անապատի վերածելը, ըստ նրա հաշվարկների, պետք է զսպեր Ալեքսանդրի առաջխաղացումը: (9) Ալեքսանդրը այնուհանդերձ, առաջ էր շարժվում, ճիշտ է դժվարություններ, որովհետև խոր ձյուն էր նստած և ամենաանհրաժեշտ բանների կարիք կար, սակայն նա առաջ էր շարժվում: Երբ Բեսին հայտնեցին, որ Ալեքսանդրն արդեն մոտ է, նա անցավ Օթոս գետի մյուս ափը. նավերը, որոնցով տեղափոխվում էր, այրեց և հեռացավ սոգդերի երկիրը՝ նավթակի: (10) Նրան հետևեցին Սպիտամենը, Օթսիարտը՝ սոգդացի հեծյալներով, և Տանախի դահերը: Բակտրիական հեծյալները, տեղեկանալով, որ Բեսը որոշել է փախչել, ցրվեցին և գնացին իրենց տները:

29

Ալեքսանդրը ժամանեց Դրապասկ, զորքին հանգիստ տվեց և տարավ այն Ահորն ու Բակտրա. սրանք բակտրիական երկրի ամենամեծ քաղաքներն են: Նա հընթացս գրավեց դրանք. Ահորնի միջնաբերդում կայազոր թողեց Արքելայոսի՝ Անդրոկլեսի որդու՝ «ընկերներից» մեկի գլխավորությամբ: Մնացած բակտրիացիների վրա, որոնք հանձնվել էին առանց դիմադրության, սատրապ կարգեց պարսիկ Արտաբազին: (2) Իսկ ինքը գնաց դեպի Օթոս գետը: Օթոսը հոսում է Կովկաս լեռից. դա Ասիայի գետերից ամենամեծն է, որին հասել է Ալեքսանդրն իր զորքով, բացի հընդկական գետերից. Հնդկաստանում գետերը ընդհանրապես ամենամեծն են: Օթոսը թափվում է Վրկանի մեծ ծովը: (3) Ալեքսանդրը պատրաստվեց անցնել այդ գետը և տեսավ, որ ոչ մի տեղից այն անցնել հնարավոր չէ: Նրա լայնությունը անվազն վեց ասպարեղ էր, իսկ խորությունը չէր համապատասխանում նրա լայնությանը, որն անհամեմատ ավելի խոր էր, ավազոտ հատակով և այնպիսի ուժեղ հոսանքով, որ հեշտությամբ դուրս էր նետում հատակի մեջ խփված ցցայունները, առավել ևս, որ դրանք ամուր չէին խրվում ավազի մեջ: (4) Դրությունը հատկապես բարդացրեց անտառանյութի պակասությունը, իսկ այն հեռվից բերելը կամրջի շինարարության համար շատ երկար ժամանակ կը պահանջեր:

Ալեքսանդրը կարգադրեց հավաքել մորթիները, որոնցով վրան-

ներն էին պատրաստել, լցնել դրանք ամենաշոր խոտով, կապել բերանները և այնպես խնամքով կարել, որպեսզի ջուրը ներս չթափանցի: Այդ լցված և կարված մորթիները դետանցի համար միանգամայն պիտանի եղան և հինգ օրվա ընթացքում զորքը դրանցով անցավ գետի մյուս ափը:

(5) Գետանցից առաջ նա մակեդոնացիներից ընտրեց տարիքավորներին և զինվորական ծառայությանը արդեն ոչ պիտանի մարդկանց և կամավոր նրա մոտ ծառայության մնացած թեսալացիների հետ միասին ուղարկեց տուն: Նա արիացիների մոտ ուղարկեց «ընկերներից» մեկին՝ Ստասանորոսին, հրամայելով նրան ձեռքակալել արիացիների սատրապ Արսակին (Նրան թվում էր, թե Արսակը հանցամատու է իր դեմ) և զբաղեցնել նրա տեղը:

(6) Անցնելով Օքսոսը, Ալեքսանդրը արագորեն շարժվեց դեպի այն վայրերը, ուր, իր ունեցած տվյալներով, գտնվում էր Բևսը իր զորքով: Այդ ժամանակ նրա մոտ Սպիտամենի ու Դատաթերնի կողմից մարդիկ եկան ասելու, որ եթե նա գոնե մի փոքրիկ ջոկատ ուղարկի իր հրամանատարով, ապա իրենք կբռնեն Բեսին և կհանձնեն Ալեքսանդրին: Նա հիմա էլ իրենց հսկողության տակ է, թեև դեռևս շղթայված չէ: (7) Այդպիսի լուրից հետո Ալեքսանդրը զորքին հանգստանալու հնարավորություն տվեց և տարավ այն ավելի դանդաղ, քան առաջ, իսկ Պտղոմեոսին՝ կազոսի որդուն հրամայեց շտապել Սպիտամենի ու Դատաթերնի մոտ. նա Պտղոմեոսին տվեց «ընկերների» երեք հիպարքիա և բոլոր հեծյալ տեղանտներին, իսկ հետևակից՝ Փիլոտեսի գունդը, վահանակիրների քիլիարքիան, բոլոր ազդիանացիներին և բոլոր նետածիգներին կեսը: Պտղոմեոսը ճանապարհ ընկավ ինչպես իրեն հրամայված էր և, շորս օրվա ընթացքում անցնելով այն տարածությունը, որը հարկ է անցնել տասը օրում, ժամանեց այն ճամբարը, որտեղ նախօրեին իր բարբարոսների հետ միասին գիշերել էր Սպիտամենը:

30

Այստեղ Պտղոմեոսն իմացավ, որ Սպիտամենը և Դատաթերնը Բեսին հանձնելու հաստատ որոշում ամենեկին շին ունեցել. նա հետևակին հրամայեց հետևել իրեն ռազմաշարքով, իսկ ինքը հեծելազորով արշավեց այն բնակավայրը, ուր փոքրաթիվ զինվորներով գտնվում էր Բեսը: (2) Սպիտամենը իր ջոկատով արդեն մեկ

նեղ էր այդտեղից. նրանք ամաշում էին իրենց ձեռքով Բեսին թշնամուն հանձնել: Պտղոմեոսը շրջապատեց բնակավայրը իր հեծյալներով (այն շրջափակված էր դարպասներ ունեցող պարիսպով) և հայտարարեց այնտեղ գտնվող բարբարոսներին, որ նրանք ողջ և անվնաս կմնան, եթե հանձնեն Բեսին: Նրանք ներս թողեցին Պտղոմեոսի ջոկատը: (3) Պտղոմեոսը, վերցնելով Բեսին, հետ ճանապարհվեց և սուրհանդակ ուղարկեց Ալեքսանդրին հարցումով, թե ինչ ձևով է անհրաժեշտ ներկայացնել Բեսին Ալեքսանդրին: Ալեքսանդրը հրամայեց բերել նրան մերկացրած, վիզը շղթայած և կանգնեցնել ճանապարհի աջ կողմում, որով Ալեքսանդրը պիտի անցնի իր զորքի հետ միասին: Պտղոմեոսը այդպես էլ արեց:

(4) Ալեքսանդրը, տեսնելով Բեսին, կանգնեցրեց իր մարտկառքը և հարցրեց նրան, թե ինչու նա Դարեհին՝ իր արքային և բացի այդ հարազատին ու բարերարին սկզբում ձեռքակալեց և շղթայակապ տարավ, իսկ հետո սպանեց: Բեսը պնտասխանեց, որ այդպիսի որոշում էր կայացրել Դարեհի ողջ շքախումբը և ոչ թե միայն ինքը, հուսալով այդ ձևով գրավել Ալեքսանդրի ողորմածությունը: (5) Այդ խոսքերից հետո Ալեքսանդրը հրամայեց մտրակել նրան, իսկ մունետիկին՝ հայտարարել այն մեղադրանքները, որոնք ինքը ներկայացրել էր Բեսին իր հարցաքննության ժամանակ: Այդ խարազանումից հետո Բեսին ուղարկեցին Բակտրա մահապատժի: Այդպես է գրում Պտղոմեոսը Բեսի մասին: Իսկ Արխաոքոլոսը պատմում է, որ Բեսին Պտղոմեոսի մոտ են բերել Սպիտամենը և Դատաթերնը և որ նրանք Բեսին հանձնել են Ալեքսանդրին մերկ ու շղթայված վզով:

(6) Ալեքսանդրը, լրացնելով հեծելազորը տեղական ձիերով (նրա ձիերից շատերը սատկել էին Կովկասի լեռնաշղթայով անցնելիս և դեպի Օքսոս և Օքսոսից այն կողմ արշավելիս), դնաց դեպի Մարականդ, սա Սոզդիանայի մայրաքաղաքն է: (7) Այնտեղից նա շարժվեց դեպի Տանախ գետը: Այդ Տանախը, որին տեղացի բարբարոսները, ըստ Արխաոքոլոսի, անվանում են նաև Օրքսանտ, նույնպես սկիզբ է առնում Կովկասից: Այդ գետն էլ է թափվում Վրկանաց ծովը: (8) Պեսը է որ մեկ այլ Տանախ էլ լինի, որի մասին պատմազիր Հերոդոտոսը գրում է, որ դա սկյութների ութերորդ գետն է, այն հոսում է մեծ լճից և թափվում մի ավելի մեծ լիճ. այն կոչվում է Մեոտիս: Ոմանք ասում են, թե այդ Տանախը Եվրոպայի և Ասիայի սահմանն է: (9) Նրանց

կարծիքով Մեղսիս լիճը ելնում է էվրասիայան ծովի խորքերից և հենց այդ լիճն էլ թափվում է Տանախը, որը բաժանում է Ասիան Եվրոպայից ճիշտ այնպես, ինչպես Հադիսի և նրա դեմ դիմաց բնակվող լիբիական նոմադների միջև ընկած ծովը բաժանում է Լիբիան Եվրոպայից, հենց նրանց կարծիքով էլ Լիբիան մնացած Ասիայից բաժանված է նեղոս գետով:

(10) Այստեղ որոշ մակեդոնացիներին, որոնք գնացել էին անասնակեր ճարելու և ցրվել էին, բարբարոսները սպանեցին, որոնք այնուհետև փախան անառիկ և բոլոր կողմերից զառիվայր լեռը: Նրանք մոտ 30 հազար հոգի էին: Ալեքսանդրը գնաց նրանց դեմ ամենաշարժունակ զինվորներով: (11) Մակեդոնացիները բազմիցս փորձեցին բարձրանալ լեռը. սկզբից նրանք նահանջում էին բարբարոսների նետերից. շատերը վիրավորվեցին. իր՝ Ալեքսանդրի ազդրն էլ էր ծակել անցել նետը. այն ջարդել էր ոսկրի մի մասը: Այնուհանդերձ լեռը գրավվեց: Բարբարոսների մի մասին մակեդոնացիները կոտորեցին տեղն ու տեղը. շատերը զոհվեցին՝ ժայռերից ցած նետվելով, այնպես որ երեսուն հազար մարդուց ողջ մնացին մոտ ութ հազարը:



ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԳ

1

Մի քանի օր անց Ալեքսանդրի մոտ դեսպանություն եկավ սկյուֆներից, որոնց արիամցիներ էին անվանում (Հոմերոսը զովերգել է նրանց իր պոեմում, անվանելով ամենաարդարացի մարդիկ. նրանք բնակվում են Ասիայում, անկախ են հիմնականում շնորհիվ իրենց աղքատության և արդարամտության), ինչպես նաև զեսպաններ եվրոպական սկյուֆներից. դա Եվրոպայում բնակվող ամենամեծ ցեղն է: (2) Բարեկամություն հաստատելու պատրվակով Ալեքսանդրը նրանց հետ ուղարկեց մի քանի «ընկերներին», իսկ այդ զեսպանության իսկական նպատակը սկյուֆական երկրի և բնության հետ ծանոթանալն էր, ինչպես նաև ազգարնակչության քանակի, նրանց սովորույթների և պատերազմի ժամանակ գործածվող զենքի մասին տեղեկություններ հավաքելը:

(3) Իսկ ինքը որոշեց քաղաք հիմնադրել Տանախ գետի ափին, անվանելով այն իր անունով: Այդ տեղը նրան հարմար թվաց քաղաքի համար, որը կաճեր, հիանալի պաշտպանված Վլինեթ սկյուֆների հնարավոր հարձակումներից և երկրի համար պատվար կդառնար գետի մյուս կողմում բնակվող բարբարոսների ասպատակություններից: (4) Որ քաղաքը կմեծանար, երաշխավորում էր և վերաբնակների մեծ քանակը, որոնց նա ցանկանում էր հավաքել այստեղ, և նրա անվան փայլը: Եվ ահա այդ ժամանակ գետի հարևանությամբ բնակվող բարբարոսները գրավեցին և կոտորեցին մակեդոնական զինվորների կայազորները, որոնք գտնվում էին իրենց քաղաքներում, իսկ այդ քաղաքները սկսեցին

ավելի ամրապնդել: (5) Այդ ապստամբութեանը մասնակցեցին նաև շատ սոցդեր, որոնց ոտքի էին հանել Բևսին բռնողները, նրանք էլ իրենց կողմը գրավեցին բակտրիացիներին մի մասին: Միգուցե նրանք իսկապես վախենում էին Ալեքսանդրից, և կարող է պատահել, որ ապստամբութեան պատճառ էին բերում Ալեքսանդրի այն հրամանը, համաձայն որի երկրի բոլոր գեկավարները պետք է հավաքվեին Զարիսպոլում՝ ամենամեծ քաղաքում. բայց նրանց, այդ հավաքը կազմակերպվում էր շար նպատակներով:

2

Ստանալով այդ տեղեկությունները, Ալեքսանդրը հրամայեց, որ հետևակային ամեն մի լոբոս պատրաստի նշված քանակությամբ աստիճաններ, իսկ ինքը շարժվեց ճամբարից ամենամոտ քաղաքը, որը կոչվում էր Գաղա: Ասում էին, թե բարբարոսները մերձակա շրջաններից հավաքվել էին յոթ քաղաքներում: (2) Կրատերոսին նա ուղարկեց զրանցից ամենամեծի՝ Կյուրոպոլիսի մոտակայքը: Ամենաշատ բարբարոսներ հավաքվել էին այստեղ: Նրան հրամայված էր ճամբար խփել քաղաքից ոչ հեռու, նրա շուրջը խրամատ փորել, շրջապատել հողապատենշով և անհրաժեշտ քանակությամբ մեքենաներ պատրաստել. թող քաղաքի բնակչությունը կլանվի Կրատերոսի դեմ տարվելիք պատերազմով և ի վիճակի չլինի մյուս քաղաքներին օգնության ձեռք մեկնել: (3) Իսկ ինքը, մոտենալով Գաղային, հրամայեց գրոհով միանգամից գրավել քաղաքը, նրա ոչ բարձր և կավով իրար միացված պարսպին ամեն կողմից նախապես պատրաստված աստիճաններ հենելով: Այն ժամանակ, երբ հետևակը գնում էր գրոհի, պարսատիկավորները, նետածիգներն ու տեգանետները պարիսպների վրայից ցած էին զլորում մարտիկներին. նրանց վրա էին թռչում նաև մեքենաներից արձակված նետերը: Շատ շուտով նետերի տարափը պարսպի վրայից թռեց նրա պաշտպաններին. մակեդոնացիներն անարգել հենեցին աստիճանները և բարձրացան պարսպի վրա: (4) Բոլոր տղամարդկանց կոտորեցին՝ դա Ալեքսանդրի հրամանն էր. կանանց, երեխաներին և ավարը իրենց վերցրեցին: Այստեղից նա անմիջապես գնաց երկրորդ՝ հարևան քաղաքը, որը նույն ձևով գրավեց հենց այդ նույն օրը. պարտվածներին նույն ճակատագիրն էր սպասվում: Ալեքսանդրը գնաց դե-

պի երրորդ քաղաքը և հաջորդ օրը առաջին իսկ գրոհով գրավեց այն:

(5) Այդ նույն ժամանակ, մինչդեռ նա իր հետևակով զբաղված էր այդ քաղաքներով, հարևան երկու քաղաքներ ուղարկեց հեծելազորը, հրամայելով ոչ մեկին այնտեղից դուրս չթողնել, որպեսզի ոչ ոք չիմանա հարևան քաղաքների գրավման, ինչպես նաև իր մոտալուտ դալուստի մասին, և որ փախուստի դիմած քնակիչները իրենից չկարողանան խույս տալ: Ամեն ինչ եղավ այնպես, ինչպես ինքը ենթադրում էր. իր հեծելազորը նա ճիշտ հաշվարկով էր ուղարկել: (6) Նրբ երկու դեռ չգրավված քաղաքների բարբարոս բնակչությունը տեսավ հարևան այրվող քաղաքներից բարձրացող ծուխը և նրանց մոտ վազեցին ընդհանուր ջարդից փրկված՝ գրոհի մի քանի ականատեսներ, այնժամ բոլորն առանց մտածելու փախան այդ քաղաքներից, դեմ առ դեմ ելան հեծյալների բարեկանոն շարքերին, և նրանց մեծ մասը սրի մատնվեց:

3

Այսպիսով, երկու օրում գրավելով հինգ քաղաք և ստրկացնելով բնակչությունը, Ալեքսանդրը գնաց դեպի նրանց ամենամեծ քաղաք՝ Կյուրոսի քաղաքը: Ինչպես որ պատշաճ էր Կյուրոսի ստեղծածին, քաղաքը շրջափակված էր ավելի բարձր պարսպով, քան մնացածները. այնտեղ էր հավաքվել բարբարոսների մեծամասնությունը, ընդ որում ամենաուզմառենիները, այնպես որ մակեդոնացիներին այնքան էլ հեշտ չէր լինելու գրավել այն միանգամից: Ալեքսանդրը պարսպին մոտեցրեց մեքենաները և մտածում էր ճեղքվածքներ բացելով պարսպի այդ մասում, առաջացած անցքերի միջով ներխուժել քաղաք: (2) Սակայն այդտեղ նրա ուշադրությունը գրավեց գետը, որը հոսում էր քաղաքի միջով և ձմեռային անձրևներից դառնում ավելի հորդաուստ, բայց որն այժմ լիովին չորացել էր: Պարիսպները չէին անջրպետում նրա հունը մինչև հատակ, այնպես որ զինվորները կարող էին նրա տակով քաղաք մտնել: Ալեքսանդրը իր հետ վերցրեց թիկնապահներին, վահանակիրներին, նետածիգներին և ագրիանացիներին. բարբարոսներն իրենց ողջ ուշադրությունը դարձրել էին մեքենաներին, պաշտպանվում էին այն վայրում, ուր դրանք կանգնած էին. նա, բոլորից աննկատ, մարդկանց փոքրա-

թիվ խմբով, քաղաք մտավ այդ գետի հունով: (3) Ներսի կողմից ջարդելով այդ տեղին մոտ գտնվող դարպասը, նրանք միանգամից ներս թողեցին նաև մնացած զորքը: Բարբարոսները, տեսնելով, որ քաղաքն արդեն գրավված է, այնուհանդերձ հարձակվեցին Ալեքսանդրի և նրա ղինվորների վրա: Գաժան մարտ սկսվեց: Ալեքսանդրը քարի հարվածից ծանր վիրավորվել էր գլխից ու վզից, Կրատերոսը և շատ այլ զորավարներ վիրավորվել էին նետերից: Այնուհանդերձ բարբարոսներին հրապարակից քշեցին, (4) իսկ այդ ժամանակ պաշարողները տիրացան պարսպին, որի վրա այլևս պաշտպաններ չկային: Քաղաքի առաջին իսկ գրավման ժամանակ զոհվեց 8 000 թշնամի, մնացածները (այստեղ ընդամենը հավաքվել էր մոտ 15 000 զինվոր) փախան միջնաբերդ: Ալեքսանդրը շրջապատեց նրանց և պահեց այնտեղ մեկ օր. նրանք հանձնվեցին, քանի որ ջուր չունեին:

(5) Ցոթերով քաղաքը նա գրավեց միանգամից: Պողոմեոսը խոսքերով, բնակիչներն իրենք անձնատուր եղան: Իսկ Արիստոբուլոսը պատմում է, որ սա էլ է գրավվել գրուհով և որ կոտորել են բոլորին, ում այնտեղ բռնել են: Իսկ Պողոմեոսն ասում է, որ Ալեքսանդրը մարդկանց բաժանել է իր ղինվորների միջև և հրաժարել է շրթալակապ պահել նրանց մինչև ինքը լքի այդ երկիրը: Թող ապստամբության մասնակիցներից ոչ որ շմնա:

(6) Այդ ժամանակ Տանախի ամերը ժամանեց ասիական սկյութների զորքը. շատերին հայտնի էր դարձել գետի այն կողմում ապրող բարբարոսների ապստամբության մասին, և նրանք նույնպես պատրաստվում էին հարձակվել մակեդոնացիների վրա, եթե ապստամբությունը իսկապես լուրջ լինի: Լուր եկավ այն մասին, որ Սպիտամենը պաշարել է Մարականդի միջնաբերդում թողած կայազորը: (7) Ալեքսանդրը Սպիտամենի դեմ ուղարկեց Անդրոմաքոսին, Մենեդեմոսին և Կարանոսին, տալով նրանց մոտ վաթսուհին հեծյալ «բնկերներ» և 800 վարձկաններ, որոնց հրամանատարը Կարանոսն էր, իսկ վարձկան հետևակայիններից տվեց մոտ հազար հինգ հարյուր մարդ: Նրանց հետ ուղարկեց ձնունդով լիկիացի թարգմանիչ Փաոնոսին: Նա քաջ գիտեր տեղացի բարբարոսների լեզուն և ընդհանրապես կարողանում էր, ըստ երևույթին, նրանց հետ վարվել:

Ալեքսանդրը ձեռնամուխ եղավ մտադրած քաղաքի շինարարությանը: Քսան օրվա ընթացքում նա շրջափակեց այն պարսպով և բնակեցրեց այդտեղ հելլեն վարձկաններին, այդտեղ բնակվել ցանկացող հարևան բարբարոսներին և այն մակեդոնացի գնվորներին, որոնք արդեն պիտանի չէին ղինվորական ծառայության համար: Իր սովորության համաձայն, աստվածներին զօհ մատուցելով, նա կազմակերպեց մարմնամարզության և հեծելազորի մրցումներ:

Ալեքսանդրը տեսավ, որ սկյութները չեն հեռանում գետից (2) և նույնիսկ նետեր են արձակում գետի մյուս ափից (գետը լայն չէր), ընդ որում պարծենում են բարբարոսական սովորությամբ, գրգռում նրան, գոչելով, թե սկյութների հետ գոտեմարտել նա չի համարձակվի, այլապես նա ստիպված կլինի իմանալ, թե ինչ տարբերություն կա սկյութների և ասիական բարբարոսների միջև: Բորբորված նա որոշեց անցնել գետը և հարձակվել նրանց վրա և սկսեց տիկեր պատրաստել գետանցի համար: (3) Բայց, երբ արդեն ուզում էր անցնել գետը, նա այնուամենայնիվ զոհեր մատուցեց. կանխագուշակումը անբարենպաստ եղավ: Գրանից նա շատ սրտնեղեց, բայց և այնպես նա գետանցից հրաժարվեց: Սկյութները նրան հանգիստ չէին թողնում: Ալեքսանդրը կրկին զոհեր մատուցեց, պատրաստվելով անցնել գետը, և կանխագուշակ Արիստանդրը նորից ասաց, որ նրան դժբախտություն է սպասում: Ալեքսանդրը պատասխանեց, որ ավելի լավ է ինքը մահվանն ընդդեմ գնա, քան, նվաճելով համարյա ողջ Ասիան, ծաղրուծանակի առարկա դառնա սկյութների համար, ինչպիսին ժամանակին դարձել է Գարեհը՝ Քսերքսեսի հայրը: Արիստանդրը պատասխանեց, որ ինքը չի կարող աստվածության կողմից ուղարկված կանխագուշակումը մեկնաբանել այլ կերպ միայն այն պատճառով, որ Ալեքսանդրը ցանկանում է այլ բան լսել:

(4) Գետանցի համար տիկերը պատրաստ էին. զորքը լրիվ սայառազինված կանգնած էր գետի մոտ, և մեքենաները տրված աղդանշանի համաձայն սկսեցին նետեր արձակել ափին ձիերով արշավող սկյութների վրա: Նրանցից ոմանք վիրավորվեցին. նետը ծակեց անցյալ մեկի վահանն ու գրահը, և նա վայր ընկավ ձիուց: Սկյութները վախեցան այդքան մեծ տարածություն թաղող

նետերից ու այն բանից, որ իրենց դյուցազնը սպանվեց, և մի քիչ հեռացան ափից: (5) Ալեքսանդրը, նկատելով նրանց խուճապը, սկսեց գետանցը փողբրի ձայների ներքո. նա գնում էր առջևից, զորքը հետևում էր նրան: Նա կարգադրեց, որ առաջինը ափ դուրս գան նետածիգները և պարսատիկավորները. նրանք պետք է քարերով և նետերով դուպեին սկյուֆներին և թույլ շտաշին նրանց մոտենալ ափ դուրս եկող հետակախիններին, մինչև որչ հեծելազորը գետանցը շավարտեր: (6) Երբ բոլորը հայտնվեցին ափին, նա սկզբից սկյուֆների դեմ ուղարկեց մեկ հիպարքեիա օտարերկրացիների և երկար նիզակներով զինված ռազմիկների շորս իղոս: Հեծյալ սկյուֆները դիմավորեցին նրանց և շրջապատեցին, իրենց մեծ քանակությամբ ջարդեցին փոքրաթիվ ջոկատին և անարդել անհետացան: Ալեքսանդրը հեծյալների շարքերի միջև տեղադրեց նետածիգներին, ագրիանացիներին և այլ թեթևազեն մարտիկների, որոնց հրամանատարը Բալակրոսն էր, և առաջնորդեց նրանց սկյուֆների դեմ:

(7) Երբ նրանք մոտեցան, նա «ընկերների» երեք հիպարքեիաներին և բոլոր հեծյալ տեղանետներին հրամայեց նետով սկյուֆների վրա, Իսկ ինքն արագորեն առաջ տարավ հեծելազորը, շարելով այն խոր շարքերով. այժմ շրջապատել այն, ինչպես նախկինում, սկյուֆները արդեն ի վիճակի չէին: Հեծելազորի հարձակման հետ համատեղ թեթևազեն զինվորները, խառնված հեծյալներին, սկյուֆներին հնարավորություն չէին տալիս խույս տալու և կրկին հարձակվելու: Եվ այդտեղ սկսվեց սկյուֆների համընդհանուր փախուստը: (8) Նրանցից զոհվեցին հազարի շարք, այդ թվում նաև նրանց առաջնորդներից մեկը՝ Սատրակը, գերի ընկան մոտ հարյուր հիսուն հոգի: Թշնամուն հետապնդում էին սրբնթացորեն, և զինվորները տանջվում էին ուժեղ տոթից. որչ զորքը ծարավ էր, և ինքն Ալեքսանդրն էլ առանց ձին կանգնեցնելու, ինչ շուր պատահե՞ր՝ խմում էր: (9) Իսկ այդ շուրը վատն էր, և նրա մոտ ուժեղ խանդարում սկսվեց: Այդ պատճառով էլ շահաջողվեց հետապնդել բոլոր սկյուֆներին: Նա կարծում եմ, որ եթե Ալեքսանդրը չհիվանդանար, ապա նրանց բոլորին կջարդեին փախուստի ժամանակ: Իսկ նրան սաստիկ ծանր վիճակում հետ տարան ճամբար: Այդպես իրականացավ Արիստանդրի կանխագուշակումը:

Շատ շանցած Ալեքսանդրին ներկայացան սկյութական արքայի դեսպաններ՝ ներողություն խնդրելու այն բանի համար, ինչ տեղի էր ունեցել. չէ որ Ալեքսանդրը ընդհարվել է ոչ թե որչ սկյութական ժողովրդի հետ, այլ ավազակների ու կողոպտիչների հրոսակախմբերի հետ: Ինչ վերաբերում է արքային, ապա նա պատրաստ է անելու այն ամենը, ինչ Ալեքսանդրը հրամայի: Ալեքսանդրը պատասխանեց նրան սիրալիք խոսքերով. նա վրստահում է նրան, բայց իրեն թվում է, որ ավելի լավ է չղաղարեցնել շարժումը թշնամու վրա և ներկայումս այն դաղարեցնելը անժամանակ կլինի:

(2) Սպիտամենը իր զինվորներով հարձակվել էր Մարականդի միջնաբերդի վրա, որը պաշտպանում էին մակեդոնացիները: Վերջիններս արտագրոհի էին ելել, սպանել որոշ քանակությամբ թշնամիների, հետ բշել բոլորին և առանց որևէ կորստի հետ նահանջել միջնաբերդ: (3) Իսկ երբ Սպիտամենին լուր հասցրին, որ Ալեքսանդրի Մարականդ ուղարկած ջոկատն արդեն մոտենում է, նա թողեց միջնաբերդի պաշարումն ու հեռացավ Սոգդիանայի հյուսիսը: Փառնուքը և նրա ստրատեգները, որոնք շտապում էին նրան լիովին բշել իրենց երկրից, հետևեցին նրան մինչև Սոգդիանայի սահմանները և անմտորեն հարձակվեցին բոլոր սկյուֆների վրա: (4) Սպիտամենը, հավաքելով ևս մոտ 600 սկյուֆ հեծյալներ, քաջալերված սկյուֆների հետ ստեղծված դաշինքով, որոշեց ճակատամարտել առաջխաղացող մակեդոնացիների դեմ: Տեղ գրավելով սկյութական անապատի մոտ գտնվող հարթավայրում, նա, այնուհանդերձ, շքանկացավ ոչ թշնամու հարձակմանը օպասել, ոչ էլ ինքը հարձակվել թշնամու վրա. նրա հեծյալները արշավում էին հետևակի շուրջը և նետեր արձակում զինվորների վրա: (5) Նրանք առանց դժվարության խուսափում էին իրենց եեզող Փառնուքի զինվորներից, որովհետև իրենց ձիերն ավելի արագաշարժ էին և այդ ժամանակ կայտառ էին. Անդրոմաքոսի հեծելազորը, որն ամբողջ ժամանակ ճանապարհին էր եղել և բավարար անասնակեր շուներ, հյուծվել էր: Սկյուֆները եռանդով հարձակվում էին թե դիրքերը պաշտպանողների և թե նահանջողների վրա: (6) Շատերը վիրավորվել էին նետերից, կային նաև սպանվածներ: Վերջապես, զորքը, քառանկյան ձևով շարվելով, հեռացավ դեպի Պոլիտիմետոս գետը, որտեղ անտառ կար, ուր

չէին կարող թափանցել բարբարոսների նետերը և որտեղ հետևա-
կը ավելի շատ օգուտ կտար:

(7) Հիպարքոս Կարանոսը, ոչինչ չսակելով Անդրոմաքոսին,
սկսեց գետն անցնել, որպեսզի հեծելազորը թողնի հետևակի
պաշտպանութեան տակ. հետևակը առանց հրամանի գնաց հեծե-
լազորի հետևից: Ձինվորները վախեցան և համընդհանուր խառ-
նաշփոթութեան մեջ գետն էին իջնում գառիթափ փոփոխից: (8)
Նկատելով մակեդոնացիների վրիպումը, բարբարոսները գե-
տանցի երկու կողմերից ձիերով նետվեցին գետը: Նրանք հեաա-
պնդում էին նրանց, ովքեր արդեն անցել էին գետը և հեռացել
նրանից, մյուսներն էլ, ճակատ կազմելով գետանց կատարողների
դիմաց, հետ էին նետում նրանց ջուրը, կամ փաղանգներից նե-
տեր արձակում նրանց վրա, կամ էլ թիկունքից հարձակվում: Մա-
կեդոնացիները, հայտնվելով անելանելի դրութեան մեջ, նետվեցին
գետի գետի մեջտեղում գտնվող փոքրիկ կղզին: Սկյութներն ու
Սպիտամենի զինվորները շրջապատեցին նրանց և բոլորին սպա-
նեցին նետերով, ասենք քշերին գերեցին, բայց դրանց էլ սպա-
նեցին:

6

Արիստոբուլոսը պատմում է, որ զորքի զգալի մասը կործան-
վեց՝ ընկնելով սկյութների սարքած ծուղակը, որոնք թաքնվել էին
մացառուտում և իրենց թաքստոցից մարտի թեժ պահին հար-
ձակվել մակեդոնացիների վրա: Բարբարոսներն օգտվել էին
զորքում սկսված իրարանցումից և խառնաշփոթությունից ու կո-
տորել բոլորին. փրկվել էին քառասունից ոչ ավելի հեծյալներ և
300-ի շատ հետևակայիններ: Բանն այն է, որ Փառնոսը ցանկացել
էր հրամանատարութեանը հանձնել իր հետ ուղարկված մակեդո-
նացիներին այն պատրվակով, որ ինքը զինվորական գործին ան-
տեղյակ մարդ է, և Ալեքսանդրը նրան ուղարկել է ավելի շատ
բարբարոսների վրա ազդելու, քան պատերազմ վարելու համար,
իսկ նրանք մակեդոնացիներ էին և արքայի «ընկերները»: (2)
Սակայն Անդրոմաքոսը, Կարանոսն ու Մենեղեմոսը հրամանա-
տարութեանը շրջադրեցին, երկուզելով, որ այն կործինքը կըս-
տեղծվի, որ իրենք խախտում են Ալեքսանդրի հրամանները և
կամայականութեամբ են անում, և, բացի այդ, այդ բարբարոսների
պահին նրանք ուզում էին, որ պարտութեան գետնում ամեն մեկն

էր համար պատասխան տա և ոչ թե որպես վատ զորավար պա-
տասխանատվություն կրի բոլորի համար:

(3) Երբ Ալեքսանդրին լուր հասցրին այդ պարտութեան մասին,
զինվորների դատն ճակատագրից սաստիկ տխրեցրեց նրան, և նա
որոշեց առանց հապաղելու նետվել Սպիտամենի և նրա բարբա-
րոսների վրա: Իր հետ վերցնելով «ընկերներ» հեծելազորի կեսը,
բոլոր վահանակիրներին, նետածիղներին, ազրիանացիներին և
ամենաարագաշարժ հետևակայիններին, նա գնաց գետի Մարա-
կանդ, ուր, իրեն հասած տեղեկությունների համաձայն, վերա-
դարձել էր Սպիտամենը և կրկին պաշարել միջնաբերդը: (4) Ալեք-
սանդրը երեք օրում անցավ 1500 ասպարեզ և չորրորդ օրվա լու-
սաբացին մոտեցավ քաղաքին: Ալեքսանդրի մոտենալու մասին
լուր ստանալով, Սպիտամենը նրան չսպասեց, այլ իր զորքի հետ
միասին փախավ քաղաքից: (5) Ալեքսանդրը կրնկակոխ հետա-
պնդեց նրան: Գալով այն տեղը, ուր տեղի էր ունեցել ճակատա-
մարտը, նա թաղեց զինվորներին այնպես, ինչպես թույլ էր տա-
լիս իրավիճակը, և հետապնդեց փախչողներին ընդհուպ մինչև
անապատը: Այնտեղից հետ վերադառնալով, նա ամաչացրեց եր-
կիրը, իսկ իրենց փոքրիկ ամբոցներում պատասխարված բարբա-
րոսներին սպանեց, քանի որ, ինչպես իրեն էին հայտնել, օրանք
էլ էին մասնակցել մակեդոնացիների վրա կատարված հարձակ-
մանը: Նա անցավ ողջ երկրով մեկ, որը ոռոգվում էր Պոլիտի-
մետոս գետով: (6) Այնտեղ, ուր ջուրը և գետն անհետանում են,
ակալում է անապատը: Իսկ ջուրը, չնայած իր առատութեանը, ան-
հետանում է, քանի որ կորչում է ավազների մեջ: Այնտեղ նույն
ձևով անհետանում են նաև ուրիշ՝ մեծ ու շքամաքող գետեր, ինչ-
պես օրինակ մարդերի երկրով հոսող էպարդը, արիացիների երկ-
րի անունով կոչված Արիան և «Բարբարոսների» երկրով հոսող
էթիմանդը (7), իսկ այդ գետերի մեջ լիակ մեկը, որ ավելի
փոքր լինի թեսալական Պեննյոս գետից, որը հոսում է Թեմփյան
գաշտավայրով և լցվում ծովը: Իսկ Պոլիտիմետոսն անհամեմատ
ավելի մեծ է Պեննյոսից:

7

Ավարտելով այստեղի գործերը, Ալեքսանդրը ժամանեց Զա-
րիասպ: Նա մնաց այստեղ մինչև ձմեռը մեղմացավ: Այդ ժամա-
նակամիջոցում նրա մոտ եկան պարթևական սատրապ Թրատա-
թերը և արիացիների մոտ Արսակին բռնելու ուղարկված Ստա-

տանորոսը: Արսակին բերեցին շղթայված, ինչպես և Բրազանին, որին Բեսը նշանակել էր պարթևների սատրապ. բերեցին նաև Բեսի ապստամբության մի քանի այլ մասնակիցներ: (2) Հենց այդ ժամանակ էլ վերադարձան էպոկիրոսը, Մեյամնիզոսը և թրակացիների ստրատեգ Պաղոմենոսը, որոնք մինչև ծով ուղեկցել էին Մենևտոսի և դաշնակիցների հետ ուղարկված դրամը: Այդ ժամանակ էլ վերադարձան Ասանդրոսը և Ներաքոսը հելլեն վարձկաններից կազմված զորքով, Ասորիքի սատրապ Բեսը և ծովափից եկած հյուպարքոս Ասկլեպիոդորոսը՝ նույնպես զորքով:

(3) Այստեղ Ալեքսանդրը ներկաներից խորհուրդ էլալմեց և հրամայեց ներս բերել Բեսին: Նա մեղադրեց Բեսին Գարեհին դավաճանելու մեջ, հրամայեց կտրել քիթն ու ականջների ծայրերը, տանել նրան էկբատան և այնտեղ մահապատժի ենթարկել մարերի ու պարսիկների ամբոխի առջև:

(4) Սա հավանություն չեմ տալիս այդ դաժան պատժին և մարդու մարմինը խեղելը համարում եմ բարբարոսական սովորույթ. ես գիտեմ, որ Ալեքսանդրը հրապուրվել է մարական և պարսկական շքեղությամբ և բարբարոս արքաների ապրելակերպով, որը լիովին տարբերվում է հյպատակների ապրելակերպից, և ես նախատում եմ նրան այն բանի համար, որ նա, ծնունդով հերակլեսյան տոհմից, փոխել է հարազատ մակեդոնական հագուստը մարականով: Նախատում եմ նաև այն բանի համար, որ նա չի ամաչել փոխել իր՝ հաղթողի գլխարկը, որը կրում էր վաղուց, հաղթված պարսիկների շալմայով: (5) Ալեքսանդրի մեծ գործերը ես վկայակոչում եմ այն բանի համար, որ ո՛չ ֆիզիկական ամբուստունը, ո՛չ տոհմի ազնվազարմությունը, ո՛չ ուղմական բախտը՝ նույնիսկ ավելին քան Ալեքսանդրին է, ո՛չ Լիբիայի միացումը Ասիային (Ալեքսանդրը մտադիր էր շրջանցել ծովը և նվաճել դրանք), ոչ Եվրոպային, Ասիային և Լիբիային տիրելը, ոչինչ մարդուն երջանկություն չի պատճառում, եթե այդ մարդը կատարելով, ինչպես երևում է, մեծ գործեր, միաժամանակ չի տիրապետում իրեն զսպելու կարողությունը:

8

Այստեղ տեղին է պատմել Կլիտոսի՝ Գրոպիդոսի որդու բռնի մահվան մասին (թեև դա կատարվել է որոշ ժամանակ անց) և այն դժբախտության մասին, որը պատահեց այդ ժամանակ Ալեքսանդրին: Վրա էր հասել Գիոնիսոսի պատվին անցկացվող տո-

նակատարության ժամանակը, որը մակեդոնացիները տոնում են: Ալեքսանդրն ամեն տարի այդ տոնին զոհեր էր մատուցում Գիոնիսոսին: (2) Պատմում են, որ այդ անգամ նա արհամարհել է Գիոնիսոսին և զոհ մատուցել Գիոսկուրոսներին, որոշելով այդ պահից ի վեր զոհեր մատուցել Գիոսկուրոսներին: Խրախճանքի թեժ պահին (Ալեքսանդրը արդեն սովորություն էր դարձրել քեֆ անել նոր, բարբարոսական ձևով) խոսք գնաց Գիոսկուրոսների և այն մասին, որ նրանց ծնողը համարվում է Զեսը, իսկ Տինդարեոսին զրկել են նրանց հայրը համարվելու իրավունքից: (3) Ներկա գտնվողներից ոմանք քծնելով Ալեքսանդրին (այդպիսի մարդիկ եղել են և միշտ կլինեն որպես անեծք արքաներին) հայտարարեցին, որ նույնիսկ անհնար է Պոլիդեկեսին Կաստորի հետ միասին համեմատել Ալեքսանդրի հետ, իսկ նրանց գործերը՝ վերջինիս սխրանքների հետ: Խրախճանքի ժամանակ սրանցից բաժին հասավ նաև Հերակլեսին՝ ըստ սրանց, նախանձը կանդնում է ողջների ճանապարհին և խանգարում ժամանակակիցներին պատշաճ մեծարանքներ մատուցելու նրանց:

(4) Կլիտոսը բացահայտորեն և արդեն վաղուց վշտացած էր բարբարոսների սովորույթների հանդեպ Ալեքսանդրի աճող հակումից և նրան շուսյվող քծնանքից: Այդ պահին, ինքն էլ գինուց թաքացած, հայտարարեց, որ թույլ չի տա ոչ սրբապղծել, ոչ էլ նվաստացնել հին հերոսների գործերը և այդպիսի անարժան ձևով մեծարել Ալեքսանդրի արժանիքները: (5) Դե, Ալեքսանդրն այդպիսի մեծ և զարմանահրաշ գործեր չի էլ կատարել, ինչպիսիք արել են նրանք: Ինչ որ նա արել է, զգալի չափով մակեդոնացիների գործն է: Ալեքսանդրը նեղացավ այդ խոսքերից: Սա այդ ճառին էլ հավանություն չեմ տալիս. ըստ իս, ընդհանուր գինարբուքի մեջ բավարար կլինեն նստել լուսկյաց և շարձագանքել կեղծ և ստորաքարը ճառերին: (6) Իսկ երբ ոմանք սկսեցին հիշեցնել այն, ինչ կատարել էր Փիլիպոսը, և բոլորովին անարդարացիորեն անվանել նրա գործերը շնչին և ուշադրության անարժան, այդպիսով հաճոյանալով Ալեքսանդրին, արդեն իրեն կորցրած Կլիտոսը սկսեց չափից ավելի մեծարել Փիլիպոսին և նվաստացնել Ալեքսանդրին ու նրա գործերը: Նա արդեն լրիվ հարբած էր, լուտանք էր թափում Ալեքսանդրի հասցեին և, ի միջի այլոց, պարծենում, որ Գրանիկոսի ձիամարտում ինքն է փրկել Ալեքսանդրին: (7) Հանդգնորեն առաջ մեկնելով իր աջ ձեռքը, նա բացասկանչեց. «Ահա այս նույն ձեռքը, Ալեքսանդր, այն ժամանակ փրկեց քեզ»:

Ալեքսանդրը այլևս չդիմանալով հարբած Կլիտոսի հանդիմանքները, ցատումով վեր թռավ, բայց նրան զսպեցին բաժակակիցները: Կլիտոսը չէր հանդարտվում: (8) Ալեքսանդրը ձայնեց վահանակիրներին: Ոչ որ չեկավ նրա կանչին, և Ալեքսանդրը հայտարարեց, որ գտնվում է այն դրուձյան մեջ, ինչ Գարեհր, երբ թեք և նրա համախոհները բռնեցին նրան և տարան, և նա միայն անուճով էր արբա մնացել: Այժմ «ընկերները» ի վիճակի չէին նրան զսպելու. նա վեր թռավ և, ըստ ոմանց պատմածների, խլեց թիկն. սպահներից մեկի նիզակը, հարվածեց դրանով և սպանեց Կլիտոսին: Ուրիշների պատմածներով, նա խլեց պահապաններից մեկի սարիսր: (9) Արիստոբոլոսը չի ասում, թե ինչից են սկսվել հարբած ճառերը, բայց ողջ մեղքը գցում է Կլիտոսի վրա. երբ Ալեքսանդրը ցատումով վեր է ցատկել նրան սպանելու մտադրությամբ, թիկնապահ Պաղոմենոսը՝ կազոսի որդին, դարպասով Կլիտոսին բարձր տալով տարել է դեպի պարսպի հետևը և միջնաբերդի խանդակը, որտեղ տեղի էր ունեցել այդ ամենը: Կլիտոսը, սակայն, չի կարողացել մնալ այնտեղ, վերադարձել և երևացել է Ալեքսանդրի աչքին, որը նրան էր կանչում: Նա ձայնել է. «Ալեքսանդր, ա՛յա և ես, Կլիտոսը»: Այդ նույն պահին, սարիսրով խոցված, նա վախճանվել է:

9

Ես սատոիկ պարսավում եմ Կլիտոսին արքայի հետ հանդուգն վարվելու համար. Ալեքսանդրին ես խղճում եմ այդ դժբախտության համար. նա հայտնաբերեց, որ գտնվում է երկու արատների միջև, այսինքն՝ ցատումի և հարբեցողության: Խելամիտ մարդուն վայել չէ հայտնվել դրանցից նույնիսկ մեկի իշխանության տակ: (2) Եվ այստեղ, այնուհանդերձ, ես գովաբանում եմ Ալեքսանդրին այն բանի համար, որ նա միանգամից հասկացել է, թե ինչ սարսափելի բան է արել: Ոմանց պատմածներով, նա սարիսր խրել է պատի մեջ և ցանկացել է նետվել դրա վրա, գանելով, որ արժանի չէ ապրելու այն բանից հետո, որ հարբած վիճակում սպանել է իր ընկերոջը: (3) Գրողների մեծամասնությունը պատմում է այլ կերպ. Ալեքսանդրը հեռանում է իր սենյակը, հեկեկալով նետվում մահճակալի վրա և տալով Կլիտոսի և Կլիտոսի բրոջ՝ Լուսիկայի՝ Գրուպիոսի «ստեր» իր ծծմոր անունը, կրկնում է, որ հատուկանալու է ըստ արժանավույն է հատուցել նրա հոգատարու-

թյան համար. (4) Լանիկան ականատես է եղել, թե ինչպես իր զուգահեռեց կռվել են Ալեքսանդրի համար: Իհարկումս, իսկ նրա նորոգը նա սպանեց իր ձեռքով: Իսկ ամբողջ ժամանակ կրկնում էր, որ ինքն իր ընկերների մարդասպանն է. երեք օր ոչինչ չէր ասում ու չէր խմում և ընդհանրապես մոռացել էր մտածել իր մասին:

(5) Այդ կապակցությամբ որոշ կանխագուշակներ հայտարարեցին, թե Գիոնիսոսը զայրացել է, քանի որ Ալեքսանդրը արհամարհել է նրան զոհ մատուցել: «Ընկերները» զովարությունը համոզեցին Ալեքսանդրին որևէ բան ուտել և մի կերպ կարգի բերել իրեն: Գիոնիսոսին նա զոհ մատուցեց, քանի որ նրան ավելի ցանկալի էր կատարված դժբախտությունը վերադրել աստվածության ցատումին և ոչ անձնական արատալորությունը: (6) Ես, այնուհանդերձ, շատ եմ գովաբանում Ալեքսանդրին այն բանի համար, որ նա իր ոճբագործությանը չի վերաբերվել որպես աննշան մի բանի, չի սկսել պաշտպանել իրեն (այդպիսի պաշտպանը հանցագործից վատ է), այլ էիտակցել է Իարգուն հատուկ իր անկումը:

(7) Ոմանք պատմում են, որ Ալեքսանդրի մոտ են կանչել սոփիստ Անաքսարքոսին, որպեսզի նա սփոփի նրան: Գտնելով նըրան սյառկած և հեկեկալիս, նա ծիծաղել է և ասել, որ ըստ երկվույթին Ալեքսանդրին հայտնի չէ, թե ինչու են հին իմաստունները Արդարությունը դարձրել Զևսի գահակից. պատճառն այն է, որ այն, ինչ սահմաններ Զևսը, ընդունվում էր որպես արդարություն, և այն ամենը, ինչ սկիզբ է առնում մեծն արքայից, պետք է երկրպագվի որպես արդարություն առաջին հերթին իր՝ արքայի կողմից, իսկ հետո մնացած մարդկանց կողմից: (8) Այդպիսի խոսքերով նա այնժամ սփոփեց Ալեքսանդրին, սակայն որպես իմաստունի միտք ներկայացնելով այն դրուձիք, համաձայն որի արքայից չի պահանջվում, որ նա գործի արդարամտորեն, մանրադին կշռազատելով իր արարքները և արդար դիտի արքայական ցանկացած արարք, նա, ես պնդում եմ, մեծ վնաս է հասցրել Ալեքսանդրին՝ ավելի շատ, քան այն դժբախտությունը, որից նա այդ ժամանակ տառապում էր: (9) Չէ որ հայտնի է, որ Ալեքսանդրը հոգու խորքում իրեն երևակայում էր որպես Ամոնի և ոչ Փիլիպոսի որդի և պահանջում, որ իրեն զուլս խոնարհեն մինչև զեպին: Հիանալով պարսիկների և մարերի սովորություններով, նա

փոխել էր հագուստը և վերափոխել պալատական վարվելա-
կարգը: Այս հարցում շպահանջվեցին ո՛չ ծնողներ, որ մղում էին
նրան դեպի այդ ուղին, ո՛չ էլ այնպիսի սոփեստներ, ինչպիսիք
էին Անաքսարքոսը կամ Ագիստոսը՝ արգիվացի էպիկական պոե-
տը:

10

Արիստոտելի աշակերտ, օլինթացի Կալիսթենեսը՝ հասարակ ու
խիստ մի այր, հավանութուն չէր տալիս այս ամենին: Այստեղ ես
համաձայն եմ Կալիսթենեսին, սակայն ոչ մի կերպ արդարացի
չեմ համարում նրա խոսքերը (եթե դրանք իսկապես գրված են
եղել)՝ այն մասին, որ Ալեքսանդրը և Ալեքսանդրի գործերը կախ-
ված են իրենից՝ Կալիսթենեսից և իր պատմութունից (2), և որ
նա եկել է Ալեքսանդրի մոտ ոչ թե իր համար փառք որոնելու, այլ
նրան փառաբանելու, որ Ալեքսանդրը կառնչվի աստվածներին ոչ
թե նրա ծնունդի մասին Օլիմպիադայի պատմած ստերով, այլ այն
պատմության շնորհիվ, որը Կալիսթենեսը կգրի աշխարհի համար:
(3) Ոմանք հայտնում են նաև հետևյալը. Փիլոտեսը մի անգամ
հարցրել է Կալիսթենեսին, թե ի՞նչ է նա կարծում, ում են ավելի
շատ մեծարում Աթենքում, և նա պատասխանել է՝ Հարմոդիոսին
և Արիստոգիտոնեսին, որովհետև նրանք են սպանել երկու բռու-
նակալներից մեկին և ոչնչացրել են բռնապետությունը: (4) Այդ-
տեղ Փիլոտեսը հարցրել է. կարո՞ղ է արդյոք բռնակալասպանը
ապաստան գտնել ցանկացած հելլենական պետությունում: Կա-
լիսթենեսը պատասխանել է, որ համենայն դեպս Աթենքում փա-
խըստականը ապաստան կգտնի. չէ որ աթենացիները Հերակլե-
սի զավակների համար պատերազմ սկսեցին էվրիսթեսոսի՝ այն
ժամանակվա Հելլադայի բռնակալի դեմ:

(5) Այն մասին, թե ինչքան էր նա ընդդիմանում, որ Ալեք-
սանդրին խոնարհվեն մինչև գետին, պատմում են հետևյալը.
Ալեքսանդրը պայմանավորվում է իրեն շրջապատող սոփեստնե-
րի և զանվազարմ պարսիկների ու մարերի հետ խոսք բացել այդ
մասին խնջույքի ժամանակ: (6) Անաքսարքոսը առաջինն է սկը-
սում խոսել այն մասին, որ ավելի ճիշտ է որպես աստված մե-
ծարել Ալեքսանդրին և ոչ թե Դիոնիսոսին և Հերակլեսին, և ոչ
միայն նրա մեծ արարքների քանակի համար, այլև այն բանի,
որ Դիոնիսոսը թեքեացի է և մակեդոնացիների հետ ոչ մի կապ
չունի, իսկ Հերակլեսը՝ արգիվացի և մակեդոնացիների հետ նրան

կապում է միայն Ալեքսանդրի ծագումը, որը ծնունդով Հերակ-
լեսի տոհմից է: (7) Արդարացի կլինի, եթե մակեդոնացիներն
իրենց արքային աստվածային մեծարանքներ մատուցեն: Չէ որ
ոչ մի կասկած չկա, որ կյանքից հեռանալուց հետո նրան
պաշտելու են որպես աստծու. ավելի ճիշտ է փառաբանել ողջին,
քան մեծարել մեռածին, որին այդ մեծարանքներն արդեն պետք
չեն:

11

Անաքսարքոսը նման ճառեր էր արտասանում. մշակված ծրագ-
րի մասնակիցները հավանութուն տվեցին նրա խոսքերին և
հայտարարեցին, որ իրենք ցանկանում են անմիջապես մինչև
հետին խոնարհվել Ալեքսանդրին. մակեդոնացիների մեծամաս-
նությունը, լսածից սրտնեղած, լուսթյուն էր պահպանում: (2)
Կալիսթենեսը ընդհատեց նրան. «Անաքսարքոս, ես կարծում եմ,
որ Ալեքսանդրը արժանի է մարդուն վայել բոլոր պատիվներին.
մարդիկ, սակայն, խիստ սահման են դրել մարդկանց և աստված-
ներին մատուցվող մեծարանքների միջև. վերջիններիս պատվին
տաճարներ են կառուցում, արձաններ դնում, նրանց համար սքեա-
զան հողակտորներ առանձնացնում, զոհեր մատուցում և գինի հե-
ղում, նրանց պատվին հիմներ են հորինում, իսկ մարդկանց հա-
մար գրում են զովասանական երգեր: Հատկապես կարևոր է խո-
նարհվելու արարողությունը: (3) Մարդիկ, իրար ողջունելիս,
համբուրվում են, բայց աստվածությունը մեղանից չափազանց
վեր է և նրան դիպչելը սրբապղծություն է: Այդ պատճառով մենք
մեծարում ենք նրան նրա առջև խոնարհվելով. աստվածների
պատվին խմբերգեր ենք կազմակերպում, աստվածների պատվին
օրհներգեր ենք երգում: Զարմանալի ոչինչ չկա, որ տարբեր աստ-
վածների, երգվում եմ Զևսով, տարբեր ձևով են մեծարում, չէ որ
հերոսներին էլ այնպիսի պատիվներ չեն տալիս, ինչպիսիք տա-
լիս են աստվածներին: (4) Անվայել է այս ամենը իրար խառնել
և լիովին խառնաշփոթություն ստեղծել, մարդկանց բարձրացնե-
լով անհասանելի բարձունքների և մատուցել նրանց չափազանց-
ված մեծարանքներ, և միաժամանակ գահընկեց անել և նը-
վաստացնել. ամեն դեպքում որոշ չափով մեղանից է կախ-
ված աստվածներին մեծարել մարդկանց հավասար: Չէ որ
Ալեքսանդրը չէր տանի այն վիրավորանքը, եթե սովորա-

կան մահկանացուին ձեռք բարձրացնելով կամ ոչ ճիշտ քվեարկութեամբ պատիվներ տրվեին: (5) Ավելի արդարացի կլինեն աստվածները իրենց ցատու մեջ այն մարդկանց հանդեպ, որոնք իրենց վերագրում են աստվածային մեծարանք կամ համաձայնում են դրա վերագրմանը: Ալեքսանդրին ավելի քան բավարար է լինել և համարվել քաջերից քաջը, ամենաարքայականը: Երբաներից, ղորավարներից ամենաարժանին այդ կոչմանը: (6) Էլ ուրիշ ուժ, եթե ոչ քեզ, Անաքսարքո՛ս, պետք է ասվեր այն, ինչ ես եմ ասում և խոչընդոտ հանդիսանար հակառակ ելույթներին: չէ որ դու Ալեքսանդրի մերձավորն ես, որպեսզի նրան հաղորդակից դարձնես կրթութեանն ու իմաստնութեանը: Նման բաներ ասելու փոխարեն, դու պետք է հիշիր, որ խորհրդատու ես ոչ թե Կամբիզին կամ Քսերքսեսին, այլ Փիլիպոսի որդուն, Հերակլեսի և էակոսի սերունդն առաջնորդողին: Նրա նախնիները Մակեդոնիա են եկել Արգոսից և սկսել կառավարել այն ոչ որպես բռնապետներ, այլ օրենքի համաձայն: (7) Իրեն՝ Հերակլեսին էլ կենդանութեան ժամանակ հելլենները աստվածային մեծարանքներ չեն մատուցել և սկսել են մեծարել նրան որպես աստծու քչ անմիջապես նրա մահից հետո, այլ հետագայում, զելիփյան աստծու հրամանով: Իսկ եթե մարդը, որը դատողություններ է անում բարբարոսական երկրում, ստիպված է նաև բարբարոսական մտածելակերպ ունենալ, ապա խնդրում եմ քեզ, Ալեքսանդր, հիշի՛ր Հելլադան, հանուն որի դու ձեռնարկեցիր այս ամբողջ արշավանքը, ցանկանալով միացնել Ասիան Հելլադային: (8) Մտածիր, արդյոք այնտեղ վերադառնալով, հելլեններին՝ ամենաազատ մարդկանց, նույնպե՞ս պիտի ստիպես խոնարհվել քեզ մինչև զետին, թե հելլեններին հանգիստ կթողնես և միայն մակեդոնացիներին կենթարկես այդ անարգանքին, թե ընդհանրապես քեզ պատիվ կտան տարբեր ձևերով՝ հելլեններն ու մակեդոնացիները կմեծարեն քեզ որպես մարդու, հելլենական սովորույթի համաձայն, և միայն բարբարոսները կմեծարեն բարբարոսական ձևով: (9) Կյուրոսի՛ Կամբիզի որդու մասին պատմում են, որ նա եղել է առաջին մարդը, որին խոնարհվել են մինչև զետին, և այդ ժամանակներից ի վեր պարսիկներն ու մարերը շարունակում են նվաստանալ այդ եղանակով: Հարկ է մտածել, որ այդ Կյուրոսին խելքի բերեցին սկյութները՝ աղբատ ու անկախ մարդիկ, Գարեհի՛ն՝ նույնպես սկյութները, Քսերքսեսին՝ աթենացիներն ու լակեդեմոնացիները, Արտաք-

սերքսեսին՝ Կլեարքոսն ու Քսենոֆոնը՝ իրենց 10 000 զինվորներով, իսկ Գարեհի՛ն՝ մեր ժամանակակիցին՝ Ալեքսանդրը, որին մինչև զետին չէին խոնարհվում»:

12

Կալիսթենեսի այդպիսի ելույթը սաստիկ զայրացրեց Ալեքսանդրին, բայց մակեդոնացիների սրտովն էր: Նկատելով այդ, Ալեքսանդրը մարդ ուղարկեց հայտնելու, որպեսզի՝ մինչև զետին խոնարհման մասին այլևս խոսք անգամ չլինի: (2) Բայց, երբ այդ բոլոր խոսակցություններից հետո լույսը տիրեց, ամենահարգարժան և տարիքավոր պարսիկները վեր կացան և մեկը մյուսի հետևից մինչև զետին խոնարհվեցին Ալեքսանդրին: «Ընկերներից» մեկին՝ Լեոնատոսին թվաց, որ պարսիկներից ինչ-որ մեկը խոնարհվել է ոչ ըստ կանոնի և սկսեց ծաղրանքի ենթարկել նրա շարժումները, որպես ինչ-որ ստորացուցիչ բան: Այնժամ Ալեքսանդրը զայրացավ նրա վրա, բայց հետո վերադարձրեց նրան իր բարեհաճությունը:

(3) Գոյություն ունի նաև այսպիսի պատմություն: Ալեքսանդրը, մի կում խմելով ոսկե զավաթից, փոխանցեց այն մյուսներին, սկսելով նրանցից, ում հետ պայմանավորվել էր խոնարհման մասին: Գավաթը ստացողներից առաջինը խմեց դրանից, վեր կացավ և մինչև զետին խոնարհվեց Ալեքսանդրին, որը համբուրեց նրան: Այսպես զավաթն անցավ բոլորի ձեռքով: (4) Երբ հերթը հասավ Կալիսթենեսին, նա ոտքի ելավ, խմեց զավաթից և մոտենալով Ալեքսանդրին, ցանկացավ համբուրել նրան առանց մինչև զետին խոնարհվելու: Ալեքսանդրն այդ ժամանակ զրուցում էր Հեփեստիոնեսի հետ և ուշադրություն չդարձրեց՝ կատարել է արդյոք Կալիսթենեսը խոնարհման արարողությունը: (5) Իսկ Պիթոնակոսի որդին՝ Դեմետրիոսը՝ «ընկերներից» մեկը, երբ Կալիսթենեսը մոտեցավ Ալեքսանդրին համբուրելու, ասաց, որ նա մոտենում է առանց մինչև զետին խոնարհվելու: Ալեքսանդրը թույլ չտվեց, որ նա համբուրի իրեն, իսկ Կալիսթենեսը ասաց. «Ես կորցրի միայն մեկ համբուրը»:

(6) Ես ոչ մի կերպ հավանություն չեմ տալիս այդ խոսքերին, որոնք վկայում են Ալեքսանդրին նման պահին վիրավորանք հասցնող Կալիսթենեսի անընթանկատություն մասին: Ըստ իս, բավական է, որ ամեն մեկն իրեն պահի վայելուչ ձևով և, հնարավորին

չափ, աջակցի արքայի հաջողութեանը, որի մոտ գտնվելը քեզ համար ստորացուցիչ չէ: (7) Ես լիովին բնական եմ գտնում, որ Ալեքսանդրը ատել է Կալիսթենեսին անտեղի ազատախոսութեան և զոռոգամտութեան համար, որոնց գումարվել է իրեն պահել չկարողանալը:

Այդ իսկ պատճառով ես լիովին վստահում եմ նրանց, ովքեր մեղադրում են Կալիսթենեսին Ալեքսանդրի դեմ պատանիների դավադրության մասնակցության մեջ, ուրիշներն նույնիսկ ասում են, որ ինքն է հրահրել այդ դավադրությունը: Իսկ այդ դավադրությունը ծագել է այսպես:

13

Դեռ Փիլիպոսի ժամանակ կարգ գոյություն ունեւր, որ արքեւր-վատհմ մակեդոնացիների որդիները պատանեկան հասակից հաւարազրվում էին արքային ծառայելու. նրանց հանձնարարվում էր սպասավորել արքային և պահակություն անել, երբ նա բնած է: Երբ արքան պատրաստվում էր մեկնել, նրանք ախոտից բերում էին արքայի ձին, նստեցնում նրան պարսկական սովորույթի համաձայն, մասնակցում որսորդական մրցումներին: (2) Այդ պատանիների թվում էր նաև Հերմոլայոսը՝ Սոպոլիդոսի որդին. նա, ըստ երևույթին, զբաղվում էր փիլիսոփայութեամբ և այդ պատճառով հարգանքով էր վերաբերվում Կալիսթենեսին: Պատմում են, որ երբ որսի ժամանակ վարազը սլացել է ուղիղ Ալեքսանդրի վրա, Հերմոլայոսը Ալեքսանդրից ավելի շուտ է նրա վրա նետել նիզակը: Վարազն ընկել է. Ալեքսանդրը վրիպել է պահը, սակայն զայրացել է Հերմոլայոսի վրա: Զայրույթի պահին նա հրամայել է մնացած պատանիների աչքի առջև ճիպտահարել նրան և վերցրել է նրա ձին:

(3) Այդ Հերմոլայոսը, տանջվելով իրեն հասցված անարգանքից, ասել է Սոստրատոսին՝ Ամինտոսի որդուն՝ իր հասակակցին ու ընկերոջը, որ ինքը չի կարողանա ապրել, եթէ վրեժխնդիր չլինի Ալեքսանդրից անպատվութեան համար: Սոստրատոսին նա հենտութեամբ համոզում է օգնել իրեն. սա սիրում էր Հերմոլայոսին: (4) Նրանք իրենց կողմն են գրավում Անտիպատրոսին՝ Ասորիքի սատրապ Ասկլեպիդորոսի որդուն, էպիմենոսին՝ Արսեւոսի որդուն, Անտիկլոսին՝ Թեոկրիտոսի որդուն և Փիլոտեսին՝ Թրակացի Կարսիդոսի որդուն: Այդ գիշեր նրանք պայմանա-

վորում են, որ երբ հասնի Անտիպատրոսի գիշերային պահակահերթը, հարձակվեն ու սպանեն քնաթաթախ Ալեքսանդրին:

(5) Ոմանց պատմածով, ինքնին այնպես է ստացվել, որ Ալեքսանդրը մինչև լույս գինարբուքի մեջ է եղել: Իսկ Արիստորուոսը գրում է հետևյալը. Ալեքսանդրին ուղեկցում էր մի ասորի կին, որը մոլի աստվածապաշտ էր: Սկզբում Ալեքսանդրը և նրա շքախումբը ծիծաղում էին այդ կնոջ վրա: Իսկ երբ պարզվեց, որ մուլեգնութեան պահին նա միշտ ճշմարտություն է բարբառում, Ալեքսանդրը սկսեց հարգանքով վերաբերվել նրան, և ասորի կինը կարող էր գալ և գնալ արքայի մոտ և՛ ցերեկով, և՛ գիշերով. հաճախ նա կանգնում էր արքայի մոտ, երբ վերջինս բնած էր: (6) Կինը աստվածությունից մուլեգնած դիմավորեց նրան, երբ նա գալիս էր խնջույքից, խնդրեց նրան հետ վերադառնալ և ողջ գիշերը բեֆ անելով անցկացնել: Ալեքսանդրը, գտնելով, որ դա ցուցում է վերևից, վերադարձավ և շարունակեց բեֆ անել, և այդպիսով պատանիների գործը ձախողվեց:

(7) Հաջորդ օրը, դավադրութեան մասնակիցներից մեկը՝ էպիմենոսը՝ Արսեւոսի որդին, ամեն ինչ պատմում է իր ընկերոջը՝ Քարիկլեսին՝ Մենանդրոսի որդուն: Քարիկլեսը պատմում է էվրիլոթոսին՝ էպիմենոսի եղբորը: էվրիլոթոսը գնում է Ալեքսանդրի վրանը և ամեն ինչ շարադրում թիկնապահ Պտղոմեոսին՝ Լագոսի որդուն: Սա պատմում է Ալեքսանդրին: Ալեքսանդրը հրամայում է բռնել բոլորին, ում անունները տվել է էվրիլոթոսը: Նրանց տանջում են, և նրանք բացում են ողջ դավադրությունը և տալիս ևս մի քանի մարդկանց անուններ:

14

Արիստորուոսն ասում է, որ նրանք տվել են Կալիսթենեսի անունը, որպես այդ հանդուգն միտքն իրենց ներշնչողի: Պտղոմեոսն էլ նույնն է ասում: Իսկ մեծամասնությունն ուրիշ կերպ է պատմում: Ալեքսանդրն իսկույն հավատացել է Կալիսթենեսի հասցեին ուղղված շարախոսութեանը, որովհետև վաղուց էր ատում նրան և որովհետև Հերմոլայոսը չափազանց մտերիմ էր Կալիսթենեսին: (2) Իսկ ոմանք էլ գրում են հետևյալը: Հերմոլայոսը, երբ նրան ներկայացրել են մակեդոնացիների ժողովին, հայտարարել է, որ նա իսկպպես դավադրություն է նյութել (ազատ մարդու համար անհար է հանդուրժել Ալեքսանդրի հանդուգն ինք-

նահապանութիւնը) և նա թվարկել է բոլորը՝ Փիլոտեսի անարդարացի մահապատիժը և արդեն լիովին անօրինական նրա հոր՝ Պարմենիոսին վերացնելը նրա հետ միաժամանակ, ինչպես նաև ուրիշ մարդկանց՝ հարբած վիճակում կատարված կլիտոսի սպանութիւնը, մարական հագուստը, մինչև զետիկ խոնարհվելը սովորական երևույթ դարձնելու անդադար քննարկումները, բնով փոխարինվող Ալեքսանդրի կերուխումները: Նա ի վիճակի չի եղել տանել այս ամենը և ցանկացել է ազատել և մնացած մակեդոնացիներին:

(3) Ներկա գտնվողները բարկոծել են նրան և բոլոր նրանց, ումբեր նրա հետ բռնվել էին: Ըստ Արիստոբուլոսի, Կալիսթենեսին շղթայված տարել են զորքի հետևից. նա հիվանդացել է և մահացել: Իսկ Պաղոմենոսի՝ Լագոսի որդու պատմելով, նրան խոշտանգել և կախել են: Այսպես հակասական են այն մարդկանց տվյալները, որոնք առավելագույն վստահութիւն են արժանի, որոնք այն ժամանակ եղել են Ալեքսանդրի հետ և զրել են այն կարևոր իրադարձութիւնների մասին, որոնց ընթացքը նրանց համար գաղանիք չի եղել: (4) Ուրիշները պատմում են դրանց մասին ուրիշ շատ բաներ, ընդ որում բոլորը տարբեր ձևով. ես գտնում եմ, որ այդ մասին բավական է: Այդ ամենը տեղի է ունեցել կլիտոսի դժբախտութիւնից հետո, բայց ես գրում եմ այդ մասին դուզընթացաբար, գտնելով, որ այստեղ շատ ընդհանուր բաներ կան:

Ալեքսանդրի մոտ կրկին ղեսպանութիւն եկավ ելրոպական սկյութների կողմից նրանց հետ էին նաև այն ղեսպանները, որոնց ինքն էր ուղարկել սկյութների մոտ: Հենց այն ժամանակ, երբ Ալեքսանդրը նրանց ուղարկել էր, սկյութական արքան մահացել էր, և այժմ թագավորում էր նրա եղբայրը: (2) Գեսպանութիւնը պետք է հայտնել, որ սկյութները պատրաստ են անել այն ամենը, ինչ իրենց կասի Ալեքսանդրը: Նրանք սկյութական արքայի կողմից ընծաներ տվեցին Ալեքսանդրին, որոնք սկյութները համարում էին ամենաթանկարժեքները. արքան պատրաստ է նաև իր աղջկան կնութիւն տալու Ալեքսանդրին հանուն բարեկամական զաշնութիւն ամրապնդման: (3) Եթե Ալեքսանդրը սկյութական արքայագետները շարժանացնի իր ձեռքին, ապա արքան պատ-

րաստ է Ալեքսանդրի ամենահավատարիմ ընկերներին կնութիւն տալ սկյութական սատրապների և սկյութական երկրի այլ հզոր մարդկանց ղուստրերին: Արքան ինքն էլ կգա Ալեքսանդրի մոտ, եթե նա այդպիսի հրաման արձակի, որպեսզի անմիջականորեն նրանից լսի նրա կարգադրութիւնները: (4) Այդ նույն ժամանակ Ալեքսանդրի մոտ եկավ նաև Փարասմանը՝ խորասմների արքան՝ հազար հինգ հարյուր հոգանոց հեծելազորով: Փարասմանը պատմեց, որ ինքն ապրում է կոլխերի և ամազոնուհիների ցեղերի հաբեանութիւնում, և իր ծառայութիւններն առաջարկեց, որ եթե Ալեքսանդրը ցանկանա, հարվածելով կոլխերին և ամազոնուհիներին, միաժամանակ հնազանդեցնել էվքսիսյան ծովի մոտ բնակվող ցեղերին, ինքը լինի նրանց ուղեկիցը և զորքի համար նախապատրաստի անհրաժեշտ ամեն բան:

(5) Սկյութ պատգամաբերներին Ալեքսանդրը պատասխանեց սիրալիր և այնպես, ինչպես նրան այդ ժամանակ ձեռնտու էր. սակայն սկյութական հարսնացուներից հրաժարվեց: Փարասմանիլ նա շնորհակալութիւն հայտնեց, նրա հետ բարեկամակալեց զաշինք կնքեց, սակայն ասաց, որ Պոնտոս գնալն իր համար անմահական է: Նա պարսիկ Արտաբազին, որին նշանակել էր Բակտրիան և հարևան մյուս սատրապներին կառավարելու, հրամայեց զբաղվել Փարասմանով և հետ ուղարկեց նրան հայրենիք: (6) Նա ասաց, որ իր մտքերը այժմ զբաղված են Հնդկաստանով. նվաճելով այն, որ նա կտիրանա ողջ Ասիային, իսկ տիրանալով Ասիային, կվերադառնա Հելլադա և արդեն այնտեղից, Հելլեսպոնտոսով և Պրոպոնտիսով, ողջ ցամաքային ու ծովային ուժերով կներխուժի Պոնտոս: Եվ նա խնդրեց Փարասմանին հետաձգել իր օգնութիւնը, որն այժմ նա առաջարկում էր:

(7) Իսկ ինքը կրկին ուղևորվեց ղեպի Օքսոս գետը և որոշեց վերադառնալ Սոգդիանա, լուր ստանալով այն մասին, որ բազմաթիվ սոգդեր հավաքվել են ամրոցներում և հրաժարվում են ենթարկվել սատրապին, որին նշանակել էր Ալեքսանդրը: Երբ նա ճամբար էր խփել Օքսոսի մոտակայքում, իր՝ Ալեքսանդրի վրանից ոչ հեռու դուրս ցայտեց ջրի աղբյուր և նրա կողքին մեկ ուրիշ՝ յուղի աղբյուր: (8) Այդ հրաշքի մասին հայտնեցին թիկնապա՝ Պաղոմենոսին՝ Լագոսի որդուն, իսկ Պաղոմենոսը պատմեց Ալեքսանդրին: Այդ կապակցութիւնում Ալեքսանդրը մատուցեց բոլոր այն զոհերը, ինչ թելագրել էին կանխագուշակները:

Արխատանդրն ասաց, որ յուրի աղբյուրը շարշարանքների նշան է, սակայն նախագուշակում է նաև հաղթանակ շարշարանքներից հետո:

16

Ալեքսանդրը զորքի մի մասով անցավ Սոգդիանա, իսկ Պոլիպերթոնտեսին, Ատալուսին, Գորգիոսին և Մելեագրոսին թողեց Բակտրիայում, հրամայելով նրանց հետևել երկրին, որպեսզի այդտեղ էլ բարբարոսները խոտվուցյուն չբարձրացնեն. արդեն սկսված ապստամբությունը հրամայված էր ճնշել: (2) Իր ձեռքի տակ եղած զորքը Ալեքսանդրը հրամայեց բաժանել հինգ մասի. մեկի ղեկավարը նշանակեց Հեփեստիոնեսին, մյուսինը՝ թիկնապահ Պտղոմեոսին՝ Լագոսի որդուն. երրորդի հրամանատարությունը հանձնարարեց Պերդիկոսին. չորրորդ ջոկատը առաջնորդում էին Քենոսն ու Արտաբազը. հինգերորդ ջոկատի հետ ինքը այդ երկրով գնաց դեպի Մարականդ: (3) Մնացածները գործում էին ըստ իրենց հայեցողության. ուժի միջոցով հնազանդեցնում էին ամբողջներում ժողովածներին, ընդունում հանձնվողների հպատակությունը: Երբ ողջ զորքը, անցնելով սոգդական երկրի զգալի մասը, ժամանեց Մարականդ, նա ուղարկեց Հեփեստիոնեսին, հրաման տալով կրկին բնակեցնել Սոգդիանայի քաղաքները, իսկ Քենոսին և Արտաբազին ուղարկեց սկյութների մոտ, քանի որ նրան տեղեկացրել էին, որ Սպիտամենը փախել է սկյութների մոտ: Ինքը զորքի մնացած մասի հետ անցավ Սոգդիանայի այն մասով, որը դեռ գտնվում էր ապստամբների ձեռքում, և առանց դժվարության հնազանդեցրեց այն:

(4) Մինչ Ալեքսանդրը զբաղված էր դրանով, Սպիտամենը և մի քանի սոգդեր, որոնք նրա հետ փախել էին սկյութ-մասագետների երկիրը, մասագետներից հավաքագրել էին 600 հոգիանոց հեծյալ ջոկատ և մոտեցել Բակտրիայի փոքրիկ ամրոցներից մեկին: (5) Ո՛չ թրուրաբքոսը, ո՛չ էլ նրա պահնորդական ջոկատը չէին սպասում թշնամական հարձակման. զինվորներին կոտորեցին. թրուրաբքոսին գերեցին և պահում էին կալանքի տակ: Ամրոցի գրավումով ոգևորված, նրանք մի քանի օր անց մոտեցան Զարիասպին, սակայն քաղաքի վրա հարձակվել չհամարձակվեցին և հեռացան, իրենց հետ տանելով մեծ ավար:

(6) Զարիասպում հիվանդության պատճառով մնացել էին մի քանի հեծյալ «ընկերներ»: Նրանց հետ էր նաև Պեյթոնեսը՝ Սոփիլեսի որդին, որը տնօրինում էր Զարիասպի արքայական պալատը, և կիթարոզոս Արխատոնիկոսը: Տեղեկանալով սկյութների ասպատակության մասին (նրանք արդեն ապաքինվել էին հիվանդություններից, կարող էին զինված քայլել ու ձի նստել), նրանք վերցրեցին 80 վարձկան հեծյալներ, որոնց թողել էին Զարիասպի պաշտպանության համար, մի քանի հոգի արքայական պատանիներից» և նետվեցին մասագետների հետևից: (7) Հարձակվելով ոչինչ չկասկածող սկյութների վրա, նրանք առաջին իսկ ընդհարման ժամանակ խլեցին նրանցից ողջ ավարը և ջարդեցին բավական մեծ քանակությամբ հափշտակողներին: Անկանոն հետ վերադառնալիս, քանի որ առաջնորդ չունեին, նրանք ընկան Սպիտամենի և սկյութների սարքած դարանը և կորցրեցին յոթ «ընկերներ» և 60 վարձկան հեծյալներ: Կիթարոզոս Արխատոնիկոսը զոհվեց այնտեղ, կռվելով ոչ թե որպես կիթարոզոս, այլ որպես քաջակորով մարտիկ: Պեյթոնեսին սկյութները վիրավորեցին և գերի վերցրին:

17

Կրատերոսը, տեղեկանալով կատարվածի մասին, սրբնթացորեն նետվեց մասագետների վրա. Սրանք, լուր ստանալով նրա մոտենալու մասին, զլխապատառ փախան անապատ: Սպիտամենի ջոկատին կրնկակոխ հետևող Կրատերոսը հասավ նրան անապատից ոչ հեռու. այժմ նրա հետ կային ևս հազարի մոտ մասագետ-հեծյալներ: (2) Մակեդոնացիների և սկյութների միջև թեժ կռիվ սկսվեց. հաղթեցին մակեդոնացիները: Սկյութներից զոհվեցին հարյուր հիսուն հեծյալներ: Մնացածները հեշտությամբ թաքնվեցին անապատում, որտեղ մակեդոնացիները արդեն չէին կարող նրանց հետապնդել:

(3) Այդ ժամանակ Ալեքսանդրը ազատեց Արտաբազին Բակտրիայի սատրապի պաշտոնից (նա ինքն էր խնդրել դա ծերության պատճառով) և նրա տեղը սատրապ նշանակեց Ամինտոսին՝ Նիկոլայոսի որդուն: Քենոսին նա թողեց հին տեղում նրա և Մելեագրոսի ջոկատներով, չորս հարյուրի շափ հեծյալ «ընկերներով», բոլոր հեծյալ պարսատիկավորներով և այն բակտրիայիներով ու սոգդերով, որոնց հրամանատարը Ամինտոսն էր: Նրանց

բուրքին հրամայված էր ենթարկվել Քենոսին և ձմեռել Սոզդիա-
նայում, որպեսզի հետևեն Երկրին և պահպանեն այն. իսկ եթե
պարզվի, որ ձմեռանք Սպիտամենը ինչ-որ տեղ թափառում է,
ապա դարանակալին նրան և բռնեն:

(4) Սպիտամենը և նրա մարդիկ, տեսնելով, որ մակեդոնացի-
ներն ամենուր տեղադրել են իրենց կայազորները և որ փախչե-
լու տեղ չկա, հարձակվեցին Քենոսի և նրա զորքի վրա, որոշելով,
որ հենց այստեղ էլ նրանք կարող են հաղթող դառնալ: Գալով
Գաբա՝ սոզդական և սկյութ-մասսագետների երկրների սահմա-
նազօն այդ անտիկ վայրը, նրանք առանց դժվարություն համո-
զեցին մոտ 3 հազար սկյութ հեծյալների իրենց հետ միասին ներ-
խուծելու Սոզդիանա: (5) Այդ սկյութներն ապրում էին ծայրահեղ
աղբատության մեջ. ո՛չ քաղաքներ ունեին, ո՛չ մշտական բնակա-
վայրեր, իրենց բարձրությունը կորցնելու վախ չունեին, այդ
պատճառով հրահրել նրանց ցանկացած պատերազմի, դժվար չէր:
Քենոսը, տեղեկանալով Սպիտամենի և նրա հեծյալների մոտենա-
լու մասին, զորքով ընդառաջ ելավ նրան: (6) Կատաղի կռիվ
սկսվեց, և մակեդոնացիները հաղթեցին. ճակատամարտում զոհ-
վեց 800-ից ավելի բարբարոս հեծյալ, իսկ Քենոսի զորքից՝ 25
հեծյալ և 12 հետևակային: Սպիտամենի հետ փրկված սոզդերը
և շատ բակտրիացիներ փախուստի ժամանակ լքեցին Սպիտա-
մենին, եկան Քենոսի մոտ և անձնատուր եղան: (7) Իսկ սկյութ-
մասսագետները, պարտություն կրելով, թալանեցին իրենց հետ
կովոդ բակտրիացիների և սոզդերի գումակը և Սպիտամենի հետ
շախան անապատ: Երբ նրանց լուր հասավ, որ Ալեքսանդրը պատ-
րաստվում է ներխուժել անապատ, նրանք կտրեցին Սպիտամենի
դուխը և այն ուղարկեցին Ալեքսանդրին, որպեսզի դրանով կան-
խեն նրա մտադրությունը:

18

Քենոսը մեկնեց Նավթակի՝ Ալեքսանդրի մոտ, այդտեղ եկավ
Նաև Կրատերոսը իր մարդկանցով, Թրատաթերնը՝ Պարթևաստանի
սատրապը, և Ստասանորոսը՝ արիացիների սատրապը: Նրանք
Ալեքսանդրի բուրք հրամանները կատարել էին: (2) Ալեք-
սանդրը Նավթակիի շրջակայքում իր զորքը դասավորեց հանգըս-
տի, քանի որ խիստ ձմեռ էր սկսվել: Թրատաթերնին նա ուղար-
կեց մարդերի և տապուրների մոտ, հրամայելով իր մոտ բերել

սատրապ Ավտոթրագատոսին, որին Ալեքսանդրը բազմիցս կեն-
շել էր, բայց սա չէր եկել: (3) Ստասանորոսին որպես սատրապ
ուղարկեց դրանգների մոտ, իսկ մարերին սատրապություն անե-
լու ուղարկեց Ատրոպատոսին, քանի որ Օբսիդատը, ըստ իր կար-
ծիքի, իր դեմ հանցամտում էր: Ստամենոսին նա ուղարկեց Բա-
բելոն, քանի որ իրեն հայտնել էին բաբելոնյան հյուպոթրոս Մա-
զնի մահվան մասին: Սոսյոլոսին, Էպոկիլոսին և Մենիզոսին
ուղարկեց Մակեդոնիա, այնտեղից իրեն զորք բերելու:

(4) Գարնան հենց սկզբին նա գնաց դեպի Սոզդյան ժայռը,
որտեղ, ինչպես իրեն էին հայտնել, հավաքվել էին շատ սոզդեր:
Մտած էին, որ այդ ժայռի վրա են փախել բակտրիացի Օբսիարտի
կիներ և դուստրերը. Օբսիարտը նրանց թաքցրել էր այդ անտիկ
թվացող վայրում, քանի որ ինքն էլ էր պառակտվել Ալեքսանդ-
րից: Եթե այդ ժայռը գրավվեր, առաջ ապստամբել ցանկացող
սոզդերը կղրկվեին վերջին ապաստարանից:

(5) Երբ Ալեքսանդրը մոտեցավ ժայռին, նա տեսավ զուսի-
թափ, դրոհի համար անմատչելի պարիսպներ. բարբարոսները
այնտեղ մթերք էին տարել երկարատև պաշարման հաշվարկով:
Շատ ձյուն տեղաց, դա դժվարացնում էր մակեդոնացիների
առաջխաղացումը, իսկ բարբարոսներին՝ առատ ջուր ապահովում:
Այնուհանդերձ Ալեքսանդրը այդ տեղը որոշեց գրավել գրոհով:

(6) Բարբարոսների ամբարտաձան խոսքերը զայրացնում էին
Ալեքսանդրին և դիպչում նրա փառալիրությանը, նա առաջարկեց
նրանց բանակցություններ սկսել և խոստացավ, որ նրանք տուն
կվերադառնան առողջ ու անվնաս, եթե հանձնեն այդ վայրը.
Նրանք էլ բրբեջով, բարբարոսաբար խորհուրդ տվեցին Ալեքսանդ-
րին թեևավոր զինվորներ գտնել, որոնք և կգրավեն այդ լեռը. սո-
վորական մարդիկ դրա մասին նույնիսկ չպետք է մտածեն: (7)
Այդ ժամանակ Ալեքսանդրը հրամայեց հայտարարել, որ առաջի-
նք, ով կբարձրանա ժայռը, կստանա 12 տաղանդ պարգև, երկ-
րորդը կստանա երկրորդ պարգևը, երրորդը՝ երրորդը և այդպես
հաջորդաբար. վերջին մագլցողին կտրվի համապատասխանորեն
վերջին պարգևը՝ 300 դահեկան: Այդ հայտարարությունը էլ ավե-
լի խթանեց մակեդոնացիներին, որոնք առանց այն էլ գրոհի էին
անելում:

300-ի մոտ զինվորներ հավաքվեցին, որոնք վարժվել էին պաշարումների ժամանակ մազլցի ժայռերում: Նրանք փոքրիկ երկաթյա սեպեր պատրաստեցին, որոնցով գետնի վրա ամրացնում էին վրանները. դրանք պետք է խփվեին ձյան մեջ այն տեղերում, որտեղ ձյունը կարծրացել և սառույցի էր վերածվել: Իսկ այն տեղերում, ուր ձյուն չկար՝ ուղղակի գետնի մեջ: Դրանց վուշի ամուր պարաններ կապեցին և զիշերվա ընթացքում մոտեցան ամենազառիթափ և այդ պատճառով ամենեկին չպաշտպանվող ժայռին: (2) Նփեկում այդ սեպերը կամ հողի մեջ, եթե այն երևում էր, կամ լիովին կարծրացած ձյան մեջ, նրանք մոտեցան ժայռին այս ու այն կողմից: Այդ մազլցման ժամանակ զոհվեցին մոտ 30 մարդ և նույնիսկ նրանց մարմինները չգտան, որպեսզի թաղեն. նրանք խաղվել էին ձյան մեջ: (3) Մնացածներն արդեն լուսաբացին հասել էին լեռան գագաթը. տեղ հասնելով, նրանք սկսեցին թաշկինակներ թափահարել մակեդոնական ճամբարի կողմը. այդպես էր նրանց հրամայել Ալեքսանդրը: Նա մունետիկ ուղարկեց և կարգադրեց նրան գոչել բարբարոսների պահակախմբին, որ այլևս չձգձգեն և հանձնվեն, քանի որ թևավոր մարդիկ գտնվել են, և արդեն գրավել նրանց լեռան գագաթը: Եվ մունետիկը անմիջապես մատնացույց արեց գագաթի վրա գտնվող զինվորներին:

(4) Անսպասելի տեսարանից ցնցված բարբարոսներին թվաց, որ լեռը գրավված է անհամեմատ ավելի մեծ քանակությամբ լրիվ զինված մարդկանցով, և նրանք անձնատուր եղան. այդքան մեծ էր նրանց սարսափը մի բուռ մակեդոնացիներից: Գերի վերցվեցին մեծ քանակությամբ կանայք ու երեխաներ, այդ թվում նաև Օքսիարտի կինն ու զավակները: (5) Օքսիարտը ամուսնացնելու տարիքի մի զուտոր ուներ Ռոքսանա անունով: Ալեքսանդրի զինվորներն ասում էին, որ Դարեհի կնոջից հետո նրանք Ասիայում ամենի գեղեցիկ կին չէին տեսել: Ալեքսանդրը տեսավ նրան և սիրահարվեց. նա շքանկացավ վիրավորել նրան որպես գերուհու և մեծարեց նրան կնոջ անվանը տրժանի ձևով: (6) Ես դրա համար Ալեքսանդրին չեմ նախատում, այլիլի շուտ զովարանում եմ: Նա կամ չէր ցանկացել Դարեհի կնոջը, որը Ասիայի առաջին գեղեցկուհու համբավն ուներ, կամ էլ կարողացել էր զսպել իրեն, թեև հրիտասարգ էր և գտնվում էր երջանկության գագաթնակն-

աին, երբ մարդիկ ամեն ինչ թույլ են տալիս իրենց: Իսկ նա կնոջը վերաբերվել է հարգանքով ու խղճահարությունամբ. ցուցաբերել է մեծ ինքնատիրապետում և լիովին տեղին՝ բարի համբավի ցանկություն:

Ի դեպ, պատմում են, որ Իսոսի ճակատամարտից քիչ անց Դարեհի մոտ է փախել ներքինին, որը նրա կնոջ պահապանն էր: Տեսնելով նրան, Դարեհը նախ և առաջ հարցրել է՝ ողջ են արդյոք իր զուտորերը, կինը և մայրը: (2) Տեղեկանալով, որ նրանք ողջ են և որ նրանց թագուհիներ են անվանում և նրանց վերաբերվում այնպես, ինչպես Դարեհի մոտ, նա հարցրեց, հավատարիմ է արդյոք իրեն կինը: Տեղեկանալով, որ հավատարիմ է, նա կրկին հարցրեց՝ արե՞ք արե՞ք, արդյոք Ալեքսանդրը անպատիվ բռնություն չի գործադրել: Ներքինին երգվելով հաստատեց. «Արքա, քո կինը մնացել է չափախին, որպիսին դու նրան թողել ես: Ալեքսանդրը ամենաազնվարար և զուսպ մարդն է»: (3) Այն ժամանակ Դարեհը դեպի երկինք բարձրացրեց ձեռքերը և այսպիսի աղոթք արտասանեց. «Տիրակալ Զևս, դու ես տնօրինում երկրի արքաների ճակատագրերը: Այժմ պահպանիր իմ իշխանությունը պարսիկների ու մարերի վրա, որոնց դու ինքդ տվել ես ինձ: Իսկ եթե քեզ հաճո չէ թողնել ինձ Ասիայի արքա, ապա ուրիշ ոչ մեկին մի փոխանցիր իմ տիրակալությունը բացի Ալեքսանդրից»: Այսպես ինքնատիրապետման կարողությունը և ինքնազսպվածությունը հարգանք է առաջացնում նույնիսկ թշնամիների մոտ:

(4) Օքսիարտը, լսելով, որ իր զավակները գերության մեջ են, և որ Ալեքսանդրը հրապուրված է Ռոքսանայով, սրտապնդվեց և ներկայացավ Ալեքսանդրին: Նրան պատվով ընդունեցին, որը և բնական էր նման հանդիպման ժամանակ:

Ալեքսանդրը, ավարտելով գործերը Սոգդիանայում և տիրանալով ժայռին, գնաց պարսիկների վրա: Ասում էին, թե մեծաթիվ բարբարոսներ այնտեղ իրենց իշխանության տակ էին պահում մի անառիկ վայր, մեկ ուրիշ ժայռ, որը կոչվում էր Խորիենի ժայռ: Այդտեղ էին թաքնվել ինքը Խորիենը և բաղամաթիվ այլ իշխաններ: (2) Այդ ժայռը 20 ասպարեզ բարձրություն ուներ և 60

էլ շրջագիծ: Բոլոր կողմերից նա դառիթափ էր և միայն մի ճանապարհ էր տանում զեպի գագաթը, ընդ որում այն նեղ էր ու անհարմար, որը կառուցվել էր այդ վայրի բնությունը հակառակ Այդ ճանապարհով վեր ելնելը դժվար էր նույնիսկ որևէ դիմադրություն բացակայության դեպքում և առանձին-առանձին շարժվելիս ժայռը շրջապատված էր խոր անդունդով, և նա, ով կմտադրվեր զորք մտնեցնել այդ ժայռին, պետք է մինչ այդ լցներ այդ անդունդը, որպեսզի գրոհը սկսեր հարթ վայրից:

(3) Այնուհանդերձ Ալեքսանդրը ձեռնամուխ եղավ այդ գործին. այնքան մեծ էր նրա հանդգնությունը. նա երջանկության այնպիսի բարձրության վրա էր գտնվում, որ նրան թվում էր, որ իր համար անանցանելի ու անմատչելի տեղ չկա: Նա հրամայեց եղևիններ կտրել (լեռան շուրջը բազմաթիվ բարձր եղևիններ էին աճում) և աստիճաններ պատրաստել, որպեսզի զորքը կարողանա դրանցով անդունդն իջնել, այլապես այնտեղ իջնելն անհնար էր:

(4) Ցերեկը Ալեքսանդրը ինքն էր ղեկավարում աշխատանքները, դրանց համար նշանակելով իր զինվորների կեսին. գիշերը նրան հերթով փոխարինում էին թիկնապահները՝ Պերդիկոսը, Լեոնատոսը և Պտղոմեոսը՝ Լագոսի որդին, քանի որ զորքի մյուս մասը նա երեք ջոկատի էր բաժանել, որոնք աշխատում էին հերթով, ամեն մեկը իրեն նշանակված գիշերը: Օրվա ընթացքում հասցնում էին առաջ շարժվել 20 կանգունից ոչ ավելի, իսկ գիշերները մի քիչ ավելի պակաս, թեև աշխատում էր ողջ զորքը. այդքան անառիկ էր այդ տեղը և այդքան դժվար այդտեղ աշխատելը: (5) Անդունդն իջնելով, զինվորները սեպեր էին խփում լանջի այն տեղերում, որտեղ այն ամենանեղն էր. սեպերի միջև ընկած տարածությունը որոշում էին այնպիսի հաշվարկով, որ դրանք պահեն տախտակամածը: Այդ տախտակամածը պատրաստում էին ուռնու հյուսված ճյուղերից, կամրջի նման, հյուսվածքներն ամրացնում էին իրար և վրայից հող լցնում, որպեսզի զորքը կարողանար մոտենալ ժայռին հարթ տեղով:

(6) Սկզբում բարբարոսներն արհամարհանքով վերաբերվեցին այդ աշխատանքներին, որպես բացարձակ անիմաստ մտահղացման: Իսկ երբ նետերը սկսեցին հասնել ժայռին և վերևում նստած բարբարոսներն անօդնական գտնվեցին խանգարելու մակեդոնացիներին (նրանք ծածկ էին պատրաստել, որի տակ կարող էին աշխատել, չվախենալով նետերից), ապա խորհեցան վախեցավ և մոռնալով ուղարկեց Ալեքսանդրի մոտ, խնդրելով իր մոտ ուղար-

կել Օբսիարտին: (7) Ալեքսանդրը ուղարկեց Օբսիարտին, և նա համոզեց խորհեցան անձնատուր լինել և հանձնել բերդը, չկա այնպիսի տեղ, որ Ալեքսանդրը և նրա զորքը ուժով չվերցնեն, բայց նա հավատարիմ ընկեր է, և Օբսիարտը սկսեց դրվատել արքայի հավատարմությունն ու արդարամտությունը, իր խոսքերը հաստատելու համար տարբեր ղեպեր և առաջին հերթին անձնական օրինակը բերելով: (8) Խորհեցան հետևեց նրա խորհրդին և ինքը եկավ Ալեքսանդրի մոտ մի քանի բարեկամների և ընկերների ուղեկցությամբ: Ալեքսանդրը սիրալիբ ընդունեց խորհեցանին, հավաստիացրեց իր բարեկամությունը, բայց ազատ չարձակեց նրան և առաջարկեց մի քանի մարդ հետ ուղարկել ժայռի վրա նրանցից, ովքեր եկել էին իր հետ, հրաման տալով հանձնել այն: (9) Այնտեղ հավաքված փախստականները հանձնեցին ժայռ-Ալեքսանդրը 500 վահանակիրներով անձամբ բարձրացավ այնտեղ, որպեսզի զննի ամրոցը, և նա այնքան հեռու էր խորհեցանի հետ դաժան հաշվահարդար տեսնելու մտքից, որ հանձնարարեց վերջինիս տնօրինել ամրոցը և նրան իշխան նշանակեց այն վայրերում, որտեղ և նախկինում էր նշանակել:

(10) Ալեքսանդրի զորքը շատ էր տանջվում ձմեռային արհամարհանքից. պաշարման ժամանակ առատ ձյուն տեղաց, տանջալիորեն զգացվում էր սննդի պակասը: Խորհեցան խոստացավ զորքի համար երկու ամսվա սնունդ հայթայթել. ամրոցում հավաքված պաշարներից նա հաց, զինի և այլ դրած միս հանեց, հաշվարկելով դրանց քանակը ըստ վրանների: Ընդ որում նա ասաց, որ չի սպառել պաշարման համար նախատեսված մթերքի նույնիսկ տասներորդ մասը: Ալեքսանդրը դրանից հետո սկսեց առանձնապես հարգել նրան, քանի որ նա հանձնել էր ամրոցը ոչ թե անհրաժեշտությունից ելնելով, այլ իր անձնական որոշմամբ:

Վերջացնելով այդ գործերը, Ալեքսանդրը անձամբ գնաց Բակտրիա, իսկ Կրատերոսին վեց հարյուր հեծյալ զինվորներով՝ և հետևակային ջոկատներով, որոնք նրան էին ենթարկվում, Պոլիպերթոնտեսի, Ատալոսի և Ալիեռոսի հետ ուղարկեց Կատանի և Ավստանի դեմ, որոնք միակն էին պարետակների երկրում, ովքեր գեռ զենքը վայր չէին դրել: (2) Նրանց հետ դաժան ճակատամարտ տեղի ունեցավ. այդ ճակատամարտում հաղթեցին Կրատերոսի

զինվորները: Մարտի ժամանակ զոհվեց Կատանը. Ավստանին գերի վերցրին և բերեցին Ալեքսանդրի մոտ. բարբարոսներից զոհվեցին 120 հեծյալ և մոտ հազար հինգ հարյուր հետևակային: Վերջ տալով ասպատամբությանը, Կրատերոսը զորքով ուղևորվեց Բակտրիա: Հենց Բակտրիայում էլ տեղի ունեցան Ալեքսանդրի համար գառն ղեպքերը Կալիսթենեսի և պատանիների հետ:

(3) Գարնան վերջում Ալեքսանդրը Բակտրիայից զորքով գնաց հնդիկների վրա. բակտրիական երկրում նա թողեց Ամինտոսին և նրա հետ 3500 հեծյալ ու 10. 000 հետևակային: (4) Տասն օրվա ընթացքում անցնելով Կովկասը, նա ժամանեց Ալեքսանդրիա՝ քաղաք, որը նա էր հիմնել Բակտրիա կատարած իր առաջին արշավանքի ժամանակ: Այն ժամանակ քաղաքը կառավարելու համար նշանակված հյուպարքոսին նա զրկեց պաշտոնից, որովհետև, իր կարծիքով, նա վատ էր ղեկավարել: (5) Ալեքսանդրիայում ևս վերաբնակեցնելով որոշ քանակությամբ մործակա բնակիչներին և թողնելով այնտեղ զինվորներ, որոնք այլևս պիտանի չէին զինվորական ծառայության համար, նա հրամայեց «ընկերներից» մեկին՝ Նիկանորոսին զբաղվել քաղաքի բարեկարգմամբ. մարզի՝ ընդհուպ մինչև Կոթեն գետը, սատրապ նշանակեց Տիրիեսային: (6) Գալով Նիկեսա քաղաքը և զոհ մատուցելով Աթենասին, նա շրջվեց դեպի Կոթեն, առաջ ուղարկելով մոնեստիկի, որը հրաման տարավ Տաքսիլին և այդ ամի բոլոր բնակիվորներին՝ դիմավորել իրեն, ով ինչպես կարող է: Տաքսիլն ու մյուս իշխանները նրան ընդառաջ ելան ընծաներով, որոնք հնդիկները համարում են ամենաթանկարժեքը, և խոստացան տալ նրան իրենց ունեցած փղերը՝ թվով մինչև 25 հատ:

(7) Այդտեղ նա մասնատեց իր զորքը. Հեփեստիոնեսին և Պերդիկոսին ուղարկեց պեկեյաոսների երկիրը՝ դեպի Ինդոս գետը, տալով նրանց Գորգիոսի, Կլիտոսի և Մելեագրոսի գնդերը, «ընկերներին» հեծելազորի կեսը և ողջ վարձկան հեծելազորը: Նա հրամայեց նրանց իրենց ճանապարհին ընկած բոլոր երկրները կամ ուժով նվաճել, կամ միացնել պայմանադրային սկզբունքով, իսկ հասնելով Ինդոս գետին՝ ամեն ինչ նախապատրաստել գետանցի համար: Նրանց հետ մեկնեցին Տաքսիլը և այլ իշխաններ: (8) Գալով դեպի Ինդոս գետը, նրանք արեցին այնպես, ինչպես իրենց հրամայել էր Ալեքսանդրը: Պեկեյաոսների իշխան Աստիսը ասպատամբություն բարձրացրեց. ինքը զոհվեց և կորսության մատնեց քաղաքը, ուր փախել էր: Հեփեստիոնեսի զորքը այն գրավեց

և բնաժողով պաշարումից հետո: Ինքն՝ Աստիսը զոհվեց, իսկ քաղաքի կառավարումը հանձնարարվեց Սանգային, որը մինչ այդ փախել էր Աստիսից Տաքսիլի մոտ. այդ փաստը նրա հանդեպ չստահություն էր առաջացրել Ալեքսանդրի մոտ:

Ալեքսանդրը իր հետ տանելով վահանակիրների, հեծյալ «ընկերներին», որոնք չէին մեկնել Հեփեստիոնեսի հետ, այսպես կոչված «հետիոսն ընկերներին» ջոկատները, նևտաձիգների, ագրիանացիների և հեծյալ տեղաճեղձների, ուղևորվեց ասպասիների, գուրեյցիների և ասակենների երկրները: (2) Անցնելով դժվարին լեռնային ճանապարհով, որը ձգվում էր Քոչ գետի երկայնքով, և դժվարությամբ անցնելով նրա մյուս ափը, նա հրամայեց ողջ հետևակին հետևել իրեն սովորական քայլքով. իսկ ինքը վերցնելով ողջ հեծելազորը և ձիերի վրա նստեցնելով մոտ ութ հարյուր մակեդոնացի հետևակայինների (վահանները, որ կրում էին հետևակայինները, պահեցին իրենց մոտ), սրընթացորեն շարժվեց առաջ, քանի որ նրան զեկուցեցին, որ տեղացի բարբարոսները փախել են շրջակա լեռները և իրենց քաղաքները, որտեղից կարելի է հաջողությամբ հետ մղել թշնամուն: (3) Մոտենալով իր ճանապարհին հանդիպած առաջին իսկ քաղաքին, նա միանգամից քաղաքը բռնեց ու այնտեղ փակեց բարբարոսներին, դիրքավորվելով քաղաքի առջև: Սակայն ինքը ուսից նետով վիրավորվեց, որը ծակել էր զրահը: Վերքը թեթև էր. զրահը թույլ չէր տվել ուսն ամբողջովին ծակել: Վիրավորվել էին նաև Պտղոմեոսը՝ Լագոսի որդին, և Լեոնատոսը:

(4) Նա ճամբար խփեց քաղաքի մոտ այն կողմից, որտեղ պարսպը առավել մատչելի թվաց. հաջորդ օրը լուսաբացից առաջ մակեդոնացիները գրավեցին առաջին, բայց շափազանց մանրակրկիտությամբ շարված պարսպը (քաղաքը շրջափակված էր երկու պարսպով). երկրորդի հետևում բարբարոսները որոշ ժամանակ դիմացան, բայց երբ արդեն աստիճանները դրվել էին և պարսպի վրայի զինվորներին ամեն կողմից խփում էին նետերով, նրանք ընկրկեցին և քաղաքի դարպասներով փախան սահբերը: (5) Նրանց մի մասը կոտորվեց փախուստի ժամանակ. թշուր գերի վերցվածներին մակեդոնացիները կոտորեցին, դայրացած Ալեքսանդրի վերքի համար: Շատերին, այնուհանդերձ, հա-

չողվեց թաքնվել սարերում. լեռները հեռու չէին քաղաքից: Ալեքսանդրը հրամայեց հիմնահատակ քանդել քաղաքը և գնաց Անդախա՝ մյուս քաղաքը: Անդախան անձնատուր եղավ. Ալեքսանդրը հետևակի մյուս առաջնորդների հետ այգտեղ թողեց Կրատերոսին, հրամայելով, ոչնչացնել այն քաղաքները, որոնք ինքնակամ չեն հանձնվի, և երկիրը կարգավորել տվյալ ժամանակի համար լավագույն ձևով:

24

Ինքը վահանակիրների, նետածիգների, ազրիանացիների, Քենոսի և Ատալոսի ջոկատների, հեծյալների աղեմոսի, մնացած «ընկերների» ամենաշատը շորս հիպարքիանների և հեծյալ նետածիգների կեսի հետ շարժվեց դեպի գետը, ուր գտնվում էր ասպասիների իշխանը: Անցնելով մեծ տարածություն, նա երկրորդ օրը մոտեցավ քաղաքին: (2) Բարբարոսները, տեղեկանալով Ալեքսանդրի մոտենալու մասին, այրեցին քաղաքը և փախան սարերը: Ալեքսանդրի մարտիկները հետապնդեցին փախչողներին ընդհուպ մինչև լեռները և մեծ քանակությամբ բարբարոսների կոտորեցին, մինչև նրանք կհասցնեին թաքնվել անանցանելի տեղերում:

(3) Պտղոմեոսը՝ Լագոսի որդին, բլրի վրա տեսավ այգտեղի հնդիկների առաջնորդին. նրա շուրջը կանգնած էին վահանակիր զինվորներ: Պտղոմեոսը շատ ավելի սակավ մարդիկ ուներ, բայց նա, այնուհանդերձ, նետվեց հետապնդման, սկզբում ձիով, ուսկայն ձին դժվարանում էր բլուրը բարձրանալ. Պտղոմեոսը վայր թռավ ձիուց, սանձերը հանձնեց վահանակիրներից մեկին, իսկ ինքը վազեց հնդիկի հետևից: (4) Երբ սա տեսավ, որ Պտղոմեոսը մոտ է, ինքը և իր զինվորները շրջվեցին նրան գեմբով: Հնդիկը երկար նիզակով հարվածեց Պտղոմեոսի կրծքին, զրահը պահեց հարվածը: Պտղոմեոսը ծակեց անցավ հնդիկի կոնքը, գետին տապալեց նրան և վրայից հանեց զենքն ու գրահը: (5) Իրենց ընկած իշխանին տեսնելով, զինվորները ընկրկեցին ու փախան, նրանք էլ, ուլքեր տեղ էին գրավել լեռներում, տեսնելով, որ իրենց առաջնորդի զին տանում են թշնամիները, կսկիծով լի վազեցին Ենթե, և բլրի վրա դաժան մարտ սկսվեց: Բլրի վրա հայտնվեց ինքն՝ Ալեքսանդրը, որն այստեղ էր ժամանել իր հետևակայինների հետ, որոնց նա կրկին շտապեցնում էր: Չնայած այդ օգնու-

թյանը, հնդիկներին դժվարությամբ հետ մղեցին սարերը և տիրացան առաջնորդի մարմնին:

(6) Անցնելով լեռները, Ալեքսանդրը մտավ Արիգեյ կոչված քաղաքը, բայց այնտեղ միայն համատարած հրդեհ դտավ. բնակիչները այրել էին քաղաքը և փախել լեռները: Այստեղ եկավ նաև Կրատերոսը իր զորքով, կատարելով այն ամենը, ինչ նրան հանձնարարել էր արքան: (7) Նա հրամայեց Կրատերոսին շափազանց հարմար դիրք ունեցող այդ քաղաքը շրջափակել պարբազով և բնակեցնել այն մերձակա բնակիչներով, ով կցանկանա, ինչպես նաև զինվորական ծառայության համար արդեն ոչ պիտանի զինվորներով: Իսկ ինքը գնաց այն տեղը, ուր, ըստ իր ավյալների, հավաքվել էին մեծ քանակությամբ տեղացի բարբարոսներ: Մոտենալով լեռանը, նա ճամբար խփեց նրա ստորոտին:

(8) Պտղոմեոսը՝ Լագոսի որդին, որին Ալեքսանդրը ուղարկել էր անասնակեր հայթայթելու, մի քանի զինվորների հետ հետախուզության նպատակով ավելի հեռուն գնալով, զեկուցեց Ալեքսանդրին, որ բարբարոսների մոտ ավելի շատ խարույկ է տեսել, քան Ալեքսանդրի ճամբարում: (9) Ալեքսանդրը խարույկների քանակին թերահավատորեն վերաբերվեց, սակայն տեղեկանալով, որ տեղացի բարբարոսները այստեղ են կենտրոնացրել իրենց ուժերը, նա իր զորքի մի մասը թողեց լեռան տակ, այնտեղ, ուր ճամբարն էր: Իր հետ զեկուցմանը համապատասխան քանակությամբ մարդիկ վերցրեց, և երբ խարույկները երևում էին մոտիկից, բաժանեց իր զորքը երեք մասի: (10) Մեկի ղեկավար նշանակեց Լեոնատոսին՝ թիկնապահին, հանձնարարելով նրան Ատալոսի և Բալակրոսի ջոկատների հրամանատարությունը. երկրորդը հանձնարարեց առաջնորդել Պտղոմեոսին՝ Լագոսի որդուն, այստեղ էր արքայական վահանակիրների մեկ երրորդ մասը, Փիլիպոսի և Փիլիպոսի ջոկատները, նետածիգների երկու քիլիարքիա, ազրիանացիները և հեծելազորի կեսը. երրորդը ինքը առաջնորդեց զենքի այն վայրը, ուր, թվում էր, հավաքվել էին ամենաշատ բարբարոսները:

Գտնվելով բարձունքների վրա, բարբարոսները նկատեցին մակեդոնացիների առաջխաղացումը: Հույս դնելով իրենց քանակի վրա, նրանք արձամարձանքով վերաբերվեցին, ինչպես իրենց էր թվացել, մակեդոնացիների փոքրաթիվ ջոկատին և իջան դաշտավայր: Թեժ կռիվ սկսվեց, բայց և այդ հակառակորդին Ալեքսանդրը դժուրությամբ հաղթեց: (2) Իսկ Պտղոմեոսի ջոկատը դաշտավայրում չէր կանգնած. բարբարոսները պահում էին բլուրը՝ դասավորվելով խոր գնացող շարքերով: Պտղոմեոսը տարավ յուրայիններին այն կողմից, ուր բլուրը առավել մատչելի էր թվում, բայց շրջապատեց այն բոլոր կողմերից, այլ բաց տարածություն թողեց, եթե բարբարոսները ցանկանային փախուստի դիմել: (3) Այստեղ ևս դաժան պայքար սկսվեց. տեղանքը հարմար չէր, և բացի այդ, հնդիկներին հնարավոր չէր նույնիսկ համեմատել մյուս տեղացի բարբարոսների հետ. նրանք անհամեմատ ավելի քաջ էին իրենց հարեաններից: Այնուհանդերձ, մակեդոնացիները նեղելով բշեցին նրանց լեռներից: Զորքի այն երրորդական մասը, որի հրամանատարն էր Լեոնաոսը, արեց նույնը և նրանք հաղթեցին իրենց թշնամիներին: (4) Պտղոմեոսը պատմում է, որ զորքի էր վեհրդի 40 000 մարդ և ավելի քան 230 000 եղջերավոր անասուն: Այդ կենդանիներից Ալեքսանդրը ընտրեց ամենազեղեցիկներին, դրանք առանձնանում էին և՛ գեղեցկությամբ, և՛ մեծությամբ, որպեսզի ուղարկի Մակեդոնիա դաշտային աշխատանքների համար:

(5) Այդտեղից նա զորքը տարավ ասակենների երկիրը: Նրան գեկուցեցին, որ սրանք պատերազմի են պատրաստվում, որ ունեն 2 000 հեծյալ, ավելի քան 30 000 հետակային և 30 փիղ: Կրատերոսը այդ ընթացքում կառուցել էր քաղաքը, որը բնակեցնելու համար էին նրան թողել, և գնաց Ալեքսանդրի մոտ զորքի ծաներազեն մասով և մեքենաներով, եթե դրանք պետք գային որե՛ն պաշարման համար: (6) Ինքը՝ Ալեքսանդրն էլ «ընկերներին» հեծելազորով, հեծյալ տեղանեռներով, Քենոսի և Պոլիպերոնեսի գնդերով, հազար ազդեցիկներով և նետածիղհերով գուրեցիկների երկրով գնաց ասակենների դեմ: (7) Նա ղեկավարությամբ անցավ Գուրեյ գետը, որի անունով կոչվում էր երկիրը: Գետը խոր է, հոսանքը՝ սրընթաց, նրա հատակը ծածկված է կլոր քարերով, որոնց վրա գետանցի ժամանակ կանգնելիս սայթա-

լում էին: Բարբարոսները, տեղեկանալով Ալեքսանդրի մոտենալու մասին, չձամարձակվեցին ամբողջ բազմությամբ ճակատաճարտել նրա հետ, նրանք ցրվեցին իրենց քաղաքները և որոշեցին պաշտպանել դրանք և հետ մղել դրոհները:

Ալեքսանդրը սկզբում գնաց Մասագամ՝ այստեղի ամենամեծ քաղաքը: Երբ նա արդեն մոտենում էր նրա պարիսպներին, բարբարոսները, հույս դնելով վարձկանների, հեռավոր վայրերից եկած հնդիկների վրա, վազբով նետվեցին մակեդոնացիների վրա այն ժամանակ, երբ սրանք ճամբար էին խփում: (2) Ալեքսանդրը, տեսնելով, որ ճակատամարտը տեղի է ունենալու քաղաքի մոտակայքում, ցանկացավ բարբարոսներին քաշել տանել պարիսպներից հեռու, որպեսզի հետ փախչելիս (իսկ նա հասկանում էր, որ բարբարոսները փախչելու են) նրանք չկարողանան, մի քիչ վազելուց հետո, միանգամից պատուպարվել քաղաքում: Երբ նա տեսավ, որ նրանք դուրս են վազում քաղաքից, մակեդոնացիներին հրամայեց շրջվել և հեռանալ դեպի բլուրը, որը յոթ ասպարեզ հեռու էր ընկած այն վայրից, ուր նա որոշել էր ճամբար խփել: (3) Թշնամիները, կարծելով թե մակեդոնացիներն արդեն նահանջում են, սիրտ առան և լիակատար անկարգությամբ, վազբով նետվեցին նրանց վրա: Նրանց նետերն արդեն հասնում էին մակեդոնացիներին. այդ պահին, Ալեքսանդրի տված ազդանշանով, փազանգը շրջվեց և վազբով նետվեց թշնամու վրա: (4) Առաջինը բարբարոսների հետ գոտեմարտի բռնվեցին հեծյալ տեղանեռները, ազդեցիկները և նետածիղհերը. ռազմակարգով շարված փազանգը առաջնորդում էր ինքը: Ծակատամարտի անսպասելի շրջադարձից վախեցած հնդիկները ևրերացին, երբ գործը հասավ մեռածմարտին, և փախան քաղաք: Զոհվեց մոտ 200 մարդ. մնացածները փակվեցին քաղաքի պարիսպների հետևում: Ալեքսանդրը մոտեցրեց իր փաղանգը պարսպին. այդտեղ նա պարսպից արձակված նետից թեթևակի վիրավորվեց կոճից: (5) Հաջորդ օրը մեքենաները մոտեցնելով պարիսպներին, նա առանց ղեկավարության ճեղքեց այն, սակայն հնդիկները քաջաբար պաշտպանվում էին, հետ մղելով մակեդոնացիներին, որոնք ձգտում էին ճեղքով ներս մտնել, այնպես որ այդ օրը Ալեքսանդրը հետ կանչեց չինվորներին: Հաջորդ օրը մակեդոնացիները ավելի եռանդուն ճնշում գործադրեցին թշնամու վրա. պարսպին փայտյա աշտարակ մո-

տեղից, որի վրայից հնդիկների գլխին քափեցին աղեղներին և մեքենաներից արձակած նետերը Շատերին ցած գցեցին պարիսպներից, բայց և այնպես մակեդոնացիները քաղաք ներխուժել չկարողացան:

(6) Երրորդ օրը Ալեքսանդրը կրկին հարձակման տարավ փաղանգը, հրամայեց աշտարակից կամրջակ գցել պարսպի այն տեղը, որտեղ ճեղքվածքն էր, և այդ կամրջակով առաջ ուղարկեց վահանակիրներին, որոնք այդ նույն ձևով նրա համար գրավել էին Տյուրոսը: Մարգիկ նետվում էին մարտի: հրմշտոց սկսվեց, կամրջակը շփմացավ ծանրությանը, ջարդվեց, և նրա հետ միասին վայր ընկան մակեդոնացիները: (7) Այդ տեսնելով, բարբարոսները գոչումով սկսեցին պարիսպների վրայից մակեդոնացիներին վրա նետել քարեր, նետեր, ամեն ինչ, ինչ ձեռքների տակ էր ընկնում և ով ինչ հասցրել էր այդ պահին ձեռք գցել: Ոմանք պարիսպների աշտարակների միջև սարքված փոքրիկ դարպասներից դուրս էին վազում և թրեքով կոտորում խուճապի մատնեղված մակեդոնացիներին:

Ալեքսանդրը Ալեկտոսին իր ջոկատի հետ ուղարկեց հավաքելու վիրավորներին և հետ կանչելու նրանց, ովքեր դեռ կոսում էին: Զորորդ օրը նա հրամայեց նույն ձևով ուրիշ մեքենայից պարսպի վրա գցել ուրիշ աստիճաններ:

(2) Հնդիկները քաջաբար կոսում էին, բանի դեռ իրենց հետ էր իրենց առաջնորդը: Իսկ երբ նա մեքենայից արձակված նետից մահացավ, երբ մարդկանց մի մասը ընկավ այդ անընդհատ պաշարման ժամանակ, իսկ շատերը վիրավորված էին և չէին կարող կոսել, այդ ժամանակ նրանք որոշեցին բանակցություններ սկսել Ալեքսանդրի հետ: (3) Նա ուրախացավ նման բաջերի կյանքը պահպանելու հնարավորությունից և պայմանավորվեց վարձկան հնդիկների հետ, որ նրանց կտեղավորեն իր բանակում, և նրանք կծառայեն իրեն: Նրանք զենքերով դուրս եկան քաղաքից և առանձին ճամբարում տեղավորվեցին մակեդոնական ճամբարի դիմացի բլրի վրա: Գիշերը նրանք որոշեցին փախչել և վերադառնալ հայրենիք, լցանկանալով զենք բարձրացնել ուրիշ հնդիկների վրա: (4) Երբ Ալեքսանդրին հայտնեցին այդ մասին, նա իր զորքը տեղադրեց բլրի շուրջը և կոտորեց հնդիկներին՝ նրանց արցա-

նի մեջ առնելով: Քաղաքը նա գրավեց, այն դրվել էր պաշտպաններից, և գերեց Ասակենի մորն ու զատերը: Այդ ամբողջ պաշարման ընթացքում Ալեքսանդրը կորցրեց 25 մարդ:

(5) Այստեղից նա Քենոսին ուղարկեց Բազիրա, հույս ունենալով, որ այդ քաղաքի բնակիչները, լսելով Մասագամի գրավման մասին, իրենք էլ կհանձնվեն: Ատալոսին, Ալեկտոսին և հիպարբոս Գեմետրիոսին ուղարկեց մի ուրիշ քաղաքի՝ Օրայի շերտակայքը, հրամայելով մինչև իր գալը պահել այդ քաղաքը շերտակման մեջ: (6) Քաղաքի բնակիչները արտագրոհ կազմակերպեցին և հարձակվեցին Ալեկտոսի ջոկատի վրա: Մակեդոնացիները հեշտությամբ նրանց փախուստի մատնեցին և ստիպեցին վերադառնալ քաղաք: Քենոսի բախտն էլ չբերեց Բազիրայում: Նրա բնակիչները, հույս զնելով քաղաքի անառիկության վրա, այն տեղադրված էր չափազանց բարձր վայրում և բոլոր կողմերից խնամքով ամրացված էր, շամաձայնեցին բանակցություններ վարել:

(7) Ալեքսանդրը, լսելով այդ մասին, գնաց Բազիրա, սակայն նրան հայտնեցին, որ հարեան բարբարոսները պատրաստվում են աննկատելիորեն մոտենալ Օրային (նրանց այդտեղ էր ուղարկել Աբիսարը) և առաջին հերթին գնաց դեպի Օրա: Քենոսին հրամայեց Բազիրայի շրջակայքում ուժեղացված ամրություն կառուցել և այդտեղ այնպիսի կայազոր թողնել, որը քաղաքաբնակներին հնարավորություն չտա առանց վախի հաղորդակցվել գյուղական վայրերի հետ, իսկ նրան կարգադրեց զորքի մնացած մասի հետ զալ իր մոտ: (8) Երբ Բազիրայի բնակիչները տեսան, որ Քենոսը զորքի զգալի մասով հեռանում է, նրանք, որոշելով, որ մակեդոնացիների ուժը չի բավարարի իրենց հետ հաշվհարդար տեսնելու, իջան հարթավայր: Կատաղի կոսով սկսվեց, որի ժամանակ բարբարոսները կորցրին 500 մարդ, իսկ 700-ից ավելի մարդ գերվեց: Փրկվածները փախան քաղաք. ամրությունում թողնված կայազորը զրկեց նրանց գյուղի հետ որևէ հաղորդակցությունից: (9) Օրայի պաշարումը ոչ մի ջանք չպահանջեց Ալեքսանդրից. նա միանգամից գրոհով վերցրեց քաղաքը և տիրացավ այնտեղ թողած փղերին:

Բազիրայի բնակիչները, տեղեկանալով այդ մասին, հույսները կտրեցին իրենց բախտից. կեսգիշերին նրանք լքեցին քաղաքը և փախան Ժայու: Այդպես վարվեցին և մյուս բարբարոսները,

նրանք բոլորը լրեցին իրենց քաղաքները և փախան դեպի այդ ժայ-
ուր, որն այդ երկրում անվանում էին Ահորն: Այն այդ երկրում մեծ
հուշակ էր վայելում. պատմում էին, որ այն չի հվաճել նույնիսկ
Հերակլեսը՝ Զևսի որդին: (2) Արդու՞ք Հերակլեսը եկել է հնդկի-
ների մոտ և որ Հերակլեսի մասին է խոսքը՝ թեբեակա՞ն, այդուր-
սակա՞ն թե եգիպտական, ես ո՛չ հաստատում եմ և ո՛չ ժբխ-
տում: Ավելի շուտ կարծում եմ, որ ոչ ոք էլ չի եկել, բայց մարդիկ
հակված են չափազանցնելու որևէ բարդ գործի դժվարությունը
և հեթաթեոսներ պատմելու այն մասին, թե այն Հերակլեսի ուժերից
էլ վեր էր: Այս ամբողջ էլ, կարծում եմ, կապում են Հերակլեսի
հետ պարզապես պարծենկոտությունից: (3) Նրա շրջագիծն, ասում
են, առնվազն 200 ասպարեզ է. ամենացածր տեղում նրա բարձ-
րությունը 11 ասպարեզ է: Դեպի նրա դազաթը տանող միակ ճա-
նապարհը կառուցված է մարդկանց ձեռքերով և չափազանց դժ-
վարին է: Ժայռի վերևում աղբյուր կա, այն առատորեն մաքուր
ջուր է տալիս. կա անտառ ու հիանալի արոտավայր, որը մշակե-
լու դեպքում կարելի է հազարավոր մարդկանց կերակրել:

(4) Երբ Ալեքսանդրն իմացավ այդ բոլորը, շատ ցանկացավ
գրավել այդ լեռը, առավել ևս, որ այն փառաբանված էր Հերակ-
լեսի մասին ավանդազրույցներով: Օրան և Մասսադամը նա դարձ-
րեց ամբացված կետեր երկիրը հսկելու համար. (5) Բաղիրա
քաղաքը ամբապնդեց: Հեփեստիոնեսն ու Պերդիկոսը նրա համար
մի ուրիշ քաղաք կառուցեցին (այն անվանեցին Օրոբատիդա),
կայազոր թողեցին այնտեղ և գնացին դեպի Ինդոս գետը: Գալով
այդտեղ, նրանք արեցին ամեն ինչ, ինչ հրամայել էր Ալեքսանդ-
րը Ինդոս գետի վրայով կամուրջ ձցելու կապակցությամբ:

(6) Ալեքսանդրն Ինդոս գետի այս կողմի երկրների սատրապ
նշանակեց Նեփանդրոսին՝ «բնկերներից» մեկին: Իսկ ինքը սկզբում
գնաց դեպի Ինդոս. Ինդոսից ոչ հեռու գտնվող Պեկելաոտիդոս քա-
ղաքը կամավոր հանձնվեց նրան. նա կայազոր թողեց այնտեղ,
իսկ կայազորի հրամանատար նշանակեց Փիլիպոսին: Նա նվաճեց
նաև Ինդոսի, ավերին գտնվող ուրիշ փոքրիկ քաղաքներ: Նրան
ուղեկցում էին Կոփեյն ու Ասագետը՝ երկրի իշխանները: (7) Գա-
լով էմբոլիմա քաղաքը (այն գտնվում է Ահորնի կողքին), նա
զորքի մի մասի հետ այնտեղ թողեց Կրատերոսին, որպեսզի քա-
ղաք բերվի հնարավորին չափ շատ պարենամթերք և այն ամենը,
ինչ անհրաժեշտ էր երկար ժամանակ մնալու համար: Մակեդո-
նացիներն այստեղից պետք է գնային ժայռը պաշարելու: Եթե

նրանց միանգամից չգրավեին այն, պետք է երկարատև պաշա-
րանով տանջահար անեին ժայռի պաշտպաններին: (8) Իր հետ
նա վերցրեց նետածիղներին, ազրիանացիներին, Քենոսի գուն-
դը, բոլոր հետևակայիներից ընտրեց ամենաարագաշարժնե-
րին և միաժամանակ լավ զինված մարդկանց, ավելացրեց
նաև երկու հարյուրի չափ հեծյալ «բնկերների» և մոտ հարյուր
հեծյալ նետածիղների և այդ զորքը տարավ դեպի ժայռը: Այդ
նույն օրը նրանք ճամբար խփեցին այն վայրում, որը Ալեքսանդ-
րին համար թվաց, և հաջորդ օրը, մի քիչ էլ մոտենալով ժայռին,
կրկին ճամբար խփեցին:

29

Այստեղ նրա մոտ եկան ինչ-որ տեղաբնակներ, ասացին, որ
հանձնվում են, և խոստացան տանել նրան ժայռի ամենամատչե-
լի տեղը. այդտեղից նրան հեշտ կլինի նվաճել այն: Նա այդ մարդ-
կանց հետ ուղարկեց թիկնապահ Պտղոմեոսին՝ Լազոսի որդուն,
ազրիանացիների, ուրիշ թեթևազենների և լավագույն վահանա-
կիրների հետ, և հրամայեց նրանք, գրավելով այդ տեղը, պահպա-
նել այն ուժեղ ջոկատի օգնությամբ, իսկ իրեն ազդանշան տալ,
որ այդ տեղը իր իշխանությունն է: (2) Պտղոմեոսը շարժվե-
լով չափազանց դժվար, հազիվ անցանելի ճանապարհով, ավելի
շուտ գրավեց այդ տեղը, քան բարբարոսները տեսան նրան: Ամ-
բացնելով այն ցանկապատնեշով և խրամով, նա լեռան վրա հսկա
խարույկ վառեց այն տեղում, որտեղից այն կտեսներ Ալեքսանդ-
րը: Ալեքսանդրը տեսավ բոցը և հաջորդ օրը զորքը տարավ դեպի
ժայռը. բարբարոսները հետ էին մղում հարձակումը, և Ալեքսանդ-
րը ոչինչ չէր կարող անել բնական դժվարությունների պատճա-
ռով: (3) Բարբարոսները, հասկանալով, որ Ալեքսանդրը գրոհի
գնալ չի կարող, շրջվեցին և իրենք հարձակվեցին Պտղոմեոսի ջո-
կատի վրա: Նրանց և մակեդոնացիների միջև դաժան մարտ սկըս-
վեց: Հնդիկներն ամեն կերպ ձգտում էին ցար ու ցրիվ տալ ցան-
կապատնեշը, իսկ Պտղոմեոսը՝ պահել զբաղեցրած տեղը: Բար-
բարոսները նետ արձակելիս հմուտ չէին, և երբ մթնեց, նրանք
նահանջեցին:

(4) Ալեքսանդրը, հնդիկ փախստակներից ընտրելով առա-
վել հուսալի և տեղանքին քաջատեղյակ մեկին, դիշերը նրան
ուղարկեց Պտղոմեոսի մոտ նամակով, որով Ալեքսանդրը հայտ-

նում էր, որ երբ ինքը գրոհի գնա, ապա Պտղոմեոսը ոչ միայն բավարարվի զբաղեցրած տեղի պաշտպանութիւնով, այլև հարվածի բարբարոսներին լեռան վրայից, որպեսզի երկու կողմից հարձակման ենթարկված հնդիկները չիմանան, թե որ կողմ գնան: (5) Ինքն էլ լույսը բացվելուն պես հանեց զորքը ճամբարից և գնաց այն վերելքով, որով աննկատ անցել էր Պտղոմեոսը, հուսալով, որ եթե իրեն հաջողվի միանալ նրան, ապա ամեն ինչ կարգին կլինի (6) Այդպես էլ պատահեց: Մինչև կեսօր դաժան պայքարը շարունակվում էր հնդիկների և մակեդոնացիների միջև, վերջիններս ձգտում էին տիրանալ բարձունքին, մյուսները հարվածում էին բարձրացողներին: Մակեդոնացիները համառորեն գնում էին իրար փոխարինելով: Նրանք, ովքեր վերև էին բարձրացել, հանգրտանում էին: Միայն երեկոյին մոտ նրանք դժվարութեամբ տիրացան անցուղուն և միացան Պտղոմեոսի զորքին: Երբ ողջ զորքը միասին էր, Ալեքսանդրը կրկին տարավ այն դեպի ժայռը, բայց գրավել այն հնարավոր չեղավ. զբաղում էլ օրն ավարտվեց: (7) Լուսաբացին նա ամեն մի զինվորի հրամայեց կտրտել 100-ական ցից: Ցցերը կտրտվեցին, և նա հրամայեց մեծ հողաթումբ սարքել, սկսելով բլրի գագաթից, որտեղ իրենց ճամբարն էր, ընդհուպ մինչև ժայռը: Նա գտնում էր, որ այդ հողաթմբից աղեղներից ու մերենաներից արձակված նետերը կղիպչեն ամբողջի պաշտպաններին: Բոլորը զործի անցան: Ինքն էլ անձամբ ներկա էր. գտվեստի խոսքեր էր ասում ջանասիրութեամբ աշխատողներին և տեղն ու տեղը պատժում զուխ պահողներին:

30

Առաջին օրը զորքը մեկ ասպարեղ երկարութեամբ հողաթումբ սարքեց: Հաջորդ օրը պարսպապատերների քարերն ու մերենաներից արձակվող նետերը (սրանք արդեն հողաթմբի վրա էին) հեռ էին ըշում հնդիկներին, որոնք արտագրոհներ էին կազմակերպում և հարձակվում հողաթմբի վրայի աշխատողների վրա: Հողը լցրեցին երեք օր անընդմեջ. շորրորդ օրը մակեդոնացիների մի փոքր խմբի հաջողվեց գրավել մի բլուր՝ փոքրիկ բլուր, բայց ժայռին հավասար բարձրութեամբ: Ալեքսանդրը շարունակում էր անխոնջ կատուցել հողաթումբը, մտադրութեամբ ունենալով միացնել այն բլրին, որը արդեն գրավված էր իր մի բուռ զինվորների կողմից:

(2) Հնդիկները բլուրը գրաված մակեդոնացիներին չսոված բա-

սաթումբից ցնցված ու տեսնելով արդեն մեծացող հողաթումբը, շաղարկեցին պաշտպանվել և մոմենտիկ ուղարկեցին Ալեքսանդրի մոտ՝ ասելու, որ իրենք կհանձնեն ժայռը, եթե նա իրենց հետ բանակցութեւններ սկսի: Իսկ նրանց մտադրութեւնն այն էր, որ բանակցութեւններին սպասելով ձգձգեն օրը և գիշերվա բնագրում ցրվեն իրենց հայրենի վայրերը: (3) Ալեքսանդրին հայտնեց զարձալ դա. նա ժամանակ տվեց նրանց հեռանալու և հանեց ամենուր դրված պահակախմբերը: Ինքն էլ տեղից շարժվեց, մինչև բարբարոսները չսկսեցին հեռանալ: Այնուհետև վերցնելով յոթ հարյուրի չափ թիկնապահներ ու վահանակիրներ, նա առաջինը բարձրացավ լքված ժայռը. մակեդոնացիները պարանեկերով վեր բաշխելով միմյանց՝ տարբեր տեղերից վեր բարձրացան: (4) Ազգանշանի համաձայն նրանք հարձակվեցին հեռացող բարբարոսների վրա. փախչողներից շատերին սպանեցին, ուրիշները սարսափահար ցած էին նետում զառիթափ տեղերից և զոհվում: Ալեքսանդրը տիրացավ ժայռին, որի վրա շէր կարողացել բարձրանալ Հերակլեսը: Նա զոհ մատուցեց այստեղ, ամբողջ կայրդի բերեց և կայազոր թողեց, որի հրամանատարութեւնը հանձնարարեց Միսիկոսին, որը վաղուց էր փախել Հնդկաստանից Բակտրա՝ Բեսի մոտ. իսկ երբ Ալեքսանդրը գրավեց բակտրիական երկիրը, նա անցավ նրա կողմը, և պարզվեց, որ չափազանց հավատարիմ մարդ է:

(5) Հեռանալով ժայռից, Ալեքսանդրը ներխուժեց ասպիեններին երկիրը: Նրան հայտնեցին, որ Ասակենի եզրայրը փղերով և շրջակա բազմաթիվ բարբարոսների հետ փախել է այստեղի լեռները: Գալով Գիրտու բաղաջը, նա մարդ չգտավ ոչ քաղաքում, ոչ էլ շրջակա գյուղական տեղանքում: Հաջորդ օրը նա առաջ ուղարկեց Նեաբոսին և Անտիոքոսին՝ վահանակիրների թիվարքոսներին: (6) Նեաբոսին նա հանձնարարեց առաջնորդել թիկնազուն ազդեցիկներին, իսկ Անտիոքոսին՝ նրա թիվարքիաներն ու ևս երկու ուրիշը: Նրանց ուղարկեցին զննելու տեղանքը և եթե պատահի, ապա բարբարոսներ բռնեն և հարցաքննեն նրանց այդ երկրի մասին. նա հատկապես ցանկանում էր տեղեկութեւններ ստանալ փղերի մասին:

(7) Իսկ ինքը ուղևորվեց զԵպի Ինդոս. զորքը գնում էր առջևից և ճանապարհ բացում, քանի որ ուրիշ կերպ այդ տեղերով անցնելն անհնար էր: Այնտեղ նա մի քանի բարբարոսներ բռնեց և իմացավ նրանցից, որ այդ վայրերում բնակվող հնդիկները փախել են

Արխարի մօտ, իսկ փղերին թողել են Քնզոսի ափին արածելու։
Նա հրամայեց ցույց տալ իրեն ճանապարհը, որը տանում էր գե-
պի այդ փղերը։ (8) Շատ հնդիկներ փղերի որսորդներ են։ Ալեք-
սանդրը հաճույքով իր մօտ վերցրեց դրանց և զնաց նրանց հետ
փղեր որսալու։ Երկու փիղ սատկեցին, իրենց հետապնդողներին
խույս տալու համար զոտիթափից ընկնելով, մնացածներին բըռ-
նեցին, նստեցին նրանց վրա և բշեցին դեպի զորքը։ (9) Գետա-
փին նա գտավ նաև շինարարական անտառափայտ. զինվորները
կտրեցին այն։ Նալներ կառուցեցին և զբանցով նավարկեցին Ին-
դոս գետն ի վար, դեպի կամուրջը, որը վաղուց արդեն նրա հա-
մար կառուցել էին Հեփեստիոնեսն ու Պերդիկուսը։



ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1

Այս երկրում, որն Ալեքսանդրն անցավ Կոթեն և Ինդոս գե-
տերի մեջտեղով, ասում են, հիմնադրված է և Նիսա քաղաքը։
այն հիմնադրել է Գիոնիսոսը։ Պատմում են, որ Գիոնիսոսը հըն-
դիկներին հպատակեցնելուց հետո է հիմնադրել Նիսան։ Ո՞վ է
եղել այդ Գիոնիսոսը, երբ և որտեղից է գնացել և կովել հնդիկ-
ների դեմ։ (2) Ես անկարող եմ պատկերացնել, որ թեբեացի Գիո-
նիսոսը Թեբեից կամ լիդիական Թմոլից գոյրբով գնացել է հնդիկ-
ների դեմ, որ անցել է այդքան ուղիտեղ և այն ժամանակ
հելլեններին անհայտ ժողովուրդների միջով և նվաճել է միայն
հնդիկներին։ Ասենք, անհրաժեշտ էլ չէ չափազանց ճշգրիտ հե-
տազոտության ենթարկել աստվածների մասին հին ավանդու-
ղությունները։ Եթե դրանք չափենք իրադարձությունների բնական
ընթացքով, ապա դրանք անհավատարի են, իսկ եթե ենթադրենք,
որ առկա է աստվածային ուժի միջամտությունը, ապա դրանք
մինչև որոշակի աստիճան հավանական կթվան։

(3) Երբ Ալեքսանդրը մոտեցավ Նիսային, նիսացիները նրան
ընդառաջ ուղարկեցին Ակութիս անունով իրենց կառավարին և
նրա հետ 30 ամենաազնվազարմ քաղաքացիներից բաղկացած
զեսպանություն՝ Ալեքսանդրին խնդրելու, որ նա քաղաքը թողնի
աստծու ողորմածությունը։ (4) Մտնելով Ալեքսանդրի վրանը,
զեսպանները տեսան, որ նա նստած է՝ ճանապարհից ամբողջո-
վին փոշոտ. նա դեռ դրահն էլ չէր հանել, դիխին սաղավարտն էր,
իսկ ձեռքով նիզակն էր բռնել։ Նրա աեսքից վախեցած, նրանք

գնահին ընկան և երկար ժամանակ լռում էին: Ալեքսանդրը ուրիշ բարձրացրեց նրանց, հրամայեց խաղաղվել, և այդ ժամանակ նկուֆիսը հետևյալ ճառը սկսեց. (5) Վերքա, նիսացիները խնդրում են քեզ հանուն Գիոնիսոսի թողնել իրենց ազատ և անկախ: Գիոնիսոսը, հնազանդեցնելով հնդիկներին, հետ վերադարձավ դեպի հելլենական ծով, իսկ իր գինավորների համար, որոնք արդեն պիտանի չէին գինավորական ծառայության համար (նրանք միաժամանակ նրա բաթոսներն էին), հիմնեց այս քաղաքը, որպեսզի գալիք սերունդներին այն հիշեցնի իր ճամփորդությունների ու հաղթանակի մասին: Չէ՞ որ դու էլ մի Ալեքսանդրիա հիմնեցիր Կովկաս լեռան մոտ, իսկ ուրիշը՝ եգիպտական հողի վրա. շատ ուրիշներն էլ արդեն հիմնել են և դեռ կհիմնեն ժամանակի ընթացքում, բանի որ դու ավելի մեծ գործեր են կատարել, քան Գիոնիսոսը: (6) Իսկ այս քաղաքը Գիոնիսոսն անվանել է Նիսա, իսկ երկիրը՝ նիսայական, իր ծծմոր՝ նիսայի անունով: Իսկ քաղաքի մոտ գտնվող լեռը նա անվանել է Մերոս, որովհետև, ըստ ավանդության, նրան իր ազդրի մեջ կրել է Ջևար: Այդ ժամանակներից ի վեր Նիսան ազատ քաղաք է. մենք անկախություն ենք վայելում. մեր քաղաքում կարգուկանոն և բարեվայելություն է տիրում: Ահա քեզ մեկ ապացույց ևս այն բանի, որ քաղաքը ստեղծել է Գիոնիսոսը. հնդկական երկրում ոչ մի տեղ բազեղ չկա. այն աճում է միայն մեզ մոտ».

2

Ալեքսանդրին հաճելի էր այս ամենը լսելը. նա ցանկանում էր, որ Գիոնիսոսի ճամփորդությունների մասին եղած ավանդազրույցները ճշմարիտ դուրս գան. ցանկալի էր, որպեսզի Նիսան իսկապես Գիոնիսոսի ստեղծածը լիներ. չէ որ այնպես կատաղվեր, որ ինքն արդեն եկել է այն վայրը, ուր հասել է Գիոնիսոսը, և դեռ ավելի հետև կգնա, քան Գիոնիսոսը, և, մակեդոնացիները, մրցելով քաղաքացիություններով Գիոնիսոսի հետ, չեն հրամարվի, իհարկե, առաջիկայում ևս մասնակից դառնալ իր գործերին: (2) Նա Նիսայի բնակիչներին ազատություն ու անկախություն շնորհեց. ծառայացավ նրանց օրենքներին: Տեղեկանալով, որ քաղաքը դեկավարում են լավագույն այրերը, հավանություն տվեց դրան և պահանջեց, որ իրեն ուղարկեն 300 հեծյալ, իսկ ավագանիներից (նրանք 300-ն էին)՝ 100 լավագույններին Ակուֆիսը, որին նա

նիսայան երկրի հյուպարքոս էր նշանակել, պետք է ընտրեր այդ հարյուրակը: (3) Պատմում են, որ Ակուֆիսը, լսելով այդ հրամանը, ժպտացել է, և Ալեքսանդրը հարցրել է նրան, թե ինչի՞ վրա է ծիծաղում: «Արքա,— պատասխանել է Ակուֆիսը,— կարո՞ղ է արդյոք հարյուր լավագույն քաղաքացիներ կորցրած քաղաքը պահպանել բարովոր կառավարում: Եթե դու մտածում ես նիսացիների մասին, ապա վերցրու քեզ հետ 300 հեծյալ. իսկ եթե հաճենաս՝ վերցրու ավելին. հարյուր առաջնակարգ մարդկանց փոխարեն էլ, որոնց դու հրամայել ես ընտրել, վերցրու երկու անգամ ավելի շատ հասարակ մարդ, որպեսզի քո վերադարձին մեր քաղաքը գտնես այնպիսի կարգուկանոնի ու բարեվայելության մեջ, ինչպիսին այն հիմա է»: (4) Այս խոսքերը, իսկ դրանք խիլամիտ էին, համոզեցին Ալեքսանդրին: Նա հրամայեց իրեն հեծյալներ ուղարկել, բայց ո՞չ ընտրյալների հարյուրակ պահանջեց, ոչ էլ նրանց փոխարինողներ: Ակուֆիսը իր որդուն և իր դստեր սրդուն ուղարկեց արքայի մոտ:

(5) Ալեքսանդրը շատ ցանկացավ տեսնել այն վայրը, որտեղ, ինչպես հպարտորեն հայտարարում էին նիսացիները, ամեն ինչ հիշեցնում էր Գիոնիսոսի մասին: Հեծյալ «ընկերների» ու հետևակի աղեմոսի հետ նա բարձրացավ Մերոս լեռը և տեսավ, որ լեռը ամբողջովին ծածկված է բաղեղով, դափնիներով և այլազան ծառերով, որոնք խիտ սավեր էին դրոմ. այդտեղ կային նաև տարբեր գաղաններ: (6) Մակեդոնացիները երջանկությամբ նայում էին վաղուց շտեսած բաղեղներին (հնդիկների երկրում բաղեղ չկա նույնիսկ այն տեղերում, ուր խաղող է աճում). նրանք ջանասիրությամբ սկսեցին բաղեղից պսակներ հյուսել և անմիջապես զարդարել իրենց և գովերգել Գիոնիսոսին, նրան կոչելով անունով և տարբեր մականուններ շնորհելով: Ալեքսանդրը հենց տեղում զոհ մատուցեց Գիոնիսոսին, և սկսեց ընկերներով կերտվում անել: (7) Ոմանք հայտնում են (եթե միայն հնարավոր է դրան հավատալ), որ նրա հետ եղած հարգարժան մակեդոնացիներից շատերը համակվել էին Գիոնիսոսով, պսակավորելով իրենց, նրանք դիմել են նրան, երգել են «էփոն» և բազումների նման են իրենց պահել:

Այս բանին ով ուզում է թող հավատա, իսկ ով չի ուզում
 Բեդ շահաւաւս Ինչ վերաբերում է ինձ, ապա ես ամեն ինչում
 չէ, որ համաձայն եմ կիրենցի էրատոսթենեսի հետ, ըստ որի,
 մակեդոնացիների պատմածներն աստվածների գործերի մասին
 միայն նպատակ են ունեցել սիրաշահելու Ալեքսանդրին և շա-
 փից ավելի մեծարելու նրան: (2) Նա պատմում է, որ մակեդո-
 նացիները պարապամիտադների երկրում, օրինակ, գտել են մ/
 քարանձավ, որի մասին լսել են տեղական ավանդազրույց (իսկ
 կարող է պատահել նաև, որ ավանդազրույցն իրենք են հնարել և
 տարածել), որ դա Պրոմեթևսի քարայրն է, որտեղ նա շղթայ-
 ված է եղել: այստեղ միշտ մի արծիվ է եկել Պրոմեթևսի
 փորոտիքն ուտելու և այստեղ է եկել նաև Հերակլեսը, որը սպա-
 նել է արծիվն և ազատել Պրոմեթևսին կապանքներից: (3) Մա-
 կեդոնացիներն իրենց պատմություններով Կովկաս լեռը Պոն-
 տոսից տեղափոխել են արևելյան շրջանները՝ պարապամիտադ-
 ների երկիրը, հնդիկների մոտ, իսկ Պարապամիս լեռն անվանել
 են Կովկաս, որպեսզի փառաբանեն Ալեքսանդրին: Իբր Ալեք-
 սանդրը անցել է Կովկասով: (4) Հնդկական երկրում տեսնելով
 լախտով խարանդորշմված կովերի, նրանք դա ապացույց հա-
 մարեցին այն բանի, որ Հերակլեսը եղել է հնդիկների մոտ:
 էրատոսթենեսը Դիոնիսոսի ճամփորդությունների մասին եղած
 նման պատմություններին նույնպես վերաբերվում է թերահա-
 վատություններ: Ես այդ պատմություններով չեմ դբաղվի:

(5) Երբ Ալեքսանդրը մոտեցավ Ինդոս գետին, նա տեսավ
 Հեփեստոսների արդեն կառուցած կամուրջը, երկու երեսնաթի
 նալ և բազմաթիվ ավելի փոքր նավեր: Հնդիկ Տաքսիլից բնիաներ
 եկան՝ 200 տաղանդ արծաթ, 3000 մորթի պիտանի եղներ,
 10 000-ից ավելի ուխար և 30 փիղ: (6) Տաքսիլից նրան որպես
 օգնություն եկան և 700 հեծյալ հնդիկներ: Նրան հայտնեցին, որ
 Տաքսիլն իրեն է հանձնում Տաքսիլ քաղաքը, որն ամենամեծն էր
 Ինդոսի և Հիդասպի միջև ընկած տարածքում: Ալեքսանդրը աստ-
 վածներին զոհեր մատուցեց, ըստ իր սովորության, և գետի մոտ
 հեծելազորի և մարմնամարզական մրցումներ կազմակերպեց:
 Գետանցից առաջ արած զոհաբերությունները բարենպաստ եղան:

Այն մասին, որ Ինդոսը, բացի Գանգեսից (սա նույնպես հընդ-
 կական գետ է) ասիական և եվրոպական գետերից ամենամեծն
 է, որ նրա ափունքները գտնվում են Պարապամիս կամ Կովկաս
 լեռից այս կողմ, որ այն թափվում է դեպի հարավ ընկած Մեծ
 Հնդկական ծովը, որ այն երկու գետաբերան ունի և երկուսն էլ,
 ծովը թափվելիս, տղմոտ են և ծանծաղ՝ նման Խստրոսի հինգ
 գետաբերաններին, որ Ինդոսը եզիպտականի նման հնդկական
 հողում դեկտա է առաջացնում, և այն հնդիկների լեզվով կոչ-
 վում է Պատալա, Ինդոսի մասին եղած այս լիովին հավաստի
 տեղեկություններով էլ կահամանափակվեմ և ես: (2) Հիդասպը,
 Ակեսինը, Հիդրատոն ու Հիփասը նույնպես հնդկական գետեր
 են: Նրանք իրենց մեծությամբ զգալիորեն գերազանցում են
 Ասիայի մյուս գետերին, սակայն դրանք փոքր են, անհամեմատ
 ավելի փոքր են Ինդոսից, այնքանով, որքանով Ինդոսը փոքր է
 Գանգեսից: Կտեզիոսը (եթե կարելի է վկայակոչել և Կտեզիոսին)
 գրում է, որ Ինդոսի ափերը նրա ամենանեղ մասում իրարից
 հեռու են 40 ասպարեզ, իսկ ամենալայն մասում՝ 100: Իսկ նրա
 սովորական լայնությունը այդ երկու թվերի միջինն է:

(3) Այդ Ինդոսը Ալեքսանդրը զորքով հատեց լուսաբացին և
 սաք դրեց հնդիկների երկիրը: Իմ այս աշխատանքում ես ոչինչ
 չեմ գրում նրանց օրենքների մասին, համաձայն որոնց նրանք
 ապրում են, չեմ գրում ո՛չ այդ երկրում բնակվող արտասովոր
 կենդանիների մասին, ո՛չ ձկների ու հրեշների մասին, որոնք
 ապրում են Ինդոսում, Հիդասպում, Գանգեսում և հնդկական
 մյուս գետերում: չեմ գրում հնդիկների համար ոսկի հայթայթող
 մրջյունների մասին, ոչ էլ այդ ոսկին պահպանող անդրերի մա-
 սին: Այդ բոլորը բարբազանքներ են, որոնք ավելի շուտ զվար-
 ճանքի համար են հորինված, քան իրականության ճշմարիտ
 նկարագրություն են, ինչպես նաև հնդիկների մասին անհեթեթ
 ալլ հեթաթները, որոնք որևէ մեկը ո՛չ կուսումնասիրի, ո՛չ էլ
 կհերքի: (4) Ալեքսանդրը և նրանք, ովքեր կովել են նրա հետ,
 հեքքել են դրանցից շատերը, բացի նրանցից, որ իրենք են հորի-
 նել: Նրանք պարզել են, որ հնդիկները՝ զոնե նրանք, ում հասել է
 Ալեքսանդրը իր զորքով, իսկ նա շատերին է հասել, ընդհանրա-
 պես ոսկի շունեն, և կյանքն էլ նրանց շքեղ չէ: Նրանք չափազանց
 բարձրահասակ են՝ շատերը հինգ կանգուն կամ մի քիչ պակաս

հասակ ունեն (Ասիայում դրանք ամենաբարձրահասակ մարդիկ են): Նրանք բոլոր մարդկանցից ամենասն են, բացի եթովպացիներից, և, այն ժամանակվա ասիարնակներից ամենաազմատենչն ու վնահանձնը: (5) Ադնվորեն ասած, ես հնդիկներին չէի համեմատի Նույնիսկ հին պարսիկների հետ, որոնց օգնութեամբ Կուրբուր՝ Կամբիզի որդին, մարերից խլեց Ասիայի իշխանութունը, իսկ մնացած ժողովուրդների մի մասին նվաճեց, իսկ մի մասին էլ ենթարկեց իրեն նրանց իսկ համաձայնությամբ: Այն ժամանակ պարսիկներն աղքատ էին, ապրում էին խստաշունչ վայրերում, և նրանց սովորույթները շատ էին հիշեցնում լակոնական օրենքները: Եվ սկյութական երկրում պարսիկների կրած պարտութունը, ճիշտն ասած, չգիտեմ, թե ինչպես բացատրեմ. տեղանքի բարդութեամբ, Կուրբուրի թույլ տված ինչոր սխալում, կամ նրանով, որ սկյութներն ալելի՛՛ լավ ուզմիկներ դուրս եկան, քան պարսիկները:

5

Հնդիկների մասին, ի միջի այլոց, ես հատկապես կգրեմ. ես կհավաքեմ ամենահավաստին այն մարդկանց պատմություններից, ովքեր կռվել են Ալեքսանդրի հետ. նեարքոսի մոտ, որը շրջանցել է Մեծ Հնդկական ծովը, երկու հիշարժան այրերի՝ էրատոսթենեսի և Մեգասթենեսի նկարագրություններում, և կպատմեմ հնդիկների սովորույթների մասին, տարօրինակ կենդանիների մասին, որոնք այստեղ են բնակվում, և Արտաքին ծովով կատարած բուն ճանապարհորդությունների մասին: (2) Այժմ ես կգրեմ միայն այն մասին, որն, իմ կարծիքով, բավարար կերպով կբացատրի Ալեքսանդրի զործողությունները:

Տավրոս լեռը կիսում է Ասիան. այն սկիզբ է առնում Սամոս կղզու գիմաց գտնվող Միկալե հրվանդանից, կտրում անցնում Պամփիլիան ու Կիլիկիան, այնտեղից հասնում մինչև Հայաստան, իսկ Հայաստանից էլ գնում դեպի Մարաստան՝ պարթևների և խորասմների երկրների երկայնքով. (3) Բակտրիայում այն ձուլվում է Պարապամիս լեռան հետ, որին մակեդոնացիները, Ալեքսանդրի զինվորները անվանում էին Կովկաս, որպեսզի, ինչպես ասում են, մեծարեն Ալեքսանդրին: Այդ դեպքում կատարվեր, որ Ալեքսանդրը նվաճել է նաև Կովկասի մյուս կողմում գտնվող երկրները: Այնուհանդերձ, կարող է պատահել, որ այդ

լեռը սկյութական Կովկասի անմիջական շարունակությունն է, ինչպես որ Տավրոսն էր նրա շարունակությունը: Այդ պատճառով էլ ես սկզբում էլ այդ լեռը Կովկաս անվանեցի և հետագայում էլ այն այդպես եմ անվանելու: (4) Այդ Կովկասը ձգվում է շինչև Մեծ Հնդկական ծովը, որն ընկած է արևելքում: Ասիայի հիշարժան գետերը սկիզբ են առնում Տավրոսից կամ Կովկասից, նրանցից ոմանք հոսում են թերթվելով դեպի հյուսիս և թափվում են՝ մի քանիսը Մեոտիս լիճը, իսկ մի քանիսն էլ այսպես կոչված Վրկանաց ծովը, իսկ այն Մեծ ծովի ծովածոցն է: (5) Մյուսները հոսում են դեպի հարավ. դրանք են Եփրատը, Տիգրիսը, Ինդոսը, Հիդասպը, Ակեսիսը, Հիդրատը, Հրիասը և այլ գետեր, որոնք գտնվում են սրանց և Գանգեսի միջև, որոնք նույնպես թափվում են ծովը կամ ծանծաղուտ դառնում, ճահճանում և անհետանում, ինչպես անհետանում է Եփրատը:

6

Ուսումնասիրելով Ասիայի տեղանքը, մենք տեսնում ենք, որ Տավրոսն ու Կովկասը այն կտրում են արևմուտքից դեպի արևելք, իսկ Տավրոսը բաժանում է այն երկու չափազանց մեծ մասերի՝ մեկը մինչև կեսօրվա արևը գտնվում է այն կողմում, որտեղից նոտոսն է փչում, մյուսը ուղղված է դեպի հյուսիս, որտեղից բորեասն է փչում:

(2) Հարավային Ասիան բաժանված է չորս մասի և այդ մասերից ամենամեծն էլ հնդիկների երկիրն է: Այդպես են պնդում էրատոսթենեսն ու Մեգասթենեսը, որը կենում էր Արաքոսիայի սատրապ Սիրիերտի մոտ և, ըստ նրա, հաճախ էր լինում հրեղեկական արքա Սանդրակոտի մոտ: Այդ մասերից ամենափոքրը գտնվում է Եփրատի և մեր ներքին ծովի միջև: Մնացած երկուսը գտնվում են Եփրատի և Ինդոսի միջև և նույնիսկ երկուսը միասին չեն կարող հավասարվել հնդիկների երկրին: (3) Հնդկական երկրի սահմաններն են՝ արևելքից ու հարավից Մեծ ծովը, հյուսիսից՝ Կովկաս լեռը՝ ընդհուպ մինչև այն վայրը, որտեղ այն միանում է Տավրոսին, արևմուտքից և այն կողմից, որտեղից փչում է յապիգոսը, ընդհուպ մինչև Մեծ ծովը, Ինդոս գետը: (4) Երկրի զգալի մասը զբաղեցնում է հարթավայրը, որն, ինչպես ենթադրում են, ստեղծվել է գետի ողողատներից: Ասիայի մյուս

տեղերում էլ ծովի մոտակայքում կան գետերի ստեղծած բա-
մաթիւմ հարթավայրեր: Եվ վաղնջական ժամանակներից նրանք
անվանվել են գետերի անուններով: Կա, օրիակ, Հերմոսի հար-
թավայր (Հերմոս գետը սկիզբ է առնում Մայր Դինդիմենա լե-
ռից, Զմյուռնիա քաղաքի մոտ, և թափվում է ուլական ծովը): Լի-
դիայում կա Կախտր անունով հարթավայր, որը կոչված է լի-
դիական այդ գետի անունով: Միսիայում՝ Կաիկա դաշտավայր.
Կարիայում՝ Ընդհուպ մինչև հունական Միլետ քաղաքը, ձգվում է
Մեանդրոս գետի դաշտավայրը: (5) Իսկ Եգիպտոսը պատմագիր-
ներ Հերոդոտոսը և Հեկատեոսն (հնարավոր է, ի դեպ, որ եգիպ-
տական երկրի պատմութունը պատկանում է ոչ թե Հեկատեոսին,
այլ մի ինչ-որ ուրիշի) անվանում են գետի պարզև, և Հերոդոտո-
սը համոզիչ ապացույցներ է բերել հաստատելու այն միտքը, որ
այդ երկիրն անվանվել է գետի անունով: Հնում Եգիպտոս անու-
նը կրել է գետը, որն այժմ թե՛ եգիպտացիները, թե՛ օտարերկ-
րացիներն անվանում են Նեղոս. սա պարզորոշ հավաստիաց-
ված է Հոմերոսի կողմից, որն ասում է, որ Մենելայոսը կանգ-
նեցրել է իր նավերը Եգիպտոսի գետաբերանին: (6) Եվ եթե մի
գետ, և այն էլ ոչ մեծերից, ի վիճակի է իր վերին հոսանքներից
ծովը թափել այդքան հող, իր ակունքներից սկսած, բերելով
տիղմ և ցեխ, ապա կասկած չկա, որ հեղիական երկիրը իր զգա-
լի մասով գետային ողողատներից ստեղծված հարթավայր է: (7)
Ո՛չ Հերմոսը, ո՛չ Կախտրը, ո՛չ Կաիկը, ո՛չ Մեանդրոսը, ո՛չ էլ
Մեծ ծովը թափվող ասիական բազմաթիվ այլ գետեր չեն կարող,
եթե նույնիսկ նրանց միացնենք, ջրի առատութամբ համեմատ-
վել հնդկական որևէ գետի հետ, էլ չենք ասում մեծ Գանգեսի մա-
սին, որի հետ չի կարելի համեմատել ո՛չ Նեղոսը՝ Եգիպտոսում,
ո՛չ էլ Իստրոսը՝ Եվրոպայում: (8) Եվ Ինդոսին էլ նրանք բոլորը
միասին վերցրած հավասար չեն լինի. դա արդեն ակունքներից
սկսած մեծ գետ է. իր մեջ քնդգրկելով տասնհինգ գետեր, որոնք
բոլորն էլ ավելի մեծ են մյուս ասիական գետերից, իր անունը
տալով ողջ երկրին, այն թափվում է ծովը: Այժմ բավական է
հնդկական երկրի մասին ասվածը. մնացածը ևս թողնում եմ
Հնդկաստանի մասին երկասիրության համար:

Այն մասին, թե ինչպես է Ալեքսանդրի համար կամուրջ կա-
ռուցվել Ինդոսի վրայով, չեն պատմում ո՛չ Արիստորուսը, ո՛չ
էլ Պտղոմեոսը, որոնց ես հիմնականում հետևում եմ: Եվ ես հիմք
չունեմ հաստատելու, որ այստեղ կամուրջը կառուցվել է նա-
վերի վրա, ինչպես դա արել է Քսերքսեսը Հելլեսպոնտոսում և
Բոսֆորում ու Իստրոսում՝ Գարեհը, կամ էլ մշտական կամուրջ է
կառուցվել գետի վրա: Ես կարծում եմ, որ ավելի հավանական է,
որ կամուրջը պատրաստել են նավերի վրա. գետի խորութունը
գծվար թե թույլ տար իսկական կամուրջ գցել, և չի կարելի են-
թադրել, որ այդպիսի գործը հնարավոր լիներ իրագործել այդ-
քան կարճ ժամանակում: (2) Եթե կամուրջը գցել են նավերի
վրայով, ապա ինձ անհայտ է, արդյո՞ք նրանք բավարարվել են
նրանով, որ մի շարք կաղնած խարիսխ գցած նավերը կապել
են ճոպաններով, ինչպես, ըստ Հերոդոտոսի, դա արվել է Հելլես-
պոնտոսում, թե կամուրջն այն ձևով են սարքել, որից, անհրա-
ժեշտության դեպքում, օգտվում են հոռոկացիները Իստրոսում,
կելտական Հոննոսում, Եփրատում կամ Տիգրիսում: (3) Հոռոկա-
ցիների կամուրջների գցման, ինձ հայտնի, ամենաբարձր մի-
ջոցը նավերի վրայով կամուրջ գցելն է. ես այժմ կպատմեմ, թե
ինչպես է դա արվում, քանի որ այն արժանի է հիշատակման: Ազ-
դանշանի համաձայն նրանք նավերը բաց են թողնում հոսանքն ի
վար, բայց ոչ թե նավաթիվ առաջ, այլ նավախելով: Նավերը,
քեականաբար, ըշվում են հոսանքով, բայց ոչ մեծ թիկերով դե-
կավարվող նավակները զսպում են նրանց և թույլ չեն տալիս հե-
ռանալու նշված տեղից: Այդտեղ, ամեն մի նավի թթամասից ջու-
րեն են իջեցնում ուռնու ճյուղերից հյուսված, քարերով լիքը բըր-
գածև դամբուղներ. այդ ծանրութունը թույլ չի տալիս, որ հոսան-
քը թշի տանի նավը: (4) Հենց որ առաջին նավը հաստատուն կանգ-
նում է իր տեղում, կանգնեցնում են նաև մյուսը՝ թթով դեպի հո-
սանքը, առաջինից այնպիսի հեռավորության վրա, որը համապա-
տասխանում է վրան դրված ծանրության ուժին: Երկու նավերի
վրա արագ ուղիղ գծով դերաններ են դնում և շեղակի կապում
զրանք տախտակներով: Այդպիսի աշխատանք տարվում է բոլոր
նավերի վրա, որոնք անհրաժեշտ են գետանցի սարքավորման հա-
մար: (5) Այդպիսի կամրջի երկու կողմերից դնում են ամուր բազ-
րիքներ, որպեսզի ձիերն ու սալներն անցումը կատարեն լիովին

հանգիստ և որպեսզի կամուրջը ավելի ամուր կապված լինի: Այդ ամենն ավարտվում է շահազանց արագ, և, շնայած աղմուկ աղաղակին, աշխատանքում կարգ ու կանոն է պահպանվում: Պատահում է, որ ամեն մի նավից լավում են բաշխված ման խոսքեր և կուտանք է թափվում հետ մնացողների գլխին, բայց դա չի խանգարում ո՛չ հրամանների կատարմանը, ո՛չ էլ մեծ եռանդով աշխատելուն:

8

Հոռմեացիների մոտ այդպիսի կարգ ու կանոն վաղուց գոյություն ունի: Թե ինչ եղանակով են Ալեքսանդրի զինվորները կամուրջ գցել Ինդոսի վրայով, ես չեմ կարող ասել, և նրանք, ովքեր նրա հետ կովել են կողք կողքի, նույնպես ոչինչ չեն պատմել այդ մասին: Ինձ թվում է, թե կամուրջը գցել են համարյա նույն եղանակով, իսկ եթե ուրիշ կերպ, ապա ես արդեն ասելիք չունեմ:

(2) Անցնելով Ինդոսը, Ալեքսանդրը այստեղ էլ մատուցեց սահմանված զոհերը: Ինդոսից նա ուղևորվեց դեպի Տաքսիլ՝ մեծ ու հարուստ քաղաքը, ամենամեծը՝ Ինդոսի և Հիդասպի միջև: Տաքսիլը՝ քաղաքի իշխանը, և այնտեղի հնդիկները նրան բարեկամաբար ընդունեցին: Ալեքսանդրը նրանց տվեց շրջակայքի այնքան հողեր, ինչքան նրանք ցանկացան: (3) Նրա մոտ այնտեղ դեսպաններ եկան նաև լեռնային հնդիկների արքա Արիտարի կողմից՝ Արիտարի եղբայրը և նրա հետ ամենաանվանի մարդիկ. ընծաներով դեսպաններ եկան նաև նոմարքոս Գորսարևոսի կողմից: Ալեքսանդրը Տաքսիլում կրկին սահմանված զոհերը մատուցեց և կազմակերպեց մարմնամարզական և հեծելազորի մրցումներ: Այդտեղի հնդիկների սատրապ նա նշանակեց Փիլիսոսին՝ Մաքաթայի որդուն: Տաքսիլում կայազոր ու զինվորներ թողեց, որոնք հիվանդություն պատճառով պիտանի չէին զինվորական ծառայության համար, իսկ ինքը շարժվեց դեպի Հիդասպ գետը:

(4) Նրան հայտնեցին, որ Հիդասպի այն կողմում իր ողջ զորքով կանգնած է Պորը, որը որոշել է թույլ շտալ Ալեքսանդրին անցնել գետը կամ էլ հարձակվել նրա վրա գետանցի ժամանակ: Տեղեկանալով այդ մասին, Ալեքսանդրը Քենոսին՝ Պոլեմոկրատոսի որդուն ուղարկեց հետ դեպի Ինդոս, հրաման տալով քանդել Ինդոս գետն անցնելու համար պատրաստված նավերը և բերել զրանք Հիդասպ: (5) Նավերը քանդվեցին և տեղափոխվեցին. ավել-

չե փոքրերը երկու մասի բաժանվեցին, իսկ երեսունթիանոց նավերը՝ երեք մասի: Այդ մասերը տեղափոխվեցին ձիասայլերով բեղձուկ մինչև Հիդասպի ափը. այստեղ դրանք իրար միացվեցին, և որոշ ժամանակ անց Հիդասպի վրա նավատորմ հայտնեցվեց: Իսկ ինքն՝ Ալեքսանդրը, իր հետ վերցնելով զորքը, որի հետ էկել էր Տաքսիլ, և 5000 հնդիկներ, որոնց բերել էին Տաքսիլը և անդական իշխանները, գնաց դեպի Հիդասպ:

9

Ալեքսանդրը ճամբար խփեց Հիդասպի ափին, Պորը հայտնեցվեց հանդիպակաց ափին ողջ զորքով և փզերի ջոկատով: Այն վայրի դիմաց, որտեղ նա տեսավ Ալեքսանդրի ճամբարը, կանգնեց ինքը, որպեսզի աչքի տակ պահի գետանցը, իսկ մյուս տեղերը, որտեղ գետն անցնելը դյուրին էր, պահորդական ջոկատներ ուղարկեց, ամեն մեկը հատուկ հրամանատարի հրամանատարության ներքո: Պորը հույս ուներ նման եղանակով արգելել մակեդոնացիների գետանցը: (2) Տեսնելով այդ, Ալեքսանդրը որոշեց, որ ինքն էլ պետք է իր զինվորներին դասավորի տարբեր ուղղություններով և դրանով Պորին գցի թյուրիմացություն մեջ: Բաժանելով զորքը բազմաթիվ ջոկատների, նա նրանցից մեկի հետ սկսեց մեկ այստեղ, մեկ այնտեղ գնալ երկրով մեկ, ամայացնելով այն որպես թշնամական և միևնույն ժամանակ զննելով, թե գետի որ մասն է առավել հարմար գետանցի համար: Մյուս ջոկատներին նա առաջնորդներ նշանակեց և առաքեց տարբեր ուղղություններով: (3) Ճամբարին հացը մատակարարում էր Հիդասպի այս ափին գտնվող ողջ երկիրը, և Պորին պարզ դարձավ, որ Ալեքսանդրը որոշել է մնալ գետի ափին մինչև այն ժամանակ, երբ ջուրը ձմռանը իջնի և գետանցը հնարավոր դառնա շատ տեղերում: Ալեքսանդրի այս ու այն կողմ անող նավերը, գետանցի համար նախատեսված դարձանով լցված տիկերը, մարդկանցով լիքը ափը՝ մի տեղում հեծյալներ, մի ուրիշ տեղում հետևակալներ, այս ամենը Պորին ոչ մի բուպե հանգիստ չէր տալիս և հարավորություն չէր ստեղծում նախապատրաստել որևէ միջոց, որ նրանք ընտրեին որպես առավել պիտանի տվյալ պահի պաշտպանություն համար: (4) Բացի այդ, տարվա այդ ժամանակ հեղեղական բուրբ գետերը հորդառատ են և նրանց ջուրը շահազանց տղմոտ է և հոսում է սրբնթացորեն. այդ ժամանակ հենց

ամառ էր, արևադարձից հետո Այդ եղանակին հնդկական հողի վրա երկնքից ջրի հեղեղներ են թափվում. Կովկասի ձյունները, որտեղ գտնվում են շատ գետերի աղբյուրները, հալվում են և շափազանց բարձրացնում ջրի մակարդակը: Ձմռանը ջուրը կրկին իջնում է և մաքրվում. գետերը ծանծաղանում են և շատ տեղերում դառնում անանցանելի (բացի Ինդոսից, Գանգեսից և, հնարավոր է, ևս ինչ-որ գետից): Հիդասպուլ անցնել արդեն կարելի է:

10

Ալեքսանդրը բարձրաձայն հայտարարեց, որ եթե իրեն խանգարում են անցնել գետն ալժմ, ապա նա կսպասի հարմար ժամանակի: Իսկ իրականում, նա ամբողջ ժամանակ այնպիսի պահի էր սպասում, երբ ինքը կարողանար անցնել դաղտնաբար, սրբնթացորեն և բոլորի համար աննկատ: Նա հասկանում էր, որ այն տեղում, որտեղ Հիդասպի ափին ճամբար էր խփել Պորը, անցումն անհնար է. շատ փղեր կային և կանոնավոր ու լավ զինված մեծաթիվ զորք, որը կհարձակվեր իրենց վրա, երբ իրենք սկսեին ափ դուրս գալ: (2) Նա կանխատեսում էր, որ ձիերն էլ չեն ցանկանա այն ափը բարձրանալ, որովհետև նրանց վրա միանգամից, սարսափեցնելով իրենց տեսքով ու ոռնուցով, կնետվեն փղերը. ալեխին, նրանք զետանցի ժամանակ չեն մնա իրենց տիկերի վրա և ջուրը կհետվեն միայն փղերի տեսքից խելքները կորցրած: (3) Ալեքսանդրը որոշեց գործել խորամանկորեն: Գիշերը նա ափի տարբեր կողմեր ուղարկեց բազմաթիվ հեծյալներ և հրամայեց նրանց ուղղվել աղաղակ և այնպիսի աղմուկ բարձրացնել, ինչպիսին լինում է գետանցի ժամանակ: Պորը գնաց աղմուկի ուղղությամբ և իր հետ տարավ փղերին, և Ալեքսանդրը սկսեց վարժեցնել նրան այդպիսի զորաշարժերի: (4) Այն հաճախ էր կրկնվում. դրանք սահմանափակվում էին աղաղակներով ու ուղմի գոչյուններով, և Պորն այլևս տեղից չէր շարժվում այդ արտագորհների ժամանակ և մնում էր ճամբարում, որոշելով, որ այդ ամենը դատարկ ահարեկում է: Այնուհանդերձ ափի երկայնքով շատ տեղերում դրվեցին պահստորական պահակակետեր: Ալեքսանդրը, հասնելով նրան, որ Պորը դադարեց ուշադրություն դարձնել իր գիշերային զործողություններին, կազմակերպեց հետևյալը:

Հիդասպի վրա վեր էր խոյանում մի լեռ հենց այն տեղում, որտեղ գետը կտրուկ շրջադարձ էր կատարում. այդ լեռը ծածկված էր խիտ անտառով. նրա դիմաց գտնվում էր անտառաշատ և բոլորովին անմարդաբնակ մի կղզի: Ալեքսանդրը, նկատելով, որ կղզին գտնվում է ուղիղ լեռան դիմաց և երկու տեղերն էլ ծածկված են անտառով և կարող են ապաստան հանդիսանալ դետանցի ժամանակ, որոշեց զորքի անցումը կատարել այստեղով: (2) Լեռը և կղզին հիմնական ճամբարատեղից հեռու էին մոտ հարյուր հիսուն ասպարեզ: Ամբողջ ափին կանգնած էին պահստորական պահակակետեր. սրանք այնպես էին տեղադրված, որպեսզի մի պահակակետից երևար մյուսը և հեշտությամբ լավեր ցանկացած տեղում տրված հրամանը: Շատ գիշերների ընթացքում ամեն կողմից գոչյուններ էին լսվում և ամենուր խարույկներ էին վառվում:

(3) Երբ Ալեքսանդրը որոշեց իրագործել գետանցը, ճամբարում սկսեցին բացերբաց պատրաստություններ տեսնել: Ճամբարում թողել էր Կրատերոսին իր հիպարքիայով, հեծյալ արաբոսիացիներով և պարապամիսադներով, Ալեկետոսի և Պոլիպերքոնտեսի մակեդոնական հետևակային ջոկատով, գետի այս ափին ապրող հնդկների նոմարքոսներով և նրանց 5000 հոգիանոց ջոկատներով: (4) Կրատերոսին հրամայված էր շփնել գետանցը, մինչև Պորը շարժվի և իր զորքով չհարձակվի Ալեքսանդրի վրա, կամ էլ մինչև Կրատերոսին հայտնի չգառնա, որ Պորը փախուստի է գիմել և մակեդոնացիները հաղթել են: «Եթե Պորը ինձ վրա հարձակվի իր զորքի միայն մի մասով, իսկ մյուս մասը և փղերը մնան ճամբարում, ապա դու, այդ դեպքում ևս, սպասիր քո տեղում: Իսկ եթե Պորը ինձ վրա բշի իր բոլոր փղերին, զորքի մի մասը թող ճամբարում և արագորեն մնացածների հետ անցիր գետը. փղերը միայն ձիերին չեն թողնի ափ դուրս գալ. մնացած զորքին նրանք չեն խանգարի»:

12

Այսպիսի հանձնարարություններ արվեցին Կրատերոսին: Կըղզու և Կրատերոսի զբաղեցրած հիմնական ճամբարի մինչև նա գրեց Մելևագրոսին, Ատալոսին և Գորգիոսին վարձկան հեծելա-

զորով և հետեակով: նրանց հրամայված էր զետն անցնել ջոկատներով, երբ անսնն, որ հնգիկներն արդեն մարտի մեջ են մտել:

(2) Ալեքսանդրն իր հետ վերցրեց «ընկերներին» աղեմոսը, Հեփեսոսի ստի, Պերդիկոսի և Գեմետրիոսի հիպարքիաները, հեծյալ բակարիացիներին, սոգդերին և սկյութներին, դահերին, հեծյալ նետաձիգներին, փաղանգի վահանակիրներին, կիտոսի և ճեկոսի ջոկատները, նետաձիգներին և ագրիանացիներին և ծածուկ նրանց հետ զնաց ափից հեռու ճանապարհով, որպեսզի անեկատ հասնի մինչև կղզին և լեռը, որտեղից նա որոշել էր անցնել զետը: (3) Այստեղ, դիշերը, տիկերը լցրեցին դարմանով, որն արգեն վաղուց բերվել էր այդտեղ, և խնամքով կարեցին դրանք: Գիշերը հորդառատ անձրև եկավ, և դա հատկապես ոգնեց գաղտնի պահել բոլոր տեսակի հավաքներն ու գետանցի նախապատրաստությունները, քանի որ զենքի շաշտունը և բարձրաձայն հրամանները խլանում էին ամպրոպի զորոյուններից և տեղատարափ անձրևի ձայնից: (4) Այստեղ ավելի վաղ բերվել էին քանդված շատ նավեր, դրանք ծածուկ հավաքեցին և թաքցրեցին անտառում: դրանց թվում էին նաև երեսունթիանոց նավեր: Լուսաբացից առաջ քամին հանդարտվեց և տեղատարափ անձրևը դադարեց: Հեծյալ զորքը նստեց տիկերի վրա, հետեակը՝ նավերի, որքան որ տեղավորվեցին, և բոլորը ուղևորվեցին դեպի կղզի: Պորի դրած դիտակետերը նկատեցին նրանց միայն այն ժամանակ, երբ նրանք շրջանցել էին կղզին և արդեն շատ մոտ էին ափին:

13

Ալեքսանդրը բարձրացավ երեսունթիանոց նավ, նրա հետ էին Պաղոմեոսը, Պերդիկոսը և կիսիմառոսը, թիկնապահները, զբուկները: մեկը՝ Սիելոսը, որը հեռազայում արքա դարձավ, և վահանակիրների կեսը: մնացած վահանակիրները գտնվում էին ուրիշ երեսունթիանոց նավերի վրա: Շրջանցելով կղզին, գորքը սկսեց բացելից մոտենալ ափին: Գիտակետերի զինվորները տեսնելով, թե ուր են նրանք շարժվում, ձիերի ամբողջ թափով սլացան Պորի մոտ: (2) Այդ ընթացքում Ալեքսանդրը առաջինը ափ իջավ, դիմավորեց մյուս երեսունթիանոց նավերով եկող զինվորներին և, հեծյալների ափ իջնելու հետ միասին, շարեց նրանց: հեծյալներին հրամայված էր առաջինը ափ իջնել: նա էլ առաջինը նրանց տարավ ուղեմակարգով: Սակայն տեղանքին անձանոթ չի-

նեղով, նա չեկատեց, որ ոչ թե մայրցամաք է իջել: այլ կղզու վրա, և չեծ կղզու, ընդ որում չէր նկատել նաև, որ դա կղզի է, քանի որ այն առանձնացված էր երկրից ոչ մեծ վտակով: (3) Սակայն ջուրը հորդառատ անձրևից բարձրացել էր, որը տեղացել էր գիշերվա մեծ մասը, այնպես որ հեծյալները չէին կարողանում ծանծաղուտ գտնել: Մարդկանց սարսափ համակեց, որ այս անցման ժամանակ ստիպված կլինեն այնքան շարժարկել, որքան անտառի ժամանակ: Երբ, վերջապես, ծանծաղուտ գտան, սարգվեց, որ այդտեղով անցնելը դժվար է: Ամենախոթ վայրում ջուրը հասնում էր ոտքով գնացողների կրծքին, իսկ ջրի վրա երևում էին միայն ձիերի գլուխները: (4) Երբ անցան նաև այդ վտակը: Ալեքսանդրը հեծյալների աղեմոսը տեղափոխեց աջ թևը, իսկ մյուս հիպարքիաներից ընտրեց այդ տեղի համար լավագույն զինվորներին: Հեծյալ նետաձիգներին նա դրեց ողջ հեծելազորի առջևում: անմիջապես նրանց հետևից կանգնած էին արքայական վահանակիրները Սելևկոսի հրամանատարությամբ: սրանցից հետո գտնվում էր արքայական աղեմոսը: նրանց կողքին շարվել էին մնացած վահանակիրները, առաջին տեղը զիջելով նրանց, ում առջորդ բախտ էր միճակվել: Փաղանգի աջ և ձախ թևերի կողքերից կանգնած էին նետաձիգներն ու ագրիանացիները և երկու կողմերից՝ տեղանկետները:

14

Այսպես դասավորելով զորքը, Ալեքսանդրը կարգադրեց հետևակին հետևել իրեն սովորական քայլքով և լրիվ ուղեմակարգով: Այն մի քիչ պակաս էր 6000 հոգուց: Իսկ ինքը, գտնելով, որ իր հեծելազորը ավելի ուժեղ է, արագորեն առաջ շարժվեց միայն հեծյալների հետ, որոնց քանակը հասնում էր հինգ հազարի: Տաղմունին՝ նետաձիգների հրամանատարին հրամայեց հետևել հեծելազորին և շահապաղել: (2) նրա հաշվարկը հետևյալն էր. եթե Պորը իջ ողջ զորքով կուլի բռնվի իր հետ, ապա ինքը կա՛մ առանց դժվարություն հաղթանակ կտանի՝ նրա դեմ նետելով հեծելազորը, կա՛մ էլ, կուլելով, կզիմանա մինչև այն պահը, երբ գործի կանցնի հետևակը: Իսկ եթե հնդիկները, վախեցած անհավատալի համարձակ գետանցից, փախուստի դիմեն, ապա ինքը կրեկախ կհետևի փախուտականներին, և այդ նահանջի ժամանակ այնքան մարդ կկոտորվի, որ քշերը կմնան զեմ առ զեմ կուլելու: (3) Արիստոբուլոսը պատմում է, որ Պորի որդին 60 մարտա-

կառքերով ավելի շուտ էր եկել գետանցի վայրը, քան Ալեքսանդրը հասցրել էր փոքր կղզուց տեղափոխվել մեծը: Նա կարող էր կանգնեցնել Ալեքսանդրին (գետանցը առանց որևէ խոչընդոտի էլ զժվարին էր), եթև հնդիկները, նստելով մարտակառքերի վրա, նևավին ջրից դուրս եկող առաջամարտիկների վրա: Գրա փոխարեն նա իր մարտակառքերով անցավ նրանց մասից և հնարավորությամբ ավեց Ալեքսանդրին հանգիստ տեղափոխվել ափ: Ալեքսանդրը նրանց հետևից ուղարկեց իր հեծյալ նետածիգներին, և վերջիններս առանց զժվարության նրանց վիրավորելով, փախուստի մատնեցին: (4) Իսկ ուրիշները պատմում են, որ Պորի որդու հետ եկած հնդիկները մարտի են մտել Ալեքսանդրի և նրա հեծյալների հետ ափ դուրս գալու տեղում, որ Պորի որդին ավելի մեծ զորքով էր եկել, քան պատմում է Արիստոտելոսը, որ իրեն՝ Ալեքսանդրին վիրավորել էր Պորի որդին և որ այդտեղ էր զոհվել և նրա ձին՝ Բուկիսիալը՝ Ալեքսանդրի ամենասիրելի ձին, որին նույնպես վիրավորել էր Պորի որդին, Սակայն Պտղոմեոսը՝ Լագոսի որդին, սրին ես հետևում եմ, այլ կերպ է պատմում: (5) Նա էլ է ասում, որ Պորը ուղարկել է իր որդուն, բայց նա ոչ միայն 60 մարտակառք է ունեցել: Անհնար է ենթադրել, որ Պորը, տեղեկանալով իր դիտորդ զինվորներից այն մասին, որ Ալեքսանդրը անցել է Հիդասպը իր զորքի գոնե մի մասով, նրա ղեմ ուղարկեք հարազատ որդուն ընդամենը 60 մարտակառքով: (6) Հետախուշը վրայն համար դա շատ էր, և այդքան մարդկանց զժվար կլինեք հետ վերագումալ. իսկ ղեռ գետը շանցած թշնամուն կուսեցնելու և արդեն ափ դուրս եկածների հետ մարտնչելու համար: 60 մարտակառքը բավարար չէր: Պտղոմեոսի խոսքերով, Պորի որդին իր հետ բերել էր 2000 հեծյալ և 120 մարտակառք, սակայն Ալեքսանդրն արդեն հասցրել էր ավարտել իր վերջին գետանցը կղզուց:

Ինքն էլ պատմում է, որ Ալեքսանդրը նրանց ղեմ սկզբից ուղարկեց հեծյալ նետածիգներին, իսկ ինքը առաջնորդեց հեծելագորը, կարծիով, թև Պորը իր վրա է գալիս ողջ զորքով, իսկ այդ հեծելագորը առաջ ուղարկված միայն մեկ ջոկատն է: (2) Իսկ երբ նրան հայտնի դարձավ հնդիկների քանակը, նա սրընթացորեն հարձակվեց նրանց վրա իր հեծելագորով: Տեսնելով Ալեքսանդրին և բազմաքանակ հեծյալներին, որոնք շարված էին ոչ թև

մի գծով, այլ իղոններով, նրանք սասանվեցին: Հնդիկ հեծյալներին զոհվեց 400 մարդ. ընկավ նաև Պորի որդին: Մարտակառքերը գրավեցին ձիերի հետ միասին. նրանք լափազանց ծանրաշարժ էին. ամենուր ցնխ էր. զժվար էր նաև նրանց հետ նահանջելը. գրանք անօգուտ եղան և ճակատամարտում:

(3) Երբ փախուստով փրկված հեծյալները պատմեցին Պորին այն մասին, որ Ալեքսանդրն իր զորքի լավագույն մասով արդեն անցել է գետը և որ նրա որդին զոհվել է ճակատամարտում, Պորը աստանվեց, առավել ևս, որ Կրատերոսի հետ գլխավոր ճամբարում թողնված զորքը, որը ուղղակի նրա դիմաց էր, բացելեբաց սկսեց գետանցի պատրաստություն տեսնել: (4) Վերջ ի վերջո նա որոշեց զնալ Ալեքսանդրի վրա և իր բոլոր ուժերը նետել մակեդոնական զորքի լավագույն մասի և նրա արքայի դեմ: Այնուհանդերձ նա ճամբարում թողեց մի քանի փղեր և զորքի փոքր մասը, որպեսզի ափից վանի Կրատերոսի հեծյալներին: Իր հետ նա վերցրեց ողջ հեծելագորը՝ մոտ 4000 մարդ, բոլոր մարտակառքերը՝ գրանք 300-ն էին, 200 փիղ և իր հետևակի լավագույն մասը՝ մոտ 30 060 մարդ և սլացավ Ալեքսանդրի դեմ: (5) Հայտնվելով այնպիսի տեղում, ուր ցնխ չկար և հարթ ու պինդ ավազածածկը հարմար էր հեծելագորի հարձակման ու զորաշարժերի համար, նա շարեց իր զորքը այդտեղ: Առջևում մի շարքով կանգնած էին փղերը՝ մի փիղը մյուսից մեկ պլեթրոն հեռավորությունից ոչ պակաս: Պորը ցանկանում էր ձգել իր փղերի շարքը ողջ հետևակի երկայնքով, որպեսզի նրանք ամենուր սարսափ տարածեին Ալեքսանդրի հեծյալների վրա: (6) Նա նույնիսկ շէր էլ ենթադրում, որ հակառակորդը կհամարձակվի մտնել փղերի արանքը՝ ոչ հեծյալները (չէ որ ձիերը վախենում են փղերից), ոչ էլ առավել ես հետևեալինները: Առաջավոր գծում ծանրազեն մարտիկները հետ կշարտեք հարձակվողներին և սրանց կտորեն նրանց վրա բաց թողնված փղերը: (7) Փղերի հետևից կանգնած էր նրա հետևակը, որն այնպես էր դասավորված այդ երկրորդ գծում, որ առանձին ջոկատներ հնարավոր լինեք արագորեն առաջ շարժել կենդանիների արանքից: Թեևրում նույնպես կանգնած էր հետևակը. նրա երկու կողմերից շարված էր հեծելագորը և նրա առջևում, երկու կողմերից, դանվում էին մարտակառքերը:

Այսպես էր դասավորել իր զորքը Պորը Ալեքսանդրը, տեսնելով, որ հնդիկներն արդեն շարժվում են. կանգնեցրեց հեծելազորը, ցանկանալով դիմադրել հետևակին, որն անընդհատ մոտենում էր իրեն: Երբ վազրով մոտեցող փաղանգը արդեն միացավ մնացած զորքին, նա միանգամից շարժեց ու գրոհի շտարավ դիմադրողներին, լցանկանալով բարբարոսական թարմ զորքի ձեռքը տալ իր հոգնած ու շնչակտուր մարտիկներին: Նա հրամայեց հեծելազորին շրջապատելներ կատարել հակառակորդի շուրջը, մինչև իր հետևակայինները շունչ բաշեն: (2) Տեսնելով, թե ինչպես են շարժվել հնդիկները, Ալեքսանդրը հասկացավ, որ իրեն չի կարելի հարվածել կենտրոնին, որտեղ առաջ էին մղված փղերը, իսկ նրանց միջև ստվար շարքերով կանգնած էր հետևակը. նա զգուշանում էր հենց այն բանից, որի վրա ինչպես էր գրել Պորը, այդպես տեղադրելով իր ուժերը: Ալեքսանդրի զորքում առավել ուժեղ էր հեծելազորը, և նա որոշեց, վերցնելով նրա մեծ մասը, հարձակվել թշնամու ձախ թևի վրա: (3) Քենոսի Ռեմետրիոսի և իր հիպարքիաներով ուղարկեց հնդիկների աջ թևի դեմ, կարգադրելով նրան մտնել բարբարոսների թիկունքը, երբ նրանք առաջ շարժվեն, տեսնելով իրենց վրա եկող հեծյալների գանգվածը: Հետևակը նա հանձնարարեց Սելեկոսին, Անտիգենոսին և Տալրոնին, սակայն հրամայեց միջամտել ճակատամարտին միայն այն ժամանակ, երբ նրանք տեսնեն, որ իր հեծելազորը շփոթություն է առաջացրել թշնամու թև հետևակի և թև հեծելազորի շարքերում:

(4) Նետերն ու նիզակները արդեն հասնում էին նրանց. Ալեքսանդրը դեպի հնդիկների ձախ թևը շարժեց հեծյալ նետաձիգներին (որանք մոտ 1000 մարդ էին), որպեսզի նրանք նետերի հոծ բազմություններ և սրընթաց հարձակումով շփոթություն առաջացնեն այդ թևի թշնամական դիմադրողների մեջ: Ինքն էլ հեծյալ «ընկերների» հետ նետովեց բարբարոսների ձախ թևի վրա, ձգալով հարված հասցնել նրանց, քանի դեռ նրանք իրարանցման մեջ չէին հասցրել դասավորել իրենց հեծելազորը:

Այդ ընթացքում հնդիկները բոլոր կողմերից կենտրոնացրին իրենց հեծյալներին. նրանք արշավեցին, կտրելով Ալեքսանդրի ճանապարհը, և Քենոսի հեծելազորը, ինչպես որ նրան հրամայված էր, հայտնվեց նրանց թիկունքում: Հնդիկները ստիպված եղան իրենց հեծելազորով գործել երկու ճակատով. ավելի մեծ և լավագույն մասն ուղարկեցին Ալեքսանդրի դեմ, մնացածները ընդառաջ գնացին Քենոսին և նրա ջոկատին: (2) Դա միանգամից խառնաշփոթություն առաջացրեց հնդիկների շարքերում և շփոթեցրեց նրանց. Ալեքսանդրը, տեսնելով, որ այժմ ամենապատահալ է շրջելու իր հեծելազորը դեպի մյուս կողմ, հարձակվեց թշնամու զորքի կենտրոնի վրա: Հնդիկները, չսպասելով Ալեքսանդրի հեծյալների հարվածներին, անկանոն նետովեցին դեպի փղերը, որպես փրկարար սլարսպի: (3) Այդ նույն պահին փղավարները քշեցին իրենց կենդանիներին հեծելազորի վրա, ինչ մակեդոնական հետևակը գնաց փղերի դեմ, տեղեր նետելով նրանց քշողների վրա և խոցելով կենդանիներին, որոնց նրանք շրջապատել էին բոլոր կողմերից: Դա մի ճակատամարտ էր, որը նման չէր նախկիններից որևէ մեկին: Փղերը մխրճվում էին հետևակի շարքերը և շրջվում էին, և այդ տեղում մակեդոնական հոծ շարքն ասես չէր էլ եղել: Հնդիկների հեծելազորը, տեսնելով, որ հետևակի գործն առաջ է գնում, կրկին շրջվեցին և նետովեցին մակեդոնական հեծելազորի վրա: (4) Իսկ երբ Ալեքսանդրի հեծյալները կրկին նետեցին նրանց (նրանք զգալիորեն զերադանցում էին հնդիկներին և՛ ուժով, և՛ փորձառություններով), նրանք կրկին հետ գնացին դեպի փղերը, Այնժամ Ալեքսանդրի ողջ հեծելազորը միավորվեց մի ջոկատի մեջ՝ ոչ ըստ հրամանի, այլ ռազմական իրազրույթյան պայմանների համաձայն: Հարձակվելով հնդիկների շարքերի վրա, նրանք ցրվել էին գալիս, հասցնելով մեծ վնասներ: (5) Փղերին, վերջապես, քշեցին մի նեղ տեղ և այստեղ, շրջվելով, հրհրելով և տրորելով մարդկանց, նրանք յուրայիններին ոչ պակաս վնաս հասցրին, քան թշնամու: Շատ հեծյալներ դոհվեցին, որոնք փղերի հետ միասին նետվել էին այդ նեղ վայրը. շատ փղերի և անասնավարների խոցեցին տեղերով. փղերի մի մասը վիրավորված էր, մյուսները ուժասպառ էին եղել, առանց առաջնորդողների անկանոն թափառում էին մարտի դաշտում: (6) Ասես խեղազարված ցավից ու վշտից, նրանք հավասարաշափ նետվում էին և՛ յուրա-

յիննների, և թշնամու վրա, դեսուզին նետում մարդկանց, տրորում ու սպանում նրանց: Մակեդոնացիները, եթե շուրջը տարածություն կար և կարողանում էին հարձակվել փղերի վրա, ընտրելով իրենց համար հարմար պահ, սովորաբար այս ու այն կողմ էին փախչում, երբ կենդանիները նետվում էին նրանց վրա, իսկ երբ նրանք շըրջվում էին, ապա հետապնդում էին նրանց և նիզակներ նետում: Հնդիկները, որոնք փղերի միջև դասավորված էին առաջ շարժվում, հատկապես տուժեցին նրանցից: (7) Վերջ ի վերջո կենդանիները հոգնեցին, ուժասպառ եղան և սկսեցին ֆսֆսալով հետ գնալ, շրջվելով դեպի թշնամին, ասես հակառակ ուղղությամբ շարժվող նավեր լինեին: Ալեքսանդրը իր հեծելազորով շրջապատեց հակառակորդի ողջ զորքը և կարգադրեց, որպեսզի հետևակը շարժվի ամենակուռ շարքով, իրար միացնելով վահանները: Հնդիկների հեծելազորը, բացառությամբ շատ քշերի, այդ ճակատամարտում կոտորվեց: Զարդում էին նաև հետևակին, ամեն կողմից նեղելով այն: Երբ Ալեքսանդրի հեծելազորը ճանապարհ բացեց և անցատեղի առաջացավ, բոլորը փախուստի դիմեցին:

18

Այդ ժամանակ կրատերոսը և Հիդասպի ամին թողնված մյուս զորավարները, տեսնելով Ալեքսանդրի փայլուն հաղթանակը, գետըն անցան: Եվ նրանք ոչ պակաս ջարդ կազմակերպեցին նահանջող հնդիկների շարքերում, որոնց գնացին հետապնդելու թարմ ուժերով, փոխարինելով Ալեքսանդրի հոգնած զինվորներին:

(2) Հնդիկ հետևակայիններից զոհվեցին 20 000-ից քիչ պակաս, հեծյալներից՝ մոտ 3000, բոլոր մարտակառքերը ջարգվեցին: Զոհվեցին Պորի երկու որդիները: Սպիտաբը՝ այստեղի հրեղիկների նամաբքոսը, փղերի բոլոր առաջնորդները, անամնավարները, Պորի բոլոր հիպարքոսներն ու ստրատեգները... փղերին, որոնք տեղում չէին սաստկել, որսացին: (3) Առաջին մարտին մասնակցող ալեքսանդրյան 6000 հետևակից զոհվեց ամենաշատը 80 մարդ. ճակատամարտը սկսած հեծյալ նետածիգներից՝ տասը մարդ, հեծյալ «ընկերներից»՝ մոտ քսան հոգի, մնացած հեծյալներից՝ մոտ 200 մարդ:

(4) Պորն աչքի ընկավ ճակատամարտում, զրստրելով իրեն ոչ միայն որպես զորավար, այլև վեհանձն զինվոր: Տեսնելով, որ

իբ հեծելազորը կոտորված է, որ փղերի մի մասը ընկել են մարտի դաշտում, իսկ մյուսները մոլորված թափառում են առանց առաջնորդողների, որ հետևակի մեծ մասը զոհվել է, նա առաջինը չփախավ, ինչպես դա արեց մեծն արքա Գարհհը, (5) այլ կրկնեց մինչև այն պահը, երբ դեռ հնդիկների նույնիսկ մի ինչ-որ մասը դիմանում էր: Այդ ուսից վիրավոր (ճակատամարտի ժամանակ նրա միայն այդ մասն էր մերկ. ամբողջ մարմինը պաշտպանված էր դրահով, որը շատ ամուր էր, և հարմարեցված էր մարմնին, ինչպես դա տեսան նրանք, ովքեր հետո այն ուսումնասիրում էին), նա, վերջապես, սկսեց նահանջել, շըրջելով իր փղերը: (6) Ալեքսանդրը, տեսնելով, թե որքան մեծ ու վեհանձն է նա ճակատամարտում, ցանկացավ փրկել նրան և սկզբում նրա հետևից ուղարկեց հնդիկ Տաբսիլին: Տաբսիլը ձեռով մտնեցավ նրան և կանգնեց այնպիսի տարածության վրա, որ Պորին տանող փղից իրեն վտանգ չսպառնար, և խնդրեց Պորին կանգ առնել. հարկ չկա, որ նա շարունակի փախչել. թող լսի այն, թե ինչ է ասել Ալեքսանդրը: (7) Պորը տեսնելով Տաբսիլին՝ իր վաղեմի թշնամուն, շրջվեց, որպեսզի տեղով հարվածի նրան: Նա, հավանորար, կապաներ էլ նրան, եթե վերջինս չհասցներ նրանից հեռու փախչել: Ալեքսանդրը դրա համար էլ շղայրացավ Պորի վրա և սկսեց մեկը մյուսի հետևից մարդիկ ուղարկել նրա մոտ, և, վերջապես, ուղարկեց հնդիկ Մերոյին, տեղեկանալով, որ Մերոյը Պորի վաղեմի ընկերն է: Պորը, լսելով Մերոյին, կանգնեցրեց փղը և ցած իջավ (բացի այդ նրան սաստիկ տանջում էր ծարավը): Զուր խմելուց և շունչ բաշխուց հետո, նա հրամայեց շտապ ուղեկցել իրեն Ալեքսանդրի մոտ:

19

Նրան ուղեկցեցին: Տեղեկանալով, որ Պորը դալիս է իր մոտ, Ալեքսանդրը զորքի առջև նրան ընդառաջ ելավ մի բանի՝ «ընկերների» հետ: Կանգնեցնելով ձին, նա զարմանքով նայում էր Պորին, հիանալով նրա բարձր հասակով (նա 5 կանգունից ավելի հասակ ուներ) և զեղեցկություններ, և այն բանով, որ, ըստ երևույթին, նա իրեն ստորացած չէր զգում: Պորը մոտեցավ Ալեքսանդրին, ինչպես հերոսը հերոսին, արքան մի ուրիշ արքայի: (2) Ալեքսանդրը առաջինը դիմեց նրան, առաջարկելով ասել, թե նա ինչ է ցանկանում իր համար: Պորը պատասխանեց. «Որ դու, Ալեքսանդր, ինձ

հետ արքայազմայն վերաբերվես»։ Ալեքսանդրին դուր եկավ այդ պատասխանը. «Պոր, ես դա կանեմ թեկուզ հանուն ինձ։ Իսկ դու խնդրիր որևէ բան քեզ համար, այն, ինչ քեզ հաճելի է»։ Պորը պատասխանեց, որ ամեն ինչ ամփոփված է իր խնդրանքում։ (3) Այդ խոսքերն Ալեքսանդրին ավելի շատ դուր եկան. նա Պորին հանձնեց հնդիկների վրա ունեցած իր իշխանությունը և նրա նախկին անբուխություններին ավելացրեց ուրիշները, որոնք նախկինից ավելի մեծ էին։ Այդպիսով և՛ ինքը արքայազմայն վերաբերվեց վեհանձն մարդու հետ, և՛ նա, այդ ժամանակից ի վեր, բոլոր հարցերում նրա հավատարիմ ընկերը դարձավ։ Այդպես ավարտվեց Ալեքսանդրի պատերազմը Պորի և Հիդասպի այն կողմում բնակվող հնդիկների հետ։ Գա տեղի ունեցավ ամենական շեղմանոս արքունտոսի օրոք, մունիքիոն ամուսնու։

(4) Այն տեղում, ուր տեղի էր ունեցել ճակատամարտը, և այն տեղում, որտեղ Ալեքսանդրն անցել էր Հիդասպը, նա երկու քաղաք հիմնեց՝ մեկն անվանեց Նիկեա, որովհետև այստեղ հաղթել էր հնդիկներին, իսկ մյուսը՝ Բուկեփալաս՝ իր ձիու՝ Բուկեփալի հիշատակին, որը ոչ թե զոհվեց այստեղ ինչ-որ մեկի նետից, այլ ուժասպառ եղավ տոթից և տարիքից (նա մոտ 30 տարեկան էր)։ (5) Շատ դժվարություններ ու վտանգներ էր նա կրել Ալեքսանդրի հետ. միայն Ալեքսանդրը կարող էր հեծնել նրան, որովհետև մյուս բոլոր հեծյալներին նա բանի տեղ չէր դնում. նա բարձրահասակ էր, գտարյուն։ Նրա առանձնահատկություններից մեկը գլուխն էր՝ նման ցլի գլխի. այդտեղից էլ, ասում են, նա ստացել է իր անունը, Իսկ ուրիշները պատմում են, որ նա եղել է սևաթույր, բայց ճակատին սպիտակ բիծ է ունեցել, որ շատ է հիշեցրել ցլի գլուխ։ (6) Այդ ձին Ալեքսանդրը կորցրել էր ուբսերի երկրում, և Ալեքսանդրը հրամայել էր ողջ երկրով մեկ հայտարարել, որ կկոտորի բոլոր ուբսերին, եթե նրանք անմիջապես ձին չվերադարձնեն։ Այդ հայտարարությունից անմիջապես հետո ձին բերեցին։ Այդպես էր Ալեքսանդրը սիրում իր ձիուն և այդպես էին վախենում բարբարոսները Ալեքսանդրից։ Եվ թող հանուն Ալեքսանդրի և իմ կողմից փառաբանվի Բուկեփալը։

Երբ ճակատամարտում զոհվածները հարգվեցին պատշաճ մեծարանքներով, Ալեքսանդրը հաղթանակի առթիվ սահմանված զոհեր մատուցեց աստվածներին և կազմակերպեց մարմնամարզական ու հեծելազորի մրցումներ Հիդասպի ափին՝ այն տեղում, որտեղ նա առաջին անգամ իր զորքով անցել էր գետը։ (2) Կրատերոսին զորքի մի մասով թողեց, որպեսզի նա վերականգնի ու մարացնի այդտեղ հիմնված քաղաքները, իսկ ինքն արշավեց Պորի հարևան հնդիկների վրա։ Այդ ցեղը, ըստ Արևմտորոյտոսի, կոչվում էր գլավգանիկ, իսկ ըստ Պտղոմեոսի՝ գլավսեմ. ինչպես էր նրա իսկական անունը՝ ինձ համար միևնույն է։ (3) Ալեքսանդրը նրանց երկիրը մտավ զորքով, որի մեջ ընդգրկել էր «ընկերներից» կազմված հեծելազորի կեսը, ամեն մի փաղանգից ընտրյալ հետևակայինների, բոլոր հեծյալ նետածիգներին, ազրիանացիներին և նետածիգներին։ Բոլորը ինքնակամ հնազանդվեցին ներքան։ (4) Նա գրավեց մոտ 37 քաղաք, որոնցից ամենափոքրերում բնակվում էին 5000 մարդուց ոչ պակաս. շատերում բնակչությունը գերազանցում էր 10 000-ից։ Նա գրավեց նաև մեծ թվով բնակավայրեր, որոնք բազմամարդուբյամբ չէին գիշում քաղաքներին։ Այդ երկրի կառավարումը հանձնարարեց Պորին։ Տաքսիլին հաշտեցրեց Պորի հետ և կրկին հետ ուղարկեց իր երկիրը։

(5) Այդ ժամանակ նրա մոտ դեսպաններ եկան Արիսարի կողմից. Արիսարը իրեն և իր կառավարած երկիրը հանձնում է Ալեքսանդրի իշխանությանը, թեև մինչ Պորի հետ պատերազմը նա հանցամտում էր Ալեքսանդրի դեմ և Պորի կողմնակիցն էր։ Իսկ այժմ նա այդ դեսպանների հետ Ալեքսանդրի մոտ էր ուղարկել իր եղբորը, որը Ալեքսանդրին մատուցեց զրամ և որպես ընծա՝ 40 փիղ։ (6) Նրա մոտ եկան նաև դեսպաններ անկախ հրեշիկների կողմից և մի ուրիշ Պորի՝ հնդկական իշխանի կողմից։ Ալեքսանդրը հրամայեց Արիսարին շուտափույթ ներկայանալ իրեն և սպասուհաց, որ եթե նա անձամբ չգա, ապա կտեսնի Ալեքսանդրին իր զորքով, և դա նրան ուրախություն չի պատճառի։

(7) Այդ նույն ժամանակ Ալեքսանդրի մոտ եկավ Թրատաթերներ՝ Պարթևաստանի և Վրկանի սատրապը, և բերեց իր մոտ թողնված թրակացիներին, իսկ Միսիկոտի՝ ասակենների սատրապի կողմից դեսպաններ ներկայացան՝ լուրով, որ ասակենները սպանել են իրենց իշխանին և իրենց անկախ հայտարարել Ալեքսանդրի

րից: Նա սրանց դեմ զորքով ուղարկեց Փիլիպոսին և Տիրիսային, կարգադրելով հնազանդեցնել ասակեններին և կարգուկանոն հաստատել նրանց երկրում:

(8) Ինքը շարժվեց դեպի Ակեսիս գետը: Միայն այդ հնդկական գետի մեծությունն է հիշատակված Պտղոմեոսի՝ Լագոսի որդու մոտ: Այն տեղում, որտեղ Ալեքսանդրը իր զորքով անցավ գետը նավերով ու տիկերով, այն հոսում է սրընթացորեն, բարձր ու սրածայր քարերի միջով. ջուրը ուժգնորեն հարվածելով դրանց, փոթորկվում է, ալիքների պես լեռնանում. նրա լայնությունը այդ տեղում 15 ասպարեզ է: (9) Նրանք, ովքեր լողում էին տիկերի վրա, անցան հեշտություն. Իսկ նրանցից շատերը, ովքեր նավերը նստեցին, խեղդվեցին, որովհետև նավերը զարկվում էին քարերին ու փշրվում: (10) Այս պատմությունից կարելի է եզրակացնել, որ մարդիկ, ովքեր Ինդոսի միջին լայնությունը ընդունում էին 40 ասպարեզ, հեռու շեն իրականությունից: Իսկ այն մասում, որտեղ այն ավելի նեղ է և այդ նեղության պատճառով առավել խոր, այն փոքրանում է մինչև 15 ասպարեզ. Ինդոսը հաճախ է այդպիսին լինում: Ես ենթադրում եմ, որ Ալեքսանդրը Ակեսիսի վրա գետանցի համար ընտրել է ամենալայն տեղը, առավել հանդարտ հոսանքի հույսով:

Անցնելով գետը, նա այստեղ, ափին, թողեց Քենոսին նրա գեղի հետ, հրամայելով նրան հոգ տանել մնացած զինվորների գետանցի համար, որոնք պետք է նրան հաց և այլ պաշարներ բերեին հնդիկների արդեն նվաճված երկրներին: (2) Պորին նա հետ ուղարկեց իր երկիրը, կարգադրելով ընտրել իր ամենաբաշտ հնդիկ զինվորներին, զբաղվել մյուս Պորի՝ վախկոտի հետապնդումով, որի մասին նրան զեկուցել էին, որ նա փախել է՝ թողնելով իր կառավարման տակ գտնվող երկիրը: (3) Այդ Պորը, մինչև Ալեքսանդրը պատերազմում էր մյուս Պորի հետ, Ալեքսանդրի մոտ դեսպաններ ուղարկեց հայտարարելու, որ իրեն և իր երկիրը հանձնում է Ալեքսանդրի իշխանությանը: Դա արվել էր ավելի շատ Պորի հանդեպ ունեցած ատելությունից, քան Ալեքսանդրի հանդեպ ունեցած բարեկամական համակրանքից: Իսկ երբ նա իմացավ, որ Ալեքսանդրը ազատ է արձակել Պորին և նրան հանձնել ոչ միայն նրա երկրի իշխանությունը, այլև ավել-

լացրել շատ այլ երկրներ, այնժամ նա վախեցավ, և ոչ այնքան Ալեքսանդրից, որքան իր անվանակից Պորից, և փախավ այն զինվորների հետ, որոնց նա կարողացավ համոզել փախչել:

(4) Նրանց հետապնդելով, Ալեքսանդրը մոտեցավ մեկ այլ հնդկական գետի՝ Հիդրատոսին. լայնությամբ նա չի զիջում Ակեսինին, սակայն նրա հոսանքն այդքան արագ չէ: Ամբողջ երկրով մեկ, որտեղով նա անցնում էր ընդհուպ մինչև Հիդրատոսը, առավել հարմար վայրերում դնում էր պահակակետեր, որպեսզի կրատե-րուք և Քենոսը պարեն հայթայթելիս կարողանան հանգիստ անցնել այդ երկրի զգալի մասը: (5) Այստեղից նա Հեփեստիոնեսին զորքի մի մասով (նա նրան ավելց երկու հետիոտն փաղանգներ, հեծելազորքից իր անձնական հիպարքիան և Գեմետրիոսի հիպարքիան ու նետածիգների կեսը) ուղարկեց պառակտված Պորի երկիրը, հրամայելով հանձնել այն մյուս Պորին, և եթե Հիդրատոսի ափերին բնակվում են այլ հնդկական անկախ ցեղեր, ապա նրանց էլ հնազանդեցնել և հանձնել Պորի իշխանությանը: (6) Իսկ ինքը Հիդրատոսի մյուս ափն անցավ պակաս ղժվարություններ, քան Ակեսինը: Երբ նա անցնում էր արդեն Հիդրատոսի այն կողմում գտնվող երկրով, շատերը կամավոր ենթարկվեցին նրան, այդ թվում նաև նրանք, ովքեր սկզբում զենքի էին դիմել. մյուսները փախուստի դիմեցին և հնազանդեցվեցին:

Այստեղ Ալեքսանդրին հայտնեցին, որ մի քանի հնդկական անկախ ցեղեր, այդ թվում նաև այսպես կոչված կափեյները, նույնպես պատրաստվում են պատերազմի, եթե Ալեքսանդրը մտնի իրենց երկիրը, և իրենց հարևաններին՝ նույնպես անկախ ցեղերի, սադրում այդ գործին: (2) Կար մի անառիկ բազուր, որի մոտակայքում էլ նրանք մտադրվել էին ճակատամարտել: այն կոչվում էր Սանգալ: Կափեյները համարվում են ամենախիզախ ու հմուտ ռազմիկները, ինչպես նաև օբսիդրակներն ու մալերը՝ մյուս հնդկական ցեղերը: Վերջերս իրենց ղորքերով նրանց դեմ էին ելել Պորը և Աբիսարը, որոնք բացի այդ ոտքի էին հանել հնդկական շատ անկախ ցեղերի, սակայն ստիպված էին եղել հեռանալ՝ չըհասնելով որևէ արգելների, որն արժանի լիներ նման պատրաստությունների:

(3) Երբ Ալեքսանդրին հայտնեցին այդ մասին, նա սրընթաց

նևտվեց կափեյնեբի դեմ: Շարժվելով Հիդրատից, նա երկրորդ օրը մոտեցավ Պիմպրամա բաղաբին: Տեղական հնդկական ցեղերը կոչվում էին ադրախստներ: (4) Նրանք ինքնակամ հնազանդվեցին Ալեքսանդրին: Ալեքսանդրը հաջորդ օրն իր զինվորներին հանգիստ տվեց, իսկ երրորդ օրը մոտեցավ Սանգալին: Կափեյնեբըն ու նրանց հետ համախմբված հարևանները տեղ էին գրավել քաղաքի առջևի բլրի վրա, որը ոչ բոլոր կողմերից էր զառիթափ: Բլրի շուրջը նրանք շարել էին սալերը և մեջտեղում ճամբար խփել: Կան գտնվում էր եռաշարք սալերի միջև: (5) Ալեքսանդրը նայեց բարբարոսների ամբոխին, տեղանքին և շարեց իր զորքն այնպիսի կարգով, որը նա լավագույնը համարեց տվյալ պարագայում: Հեծյալ նետաձիգներին նա միանգամից, առանց դադար տալու, ուղարկեց թշնամու վրա և հրամայեց նրանց ճամբարի երկայնքով հետ ու առաջ անել, նետահարելով հնդիկներին, որպեսզի նրանք չկարողանան ավելի շուտ արտագրոհ կազմակերպել, քան ինքը կդասավորի իր զորքը, և որպեսզի մինչև մարտի սկիզբը ամբուստյան ներսում նրանք վիրավորներ ունենան: (6) Աջ թևում նա դրեց հեծյալների աղեմուսը և Կլիտոսի հիպարբիան, նրանց կողքին՝ վահանակիրներին, իսկ սրանց հետևից՝ ադրիանացիներին: Նրա ձախ թևում կանգնած էր Պերդիկոսն իր հիպարբիայով և հետևակային «ընկերներով» ջոկատներով: Երկու թևերում էլ կային նետաձիգներ. նրանց ջոկատը նա երկու մասի էր բաժանել: (7) Մինչդեռ նա դասավորում էր զորքը, ժամանեցին զորքի թիկունքը պաշտպանող պահնորդական խմբի հետևակայիներն ու հեծելազորը: Հեծյալներին նա կիսեց և դրեց երկու թևերում, իսկ մոտեցած հետևակայիները հնարավորություն տվեցին նրան ավելի խիտ շարել փաղանգը: Վերցնելով աջ թևում շարված հեծելազորը, նա տարավ այն դեպի հնդիկների ձախ կողմում գտնվող սալերը. նա կարծում էր, որ ճանապարհն այս կողմում ավելի լավն է և սալերն այդքան խիտ չեն կանգնած:

Հեծելազորը մոտեցավ, սակայն հնդիկները դուրս չլվաղեցին իրենց սալերի հետևից, այլ բարձրանալով դրանց վրա, սկսեցին հեծյալների վրա վերևից նետեր արձակել: Ալեքսանդրը տեսավ, որ հեծելազորն այստեղ ոչինչ չի կարող անել, ցած իջավ ձիուց և ոտքով առաջնորդեց իր հետևակայիներին: (2) Սալերի առաջին

շարքից մակեդոնացիները հեշտությամբ հետ շարտեցին հնդիկներին, սակայն երկրորդ շարքի առջև կանգնած հնդիկներին ավելի հեշտ էր հետ մղել թշնամուն. նրանք ավելի փոքր, բայց ավելի կտու շրջան էին կազմել, իսկ մակեդոնացիները ծավալվելու տարածություն չունեին. նրանք ստիպված էին հետ քաշել առաջին շարքի սալերը և գնալ թշնամու վրա առաջացած բացվածքներով, ուժ ինչպես կարողանար, լիովին անկանոն ձևով: Այնուհանդերձ մակեդոնական հետևակը այդտեղից ևս հետ մղեց հնդիկներին: (3) Սալերի երրորդ շարքի մոտ նրանք շնամցին, այլ ամբողջ թափով նետվեցին քաղաք և փակվեցին այնտեղ: Ալեքսանդրը այդ նույն օրը իր հետևակը դասավորեց քաղաքի շուրջը, ընդգրկելով այնպիսի տարածություն, որքան կբավականացներ փաղանգին: Ամբողջովին ճամբարով շրջապատել մեծ տարածությամբ ձգվող պարիսպը, անհնար էր: (4) Պարսպից ոչ հեռու տարածքում լիճ կար, և նա այդ լճի շուրջը տեղադրեց իր հեծյալներին: Նա տեղեկացավ, որ լիճը խորունկ չէ, և ենթադրեց, որ վերջերս ունեցած պարտությունից սարսափած հնդիկները գիշերը կլքեն քաղաքը: (5) Եղավ այնպես, ինչպես ինքն էր ենթադրում: Երկրորդ պահակաժամի մոտ նրանք դուրս թափվեցին պարիսպների հետևից, և մեծամասնությունը դեմ առավ առաջատար հեծյալ պահակախոսներին: Դուրս եկածներին առաջինը կոտորեցին հեծյալները. նրբանք, ուժքեր հետևից էին գալիս, գլխի ընկան, որ ամբողջ լճի ափին պահնորդներ կան, և վերադարձան քաղաք:

(6) Այն մասում, որտեղ լիճը չէր խոչընդոտում քաղաքից դուրս գալուն, Ալեքսանդրը կրկնակի ցցապատեց խփեց և զգալիորեն ուժեղացրեց լճի շուրջը եղած պահակախոսները: Նա որոշեց մեքենաներ մոտեցնել պարսպին, որպեսզի քանդի այն, սակայն քաղաքից եկած փախստականները հայտնեցին նրան, որ հնդիկները մտադիր են այդ նույն գիշերը դուրս գալ քաղաքից դեպի լիճը, որտեղ ցցապատեց չկա: (7) Ալեքսանդրը այդտեղ դրեց Պտղոմեոսին՝ կազոսի որդուն, և նրան տվեց երեք վահանակիրների քիլիարքիա, բոլոր ազդեցիկներին և մեկ ջոկատ նետաձիգներ: Յուրյց տալով այն տեղը, որտեղ, ըստ իր կարծիքի, առավել հավանական է, որ բարբարոսները կձգտեն ճեղքել, նա ասաց Պտղոմեոսին. «Շենց տեսնես, որ նրանք ցանկանում են ճեղքել այս տեղում, փակիր նրանց ճանապարհը և հրամայիր շփոթահարին ազդանշան տալ: Իսկ դուք,— դիմեց նա կրտսեր զորա-

վարենրին, — երբ այդ ազդանշանը կտրվի, ամեն մեկը ձեր ջոկատով գնացե՛ք դեպի աղմուկի վայրը, ուր կկանչի շեփորը: Ես էլ չեմ հրաժարվի մասնակցել այդ գործին»:

24

Այդպիսին էին նրա խոսքերը: Պտղոմեոսը վերցրեց մեծ թվով այն սայլերից, որոնք առաջին անգամ փախուստի դիմելիս լքել էին բարբարոսները, և շեղակի շարեց, որպեսզի փախստականների ճանապարհին գիշերը բազմաթիվ խոչընդոտներ լինեն: Մեջտեղում՝ լճի և պարսպի միջև, նա հրամայեց տարբեր տեղերում ցցեր դիզել, որոնք արդեն սրված էին, բայց դեռ գետնի մեջ չէին խփված: Զինվորներն այդ ամենը արեցին գիշերվա ընթացքում: (2) Արդեն շորտոց պահանջական ժամի մոտ էր. բարբարոսները (ինչպես որ հայտնել էին Ալեքսանդրին) բացեցին դեպի լիճը նայող դարպասը և վազբով նետվեցին դեպի այն: Դա չվրիպեց ո՛չ պահակակետերից, ո՛չ էլ նրանց հետևում կանգնած Պտղոմեոսի հայացքից. հենց այդ պահին իրենց շեփորները հնչեցրին փողհարները, և նա բարբարոսների դեմ հանեց ռազմաշարքով կանգնած և սպառազինված իր զորքը: (3) Բարբարոսները բախվում էին սայլերին և ոտքի տակ թափված ցցերին: Երբ հնչեցին շեփորները և Պտղոմեոսը նետվեց նրանց վրա, կոտորելով նրանց, ուլբեր ջանում էին անցնել սայլերի միջով, նրանք կրկին քաղաք վերադարձան: Այդ նահանջի ընթացքում նրանցից զոհվեց մոտ 500 մարդ:

(4) Այդ ժամանակ ժամանեց Պորը՝ փրկված փղերով և հինգ հազարի չափ զորքով: Մեքենաները հավաքվեցին և մոտեցվեցին պարսպին: Սակայն մինչ գեթ մի ճեղքվածք կբացվեր, մակեդոնացիները պարսպի տակ ական փորեցին (այն աղյուսից էր շինված), ամեն կողմից աստիճաններ դրեցին և դրոհով վերցրին քաղաքը: (5) Դրավման ժամանակ զոհվեց 17 000 հնդիկ. գերի վերցրին 70 000-ից ավելի մարդ, 300 մարտակառք և 500 հեծյալ: Ալեքսանդրի կողմից ողջ պաշարման ժամանակ զոհվեց 100-ից մի քիչ պակաս մարդ. վիրավորների թիվը անհամեմատ շատ էր՝ 1200-ից ավելի մարդ: Դրանց թվում էին տարբեր զորավարներ և Լիսիմաքոսը՝ թիկնապահը:

(6) Ընդունված կարգով թաղելով զոհվածներին, Ալեքսանդրը իր քարտուղար էվմենոսին ուղարկեց Սանգալի հետ ապստամբած

երկու մյուս քաղաքները: Նա նրան 300 հեծյալ տվեց և կարգադրեց հայտնել, որ Ալեքսանդրը ոչ մի վատ բան չի անի, եթե նրանք մնան տեղում և իրեն բարեկամարար ընդունեն: Ոչինչ չի պատահի նաև այն անկախ հնդիկներին, որոնք կամավոր կհնազանդվին իրեն: (7) Բայց նրանց արդեն հասել էր լուրը, որ Ալեքսանդրը գրոհով գրավել էր Սանգալը և նրանք սարսափած փախել էին, լքելով իրենց քաղաքները: Ալեքսանդրը, տեղեկանալով այդ փախուստի մասին, արագորեն անցավ հետապնդման: Մեծամասնությունը հաջողվեց փախչել, քանի որ հետապնդողները մեծ տարածություն պետք է անցնեին, բայց նրանք, ուլբեր հետ էին մնացել հիվանդություն կամ թուլություն պատճառով, ընկան զինվորների ձեռքը: Այդ նահանջի ժամանակ զոհվեց մոտ 500 մարդ: (8) Ալեքսանդրը հրաժարվեց հետագա հետապնդումից: Վերադառնալով Սանգալ, նա հիմնահատակ քանդեց քաղաքը, իսկ հողերը տվեց այն հնդիկներին, որոնք հին ժամանակներից անկախ էին, իսկ այժմ ինքնակամ հնազանդվել էին իրեն: Պորին իր զորքի հետ նա ուղարկեց հնազանդեցված քաղաքները՝ այնտեղ կայազորներ դնելու, իսկ ինքը զորքով շարժվեց դեպի Հիփաս գետը, որպեսզի փորձի նվաճել նաև այդ գետի այն կողմում ապրող հնդիկներին: Նա գտնում էր, որ պատերազմը չի կարող ավարտված լինել, քանի դեռ կան մարդիկ, որոնք ի վիճակի են իր հետ կռվելու:

25

Նրան պատմել էին, որ Հիփասի այն կողմում հարուստ երկիր կա, որ այն բնակեցված է մարդկանցով, որոնք կարողանում են լավ մշակել հողը և քաջարար կռվել: Նրանց պետությունը բարեկարգ է. ժողովրդին ղեկավարում են լավագույն մարդիկ, որոնք ոչ մի անարդարացի հրաման չեն արձակում: Փղեր շատ կան այնտեղ, և դրանք զերազանցում են հնդկական մնացած փղերին ինչպես իրենց հսկա հասակով, այնպես էլ իրենց արիությունը: (2) Այդ պատմությունները Ալեքսանդրին ավելի զորեցին առաջ գնալու իր մտադրություններում, սակայն մակեդոնացիներն ընկեճվեցին, տեսնելով, որ իրենց արքան պատրաստ է շարժարանները շարժարանների վրա բարդել և վտանգները՝ վտանգների: Ծամբարում հավաքեն սկսվեցին: Նրանք, ուլբեր ավելի խոնարհ էին, միայն ողբում էին իրենց ճակատագիրը, բայց մյուսները հաստատակամորեն հայտարարում էին, որ Ալեքսանդրի հետևից

վարեներին, — երբ այդ ազդանշանը կտրվի, ամեն մեկը ձեր ջուկատույ գնացեք դեպի աղմուկի վայրը, ուր կկանչի շեփորը: Ես էլ շնամ հրաժարվի մասնակցել այդ գործին»:

24

Այդպիսին էին նրա խոսքերը: Պողոմեսուր վերցրեց մեծ թվով այն սայլերից, որոնք առաջին անգամ փախուստի դիմելիս լքել էին բարբարոսները, և շեղակի շարեց, որպեսզի փախստականների ճանապարհին գիշերը բազմաթիվ խոչընդոտներ լինեն: Մեջտեղում՝ լճի և պարսպի միջև, նա հրամայեց տարբեր տեղերում ցցեր դիզել, որոնք արդեն սրված էին, բայց դեռ դետնի մեջ չէին խփված: Զինվորներն այդ ամենը արեցին գիշերվա ընթացքում: (2) Արդեն շորերով պահանջարկի ժամի մոտ էր. բարբարոսները (ինչպես որ հայտնել էին Ալեքսանդրին) բացեցին դեպի լիճը նայող դարպասը և վազբով նետվեցին դեպի այն: Դա չլրիպեց ո՛չ պահակակետերից, ո՛չ էլ նրանց հետևում կանգնած Պողոմեսուսի հայացքից. հենց այդ պահին իրենց շեփորները հնչեցրին փողհարները, և նա բարբարոսների դեմ հանեց ռազմաշարքով կանգնած և սպառազինված իր զորքը: (3) Բարբարոսները բախվում էին սայլերին և ոտքի տակ թափված ցցերին: Երբ հնչեցին շեփորները և Պողոմեսուր նետվեց նրանց վրա, կոտորելով նրանց, ուլբեր ջանում էին անցնել սայլերի միջով, նրանք կրկին քաղաք վերադարձան: Այդ նահանջի ընթացքում նրանցից զոհվեց մոտ 500 մարդ:

(4) Այդ ժամանակ ժամանեց Պորը՝ փրկված փղերով և հինգ հազարի լափ զորքով: Մեքենաները հավաքվեցին և մոտեցվեցին պարսպին: Սակայն մինչ գեթ մի ճեղքվածք կբացվեր, մակեդոնացիները պարսպի տակ ական փորեցին (այն աղյուսից էր շինված), ամեն կողմից աստիճաններ դրեցին և գրոհով վերցրին քաղաքը: (5) Գրավման ժամանակ զոհվեց 17 000 հնդիկ. գերի վերցրին 70 000-ից ավելի մարդ, 300 մարտակառք և 500 հեծյալ: Ալեքսանդրի կողմից ողջ պաշարման ժամանակ զոհվեց 100-ից մի քիչ պակաս մարդ. վիրավորների թիվը անհամեմատ շատ էր՝ 1200-ից ավելի մարդ: Դրանց թվում էին տարբեր զորավարներ և լիսիմարոսը՝ թիկնապահը:

(6) Ընդունված կարգով թաղելով զոհվածներին, Ալեքսանդրը իր քարտուղար էվմենեսին ուղարկեց Սանգալի հետ ապստամբած

երկու մյուս քաղաքները: Նա նրան 300 հեծյալ տվեց և կարգադրեց հայտնել, որ Ալեքսանդրը ոչ մի վատ բան չի անի, եթե նրանք մեան տեղում և իրեն բարեկամաբար ընդունեն: Ոչինչ չի պատահի նաև այն անկախ հնդիկներին, որոնք կամավոր կհնազանդվեն իրեն: (7) Բայց նրանց արդեն հասել էր լուրը, որ Ալեքսանդրը գրոհով գրավել էր Սանգալը և նրանք սարսափած փախել էին, լքելով իրենց քաղաքները: Ալեքսանդրը, տեղեկանալով այդ փախուստի մասին, արագորեն անցավ հետապնդման: Մեծամասնությամբ հաջողվեց փախչել, քանի որ հետապնդողները մեծ տարածություն պետք է անցնեին, բայց նրանք, ուլբեր հետ էին մնացել հիվանդությունների կամ թուլության պատճառով, ընկան զինվորների ձեռքը: Այդ նահանջի ժամանակ զոհվեց մոտ 500 մարդ: (8) Ալեքսանդրը հրաժարվեց հետագա հետապնդումից: Վերադառնալով Սանգալ, նա հիմնահատակ քանդեց քաղաքը, իսկ հողերը տվեց այն հնդիկներին, որոնք հին ժամանակներից անկախ էին, իսկ այժմ ինքնակամ հնազանդվել էին իրեն: Պորին իր զորքի հետ նա ուղարկեց հնազանդեցված քաղաքները՝ այնտեղ կալազորներ դնելու, իսկ ինքը զորքով շարժվեց դեպի Հիփաս գետը, որպեսզի փորձի նվաճել նաև այդ գետի այն կողմում ապրող հնդիկներին: Նա գտնում էր, որ պատերազմը չի կարող ավարտված լինել, քանի դեռ կան մարդիկ, որոնք ի վիճակի են իր հետ կռվելու:

25

Նրան պատմել էին, որ Հիփասի այն կողմում հարուստ երկիր կա, որ այն բնակեցված է մարդկանցով, որոնք կարողանում են լավ մշակել հողը և քաջաբար կռվել: Նրանց պետությունը բարեկարգ է. ժողովրդին ղեկավարում են լավագույն մարդիկ, որոնք ոչ մի անարդարացի հրաման չեն արձակում: Փղեր շատ կան այնտեղ, և դրանք գերազանցում են հնդկական մնացած փղերին ինչպես իրենց հսկա հասակով, այնպես էլ իրենց արիությունը: (2) Այդ պատմությունները Ալեքսանդրին ավելի դրդեցին առաջ դնալու իր մտադրություններում, սակայն մակեդոնացիներն ընկրճվեցին, տեսնելով, որ իրենց արքան պատրաստ է շարշարանները շարշարանների վրա բարդել և վտանգները՝ վտանգների: Ծամբարում հավաքեց սկսվեցին: Նրանք, ուլբեր ավելի խոնարհ էին, միայն ողբում էին իրենց ճակատագիրը, բայց մյուսները հաստատակամորեն հայտարարում էին, որ Ալեքսանդրի հետևից

չնն դնա, եթև նույնիսկ նա ինքը գլխավորի իրենց: Երբ Ալեքսանդրին հայտնի դարձավ այդ մասին, նա առանց սպասելու, որ Ղին՝ վարենրի հուզումները սաստկանան և նրանք լիովին հուսալքվեն, հավաքեց զորավարներին և դիմեց նրանց հետևյալ խոսքերով.

(3) «Մակեդոնացիներ՝ և դաշնակիցներ՝, ես տեսնում եմ, որ դուք ինձ հետ նախկին տրամադրութեամբ չեք գնալու վտանգավոր պատերազմի. ես էլ հավաքել եմ ձեզ, որպեսզի կա՛մ համոզեմ ձեզ և առաջ տանեմ, կա՛մ էլ համոզվեմ ձեր փաստարկներով և հետ վերադառնամ, Եթե դուք գտնում եք, որ մինչև այժմ կատարած բոլոր գործերը սին են, և ես, ձեր առաջնորդը, միայն նախատինքի եմ արժանի, ապա ես ձեզ այլևս ասելիք չունեմ: (4) Իսկ եթե այդ գործերով մենք ձեռք ենք բերել Հոնիան, Հելլեսպոնտոսը, Երկու Փոյոզիաները, Կապադովկիան, Պափլագոնիան, Լիդիան, Կարիան, Լիկիան, Պամփիլիան, Փյունիկիան, Եգիպտոսը հելլենական Լիբիայի հետ, Արաբիայի մի մասը, Կելեսիթիան և միջագետքը: (5) Զե՛ք ենք բերել Բաբելոնը, Շոշը, պարսիկներին ու մարերի հողերը և նրանք, որոնց կառավարում էին պարսիկներն ու մարերը և որոնց այժմ իրենք չեն կառավարում, Կասպիական դարպասների, Կովկասի, Տանախի այն կողմերում գտնվող հողերը, Տանախիի հարևան մարզերը, Բակտրիան, Վրկանը և Վըրկանաց ծովը: Սկյութներին քշեցինք իրենց անապատը: Ինդոսն այժմ հոսում է մեր երկրով, Հիդասպը նույնպես, ինչպես և Ալեքսիանն ու Հիդրատոսը: Ինչո՞ւ եք, ուրեմն, դանդաղում մեր մակեդոնական տիրություններին գումարել Հիփասը և Հիփասի այն կողմում բնակվող ցեղերին: (6) Թե՛ վախենում եք, որ ուրիշ բարբարոսներ կկարողանան հակահարված տալ ձեզ: Բայց չէ՞ որ նրանցից մի քանիսը կամավոր հնազանդվեցին մեզ, մյուսները փախան և գերվեցին. փախստականները մեր իշխանութեանը հանձնեցին իրենց ամայացված հողերը, որոնք տրվել են մեր դաշնակիցներին և նրանց, ովքեր կամավոր ենթարկվել են մեզ:

26

«Վեհանձն մարդու համար դժվարություններին և գործերի նըպատակը, բայտ իս, կրկին դժվարություններն ու գործերն են, եթե դրանցով իրականանում են հրաշալի գործեր: Իսկ եթե որևէ մեկը ծարավի է լսելու, թե որտեղ է ավարտվելու մեր պատերազմը, թող իմանա, որ մեզ մնացել է մի քիչ անցնել մինչև Գանգես գետը և

մինչև Արևելյան ծովը: Իսկ սա, ես հաստատում եմ, միանում է Վրկանաց ծովին. չէ՞ որ Մեծ ծովը շրջանցում է ողջ երկիրը: (2) Ես մակեդոնացիներին և դաշնակիցներին ցույց կտամ Պարսից ծոցի հետ միաձուլվող Հնդկական ծոցը և Հնդկականի հետ միաձուլվող Վրկանաց ծովը: Պարսից ծոցից մենք մեր նավերով շըրջանաձև ճամփորդություն կկատարենք դեպի Լիբիա, ընդհուպ մինչև Հերկուլեսյան սյունները: Այդպիսով ողջ Լիբիան, սկսած Մյունեից, և ողջ Ասիան կդառնա մերը. մեր պետութեան սահմանները կլինեն նրանք, որոնց աստված նախատեսել է երկրին: (3) Իսկ եթե մենք այժմ հետ դառնանք, ապա մեր թիկունքում կմնան բազմաթիվ ռազմատեղի ժողովուրդներ. և Հիփասի այն կողմում, ընդհուպ մինչև Արևելյան ծովը, և՛ նրանց հետևում, դեպի հյուսիս, մինչև Վրկան. իսկ չէ՞ որ այնտեղից ոչ հեռու գտնվում են սկյութական ցեղերը: Պետք է երկյուղել, որ երբ մենք հետ դառնանք, ապա չնվաճված ցեղերը ապստամբութեան կհանեն արդեն նվաճվածներին, բայց դեռ հիմնովին չենթարկվածներին: (4) Եվ այնժամ մեր մեծ տանջանքները դուր կլինեն, կամ էլ կպահանջվի կրկին սկզբից վտանգների ենթարկվել և կրել նոր դժվարություններ: Ամբապնդվեք, մակեդոնացիներ և դաշնակիցներ: Այն մարդկանց համար, ովքեր դժվարություններ ու վտանգներ են կրում հանուն մեծ նպատակի, քաղցր է ապրել և մեռնել, հետևում թողնելով անմահ փառք: (5) Մի՞թե դուք չգիտեք, որ մեր նախահայրը հասել է այնպիսի փառքի, որ աստված է դարձել կամ աստծու անուն հանել (չէ՞ որ նա մարդ է եղել) ոչ նրա համար, որ մըշտապես ապրել է Տիրինսում, Արգոսում, Պելոպոնեսում կամ Քերեսում: Դիոնիսոսն էլ քիչ դժվարություններ չի կրել, իսկ Հերակլեսի համեմատ նա այնքան փափկակյաց էր: Իսկ մկեր մեր հետևում ենք թողել Նիսոսն և տիրացել Ահորնի ժալոխ, որը չէր կարողացել զրավել Հերակլեսը: (6) Դրան ավիացրեք նաև Ասիայի մնացած մասը, ինչ արդեն ձեռք ենք բերել. քիչը՝ շատին: Ինչ մեծ ու հիասքանչ գործեր արած կլինեինք մենք, եթե նստեինք Մակեդոնիայում և գտնեինք, որ մեզ բավարարում է հանգիստ կյանքը. պաշտպանել հայրենի երկիրը և միայն հետ քշել նրանից հարևաններին՝ թրակացիներին, իլիրիացիներին, տրիբալներին և այն հելլեններին, որոնք թշնամարար են տրամադրված մեզ:

(7) «Եթե ես, առաջնորդելով ձեզ, ձեր վրա դնեի բոլոր դժվարություններն ու վտանգները, իսկ ինքս ոչնչի մասին տեղյակ

լեն զնա, եթե նույնիսկ նա ինքը զլիսավորի իրենց: Երբ Ալեքսանդրին հայտնի դարձավ այդ մասին, նա առանց սպասելու, որ դինվորների հուզումները սաստկանան և նրանք լիովին հուսալքվին, հավաքեց զորավարներին և դիմեց նրանց հետևյալ խոսքերով.

(3) «Մակեդոնացիներ և դաշնակիցներ, ես տեսնում եմ, որ դուք ինձ հետ նախկին տրամադրությամբ չեք գնալու վտանգավոր պատերազմի. ես էլ հավաքել եմ ձեզ, որպեսզի կա՛մ համոզեմ ձեզ և առաջ տանեմ, կա՛մ էլ համոզվեմ ձեր փաստարկներով և հետ վերադառնամ: Եթե դուք գտնում եք, որ մինչև այժմ կատարած բոլոր գործերը սին են, և ես, ձեր առաջնորդը, միայն նախատինքի եմ արժանի, ապա ես ձեզ այլևս ասելիք չունեմ: (4) Իսկ եթե այդ գործերով մենք ձեռք ենք բերել Հոնիան, Հելլեսպոնտոսը, երկու Փոյուզիաները, Կապադովկիան, Պափլագոնիան, Լիդիան, Կարիան, Լիկիան, Պամփիլիան, Փյունիկիան, Եգիպտոսը հելլենական Լիբիայի հետ, Արարիայի մի մասը, Կելեսիրիան և միջագետքը: (5) Չե՞րք ենք բերել Բաբելոնը, Շոշը, պարսիկներն ու մարերի հողերը և նրանք, որոնց կառավարում էին պարսիկներն ու մարերը և որոնց այժմ իրենք չեն կառավարում, Կասպիական զարպասների, Կովկասի, Տանախի այն կողմերում գտնվող հողերը, Տանախին հարևան մարդերը, Բակտրիան, Վրկանը և Վրրկանաց ծովը: Սկյութներին բռնեցինք իրենց անապատը: Ինդոսն այժմ հոսում է մեր երկրով, Հիդասպը նույնպես, ինչպես և Ակեսինն ու Հիդրատոսը: Ինչո՞ւ եք, ուրեմն, դանդաղում մեր մակեդոնական տիրություններին գումարել Հիփասը և Հիփասի այն կողմում բնակվող ցեղերին: (6) Թե՞ վախենում եք, որ ուրիշ բարբարոսներ կկարողանան հակահարված տալ ձեզ: Բայց չէ որ նրանցից մի բանիսը կամավոր հնազանդվեցին մեզ, մյուսները փախան և դերվեցին. փախստականները մեր իշխանությունը հանձնեցին իրենց ամայացված հողերը, որոնք արվել են մեր դաշնակիցներին և նրանց, ովքեր կամավոր ենթարկվել են մեզ:

26

«Վեհանձն մարդու համար դժվարությունների և գործերի նպատակը, ըստ իս, կրկին դժվարություններն ու գործերն են, եթե զբանցով իրականանում են հրաշալի գործեր: Իսկ եթե որևէ մեկը ծարավի է լսելու, թե որտեղ է ավարտվելու մեր պատերազմը, թող իմանա, որ մեզ մնացել է մի քիչ անցնել մինչև Գանգես գետը և

մինչև Արևելյան ծովը: Իսկ սա, ես հաստատում եմ, միանում է Վրկանաց ծովին. չե՞ որ Մեծ ծովը շրջանցում է ողջ երկիրը: (2) Ես մակեդոնացիներին և դաշնակիցներին ցույց կտամ Պարսից ժոցի հետ միաձուլվող Հնդկական ծոցը և Հնդկականի հետ միաձուլվող Վրկանաց ծովը: Պարսից ժոցից մենք մեր նավերով շրջանաձև ճամփորդություն կկատարենք դեպի Լիբիա, ընդհուպ մինչև Հերուլեսյան սյուները: Այդպիսով ողջ Լիբիան, սկսած Մյունիերից, և ողջ Ասիան կդառնա մերը. մեր պետության սահմանները կլինեն նրանք, որոնց աստված նախատեսել է երկրին: (3) Իսկ եթե մենք այժմ հետ դանանք, ապա մեր թիկունքում կմնան բազմաթիվ ռազմատեղե ժողովուրդներ. և Հիփասի այն կողմում, ընդհուպ մինչև Արևելյան ծովը, և՛ նրանց հետևում, զեպի հյուսիս, մինչև Վրկան. իսկ չե՞ որ այնտեղից ոչ հեռու գտնվում են սկյութական ցեղերը: Պետք է երկյուղել, որ երբ մենք հետ դառնանք, ապա չնվաճված ցեղերը ապստամբության կհանեն արդեն նվաճվածներին, բայց դեռ հիմնովին չենթարկվածներին: (4) Եվ այնժամ մեր մեծ տանջանքները զուր կլինեն, կամ էլ կպահանջվի կրկին սկզբից վտանգների ենթարկվել և կրել նոր դժվարություններ: Ամբապնդվեք, մակեդոնացիներ և դաշնակիցներ: Այն մարդկանց համար, ովքեր դժվարություններ ու վատնանքներ են կրում հանուն մեծ նպատակի, քաղցր է ապրել և մեռնել, հետևում թողնելով անմահ փառք: (5) Մի՞թե դուք չգիտեք, որ մեր նախահայրը հասել է այնպիսի փառքի, որ աստված է դարձել կամ աստծու անուն հանել (չե՞ որ նա մարդ է եղել) ոչ նրա համար, որ մըշտապես ապրել է Տիրինսում, Արգոսում, Պելոպոնեսում կամ Թեբեում: Դիոնիսոսն էլ քիչ դժվարություններ չի կրել, իսկ Հերակլեսի համեմատ նա այնքան փափկակյաց էր: Իսկ միևր մեր հետևում ենք թողել Նիսան և տիրացել Ահորնի ժայռին, որը չէր կարողացել զբաղել Հերակլեսը: (6) Դրան ավելացրեք նաև Ասիայի մնացած մասը, ինչ արդեն ձեռք ենք բերել: Բիշը՝ շատին: Ինչ մեծ ու հիասքանչ գործեր արած կլինեինք մենք, եթե նստեինք Մակեդոնիայում և գտնեինք, որ մեզ բավարարում է հանգիստ կյանքը. պաշտպանել հայրենի երկիրը և միայն հետ բռնել նրանից հարևաններին՝ թրակացիներին, իլիրիացիներին, տրիբալներին և այն հելլեններին, որոնք թշնամաբար են տրամադրված մեզ: (7) «Եթե ես, առաջնորդելով ձեզ, ձեր վրա դնեի բոլոր զբժվարություններն ու վտանգները, իսկ ինքս ոչնչի մասին տեղյակ

լինելի, շիմանայի, ապա դուք, բնականաբար, կհուսարեկվեիք, համարելով, որ դժվարությունները միայն ձեզ են բախտ վիճակվել, իսկ դրանց դիմաց պարգևները ձեռք են բերվում ուրիշների համար: (8) Բայց չէ որ մեր տառապանքներն ընդհանուր են, ես կիսում եմ վտանգները ձեզ հետ հավասար, իսկ պարգևները տրվում են բոլորին: Ձեզ են պատկանում երկրները, և դուք նրանց սատարպաններն եք: Այժմ էլ գանձերի դգալի մասը ձեզ է անցնում, իսկ երբ մենք անցնենք ողջ Ասիայով, ապա, երզվում եմ Զևսով, ամեն մեկին բարիք կտամ ոչ թե իր ակնկալությունների շարժով, այլ ավելին, շարժից դուրս. և նրանց, ովքեր կցանկանան տուն վերադառնալ, հետ կուղարկեմ հայրենի երկիր, կամ ինքս կտանեմ նրանց, իսկ մնացողների հետ այնպես կվարվեմ, որ գնացածները կնախանձեն նրանց»:

27

Երբ Ալեքսանդրն ավարտեց, երկար ժամանակ բոլորը լուռ էին, ոչ մեկը չէր համարձակվում միանգամից առարկել արթային, բայց ոչ մեկն էլ չէր ուզում համաձայնել նրա հետ: Ալեքսանդրը բազմիցս առաջարկեց ցանկացողներին ելույթ ունենալ, եթե նրանք որևէ առարկություն ունեն, կուրծնը, այնուհանդերձ, շարունակվում էր: Վերջապես Քենոսը՝ Պոլիմոկրատոսի որդին, համարձակություն ձեռք բերեց:

(2) Ճկբա, քանի որ դու ցանկանում ես տնօրինել մակեդոնացիներին ոչ պարզապես հրամաններ արձակելով, և ասում ես, որ կառաջնորդես մեզ, համոզելով, որ անհրաժեշտ է առաջ շարժվել, իսկ եթե քեզ հակառակը համոզեն, ապա հարկադրանքից կհրաժարվես, այդ դեպքում ես կպատասխանեմ քեզ և կիտոսեմ ոչ մեր մասին՝ մենք ողողված ենք պարգևներով, մեզանից մեծ մասըն արդեն պարզաատրված է իր զորքերի համար. մենք մնացածներից վեր ենք դասված և պատրաստ ենք քեզ հետ ամեն ինչի: Ես կխոսեմ զորքի մեծամասնության մասին: (3) Եվ ես զրա մասին կխոսեմ, մտորելով ոչ թե այն մասին, թե ինչն է նրանց հաճելի, այլ ներկայիս քո օգտի և ապագայի անվտանգության մասին: Թե՛ իմ տարիքը և թե՛ այն հարգանքը, որը, շնորհիվ քեզ, ինձ ցուցաբերում են մյուսները, և իմ անբասիր արիությունը ծանրը գործերում և վտանգների մեջ ինձ իրավունք են տալիս բացեիքաց առելու, թե ինչն եմ ես լավագույնը համարում: (4) Քո՛ առաջնորդի և նրանց կողմից, ովքեր քեզ հետ միասին հեռացան

անից, կատարվել են բազմաթիվ մեծ գործեր և, այդ պատճառով, ինձ թվում է, հատկապես օգտակար է սահման դնել գործերին ու վտանգներին: Դու ինքդ տեսնում ես, թե որքան մակեդոնացիներ ու հելլեններ գնացին քեզ հետ և որքան են մնացել: (5) Երբ Բակտրիայում տեսար, որ թեսալացիներն այլևս ցանկություն չունեն կրելու պատերազմի և արշավանքների տառապանքները, դու նրանց տուն ուղարկեցիր, և հիանալի վարվեցիր: Ինչ վերաբերում է հելլեններին, որոնք բնակեցվեցին քո հիմնած քաղաքներում, նրանք էլ ոչ այնքան իրենց կամքով մնացին: Այն հելլենների ու մակեդոնացիների, որոնք շարունակում էին քեզ հետ կիսել զրգավարություններն ու վտանգները, մի մասը զոհվեց մարտերում, մյուսները, վիրավորվելուց հետո՝ արդեն անկարող զինվորական ծառայությունը, ցրվեցին Ասիայով մեկ, ով որտեղ հասավ: (6) Ավելի շատ մահացան հիվանդություններից. մնացել են քչերը, և նրանք էլ նախկին ուժը չունեն, իսկ հոգեպես նրանք ավելի հուշած են: Բոլոր նրանք, ում ծնողները դեռ ողջ են, կարոտում են նրանց. կարոտում են կանանց ու զավակներին, կարոտում են հայրենի երկրին, և այդ կարոտը ներքին է նրանց. նրանք հեռացան որպես շնչին աղբատներ և այժմ, քեզնով ոտքի ելած, ծարավ են տեսնել այն նշանավոր ու հարուստ մարդիկ գարձած: (7) Մի տար ցինվորներին իրենց կամքին հակառակ: Եթե նրանք կոմվելու ցանկություն չունեն, նրանք այնպիսին չեն լինի քեզ համար, ինչպես նախկինում: Ինքդ էլ վերադարձիր հայրենիք, տես մորդ, կարգավորիր հելլենական գործերը, հայրական տուն տար քո բազմաթիվ և մեծ հաղթանակները: Եվ այնժամ կրկին արշավանք կազմակերպիր, եթե ցանկանում ես, արևելքում ապրող հնդիկների դեմ. եթե ցանկանում ես, դեպի էվրոսինյան ծով կամ էլ Կարթագենի և Կարթագենից այն կողմ գտնվող լիբիական երկրների դեմ: Քո գործը կլինի մարդկանց առաջնորդելը: (8) Ուրիշ մակեդոնացիներ ու ուրիշ հելլեններ կհետևեն քեզ՝ ձերունիների փոխարեն երիտասարդները, հյուսիսային փոխարեն ուժով լեցունները. մարդիկ, որոնց հայտնի չէ, թե ինչ բան է պատերազմը և, այդ պատճառով, չեն վախենում, այլ ցանկանում են այն՝ ապագայի ապահովության հույսով: Նրանք կհետևեն քեզ, իհարկե, առանձնահատուկ ցանկությունով, տեսնելով, որ քո նախկին համախոհները գնացել էին որպես անհայտ աղբատներ, իսկ հայրենիք են վերադարձել որպես հարուստ և փառաբանված մարդիկ: (9) Արքա, եթե մի բան լավ

է, ապա դա երջանկութեան մեջ հնազանդ լինելն է: Քեզ, այդպիսի առաջնորդիդ, նման զորքի ղեկավարիդ, թշնամուց վախենալու ոչինչ չունես, բայց աստված կարող է անսպասելի որևէ բան առաքել, և մարդուն այդ դեպքում անհնար է զգուշանալ»:

28

Երբ Քենտոն ավարտեց, ներկա դանձուղների մեջ աղմուկ բարձրացավ: Շատերը լաց էին լինում, դա ավելի պարզորոշ խոստում էր այն մասին, թե նրանք որքան դեմ են հետագա պատերազմին և ինչպիսի երջանկություն կլինի նրանց համար տուն վերադառնալու: Ալեքսանդրը Քենտոն ազատամիտ ճառից և մյուսների անվճռականությունից սրտենդած, ազատ արձակեց ժողովուրդը: (2) Հաջորդ օրը, նա, ցատումով լի, կրկին հավաքեց նույն մարդկանց և ասաց, որ ինքը կգնա առաջ, բայց մակեդոնացիներից ոչ մեկին չի ստիպի իր կամքին հակառակ հետևել իրեն. կլինեն մարզիկ, որոնք կամավոր կհետևեն իրենց արքային: Նրանք, ովքեր ցանկանում են տուն գնալ, թող գնան և թող տենցիներին հայտնեն, որ լքել են թշնամիներով շրջապատված իրենց արքային: (3) Այդ խոսքերից հետո նա հեռացավ իր վրանը և այդ օրը և եւ երկու օր ոչ մեկին չէր ընդունում՝ նույնիսկ «ընկերներին», սպասելով, արդո՞ք մակեդոնացիների և դաշնակիցների տրամադրությունը չի փոխվի. զինվորական միջավայրում դա հաճախ է պատահում և հնարավորություն է տալիս նաև ավելի հեշտություններ համոզել: (4) Սակայն ճամբարում բար լուսնըն էր տիրում. Ալեքսանդրի ցատումը, հավանաբար, միայն նեղուհյուն էր պատճառել զինվորներին, բայց չէր փոխել նրանց տրամադրությունը: Այնուամենայնիվ, ըստ Պտղոմեոսի՝ Լագոսի որդու, Ալեքսանդրը զոհեր մատուցեց Հիփասան անցնելուց առաջ, սակայն զոհերն անբարենպաստ եղան: (5) Այնժամ նա ժողովեց «ընկերներից» ամենաավագներին և իրեն առավել նվիրված մարդկանց և, բանի որ ամեն ինչ նախանշում էր, որ անհրաժեշտ է վերադառնալ, նա հրամայեց հայտարարել զորքին, որ որոշված է հեռ գառնալ:

29

Զինվորները սկսեցին այնպես բղավել, ինչպես բղավում է անկարգ, ցնծող ամբոխը. շատերը լաց էին լինում: Մոտենալով արքայական վրանին, նրանք Ալեքսանդրին բարի ցանկություններով էին հեղեղում այն բանի համար, որ նա միայն իրենց թույլ-

բարեց հաղթել նրան՝ Ալեքսանդրին: Ալեքսանդրը զորքը ջոկատների բաժանելով, հրամայեց նրանց կառուցել 72 զոհասեղան ամենաբարձր աշտարակի բարձրությամբ և ավելի լայն, քան աշտարակներն են՝ որպես շնորհակալություն աստվածներին նրանց պարգևած հաղթանակների և կրած դժվարությունների հիշատակին: (2) Երբ զոհասեղանները պատրաստ էին, նա դրանց վրա սահմանված զոհեր մատուցեց և հեծելազորի ու մարմնամարզական մրցումներ կազմակերպեց: Մինչև Հիփաս ընկած երկիրը նա հանձնեց Պորի կառավարմանը, իսկ ինքն ուղղվեց դեպի Հիդրատո: Անցնելով Հիդրատո, նա շարունակեց նահանջել դեպի Ակեսին: (3) Այնտեղ նա գտավ արդեն կառուցված մի քաղաք, որի շինարարությունը հանձնարարել էր Հեփեստիոնեսին. նա այստեղ արգեն բնակեցրել էր շրջակայքում ապրողներին, որոնք ցանկացել էին հիմնավորվել այդտեղ, ինչպես նաև անմարտունակ վարձկաններին, իսկ ինքը սկսեց պատրաստվել Մեծ ծովով նավարկելու:

(4) Այդ ժամանակ նրա մոտ եկան Արսակը՝ Արիսարի Նարեզան երկրի իշխանը, Արիսարի եղբայրը և նրա ուրիշ ազգականները՝ ընծաներով, որոնք հնդիկները հատկապես պատվավոր են համարում, և Արսիարի ուղարկած 30 փղերով: Նրան ասացին, որ Արիսարը չկարողացավ գալ, քանի որ հիվանդ էր: Այդ բանը հաստատեցին նաև Արիսարի մոտ ուղարկված Ալեքսանդրի դեսպանները: (5) Լիովին վստահելով դրան, նա Արիսարին երկրորդ անգամ անտրապ նշանակեց և Արսակին դրեց Արիսարի ենթակայության ասել: Որոշելով տուրքերի չափերը, որոնք նրանք պետք է վճարեին, նա կրկին Ակեսինի ափին զոհեր մատուցեց, Կրկին անցնելով, Ակեսինը, նա եկավ դեպի Հիդրատո, որտեղ զորքի հետ միասին կարգի բերեց նիկեայի և Բուկեփալասի այն մասերը, որոնք տուժել էին հորդառատ անձրևներից, և ընդհանրապես նրկրում կարգ ու կանոն հաստատեց:



ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

1

Ալեքսանդրի համար Հիդասսպի ափերին պատրաստել էին երեսունթիանոց բազմաթիվ նավեր, հեմիոլներ, ձիերի տեղափոխման և գետով գորթի անցման համար բազմաթիվ հարմար նավեր, և նա որոշեց լողալ Հիդասսպով հոսանքն ի վար մինչև Մեծ ծովը: (2) Գրանից առաջ, երբ նա Ինգոսում կոկորդիլոսներ տեսավ (զամիակ գետն է, բացի Նեղոսից, որտեղ նրանք բնակվում են, իսկ Ակեսիոնի ափերին՝ այնպիսի բակլաններ, որպիսին աճեցնում է եգիպտական հողը և լսեց, որ Ակեսիոնը թափվում է Ինգոսը, նա որոշեց, որ գտնել է Նեղոսի ակունքները: (3) Նեղոսն սկիզբ է առնում այս կողմերից՝ հնդկների երկրից, հոսում հսկա անապատով, այստեղ կորցնում Ինգոս անունը և, մտնելով մարգարենակ երկիր, տեղացի եթովպացիների և եգիպտացիների կողմից ստանում Նեղոս անունը կամ, ինչպես պարզել է Հոմերոսը, ստացել է երկրին համանուն Եգիպտոս անվանումը: Այս անունով էլ Նեղոսը թափվում է ներքին ծովը: (4) Օլիմպիադային գրած նամակներում հնդկական երկրի մասին հայտնվող տարբեր տեղեկությունների հետ, Ալեքսանդրը գրում է, որ իր կարծիքով, նա գտել է Նեղոսի ակունքները, սակայն քիչ, այն էլ ոչ համողիչ, ապացույցներ է բերում այդպիսի կարևոր հարցի համար: (5) Տեղացիներից Ինգոսի մասին ավելի ճշգրիտ տեղեկություններ հավաքելով, նա տեղեկացավ, որ Հիդասսպը երկու գետաբերաններով թափվում է Մեծ ծովը և ոչ մի առնչություն չունի եգիպտական երկրի հետ: Այդ ժամանակ նա ստիպված եղավ հրաժարվել Նե-

ղոսի մասին մորը գրածներին: (6) Մտադրվելով գետերով իջնել գետի Մեծ ծովը, նա կարգադրեց այդ նավարկության համար նավեր պատրաստել: Այդ նավերի վրա թիավառներ ու նավաստիներ հավաքագրեցին փյունիկացիներից, կիպրոսցիներից, կաբիացիներից և եգիպտացիներից, որոնք ուղևեցում էին զորքին:

2

Այդ ժամանակ հիվանդությունից մահացավ Քենոսը՝ Ալեքսանդրի ամենահավատարիմ «ընկերներից» մեկը: Ալեքսանդրը այն ժամանակվա համար շքեղ թաղում կազմակերպեց: Ժողովելով «ընկերներին» և իր մոտ ժամանած հնդկի ղեսպաններին, նա նվաճված հնդկական երկրների արքա նշանակեց Պորին. նրա իշխանությունը տակ անցան յոթ հնդկական ցեղեր և այդ ցեղերին պատկանող 2000-ից ավելի քաղաքներ: (2) Իր զորքը նա բաժանեց հետևյալ ձևով՝ իր հետ նավերը նստեցրեց բոլոր վահանակիրներին, նետաձիգներին, ազրիանացիներին և հեծյալների աղեմուսը: Կրատերոսը Հիդասսպի աջ ափով վար տարավ հեծելազորի ու հետևակի մի մասը. մյուս ափով գնում էր Հեփեստիոնեսը՝ գլխավորելով զորքի մեծ և լավագույն մասը. նրա հետևից գնում էին նաև փղերը, որոնց թիվն այժմ հասնում էր 200-ի: Երկուսին էլ հրամայված էր հնարավորին շափ շուտ հասնել Սոպիթի մայրաքաղաքը: (3) Ինգոսից մինչև Բակտրիա ընկած տարածքի սատրապ թողնված Փիլիպոսին հրամայված էր սպասել այնտեղ երեք օր և հետո շարժվել իր զորքով: Նիսասյական հեծյալներին նա ուղարկեց հետ՝ Նիսա: Ալեքսանդրի որչ նավատորմի հրամանատարը Նեարքոսն էր, իսկ այն նավի նավավարը, որի վրա զստնելում էր Ալեքսանդրը, Օնեսիկրիտոսն էր, որն Ալեքսանդրի մասին գրած իր երկասիրության մեջ այստեղ էլ ստեղծ էր, իրեն՝ հասարակ նավավարին նավարքոս անվանելով: (4) Ըստ Պտղոմեոսի՝ Լազոսի որդու, որին նա գերազանցապես հետևում եմ, նավերի թիվը լափազանց շատ էր. երեսունթիանոցներինը՝ մոտ 80, իսկ բոլոր նավերի թիվը, այդ թվում և բեռնատարները՝ ձիերի տեղափոխման համար, կերկուրները և այլ գետացիներ նավերը, ինչպես հենքը՝ վաղուց գետերով նավարկող, այնպես և նոր կառուցվածները, կազմում էր 2000-ից քիչ պակաս:

Նրբ ամեն ինչ պատրաստ էր, զինվորները լուսաբացին նստեցին նավերը, իսկ Ալեքսանդրը գուշակների ցուցումներով սահմանված զոհը մատուցեց; Բարձրանալով նավի վրա և կանդնելով նավաբեթին, նա ոսկե գավաթից գետում գինի հեղեց, միաժամանակ զիմելով Ակեսիին, Հիդասպին (նա իմացել էր, որ Ակեսիինը Հիդասպի ամենամեծ վտակն է և որ նրանք միանում են այդ վայրից ոչ հեռու) և Ինդոսին, ուր թափվում են Ակեսիինը և Հիդասպը: (2) Նա հեղեց նաև Հերակլեսին՝ իր ազգականին, Ամոնին և այլ աստվածների, որոնց նա սովորաբար զոհեր է մատուցում, և հետո հրամայեց փողհարին մեկնելու ազդանշան տալ: Հենց այն տրվեց, բոլոր նավերը հերթով շարժվեցին: Ընդհարումներից խուսափելու համար, որը հնարավոր էր կազմակերպվածույթյան բացակայության հետևանքով, արդեն նախապես հրամայված էր, թե մեկը մյուսից ինչ հեռավորության վրա պետք է լինեն տարբեր նավերը՝ բռնատար նավերը, որոնց վրա տանում էին ձիերին, և ռազմանավերը: Արագընթաց նավերին չէր թույլատրվում դուրս գալ շարքից և մյուս նավերից առաջ անցնել: (3) Անհնար է որեէ բռնի հետ համեմատել թիերի ճողփունի աղմուկը, որոնք միաժամանակ ջուրն էին իջնում այդքան նավերից, կելեֆոստեսների գույուններից, համաձայն որոնց թիերն իջնում ու բարձրանում էին թիավարների բացականչություններից, երբ նրանք միաժամանակ ուժ էին տալիս թիերին, Շատ տեղերում ավերը բարձրանում էին նավերից վեր. կիրճում սեղմված և դրանից ավելի ուժգնացած ձայները մի ավից մյուսն էին նետվում. արձագանքը տարածվում էր գետի երկու կողմերում գտնվող ամալի անտառներով: (4) Ձիերի տեսքը, որոնց կարելի էր տեսնել լաստանավերի վրա, ցնցեց լողացող նավերին նայող բարբարոսներին (մինչ այդ հնդկական երկրում նավերի վրա ճամփորդող ձիեր չէին տեսել, ասենք ոչ մի տեղ չի էլ հիշատակված, որ Դիոնիսոսը ժամանած լինի հնդկական մոտ ծովալիս ճանապարհով). նրանք, ովքեր ներկա էին նավերի մեկնմանը, ճանապարհում էին նրանց երկար տարածության վրա: (5) Նվաճված այն հնդկները, որոնց հասնում էր թիավարների գույուններն ու թիերի ճողփունը, վազում էին դեպի ավի և հետևելով նավարկողներին բարբարոսական երգեր երգելով: Հնդկները, զեռ Դիոնիսոսի և նրա ուղեկիցների ժամանակներից ի վեր,

որոնք Դիոնիսոսի հետ միասին հնդկական երկրում շուրջպար էին բռնում, աչքի են ընկնում երգ ու պարի նկատմամբ ունեցած իրենց սիրով:

Նավարկման երրորդ օրը Ալեքսանդրը կանգ առավ այն տեղում, որտեղ Հեփեստիոնեսին և Կրատերոսին հրամայված էր երկու ավերին, իրար դիմաց, ճամբար խփել: Այստեղ Ալեքսանդրը մնաց երկու օր, սպասելով, մինչև Փլիպոսը կգար մնացած զորքով: Նրան նա ուղարկել էր դեպի Ակեսի գետը, հրամայելով, որ նա իր մարդկանցով զնար ավորվի: Կրատերոսին և Հեփեստիոնեսին իրենց ջոկատներով նա կրկին առաջ ուղարկեց, պատվիրելով, թե որ ճանապարհով պետք է նրանք շարժվեն. (2) իսկ ինքը՝ Հիդասպով վար նավարկեց. այդ գետը, ողջ այն տարածությունում, որով անցավ նրա նավատորմը, ոչ մի տեղ քսան ասպարեզից ավելի նեղ չէր: Մոտենալով ավիին, որտեղ որ պատահի, նա իրեն նախարկեց Հիդասպի ավիին քնակվող հնդկներին. մի մասը կամավոր էր հնազանդվում, իսկ ով զենք էր առնում ձեռքը, նա ճնշում էր ուժով: (3) Սակայն նա շտապում էր մալերի և օբսիդրականների երկիրը. նրան արդեն հայտնի էր, որ դրանք այստեղի հնդկներից ամենամարդաշատ ու ռազմատենչ ցեղերն են, և նրան զեկուցել էին, որ կանանց ու երեխաներին նրանք ուղարկել են իրենց ամենաանտիկ քաղաքները և որոշել են պատերազմել իր հետ: Նա հատկապես շտապում էր հասնել նրանց, որպեսզի նրանց հետ հանդիպի ոչ թե այն ժամանակ, երբ նրանց մոտ ամեն ինչ կարգավորված լինի, այլ նախապատրաստությունների իրարանցման ժամանակ, երբ մեկ այս բանի, մեկ այն բանի պակասն է զգացվում: (4) Նա երկրորդ անգամ ճամփա ընկավ այդ կանդառից և հինգերորդ օրը հասավ Հիդասպի և Ակեսիինի միախառնման տեղը: Այս գետերը միանալով իրար և դառնալով չափազանց նեղ մի գետ, սրընթացորեն հոսում են կիրճով, ահավոր հորձանուտներ ստեղծելով, որոնցում ջուրն ասես հետ է գնում: Զուրը ետում է, և ավիները լեռնանում են. դեռ հեռվից լսվում է նրա շաշյունը: (5) Տեղաբնակները նախապես զգուշացրել էին Ալեքսանդրին՝ դրա մասին. Ալեքսանդրն էլ զգուշացրեց զինվորներին: Եվ, այնուհանդերձ, երբ նրանք մոտեցան գետերի միախառնման տեղին, ջրի մոնչյունը այնպես ցնցեց նրանց, որ նավաստիները դադարեցին:

թիաւարել հրամանի շտապելով, քանի որ իրենք՝ կելեֆստեաններն էլ զարմանքից լռեցին, և անձնակազմը սարսափից բար կտրեց այդ մոնչլունը լսելով:

5

Երբ նրանք արդեն հեռու չէին գետերի միախառնման տեղից, նաւավարները հրաման արձակեցին ամբողջ ուժով թիաւարել, որպեսզի արագորեն դուրս գան նեղ գետահովտից, թույլ չտալով, որ նավերն ընկնեն հորձանուտները, որոնք շրջապատուտի մեջ կզցեին նրանց. անհրաժեշտ էր թիաւարելով հաղթահարել այդ պտտովող ալիքները: (2) Մի քանի բեռնատար նավերի հոսանքը պտտեցրեց, բայց նրանց հետ ոչ մի դժբախտութիւն չպատահեց. ճիշտ է, նրանց վրա գտնվողները մեծ սարսափ ապրեցին, սակայն հոսանքը ինքն ուղղեց նավերը և տարավ ճիշտ ճանապարհով: Թագմանավերի հետ գործն այդքան բարեհաջող չավարտվեց. նրանք այդպիսի թեթևութիւնով չէին բարձրանում փոթորկվող ալիքների վրա. երկհարկ թիւեր ունեցող նավերի ներքևի շարքը համարյա հայտնվում էր ջրին հավասար բարձրութեան վրա, (3) և երբ նավերը հորձանուտում թեթևեցին, այն թիւերը, որոնք ժամանակին շտապեցին վեր հանել, ջարդովիշուր եղան: Այդ նավերից շատերը տուժեցին. երկուսն իրար բախվեցին և ջարդվեցին. շատ մարդիկ զոհվեցին: Երբ, վերջապես, գետը լայնացավ, հոսանքը դարձավ ոչ այդքան արագ, իսկ հորձանուտներն՝ ոչ այդքան ուժգին, (4) Ալեքսանդրը կանգ առավ աջ ափին. այստեղ նավերը կարող էին կանգնել հանդարտ ջրում. գետի մեջ մտած բարձր հրվանդանը պահում էր ջարդված նավերի մնացորդները, և այդտեղ էր բռնել և նրանց, ովքեր կենդանի էին մնացել նավաբեկութիւնից հետո: Նրանց փրկեցին. վնասված նավերը կարգի բերեցին, և Ալեքսանդրը հրամայեց նեարթոսին նավարկել գետն ի վար մինչև մալերի մարդը: Իսկ ինքն էլ ասպատակեց դեռ իրեն շնամարկված բարբարոսներին, խանդարեց նրանց մալերին օգնութեան ձեռք մեկնելու և կրկին վերադարձավ չեպի իր նավատորմը:

(5) Հեփեստիոնեսը, Կրատերոսը և Փիլիպոսն իրենց ջոկատներով արդեն այնտեղ էին: Հիլլասպի այն կողմն անցկացնելով փղերին, Պոլիպերոնտեսի գունդը, հեծյալ նետածիգներին և Փիլիպոսին իր զինվորներով, Ալեքսանդրը հանձնարարեց Կրատերոսին գլխավորել այդ զորքը: Նեարթոսին կարգադրեց նավարկել

այնպիսի հաշվարկով, որպեսզի նա երեք օրով առաջ անցնի զորքից: (6) Իր մոտ մնացած զորքը նա բաժանեց երեք մասի. Հեփեստիոնեսին հինգ օր շուտ ուղարկեց այն հաշվարկով, որ այն զինվորները, որոնք ցանկանալով ժամանակից շուտ հեռանալ, դիմեն փախուստի, դեմ առնեն Հեփեստիոնեսի ջոկատներին և ձերբակալվեն: Պտղոմեոսին՝ Լադոսի որդուն նույնպես թողեց զորքի մի մասը և հրամայեց շարժվել երեք օր հետո, դարձյալ որպեսզի իր զինվորներից հետ դարձած փախստակները դեմ առնեն Պտղոմեոսի ջոկատներին: (7) Գալով Ակեսինի և Հիդրատտի միախառնման տեղը, նրանք պետք է սպասեին մինչև Ալեքսանդրը գար և իրենց միանային Կրատերոսի ու Պտղոմեոսի ջոկատները:

6

Ինքը, վերցնելով վահանակիրներին, նետածիգներին, ազդեականներին, Պիթոնեսի այսպես կոչված «հեփոտոն ընկերներին», բոլոր հեծյալ նետածիգներին և «ընկերներին» հեծելազորի կեսը, անջրդի անապատով տարավ նրանց մալերի՝ հնդկական անկախ ցեղի դեմ: (2) Առաջին օրը նա ճամբար խփեց Ակեսինից մոտ 100 ասպարեզ հեռավորութեան վրա: Երբ զորքը ճաշեց և մի քիչ հանգիստ առավ, նա հրամայեց, որպեսզի բոլորը, ովքեր ամանեղեն ունեն, ջուր հավաքեն դրանց մեջ: Թրվա մնացած մասի և ամբողջ զիշերվա ընթացքում անցնելով մոտ 400 ասպարեզ, լուսաբացին նա մոտեցավ քաղաքին, ուր փախել-խմբվել էին բազմաթիւ մալեր: (3) Քաղաքի առջև շատ մարդիկ կային, ըստ որում անգնե, քանի որ ոչ ոք չէր էլ մտածում, որ Ալեքսանդրը կանցնի անջրդի տեղանքով: Այդտեղ պարզվեց, որ Ալեքսանդրն անցել է այդ ճանապարհով հենց նրա համար, որ նրանով անցնելը զժվար էր, և անհավանական էր թվում, որ նա կգա հենց այդ ճանապարհով: Մալերի վրա հարձակվեցին, երբ նրանք ամենևին հարձակման չէին սպասում, և շատերին կոտորեցին, ընդ որում նրանք դեմք չունենալու պատճառով չէին էլ կարողանում դիմադրել: Այնուհանդերձ, մալերի մի մասը մնացել էր քաղաքում. Ալեքսանդրը պարիսպների շուրջը շարեց հեծյալներին: Քանի որ հետևանք իր հետ չէր, ցցապատնեղի փոխարեն նա օգտագործեց հեծելազորին: (4) Հենց որ հետևակը մոտեցավ, նա Պերդիկոսին իր հիպարքիայի, Կլիտոսի հիպարքիայի և ազդեականների հետ

ուղարկեց մալերի մյուս բաղաբը, ուր փախել-հավաքվել էին բազմաթիվ տեղացի հնդիկներ: Նա կարգադրեց բաղաբից դուրս շթողները նրանց, բայց և շակսել ճակատամարտը, մինչև ինքը չբաշխեր է թույլ տալ, որ որևէ մեկը դուրս պրծնի այդ բաղաբից և հայտնի մյուս բարբարոսներին Ալեքսանդրի մտանալու մասին: Իսկ ինքն էլ որոշեց գրոհի դիմել: (5) Տեսնելով, որ բաղաբը պաշտպանելն անհնար է, բարբարոսները լքեցին պարիսպները. շատերը բաղաբի գրավման ժամանակ զոհվեցին. մյուսները վիրավորվեցին և ի վիճակի չէին կուգնել: Նրանք, ովքեր փախել էին ամրոցը, որոշ ժամանակ դեռ պաշտպանվում էին. նրանց տեղը բարձր էր, և այն գրավելը դժվար էր: Սակայն մակեդոնացիները ամեն կողմից եռանդով սեղմեցին. Ալեքսանդրն անձամբ մասնակցում էր մարտին և հայտնվում մեկ այտեղ, մեկ այտեղ. և ամրոցը գրավվեց, իսկ բոլոր այնտեղ փախածները զոհվեցին. նրանց թիվը մոտ 2000 էր:

(6) Գալով բաղաբը, ուր իրեն ուղարկել էին, Պերդիկոսն այն դատարկ գտավ: Տեղեկանալով, որ բնակիչները փախել են իր գալուց քիչ առաջ, նա հեծելագործով սլացավ փախստականների հետքերով: Թեթև զինվածները վազում էին նրա հետևից ողջ արագությամբ, որքան ընդունակ էին: Փախստականներին հասան և կոտորեցին բոլոր նրանց, ովքեր չէին հասցրել ճահիճները փախչել:

7

Ալեքսանդրը յուրայիններին ճաշելու և հանգստանալու հնարավորություն տալով մինչև առաջին պահակաժամը, շարժվեց առաջ: Գիշերվա ընթացքում անցնելով ճանապարհի զգալի մասը, լուսաբացին նա մոտեցավ Հիդրատո գետին: Այդտեղ նրան հայտնի դարձավ, որ շատ մալեր արդեն անցել են այն կողմը: Նրանցից, ում նա վրա հասավ գետանցի պահին, շատերը սպանվեցին: (2) Ինքն էլ առանց հասպաղելու նույն տեղում գետանց արեց, հետապնդեց և հասավ նրանց, ովքեր հասցրել էին հեռանալ: Ծառերին սպանեցին, ուրիշներին գերի վերցրին, սակայն մեծամասնությունը փախավ անառիկ և ամրացված մի տեղ: Երբ հետևակը մոտեցավ, Ալեքսանդրը նրա դեմ ուղարկեց Պիթոնեսին իր ջոկատով և երկու հեծյալ հիպարքիաներով: (3) Նրանք միանգամից գրավեցին այդ տեղը, իսկ այնտեղ փախածներին, ովքեր

ողջ էին մնացել, ստրկացրին: Ավարտելով այդ գործը, Պիթոնեսն ու նրա մարդիկ ճամբար վերադարձան:

(4) Ինքն՝ Ալեքսանդրն էլ գնաց դեպի բրահմանների ինչ-որ բաղաբ, քանի որ իմացավ, որ մալերից ոմանք փախել են այնտեղ: Մոտենալով բաղաբին, նա ամեն կողմից շրջափակեց այն հետևակի կուռ շարքերով: Պաշարվածները, տեսնելով, որ թշնամին պարիսպների տակ անցքեր է բացում, իսկ նետերն էլ հնարավորություն չեն տալիս մնալ պարիսպների վրա, ցած իջան և հավաքվեցին ամրոցում, որոշելով պաշտպանվել այնտեղից: Նրանց հետ միասին ամրոցում հայտնվեցին մի քանի մակեդոնացիներ, որոնց համատեղ ուժերով վրնդեցին այդտեղից և մինչ նրանք նահանջում էին, սպանեցին մոտ 25 մարդ: (5) Ալեքսանդրը հրամայեց բոլոր կողմերից աստիճաններ հնել ամրոցի պարիսպներին, իսկ պարիսպների տակ քանդել: Երբ հիմքը փորած աշտարակը փլվեց, իսկ նրա հետևում գտնվող պարիսպը ճեղքվեց, ապա այդ կողմից ամրոցի գրավումը հեշտացավ. Ալեքսանդրն առաջինը բարձրացավ պարիսպի վրա, որտեղ և նրան տեսան: (6) Այդ տեսարանից մակեդոնացիներն ամաչեցին և ամեն կողմից մազլեցեցին պարսպի վրա: Ամրոցը գրավվեց. հնդիկների մի մասն այրեցին իրենց տները և իրենք էլ այրվեցին նրանց հետ. մեծամասնությունը ընկավ զենքը ձեռքին: Ընդամենը զոհվեց մոտ 5000 մարդ. բչերին կարողացան գերել նրանց արիության պատճառով:

8

Մնալով այդտեղ մեկ օր և զորքին հանգիստ տալով, հաջորդ օրն Ալեքսանդրը առաջ շարժվեց դեպի մյուս մալերը: Նա բաղաբները լքված գտավ և տեղեկացավ, որ բնակիչները փախել են ամալի վայրեր: (2) Այստեղ նա կրկին զորքին մի օր հանգիստ տվեց, իսկ հաջորդ օրը Պիթոնեսին և հիպարքոս Դեմետրիոսին նրանց ջոկատներով ուղարկեց հետ՝ դեպի գետը և նրանց զորքին ավելացրեց այնքան թեթևազեն զինվորներ, որքան բավական էր նրանց վրա զրված հանձնարարությունը կատարելու համար: (3) Նա հրամայեց նրանց գնալ գետի ափով և, եթե այնպես պատահի, որ անտառ փախած հնդիկների հանդիպեն, իսկ գետի ափը ծածկված էր անտառներով, սպանեն նրանց, ովքեր կամավոր չճանձնվեն: Պիթոնեսի և Դեմետրիոսի զինվորները շատերին բռնեցին անտառներում և սպանեցին:

(4) Ինքը զորքը տարավ մալերի ամենամեծ քաղաքը, որտեղ, ինչպես իրեն էին զեկուցել, ուրիշ քաղաքներից հավաքվել էին բազմաթիվ մարդիկ: Այդ քաղաքն էլ, սակայն, հնդիկները լքել էին, տեղեկանալով Ալեքսանդրի մոտենալու մասին: Անցնելով Հիդրատտի մյուս ափը, նրանք ափին շարվելով մարտական շարքով (Հիդրատտի ափերը բարձր են), սպասում էին Ալեքսանդրին՝ մտադրվելով խոչընդոտել նրա գետանցը: (5) Լսելով այդ մասին, նա, իր ձեռքի տակ եղած հեծելազորով գնաց դեպի Հիդրատտ, դեպի այն վայրը, որտեղ, ինչպես իրեն էին զեկուցել, կանգնած էին մալերը: Հետևակին կարգադրված էր հետևել նրան: Երբ նա մոտեցավ գետին և տեսավ դիմացի ափին շարված թշնամուն, նա ինչպես կար, շկանգնեցնելով ձին՝ նետվեց ջուրը միայն հեծելազորով: (6) Բարբարոսները, տեսնելով Ալեքսանդրին արդեն գետի մեջտեղում, արագորեն, բայց պահպանելով կարգը, հեռացան ափից: Ալեքսանդրը հետևեց նրանց միայն հեծելազորով: Երբ հնդիկները իրենց առջև տեսան միայն հեծյալների, նրանք շրջվեցին և սկսեցին քաջաբար կռվել. նրանց թիվը 50 հազարի էր հասնում: Ալեքսանդրը նրանց խիտ շարքը տեսնելով՝ շճամարձակվեց ձեռնամարտի բռնվել առանց հետևակի. հեծելազորը միայն ձիերն էր քշում թշնամու վրա, նրանց շուրջը արշավախաղ անելով: (7) Այդ ժամանակ հայտնվեցին ազդեցիկները, մյուս թեթևադեն ջոկատները, որոնք նա ընտրել էր իր համար, և նետածիգները: Քիչ հեռվում երևաց նաև հետևակը: Երբ բոլոր այդ սարսափազդու ջոկատները շարժվեցին հնդիկների վրա, նրանք շրջվեցին և անկանոն վազեցին ամենամոտ, լավ ամրացված քաղաքը: (8) Ալեքսանդրը, հետևելով նրանց, շատերին կոտորեց: Իսկ երբ փախստականները պատսպարվեցին քաղաքում, նա սկզբում հրամայեց իր հեծյալներին առանց կանգ առնելու շրջապատել քաղաքը: Երբ մոտեցավ հետևակը, նա նույն օրը ճամբար խփեց պարիսպների շուրջը, որովհետև գրոհի համար արդեն ժամանակ չկար՝ օրն ավարտվում էր, հետևակը հյուծվել էր երկարատև անցումից, իսկ հեծելազորն՝ անբնորոշ հետապնդումից և նույն շափով էլ՝ գետանցից:

9

Հաջորդ օրը նա դորքը բաժանեց երկու մասի՝ մեկն ինքն առաջնորդեց գրոհի, մյուսը տարավ Պերդիկոսը: Եվ այստեղ հնդիկները չդիմացան մակեդոնացիների ճնշմանը. թողնելով քաղաքի սպա-

րիսպները, նրանք փախան ամրոց: Ալեքսանդրը և նրա մարդիկ շարժեցին ինչ-որ դռնակ և քաղաք մտան մնացածներից նկատվողներն շուտ: (2) Պերդիկոսի ղեկավարած ջոկատը ուշանում էր. նրանք դժվարությամբ էին անցնում պարիսպների վրայով (միայն քշերն էին իրենց հետ աստիճաններ վերցրել): Տեսնելով, որ սպրիսպների վրա զինվորներ չկան, նրանք մտածեցին, թե քաղաքը գրավված է: Իսկ երբ պարզվեց, որ ամրոցը թշնամու ձեռքում է և նրանց մեծ մասը շարված է ամրոցի առջև, որպեսզի պաշտպանի այն, այն ժամ, փորձելով ներխուժել ամրոց, ոմանք սկսեցին անցքեր փորել պարիսպների տակ, մյուսներն՝ աստիճաններ դնել հնարավոր տեղերում: (3) Ալեքսանդրին թվաց, թե աստիճաններ տանող մակեդոնացիները շին շտապում. նա նրանցից մեկից խլեց աստիճանը, ինքը հենեց այն պատին, և սկսեց բարձրանալ, պաշտպանվելով վահանով: Նրա հետևից բարձրանում էր Պեկեստեսը սրբազան վահանը ձեռքին. այդ վահանը Ալեքսանդրը վերցրել էր Իլիոնի Աթենասի տաճարից և ճակատամարտերի ժամանակ այն միշտ տանում էին իր առջևից: Նույն աստիճաններով Պեկեստեսի հետևից բարձրանում էր Լեոնատոսը՝ թիկնապահներից մեկը: Մի ուրիշ աստիճանով բարձանում էր Աբրնյոսը՝ «երկփայլ» զինվորը: (4) Աբրան արդեն հասել էր պարիսպների ատամնաշարին. հենելով դրան իր վահանը, նա սկսեց հնդիկների մի մասին հրել պարսպի հետևը, մյուսներին հենց սեղում սպանեց սրով և այդպիսով մաքրեց պարսպի այդ մասը: Մաստիկ վախեցած իրենց արքայի համար, վահանակիրները աճապարելով և իրար հրհրելով, վեր բարձրացան նույն աստիճանով և կոտորեցին այն. արդեն վերև հասածները ցած էին ընկնում և փակում մյուսների ճանապարհը:

(5) Ալեքսանդրը կանգնել էր պարսպի վրա և նրան ամեն կողմից՝ հարևան աշտարակներից նետահարում էին, բայց հնդիկներից ոչ մեկը չէր համարձակվում մոտենալ նրան: Նրա վրա նետում էին տեղեր նաև ներքեից՝ քաղաքից, ընդ որում մոտ տարածությունից (այդտեղ պարսպի մոտ հողաթումբ կար). Ալեքսանդրը բուլտից առանձնանում էր և՛ իր շքեղ սպառազինությամբ, և՛ իր խենթ անվահեծրությամբ: Նա հասկացավ, որ այդտեղ մնալով, նա իրեն անխմաստ վտանգի է ենթարկում, քանի որ այդտեղ որևէ նշանակալից բան անել չի կարող. իսկ կիսե ցած թույլ, ապա դրանով կարող է վախեցնել հնդիկներին, իսկ եթե ոչ և հայտնվի վտանգի մեջ, ապա իրուր չի զոհվի, կատարելով սեփ-

գործեր՝ արժանի այն բանի, որ դրանց մասին իմանան սերունդները: Այդպես էլ նա պարսպից ամբողջ թռավ: (6) Հենվելով պարսպին, նա իր վրա նետված մի քանի հողու սպանեց սրով, դրանց թվում նաև հնդկների առաջնորդին, որը համարձակորեն իր վրա նետվեց: Իրեն մոտեցած մարդկանցից մեկին խփեց քարով, մյուսին՝ նույնպես. իրեն շատ մոտեցածին խոցեց սրով: Բարբարոսներն այլևս չէին համարձակվում մոտենալ նրան և, շրջապատելով բոլոր կողմերից, իրենց ձեռքում եղած կամ ձեռքի տակ հայտնրված զենքերն էին նետում:

10

Այդ ժամանակ Պեկեստեսը, Արբելոս «երկիտալը» և նրանց հետևից վեր մաղցող կեռնատուսը՝ միակնեբը, որոնց հաջողվել էր պարսպի վրա ելնել մինչև աստիճանի ջարդվելը, ցած թռան և արքային պաշտպան կանգնեցին: Արբելոս «երկիտալը» տեղն ու տեղը ընկավ զենքին դիպած նետի հարվածից: Նետը ծակել էր Ալեքսանդրի գրահը և խրվել կուրծքը կրծքատուկի վերևում. ըստ Պտղոմեոսի, վերքից արյուն էր հոսում և օդ ելնում: (2) Քանի ղեռ արյունը չէր կանգնել, Ալեքսանդրը հետ էր մղում հարվածները, թեև վատ էր զգում իրեն: Վերջի վերջո, արյան մեծ կորստից, որը դուրս էր գալիս օդի հետ միասին, նրա գլուխը պտրտվեց, նա կորցրեց գիտակցությունը և հենց տեղում էլ ընկավ իր վահանի վրա: Պեկեստեսն անցնելով ընկածի վրայով, կանգնեց նրա առջև, պատսպարելով նրան Իլիոնից բերված սուրբ վահանով. կեռնատուսը կանգնեց մյուս կողմից: Երկուսի վրա նետեր տեղացին. Ալեքսանդրն այդքան արյուն կորցնելով, մոտ էր մահվան: (3) Գրոհը չէր ստացվում. մակեդոնացիները, տեսնելով թե ինչպես էին Ալեքսանդրի վրա նետեր տեղում պարսպի վրա և թե ինչպես նա թռավ ամբողջի ներսը, իրենց արքայի համար վախից և գործադրած ճիզերից ցնորված գնում էին դեպի կործանում: Զարդելով բոլոր աստիճանները, նրանք, ինչպես դա լինում է անելանելի վիճակներում, սկսեցին տարբեր միջոցներ հնարել պարսպի վրա ելնելու համար. ոմանք սեպեր էին խփում պատի մեջ (պատը հողից էր) և դրանցից բռնվելով, զժվարություն մագլցում վեր, մյուսները կանգնում էին իրար ուսերի: (4) Ցուրաբանչուրը, ով բարձրանում էր պարսպի վրա և տեսնում էր իր արքային ընկած՝ նետվում էր քաղաք. բոլորը լալիս էին ու գոռում: Պատկածի շուրջը արյունահեղ կոտորած սկսվեց. մակեդո-

նացիները մեկը մյուսի հետևից կանգնում էին արքայի առջև, ծածկելով նրան իրենց վահաններով: Այդ ժամանակ ջարդեցին առնակը, որով փակում էին երկու աշտարակների միջև եղած պարսպի միջի դուռը, և մի քանի մարդ սողոսկեցին քաղաք. մյուսները ուսերով սեղմեցին արդեն մի քիչ քաջված դարպասը և փրշրելով պարիսպը (այն ներս ընկավ)՝ լայն ուղի բացեցին դեպի ամբողջը:

11

Այստեղ մի մասը սկսեց կոտորել հնդկներին և ոչնչացրին բոլորին, չինայելով ո՛չ կանանց, ո՛չ երեխաներին. մյուսները զուրս տարան արքային նրա վահանի վրա. նրա վիճակն այնքան վատ էր, որ կասկածում էին՝ արդյոք ողջ կմնա: Ոմանք գրում են, թե վերքը բացելով նետը հանել է կրիտոդեմոսը՝ կոսցի բժիշկը, Ասկլեպիադների տոհմից, ուրիշները՝ որ այդ արևի է Պերդիկոսը՝ թիկնապահը. քանի որ այդ պահին բժիշկ չի եղել, Ալեքսանդրը հրամայել է նրան վերքի վրա թրով կտրվածք անել և հանել նետը: (2) Երբ այն հանում էին, այնքան արյուն դուրս ժայթքեց, որ Ալեքսանդրը կրկին կորցրեց գիտակցությունը, և այդ ուշագնացութան հետևանքով արյունահոսությունը դադարեց: Ալեքսանդրի այդ հիվանդության մասին շատ բաներ են գրված և, զրույցը, վերցնելով մտացածին ստերը նրանցից, ովքեր դրանք ստեղծել են, բերել հասցրել է այն մինչև մեր օրերը. այն չի դադարի առաջիկայում էլ անընդհատ տարածել այդ սուտը, եթե միայն իմ այս երկասիրությունը դրա վերջը չտա:

(3) Բոլորը, օրինակ, հաստատում են, որ այդ վերքն Ալեքսանդրը ստացել է օքսիդրակներից: Իրականում դա տեղի է ունեցել մալերի՝ հնդկական անկախ ցեղի մոտ. քաղաքը, որտեղ վիրավորել են Ալեքսանդրին, պատկանել է մալերին, և Ալեքսանդրին էլ խոցել են մալերը: Նրանք մտածում էին պատերազմ սկսել օքսիդրակների հետ միանալուց հետո, սակայն Ալեքսանդրն անցավ անջրդի անապատով, որպեսզի կանխի նրանց և թույլ չտա այդ ցեղերին օգնել միմյանց: (4) Նույն ձևով էլ բոլորը հաստատում են, որ Գարեհի զեմ վերջին ճակատամարտը, երբ Գարեհը փախուստի դիմեց, որին վերջ տվեց միայն նրա ձեռքակալումը և Ալեքսանդրի ժամանումից անմիջապես առաջ վրա հասած մահը, տեղի է ունեցել Արբելայի մոտ. սրան նախորդել է Իսոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտը, իսկ հեծելազորի առաջին ճակա-

տամարտը տեղի է ունեցել Գրանիկոսի մոտ: (5) Հեծելազորի ճակատամարտն իսկապես Գրանիկոսի մոտ է եղել. Իսոսի մոտ նույնպես ճակատամարտ է տեղի ունեցել Գարեհի հետ, սակայն Արբելան Ալեքսանդրի և Գարեհի վերջին ճակատամարտի տեղից 600 կամ 500 ասպարեզ հեռու է գտնվում. որոշ գրողներ նշում են առաջին թիվը՝ ամենամեծ տարածությունը, ուրիշները՝ երկրորդը՝ ամենափոքրը: Պտղոմեոսն ու Արիստորուսն ասում են, որ այդ վերջին ճակատամարտը տեղի է ունեցել Գավգամելայի մոտ, Բուսելա գետի մոտակայքում: (6) Ինչ վերաբերում է Գավգամելային, ապա դա քաղաք չէ, այլ մեծ բնակավայր. այդ տեղը բնավ հայտնի չէ և անունն էլ անբարեհունչ: Այդ իսկ պատճառով, ինչպես ես եմ կարծում, Արբելան էլ (սա քաղաք է) հուշակ է ձեռք բերել որպես այդպիսի մեծ ճակատամարտի վայր: Եթե հնարավոր է պատկերացնել, որ այն տեղի է ունեցել Արբելայի մոտ, որն այդքան հեռու է, ապա կարելի է հաստատել, որ սալամինյան ճակատամարտը տեղի է ունեցել Կորնթոսի պարանոցի մոտ, իսկ էվրեսկան Արտեմիսի մոտ տեղի ունեցած ճակատամարտը՝ Էգինայի կամ Սունիոնի մոտ:

(7) Ինչ վերաբերում է նրանց, ովքեր իրենց վահաններով պատսպարել են Ալեքսանդրին, ապա բոլորը միաձայն տալիս են Պեկեստեսի անունը, իսկ Լեոնատոսին և Արբելյոս «երկփայի» մասին եղած տեղեկությունները իրարամերժ են: Ոմանք գրում են, որ Ալեքսանդրի սաղավարտին խփել են գերանով. նա ընկել է, քանի որ զույլը պտտվել է, բայց հետո վեր է ցատկել և այդ պահին նետը, խոցնելով զրահը, խրվել է նրա կուրծքը: Պտղոմեոսը՝ Լագոսի որդին, ասում է, որ Ալեքսանդրը միայն մեկ վերք է ստացել կրծքից: (8) Իսկ Ալեքսանդրի մասին եղած այս պատմություններից ամենամեծ անհամապատասխանությունը ես համարում եմ հետևյալը: Ոմանք գրում են, որ Պտղոմեոսը՝ Լագոսի որդին, Պեկեստեսի հետ միասին Ալեքսանդրի հետևից բարձրացել է աստիճանով և ծածկել ընկած արքային վահանով և դրա համար էլ ստացել է «փրկիչ» մականունը: Մինչդեռ ինքը՝ Պտղոմեոսը գրում է, որ այդ ճակատամարտին չի մասնակցել, այլ կռվել է ուրիշ տեղերում և ուրիշ բարբարոսների դեմ, ինքն առաջնորդելով զորքը: Թող ներքի ինձ այս շեղումը. թող սերունդներն իմանան, թե ինչ ջանքեր են պահանջվում մեծ իրադարձությունների և աղետների մասին պատմելու համար:

Մինչ Ալեքսանդրը մնացել էր տեղում, բուծելով իր վերքը, այն ճամբարը, որտեղից նա արշավել էր մալերի դեմ, լուր եկավ, որ նա վերքից մեռել է: Սկզբում բոլոր զինվորները լաց էին լինում իրաբ հաղորդելով այդ բոթը: Երբ ողբը հանգարտվեց, բոլորին տիրեց շփոթության ու անօգնականության զգացումը. (2) ո՞վ է առաջնորդելու զորքը (շատ զորավարներ, ըստ երեսույթին, հավասար հարգանք էին վայելում թե՛ Ալեքսանդրի և թե՛ մակեդոնացիների մոտ. արդյո՞ք իրենք ողջ կմնան տունդարձի ճանապարհին, երբ ամենուր այդքան ռազմատենչ ցեղեր կան, որոնք պատրաստ են փակել իրենց ճանապարհը. նրանցից մի քանիսը ամենևին էլ չեն հնազանդվել և պատրաստ են արիաբար պաշտպանելու իրենց ազատությունը, իսկ մյուսներն էլ կապտամբեն. չ՞ որ արդեն Ալեքսանդրից վախենալու ոչինչ չունեն: Իրենց ճանապարհին ընկած գետերն անանցանելի թվացին. առանց Ալեքսանդրի ամեն ինչ թվում էր անելանելի և անհաղթահարելի: (3) Ի՞նչ երբ լուր հասավ, որ Ալեքսանդրը ողջ է, նրանք հազիվ ենթադրեցին, որ դա հնարավոր է. չէին հավատում, որ նա կապրի: Երբ նրանից նամակ եկավ, որ շուտով նա կժամանի ճամբար, ապա մեծ սարսափից շատերը չհավատացին դրան. ենթադրում էին, որ դա թիկնապահների և ստրատեգների հնարածն է:

Ալեքսանդրը կշռադատելով այդ լուրերը և երկյուղելով, որ զինվորների շրջանում կարող են հուզումներ սկսել, ապաբինվելուն պես կարգադրեց տանել իրեն Հիդրատտի ափերը (ճամբարը գտնվում էր Հիդրատտի և Ակեսինի միախառնման վայրում. այստեղ զորքի հրամանատարը Հեփեստիոնեսն էր, իսկ նավատորմինը՝ Նևարքոսը): Երբ նավը, որի վրա արքան էր, մոտեցավ ճամբարին, Ալեքսանդրը հրամայեց նավաթից հեռացնել վրանը, որպեսզի բոլորը տեսնեն իրեն: (2) Զինվորները ղեռ չէին հավատում, կարծելով, թե բերում են Ալեքսանդրի դին: Վերջապես նավը կառանց ափին, և նա ամբոխին մեկնեց ձեռքը: Ազմուկազազակ բարձրացավ. ոմանք ձեռքները վեր էին կարկառում, մյուսները՝ մեկնում Ալեքսանդրին: Անսպասելիությունից շատերն ակամա արցունքներ էին թափում: Երբ Ալեքսանդրն ասի իշավ,

վահանակիրները նրան մահճակալ բերեցին. նա ձի պահանջեց իր համար: (3) Երբ նրան կրկին ձիու վրա տեսան, ամբողջ զորքով այնպիսի աղմուկ անցավ, որ արձագանքեցին և՛ ամիրը, և՛ հարևան անտառները: Մոտենալով վրանին, նա ցած իջավ ձիուց, որպեսզի տեսնեն, որ ինքը կարող է ոտքի վրա կանգնել: Զինվորներն ամեն կողմից մոտենում էին նրան, դիպչում նրա ձեռքերին, գրկում ծնկները, ձեռք տալիս հագուստին. ոմանք մոտիկ կանգնած միայն նայում էին և, օրհնելով նրան, հեռանում: Նրա վրա նետում էին ժապավեններ և ծաղիկներ, որոնք այդ ժամանակ կային Հնդկաստանում:

(4) Նեարքոսը պատմում է, որ Ալեքսանդրին զայրացնում էին «ընկերները», որոնք նախատում էին նրան այն բանի համար, որ նա անձամբ խառնվում է ճակատամարտին. ճակատամարտելը զինվորի գործն է և ոչ զորավարի: Ինձ թվում է, որ Ալեքսանդրը բարկանում էր այդ ճառերի վրա, զիտակեցելով դրանց արգելափակումը. նա հասկանում էր, որ նախատինքի է արժանի: Եվ, այնուամենայնիվ, նա չէր կարողանում տիրապետել իրեն (ոմանք այդպես տեղի են տալիս վայելքի կանչին) և նետվում էր մարտի ամենախիտ տեղը. այդ աստիճանի էր բորբոքվում սիրար և այդքան նա տենչում էր փառքի: Նեարքոսն ասում է, որ ինչ-որ տարեց բեռվտացի (անունը չի հիշատակում), աեղեկանալով, որ Ալեքսանդրին և՛ բարկացրել, և՛ վշտացրել են «ընկերների» նախատինքնիրը, մոտեցել է նրան և ասել բեռվտական բարբառով. «Ալեքսանդր, գործելը տղամարդու գործ է». և նա արտասանել է մի յամբական ոտանավոր, որի իմաստը հետևյալն է՝ ով գործում է, նա պետք է նաև տոկա: Այդ մարդն իսկույն բարի համբավ ձեռք բերեց և հետագայում գտնվում էր Ալեքսանդրին մոտ մարդկանց շրջանում:

Այդտեղ Ալեքսանդրի մոտ փրկված մալերից զեսպաններ ներկայացան. ցեղը հանձնվում էր նրան: Օքսիդրակների կողմից բանակցությունների համար եկան քաղաքագլուխներ, նոմարքոսներ և նրանց հետ հարյուր հիսունի շափ նշանավոր առաջնորդներ: Նրանք ընծաներ բերին, որոնք հնդիկների մոտ ամենապատվավորն են համարվում, և հայտարարեցին, որ իրենք և իրենց ցեղը հանձնվում են Ալեքսանդրին: (2) Նրանք հայտարարեցին, որ

«իսկ են գործել ավելի վաղ շներկայանալով նրան. բայց որ այդ քաղաք ներման է արժանի: Նրանք, ինչպես և մյուսները, և նույնիսկ մյուսներից ավելի ծարավ են ազատություն և անկախություն. այդ ազատությունը նրանց մոտ անսասան է եղել այն ժամանակներից ի վեր, երբ Իրոնիսոսն է այցելել հնդիկներին, և մինչև Ալեքսանդրի երևան գալը: Իսկ եթե Ալեքսանդրը կամենում է (չե՞ որ խոսք կա, որ Ալեքսանդրն էլ է աստուծո ծնունդ), ապա իրենք կընդունեն նրա նշանակած սատրապին և կտան տուրքը, որը նա կգնի: Նրանք պատրաստ են այնքան պատանդներ տալ, որքան նա կպահանջի: (3) Նա պահանջեց ցեղակիցների մեջ ազդեցություն ունեցող հազար մարդ. նա, ըստ իր ցանկության, կպահի նրանց կամ էլ կօգտագործի որպես զինվորներ մինչև մյուս հնդիկների հետ պատերազմի ավարտը: Նրանք Ալեքսանդրին ուղարկեցին հազար ամենաազդեցիկ և անվանի մարդկանց, ինչպես նաև առանց նրա կողմից որևէ պահանջի, 500 մարտակառք իրենց մարդկանցով, որոնք սպասարկում են այդ մարտակառքերը: Ալեքսանդրը նրանց և կործանումից փրկված մալերի սատրապ դրեց Փիլիպոսին: Պատանդներին հետ ուղարկեց, իսկ մարտակառքերն ընդունեց:

(4) Մինչ նա կարգավորում էր այդ բոլոր գործերը և վերքի պատճառով մնում էր տեղում, բազմաթիվ նավեր կառուցվեցին: Նա նավերի վրա նստեցրեց 1700 հեծյալ «ընկերներ», այնքան թեթևազեններ, որքան և նախկինում, և մոտ 10.000 հետևակային: Մի քիչ նավարկելով Հիդրատոն ի վար, նա, Հիդրատոն Ակեսինի մեջ թափվելու տեղից հետո (որի հետ միանալով՝ Հիդրատոն կորցնում է իր անունը), նավարկեց Ակեսինն ի վար և հասավ մինչև Ակեսինը Ինդոսը թափվելու վայրը: (5) Մրանք չորս հակա և նավարկելի գետեր են. բոլոր չորսն էլ թափվում են Ինդոսի մեջ, միանալուց հետո կորցնելով իրենց անունները: Հիդրատոն թափվում է Ակեսինի մեջ, և այդ պահից ողջ գետն արդեն կոչվում է Ակեսին. Ակեսինն իր հերթին միաձուլվում է Հիդրատոնի հետ և ընդունելով նրան պահպանում Ակեսին անունը. այնուհետև ընդունելով Հեփասը, նա թափվում է Ինդոս գետը Ակեսին անվամբ, սակայն միանալով Ինդոսին, կորցնում է այդ անունը: Ես լիովին հավատում եմ, որ այդտեղից Ինդոսն անցնում է ևս 100 ասպարեզ մինչև գետարազուկների բաժանվելը, իսկ այստեղ 1000-ից ավելի է ընդարձակվում, ավելի շուտ ճահիճներ առաջացնելով:

Այստեղ, Ակեսինը Ինդոսի մեջ թափվելու տեղում, Ալեքսանդրը կանգ առավ մինչև Պերդիկոսի զորքով գալը, որը ճանապարհհին նվաճել էր արաստանների անկախ ցեղը: Այդ նույն ժամանակ Ալեքսանդրի մոտ ժամանեցին ևս երեսունթիմանոց և բռնատար նավեր, որոնք նրա համար պատրաստվել էին քաթրների երկրում: Նրան հնազանդեցվեցին նաև սոգդերը՝ հնդկների մեկ այլ անկախ ցեղ: Օսադներից (նույնպես անկախ հնդկական ցեղ է) ևս դեսպաններ եկան հայտնելու, որ օսադները հանձնվում են: (2) Փիլիպոսին նա ցուցում տվեց, որ նրա սատրապությունը տարածվում է մինչև Ակեսինը Ինդոսի մեջ թափվելու տեղը: Նա Փիլիպոսին թողեց բոլոր թրակացիներին, այնքան նետաձիգներին, ինչքան իրեն բավարար թվաց երկրի պաշտպանության համար: Գետերի միախառնման տեղում նա հրամայեց քաղաք հիմնադրել (նա հուսով էր, որ այդ քաղաքը մեծ և փառավոր կլինի) և նավաշինարաններ կառուցել: (3) Այդ ժամանակ Ալեքսանդրի մոտ ժամանեց բակտրիացի Օքսիարտը՝ Ռոքսանայի՝ Ալեքսանդրի կնոջ հայրը: Ալեքսանդրը նրա սատրապությանն ավելացրեց պարսպամիսադներին, իսկ նախկին սատրապ Տիրիեսպին պաշտոնադրվեց, քանի որ իրեն զեկուցել էին, որ Տիրիեսպի սատրապության մեջ անկարգություն է տիրում:

(4) Ինդոսի ձախ ափը տեղափոխելով Կրատերոսին, զորքի զգալի մասը և փղերին, քանի որ ծանրազեն զորքի համար ճանապարհն այստեղ՝ զետի ափեզրով, թվում էր ավելի հեշտ է, իսկ հարևան ցեղերն էլ այնքան էլ բարեկամաբար չէին տրամադրված, ինքն էլ նավարկեց սոգդերի մայրաքաղաքը: Այնտեղ նա ամրացրեց մեկ այլ քաղաք և մեկ ուրիշ նավաշինարան կառուցեց: այդտեղ էլ վերանորոգեցին տուժված նավերը: Ինդոսի և Ակեսիների միախառնման տեղից մինչև ծովը տարածվող երկրի սատրապ նշանակեց Պիթոնեսին, ավելացնելով նաև հնդկական հողի ողջ ծովափնյա գոտին:

(5) Նա կրկին Կրատերոսին զորքով առաջ ուղարկեց, իսկ ինքը ջրով շարժվեց դեպի Մուսիկանի տիրույթները: Նրան պատմել էին, որ դա Հնդկաստանի ամենաօրհնյալ վայրն է: Մինչդեռ Մուսիկանը զուրս չէր եկել նրան ընդառաջ, հայտարարելու իր և իր երկրի հնազանդության մասին, բարեկամություն հաստատելու համար դեսպաններ չէր ուղարկել, մեծ արքային վայել ոչ մի ըն-

ձա չէր ուղարկել և ոչինչ չէր խնդրել Ալեքսանդրից: (6) Ալեքսանդրը գնալով իջավ այնպիսի սրբնթացությամբ, որ հասավ Մուսիկանի երկրի սահմաններին ավելի շուտ, քան Մուսիկանն իմացավ, որ Ալեքսանդրը հարձակվել է իր վրա: Սարսափած, նա ընծանեց շտապ դուրս եկավ Ալեքսանդրին ընդառաջ, որոնք հնդկները մոտ ամենազնահատվածն են, բերեց բոլոր փղերին. հայտարարեց, որ իրեն և իր ժողովրդին հանձնում է Ալեքսանդրի իշխանությանը. ընդունեց իր վարձուների անարդարացիությունը: Դա Ալեքսանդրից բոլոր անհրաժեշտ բաները ստանալու լավագույն միջոցն էր: (7) Ալեքսանդրը ներեց նրան, հիացավ նրա քաղաքով ու երկրով և թողեց նրա իշխանությունը երկրի վրա: Կրատերոսին հրամայված էր ամբուպեղել քաղաքի միջնաբերդը: Այն ամրապեղեցիքն քանի դեռ Ալեքսանդրն այնտեղ էր գտնվում. միջնաբերդում կալազոր դրվեց. Ալեքսանդրը գտավ, որ այդ տեղը շափազանց հարմար է հարևան ցեղերին հսկողության տակ և հնազանդ պահելու համար:

Իր հետ վերցնելով նետաձիգներին, ազրիանացիներին և հեծելազորին, որ իր հետ լսողում էին նավերի վրա, նա այստեղից դրնաց այդ երկրի նոմարքոսի վրա (նրա անունը Օքսիկան էր), որը ո՛չ ինքն էր ներկայացրել նրան, ո՛չ էլ դեսպաններ ուղարկել հայտարարելու, որ տիրակալը իրեն և իր երկիրը հանձնում է Ալեքսանդրի իշխանությանը: Օքսիկանին ենթակա երկու ամենամեծ քաղաքները նա վերցրեց գրոհով. դրանցից մեկում էլ բունեցին Օքսիկանին: Ավարը Ալեքսանդրը տվեց զորքին, իսկ փղերին՝ իր հետ տարավ: Այդ երկրի մյուս քաղաքները նրա մոտենալուն պես հանձնվեցին նրան, ոչ մի տեղ դիմադրություն ցույց չտվեցին: Ալեքսանդրը բոլոր հնդկների հոգում ստրկական սարսափ էր առաջացրել իր և իր երջանիկ ճակատագրի հանդեպ:

(3) Այժմ Ալեքսանդրը գնաց Սամբի դեմ, որին սատրապ էր նշանակել լեոնային հնդկների վրա և որը, ինչպես իրեն էին զեկուցել, փախել էր, տեղեկանալով, որ Ալեքսանդրը ներել է Մուսիկանին և թողել նրան երկրի տիրակալ. Սամբը Մուսիկանի թըշնամին էր: (4) Երբ Ալեքսանդրն արդեն մոտ էր Սամբի երկրի գլխավոր քաղաքին, քաղաքի անունը Սինդիմանա էր, նրա առաջ բացվեցին դարպասները: Սամբի ազգականները ոչ միայն Ալեքսանդրին հանձնեցին նրա գանձերը, այլև դիմավորեցին նրան,

իրենց հետեից բերելով փղեր: նրանք բացատրեցին Ալեքսանդրին, որ Սամբը ոչ թե Ալեքսանդրի դեմ թշնամական մտադրութուններից ելնելով է փախել, այլ ներված Մուսիկանի վախից: (5) Նա գրավեց նաև այդ ժամանակ ապստամբած մի այլ քաղաք, փոփ բրահմաններին (գրանք հնդիկ իմաստուններ են)՝ ապստամբութեան սաղորդներին հրամայեց մահապատժի ենթարկել: Հնգկաստանի մասին գրքում ես կպատմեմ նրանց իմաստունութեան մասին (եթե նրանք ընդհանրապես ունեն դա):

17

Այդ ժամանակ նրան հայտնեցին, որ Մուսիկանն ապստամբել է: Նա Մուսիկանի դեմ ուղարկեց սատրապ Պիթոնեսին՝ Ագենորեսի որդուն, բավականաչափ զորքով, իսկ ինքը գնաց Մուսիկանին ենթակա քաղաքների վրա. նրանցից մեկը հողին հավասարեցրեց, իսկ բնակիչներին ստրկացրեց. մյուսներում կայազորներ դրեց և ավարտեց ամբողջների կռուցումը: Վերջացնելով այս գործը, նա վերադարձավ ճամբար՝ իր նավատորմի մոտ: (2) Այստեղ Պիթոնեսը բերեց բռնված Մուսիկանին: Ալեքսանդրը հրամայեց կախել նրան այստեղ, իր իսկ երկրում, բրահմանների հետ, ոչոնց խորհրդով էլ Մուսիկանն ապստամբել էր: Ալեքսանդրին ներկայացավ պատալների երկրի տիրակալը. այդ նա պատմեց, որ Ինդոսն ավելի մեծ դելտա է ստեղծում, քան եգիպտական դելտան է: Ուստի Ալեքսանդրի իշխանութեանը հանձնեց իր ողջ երկիրը, նրան հանձնելով և՛ իրեն, և՛ իր ողջ ունեցածը: (3) Ալեքսանդրը նրան հետ ուղարկեց իր տիրույթները, հրամայելով պատրաստել ամեն ինչ, ինչ անհրաժեշտ է զորքն ընդունելու համար: Իսկ Կրատերոսին, Ատալոսի, Մելեագրոսի և Անտիգենոսի զնդերի, այդտեղ գտնվող նետաձիգների, «բնակիչների» և մյուս՝ ուղղմական ծառայությանն արդեն ոչ պիտանի մակեդոնացիների (նրանք Մակեդոնիա էին մեկնում) հետ ուղարկեց արաբոսիացիների և զարանգների երկրով դեպի Կարմանիա և հանձնարարեց նրան տանել փղերին: (4) Իսկ մնացած զորքը, որն իր հետ միասին նավերով մեկնեց դեպի ծով... նշանակեց Հեփեստիոնեսին. Պիթոնեսին էլ հեծյալ տեղանիտների և ագրիանացիների հետ անցկացրեց Ինդոսի մյուս ափը (Հեփեստիոնեսը պատրաստվում էր տանել իր զորքը հակառակ ափով). կարգադրեց բնակեցնել կառուցված քաղաքները, կարգուկանոն հաստատել տեղացի, որոշ տեղերում ապստամբած հրեզիկների միջև և վերադառնալ իր մոտ՝ Պատալա:

(5) Արդեն երրորդ օրն էր, որ նա նավարկում էր, երբ նրան զեփուցեցին, որ պատալների իշխանը փախել է, իր հետ տանելով ժողովրդի մեծամասնությունը, երկիրը թողնելով ամայի: Ալեքսանդրը գետով սկսեց իջնել նախկինից ավելի արագ: Ժամանելով Պատալա, նա ամայի երկիր գտավ. չկար ո՛չ քաղաքներ, ո՛չ էլ գյուղական բնակչություն: (6) Հետապնդման նա ուղարկեց իր ամենաարագաշարժ զինվորներին. փախստականներից ոմանց բռնեցին, և նա ուղարկեց մնացածների հետևից, հանձնարարելով հայտնել նրանց, որ նրանք համարձակորեն սուսն վերադառնան. նրանք, ինչպես և նախկինում, կապրեն իրենց քաղաքում և կմշակեն իրենց հողը: Եվ շատերը վերադարձան:

18

Հեփեստիոնեսին հանձնարարելով Պատալայում ամբողջ կառուցել, նա մոտակա անապատը մարդիկ ուղարկեց ջրհորներ փորելու, որպեսզի այդ հողը բնակեցնելու համար պիտանի դարձնի: Նրանց վրա հարձակվեցին շրջակա բարբարոսները. անսպասելի հայտնվելով, մի քանիսին սպանեցին, իրենք էլ մեծ կորուստներով փախան անապատ: Ալեքսանդրը, տեղեկանալով բարբարոսների հարձակման մասին, մնացած զորքն ուղարկեց աշխատողներին օգնության, որպեսզի նրա մասնակցությունը աշխատանքն ավարտվի:

(2) Պատալայի մոտ Ինդոսը բաժանվում է երկու մեծ գետաբազուկի, ընդ որում երկուսն էլ պահպանում են Ինդոս անունը, ընդհուպ մինչև ծովը թափվելը: Այստեղ Ալեքսանդրը կարգադրեց նավահանգիստ և նավաշինարան կառուցել: Երբ գործը տեղից շարժվեց, Ալեքսանդրը որոշեց առաջին գետաբազուկով վար նավարկել մինչև նրա ծովը թափվելը: (3) Նա կենսատոսին տվեց մոտ հազար հեծյալներ և մոտ 800 հուպիտներ ու թիթևազեններ և կարգադրեց նրան գնալ կղզիով, որտեղ Պատալաս է, նավատորմին զուգահեռ ուղղությամբ. ինքն էլ վերցնելով ամենաարագաշարժ նավերը, հեմիոլները, բոլոր երեսունթիանոց նավերը և իր ձեռքի տակ եղած կերկուրները, սկսեց նավարկել աջ գետաբազուկով: (4) Նավատար նա չունեց, որովհետև բոլոր տեղացի հնդիկները փախել էին, և նավարկողները չափազանց դժվարին կացություն մեջ ընկան: Նավարկության հաջորդ օրը փոթորիկ բարձրացավ: Հոսանքին հակառակ

փշող քամին ալեկոծեց գետը. նավերն այս ու այն կողմ էին նետ-
վում: Նրանց մեծ մասը վնասվեց, իսկ մի քանի երեսունթիսանոց
նավեր ամբողջովին ջարդվեցին: Դրանք շտապեցին կառա-
նել ափին, քանի գեո չէին խորտակվել: (5) Մյուսները վերանո-
րոգեցին: Ալեքսանդրը երկրի խորքը, տարբեր կողմեր ուղարկեց
թեթևագնաններից ամենարագաշարժ զինվորների, որպեսզի հըն-
դիկներին մի մարդ բռնեն. այդտեղից էլ նրանք առաջնորդեցին,
նավերը: Երբ Ալեքսանդրը հասավ այն տեղը, որտեղ գետը լայ-
նանում է, որոշ մասերում հասնելով իր առավելագույն լայնություն-
ը՝ 200 ասպարեզի, Արտաքին ծովից ուժեղ քամի փչեց. թիերը
դժվարությամբ հանեցին փոթորկվող ալիքներից: Ուղեկցորդները
նավերը տարան ջրանցք, որտեղ էլ հավաքվեց ողջ նավատորմը:

19

Մինչդեռ նրանք խարխախ ձգած կանգնած էին այստեղ, Մեծ
ծովում տեղատվություն սկսվեց, և նրանց նավերը հայտնվեցին
ցամաքի վրա: Ալեքսանդրի ուղեկիցները նախկինում ծանոթ չէին
այդ երևույթին. այն սարսափ տարածեց նրանց մեջ և ոչ սովո-
րական, և այդ սարսափն ավելի մեծացավ, երբ որոշ ժամանակ հե-
տո ջուրը կրկին մոտեցավ և վեր բարձրացրեց նավերը: (2) Տիզմի
մեջ խրված նավերին մակընթացությունը դանդաղ բարձրացրեց և
րանք շարունակեցին լողալ, առանց որևէ վնասվածքի, իսկ նրանք,
որոնք ավելի կարծր գետնի վրա էին կանգնած և հաստատուն չէին
ամրացված իրենց տեղերում, ջրի ճնշման տակ իրար վրա ելան,
կամ զարկվեցին ափին և ջարդվեցին: (3) Ալեքսանդրը կարգադ-
րեց նորոգել դրանք, որքան հնարավոր էր այդ պայմաններում, և
երկու կերկուրներով մարդ ուղարկեց գետն ի վար, ուսումնա-
սիրելու կղզին, որին, տեղաբնակների խորհրդով, նա պետք է կա-
ռաներ դեպի բաց ծով դուրս գալու ճանապարհին: Այդ կղզու
անունը, ասում էին նրանք, Կիլուտա է: Երբ հայտնեցին, որ կղզու
վրա նավամատույց կա, որ այն մեծ է և նրա վրա ջուր կա, ապա
համարյա ողջ նավատորմը կանգնեց նրա ափին: Իսկ Ալեքսանդրը
ամենալավ նավարկող նավերով առաջ անցավ, որպեսզի տեսնի
գետի ծովը թափվելը, եթե նավարկությունը բարեհաջող լինի: (4)
Հեռանալով կղզուց մոտ 200 ասպարեզ, նրանք տեսան մեկ ուրիշ
կղզի, որն արդեն ծովում էր գտնվում: Այնժամ նրանք վերադար-
ձան գետի կղզի, կառանեցին նրա վերջամասում, և Ալեքսանդրը

զոհ մատուցեց այն աստվածներին, որոնց, իր ասելով, զոհ մա-
տուցել էր պատվիրել ինքն՝ Ամոնը: Հաջորդ օրը նա մեկնեց դե-
պի ծովի կղզի. կառանելով կղզու ափին, նա այստեղ էլ ուրիշ զո-
հեր մատուցեց ուրիշ աստվածների և ուրիշ ծիսակատարությամբ:
Այդ զոհերը նույնպես, ասաց նա, մատուցում է Ամոնի հրամա-
նով: (5) Անցնելով Ինդոսի գետաբերանով, նա դուրս եկավ բաց
ծով, իր ասելով, որպեսզի տեսնի, չկա արդյոք որևէ երկիր մոտա-
կայքում, իսկ ինձ թվում է, որ ավելի շատ այն քանի համար, որ
ասի, թե ինքը նավարկել է հնդիկների Արտաքին Մեծ ծովում:
Այստեղ նա Պոսիդոնի պատվին ցլեր սրախողխող արեց և ծովն
իջեցրեց. այդ զոհաբերությունից հետո նա հեղում արեց, իսկ ոսկե
գավաթը և ոսկե ամանները, որպես երախտագիտական զոհաբե-
րություն, նետեց ջուրը, աղոթելով, որպեսզի աստված անվը-
նաս տանի իր նավատորմը, որը նա որոշել էր ուղարկել Նեարքո-
սի հետ դեպի Պարսից ծոց՝ այնտեղ, ուր Նփրատն ու Տիգրի-
սը լցվում են ծովը:

20

Վերադառնալով Պատալա, նա ամբողջ կառուցված գտավ և
հանդիպեց Պիթոնեսին գործով, որը կատարել էր իրեն տրված բո-
լոր հանձնարարությունները: Ալեքսանդրը Հեփեստիոնեսին կար-
գադրեց ամեն ինչ նախապատրաստել նավահանգստի ամրա-
պընդման համար և նավաշինարան կառուցել. նա որոշել էր մե-
ծաբանակ նավատորմ թողնել նաև այստեղ՝ Պատալայում, այն
տեղում, որտեղ Ինդոսը ճյուղավորվում է:

(2) Ինքը Ինդոսի մյուս գետաբազուկով իջավ դեպի Մեծ ծովը,
որպեսզի պարզի, թե որ գետաբազուկով է ավելի հեշտ մինչև ծով
նավարկելը: Ինդոսի գետաբերանները հեռու են մեկը մյուսից
ավելի քան 1800 ասպարեզ: (3) Նավարկման ժամանակ նա հա-
սավ մի մեծ գետաբերանի ծովախորշի, որն առաջանում էր գե-
տը ծովը թափվելիս. հնարավոր է, որ հարևան գետերն էլ էին թափ-
վում այստեղ և գետաբերանի ծովախորշը հսկայական դարձ-
նում, որն ավելի շատ նմանվում է ծովածոցի: Այդտեղ երևում
էին նաև ծովային ձկներ, ավելի մեծերը, քան մեր ծովում: Խա-
րխախ ցցելով ծովախորշի այն տեղում, ուր ցույց էին տվել
ուղեկիցները, նա կենսատոսի գլխավորությամբ այստեղ թողեց
զինվորների մեծ մասին, ինչպես նաև կերկուրները: (4)

ինքն էլ երեսունթիամեց նավերով և հեմիոններով Ինդոսի դետարերանով ծով դուրս եկավ: Նա տեսավ, որ այս գետաբազկով ավիլի հեշտ է ծով դուրս գալը: Նա կառանեց ծովափին և փոքրաթիվ հեծյալ ջոկատով երեք օր ճամփորդեց ծովափով, ուսումնասիրելով ծովի ափին գտնվող երկիրը և հրամայելով ջրհորներ փորել, որպեսզի ծովագնացները շուր պաշարելու տեղ ունենան: (5) Վերադառնալով դեպի նավերը, նա մեկնեց Պատալա: Զորքի մի մասը նա ուղարկեց ծովափ այդ աշխատանքների համար, պատվիրելով դրանք ավարտելուց հետո վերադառնալ Պատալա: Նա մեկ անգամ ևս իջավ գետաբերանի ծովախորշ, հրամայեց նոր նավահանգիստ և նոր նավաշինարան կառուցել այստեղ և, կալազոր թողնելով, հրամայեց այնտեղ ուղարկել այնքան պաշար, որքան կրավարարեր զորքին շորս ամսվա ընթացքում, և նախապատրաստել ամեն ինչ մերձափնյա նավարկության համար:

21

Այդ ընթացքում նավարկության համար անբարենպաստ եղանակ սկսվեց. փչեցին էթեսիաները, որոնք այդ ժամանակ համառորեն փշում են, բայց ոչ այնպես, ինչպես մեզ մոտ՝ հյուսիսից, այլ Մեծ ծովից՝ հարավային կողմից: (2) Իսկ ձմռան սկզբին, այսինքն Պլինյադայի մայրամուտից մինչև աբևադարձը, երբ արևը ձմռանը հակառակ ուղղությամբ է շրջվում, նրան ասել էին, որ նավարկել կարելի է: Այդ ժամանակ հորդառատ անձրևներից խոնավացած երկրից սկսում են փչել մեղմ քամիներ, որոնց առկայության դեպքում կարելի է շարժվել թիւրով և օգտվել առազաստներից:

(3) Նավատորմի գլխավոր նշանակված նեարքոսը սպասում էր նավարկման հարմար ժամանակի, իսկ Ալեքսանդրը Պատալայից ողջ զորքով գնաց դեպի Արաբիա գետը: Այստեղից նա ձախ թեքվեց, դեպի ծովը: Նրա հետ գնացին վահանակիրները, նետաձիգների ջոկատի կեսը, այսպես կոչված «հետիտոն ընկերները»: ջոկատները, «հեծյալ ընկերները» աղեմոսը, ամեն հիպարքիայից մեկական իղոս և բոլոր հեծյալ նետաձիգները: Նա ցանկանում էր շատ ջրհորներ փորել, որպեսզի զորքը նավարկության ժամանակ առատ ջուր ունենար, և ուզում էր անսպասելիորեն հարձակվել այստեղի, հնուց անկախ օրիտների հնդկական ցեղի վրա, որը ոչ իրեն, ոչ էլ իր զորքին ոչ մի բարեկամական ծառայություն չէր մատուցել: Մնացած զինվորների գլխավոր նշանակեց Հեփեստիո-

նեսին: (4) Արաբիտները (սա նույնպես անկախ ցեղ էր, որը բընակվում էր Արաբիա գետի ավազանում), գտնելով, որ իրենք ի վիճակի չեն դիմադրելու Ալեքսանդրին և շցանկանալով հնազանդվել նրան, լուր ստանալով նրա մտենալու մասին, փախան անսպաս: Ալեքսանդրն անցնելով Արաբիան (դա նեղ և ծանծաղ գետ է), գիշերվա ընթացքում անապատի խորքերը մտավ և լուսաբացին հայտնվեց մարդաբնակ երկրում: Նա հետևակին հրամայեց շարասյունով հետևել իրեն, իսկ ինքը հեծնազորով, որը շարել էր ըստ իղոսների, որպեսզի հնարավորին չափ շատ տարածություն դրազեցնի հարթավայրում, մտավ օրիտների երկիրը: (5) Նրանց, ովքեր դիմադրություն ցույց տվեցին, հեծյալները կոտորեցին: շատերին դերի վերցրին: Ալեքսանդրը ճամբար խփեց ոչ մեծ գետակի մոտ. երբ Հեփեստիոնեսը զորքով մոտեցավ, նա առաջ շարժվեց և եկավ օրիտների ամենամեծ գյուղը (այդ գյուղը կոչվում էր Ռամբակիա): Այդ տեղը նրան զուր եկավ. նա մտածեց, որ այդտեղ հիմնված քաղաքը կդառնա մեծ և հարուստ: Հեփեստիոնեսին էլ նա թողեց քաղաք կառուցելու:

22

Ինքը, կրկին վերցնելով վահանակիրների կեսին և ազրիանացիներին, հեծյալների աղեմոսը և հեծյալ նետաձիգներին, գնաց դեպի գեղորոտների և օրիտների սահմանը, որտեղ, ինչպես իրեն զեկուցել էին, նեղ անցուղի կար, և օրիտները, գեղորոտների հետ միացած, տեղավորվել էին այդ կիրճի առջև, որպեսզի ներս շթողեն Ալեքսանդրին: (2) Նրանք իսկապես կանգնած էին այնտեղ, բայց երբ նրանց հայտնեցին Ալեքսանդրի մոտենալու մասին, մեծամասնությունը փախավ այդ կիրճից, լքելով իրենց պահակակետը: Իսկ օրիտների առաջնորդները եկան Ալեքսանդրի մոտ, նրա իշխանությանը հանձնելով թե՛ իրենց, թե՛ իրենց ցեղը: Ալեքսանդրը հրամայեց նրանց՝ հավաքել իրենց ժողովրդին և ուղարկել հետ՝ հայրենիք, հավաստիացնելով, որ նրանց ոչ մի վատ բան չի պատահի: Նրանց վրա սատրապ նշանակեց Ապոլոթանոսին: (3) Նրա հետ միասին Օրալում թողեց թիկնապահ Լեոնատոսին, տալով նրան իր ունեցած բոլոր ազրիանացիներին, նետաձիգներին և հեծյալներին, հելլենական վարձկան հետևակն ու հեծնազորը: Նրան հրամայված էր սպասել տեղում, մինչև նավատորմի մոտենալը, քաղաք կառուցել և կարգի բերել օրիտների զործե-

բը, որպէսզի նրանք ավելի բարյացակամ լինեն սատրապի հանգեալ: Ինքը զորքի մեծ մասով (Հեփեստիոնեսը եկել էր իրեն թողնելով զորքով) շարժվեց գեղրոսների այն ճանապարհով, որի մեծ մասն անցնում էր անապատով:

(4) Այդ անապատում, պատմում է Արիստոբոլոսը, զմաստու շատ ծառեր էին աճում, ընդ որում դրանք անհամեմատ ավելի մեծ էին, քան այդ նույն ծառերը ուրիշ երկրներում: Առևտրի նրպատակով զորքին ուղեկցող փյունիկացիները հավաքում էին այդ խեժը (այն առատորեն հոսում էր. ծառերները մեծ էին, մինչ այդ ոչ ոք խեժը չէր հավաքել) և ծանր բեռը բարձում իրենց էշերի ու ջորիների վրա: (5) Այդ անապատում շատ էին նաև նարդոսի անուշահոտ արմատները. փյունիկացիները սրանք նույնպես հավաքում էին: Բնզմաթիվ այդպիսի արմատներ զինվորները ոտնուկով արեցին. ճզմված արմատներից անուշահոտութունը տարածվեց ամենուր. այդքան շատ էին այնտեղ աճում նարդոսները: (6) Այդ անապատում ուրիշ ծառեր էլ կային. նրանցից մի քանիսի տերևները նմանվում էին դափնու. նրանք աճում էին այն գոտում, ուր ողողվում էր ծովային ջրով և տեղատվության ժամանակ հայտնվում էին ցամաքի վրա. իսկ երբ ջուրը վերադառնում էր, ապա այն տպավորութունն էր ստեղծվում, որ նրանք ծովում են աճում: Հովտափոսերում աճող ծառերի արմատները մշտապես ջրում են գտնվում, որովհետև այն միշտ կա այնտեղ, սակայն այդ ջրից ծառերը չեն մահանում: (7) Այդ ծառերից ոմանք 30 կանգուն բարձրութուն ունեն. հենց այդ ժամանակ նրանք ծաղկած էին. ծաղիկը շատ նման էր սպիտակ շահարակի, բայց ավելի հոտավետ էր: Այնտեղ աճում էր նաև մի ծառ՝ շափազանց ամուր փշերով. եթե նույնիսկ հեծյալը նրա կողքով անցնելիս կառչի նրան իր հագուստով, ապա ավելի շուտ ձիուց վայր կընկնի, քան կպոկի այդ փուշը ծառից: (8) Պատմում են, որ նապաստակները մոտով վազելիս կառչում են այդ փշերից և այդ ձևով բռնվում, ինչպես թռչունները՝ սոսնձով, ձկներն էլ՝ կարթով: Իսկ երկաթով դժվար չէ այսպիսի փուշը կտրելը: Եթե կտրվածք ստացվի այդ ծառի վրա, ապա նրա բնից շատ հյութ կհոսի, ավելի շատ, քան դարնանը թղենուց, և այն ավելի սուր հոտ ունի:

Այդտեղից Ալեքսանդրն անցավ գեղրոսների երկրի դժվարին ճանապարհով, որն այնպիսի տեղանքով էր անցնում, որտեղ ոչ մի պաշար չկար և հաճախ զորքին ջուրը չէր բավարարում: Զորքն, այնուհանդերձ, ստիպված էր լինում գիշերվա ընթացքում մեծ անցումներ կատարել հեռանալով ծովից, թեև Ալեքսանդրը շատ էր ուզում անցնել ողջ ծովափով, ուսումնասիրել եղած նավահանգիստները և ճանապարհին հնարավոր նախապատրաստութուններ տեսնել նավատորմի համար՝ ջրհորներ փորել, իջևանատեղեր ու առևտրի համար տեղեր պատրաստել: (2) Սակայն գեղրոսների ծովափը լիովին ամայի էր, և Ալեքսանդրը փորքիկ հեծյալ շոկատով դեպի ծով ուղարկեց Փոանտոսին՝ Մանդրոգրեսի որդուն, զննելու արդյո՞ք չկան մոտակայքում նավերի կանգնելու տեղեր, ծովի մոտակայքում ջրհոր կամ ընդհանրապես ճանապարհորդներին անհրաժեշտ որևէ բան: (3) Փոանտոսը վերադառնալով զեկուցեց, որ այնպիսի նա հանդիպել է մի քանի ձկնորսների, որոնք բնակվում են խղճուկ հյուղակներում: Այդ հյուղակները պատրաստված են խխունջներից, իսկ որպես կտուր ծառայում են ձկների ողնաշարները: Այդ ձկնորսները շատ քիչ ջուր ունեն. նրանք մատներով դժվարութամբ փորում են ծովաբարի հետ խառնված մերձափնյա ավազը, և այդ փոսիկներում հավաքված ջուրը այնքան էլ քաղցրահամ չէ:

(4) Ալեքսանդրը, վերջապես, եկավ Գեղրիոսիայի մի այնպիսի տեղ, ուր առատ հաց կար: Ալեքսանդրը կարգադրեց վերցրած հացը բարձել բեռնակիր անասունների վրա, անձնական կնիքով կնքեց բեռնապարկերը և այդ քարավանն ուղարկեց դեպի ծով: Երբ զինվորներն արդեն իջևանել էին ծովին արդեն շատ մոտ, նրանք արհամարհեցին արքայական կնիքը և սկսեցին ուտել այդ հացը. պահակախումբը ինքն էլ էր ուտում հացը և բաժանում նրանց, ուղքեր սովատանջ էին եղել: (5) Սովն այնքան էր տանջել նրանց, որ ակնհայտորեն արդեն մոտալուտ կործանումը նրանք լիովին գիտակցված կերպով ավելի սարսափելի համարեցին, քան այն դեռ անհայտ ու հեռավոր դժբախտութունը, որն իրենց զրկելի էր բերելու արքան: Ալեքսանդրը հասկացավ, թե ինչքան ծանր է եղել իր զինվորների վիճակը, և ներեց նրանց: Ինքը, անցնելով երկրով, ծովով ուղարկված իր զորքի համար որքան կարող էր հաց հավաքեց և ուղարկեց կալաթիացի կրթիթեսի հետ: (6)

Տեղացի բնակիչներին հրամայված էր երկաթի հեռավոր մասերից հեռարձվող շափ ալյուր, ինչպես նաև արմավ և ուլխար ձարի զորքի համար: Մեկ ուրիշ տեղ նա ուղարկեց Տելիթոսին՝ օրնկերներին՝ մեկին, ալյուրի ոչ մեծ պաշարով:

24

Ինքը շարժվեց դեպի գեղրոսների մայրաքաղաքը (այդ տեղը կոչվում էր Պուրա), որտեղ և ժամանեց Օրալից մեկնելուց 60 օր անց: Ալեքսանդրի մասին գրողներից շատերն ասում են, որ Ասիայում նրա զորքի կրած բոլոր տանջանքներն անհնար է նույնիսկ համեմատել այն տանջանքների հետ, որոնք նրանք կրել են այստեղ: (2) Ալեքսանդրը գնաց այդ ճանապարհով, լավ իմանալով, որ այն դժվարին է (այդ մասին ասում է միայն Նեարքոսը) միայն այն պատճառով, որ լսել էր, թե իբր իրենից առաջ զորքով անցածներից ոչ ոք չի փրկվել բացի Շամիրամից, երբ նա փախչում էր հնդիկներից: Ըստ տեղացիների պատմածների, նրա ողջ զորքից միայն քսան հոգի են փրկվել, իսկ Կյուրոսի մոտ՝ Կամբիզի որդու, միայն յոթը՝ չհաշված իրեն: (3) Ասում են, Կյուրոսը եկել է այս վայրերը, որպեսզի ներխուժի հնդիկների երկիրը, բայց արդեն այս ամսյի ու ծանր ճանապարհին կորցրել է իր զորքի զգալի մասը: Այդ պատճառով Տամիրամի և Կյուրոսի հետ: Հանուն դրա և հետո, որպեսզի մոտակա վայրերից ամեն անհրաժեշտ բան բերի նավատորմի համար, Ալեքսանդրը եկել է այդտեղ. այդպես է ասում Նեարքոսը: (4) Կիզոլ շողը և ջրի բացակայությունը շատ մարդկանց կործանեց և ավելի շատ կենդանիների, որոնք ընկնում էին, իրվելով շիկացած ավազի մեջ. շատերը սատկում էին նաև ծարավից: Ճանապարհին սորուն ավազի ամբողջ բլուրներ էին հանդիպում, որոնք անհնար էր տրորելով պնդացնել. նրանց մեջ խրվում էին, ասես թանձր ցեխի կամ ավելի ճիշտ փխրուն ձյան մեջ: (5) Զրիերն ու ջորիները ստիպված էին բարձրանալ և իջնել. և բացի այդ, նրանք տանջվում էին այդ անհարթ և չպնդացված ճանապարհից: Երկար անցումները չափազանց հոգնեցնում էին զորքին, սակայն ջրի պահանջը անվերջ բռնում ու բռնում էր առաջ: (6) Եթե դիշերով ընթացե՞ր ավարտելով անհրաժեշտ անցումը, լուսաբացի կողմը մոտենում էին ջրի, ապա նրանց տառապանքներն զեռ ալյուրից մեծ չէին: Իսկ եթե օրն արդեն թեքվում էր դեպի

նրեկո, և նրանք երկար ժամերից հետո զեռ չէին անցել անհրաժեշտ տարածությունը, այն ժամ տոթից ու այրող ծարավից անասելի տառապում էին:

25

Կենդանիների մեծ մասի կործանման պատճառը հաճախ իբրև՞ դինվորներն էին: Երբ նրանց հացը չէր բավարարում, նրանք իրար դիտի հավաքվելով, մորթում էին ձիերին ու ջորիներին, սնվում նրանց մսով և ասում, թե կենդանիներն ընկել են ծարավից կամ հոգնածությունից: Այդ արշավանքի տանջալից պայմաններում ոչ ոք ըստ էության չէր սկսի հետաքննել այդ գործը. ասենք մեզքը բոլորի վրա էր ընկնում: (2) Ալեքսանդրը գիտեր, թե ինչ է կատարվում, սակայն նա գտնում էր, որ ներկա պայմաններում ավելի լավ է անտեղյակ ձեռնալ, քան թույլտվություն տալ այն բանի համար, ինչ իրեն հայտնի էր, իսկ այդ ընթացքում գնալով դժվարանում էր հիվանդներին և հոգնածությունից հետ մնացողներին տանելը. կենդանիների պակաս կար, իսկ դինվորներն իրենք էին ջարդել սալերը, քանի որ անհնար էր քարշ ալ դրանք խորունկ ավազի միջով, և մարդիկ առաջին իսկ օրերից ստիպված էին գնալ ոչ թե ամենակարճ ճանապարհով, այլ ընտրել կենդանիների համար ամենահեշտ ուղին: (3) Բայց այստեղ էլ հետ մնացողներ կային՝ կա՛մ հոգնածությունից, կա՛մ տոթից, կա՛մ ծարավից տանջահար հիվանդներ, և չկար որևէ մեկը, որ նրանց առաջ տաներ, ոչ ոք, որ մնար նրանց խնամելու: Արշավանքն իրագործվում էր մեծ արագությամբ. գլխավոր նպատակի հոգսերի մեջ առանձին մարդկանց, անհրաժեշտության դեպքում, նկատի չէին առնում: Ոմանց բունը տանում էր հանսպարհին (անցումները հիմնականում կատարվում էին գիշերը). արթնանալով, եթե նրանք ուժ ունենում էին, գնում էին զորքի հետքերով: Ոմանք փրկվեցին, սակայն մեծամասնությունը զոհվեց, խեղդվելով ավազոտներում, ասես ծովում: (4) Զորքի վրա իջավ մի նոր աղետ, որից ոչ պակաս տուժեցին թե՛ մարդիկ, թե՛ ձիերը և թե՛ ջորիները: Գեղրոսների երկրում, ինչպես հնդիկների երկրում, էթեսոսիաներն են բերում անձրևը, բայց այն թափվում է ոչ թե դաշտավայրերի վրա, այլ լեռների. քամին դեպի նրանց է բերում ամպերը, որոնք էլ զագաթներից ցած լին հասնում: (5) Մի անգամ դինվորները գիշերելու տեղավորվեցին

լինանային մի ծանծաղուտ առվակի կողքին. ջուրն էր ստիպել | նրանց այդտեղ կանգ առնել: Գիշերային երկրորդ պահակաժամի մոտ առվակը հորդառատ անձրևից լցվեց (զինվորները չէին էլ կասկածում, որ անձրև է գալիս) և այնքան դուրս եկավ իր փակրից, որ զոհվեցին զորքին ուղեկցող բազմաթիվ կանայք ու երեխաներ, կորավ արքայական ողջ հանդերձանքը և խնդրվեցին դեռևս ողջ մնացած ջորիները: Զինվորներն իրենք հազիվ փրկվեցին իրենց սպառազինությունից, թեև այդ էլ պահպանեցին ոչ ամբողջությամբ: (6) Շատ մարդիկ էլ զոհվեցին նրանից, որ տոթից ու ծարավից տանջահար, երբ նրբանք շատ ջուր էին տեսնում, խմում էին չափից ավելի: Այդ պատճառով Ալեքսանդրը սովորաբար ճամբար չէր խփում անմիջապես ջրի մոտակայքում, այլ մոտ 20 ասպարեղ նրանից հեռու, որպեսզի բոլորն անմիջապես չնետվեն ջրի վրա, դրանով կործանելով թե՛ իրենց, թե՛ կենդանիներին, և հատկապես այն պատճառով, որպեսզի անզուսպները միանգամից առվակը կամ գետակը չբռնեն և չպղտորեն ջուրը մինչև զորքի մյուս մասի գալը:

Այստեղ, ինձ թվում է, չի կարելի լռել Ալեքսանդրի հիասքանչ արարքի մասին, միևնույն է, կատարվել է դա այստեղ, թե դրանից առաջ՝ պարապամիսադների երկրում, ինչպես ոմանք են պատմում: Զորքը գնում էր ավազուտներով, այրող տոթի մեջ. պետք էր ջրի հասնել, իսկ քայլելու դեռ շատ ճանապարհ կար: Ալեքսանդրը, տոշորվելով ծարավից, ինչպես և մյուս զինվորները, մեծ զովարություններով գնում էր զորքի առջևից. չէ՞ որ ավելի հեշտ է դժվարությունները կրել, եթե բոլորը հավասարաչափ են տառապում: (2) Այդ ժամանակ մի քանի թեթևազեններ, որոնք զորքից հեռացել էին ջուր փնտրելու, գտան շոտող ու վատ ջրով փոքրիկ մի ջրափոս: Առանց դժվարության հավաքելով այդ ջուրը, նրանք շտապեցին Ալեքսանդրի մոտ, ասես իսկական գանձ բերելով այն նրան: Մոտենալով նրան, նրանք ջուրը լցրեցին սաղավարտի մեջ և մատուցեցին Ալեքսանդրին: (3) Նա վերցրեց այն, շնորհակալություն հայտնեց բերողներին և բոլորի աչքերի առջև թափեց: Դա ողջ զորքին այնքան ուժ տվեց, ասես Ալեքսանդրի թափած ջուրը ըմպելիք գարձավ բոլորի համար: Ես գովաբանում եմ Ալեքսանդրին այդ արարքի համար, որն ինչպես

առիշտ ոչ մի բան, խոսում է նրա դասվածության և զինվորների հետ վարվելու կարողության մասին:

(4) Այդ երկրում զորքի հետ նաև այսպիսի դժբախտություն պատահեց: Արդեն ճամփորդության վերջում ուղեկցողները հայտարարեցին, թե իրենք չեն գտնում ճանապարհը, քանի որ քամին հետքերը բռնել և ոչնչացրել է. խոր, ամենուր միապաղաղ ավազե ողողատների մեջ չկար որևէ նշան, որով հնարավոր լինեց գուշակել ճանապարհը՝ մոտակայքում ոչ մի ծանոթ ծառ, ոչ մի անշարժ, վեր խոյացած բլուր: Իսկ ճանապարհը որոշել գիշերը՝ աստղերի միջոցով (փյունիկացի ծովագնացներն անում են դա Փոքր Արջի, իսկ ուրիշները՝ Մեծի միջոցով) և ցերեկը՝ արևի միջոցով, ուղեկցողները չէին կարողանում: (5) Ալեքսանդրը հասկացավ, որ անհրաժեշտ է ձախ գնալ և, իր հետ վերցնելով փոքրիկ հեծյալ ջրկատ, առաջ գնաց. նրանց ձիերը հյուծվել էին շոգից, և մեծամասնությունը հետ մնաց, նա գնաց միայն հինգ ուղեկիցներով և տեսավ ծովը: Ափին ավազը փոքրելով, նա մաքուր, քաղցրահամ ջուր գտավ և այստեղ բերեց ողջ զորքը: Յոթ օր նրանք գնում էին ծովի երկայնքով, ջուր հայթայթելով փոփոխ: Այստեղ ուղեկցողները ճանաչեցին ճանապարհը և առաջնորդեցին զորքը դեպի երկրի խորքը:

Գալով գեղորոսների մայրաքաղաք, Ալեքսանդրը զորքին դադար տվեց, պաշտոնազուրկ արեց սատրապ Ապոլոթանոսին, քանի որ նա չէր կատարել իր կարգադրություններից և ոչ մեկը, և այստեղ սատրապ նշանակեց Թոանտոսին, իսկ երբ սա հիվանդությունից մեռավ, սատրապությունը ընդունեց Սիրիոտիոսը: Նրբան դեռ վերջերս Ալեքսանդրը նշանակել էր Կարմանիայի սատրապ: Իսկ այժմ նրան հանձնարարվեց կառավարել արաբոսիացիներին և գեղորոսներին, իսկ Կարմանիան ստացավ Տղեպոզեմոսը՝ Պիթոթանոսի որդին: (2) Արքան արդեն ուղևորվում էր Կարմանիա, երբ նրան զեկուցեցին, որ Փիլիպոսին՝ հնդիկների սատրապին դարանակալած վարձկանները սպանել են, որոնք դավադրություն էին սադրել նրա դեմ: Փիլիպոսի թիկնապահները՝ մակեդոնացիները, մարդասպաններից մի քանիսին տեղն ու տեղը սպանել են, մյուսներին՝ ավելի ուշ բռնել: Իմանալով այդ մասին, Ալեքսանդրը նամակ ուղարկեց էվգամոսին և Տաքսիլին,

հրամայելով երկիրը, որն առաջ հանձնարարված էր Փիլիպուին, աչքի տակ պահել, մինչև նոր սատրապ նշանակելը:

(3) Երբ Ալեքսանդրն արդեն Կարմանիայում էր, եկավ Կրատերոսը զորքի մնացած մասով և փոխելով. նա բերեց նաև իր ձերբակալած ապստամբ Օրդանին: Եկան նաև Ստասանորոսը՝ արիացիների և զարանդների սատրապը, և Փարիսմանը՝ Քրատաթերների որդին՝ Պարսկաստանի և Վրկանի սատրապը: Եկան Պարմենիոսի հետ Մարաստանում զորքի հետ թողնված ստրատեգներ Կլեանդրոսը, Սիտակոսը և Հերակոնոսը, նույնպես մեծաքանակ զորքով: (4) Ե՛վ տեղաբնակները, և՛ զորքը բազմաթիվ մեղադրանքներ ներկայացրեցին Կլեանդրոսին և Սիտակոսին իրենց մերձավորներով. նրանք թալանել էին տաճարները, քանդել էին գերեզմանները և հանդուգն ու արհամարհանքով վերաբերվել հայտատկներին, ամեն տեսակ անարդարություններ արել: Երբ այդ մասին զեկուցեցին Ալեքսանդրին, նա մահապատժի ենթարկեց նրանց, որպեսզի ահաբեկի նրանց, ովքեր դեռ օտարապետներ էին, իշխաններ ու թագավորներ. թող գիտենան, որ եթե իրենք անօրինականություններ անեն, ապա նրանց սպասում է նույն պատիժը: (5) Այդ միջոցն ամենաշատը Ալեքսանդրի նկատմամբ հնազանդության մեջ էր պահում նվաճված և նրան կամավոր ենթարկված ցեղերին: Նրանց թիվը շատ մեծ էր. նրանք ցրված էին հսկայական տարածության վրա, բայց բոլորն էլ դիտեին, որ Ալեքսանդրին ենթակա պետությունում կառավարիչները իրավունք չունեն նեղել հպատակներին: Այն ժամանակ Հերակոնոսն արդարացվեց: Սակայն շուտով Շոշի բնակիչները մերկացրին նրան այն բանում, որ նա թալանել է Շոշի տաճարը, և նա մահապատժի ենթարկվեց:

(6) Ստասանորոսն ու Քրատաթերնը Ալեքսանդրին բերեցին բեռնակիր անասունների նախիրներ և բազմաքանակ ուղտեր. տեղեկանալով, որ նա գնում է զեզրոսների երկիրը, նրանք նախատեսել էին, թե ինչ տանջանքներ կկրի նրա զորքը (իրականում այդպես էլ եղավ): Ժամանակին եկան և իրենք, ժամանակին բերեցին և՛ ուղտերին, և՛ բեռնակիր անասուններին: Ալեքսանդրը բոլորին բաժանեց՝ զորավարներից ամեն մեկին մի անասուն, մյուսները բաժանեց իղոսների, հարյուրակների և լոթոսների միջև՝ ուղտերի և բեռնակիր անասունների քանակությանը համապատասխան:

Որոշ գրողներ մի պատմություն են անում, որն իմ կարծիքով արժանի չէ վստահության. Ալեքսանդրը կարգադրել է իրար միացնել երկու շքեղ սալ, ընկողմանել է դրանց վրա իր ընկերների հետ և սրինգի նվագակցության տակ անցել ողջ Կարմանիան. զինվորները հետևել են նրան ծաղկեպսակներով, ուրախ կատակելով. տեղացիները ճանապարհի վրա առատորեն ուտելիք և զանազան ճոխության առարկաներ են բերել: Ալեքսանդրը կազմակերպել է այդ ամենը կրկնօրինակելով Գիոնիոսի բարոսական ջջախմբին: (2)Չէ՞ որ նրա մասին պատմում են, որ նվաճելով հեղիկներին, նա այդպիսով անցել է Ասիայի զգալի մասը, անվանվել է «տրիումֆատոր», և դրա համար հաղթանակից հետո կատարվող հանդիսավոր թափոնները կոչվում են տրիումֆ: Այդ մասին, սակայն, չեն գրում ո՛չ Պտղոմեոսը՝ կազոսի որդին, ո՛չ Արիստոբուլոսը՝ Արիստոբուլոսի որդին, և ընդհանրապես ոչ ոք, ում վկայությունը այդ մասին հնարավոր լիներ հավատարմ Ինձ մնում է ընդունել այդ պատմության հավաստի չիմենքը:

(3) Հաջորդը գրում եմ ես՝ հիմք ընդունելով Արիստոբուլոսի ասածը. Ալեքսանդրը Կարմանիայում շնորհակալական զոհ մատուցեց հնդիկներին հաղթելու և զեղրոսների երկրում իր զորքի փրկության համար և սահմանեց մուսայական ու մարմնամարզական մրցումներ: Պեկեստեսին վերցրեց իր թիկնապահների շարքը. նա արդեն որոշել էր նշանակել նրան Պարսկաստանի սատրապ, սակայն չմոռանալով մալերի գործը, ցանկացավ նրա նկատմամբ ցուցաբերել նաև այդ վստահությունը և այդ պատիվը:

(4) Այդ ժամանակ նա յոթ թիվնապահ ուներ՝ Լեոնատոսը՝ Անթեոսի որդին, Հեփեստիոնոսը՝ Ամինտորեսի որդին, Լիսիմաքոսը՝ Ադափոնիլեսի որդին, Արիստոնոսը՝ Պիսոնոսի որդին (բոլորը ծնունդով Պելոպոնեսացի), Պերդիկոսը՝ Օրոնտոսի որդին՝ Օրեսթիսից, Պաղոմեոսը՝ կազոսի որդին, և Պիթոնոսը՝ Կրատերոսի որդին (երկուսն էլ էորդեպոնացի): Ութերորդը նրանց ավելացավ Ալեքսանդրին վահանով պտտապարած Պեկեստեսը:

(5) Այդ ժամանակ նեարքոսը, ավարտելով նավարկությունը օրիտների, զեղրոսների և «ձկնակերների» ավերի երկայնքով, կառանեց Կարմանիայի մարդարնակ ծովերին: Այստեղից նա մի քանի մարդկանցով մեկնեց Ալեքսանդրի մոտ, պատմելու նրան Արտաքին ծովով կատարած իր նավարկության մասին: (6) Ալեք-

սանդրը նրան կրկին ծովային ճանապարհով ուղարկեց Շոշաստան և մինչև Տիգրիսի գետաբերանը՝ Նեարքոսի Ինգոսից մինչև Պարսից ծոց կատարած նավարկութեան մասին ես առանձին կգրեմ, հետևելով Նեարքոսի անձնական երկասիրութեանը: Կա այդ հունական դիրքը Ալեքսանդրի մասին: Ես կանեմ դա հետո, եթե ցանկութեանն ու աստված մղեն ինձ դեպի դա:

(7) Ալեքսանդրը կարգադրեց Հեփեստիոնեսին զորքի մեծ մասով, բեռնակիր անասուններով և փղերով Կարմանիայից ծովափով դնալ Պարսկաստան. ձմեռը զորքին վրա տվեց, իսկ պարսկական ծովափին և՛ տաք էր, և՛ ուտելիքի առատ պաշարներ կային:

29

Ինքն էլ իր հետևակի ամենաթեթև մասով, Վեծյալ ընկերներով և նետաձիգների մի մասով գնաց Պարսկաստան՝ Պասարգադը: Ստասանորոսին ուղարկեց նրա մարզը: (2) Գալով Պարսկաստանի սահմանների մոտ, նա արդեն չգտավ սատրապ Թրասարտոսին (նա հիվանդացել և մահացել էր, մինչև Ալեքսանդրը հնդկների մոտ էր). Պարսկաստանը ղեկավարում էր Օրքսինը: Նրան Ալեքսանդրը շէր նշանակել, սակայն նա անաբժան շէր համարել պահել Ալեքսանդրի համար Պարսկաստանը կարգ ու կանոնի մեջ, քանի դեռ ուրիշ կառավարիչ չկար: (3) Պասարգադը եկավ նաև Ատրոպատոսը՝ Մարաստանի սատրապը. նա իր հետ բերեց մարաստանցի Բարհաքսին, որը բռնվել էր այն բանի համար, որ ուղիղ կիդարիս էր գրել գլխին և հայտարարել իրեն պարսիկների ու մարերի արքա: Նրա հետ միասին ձերբակալվել էին նաև ապստամբության ու դավադրության այլ մասնակիցներ: Ալեքսանդրը հրամայեց բոլորին մահապատժի ենթարկել:

(4) Նրան վշտացրեց Կյուրոսի՝ Կամբիզի որդու գերեզմանի հանդեպ հանցավոր վերաբերմունքը: Ինչպես պատմում է Արիստոբուլոսը, Ալեքսանդրը Կյուրոսի գերեզմանը գտավ քանդված և թալանված: Այդ գերեզմանը գտնվում էր Պասարգադում՝ արքայական այգում. շրջակայքում զանազան ծառեր էին աճում, գետ էր հոսում, մարգագետնում առատ խոտ էր աճում: (5) Գերեզմանի ստորգետնյա մասը շարված էր շորսփուտանոց քարերից՝ քառանկյան ձևով. դրա վրա կառուցված էր քարե ծածկված սրահ: Դնպի ներքին մասը այնքան նեղ մի դուռ էր բացվում, որ նույն

նրակ նիհար մարդը հազիվ էր կարողանում ներս խցկվել: Սրահում ոսկե դագաղ էր դրված, որի մեջ գրված էր Կյուրոսի մարմինը, իսկ շագաղից բացի մահիճ էլ կար, որի ոտքերը կռված էին ոսկուց. այն ծածկված էր բարեկոնյան գորգով, գետնին փռված էին ծիրանագույն դաբաղած մորթիներ: (6) Նրա վրա գցված էր արքայական թիկնոցը և Բարեկոնում կարված այլ հագուստներ: Արիստոբուլոսը պատմում է, որ այնտեղ եղել են հնդկական շավարներ և թիկնոցներ՝ մուգ, ծիրանագույն և այլն, ապարանջաններ, դաշույններ, քարերով զարդարված ոսկե ականջօղեր: Կար նաև մի սեղան: Մահճի կենտրոնում դրված էր Կյուրոսի աճյունով զագաղը: (7) Ցանկապատի ներսում, դեպի գերեզմանը տանող սանդղամուտքի մոտ մի փոքրիկ սրահ կար մոզերի համար, որոնք պահպանում էին Կյուրոսի գերեզմանը: Կամբիզի՝ Կյուրոսի որդու ժամանակներից սկսած, պահակների այդ պաշտոնն անցնում էր հորից որդուն, նրանք արքայից ամեն օր ստանում էին մեկ ուշխար և սահմանված քանակությամբ ալյուր ու գինի, և ամեն ամիս մի ձի՝ Կյուրոսի պատվին զոհաբերության կատարելու համար: (8) Գերեզմանի վրա պարսկական տառերով գրություն կար. «Ես Կյուրոսն եմ՝ Կամբիզի որդին, Պարսից թագավորության հիմնադիրը և Ասիայի տիրակալը: Ո՛վ մարդ, մի նախանձիր ինձ, որ ես այս հուշարձանն ունեմ»:

(9) Ալեքսանդրը (նվաճելով Պարսկաստանը, նա չմոռացավ այցելել Կյուրոսի գերեզմանին) տեսավ, որ բացի դագաղից ու մահճից, ամեն ինչ տարել են: Կյուրոսի աճյունին էլ վերաբերվել են առանց հարգանքի. դագաղի կափարիչը հանված էր, դիակը գնե նետված, Որպեսզի ավելի հեշտ լիներ դագաղը հանել, փորձել էին թևթևացնել այն՝ մաս-մաս էին արել ու տափակացրել: Գործը, սակայն, առաջ չէր գնացել, և կողոպտիչները հեռացել էին, թողնելով դագաղը: (10) Արիստոբուլոսը պատմում է, որ Ալեքսանդրը հրամայել է լրիվ կարգի բերել Կյուրոսի գերեզմանը. դագաղի մեջ դնել անվնաս մնացած աճյունի մնացորդները, ծածկել դագաղը կափարիչով, դրա վրայի բոլոր թևրությունները վերացնել, մահիճը փաթաթել ժապավեններով, տեղը դնել մնացած զարդարանքները, որոնք եղել են նախկինում և նույն քանակությամբ. դուռն աննկատելի դարձնել, նրա մի մասը շարել քարով, մնացածն էլ ծեփել կավով. կավի մեջ դրոշմել արքայական կնիքը: (11) Ալեքսանդրը կարգադրեց բռնել մոզերին՝ գերեզմանի պահակներին և խոշտանգել նրանց, որպեսզի նրանք

տան հանցագործների անունները, սակայն նրանք, տանջանքները
ենթարկվելով, ո՛չ իրենք մեղա նկան, ո՛չ էլ որևէ մեկի անունը
սովեցին: Հանցագործներին մերկացնելն անհնար դարձավ, և
Ալեքսանդրն աղատ արձակեց նրանց:

30

Այժմ նա ուղևորվեց դեպի պարսից արքաների պալատը, որն
ինքն այրել էր նախկինում: Ես դրա մասին պատմել եմ և այդ
արարքին հավանություն չեմ տվել: Ինքն՝ Ալեքսանդրն էլ վերա-
դառնալով, հավանություն չտվեց այդ արարքին:

Պարսիկները շատ մեղադրանքներ հարուցեցին Օրքսիսի դեմ,
որը կառավարում էր Պարսկաստանը Թրասպոլոսի մահից հե-
տու: (2) Օրքսիսին մերկացրին նրանում, որ նա թալանել էր տա-
ճարները և արքայական դամբարանները և անարդարացի մահա-
պատժի էր ենթարկել շատ պարսիկների: Ալեքսանդրի հրամանով
նրան կախեցին. նա Պարսկաստանի սատրապ նշանակեց թիկնա-
պահ Պեկեստեսին, որի հավատարմությունը նա ստուգել էր և՛
ուրիշ դեպքերում, և մալերի հետ ճակատամարտում, երբ նա իր
մարմնով ծածկել էր Ալեքսանդրին և փրկել նրան: Ալեքսանդրը
գնահատում էր նրան նաև նրա համար, որ Պեկեստեսի համար
պարսկական սպրեյակերպը միանգամայն ընդունելի էր: (3) Դա
ի հայտ եկավ միանգամից, երբ, դառնալով Պարսկաստանի սատ-
րապ, նա՝ մականդոնացիներից միակը, հագավ մարական հագուստ,
սովորեց պարսից լեզուն և, ընդհանրապես, ամեն ինչ վերափո-
խեց պարսկական ձևով: Ալեքսանդրին դա դուր էր գալիս, իսկ
պարսիկներն ուրախանում էին, որ նա զերպագասում է իրենց սո-
վորույթները հայրենի սովորույթներից:



ԳԻՐԷ ՅՈՒԹԵՐՈՐԴ

1

Երբ Ալեքսանդրը ժամանեց Պասարգադք և Պերսեպոլիս, շատ
ցանկացավ եփրատով ու Տիգրիսով իջնել մինչև Պարսից ծովը,
տեսնել այդ գետերի ծովը թափվելը, ինչպես տեսել էր Ինդոսի
ծովը թափվելը, և տեսնել, թե ինչպիսին է այդ ծովը: (2) Ոմանք
գրել են, թե նա մտադրություն է ունեցել ծովով անցնել Արաբիա-
յի մեծ մասի երկայնքով, եթովպացիների երկրի կողքով, Լիբիա-
յի, նոմադների կողքով, Ատլաս լեռան կողմով և այդպիսով
հասնել մեր ներքին ծովը: Եվ ճանաչելով Լիբիան և Կարթագենը, նա,
արդարացիորեն, կարող էր ողջ Ասիայի տիրակալ կոչվել: (3)
Պարսիկների և մարերի արքաները, կառավարելով Ասիայի շատ
փոքր մասը, անարդարացիորեն իրենց մեծ արքաներ էին կոչում:
Ուրիշներն էլ ասում են, թե նա այստեղից ցանկացել է նավար-
կել դեպի Էլփրսիսյան ծով, դեպի սկյութները և դեպի Մեոտիս,
ոմանք ասում են, թե Սիցիլիա և Յապիգիայի ափերը. նրան
սկսել էին անհանգստացնել հոմեոսացիները, որոնց մասին լու-
րերը գնալով ավելի լայնորեն էին տարածվում:

(4) Ես չեմ կարող ճշտություններ ասել, թե ինչպիսին են եղել
Ալեքսանդրի մտադրությունները և չեմ պատրաստվում գուշակու-
թյուններ անել այդ մասին: Ես կարծում եմ, մի բան կարելի է
հաստատել, որ նա մանր և դյուրին գործեր չի ծրագրել և տեսլը
հանգիստ չէր նստի, բավարարվելով ձեռք բերածով, եթե նույնիսկ
Ասիային ավելացնելը Եվրոպան, իսկ Եվրոպային՝ բրետանների
կղզիները: Այդ սահմաններից այն կողմ նա կսկսեր փնտրել էլի

ինչ-որ անհայտ բաներ և եթե ուրիշ մեկը չգտնվեր, ապա մրցակցութեան մեջ կմտնէր ինքն իր հետ: (5) Այդ իսկ պատճառով ես հավանութեամբ եմ վերաբերվում այն հնդիկ սոփիստներին, որոնց մասին պատմում են հետևյալը. Ալեքսանդրը հանդիպել է նրանց բաց երկնքի տակ, մարգագետնում, որտեղ նրանք սովորաբար ժամանակ էին անցկացնում: Տեսնելով արքային և նրա զորքը, նրանք սկսել են միայն դոփեկ տեղում: Երբ Ալեքսանդրը թարգմանչի միջոցով հարցրել է, թե ինչ է նշանակում դա, նրանք այսպես են պատասխանել. (6) «Արքա Ալեքսանդր, ամեն մի մարդու այնքան հող է պատկանում, որքան այժմ մեր ոտքերի տակ է: Դու այնպիսի մարդ ես, ինչպես և մնացած բոլորը, միայն ունայնամիտ ու հպարտ. հեռանալով տնից, դու այդքան երկրներով ես անցել, ոչ ինքդ ես դադար առել, ոչ էլ ուրիշներին տվել: Շուտով դու կմեռնես և քեզ այնքան հող կհասնի, որքան հարկավոր է քո թաղման համար»:

2

Եվ այստեղ Ալեքսանդրը հավանութուն է տվել թե՛ խոսքերին և թե՛ ասողներին. իսկ գործում էր նա, միևնույն է, ուրիշ կերպ՝ հենց հակառակը: Պատմում են, որ նա հիացել է սինոպցի Դիոգենեսով, որի հետ նա հանդիպել է Իսթմոսում: Դիոգենեսը պառկած է եղել արևի տակ. Ալեքսանդրը կանգնել է նրա առջև «հետիոտն ընկերների» և վահանակիրների հետ և հարցրել, արդյո՞ք նրան որևէ բան պետք չէ: Դիոգենեսը պատասխանել է, որ իրեն մի բան է պետք՝ թող Ալեքսանդրը և նրա ուղեկիցները մի կողմ քաշվեն և չծածկեն արևը: (2) Ըստ երևույթի Ալեքսանդրըն ամենևին զուրկ չի եղել հասկանալու, թե ինչն է լավը, սակայն փառքի ծարավը իրենից ավելի ուժեղ է եղել: Երբ նա ժամանեց Տարսիս և տեսավ մերկ հնդիկ իմաստուններին, նա շատ ցանկացավ այդ մարդկանցից մեկին ունենալ իր շքախմբում՝ այնքան էր նա հիացել նրանց զսպվածութեամբ: Սոփիստներից ամենաավագը (մնացածները նրա աշակերտներն էին)՝ Դանդամ անունով, ասաց, որ ո՛չ ինքը կզնա Ալեքսանդրի մոտ, ո՛չ էլ որևէ մեկին կթույլատրի: (3) Եթե Ալեքսանդրը Զևսի որդին է, ապա ինքն էլ է Զևսի որդին. այն ամենից, ինչ Ալեքսանդրն ունի, իրեն ոչինչ պետք չէ, բանդի նա բավարարվում է իր ունեցածով, և նա տեսնում է, որ Ալեքսանդրը և նրա ուղեկիցները անվերջ թափառում

են ցամաքով ու ծովով առանց որևէ բարի նպատակի և նրանց այդ մեծ թափառումներին վերջ չի լինի: Նա ոչինչ չի ցանկանում, ինչ կարող է տալ իրեն Ալեքսանդրը, և չի վախենում, որ նա կուրող է իրենից որևէ բան խլել: (4) Կյանքում իրեն հնդկական հողը բավական է, որը ժամանակին պտուղներ է տալիս, իսկ մեռնելով՝ նա կազատվի իր դժնդակ կենակցից՝ իր մարմնից: Ալեքսանդրը կարգադրեց ձեռք շտալ նրան, հասկանալով, որ իր առջև կանգնած է ազատ ոգու տեր մարդ: Նա Կալանին՝ տեղացի իմաստուններից մեկին, որին, ինչպես Մեդասթենեսն է գրում, իրենք սոփիստները համարում էին որևէ ինքնատիրապետումից զուրկ մարդ, համոզեց միանալ իր շքախմբին: Ըստ նրա, իմաստունները կշտամբում էին Կալանին, որ նա թողել է երջանիկ կյանքը իրենց հետ և սկսել է, բացի աստծուց, ծառայել մեկ այլ տիրակալի:

3

Ես գրում եմ այդ մասին, քանի որ Ալեքսանդրի մասին երկասիրութեան մեջ անհրաժեշտ է խոսել նաև Կալանի մասին: Նա, որ նախկինում երբեք չէր հիվանդացել, Պարսկաստանում տկարացավ, սակայն շցանկացավ հիվանդ ապրել: Նա ասաց Ալեքսանդրին, որ լավ կլիներ, եթե ինքը տուն վերադառնար, քանի ղեռ այնպիսի հիվանդություն չի սկսվել, որը ստիպի իրեն փոխել նախկին ապրելակերպը: (2) Ալեքսանդրը երկար ժամանակ առարկում էր նրան, բայց տեսավ, որ նրան չի համոզի և եթե նրան չընդառաջի, ապա նա ուրիշ ձևով, բայց և այնպես, կհեռանա կյանքից: Նա կարգադրեց, հետևելով Կալանի ցուցումներին. հսկա մի խարույկ անել. այդ գործի տնօրինությունը նա հանձնարարեց թիկնապահ Պտղոմեոսին՝ Լագոսի որդուն: Պատմում են, որ Կալանին ուղեկցել է հանդիսավոր թափոր. գնում էին մարդիկ և ձիեր. ոմանք լրիվ սպառազեն, մյուսները՝ խարույկի համար տարրեր բուրավետ ծխանյութերով: Մի քանիսն ավելացնում են, որ տարել են նաև ոսկի և արծաթի գավաթներ և արքայական հագուստ: (3) Նրա համար ձի են բերել (նա հիվանդություն պատճառով արդեն ի վիճակի չէր քայլել), սակայն նրա ուժը չի բավարարել ձի նստել և նրան տարել են պատգարակով: Հնդկական սովորովի համաձայն նրա վրա պսակ է եղել և նա երգել է հնդկերեն: Հնդիկներն ասում են, որ դրանք եղել են հիմներ և գովերգություններ աստվածներին: (4) Զին, որով նա պատրաստ-

վում էր գնալ (դա նիսալական ցեղի արքայական ձի էր) խարույկ բարձրանալուց առաջ նվիրեց կիսիմարտին՝ իր իմաստնության երկրպագուններից մեկին: Գավաթներն ու գորգերը, որոնցով Ալեքսանդրը կարգադրել էր զարդարել խարույկը, նա բաժանեց իրեն ուղեկցողներին: (5) Բարձրանալով խարույկի վրա, նա հանդիսավոր պառկեց: Ողջ զորքը նայում էր նրան, սակայն Ալեքսանդրին այդ տեսարանը, որի գլխավոր դեմքն իր ընկերն էր, անտանելի թվաց: Մյուսաներին հրաշք թվաց, որ կրակի մեջ մարմինը լիովին անշարժ էր մնում: (6) Երբ նբանք, պատմում է նեարքուսը, ում հրամայված էր, խարույկը վառեցին, հնչեցին շեփոտների (այդպես էր կարգադրել Ալեքսանդրը), ողջ զորքը մարտի գնալու գոչումն բարձրացրեց, փղերը դիւ ու մարտական ձայներ արձակեցին՝ բոլորն ի պատիվ Կալանի: Ահա թե ինչ են գրել հնդիկ Կալանի մասին այն գրողները, որոնք վատահոսություն են ներշնչում և արժե, որ մարդիկ իմանան այդ մասին. արժե հասկանալ, թե ինչ աստիճանի ուժեղ ու անհաղթ է ցանկալին իրագործելու ձգտող մարդկային կամբը:

4

Գալով Շոշ, Ալեքսանդրը Ատրոպատոսին ուղարկեց նրա սատրապաությունը, իսկ Աբուլիտին և նրա որդուն՝ Օթաթթին, Շոշը վատ կառավարելու համար, հրամայեց մահապատժի ենթարկել: (2) Ալեքսանդրի նվաճած երկրներում կառավարիչները շատ հանցագործություններ էին կատարել տաճարների, գամբարանների և հենց հպատակների հանդեպ. արքայի արշավանքը դեպի հնդկական երկիրը շատ ձգձգվեց և անհավատալի էր թվում, որ նա կվերադառնա, անցնելով այդքան ժողովուրդների երկրներով, այդքան պատերազմելով փղերի դեմ. կարծում էին, որ նա կզոհվի որեէ տեղ Ինդոսի կամ Հիդասպի, Ակեսինի կամ Հիփոսի այն կողմում: (3) Գեղորսների երկրում նրանց վրա իջած աղետներն ավելի ամբաստանեցին ասիական սատրապների այն ենթադրությունը, որ Ալեքսանդրի վերադառնալու կապակցությամբ նրանք անհանգրստանալու ուղին չունեն: Ասում են, որ Ալեքսանդրն այդ ժամանակ ավելի է հակվել այն բանին, որ վտահոի բողոքներին և շլակածի դրանց: Նա պատրաստ էր խստագույնս պատժել նույնիսկ ամենափոքր զանցանքի համար, համարելով, որ դրան ընդունակ մարդիկ կարող են նաև մեծ հանցագործություններ կատարել:

(4) Շոշում հարսանիքներ արեցին և՛ ինքը, և՛ իր արևկերևորը: Համաձայն Արիստոբուլոսի, նա կնության վերջրեց Գարեհի ավագ դստերը՝ Բարսինային, ինչպես նաև Օթոսի դուստրերից ամենավոքրին՝ Պարիսատիդային: Ռոքսանան՝ բակտրացի Օթսիարտի դուստրը, արդեն նրա կինն էր: Հեփեստիոնեսին նա ամուսնացրեց Գրասպետիդայի՝ Գարեհի դստեր՝ իր կնոջ քրոջ հետ: Նա ցանկանում էր, որ Հեփեստիոնեսի և իր զավակները զարմիկներ լինեն: Կրատերոսին նա կնության տվեց Ամաստրինային՝ Օթսիարտի՝ Գարեհի եղբոր դստերը, Պերդիկոսին՝ Մարաստանի սատրապ Ատրոպատոսի դստերը: (6) Թիկնայազ Պողոսմեսոսին և արքայական քարտուղար էլմենոսին ամուսնացրեց Արտաբազի դուստրերի հետ. մեկին Արտակամեի, մյուսին Արտոնիդեի հետ. նեարքոսին՝ Բարսինայի և Մենտորի դստեր հետ. Սիլկոսին՝ բակտրացի Մպիտամենի դստեր հետ: Այդպիսիով նա մոտ 80 «ընկերներ» ամուսնացրեց ազնվատոհմ պարսիկների ու մարերի դուստրերի հետ: Ամուսնությունները կատարվում էին պարսկական սովորույթի համաձայն: (7) Փեսաների համար մի շարքով բազկաթոռներ էին դրված. ըմպելիքը ճաշակելով, հարսնացուները մտտենում և նստում էին՝ ամեն մեկն իր նշանածի կողքը. սրանք էլ գրկում և համբուրում էին նրանց: Օրինակը արքան ծառայեց. բոլորի ամուսնությունները միաժամանակ կատարվեցին: Ալեքսանդրի այդ քայլը «ընկերների» հետ նրա հասարակ և բարեկամական վերաբերմունքի ապացույց համարեցին: (8) Ամուսիններն, ամեն մեկն իր կնոջ հետ, դնացին իրենց տները: Ալեքսանդրը բոլորին օժիտ տվեց: Ուրիշ մակեդոնացիներ էլ կային, որոնք ամուսնացան ասիացի կանանց հետ. Ալեքսանդրը կարգադրեց կազմել նրանց անվանական ցուցակը (նրանց թիվը 10.000-ից ավելի եղավ), և նրանք բոլորը Ալեքսանդրից հարսանյաց նվերներ ստացան:

5

Ալեքսանդրը որոշեց, որ այժմ զինվորական պարտքերը վճարելու իսկական ժամանակն է: Նա կարգադրեց ցուցակներ կազմել, թե ով ինչքան է պարտք, որպեսզի տա համապատասխան գումարները: Սկզբում միայն քչերը գրեցին իրենց անունները. վախենալով, որ Ալեքսանդրը ստուգում է, թե զինվորներից ում չի բավարարում ուճիկը և ով է չափից ավելի շոտյու-

թյուն անում: (2) Երբ Ալեքսանդրին զեկուցեցին, որ միայն քչերն են իրենց անունները մտցրել ցուցակի մեջ և մեծամասնությունը թաքցնում է իր պարտքը, նա խիստ կշտամբեց զինվորներին նրանց թերահավատության համար. և արքան պարտավոր է միայն ճշմարտությունն ասել իր հպատակներին, և նրանք, ում նա կառավարում է, չպետք է կասկածեն իրենց արքայի ճշմարտացիությունը: (3) Ճամբարում սեղաններ դրվեցին, և նրանց վրա դրամ դրվեց. դրամը բաժանող տնօրենին, նա հրամայեց վճարել ամեն մեկի պարտքը, ով պարտքի պարտավորություն կներկայացնի, այլևս անուններ չդրանցելով: Զինվորները հավատացին Ալեքսանդրի խոսքին, և այն հանգամանքը, որ իրենք հայտնի չդարձան, նրանց համար ավելի հաճելի էր, քան պարտքերից ազատվելը: Ասում են, որ այդ օրը զորքին շնորհ տրվեց 20 000 տաղանդ:

(4) Տարբեր մարդկանց նա ընծաներ էլ բաժանեց, տարբեր՝ կախված նրանց աստիճանից կամ ճակատամարտերում ցուցաբերված արիությունից: Նա ոսկե պսակներ դրեց այն մարդկանց գլուխներին, ովքեր աչքի էին ընկել իրենց արիությամբ՝ առաջին հերթին Պեկեստեսի, որը ծածկել էր իրեն վահանով: (5) այնուհետև Լեոնատոսին, որը նույնպես ծածկել էր իրեն վահանով, մասնակցել հնդիկների դեմ ողջ պատերազմին և հայթիանակ տարել օրիսների դեմ: Իրեն թողնված զորքի գլուխ կանգնած, նա մարտում հաղթել էր ապստամբած օրիսներին և նրանց հարևաններին, և, ըստ երևույթին, ամեն ինչ հիանալի կարգավորել նրանց երկրում: (6) Այնուհետև նա պսակավորեց նեաբրոսին հնդիկների երկրից Մեծ ծովով նավարկելու համար (նա այդ ժամանակ արդեն Շոշ էր ժամանել), այնուհետև՝ նավավար Օնեսիկրիտոսին, որի նավով ճամփորդում էր արքան, ինչպես նաև Լեփեստիոնեսին և մնացած թիկնապահներին:

6

Նրա մոտ եկան նոր քաղաքների և նվաճված երկրների սատրապները, նրանց հետ ժամանեցին մոտ 30 000 պատանիներ. որոնք այն տարիքն էին թևակոխել, որի մասին Ալեքսանդրն ասում էր, որ դրանք «հետնորդներ» են: Նրանք մակեդոնական զենք էին կրում և սովորել էին մակեդոնական ուղղակի հնարքները: (2) Ասում են, մակեդոնացիները սրտնեղել են նրանց գա-

լըստյան կապակցությամբ. նրանց թվացել է, որ Ալեքսանդրը ամեն միջոց ձեռնարկում է, որպեսզի մակեդոնացիների կարիքը առանձնապես չզգա: Նրանց համար մեծ վիշտ էր Ալեքսանդրի վրա մարական հագուստ տեսնելը: Պարսկական օրենքով ամուսնությունները շատերին դուր չեկան, այդ թվում նաև որոշ փեսացուների, թեև նրանց բարձր պատիվ էր տրված հավասար պայմաններում հայտնվել արքայի հետ: (3) Վշտացրեց նրանց նաև այն, որ Պեկեստեսը՝ Պարսկաստանի սատրապը, ընդօրինակել էր նաև պարսկական զգեստը և պարսից լեզուն՝ հուրախություն Ալեքսանդրի, որը հաճույքով էր հետևում, թե ինչպես է նա բարբարոսի վերածվում: Վշտացրեց նաև այն հանգամանքը, որ հեծյալ բակտրիացիները, սոգդերը, արաքոսիացիները, գարանգները, արիացիները, պարթևները, իսկ պարսիկներից՝ այսպես կոչված էվակները, ըստ լոբոսների, ընդունվել էին «ընկերների» հեծելազորը (ընտրում էին նրանց, ովքեր աչքի էին ընկնում ազնվազարմությամբ, գեղեցկությամբ կամ ուրիշ արժանիքներով): (4) Նրանցից կազմեցին հինգերորդ հիպարքիան, ճշմարիտ է, ոչ լիովին ասիացիներից, բայց քանի որ ողջ հեծելազորը մեծացվել էր, ապա այնտեղ ընդգրկել էին նաև բարբարոսների: Աղեմոս ընդունեցին Կոփեստին՝ Արտաբազի որդուն, Լիդարնին և Արտիբոլին՝ Մազեյի որդիներին, Միսինին և Փրադասամանին՝ Թրատաթերնի՝ Պարթևաստանի և Վրկանի սատրապի զավակներին, Իտանին՝ Օբսիարտի որդուն, Ռոքսանայի՝ Ալեքսանդրի կնոջ եղբորը, Այդոբարին և նրա եղբորը՝ Միթրոքային. հրամանատար նշանակվեց բակտրացի Զիստասպը: (5) Բարբարոսական եհտողազան նիզակների փոխարեն բոլորին մակեդոնական նիզակներ տվեցին: Այդ ամենը վշտացրեց մակեդոնացիներին, քանի որ վկայում էր այն մասին, որ Ալեքսանդրն իր հոգում հակվում էր դեպի բարբարոսները, իսկ մակեդոնական սովորույթներն ու իրենց՝ մակեդոնացիներին՝ աքհամարում:

7

Ալեքսանդրը կարգադրեց Լեփեստիոնեսին տանել հետևակի մեծ մասը դեպի Պարսից ծով, իսկ ինքը նավեր նստեցրեց (նրա նավատորմը ժամանել էր Շոշաստան) վահանակիրներին, աղևմտյան և «ընկերների» ոչ մեծ հեծյալ ջոկատ և նրանց հետ միասին «վեց էվլեյ գետով իջնել դեպի ծով»: (2) Նրա գետաբերանից ոչ հեռու նա թողեց վնասված նավերի մեծ մասը, իսկ ինքը ամենա-

արագաշարժ նավերով էվլեյից դուրս եկավ ծով, ուղղութիւն վերցնելով դեպի Տիգրիսի գետաբերանը: Իսկ նրա մնացած նավերը տարվեցին էվլեյն ի վար մինչև ջրանցք, որը փորված էր Տիգրիսից դեպի էվլեյ, և այդ ջրանցքով տեղափոխվեցին Տիգրիս:

(3) Տիգրիսի և Եփրատի միջև է գտնվում Ասորեստանի միջին մասը (այդ պատճառով էլ տեղաբնակները այդ երկիրն անվանում են Միջագետք): Տիգրիսն այնպիսի տեղանքով է հոսում, որն անհամեմատ ավելի ցածր է, քան այն մարզը, որով հոսում է Եփրատը. այն իր մեջ է ընդգրկում Եփրատից եկող բազմաթիվ ջրանցքներ և, բացի այդ, բազմաթիվ վտակներ: Նրանք զգալիորեն առատացնում են Եփրատի ջրերը և, ընդունելով դրանք, այն արդեն հոսում է որպես հորդառատ գետ, որով, ընդհուպ մինչև նրա ծովը թափվելը, ոչ մի տեղ հնարավոր չէ անցնել, քանի որ ոռոգման համար նրանից ընդհանրապես ջուր չի հոսում: (4) Ցամաքն այստեղ ջրից բարձր է. գետը ջրանցքներով չի տարածվում և ուրիշ գետ չի թափվում, այլ, ընդհակառակը, իր մեջ է ընդունում մի շարք վտակներ. նրանից հողը ոռոգել ոչ մի տեղում հնարավոր չէ: (5) Եփրատում ջուրն ավելի բարձր է. ամենուր այն հավասար է ափերի բարձրությանը. գետից բազմաթիվ ջրանցքներ են անցկացված. մի քանիստմ ջուրը չի ցամաքում և երկու ափերի բնակիչներն այդտեղից ջուր են վերցնում. մյուսները փորում են այն ժամանակ, երբ հողը հատկապես անհրաժեշտ է ոռոգել. այնտեղ անձրևներ թիչ են լինում: Այդ պատճառով ծովը թափվելուց առաջ Եփրատի ջուրը թիչ է և գետաբերանում այն լրիվ տըղմոտ ու ծանծաղ է:

(6) Ալեքսանդրը, նավարկելով Պարսից ծոցի ափերի երկայնքով, էվլեյի գետաբերանից մինչև Տիգրիսի գետաբերանը, Տիգրիսով բարձրացավ մինչև ճամբարը, ուր Հեփեսոփոնեսը տեղավորվել էր ողջ զորքով: Այստեղից նա նավարկեց դեպի Օպիս, որը բազաթ է Տիգրիսի ափին: (7) Նավարկելով գետն ի վեր, նա հարթեց նրա հոսանքը, հրամայելով ոչնչացնել բոլոր ամբարտակներն ու ջրարգելակները, որոնք պարսիկները սարքել էին, որպեսզի ուժեղ նավատորմ ունեցող թշնամին չկարողանար իրենց երկիրը թափանցել ծովից: Այդ բանը մտածել էին, քանի որ պարսիկները ծովագնաց ժողովուրդ չէին: Իրար մոտ դրված ջրարգելակները դժվարացնում էին Տիգրիսն ի վեր նավարկումը, իսկ Ալեքսանդրն ասաց, որ զենքով ուժեղները նման խորամանկություն-

ներք կարիք չունեն: Հեշտությամբ ոչնչացնելով պարսիկների այդ բանասեր աշխատանքը, Ալեքսանդրը հող չէր տանում անձնական անվտանգության մասին. նա գործով աղացուցեց, որ արհամարհում է այն:

8

Ժամանելով Օպիս, նա ժողովեց մակեդոնացիներին և հայտարարեց, որ ծերության կամ խեղանդամության պատճառով զինվորական ծառայությանը ոչ պիտանի զինվորներին զորացրում է: Նա կուղարկի նրանց հայրենիք և ամեն մեկին այնքան կտա, որ տանը հայրենակիցները նրանց կնախանձեն, իսկ մյուս մակեդոնացիները կդեկորվեն նրանց դժվարություններն ու վտանգները իրենց վրա վերցնելու ցանկությամբ: (2) Ալեքսանդրը հույս ուներ, որ մակեդոնացիները կուրախանան իր ասածներից: Իսկ նրանք, որոշելով, որ Ալեքսանդրն արդեն իրենց արհամարհում է, գտնելով ընդհանրապես ուղիղ մտայնություն ոչ պիտանի, նեղացան (և ոչ առանց հիմքի) Ալեքսանդրի այդ ճառից: Դժգոհների թիվը ողջ զորքում ընդհանրապես շատ էր. մակեդոնացիներին զայրացնում էր թե՛ արքայի պարսկական հագուստը, որը նույն քանի մասին էր վկայում, թե՛ բարբարոս-կալիգոնների զգեստները, որը նրանց մակեդոնացիների կերպարանք էր տալիս, թե՛ օտար ցեղերի հեծյալներին «ընկերներին» ջոկատներն ընդունելը: (3) Զինվորները չզիմացան և գոչեցին՝ թող նա բոլորին զորացրի և կռվի իր հոր հետ միասին. դա ծաղրական ակնարկ էր Ամոնի հասցեին: Լսելով այդ (այդ ժամանակ նա արդեն ավելի դյուրագրգիռ էր դարձել և, վարժվելով բարբարոսական քծնանքին, մակեդոնացիներին նախկին բարեհոգությամբ չի վերաբերվում), Ալեքսանդրը մյուս զորավարների հետ վեր թռավ տրիբունայից և հրամայեց բռնել բացահայտ խառնակիչներին ու սաղրիչներին և ինքը ձեռքով ցույց տվեց, թե ում պետք է վերցնել վահանակիքներից: Բռնեցին 13 մարդու: Ալեքսանդրը հրամայեց տանել նրանց մահապատժի: Մարտափած ամբոխում լուռություն տիրեց, և, կրկին տրիբունա բարձրանալով, Ալեքսանդրն ասաց այսպես.

9

«Այս խոսքերը ես ասում եմ ոչ նրա համար, որպեսզի ձեզ հետ պահեմ տուն վերադառնալուց (բոստ իս կարող եք գնալ, ուր ցանկանաք), այլ որ դուք հասկանաք, թե ինչ եք դարձել և ում եք հրաժեշտ տալիս: (2) Ինչպես որ պատշաճ է, ես կսկսեմ իմ հայր

Փիլիպոսից: Փիլիպոսը գտավ ձեզ, երբ աղքատ թափառաշրջիկներ էիք. բուրքներդ հագած, դուք սարերում մի քանի ուխտար էիք արածեցնում և դժվարութեամբ պաշտպանում դրանք իլիրիացիներից, տրիբալներից ու հարևան թրակացիներից: Բուրքերի փոխարեն նա ձեզ թիկնոցներ հագցրեց, սարերից հարթավայրերը իշեցրեց, ձեզ ահազդու հակառակորդներ դարձրեց մերձակա բարբարոսների համար, ինքնապաշտպանություն սովորեցրեց ոչ թե հույսը դնելով բնական անառիկության, այլ անձնական արիության վրա, բնակեցրեց ձեզ քաղաքներում, կարգավորեց ձեր կյանքը, դաստիարակելով ձեզ բարի սովորություններով ու օրենքներով: (3) Ձեզ՝ նախկին սարուկներից ու հպատակներից նա տիրակալ դարձրեց այն բարբարոսների վրա, որոնք նախկինում ձեզ գերի էին վերցնում և տանում էին ձեր ունեցվածքը: Նա Մակեդոնիային միացրեց Թրակիայի մեծ մասը, գրավեց ծովափի ամենահարմար տեղերը և դրանով իսկ ընդլայնեց մեր երկրի հետ տարվող առևտուրը, հնարավորություն տվեց հանգիստ մշակել հանքերը: (4) Նա ձեզ իշխանություն տվեց թեսալացիների վրա, իսկ դուք նախկինում սարսափից մեռնում էիք նրանց՝ առջև նվաստացնելով փոկեացիներին, ձեզ համար լայն ու հարմար ուղի բացեց դեպի Հելլադա, իսկ նախկինում այն նեղ էր և դժվարին. ամենացիներին ու թեբեսացիներին, որոնք անվերջ դավեր էին նյութում Մակեդոնիայի դեմ, նա այն աստիճան նվաստացրեց (այստեղ արդեն նաև մեր օգնությամբ), որ ոչ թե դուք եք տուրք տալիս ամենացիներին և ոչ թե դուք եք ենթարկվում թեբեսացիներին, այլ նրանք են հայտնի չափով հոգում մեր անվտանգության համար: (5) Նա կարգուկանոն հաստատեց Պելոպոնեսում. նրան հռչակեցին ողջ Հելլադայի լիիրավ առաջնորդ Պարսկաստանի դեմ արշավանքի համար. և դա նրան ոչ պակաս փառք բերեց, քան ողջ մակեդոնական ժողովրդին:

(6) «Այդ ամենը ձեզ համար արել է իմ հայրը. նրա գործերը, եթե դիտարկենք, ինքնին մեծ են, բայց նրանք շնչին են, եթե համեմատենք մեր գործերի հետ: Ես հորիցս մի քանի ոսկի և արծաթե գավաթներ եմ ստացել. գանձարանում 60 տաղանդ էլ չէր մնացել, իսկ Փիլիպոսի պարտքերը հասնում էին 500 տաղանդի: Ես պարտք վերցրի ևս 800, մեկնեցի այն երկրից, որը ձեզ էլ չէր կարողանում կուշտ կերակրել, և միանգամից ձեր առջև բացեցի Հելլեսպոնտոսով անցնող ճանապարհը, թեև պարսիկները հենց այն ժամանակ էին ծովի տիրակալներ: (7) Հեծելազորի օգնու-

թյամբ հաղթելով Գարեհի սաւրապնօրին, ես ձեր տիրակալութեան ավելացրի ողջ Հոնիան, ողջ էոլիդան, երկու Փոյուզիաները, Կիզիան. պաշարեցի և գրավեցի Միլետը: Կամավոր միացած մյուս բոլոր երկրները ես հանձնեցի ձեզ՝ օգտվելու դրանցից: (8) Եազադությամբ իմ ձեռք բերած Եգիպտոսի և Կիրենայի բարիքները պատկանում են ձեզ. Կելսիերիան, Պաղեստինը և Միջագետքը ձեր տիրություններն են. Բարեղունը, Բակտրիան և Շոշը ձերն են. լիզիացիների հարստությունները, պարսիկների գանձերը, Եգիպտոսի և Արտարին ծովի բարիքները ձերն են. դուք սատրապներ եք, դուք ստրատեղներ եք, դուք տարսիարքոսներ եք: (9) Խնձ է ինձ հասել այդ գործերից, բացի այս ծիրանագույն պատմուճանից և այս աղամանդե թագից: Ինձ համար ես ոչինչ ձեռք չեմ բերել. ոչ որ չի կարող մատնացույց անել իմ գանձերը, բացի նրանցից, որոնց մեջ ձեր կամ ձեզ համար պահվող բարիքներն են: Գրանք ինձ համար պահելն իմաստ չունի. ես նույն հացն եմ ուտում, ինչ դուք, և բնում եմ այնպես, ինչպես դուք: Ասենք, կարծում եմ, ես այնպես չեմ ուտում, ինչպես ձեր միջև եղած ճոխութեան սիրահարներից ոմանք, և գիտեմ, որ ես արթուն եմ մնում, որպեսզի դուք կարողանաք հանգիստ քնել:

10

«Դուք կարող եք ասել, թե այդ ամենը ես ձեռք եմ բերել ձեռքների և տառապանքների գնով և միայն տնօրինել եմ ձեզ, ինքս չարաբովելով և շտանջվելով: Ձեզանից ո՞վ է ինձանից շատ շարաբովել... կամ ես նրա փոխարեն: Թող հանվի և իր վերքերը ցույց տա նա, ով ունի: Իսկ ես, իմ հերթին, ցույց կտամ իմը:

(2) Իմ մարմնի վրա անվնաս տեղ չկա. չկա այնպիսի դեք, որով կոշտ են ձեռնամարտում կամ հեռու տարածությունից և որը ինձ վրա իր հետքերը թողած չլինի: Ես վիրավորվել եմ թրից, ինձ խոցել են աղեղներից և մերկենաներից արձակված նետերով. բազմաթիվ հարվածներ են հասցրել քարերով ու գերաններով՝ հանուն ձեզ, հանուն ձեր փառքի, հանուն ձեր հարստության: Ես առաջնորդեցի ձեզ որպես հաղթողների բոլոր երկրներով, ծովով, բոլոր գետերով, լեռներով և բոլոր հարթավայրերով. (3) ես ամուսնացա նույն ծիսակատարություններով, ինչ դուք, և ձեզանից շատերի զավակները իմ երեխաների ազգականները կլինեն: Ով պարտքեր ունի՝ մարեցի, առանձնապես չհատարջվելով, թե որ-

տեղից են դրանք, թեև դուք այնպիսի՝ ոտճիկ էիք ստանում և այնքան շատ թալանում, երբ պաշարումից հետո թալան էք սկսվում: Չեղանից շատերը ոսկե պսակներ ունեն ի հիշատակ ձեր արիության շմարող փառքի և իմ ցուցարեքած պատվի: (4) Իսկ ով զո՞՛վից, նրա մահը փառավոր էր, գերեզմանը՝ հայտնի. մեծամասնություն համար հայրենիքում պղնձե արձաններ են կանգնեցված. ծնողներն ապրում են շրջապատված հարգանքով և աշատված են ամեն տեսակ պարհակներից ու տուրքերից: Իմ առաջնորդության ժամանակ ձեր մեջ չի եղել որևէ մեկը, որ զո՞՛ված լինի ազգմի դաշտից փախչելիս»:

(4) «Իսկ այժմ ես պատրաստվում եմ հետ ուղարկել ձեզանից նրանց, ովքեր պիտանի չեն ուղմական ծառայության համար և այնպես ուղարկել, որ տանը նրանց նախանձեն: Իսկ եթե բոլորդ եք ցանկանում գնալ, գնացեք բոլորդ և տուն հասնելով հայտնեք, որ Ալեքսանդրին՝ ձեր արքայն, որը հաղթել է պարսիկներին, մարերին, բակարիացիներին և սակերին, (6) նվաճել է ուրսերին, արարոսիացիներին և դրանգներին, գրավելով Պարթևաստանը, Խորեզմը և Վրկանը՝ մինչև Կասպից ծով, անցել է Կովկասով Կասպյան դարպասներից այն կողմ, անցել է Օբոսը, Տանահը, Իսկ հետո և Ինգոսը, որն անցնել չի կարողացել ոչ ոք, բացի Դիոնիսոսից, անցել է Հիդասպը, Ակեսինը և Հիդրատը, (7) և կանցներ նաև Հիփասը, եթե դուք չխանգարեիք, նավարկել է Մեծ ծովով, այնտեղ իջնելով Ինգոսից թե՛ մեկ, թե՛ մյուս գետաբազուկներով, անցել է գեղորսների անապատով այն տեղում, որտեղ մինչ այդ ոչ ոք զորքով չի անցել, ճանապարհին միացրել է նաև Կարմանիան և օրիտների երկիրը, մինչդեռ նրա նավատորմը հնդկների երկրից գնացել է դեպի Պարսից ծով, այդպիսի արքային լքել ևր Շոշում և հեռացել, թողնելով նրան պարտված բարբարոսների պահպանությունը: Այդպիսի լուրը ձեզ հավանաբար կարժանացնի փառքի՝ մարդկանց մեջ և ողորմածություն՝ աստվածներից: Գնացե՛ք»:

11

Ավարտելով իր ճառը, նա արագորեն ցած իջավ ամբիոնից և հեռացավ արքայական պալատ. անտարբեր մնաց իր հանդեպ եղած հոգածությունը և ընկերներից ոչ մեկի աչքին չերևաց: Չերկվաց նաև հաջորդ օրը: Իսկ երրորդ օրը նա կանչեց ընտրյալ պար-

սիկներին, նրանց միջև բաժանեց գեղերի հրամանատարությունը և իրեն համբուրելու իրավունք տվեց միայն նրանց, բրոնց նա «ազգականի» տիտղոս էր շնորհել: (2) Նրա խոսքերից ցնցված, մակեդոնացիներն առաջին պահին քար լուծվածը կանգնած էին ամբիոնի առջև. արքայի հետևից ոչ ոք չգնաց, բացի նրա մերձավորներից և թիկնապահներից. մեծամասնությունը չգիտեր, ինչպե՛ս կամ ինչ անել. չէին ուզում ո՛չ մնալ, ո՛չ էլ հեռանալ: (3) Ծակ էրը նրանց հայտնեցին այն մասին, ինչ վերաբերում էր պարսիկներին և մարերին, այն մասին, որ զինվորների հրամանատարությունը հանձնվում է պարսիկներին, որ բարբարոսական շորքը բաժանվում է լոբոսների, որ մակեդոնական անուններ գետք է տրվեն պարսիկներին, որ ինչ-որ պարսկական աղեմոս պիտի ստեղծվի, պետք է պարսիկ «հետիոտն ընկերներ» լինեն, «արծաթյա վահաններ» չոկատը պետք է պարսկական լինի, ինչպես նաև «ընկերներ» հեծելազորը և նրա արքայական աղեմոսը, (4) ապա զուլխները կորցրած նրանք վազքով նետվեցին դեպի թագավորական պալատ. զոների առջև նետեցին իրենց զենքը ի նշան այն բանի, որ նրանք արքայի մոտ են եկել որպես թախանձողներ, և, զոների առջև կանգնած, սկսեցին գոռալ և պահանջել, որպեսզի իրենց ներս թողնեն. նրանք ցանկանում են հանձնել այն անկարգության մեղավորներին և նրանց, ովքեր առաջինն են աղմուկ բարձրացրել. նրանք չեն հեռանա զոներից ո՛չ ցերեկը, ո՛չ էլ գիշերը, եթե Ալեքսանդրը չզթա իրենց:

(5) Երբ Ալեքսանդրին զեկուցեցին այդ մասին, նա աճապարհանքով դուրս եկավ պալատից: Տեսնելով, թե ինչպես են նրանք հնազանդվել, լսելով նրանց բղավոցներն ու հեկեկոցը, նա ինքն էլ արտասվեց: Նա փորձում էր ինչ-որ բան հարցնել. նրանք շարունակում էին կանգնած մնալ հայցողի դիրքով: (6) Վերջապես, ոմն Կալինոս՝ իր տարիքով և «ընկերների» հեծելազորում զբաված դիրքով հարգված մի մարդ, ասաց հետևյալը. «Արքա՛, մակեդոնացիներին վշտացնում է այն փաստը, որ դու արդեն բարեկամացել ես որոշ պարսիկների հետ. պարսիկները Ալեքսանդրի «ազգականներ» են անվանվում և համբուրում են քեզ. իսկ մակեդոնացիներից ոչ ոք այդ պատվի համը չի առել»: (7) Ալեքսանդրը ընդհատեց նրան. «Ձեր բոլորին համարում եմ իմ ազգականները» և հետաջուռ ձեզ այդպես կանվանեմ»: Այնժամ Կալանոսը մոտեցավ և համբուրեց նրան, և նույնը արեց ամեն մի ցանկացող: Դրանից հետո, բարձրացնելով իրենց զենքերը, աղմուկ աղա-

ղակով և օրհներգերով նրանք վերադարձան ճամբար: (8) Դրա պատվին Ալեքսանդրը զոհ մատուցեց այն աստվածներին, որոնց նա սովորաբար մատուցում էր, և խնջույք կադմակերպեց բոլորի համար, որին մասնակցեցին ինքը, իրեն մոտիկ մակեդոնացիները, սրանց կողքին՝ պարսիկները, իսկ նրանցից հետո այլ օտարազգիներ, որոնց մեծարում էին իրենց աստիճանի կամ որևէ ծառայության համար. Ալեքսանդրը և նրա սեղանակիցները մի ամանից էին գինին վերցնում և նույն հեղումը անում, որոնց նախորդել էին հելլեն կանխագուշակների և մոգերի կատարած ծեսային արարողությունները: (9) Աղոթում էին տարբեր բարիքների շնորհման համար և մակեդոնական ու պարսկական թագավորությունների համաձայնության և միաբանության համար: Ասում են, որ խնջույքի մասնակիցների թիվը եղել է 9 000 հոգի և նրանք բալլորն էլ կատարել են նույն հեղումը և դրանից հետո օրհներգեր գել:

12

Դրանից հետո այն մակեդոնացիները, որոնց ծերությունը կամ որևէ խեղվածք ռազմական ծառայության համար անպետք էին դարձրել, հեռացան Ալեքսանդրից բարի տրամադրությամբ: Նրանց թիվը 10. 000 եղավ: Ալեքսանդրը նրանց ոռճիկ տվեց ոչ միայն անցած ժամանակաշրջանի համար, այլև այն բանի համար, որը կարող էր նրանց հետ պատահել տունդարձի ճանապարհին: (2) Ռոճիկից բացի նա ամեն մեկին տվեց նաև մեկ սփղանդ: Ասիացի կանանցից ունեցած երեխաներին նա կարգադրեց թողնել իր մոտ. թող նրանց հետ զժտություն չգնա Մակեդոնիա, որն, իհարկե, կառաջանա բարբարոսուհի կանանցից ծնված օտարազգիների և տանը թողնված երեխաների միջև, ինչպես նաև նրանց մայրերի միջև: Նա ինքը կհոգա այն մասին, որպեսզի նրանց լիարժեք մակեդոնական դաստիարակություն տան և նրանց ռազմիկ մակեդոնացիներ դարձնեն. երբ նրանք հասունանան, նա ինքը կրերի նրանց Մակեդոնիա և կհանձնի հայրերին: (3) Այդպիսին էին մեկնողներին տրված անհավաստի և անորոշ խոստումները, բայց նրանց իր բարեկամական և սիրո վերաբերմունքը լավագույնս ապացուցելու համար, նա որոշեց որպես պահապան ու առաջնորդ ուղարկել Կրատերոսին՝ մի մարդու, որին նա համարում էր ամենահավատարիմը և որին խնայում էր աչքի լույսի

պեռ: Համբուրելով բոլորին, նա հրաժեշտ տվեց հեկեկացոյններին, ինքն էլ արտասովետվ: (4) Կրատերոսին նա կարգադրեց նրանց տուն հասցնել, այնուհետև իր վրա վերցնել Մակեդոնիայի, Քրակիայի և Քեսալիայի կառավարումը և հելլենական ազատության պաշտպանությունը: Անտիպատրոսին նա կարգադրեց տուն ուղարկվածների փոխարեն բերել երիտասարդ մակեդոնացիների: Կրատերոսի հետ նա ուղարկեց նաև Պոլիպերքոնտեսին որպես նրա օգնական. եթե Կրատերոսի հետ որևէ բան պատահեր ճանապարհին (նա արդեն թույլ էր, երբ Ալեքսանդրը նրան ազատ արձակեց), ապա զորքը ճանապարհին առանց առաջնորդի չմնար:

(5) Չար լուրեր էին պտտվում, որ տարածում էին այնպիսի մարդիկ, որոնք ավելի հաճույքով են բացատրում արքայական արբանքները, որքանով դրանք ավելի գաղտնի են. նրանք ձգտում են արժանահավատ բաները մեկնաբանել վատ տեսանկյունից՝ ճշմարտությունից հեռու, կամ անձնական շարությունից, կամ էլ նրա համար, որ այդպես իրենց ավելի ճշմարտացի է թվում: Ասում էին, թե Ալեքսանդրը, վերջապես տեղի տալով Անտիպատրոսի դեմ իր մոր զրպարտություններին, ցանկացել է հեռացնել նրան Մակեդոնիայից: (6) Կարող է պատահել, որ Անտիպատրոսի այդ արտաբույրը բնավ շնորհազրկում չէր, այլ նպատակ ուներ կանխել հասարակ տարածայնության վերածումը արդեն անբուժելի թշնամության, Երկուսն էլ՝ թե՛ Անտիպատրոսը և թե՛ Օլիմպիադան, անդադար գրում էին Ալեքսանդրին. Անտիպատրոսը՝ Օլիմպիադայի ամբարտաձանության, նրա կոպտության, ամեն գործերի մեջ Ալեքսանդրի մոր համար ամենևին անվայելուց միջամտության մասին: Պատմում են, որ Ալեքսանդրը, ստանալով այդ տեղեկությունները մոր մասին, մի անգամ ասել է, որ տասնամիսների համար մայրը չափազանց մեծ բնակվարձ է վերցրել: (7) Իսկ մայրը գրում էր, որ Անտիպատրոսին ցուցաբերած հարգանքն ու պատիվը գլխահան են արել նրան և որ նա մոռացել է, թե ում է գրանով պարտական. որ նա իրեն իրավունք է վերապահում առաջին տեղը գրավել Մակեդոնիայում և Հելլադայում: Ըստ երևույթին Անտիպատրոսի դեմ եղած այդ բոլոր շարախոսությունները մեծ տպավորություն գործեցին Ալեքսանդրի վրա. թագավորության համար դրանք ավելի սարսափելի էին: Սակայն Ալեքսանդրը ո՛չ խոսքերի, ո՛չ էլ վարմունքի մեջ ոչինչ չգտավ, որ շրջել առիթ տար եզրակացնելու Անտիպատրոսի նկատմամբ իր փոխած վերաբերմունքի մասին

Հեփեստիոնեսը վախեցավ այդ բառերից և իր կամքին հակա-
աակ հաշտվեց էվմենոսի հետ, որը հաճույքով խաղաղութուն
կնքեց: Այդ ճանապարհին Ալեքսանդրը, ասում են, արքայական
ծիւղին հատկացված մի հարթավայր է տեսել: Հերոդոտոսը պատ-
մում է, որ այդ հարթավայրը կոչվում է Նիսայական, իսկ ձիերը՝
Նիսայական ցեղի: Առաջներում ձիերի քանակը եղել է մոտ հար-
յուր հիսուն հազար, սակայն Ալեքսանդրը գտել է այնտեղ
50 000-ից քիչ ավելի ձիեր: Նրանց մեծամասնությունը զողացել
էին ռավազակները:

(2) Պատմում են, որ Ատրոպատոսը՝ Մարաստանի սատրա-
պը, այդտեղ նրա մոտ է բերել հարյուրի չափ կանանց. դրանք,
բնա նրա, եղել են ամազոնուհիներ: Նրանք հագնված են եղել տղա-
մարդ հեծյալների նման, միայն նիզակների փոխարեն տապար-
ներ են բռնել ձեռքներում և թևեր վահաններ՝ ծանրերի փոխարեն:
Ասում են, որ նրանց աչ կուրծքը ավելի փոքր է. մարտի ժամանակ
այն բաց է: (3) Ալեքսանդրը կարգադրեց հեռացնել նրանց բանա-
կից, որպեսզի մակեդոնացիները կամ բարբարոսները ոչինչ չհը-
նարեն նրանց ծաղր ու ծանակի ենթարկելու համար, սակայն հրա-
մայեց հաղորդել նրանց թագուհուն, որը ինքը կգնա նրա մոտ,
քանի որ ցանկանում է իրենից երեխաներ ունենալ: Այս ամենի
մասին ոչ մի խոսք չկա ո՛չ Արիստոբուլոսի, ո՛չ էլ Պտղոմեոսի
մատ՝ ընդհանրապես որևէ գրողի մոտ, որի՝ նման բացառիկ դեպքի
մասին պատմածին կարելի լիներ հավատալ: (4) Իսկ ես շեմ
կարծում, որ ամազոնուհիների ցեղը պահպանված լիներ մինչև
Ալեքսանդրին նախորդած ժամանակները, եթե ոչ, ապա Քսենո-
ֆոնը պետք է որ հիշատակած լիներ նրանց մասին, խոսելով և՛
փաստանների, և՛ կոլյաների, և՛ ուրիշ բարբարոս ցեղերի մասին.
որոնց երկրներով հելլեններն անցել են, դուրս գալով Տրապի-
սոս, կամ նրան դեռ չհասած: Այստեղ նրանք պետք է հանդի-
պած լինեին ամազոնուհիներին, եթե ամազոնուհիները այն ժա-
մանակ դեռ ապրում էին:

(5) Ես շեմ ենթադրում, որ այդ կանանց ցեղը ընդհանրապես
գոյություն չի ունեցել. որքան և ինչպիսի բանաստեղծներ են գո-
վեցրել նրանց: Հայտնի է այն պատմությունը, որ նրանց մոտ է
ուշաբեկվել Հեբակլեսը, Հելլադա է բերել նրանց թագուհու՝ Իպո-
լիտայի գոտին, որ աթենացիները Փեղեյոսի գլխավորությամբ

առաջինն են հաղթել Եվրոպա եկած այդ կանանց և հետ նետել
նրանց: Աթենացիների և ամազոնուհիների ճակատամարտը Միկո-
նեսը պատկերել է որպես աթենացիների և պարսիկների ճակա-
տամարտին հավասար: (6) Ե՛վ Հերոդոտոսն է հաճախ պատմում
նրանց մասին, և՛ նրանք, ովքեր գովերգել են պատերազմում
զոհված աթենացիներին, ամազոնուհիների հետ աթենացիների
ճակատամարտը հիշատակել են որպես կարևորագույն իրադար-
ձություն: Իսկ եթե Ատրոպատոսը Ալեքսանդրին ցույց է տվել
հեծյալ կանանց, ապա, ես կարծում եմ, որ նա ինչ-որ բարբարո-
սուհիների է ցույց տվել, որոնք կարողացել են ձի հեծնել և
այնպիսի հագուստ են կրել, որը համարվել է ամազոնուհիների
հագուստ:

Էկրատանում Ալեքսանդրը զոհ մատուցեց, որը սովորաբար մա-
տուցում էր բարենպաստ հանգամանքներում, մարմնամարզական
և մուսայական մրցումներ սահմանեց: Նա գինաբույսեր էլ էր
կազմակերպում ընկերական շրջապատում: Այդ ժամանակ Հե-
փեստիոնեսը իրեն վատ զգաց: Նրա հիվանդության յոթերորդ
օրն էր: Պատմում են, որ մարդագաշտը հենց այդ օրը լիքն էր,
քանի որ մարմնամարզական մրցումներ էին տեղի ունենում
երեսխաների միջև: Երբ Ալեքսանդրին հայտնեցին, որ Հեփես-
տիոնեսի վիճակը վատ է, նա շտապեց նրա մոտ, բայց նրան
արդեն կենդանի չգտավ: (2) Ալեքսանդրի վշտի մասին գրել են
տարբեր կերպ: Որ նրա վիշտը մեծ էր, համաձայն
են բոլորը՝ Իսկ Ալեքսանդրի վարքի մասին պատմում են
ոչ միանման, կախված նրանից, թե գրողը բարյացա-
կամ է վերաբերվել Հեփեստիոնեսին և իրեն՝ Ալեքսանդրին,
թե շարախոսել է և նախանձել: (3) Ամեն տեսակ անհեթեթու-
թյուններ է գրվել, սակայն ոմանք, ինձ թվում է, գտնում էին, որ
Ալեքսանդրի խոսքերն ու վարմունքը՝ թելադրված իր ամենաթան-
կագին մարդու հանդեպ ունեցած մեծ վշտով, կծառայեն նրա
պատվին, իսկ մյուսները, որ դրանք նրան խայտառակում են,
քանի որ նրանք սազական չէին ո՛չ արթային ընդհանրապես, ո՛չ
էլ Ալեքսանդրին հատկապես: Ոմանք պատմում են, որ նա ընկել
է ընկերոջ դիակի վրա և հեկեկալով պառկած մնացել օրվա մեծ
մասը: Նա չի ուղեցել բաժանվել հանգուցյալից, և ընկերները
նրան միայն ուժով են հեռացրել: (4) Ուրիշներն ասում են, թե նա
այդպես անցկացրել է ամբողջ օրը և ամբողջ գիշերը: Ոմանք ավե-

լացնում են, որ նա կախել է բժիշկ Գլավկիտոսին իբր վատ բուժման համար, իսկ ուրիշների ասածներով, այն բանի համար, որ նա հանգիստ նայել է, թե ինչպես է Հեփեստիոնեսը խմում մինչև լրիվ հարբելը: Որ Ալեքսանդրը դիակի վրա կտրել է իր մազերը, ես միանգամայն հավանական եմ համարում, ինչպես նաև որոշ ալլ արարածները, որոնցով նա ընդօրինակում էր Աքիլլեսին, որը մանկական տարիներից նրա համար օրինակ է եղել: Ոմանք պատմում են, որ նա ինքն է բշի մարմինը տանող մարտակառքուս, բատ իս, բացարձակորեն անհավանական է: (5) Ուրիշների խոսքերով, նա կարգադրել է հողին հավասարեցնել Ասկլեպիոսի տաճարը էկրատանում. բարբարոսական և Ալեքսանդրի սովորույթներին ամենևին չհամապատասխանող արարք, որն ավելի սաղական էր Քսերքսեսին, որն, ասում են, աստվածության հանդեպ իր գերմեծարանքի հանդգնություն պահին հրամայել է կապանքներ նետել Հելլեսպոնտոս, Հելլեսպոնտոսը պատժելու համար: (6) Ինձ բավականին հավանական է թվում մեկ ուրիշ պատմություն. մեկնելով Բաբելոն, Ալեքսանդրը ճանապարհին Հելլադայից եկած շատ դեսպանությունների է հանդիպում, այդ թվում նաև էպիզավրոսից եկած դեսպաններին: Ալեքսանդրը բավարարել է նրանց խնդրանքը, նրանց հետ ընծաներ է ուղարկել Ասկլեպիոսին, բայց դրա հետ մեկտեղ ասել. «Ասկլեպիոսն ինձ գթարարուն չվերաբերվեց՝ չպահպանեց ընկերոջս, որն ինձ համար աչքի լույսից թանկ էր»: (7) Նա հրամայեց հավերժ մեծարել Հեփեստիոնեսին որպես հերոսի. այդ մասին գրում է մեծամասնությունը: Իսկ ոմանք պատմում են, որ նա ուղարկել է Ամոնի մոտ հարցնելու, արդյո՞ք նա թույլ է տալիս զոհել մատուցել Հեփեստիոնեսին որպես աստծու Ամոնը չի թույլատրել: (8) Բոլորը միաձայն հաստատում են, որ Հեփեստիոնեսի մահից հետո երեք օր Ալեքսանդրը ոչինչ չի կերել, իրեն չի հարգարել, այլ պառկել է հեկեկալով, կամ վշտալից լռել: Նա կարգադրել է Հեփեստիոնեսի համար Բաբելոնում խարույկ պատրաստել 10 000 տաղանդ արծողություն, իսկ ոմանց ասելով, նույնիսկ ավելի թանկ, և հրամայել է սգալ ողջ բարբարոս աշխարհին: (9) Ալեքսանդրի ընկերներից շատերը ներան հաճոյանալու համար իրենց և իրենց զենքը նվիրաբերել են մեծածախ Հեփեստիոնեսին: Գա էփանեսոսի հնարածն է, որի՞ Հեփեստիոնեսի հետ վերջերս տեղի ունեցած գծաթյան մասին մենք պատմել ենք: Նա արել է դա, որպեսզի Ալեքսանդրը չկար-

ծի, թե իբր նա ուրախանում է Հեփեստիոնեսի մահվամբ: (10) Հեփեստիոնեսի փոխարեն Ալեքսանդրը ոչ մեկին չնշանակեց «քեզ կերների» հեծյալների քիլիարքոս. Հեփեստիոնեսի անունը չպե՞տք է կորչեր դորքում. քիլիարքիան կոչվում էր հեփեստոնեսյան և նրա առջևից տանում էին Հեփեստիոնեսի ընտրած գրոշը: Ալեքսանդրը որոշեց մարմնամարզական և մուսայական մրցումներ կազմակերպել, որոնք նախկիններից ավելի փառավոր լինեին թե՛ մասնակիցների թվով, թե՛ կազմակերպչական ծախքերով: Նախապատրաստեցին 3 000 մրցողների: Ասում են, կարճ ժամանակ անց նրանք մրցել են Ալեքսանդրի թաղման արարողությունների ժամանակ:

15

Շատ ժամանակ տրվեց վշտին և վերջապես, նա ինքը սկսեց հեռանալ դրանից. ավելի շատ այդ բանում նրան օգնեցին «քեզ կերները»: Այդ ժամանակ էլ նա արշավանք ձեռնարկեց քոսեների՝ ութսերի ռազմատեճնչ հարևանների դեմ: (2) Քոսեներն ապրում են լեռներում, անառիկ տեղերում կառուցված գյուղերում, երբ թշնամին մոտենում է նրանց, նրանք կամ բուրբը հեռանում են լեռների գագաթները, կամ փախչում, ում ուր հաջողվի և նրանց գեմ ուղարկված զորքը ոչինչ անել չի կարողանում: Երբ այն հեռանում է, նրանք կրկին վերադառնում են ավազակություն, որով և ապրում են: (3) Ալեքսանդրը ոչնչացրեց այդ ցեղը, թեև հարձակվեց ձմռանը: Նրան շխանգարեցին ո՛չ ձմեռը, ո՛չ ճանապարհների պակասը՝ ոչ նրան, ոչ էլ Պտղոմեոսին՝ Լագոսի որդուն, որը զորքի մի մասի հրամանատարն էր: Ռազմական ձեռնարկումներում Ալեքսանդրին ոչինչ չէր կարող խանգարել:

(4) Վերադառնալով Բաբելոն, նա դիմավորեց լիբիացիների դեսպանությունը. նրան փառաբանեցին և պսակադրեցին որպես Աօիայի արքայի: Նրանց հաջորդեցին դեսպանություններ Իտալիայից, բրետներից, լուկաններից և տիրեններից: Ասում են, դեսպանություն էին ուղարկել նաև կարթագեցիները: Գեսպաններ եկան եթովպացիներից և եվրոպական սկյութներից. եկան կելտերը և իբերիացիները՝ բարեկամություն հայցելու: Հլլեններն ու մակեդոնացիներն առաջին անգամ էին լուում նրանց անունները և տեսնում նրանց հագուստը: (5) Պատմում են, որ նրանք Ալեքսանդրին էին հանձնարարել դատելու իրենց վեճերը: Հատկապես

այդ ժամանակ էլ Ալեքսանդրն իր և իրեն շրջապատողների համար աշխարհի տիրակալ երևաց: Ալեքսանդրի գործերի մասին գրած Արիստոսն ու Ասկլեպիադոսը պատմում են, որ նրա մոտ դեսպանություն են ուղարկել նաև հռոմեացիները: Հանդիպելով այդ դեսպանության հետ, Ալեքսանդրը դնեն է դեսպանների ղգեստները, ուշադրություն դարձրել նրանց ջանասիրության և իրենց պահելու ազնվադարձ կերպի վրա, հարցուփորձ արել նրանց պետական կարգերի մասին և Հռոմին ապագա հզորություն կանխագուշակել: (6) Ես այս մասին հայտնում եմ ոչ որպես անվերապահորեն հավաստի դեպքի մասին, բայց և ոչ այնքան անհավանական: Անհրաժեշտ է, այնուհանդերձ, ասել, որ հռոմեացիներից ոչ ոք չի հիշատակում Ալեքսանդրի մոտ ուղարկված այդ դեսպանության մասին, ոչ էլ այդ մասին գրում են Պտղոմեոսը՝ Լագոսի որդին, և Արիստոբոլոսը՝ Ալեքսանդրի պատմագիրները, որոնց ես առավել շատ եմ վստահում: Եվ, բացի այդ, անհավատալի է, որ այն ժամանակներում առավել ազատություն վայելող Հռոմեական պետությունը դեսպանություն ուղարկեր օտարերկրացի արքայի մոտ, որն, առավել ևս, թագավորում էր իրենց հայրենիքից այդքան հեռու, ընդ որում այդ բանին դիմել նրանց չէր ստիպում ո՛չ վախը, ո՛չ շահադիտությունը, իսկ բռնակալների և հենց նրանց անվան հանդեպ ունեցած ատելությունը նրանց մեջ այնքան մեծ էր, որքան դա հնարավոր էր:

16

Այստեղից նա Հերակլիդեսին՝ Արգեյոսի որդուն նավաշինարարների հետ ուղարկեց Վրկան: Նա կարգադրեց նրան Վրկանաց լեռներում ծառեր կտրել և ռազմանավեր շինել տախտակամածով և առանց տախտակամածի՝ հելլենական ձևով: (2) Նա շատ էր ուզում իմանալ, թե որ ծովի հետ է միանում Կասպից ծովը, որը նաև Վրկանաց ծով էր կոչվում: Էվրսինյանի հե՛տ թե Մեծ ծովի, հեղիկներին արևելքից շրջանցելով լցվում է Վրկանաց ծոցը: Ըն՞ որ նա հայտնագործել էր, որ Պարսից կամ այսպես կոչված Կարմիր ծովը Մեծ ծովի ծովածոցն է: (3) Դեռ ոչ ոք չէր հայտնագործել, թե որտեղ է սկսվում Կասպից ծովը, թեև նրա շուրջը բնակվում են մեծ թվով ցեղեր և նրա մեջ են թափվում նավարկելի գետեր: Բակտրիայից այստեղ են հոսում հնդկական գետերը, չհաշված Ասիայի ամենամեծ գետը՝ Օքսոսը. անցնելով սկյութների

երկրով, այդ ծովն է թափվում Յակսարտը: Մեծամասնությունը հաստատում է, որ Հայաստանով հոսող Արաքսը նույն տեղն է թափվում: Սրանք ամենամեծ գետերն են: (4) Կան շատ ուրիշներ, որոնք կամ թափվում են նրանց մեջ, կամ իրենք են հասնում այդ ծովը. նրանցից մի քանիսը հայտնի էին Ալեքսանդրի զինվորներին, որոնք անցել էին այդ երկրներով. մյուսները՝ հավանաբար գտնվելով ծովածոցի այն կողմում՝ սկյութ բռնիորենների երկրում, բոլորովին անհայտ էին:

(5) Ալեքսանդրը, զորքով անցնելով Տիգրիսը, Բարեւոնի ճանապարհին հանդիպեց խալդ գուշակներին: Նրանք մի կողմ տալան Ալեքսանդրին նրա ուղեկիցներից և սկսեցին համոզել, որ Բարեւոն չմտնի. նրանք կանխագուշակում էին ստացել Բել աստվածից, որ այդ ժամանակ Բարեւոն այցելելը լավ նշան չէ: (6) Իսկ նա պատասխանեց նրան էվրիպիդեսի շափածո տողով.

Այն գուշակն է լավը, ով բարիք է գուշակում:

«Արքա, — ասացին խալդերը, — գոնե մի գնա և մի տար քո զորքը արևամուտին նայելով. ավելի լավ է շրջանցիր քաղաքը արևելքից»: (7) Սակայն այդ անելը դժվար էր ճանապարհների չլինելու պատճառով: Նրան արդեն աստված տանում էր այն ճանապարհով, որով նա պետք է գնար և իր մահը գտներ: Եվ. թեքնա, նրա համար ավելի լավ էր հեռանալ կյանքից ջերմորեն սիրված, փառքի մարդը փայլով և շապրել մինչև մարդկանց համար անվերական ինչ-որ դժբախտ պատահար: Այդ պատճառով էլ, իհարկե, Սողոմոնը համոզում էր Կրեսոսին սպասել մինչև երկաթառև կյանքի վերջը և մինչ այդ ոչ մեկին երջանիկ չհամարել: (8) Ալեքսանդրի համար Հեփեսոսի մահը մեծագույն դժբախտություն էր. կարծում եմ, Ալեքսանդրը կգերադասեր ավելի շուտ մեռնել, քան նրանից շատ ապրել, այնպես, ինչպես կարծում եմ, որ Աթիլլեսն էլ կգերադասեր մեռնել Պատրոկլեսից առաջ, քան նրա մահվան վրիժառուն դառնալ:

17

Նա կասկածներ ուներ նաև խալդերի նկատմամբ. նա գտնում էր, որ նրանք խղճընդոտում էին իր Բարեւոն մտնելուն, նկատի ունենալով անձնական շահերը և ամենևին ոչ աստծու կամքը: Բանն այն է, որ Բարեւոնի կենտրոնում գտնվում էր Բիլի տաճարը՝ հսկա, կառուցված ասֆալտով իրար միակցված թրծած

աղյուսից: (2) Այդ տաճարը, ինչպես և Բարեխոնի մյուս սրբավայրերը ավերել էր Քսերքսեսը, երբ վերադառնում էր Հելլադայից: Ալեքսանդրը որոշել էր դրանք վերականգնել՝ ոմանց ասելով հին հիմքերի վրա (այդ նպատակով նա հրամայել էր բարեխոնացիներին հանել այնտեղից շինարարական աղբը), ուրիշների ասելով՝ ավելի մեծ շափերով, քան նախկինում: (3) Քանի որ նրա բացակայության ժամանակ նրանք, ում հանձնարարված էր այդ աշխատանքը, աշխատում էին ծուլորեն, նա որոշեց այդ գործը հանձնարարել զորքին՝ նրա լրիվ կազմով: Իսկ ասորական արքաները Բել աստծուն շատ հող ու ոսկի էին նվիրաբերել: (4) Այդ եկամուտներով էլ ինչ-որ ժամանակ կառուցվել էր տաճարը և աստծուն զոհեր էին մատուցվել. իսկ այժմ խալդեերն էին տնօրինում աստծու գանձերին, իսկ դրանցից ստացված եկամուտը ծախսելու անը չկար: Ալեքսանդրն էլ կասկածում էր, որ ներքանք չեն ցանկանում, որ ինքը Բարեխոն մտնի, վախենալով, որ տաճարն արագորեն վերականգնելուց հետո իրենք կզրկվեն այդ միջոցներից օգտվելու հնարավորությունից: (5) Այնուհանդերձ, Արիստոբուլոսը պատմում է, որ Ալեքսանդրը որոշել է հետևել նրանց խորհրդին՝ ճանապարհը շրջանցելու կապակցությամբ. առաջին իսկ օրը նա ճամբար խփեց Սփրատի ափին, իսկ հաջորդ օրը ճանապարհ ընկավ, գետը թողնելով իր աջ կողմում. նա ցանկանում էր քաղաքը շրջանցել արևմուտքից և մտնել քաղաք, նայելով արևելք: (6) Դա անելն անհնար էր ճանապարհի բացակայության պատճառով. մոտենալով քաղաքին արևմուտքից և հետո շրջվելով արևելք, նա հայտնվեց խրուտ ճահճի առջև և, այդպիսով, թե կամավոր և թե կամքին հակառակ, անհնազանդություն ցուցաբերեց:

18

Արիստոբուլոսը պատմում է նաև հետևյալը. ամփիպոլիսցի Ապոլոդորոսը՝ Ալեքսանդրի «ընկերներից» մեկը, նշանակվել էր Ալեքսանդրի՝ Մազեյին՝ Բարեխոնի սատրապին թողած զորքի ստրատեգ: Հնդիկների մոտից Ալեքսանդրի հետ վերադառնալու ժամանակ Ապոլոդորոսը ականատես եղավ, թե արքան ինչպիսի դաժանություններ է հաշվեհարդար տեսնում սարբեր երկրներում նշանակված սատրապների հետ, և գրեց իր եղբորը՝ Պլութարխոսին (Պլութարխոսը զոհի փորոտիքով գուշակում էր սպա-

գան), խնդրելով գուշակություն անել իր համար, աղյուս՝ հաջողակ կլինի ինքը: (2) Պլութարխոսը նրան պատասխանեց նախակով, որում հարցնում էր, թե ումից է նա այդքան վախենում, որ ցանկանում է գուշակել իր համար: Սա պատասխանեց նրան, որ ամենից շատ վախենում է արքայից և Հեփեստիոնեսից: Պլութարխոսը զոհ մատուցեց, որպեսզի գուշակություն անի սկզբից Հեփեստիոնեսի համար: Կենդանու լյարդում չէր երևում մի հատվածը, և Պլութարխոսը, գրելով նամակը, կնքեց այն իր կնիքով և ուղարկեց Բարեխոնից էկրատան՝ Ապոլոդորոսին, հայտնելով եղբորը, որ նա Հեփեստիոնեսից վախենալու ոչինչ չունի, քանի որ նա շուտով իրեն արգելք չի հանդիսանա: (3) Արիստոբուլոսը պատմում է, որ Ապոլոդորոսը ստացել է այդ նամակը Հեփեստիոնեսի մահվանից մեկ օր առաջ: Պլութարխոսը կրկին զոհ մատուցեց՝ գուշակելով Ալեքսանդրի համար, և այս անգամ էլ կենդանու լյարդի մի հատվածը պակասում էր: Պլութարխոսը գրեց Ապոլոդորոսին նույն բանը Ալեքսանդրի մասին: Ապոլոդորոսը շլոնց, նա Ալեքսանդրին պատմեց նամակի մասին, հույս ունենալով ցույց տալ արքային իր նվիրվածությունն այն բանով, որ համոզի նրան զգուշանալ հնարավոր վտանգից: (4) Ըստ Արիստոբուլոսի, Ալեքսանդրը շնորհակալություն հայտնեց Ապոլոդորոսին, իսկ Պլութարխոսին, գալով Բարեխոն, հարցրեց թե ինչ կանխանշան է առիթ հանդիսացել այդպես գրելու եղբորը: Նա պատասխանեց, որ զոհի լյարդից պակասել է մի հատված: Այն հարցին, թե ի՞նչ է դա նշանակում, նա պատասխանեց՝ մեծ դժբախտություն: Ալեքսանդրը ոչ միայն չզայրացավ Պլութարխոսի վրա, այլև սկսեց նրան ավելի շատ հարգել այն բանի համար, որ նա իրեն ճշմարտությունն էր ասել: (5) Արիստոբուլոսն ասում է, որ այդ ամենը նա իմացել է ուղղակի Պլութարխոսից: Նրա իսկ խոսքերով, Պլութարխոսը հետագայում գուշակություն է արել Պերդիկոսի և Անտիգոնոսի համար. երկուսին էլ նույն կանխանշանն է դուրս եկել և, Պերդիկոսը զոհվել է՝ կռվելով Պտղոմեոսի դեմ, իսկ Անտիգոնոսը Իպսոսի մոտ, Լիսիմաքոսի և Սելևկոսի դեմ ճակատամարտում:

(6) Պահպանվել է նաև մի պատմություն հնդիկ իմաստուն Կալանի մասին. պատրաստվելով խորուչի վրա բարձրանալ, նա համբուրել է բոլոր ընկերներին, իսկ Ալեքսանդրին մոտենալ չի ցանկացել, ասելով, որ կհամբուրի նրան, երբ Բարեխոնում հանդիպի: Այն ժամանակ այդ խոսքերին ոչ որ ուշադրություն չդարձ-

րեց, իսկ հետո, երբ Ալեքսանդրը մեռավ Բարելունում, նրանք վերականգնեցան այն մարդկանց հիշողության մեջ, ովքեր լսել էին գրանք. դա Ալեքսանդրի մահվան կանխագուշակությունն էր:

19

Բարելունում նրան ներկայացան ղեսպանություններ հելլեններից, բայց թե ամեն մեկն ինչ գործով, այդ մասին ոչինչ գրված չէ: Սա կարծում եմ, որ մեծամասնությունը եկել էր պսակադրելու նրան, շնորհավորելու հատկապես այն հաղթանակների համար, որ նա տարել էր Հնդկաստանում և ասելու, թե իրենք որքան ուրախ են հնդիկների երկրից նրա բարեհաջող վերադարձի համար: Ալեքսանդրը ընդունեց նրանց, պատշաճ պատվեց և հետ ուղարկեց: (2) Բոլոր արձանները, աստվածների պատկերները և նրանց նվիրված տարբեր առարկաները, որոնք Քսերքսեսը Հելլադալից տարել էր Պասարգադք, Շոշ և Ասիայի այլ վայրեր, նա հանձնեց ղեսպաններին, որպեսզի նրանք հետ տանեն դրանք: Ասում են, այդ ժամանակ Աթենք են վերադարձվել Հարմոզիսի և Արիստոգիտոնեսի պղնձյա արձանները, ինչպես նաև քեղեցիկ Արտեմիսի գահը: (3) Ըստ Արիստոբոլոսի, Ալեքսանդրը Բարելունում հանդիպեց Պարսից ծովից Եփրատով վեր նավարկած նավատորմին (հրամանատարը նեարթոսն էր) և Փյունիկիայից ժամանած մեկ ուրիշին, 2 պենտեր փյունիկացիների կողմից, 3 տետրեր, 12 տրիեր և մոտ 30 երեսունթիանոց նավեր: Դրանք բոլորը Փյունիկիայից քանդած վիճակում բերել էին Եփրատ Քապսակոս քաղաքը. այնտեղ դրանք հավաքել էին, իրար միացրել և արդեն գետով դրանք իջեցրել էին Բարելոն: (4) Ալեքսանդրի համար Արիստոբոլոսի խոսքերով, մի այլ նավատորմ էլ էին կառուցել, որի համար նա կարգադրել էր Բարելոնի մարզում նոճիներ կտրել. ասորական երկրում մեծ քանակությամբ միայն այդ ծառերից կա, մյուսները նավաշինության համար պիտանի չեն: Փյունիկիայից և մնացած ծովափնյա շրջաններից մեծ խմբերով նրա մոտ էին գալիս նավաշինարարներ, թիավարներ, ծիրանի հայթայթող ջրասույզներ և ծովի այլ մշակներ: Բարելոնի մոտ Ալեքսանդրը նավահանգիստ փորեց, որտեղ կարող էր կառանել հազար ռազմանավ. նավահանգստի մոտ նավաշինարարների կառուցեց: (5) Կլավոմենցի Միքային 500 տաղանդ տվեց և ուղարկեց Փյունիկիա և Ասորիք, ծովային գործին ծանոթ մարդկանց

հավաքադրելու հանձնարարականով, ոմանց հրապուրելու վարձատրությամբ, մյուսներին՝ ղեկելու նա մտադրվել էր բնակեցնել Պարսից ծոցի ափը և այնտեղի կղզիները: Այդ հողերը նրան պակաս հարուստ չէին թվում, քան Փյունիկիայինը: (6) Նավատորմը նա պատրաստում էր, որպեսզի հարձակվի արաբների վրա այն պատրվակով, որ նրանք տեղացի միակ բարբարոսներն էին, որ ղեսպանություն չէին ուղարկել իր մոտ և ոչնչով չէին ցուցաբերել ոչ իրենց բարչացակամությունը, ոչ հարգանքը: Իսկ իրականում, ինձ թվում է, Ալեքսանդրը պարզապես անհագ էր էր նվաճումներում:

20

Պատմում են, որ նա լսել է, թե իբր արաբները մեծարում են միայն երկու աստվածների՝ Երկնքին և Դիոնիսոսին. Երկնքին այն բանի համար, որ հավանաբար այնտեղ են գտնվում աստղերը, ինչպես նաև արևը, որից մարդիկ այդքան մեծ և ակնհայտ օգուտ են ստանում, իսկ Դիոնիսոսին՝ հնդիկների ղեմ նրա փառապանծ արշավանքի համար: Ալեքսանդրի կարծիքով, ինքն արժանի էր, որ արաբները իրեն ևս մեծարեին որպես երրորդ աստծու, քանզի նա Դիոնիսոսից ոչ պակաս սխրանքներ էր գործել. իսկ արաբներին իրեն ենթարկելով, նա կթուլյատրեր նրանց, հնդիկների նման, կառավարել երկիրը իրենց օրենքներով: (2) Դեպի նվաճումն էին մղում նաև երկրի բնական հարստությունները. նա լսել էր, որ այնտեղ, լճափին դարչին է աճում. ծառերից, եթե նրանց վրա կտրվածք արվի, դմոուս և խոնկ է հոսում, իսկ թփերից՝ դարչին. մարգագետիններում նարդոս է աճում: Արաբական թերակղզին, ըստ պատմածների, հնդկականից ավելի փոքր չէ. մոտակայքում բազմաթիվ կղզիներ կան, ամենուր նավահանգիստներ են, որտեղ կարող է նավատորմ մտնել և որոնց մոտակայքում կարելի է ապագայում ծաղկող և հարուստ քաղաքներ հիմնել: (3) Նրան հայտնեցին, որ Եփրատի գետաբերանի դիմաց, ծովում երկու կղզի կա. առաջինը ոչ հեռու՝ Եփրատը ծովը թափվելու տեղում, մոտ 120 ասպարեղ ծովափից և գետաբերանից հեռու. այն ավելի փոքր է մյուսից և ծածկված է խիտ անտառներով: Այնտեղ գտնվում է Արտեմիսի տաճարը, և կղզու բնակիչները իրենց կյանքն անցկացնում են այդ տաճարի շուրջը: (4) Կղզու վրա արածում են վայրի այծեր ու եղջերուներ. նրանք նվիրաարը-

ված են Արտեմիսին և անձեռնմխելի են. նրանց որսն արգելված է. միայն աստվածուհուն զոհ մատուցելու նպատակով կարելի է նրանց որսալ. այդ դեպքում արգելքներ չկան: (5) Արիստորուբոսի խոսքերով, Ալեքսանդրը հրամայել է այդ կղզին անվանել Իկարոսի անվամբ՝ էգեյան ծովի Իկարոս կղզու նմանությամբ: Պատմում են, որ Իկարոսը՝ Դեդալոսի որդին, քնկել է այդ կղզու վրա, երբ հալվել է մեղրամածը, որով կայգված էին նրա թևերը: Նա երկրին մոտ շի թռել, ինչպես պատվիրել էր նրան հայրը, այլ իր անմտության պատճառով վեր է բարձրացել օդ և արեից մոմն այրվել է և հոսել: Իկարոսը կղզուն և ծովին է թողել իր անունը. կա Իկարոսի ծով և Իկարոսի կղզի:

(6) Մյուս կղզին Եփրատի գետաբերանից մեկ օր ու գիշերվա ճանապարհի հեռավորության վրա է համընթաց քամու պայմաններում: Նրա անունն է Տիդոս: Այն մեծ է, այնտեղ լեռներ չկան և քիչ են անտառները, սակայն ամեն ցանված և տնկված այնտեղ առատորեն աճում է:

(7) Այդ ամենը Ալեքսանդրին մասամբ պատմել էր Արքեյոսը, որին նա երեսունթիամեկ տարեկան էր ուսումնասիրելու գնալի արարները տանող ուղին: Նա հասել էր մինչև Տիդոս կղզին, իսկ ավելի հեռու գնալ չէր համարձակվել: Մի այլ երեսունթիամեկ տարեկան ուղարկված Անդրոսթենոսը անցավ Արաբական թերակղզու որոշ մասի երկայնքով: Ուղարկվածներից ամենահեռուն գնաց սուլեացի նավավար Հիերոնեսը, որն Ալեքսանդրից նույնպես երեսունթիամեկ տարեկան էր: (8) Նրան հրամայված էր նավարկել ողջ Արաբական թերակղզու երկայնքով մինչև Եգիպտոս և Հերոպոլիս: Ավելի հեռու նա չհամարձակվեց գնալ, թեև նավարկել էր Արաբիայի զգալի մասի երկայնքով: Վերադառնալով Ալեքսանդրի մոտ, նա հայտնեց, որ թերակղզին ապշեցնում էր իր մեծությամբ. այն շատ քիչ է փոքր հնդիկների երկրից և բավականին շատ մտնում է Մեծ ծովը: (9) Հնդիկներից Նեարքոսի հետ նավարկող մարդիկ տեսել են այդ կղզին մինչև Պարսից ծոցը մտնելը, այն հեռու չի եղել և քիչ է մնացել, որ նրանք կառանեն այդ կղզու ափերին. նավավար Օնեսիկրիտոսն էր դա ցանկացել: Իսկ Նեարքոսն ասում է, որ ինքը դեմ է եղել դրան, քանի որ Պարսից ծոցում նավարկելուց հետո նա պետք է զեկուցէր Ալեքսանդրին այն բանի մասին, որի համար ինքն ուղարկվել էր:

(10) Իսկ իրեն ուղարկել էին ոչ թե Մեծ ծովով նավարկելու,

այլ ծովին մերձակա երկրին, նրա բնակիչներին, նավամատուցներին, ջրհորներին, մարդկանց սովորություններին ծանոթանալու համար, այն նկատառումով, թե այն բերրի՞ է թե անբերրի: Հենց այդ որոշման շնորհիվ էլ Ալեքսանդրի զորքը փրկվել է: Այն անվնաս չէր մնա, եթե նրանք շարունակեին նավարկել արաբական անապատից այն կողմ, որտեղից, ասում են, հետ է վերադարձել Հիերոնեսը:

Մինչդեռ արիերներ էին կառուցում և նավահանգիստ փոխում Բաբելոնի մոտակայքում, Ալեքսանդրը Եփրատով ցած նավարկեց գնալի Պալկոպե գետը: Այն Բաբելոնից մոտ 800 ասպարեզ հեռու է և Եփրատից տարած ջրանցք է և ոչ թե ակունքներից սկիզբ առնող իսկական գետ: (2) Եփրատը, հոսելով Հայաստանի լեռներից, ձմռանը պարփակվում է իր ափերի մեջ, քանի որ քիչ ջուր ունի: Իսկ գարնան սկզբին և հատկապես ամառային արևադարձի շրջանում այն դառնում է հորդառատ և դուրս գալիս ափերից՝ ողողելով Ասորեստանը: (3) Այդ ժամանակ Հայաստանի լեռներում ձյունը հալում է, գետի ջուրը շափազանց շատանում է, հասնում ափերի մակարդակին, դուրս գալիս ափերից և երկիրը ջրի տակ կաննի, եթե ջուրը շուտ շտան Պալկոպեով դնալի ճահիճներն ու լճերը, որոնք, սկսած Պալկոպեից, գնում են մինչև Արաբիայի սահմանները, մեծ մասամբ տարածվում ճահճուտներով և այգտեղից բազմաքանակ աննշան գետաբերաններով թափվում ծովը: (4) Ձյան հալվելուց հետո, Պելյադան անցնելուն մոտ, Եփրատը նվազում է, բայց, այնուհանդերձ, նրա ջրերի զգալի մասը Պալկոպեով հոսում է լճերը: Եթե Պալկոպեի վրա չլինեին ամբարտակները, որոնք ստիպում են ջրին շրջվել և վերադառնալ իր ափերի մեջ, ապա ողջ Եփրատը կգնար Պալկոպեով և Ասորեստանը կմնար առանց նրա ջրերի: (5) Բաբելոնիայի սաստիկ մեծ դժվարություններ է խոչընդոտում Եփրատի ճանապարհը գնալի Պալկոպե, որը բացելը դյուրին է, քանի որ հողն այստեղ ազոտ է և փխրուն, բայց հենց այդ հատկությունների շնորհիվ նա իր մեջ է ներծծում գետային ջրերը և դրանցով իսկ դժվարացնում նրանց՝ դեռի հուրը վերադարձնելու աշխատանքները. մոտ էրեք ամիս ավելի քան 10 000 ասորեստանցիները դբաղված են լինում այդ աշխատանքով:

(6) Այդ պատմությունները դրդեցին Ալեքսանդրին ինչ-որ

կիրպ օգնելու ասորեստանյան երկրին: Նա որոշեց այն տեղում, որ Նիքրատի հոսանքը ուղղում են Պալաիոպե, հիմնավոր արգելակել ջրհոսքը: Պարզվեց, որ մոտ 60 ասպարեղ հեռավորության վրա գետինը քարքարոտ է, անհրաժեշտ էր այդտեղ ջրանցք փորել, միացնել այն Պալաիոպե տանող հին ջրանցքին, և այն ժամանակ ջուրը շէր ներծծվի քնահողի մեջ, քանի որ գետինը կարծր էր և դժվար շէր լինի անհրաժեշտ դեպքում ջուրը շուտ տալ հետո (7) Հանուն այդ աշխատանքների Ալեքսանդրը նավարկեց մինչև Պալաիոպե և նրանով իջավ դեպի արաբական երկրի մոտակայքի լճերը: Գտնելով այդտեղ հիանալի վայր, նա քաղաք հիմնեց, ամրացրեց այն և բնակեցրեց հելլեն վարձկաններով, որոնք համաձայնեցին դրան, և այն մարդկանցով, որոնք ծերութիան կամ խեղանդամության պատճառով պիտանի չէին ռազմական ծառայության համար:

22

Մերկացնելով խաղերին ստի մեջ (չնայած նրանց կանխագուշակություններին, նրա հետ Բաբելոնում ոչ մի վատ բան չպատահեց, բայց նա, այնուամենայնիվ, շտապում էր դուրս գալ Բաբելոնից, քանի դեռ որևէ դժբախտություն չէր պատահել), նա համարձակորեն նավարկեց դեպի լճերը, թողնելով Բաբելոնը իր ձախ կողմում: Նավատարի բացակայության պատճառով նրա նավատորմի մի մասը մոլորվեց նեղ անցուղիներում. Ալեքսանդրը նրանց նավատար ուղարկեց, և նա նավերը ճիշտ ուղի դուրս հանեց: (2) Գոյություն ունի այսպիսի մի պատմություն. ասորեստանյան արքաներից շատերի գերեզմանները կառուցվել են լճերի ու ձահիճների միջև: Նավարկության ժամանակ Ալեքսանդրն ինքն էր վարում տրիերը. ուժեղ քամին նրա գլխից թոցրեց ապարոշով գլխարկը. գլխարկը, քանի որ ավելի ծանր էր, ընկավ ջուրը, իսկ ապարոշը քամին տարավ և այն խրվեց ինչ-որ հին արքայի գերեզմանի վրա աճող եղևգնուտում: (3) Հենց ինքն էլ սա մեկնաբանել է որպես ապագայի նախանշանակ, առավել ևս, որ ինչ-որ նավաստի լողացել է ապարաշի հետևից, հանել այն եղևգնուտից և շքրչելու համար լողացել է ոչ թե ձեռքում բռնած, (4) այլ դրել էր գլխին: Ալեքսանդրի մասին գրողներից շատերի պատմելով, Ալեքսանդրը նրան մի տաղանդ է նվիրել ջանասիրության համար և հրամայել կտրել նրա գլուխը, քանի որ մարգարեները հենց տեղում հայտարարել են, թե չի կարելի աշխարհի երեսին թողնել այն

գլուխը, որի վրա եղել է արքայական ապարոշը: Իսկ Արիստոբուլոսի պատմելով, նավաստին տաղանդը ստացել է, բայց և զանազանովել ապորոշը գլխին դնելու համար: (5) Ինքն էլ ասում է, որ ապարոշը Ալեքսանդրին է բերել ինչ-որ փյունեիկացի նավաստի. իսկ ոմանք տալիս են Սելևկոսի անունը: Դա Ալեքսանդրին մահ էր կանխագուշակում, իսկ Սելևկոսին՝ մեծ արքայություն: Այն բանը, որ Ալեքսանդրից հետո Սելևկոսը իշխանությունը իր վրա վերցնողներից ամենանշանավորն էր, որ նա ամենաարքայական մտածելակերպն ուներ և կառավարում էր Ալեքսանդրից հետո ամենալայնարձակ երկիրը, ըստ իս, կասկած չի հարուցում:

23

Վերադառնալով Բաբելոն, Ալեքսանդրը գտավ Պարսկաստանից եկած Պեկեստեսին. նա իր հետ 20 հազարանոց պարսկական զորք էր բերել: Բերել էր նա ոչ քիչ կոսցիներ և տապուրներ. նրան ասել էին, որ Պարսկաստանի սահմանակից ցեղերից սրանք ամենաուզմատենչն էին: Կարիայից զորքով եկավ նաև Փիլոկսենոսը, Մենանդրոսը զորքով՝ Լիդիայից, և Մենիգոսը՝ իր հեծելազորը գլխավորած: (2) Այդ նույն ժամանակ ներկայացան նաև դեսպատություններ Հելլադայից. պսակներ կրող այդ դեսպանները, մոտենալով Ալեքսանդրին նրա գլխին ոսկե պսակ դրեցին, ասես նա աստված լիներ, իսկ իրենք՝ աստծուն մեծարելու համար եկած պատվիրակներ: Իսկ նրա վախճանն արդեն հեռու չէր:

(3) Նա շնորհակալություն հայտնեց պարսիկներին ջանասիրության համար, որով նրանք կատարել էին Պեկեստեսի բոլոր հրամանները, իսկ Պեկեստեսին՝ նրանց հիանալի վարժեցնելու համար: Ժամանածներին նա ընդունեց մակեդոնական զնդերը. ամեն մի «տասնյակի» հրամանատար նշանակեց մակեդոնացու, սրան ղեկավարելու նշանակեց «երկփայլի» և «տասստատերնիկի» (այդպես էին կոչում զինվորներին, ըստ նրա ստացած ոռճիկի. այն ավելի քիչ էր «երկփայլի» ոռճիկից և ավելի՝ սովորական զինվորի ոռճիկից): (4) Այսպիսով նրանց հրամանատարության տակ գտնվում էին 12 պարսիկ և «տասնյակը» եղրափակող մակեդոնացի՝ նույնպես «տասստատերնիկ», այնպես որ «տասնյակում» գտնվում էին շորս մակեդոնացի՝ երեքը ոռճիկով տարբերակված, իսկ մեկը՝ «տասնյակի» վրա ունեցած իշխանությամբ, և 12 պարսիկ: Մակեդոնացիների սպառազինությունն իրենցն էր՝ ազ-

գայինը՝ պարսիկներից ոմանք նետածիգներ էին, մյուսները տեղեր ունեին:

(5) Այդ ժամանակ Ալեքսանդրը հաճախ էր զորավարժություններ անցկացնում ջրի վրա. տրիերները և այն տետրերները, որոնք գետի վրա էին, հաճախակի օրինակելի ճակատամարտեր էին տալիս. իրար հետ մրցում էին թիավարներն ու նավավարները և հաղթողները որպես պարգև պսակներ էին ստանում:

(6) Նրա մոտ Ամոնից թեոքրներ եկան, որոնց նա ուղարկել էր հարցում անելու, թե ինչպես պետք է ինքը մեծարի Հեփեստիոնեսին: Նրանց ասելով, Ամոնը պատասխանել էր, որ պատշաճ է նրան զոհեր մատուցել որպես հերոսի: Ալեքսանդրն ուրախացավ այդ պատասխանից և այդ ժամանակից ի վեր մեծարեց Հեփեստիոնեսին որպես հերոսի, Կլեոմենեսին՝ վատթարագույն մարդուն, որը մեծ անարդարություններ էր արել Եգիպտոսում, նա զրավոր հրաման ուղարկեց: Ես նրան շեմ հանդիմանում այդ հրամանի համար, որը նա արձակել էր հանուն Հեփեստիոնեսի նկատմամբ իր սիրո (մահն այդ սերը շապանեց) և ընկերոջ հիշատակի, այլ հանդիմանում եմ շատ ուրիշ բաների համար: (7) Նամակում ասված էր՝ Եգիպտոսի Ալեքսանդրիայում՝ քաղաքի մեջ և Փարոս կղզու վրա, որտեղ աշտարակն է, կառուցել հսկա շափերի և շտեմնված շքեղության տաճար, անվանել միայն Հեփեստիոնեսի անունով և այդ անունը փորագրել այն կնիքների վրա, որոնցով առևտրականները վավերացնում են իրենց պայմանագրերը: (8) Սրա համար հանդիմանել պետք չէ. միայն թերևս այն բանի համար, որ նա մեծ ուշադրություն է դարձրել մանրություններին: Չափազանց հանդիմանում եմ նրան հետևյալի համար. «Եթե ես գտնեմ, — ասվում է նամակում, — որ Հեփեստիոնեսի տաճարները լավ են կառուցված և զոհերը պատշաճ կերպով են մատուցվում նրանցում, ապա ես կներեմ քո նախկին արարքները և հետագայում էլ, ինչ որ անես, քեզ չեմ դիպչի»: Չեմ կարող հավանություն տալ այսպիսի նամակին, որն ուղարկել է մեծ արքան մեծ երկրի և մի ամբողջ ժողովրդի կառավարչին, առավել ևս, որ այդ կառավարիչը վատ մարդ է եղել:

Իսկ Ալեքսանդրի վախճանն արդեն մոտենում էր: Արիստոբուլոսը պատմում է ապագան կանխագուշակող այսպիսի մի նախա-

նշանակի մասին: Ալեքսանդրը մակեդոնական գնդերում ըստ լուրջ տեսերի բաժանելիս է եղել պարսիկ զինվորներին, որոնք եկել էին Պակեստեսի հետ և ծովափից բերվել Փիլոկսեսեսի և Մենանդրոսի կողմից: Նա ցանկացել է շուր խմել. դուրս է եկել, արքայական գահը թողնելով դատարկ: (2) Գահի երկու կողմերից արժաթե ոտքերի վրա մահիճներ էին դրված, որոնց վրա նստում էին «ընկերները»: Ինչ-որ հասարակ մարդ (ոմանք ասում են, որ նա եղել է հսկողության տակ եղածներից, բայց ոչ շղթաված), տեսնելով, որ գահը և մահիճը դատարկ են, իսկ գահի շուրջը ներքիններն են կանգնած («ընկերները» զնացել էին արքայի հետևից), անցել է ներքինիների միջով, բարձրացել և նստել գահին: (3) Ներքինիները շեմ վազել նրան գահից, պահպանելով պարսկական սովորույթը. փոխարենը՝ պատռելով իրենց հագուստները, սկսել են խփել իրենց կրծքին ու դեմքին, իրք մեծ դժբախտություն է պատահել: Երբ Ալեքսանդրին զեկուցել են այդ մասին, նա հրամայել է խոշտանգել գահին նստողին, ցանկանալով պարզել, արդյո՞ք այդ արարքը նա չի կատարել ինչ-որ դավադիրների հրամանով: Սա շարունակ միայն մի բան է ասել. իր մտքով անգամ չի անցել դավադրության մասնակցելու: Կանխագուշակներն ասել են, թե դա առավել ևս Ալեքսանդրին բարի բան չի խոստանում:

(4) Դրանից մի քանի օր անց Ալեքսանդրը աստվածներին սահմանված զոհեր մատուցեց, պաղատելով իրադարձությունների նրբանիկ ընթացք և որոշ կանխագուշակությունների կատարում և օեղան նստեց «ընկերների» հետ: Խրախճանքը ձգվեց մինչև ուշ գիշեր: Պատմում են, որ Ալեքսանդրը զոհարեղված կենդանիներ և գինի է բաժանել զորքին՝ ըստ լուրջոսների և հարյուրակների միջանց մոտ գրված է, որ խրախճանքից հետո նա մտադիր է եղել հեռանալ ննջարան, բայց նրան հանդիպել է Մեդիոսը՝ այն ժամանակվա նրա մերձավորներից ամենահավատարիմը, որը խնդրել է նրան գալ իր խրախճանքին. նրա ասելով, այդ խրախճանքը պետք է որ Ալեքսանդրին հաճելի լինի:

Պալատական օրագրերում կա հետևյալը. Ալեքսանդրը քեֆ արեց և խմեց Մեդիոսի մոտ. դուրս գալով նրա մոտից, նա լվացվեց, պառկեց քնելու, կրկին ճաշեց Մեդիոսի մոտ և կրկին խմեց մինչև ուշ գիշեր: Հեռանալով խնջույքից, նա լվացվեց, լվացվեց հետո մի քիչ կերավ և միանգամից քնեց, քանի որ արդեն

հիվանդացել էր տենդով (2) Նրան մահիճով դուրս բերեցին զուհաբերութուն անելու. և նա կատարեց այն իր ամենօրյա սովորութի համաձայն. զոհերը դնելով զոհասեղանի վրա, նա պառկեց տղամարդկանց սենյակում և մնաց այնտեղ մինչև մթնշաղ: Այստեղ նա զորավարներին հայտարարեց իր կարգադրութունները արշավանքի ելնելու և նավարկումը սկսելու մասին. ցամաքային զորքերը պետք է պատրաստ լինեին արշավի շուրջ օր հետո: Նավատորմը, որտեղ պետք է գտնվեր ինքը, մեկնելու էր հինգ օր հետո: (3) Այնուհետև նրան անկողնով տարան գետի մոտ. նա նավ բարձրացավ, գետով անցավ դեպի այգի, այնտեղ նորից լվացվեց և պառկեց հանգստանալու: Հաջորդ օրը կրկին լվացվեց և մատուցեց սահմանված զոհերը. պառկելով սենյակում, նա զրուցում էր Մեղիոսի հետ: Զորավարներին հրամայված էր ներկայանալ լուսաբացին: (4) Այդ կարգադրութունները տալուց հետո մի քիչ կերավ. նրան սենյակ տարան, և տեղը ողջ դիշեր լիքովեց նրան: Հաջորդ օրը նա լվացվեց և, լվացվելուց հետո, զոհեր մատուցեց: Ննաբքսսին և այլ զորավարների հրամայված էր երեք օր հետո պատրաստ լինել նավարկության: Հաջորդ օրը նա կրկին լվացվեց, ավարտեց սահմանված զոհաբերութունները և դրեց զոհասեղանի վրա. տեղը չէր մեղմանում: Այնուհանդերձ, կանչելով զորավարներին, հրամայեց, որպեսզի ամեն ինչ պատրաստ լինի նավարկությունը սկսելու համար, Երեկոյան նա լվացվեց և լվացվելուց հետո իրեն վատ զգաց: (5) Հաջորդ օրը նրան տեղափոխեցին ջրավազանի կողքի տունը և նա մատուցեց սահմանված զոհերը: Նա իրեն վատ էր զգում, բայց և այնպես հրավիրեց ծովային գլխավոր հրամանատարին և կրկին նավարկությունը սկսելու հրաման արձակեց: Հաջորդ օրը նրան զժվարությամբ բերեցին զոհասեղանի մոտ. նա զոհ մատուցեց և այնուհանդերձ կրկին կարգադրութուններ արեց նավարկության կապակցությամբ: (6) Հաջորդ օրը, իրեն վատ զգալով, նա այնուամենայնիվ կատարեց սահմանված զոհաբերութունները և հրամայեց, որպեսզի ստրատեգները գտնվեն կողքի սենյակում, իսկ քիլիարքոսներն ու պենտաքոսիարքոսները՝ դռան առջև: Նրա զրութունը սաստիկ վատացավ և նրան այգուց պալատ տեղափոխեցին: Ներս մտած զորավարներին նա ճանաչեց, բայց նրանց որևէ բան ասել արդեն չկարողացավ. նա արդեն կորցրել էր ձայնը: Գիշերը և ցերեկը նա ուժեղ տենդի մեջ էր, որը շարունակվեց հաջորդ գիշերը և հաջորդ օրը:

Այդպես է գրված պալատական օրագրերում: Հետո պատմվում է, որ զինվորները ցանկացել են տեսնել նրան. ոմանք՝ որպեսզի նրան դեռ կենդանի տեսնեն, մյուսներն այն պատճառով, որ նրանց հայտնի էին, թե իբր նա մեռել է, և, ինձ թվում է, նրանք ենթադրել են, որ թիկնապահները թաքցնում են նրա մահը: Իսկ մեծամասնությունը, արքայի հանդեպ վշտով ու սիրով լի, պահանջում էր, որ իրենց Ալեքսանդրի մոտ թողնեն: Պատմում են, որ նա պառկած է եղել արդեն առանց ձայնի, սակայն սեղմել է իր մոտով անցնող բոլոր զինվորների ձեռքերը, զժվարությամբ բարձրացնելով դուխը և ողջունելով նրանց աչքերով: (2) Պալատական օրագրերում ասված է, որ Պիթոնեսը, Ատալոսը, Դեմոփոնեսը և Պեկեստեսը, իսկ այնուհետև Կլեոմենեսը, Մենիդոսը և Սելևկոսը պառկել են քնելու Մարասիսի տաճարում, որպեսզի աստուծուց իմանան, արդյոք ավելի օգտակար և ավելի լավ չի լինի բերել Ալեքսանդրին տաճար և աղաչել աստուծուն նրա ապաքինման համար: Լավեց աստուծուց եկող ձայնը. պետք չէ բերել Ալեքսանդրին. նրա համար ավելի լավ կլինի, եթե մնա տեղում: (3) «Ընկերներն» այդպես էլ հայտարարեցին. իսկ Ալեքսանդրը մեռավ, ասես մահը նրա համար լավագույն վիճակն էր: Համարյա նույն բանն է գրված Արխատոբուլոսի և Պտղոմեոսի մոտ: Նրանք գրել են նաև հետևյալը. «բնկերները» հարցրել են Ալեքսանդրին, թե ո՞ւմ է նա թողնում թագավորությունը: Նա պատասխանել է՝ «Լավագույնին»: Ուրիշները պատմում են, որ այդ բառին նա նաև ավիլացրել է. «Տեսնում եմ, որ իմ գերնզմանի վրա մեծ մրցություն է լինելու»:

Ես գիտեմ, որ Ալեքսանդրի մահվան մասին շատ այլ բաներ կան գրված: Պատմում են, որ Անտիպատրոսն Ալեքսանդրին թույն է ուղարկել, և այդ թույնից էլ նա մահացել է. իսկ թույնը Անտիպատրոսի համար պատրաստել է Արխատոսը, որը սկսել էր վախենալ Ալեքսանդրից, տեղեկանալով Կալիսթենեսի ճակատագրի մասին. իսկ այն բերել է Կասանդրոսը՝ Անտիպատրոսի եղբայրը: Ոմանք գրում են նույնիսկ, որ նա թույնը բերել է ջրու սմբակի մեջ: (2) Իսկ այդ թույնը տվել է Իոլյաոսը՝ Կասանդրոսի կրտսեր եղբայրը, Իոլյաոսը արքայական մատուվակն էր, և Ալեքսանդրը,

իր վախճանից թիչ առաջ նրան ինչ-որ բանով նեղացրել էր: Ուրիշ-
ներն ավելացնում են, որ դրան մասնակցել է նաև Մեղիոսը՝ Իո-
լայոսի ընկերը, որն Ալեքսանդրին հրավիրել է իր մոտ խնջույքի:
Ալեքսանդրը գինեթասից խմելով, սուր ցավեր է զգացել և այդ
ցավերի հետևանքով էլ հեռացել խնջույքից: (3) Ինչ-որ մեկը ան-
հարմար չի զգացել գրելու, թե Ալեքսանդրը, զգալով իր մոտա-
լուտ վախճանը, հեռացել է Եփրատը նետվելու մտադրությամբ,
այդ ձևով հեռանալով մարդկանցից, նա սերունդների մեջ հա-
վատ կենըշնչեր, որ աստծուց ծնված, նա հեռացել է աստվածնե-
րի մոտ: Նրա կիրն՝ Ռոքսանան, տեսնելով, որ նա հեռանում է,
հետ է պահել նրան: Իսկ Ալեքսանդրը հառաչանքով ասել է, որ
նա իրենից խլել է անանցանելի փառքը՝ դառնալ աստված: Ես
գրել եմ սա ավելի շատ այն բանի համար, որպեսզի ցույց տամ,
որ այդ խոսակցություններն ինձ հայտնի են, և ոչ թե դրանց
հանդեպ ունեցած հավատից:

28

Ալեքսանդրը մահացավ 114-րդ օլիմպիադային, ամենացի ար-
քունտոս Հեգեսիոսի օրոք: Նա ապրեց 32 տարի և 8 ամիս, ինչպես
ասում է Արիստոբոլոսը, իսկ թագավորեց 12 տարի և 8 ամիս:
Նա շատ գեղեցիկ էր, չափազանց գործունյա, կրակոտ էր ու ճար-
պիկ. իր բնավորությամբ չափազանց արի էր և փառասեր,
վտանգների մեծ սիրահար էր և աստվածների երանդուն պաշտող:
(2) Ֆիդիակական հաճույքները նա համարյա արհամարհում էր,
իսկ ինչ վերաբերում է հոգեկանին, ապա նա զովեստի անհագ
ցանկություններ ուներ: Նա բացառիկ ընդունակություն ուներ
զժվար իրավիճակներում տեսնել այն, ինչ անհրաժեշտ է. եղած
ավյալներով հազվագյուտ հաջողականությամբ հզորահանգում էր,
թե որ ելքն է հավանական. հիանալի գիտեր ինչպես շա-
րել, զինել և ամեն անհրաժեշտ բաներով մատակարարել զորքը:
Ոչ ոք չէր կարող նրա նման բարձրացնել զինվորների ոգին, հու-
սադրել նրանց անձնական անվեհերություններ, ոչնչացնել վախը
վտանգի առջև: (3) Երբ անհրաժեշտ էր գործել բոլորի աչքի առ-
ջև, այդ դեպքերում նա գործում էր անսասան վճռականությամբ:
Նա իրեն հավասարը շուներ թշնամուն խորամանկելու, նրա պո-
ծողություններն ավելի շուտ կանխելու հմտության մեջ, նախ-
քան վախի զգացում կառաջանար: Նա անխախտ պահպանում էր

պայմանագրերն ու համաձայնագրերը. նրան անհնար էր մոլո-
րեցնել և խաբել: Սեփական հաճույքների համար դրամ ծախսելիս
չափազանց ժլատ էր. առատաձեռն էր բարեգործության մեջ:

29

Եթե Ալեքսանդրը նույնիսկ զանցանքներ է թույլ տվել տաքար-
յունության պատճառով կամ ցասումի պահին, եթե նա նույնիսկ
չափազանց հեռու է զնացել բարբարոսական սովորություններով
հրապուրվելիս, ապա նա դրան մեծ նշանակություն չեմ տալիս:
Ներողամտության է մղում և՛ նրա երիտասարդ տարիքը, և՛ նրա
անփոփոխ բախտը, և՛ այն հանգամանքը, որ նրան շրջապատել
են մարզիկ, որոնք ձգտել են միայն հաճույանալ նրան, ոչ թե դեպի
ավելի լավը ուղղություն տալ. այդպիսիները, ցավոք, միշտ էլ
կան և կլինեն արքաների շքախմբում: Բայց նա գիտեմ, որ հին
արքաներից միայն Ալեքսանդրն է զղջացել իր սխալ գործողու-
թյունների համար՝ իր հոգու ազնվության շնորհիվ: (2) Իսկ մե-
ծամասնությունը, նույնիսկ գիտակցելով իրենց արարքը, արդա-
բացնում են այն որպես որևէ շքնաղ բան, կարծելով, որ այդպի-
սով քողարկում են իրենց մեղքը: Նրանք սխալվում են: Սխալը
ուղղելու միակ միջոցը, ըստ իս, կայանում է նրանում, որ մեղա-
վորն ընդունում է իր մեղքը և բացիբաց զղջում դրա հումար.
այդ դեպքում նեղացածներին էլ վիրավորանքը այնքան ծանր չի
թվում: Եթե շարունակ գործողն ընդունում է, որ վատ բան է
արել, ապա ապագայի համար բարի հույս է ծագում. եթե նա սա-
տիկ զղջում է նախկին արարքների համար, ապա նա ինքն ապա-
գայում նման մեղք չի գործի: (3) Իսկ եթե նա իր ծագումը հասց-
րել է աստվածներին, ապա դա ինձ մեծ զանցանք չի թվում. հնա-
բավոր է, որ այդ հնարանքով նա ցանկացել է բարձրացնել իրեն
հպատակների աչքում: Ես, համենայն դեպս, գտնում եմ, որ նա
ոչ պակաս հայտնի արքա է եղել, քան Մինոսը, էակոսը կամ
Ռադամանթոսը, որոնց ծնունդը հին աշխարհի մարդիկ հասցրել
են Աևսին, չմեղադրելով նրանց այդ բանի համար ոչ հանդու-
թյան, ոչ էլ ինքնապարծության մեջ: Նույնը կարելի է ասել Թև-
սեոսի՝ Պոսելոզոնի որդու կամ Իոնեսի՝ Ապոլլոնի որդու մասին:
(4) Պարսկական հագուստն էլ, ըստ իս, նա հագել է մտածված
կերպով, հանուն բարբարոսների, որպեսզի նրանց համար ամե-
նկին էլ օտարոտի արքա չերևա. և հանուն մակեդոնացիների՝ մա-
կեդոնացիների կոպուտությունն ու մեծամտությունը նվազեցնելու

համար: Գրա համար էլ, ինձ թվում է, նա մակեդոնացիների շար-
քերն է ընդունել ասերկևիլ կրող» պարսիկների, իսկ աղեմոս՝ նրա
անդամներին արժանիքներով հավասար մարդկանց: Եվ հաճա-
խակի խրախճանքներն էլ նա կազմակերպել է, ըստ Արիստոբու-
լոսի, ոչ հանուն գինու: Ալեքսանդրը քիչ է խմել: զրանք կազ-
մակերպել է ընկերների հանդեպ ունեցած համակրանքից:

30

Ով որ նախատում է Ալեքսանդրին, թող ոչ միայն նախափ
նախատինքին արժանիին, այլև ընդգրկի նրա ողջ գործունեությունը
և ինքն իրեն հաշիվ տա, թե՞ ով է ինքը, և ինչ ճակատագրով
է ապրում: Նա, չնչին արարածը, ծանրաբեռնված շնչին գործերով,
որոնք, սակայն, նա ուժ չունի հաղթահարելու, նա նախատում է
այդքան մեծ դարձած արքային, որը հասել է մարդկային երջան-
կության զազաթնակետին, երկու մայրցամաքների անվիճելի տի-
րակալին, որն աշխարհը ողողել է իր անվան փառքով: (2) Ես կար-
ծում եմ, որ այն ժամանակ չի եղել որևէ ժողովուրդ, որևէ քա-
ղաք, որևէ մարդ, որին հասած շիններ Ալեքսանդրի անունը: Եվ
ես ենթադրում եմ, որ ոչ առանց աստվածային կամքի է ծնվել
այդ մարդը, որի նմանը չի եղել: Ասում են, այդ են ցույց տվել թե՞
Ալեքսանդրի մեռնելու ժամանակ եղած կանխագուշակություննե-
րը, թե՞ տարբեր տեսիլքները, թե՞ մարդկանց տեսած տարբեր
երազները: մինչ այսօր մարդկանց՝ նրան մատուցած մեծա-
բանքները, իր յորպես բարձրագույն էակի մասին թողած նրա հի-
շատակը, կանխագուշակությունները, որոնք այսօր էլ, այդքան
ժամանակ անց, տրվում են մակեդոնական ժողովրդին Ալեքսանդ-
րի հանդեպ ունեցած հարգանքից: (3) Ես ինքս այս աշխատան-
քում նախատինքով արձագանքեցի Ալեքսանդրի որոշ զանցանք-
ներին, բայց ես չեմ ամաչում, որ Ալեքսանդրին հիացմունքով եմ
վերաբերվում: Իսկ նրա գործերը ես նախատել եմ այն բանի
համար, որ ճշմարտություն եմ սիրում, և այն բանի համար, որ
ցանկանում եմ մարդկանց օգուտ տալ: Այդ պատճառով, ոչ
առանց աստվածային թույլտվության, ես ձեռնարկեցի այս
գործը:



ՔՎԻՆՏՈՒՍ ԿՈՒՐՑՒՈՒՍ ՌՈՒՖՈՒՍ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ





Գրքեր I և II

(բովանդակության համառոտ շարադրանք)

Ենթադրվող բովանդակությունը. 336—334 թվականների ղեկավարը: Մակեդոնիայում Ալեքսանդրի գահ բարձրանալը և Պարսկաստանում Գարեհ III Կողոմանի գահակալման սկիզբը (336 թ. աշուն): Ալեքսանդրը իր գլխավորած զորքով հայտնվում է Թեսալիայում և Կորնթոսում կայացած հույների համագումարում հռչակվում պարսիկների դեմ ձեռնարկվող արշավանքի ղոբավար: Ալեքսանդրի արշավանքը Թրակիա, Քեբեի ավերումը և հակամակեդոնական շարժման ճնշումը Հունաստանում (335 թ.): Պարսիկների դեմ արշավանքի սկիզբը: Հելլեսպոնտոսի անցումը, Աքիլլեսի գերեզմանին զոհ մատուցելը (334 թ. գարուն): Մակեդոնացիների մեծ հաղթանակը Գրանիկոս գետի մոտ (334 թ. ամառ): Փոքր Ասիայի ծովափնյա հունական քաղաքների ազատագրումը պարսկական լծից: Ալեքսանդրի արշավանքը Փոքր Ասիայի խորքերը (334 թ. ձմեռ):



ԳԻՐՔ III (I)

Մինչ այդ Ալեքսանդրը, Կլեանդրոսին դրամով ուղարկելով, որպեսզի նա զինվորներ¹ բերի Պելոպոնեսից, և հարթելով զորքերը Լիկիայում ու Պամփիլիայում, տարավ իր զորքը դեպի Կեննե քաղաքը: 2. Քաղաքի մեջտեղով այն ժամանակ հոսում էր հունական առասպելներում փառաբանված Մարսիոս գետը²: 3. Այդ գետը սկիզբ է առնում լեռան գագաթից, մեծ աղմուկով իր ջրերը գահավիժում ներքևում գտնվող ժայռի վրա, հետո, տարածվելով, ոռոգում առափնյա գաշտերը, մնալով ջինջ և չխառնվելով ուրիշ ջրերի: 4. Այդ պատճառով նրա ջրերը նման են հանդարտ ծովի զույնին, բանաստեղծական մի հորինվածքի հիմք են եղել իրր հավերժահարսերը, սիրելով այդ գետը, կենում էին այդ ժայռի վրա: 5. Սակայն, քանի դեռ նա հոսում է քաղաքով, պահպանում է իր անունը, բայց այնտեղ, ուր դուրս է գալիս քաղաքի սահմաններից և հոսում մեծ մոժով, այն անվանում են Լիկուս: 6. Եվ այսպես, Ալեքսանդրը մտավ բնակիչների կողմից լքված քաղաքը³: Մտադրվելով զրոհով վերցնել ամրոցը, ուր փախել էին բնակիչները, նա այնտեղ է ուղարկում մի լրաբերի, նրանց հայտնելու, որ եթե նրանք չհանձնվեն, ապա ծայրահեղ աղետի կենթարկվեն: 7. Նրանք բերում են լրաբերին⁴ իր դիրքով ու ամրությունը հայտնի աշտարակը, առաջարկում նրան նայել, թե ինչքան է նրա բարձրությունը և հայտնել Ալեքսանդրին, որ նա և տեղաբնակները այլ կերպ են գնահատում քաղաքի ամրությունը, որ նրանք այն համարում են անմատչելի և, ծայրահեղ ղեկավարում, իրենք պատրաստ են մեռնել ի նշան հավատարմության: 8. Այնուհանդերձ, երբ նրանք տեսան, որ ամրոցը պաշար-

ված է և օրեցօր իրենց պաշարը սպառվում է, նրանք զինադա-
դար կնքեցին 60 օրով, խոստանալով հանձնել քաղաքը, եթե այդ
ժամանակամիջոցում Գարեհը նրանց օգնություն չգա: Եվ քանի
որ ոչ մի օգնություն չուղարկվեց, նրանք նշանակված օրը հանձ-
նելվեցին արքային:

9. Հետո ասիւնացիներից զեսպաններ եկան խնդրելու, որ հույ-
ներին իրենց վերադարձնեն, որոնք զերի էին ընկել Գրանիկոս
գետի մոտ: Գրան Ալեքսանդրը պատասխանեց, որ պարսիկների
հետ պատերազմն ավարտելուց հետո նա կհրամայի վերադարձ-
նել ոչ միայն այդ, այլև մնացած հույներին: 10. Իսկ ինքը՝ Ալեք-
սանդրը, սպառնալով Գարեհին, որի մասին իմացել էր, որ նա
զեռ չի անցել Եփրատը, ամեն կողմից զորքեր է հավաքում, որ-
պեսզի իր բոլոր ուժերով սկսի անշարի վտանգավոր մի պա-
տերազմ: 11. Փոշուգիայում, որտեղով Ալեքսանդրը տանում էր իր
զորքը, ավելի շատ գյուղեր կային, քան քաղաքներ: 12. Այնտեղ
էր գտնվում նաև Միդասի⁵ այն ժամանակ փառաբանված պա-
լատը: Այդ քաղաքի անունն է Գորդիոն, որի միջով հոսում է
Սանգարիոս գետը, և գտնվում է Պոնտական և Կիլիկիական ծո-
վերից հավասար հեռավորության վրա: Այստեղ, այս երկու ծովե-
րի միջև, ինչպես գիտենք, Ասիայի ամենանեղ տեղն է, քանի որ
թե՛ մեկ, թե՛ մյուս ծովը սեղմում են ցամաքը, ստեղծելով նեղ
ու խոր գետահովիտներ: 13. Թեև Ասիան կտված չէ մայրցամա-
քից, այնուհանդերձ նրա մեծ մասը շրջապատված է ջրով և կղզ-
զու⁶ է նմանվում, և եթե շիներ ծովերը բաժանող այդ պարանոցը,
ապա նրանք իրար կխառնվեին: 14. Ալեքսանդրը ուժով հնազան-
դեցնելով քաղաքը, մտնում է Յուպիտերի տաճարը: Այնտեղ նա
տեսնում է մի սալ, որը, ինչպես հաստատում են, վարել է Գոր-
դիոսը՝ Միդասի հայրը: Այն իր զարդարանքով ոչնչով չէր տարբեր-
վում ամենաէժան, առավել տարածված կոթերից: 15. Ուշագրավ
էր նրա լուծը՝ իրար խառնված և կապերը թաքցնող բաղամաթիվ
պինդ կապված հանգույցներով: 16. Երբ քաղաքի բնակիչներն
ասացին նրան, որ ըստ մարգարեի գուշակության Ասիան կնվա-
ճի նա, ով կբանդի այդ խճճված հանգույցը, նրա մեջ կբթոտ
ցանկություն առաջացավ իրազործել կանխագուշակությունը: 17.
Արքայի շուրջը հավաքվեց փոշուգացիների և մակեդոնացիների
ամբոխը. առաջինները լարված սպասում էին, իսկ երկրորդները
սարսափում էին արքայի անխոհեմ ինքնավստահությունից: Եվ
Իսկապես, գոտու հանգույցներն այնքան կիպ էին կապված, որ

անհնար էր ո՛չ հաշվարկելով, ո՛չ էլ նախելով գտնել, թե որտեղ է
սկսում և որտեղ վերջանում հյուսվածքը: Ամբոխին երկյուղ էր
ներշնչում այն, որ եթե արքային չհաջողվի քանդել հանգույցը,
ապա այդ անհաջողությունը կարող է վատ նախանշան լինել: 18.
Այդ խճճված հանգույցով երկար ու անարդյունք զբաղվելուց հե-
տո արքան ասաց. «Միևնույն է ինչպես այն կբանդվի», — և թրով
կտրելով հանգույցի բոլոր կապերը, նա ոչ այն է ծաղրի ենթար-
կեց մարգարեի կանխագուշակությունը, ոչ այն է կատարեց այն⁷:
19. Հետո, որոշելով, որտեղ էլ նա լինի, բռնել Գարեհին, որպեսզի
ամուր թիկունք ունենա, նա հանձնարարեց Ամփոտերոսին ըս-
տանձնել նախատրմի հրամանատարությունը Հելլեսպոնտոսի
ափերի մոտ, իսկ Հեգելոբոսին՝ ցամաքային զորքերինը, որպես-
զի թշնամու կայազորից ազատեն Լեսբոս, Քիոս և Կոս կղզիները:
20. Մախսելու համար նրանց տրվեց 500 տաղանդ, իսկ Անտի-
պատրոսին և հունական քաղաքների պաշտպաններին ուղարկվեց
600 տաղանդ: Արքան դաշնակիցներից պահանջեց, համաձայն
պայմանագրի, նավեր ուղարկել Հելլեսպոնտոսի պաշտպանու-
թյան համար: 21. Ալեքսանդրը այդ ժամանակ զեռ չգիտեր Մեմ-
նոնի մահվան մասին, որը նրան մեծ հոգսեր էր պատճառում,
քանի որ Ալեքսանդրը հասկանում էր, որ ամեն ինչ հեշտ կիրա-
գործվի, եթե Մեմնոնը շխանկարի:

22. Եվ նա ժամանեց Անկյուրա քաղաքը, որտեղից, հաշվելով
իր զորքի քանակը, մտավ Պափլագոնիա: Սրա հարևանությամբ
սպրում էին գեներտները, որոնցից, ինչպես կարծում են, ծագել
են վենետները⁸: 23. Ամբողջ այդ երկիրը հպատակվեց արքա-
յին, Պատանդներ տալով, նրա բնակիչները հասան այն բանին,
որ իրենց շատիպեն հարկ վճարել, որը նրանք նույնիսկ պարսիկ-
ներին չէին վճարում: 24. Երկրի ղեկավար նշանակվեց Կալասը,
իսկ ինքն՝ Ալեքսանդրը, ստանձնելով Մակեդոնիայից հենց նոր
ժամանած զորքի հրամանատարությունը, շարժվեց դեպի Կա-
պադովկիա:

II. Գարեհը, տեղեկանալով Մեմնոնի մահվան մասին և, բնա-
կանաբար, անհանգստացած ու զրկված որևէ հույսից, որոշեց
անձամբ ճակատամարտել Ալեքսանդրի հետ. նա պարսավում էր
իր զորավարների արած ամեն ինչը, համոզված լինելով, որ
նրանցից շատերը բավարար ջանասիրություն չեն ցուցաբերում, իսկ
բոլորին՝ չի ծպտում հաջողությունը: 2. Եվ ահա, ճամբար խփե-
լով Բաբելոնի մոտ, որպեսզի զինվորները ավելի ոգևորությամբ

Հայեր Բեհե ԿԷ 40 ԿԷ ԿԷ ԿԷ
7 ԿԷ ԿԷ ԿԷ

սկսեն պատերազմը, նա ի ցույց դրեց իր ամբողջ ուժերը և, կա-
ռուցելով տասը հազար զինված մարտիկներ տեղավորող մի
ամբուլժոն, սկսեց կատարել զինվորների հաշվարկը Քսերքեսի⁹
օրինակով: 3. Արևածագից մինչև գիշեր, ջոկատները, ինչպես
հրամայված էր, մտնում էին ամբուլժոն: Դուրս գալով այնտե-
ղից, նրանք զբաղեցնում էին Միջագետքի հարթավայրը, և ան-
թիվ թվացող հեծելազորն ու հետևակը ստիպում էին կարծել, որ
բանակն ավելի մեծ է, քան այն կար իրականում: 4. Պարսիկնե-
րը հարյուր հազար էին, նրանցից երեսուն հազարը՝ հեծյալներ,
մարերը՝ տասը հազար հեծյալ և հիսուն հազար հետևա-
կային: 5. Բարկանցիները երկու հազար հեծյալ էին, զինված
երկսայր կացիններով և թեթև վահաններով, շատ նման կետո-
ների¹⁰, նրանց հետևում էին տասը հազար հետևակային, նույն
տիպի հանդերձանքով: 6. Վրկանցիները հավաքել էին վեց հա-
զար հիանալի, ինչպես բոլոր այդ ցեղերն ունեն, հեծյալներ,
դրանց ավելացնելով հազար տապուրցիների: 7. Դերբեկները զի-
նել էին քառասուն հազար հետևակային. նրանց մեծամասնու-
թյունը պղնձե կամ երկաթե ծայրերով նիզակներ ունեին, մի քա-
նիսն էլ՝ կրակի վրա թրծած ձողեր: Նրանց ուղեկցում էին երկու
հազար հեծյալ՝ նույն ցեղից: 8. Կասպից ծովից ժամանել էին ութ
հազար հետևակային և 200 հեծյալ: Նրանց հետ էին նաև ուրիշ,
անհայտ ցեղեր, որոնք բերել էին երկու հազար հետևակային և
կրկնակի հեծելազոր: 9. Այդ ուժերին ավելացան երեսուն հա-
զար հույն վարձկանները՝ հիանալի երիտասարդ զինվորներ:
Հապճեպությունը խանդարեց հավաքել բակտրիացիներին, սոգ-
դերին, հնդիկներին և Կարմիր ծովի մոտ ապրող այլ ցեղերի,
որոնց անունները չգիտեր նույնիսկ արքան:

10. Մյուս բաների համեմատությամբ ամենից քիչ նա զինվոր-
ների կարիք ուներ: Հրճվելով բազմաքանակ զորքով և լսելով պա-
լատականներին, որոնք, ինչպես միշտ, իրենց շողոքորթությամբ
խանդավառում էին նրա հույսերը, նա դիմեց ավենացի Քարիդե-
մոսին՝ զինվորական զործում փորձառու և Ալեքսանդրին ատող
մի մարդու, որի հրամանով նա արտաքսվել էր Աթենքից, և
սկսեց հարցուփորձ անել, արդյոք նա բավարար ուժեղ է հա-
մարում իրեն՝ Գարեհին, թշնամուն ջախջախելու համար: 11.
Սակայն Քարիդեմոսը, մոռանալով իր դրություն և արքայի
հպարտության մասին, պատասխանեց¹¹. «Դու, գուցե չցանկա-

նա լսել ճշմարտությունը, բայց եթե ոչ հիմա, ապա ուրիշ ան-
գամ ես արդեն չեմ կարողանա ասել այն: 12. Բավա-
կանին զինված այս բանակը, որը բաղկացած է Արևելքի
բազմաթիվ՝ իրենց օջախներից կտրված ժողովուրդներից,
կարող է սարսափ ներշնչել իր հարևաններին. այն փայլում է
ոսկով և ծիրանիով, ապշեցնում զինվորական հանգրձանքի հա-
րըստությամբ, որն անհնար է պատկերացնել առանց աշ-
քով տեսնելու: 13. Իսկ մակեդոնական զորքը՝ վայրի և
առանց արտաքին պերճության, վահաններով ու նիզակներով
ծածկում է ամրակազմ զինվորների աննկուն հոծ շարքերը: Հետե-
վակի այդ զորաշարքը նրանք անվանում են փաղանգ: Այնտեղ
զինվորը զինվորին կիպ կանգնած է, մեկի զենքը համարյա դիպ-
չում է մյուսին: Փաղանգը այնպես է վարժեցված, որ առաջին
իսկ ազդանշանի դեպքում հետևում է դրոշներին, պահպանելով
շարքերը: 14. Զինվորները կատարում են այն ամենը, ինչ նրանց
հրամայում են՝ դիմադրում են, շրջապատում, բաժանվում թևերի.
նրանք կարողանում են փոխել ճակատամարտի ընթացքը դրա-
վարներից ոչ վատ: 15. Եվ մի կարծիք, որ նրանք տեսնում են
ոսկու և արծաթի. այդ կարգապահությունը մինչ այժմ ամուր է,
քանզի ստեղծված է աղքատությունից: Հոգնածներին գետինը ան-
կողին է ծառայում, նրանց բավարարում է այն ուտելիքը, ինչ
հայթայթում են, իսկ նրանց քնի ժամանակը կազմում է ոչ ամ-
բողջ գիշերը: 16. Իսկ թեսալական, աքարնական և էտոլական հե-
ծելազորները, ճակատամարտում անհաղթ այդ ջոկատները, մի-
թև նրանց հետ կմղեն պարսիկներն ու թրծված ձողերը: Քեզ ան-
հրաժեշտ են նրանց համարժեք ուժեր. որոնք քեզ համար այդ
ուժերը այն երկրներում, որոնք ծնել են նրանց. ուղարկիր քո
ոսկին ու արծաթը զինվորներ վարձելու: 17. Դարեհը բնավորու-
թյամբ մեղմ էր ու գթասիրտ, սակայն երջանկությունը հաճախ
փշացնում էր նրա դուրբակ բնությունը: Եվ ահա, չդիմանալով
ճշմարտությանը, նա հրամայեց տանել և մահապատժի ենթարկել
իրեն նվիրված հյուրին, որն այդքան օգտակար խորհուրդ էր
տվել: 18. Հույնը, այդ ժամանակ էլ չմոռանալով իր ազատ ծագ-
ման մասին, ասաց. «Իմ մահվան վրիժառուն արդեն պատրաստ
է, իմ խորհուրդն արհամարհելու համար քեզ կպատժի նա, որից
եյ քեզ նախազգուշացրի: Իսկ դու, լինելով անսահմանափակ
իշխանության տեր, այնքան շուտ փոխվեցիր, որ սերունդներին
օրինակ կձառայես, թե ինչպես մարդիկ, շլացած իրենց հաջո-

զուխյամբ, մտռանում են իրենց բնության մասին: 19. Հազիվ էր նա արտասանել այդ բառերը, երբ ծառաները արքայի հրամանով խեղդէին նրան: Բայց հետո արքան ուշացումով զըզջաց և, ընդունելով, որ հույնը ճշմարտություն էր ասում, կարգադրեց թաղել նրան մեծարանքով:

III. Թիմոդեոսը՝ Մենտորի որդին, քաջակորով պատանի էր: Արքան հրամայեց նրան Փառնարազից ընդունել ողջ օտարերկրբայա զորքերի հրամանատարությունը, որոնց հետ արքան ամենից շատ հույս էր կապում, որպեսզի նրանց օգտագործի պատերազմի ժամանակ: Իսկ իրեն՝ Փառնարազին արքան հանձնեց ռազմական իշխանությունը, որը տվել էր Մեմնոնին: 2. Մշտական հոգսերի ազդեցությունից արքային երազներում և սկսեցին անհանգստացնել ահարեկող տեսիլքներ, որոնք հետևանք էին նրա տագնապի կամ էլ հոգու մարգարեական հատկությունների: 3. Մեկ նա երազում տեսնում էր, որ Ալեքսանդրի ճամբարը փայլփրում է շլացուցիչ լույսով, մեկ, որ Ալեքսանդրին բերում են իր մոտ այնպիսի հագուստով, որ առաջ ինքն էր կրում, մեկ էլ, որ ձիով անցնելով Բաբելոնով, Ալեքսանդրը իր ձիու հետ միասին հանկարծ շքվում է իր աչքի առջև: 4. Գուշակներն էլ մյուս կողմից էին ուժեղացնում նրա անհանգստությունը նրա երազների տարբեր մեկնաբանություններով: Ոմանք ասում էին, թե դա լավ նշան է, որովհետև թշնամու ճամբարը այրվել է, և Գարեհը տեսել է Ալեքսանդրին արքայական հագուստը հանած և պարսիկների սովորական զգեստով նրա մոտ բերված: 5. Երիշները այլ մեկնաբանություններ էին տալիս՝ մակեդոնական ճամբարի փայլը նշան է Ալեքսանդրի հաջողության, իսկ որ նրան կանխատեսված է տիրել Ասիան, անվիճելիորեն ապացուցվում էր նրանով, որ Գարեհը նույն այդ հագուստով էր, երբ նրան արքա հռչակեցին: 6. Ինչպես միշտ լինում է, անհանգստությունը արթնացրեց նաև հին կանխագուշակումները: Հիշեցին, որ Գարեհն իր թագավորության սկզբում հրամայեց փոխել պարսկական ակինակի² պատյանը հունականի ձևով, իսկ խալդերը հենց այն ժամանակ հայտարարեցին, որ իշխանությունը պարսիկների վրա կանցնի նրանց, ում զենքը նա ընդօրինակում է: 7. Այնուամենայնիվ, Գարեհը, ուրախանալով և՛ գուշակների բարենպաստ մեկնաբանություններով, որոնք տարածվում էին ժողովրդի մեջ, և՛ իր երազներով, հրամայեց ճամբարը տեղափոխել Եփրատին մոտ:

8. Պարսիկները հնուց եկող սովորույթ ունեին՝ ճամփա լրել-

նել մինչև արևածագը: Ճանապարհվելու ազդանշանը տրվում էր արքայական վրանից, երբ լույսն ամբողջովին բացվում էր: Վրանի վրա, որը բոլորին տեսանելի էր, ապակու վրա վեր էր բարձրանում արևի շողացող պատկերը: 9. Արշավի զինաշարքն այսպիսին էր. առջևից, արծաթե զոհասեղանների վրա, կրակ էին տանում, որը ըստ պարսիկների, հավերժության ու սրբության նշան է: Նրանց հետևից զնացող մոզերը երգում էին հինավուրց հիմներ: 10. Նրանց հետևում էին ծիրանագույն թիկնոցներ հագած 365 պատանիներ՝ ըստ տարվա օրերի քանակի, քանի որ պարսիկները տարին բաժանում էին հենց այդքան օրերի: 11. Ապա սպիտակ ձիերը տանում էին Յուպիտերին նվիրված մարտակառքը³, նրան հետևում էր հսկայական շափեր ունեցող մի ձի, որը համարվում էր արևի ձին: Ջիավարները զարդարված էին ոսկե ճյուղերով և սպիտակ հանդերձանքով: 12. Նրանցից ոչ հեռու գտնվում էին տասը մարտակառքեր, առատորեն զարդարված ոսկով ու արծաթով: Նրանց հետևից գնում էին տասներկու ցեղերի հեծյալներ տարբեր սպառազինությամբ՝ ըստ սովորույթի: 13. Ապա գնում էին նրանք, ում պարսիկներն անվանում են «անմահներ»⁴, թվով մինչև տասը հազար հոգի. ուրիշ ոչ ոք չունեի այդքան բարբարոսորեն ճոխ հագուստ. նրանք կրում էին ոսկե մանյակներ, ոսկով ասեղնագործված թիկնոցներ և երկար թևերով պատմուճաններ՝ նույնպես թանկարժեք քարերով զարդարված: 14. Մոտ տարածության վրա գնում էին այսպես կոչված «արքայի ազգականները»⁵, թվով մինչև 15 հազար հոգի: Այդ ամբոխը, իր գրեթե կանացի պերճանքով, աչքի էր զարնում ավելի շատ ճոխությամբ, քան սպառազենի զեղեցկությամբ: 15. Նրանց հետևող պալատականներին, որոնք սովորաբար արքայի հանդերձանքն էին պահպանում, անվանում էին նիզակակիրներ⁶: Նրանք գնում էին արքայի մարտակառքի առջևից, որի մեջ նա վեր էր հանում մնացած բոլորից: 16. Երկու կողմից մարտակառքը զարդարված էր աստվածների ոսկյա և արծաթյա պատկերներով, առեղը զարդարում էին փայլփրուն թանկարժեք քարերը, իսկ նրանց վրա վեր էին խոյանում երկու ոսկե արձաններ, ամեն մեկը մի կանգուն բարձրությամբ՝ մեկը Նինոսի, մյուսը՝ Բեթի⁷: Նրանց միջև կար մի սրբազան ոսկե պատկեր, որը նման էր թևատարած արծվի: 17. Իր՝ արքայի հագուստը շքեղությամբ գերազանցում էր մնացած ամեն ինչին. ծիրանի պատմուճան՝ մեջտեղից սպիտակ գծով նախած, 18. թիկնոց՝ ոսկե-

թելով ասեղնագործված, զարդարված ոսկյա բաղնի-
քով, որոնք իրար էին մոտեցրել իրենց կտուցները, կա-
նացի ձևով գոտեորված լայնագոտիով: Արքան գոտուց թան-
կարժեք քարերով զարդարված պատյանում ակինակ էր կախել:
19. Արքայի գլխարկը, որը պարսիկները անվանում էին «կիզա-
րիս»¹⁸, զարդարված էր մանուշակագույնով՝ սպիտակ հանգույց-
ներով: 20. Մարտակառքի հետևից քայլում էին տասը հազար
նիզակակիրներ, արծաթով շքեղորեն զարդարված նիզակներով և
ոսկեծայր նետերով: 21. Մոտ երկու հարյուր մերձավոր մեծա-
տահմիկ աստիճանավորներ ուղեկցում էին արքային աջից և ձա-
խից, նրանց ջոկատը եզրափակում էին երեսուն հազար հետևա-
կալիներ, արքայական շորս հարյուր ձիերի ուղեկցությամբ: 22.
Նրանց հետևից՝ մեկ ասպարեզ¹⁹ հեռավորության վրա, մարտա-
կառքը տանում էր արքայի մորը՝ Միսիգամբիսին, մյուս մարտա-
կառքում նրա կինն էր: Ձիեր հեծած կանանց ամբոխը ուղեկցում
էր թագուհիներին: 23. Նրանց հետևում էին հարմամաքս կոչ-
վող տասնհինգ սալլակառքեր, որոնցում արքայական զավակներն
էին, նրանց դաստիարակներն ու ներքինիների մի խումբ, որոնք
ամենակին էլ արհամարհված չէին այդ ժողովուրդների մոտ: 24.
Այնուհետև գնում էին երեք հարյուր վաթսուն արքայական հար-
ձեքը²⁰ նույնպես արքայական հագուստներ հագած, հետո վեց
հարյուր ջորի և երեք հարյուր ուղտ տանում էին արքայական
գանձարանը, սրանց ուղեկցում էր նետաձիգների մի ջոկատ: 25.
Սրանց հետևից գնում էին արքայի բարեկամների ու ընկերների
կանաչք և մարկիտանտների ամբոխն ու գումակը՝ ծառանե-
րով: Վերջում գնում էին շարասյունը եզրափակող թեթևա-
զեն մարտիկների ջոկատները, ամեն մեկն իր հրամանատարով:

26. Եթե որևէ մեկը հենց այդ ժամանակ տեսներ մակեդոնա-
կան բանակը, ապա այն իրենից լրիվ մի ուրիշ տեսարան կներ-
կայացներ, այստեղ մարդիկ ու ձիերը փայլում էին ոչ թե ոսկով
և խայտաբղետ հագուստներով, այլ երկաթով ու պղնձով: 27.
Այս բանակը պատրաստ էր գնալ կամ կանգնել, ծանրաբեռնված
չէր բռնով ու ծառաներով, հստակորեն արձագանքում էր ոչ մի-
այն ազդանշաններին, այլև զորավարների սված նշաններին,
Այն միշտ զինվորների համար ճամբար խփելու և պարեն հայ-
թայթելու տեղ էր գտնում: 28. Եվ զինվորների պակաս էլ Ալեք-
սանդրը չէր զգում: Իսկ Դարեհը՝ այդ հսկա բանակի տիրակալը,
ճակատամարտի տեղի փոքրության պատճառով իր զորքն էլ էր

զարձրել այնքան փոքրաթիվ, որի համար ինքն արհամարհում
էր թշնամուն:

IV. Այդ ընթացքում Ալեքսանդրը Կապադովկիայի գլխավոր
նշանակելով Աբխատոմենոսին, իր ամբողջ զորքով մեկնեց Կի-
լիկիա և հասավ այն վայրը, որը կոչվում էր «Կյուրոսի ճամ-
բար»²¹: Այդտեղ Կյուրոսի կայանատեղին էր եղել, երբ նա
իր բանակը տանում էր Լիբիա՝ Կրեսոսի դեմ: 2. Այդ տեղը
գտնվում էր Կիլիկիայի մուտքից 50 ասպարեզ հեռավո-
րության վրա: Տեղացիներն այդ կիրճն անվանում են «Դար-
պաս». իր բնական ձևով այն հիշեցնում է մարդու ձեռքով
կերտած շինություն: 3. Այդ իսկ պատճառով Կիլիկիան կառա-
վարող Արսամը, հիշելով պատերազմի սկզբին Մեմնոնի սված
խորհուրդները, որոշեց, թեև ուշացումով, գործի դնել նրա փրկա-
բար պլանը՝ նա ամայացրեց Կիլիկիան հրով ու սրով, որպես-
զի թշնամուն անապատ թողնի, և ոչնչացրեց այն ամենը, ինչ կա-
րող էր օգտակար լինել թշնամուն, որպեսզի մերկ ու անբերրի
թողնի այն երկիրը, որն ինքն ի վիճակի չէր պաշտպանել: 4.
Ավելի օգտակար կլիներ զորքի մեծ ջոկատով փակել դեպի Կիլի-
կիա տանող նեղ անցուղին և տիրանալ ժայռին, որը հարմար
գիրքով կախված էր անցուղու վրա, որտեղից նա աներկյուղ կա-
րող էր կանգնեցնել կամ ոչնչացնել մոտեցող թշնամուն: 5. Իսկ
այժմ քչերիկ թողնելով պաշտպանելու լեռնանցքները, նա նա-
հանջեց, դառնալով ավերիչը երկրի, որը պետք է փրկեր ավե-
րումից: Դրա համար էլ նրա թողած զինվորները իրենց մատնե-
րված համարելով, լցանկացան նույնիսկ տեսնել թշնամուն, թեև
մարդկանց ավելի փոքր քանակն էլ կարող էր պաշտպանել ան-
ցումները: 6. Չէ՞ որ Կիլիկիան պաշտպանված է ուղղաձիգ ու
զառիվայր լեռների անընդմեջ շղթայով, այն սկսում է ծովի մո-
տից և, ընդունելով աղեղի ձև, իր մյուս ծայրով այլ տեղում կըր-
կին վերադառնում է ծով: 7. Այդ լեռնաշղթայով, այն
տեղում, որտեղ ծովը առավել խոր է մտնի ափը, անց-
նում են երեք նեղ և ուղղաձիգ ճամփաներ. Կիլիկիա մտնել
հնարավոր է դրանցից մեկով, Այդ երկիրը, որի ծովահայաց
կողմը հարթ է, կտրտված է բազմաթիվ գետերով: Նրանով են անց-
նում Պիրամոս և Կյուրոսոս հայտնի գետերը: 8. Կյուրոսոսը նշա-
նավոր է ոչ թե հոսանքի լայնությամբ²², այլ ջրի զուգալուցյամբ,
քանի որ իր ակունքներից այն հանդարտորեն հոսում է մաքուր
հատակով և չկան այլ վտակներ, որոնք կարողանան պղտորել նրա

Հանդարտ ջրերը, 9. Այդ պատճառով նրա ջուրը չափազանց մա-
քուր է և սառնորակ, նրա գեղատեսիլ ափերը ստվերապատում
են նրա հոսանքը, և նա ծովն է թափվում աջնալիսին, ինչպիսին
կնում էր իր աղունքներից: 10. Այս երկրում ժամանակը ոչըն-
չացրել է երգերում փառաբանված շատ հուշարձաններ. այստեղ
երևում էին այն տեղերը, ուր կանգնած էին Լիրենս և Թեբե քա-
ղաքները, Տրիփոնի քարանձավը և Կորիկյան պուրակը, որտեղ
աճում են դաֆրան և ուրիշ մրգեր, որոնցից միայն համբավն է
մնացել²³:

11. Ալեքսանդրը մտավ «Դարպաս» կոչվող լեռնանցքը: Զննե-
լով տեղանքը, նա, ինչպես պատմում են, հատկապես զարմացավ
իր հաջողության վրա. նա խոստովանեց, որ կարող էր քարերով
ծածկված լինել, եթե երևէ մեկը մկսեր քարեր նետել անցուղի, իր
զորքի վրա: 12. Ճանապարհով հագլով շորս զինված մարտիկներ
կարող էին շարքով անցնել. ժայռ կախվել էր ճանապարհի վրա,
որը ոչ միայն նեղ էր, այլև զառիվայր և հաճախ կտրտվում էր
լեռներից հոսող հեղեղներով: 13. Այնուհանդերձ Ալեքսանդրը
հրամայեց թեթևագին թրակացիներին շարժվել ջոկատի առջևից
և ղննել արահետները, որպեսզի թաքնված թշնամին չկարողանա
հանկարծակի հարձակվել շարժվող բանակի վրա: Նետածիգների
ջոկատը նույնպես զրաղեցրեց լեռնանցքը. նրանք նետերը պատ-
րաստ էին պահել, քանի որ նրանց հավատացրել էին, որ բանա-
կը ոչ թե լեռնանցք է մտնում, այլ ճակատամարտի դաշտ: 14.
Այդպիսով բանակը մոտեցավ Տարսոն քաղաքին, որը պարսիկ-
ները այդ ժամանակ այրում էին, որպեսզի հարուստ քաղաքը
թշնամու ձեռքը չընկներ: 15. Սակայն Ալեքսանդրը ուղարկեց
Պարմենիոսին թեթևագին ջոկատով, որ հանգչենեն հրդեհը և,
տեղեկանալով, որ բարբարոսները փախել են իր մարդկանցից,
միանգամից մտավ իրենց փրկած քաղաքը:

V. Կյուզնոս զետը, որի մասին արդեն ասվեց, հոսում է քա-
ղաքի մեջտեղով: Այդ ժամանակ ամառ էր և արևի ջերմությունը,
ավելի քան որևիցի այլ երկրի, շիկացնում էր Կիլիկիան, և վրա
հասավ օրվա ամենաշոգ ժամանակը:

2. Գետի թափանցիկ ջրերը գայթակղեցին արքային, և նա որո-
շեց լվալ քրտինքով և փոշիով ծածկված իր կրակվող մարմինը:
Զորքի առջև հանելով հագուստը, մտածելով, որ ճիշտ կլինի իր
զինվորներին ցույց տալ, թե իրեն որքան քիչ բան է պետք մար-
մինը խնամելու համար, նա մտավ ջուրը: 3. Բայց զեռ նոր էր

ջուրը մտել, երբ նրա մարմնի զողացող անդամները սկսեցին
փայտանալ, հետո նա գունատվեց և կենսատու ջերմությունը հա-
մարյա լքեց նրա մարմինը²⁴: 4. Մառանքը վեր բարձրացրին
նրան կիսամեռ և համարյա գիտակցությունը կորցրած և տարան
վրան: 5. Ճամբարում անհանգստություն և նույնիսկ համարյա
վիշտ տարածվեց: Բոլորը լացակումած ողբում էին, որ բոլոր ժա-
մանակների ու ավանդությունների ամենափառաբանված արքային
հաջողության ու փառքի ամենածաղկուն շրջանում խոցել է ոչ թե
թշնամին, ոչ թե ճակատամարտում, այլ իրենց շարքերից նրան
խել է մահը այն ժամանակ, երբ նա ջրով իր մարմինն էր լվա-
նում: 6. Հաղթող կղաոնա իր թշնամուն դեռ շտեսած Դարեհը, Իսկ
իրենք՝ զինվորները, ստիպված կլինեն կրկին նվաճել այն երկր-
ները, որոնցով մեկ անգամ արդեն անցել են հաղթանակով և որ-
տեղ ամեն ինչ ոչնչացրել են կա՛մ իրենք, կա՛մ էլ թշնամիները:
Նրանք անբերրի անապատում տառապելու են քաղցից ու կարի-
քից, եթե նույնիսկ ոչ ոք չցանկանա նրանց հետապնդել: 7. Ո՞վ
պետք է իրենց ղեկավարի հետ վերադառնալիս: Ո՞վ կհամար-
ձակվի զրավել Ալեքսանդրի տեղը: Եթե նույնիսկ նրանք փա-
խուստով հասնեն մինչև Հելլեսպոնտոս, ո՞վ նավատորմ կպատ-
րաստի անցման համար: 8. Այնուհետև նրանց ողբը կրկին ուղղ-
վեց արքային, և, մոռանալով իրենց մասին, նրանք սկսեցին
վշտանալ, որ այդպիսի մեծ հանձարը, միաժամանակ իրենց ար-
քան ու զինակիցը, խլվել է իրենց շարքերից երիտասարդության
ծաղկման շրջանում:

9. Մինչդեռ արքան սկսեց ավելի ազատ շնչել, բացեց աչքերը
և, որքան ավելի գիտակցությունը վերադարձավ, սկսեց ճանաչել
իրեն շրջապատող ընկերներին, նրա հիվանդության թեթևանալու
մասին խոսում էր արդեն այն, որ նա հասկացավ գժբախտության
մեծությունը: 10. Սակայն հոգեկան ցավը կրկին թուլացրեց նրա
բժեքը, երբ նրան հայտնեցին, որ Դարեհը Կիլիկիայում կլինի
հինգերորդ օրը: Ալեքսանդրը տրտնջում էր, որ իրեն գլխովին
հանձնել են Դարեհին, որ իր ձեռքից խլել են փառապանծ հաղ-
թանակը և որ ինքը պարտության է մատնված իր վրանում մոռյլ
ու անփառունակ մահով: 11. Այսպիսով, կանչելով իր ընկերներին
ու բժիշկներին, նա ասաց. «Դուք տեսնում եք, թե ինչ հանգա-
մանքներում է խոցում ինձ ճակատագիրը, Ինձ թվում է, որ ես
լսում եմ թշնամու զենքի շաշյունը, և ինքս, սկսելով այս պա-
տերազմը, չեմ կարող մասնակցել նրան: 12. Նշանակում է, երբ
19— Ալեքսանդր Մակեդոնացի 289

Դարեհը գրում էր իր այգքան հանդուգն նամակը, արդեն որոշել էր իմ ճակատագիրը, Բայց դա չի լինի, եթե ես բուժվեմ, ինչպես ինքս եմ ցանկանում: 13. Իմ վիճակը չի հանդուրժում դանդաղ ներգործող զեղամիջոցներ ու զգուշավոր բժիշկներ. ավելի լավ է միանգամից մեռնել, քան բուժվել չափազանց ուշ: Դրա համար, եթե բժիշկները կարողություն ու հնար ունեն, թող իմանան, որ ինձ ոչ թե կյանքս փրկելու միջոց է հարկավոր, այլ պատերազմը շարունակելու: 14. Արքայի այսպիսի բորբոքուն խելացնորությունը բուրբին մեծ անհանգստություն պատճառեց: Եվ ամեն մեկն առանձին-առանձին սկսեց համոզել նրան շտապողականությունը շնորհաբանել վտանգը, այլ ենթարկվել բժիշկների կամքին: 15. Ձորքը, իբր, հիմք ունի զգուշանալու չփորձված դեղերից, քանի որ թշնամին կարող է նույնիսկ իր մտերիմներից որևէ մեկին կաշառել իրեն կործանելու համար: 16. Իսկապես, Դարեհը հայտարարել էր, որ այն անձը, որը կմեռցնի Ալեքսանդրին, իրենից հազար տաղանդ կստանա: Այդ պատճառով ենթադրում էին, թե ոչ ոք չի համարձակվի գործածել մի դեղ, որը նոր լինելու պատճառով, կարող է կասկածելի թվալ:

VI. Մակեդոնիայից Ալեքսանդրի հետ եկած հայտնի բժիշկներից էր աքաբանցի Փիլիպոսը, որն առավել նվիրված էր արքային: Նա արքայի ընկերն էր և առողջության պահպանը մանկությունից տարիներին և հատկապես սիրում էր նրան ոչ միայն որպես իր արքայի, այլև որպես իր սանի: 2. Նա խոստացավ տալ ոչ այնքան արագ, որքան ուժեղ ներգործող դեղ, և թեթևացնել հիվանդությունը բուժել ըմպելիքով: Նրա խոստումը, վտանգավորության պատճառով, ոչ մեկին դուր չեկավ բացի նրանից, ում համար այն նախատեսված էր: 3. Չէ՞ որ արքան համաձայն էր դիմանալ ինչի ասես, միայն թե հիվանդությունը չերկարեր. զենքը և բանակը նրա աչքի առջև էին, և նա գտնում էր, որ հաղթանակը կախված է դրոշների տակ իր տեղը գրավելու հնարավորությունից: Նա նեղվում էր նրանից, որ բժշկի նշանակումով զեղը պիտի խմեր միայն երեք օր անց:

4. Այդ ժամանակ արքան իր ամենահավատարիմ պալատականներից մեկից՝ Պարմենիոսից նամակ ստացավ, որտեղ նա զգուշացնում էր չվստահել առողջությունը Փիլիպոսին, որին Դարեհը կաշառել էր հազար տաղանդով և խոստացել իր քրոջը կնություն տալ: 5. Այդ նամակը Ալեքսանդրի հոգին անհանգստություն մտցրեց և ուրիշներից ծածուկ նա իր մտքում ծան-

բաթնիկ էր անում վախն ու հույսը: 6. «Արդյո՞ք խմեմ զեղը թե ոչ: Չէ որ, եթե նրա մեջ թույն լինի, ապա կթվա, որ ես արժանի էի պատահածին: Կասկածի տակ առնե՞լ բժշկի հավատարմությունը: Թո՞ւյլ տալ արդյոք, որ ես սպանվեմ իմ վրանի մեջ: Այնուհանդերձ ավելի լավ է մեռնել ուրիշի հանցագործությունից, քան սեփական վախից»: 7. Երկար մտածմունքներից հետո, ոչ մեկին չհայտնելով նամակի բովանդակությունը, նա իր մատանիով կնքեց այն և թաքցրեց բարձի տակ, որի վրա պառկած էր: 8. Երկու օր նման մտածմունքների մեջ անցկացնելուց հետո, վրա հասավ բժշկի նշանակած օրը, և Փիլիպոսը ներս մտավ զավաթը ձեռքին, որի մեջ լուծված դեղն էր: 9. Տեսնելով նրան, Ալեքսանդրը գլուխը վեր բարձրացրեց և Պարմենիոսի նամակը ձախ ձեռքում բռնած վերցրեց զավաթը և անվախ խմեց զեղը: Ապա հրամայեց Փիլիպոսին ընթերցել նամակը և ինքը հայացքը չէր կըտրում նրանից, ենթադրելով, որ նրա դեմքի արտահայտության մեջ կնկատի մեղավորության նշույլներ: 10. Սակայն Փիլիպոսը, կարգավորված նամակը, ավելի շատ զայրույթ արտահայտեց, քան վախ, և անկողնի առջև նետելով նամակն ու թիկնոցը, ասաց. «Օ՛, արքա, իմ շունը միշտ քեզանից է կախված եղել, սակայն ես հիմա համոզվեցի, որ այժմ այն գուրս է գալիս քո սրբորեն պաշտված շորթներից: 11. Սպանություն՝ իմ դեմ ուղղված մեղադրանքը կհերքվի քո առողջանալով. ինձնով փրկվելով, դու ինձ կյանք ես տալիս: Խնդրում և թախանձում եմ քեզ, դեմ գցիր քո վախը, թույլ տուր, որ զեղը թափանցի քո երակները, որոշ ժամանակով թեթևացրու քո հոգին, որ քո անկասկած հավատարիմ, սակայն չափազանց զգույշ ընկերները խոսվեցրել են իրենց անտեղի հոգածությունը»: 12. Այդ բառերը ոչ միայն հանգստացրին արքային, այլև նրան հրշանիկ հույսեր ներշնչեցին: Նա ասաց. «Օ՛, Փիլիպոս, եթե աստվածները քեզ հնարավորություն տալին փորձություն ենթարկել իմ զգացմունքները քեզ ամենացանկալի եղանակով, դու կարող էիր և այլ ուղի ընտրել, սակայն դու չէիր կարող նույնիսկ ցանկանալ ավելի ճիշտ միջոց, քան այն, ինչը դու կիրառեցիր: 13. Կարդալով այդ նամակը, ես, այնուամենայնիվ, խմեցի քո պատրաստած զեղը և հիմա հավատում եմ, որ դու անհանգստացած ես քո հավատարմության համար ոչ պակաս, քան իմ առողջության համար: Ասելով այս, նա Փիլիպոսին մեկնեց իր աչքը: 14. Սակայն ըմպելիքի ուժն այնքան մեծ էր, որ հետագա իրադարձությունները կարծես հաստատեցին Պարմենիոսի

մեղադրանքները. արքայի շնչառութունը դարձավ ընդհատ ու զժվարին: Բայց Փիլիպոսը ոչ մի միջոց բաց չլինողեց. նա տաք թեր- ջոցներ էր դնում, ուշաթափվածին գրգռում էր մեկ կերակրի, մեկ գինու բույրով: 15. Հենց նա տեսնում էր, որ Ալեքսանդրն ուշքի է գալիս, անդադրում մեկ հիշեցնում էր նրան մոր և բույրերի մա- սին, մեկ էլ մոտալուտ հաղթանակի մասին: 16. Իսկ երբ դեղը ներծծվեց երակների մեջ և ամբողջ մարմինը սկսեց զգալ նրա բուժիչ ուժը, սկզբից հոգին, իսկ հետո Ալեքսանդրի մարմինը ձեռք բերին նախկին ուժը, նույնիսկ ավելի արագ, քան սպասվում էր. չէ՞ որ արդեն երեք օր անց, նման վիճակում լինելուց հետո, նա հայտնվեց գինվորների առջև: 17. Ամբողջ զորքը ընդունեց Փիլիպոսին այնպիսի զգացումով, ինչպես իրեն՝ արքային. յու- բաբանչյուրը սեղմում էր նրա ձեռքը և շնորհակալություն հայտ- նում որպես աստծու առաքյալի: Դժվար է հաղորդել, թե որքան մեծ էր արքաների հանդեպ մակեդոնացիների բնատուր հարգան- քից բացի նրանց նվիրվածությունը հենց այս արքային, նրա հանդեպ նրանց կրակոտ սերը: 18. Բոլորը համոզված էին, որ նա ոչինչ չի ձեռնարկում առանց աստվածների օգնության, քանզի եթե որևէ մեկին մշտապես ուղեկցում է երջանկությունը, ապա նույնիսկ խելահեղությունը նրան դեպի փառք է տանում: 19. Ար- քայի տարիքը, հազիվ հասունացած նման զործերի համար, լի- վին բավարար եղավ և փառավորեց նրա բոլոր զործերը: Բաներ կան, որոնց սովորաբար մեծ նշանակություն չեն տալիս, սակայն որոնք մեծ արժեք ունեն գինվորների աչքում. արքայի մրցում- ները գինվորների հետ մարմնական վարժություններում, նրա հա- գուստը և իրեն պահելու ձևը, որով նա քիչ էր տարբերվում հա- սարակ մարդուց, նրա զինվորական ոգին: 20. Այդ ամենը՝ լինի բնություն պարզե թե հոգու նվաճում, նրան դարձրին հավասա- րապես արժանի թե՛ հարգանքի և թե՛ սիրո:

VII. Դարեհը, տեղեկություն ստանալով Ալեքսանդրի հիվան- դություն մասին, արագորեն, որքան կարճ էր իր ծանրաշարժ բանակը, շտապեց դեպի Սիրաս, կամուրջ գցեց նրա վրայով և իր բանակը հինգ օրվա ընթացքում անցկացրեց, փութալով նվաճել Կիլիկիան: 2. Իսկ Ալեքսանդրը, վերականգնելով իր առողջությու- նը, ժամանեց Սոլի քաղաքը. նվաճելով այն, նա երկու հարյուր տաղանդ տուգանք գրեց քաղաքի վրա և ամրոցում գինվորական կայազոր տեղավորեց²⁵: 3. Այնուհետև նա կատարեց իր առող- ջանալու համար խոստացած երդումները. կազմակերպեց հանդի-

սավոր մրցումներ էսկուլապի և Մինեբլալի պատվին: Դրանով նա ցույց տվեց, թե ինչպես է արհամարհում բարբարոսներին: 4. Երբ նա դիտում էր մրցումները, լավ լուրեր եկան Հալիկաո- նասից. ճակատամարտում իր զորքը պարտության էր մատնել պարսիկներին, իրեն էին հնազանդվել Մինդոսը, Կավնոսը և շատ երկրներ այդ նույն ճանապարհի վրա: 5. Այնուհետև, վերջացնե- լով մրցումները և լքելով ճամբարը, նա կամրջով անցավ Պիրա- մոս գետը և ժամանեց Մալոս քաղաքը, այնտեղից էլ երկրորդ օրը հասավ Կաստարով քաղաքը: 6. Այնտեղ նրան դիմավորեց Պար- մենիոնը, որն առաջ էր ուղարկված հետազոտելու ճանապարհն այն լեռնանցքներով, որոնցով հնարավոր էր անցնել դեպի Իսոս քաղաքը: 7. Զբաղեցնելով ճանապարհի ամենանեղ մասը և թողնե- լով այնտեղ ոչ մեծ մի ջոկատ, Պարմենիոնը գրավեց Իսոսը, որը բարբարոսները նույնպես լքել էին: Շարժվելով այդտեղից, նա գուրս քաշեց ներքին լեռնային շրջանները գրաղեցնողներին, բո- լոր տեղերն ամրացրեց կայազորներով, և տիրանալով ճանապար- հին, ինչպես ասվել էր, լուր ուղարկեց իր հաջողությունների մա- սին: 8. Այնժամ Ալեքսանդրն էլ շարժեց իր բանակը դեպի Իսոս: Այնտեղ, քննարկելուց հետո՝ գնալ առաջ թե ավելի լավ է թարմ ուժերի սպասել, որոնք, ինչպես հայտնի էր, գալիս էին Մակեդո- նիայից, Պարմենիոնը կարծիք հայտնեց, որ ճակատամարտի հա- մար գրանից ավելի հարմար տեղ չկա: 9. Չէ՞ որ այստեղ երկու արքաների ուժերը հավասար կլինեն. նեղ կիրճը չի կարող տեղա- վորել մեծ քանակությամբ մարդկանց, իսկ նրա մարդկանց ան- հրաժեշտ է խուսափել հարթավայրերից և բաց դաշտերից, որտեղ նրանց կարող են շրջապատել և կոտորել կովի երկու ճակատում: Նա վախենում էր, որ մակեդոնացիները կպարտվեն ոչ թե թշնա- մու ուժից, այլ իրենց հոգնածությունից: Եթե նրանք կանգնեն ավելի ազատ շարքով, ապա պարսիկների թարմ ուժերը անընդհատ կհարձակվեն նրանց վրա: 10. Նրա խելացի փաս- տարկումները հեշտությամբ ընդունվեցին, և Ալեքսանդրը որո- շեց թշնամուն սպասել լեռնային կիրճերում²⁶:

11. Ալեքսանդրի բանակում Միսեն անունով մի պարսիկ կար, որին ինչ-որ ժամանակ Եգիպտոսի կառավարիչն ուղարկել էր Փի- լիպոսի մոտ. ստանալով ընձաններ և ամեն կարգի պատիվներ, նա տարագրությունը գերադասեց հայրենիքից, հետևեց Ալեքսանդրին դեպի Ասիա և նրա հավատարիմ ընկերներից էր համարվում: 12. Կրետացի գինվորը նրան հանձնեց մատանիով կնքված

մի նամակ, որի կնիքը նրան անծանոթ էր: Այդ նամակը ուղարկել էր Գարեհիզը զորավար նաբարզանը, համոզելով Սիսենին որևէ բան անել իր ծագմանը և բնութիւն արժանի, Գարեհիզ հարգանքին արժանանալու համար: 13. Կիովին անմեղ Սիսենը հաճախ փորձում էր այդ նամակը հանձնել Ալեքսանդրին, սակայն տեսնելով, որ արքան զբաղված է տարբեր հոգսերով ու պատերազմի պատրաստութիւններով, սպասում էր պատեճ առիթի, իսկ դա ավելացնում էր կասկածները, թե նա ոճրագործութիւն է ծրագրում: 14. Քանի որ նամակը մինչև նրան հանձնելը ընկել էր Ալեքսանդրի ձեռքը, որը կարգաւորվ այն և կնքելով Սիսենին անծանոթ մատանիով, հրամայել էր այն տալ պարսիկին, որպեսզի փորձեր բարբարոսի հավատարմութիւնը: 15. Բայց քանի որ նա մի քանի օր էր, ինչ չէր մտտենում Ալեքսանդրին, թվաց, թե նա թաքցրել է նամակը հանցավոր նպատակով. արշավանքի ժամանակ նրան սպանեցին կրեոտացիները, անկասկած, արքայի հրամանով:

VIII. Փառնարազից Թիմոդեսի ստացած հուշն զինվորները՝ Գարեհիզ գլխավոր և համարչա միակ հուշը, վերջ է վերջո եկան արքայի մոտ: 2. Նրանք թախանձագին համոզում էին Գարեհիզն վերագառնալ Միջագետքի լայնատարած հարթավայրը կամ, եթե դա մերժվեր, ծայրահեղ դեպքում մասնատել իր անթիվ ուժերը և թույլ շտալ որպեսզի իր ողջ բանակը կախված լինի ճակատագրի մի հարվածից: 3. Այդ խորհուրդը այնքան անհաճո չէր աշքային, որքան նրա պալատականներին. նրանք ասում էին, որ դա կասկածելի հավատարմութիւն է և փողով զնված դավաճանութիւն, և որ բանակի մասնատումը առաջարկվում է նրա համար, որպեսզի հուշներն իրենք կարողանան գնալ տարբեր ուղղութիւններով և Ալեքսանդրին հայտնեն իրենց տրված հանձնարարութիւնները. ավելի խելամիտ կլինի դրանց բոլորին շրջապատել ամբողջ բանակով, նետահարել և զբանով ապացուցել, որ դավաճանութիւնն անպատիժ չի մնում: 5. Սակայն Գարեհիզ՝ արգար ու մեղմ բնավորութիւն տեր մի մարդ, հայտարարեց, որ նման ոճրագործութիւն, ինչպիսին իր խոսքին հավատացած զինվորներին կոտորելն է, չի կատարի: Ո՞ր ցեղը դրանից հետո իրեն կվտարահան սեփական ճակատագիրը, եթե նա իր ձեռքերը թաթախի այդքան զինվորների արյան մեջ: 6. Ոչ մեկին չպետք է պատժել անխոհեմ խորհրդի համար, քանի որ ոչ ոք այլևս չի համարձակվի խորհուրդներ տալ, եթե դա կապված լինի վտանգի հետ: 2է՞ որ իրենք էլ ամեն օր կանչվում են իր մոտ խորհրդակցութիւն և

հայտնում տարբեր կարծիքներ, մինչդեռ նա ավելի հավատարիմ չէ համարում նրան, ով տալիս է ավելի խելացի խորհուրդ: 7. Այսպիսով, նա հրամայեց հայանել հուշներին, որ շնորհակալութիւն է հայտնում նրանց համակրանքի համար, սակայն եթե ինքը սկսի նահանջել, ապա ստիպված կլինի, անկասկած, իր թագավորութիւնը հանձնել թշնամուն: Պատերազմի ելքը կախված է գինվորական փառքից, իսկ նրա մասին, ով նահանջում է, մտածում են, թե փախչում է: 8. Հազիվ թե պատերազմը ձգձգելու պատճառ գտնվի. մտտենում է ձմեռը, և նրա մեծաթիվ բանակի համար պարենը կարող է չբավարարել այն տեղերում, որոնք հերթականութեամբ ամայացրել էին թե՛ յուրայինները և թե՛ թշնամիները: 9. Եվ նույնիսկ, նախնիների սովորույթն էլ պահպանելով, նա չէր կարող մասնատել իր բանակը, քանի որ պարսիկները վճռական ճակատամարտին միշտ նետել են իրենց ողջ ուժերը: 10. Աստվածներն էլ վկա են, որ Ալեքսանդրը՝ նախկին ահարկու արքան, իսկ այժմ իր բացակայութեան ժամանակ գոռոզացած սին ինքնավստահութեամբ, իմանալով իր մտտենալու մասին, անխոհեմութիւնը փոխարինել է զգուշութեամբ և թաքնվել լեռնային կիրճերում, փոքրիկ գաղանիկի նման, որը լսելով անցորդի քայլերի ձայնը, թաքնվում է անտառի բնում: 11. Այժմ նա խաբում է իր զինվորներին՝ հիվանդ ձևանալով: Բայց ինքը՝ Գարեհիզը, նրան այլևս թույլ չի տա խուսափել ընդհարումից. այն նույն նեղ տեղում, ուր թաքնվել են վախկոտները, նա կկոտորի ճակատամարտից բոլոր խուսափողներին: Բայց նա շարժարացրեց այդ պարծենկոտ խոսքերը: 12. Այնուամենայնիվ, զինվորների մի փոքրիկ շտկատով ուղարկելով իր դրամը և ամենաթանկարժեք զանձները Գամակոս՝ Ասորիք, Գարեհիզ մնացածներին տարավ Կիլիկիա. նրա մայրը և կինը, համաձայն սովորույթի, հետևում էին բանակին, նրա շամուռնացած դուստրերն ու փոքրահասակ որդին հուշնպես ուղեկցում էին հորը: 13. Այնպես պատահեց, որ նույն գիշերն Ալեքսանդրը մոտեցավ Ասորիք տանող անցուղուն, իսկ Գարեհիզ՝ Ամանյան կոչվող դարպասին²⁷: 14. Պարսիկները չէին կասկածում, որ մակեդոնացիները լքել են իրենց գրաված Իսոսը, որովհետև նրանք բռնել էին մի քանի հիվանդների և վերավորների, որոնք չէին կարողացել հետևել զորքին: 15. Պալատականների հրահրումով նրանց բոլորի ձեռքերը կտրեցին ու այրեցին բարբարոսական դաժանութեամբ, և Գարեհիզ հրամայեց անցկացնել նրանց բանակատեղով, որպեսզի նրանք տեսնեն իր բա-

նակը և, բավարար չափով ծանոթանալով ամեն ինչին, պատմեն իրենց արքային տեսածի մասին: 16. Այնուհետև Գարեհը մեկնեց ճամբարից և անցավ Պինարոս գետը²³, մտադրություս ունենալով կրնկակոխ հետևել ենթադրվող փախստականներին: Սակայն նրանք, ում ձեռքերը կտրել էին, թափանցեցին մակեդոնացիների ճամբարը և հայտնեցին, որ նրանց հետևից, իրեն մատչելի ողջ արագությամբ, գալիս է Գարեհը, 17. Նրանց դժվարությամբ հավատացին, և այդ պատճառով Ալեքսանդրը հրամայեց հետախույզներին տեղեկանալ մերձծովյան շրջանում, արդյո՞ք ինքը Գարեհն է գալիս, թե, նրա զորավարներից որևէ մեկին տեսնելով, կարծի են, թե մոտենում է ողջ բանակը: 18. Բայց երբ հետախույզները վերադառնում էին, հեռվում արդեն բազմաթիվ մարդիկ երևացին: Հետո դաշտերում կրակներ վառվեցին, և թվում էր, որ ամեն ինչ կլանված է համատարած կրակով, քանի որ անկանոն ամբողջ բռնակիր անասունների մեծ քանակի պատճառով վրանները խփել էր ավելի լայնատարած, քան սովորաբար արվում էր: 19. Այնժամ Ալեքսանդրը հրամայեց իր մարդկանց՝ ճամբար խփել այն տեղում, որտեղ նրանք կանգնած էին, հրճվելով, որ իր բոլոր ազոթքներով ճակատամարտը տեղի կունենա հենց այդ կիրճերում: 20. Այնուամենայնիվ, ինչպես միշտ լինում է, երբ վրա հասավ սննդի պահանջը, նրա ստատիստները փոխվեց անհանգստություն: Նա երկուսուսու էր հենց այն ճակատագրից, որի ողորմածությամբ ինքն այդքան հաջողություններ էր ունեցել և, նրա բարերարությունների մասին խորհրդածություններից նա բնականաբար, սկսեց մտածել նրա փոփոխականություն մասին: Ըն՞ որ միայն մի գիշեր էր մնացել մինչև մեծ ընդհարման ավարտը: 21. Մյուս կողմից՝ նա իրեն համոզում էր, որ սպասվող պարզևն ավելի մեծ է, քան վտանգը, ու թեև հաստատ համոզված չէր, թե կհաղթի, բայց մի բան հայտնի էր, որ ինքը կզոհվի քաջարար և մեծ փառքով: 22. Այդ պատճառով նա հրամայեց զինվորներին լավ ուտել և երրորդ պահակահերթին²⁹ պատրաստ ու զինված լինել: Ինքը բարձրացավ բարձր լեռան գագաթը և բազմաթիվ ջահերի լույսի ներքո, նախնիների սովորությամբ համաձայն, զոհ մատուցեց աստվածներին՝ տեղի պահապաններին: 23. Զինվորներն էլ, նախապես զգուշացված և պատրաստ արշավանքի ու ճակատամարտի, հենց լսեցին երրորդ փողային ազդանշանը, առույգ շարժվեցին ըստ հրամանի և լուսարացին մտոնցան այն կիրճին, որը որոշված էր զբաղեցնել:

24. Առաջ ուղարկվածները զեկուցեցին, որ Գարեհը գտնվում է երեսուն ասպարեղ հեռավորություն վրա: Այնժամ Ալեքսանդրը հրամայեց զորքին կանգ առնել և, ինքն էլ զինվելով, շարեց այն ճակատամարտի համար: Սարսափած շինականները հայտնեցին Գարեհին թշնամու մասին: Սակայն նա չէր հավատում, որ իր հետապնդած փախստականները գալիս են իրեն ընդառաջ: 25. Այդ պատճառով նկատելի սարսափ պատեց բոլոր նրանց, ովքեր ավելի շատ ուզմեթի էին պատրաստվել, քան ճակատամարտի, և բոլորն էլ փութով սկսեցին զինվել: Սակայն ճամբարով վազողների իրարանցումը և իրենց ընկերներին կանչելը ավելի շատ սարսափ էր ներշնչում նրանց: 26. Ոմանք բարձրացան սարերը, սրպեղի այնտեղից տեսնեն մոտեցող թշնամուն, շատերը սանձում էին ձիերը: Անկանոն և միասնական հրամանատարություն չունեցող բանակը լիակատար խուճապի մատնվեց: 27. Սկզբում Գարեհը որոշեց իր ուժերի մի մասով զբաղեցնել լեռնագագաթները, որպեսզի շրջապատի թշնամուն առջևից և հետևից, իսկ այնտեղ, ուր ծովը պաշտպանում էր իր ձախ թևը, կովի նետի մնացած ուժերը և նեղի թշնամուն ամեն կողմից: 28. Բացի այդ նետածիգների ջոկատի հետ առաջ էին ուղարկվել քսան հազար հետևակայիններ, որպեսզի անցնելով երկու բանակների միջով հստող Պինարոս³⁰ գետը, զուրս գան մակեդոնացիներին դեմ հանդիման, եթե դա նրանց չհաջողվեր, ապա նրանք պետք է նահանջեին դեպի սարերը և ծածուկ անցնեին թշնամու թիկունքը: 29. Սակայն ճակատագիրը բոլոր հաշվարկներից ավելի հզոր է. նա իրենից վանեց այդ ձեռնտու պլանը: Ոմանք վախից չհամարձակվեցին կատարել հրամանը, մյուսներն էլ զուր էին փորձում այդ անել, քանի որ, որտեղ երբևրում են մասերը, փլվում է և ամբողջը:

IX. Գարեհի բանակը դասավորված էր հետևյալ ձևով. նաբարզանք հեծնազորով և մոտ քսան հազար պարսասիկավորներով ու նետածիգներով պահպանում էր աջ թևը: 2. Այնտեղ էր գտնվում նաև թիմոդեսը, երեսուն հազար վարձկան հույն հետևակայինների զլուխն անցած: Գա, անկասկած, զորքի ծաղիկն էր, իր ուժով հավասար մակեդոնական փաղանգին: 3. Ձախ թևում գտնվում էր թեսալացի Արիստոմեդեսը՝ քսան հազար բարբարոս հետևակայիններով: Պահեստում թողել էին ամենաազմատենչ ցեղերին: 4. Ինքը՝ արքան մտադրություն ուներ կովել հենց այդ թևում³¹ նրան ուղեկցում էին երեք հազար լավագույն հեծյալ (նրա

սովորական պահակախումբը) և քառասուն հազար հետևակային: 5. Նրանց հետևում էին վրկանցիների և մարերի հեծելազորերը, իսկ սրանց հետևում՝ մնացած ցեղերի հեծյալները՝ նրա աջ և ձախ կողմերից: Այս մարտաշարքի առջևում, ինչպես նկարագրվեց, կանգնած էին վեց հազար նիդակավորներ ու պարսատիկավորներ: 6. Ամբողջ նեղ տարածությունը, որտեղ հնարավոր էր ոտք դնել, լցված էր Դարեհի զորքով, որի մի թևը դեմ էր առել սարերին, մյուսը՝ ծովին: Դարեհի կնոջն ու մորը և մնացած կանանց տեղավորել էին կենտրոնում: 7. Ալեքսանդրը մակեդոնական բանակի ամենաուժեղ մասը՝ փաղանգը կանգնեցրել էր կենտրոնում: Նիկանորոսը՝ Պարմենիոնի որդին, պահպանում էր աջ թևը: Նրա կողքին կանգնած էին Քենոսը, Պերդիկոսը, Մեկևադրոսը, Պաղամեոսը և Ամինտոսը՝ ամեն մեկն իր զորքի գլուխն անցած: 8. Ծովի ափին հասնող ձախ թևում Կրատերոսը և Պարմենիոնն էին, սակայն Կրատերոսին հրամայված էր ենթարկվել Պարմենիոնին: Հեծելազորը շարված էր երկու թևերից՝ աջում՝ մակեդոնականը թեսալականի հետ և ձախում՝ պելոպոնեսյանը: 9. Այդ մարտաշարքի առջև Ալեքսանդրը տեղադրեց նետածիգների հետ խառնված պարսատիկավորներին. առջևից գնում էին թրակացիները և կրեոացիները՝ նույնպես թևավազներ... Սակայն նրանց դեմ, ում Դարեհն առաջ էր ուղարկել զրավելու լեռնաշղթան, Ալեքսանդրը շարեց Հունաստանից վերջերս բերված ագրիանացիներին: 10. Իսկ Պարմենիոնին նա հրամայեց հնարավորին շափ ձգել բանակը դեպի ծով, որպեսզի ավելի հեռու գտնվեն բարբարոսների զրաված լեռներից: 11. Սակայն բարբարոսները չհանդգնելով ոչ կովի բռնվել մոտեցող մակեդոնացիների հետ, ո՛չ էլ շրջապատել նրանց, երբ նրանք անցնում էին, փախան, հատկապես սարսափելով պարսատիկավորների տեսքից. և դա ուժեղացրեց Ալեքսանդրի զորքի թևը, որը վախենում էր վերևից սպասվող հարձակումից: 12. Մակեդոնացիները շարժվում էին շարքում 32-ական մարդ, քանի որ տեղանքի նեղությունը հնարավորություն չէր տալիս ավելի ծավալել շարքը: Սակայն հետզհետե լեռնային կիրճերը սկսեցին լայնանալ, տարածությունը մեծացավ, այնպես որ, ոչ միայն հետևակը կարողացավ հարձակվել ավելի լայն շարքով, այլև հեծելազորը՝ պահպանել նրան թևերից:

X. Երկու բանակներն էլ արդեն տեսնում էին միմյանց, թեև գտնվում էին նիդակի համար անհասանելի տարածություն վրա: Այնժամ առաջին շարքերի պարսիկները մի աններդաշնակ վայ-

քենի ճիշտ արձակեցին³²: 2. Մակեդոնացիներն էլ պատասխանեցին իրենց բանակին շհամապատասխանող աղաղակով, քանի որ նրանց պատասխանում էր լեռնազագաթներից ու խոր անտառներից եկող արձագանքը. չէ՞ որ մեզ շրջապատող ժայռերն ու թափուտները կրկնակի ուժով են արձագանքում իրենց ընկալած սմեն մի ձայն: 3. Ալեքսանդրը գնում էր դրոշների առջևից, անդադար ձեռքի շարժումով հետ պահելով իր մարդկանց, որպեսզի նրանք, զբաղված, արագ քայլերից շնչակտուր, կովի չնեղվեն ավիլորդ աքարալուներով: 4. Շրջանցելով շարքերը, նա դիմում էր ուղմիկներին տարբեր ճառերով՝ ամեն մեկի զգացմանը համապատասխան: Մակեդոնացիներին՝ նվրոպայի ալոքան պատերազմներում հաղթողներին, որոնք այստեղ էին եկել ոչ միայն Ալեքսանդրի, այլև իրենց կամքով, Ասիան և Արևելքի ամենահեռու երկրները գրավելու, նա հիշեցնում էր նրանց վաղեմի փառքի մասին: 5. Չէ՞ որ նրանք, որ անցել են ամբողջ աշխարհով Հերկուլեսի և հայր Լիբերոսի անցած ուղու սահմաններով, կհնազանդեցնեն ոչ միայն պարսիկներին, այլև մնացած բոլոր ժողովուրդներին. Բակտրիան և Հնդկաստանը կդառնան մակեդոնական գավառներ: Այն, ինչ նրանք այժմ տեսնում են, իրենց ավարի ամենափոքր մասն է. հաղթանակը նրանց առջև կբացի ամեն ինչ: 6. Նրանց վիճակված ճակատագիրը կլինի ոչ թե ապարդյուն ջանք էլիբիայի դառիվայր ժայռերի և Թրակիայի քարերի վրա, այլ ամբողջ Ասիան կդառնա նրանց ավարը: Նրանց համարյա պետք չեն դա թրեր. սարսափից դողացող սղջ թշնամական բանակը նրանք կարող են բշել վահաններով: 7. Նա վկայակոչեց իր հորը՝ Փիլիպոսին, աթենացիների հաղթողին, և հիշեցրեց զինվորներին, թե ինչպես է նվաճվել Բեռլտիան և հողին հավասարեցվել նրա հռչակավոր քաղաքը³³: Նա մեկ խոստում էր Գրանիկոս գետի մասին, մեկ էլ այն մասին, թե ինչքան շատ քաղաքներ են գրավել իրենք, կամ էլ հանձնվել հաղթողի ողորմածությունը, և հիշեցնում զինվորներին, որ հետևում մնացած ամեն ինչ հպատակեցրել են իրենք և որոնք դրված են իրենց ոտքերի առջև: 8. Դիմելով հույներին, նա հիշեցրեց, որ Հունաստանի դեմ պատերազմը սկսել են Պարսկաստանի ժողովուրդները, սկզբում Գարեհի հանդը գնությունը, ապա՝ Քսերքսեսի, որոնք իրենցից հող է ջուր էին պահանջում, որպեսզի հանձնվողներին լծողենն ո՛չ սեփական աղբյուրներից մի կում ջուր, ո՛չ էլ մի կտոր սովորական հաց: 9. Երկու անգամ ավերվել և այրվել են հունական տաճարները,

պաշարվել են քաղաքները և խախտվել են աստվածային ու մարդկային օրենքները: 10. Իլիրիացիներին և թրակացիներին էլ, որոնք վարժվել էին ապրել կողոպուտով, նա հրամայեց աչք պցել թշնամու բանակին, որը փալլփլում էր ոսկուց և ծիրանիից, բանակ, որը ոչ թե զենք էր կրում, այլ ավար: Թող նրանք տղամարդու նման խլին ոսկին այդ կանացիորեն թույլ ժողովուրդնե-րից և փոխանակեն իրենց մշտապես ցրտից ստուած մերկ ժայ-ռերը պարսիկների հարուստ դաշտերով ու մարգագետիններով: XI. Հակամարտ կողմերը արդեն մոտեցել էին միմյանց նի-զակի թոխլըի տարածության վրա, երբ պարսկական հեծելազորը կատաղորեն նետվեց հակառակորդի ձախ թևի վրա. Գարեհը ցան-կանում էր մարտի ելքը լուծել հեծելազորով. գտնելով, որ մակե-դոնական զորքի ամենաուժեղ մասը փաղանդն է, նա արդեն սկսեց շրջապատել Ալեքսանդրի աջ թևը: 2. Երբ մակեդոնացին նկատեց այդ, հրամայեց հեծելազորի երկու ջոկատներին մնալ լեռներում, իսկ մնացածներին վճռականորեն ուղղեց ճակատա-մարտի ամենավտանգավոր տեղը: 3. Հետո նա նախատամարտի գծից տարավ թեսալական հեծելազորը և հրամայեց նրա հրամանատարին յուրայինների հետևից կամացուկ անցնել դեպի Պարմենիոսը և անմիջապես կատարել այն, ինչ, ու վերջինս կհրա-մայի: 4. Միբճվելով պարսիկների ամենահոծ շարքերը, ամեն կողմից շրջապատված՝ մակեդոնացիները հերոսաբար պաշտ-պանվում էին, սակայն իրար գլխի կուտակված և իրար կիպ կանգնած, նրանք չէին կարողանում թափ հաղորդել դեմքին, և, միաժամանակ, նպատակակետին ուղարկված նիզակները իրար էին դիպչում և ընկնում էին այնպես, որ բռնը էին հասնում թշնա-մուն, հասցնելով նրանց թույլ և ոչ վտանգավոր հարվածներ, իսկ մեծ մասն առանց որևէ օգուտի ընկնում էր գետին³⁴: Ստիպված ձեռնամարտի անցնելով, զինվորները թրերն անհապաղ առան ձեռքները: 5. Այնժամ սկսվեց մեծ արյունահեղություն. երկու բանակները այնքան մոտ էին գտնվում միմյանց, որ վահանները զարկվում էին վահաններին, և թրերի շեղբերը ուղղակի թշնա-մու գեմքին էին իջնում: Ո՛չ թույլերը, ո՛չ էլ վախկոտները չէին կարող հեռանալ. նրանք կռվում էին ուս ուսի, ինչպես մենամար-տում, հաստատուն կանգնած էին մի տեղում և իրենց համար ճանապարհ էին բացում միայն հաղթանակով: 6. Չէ՞ որ նրանք առաջ էին շարժվում միայն գետին տապալելով թշնամուն: Բայց հոգնածները ստիպված էին կռվել նորանոր հակառակորդների

հետ, և վիրավորները հնարավորություն չունեին, ինչպես դա միշտ լինում է, հեռանալ կռվի դաշտից, քանի որ առջևից թշնամին էր նեղում, հետևից էլ յուրային զորքն էր վրա տալիս: 7. Ալեքսանդ-րը կռվում էր ոչ այնքան որպես զորավար, որքան որպես զինվոր, ջանալով փառքի հասնել Գարեհի սպանությանը, քանի որ Գա-րեհը կանգնած էր իր մարտակառքի վրա, հարկադրելով իր զին-վորներին պաշտպանել իրեն, իսկ թշնամիներին՝ հարձակվել իր վրա: 8. Դրա համար նրա եղբայր Օքսաթրը, տեսնելով, որ Ալեք-սանդրը նետվում է դեպի արքան, իր հրամանատարությունը տակ գանձող հեծելազորը կանգնեցրեց ուղղապի Իբրեհի մարտակառ-քի առև: Օքսաթրը աչքի էր ընկնում իր սպառազինությունում ու ֆիզիկական ուժով, քաջ էր ու ինչպես բռնը՝ հավատարիմ ար-բային: Նա հռչակվեց նաև այս ճակատամարտում. շափազանց անզույշ հարձակվողներին սպանում էր, մյուսներին՝ փախուստի մատնում: 9. Սակայն մակեդոնացիները, Ալեքսանդրի կողքին կանգնած, իրար քաջալերելով, նրա գլխավորությամբ, միբճվե-ցին պարսկական հեծելազորի մեջտեղը: Այդ ժամանակ թշնամու կոտորածը սկսեց իսկական ջարդի նմանվել: Գարեհի մարտա-կառքի շուրջը փռված էին նրա ամենապանծալի զորավարները, պատվով նահատակված իրենց արքայի աչքի առջև. նրանք բո-լորը պտուկած էին երեսնիվայր, քանի որ ընկել էին կռվելիս՝ կրծքից վիրավորված: 10. Նրանց մեջ ճանաչեցին Ատիդիային, Ռեոմիթրին և Նգիպտոսի կառավարիչ Սաբարին, մեծ բանակների հրամանատարներին. նրանց շուրջը անհայտ հեծ-լակները և հետևակայինների կույտեր էին: Մակեդոնացի-ներից էլ սպանվածներ կային, թեև ոչ շատ, բայց բազ այլեր: Ինքը՝ Ալեքսանդրը թրի հարվածով թևի վիրավոր-ված էր աջ ազդրից: 11. Գարեհի մարտակառքին լծված ձիերը, նիզակներով ծակծկված և ցավից կատաղած, պատրաստ արբա-յին մարտակառքից դուրս գցելու, փորձում էին ազատվել լծա-սարքից: Այնժամ նա վախենալով կենդանի ընկնել թշնամու ձեռ-րը, ցած թռավ մարտակառքից, անամոթաբար դեն նետելով ար-քայական նշանները, որպեսզի փախուստի ժամանակ դրանք չմատնեն իրեն, և նրան նստեցրին այդպիսի պարագայի համար նախապատրաստված ձիու վրա: 12. Այնժամ մնացածները ցի-րուցան եղան վախից և փախան, ով ուր կարող էր, դեն նետե-լով պաշտպանվելու համար հենց նոր վերցրած զենքերը: Այսպես խուճապը ստիպում է վախենալ նույնիսկ օգնության միջոցներից:

13. Պարմենիոնի ուղարկած հեծելազորը փախչողներին հետապնդում էր կրնկակոխ և պատահամբ փախուստը բուշոբին բերեց հենց նրա թևը: 14. Իսկ աչ թևում պարսիկները սաստիկ նեղել էին թեսալական հեծելազորին և մի ջոկատ արդեն ցրվել էր նրանց ճնշման տակ: Այդ ժամանակ թեսալացիները, ճարպկորեն շրջելով ձիերը, վերադառնում են մարտադաշտ և սկսում բարբարոսների մեծ ջարդը, որոնք այնքան համոզված էին հրենց հաղթանակում, որ արդեն ցրվել էին և խախտել իրենց շարքերը: 15. Պարսիկ հեծյալները և նրանց ձիերը հավասարաշափ ծանրաբեռնված էին երկաթե զրահներով և դժվարությամբ էին շարժվում այդ ճակատամարտում, որտեղ կարևորը արագությունն էր, այնպես որ թեսալացիները իրենց ձիերով շրջապատում էին նրանց և շատերին գերի վերցնում: 16. Երբ Ալեքսանդրին հայտնեցին այդ հաջողության մասին, նա, որ առաջ չէր համարձակվում հետապնդել բարբարոսներին, այժմ՝ հաղթելով երկու թևերում, սկսեց նեղել փախչողներին: 17. Արքային ուղեկցում էր հազարից ոչ ավելի հեծյալ, իսկ թշնամու հսկայական բանակը չդիմացավ: Սակայն ո՞վ է զորքը հաշվում հաղթանակի կամ փախուստի պահին: Պարսիկները ոչխարների նման փախում էին այդքան փոքրաթիվ թշնամուց, սակայն այն նույն վախը, որը ստիպում էր նրանց փախչել, այժմ կաշկանդում էր նրանց գործողությունները: 18. Իսկ հույները, որոնք կոզում էին Դարեհի կողմից Ամինտոսի գլխավորությամբ (նա Ալեքսանդրի զորավարն էր, իսկ այժմ դարձել էր դավաճան), խույս տվեցին, անջատվելով մյուսներից, սակայն դա փախուստ չէր: 19. Բարբարոսները փախչում էին տարբեր ուղղություններով. որն ուղիղ Պարսկաստան տանող ճանապարհով, որը զարտուղի ճանապարհներով դեպի լեռները և միայն իրենց հայտնի կիրճերը, և միայն քչերը՝ Դարեհի ճամբարը: 20. Բայց և որքան հնարավոր է ճոխ իրերով հարուստ այդ ճամբարը արդեն ներխուժեցին հաղթողները: Զինվորները հափշտակեցին մեծաքանակ ոսկի և արծաթ, ոչ թե սպառազինության, այլ պերճանքի առարկաներ, և քանի որ նրանք հավաքել էին ավելին, քան կարող էին տանել, ամենուր ճանապարհներին թափված էր ավելի քիչ արժեք ունեցող ուղղամար, որ ազահները ուղադրության չէին արժանացրել, քանի որ մյուս իրերը ավելի թանկարժեք էին: 21. Հասնելով կանանց, նրանց վրա չից պոկում էին զարդերը, և ինչքան ավելի հարուստ, այնքան ավելի վայրագորեն. բռնությունն ու հեշտանքը չէին խնայում և

նրանց մարմինները: 22. Ծամբարը լցվեց զանազան աղմուկազաղակով, ում ինչ ճակատագիր բաժին էր ընկել, և բաց չէր թողնված դաժանություն ցուցաբերելու ոչ մի հնարավորություն, քանի որ հաղթողների անսանձ կատաղությունը չէր խնայում ոչ տարիք, ոչ դաս: 23. Այդ ժամանակ կարելի էր իսկապես ականատես լինել ֆորտեմայի փոփոխականության օրինակի, քանզի նրանք, ովքեր առաջ զարգարում էին Դարեհի ճոխության և հաջողության առարկաներով լի վրանը, այժմ այն պահպանում էին Ալեքսանդրի համար, ասես նա նրա հին տերը լիներ: Զե՞ որ զինվորները ձեռք չտվին վրանին միայն ըստ այն սովորութի, որ պարտվածները դիմավորեն հաղթողներին արքայական վրանում: 24. Բայց բոլորի հայացքները և ընդհանուր ուշադրությունը գրավեցին Դարեհի գերված մայրը և կինը. առաջինը հարգանքի զգացում էր առաջացնում, երկրորդը՝ զարմացում իր զեղեցկության, որը չէր մթազնել նույնիսկ իր այս նոր վիճակում: Նա գրկել էր զեռ վեց տարեկան շարձած որդուն, ծնված այնպիսի երջանիկ ճակատագրի համար, որը հենց նոր կորցրեց նրա հայրը: 25. Իսկ տատիկի կրծքին հպվել էին երկու մեծ աղջիկներ՝ նրա թոռները, վշտից ճնշված ոչ այնքան իրենց, ինչքան նրա համար: Նրանց շուրջը կանգնած էր աղնվատոհմ կանանց մի ամբոխ՝ արձակված մազերով, պատառոտված հագուստներով, մոռացած իրենց նախկին արժանապատվության մասին, իրենց թագուհիներին ու տիրուհիներին մեծարող իրական տիտղոսներով, որոնք այժմ կորցրել էին իրենց նշանակությունը: 26. Իսկ նրանք, մոռացած իրենց զժբախտությունը, հարց ու փորձ էին անում, թե որ թեում է Դարեհը, ինչպես ավարտվեց ճակատամարտը. նրանք իրենց գերուհիներ չէին համարում մինչ Դարեհը ողջ էր: Իսկ նա հաճախակի փոխելով ձիերը, փախչում էր և արդեն շատ հեռու էր գտնվում: 27. Այս ճակատամարտում սպանվել էին հարյուր հազար պարսիկ հետևակայիններ և տասը հազար հեծյալներ: Ալեքսանդրի կողմից կային 504 վիրավորներ, զոհվել էին ընդամենը երեսուներեկու հետևակայիններ և 150 հեծյալներ³⁵: Այդքան հեշտությամբ ձեռք բերվեց այդ մեծ հաղթանակը:

XII. Արքան, Դարեհին հետապնդելուց հոգնած, երբ մարեց նրան հասնելու հույսը և վրա հասավ գիշերը, ուղևորվեց քիչ առաջ իր զինվորների դրաված ճամբարը: 2. Այստեղ նա հրամայեց հրավիրել իր ամենամոտ ընկերներին, քանի որ աղբրի վրայի քերժվածքը չէր խանգարում նրան մասնակցել խնջույքին:

Բայց շուտով, ըստ արևելյան սովորույթի, ճիշտ ու կոծով ողբալի աղաղակներ լավեցին հարեան վրանից և անհանդատացրին խնջույթի մասնակիցներին: 3. Իսկ արքայի վրանը պահպանող կոհորտան, զգուշանալով որևէ անկարգությունից, սկսեց զինվել: 4. Այդ անսպասելի տագնապի պատճառն այն էր, որ Գարեհի մայրը և կինը, գերված ազնվագարմ կանանց հետ, աղաղակներով ու լացուկոծով ողբում էին, խնչպես իրենք էին կարծում, սպանված Գարեհին: 5. Պատահամար կանանց վրանի մոտ հայտնված մի գերի ներթինի ինչ-որ մեկի ձեռքին տեսել էր Գարեհի թիկնոցը, որը Գարեհը դեն էր նետել փախուստի պահին, որպեսզի չճանաչվի, խնչպես այդ մասին ասվեց վերևում: Ենթադրելով, թե թիկնոցը հանված է մեռած Գարեհի վրայից, նա էլ բերել էր այդ կեղծ լուրը: 6. Ասում են, Ալեքսանդրը, լսելով կանանց այդ մոլորություն մասին, արտասովել է Գարեհի ճակատագրի և նրա հանդեպ ընտանիքի ունեցած սիրո համար: 7. Սկզբում նա հրամայեց պարսկերենին տիրապետող Միթրենին, որը հանձնել էր Սարգեսը, գնալ և մխիթարել կանանց, բայց հետո երկուշերով, որ դավաճանի տեսքը ավելի կսաստկացնի գերուհիներից, ցավն ու ցատումը, նա ուղարկեց իր մերձավորներից Լեոնատոսին հայտնելու կանանց, որ նրանք սխալմամբ ողբում են կենդանի մարդուն: Լեոնատոսը մի քանի զինվորականների հետ մտավ կանանց վրանը և հրամայեց հայտնել նրանց, որ ինքն ուղարկված է արքայի կողմից: 8. Սակայն վրանի մոտ գտնվող մարդիկ, տեսնելով զինված ռազմիկների, կառնեցին, որ իրենց տիրուհիների վերջը եկել է, և ներս վազեցին վրան, գոչելով, թե զինվորները զալիս են գերուհիներին սպանելու: 9. Կանայք չէին կարող խուզնդոտել դրան, բայց և չէին հանդգնում թույլ տալ ներս մտնել եկամներին և լուսվյալ սպասում էին հաղթողի կամքին: 10. Լեոնատոսը, երկար ժամանակ ներս մտնելու հրավերքի սպասելուց հետո, թողեց իր ուղեկիցներին մուտքի մոտ, և քանի որ ոչ ոք չէր համարձակվում դուրս գալ նրա դեմ, ինքը մտավ վրանը: Այդ քայլը ահաբեկեց կանանց: Նրանց թվում էր, թե Լեոնատոսը ներխուժել է իրենց վրանը և ոչ թե մտել հրավերով: 11. Այդ պատճառով Գարեհի մայրը և կինը, ընկնելով Լեոնատոսի ոտքերը, սկսեցին աղաչել նրան թույլատրել, մինչև իրենց սպանելը, թաղել Գարեհի աճյուռը իրենց սովորույթներով³⁶: Նրանք, իբր, պատրաստ են ընդունել մահը այն բանից հետո, երբ վերջին պարտքը կհատուցեն արքային: 12. Լեոնատոսն

ասաց նրանց, որ Գարեհը ողջ է, որ նրանց ոչ ոք ձեռք չի տա և նրանք առաջվա պես թագուհիներ կլինեն և կպահպանեն իրենց արժանապատվության բոլոր նշանները: Միայն այդ ժամանակ Գարեհի մայրը թույլ տվեց ոտքի կանգնեցնել իրեն: 13. Հաջորդ օրն Ալեքսանդրը պատվով թաղեց իրենց զինվորների գտնված դիակները, հրամայեց նման հարգանք մատուցել նաև ազնվագարմ պարսիկներին և, Գարեհի մորը հնարավորություն ընձեռեց թաղել իրենց երկրի սովորույթների համաձայն, նրանց, ում նա ցանկանում է: 14. Գարեհի մայրը կարգադրեց թաղել իր մոտիկ բարեկամներից մի քանիսին, նոր իրազրությունը համապատասխան, գտնելով, որ պարսիկների թաղման սովորական ճոխ ծիսակատարությունները տեղին չեն, երբ հաղթողներն իրենց ընկերների աճյուռը այրում են առանց որևէ ճոխության: 15. Եվ այժմ իր վերջին պարտքը տալով զոհվածների աճյուռին, Ալեքսանդրն ուղարկեց տեղեկացնելու գերուհիներին, որ ինքը զալիս է նրանց մոտ և, ազատ արձակելով իրեն ուղեկցողներին, վրան մտավ Հեփեստիոնեսի հետ: 16. Դա արքայի ղեկավարից ամենաօրինակն էր, որը նրա հետ էր մեծացել, գիտեր նրա բոլոր գաղտնիքները, ուրիշներից ավելի շատ իրավունք ուներ խորհուրդներ տալու արքային: Սակայն այդ իրավունքից նա օգտվում էր այնպես, որ թվում էր, թե իբր նա այդ անում է արքայի կամքով, ոչ թե անձնական հավակնությունով: Արքայի տարեկիցը լինելով, նա ավելի բարձրահասակ էր: 17. Դրա համար էլ թագուհիները նրան արքայի տեղն ընդունելով՝ իրենց սովորույթի համաձայն իրենց հնազանդությունը նրան արտահայտեցին: Երբ գերված ներքինիներից մի քանիսը ցույց տվեցին, թե ով է Ալեքսանդրը, Միսիգամբիսն ընկավ նրա ոտքերը, ներողություն խնդրելով այն բանի համար, որ չի ճանաչել արքային, որին նախկինում երբեք չի տեսել: Արքան՝ բռնելով նրա ձեռքը, օգնեց նրան ոտքի ելնել և ասաց. «Դու չես սխալվել, մայր. այս մարդն էլ Ալեքսանդր է»³⁷: 18. Ես հակված եմ կարծելու, որ եթե նա պահպաներ իր հոգու այդ համեստությունը մինչև կյանքի վերջը, դա նրան ավելի երջանկություն կբերեր, քան այն հաղթական երթը, որի ժամանակ նա, նմանվելով հայր իրերոսին, անցավ որպես հաղթող բոլոր երկրներով՝ Հելլեսպոնոսից մինչև օվկիանոս³⁸: 19. Այնժամ նա, իհարկե, կկարողանար իր մեջ զսպել իր անհաղթահարելի արատները, ցասումն ու հպարտությունը, չէր սկսի սպանել ընկերներին խնջույքների ժամանակ և, իր հետ միասին

այդքան ժողովուրդներ հպատակեցրած, ուղղմական գործում նշանավոր մարդկանց անխտիր չէր դատապարտի մահվան: 20. Այն ժամանակ հաջողութունը դեռ չէր մթազնել նրա ողին. սկզբում հաջողութունը ընդունելով շափազանց համեստորեն և խելացիորեն, վերջում նա շղիմացավ դրա մեծությանը: 21. Նա այն ժամանակ իրեն այնպես էր պահում, որ իր զսպվածություններ և գթասրտություններ գերադանցեց բոլոր նախորդ արքաներին: Զարմանահրաշ գեղեցկություն ունեցող արքայական աղջիկներին նա այնպիսի հարգանքով էր վերաբերվում, ասես իր արյունակից բույրերը լինեին: 22. Դարեհի կնոջը, որի գեղեցկության հետ չէր կարող մրցել այն ժամանակների որեէ կին, ոչ միայն ինքը չէր նեղացնում, այլև հող էր տանում, որ որեէ մեկը չհամարձակվի ձեռք տալ գերուհուն: 23. Նա հրամայեց վերադարձնել կանանց նրանց բոլոր թանկարժեք զարդերը և նրանք, ինչպես և նախկինում, ոչ մի բանի կարիք չէին զգում, բացի ազատությունից: 24. Այնժամ Սիսիգամբիսն ասաց. «Արքա, դու արժանի ես նրան, որ քեզ համար աղոթենք, այնպես, ինչպես աղոթում էինք մեր Դարեհի համար, քանի որ դու գերադանցեցիր այդքան մեծ արքային ոչ միայն երջանկությամբ, այլև արդարությամբ: 25. Դու ինձ մայր և թաղուհի ես անվանում, իսկ ես ինձ համարում եմ միայն թո աղախինը: Ես կարող եմ բարձրանալ իմ նախկին դիրքին և կարող եմ հաղթահարել ներկայի ծանրությունը, բայց քեզ համար կարևոր է, որ մեզ հետ թո վերաբերմունքով դու փառաբանվես ավելի շատ գթասրտությամբ, քան դաժանությամբ»: 26. Ալեքսանդրը, սրբտապնդելով կանանց, գրկեց Դարեհի որդուն, և երեխան, բնավ չվախենալով տղամարդուց, որին առաջին անգամ էր տեսնում, փաթաթվեց Ալեքսանդրի վզին: Երեխայի դյուրահավատությունից զգացված, արքան ասաց Հեփեստիոնեսին. «Ինչպես կցանկանայի, որ Դարեհը գեթ մի քիչ այսպիսի բնավորություն ունենար»: 27. Այս խոսքերով դուրս գալով վրանից, Ալեքսանդրը Պինարոս գետի ափին երեք զոհասեղան կանգնեցրեց՝ Յուպիտերին, Հերկուլեսին և Միներվային, և մեկնեց Ասորիք, նախապես Դամասկոս ուղարկելով Պարմենիոնին, որտեղ գտնվում էր արքայի դանձարանը.

XIII. Իսկ Պարմենիոնը, տեղեկանալով, որ Դարեհի սատրապը իրենից առաջ է ընկել և իր մարդկանց փոքրաթիվ լինելը կարող է առաջացնել հակառակորդի արհամարհանքը, որուհեց օգնական ուժեր կանչել: 2. Սակայն Պարմենիոնի ուղարկած հե-

տախտույդների ձեռքը պատահամբ մի մարդացի ընկավ: Երբ նրան բերեցին Պարմենիոնի մոտ, նա նամակ հանձնեց, որն Ալեքսանդրին էր ուղարկել Դամասկոսի կառավարիչը, և ավելացրեց, թե չի կասկածում, որ կառավարիչը Ալեքսանդրին կհանձնի արքայի բոլոր գանձերը և դրամը: 3. Պարմենիոնը հրամայեց մարդացուն կալանքի տակ վերցնել, բացեց նամակը, որտեղ գրված էր, որ Ալեքսանդրը շտապի իր զորավարներից մեկին ուղարկել ոչ մեծ մի ջոկատով, որպեսզի նա կաբողանա հանձնել նրան այն, ինչ Դարեհը հանձնարարել էր իրեն պահպանել: Տեղեկանալով, թե ինչում է բանը, Պարմենիոնը մի քանի ուղեկիցներով մարդացուն ուղարկեց հետ՝ դավաճանի մոտ: Ծանապարհին մարդացին դուրս պրծավ պահակների ձեռքից և մինչև լուսարաց հասավ Դամասկոս: 4. Դա շատ անհանգստացրեց Պարմենիոնին, որը զգուշանում էր դարանից և չէր համարձակվում գնալ անձանթ ճանապարհով, առանց ուղեկցորդի: Սակայն, հավատալով իր արքայի բախտին, նա հրամայեց բռնել մի քանի տեղաբնակների, որպեսզի նրանք ցույց տան ճանապարհը: Շուտափույթ ուղեկցորդներ գտնվեցին, և նա չորրորդ օրը ժամանեց քաղաք, որտեղ կառավարին արդեն երկյուղում էր, որ իրեն չեն վստահել: 5. Իբր քաղաքի ամբողջությունների վրա հույս չդնելով, կառավարիչը կարգադրել էր մինչև արևածագը քաղաքից դուրս բերել արքայի սղ զրամը, որը պարսիկները գանձ էին անվանում, և ամենաթանկարժեք իրերը. նա ձևացնում էր, թե փախուստի է պատրաստվում, իսկ իրականում մտադրություն ուներ հանձնել գանձերը թնշամուն որպես ավար: 6. Երբ նա լքեց քաղաքը, նրան հետևում էին հազարավոր մարդիկ և կանայք. ամբոխ, որը կարող էր կարեկցանք առաջացնել յուրաքանչյուրի մոտ, բացի այն մարդուց, որի հավատարմությանն էր վստահված ալո ամբողջը: Որպեսզի իր դավաճանության դիրք բարձրացնի, կառավարիչը պատրաստվում էր թշնամուն հանձնել ցանկացած դրամից առավել արժեքավոր ավար՝ աղնվատոհմ մարդկանց, Դարեհի զորավարների կանանց ու երեխաներին, և, բացի այդ հոնական քաղաքների պատվիրակներին, որոնց Դարեհը թողել էր դավաճանի մոտ որպես ամենամանավտանգ վայրում: 7. Պարսիկները իրենց ուսերի վրա ծանրություններ տանող մարդկանց անվանում են «գանգաբներ»: Այս անգամ այդ մարդիկ շղիմացան ձյանը և դրան հետևած բուրին, երբ

ցրտից կոշտացած գետինը սառցակալել էր, նրանք իրենց վրա գցեցին ոսկեգօծ ծիրանի հագուստները, որոնք տանում էին գրամի հետ միասին, և ոչ ոք չհամարձակվեց կանգնեցնել նրանց, բանի որ Գարեհի ճակատագիրը պատել էր նրա սարսափից նույնիսկ ամենացածր դիրք ունեցող մարդկանց: 8. Նրանք Պարմենիոնին բանակ թվացին, որին շպետը է արհամարհեր. նա իր մարդկանց քաջալերում էր սակավ, բայց լավազանց ծանրակշիռ խոսքերով, ասես իսկական ճակատամարտից առաջ, և հրամայում նրանց, ասպանդակելով ձիերը, անսպասելի հարձակվել թշնամու վրա: 9. Սակայն բեռնակիրները, նետելով իրենց բեռը, սարսափահար փախչում են. այդ պատճառով էլ նրանց ուղեկցող սպառազեն զինվորները սկսեցին գնն նետել զենքը և թաքնվել իրենց հայտնի թաքստոցներում: 10. Պրեֆեկտը³⁹, ձեացնելով, թե ինքն էլ սարսափի մեջ է, համընդհանուր խուճապ առաջացրեց: Դաշտերով մեկ ցրված էին արքայի հարստութունները, հսկա բանակի ծախքերը հողալու գրամը, շատ ու շատ ազնվազարմ մարդկանց և աղնվատոհմիկ կանանց հագուստներն ու զարդերը, ոսկյա ամանեղենը, ոսկյա լծասարքը, արքայական պերճութամբ զարդարված վրանները, տերերի լքած և մեծաքանակ հարստութուններով բեռնված սալիերը: Տխուր պատկեր նույնիսկ կուղաղի համար, եթե որևէ բան խոչընդոտում է նրա ընշասիրտության բավարարմանը: 11. Այդքան տարիների ընթացքում հավաքված այդ անհավատալի և անսպառ հարստութունը այժմ մասամբ բոկոտված էր մացառուտների ճյուղերից, մասամբ տրորված ցեխի մեջ. թալանչիները չէին հասցնում ավարը հավաքել: 12. Վերջապես հասան նրանց, ովքեր առաջինն էին փախել. շատ կանաչք իրենց երեխաներին քարշ էին տալիս իրենց հետևից: Նրանց մեջ կրեք աղջիկներ կային՝ Օքոսի դուստրերը, որ թագավորել էր մինչև Գարեհը: Հանգամանքների փոփոխման պատճառով նրանք կորցրել էին բարձր դիրքը որպես իրենց հոր դուստրեր, սակայն ճակատագիրը կամեցել էր նրանց ավելի դաժան բախտի արժանացնել: 13. Այդ ամբողջի մեջ էր վերը նշված Օքոսի կինը, ինչպես նաև Օքոսաթրի՝ Գարեհի՝ եղբոր դուստրը, և արքայի մերձավորների գլխավորի՝ Արտարպի կինը՝ իր Իլիոնեո անունով որդու հետ, 14. Գերվեցին նաև Փանարազի, որին Գարեհը հանձնարարել էր ծովափի գլխավոր հրամանատարութունը, կինը՝ իր որդու հետ, Մենտորի երեք դուստրի-

րը և փառապանծ զորավար Մեմնոնի կինը և որդին. հաղիվ թե որևէ պալատականի ընտանիք խույս տվեց նման տխուր ճակատագրից: 15. Նրանց հետ գերի վերցվեցին սպարտացիներ և աթենացիներ, որոնք, խախտելով դաշնակիցների պարտավորութունները, միացել էին պարսիկներին՝ Արխսագիտոնեսը, Գրոնիդեսը և Իփիկրատեսը՝ ծագումով և ազգեցություն մասովոր աթենացիները, և իրենց հայրենիքում հանրաճանաչ սպարտացիներ Պավսիպոսը և Օնոմաստորիդեսը Կալիկրատիդեսի և Մոնիմոսի հետ միասին: 16. Հնդամենը բռնագրավվեց 2600 տաղանդ հատված դրամ, իսկ արծաթի իրերը հինգ հարյուր ֆունտ քաշ ունեին: Բացի դրանից գերվել էին երեսուն հազար մարդ և սալլեր՝ քաշող յոթ հազար բեռնակիր անասուններով: 17. Այնուամենայնիվ, աստվածները այդքան մեծ ճակատագրի տեր դավաճանին շուտով արժանի պատիժ ուղարկեցին: Նրա գործակիցներից մեկը, անկասկած, արքայի հանդեպ ունեցած իր հավատարմության զգացումից, նույնիսկ նրա ապերջանիկ ճակատագրի պահին, Գարեհին բերեց սպանված դավաճանի գլուխը. չնչին փոխհատուցում դավաճանվածին: Այդպես Գարեհը վրեժխնդիր եղավ իր թշնամուց և դրա հետ միասին համոզվեց, որ ոչ բոլորի մեջ է մարել իր մեծութան հիշատակը:



ԳԻՐՔ IV

Իսկ Գարեհնը, զեռ վերջերս այդքան մեծաքանակ զորքի տեր արքան, որ ճակատամարտի էր ելել մարտակառքով ոչ այնքան հաղթանակ շահելու, որքան այն տոնելու, այժմ փրկություն էր փնտրում՝ փախչելով դաշտերով, որոնք զեռ վերջերս լեփ-լեցուն էին նրա անհամար զինվորներով, իսկ այժմ ամայացվել և լայնարձակ անապատ էին դարձել: 2. Քչերըն էին հետևում նրան, քանի որ ոչ բոլոր պարսիկներն էին փախչում նույն ճանապարհով և ձիերի պակասի պատճառով չէին հասցնում հետևել արքային, որը փոխում էր իր ձիերը: 3. Վերջապես արքան ժամանեց Օնքի, որտեղ նրան սպասում էին շորս հազար հույներ¹. նրանց հետ միասին նա շտապեց զեպի Սփրատ, ենթադրելով, որ իրեն կպատկանի միայն այն, ինչ նա հասցնի զավթել արագ շարժվելու ընթացքում:

4. Իսկ Ալեքսանդրը հրամայեց Պարմենիոսին աշխուրջ հսկել Դամասկոսում նրա վերցրած գերիներին ու ավարը և նրան նշանակեց Ասորիքի կառավարիչ, որն անվանվում է Կելսիքի: 5. Ասորիները, ռազմական պարտություններից դուռև ոչ լրիվ ջլատված, նոր իշխանությունը վերաբերվում էին արհամարհանքով. սակայն նրանք արագորեն հնազանդվելով, սկսեցին խոնարհաբար կատարել նրա հրամանները: 6. Արքային հանձնվեց նաև Արադոս կղզին: Այդ ժամանակ այդ կղզու արքա Ստրատոնեսը իշխում էր նաև ծովափի և մերձծովյան հողերի վրա: նրա հնազանդությունը հավաստիանալուց հետո, արքան իր բանակատեղին առաջ շարժեց զեպի Մարաթոս:

7. Այնտեղ նրան է հանձնվում Գարեհի նամակը, որը խիստ

զայրացնում է նրան իր ամբարտաձան տոնով. նրան հատկապես բարկացնում էր, որ Գարեհն իրեն վերագրել էր արքայական տ'տղոս, բայց չէր ավելացրել այն Ալեքսանդրի անվանը: 8. նա ավելի շուտ պահանջում էր, քան խնդրում, որ Ալեքսանդրը իրենից ընդունելով այնքան զուժար, ինչքան նա կարող էր հավաքել ամբողջ Մակեդոնիայից, վերադարձնի իրեն մորը, կնոջը և զավակներին և, եթե ցանկանում է, կովի իր հետ թագավորության համար հավասար պայմաններով: 9. Եթե, իբր, նա ի վիճակի է խելացի խորհուրդ ընդունել, ապա թող բավարարվի հայրական թագավորությունով և չքվի ուրիշի թագավորությունից, թող դառնա դաշնակից և բարեկամ. դրանով նա համաձայն է ինչպես ինքը հավատարմության երդում տա, այնպես էլ ընդունի այն Ալեքսանդրից:

10. Իր պատասխանը Ալեքսանդրը գրեց հետևյալ տոնով. «Ալեքսանդր արքան՝ Գարեհին: Գարեհը, որի անունը դու ընդունել ես², լիովին սնանկացրել է Հելլենսպոնտոսի ափը դբազևցնող հույներին և հույների հոնիական գաղութները, և հետո, պատերազմ հայտարարելով Մակեդոնիային և Հունաստանին, մեծ զորքով անցել ծովի մյուս ափը: 11. Հետո եկավ Քսեքքեսը՝ կոպիա բարրաբոսների հերոսակախմբերով մեր երկիրը նվաճելու, Պարտվելով ծովային ճակատամարտում՝ նա, այնուհանդերձ, Հունաստանում թողեց Մարդոնիոսին, որպեսզի իր բացակայության ժամանակ ավերի քաղաքները և այրի դաշտերը: 12. Ո՞ւմ հայտնի չէ, որ իմ ծնողը՝ Փիլիպոսը, սպանվել է այն մարդկանց ձեռքով, որոնց դուք գայթակղել եք մեծ գումարներ խոստանալով: Գուր անաղնիվ պատերազմներ եք հրահրում և, թեև զենք ունեք, այնուհանդերձ, դրամով ձեր թշնամիների գլուխներն եք գնում, ինչպես և դու, նման մի բանակի արքադ, վերջերս ցանկանում էիր իմ դեմ մարդասպան վարձել հազար տաղանդով: 13. Ես պատերազմից եմ պաշտպանվում և ոչ թե հրահրում այն: Աստվածներն էլ են սատար լինում արդարացի կողմին: Ասիայի մեծ մասը ես ենթարկել եմ իմ իշխանությունը, քեզ էլ անձամբ հաղթել մարտում: Եվ թեև շարժեր քեզ, որը նույնիսկ չի ընդունում պատերազմելու իմ իրավունքը, ինձանից որևէ ներողամտության արժանանալ, այնուհանդերձ խոստանում եմ քեզ, որ եթե դու ներկայանաս ինձ խոնարհությամբ, ապա առանց փրկագնի կստանաս և՛ մորդ, և՛ կնոջդ, և՛ երեխաներիդ: Ես կարողանում եմ հաղթել և խնայել պարտվածներին: 14. Իսկ

և թե դու վախենում ես ինձ վատահերոց, ապա ես քեզ խոսք եմ տալիս, որ դու կլինես անվտանգութիւն մեջ, Բացի այդ, երբ ինձ նամակ գրելիս լինես, շմոռանաս, որ դու գրում ես ոչ թե պարզապէս արքայի, այլ քո արքային»:

15. Այդ նամակը հանձնելու համար ուղարկվեց Թերսիպեսը: Ինքը՝ Ալեքսանդրը զնաց Փյունիկիա, որտեղ նրա ողորմածութեանը հանձնվեց Բիբլոս քաղաքը. այնտեղից նա մոտեցավ Սիրոսին, որը հայտնի էր իր հնութեամբ և հիմնադիրների փառքով:

16. Այնտեղ թագավորում էր Գարեհի հովանավորած Սարատոնեսը³, և քանի որ նա քաղաքը հանձնեց Ալեքսանդրի գլխավորութեանը ոչ այնքան իր կամքով, որքան ժողովրդի, նրան արքայական իշխանութեան համար անարժան ճանաչեցին, և Հեփեստիոնեսին հանձնարարվեց այնտեղ արջա կարգել սիրոսացիներից նրան, որին նա կհամարի ամենաարժանը այդ բարձր աստիճանի համար: 17. Հեփեստիոնեսն այնտեղ ընկերներ ուներ, որոնք իրենց պատանի համաքաղաքացիների շրջանում լավ համբավ էին վայելում. երբ նրանց հնարավորութիւն տրվեց ստանձնել արքայական իշխանութիւնը, նրանց ասացին, որ հայրերի սովորութեամբ այդ բարձր աստիճանը կարող է ստանալ միայն արքայական տոհմի ժառանգը: 18. Հեփեստիոնեսը ապշել էր այդ մարդկանց ոգու մեծութեամբ, որոնք մերժում էին այն, ինչին ուրիշները ձգտում էին հրով ու սրով, և ասաց. «Փա՛ռք ձեր անձնվիրութեանը. դուք առաջինը հասկացաք, թե որքան ավելի բարձր արժանիք է արքայական իշխանութեանից հրաժարվելը, քան այն ընդունելը: Այդ դեպքում ցույց տվեք արքայական տոհմից որևէ մեկին, ով չի մոռանա, որ արքայական տիրույթը ստացել է ձեզանից: 19. Իսկ նրանք, տեսնելով, որ շատերը նման հույսեր ունեն, և շափից ավելի ձգտելով արքայական իշխանութեան, քծնում են Ալեքսանդրի ընկերներին, որոշեցին, որ ոմն Արդալոնիմոսից ավելի արժանի մարդ չկա. նա արքայական տոհմի հետ հեռավոր կապ ուներ, սակայն աղքատութեան պատճառով ինքն էր մշակում իր համեստ մերձքաղաքային այգին: 20. Նրա աղքատութեան պատճառը, ինչպես և մեծամասնութեան, նրա ազնվութեանն էր. զբաղված ամենօրյա աշխատանքով, նա չէր էլ լսել ամբողջ Ասիան ցնցող շտապումը:

21. Նշված անձինք, արքայական զարգարուն հագուստները ձեռքներին, անմիջապէս մտան այգին, որը Արդալոնիմոսը մաքրում էր շորացած խոտերից: 22. Այնժամ նրանցից մեկը ողջու-

նելով նրան որպէս արքայի, ասաց. «Դու պետք է փոխես քո շապիկը այն հագուստի հետ, ինչ տեսնում ես իմ ձեռքում: Լվա երկարատև աշխատանքից կեղտոտված մարմինդ, համակվիր արքայական ոգով, սակայն քեզ լիովին արժանի նոր տիրութեամբ պահպանիր համեստութեանդ: Երբ նստած կլինես արքայական գահին որպէս բոլոր քաղաքացիների կշանքի ու մահվան դատավոր, շմոռանաս քո դիրքը և քո այն հատկութեանները, որոնց շնորհիվ դու տիրանում ես թագավորութեանը»⁴: 23. Այդ ամենը Արդալոնիմոսին ինչ-որ երազ էր թվում: Հետո նա հարցրեց, արդո՞ք նրանք չեն խելագարվել, որ այդքան դաժանաբար ծիծաղում են իր վրա. բայց երբ նրա վրայից, որը դեռ չէր հավատում, հանեցին շապիկը և հագցրին ծիրանիով և ոսկով զարդարված հագուստը և ներկա գտնվողները հավատարմութեան երդում տվեցին, ապա նա, որպէս իսկական արքա, նույն ընկերակիցների ուղեկցութեամբ, մեկնեց պալատ:

24. Ինչպես սովորաբար լինում է, այդ լուրը տարածվեց քաղաքով մեկ. ոմանց մոտ այն համակրանք առաջացրեց, մյուսների մոտ՝ վրդովմունք. բոլոր հարուստները բողբոջում էին Ալեքսանդրի ընկերներին, որ Արդալոնիմոսը աղքատ և համեստ դիրքի տեր մարդ է: 25. Ալեքսանդրը հրամայեց իսկույն նրան կանչել իր մոտ և երկար նայեց նրան: «Քո արտաքինը,— ասաց նա,— չի հակասում քո տոհմի փառքին, սակայն ինձ հետաքրքրում է, արդո՞ք դու համբերատարութեամբ ես տարել քո աղքատութեանը»: Այն ժամանակ Արդալոնիմոսը պատասխանեց նրան. «Լավ կլինի, եթե ես նույնպիսի հաստատակամութեամբ կարողանամ տանել արքայական իշխանութեանը: Իմ ցանկութեանները ես միշտ բավարարել եմ ձեռքերիս աշխատանքով. ոչինչ չունենալով, ես երբեք ոչ մի բանի կարիք չեմ ունեցել»:

26. Ալեքսանդրը Արդալոնիմոսի այս խոսքերից համոզվեց, որ նա հոգու բարձր հատկութեաններ ունի, այսպիսով, Արդալոնիմոսին հանձնեց ոչ միայն Ստրատոնեսի ողջ արքայական ունեցվածքը, այլև շատ բաներ պարսկական ավարից, բացի այդ, նրա իշխանութեանը ենթարկեց նաև քաղաքամերձ մարզը:

27. Այդ ընթացքում Ամինտոսը, որի մասին ասել էին, թե Ալեքսանդրից անցել էր պարսիկների կողմը, փրկվեց, զորքից իրեն հեռու չորս հազար հույների հետ փախչելով Տրիպոլիս: Այնտեղից իր զինվորներին նալ նստեցրեց և զնաց Կիպրոս կղզի, ենթադրելով, որ ներկա իրադրութեանում ամեն մեկը ան-

վիճելի իրավունք կունենա միայն նրա վրա, ինչ ինքը գրավի նա որոշեց գրավել Եգիպտոսը. թշնամի լինելով թե՛ մեկ, թե՛ մյուս արքային, նա մշտապես ենթարկվում էր փոփոխվող իրավիճակին: 28. Նա իր զինվորներին հաջողութան հույս ներշնչեց և համոզեց, որ Եգիպտոսի պրետոր⁵ Սարաբը սպանված է մարտում, որ պարսկական զորքը մնացել է առանց առաջնորդի և թույլ է, որ եգիպտացիները միշտ էլ թշնամաբար են վերաբերվել պրետորներին և հույներին կընդունեն ոչ որպես թշնամիներ, այլ որպես բարեկամների: 29. Մայրահեղ կարիքը ստիպում էր նրանց փորձել ամեն ինչ, և քանի որ ճակատագիրը շիրականացրեց նրանց առաջին սպասելիքները, հաջորդներն ավելի հավաստի թվացին: Այսպիսով զինվորները գոչեցին. թող տանի իրենց, ուր որ ինքը գիտի: Գտնելով, որ անհրաժեշտ է օգտագործել զինվորների ոգևորությունը, նա թափանցում է նեղոսի գետաբերանը՝ Պելուզիում, ներկայացնելով իրեն որպես Գարեհի զեսուպան: 30. Տիրանալով Պելուզիումին, նա շարժեց իր զորքերը դեպի Մեմփիս: Տեղեկանալով այդ մասին, եգիպտացիները, դատարկամիտ, շատ ավելի հեղաշրջումների, քան կայուն կառավարմանը հակված մի ժողովուրդ, այնտեղ են վազում իրենց գյուղերից ու քաղաքներից պարսկական կայազորները ոչնչացնելու համար: Պարսիկները, թեև վախեցան, բայց Եգիպտոսը պահելու հույսը չկորցրեցին: 31. Ամինտոսը, ջարդելով նրանց մարտում, քչեց քաղաք, իսկ ինքը ճամբար խիչելով, իր հաղթողներին տարավ դաշտերը թալանելու. թշնամու ողջ ունեցվածքը թալանեց, ասես այն տրամադրված էր բոլորին, ով ցանկանար: 32. Այսպիսով, Մազակը, թեև գիտեր, որ իր մարդիկ ընկճված են անհաջող ճակատամարտից, այնուհանդերձ, ցույց տալով, թե ինչպես են թշնամիները թրե զալիս ամենուր հաղթողի անհազությամբ, զրդեց նրանց քաղաքից զրոհով դուրս գալ և վերադարձնել կորսված ունեցվածքը: 33. Այդ խորհուրդը և՛ խելամիտ ստացվեց իր մտահղացմամբ, և՛ հատկապես հաջողակ՝ իր կերով. թշնամիներից բոլորը՝ մինչև վերջին մարդը, իրենց առաջնորդի հետ կոտորվեցին: Այսպես, Ամինտոսը իր կյանքով վարձահատույց եղավ երկու արքաների առջև ունեցած իր մեղքի համար. նա ավելի հավատարմություն չցուցաբերեց նրա հանդեպ, ում մոտ փախել էր, քան նրա՝ ում լքել էր:

34. Գարեհի զորավարները, որոնք կենդանի էին մնացել Իսոսի ճակատամարտից հետո, փախստականներին հետևող ողջ

զորքով, միացնելով դրան նաև կապազովկիացի և պափլագոնցի երիտասարդներին, փորձում էին իրենց վերագարձնել Լիդիան: 35. Լիդիայի զուլս կանգնած էր Ալեքսանդրի պրետորներից Անտիզոնոսը: Թեև նա իր կայազորներից շատ զինվորներ էր ուղարկել արքային, այնուհանդերձ, արհամարհելով բարբարոսներին, իր մարդկանց ճակատամարտի տարավ: Կողմերի ճակատագիրը այդ մրցությունում նույնը եղավ՝ պարսիկները երեք ճակատամարտից հետո ցիրուցան եղան տարբեր տեղեր: 36. Այդ նույն ժամանակ մակեդոնացիների Հունաստանից կանչված նավատորմըն էլ հաղթեց Արիստոմենոսին, որին Դարեհը ուղարկել էր հետ գրավելու Հելլեսպոնտոսի ափերը. նրա բոլոր նավերը կամ ջրասույզ արվեցին, կամ գերվեցին: 37. Պարսկական նավատորմի հրամանատար Փաոնարազը Միլետ քաղաքի բնակիչներից դրամ վերցնելով և Քիոս քաղաքը մտցնելով իր կայազորը, հարյուր նավով հարձակվեց Անդրոս և Սիփնոս կղզիների վրա: Նա գրավեց այդ կղզիները իր կայազորներով և դրամական տուգանք նշանակեց: 38. Մեծ թափ ընդունած պատերազմը, որը վարում էին Եվրոպայի և Ասիայի ամենահզոր արքաները ամբողջ աշխարհին տիրանալու նպատակով, ստիպեց զենք վերցնել նաև Հունաստանին և Կրետե կղզուն: 39. Սպարտանական Ագեսոս արքան, ութ հազար հույն հավաքելով, որոնք Կիլիկիայից փախչելով տուն էին վերագառնում, մտադրվեց պատերազմել Մակեդոնիայի պրեֆեկտ Անտիպատրոսի դեմ: 40. Կրետացիները, որոնք միանում էին մե՛կ այս, մե՛կ այն կողմին, նվաճվում էին մե՛կ սպարտանական զորքերի, մե՛կ էլ մակեդոնական զորքերի կողմից: Մակայն այս հակամարտ կողմերի ընդհարումներն ավելի թեթև ընույթ ունեին, քանի որ ճակատագիրը պատրաստում էր մի ուրիշ՝ գլխավոր ճակատամարտ, որից էլ կախված էր մնացած բոլորի կերը:

II. Արդեն ողջ Ասորիքը, ինչպես նաև Փյունիկիան, բացառությամբ Տյուրոս քաղաքի, դանվում էին մակեդոնացիների իշխանության տակ. արքան ճամբար էր խփել մայրցամաքում, որից Տյուրոս քաղաքը բաժանում էր մի ոչ լայն նեղուց: 2. Տյուրոսը, որն իր մեծությամբ և փառքով աչքի էր ընկնում Ասորիքի և Փյունիկիայի բոլոր քաղաքների մեջ, թվում էր, ավելի հանույթով կդառնար Ալեքսանդրի դաշնակիցը, քան կճանաչեր նրա իշխանությունը. դրա համար էլ քաղաքի ղեսպանները նրան որպես նվեր առաջարկեցին ոսկե պսակ, մինչ այդ նրան առատո-

րեն և հյուրընկալորեն քաղաքից պարեն տրամադրելով: 3. Արքան հրամայեց ընդունել նրանցից նվերները ինչպես բարեկամներին և, բարյացակամորեն դիմելով նրանց, ասաց, որ ցանկանում է զոհ մատուցել Հերկուլեսին⁶, որը հատկապես հարգված է տյուրոսցիների մոտ: Մակեդոնական արքաները իբր հավատում են, թե իրենց տոհմը սերում է այդ աստծուց, իսկ իրեն այդ զոհարարությունը կատարել պատվիրել է պատգամախոսը: 4. Գեսպանները պատասխանեցին նրան, որ քաղաքի սահմաններից դուրս կա Հերկուլեսի մի տաճար Պալետյուրոս կոչված տեղում, և այնտեղ արքան կարող է սահմանված կարգով զոհ մատուցել աստծուն: 5. Այստեղ Ալեքսանդրը զսպեց իր զայրույթը, որին նա սովորաբար շէր կարողանում տիրապետել: Ճնշման դուրս, — բացականչեց նա, — հույս զնելով, որ կղզու վրա եք, արհամարհո՞ւմ եք մեր ցամաքային զորքը: Ես շուտով ցույց կտամ ձեզ, որ դուք ապրում եք մայրցամաքի վրա: Գիտցեք, կա՞մ դուք ներս կթողնեք ինձ քաղաք, կա՞մ ես այն կվերցնեմ ուժով: 6. Այս խոսքերով նա ազատ արձակեց ղեսպաններին: Ընկերները սկսեցին համոզել տյուրոսցիներին, որ նրանք կամավոր ազատ մուտք տան արքային ղեպի քաղաք, որին ընդունել են թե Ասորիքում և թե Փյունիկայում: Բայց սրանք, հույսները զնելով տեղի անառիկության վրա, որոշեցին դիմանալ պաշարմանը:

7. Եվ իրոք, քաղաքը բաժանված էր մայրցամաքից չորս ասպարեզ լայնությամբ նեղուցով: Եվ քանի որ այն ուղղված էր աֆրիկյան⁷ բամու կողմը, ապա հաճախ նրա ափերին բաց ծովից մեծ ալիքներ էին զարնվում: 8. Այդ պատճառով, հենց այդ ֆամին, որքան ոչ այլ բան, խոչընդոտում էր այն աշխատանքներին, որոնցով մակեդոնացիները մտադրվել էին միացնել կղզին մայրցամաքին: 2⁸ որ մեծ ժայռաբեկորները դժվարությամբ կարելի է տեղափոխել նույնիսկ հանդարտ ծովի պայմաններում, իսկ աֆրիկյան քամին, վեր հանելով ալիքները, շուտ էր տալիս ամեն ինչ, ինչ բերվում էր շինության համար. ասենք, չկա էլ որեէ բավականաչափ ամուր բան, որ ալիքները չբանդեն, որոնք մեկ մտնում էին ամրացված մասերի արանքները, մեկ էլ ավելի ուժեղ բամու ժամանակ անցնում ամբողջ շինության վրայով: 9. Բացի այդ կար մի ոչ պակաս կարևոր դժվարություն և՛ պատերի և աշտարակների մոտ ծովը շատ խոր էր. պաշարման մեքենաները կարող էին գործել միայն հեռվից՝ նավերի վրայից, պատերի վրա աստիճաններ զնելն անհնար էր. ծովի վրա իջնող

ուղղածիզ պատը փակում էր հետևակի ճանապարհը. արքան նավեր չունեիր. ասենք եթե նույնիսկ նավերով մոտենար, նրանք իրենց անկայունության պատճառով հեշտությամբ հետ կմղվեին նետողական զենքերով: 10. Այդ ամենն էլ ամբաստնում էր տյուրոսցիներին հաստատակամությունը, թեև նրանց ուժերը չնչին էին: Այդ ժամանակ էրանց մոտ ժամանեցին ղեսպաններ կարթագենցիներից՝ նախնիների սովորությամբ սուրբ տաբալիցների առնակատարության համար. չէ՞ որ Կարթագենը հիմնել են տյուրոսցիները, որոնք և մեծարվում էին այնտեղ որպես նախնիներ: 11. Եվ այսպես, փյունիկացիները սկսեցին համոզել տյուրոսցիներին արիությամբ դիմանալ պաշարմանը, անհապաղ օգնություն խոստանալով Կարթագենից, քանի որ այն ժամանակներում ծովը զգալի չափով զտնվում էր փյունիկյան նավատորմի իշխանության ներքո:

12. Եվ այսպես, որոշելով պատերազմել, տյուրոսցիները պարիսպների ու աշտարակների վրա նետման արկեր են տեղադրում, զենք բաժանում երիտասարդներին, քաղաքում եղած բազմաթիվ արհեստավորներին տեղաբաշխում են զենքերի արհեստանոցներում: Ամեն ինչ գործի դրվեց պատերազմի համար. երկաթյա կեռածողեր էին պատրաստվում, որոնք կոչվում էին հարպագոսներ, պաշարողների կառույցների վրա նետելու համար, ազոսներ⁸ և այլ հարմարանքներ, որոնք ստեղծված էին քաղաքի պաշտպանության համար: 13. Սակայն, երբ երկաթը, որը պիտի կոփվեր, գրին զնդանի վրա, և փուքը սկսեց բորբոսել կրակը, ուղղակի բոցի տակից, ասում են, արյան առվակներ հոսեցին. այդ նախանշանակը տյուրոսցիները մեկնաբանեցին որպես սպառնալիք մակեդոնացիներին: 14. Այդպես և մակեդոնացիների մոտ, երբ ինչ-որ մի զինվոր հասցը կտրել է, հացից ծորող արյան կաթիլներ են նկատել. արքան վախեցել է, սակայն ամենափորձառու կանխագուշակ Արիստանդրը ասել է, որ եթե արյունը դոսից հոսեր, ապա դա դժբախտության նշան կլիներ մակեդոնացիների համար և հակառակը, ներսից հոսող արյունը նախագուշակում է քաղաքի կործանումը, որն արքան որոշել է պաշարել: 15. Քանի որ Ալեքսանդրի նավատորմը հեռու էր և նա հասկանում էր, որ երկարատև պաշարումը իր համար մեծ խոչընդոտ կհանդիսանա ուրիշ գործերի իրագործման համար, նա լրաբերներ ուղարկեց քաղաք, տյուրոսցիներին խաղաղության հակելու համար, բայց տյուրոսցիները, խախտելով բոլոր

ժողովուրդների օրենքը, սպանեցին նրանց և ծովը նետեցին: Արքան, վրդովված իր մարդկանց նման ստոր սպանութեամբ, որոշեց պաշարել քաղաքը:

16. Բայց սկզբից անհրաժեշտ էր պատենշ կառուցել քաղաքը մայրցամաքին միացնելու համար: Զինվորները հուսալքվեցին, երբ տեսան խոր ծովը, որը հնարավոր էր քարերով լցնել թերևս միայն աստվածների օգնությամբ: Որտե՞ղ գտնել նման ժայռաբեկորներ, նման հսկայական ծառեր, Անհրաժեշտ էր ամայացնել ամբողջ շրջաններ, որպեսզի լցվեր այդ տարածությունը, իսկ նեղուցը մշտապես ալեկոծված է, և ինչքան նեղանում է կղզու և մայրցամաքի միջև տարածությունը, այնքան նեղուցն ավելի փոթորկոտ է դառնում: 17. Իսկ արքան, որն արդեն սովորել էր ազդել զինվորների գիտակցության վրա, հայտարարում է նրանց, որ երազում իրեն է այցելել Հերկուլեսը՝ առաջ պարզած ձեռքով, և Ալեքսանդրը տեսել է, թե ինչպես ինքը քաղաք է մտել նրա առաջնորդությամբ և նրա բացած ճանապարհով: Հենց այդտեղ էլ արքան հայտնեց ղեկավարների սպանության մասին ի խախտումն ժողովուրդների օրենքի, և որ Տյուրոսը միակ քաղաքն է, որ համարձակվել է կասեցնել հազթողի երթը: 18. Այնուհետև բոլոր հրամանատարներին հրաման է տրվում ազդել իրենց զինվորների վրա, և երբ բոլորը բավարար չափով պատրաստվեցին, ձեռնամուխ եղան կառուցմանը: Մեծ քանակությամբ քար կար հենց այդտեղ. դրանք հին Տյուրոսի ավերակներն էին. լաստերի և աշտարակների համար անտառանյութ էր բերվում լիբանանյան լեռներից⁹: 19. Շինարարությունը ծովի արդեն հատակից բարձրացել էր բլրի շափ, բայց դեռ չէր հասել ջրի մակերեսին, և ինչքան պատենշը հեռանում էր ավից, այնքան ավելի շատ էր խոր ծովը կլանում այն, ինչ լցվում էր նրա մեջ: 20. Իսկ տյուրոսցիները, մոտենալով փոքրիկ նավերով, ծաղրում էին նրանց, թե իրենց զենքով փառաբանված զինվորները մեջքենքի վրա ծանրություններ են կրում բեռնակիր անասունների նման: Նրանք հարցնում էին զինվորներին. մի՞թե Ալեքսանդրը նեպտունից ավելի ուժեղ է: Սակայն այդ ծաղրածանակը միայն բարձրացնում էր զինվորների ոգին:

21. Բայց ահա պատենշը սկսեց կամաց-կամաց դուրս գալ ջրից, ավելացավ նրա լայնությունը և այն մոտենում էր քաղաքին: Այնժամ տյուրոսցիները, տեսնելով կառուցի շափերը, որի մեծանալը նրանք մինչ այդ չէին նկատել, սկսեցին փոքրիկ

նավերով պտտվել դեռ չավարտված շինության շուրջը և աշխատանքի վայրում գտնվող զինվորների վրա նիզակներ նետել: 22. Երբ նրանցից շատերը վիրավորվում էին առանց հատուցման, իսկ տյուրոսցիների նավակները դուրսվեցին մի շրջում էին և մոտենում աշխատանքների վայրին, զինվորները ստիպված թողնում էին աշխատանքը, որպեսզի պաշտպանվեն: 23. Դրա համար արքան հրամայեց պաշտպանել կառուցողներին վահաններով և լաստերով՝ նետերից նրանց պատսպարելու համար. պատենշի ծայրին երկու աշտարակ կառուցեց, որոնցից կարելի էր նետահարել մոտեցող նավակները, 24. Սակայն տյուրոսցիները իրենց նավերով մոտենում էին ավիին, թաքնվելով հակառակորդից, իջնում նավերից և սպանում քար կրողներին: Լիբանանյան լեռներում էլ վայրի արաբները¹⁰, հարձակվելով առանձին մակեդոնացիների վրա, նրանցից երեսուն հոգու սպանեցին, իսկ ոմանց էլ՝ թվով ավելի քիչ, գերի վերցրեցին:

III. Այս հանգամանքը հարկադրեց Ալեքսանդրին մասնատել զորքը, և, որպեսզի շփվա, որ ինքն անօգուտ զբաղված է մի քաղաքով, նա պաշարման զեկավար թողեց Պերդիկոսին և Կրատերոսին, իսկ ինքը, ռազմիկների ջոկատով, առանց գումակի ուղեվորդեց Արաբիա: 2. Այդ ընթացքում տյուրոսցիները մի մեծ նավի նավախելը լցրին ավազով ու քարերով, որպեսզի նրա քիթը չափազանց վեր բարձրանա, և նավը, ձյութապատելով ու ծծումբ քսելով, թիերով առաջ քշեցին: Երբ նրա առագաստները լցվեցին ուժեղ քամուց, նա արագությամբ մոտեցավ պատենշին. այդ ժամանակ թիավարները այրեցին նրա քիթը, իսկ իրենք ցատկեցին այդ նպատակով նավին հետևող նավակների վրա: 3. Հրավառ նավը սկսեց հրդեհը տարածել մեծ հեռավորության վրա, և, մինչ նրա դեմ հնարավոր էր միջոցներ ձեռք առնել, այն ընդգրկեց աշտարակները և պատենշի ծայրի այլ շինությունները: 4. Իսկ նավաստիները, ցատկելով փոքրիկ նավակները, այդ ամենին ավելացրին ջահեր և այն ամենը, ինչը կարող էր կրակի կերակուր լինել: Եվ ահա կրակը կլանեց ոչ միայն մակեդոնացիների աշտարակների հիմքերը, այլև վերին հարկաշարքերը, այնպես որ աշտարակների վրա կանգնած մարդկանց մի մասը զոհվում էր, մի մասը՝ դեռ նետելով զենքը, ուղղակի ծովը նետվում: 5. Տյուրոսցիներն ավելի շատ ցանկանում էին նրանց կենդանի բռնել և ոչ թե սպանել: Նրանք ջանում էին վիրավորել լողացողներին ձեռքերը քարերով կամ ձողափատերով, մինչև նրանք

տանջահար էին լինում և նրանց հնարավոր էր դառնում անարգել բռնել և նաւակը նետել: 6. Եւ ոչ միայն հրդեհը ավերեց շինությունները, այլև նույն օրը պատահականորեն սաստկացած քամին բարձրացրեց ողջ ծովը իր ընդերքից և նետեց պատնեշի վրա. ալիքների հաճախակի հարվածներից ցրիվ եկան կառուցի բոլորը ամրակները, և ջուրը, հոսելով քարերի վրայով՝ ամբողջ պատնեշը մեջտեղից ճեղքեց: 7. Երբ քարերի կույտերը, որոնց վրա պահվում էր հողի շերտը, ջրով ողողեցին, ողջ դանդաժը փլվեց և գնաց ծովի հատակը, այնպես որ Արարիայից վերագարձած Ալեքսանդրը նույնիսկ պատնեշի հետքը չգտավ: 8. Այստեղ, ինչպես սովորաբար լինում է անհաջողությունների դեպքում, ամեն մեկը մեղքը սկսեց գցել մյուսի վրա, այն դեպքում, երբ ավելի ճիշտ կլիներ, որ բոլորը գանգատվեին ծովի խստությունից: Արքան սկսեց նոր պատնեշ կառուցել, բայց ոչ թե կողքով դեպի քամին, այլ ուղղակի լայնքով, որը պատնեշ էր դառնում այլ աշխատանքների համար, ասես ծածկվելով դրանով: Նա ավելացրեց նաև պատնեշի լայնութունը, որպեսզի պատնեշի մեջտեղում դրված աշտարակներն անհասանելի լինեին նիզակների համար: 9. Ծովն էին նետում հսկա ճյուղերով ամբողջական ծառեր, վրայից քարեր լցնում, հետո կրկին ծառեր էին նետում և հող լցնում. այդ ամենի վրա ծառերի և քարերի նոր շերտեր էին դնում և այդպիսով ողջ շինությունը ամրացնում էին ասես անընդհատ հանգույցներով: Բայց և տյուրոսցիներն էլ ջանասիրությամբ անում էին ամեն հնարավոր բան այդ աշխատանքները դժվարացնելու համար: 10. Ամենաշատը նրանց օգնում էր հետևյալը. նրանք, թաքնվելով հակառակորդից, աննկատելիորեն սահելով ջրի վրայով, ընդհուպ մոտենում էին պատնեշին, կեռերով բռնում էին ջրից դուրս եկած ծառերի ճյուղերից, ձգում դեպի իրենց. եթե դրանք շարժվում էին, ապա ծովի խորքն էին քաշվում բազմաթիվ այլ շինանյութեր: Հետո առանց դժվարության ծանրությունից ազատված ծառերի բներն ալ ճյուղերը քարշ էին տալիս, իսկ հիմքի քանդակելու հետ միասին փլվում էր և ամբողջ շինությունը, որը հենված էր ծառերի տարածված ճյուղերի վրա: 11. Սակայն արդեն հուսալքված Ալեքսանդրի մոտ, որը չգիտեր, շարունակե՞ր արդյոք պաշարումը թե հեռանար Կիպրոս կղզուց, եկավ նավատորմը, նրա հետ նաև վերջերս Ասիա ժամանած Կլեանդրոսը, հույն զինվորների հետ: Հարյուր իննսուն նավերից բաղկացած նավատորմը Ալեքսանդրը

բաժանեց երկու թևերի. ձախ թևի հրամանատարն էր Կիպրոսի Պյութագորաս արքան Կրատերոսի հետ միասին, աջ թևում արքայական կվինկվեբեմալի¹¹ վրա ինքը՝ Ալեքսանդրն էր: 12. Տյուրոսցիները թեև նավատորմ ունեին, սակայն չհամարձակվեցին ծովամարտի մեջ մտնել. նրանք պարիսպների առջև միայն երեք նավ թողեցին, որոնց վրա հարձակվեց արքան և խորտակեց:

13. Հաջորդ օրը նավատորմը քաղաքի պարիսպներին մոտեցնելով, արքան սկսեց ամեն կողմից ցնցել պարիսպները նետողական զենքերով և հատկապես ճեղքող մեքենաներով, բայց տյուրոսցիները ճեղքվածքները հապճեպորեն լցնում էին քարերով. բոլոր կողմերից նրանք սկսեցին կառուցել նաև երկրորդ՝ ներքին պարիսպը, որպեսզի պատսպարվեն նրա հետևյալում, եթե արտաքինը շղիմանա պաշարմանը: 14. Սակայն փորձանքը նրանց զլխին գալիս էր երկու կողմից. պատնեշը հասավ նիզակի թոխքին մոտ հեռավորության և նավատորմը շրջապատեց նրանց պարիսպները. նրանց վրա թափվեցին թե՛ ցամաքային և թե՛ ծովային ուժերը: Մակեդոնացիները կապում էին իրենց կվադրիրեմաները¹² երկուական, այնպես, որ նրանց բթերը իրար էին դիպում, իսկ նավախելերը հնարավորին շափ իրարից հեռանում: 15. Նավախելերի միջև ընկած ողջ տարածությունը նրանք լցնում էին նավի պարանասարքով և դրանց կապված ամուր գերաններով, որոնց վրա կամուրջ էին փռում, բավականին ամուր՝ զինվորների ծանրությունը պահելու համար: Այս ձևով սարքավորված կվադրիրեմաները նրանք մոտեցնում էին քաղաքին և դրանցից, ապահով դիրքից, նետահարում էին պարիսպների պահապաններին, քանի որ իրենք պաշտպանված էին քթամասերով: 16. Խոր գլշեր էր, և արքան նավատորմին հրաման է տալիս նշված ձևով շարված շրջապատել քաղաքը, և արդեն ամեն կողմից քաղաքին էին մոտենում նավերը, և տյուրոսցիները լրիվ հուսահատության մեջ ընկան, երբ հանկարծ սև ամպերը պատեցին ամբողջ երկիրը և թանձր խավարը ծածկեց լույսի մնացորդները: 17. Այնժամ անհանգիստ ծովը սկսեց վերելնել, հետո ուժեղացող քամուց բարձրացան ալիքները, և կապված նավերը սկսեցին զարկվել միմյանց. հետո էլ կվադրիրեմաները միացնող ամրակները սկսեցին պոկվել, տախտակամածի կամրջակները կոտրվեցին և ահավոր աղմուկով զինվորների հետ միասին խորտակվեցին ծովում: 18. Ալեկոծված ծովի

ժամանակ անհնար էր ղեկավարել կապված նավերը. զինվորները խանգարում էին նավաստիներին, թիավարները շփոթում էին թողնում զինվորներին գործել և, ինչպես հաճախ լինում է նման դեպքերում, փորձառու մարդիկ ենթարկվում էին անփորձներին. նավավարները նավերն իրենց սովոր ձևով վարելու փոխարեն մահվան ու սպառնալիքի ներքո կատարում էին ուրիշներ հրամանները: Վերջ ի վերջո թիկերով համառորեն ծեծվող ծովը տեղի տվեց նավաստիներին, ասե՛ս նրանից կորզեցին իր նավերը. նավերը ափ հասան, բայց նրանցից շատերը վնասվել էին:

19. Մոտավորապես այդ օրերին էլ երեսուն ղեկավարներ կկան կարթագնեցիներից, բայց նրանք պաշարվածներին ոչ այնքան օգուտ, որքան կարեկցանք բերեցին, քանի որ հայտարարեցին, թե փյունիկացիները ծանրաբեռնված են իրենց պատերազմով, որում նրանք պայքարում են ոչ թե առավելության հասնելու, այլ իրենց փրկության համար: 20. Այդ ժամանակներում Աֆրիկան¹³ ամայացրած սիրակուզցիները բանակատեղի էին դրել Կարթագենի պարիսպների մոտ: Սակայն տյուրոսցիները ոգով շնչվեցին, թեև զրկվեցին մեծ հույսերից. նրանք իրենց կանանց ու երեխաներին հանձնեցին, որ նրանց տանեն Կարթագեն և որպեսզի իրենք ավելի քաջաբար տանեն ցանկացած ճակատագիր, եթե իրենց համար ամենաթանկագինը իրենց հեռ իրենց վիճակված բախտը չի կիսելու: 21. Իսկ երբ քաղաքացիներից մեկը ժողովի ժամանակ հայտարարեց, որ երազում իրեն է հայտնվել հատկապես իրենց պաշտած Ապոլլոնը, որը լքելիս է եղել քաղաքը, և որ, իբր, մակեդոնացիների ծովում կառուցած պատենշը վերածվել է անտառուտ կիրճի, 22. ու թեև պատմողը քիչ վստահություն էր ներշնչում, այնուհանդերձ սարսափի ազդեցության ներքո բոլորը հակված էին հավատալու ամեն մի վատ բանի. դրա համար էլ նրանք ոսկե շղթայով կապկպեցին Ապոլլոնի արձանը և զամեցին Հերակլեսի զոհասեղանին, որին նրանք առաջներում նվիրել էին իրենց քաղաքը, կարծես այդ աստվածությունը կարող էր հետ պահել Ապոլլոնին: Մի ժամանակ փյունիկացիները Միրակուզացիք բերել էին այդ արձանը և տեղադրել իրենց նախահայրենիքում¹⁴ Տյուրոսում. ասենք, ձեռք բերված ուրիշ ավարներով էլ նրանք ոչ այնքան զարդարում էին Կարթագենը, որքան Տյուրոսը: 23. Նույնիսկ մարդիկ գտնվեցին, որոնք առաջարկում էին դիմել վաղուց արդեն շարվող զոհարերություններին, որոնք, ըստ իս, ամենևին

էլ հաճելի չէին աստվածներին, մասնավորապես ազատածին մոնոլի զոհարերումը Սատուրնին¹⁵: Ասում են, որ կարթագենցիները մինչև իրենց քաղաքի կործանումը¹⁶ կատարում էին այդ ավելի շուտ սրբապղծությունը, քան զոհարերությունը, որը կտակել էին իրենց քաղաքի հիմնադիրները: Եթե ավագանին, որի որոշմամբ են վճռվում նրանց բոլոր գործերը, չհակառակվեր, ապա բիրտ սնտրիապաշտությունը առավելություն կատանար մարդասիրության փոխարեն:

24. Այնուամենայնիվ ծայրահեղ կարիքը ցանկացած արվեստից էլ ուժեղ է, այն բացի պայքարի սովորական ձևերից, ցուցաբերեց և նորերը: Այսպես, պարսպին մոտեցող նավերի դեմ պայքարելու համար նրանք ամուր գերաններին կապում էին ազուավներ և երկաթյա ճանկերով թաթեր, որպեսզի նետողական զենքով դերանը արձակելուց և արագորեն ճոպանները թուլացնելուց հետո կեռերը նետեն նավի վրա: 25. Նույն գերաններից կախված կեռերը և մանգաղաձև կարթածողերը վնասում էին ինչպես ռազմիկներին, այնպես էլ նավերին: Բացի այդ նրանք ուժեղ կրակի վրա շիկացնում էին պղնձյա վահաններ, լցնում դրանք տաք ավազով և եռացող աղտոտություններով և հանկարծակի նետում պարիսպների վրայից: 26. Պաշարողներն ամենից շատ դրանից էին վախենում, քանի որ շիկացած ավազը թափանցում էր զրահի տակ, մարմնի վրա և այրում այն ամենը, ինչին դիպում էր, և հնարավոր չէր լինում ոչ մի ձևով այն թափալ: Մարդիկ նետում էին զենքերը և, քանի որ պաշտպանության ոչ մի միջոց չէր օգնում, անպաշտպան ենթարկվում էին ամեն անսակ հարվածների, իսկ գործիքներից նետված երկաթյա ճանկերն ու ազուավները բռնում էին նրանցից շատերին:

IV. Այստեղ արքան, ձանձրացած քիչ էր մնում դադարեցնել պաշարումը և ուղևորվել Եգիպտոս: Զե՞ որ մեծ արագությունը անցնելով ամբողջ Փոքր Ասիան, նա հապաղում էր մի քաղաքի պարսպի առջև և ձեռքից բաց թողնում կարևոր շատ հարցեր լուծելու ժամանակը: 2. Սակայն խայտառակություն համարելով թե՛ առանց արդյունքի հասնելու հեռանալը և թե՛ հետագա հապաղումը, նա գտնում էր, որ եթե թողնի Տյուրոսը որպես իր անհաջողության վկայություն, ապա իր մասին տարածված փառքը կկորցնի իր կշիռը, իսկ բարի համբավի շնորհիվ նա հասնում էր ավելի մեծ արդյունքների, քան զենքի միջոցով: Եվ այսպես, որպեսզի ոչինչ առանց փորձելու չմնա, նա հրամայեց քաղաքին

մոտեցնել ավելի մեծ թվով նավեր և դրանց վրա նստեցնել լավագույն զինվորներին: 3. Հանկարծ մի անսովոր շափի ծովային հրեշ,¹⁷ մեջքը դուրս հանած ջրից, մոտեցավ մակեդոնացիների կառուցած պատնեշին, իր հսկա մարմնով ճեղքելով ավիբները և երևում էր մե՛կ այս, մե՛կ մյուս կողմից, 4. այնուհետև պատնեշի եզրին սուզվելով ջրի մեջ, և, մեկ իր մեծ մասով երևալով ավիբների վրա, մեկ անհետանալով նրանց կատարների հետևում, ջրի երես ելավ քաղաքի ամրություններից ոչ հեռու: 5. Այդ հրեշի երևալը հաճելի էր թե մեկ, թե մյուս կողմին. մակեդոնացիները այնչու՞մ էին, որ նա ուղննշում է ապագա շինարարությունը, իսկ տյուրոսցիները կարծում էին, որ Նեպտունը վրեժխնդիր լինելով իր հանգիստը խանգարելու համար, կոշիւ է այդ հրեշին և որ շուտով, իհարկե, ամբողջ պատնեշը կփլվի: Ուրախանալով նման նախանշանով, նրանք սկսեցին խրախճանք անել և լավ հարբեցին. գինովցած՝ նրանք արևածագին նստեցին նավերը, զարդարելով դրանք ծաղկեպսակներով, ոչ միայն հաղթանակի հավատով լի, այլև այդ առթիւ իրար շնորհավորելով:

6. Պատահմամբ արքան կարդադրել էր նավատորմը տանել մյուս կողմը, ափի մոտ թողնելով երեսուն փոքր նավեր. նրանցից երկուսը տյուրոսցիները գրավեցին, մնացածներին էլ սաստիկ վախ պատճառեցին, մինչև որ Ալեքսանդրը լսելով իր մարդկանց ճիշդ, շտարավ նավատորմը այն ափը, որտեղից լավում էր աղմուկը: 7. Առաջինը մակեդոնացիներին օգնության հասավ մի կլիինկվերեմա՝ հատկապես արագաշարժը մյուսների մեջ, բայց հենց տյուրոսցիները տեսան այն, նրանց երկու նավեր նետվեցին նրա վրա երկու կողմերից. ամբողջ թափով եկող կլիինկվերեման մխրձվեց նրանցից մեկի մեջ իր քթով և այդպես նրան կասեցրեց: 8. Մյուսը, պահպանելով զործելու ազատությունը, աչքով ընթացքով սլանում էր դեպի կլիինկվերեմայի մյուս նավակողը, երբ, հանկարծ, երջանիկ պատահականությամբ Ալեքսանդրի նավատորմի ևս մեկ արիերմա այնպիսի ուժով դիպավ կլիինկվերեմային սպառնացող նավին, որ տյուրոսցի նավավարը նավախելից ծովն ընկավ: 9. Հետո մոտեցան և ավելի շատ մակեդոնական նավեր, նրանց վրա գտնվում էր և ինքը՝ արքան: Այդ ժամանակ տյուրոսցիները ուժ տվեցին թիկերին և մեծ դժվարությամբ ազատեցին իրենց նավը, որին ծակել էր կլիինկվերեման, որից հետո նրանց նավերը սլացան նավահանգիստ: Արքան հետապնդեց նրանց, սակայն հանգիստելով իր վրա քա-

ղաքի պարիսպներից արծակվող նետերին, չկարողացավ նրանց հետևից ներխուժել ներս: Թշնամու գրեթե բոլոր նավերը նա ընկզմեց կամ գրավեց:

10. Սրանից հետո զինվորներին երկու օր հանգիստ տրվեց: Հետո, հրամայելով քաղաքին մոտեցնել նավատորմը և պաշարման զենքերը, որպեսզի նեղեն վախեցած պաշարվածներին ամեն կողմից, ինքը, արքան բարձրացավ աշտարակի ամենամիջքը այնքան ավելի քաջությամբ, որքան մեծ էր վտանգը: 11. Իր արքայական նշաններով և փայլուն հանդերձանքով նկատվելով, նա դարձավ նետերի գլխավոր թիրախը: Եվ նա դիտարժան քաջություն ցուցաբերեց. պարիսպների շատ պաշտպանների նա նիզակահարեց, մոտիկ գտնվողներից մի քանիսին սրախողխող արեց, զեն էր նետում թշնամիներին, նեղելով նրանց իր վահանով, քանի որ աշտարակը, որի վրա նա կանգնած էր, համարյա կայնում էր քաղաքի պարսպին: 12. Երբ խոյի հաճախակի հարվածների տակ քարի շարվածքը ջարդվեց և պաշտպանական ամրությունները փլվեցին, նավատորմը մտավ նավահանգիստ և մակեդոնացիների մի խումբ բարձրացավ թշնամու լքած աշտարակների վրա: Այն ժամանակ, տյուրոսցիները, որոնց գլխին ամեն կողմից այդքան դժբախտություններ էին թափվել, նետվեցին տաճարները, այնտեղ փնտրելով փրկություն, մյուսները փակվեցին իրենց տներում, իրենք իրենց համար ընտրելով կամավոր մահվան ձևը, ուրիշները նետվում էին թշնամիների վրա, որպեսզի չմեռնեն առանց վրեժխնդիր լինելու: 13. Նրանց մեծ մասը զբաղեցնում էին տանիքները և այնտեղից անցնողների վրա նետում քարեր և ուրիշ ինչ ընկնում էր ձեռքները: Ալեքսանդրը հրամայեց կոտորել բոլորին՝ բացի տաճարներում թաքնվածներից, և այրել քաղաքի բոլոր կառույցները: 14. Թեև այդ հրամանը հայտնվել էր մոնեմտիկների միջոցով, զինվածներից ոչ ոք աստվածներից փրկություն չէր հայցում. տաճարները լցվեցին կանանցով ու երեխաներով, տղամարդիկ կանգնած էին իրենց տների առջև՝ պատրաստ հակահարված տալու մոլեգին հաղթողին: 15. Շատերին փրկեցին մակեդոնացիների ջոկատներում գտնվող սիդոնցիները: Նրանք քաղաք մտան հաղթողների թվում, բայց հիշելով իրենց աղապակցական կապը տյուրոսցիների հետ (երկու քաղաքների հիմնադիրը համարվում է Ադենորը)¹⁸, նրանք փրկում էին շատերին, տանելով նրանց դեպի իրենց նավերը և ծածուկ փոխադրում Սիդոն: Այդպես հաղթողի վայրագությունից զաղտնի

ճանապարհով ազատվեց 15 հազար մարդ: 16. Այն մասին, թե ինչքան արյուն թափվեց, կարելի է դատել նրանից, որ քաղաքի պաշտպանական ամրությունների ներսում մահապատժի ենթարկվեց 6 հազար զինվոր: 17. Հաղթողների համար տխուր տեսարանը նախապատրաստել էր արքայի կատաղությունը. երկու հազար մարդ, որոնց սպանելու համար դաժանությունը չբավարարեց, խաշվեցին ծովափին, մի երկար տարածության վրա: 18. Կարթագենյան զենսպաններին արքան խնայեց, սակայն Կարթագենին պատերազմ հայտարարեց, որը ծայրահեղ իրադրության պատճառով հետաձգվեց:

19. Տյուրոսը՝ մի քաղաք, որը արժանի է սերունդների հիշողությանը իր հնությունը ու ճակատագրի տարաբախտությունները, գրավվեց պաշարումը սկսելուց հետո չտվեց որդեգրելու: Այն հիմնադրել էր Ազեները և երկար ժամանակ իշխում էր ոչ միայն մոտակա ծովերում, այլև ամենուր, ուր մտնում էր նրա նավատորմը, և, եթե հավատանք չուրեքին, տյուրոսական ժողովուրդը կամ ինքն է հնարել գրեթե, կամ էլ առաջինը դարձել դրանց տարածողը¹⁹: 20. Նրա գաղութները տարածված էին համարյա ամբողջ աշխարհով՝ Կարթագենը՝ Աֆրիկայում, Թերեն՝ Բելոտրիայում, Հադիսը՝ օվկիանոսում: Ինձ թվում էր, որ նրանք իրենց այն ժամանակվա մեծաքանակ երիտասարդությունը բնակեցնելու համար ուրիշներին անձանոթ վայրեր էին ընտրում կամ այն նպատակով, որ նավարկելով բաց ծովում հաճախ այցելեին այդ տեղերը, կամ էլ նրանց հողագործները հաճախակի երկրաշարժերից տանջահար (այդ մասին նույնպես պատմվում էր), ստիպված լինեին զենքը ձեռքներին իրենց համար նոր գաղութներ փնտրել օտարության մեջ: 21. Այդ քաղաքը շատ անկումներ է ունեցել, որոնցից հետո կրկին վերածնվել է. այժմ էլ²⁰ հոռոմեական մարդասիրական տիրապետության պաշտպանության ներքո նա վայելում է երկարատև, համընդհանուր բարօրությանը նպաստող խաղաղություն:

V. Գրեթե այդ նույն օրերին Ալեքսանդրին հանձնվեց Դարեհի նամակը՝ վերջապես գրված որպես արքայի նախնորում էր Ալեքսանդրին ամուսնանալ իր Ստատիրա²¹ անունով դստեր հետ. որպես օժիտ նա տալիս էր Հելլեսպոնտոսի և Հալիսի միջև ընկած հողերը, ինքն էլ բավարարվում էր այդտեղից արևելք ընկած հողերով: 2. Եթե, իբր, Ալեքսանդրը տատանվում է ընդունել այն, ինչ իրեն առաջարկվում է, թող հիշի, որ երջանկությունը

նրաբ ժամանակ նույն տեղում չի մնում, և մարդիկ ինչպիսի հաջողություն էլ որ ունենան, միշտ իրենց հանդեպ ծնունդ են ավելի մեծ նախանձ (աստվածների): 3. Նա, պարզապես, մտավախություն ունի, որ Ալեքսանդրը թուլունների նման, որոնց բնատուր թեթևությունը դեպի աստղերն է ձգում, տրվում է դատարկ և ոչ հասուն ոգևորության. չէ՞ որ չկա ավելի դժվար բան, քան նրա աստիքում նման երջանկությունը պահպանելը: 4. Իրեն դեռ շատ հուզեր են մնացել, և միշտ չէ, որ կարելի է բռնեցնել կիրճերում, իսկ Ալեքսանդրը ստիպված կլինի անցնել Եփրատը, Տիգրիսը, Արաքսը և Հիդասպը՝ իր թագավորության պաշտպանական մեծ բնազոհերը: Նա ստիպված կլինի այնպիսի տեղեր հասնել, որտեղ այնքան քիչ մարդ է ապրում, որ անհարժար է այդ մասին խոսելը: 5. Ինչ-որ ժամանակ նա կանցնի Մարաստանով, Վրկանով, Բակարիայով և կհասնի՞ օվկիանոսի մոտ բնակվող հնդիկներին: Էլ չենք ասում սողների, արաքոսիացիների և Կովկասը բնակեցնող ու Տանախ հասնող այլ ցեղերի մասին: Ավելի շուտ մարդ կծերանա, քան կանցնի այս բոլոր երկրներով՝ նույնիսկ առանց ճակատամարտերի: 6. Թող Ալեքսանդրը այլևս չկանչի իրեն իր մոտ. եթե նա դա, ապա կգա միայն Ալեքսանդրի կործանման համար:

7. Նամակաբերին Ալեքսանդրը այսպիսի պատասխան տվեց. Դարեհը իրեն անշահավետ առաջարկ է անում. ցանկանում է կիսել այն, ինչ արդեն ամբողջովին կորցրել է. որպես օժիտ առաջարկում է Լիդիան, Հոնիան, էոլիդան և Հելլեսպոնտոսի ափերը, որոնք արդեն պատկանում են Ալեքսանդրին՝ հաղթողի իրավունքով: Սակայն պայմանները թելադրում են հաղթողները, իսկ պարտվողները ընդունում են: Եթե միայն նա գիտի, թե ինչ վիճակում է գտնվում իրենցից յուրաքանչյուրը, թող հնարավորին շուտ շուտ զենք վերցնի ձեռքը: 8. Ինքն էլ, իբր, ծովն անցել է ոչ թե Կիլիկիան կամ Լիդիան նվաճելու. դա չնչին պարզե կլինե՞ր նման պատերազմի համար, այլ նրա թագավորության մայրաքաղաքը՝ Պերսեպոլիսը, այնուհետև Բակտրան և Էկրատանը և Հեռավոր արևելքի շրջանը նվաճելու: Ուր Դարեհը կարող է փախչել, այնտեղ և նա կարող է հասնել նրա հետևից. թող այլևս գետերով չվախեցնի այն մարդուն, որի մասին գիտի, որ ծովն է կտրել անցել:

9. Այսպես գրում էին միմյանց արքաները: Իսկ այդ ժամանակ հողոսցիները ձեռնամուխ եղան իրենց քաղաքը և նավա-

ճանապարհով ազատվեց 15 հազար մարդ: 16. Այն մասին, թե ինչքան արյուն թափվեց, կարելի է դատել նրանից, որ քաղաքի պաշտպանական ամրությունների ներսում մահապատժի ենթարկվեց 6 հազար զինվոր: 17. Հաղթողների համար տխուր տեսարանը նախապատրաստել էր արքայի կատաղությունը. երկու հազար մարդ, որոնց սպանելու համար դաժանությունը չբավաբարեց, խաչվեցին ծովափին, մի երկար տարածության վրա: 18. Կարթագենյան զենսպաններին արքան խնայեց, սակայն Կարթագենին պատերազմ հայտարարեց, որը ծայրահեղ իրադրության պատճառով հետաձգվեց:

19. Տյուրոսը՝ մի քաղաք, որը արժանի է սերունդների հիշողությանը իր հնությունը ու ճակատագրի տարաբախտությունները, գրավվեց պաշարումը սկսելուց հետո յոթներորդ ամսում: Այն հիմնադրել էր Ազեները և երկար ժամանակ իշխում էր ոչ միայն մոտակա ծովերում, այլև ամենուր, ուր մտնում էր նրա նավատորմը, և, եթե հավատանք չուրեքին, տյուրոսական ժողովուրդը կամ ինքն է հնարել գրեթե, կամ էլ առաջինը դարձել դրանց տարածողը¹⁹: 20. Նրա գաղութները տարածված էին համարյա ամբողջ աշխարհով՝ Կարթագենը՝ Աֆրիկայում, Թեբեն՝ Բելոտրիայում, Հադիսը՝ օվկիանոսում: Ինձ թվում էր, որ նրանք իրենց այն ժամանակվա մեծաքանակ երիտասարդությունը բնակեցնելու համար ուրիշներին անծանոթ վայրեր էին քնտրում կամ այն նպատակով, որ նավարկելով բաց ծովում հաճախ այցելեին այդ տեղերը, կամ էլ նրանց հողագործները հաճախակի երկրաշարժերից տանջահար (այդ մասին նույնպես պատմվում էր), ստիպված լինեին զենքը ձեռքներին իրենց համար նոր գաղութներ փնտրել օտարության մեջ: 21. Այդ քաղաքը շատ անկումներ է ունեցել, որոնցից հետո կրկին վերածնվել է. այժմ էլ²⁰ հոռմեական մարդասիրական տիրապետության պաշտպանության ներքո նա վայելում է երկարատև, համընդհանուր բարօրությանը նպաստող խաղաղություն:

V. Գրեթե այդ նույն օրերին Ալեքսանդրին հանձնվեց Գաբհի նամակը՝ վերջապես գրված որպես արքայի նախնորում էր Ալեքսանդրին ամուսնանալ իր Ստատիրա²¹ անունով դստեր հետ. որպես օժիտ նա տալիս էր Հելլեսպոնտոսի և Հալիսի միջև ընկած հողերը, ինքն էլ բավարարվում էր այդտեղից արևելք ընկած հողերով: 2. Եթե, իբր, Ալեքսանդրը տատանվում է ընդունել այն, ինչ իրեն առաջարկվում է, թող հիշի, որ երջանկությունը

երբոր ժամանակ նույն տեղում չի մնում, և մարդիկ ինչպիսի հաջողություն էլ որ ունենան, միշտ իրենց հանդեպ ծնում են ավելի մեծ նախանձ (աստվածների): 3. Նա, պարզապես, մտավախություն ունի, որ Ալեքսանդրը թուլունների նման, որոնց բնատուր թեթևությունը դեպի աստղերն է ձգում, տրվում է դատարկ և ոչ հասուն ոգևորության. չէ՞ որ չկա ավելի դժվար բան, քան նրա տարիքում նման երջանկությունը պահպանելը: 4. Իրեն դեռ շատ հուզեր են մնացել, և միշտ չէ, որ կարելի է բռնեցնել կիրճերում, իսկ Ալեքսանդրը ստիպված կլինի անցնել նիրատուր, Տիգրիսը, Արաքսը և Հիդասպը՝ իր թագավորության պաշտպանական մեծ բեռագծերը: Նա ստիպված կլինի այնպիսի տեղեր հասնել, որտեղ այնքան քիչ մարդ է ապրում, որ անհարժար է այդ մասին խոսելը: 5. Ինչ-որ ժամանակ նա կանցնի Մարաստանով, Վրկանով, Բակտրիայով և կհասնի՝ օվկիանոսի մոտ բնակվող հնդիկներին: Էլ չենք ասում սողների, արաքոսիացիների և Կովկասը բնակեցնող ու Տանախս հասնող այլ ցեղերի մասին: Ավելի շուտ մարդ կծերանա, քան կանցնի այս բոլոր երկրներով՝ նույնիսկ առանց ճակատամարտերի: 6. Թող Ալեքսանդրը այլևս չկանչի իրեն իր մոտ. եթե նա գա, ապա կգա միայն Ալեքսանդրի կործանման համար:

7. Նամակաբերին Ալեքսանդրը այսպիսի պատասխան տվեց. Գաբհի իրեն անշահավետ առաջարկ է անում. ցանկանում է կիսել այն, ինչ արդեն ամբողջովին կորցրել է. որպես օժիտ առաջարկում է Լիդիան, Հոնիան, էոլիդան և Հելլեսպոնտոսի ավերքը, որոնք արդեն պատկանում են Ալեքսանդրին՝ հաղթողի իրավունքով: Սակայն պայմանները թելադրում են հաղթողները, իսկ պարտվողները ընդունում են: Եթե միայն նա գիտի, թե ինչ վիճակում է գտնվում իրենցից յուրաքանչյուրը, թող հնարավորին շուտ շուտ զենք վերցնի ձեռքը: 8. Ինքն էլ, իբր, ծովն անցել է ոչ թե Կիլիկիան կամ Լիդիան նվաճելու. դա չնչին պարզեց կլինե՞ր նման պատերազմի համար, այլ նրա թագավորության մայրաքաղաքը՝ Պերսեպոլիսը, այնուհետև Բակտրան և էկրատանը և Հեռավոր արևելքի շրջանը նվաճելու: Ուր Գաբհի կարող է փախչել, այնտեղ և նա կարող է հասնել նրա հետևից. թող այլևս գետերով չվախեցնի այն մարդուն, որի մասին գիտի, որ ծովն է կտրել անցել:

9. Այսպես գրում էին միմյանց արքաները: Իսկ այդ ժամանակ հողորոսցիները ձեռնամուխ եղան իրենց քաղաքը և նավա-

հանգիստը Ալեքսանդրին հանձնելուն: Կիլիկիան Ալեքսանդրը հանձնեց Սոկրատեսի կառավարմանը, Փիլոտեսին հրամայեց ղեկավարել Տյուրոսի շրջակայքի մարզը, Կլեոսիբա կոչվող Ասորիքը հանձնեց Անդրոմաքոս Պարմենիտին, ինքը ցանկացա՛վ զբաղվել ղեռ չավարտված պատերազմով: 10. Արբան, հրամայելով Հեփեստիոնեսին շարժվել նավերով Փյունիկիայի ափերի երկայնքով, իր ամբողջ զորքով ժամանեց Գազա քաղաքը: 11. Մտա՛վորապես այդ նույն օրերին տեղի էին ունենում Իսթմոսյան խաղերի հանդեսները, ուր ժողովուրդ է հավաքվում ամբողջ Հունաստանից: Այդ հավաքին հույները, որոնք սովորաբար արձագանքում են իրենց ժամանակների բոլոր իբրազարձություններին, տասնհինգ հոգի ուղարկեցին արքայի մոտ, նրան ոսկե պաակ հանձնելու հանուն Հունաստանի բարօրության և ազատության համար պայքարում ձեռք բերած հաղթանակի: 12. Դրանից քիչ առաջ նրանց մի անորոշ լուր հասավ (պատգամախոսի մասին), որպեսզի նրանք հետևեն ճակատագրին, ուր էլ որ այն տանիս լինի նրանց տատանվող հողիները: 13. Ի դեպ, ոչ միայն արքան ինքն էր անձամբ հնազանդեցնում քաղաքները, որոնք Ալեքսանդրի իշխանության լուծը ղեռն չէին ընդունել, այլև նրա հրամանատարները՝ հիանալի առաջնորդները, թափանցում էին շատ ու շատ տեղեր. Կալատոսը՝ Պափլագոնիա, Անտիգոնոսը՝ Լիկատոնիա, իսկ Բալակրոսը, հաղթանակ տանելով Դարեհի հրամանատար Հիդարնի հանդեպ, գրավեց Միլետը²²: 14. Ամփոտեոսը և Հեղելոքոսը 160 նավից բաղկացած նավատորմի օգնությամբ Ալեքսանդրի իշխանությանը ենթարկեցին Աթալայի և Ասիայի միջև գտնվող կղզիները: Դրավելով Տենեդոսը, նրանք որոշեցին գրավել Քիոսը, քանի որ կղզու բնակիչները իրենք էին կանչում նրանց: 15. Սակայն Դարեհի պրետոր Փառնաբազը, բռնելով մակեդոնացիներին հարող քաղաքացիներին, նորից քաղաքը փոքրիկ կայսզորով հանձնեց իր կուսակցությանը պատկանող մարդկանց՝ Ասոլլոնիդոսին ու Աթինագորոսին: 16. Ալեքսանդրի զորավարները շարունակում էին պաշարել քաղաքը, հույս դնելով ոչ այնքան իրենց ուժերի վրա, ինչքան իրենց՝ պաշարվածների կամքի վրա: Եվ նրանք իրենց հաշիվներում շահավեցին. Ասոլլոնիդոսի և զինվորական հրամանատարների միջև երկպառակություններ սկսվեցին, որոնք մակեդոնացիներին քաղաք ներխուժելու հնարավորություն տվեցին:

17. Երբ մակեդոնացիները, շարդելով դարպասը, քաղաք մտան,

քաղաքացիները, որոնք վաղուց պայմանավորվել էին անջատվել, միավորվեցին Ամփոտեոսի և Հեղելոքոսի շուրջը: Նրանք կոտորեցին պարսկական կայսզորը, իսկ Փառնաբազին Ասոլլոնիդոսի և Աթինագորոսի հետ միասին շղթայված հանձնեցին: 18. Մակեդոնացիներին հանձնվեցին նաև տասներկու տրիեր նրանց վրա գտնվող զինվորներով ու թիավարներով, բացի դրանից, երեսուն նավ, ծովահենային լեմբեր և պարսիկներին ծառայող երեք հազար հույն վարձականներ: Վերջիններին հանձնելով իրենց զինվորական պահեստայիններին, Ալեքսանդրի զորավարները ծովահեններին մահապատժի ենթարկեցին, իսկ գերված զինվորներին ու թիավարներին վերցրին իրենց նավատորմ:

19. Պատահականորեն մեթիմնացի բռնակալ Արիստոնիկոսը, ոչինչ չիմանալով Քիոսի ղեպքերի մասին, գիշերային առաջին պահակաժամին ծովահենների նավերով ժամանեց նավահանգրստի փակ մուտքի մոտ և պահակների հարցին, թե ով է, պատասխանեց, որ Արիստոնիկոսն է ժամանել Փառնաբազի մոտ: 20. Պահակներն ասացին նրան, որ Փառնաբազն արդեն քնած է և հիմա չի կարելի գնալ նրա մոտ, սակայն դաշնակցի և հյուրի համար նավահանգիստը բաց է, իսկ Փառնաբազին կարելի է տեսնել հաջորդ օրը: Արիստոնիկոսը առանց տատանվելու առաջինը մտավ նավահանգիստ: Իրենց առաջնորդին հետևեցին նաև ծովահենային լեմբերը: 21. Մինչ նրանք կապում են իրենց նավերը նավահանգստի կառանատեղերին, պահակախումբը փակեց նավահանգստի մուտքը և արթնացրեց մոտակայքում քնած զինվորներին: Ծովահեններից ոչ ոք չհամարձակվեց դիմադրել բոլորին շղթայեցին, ապա նրանց հանձնեցին Ամփոտեոսին և Հեղելոքոսին: 22. Այդտեղից մակեդոնացիներն անցան Միտիլեն: Վերջերս, գրավելով այդ քաղաքը, այնտեղ էր ամրացել աթենացի Քարեոսը պարսկական երկու հազարանոց կայսզորի հետ, սակայն նա չկարողացավ դիմանալ պաշարմանը, հանձնեց քաղաքը, իրավունք ստացավ ազատորեն հեռանալու և մեկնեց Իմբրոս: Հանձնվածներին մակեդոնացիները խնայեցին:

V1. Դարեհը, հույսը կտրած հաշտություն կնքելուց, որին ենթադրում էր հասնել ղեպպանների միջոցով նամակներ ուղարկելով, ետանդով սկսեց վերականգնել իր մարտական ուժերը պատերազմը վերսկսելու համար: 2. Նա ջոկատների հրամանատարներին կարգադրեց հավաքվել Բաբելոնում, ինչպես

նաև բակտրիացիներին հրամանատար Բեսին գալ՝ հավաքելով հնարավորին չափ շատ զորք: 3. Այդ ցեղերի մեջ բակտրիացիները ամենատազմատենն ու դաժանն են, իրենց բարբերով բուրդովին նման չեն փափկասուն պարսիկներին: Նրանք ապրում էին չափազանց ուղմատենն սկյութների²³ հարևանությամբ և վաճառք էին թալանի և միշտ թափառում էին զենքը ձեռքներին: 4. Բնաբ, որին կասկածում էին սկյութադրժուծյան մեջ, անկասկած դժկամությամբ էր կատարում երկրորդական զերեր, այնուհանդերձ արքային սարսափ էր ներշնչում: Չէ՞ որ նա ձգտում էր առջալսական իշխանության, բայց վախենում էր դավաճան դառնալ, թեև միայն այդ ճանապարհով կարող էր հասնել իր նպատակին: 5. Ասենք՝ որ Ալեքսանդրը, չնայած իր բոլոր հետաքննություններին, չէր կարողանում բացահայտել, թե ուր է գնացել Դարեհը, քանի որ իրենց սովորույթի համաձայն, բոլոր պարսիկները դարմանալի անձնվիրությամբ էին պահպանում իրենց արքաների գաղտնիքները: 6. Ոչ վախեցնելով, ոչ խոստումներով հնարավոր չէր ստիպել նրանց խոսել այն մասին, ինչը կմատներ գաղտնիքը: Արքաներին ավանդաբար հնազանդվելը՝ սրբություն էր դարձրել լուսնյակներ՝ մահվան սպառնալիքի տակ: Կեղծի անզուսույթունը պարսիկներին մոտ պատրժվում է ցանկացած զանցանքից ավելի խիստ. գտնում են, որ չի կարելի որևէ կարևոր բան վստահել մեկին, ում համար ծանր է լուսնյակն պահպանելը, թեև բնականորեն դա ամենակին էլ դժվար չէ մարդու համար:

7. Այդ պատճառով Ալեքսանդրը պաշարեց Գաղա քաղաքը, լիմանալով ոչինչ, ինչ կատարվում էր թշնամու մոտ: Քաղաքի գլխավորն էր իր արքային նվիրված Բեթիսը. նա փոքրիկ կայսզորով պաշտպանում էր պարսպներով ամբարցված քաղաքը: 8. Ալեքսանդրը, զննելով տեղանքը, հրամայեց ական փորել. փափուկ հողը հեշտացնում էր այդ ծածուկ աշխատանքը, քանի որ մոտակայքում գտնվող ծովը շատ ավազ էր կուտակում և այդտեղ քարեր ու ժայռեր շկային, որոնք խանդարեին ական փորելուն:

9. Այդպիսով, փորել սկսեցին բնակիչների համար շերտացող կողմից: Որպեսզի շեղի նրանց ուշադրությունը, արքան հրամայեց պարսպներին պաշարման մեքենաներ մոտեցնել: Սակայն նույն փափուկ հողը անհարմար էր աշտարակների տեղաշարժման համար. ավազը ցրիվ էր գալիս և դժվարացնում

անիվների պտտվելը, աշտարակի վերին հարկերը քանդվում էին և շատերը վիրավորվում էին, ինչպես նաև հյուծվում էին աշտարակները պահելուց և տեղաշարժելուց, 10. Եվ այդպես արքան նահանջի նշան տվեց, իսկ հաջորդ օրը կարգադրեց պաշարել քաղաքի պարսպները: Երբ արևը ծագեց, նա զորքը գրոհի տանելուց առաջ իր հայրերի սովորույթով աղոթեց աստվածներին, նրանցից օգնություն խնդրելով: 11. Պատահմամբ նրանց վրայից թռչող ագռավը մի կտոր հող գցեց, որը տանում էր իր հիբաններով. ընկնելով արքայի գլխին, այն փշրվեց, իսկ թռչունը նստեց մոտակա աշտարակի գլխին, որի վրա ձյութ և ժծումբ էր քսված, թռչունը թևերով կպավ աշտարակին և սկսեց թռչելու ապարդյուն փորձեր անել. մոտակայքում գտնվող զինվորները բռնեցին նրան: 12. Այդ ղեկպն արժանի թվաց, որ դրա մասին հարցում անեն գուշակին. ինքը՝ Ալեքսանդրն էլ ամբողջովին զերծ չէր սնտիպապաշտությունից: Եվ այսպես, Արիստանդրը, որը մեծագույն հավատ էր վայելում, բացատրեց, որ դա քաղաքի կործանման նախանշան է, սակայն երկյուղ կա, որ ինքը՝ արքան կարող է վիրավորվել: Նա համոզեց Ալեքսանդրին այդ օրը ոչինչ չձեռնարկել: 13. Եվ թեև արքան չափազանց ափսոսում էր, որ միայն այդ քաղաքն է իրեն խանդարում անարգել Եգիպտոս մտնել, նա, այնուհանդերձ, անսաց գուշակին և նահանջի ազդանշան տվեց:

Այնժամ պաշարվածները ողևորվեցին, և նրանք, դուրս գալով քաղաքից, նեղեցին նահանջողներին, գտնելով, որ թշնամու հապաղումը իրենց համար նպաստավոր է: 14. Նրանք մարտի բռնվեցին. թեև կռվում էին կատաղորեն, սակայն սակունություն չցուցաբերեցին և, նկատելով, որ մակեդոնացիների դրոշները շրջապատում են իրենց, իսկույն դադարեցրին պայքարը: Արգեն արքային էին հասնում կռվողների գուշունները, երբ նա, մոռանալով կանխազուշակության մասին, աջուսմանալիվ, ընկերների խնդրանքով հաղնելով զրահը, որը հաղվաղեպ էր հագնում, մոտեցավ առաջին շարքերին: 15. Նրան տեսնելով, Դարեհի զինվորներից մի արաբ, որոշելով ճակատագրով սահմանված իր ուժերից վեր գործ անել, ծածկելով թուրը վահանով, իրեն նետեց Ալեքսանդրի ոտքերի առջև, իբր փախստական: Ալեքսանդրը հրամայեց նրան ոտքի կանգնել և կարգադրեց ընդունել իր շարքերը: 16. Սակայն բարբաբոսը, արաբներն վերցնելով թուրը իր աջ ձեռքը, թափով իջեցրեց արքայի

գրին, բայց Ալեքսանդրը գլխի թևի և շարժումով խուսափեց հարվածից և կտրեց վրիպած բարբարոսի ձեռքը: Նա դտավ, որ իրականացավ իրեն կանխագուշակված վտանգը: 17. Սակայն, նա համոզված էմ, որ ճակատագիրն անխուսափելի է, քանզի եռանդագին կովելով առաջին շարքերում, արքան վիրավորվեց նետի հարվածից. այն անցել էր դրահի միջով և խրվել նրա ուսի մեջ: Արքայի բժիշկ Փիլիպոսը հանեց այն: 18. Առատ արյուն հոսեց և բոլորը վախեցան: Ջրահը թույլ չէր տալիս տեսնել, թե ինչքան խոր է վերքը: Ինքը՝ արքան նույնիսկ չգուհատվեց, հրամայեց կանգնեցնել արյունը և վիրակապել: 19. Դրանից հետո դեռ երկար նա մնաց գրոշների առջևում, թաքցնելով ցավը կամ հաղթահարելով այն, երբ հանկարծ, զեղերի միջոցով կանգնեցված արյունը ավելի առատորեն ցայտեց և վերքը, որը քանի դեռ թարմ էր, քիչ ցավ էր պատճառում, բորբոքվեց, երբ արյունը սկսեց մակարդվել: 20. Արքայի աչքերը մթնեցին և ոտքերը թուլացան: Մոտ կանգնած զինվորները բարձրացրին նրան ու տարան ճամբար, իսկ Բեթիսը, կարծելով, թե նա սպանվել է, վերագործավ քաղաք՝ տոնելով իր հաղթանակը:

21. Այդ ընթացքում Ալեքսանդրը, դեռ վերքը չապարհնված, պարիսպների բարձրությունը հավասար պատենը կառուցեց և հրամայեց նրա տակ մի քանի անցք փորել: 22. Քաղաքացիները պարիսպների նախկին բարձրությամբ կառուցեցին նոր ամրություններ: սակայն դրանք ևս չէին կարող հավասարվել պատենի վրա դրված աշտարակների բարձրությանը: Այդպիսով քաղաքի ներքին մասը բաց էր թշնամու նետերի առջև: 23. Մայրահեղ դժբախտություն իշավ քաղաքացիների գլխին, երբ տակից փորված պարիսպը փլվեց և այդ ճեղքվածքով հակառակորդը քաղաք ներխուժեց: Առաջին շարքերն արքան ինքն էր առաջնորդում, բայց անզույշ քայլելուց՝ քարով վնասեց ոտքը: 24. Նախկին վերքը դեռ չէր ապարհնվել և նա, հենվելով նիզակի վրա, մնաց մարտնչողների առաջին շարքերում, սրտմտելով, որ այդ քաղաքի պաշարման ընթացքում երկու վերք ստացավ: 25. Երբ համառ մարտ բռնվեց, բազմաթիվ վիրքերից տանջվող Բեթիսի Ճաղդիկ լքեցին նրան, բայց նրա կատաղությունը չնվազեց և նրա գննքը շաղախվել էր թե իր սեփական և թե թշնամու արյամբ: 26. Իսկ երբ ամեն կողմից նրա վրա էին ուղղվել նիզակները²⁴... հաղթանակի փառքով արբեցած պա-

տանի արքան, բայց և այնպես ընդունելով նաև թշնամու արիությունը, ասաց, դիմելով Բեթիսին. «Դու այնպես չես մեռնի, ինչպես ցանկանում էիր. դու ստիպված կլինես տանել այն բուրբ խոշտանգումները, որոնք հնարավոր է մտածել զերու համար»: 27. Բայց Բեթիսը, նայելով արքային, ոչ միայն անվախ, այլև ամբարտապան հայացքով, ուլինը չպատասխանեց նրա սպառնալիքներին: 28. Այնժամ Ալեքսանդրը գուչեց. «Տեսնո՞ւմ եք, թե ինչ համառություն է լուրմ: Մնկի՞՝ է եկել, գթություն է խնդրում արդյոք: Ես նրան կստիպեմ խզել լուրջունը, և եթե ոչ խոսքեր, ապա գեթ հառաչանք կկորզեմ նրանից»: 29. Հետո նրա զայրույթը փոխվեց կատաղության. արդեն այդ ժամանակ նա սկսեց հետևել օտարի բարքերին: Գեռ շնչող Բեթիսի սքունքներով փոկեր անցկացրին և կապեցին մարտակոթին, և ձիերը քարշ տվին նրան քաղաքի շուրջը, իսկ Ալեքսանդրը պարծենում էր, որ թշնամու համար այդպիսի մահապատիժ հնարելով՝ նա նմանակում է Աքիլեսին, որից ինքը սերում էր²⁵: 30. Այդ ճակատամարտում ընկան մոտ տասը հազար պարսիկներ ու արաբներ, բայց մակեդոնացիների համար էլ հաղթանակը անարյուն չեղավ: Այդ պաշարումը հայտնի դարձավ ոչ այնքան քաղաքի փառքի պատճառով, որքան արքային երկու անգամ վտանգ սպառնալու կապակցությունը: 31. Շտապելով ոտք դնել Եգիպտոս, նա Ամինտոսին տասը տրիբուններով Մակեդոնիա ուղարկեց նոր զինվորներ հավաքագրելու: 24՞ որ հաշտությունների ժամանակ ևս սպառվում էին ռազմական ուժերը, իսկ նվաճված ցեղերի ռազմիկների հանդեպ ավելի քիչ վատահույություն կար, քան յուրալիներին:

VII. Վաղուց արդեն պարսկական կառավարողներին թշնամարար վերաբերվող եղիպտացիները, գտնելով, որ նրանք ազահ են ու գոռոզ, ահամերթություն սպասում էին Ալեքսանդրի ժամանմանը, նրանք նույնիսկ ուրախությամբ ընդունեցին փախըստակ Ամինտոսին, որը եկել էր իրենց մոտ իշխանություն ձեռք բերելու: 2. Այդպիսով, Պելուպիոսում, ուր սպասում էին արքային, մեծաքանակ ժողովուրդ հավաքվեց: Իսկ նա, իր զորքը Գազայից հեռացնելու յոթերորդ օրը, ժամանեց Եգիպտոսի այն վայրը, որն այժմ կոչվում է Ալեքսանդրի կացարան: 3. Այնուհետև հետևակին կարգադրելով զնալ Պելուպիոս, ինքը, զինվորների լավագույն ջոկատով և առանց գումակի, դնաց նեղոս դեպտով. պարսիկները պառակտումից վախեցած, նրան դիմադրու-

Յոյն ցույց շտվեցին 4. Նա արդեն հետո չէր Մեմփիսից, որի պաշտպանութիւնն համար թողնել էր Դարեհի պրետոր Մազակը. սա անցավ Օրոն գետը և Ալեքսանդրին հանձնեց 800 տաղանդ և արքայական ողջ ունեցվածքը. 5. Մեմփիսից այդ նույն գետով արքան թափանցեց Եգիպտոսի ներքին շրջանները և, ողջ գործավարութիւնը կազմակերպելով այնպէս, որպէսզի ոչընչով չխախտի եգիպտացիների հայրենական սովորույթները, նա որոշեց ճանապարհով Յուպիտեր-Ամոնի պատգամախոսի մոտ: 6. Նրան անհրաժեշտ էր կտրել մի ճանապարհ, որն իր դժվարանցանկիւթիւթով շատ քիչ է, ըստ որում, փորձառու մարդկանց էր մատչելի: Այնտեղ անբավարար է հողի և օդի խոնավութիւնը, անտանելի շոգ արձակող անբերրի ավազուտներ են, և արևի ճառագայթներից շիկացած, ոտքերն այրող հող: 7. Այնտեղ պետք է պայքարել ոչ միայն շոգի և երաշտի դեմ, այլև սորուն և շափաղանց խոր ավազների, որոնցում թաղվում են ոտքերը: 8. Եգիպտացիները շափաղանցում էին այդ դժվարութիւնները, սակայն Ալեքսանդրին համակել էր Յուպիտերի²⁰, տաճարը հասնելու անհազցանկութիւնը, որին, նա, շրավարավելով մահկանացուի իր ծագմամբ, համարում էր իր նախահայրը, կամ ցանկանում, որ իրեն այդպէս ընդունեն:

9. Նվ այսպէս, նրանց հետ, ում որոշել էր տանել իր հետ, նա դետով իջավ մինչև Մարեոտիսյան ճահիճը: Այնտեղ կիրենցի գեսպանները նրան ընծաներ բերեցին, խնդրելով նրանից խաղաղութիւն և հրավերեցին այցելել իրենց քաղաքները: Նա ընդունեց ընծաները, բարեկամութիւնն դաշինք կնքեց, սակայն շարունակեց իրագործել իր մտադրութիւնը: 10. Առաջին և հաջորդ օրերին ճանապարհի դժվարութիւնները հաղթահարելի էին թվում, բայց նրանք դեռևս չէին հասել անծայրածիր մերկ անապատին, թեև արդեն քայլում էին անբերրի ու մեռած գետնի վրայով: 11. Իսկ երբ նրանց առջև բացվեցին խոր ավազներով ծածկված հարթավայրերը, նրանք նմանվեցին նավատիրների, որոնք քայ ծով են ելել և հայացքով ապարդյուն ցամաքի հետքեր են փնտրում: 12. Նրանց ոչ ծառ էր հանդիպում, ոչ էլ մշակված հողակտոր: Արդեն ջուրն էլ չէր բավականացնում, որը տիկերով տանում էին ուղտերը և որից ամենևին չկար շիկացած ավազուտներում: 13. Բացի այդ, այրում էր արևը. բոլորի բերանները շորացել էին ու խանձվել, երբ հանկարծ պատահմամբ թե ստավածների կամքով, երկնքում փոված ամպերը

ծածկեցին արևը, որը բավականին թեթևացրեց քայլի ջրի պակասութիւնից, նաև տոթից տանջվածների վիճակը: 14. Իսկ երբ ամպրոպը պայթեց և առատ անձրև տեղաց, բոլորը ձգտում էին, որ այն իրենց վրա թափվի և շատերը, չգիմանալով ծարավին, ուղղակի բերանով որսում էին անձրևը: 15. Չորս օր նրանք գնում էին անծայրածիր անապատով: Նրանք արդեն հետո չէին պատգամախոսի տեղից, երբ նրանց ջոկատը վրա բազմաթիւ պառավներ վրա ավեցին. մեկ նրանք դանդաղորեն թռչում էին գրոշների առջևից, մեկ նստում գետնին, երբ ջոկատը ավելի դանդաղ էր շարժվում, մեկ վեր սլանում, ասես ճանապարհն էին ցույց տալիս և ուղեկցում էին:

16. Վերջապէս հասան աստծու սրբավայրը: Բոլորովին անհավանական է թվում, որ լայնարձակ անապատի մեջ այն ամեն կողմից ծածկված է արևի ճառագայթների համար անթափանց խիտ ճյուղերով, և ամենուր հորդում են խմելու ջրի շատ աղբյուրներ, ոռոգելով անտառը: 17. Զարմանալի է այնտեղ նաև կլիմայի մեղմութիւնը. այն հավասարաչափ առողջարար է տարվա բոլոր եղանակներին և շատ ավելի նմանվում է քարնանայինին: 18. Արևելքից այստեղի ամենամոտ հարևանները եթովպիացիներն են, հարավից՝ տրոպիկա²⁷ կրչվող արաբները. որոնց մարզը տարածվում էր մինչև Կարմիր ծովը: 19. Այնտեղ, որտեղ այն ձգվում է մինչև արևմուտք, ապրում են այլ եթովպիացիներ, որոնց անվանում են սկիւնիտներ: Հյուսիսում է գտնվում նազամոնների սիրտիրական ցեղը, որն ապրում է նավերից խլած ավարով. նրանք զարանակալում են ծովի ափին, և երբ մակընթացութիւնը որևէ նախ է նետում այդտեղ, նրանք վրա են հասնում իրենց հայտնի ծանծաղուտներով:

20. Բուն օազիսի բնակիչները, որոնց ամոնցիներ են անվանում, ապրում են միմյանցից հետո ընկած վրաններում, շրջապատող մացառուտը նրանց պաշտպան է հանդիսանում, այն շրջափակված է եռակի պարսպով: 21. Ներքին պարսպի ներսում է գտնվում բունակալների հին նստավայրը, միջին մասում ապրում են նրանց կանաչք երեխաների հետ և հարճերբայտեղ է գտնվում նաև աստծու պատգամախոսը: Արտաքին ամբոթութիւնները ընդգրկում են կամակատարների և զինակիրների կացարանները: 22. Կա Ամոնի ևս մի օազիս. նրա մեջտեղում արևային կոչվող մի աղբյուր կա, Արևածագից առաջ նրա ջուրը տաք է, կեսօրին, երբ շոգը հասնում է իր գագաթնակետին, ջու-

րը սառչում է, երկկոյան կողմ այն սկսում է տաքանալ, իսկ կենսոլիշերին դառնում լրիվ եռման, ինչքան մոտենում է առավոտը, այնքան ջուրը ավելի է կորցնում իր գիշերվա տաքութունը և մայրամուտից առաջ դառնում է սովորական ջերմության: 23. Պաշտված աստվածութիւնը այն տեսքը չունի, որը սովորաբար նկարիչները վերագրում են աստվածներին, այն ավելի նման է զմրուխտով և մարգարիտով զարդարված կորնի-թարգի: 24. Երբ պատգամախոսը հարց է տալիս, քրմերը դուրս էն բերում այդ պատկերը ոսկեղօծ նալի վրա²⁸, որի երկու կողմերից կախված են բազմաթիվ արծաթյա զավաթներ. նրա հետեւից գնում են կանայք ու աղջիկներ, հին սովորույթի համաձայն ինչ-որ աններդաշնակ երգ երգելով, որով, ինչպես նրանք հավատում են, նպաստում են, որպեսզի Յուպիտերը պարզ գուշակի:

25. Այս անգամ մոտ եկած արքային ավագագույն բուրմը որդի անվանեց, հաստատելով, որ դրանով նա հիմնավորում է նրա սզգակեցական կապը Յուպիտերի հետ: Արքան ասաց, որ ընդունում և ճանաչում է դա, հրաժարվելով իր մարդկային ճակատագրից: 26. Այնուհետև նա հարցրեց, արդո՞ք հայրը կանխատեսել է, որպեսզի նա իշխի ամբողջ աշխարհի վրա: Քուրմը, շարունակելով շողոթորթիլ նրան, հայտարարեց, որ նա կլինի բոլոր երկրների տիրակալը: 27. Դրանից հետո արքան հարցրեց, արդո՞ք իր հոր բոլոր մարդասպանները պատժված են: Քուրմը պատասխանեց, որ նրա հայրը անհասանելի է րազործության համար, սակայն Փիլիպոսին սպանողները պատժված են. նա ավելացրեց, որ մինչև աստվածների մոտ գնալը արքան անհաղթ կլինի: 28. Այնուհետև զոհաբերություն կատարվեց, և քրմերին ու աստծուն նվերներ ընծայվեցին: Բացի այդ ընկերներին էլ թույլատրվեց դիմել Յուպիտերին գուշակության համար: Նրանք ուրիշ ոչինչ չհարցրին, բացի նրանից, թե արդո՞ք Յուպիտերը նրանց թույլատրում է իրենց արքային աստվածային պատիվներ տալ: Քուրմը պատասխանեց, որ Յուպիտերին նույնպես հաճելի է (որպեսզի նրանք աստվածային պատիվներ տան իրենց արքա-հաղթողին): 29. Ճշմարիտ և սուրբ հավատացյալներին պատգամախոսի պատասխանները, իհարկե, կարող էին շատարկ թվալ, սակայն ճակատագիրը հաճախ ստիպում է նրանց, ում սովորեցրել է հույսը դնել միայն իր վրա, ավելի փառքի տենչալ, քան արժանի

լինել նրան: 30. Եվ այսպես, արքան ոչ միայն թույլատրեց անվանել իրեն Յուպիտերի որդի, այլ նաև այդ առիթով հրաման արձակեց. դրանով նա ցանկանում էր մեծարել իր սխրանքների փառքը, սակայն իրականում քաջայայեց այն: 31. Եվ մակեդոնացիները, արքայական իշխանությանը վարժված, բայց, այնուամենայնիվ, մեծ ազատության տենչով, քան ուրիշ ժողովուրդների մոտ է, երես թեքեցին իրենց արքայից, որն այնպիսի համառությամբ էր ձգտում անմահության, որ շփոթեցնում էր և պատշաճ չէր արքային:

32. Սակայն թողնենք դա մինչև դրա ժամանակը դա. այժմ շարունակենք դեպքերի շարադրանքը:

VIII. Երբ Ալեքսանդրը Ամոնից վերադառնալով եկավ դեպի Մաբետիսյան ճահիճը՝ Փարոս կղզուց ոչ հեռու, նա, զննելով տեղանքը սկզբում որոշեց ուղղակի կղզու վրա նոր քաղաք հիմնել: 2. Իսկ հետո, երբ պարզվեց, որ կղզին փոքր է մեծ քաղաքի համար, նա ընտրեց դրա համար այն տեղը, որտեղ այժմ Ալեքսանդրիան է գտնվում՝ կոչված նրա հիմնադրի անունով: Նա որոշեց ութսուն ասպարեզ երկարությամբ պարսպով շրջապատել ծովի և ճահճի միջև ընկած ողջ տարածութիւնը և, այնտեղ մարդիկ թողնելով հսկելու քաղաքի շինարարությանը, մեկնեց Մեմփիս: 3. Նրան համակեց բնական, սակայն անժամանակ մի կիրք՝ թափանցել ոչ միայն Եգիպտոսի խորքերը, այլև այցելել Եթովպիա: Իր հնությամբ հռչակավոր Մեմփոնի և Տիփոնի²⁹ պալատը տեսնելու ցանկութիւնը հրապուրեց նրան գեալու համարյա արևի սահմաններից դուրս: 4. Սակայն ակնկալվող պատերազմը, որը մեծ մասամբ դեռ չէր ավարտվել, պարսպ թափառումների համար ժամանակ չէր թողնում: Այսպես նա Եգիպտոսի գլխավորներ նշանակեց հողոսցի Էսբիլեպին և մակեդոնացի Պեկեստեսին, այդ երկիրը պահպանելու համար տալով նրանց չորս հազար զինվոր, իսկ Նեղոս գետի ջրարգելակների պահպանութիւնը հանձնարարեց Պոլեմոնեսին, այդ նպատակի համար տալով նրան երեսուն տրիբր: 5. Եգիպտոսին սահմանակից աֆրիկյան շրջանների գլխավոր նշանակվեց Ապոլլոնիոսը, իսկ նույն Աֆրիկայից և Եգիպտոսից տուրքերի հավաքման պատասխանատու՝ Կլեոմենեսը: Հրամայելով Ալեքսանդրիա տեղափոխել հարևան քաղաքների բնակիչների մի մասին, արքան նոր քաղաքը լցրեց բազմաքանակ բնակչությամբ: 6. Կա ավանդություն, որի համաձայն, երբ արքան մա-

կեղոնական սովորույթով քաղաքի ապագա պարիսպների տեղը նշագծել է գարիով, վրա են հասել թռչունները և կացահարկ գարին, շատերը դա մեկնաբանել են որպես վատ նշան, սակայն գուշակները պարզաբանել են, որ այդ քաղաքը միշտ ապաստան կլինի շատ օտարերկրացիների համար և շատ երկրների միջերգով կապահովի:

7. Պարմենիոնի որդին՝ ծաղկուն տարիքում դանդող Հեկտորը, որը հատկապես թանկ էր Ալեքսանդրի համար, ցանկանալով հասնել գետով ներքև իջնող արքային, իր հետ փոքրիկ նավակը նստեցրեց ավելի շատ մարդ, քան այն կարող էր տանել: 8. Դրա հետևանքով էլ նավակը խորտակվեց, մարդիկ թողնվեցին իրենց ուժերի հույսին: Հեկտորը երկար կալում էր գետի հետ, սակայն թրջված հագուստը և ծանր կոշիկները խանգարում էին նրան լողալ. այնուամենայնիվ նա կիսամեռ ափ հասավ, բայց հենց որ գերագույն լարվածությունից և սարսափից հետո ուշքի եկավ, ոչ մեկից օգնություն չտանալով (մյուսները դուրս էին եկել ուրիշ տեղերում), շուտով շունչը փչեց: 9. Արքան սաստիկ վշտացավ Հեկտորի կորստով և, գտնելով նրա մարմինը, թաղեց նրան ճոխությունում: Նրա վիշտը ավելի ծանրացրեց Անդրոմաքոսի զոհվելու մասին լուրը, որին արքան Ասորիքի ղեկավար էր նշանակել. նրան սամարիտները կենդանի այրել էին: 10. Որպեսզի վրեժխնդիր լինի նրա մահվան համար, արքան որքան հնարավոր է արագացրեց իր առաջընթացը և երբ տեղ հասավ, նրան հանձնեցին այդ ոճրագործության մեղավորներին: 11. Մահատառի ենթարկելով իր զորավարին կործանողներին, արքան նրա փոխարեն նշանակեց Մեմնոնին: Բռնակալներին, և նրանց թվում Արիստոնիկոսին ու Քրիստոլայոսին՝ Մեթիմնայից, նա հանձնեց այդ քաղաքի ժողովրդական կուսակցությանը. նրանք էլ մահատառի ենթարկեցին նրանց իրենց գործած անարդարությունների համար, ցած նետելով պարսպից:

12. Հետո նա ունկնդրեց աթենացիների, հոդոսցիների և քիոսցիների կողմից եկած զեսպաններին: Աթենացիները շնորհավորեցին նրան հաղթանակի առթիվ և խնդրեցին, որպեսզի գերի հույները³⁰ վերադարձվեն յուրայիններին. հոդոսցիներն ու քիոսցիները բողոքում էին, որ փոքր կայսեր ունեն. բոլորն էլ ստացան այն, ինչ ցանկանում էին: 13. Իրենց հավատարմության համար նա միտիլենցիներին ոչ

միայն վերադարձրեց պատերազմում նրանց ներդրած դրամը, այլ նրանց մարզին շատ հողեր կցեց: 14. Կիպրոս կղզու թագավորներին, որոնք Գարեհից իր կողմն էին անցել և Տյուրոսի պաշարման ժամանակ իրեն նավատորմ էին ուղարկել, նա պատիվներ տվեց ըստ մատուցած ծառայությունների: 15. Նավատորմի հրամանատար Ամփոտեոսը, որն ուղարկվել էր Կրետեն ազատագրելու, քանի որ շատ տեղերում կղզին ենթարկվում էր պարսկական և սպարտանական զորքերի պաշարմանը, հրաման ստացավ նախ և առաջ մարքել ծովը ծովահեններից. քանի որ երկու արքաներն էլ զբաղված էին պատերազմով, ամբողջ ծովը ընկել էր ավաղակների իշխանության տակ: 16. Այսպիսի կարգադրություններ անելուց հետո, նա տյուրոսական Հերակուլեսին նվիրաբերեց ոսկե անոթ՝ երեսուն ոսկե թասերով, և հրամայեց արշավի ելնել դեպի Եփրատ՝ Գարեհին հետապնդելու:

IX. Իսկ Գարեհը, տեղեկանալով, որ թշնամին Եգիպտոսից գնացել է Աֆրիկա, սկսեց տատանվել՝ մնալ Միջագետքում թե շարժվել դեպի թագավորության ներքին շրջանները: Նա, անկասկած, անձամբ ավելի հեշտությամբ պատերազմի կհասնե՞ր հեռավոր ցեղերին, որոնց դժվար էր հավաքագրել իր զորավարների միջոցով: 2. Մյուս կողմից լայնորեն տարածվել էր այն լուրը, թե ուր էլ որ նա գնա, Ալեքսանդրն ամենուր կհետևի նրան իր ամբողջ ուժերով: Կալ իմանալով, թե ինչպիսի համառ թշնամու հետ՝ գործ ունի ինքը, Գարեհը հրամայեց հեռավոր Ժողովուրդների բոլոր ռազմական ուժերին հավաքվել Բարելոնում: Եկան բակարիացիները, սկյութները և հնդիկները, ուրիշ ժողովուրդներից էլ ազմական ռեկամենթ ժամանեցին: 3. Սակայն, քանի որ մեկեկես անգամ ավելի զորք հավաքվեց, քան կար կիլիկիայում, շատերին զենքը չբավականացրեց. այն մեծ զժվարությամբ էր հավաքվում: Հեծյալների և ձիերի ծածկ էին ծառայում շարքերով իրար միացված երկաթե թիթեղիկներով զբահները. նրանց, ում նախկինում պարսատիկից բացի ուրիշ ոչինչ չէր տրվում, այժմ ավելացվել էին վահաններ ու թրեր: 4. Բացի այդ, հետևակայիններին էլ տրվեցին չհեծած ձիերի երամակներ, որպեսզի հեծկազորն էլ նախկինից մեծ լինի. թշնամու ահաբեկելու նպատակով դրան ավելացվեց 200 մանգաղակիր մարտակառք՝ այդ բոլոր ցեղերի միակ հույսը: 5. Առեղի ծայրին երկաթե ծայրերով նիզակներ կային, լծի երկու կողմի-

րից թշնամու դեմ էին ուղղված երեքական սրեր. անիվների ճաղերից դուրս էին ցցվել բազմաթիվ սուր դանակներ, մյուսները ամրացված էին անիվների օղազոտիներին կամ թափքի տակից ուղղված էին դեպի ներքև, որպեսզի կտոր-կտոր անեն այն ամենը, ինչ կրկնի արշավող ձիերի ոտքերի տակ:

6. Այս ձևով կաղմակերպելով և վերադիներելով իր զորքը, Գարեհը շարժեց այն Բարելոնից: Նրա աջ կողմում հուշակալոր Տիգրիս գետն էր, ձախ թևը պաշտպանում էր Եփրատը: Զորքը լցրեց Միջագետքի հարթավայրը:

7. Անցնելով Տիգրիսը և լսելով, որ հակառակորդը մոտակայքում է, Գարեհը առաջ ուղարկեց հեծելազորի հրամանատար Սատրուպատին՝ հաղար հոգիանոց լավագույն հեծյալներով: 8. Հրամանատար Մադելին 6.000 զինվոր արվեց, որպեսզի նրանց օգնությունը խոչընդոտի թշնամու գետանցը. նրան էլ հանձնարարված էր ամալացնել ու կրակի մատնել այն շրջանները, ուր պետք է ոտք դնել Ալեքսանդրը: Գարեհը հույս ուներ, որ թըշնամին ստիպված կլինի դադարեցնել պատերազմը, եթե ունենա միայն այն, ինչ թալանի միջոցով է ձեռք բերել: Իսկ ինքը պարեն ստանում էր և՛ ցամաքով, և՛ Տիգրիս գետով: 9. Այդպես Գարեհը հասավ Արբելա՝ բնակավայրը, որը հուշակալոր դարձավ նրա հետագա պարտության շնորհիվ: Այստեղ թողնելով պարենի և ուղեբեռի մեծ մասը, նա կամուրջ գցեց Լիկուս գետի վրայով և հինգ օր տեղափոխում էր իր զորքը հանդիպակաց ափը, ինչպես նախկինում Եփրատն էր անցել: 10. Այդտեղից անցնելով մոտ ութսուն ասպարեզ, մինչև Բուսոզոս անունով մեկ այլ գետը, նա ճամբար խփեց այնտեղ: Այդ տեղանքը հարմար էր զորքի ծավալման համար. դա հեծելազորին հարմար մի ընդարձակ հարթավայր էր: Գետինը ծածկված չէր ոչ ծառերով, ոչ էլ թփերով. աչքով հեշտություն կարելի էր տեսնել նույնիսկ այն, ինչ գտնվում էր հեռու տարածության վրա: Այդ իսկ պատճառով, եթե որևէ տեղ էլ դաշտն անհարթություններ ուներ, նա հրամայեց հավասարեցնել դրանք և գետինը համահավասար դարձնել:

11. Մակեդոնական հետախույզները, հեռվից, որքան հնարավոր էր, որոշելով Գարեհի զորքի բանակը, մեծ զրծվարություն համոզեցին Ալեքսանդրին, որ այդքան կորուստներից հետո պարսիկները ստեղծել են մի նոր և ավելի մեծաբանակ բանակ: 12. Բայց Ալեքսանդրը արհամարհում էր ցան-

կացած վտանգ ու հատկապես թշնամու բազմաքանակությունը և սասնակ անցումներով հասավ Եփրատ. կամուրջ գցելով գետի վրայով, նա սկզբում տեղափոխեց հեծյալներին, նրանց հետևից ուղարկեց փաղանգը: Իսկ Մադելը, որը վեց հազար հեծյալներով տեղ էր հասել, որպեսզի խանգարեր գետանցը, այդպես էլ չհամարձակվեց մարտի բռնվել: 13. Այնուհետև, զինվորներին մի քանի օր դադար տալով, ոչ այնքան հանգստանալու, ինչքան քաջալերվելու համար, Ալեքսանդրը սկսեց թափով հետապնդել թշնամուն, երկյուղելով, որ նա կարող է գնալ էր հեռավոր շրջանները, և ինքը ստիպված կլինի նրա հետևից գնալ անմարդարնակ ու ամառի տեղերով: 14. Այդպես, շորորդ օրը, անցնելով Արբելայի մոտով, նա մոտեցավ Տիգրիսին: Գետի այն կողմի ամբողջ տեղանքը ծխում էր ոչ վաղուցվա հրդեհից, քանի որ Մադելը որտեղ մտնում էր, ամեն ինչ կրակի էր մատնում, ասես թշնամի: 15. Սկզբից, երբ ծխի մշուշը ծածկել էր արևը, Ալեքսանդրը կանգ առավ, զգուշանալով դարանից, սակայն, երբ առաջ ուղարկված հետախույզները հայտնեցին, որ ճանապարհն անվտանգ է, նա մի քանի հեծյալներ ուղարկեց առաջ, որպեսզի գետի մեջ ծանծաղուտներ գտնեն: Զքի խորությունը սկզբում հասնում էր մինչև ձիերի կուրծքը, իսկ հունի մեջտեղում՝ մինչև վիզը: 16. Արևելյան երկրներից ոչ մեկում չկա, իհարկե, մեկ այլ գետ, որը ոչ միայն այդքան ջրառատ լինի, այլև բարաշատ: Հոսանքի արագության համար գետին տրված է Տիգրիս անունը, որ պարսկերեն նետ է նշանակում:

17. Այսպիսով, հետևակայինները, բաժանվելով փոքրիկ ջրկատներին, շրջապատված իրենց հեծյալներով, զենքները գլխավերևում պահած, առանց մեծ դժվարության հասան հունի խորքը: 18. Հետևակայիններից առաջինն ափ կլած արքան ձեռքով զինվորներին ցույց էր տալիս ծանծաղուտը, եթե ձայնը չէր բավարարում: Այնուհանդերձ հնարավոր չէր հաստատուն քայլեր անել. մեկ բարերն էին ոտքերի տակից դուրս պրծնում, մեկ ուժեղ հոսանքի տակ էին ընկնում: 19. Հատկապես դժվար էր ուտերի վրա բեռ տանողների համար. չկարողանալով ոտքի վրա հաստատուն կանգնել, նրանք ի վիճակի չէին լինում դիմադրել հորձանուտներին անհարմար բեռի պատճառով, և քանի որ ամեն մեկն իր բեռն էր պահպանում, այդ նրանք ավելի շատ պայքարում էին իրար միջև, քան հոսանքի դեմ. հոսանքի տա-

րած շատ բեռներ, հարվածելով մարդկանց, վայր էին գցում: 20. Արքան հորդորում էր նրանց պահպանել միայն զենքը, խոստանալով փոխհատուցել կորուստները, սակայն ոչ ոք սկանչ չէր գնում ոչ նրա խորհուրդներին, ոչ էլ հրամաններին. բոլորը սարսափով էին համակվել, և լողացողների ընդհանուր գոռոցներից սաստիկ աղմուկ էր բարձրացել: 21. Վերջապես նրանք հասան այն տեղերը, ուր հոսանքն ավելի թույլ էր, և ոչինչ չկորավ, փոքրաբանակ իրերից բացի: 22. Եթե այդտեղ որևէ մեկը որոշեր գրոհել նրանց վրա, ապա ամբողջ զորքը կարող էր ոչնչացվել, սակայն արքայի անփոփոխ բախտն այս անգամ էլ կանխեց զժրախտությունը: Եման ձևով նա գետանցեց Գրանիկոսը, երբ հակառակ ափին կանգնած էին թշնամու բազմահազար հետևակայիններ ու հեծյալներ. այդպես հաղթեց իր բազմաբանակ թշնամուն Կիլիկիայի կիրճերում: 23. Զէ՞ որ համարձակությունը, որով նա հատկապես աչքի էր ընկնում, կարող է հաղթահարել նաև բանականությունը, իսկ արքան երբեք ինքն իրեն հարց չէր տալիս, արդյո՞ք ինքն անխոհեմ է վարվել: Իսկ Մազելը, որն անկասկած կշարդեր Ալեքսանդրին, եթե գետանցի ժամանակ հարձակվեր նրա զորքի վրա, սկսեց մարտնչել արդեն ափին շարված և վերադինված միավորումների դեմ: 24. Նա առաջ ուղարկեց ընդամենը հազար հեծյալ: Տեղեկանալով հակառակորդի սակավաթվության մասին, Ալեքսանդրն արհամարհանքով վերաբերվեց դրան և հրամայեց պետական հեծյալների հրամանատար Արիստոնեսին սանձերը թողած արշավել թշնամու վրա: 25: Այդ օրը տեղի ունեցավ հեծելազորի հրուշակավոր ճակատամարտը, հատկապես Արիստոնեսի համար. նա նիզակը խրեց պարսկական հեծելազորի հրամանատար Սատրոպատի վիզը, հետաքնդեց նրան՝ ներխուժելով թշնամու շարքերը, վայր նետեց նրան ձիուց և թրով կտրեց զլուխը, որը դուրս բերեց մարտից և փառքով դրեց արքայի ոտքերի առջև:

X. Արքան այդ ճամբարում մնաց երկու օր, այնուհետև հրամայեց հայտարարել, որ մեկնելու ևն հաջորդ օրը: 2. Սակայն առաջին պահակաժամին լուսնի խավարում սկսվեց³², սկզբում դալկացավ նրա լույսը, ապա ամեն ինչ ներկվեց արյան գույնով, և վճռական ճակատամարտից առաջ հուզված մարդիկ ընկան ինչ-որ սնտոխապաշտական սարսափի մեջ: 3! Նրանք բողբոջում էին, որ իրենց տանում են աշխարհի ծայրը աստվածների կամքին հակառակ. թե գետերին մոտենալն իբր անհնար է,

լուսատուները չեն պահպանում իրենց փայլը, շուրջը անծայր-ծիր հողեր են, մերկ անապատ, այդքան մարդկանց արյուն է թափվում մի մարդու քմահաճույքով: Հայրենիքի մասին նա մտածեց է, հրաժարվել է իր հորից՝ Փիլիպոսից, դատարկ անապարծություն մը նա երկինք է ձգտում: 4. Բանը քիչ էր մնում հասնել բացելից խոտվության, երբ անվեհեր արքան հրամայեց բոլոր զորավարներին ու զինվորական ավագանուն հավաքվել պրեստրիայում,³³ իսկ եզիպտական գուշակներին, որոնց նա համարում էր երկնային լուսատուների լավագույն գիտակներ, հայտարարել, թե ինչ են իրենք մտածում այդ առթիվ: 5. Նրանք էլ բաշտեղյակ լինելով, որ ժամանակի շրջանը որոշակի հերթականություն է շարժվում և որ լուսինը խավարում է, երբ անցնում է երկրի հետևը կամ փակվում է արևով³⁴, մարդկանց չհայտնեցին այդ երևույթի իրենց հայտնի հիմնավորումը: 6. Այնուհանդերձ, նրանք ասացին, որ արևը հույների լուսատուն է, իսկ լուսինը՝ պարսիկներինը և որ ամեն անգամ, երբ լուսինը խավարում է, դա պարսիկների պարտության նշան է. նրանք հիշեցրին նաև հնագույն այն օրինակները, թե ինչպես լուսնի խավարումը պարսից արքաներին ուղեցույց է եղել, որ նրանք պատերազմել են աստվածների կամքին հակառակ: 7. Ամբոխի համար ոչինչ այնքան ուժ չունի, ինչքան սնտոխապաշտությունը. անսանձ, դաժան, փոփոխական ամբոխը սնտոխատության մասին աղղեցության ներքո ավելի հեշտություն է ևնպաշտության աղղեցության ներքո ավելի հեշտություն է ևնպարսկական մարդարեններին, քան իրենց առաջնորդներին: Այսպիսով, շվարած զինվորներին եզիպտացիների մեկնարանությունները վերադարձրին դեպի հույսն ու հաստատակամությունը: 8. Արքան, որոշելով օգտագործել զինվորների հոգեկան վերելքը, արդեն երկրորդ պահակաժամին լքեց ճամբարը. նրա աչից Տիգրիսն էր, ձախից՝ Գորգոնյան կոշվող լեռները: 9. Երբ նա բռնեց այդ ճամփան, առաջ ուղարկված հետախույզները հայտնեցին, որ լուսաբացից առաջ նրանք կհասնեն Գարեհին: Այդ պատճառով շարելով իր զորքը երթային շարքով, ինքը զնաց առջևի շարքում: 10. Սակայն պարզվեց, որ դա պարսկական արգելափակող ջոկատն է՝ բաղկացած մոտ հազար հոգուց, որը մեծ բանակ է թվացել. չէ որ եթե հնարավոր չէ ճշգրիտ անդեկություններ ստանալ, ապա կեղծ տեղեկությունները սարսափից լավագույնցվում են:

11. Պարզելով դա, արքան ոչ մեծ ջոկատով հասավ դեպի

յուրաջինները փախչող թշնամուն, շատերին կոտորեց, մյուսնե-
րին գերի վերցրեց և հեծյալներ ուղարկեց հետախուզութեան,
հրամայելով հանգցնել կրակը, որով բարբարոսները այրել էին
բնակավայրերը: 12. Չէ՞ որ, երբ փախչող թշնամիները անցնե-
լիս կրակ էին նետում շինութունների և հացահատիկի դեղերի
վրա, ապա կրակն այրում էր միայն արտաքին մասերը և չէր
թափանցում խորքը: 13. Երբ հաշողվում էր կրակը հանգցնել,
ձեռք էին բերում շատ հաց. սկսում էին հավաքել և այլ պա-
շարներ: Դա բարձրացնում էր զինվորների ոգին հակառակորդին
հետապնդելու համար. չէ՞ որ քանի դեռ նա ամեն ինչ այրում ու
ամաչացնում էր, անհրաժեշտ էր շտապել, որ ամեն ինչ կրակը
չլափի: 14. Այդպես ծայրահեղ կարիքը բերեց խելացի գործո-
ղութունների, քանի որ Մազելը, որը սկզբում բնակավայրերն
այրում էր ժամանցի պահերին, հիմա ուրախ էր, որ փախչելու
հնարավորություն ունի և շատ բան անվնաս թողնում էր թշնա-
մուն: 15. Ալեքսանդրը, տեղեկանալով, որ Դարեհը գտնվում է
իրենից հարյուր հիսուն ասպարեզ հեռավորության վրա, լիուզի
ապահովված ամեն տեսակ մթերքներով, շորս օր մնաց մի տե-
ղում: 16. Հենց այդտեղ նրա ձեռքն ընկան Դարեհի մի քանի
նամակները, որոնցում Դարեհը հույն զինվորներին հրահրում
էր սպանել կամ իրեն հանձնել արքային: Ալեքսանդրը տատան-
վում էր. չհրապարակել՝ արդյոք նամակները հավաքի ժամա-
նակ, հաստատ համոզված լինելով հույների՝ իր հանդեպ ունե-
ցած հավատարմությանն ու համակրանքին: 17. Սակայն Պար-
մենիոնը հետ կանգնեցրեց նրան, համոզելով, որ չի կարելի զին-
վորների ականջին նման դալթակղիչ բաներ հասցնել. չէ՞ որ
արքան ոչնչով ապահովված չէ ինչ-որ մի հանցագործի խարդա-
վանքից, իսկ ազահույթյան համար ոչ մի արգելք չկա: 18. Ար-
քան հետևեց նրա խորհրդին և ճանապարհ ընկավ:

Ճանապարհին Դարեհի կնոջը ուղեկցող ներքինիներից մեկը
հայտնեց, որ նա հիվանդացել է և զրևթև կիսամեռ է: 19. Ճա-
նապարհի անընդհատ դժվարություններից տանջված և հոգեկան
դառն վիճակից ճնշված, նա ուժասպառ էր եղել և այդտեղ էլ
մահացել սկեսրոջ և նրա դուստրերի՝ աղջնակների ձեռքերի վրա:
Նույնպիսի լուրերով ժամանեց և երկրորդ լրաբերը: 20. Արքան
տրվեց հեծնամանքներին՝ ասես նրան հայտնել էին իր մոր մահ-
վան մասին, և թափելով այնպիսի արցունքներ, որոնք կարող էր
թափել և Դարեհը, նա եկավ Դարեհի մոր վրանը, որտեղ գտնը-

վում էր մեռածի մարմինը: 21. Տեսնելով գետնին փովածին, նա
վշտի նոր հորդում ունեցավ, և Դարեհի մայրը, որի մեջ նոր
վշտը թարմացրեց նախկին հիշողութունները, գրկել է՝ իր
հասունացած աղջիկներին. մեծ սիրտանք ընդհանուր կսկիծի
մեջ նրանց համար, ում այդ սիրտանքը կարող էր օգնել: 22.
Այդտեղ էր նաև նրա փոքրահասակ թոռնիկը՝ հատկապես խրդ-
ճահարություն առաջացնող նրանով, որ չէր գիտակցում փոխա-
տությունը, որը պետք է ամենաշատը իր վրա անդրադառնար:
23. Կարելի էր կարծել, թե Ալեքսանդրը գտնվում է իր մերձա-
վորների շրջանում և ոչ թե սիրտում է նրանց, այլ ինքն է սիր-
տանք պահանջում: Նա հրաժարվեց կերակրից և թաղճան ժա-
մանակ պահպանեց բոլոր այն մեծարանքները, որոնք ավանդ-
ված են պարսից սովորություններով: Երդվում էմ Հելիսիսում,
և ա այն ժամանակ էլ դեռ արժանի էր դովասանքների՝ իր գթա-
արտության և զսպվածության համար: 24. Նա Դարեհի կնոջը
տեսել էր ընդամենը մեկ անգամ այն օրը, երբ նա գերվել էր,
եբբ եկել էր տեսնելու ոչ թե նրան, այլ Դարեհի մորը, և նրա
արտակարգ գեղեցկությունը ոչ թե կիրք առաջացրեց Ալեքսանդ-
րի մեջ, այլ հպարտության զգացում:

25. Տիրիտոսը՝ թագուհուն շրջապատող ներքինիներից մեկը,
օգտվելով վշտացողների իրարանցումից, դուրս պրծավ դարպա-
սից, որն առանձնապես չէին հսկում, որպես թշնամու հակառակ
կողմում գտնվող դարպաս. նա դեպք Դարեհի ճամբարը, պահ-
նորդները ճանաչեցին նրան և պատառտոված հագուստով
հեծկլտացող Տիրիտոսին բերեցին արքայի վրանը: 26. Դարեհը,
տեսնելով նրան, ընկճված ամեն տեսակ դժբախտ լուրերի
սպասումից և շիմանալով, թե հատկապես ինչից վախենալ, ասաց
նրան. «Թո տեսքը ինձ մեծ դժբախտություն է կանխազուշա-
կում, բայց դու մի խնայիր դժբախտիս ականջը, ես արդեն հա-
մակերպվել եմ դժբախտություններին, և իմ ճակատագրի մա-
տին իմանալը կարող է նույնիսկ սիրտանք լինել վշտիս համար:
27. Միթե՞ դու ինձ լուր ես բերել այն մասին, ինչին ես կասկա-
ծում եմ պմենաշատը և որի մասին նույնիսկ վախենում եմ խո-
սել՝ որ իմ հարազատները ենթարկվում են անարգանքի, որը ինձ
համար, և ես համոզված եմ, նրանց համար տանջանքներից
ամենավատն է»: 28. Դրան Տիրիտոսը պատասխանեց. «Դա ամե-
նեին էլ այդպես չէ: Ինչպիսի մեծարանք պատշաճ է թագուհի-
ներին, ենթակաների կողմից, այնպիսին ցուցաբերվել է ջո

թագուհիներին՝ հաղթողի կողմից, սակայն թո կինը վերջերս մա-
հացավ:» 29. Այնժամ ամբողջ ճամբարը լցվեց ոչ միայն հա-
ռաշանքով, այլև վայնասունով, քանի որ Գարեհը չէր էլ կաս-
կածում, որ նա սպանվել է՝ շամաձայնվելով անարգանքին:
Վշտից խելագարվելով, նա բացականչեց. «Ե՛նչ ոճիր եմ ես գոր-
ծել, ո՞վ Ալեքսանդր, թո հարազատներից ո՞ւմ եմ սպանել, որ
զու այգրան դաժանորեն ես վարձահատույց լինում: Դու ատում
ես ինձ առանց իմ կողմից որևիցե մեղքի. եթե դու արդարացի
պատերազմ սկսեիր, գործ կունենայի՞ր արդյոք կանանց հետ»:

30. Տիրիոսը, երզվելով հայրենական աստվածներով, համո-
զում էր նրան, որ նրա կնոջը ոչ մի անարգանք չի հասցվել, որ
Ալեքսանդրն էլ է ողբացել նրա կնոջ համար և Գարեհից պակաս
արցունք չի թափել: 31. Սակայն սիրող ամուսնուն այդ բաները
միայն նոր հոգսերի ու կասկածների տեղիք տվին. նա են-
թադրեց, որ այդպիսի զգացմունք գերուհու նկատմամբ առաջա-
ցել է, իհարկե, նման զեպքերում սովորական սիրային գործե-
րից: 32. Հեռացնելով բոլոր վկաներին և պահելով միայն Տիրիո-
սին և արդեն ադանց լացի, այլ ծանր հոգոց հանելով, նա
ասաց. «Դու տեսնում ես, Տիրիոս, որ սուտն անհնար է, չէ որ
այստեղ կարող են հայտնվել տանջանքի գործիքներ: Բայց դու
մի սպասիր դրանց, աստծու սիրուն: Եթե միայն դու հարզում
ես թո արքային, ասա ինձ այն, ինչ ես ձգտում եմ իմանալ և
ինչի մասին ամոթ է հարցնելը. մի՞թե հաղթող պատանին կնոջս
հանդեպ ոտնձգություններ է կատարել»: 33. Տիրիոսը, համա-
ձայնվելով, որ իրեն խոշտանգեն և աստվածներին վկայակոչե-
լով, հաստատեց, որ թագուհին պահպանել է իր սուրբ մաքրու-
թյունը: 34. Վերջապես հավատալով ներքինու խոսքերի ճշմար-
տությանը, Գարեհը, ծածկելով գլուխը, երկար լաց եղավ, հետո,
դեն նետելով ծածկոցը գլխից և շարունակելով արցունքներ հեղել,
նա ձեռքերը մեկնեց երկինք և բացականչեց. «Ո՞վ, պապենա-
կան աստվածներ, նախ և առաջ ամբապնդեք իմ արքայությունը,
իսկ հետո, եթե իմ ճակատագիրը վճռված է, ապա աղոթում եմ,
որպեսզի Ասիայի արքան լինի ոչ այլ ոք, քան այգրան արդա-
րամիտ այդ թշնամին, այգրան գթասիրտ հաղթողը»:

XI. Այսպիսով, թեև Գարեհը խաղաղության հասնելու երկու
ապարդյուն փորձերից հետո իր բոլոր մաքերը ուղղել էր դեպի
պատերազմը, այժմ, ցնցված թշնամու զսպվածությունից, նրա
մոտ որպես զեսպան իր տոհմից տասը մեծատոհմիկների ուղար-

կեց՝ խաղաղության նոր պայմաններով: Ալեքսանդրը խորհուրդ
հրավիրելով, հրամայեց ներս բերել նրանց: 2. Նրանցից տարի-
քով ավագն ասաց. «Գարեհը երրորդ անգամ է դիմում խաղա-
ղության առաջարկով, որը թելադրված չէ ուժով, այլ արդյունք է
միայն արդարամտության և զսպվածության: 3. Նա գիտակ-
ցում է, որ իր մայրը, կինը և զավակները տանջվում են ոչ թե
գերությունից, այլ իրենից բաժանված ապրելուց: Դու պահպա-
նում ես կենդանի մնացած կանանց անաղարտությունը, հոր պես
հոգում նրանց մասին, նրանց թագուհիներ անվանում, թույլատ-
րում ես պահպանել նախկին դիրքի տարբերանշանները: 4. Ես
թո զեմքին տեսնում եմ այն դրոշմը, որը տեսել եմ Գարեհի
զեմքին, երբ նա թողնում էր մեզ, բայց նա ողբում է իր կնոջը,
իսկ դու՝ թշնամուն: Դու արդեն շարքում կլինեիր, եթե չլինեիր
հուղարկավորման հոգսերը: Մի՞թե զարմանալի է, որ նա խա-
ղաղություն է խնդրում իրեն բարեկամ մի մարդուց: Ինչի՞ է
պետք զենքը նրանց, ում միջև այլևս ատելություն չկա: 5. Նախ-
կինում նա թո արքայության սահմանները որոշել էր մինչև Հա-
լիս գետը՝ կիդիական թագավորության սահմանը: 6. Այժմ նա
առաջարկում է որպես իր դստեր օժիտ, որին քեզ կնություն է
տալիս, բոլոր հողերը, որոնք գտնվում են Հելլեսպոնտոսի և
Եփրատի միջև. իր որդուն՝ Օքոսին, որը թո ձեռքում է, պահպա-
նիր որպես խաղաղության և նրա հավատարմության պատանդ,
իսկ մորը և երկու դուստրերին՝ աղջնակներին վերադարձրու
Երեք անձի համար նա խնդրում է քեզ ընդունել 30 հազար տա-
ղանդ փրկագին: 7. Եթե ես չիմանայի թո զսպվածության մասին,
ես չեի ասի, որ այժմ քեզ համար եկել է ժամանակը ոչ մի-
այն համաձայնալիու խաղաղությանը, այլև ձեռք բերելու այն:
Տե՛ս, թե ինչքան երկրներ ես անցել արդեն և զես ինչքան էլ
ձգտում ես: 8. Չափից դուրս մեծ իշխանությունը հղի է վտանգ-
ներով, դժվար է պահել այն, ինչը դու նույնիսկ վերցնել չես
կարող: Մի՞թե դու չգիտես, որ չափից ավելի ծանրաբեռնված
նավերը զեկավարման շեն ենթարկվում: 9. Միզուցե և Գարեհն
էլ այդպիսի կորուստներ է տալիս այն պատճառով, որ չափա-
զանց լայնարձակ տերությունը մեծ կորուստների հնարավորու-
թյուն է ստեղծում: Ավելի հեշտ է ինչ-որ բանի տիրանալ, քան
հետո այն պահել: Երզվում եմ Հերկուլեսով, մեր ձեռքերն ավե-
լի շատ ունակ են բռնելու, քան պահելու, Հենց Գարեհի կնոջ

մանը կարող է քեզ համոզել, որ գթասրտութիւնը գերազանցել է սահմանված չափերը»:

10. Ալեքսանդրը հրամայեց դեսպաններին դուրս գալ վրանից և հարցրեց խորհրդին՝ ինչպիսի որոշում ընդունել: Երկար ժամանակ ոչ ոք չէր համարձակվում իր կարծիքը հայտնել, առանց իմանալու արքայի կամքը: 11. Վերջ ի վերջո Պարմենիոնն ասաց, որ ինքն առաջներում էլ խորհուրդ է տվել փրկագնի դիմաց ազատ արձակել Դամասկոսի գերիներին. կարելի է շատ դրամ ձեռք բերել այն մարդկանց դիմաց, որոնց պահպանութիւնը պահանջում է մեծաթիվ խիզախ զինվորներ: 12. Ինքն այս անգամ էլ խորհուրդ է տալիս արքային փոխանակել մեկ պառավի և երկու աղջիկների, որոնք բնու են և՛ ճանապարհին, և՛ ուղղմական գործողութիւնների ժամանակ, երեսուն հազար տաղանդ ոսկու հետ: 13. Հարուստ արքայութեանը կարելի է տիրանալ պայմանագրերի և ոչ թի պատերազմի միջոցով, ասենք մինչ ւաժմ ոչ ոք չի տիրացել Իստրոսից մինչև Եփրատ ընկած այգրան լայնարձակ և հեռավոր հողերի: Ավելի լավ է նա հետադարձ հայացք գցի Մակեդոնիայի կողմը, քան հայացքը հասի Բակտրայի և հնդիկների վրա: 14. Նրա ճառը հաճելի չէր արքային: Եվ այսպես, որպեսզի վերջ տրվի քննարկմանը, նա ասաց՝ «Ես էլ դրամը կգերազանցի փառքից, եթե Պարմենիոնը լինելի: Բայց ես Ալեքսանդրն եմ, ես չեմ անհանգստանում դրամի պակասութիւնից և հիշում եմ, որ ես ոչ թե առևտրական եմ, այլ արքա: 15. Ես վաճառքի ոչինչ չունեմ, իսկ ինչ վերաբերում է իմ ճակատագրին, ապա այն, իհարկե, չեմ վաճառում: Եթե պետք է ազատ արձակել գերիներին, ապա ավելի պատվավոր է վերադարձնել նրանց ձրի, քան նրանց համար փրկագին վերցնել»:

16. Այնուհետև կրկին ներս հրավիրելով դեսպաններին, նա նրանց այսպես պատասխանեց. «Հայտնեցեք Դարեհին, որ թշնամիների միջև շնորհակալական արտահայտութիւնները ավելորդ են. եթե ես որևէ բանում բարյացակամութիւն ու շուստութիւն եմ ցուցաբերել, ապա ես դա արել եմ ոչ նրա բարեկամութեան սիրուն: Իմ բնութիւնն է պաշարել ոչ թե թշնամու դժբախտութիւնների, այլ նրա ուղղմական ուժերի դեմ: 17. Ես պատերազմ չեմ մղում գերիների ու կանանց դեմ. իմ թշնամին պիտի գենք ունենա իր ձեռքին: 18. Եթե Դարեհը ինձնից խաղաղութիւն խնդրեք անկեղծորեն, ապա ես կմտածեմ՝ չհամարձակե՞լ արդյոք: Սակայն այն բանից հետո, երբ նա մեկ նա-

խաղաղութիւն հրահրում է իմ զինվորներին դավաճանութեան, մեկ պատվով գնում իմ ընկերներին, որպեսզի ինձ սպանեն, ես պարտավոր եմ հետապնդել նրան, մինչև նա չսպանվի, և ոչ որպես ազնիվ թշնամու, այլ՝ հանցագործի, սպանութեան հրահրողի: 19. Եթե ես ընդունեմ ձեր կողմից հայտարարված պայմանները, ապա կհաստատվի նրա հաղթանակը: Նա առատաձեռնորեն ինձ է տալիս այն, ինչ գտնվում է Եփրատից այն կողմ: Բայց որտե՞ղ եք գուր գրուցում ինձ հետ: 20 է որ ես Եփրատի ձեր կողմում եմ: Եմ ճամբարը այն գծից դուրս է, որը նա հաշվում է խոստացած սփռի սահմանը: Քշեք ինձ այստեղից, որպեսզի ես իմանամ, որ գուր գիշում եք ձեր հողը: 20. Նույն առատաձեռնութեամբ նա ինձ կնութեան է տալիս իր աղջկան, բայց ես գիտեմ, որ աղջիկը պատրաստվում է ամուսնանալ իր ստրուկներից ինչ-որ մեկի հետ: Նա ինձ մեծ պատիվներ է մատուցում, գերադասելով ինձ որպես Մազկի փեսայի: 21. Գնացեք և հայտնեք ձեր արքային, որ ինչ որ կորցրել է և ինչ որ գեռես ունի, ինձ հասնելիք պարգևն է պատերազմի համար: Քանի դեռ գործում են պատերազմի օրենքները, ամեն մեկը կունենա այնքան սահմաններ այս և այն թագավորութիւններում, ինչքան կորոշի մտապահ օրվա ելքը: 22. Ես եկել եմ Ասիա ոչ թե նրա համար, որ ուրիշից ստանամ, այլ որ ինքս բաժանեմ: Եթե նա համարձակն է դառնալ երկրորդը՝ ոչ ինձ հավասարը, ես, թերևս, կանեմ այն, ինչ նա խնդրում է: Ասենք, աշխարհը չի կարող ղեկավարվել երկու արևներով և իր մեջ պարփակել երկու մեծ տերութիւններ հողերի անձեռնմխելիութեան պայմաններում: 23. Դրա համար էլ թող նա պատրաստվի կամ այսօր հանձնելու հողերը, կամ վաղը՝ պատերազմի, և թող իր համար չսպասի այլ ճակատագիր, քան այն, ինչ վիճակվել է: 24. Գնասպանները պատուխանեցին, որ նա այդպես է վարվում միայն նրա համար, որ հողում փայփայում է պատերազմի գաղափարը և վախենում է, որ այնպես չլինի խաղաղութեան հույսերը նրան՝ խանգարեն նրանք, իբր, իրենք են խնդրում, որ հնարավորին չափ իրենց շուտ արձակեն իրենց արքայի մոտ. չէ՞ որ նրան նույնպես անհրաժեշտ է պատրաստվել պատերազմի: Մեկնելիս, նրանք հայտարարեցին, որ մարտն արդեն սկսվել է:

XII. Այդ ընթացքում Դարեհը Մազկին երեք հազար հեծյալներով շուտափութով ուղարկեց զբաղեցնելու այն ճանապարհները, որոնցով պետք է անցնէր հակառակորդը: 2. Ալեքսանդրը նրա

կնոջ աճյունին պատշաճ հարգանք մատուցելուց հետո, նույն ամբողջում փոքրիկ կայազորի պահնորդութեան ներքո թողցնելով քանակի ծանրաշարժ մասը, իսկ ինքը շարժվեց թշնամուն դեմ հանդիման: 3. Նա հետևակը բաժանեց երկու թևերի, երկու կողմից շրջապատեց նրանց հեծյալներով. գումակը հետևում էր բանակին: 4. Հետո Մենիդոսին տալով թիթեակներ հեծելազոր, նա հրամայեց հետախուզել, թե որտեղ է գտնվում Գարեհը: Բայց քանի որ Մագնյը դարան էր մտել մոտակայքում, նա չհամարձակվեց ավելի հեռուն գնալ և կարողացավ միայն հայտնել, որ լսել է մարդկանց ձայներ ու ձիերի խրխնջոց: 5. Մագնյն էլ հեռվում հետախուզվեց տեսնելով, վերադարձավ ճամբար, լուր բերելով հակառակորդի դաշտայն մասին: Այսպիսով, բաց դաշտում կռվել ցանկացող Գարեհը հրաման տվեց իր ռազմիկներին զինվել և նրանց շարք կանգնեցրեց: 6. Ձախ թևում գնում էին բակտրիական հեծյալները՝ ընդամենը հազար ձի. այդքան էլ դահեր: Արաքոսիացիներն ու շոշեցիները շորս հազար հողի էին: Նրանց հետևում էին հարյուր մանգաղակիր մարտակառքեր, քառաձի մարակառքի հետևից գալիս էր Քեսը, ութ հազար հեծյալներով՝ նույնպես բակտրիացիներ: Այդ շարասյունը եզրափակում էին մտասպետները, որոնց կազմում երկու հազար ձի կար: 7. Այդ ժողովուրդների մեծ մասի հետևակայինները չէին խառնվում հեծելազորին, սակայն ամեն մեկը ձգտում էր յուրայինների կողքին լինել: Այնուհետև պարսիկներին մարդերի ու սողաբերի հետ առաջնորդում էին Արիոբարզանը և Օրոնատրատը: 8. Նրանցից ամեն մեկն իր զորամասն էր ղեկավարում. ընդհանուր հրամանատարությունը պատկանում էր Յրոսինին՝ հույակալու: արքա Կյուրոսի տո՛մին պատկանող յոթ պարսիկներից մեկի սերնդից³⁵: 9. Նրանց հետևում էին ցեղեր, որոնք քիչ էին հայտնի նույնիսկ իրենց դաշնակիցներին. նրանց հետևից գնում էր Փրադատը կասպիացիների մեծ ջոկատով, հիսուն քառաձի մարտակառքերի առջևից: Հնդիկները և Կարմիր ծովի ափերի բնակիչները քայլում էին մարտակառքերի հետևից ավելի շատ մարդաքանակի, բան որևէ իրական օգնություն համար: 10. Այդ ամբողջ շարքը եզրափակում էին ևս հիսուն մանգաղակիր մարտակառքեր, որոնց Գարեհը կցել էր օտարերկրյա զինվորներին: Նրանց հետևում էին հայերը, այսպես կոչված Փոքր Հայքից, հայերին հետևում էին բարելոնացիները, նրանց և ուրիշներին՝ բելիտները³⁶: Քոսեյան լեռների բնակիչները: 11.

Նրանց հետևից գալիս էին հորատացիները էվրես կղզուց, որոնք ինչ-որ ժամանակ հարել են մարաստանցիներին, սակայն այլ-անբովելով, մոռացել էին իրենց հայրենի սովորությունները: Նրանց Գարեհը կցել էր փոյուզիացիներին ու կատանցիներին: Մյուսֆայից գաղթած պարթևների ցեղը, որ բնակվում է այժմ պարթևների զբաղեցրած երկրում, եզրափակում էր ողջ շարքումը: Այդպիսին էր ձախ թևի կազմը: 12. Այ թևում կանգնած էին Մեծ Հայքի հայերը, կաղուսիներն ու կապադովիացիները, ասորիներն ու մարաստանցիները. նրանք նույնպես ունեին մանգաղակիր մարտակառքեր: 13. Ողջ զորքի ընդհանուր թիվը հետևյալն էր. քառասունհինգ հազար հեծյալ, երկու հարյուր հազար հետևակային³⁷: Այդպիսի դասավորությամբ նրանք անցան տասնապարեզ՝ կանգ առնելու հրաման ստանալով նրանք զինված, ապաստում էին թշնամու հայտնվելուն:

14. Ալեքսանդրի զորքը համակվել էր անհիմն մի սարսափով. բոլորը խելագարի նման սկսեցին դողալ, և ինչ-որ մի երկյուզածություն ներխուժեց նրանց հոգիները: Շոգ ամառվա երկնքի փայլատակումները հրգեհի տպավորություն էին թողնում, և զինվորները կարծում էին, թե Գարեհի ճամբարն այլովում է պահակախմբի անփութություն հետևանքով: 15. Եթե նույն ճանապարհով անցնող Մագնյը հարձակվեր նրանց վրա, մակեդոնացիները կարող էին մեծ պարտություն կրել. բայց նա այդ ժամանակ անգործ նստած էր նախապես իր զբաղեցրած բլուրի վրա, գոհ նրանից, որ իրեն շեն անհանգստացնում: 16. Ալեքսանդրը, տեղեկանալով զորքի խուճապային տրամադրության մասին, կանգառի աղբանշան տվեց և կարգադրեց զինվորներին իրենց առջև դնել զենքերը և հանգստանալ, բացատրելով, որ հանկարծակի վախի պատճառ չկա և որ թշնամին հեռու է: 17. Վերջապես ուշքի գալով, զինվորները ոգեշնչվեցին, կռվին զինվեցին և բոլոր միջոցներից ամենահուսալից համաբազարձավ Գարեհի մոտ կամ վախից, կամ էլ նրա համար, որ իրեն հրամայված էր միայն հետախուզել: 19. Նրա լրած բլուրը զբաղեցրին մակեդոնացիները, որովհետև այնտեղ ավելի անվտանգ էր, բան հարթավայրի վրա և, բացի այդ, այդտեղից երևում էր, թե ինչպես է դաշտում ծավալվում հակառակորդի

զորաշարքը: 20. Սակայն հարթավայրի շրջակա խոնավ լեռներից բարձրացած մառախուղը, թեև չէր ծածկում տեղանքի ընդհանուր տեսարանը, այնուհանդերձ թույլ չէր տալիս տեսնել առանձին զորասյունների շարժման հերթականությունը: Բազմաքանակ մարդիկ զբաղեցրել էին դաշտը, և այդ բազմահազար մարդկանց աղմուկը խլացնում էր հեռվում կանգնած մակեդոնացիներին: 21. Արքան խոր մտածմունքի մեջ ընկավ և ուշացումով սկսեց համեմատել իր պլանը Պարմենիոնի առաջարկի հետ, քանի որ լափն այնքան էր անցել, որ իր զորքը կարող էր այդ դրությունից ելնել միայն հաղթելուց հետո և ոչ առանց նորուստների: 22. Այսպիսով, պարզելով իր տարակուսանքները, նա հրամայեց պեոնացի վարձկան հեծյալներին գնալ առջևից: 23. Ինքը իր փաղանգը բաժանեց, ինչպես արդեն ասվեց, երկու թևի. նրանցից ամեն մեկին պաշտպանում էին հեծյալները: Երբ մառախուղը ցրվեց, և արևը սկսեց պայծառորեն լուսավորել հակառակորդի շարասյունը, մակեդոնացիները, իրենց բնավորությամբ հատուկ աշխուժությունից կամ սպասումից ծանձրացած, ռազմական սովորությունով բարձր գոչյուն արձակեցին: Պարսիկները դրան պատասխանեցին և շրջակա պուրակներն ու դաշտավայրերը զրդագին սարսափելի ձայներից: 24. Այնժամ արդեն անհնարին դարձավ կասեցնել մակեդոնացիներին, որոնք ձգտում էին նետվել թշնամու վրա: Սակայն արքան, որոշելով ավելի լավ ամբանալ զբաղեցրած բլրի վրա, հրամայեց հողապատնեշ կառուցել և, էրբ հրամանը ճշգրտություն բերավ ձեռք էր, գնաց իր վրանը, որտեղից երևում էր թշնամու ողջ ռազմաշարքը:

XIII. Այդ ժամանակ նրա աչքերի առջև բացվեց կայանալիք ճակատամարտի ողջ դաշտը. ձիերը և մարդիկ փայլվում էին զենք ու զրահից. զորավարները շրջայց էին կատարում իրենց զինվորներին, որը վկայում էր ճակատամարտին պատրաստվելու թշնամու փութաշանության մասին: 2. Ընդ որում լարված սպասման մեջ գտնվող մարդկանց զայրացնում էին շատ դատարկ մանրուքներ, ինչպես ասենք մարդկային զրույցը, ձիերի խրխինջը, զենքի փայլվումը: 3. Այդ ժամանակ Ալեքսանդրը խորհուրդ հրավիրեց և կամ իր հոգում իսկապես տատանվելով, կամ էլ որպեսզի փորձեր իր մարդկանց ոգին հարցրեց՝ ինչպես ավելի ճիշտ գործել: 4. Ռազմական արվեստում բոլոր առաջնորդների մեջ ամենափորձառու Պարմենիոնը առաջարկեց

գնալ խաբեություն և ընդհանուր մարտ չսկսել: Կարևոր է, իբր հարձակվել թշնամու վրա մութ գիշերին. քնից սարսափած զինք թռած էլ ե՛րբ հասցնեն գիշերային իրարանցման մեջ կովի պատրաստվել տարբեր սովորությունների և տարբեր լեզուներով խոսող մարդիկ: 5. Իսկ ցերեկը առաջին հերթին տեսնում ես քեզ վրա վաղուց սկյուծների ու բակտրիացիների սասափելի դժբերը, նրանց բրդոտ մորուքներն ու երկար մազերը, դրան ավելացրած հսկա հասակներն ու հզոր մարմինները. իբր զինվորներն ավելի շատ սարսափում են անհիմն, քան լուրջ պատճառներից: 6. Բացի այդ, այդ մեծ քանակությամբ մարդիկ կարող են ամեն կողմից շրջապատել թվով ավելի քիչ զորքը. չէ՞ որ ճակատամարտը կայանալու է ոչ թե Կիլիկիայի կիրճերում և ոչ էլ առանց ճանապարհների մացառուտներում, այլ բաց և հարթ դաշտավայրում: 7. Համարյա բոլորը համաձայն էին Պարմենիոնի հետ: Պոլիպերքոնեսը չէր էլ կասկածում, որ միայն այդպես կարելի է հաղթանակ ձեռք բերել: 8. Արքան, շքանկանալով նորից նախատել Պարմենիոնին, որին նա վերջերս ավելի խիստ վերաբերվեց, քան ինքը ցանկանում էր, ասաց, դիմելով Պոլիպերքոնեսին. «Գուր ինձ խորհուրդ եք տալիս գործել որպես ավազակ և գող. սրանց մտքինը միայն խաբեություն է: 9. Բայց ես թույլ չեմ տա, որ իմ փառքին մշտապես խոչընդոտեն կամ Գարեհի բացակայությունը, կամ տեղանքի նեղվածությունը, կամ էլ գիշերային ավազակաբարո գործողությունները: Անհրաժեշտ է, իհարկե, հարձակվել ցերեկով, ես գերադասում եմ զլլալ անհաջողությունից, քան ամաշել անձնական հաղթանակից: 10. Բացի այդ իմացել եմ, որ բարբարոսները գիշերային պահակախմբեր ունեն և նրանք զինված են, որպեսզի իրենց անակնկալի շերտին: Ուրեմն, պատրաստվեք մարտի: Նրանց այսպես քաջալերելով, նա թողեց գնան հանգստանալու:

11. Գարեհը սպասելով, որ թշնամին կվարվի հենց այդպես, ինչպես խորհուրդ էր տալիս Պարմենիոնը, հրամայեց ձիերը շարձակել, զորքի մեծ մասին՝ զենքը վայր չդնել և աշալուրջ անցկացնել գիշերային պահակությունները: Եվ այդպես վառվում էին կրակները: 12. Ինքն էլ առաջնորդների ու մերձավորների հետ շրջայց էր կատարում զինված ռազմիկներին, զիմելով Արևին, Միհրին և հավերժական սուրբ կրակին, որպեսզի այդ սատվածությունները պարսիկներին՝ նրանց հնազույն փառքին և նախնիների հիշատակին արժանի արիություն ներշնչեն: 23— Ալեքսանդր Մակեդոնացի 353

13. «Իհարկե՛ս, — ասում էր նա, — եթե միայն մարդկային միտքը կարող է ըմբռնել աստվածությունների կանխագուշակությունները, աստվածները մեր կողմից են: Նրանք վերջերս անակնկալ վախ տարածեցին մակեդոնացիների վրա. մինչև այժմ նրանք դեռ ու դեռ են նետվում խելագարների նման, զեն նետելով զենքեր: Այդպես են պատժում Պարսից թագավորությունը հուլանավորող աստվածները թշնամուն, զրկելով նրանց բանականությունից: 14. Ասենք նրանց առաջնորդն էլ ավելի սոռոզ չէ բանականությունամբ. նա, ասես վայրի գազան, տեսնելով զոհը, նետվում է ուղիղ իր առջև գրված թակարդը»:

Մակեդոնացիների ճամբարում էլ անհանգիստ էին, նրանք այդ գիշերն անցկացրին սարսափի մեջ, ասես ճակատամարտը գիշերային ժամի նշանակված լինելը: 15. Գիտ երբեք այդպիսի վախ չիմացած Ալեքսանդրը հրամայեց կանչել Արիստանդրին աղոթքների ու երգումների համար: Վերջինս հայանվեց սպիտակ հագուստով զոհաբերության բույսերը ձեռքում, նրա հետևից գնում էր արքան, իր աղոթքներով գթաշարժելով Յուպիտերին, Միներվային³⁸ և Հադիսանակի աստվածուհուն: 16. Այնժամ ծխական կարգով, զոհարերությունը կատարելով, արքան մտավ վրան գիշերվա մնացած մասը հանգստանալու: Բայց նա ոչ կարողանում էր քնել, ոչ էլ հանգիստ պառկել. նա մեկ մտածում էր, թե ինչ ձևով իջեցնի իր զորաշարքը դեպի պարսիկների աջ թևը, մեկ՝ ինչպես ընդհարվի թշնամուն ուղիղ ճակատով, մեկ աստանվում էր, արդյոք հարվածը հասցնե՞լ ձախ թևին: 17. Վերջապես անհանգստությունից ուժասպառ նա խոր բուն մտավ:

Երբ լույսը բացվեց, հրամանատարները հավաքվեցին հրամաններ ստանալու և աչքեցին պրետորիայի շուրջը տիրող անսովոր լուսությունից: 18. Ուրիշ անգամներ արքան ինքն էր կանչում նրանց և նախատում ուշացածներին. այժմ նրանք զարմատից առաջ. կարծում էին, թե նա քնած չէ, այլ քարացել է սարսափից: 19. Թիկնապահներից ոչ ոք չէր համարձակվում վրան մտնել, իսկ ժամանակն անցնում էր. զինվորները առանց առաջնորդի հրամանի ի վիճակի չէին ոչ զենք վերցնել, ոչ էլ իրենց տեղը գրավել շարքում: 20. Երկար տատանումներից հետո Պարմենիոնն ինքը հրամայեց զինվորներին սնվել: Եվ երբ արդեն տեսնեցին, որ հեռանալ, միայն այդ ժամանակ նա մտավ վրան, մի քանի անգամ ձայն տվեց Ալեքսանդրին և, վերջապես,

արթնացրեց՝ ձեռքով դիպչելով նրան: 21. «Վաղուց արդեն լուսացել է, — ասաց նա, — թշնամին առաջ է մղել իր զորաշարքը, իսկ բո զինվորները դեռ զինված չեն և սպասում են բո հրամաններին: Որտե՞ղ է բո առույզ ոգին, դու չեի՞ր արդյոք միշտ արթնացնում պահակներին»: 22. Գրան Ալեքսանդրը պատասխանեց. «Մի՞թե դու կարծում ես, որ ես կարող էի քնել մինչև հոգիս շաղատելի հոգսերից, որոնք ինձ հանգիստ չէին տալու: Եվ նա հրամայեց ճակատամարտի շեփոք հնչեցնել: 23. Պարմենիոնը, դեռ զարմանքը շանցած, հարցրեց, թե ինչ հոգսերից է աղատվել, երբ քնել է: «Չարմանալու ոչինչ չկա, — ասաց նա, — որ երբ Գարեհը այրում էր դաշտերը, կործանում բնակավայրերը, ոչնչացնում պարենը, ես տեղ չէի գտնում, էլ ինչի՞ց ես հիմա վախենամ, երբ նա համաձայնել է մարտի ելնել: 24. Հեթոպեսը կատարեց իմ աղոթքը: Սակայն իմ որոշման հաշվետվությունը կտրվի հետո: Գնացե՛ք ձեր զինվորների մոտ, ով ում գլխավորում է: Ես շուտով կգամ և կասեմ, թե ինչպես եմ ուզում գործել»: 25. Ալեքսանդրը հազվադեպ էր զրահ գործածում, ավելի հաճախ ընկերների պնդմամբ, բան վտանգից ելնելով: Իսկ այժմ նա հազավ մարմինը պաշտպանող զենքը և մտեցնելով զինվորների շարքերին: Նրանք նախկինում երբեք չէին տեսել նրան այդքան առույզ, և նրա անվեհեր դեմքը տեսնելով համոզվեցին, որ կհաղթեն:

26. Եվ այսպես, նա հրամայում է ցրիվ տալ հողապատնեշը, զորս է բերում իր զորքերը և շարում հետևյալ կերպ. աջ թևում գնում է իր լավագույն հեծելազորը³⁹ Կլիտոսի զխալորությունամբ, նրան է միացնում Փիլոտոսի հեծյալ ջոկատները և նրանց կողքին գնում հեծելազորի մնացած հրամանատարներին: 27. Վերջում կանգնած էր Մելետոսի թևը, որին հետևում էր փաղանգը: Սրա հետևից գալիս էին արծաթավահանակի զինվորները⁴⁰, այստեղ հրամանատարը Նիկանորոսն էր՝ Պարմենիոնի որդին: 28. Օժանդակ զորամասերում կանգնած էր Քենոսն իր ջոկատով, նրա հետևում Օրեստոսի և Լինկեստոսի ջոկատները, բոլորից վերջում Պոլիպերոնեսը՝ օտարերկրյա ջոկատի հրամանատարը, Այդ զորքի հրամանատարն էր Ամինտոսը: Փալկոսը առաջնորդում էր Բալակրոսին⁴¹, որը վերջերս էր դաշնակից դարձել Այդպիսին էր աջ թևի կազմը: 29. Ձախ թևում կանգնած էր Կրատերոսը պելոպոնեսյան հեծյալներով և նրանց միացած արքայացիների, լոկրերի ու մալիեացիների ջոկատներով: Այդ խում-

բը եղբայրականութեամբ էին թեմայացիները Փիլիպոսի հրամանատարութեամբ. հետիոտն շաբասյունը պաշտպանված էր հեծելագործով: Այդպիսին էր ձախ թևի կազմը: 30. Շրջանցումից խուսափելու համար վերջին զորասյունը շրջապատված էր սեծեղ ջոկատով: Թևերը նույնպես նա ամրացրեց օժանդակ ջոկատներով, տեղադրելով նրանց ոչ թև ճակատով, այլ կողքերից, որպեսզի նրանք պատրաստ լինեն ճակատամարտի, եթե թշնամին փորձի շրջապատել նրանց շաբասյունը: 31. Այստեղ գտնվում էին ագրիանացիները, որոնց ղեկավարում էր Ատալուսը, ինչպես և կրետական նետածիղներին: Վերջին շարքերը նա հեռացրեց ճակատագծից, որպեսզի ամբողջ զորաշարքը ամրացնի շրջանի ձևով: 32. Այստեղ էին գտնվում իլիրիացիները և վարձու զինվորները: Նա առանձին կանգնեցրեց նաև թևազեն թրակացիներին: Ողջ զորաշարքը նա այնքան շարժունակ դարձրեց, որ հետևից կանգնածները, որպեսզի նրանց չկարողանան շրջանցել, կարող էին շրջվել և հայտնվել ճակատի առջևում: Այսպիսով, առաջին շարքերը ավելի լավ չէին պաշտպանված թևերից, իսկ թևերը՝ ոչ ավելի լավ թիկունքային մասերից:

33. Այս ձևով տեղադրելով բոլորին, նա պատվիրեց, որ, եթե բարբարոսները աղմուկով իրենց վրա արձակեն մանգաղակիր մարտակառքերը, ապա պետք է նրանց ճանապարհ տալ և դիմավորել նրանց գրոհը լուռությամբ: Նա համոզված էր, որ մարտակառքերը կանցնեն, առանց վնաս պատճառելու, եթե ոչ ռթտակը շրնկնի, իսկ եթե նրանց առանց աղմուկի բաց թողնեն, ապա անհրաժեշտ է, որ հենց իրենք գոչլուռներով խրտնեցնեն ձիերին և, երբ նրանք սուրան երկու կողմից, խփեն նրանց նետերով: 34. Թևերի հրամանատարները հրաման ստացան ձգել թևերը, որպեսզի հնարավոր չլինի իրենց շրջանցել, բայց դրա հետ միասին շթուլացնել հետևի շարքը: 35. Գերիներով գումակը, որտեղ հսկողության տակ գտնվում էին Դարեհի մայրը և զավակները, նա տեղադրեց շարքից ոչ հեռու, բարձրադիր վայրում, ոչ մեծ պահպան ջոկատով: Չախ թևը, ինչպես և մյուս ճակատամարտերի ժամանակ, նա հանձնարարեց Պարմենիոսին. ինքը կանգնեց աջ թևում: 36. Կողմերը ղեռ չէին մոտեցել նիզակի թոփոքի տարածության շափ, երբ ոմն մի փախստակ, Բիոն անունով, ամբողջ թափով վազեց արքայի մոտ և հայտնեց, որ Դարեհը այն մասում, որտեղով ենթադրվում էր, որ

կանցնի թշնամու հեծելագործը, հողի մեջ երկաթյա ցցեր է տնկել, սակայն այդ տեղերում նշաններ են գրել, որպեսզի քաղաքի մարտապետության մեջ չզգեն յուրայիններին: 37. Հրամայելով վերջնել փախստակին հսկողության տակ, Ալեքսանդրը համոզում է հրամանատարներին, և հայտնելով, թե իրեն ինչ հայտնի դարձավ, համոզում է նրանց խուսափել նշված վայրից և հայտնել այդ վտանգի մասին հեծելագործին: 38. Այնուհանդերձ զորքը չէր կարող լսել նրա խրատները, քանի որ երկու բանակների աղմուկը խլացրել էր բոլորին: Բայց և այնպես բոլորի աչքերի առջև նա շրջայցելով հրամանատարներին և մտախի գտնվող զինվորներին, սկսեց խոսել այսպես...

XIV. Նա ասում էր, որ իրենց առջև, որոնք այդքան երկրորդ են անցել հաղթանակի հույսով, որի համար արժե պայքարել, մնացել է այս վերջին խոշորագույն Գրանիկոս գետի մոտ ճակատամարտը, Կիլիկիայի լեռների հաղթահարումը, Ասորիքի և Եգիպտոսի գրավումը կարող են փառքի հույս ներշնչել: 1. Պարսիկները պիտի կռվեն՝ փախուստի ուղիներ փնտրելով, քանի որ նրանք այլևս ի վիճակի չեն շարունակելու պայքարը: Արդեն երրորդ օրն է նրանք կանգնած են նույն տեղում, սարսափից ուժասպառ, իրենց սպառազինության տակ կբաժնան: Նրանց հուսալքման իսկական սպառնալիցն այն է, որ նրանք այրում են անփական բաղադրներն ու դաշտերը, հաստատ համոզված, որ արքան ամենը, ինչ իրենք շոշնացնեն, բաժին է ընկնելու հաղթողին: 3. Հիմք չկա վախենալու անհայտ ժողովուրդների դատարկ անուններից: Պատերազմի վեճը լուծելու համար ոչ մի նշանակություն չունի, թե ում են անվանում սկյուֆներ և ում էլ՝ կադուսիներ: Քանի որ նրանք անհայտ են, նշանակում է արժանի չեն փառքի: 4. Քաջերը երբեք անհայտության մեջ չեն մնում, իսկ մթության միջից ելած ոչ ուղղմատենը մարդիկ՝ զրանք միայն դատարկ անվանումներ են: Մակեդոնացիներն իրենց բազուկները հասել են նրան, որ աշխարհի երեսին չկա մի տեղ, որտեղ նրանց մասին չիմանան: 5. Թող նրանք միայն նայեն պարսկական զորքի անհարմարությանը. մի մասը ոչինչ չունի բացի տեգերից, ուրիշները պարսատիկներով քարեր են նետում, միայն բշերն են լրիվ սպառազեն: Այսպիսով. այնտեղ ավելի շատ մարդ կա, մեզ մոտ՝ մարտունակներ: 6. Ինքը չի պահանջում, որ նրանք արիարար մարտի նետվեն, եթե ինքն օրիշներին բազուկյան օրինակ չի ծառայելու: Ինքը պիտի

մարտնչի բոլոր դրոշների առջևում; Նա խոստանում է, որ ամեն մի վերք իր մարմնի վրա կլինի պարգևի նշան. նրանք իրենք գիտեն, որ միայն ինքք չի մասնակցում ընդհանուր ավարի բաշխմանը, և որ հաղթանակներով ձեռք բերված ամեն ինչ ծախսվում է նրանց պարգևների, նրանց կարիքները հոգալու համար: 7. Նա գիտի, որ այս բոլորն ասում է քաջարի մարտիկներին: Այլապես նա կասեր, որ նրանք մտել են մի տեղ, որտեղից այլևս փախչելն անհնար է: Երկրի տարածությունները այդքան չափելուց, իրենց հետևում այդքան գետեր ու սարեր թողնելուց հետո նրանք պետք է այժմ իրենց ձեռքերով ճանապարհ հարթեն դեպի հայրենիք, դեպի իրենց տները: Այդպիսի խոսքերով նա արիություն էր ներշնչում առաջնորդներին և մոտիկ կանգնած զինվորներին:

8. Դարեհը գտնվում էր ձախ թևում, շրջապատված լավագույն հեծյալների և հետևակայինների մեծ ջոկատով. նա արհամարհանքով նայում էր հակառակորդի սակավաթվության վրա, ևնթադրելով, թե իդուր են ձգված նրա թևերի շարքերը: 9. Սակայն, բարձրանալով մարտակառք և հայացքով ընդգրկելով իրեն աջից ու ձախից շրջապատող մեծաթիվ զորքը, մեկնեց ձեռքերը նրանց վրա և ասաց. «Դուք, դեռ մինչև վերջերս տիրակալներդ բոլոր երկրների, որոնց մի կողմից ողողում է օվկիանոսը, իսկ մյուս կողմից շրջափակում շեկեսպոնտոսը, այժմ ստիպված եք պայքարել ոչ թե փառքի համար, այլ փրկության, կամ էլ, ձեր կյանքում ամենաթանկ բանի՝ ազատության համար: Այսօրվա օրը կամ կվերականգնի թագավորությունը, որից ավելի լայնարձակ դեռ ոչ մի դարաշրջան չի տեսել, կամ էլ նրա վախճանը կլինի: 10. Գրանիկոսի մոտ մենք կովում էինք մեր ուժերի միայն փորձիկ մասով, երբ պարտվեցինք Կիլիկիայում, մեզ կարող էր իր գերիկն առնել Ասորիքը: Արքայություն ամուր պատվար էին ծառայում Տիգրիս ու Եփրատ գետերը: 11. Այժմ մենք եկել ենք այնտեղ, որտեղից, պարտության դեպքում, նույնիսկ փախչելու տեղ չկա. մեր թիկունքում ամեն ինչ ամայացված է երկարատև պատերազմի հետևանքով: Քաղաքներում բնակիչներ չեն մնացել, դաշտերում՝ հողագործներ: Կանայք և երեխաները ուղեկցում են մեր զորքը՝ թշնամու համար պատրաստի ավար: Եթե մենք մարմնով չծածկենք մեզ համար թանկագին էակներին: 12. Ինչ վերաբերում է իմ պարտքին, ես այնպիսի զորք եմ հավաքել, որը

հաջիվ է տեղավորվել լայնարձակ հարթավայրում. ես ձիեր եմ տվել, հոգացել, որպեսզի մարդկանց նման բազմությունը առանց սննդի չմնա: Ես ընտրել եմ մի վայր, որտեղ ամբողջ շրջը կարողանա ծավալվել: 13. Մնացածը ձեզանից է կախված. արիություն գտեք հաղթանակի համար, արհամարհեք թուրքը՝ քաջարի մարդկանց դեմ ուղղված ամենաթույլ զենքը:

Այն, ինչ դուք համարում էիք թշնամու քաջություն և վախճանում էիք, պարզվեց անխոհեմություն է: այն թուլանում է առաջին իսկ հարձակումից հետո, որպես իր խայթոցը կորցրած կենդանի: 14. Այստեղի լայնարձակ տարածություններում երկվում է, թե ինչքան փոքրաքանակ է հակառակորդի զորքը⁴². Կիլիկիայի լեռները դա բողարկում էին: Դուք տեսնում եք նոսր շարքեր, ձգված թևեր, կենտրոնը դատարկ է, հյուծված, հետևի շարքերը այնպես են ծավալված, որ արդեն մերկացնում են թիկունքը: Երգվում եմ աստվածներով, նրանց կարելի է ոտնատակ անել ձիերով, եթե ես ուղարկեմ միայն մանգաղակիր ժարտակառքերը: 15. Եթե մենք հաղթենք այս մարտում, մենք կշահենք նաև ողջ պատերազմը. չէ՞ որ նրանք էլ փախչելու տեղ չունեն՝ նրանց ճանապարհը մի կողմից փակել է Տիգրիսը, մյուս կողմից՝ Եփրատը⁴³, 16. Այն ամենը, ինչ առաջներում նրանց կողմից՝ Եփրատը⁴³, 16. Այն ամենը, ինչ առաջներում նրանց ուղղված էր, այժմ նրանց դեմ է: Մեր զորքը թեթև է և շարժունակ, նրանք՝ ծանրացած ավարով: Մենք կկոտորենք նրանց, որոնք ծանրաբեռնված են մեր բարիքներով, և դա կլինի հիմնավորումը և պտուղը մեր հաղթանակի: 17. Եթե որևէ մեկին առգնապի մեջ է գցում այդ ժողովրդի անունը, իմացեք, որ մակեդոնական մնացել է միայն զենքը, և ոչ ժողովուրդը. դուք փոխադարձաբար շատ արյուն եք թափել, իսկ փոքրաթվության դեպքում կորուստները ավելի ծանր են լինում: 18. Զե՞ որ Ալեքսանդրը, որքան էլ սարսափելի թվա վախկոտներին ու փոքրզիններին, այնուհանդերձ, միայն մի մարդ է և, հավատացեք ինձ, անխոհեմ ու անխելք, մինչ այժմ հաջողակ ոչ իր արիության, այլ խուճապի շնորհիվ: 19. Սակայն ոչինչ հարատև չէ, եթե հիմնված չէ բանականության վրա: Ենթադրենք, որ նրան ժպտում է քախտը, սակայն դա չի ծածկում նրա անխելքությունը: Բացի այդ հաջողություններն ու դժբախտությունները հաճախ փոփոխվում են, և ճակատագիրը երբեք անփոփոխ չի լինում: 20. Միգուցե աստվածները որոշել են չկործանել Պարսից թա-

զավորութիւնը, որին երկու հարյուր երեսուն տարիների ընթացքում տարել են հաջողութեան ուղիով և հասցրել մեծագույն բարձունքի, և ավելի շուտ ցանկանում են փորձութեան ենթարկել և հիշեցնել մեզ մարդկային կեցութեան անկայունութեան մասին, որի մասին բոլորն էլ հաջողութեան պահին քիչ են մտածում: 21. Դեռ վերջերս մենք արշավի էինք ելնում Հունաստանի դեմ, այժմ հետ ենք մղում մեր տներին սպառնացող պատերազմը: Այսպես է խաղում մեզ հետ ճակատագիրը: Պարզ է, որ հակառակորդներից ինչ-որ մեկը չի պահպանի իր թագավորութիւնը, քանի որ մենք երկուսս էլ ձգտում ենք դրան: 22. Այնուհանդերձ, եթե ոչ մի հույս էլ չմնա, անհրաժեշտութիւնը մղում է գործողութեան. մենք հասել ենք ծայրագույն կետին: Իմ մորը, երկու դուստրերին, Օթոս որդու՝ ծնված այս թագավորութիւնում իշխելու հույսով, մեր արքայական տոհմի առաջին զարմին, ձեր առաջնորդներին, ասես հանցագործների, թշնամին պահում է կապանքների մեջ: Եթե չլիներ կապը ձեզ հետ, ես ինքս էլ ինձ գերութեան մեջ կզգայի: Ազատեք իմ սիրտը կապանքներից, վերադարձրեք ինձ պատանդը, որի համար դուք ինքներդ պատրաստ եք մեռնելու. մորս, զավակներին, քանզի կնոջս արդեն կորցրել եմ գերութեան մեջ:

23. Հավատացեք, այժմ նրանք բոլորը դեպի ձեզ ձեռք են մեկնում, աղաչում հարազատ աստվածներին, ձեռանից օգնութիւն, գթասրտութիւն, հավատարմութիւն ակնկալում, որպեսզի դուք նրանց ազատեք ստրկութեան ճիրաններից, իրենց խղճուկ վիճակից: Թե՞ դուք կարծում եք հեշտ է ծառայել նրանց, ում վրա և թագավորելն է դարձելի: 24. Ես տեսնում եմ, թե ինչպես է մոտենում թշնամու զորաշարքը, բայց ինչքան ես մոտենում եմ վճռական գրոհին, այնքան քիչ եմ բավարարվում նրանով, ինչ արդեն ասել եմ: Թախանձում եմ ձեզ հայրենական աստվածների անունից, զոհասեղանների վրա այրվող անմար կրակով, իմ թագավորութեան սահմաններում ելնող արևի փայլով, Կլուրոսի հավերժ հիշատակով, որն առաջինը Պարսկաստանին թագավորութիւն պարգևեց, խլելով այն մարերից ու լիգիացիներից, փրկեք ծայրագույն անարգանքից պարսից ժողովուրդը և նրա անունը: 25. Մարտի գնացեք առույզ ու հույսով լի, որպեսզի սերունդներին փոխանցեք նախնիներից կտակած փառքը: Զեր ձեռքերում է ազատութիւնը, ուժը, ապագայի բոլոր հույսերը: Մահից խուսափում է նա, ով այն արհամար-

հում է, իսկ մահը խոցում է բոլոր երկչոտներին: 26. Ես ինքս էլ գնում եմ մարտակառքով ոչ միայն մեր սովորութիւն համաձայն, այլև նրա համար, որպեսզի դուք տեսնեք և կրկնօրինակեք ինձ. արդյոք ես ձեզ բաշտութեան թե փոքրագույն օրինակ պիտի ցույց տամ»:

XV. Այդ ընթացքում Ալեքսանդրը, որպեսզի շրջանցի փախչող տակի ցույց տված տեղը և հանդիպի Գարեհին, ուր պահպանում էր ձախ թևը, հրամայում է առաջ անցնել թեք շարված թևին: 2. Գարեհն էլ շրջվում է այդ կողմը, Բեսին լուր ուղարկելով, որպեսզի նա հրամայի վարժ հեծյալներին կողքից հարձակվելու Ալեքսանդրի ձախ թևի վրա: 3. Հենց նրա առջևում էին մանզաղակիր մարտակառքերը, որոնց նա, տըրված ազդանշանով, ուղարկեց թշնամու վրա: Մարտակառք վառողները սլացան, ազատ արձակելով սանձերը, որպեսզի տրոքեն նման հարձակման շսպասող ավելի շատ մարդկանց: 4. Ոմանց վիրավորում էին առեղնիքից դուրս ցցված նիզակները, մյուսներին՝ կողքերից տեղադրված գերանդիսաձև սրերը, սակայն մակեդոնացիները ոչ միայն նահանջեցին նրանց առջև, այլև փախուստով խախտեցին իրենց շարքերը: 5. Դեռ Մաղին էլ նրանց սարսափի մեջ գցեց իր հարձակումով, քանի որ հազար հեծյալ ուղարկեց, որոնք շրջանցելով պետք է թալանեին հակառակորդի ճամբարը, ենթադրելով, որ մի տեղում հավաքված գերիները իրենք կթոթափեին իրենց շղթաները, տեսնելով մոտեցող յուրայիներին: 6. Բայց նրան շահողվեց խաբել Պարմենիոնին, որը կանգնած էր ձախ թևում: Սա շտապ արքայի մոտ ուղարկեց Պոլիդամաստոսին՝ հայտնելու վտանգի մասին և կարգադրութիւններ ստանալու: 7. Արքան, լսելով Պոլիդամաստոսին, ասաց նրան. «Գնա և ասա Պարմենիոնին, որ եթե մենք հաղթենք շարքում, ապա ոչ միայն կվերադարձնենք մեր ունեցածը, այլև կխլենք թշնամուն պատկանողը: 8. Այնպես որ հիմք չկա զորաշարքից թեկուզ չնչին ուժեր հանել դրա համար: Թող նա, իմ և իմ հայր Փիլիպոսին արժանի ձեռով արհամարհի ունեցվածքի կորուստը և արիաբար մարտնչի թշնամու դեմ»: 9. Այդ ընթացքում բարբարոսները խուճապի մատնեցին գումակը, իսկ գերիները, սպանելով պահակախմբից շատերին և թոթափելով իրենց շղթաները, սկսեցին զինվել՝ ով ինչով կարող էր, միացան իրենց հեծյալներին և երկու կողմից հարձակվեցին զժվարին կացութեան մեջ ընկած մակեդոնացիներին վրա: 10.

Թագուհի Սիսիգամբիսին շրջապատող զերինները, հրձիկելով պարսիկների հաղթանակով, հայտարարեցին, որ թշնամին մեծ պարտություն է կրել և լիովին զրկվել ամեն տեսակ ունեցվածքից: Նրանք կարծում էին, որ ճակատամարտի ընթացքը բոլոր տեղամասերում էլ նույնն է, և, որ հաղթանակած պարսիկները ցրվել են ավար փնտրելու: 11. Գերինները համոզում էին Սիսիգամբիսին զեն նետել վիշտը, բայց նա նույն վիճակում էր մնում, ոչ մի ձայն չհանելով և զենքի արտահայտությունը չփոխելով: Նա անշարժ նստած էր, ասես վախենում էր ժամանակից առաջ ուրախությամբ խրտնեցնել երջանիկ բախտը. նրան նայողները չէին կարող որոշել, թե նա ինչ է ուզում: 12. Մինչդեռ Ալեքսանդրի հեծելազորի հրամանատար Մենիդոսը, իր անձնական որոշումով թե արքայի հրամանով, հեծյալների մի քանի ջոկատով մոտեցավ, որսկնզի օգնի գումակին, սակայն չզիմացավ կովկասցիների ու սկյութների ճնշմանը և հազիվ նրանց հետ մարտի մեջ մտած, վերադարձավ արքայի մոտ, վրեժխնդիր շինելով կորստի համար, այլ միայն հայտնելով կատարվածի մասին: 13. Դառն զգացումը խախտեց Ալեքսանդրի պլանները. իլուր չէր, որ նա խուսափում էր շարքից զինվորներ հանել իրենց ունեցվածքը վերադարձնելու համար: Այսպիսով, նա սկյութների դեմ է ուղարկում Արեոտոսին՝ սարխակիրներ կոչվող նիզակակիրների հրամանատարին:

14. Մինչ մարտականքերը, խախտելով դրոշների առջևի շարքերը, ճեղքում էին փաղանգը, մակեդոնացիները վերագտնելով իրենց արիությունը, ընդունեցին դրանց իրենց շարքերը: 15. Նրանց ուղղմաշարքը պատենշի էր նմանվում. նրանք սողմում էին իրենց նիզակները և երկու կողմերից ծակծկում էին վրա եկող ձիերի փորերը, հետո շրջապատում մարտակառնը և նրանց վրայից վայր գցում կառավարներին:

16. Շարքը լցվեց ընկնող ձիերով և կառավարներով, նրանք չէին կարողանում կառավարել վախեցած ձիերին. սրանք գլխի հաճախակի կտրուկ շարժումներով ոչ միայն կտրատում էին լծասարքերը, այլև շուտ էին տալիս մարտականքերը. վիրավորվածները իրենց հետևից քարշ էին տալիս սատակածներին, կատակածները չէին կարողանում կանգ առնել, հյուծվածները՝ շարժվել: 17. Միայն մի քանի մարտականքեր հասան զորասյան վերջին շարքերին, սարսափելի մահ բերելով նրանց, ում վրա հարձակվում էին. գետնին փռված էին մարդկային ջախջախված

մարմիններ և, քանի որ տանջալի են միայն թարմ վերքերը, ավելի շուտ վիրավորվածները և խելվածները իրենց ձեռքից բաց չէին թողնում զենքը, մինչև արնաքամ լինելով մեռած էջն ընկնում: 18. Իսկ այդ ժամանակ Արեոտոսը, սպանելով գումակը թալանած սկյութների առաջնորդին, ավելի էր սաստկացնում ճնշումը և սարսափեցնում նրանց: Սակայն նրանց օգնության հասան Գարեհի ուղարկած բակտրիացիները և փոխեցին ճակատամարտի բախտը. շատ մակեդոնացիներ ճգմվեցին առաջին հարձակման ժամանակ, շատերը փախան Ալեքսանդրի մոտ: 19. Այդ ժամանակ պարսիկները հաղթողների սովորով զոչյուն բարձրացրին և ավելի կատաղորեն նետվեցին թշնամու վրա, գտնելով, որ այն բոլոր տեղերում ջարդված է: Ալեքսանդրը նախատում էր վախեցածներին, քաշվելու նրանց, մեն-մենակ աշխուժություն, տալիս թափը կորցրած մարտին և, վերջապես, բարձրացնելով իր զինվորների ոգին, ուղարկեց նրանց հարձակման:

20. Աչ թեև ավարսիկների շարքերը որոշ չափով նոսրացան. այնտեղից հեռացել էին բակտրիացիները⁴⁴ գումակի վրա հարձակվելու համար: Այսպիսով Ալեքսանդրը նետվեց թուլացած շարքերի վրա և մեծ ջարդ կազմակերպեց: 21. Իսկ ձախ թեև կանգնած պարսիկները, հույս ունենալով շրջապատել նրան, նրա վրա շարժվեցին թիկունքից: Հայտնվելով շրջապատման մեջ՝ արքայի վճռակը չափազանց վտանգավոր կլիներ, եթե ագրիանացի հեծյալները, խթանելով ձիեր, հարձակված շհասցնեին արքային շրջապատողներին և, ջարդելով նրանց, շատիպեին նրանց իրենց դեմ դուրս գալ:

22. Երկու շարքերն էլ շփոթմունքի մեջ ընկան: Ալեքսանդրի թե առջևից, թե թիկունքից թշնամիներ էին, թիկունքից նրան սպառնացողներին նեղում էին ագրիանացիները. գումակը թալանելուց վերադարձած բակտրիացիները չէին կարողանում գտնել իրենց նախկին տեղերը. շատ զորամասեր յուրայիններին անջատվել էին, կոչում էին՝ ում որտեղ նետել էր դիպվածը: 23. Արքաների ներկայությունը ավելի էր թեժացնում ձեռնամարտը: Պարսիկներից սպանվածներն ավելի շատ էին, իսկ վիրավորները գրեթե հավասար էին: 24. Գարեհը մարտականքի վրա էր, իսկ Ալեքսանդրը՝ ձիու: Երկուսին էլ անձնուրացորեն պաշտպանում էին լավագույն ջոկատայինները. նրանցից ոչ ոք չէր ուզում, ասենք չէր էլ կարող, իր արքայից հետո ապրել: Ամեն մեկը

բունում էր, որ իր տիրակալի աչքի առչև մեռնելը ավելի պատվազովոր է: 25. Ամենամեծ վտանգի ենթարկվում էր նա, ում ամենաշատ էին պահպանում, քանզի ամեն մեկը ձգտում էր իր թշնամու արքային սպանելու պատիվն ունենալ:

26. Ինչէ, տեսողական խարկա՞նք էր թե իրականութուն, ույց Ալեքսանդրին շրջապատող մարդիկ հաստատում էին, թե տեսել են արքայի գլխավերևում ոչ բարձր, հանգիստ թռչող մի արծիվ, որը չէր վախենում ոչ զենքի շաշյունից, ոչ էլ մեռնողների հառաչանքներից. երկար ժամանակ նա ոչ այնքան թռչում էր, որքան ճախրում Ալեքսանդրի ձիու վերևում: 27. Սպիտակ հագուստ հագած կանխագուշակ Արիստանդրը, դափնու ճյուղը ձեռքին, թեժ մարտում կռվող զինվորներին իհարկե մատնացույց արեց թռչունը՝ հաղթանակի կասկած չհարուցող նախանշանակը: 28. Քիչ առաջ ընկճված զինվորներն առույգության և հաստատակամության լիցք ստացան, հատկապես նրանից հետո, երբ նիզակով սպանվեց Դարեհի կառապանը, որն արքայի առչև նստած ձիերն էր վարում: Ո՛չ պարսիկները, ո՛չ էլ մակեդոնացիները չէին կասկածում, որ սպանվել է ինքը՝ արքան: 29. Այսպիսով Դարեհի ազգականներն ու զինակիցները աններդաշնակ գոչումներով ու հառաչանքներով այդ մասին հայտնեցին ողջ զորաշարքին, որը մինչ այդ հավասար հաջողությամբ կռվում էր, և ձախ թևը, փախուստի զիմելով, լքեց արքայի մարտակառքը, որին ընդհուպ մոտեցան նրան աչից շրջապատող ջոկատի զինվորները: 30. Ասում են, Դարեհը, մերկացնելով ակինակը, տատանվում էր, շագատվել՝ արդյոք խայտառակ փախուստից մահվան գնով, սակայն խիղճը թույլ չտվեց նրան՝ մարտակառքի վրա համրառնածին, դավաճանել զեռ մարտից լրիվ զբոս շեկածներին: 31. Մինչ նա տատանվում է հույսի ու վհատության միջև, պարսիկները սկսեցին հետզհետե նահանջել և նոսրեցնել շարքերը: Իսկ Ալեքսանդրը, փոխելով ձին (նա շատերից էր արդեն ուժասպառ արել), հարվածում էր իրեն զիմազրոյների զեմքերին, իսկ փախչողների՝ մեջքերին: 32. Եվ արդեն ճակատամարտը վերածվեց կոտորածի, երբ Դարեհն էլ փախուստի զիմեց իր մարտակառքով: Հաղթողները կրկակոխ հեծնում էին փախչողներին, սակայն դեպի երկինք բարձրացող փոշու ամպերը ծածկում էին նրանց տեսողաշտը: Այսպիսով բոլորը խարխափում էին, ասես մթության մեջ, իրար գլխի հավաքվում ազդանշանների փոխարեն ծանոթ ձայներ լսելով:

23. Սակայն լավում էին սանձերի չիկչխկոցները, որոնցով այս ու այն կողմ են քշում մարտակառքերին լծված ձիերին: Այդ հակառակորդի փախուստի միակ արձագանքն էր:

XVI. Իսկ մակեդոնացիների ձախ թևում, որն ինչպես արդեն ասվեց պահպանում էր Պարմենիոնը, մարտը քի մեկ թե մյուս կողմի համար այլ պայմաններում էր ընթանում: 2. Մազելը արքնթաց նետվելով իր հեծելազորով, նեղում էր մակեդոնացիների հեծյալ զորամասերին: Ունձնալով թվային դերակշռություն, նա արդեն շրջանցեց թշնամուն, երբ Պարմենիոնը հրամայեց իր հեծյալներին հայտնել Ալեքսանդրին, թե ինչ ծանր վիճակում են իրենք և եթե, իբր, արքան արագորեն չգա օգնության, ապա ինքը չի կարողանա կասեցնել ընդհանուր փախուստը: 3. Երբ Պարմենիոնից այդ լուրը եկավ, արքան արդեն հետու էր գնացել, սպառնալով փախչող թշնամու թիկունքին: Նա հրամայեց կանգնեցնել սլացող ձիերին. կանգ առավ նաև ողջ ջոկատը: Ալեքսանդրը կատաղած էր, որ իր ձեռքից խլեցին հաղթանակը և որ Դարեհին այժմ ավելի հեշտ կլինի փախչելը, քան նրան հետապնդելը: 4. Նույն ժամանակ Մազելին տեղեկացրին Դարեհի պարտություն մասին, շնայած ուժերի գերակշռությանը, վախենալով կռվող կողմերի ճակատագրից, նա թուլացրեց ճնշումը ճգմված հակառակորդի վրա: Պարմենիոնը չհասկացավ, թե ինչու ճակատամարտը անսպասելի թուլացավ, բայց նուստուն կերպով օգտվեց դրանից՝ չաղթելու համար: 5. Նա հրամայեց իր մոտ կանչել թեսալական հեծյալներին ու ասաց. «Տեսնո՞ւմ եք հենց նոր ձեզ սաստիկ նեղող թշնամուն: Այժմ, հանկարծակի համակված վախով, նրանք երեբացին մարտում: Իհարկե, մեզ հաղթանակ է խոստանում մեր արքայի հաջողությունը: Ամենուր փռված են պարսիկների դիակները: Էլ ինչո՞ւ եք դանդաղում: Մի՞թե գլուխ չեք հանի փախչողներից»: 6. Նրա խոսքերը ճշմարիտ թվացին և հույսը բարձրացրեց զինվորների ընկճված ոգին: Ասպանդակելով ձիերին բոլորը նետվեցին թըշնամու վրա, և վերջիններս սկսեցին ոչ թե դանդաղորեն նահանջել, այլ արագ երթով: Մնում էր մեջքով շրջվելին, որ դառնար իսկական փախուստ: 7. Պարմենիոնը, չիմանալով աջ թևում արքայի հաջողությունների մասին, զսպում էր իր մարդկանց, իսկ Մազելը տարածություն ստանալով փախուստի համար, ոչ թե ուղղակի, այլ շրջանցելով, բայց դրա փոխարեն հուսալի ճա-

նապարհով, անցավ Տիգրիսը և կոտորված զորքի մնացորդներով մտավ Բաբելոն:

8. Դարեհն իր փախուստի փոքրաթիվ ուղեկիցները հետ ուղղվեց դեպի Լիկուս գետը: Անցնելով այն, նա շփտեց քանդել կամուրջը թե ոչ, քանի որ սպասում էին, որ ուր որ է կհայտնվի թշնամին: Նա հասկանում էր, որ եթե քանդի կամուրջը, ապա դեռ գետը չհասած բազմահազար մարդիկ կդառնան թշնամու ավար: 9. Հայտնում են, որ նա հեռանալով և թողնելով իր հետևից կամուրջը, ասել է, որ գերագաստ է իրեն հետապնդող թշնամին անցնի կամրջով, քան փախուստով փրկվողներին զրկի ճանապարհից: Ինքն էլ փախուստի ժամանակ անցնելով հսկայական տարածություն, գիշերվա կեսին ժամանեց Արբելա: 10. Ո՞ւմ մտքով կարող էր անցնել կամ ո՞վ էր ի վիճակի բռնեցնել նկարագրել ճակատագրի այդքան փոփոխություններ, առաջնորդների և զինվորների վախճան, պարտվածների փախուստ, առանձին մարդկանց և ամբողջ բանակի կործանում: Ճակատագիրը խաղաքարտի վրա էր դրել այդ մի օրվա ընթացքում, կարելի է ասել, շատ դարերի ապագա ընթացքը: 11. Ոմանք փախում էին ամենակարճ ճամփաներով, ուրիշները փնտրում էին հետապնդողներին անծանոթ կիրճեր ու արահետներ: Հետևակալիները, կորցնելով իրենց առաջնորդներին, խառնվում էին հեծյալներին, անզենները՝ զինվածներին, վիրավորները՝ անվնասներին: 12. Հետո սարսափից մոռանալով իրենց հետևել չկարողացողների հանդեպ գթասրտության մասին, թողնում էին նրանց ճանապարհին, փոխադարձաբար ողբալով նրանց ճակատագիրը: Հոգնածներին ու վիրավորներին հատկապես տանջում էր ծարավը. բոլոր անվակների մոտ մարդիկ ընկնում էին հոսող ջրի վրա և բերանով այն ներս քաշում: 13. Ազահությունից նրանք կռվ էին տալիս և պղտոր ջուրը, հետո ցավեր ունենում ստամոքսում, որտեղ տիղմը նստվածք էր տալիս: Նրանց ոտքերը թուլացել և դժվարությամբ էին հնազանդվում և, եթե նրանց էր հասնում թշնամին, նրանք նոր վերքեր էին ստանում: 14. Եթե հնարավոր չէր մոտենալ մոտակա աղբյուրներին, մարդիկ հեռանում էին ճանապարհից, որպեսզի գտնեն թեկուզ խոնավորություն ունեցող թաքնված մի վայր, և որտեղ սակավաջուր կամ հեռավոր ջրամբար չէր մնացել, որը ինչ-որ մեկի ծարավը չկտորեր: 15. Իսկ ճանապարհի մոտակա բնակավայրերից լքվում էր ծերունիների ու կանանց լացն ու հառաչանքը, որոնք

բարբառանների սովորույթով կանչում էին Դարեհին, նրան զեռաբա կոչելով:

16. Ալեքսանդրը, ինչպես ասվեց, կանգնեցրեց իր զորքի առաջխաղացումը, մոտեցավ Լիկուս գետին այն ժամանակ, երբ փախողների մարտը խցանել էր կամուրջը. շատերը հավածվելով թշնամու կողմից, նետվում էին գետը և, ճակատամարտից ու փախուստից ուժասպառ, զենքի ծանրության տակ զոհվում էին ջրանդունդում: 17. Արդեն ոչ միայն կամուրջը չէր տեղափոխում փախողներին, այլև գետում էլ տեղ չկար մարդկանց համար, որոնք անսպասելիորեն մեծ զանգվածներ էին կազմել. չէր խուճապի մատնվելիս ամենաշատը վախենում են այն բանից, ինչ առաջինն է սարսափ ներշնչել: 18. Ալեքսանդրն իր ռազմիկների պնդմամբ թույլ կտար անպատիժ փախող թշնամուն հավածել, եթե դրան շխանգարեր այն, որ բոլորի զենքերը բթացել էին, մարտիկների ձեռքերը հոգնել էին, մարմինները ջարդվել արագ ձիարշավից և օրն էլ թեքվում էր դեպի գիշեր: 19. Եվ, իսկապես, երբ նրան կանչեցին ձախ թևից, որին նա համարում էր մարտում անսասան կանգնած, նա որոշեց վերադառնալ յուր մարտում անսասան կանգնած, նա որոշեց վերադառնալ յուր մարտում անսասան շրջել էր դրոշները, երբ Պարմենիոններին օգնելու և արդեն շրջել էր դրոշները, երբ Պարմենիոնի ուղարկած հեծյալները հայտնեցին նաև այդ թևի հաղթանակի մասին: 20. Սակայն ամենամեծ փորձությունը նա ենթարկվեց այդ օրը, երբ նա զորքը ճամբար էր տանում: 21. Նրան ուղեկցում էին միայն մի քանի զորամասեր առանց ռազմաշարքի: Նրանք իրենց հաղթող էին համարում, քանի որ մոտեցում էին, թե թշնամիներից բոլորը փախուստի էին դիմել կամ ընկել ռազմի դաշտում: Երբ հանկարծ նրանց դեմ ելավ հեծյալների մի ջոկատ, սկզբից նրանք զանդաղեցրին ընթացքը, իսկ հետո, նկատելով մակեդոնացիների սակավաթվությունը, նետվեցին նրանց վրա: 22. Արքան գնում էր դրոշների առջևից ավելի շուտ բողբոջելով իր վախը, քան այն հաղթահարելով: Սակայն այստեղ էլ նրան չբեց ծանր պահին սովորական դարձած նրա բախտը: 23. Եվ իսկապես, նա նիզակով խոցեց թշնամու հեծելազորի կռվի ծարավ հրամանատարին, որը շափազանց շատ էր մոտեցել, և երբ նա ընկավ ձիուց, նա նույն նիզակով սպառնեց հաջորդին և շատ ուրիշներին: 24. Թշնամու վրա նետվեցին և նրա մերձավորները: Բայց պարտիկներն էլ չէին ընկնում և նրա մերձավորները: Բայց պարտիկներն էլ չէին ընկնում առանց վրեժխնդիր լինելու, և ամբողջ շարասյան ընդհանուր մարտում այդքան տաքարյունություն չկար, ինչքան փոքրիկ



ըոկաւանդի այս ընդհարման մեջ: 25. Վերջ ի վերջո, բարբարոսները, գտնելով, որ աղշամուղջին իրենց փախուստն ավելի ապահով է, քան կովելը, հեռացան խմբերի բաժանված: Իսկ արքան, փրկվելով այդ անսպասելի վտանգից, իր մարդկանց անվնաս ճամբար հասցրեց:

26. Այդ ճակատամարտում զոհվեցին, ինչպես կարողացան դրոշել հաղթողները, քառասուն հազար պարսիկներ. մակեդոնացիների կորուստը 300 մարդ էլ չկազմեց⁴⁵: 27. Այս անգամ արքան այդ հաղթանակի համար պարտական էր ոչ այնքան իր փախտին, ինչքան արիությանը: Նա հաղթեց շնորհիվ իր ուղիղ սրտի և ոչ թե հարմար տեղանքի, ինչպես նախկինում: 28. Այստեղ նա և՛ զորաշարքը կազմեց մեծ վարպետութեամբ և՛ ինքը կովեց եռանդով, և խորաթափանցութեամբ ցուցաբերեց, որ արհամարհեց գումակի կորուստը, հասկանալով, որ ճակատամարտի բախտը որոշվելու է հիմնական զորաշարքի պայքարում: 29. Ճակատամարտի դեռ անորոշ ելքի ժամանակ նա արդեն գործում էր որպես հաղթող: Նա փախուստի մատնեց պարտված թշնամուն և հետապնդեց փախչողներին ոչ թե տաքարյունութեամբ, այլ խոհեմաբար, որը դժվար է հասկանալ նրա կրակոտ խառնվածքի դեպքում: 30. Չէ՞ որ եթե նա շարունակեր հետապնդել նահանջողներին, քանի դեռ զորքի մի մասը շարքում էր գտնվում, նա կարող էր պարտվել իր մեղքով կամ հաղթել ուրիշների արիության շնորհիվ: Եվ եթե նա երկյուղեր իր վրա հարձակված բազմաթիվ հեծյալներից, ապա հաղթողը ստիպված կլիներ փախչել կամ մեռնել ողորմելի ձևով: 31. Զուկատների առաջնորդներն էլ շարատավորեցին իրենց փառքը. նրանցից ամեն մեկի ստացած վերքերը վկայում էին նրանց բաջուրյան մասին: 32. Հեփեստիոնեսի ձեռքը խոցվել էր նիզակով, Պարթիկոսը, Քենոսը և Մենիդոսը քիչ էր մնացել սպանվելին նետերի հարվածներից: 33. Եվ եթե մենք ցանկանում ենք արդարաշիրտին գնահատել այդ արշավանքին մասնակցող մակեդոնացիներին, ապա պետք է ասենք, որ ինչպես արքան էր արժանի իր օգնականներին, այնպես էլ նրանք էին արժանի իրենց արքային:

ԳԻՐԲ V

Եթե ես կամենայի պատմել այն ամենի մասին, ինչ այս ժամանակահատվածում կատարվել է Ալեքսանդրի՝ ցուցումներով ու կամքով շունաստանում, Իլիրիայում կամ Թրակիայում, ապա ստիպված պիտի լինեի ընդհատել պատմությունը Ասիայում տեղի ունեցող իրադարձությունների մասին, 2. որոնք, շեռուամենայնիվ, շատ ավելի հարմար է ներկայացնել այն հրեականութեամբ, ինչպես որ կատարվել են իրականում, համենայն դեպս մինչև Գարեհի փախուստը և մահը:

Այսպիսով, ես ամենից առաջ կպատմեմ այն մասին, ինչն առնչվում էր Արբելայի մոտ տեղի ունեցած ճակատամարտին: 3. Գարեհը ժամանեց Արբելա մոտավորապես կեսգիշերին: Ծակատագիրը նույն տեղն ուղարկեց նաև նրա բազմաթիվ փախուսական ընկերներին և զինվորներին: 4. Ժողովելով նրանց, նա սաց, որ չի կասկածում, թե Ալեքսանդրը փորձելու է ձեռք բերել ամեն տեսակ պաշարներով հարուստ և խիտ բնակեցված ամենամեծ քաղաքներն ու դաշտերը, թե Ալեքսանդրը և թե նրա զինվորները այդ ունեն պատրաստի, հարուստ ավարի վրա: 5. Սակայն իրեն², իր ծանր դրություն մեջ, դա թեթևութեամբ է տալիս, ինքը արագաշարժ ջոկատով կմեկնի տափաստանները: Իր թագավորության հեռավոր շրջաններին դեռ ձեռք չեն տվել, այնտեղ նա առանց դժվարության ուժեր կհայթայթի պատերազմի համար: 6. Թող այդ ազահ ժողովուրդը վերցնի իր գանձերը և, վերջապես, հաղուրդ տա իր վաղեմի քաղցին ոսկով, շուտով նա ինքը դրա զոհը կդառնա: Նա, իբր, փորձով հասկացել է, որ թան- 24— Ալեքսանդր Մակեդոնացի 869

կարժեք կահարասին, հարճերը և ներքինիների ամբոխը միայն ավելորդ բնու են ճանապարհին, երբ Ալեքսանդրը այդ ամենը բարը կտա իր հետևից, նա կկորցնի իր ուժը հենց նրանով, որով նախկինում հաղթում էր: 7. Բոլորին այդ ճառը թվաց հուսահատությամբ լի, քանի որ բոլորը հասկացան, որ Դարեհը հանձնում է իր ամենահարուստ քաղաքը՝ Բաբելոնը և, որ հաղթողը կգրավի նաև Շոշը և այն ամենը, ինչ պետութայն դարդն է և պատերազմի շարժառիթը: 8. Իսկ Դարեհը՝ շարունակում էր խրատել, որ դժբախտութայն մեջ պետք է հոգ տանել ոչ թե շքեղութայն, այլ ամենաանհրաժեշտի մասին, որ պատերազմները վարում են ոչ թե ոսկով, այլ երկաթով, որ անհրաժեշտ են մարդիկ և ոչ թե քաղաքի տանիքներ. ամեն ինչ ենթարկվում է զինված մարդկանց, այդպես և իր նախնիներն են սկզբում պարտություն կրել, իսկ հետո արագ վերականգնել են իրենց նախկին հզորությունը: 9. Եվ այսպես, իր ընկերների հետ, որոնք կամ վերականգնել էին իրենց ոգին, կամ էլ գնում էին նրա հետևից՝ ավելի շուտ հնադանդությունից դրդված, քան համաձայնելով նրա կարծիքին, նա մտավ Մարաստանի տարածքը:

10. Քիչ անց Ալեքսանդրին է հանձնվում Արբելյան: Արբելյան պալատի գանձարանը լիքն էր. այդտեղ Ալեքսանդրի ձեռքը շորս հազար տաղանդ ընկավ և, բացի այդ՝ մեծ քանակությամբ թանկարժեք զգեստներ, քանի որ այդ քաղաքում ինչպես արդեն ասվել էր կուտակված էր ամբողջ զորքի ունեցվածքը: 11. Համատարած հիվանդությունների պատճառով, որոնք տարածվում էին բոլոր դաշտերում ընկած դիակների նեխումից, Ալեքսանդրը շտապեց ճամբարը հանել այդտեղից: Արբելյանից դուրս եկածների ձախ կողմում³ Արարիան էր, մի երկիր, որը հայտնի էր իր անուշաբույսերի առատությամբ: 12. Ճանապարհը դեպի այդ երկիրը անցնում է տափաստանով: Այդ տափաստանը Եփրատի և Տիգրիսի միջև ընկած հատվածում այնքան առատ է բուսականությամբ, որ ասում են, իբր, անասունին քշում են արոտավայրից, որպեսզի այն շատերի գերհագեցվածությունից: Նման բերրիության պատճառը ուղղումն է. խոնավությունը երկու գետերից ջրատար երակներով տարածվում է ողջ բնահողի մեջ: 13. Իրոք այդ գետերը հոսում են Հայաստանի լեռներից և ճանապարհին իրարից զատվում են մեծ տարածության վրա: Չափողները գտել են, որ Հայկական լեռների

մաս երկու գետերը իրարից ամենաշատը հեռանում են 2500 ասպարեզ: 14. Այդ նույն գետերը, մտնելով մարերի և կորդվացիների մարզերը, սկսում են որոշ չափով մոտենալ իրար, և որքան հեռու են գնում, այնքան իրենց միջև սկսում են թողնել ավելի ու ավելի քիչ տարածություն: 15. Նրանք ամենաշատը մոտենում են այն հարթավայրում, որը տեղաբնակներն անվանում են Միջագետք⁴, երկու կողմից սահմանափակելով այդ տարածությունը: Այդ գետերը բաբելոնացիների երկրով գուրս են գալիս դեպի Կարմիր ծով: 16. Ալեքսանդրը շորս անցումներով հասավ Մենիս քաղաք: Այնտեղ մի բարանձավ կա, որտեղից աղբյուրը այնքան շատ հանքածյութ է հանում, որ, ինչպես ճշգրիտ հաստատված է, դրանով ծեփված են Բաբելոնի բոլոր հսկա պարիսպները:

17. Երբ Ալեքսանդրը մոտենում էր Բաբելոնին, Մագնիսը, որը ազմաշարքից փախել էր այստեղ, հնազանդորեն դուրս եկավ նրան ընդառաջ իր չափահաս որդիների հետ և նրա ողորմածությունը հանձնեց քաղաքը և հենց իրեն: Նրա գալը հաճելի էր բրաքսին, այլապես անհրաժեշտ կլիներ ձեռնարկել այդքան լավ ամրացված քաղաքի դժվարին պաշարումը: 18. Թվում էր նաև, որ այդքան երևելի, վերջերս տեղի ունեցած ճակատամարտերում այդքան փորձառու և փառաբանված այրը կարող է իր օրինակով նպաստել, որ ուրիշ քաղաքներ նույնպես հանձնվեն: 19. Այդ պատճառով արքան բարյացակամորեն ընդունեց նրան իր զավակների հետ, և այնուհանդերձ հրամայեց զորքին, ասես մարտի գնալիս, քաղաք մտնել քառանկյուն շարքով. ինքն անձամբ գնում էր առջևից: Շատ բաբելոնացիներ կանգնած էին պարիսպների վրա, աշխատելով որքան կարելի է շուտ տեսնել նոր արքային. իսկ ավելի շատ դուրս էին եկել նրան զիմավորելու: 20. Սրանց մեջ էր ամրոցի և արքայական գանձատան պահապան Բագոփանը: Իր ջանասիրությամբ Մագնիսից հետ լմնալու համար, նա ամբողջ ճանապարհին սփռել էր ծաղիկներ ու պսակներ, երկու կողմերից արծաթե զոհասեղաններ դրել և դրանց վրա ոչ միայն խունկ, այլև ուրիշ անուշահոտուկներ և դրանց վրա ոչ միայն խունկ, այլև ուրիշ անուշահոտուկներով բերում էին առյուծներ ու հովազներ: 22. Հետո երգելով գնում էին մոզերը, ըստ իրենց տեղական սովորույթի, նրանց հետևում էին խաղերը և ոչ միայն բաբելոնյան դուշակները,

այլև նկարիչ-դերասանները իրենց յուրահատուկ գործիքնե-
րով: Առաջինները սովորաբար գովերգում էին արքաներին,
մյուսները ցույց էին տալիս լուսատուների շարժումը և տարվա
և դասակների հաստատուն փոփոխությունները: 23. Վերջում
գնում էին իրենց և իրենց ձիերը դարդարած հեծյալները, ավելի
շուտ ի ցույց դնելով իրենց շքեղությունը, քան վսեմությունը:
Արքան, շրջապատված զինված շքախմբով, հրամայեց քաղա-
քացիների ամբոխին գնալ վերջապահ հետևակայինների հետե-
վից, իսկ ինքը մարտակառքով մտավ քաղաք և հետո էլ՝ ար-
քայական պալատ: Հաջորդ օրը նա զննեց Գարնհի ունեցվածքը
և դրամական պաշարները:

24. Ի դեպ, բուն քաղաքի գեղեցկությունն ու հնությունը
արժանիորեն գրավել էին ոչ միայն արքայի, այլև բոլոր զին-
վորների ուշադրությունը: Այն հիմնադրել էր Շամիրամը⁵ և ոչ
թե Բելը, ինչպես կարծում էին շատերը, չնայած որ այնտեղ է
գտնվում և Բելի պալատը: 25. Քաղաքի պարիսպները կառուցված
էին հանքաձուլով պատված թրծված աղյուսից. դրանք 32
ֆուտ լայնություն ունեին: Ասում են, որ դրանց վրայով եր-
կու քառաձի կառքեր, հանդիպակաց գալով, կարող են առանց
զժվարության միմյանց կողքով անցնել: 26. Պարիսպները բարձ-
րանում են 50 կանգուն, աշտարակներն էլ՝ պարիսպներից տասը
ֆուտ ավելի բարձր: Ամբողջ շինության շրջագիծը կաղմում է
365 ասպարեզ: Պահպանվել է ավանդություն, ըստ որի պարսպի
ամեն մի ասպարեզ կառուցվել է մեկ օրվա ընթացքում: Շինու-
թյունները պարիսպներին շատ մոտ չեն կառուցված, բայց և
գտնվում են նրանցից մոտավորապես մեկ յուզեր⁷ հեռավորու-
թյան վրա: 27. Քաղաքն ամբողջությամբ զբաղեցված չէ շինու-
թյուններով, տները զբաղեցնում են 80 ասպարեզ⁸ և շինություն-
ները չեն ձգվում անընդմեջ շարքով. ես կարծում եմ, առավել ան-
վտանգ է թվացել որ դրանք ցրված լինեն տարբեր տեղեր: Մնա-
ցած տարածության վրա բնակիչները ցանքս են անում, որ-
պեսզի արտաքին վտանգի դեպքում պաշարվածներին մթերք
մատակարարեն հենց քաղաքի դաշտերից: 28. Եփրատը հոսում
է քաղաքի միջով և շրջափակված է առափնյա շինություններով:
Նրանցից ամենավիթխարիները հսկա ջրավաղաններն են, որոնք
խոր փորված են գետնի մեջ ջրի մակարդակի բարձրացման ժա-
մանակ այն իրենց մեջ ընդունելու համար. այլպես ջուրը կա-
րող էր տների կառույցները պոկել, եթե ջրավաղաններ ու լճեր

ներին նրա հեռացման համար: 29. Նրանք կառուցված են
թրծված աղյուսից և ամբողջ շինությունն ամրացված է հանքա-
նյութով: Գետի վրայով գցված քարե կամուրջը միացնում է
քաղաքի տարբեր մասերը: Այն նույնպես դասվում է Արևելքի
մեծագույն շինությունների շարքում, քանի որ Եփրատը մեծ
քանակությամբ տիղմ է բերում. փորելով այն, դժվարությամբ
են գտնում հաստատուն հատակը, որի վրա հնարավոր է հիմք
գնել: 30. Այստեղ լցված ավազը, որը կիպ կպչում է կամուրջը
պահող քարերին, դանդաղեցնում է գետի ընթացքը, որն այդ
գագարից հետո ավելի մեծ ուժով է առաջ նետվում, քան եթե
ամբողջ ժամանակ ազատորեն հոսեր:

31. Քաղաքում միջնաբերդ կա՝ քսան ասպարեզ շրջագծով
նրա աշտարակների հիմքերը երեսուն ֆուտ խրված են հո-
ղի մեջ, իսկ ամբողջի ամենաբարձր կետը հասնում է ութսուն
ֆուտի: 32. Ամբողջի վերևում են գտնվում հույների պատմու-
թյուններում որպես հրաշք փառաբանված պարսպի բարձրու-
թյան կախովի այգիները. նրանցում կան բազմաթիվ ճյուղա-
շատ գեղատեսիլ ծառեր: 33. Ողջ շինությունը պահող սյուները
շարված են քարից: Նրանց վրա դրված է սրբատաշ քարերից
պատրաստված փովածք, որը պահում է հաստ շերտով լցված
հողը և այն ջրելու համար օգտագործվող խոնավության ծանրու-
թյունը: Ամբողջ շինությունը պահում են այնպիսի մեծ ծառեր,
որոնց հաստությունը հասնում է 8 կանգունի, բարձրությունը՝
50 ֆուտի և այնքան բերքառատ են, ասես անում են մայր
հողի վրա: 34. Եվ թեպետ ժամանակը հետզհետե ոչնչացնում է
ոչ միայն մարդկային ձեռքերի, այլև բնության կերտածը, սա-
կայն բազմաթիվ արմատավոր ծառերի մի ամբողջ պուրակի
ծանրությունը կրող այդ հսկան մնում է անվնաս: Այն պահում
են քսան հաստ պատեր իրարից տասնմեկ ոտնաչափ հեռավո-
րության վրա, այնպես, որ եթե հեծվից նայելիս լինեք, ապա
կթվա, որ անտառն աճում է իր մայր լեռների վրա: 35. Ըստ
ավանդության այդ կառույցը սարքել է Բարելոնում իշխող ասո-
բական մի արքա իր կնոջ սիրույն: Անապատում, կարոտելով
անտառներն ու պուրակները, նա համոզել է իր ամուսնուն որևէ
քան կառուցել, որպես կենդանի բնության ընդօրինակում:

36. Արքան այս քաղաքում մնաց ավելի երկար, քան ուրիշ
որևէ այլ վայրում, բայց և ուրիշ ոչ մի տեղում նա այդքան
վնաս չհասցրեց զինվորական կարգապահությանը, որքան այս-

տեղ: Չկա մեկ այլ քաղաք այդքան փրացած բարբերով, այդքան անկասելի կրթեր առաջացնող գալթիակղություններով: 37. Մնողները և ամուսինները այստեղ իրենց զուտորիքին ու կանանց թույլատրում են կապվել օտարականների հետ, միայն թե իրենց վճարեն նրանց անարգանքի համար: Խրախճանքներն ու զվարճություններն արքաների և նրանց պալատականների սրտով են ամբողջ պարսից երկրում. բարեխնացիներն էլ հատկապես նվիրված են զինուն և այն ամենին, ինչ հետևում է հարբելուն: 38. Սկզբում խրախճանքին մասնակցող կանանց տեսքը համեստ է լինում, հետո հանում են վերնազգեստը, աստիճանաբար մերկանում է նաև ամոթը, իսկ վերջում, շփտես էլ թե ինչպես ասես, նրանք դեն են նետում նաև ներքնազգեստը: Եվ այդ խայտառակությունը ոչ միայն անառակ կանանց է բնորոշ, այլև պատկառելի տիկնանց ու աղջնակներին. մարմինը ցուցադրելը նրանց մոտ սիրալիրությունն է համարվում: 39. Ասիան հնազանդեցրած զորքը երեսունչորս օր այդպիսի սանձաբձակության պայմաններում գտնվելով, իհարկե, կթուլանար իրեն դեռ սպասվող նոր փորձությունների համար, եթե նրա առջև իսկական թշնամի լիներ: Սակայն, որպեսզի դա իրեն շատ զգացնել չտար, զորքի կազմը մշտապես թարմացվում էր: 40. Եվ իսկապես, Ամինտոսը՝ Անդրոմենոսի որդին, Անտիպատրոսի մոտից բերեց վեց հազարանոց մակեդոնական հետևակ, և բացի այդ, 500 հեծյալ նույն ցեղից, նրանց հետ միասին 600 թրակացիներ և երեք ուկես հազար հետևակայիններ իր ժողովրդից: 41. Ժամանեցին նաև վարձկաններ Պելոպոնեսից՝ մոտ չորս հազար մարդ և երեք հարյուր ութսուն հեծյալ: 42. Նույն այդ Ամինտոսը որպես թիկնապահներ բերեց Մակեդոնիայի իշխանների հիսուն հասունացած որդիներին. նրանք ծառայում են արքային ուտելու ժամանակ, նրանք են արքային ձի մատուցում ճակատամարտից առաջ, ուղեկցում նրան որսի ժամանակ, գիշերային պահակություն անում նրա վրանի մուտքի առջև: Դա աստուգա մեծ հրամանատարների և առաջնորդների ծառայության և առաջխաղացման սկիզբն է: 43. Այսպես, բարեխնական ամբողջի ղեկավար և շահակելով Ադափոնոսին և տալով նրան 700 մակեդոնացի և 300 վարձկան հրամանատարներ, արքան բարեխնյան մարզը և կիլիկիան կառավարելու համար թողեց Մենեսոսին ու Ապոլոնորոսին: Նրանց նա տվեց երկու հազար զինվոր և հազար տա-

լանդ. թե մեկին, թե մյուսին հրամայված էր նոր զինվորներ հավաքարել համալրման համար: 44. Փախստակ Մազելին նա նվիրեց Բարելոնիայի սատրապությունը, Բագոփանին, որն իրեն էր հանձնել ամբողջ, հրամայեց հետևել իրեն: Հայաստանի կառավարումը հանձնվեց Միթրենին, որն Ալեքսանդրին էր հանձնել Սարդեսը: 45. Բարելոնում իրեն հանձնված դրամից արքան մակեդոնացի հեծյալներին բաժանեց 600-ական զինար, սատրեղիքյա հեծյալները ստացան 500-ական, հետևակայինները՝ 200-ական, որպես երեք ամսվա վարձ:

II. Այդպիսի կարգադրություններ անելով, Ալեքսանդրը ժամանեց Սիրիական կողմող սատրապությունը: Հողն այնտեղ բերրի է. ամեն ինչով լի, և շատ պարեն կա: 2. Այսպես, արքան երկար մնաց այնտեղ և, որպեսզի զինվորների ոգին անգործությունից չթուլանա, նա ռազմական արիություն մրցումներ կազմակերպեց և նշանակեց դատավորներ ու պարզներ: 3. Ամենաբաշ ճանաչված ինը հոգին պետք է ստանային հազար հոգուց բաղկացած ջոկատների (դրանց քիլիբարոսներ՝ էին անվանում) հրամանատարությունը. այդ ժամանակ առաջին անգամ էր մտցվել զորքի նման ստորաբաժանում, իսկ մինչ այդ մեկ կոհորտան ընդգրկում էր 590 զինվոր և հրամանատարությունը չէր արժում որպես պարզև արիության համար: 4. Զինվորների մեծ ամբոխ հավաքվեց մրցումներին մասնակցելու, ինչպես նաև հավաստելու ամեն մեկի քաջագործությունները և կարծիք հայտնելու դատավորների մասին, բանդի բոլորին պետք է հայտնի լիներ, ճիշտ թե սխալ է շնորհված ամեն մեկի պարգևը: 5. Բոլորի մեջ իր քաջությունը արքային շատ էր գործավիզ եղել Հալիկաոնաքի տը, որը մենակ բոլորից շատ էր գործավիզ եղել Հալիկաոնաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում, որն աչքաթող էին արել երիտասարդ զինվորները. նրանից հետո ճանաչվեց Անտիգենոսը, երրորդ տեղը ստացավ Փիլոտես Ավգեսոսը, չորրորդ պարզից տրվեց Ամինտոսին, նրան հետևեց Անտիգոնոսը, ապա լինկեստացի Ամինտոսը, յոթերորդ տեղը դրաղեցրեց Թեոդոտեսը, վերջինը՝ Հելանիկոսը: 6. Ռազմական գործում նախնիներից ժառանգած շատ սովորություններում արքան փոփոխություն մտցրեց, որը գործին մեծ օգուտ բերեց: Եվ իսկապես, նախկինում հեծյալները կցվում էին ամեն մեկին իր ցեղի զորքին, մյուսներից անջատ. այժմ, վերացնելով ըստ ցեղերի բաժանումը, նա հրամանատարությունը հանձնարարում էր լավագույն

ղեկավարներին և պարտադիր շէր, որ նրանք այդ նույն ցեղից լինենին: 7. Նախկինում ճամբարից հեռանալու ազդանշան նա փողով էր տալիս, որի ձայնը, բարձրացված աղմուկի պատճառով, բավականաչափ բարձր շէր լսվում. այժմ նա պրետորիայի վրա ձող էր բարձրացնում, որն ամեն տեղից երևում էր, և նրա վրա դրոշ էր ամրացված, որը նույնպես բոլորին երևում էր. գիշերները կրակ էր օգտագործվում, ցերեկները՝ ծուխ:

8. Երբ Ալեքսանդրը մոտեցավ Շոշին, այդ մարզի կառավարիչ Աբուլիտը, հավանաբար Գարեհի կողմից զրզված թե իր անձնական որոշմամբ, Ալեքսանդրին թալանից հետ պահելու նպատակով նրան ընդառաջ ուղարկեց իր որդուն և խոստացավ հանձնել քաղաքը: 9. Արքան բարյացակամորեն ընդունեց պատանուն և նրա առաջնորդությամբ մոտեցավ շափազանց համեղ ջուր ունեցող Քոասայ գետին: Այստեղ նրան ընդառաջ ելավ Աբուլիտը արքային վայել առատաձեռնությամբ ու հարուստ ընծաներով: 10. Դրանց թվում էին բեռնակիր, շափազանց արագավազ ուղտեր, և Գարեհի Հնդկաստանից բերած տասներկու փղերը, որոնք ոչ թե ահաբեկեցին մակեդոնացիներին, ինչպես Գարեհը ցանկանում էր, այլ օղնեցին, քանզի ճակատագիրը հաղթվողի ուժերը հանձնում է հաղթողին: 11. Մտնելով քաղաք, արքան դանձարանից անհավատալի քանակությամբ դրամ վերցրեց՝ ձուլակտորներով¹⁰ հիսուն հազար տաղանդ մաքուր քաշով արծաթ: 12. Շատ արքաներ էին կուտակել այդ հարստությունը երկար ժամանակների ընթացքում, ինչպես իրենք էին ենթադրում, իրենց զավակների ու սերունդների համար, իսկ այն մի ժամվա ընթացքում անցավ օտարերկրացի արքայի ձեռքը: 13. Այնուհետև Ալեքսանդրը բազմեց արքայական գահին՝ իր հասակի համար շափազանց բարձր, և քանի որ նրա ոտքերը չէին հասնում ներքևի աստիճանին, արքայական ծառաներից ինչ-որ մեկը նրա ոտքերի տակ փոքրիկ սեղան դրեց: 14. Լսելով, որ Գարեհի ներքինիներից մեկը հառաչեց, Ալեքսանդրը հարցրեց նրա վշտի պատճառը: Ներքինին ասաց, որ առանց արցունքների չի կարող նայել, թե ինչպես իր աչքում սրբազան դարձած սեղանը նման անարգանքի է ենթարկվում, որովհետև Գարեհը սովորաբար դրա վրայից անունը էր ընդունում: 15. Արքան հյուրասիրության աստվածներից ամաչեց և քիչ էր մնում հրամայեք հեռացնել սեղանը, բայց Փիլոտեսն ասաց. «Մի արա դա, արքա,

այդ ընդունիր որպես կանխագուշակում. սեղանը, որի վրա ինչույք է արել թշնամին, դրված է քո ոտքերի տակ»:

16. Արքան՝ ցանկանալով հասնել Պարսկաստանի սահմանները, Շոշ քաղաքը և երեք հազարանոց կայազորը հանձնեց Աբուլիտին. ամրոցի պաշտպանությունը հանձնարարված էր Քունոփիլոսին: Ավելի տարիքով մակեդոնացիները մնացին որպես ամրոցի պահակախմբի ղեկավարներ, գանձերի պահպանությունը հանձնարարվեց Կալիկրատոսին: 17. Շոշի մարզի ստորապետությունը վերադարձվեց Աբուլիտին: Գարեհի մորը և զավակներին նա թողեց այդ քաղաքում: 18. Ընդ որում նա հրամայեց Սիսիգամբիսին հանձնել, որին նա վերաբերվում էր որպես զինակազմի հարգանքով ու սիրով, մակեդոնական հագուստներ ու ձիերանագուն ներկ, որը մեծ քանակությամբ իրեն նվեր էին ուղարկել Մակեդոնիայից, ինչպես նաև դրանք պատրաստող վարպետ կանանց: 19. Նա հանձնարարեց նաև հաղորդել Սիսիգամբիսին, որ եթե հագուստը նրան դուր գա, ապա նա թող սովորեցնի իր թոռներին նման հագուստներ կարել. ինքը, իբր, վարպետ կանանց էլ է նվիրում, որոնք կարող են նրանց սովորեցնել դա: Այդ խոսքերի վրա թագուհու աչքերը արցունքով լցվեցին և նա մերժեց նվերը, դրանով իսկ մատնելով իր վիրավորվածությունը. պարսկուհիների համար շկա ավելի վիրավորական բան, քան բրդի հետ գործ ունենալը: 20. Նվերը հանձնողները հայտնեցին, որ թագուհին տրտմել է, բայց դա նրան ներելի է և նա արժանի է սփոփանքի: Արքան ինքը գնաց նրա մոտ և ասաց. «Մ, մայր, տես, որ իմ վրայի հագուստը, ոչ միայն նվեր է բուրբիս կողմից, այլև նրանց ձեռքի աշխատանքն է: Ես թյուրիմացություն մեջ եմ ընկել ինձ հարազատ սովորույթների պատճառով: 11. Խնդրում եմ քեզ, թող իմ անգիտությունը չվիրավորի քեզ: Քո սովորույթները, որոնք ինձ հայտնի են դարձել, ես կարծում եմ, բոլորն էլ պահպանել եմ: 22. Ես գիտեմ, որ ձեր մոտ չի թուլատրվում որդուն առանց թուլլատվության դեմքով գնալի մայրը նստել. ամեն անգամ, երբ ես եկել եմ քո մոտ, կանգնած եմ մնացել մինչև դու նստելու նշան ես տվել: Դու հաճախ ես ցանկացել ընկնել իմ ոտքերը որպես հարգանքի նշան. ես ընդդիմացել եմ: Ես քեզ մայր անունով եմ կոչում, որը պատկանում է իմ թանկագին մորը՝ Օլիմպիադային»:

III. Հանգստացնելով թագուհուն, արքան շորս անցումներով մոտեցավ Տիգրիս գետին, որը տեղացիները անվանում էին

Պատիւնդդրիս: Այն սկիզբ է առնում ուրսերի լեռներից և հիսուն ասպարեզ երկարութեամբ քարերի վրայով հոսում անտառախիտ ամերի միջով: 2. Դրանից հետո, նրան ընդունում են դաշտերը, որտեղով այն ավելի ուղղագիծ է հոսում և նավարկելի է: Փափուկ հողը ձգվում է հինգ հարյուր ասպարեզ. նրա միջով գետը տանում է իր հանգարտ ալիքները դեպի Պարսից ծով: 3. Անցնելով գետը, Ալեքսանդրը ինը հազարանոց հետևակով, ագրիանացիներով ու սատրիանացիներով, երեք հազար հույն վարձկաններով և հազար թրակացիներով մտավ ուրսերի մարզը: Այդ մարզը սահմանակից է Շոշին, մտնում է Առաջավոր Պարսկաստանի մեջ, նեղ անցուղի թողնելով իր և Շոշի մարզի միջև: 4. Այդ երկրի կառավարիչն էր Մագաթը. նա ակնհայտորեն հաշվի չէր առել ժամանակի պայմանները, քանի որ որոշել էր հանուն հավատարմության կրել ծայրահեղ դժբախտություններ¹¹: 5. Սակայն տեղանքին ծանոթ մարդիկ Ալեքսանդրին ցույց տվեցին քաղաքից¹² մի կողմ ընկած խուլ արահետներով անցնող մի ծածուկ ճանապարհ, և որ եթե նա մի փոքրիկ թեթևազն ջուկատ ուղարկի, ապա նրանք կանցնեն թշնամու գլխավերևով: 6. Խորհուրդը դուր եկավ արքային, և հենց նրանք էլ դարձան ուղեկցողները: Հազար հինգ հարյուր վարձկան, համարյա հազար ագրիանացի զրվեցին Տավրոնի հրամանատարության տակ, և նրանց հրամայվեց ճամփա ընկնել արևամուտից հետո: 7. Ինքն՝ արքան, թողնելով ճամբարը երրորդ պահակահերթին, մինչև արևածագը հաղթահարեց կիրճերը և, կտրելով ծառերը, որպեսզի ճեղաններ ու զրահներ պատրաստի, նետերից պաշտպանելու այն զինվորներին, որոնք պետք է մտնեցնեին պաշարման աշտարակները քաղաքի պարսպին, ձեռնարկեց պաշարումը: 8. Տեղանքը անհարթ էր, ժայռակտորներով ու քարերով լեցուն. զինվորներին կասեցնում էին նաև բազմաթիվ նետերը, այնպես որ նրանք ստիպված էին կովել ինչպես թշնամիների, այնպես էլ՝ տեղանքի պայմանների դեմ: Այնուհանդերձ նրանք առաջ էին շարժվում, քանի որ արքան կանգնած էր առաջին շարքերում և հարցնում էր, արդյո՞ք ամոթ չէ այդքան քաղաքների հաղթողին ձգձգել փոքրիկ ու ոչնչով հայտնի ամրություն պաշարումը: 9. Նրանց այդպես ոգևորելով, ինքն անձամբ հեռու տարածությունից արձակվող նետերի տարափի տակ էր ընկնում. զինվորները ծածկում էին նրան՝ վահաններով կրիս¹³ սարքելով, իսկ համոզել նրան, որ նա հեռանա, նրանք չէին կարողանում:

10. Վերջապես քաղաքի ամրությունների վրա երևաց Տավրոնն իր ջոկատով, նրա տեսրից երերաց թշնամու ոգին, և մակոնացիները ուժեղացրին ճնշումը: 11. Քաղաքացիներին ճանաչեց երկու կողմից էր սպանում, իսկ թշնամու ժող կասեցնել անհնար էր: Միայն մի քանիսն էին պատրաստ ընդունելու մահը, մեծամասնությունը ուզում էր փախչել, մեծ մասը թաքնվեց ամրոցում: Այնտեղից երեսուն միջոցողներ ուղարկվեցին, առկայն արքայից ստացան խիստ պատասխան. գլխավոր մասին խոսք լինել չէր կարող: 12. Վախենալով առաջիկա տանջանքներից, նրանք թշնամուն անհայտ ճանապարհով մարդիկ ուղարկեցին Դարեհի մոր՝ Սիսիգամբիսի մոտ՝ խնդրանքով, որ նա մեղմացնի արքայի ցասումը, գիտենալով, որ Ալեքսանդրը չիրում է նրան և հարգում որպես մոր: Իսկ Մագաթն ամուսնացած էր Դարեհի քրոջ աղջկա հետ և նրա հետ մոտ խնամիներ էին: 13. Երկար ժամանակ Սիսիգամբիսը մերժում էր նրանց, առնելով, որ նրանց համար խնդրելը չի համապատասխանում իր գրությունը. բացի այդ նա երկյուզում էր շարաշահել հաղթողի գլխատությունը, բանզի միշտ հիշում էր, որ լինելով նախկինում թագուհի, այժմ դարձել է գերուհի: 14. Վերջի վերջո տեղի առնելով, նա նամակ գրեց Ալեքսանդրին, որտեղ ներողություն խնդրելով իր միջամտության համար, խնդրում էր գլխատություն ցուցաբերել ոչ այնքան պաշարվածների, ինչքան իր հանգնեալ: Նա աղաչում էր կյանք պարգևել միայն իրեն մոտ և հարազատ մարդուն, արդեն ոչ թե թշնամուն, այլ հեղ հայցողին: 15. Արքայի զսպվածությունը, ողորմածությունը, որոնցով նա այն ժամանակ աչքի էր ընկնում, կարող են ապացուցվել թեկուզ այդ հանդամանքով. նա ներեց ոչ միայն Մագաթին, այլև աղատություն և անվտանգություն պարգևեց բոլոր հանձնվածներին և գերիներին, քաղաքին ձեռք չտվեց, թույլատրեց դաշտերը մշակել առանց տուրքի: Մայրը սրանից ավելի բանի չէր կարող հասնել, եթե նույնիսկ հաղթողը Դարեհը լիներ:

16. Այնուհետև ուրսերի հնազանդեցված ցեղը արքան զրեց Շոշի սատրապի ենթակայության տակ: Բաժանելով իր ուժերը Պարսիկոնի հետ, նա հրամայեց նրան գնալ տափաստանով, ինքն էլ թեթևազնների ջոկատով գրավեց լեռնաշղթան, որի անընդհատ ճյուղերը գնում են Պարսկաստանի խորքերը: 17. Ամայացնելով այդ ամբողջ մարզը, երրորդ օրը նա մտավ Պարսկաստան, իսկ հինգերորդ օրը՝ այն կիրճերը, որոնք կոչվում էին

Շոշի դարպասներ¹⁴. դրանք զբաղեցրել էր Արիոբարդանը քսան-
հիսկ հազար հետևակայիներով: Դրանք հարթ, ամեն կողմից
շառիվեր ժայռեր էին. նրանց գագաթների վրա բարբարոսներն
անհասանելի էին նետերի համար. նրանք դիտավորյալ կանգնած
էին հանգիստ տեսքով, ասես վախեցած, մինչև Ալեքսանդրի զոր-
քը չմտավ կիրճը: 18. Երբ նրանք տեսան, որ թշնամին առաջ է
շարժվում անտեսելով իրենց, նրանք սկսեցին բարձունքից մեծ
քարեր գլորել, որոնք ուրիշ քարերի դիպչելով գլորվում էին
ավելի մեծ ուժով և ճզմում ոչ միայն առանձին մարդկանց,
այլև ամբողջ ջոկատներին: 19. Ամեն կողմից նրանց վրա էին
թռչում նաև պարսատիկներից նետված քարեր և նետեր: Սա-
կայն դա չէր, որ վատթարագույնը թվաց քաջ մարտիկներին,
այլ այն, որ իրենց հարվածում էին առանց պատասխան ստա-
նալու, ինչպես թակարդում բռնված վայրի գազանների: 20.
Նրանց ցասումը փոխվում էր կատաղություն. նրանք բռնվում
էին ժայռերի ելուստներից և իրար պահելով փորձում բարձրա-
նալ, որպեսզի հասնեն թշնամուն: Սակայն ժայռերը, որոնցից
բազմաթիվ ձեռքեր էին կառչել, պոկվում էին և թափվում նը-
րանց վրա, ուժեր այն բռնել էին: 21. Այսպիսով նրանք ի վի-
ճակի չէին ո՛չ կանգնած մնալ, ո՛չ վերև մագցել, ո՛չ էլ վահան-
ներով ծածկվել, որովհետև բարբարոսները նրանց վրա մեծ,
ծանր քարեր էին նետում: Արքան տանջվում էր ոչ միայն վշտից,
այլև ամոթից, որ այդքան թեթևամտորեն զորքը մտցրել էր այդ
կիրճը: 22. Նա մինչև այդ օրը անհաղթ էր եղել, ոչինչ իզուր չէր
ձեռնարկել, անպատիժ անցել էր Կիլիկիայի կիրճերով, ծովով
և ուր ուղի բացել դեպի Պամփիլիա. այժմ նրա բախտը երեքում
էր և ուրիշ փրկություն չկար, բացի վերադառնալուց այնտեղ,
որտեղից եկել էր: 23. Այսպես, նահանջի ազդանշան տալով, նա
հրամայեց դուրս գալ կիրճից, կուռ պահելով շարքերը և գլխե-
րի վրա պահելով վահանները: Ստիպված եղան երեսուն աս-
պարեզ հետ դառնալ:

IV. Ծամբար դնելով ամեն կողմից բաց վայրում, արքան ոչ
միայն սկսեց խորհրդակցել, թե ինչ անի հետագայում, այլև ել-
նելով սնոտիապաշտությունից, դիմեց գուշակներին: 2. Բայց
ի՞նչ կարող էր այդ ժամանակ գուշակել Արիստանդրը, որին նա
առավել շատ էր վստահում, քան մյուսներին: Այսպես, հրա-
ժարվելով կրոնական անտեղի ծիսակատարություններից, նա իր
մոտ հավաքեց տեղանքին ծանոթ մարդկանց: Նրանք ջուլց տվե-

քին տեղտանգ ու աղաթ ճանապարհը Մարաստանի միջով:
3. Սակայն խիղճը թույլ չէր տալիս արքային առանց թաղելու
թոշեել զոհված զինվորներին. հին սովորության համաձայն
զինվորի համար չկար ավելի սրբազան պարտք, քան յուրային
սպանվածներին հողին հանձնելը: 4. Այսպես, նա իր մոտ է
կանչում վերջերս զերվածներին, որոնց մեջ կար մի հոգի, որը
զիտեր պարսկերեն և հունարեն: Նա ասաց, որ արքան իզուր է
իջ զորքը տանում Պարսկաստանի լեռնաշղթայով, կան անտա-
ռային արահետներ, որոնք հազիվ մատչելի են միայնակ մարդ-
կանց, որտեղ ամեն ինչ ծածկված է կանաչով և ծառերի իրար
հյուսված ճյուղերն անտառը անանցանելի են դարձնում: 5.
Պարսկաստանը մի կողմից պարփակված է անընդմեջ լեռնային
շղթայով հազար վեց հարյուր ասպարեզ երկարությամբ, հար-
յուր յոթանասուն ասպարեզ լայնությամբ: Դա Կովկասյան լեռ-
ների ճյուղն է, որը հասնում է մինչև Կարմիր ծով¹⁵. այնտեղ,
որտեղ սարերն ընդհատվում են, կա ուրիշ խոշորագույն ծովածոցը:
6. Մի լայնարձակ ու բերրի հարթավայր է տարածված լեռան
ստորոտին՝ բազմաթիվ ավաններով ու քաղաքներով: 7. Արաբս
գետը այդ դաշտերից բազմաթիվ աղբյուրների ջուրը տանում է
Մեզոս¹⁶ գետը, որն ավելի փոքր է, քան իր մեջ թափվող գետը
և հոսում է հարավ՝ դեպի ծով: Ոչ մի այլ գետ ի վիճակի չի
մնել այդքան բուսականություն. նրա ոռոգած բոլոր հողերը
ծածկված են ծաղիկներով: 8. Նրա ամեն բազմաթիվ ծածկված են լինա-
քի ու բարդու ծառերով, այնպես որ հեռվից թվում է, թե դա
անընդհատ անտառ է՝ գետից մինչև բուն լեռները: Եվ իսկա-
պես. ծառերով ստվերապատված գետը հոսում է գետնի մեջ խոր
թաղված հունով. նրա վերևում բարձրանում են բլուրները,
առատորեն ծածկված կանաչով, որովհետև դրանց ստորոտները
ողողում է գետի ջուրը: 9. Ողջ Ասիայում չկա ավելի առողջա-
քար տեղ: Կլիման այնտեղ մեղմ է. մի կողմից անընդհատ սա-
րերն են, որոնք ստվեր և շուրջը մեղմացնող գովություն են տա-
լիս, մյուս կողմից մոտ է ծովը, որտեղից տաք քամի է փչում:

10. Երբ գերին պատմեց այս ամենի մասին, արքան հարց-
րեց նրան, թե նա լսե՞լ է այդ մասին ինչ պատմում է, թե տեսել
է իր աչքով: Գերին պատասխանեց, որ ինքը գերի է եղել և
բազմիցս անցել բոլոր արահետներով, և որ ինքը, իբր, երկու
անգամ է գերվել՝ առաջին անգամ Լիկիայում պարսիկների կող-
մից, երկրորդ անգամ՝ Ալեքսանդրի: 11. Այստեղ արքան հիշեց

պատգամախոսի իր հարցին տրված կանխագուշակումը, որ Պարսկաստան տանող ճանապարհին իր ուղեկիցը լիկիացի է լինելու 12. Այսպես, նրան պարզե խոստանալով, որ համապատասխանում է գերու վիճակին և հանգամանքներին, արքան հրամայում է նրան ղինվել մակեդոնական ձևով և, ճակատագրին փառք տալով, ցույց տալ ճանապարհը, ինչքան էլ որ այն դժվար ու զառիթափ լինի, նա կանցնի այդ ճանապարհով իր փոքրիկ ջոկատով. թող նա շեքեակաչի, որ այնտեղ, որտեղ ինքը անցել է իր հատով, Ալեքսանդրը չի կարողանա անցնել հանուն իր հավերժ փառքի: 13. Գերին շարունակում է պնդել, թե ինչքան դժվար է ճանապարհը, հատկապես ղինված մարդկանց համար: Այնժամ արքան ասաց. «Ինձ երաշխավոր դարձրու և այդ ժամանակ ինձ հետևողներին ոչ ոք չի հրաժարվի գնալ՝ ուր էլ որ դու տանես»: 14. Թողնելով Կրատերոսին ճամբարը պաշտպանելու իրեն ծանոթ հետևակայինների և Մելեագրոսի ղեկավարած զորքերի, ինչպես նաև հազար հեծյալ նետածիգների¹⁷ հետ, նա կարգադրում է Կրատերոսին ճամբարի նախկին տեսքը պահպանելով, այդտեղ ավելի շատ խարույկներ վառել, որպեսզի բարբարոսները կարծեն, թե արքան ճամբարում է: 15. Ասենք, եթե Արիոբարդանը պատահամաք տեղեկանա, որ արքան գնացել է զարտուղի ճանապարհով և փորձի իր զորքի մի մասը նետել նրա ճանապարհը կտրելու, Կրատերոսը պետք է հետ պահի նրան, որևէ բանով վախեցնելով, որպեսզի նա իր ուժերն ուղղի ավելի անմիջական վտանգի դեմ: 16. Իսկ եթե նա ինքը խաբի թշնամուն և զբաղեցնի անցումը, ապա թող Կրատերոսը, արքային հետապնդող թշնամու տաքնապալից աղաղակները լսելուն պես, առանց տատանվելու գնա նույն ճանապարհով, որտեղից նախորդ օրը իրենց հետ են շարտել. այն ազատ կլինի, քանզի թշնամին դուրս եկած կլինի արքայի դեմ:

17. Իսկ ինքը էրրորդ պահակության ժամանակ, համակ լուսվան մեջ, նույնիսկ փողով աղղանշան շտալով, բռնեց իրեն ցույց տված ճանապարհի արահետը: Թեթևազեն ուղեկներին նա հրամայեց տանել երեք օրվա պարեն: 18. Սակայն, բացի դժվարանցանելի ժայռերից ու թեթություններից, որոնց վրա անսպասելիորեն կորչում էին հետքերը, հարձակվողներին խանգարում էր քամու բերած ձյունը. նրանք խրվում էին ձյան մեջ, ինչպես ծուղակի, իսկ երբ ընկերներից որևէ մեկը օգնության էր հասնում, ապա նրանք ավելի շատ օգնողներին

գնացի իրենց էին քաշում, քան հետևում նրանց: 19. Բացի այդ, քիչերը, անծանոթ տեղանքը և, անհայտ էր, արդյոք հավատարմ էր ուղեկցորդը, սաստկացնում էին վախը. եթե նա խաբեր պահակներին, ապա նրանց կարելի էր բռնել ինչպես վայրի զազանների: Մի գերու հավատարմությունից ու տրամադրվածությունից կախված էր թե՛ արքայի և թե՛ հենց իր փրկությունը: 20. Վերջապես մոտեցան լեռնանցքին: Աջից ճանապարհը տանում էր ուղիղ Արիոբարդանի մոտ. այստեղ արքան թողեց Փրատեսին ու Քենոսին՝ Ամինտոսի ու Պոլիպերքոնեսի և թեթևազենների ջոկատի հետ, կարգադրելով նրանց, որպեսզի, քանի որ նրանց ջոկատում հետևակայիններն ու հեծյալները խանգված էին, դանդաղ շարժվեն այն վայրերով, ուր հողը պարարտ է և կներ շատ. նրանց ուղեկցորդներ տրվեցին գերիների միջից: 21. Իսկ ինքն էլ ղինակիրների և աղեմոս կոչված ջոկատով, շատ շարշարանքներ կրելով, առաջ գնաց զառիվեր արահետով, սակայն հետո հակառակորդի կայանատեղից: 22. Արդեն կեսօր էր, և հողնած մարդկանց հանդիստ էր պետք, իսկ անցնելու արքան ճանապարհ էր մնացել, ինչքան արդեն անցել էին, սակայն ավելի սլակաս ուղղածից ու զառիվեր: 23. Եվ այսպես, ղինվորներին հնարավորություն տալով ամրապնդվելու սննդով և քնով, նա վեր կացավ երկրորդ պահակության ժամին: Մնացած ճանապարհը նա անցավ առանց մեծ դժվարության: Բայց և այնպես այն տեղում, ուր լեռնապարը որոշ շափով իջնում էր գնացի հարթավայրը, նրանց ճանապարհը կտրեց հոսող ջրերից առաջացած մի հսկա ջրափոս: 24. Սրանից բացի ծառերի իրար հյուսված ու ամրացված ճյուղերն էլ ամբողջական պատի նման նրանց առջև կանգնեցին: Այստեղ բոլորին հուսալքությունը համակեց, և նույնիսկ ղինվորները հազիվ էին զսպում արցունքները: 25. Վախին հատկապես նպաստում էր մթությունը, թեև մի քանի աստղեր փայլվում էին, սակայն ծառերի խիտ տեղերները խանգարում էին տեսնել դրանք: Անհնար էր ղեկավարվել և լսողությանը, քանի որ քամուց շարժվող ճյուղաշատ ծառերը մեծ աղմուկ էին հանում: 26. Վերջապես երկար սպասված լուսաբացը ցրեց գիշերային ամեն տեսակ սարսափները. շուտով ճեղքվածքը շրջանցելու ուղի գտան և ամեն մեկն ինքը սկսեց գլուխ հանել իր ճանապարհի ուղղությունից:

27. Այդ ժամանակ նրանք դուրս եկան ցցված լեռնագագաթի վրա. այնտեղից ուսումնասիրելով թշնամու դիրքավորումը,

նրանք լրիվ զինված՝ թիկունքից անսպասելի մոտեցան թշնամուն. սրանցից քչերը, որոնք համարձակվեցին մարտի բռնվել՝ սպանվեցին: 28. Այսպես, մի կողմից մեռնողները հեծածանքները, մյուս կողմից հետ՝ յուրալիներով մոտ փախչողների շվաբած տեսքը ստիպեց մնացած պարսիկներին դեռ մարտը չսկսած նույնպես դիմել փախուստի: 29. Երբ աղմուկը հասավ ճամբար, որտեղ Կրատերոսն էր, սա սկսեց առաջ մղել իր զինվորներին կիրճը զբաղեցնելու համար, որտեղ նախօրեին նրանք խրվել մնացել էին: 30. Նույն այդ ժամանակ Փիլոտոսը Պոլիպերթոնեսի, Ամինտոսի և Քենոսի հետ, որոնց հրամայված էր ուրիշ ճանապարհով գնալ, բարբարոսներին նոր սարսափ պատճառեցին: 31. Թեև ամեն կողմից փայլատակում էր մակեդոնական զենքը, երկու կողմից ճնշված պարսիկները այնուհանդերձ նշանակալից ճապատամարտ տվեցին: Ինձ թվում է, ծայրահեղ կարիքը սրություն է հաղորդում նույնիսկ ալարկոտությանը, և հաճախ անվեհերութունը հույսի հիմք է տալիս: 32. Անզենները լրացնում էին զինվածների շարքերը. իրենց մարմնի ծանրությամբ նրանք գետին էին գցում մակեդոնացիներին և խոցում նրանց. նրանցից իսկ խլած գեներով: 33. Արիորարզանը ամենաքիչը քառասուն հեծյալներով և հինգ հազար հետեակալիներով շրջապատված, ճեղքեց մակեդոնացիների ուղղաշարքը, մեծ արյունահեղութուն ստեղծելով թե՛ իրենց և թե՛ թշնամու համար. նա շտապում էր զբաղեցնել մարդի մայրաքաղաքը՝ Պերսեպոլիսը: 34. Սակայն քաղաքի պահնորդները նրան ներս չթողեցին. նրա վրա հասավ համառորեն նրան հետապնդող թշնամին: Փախուստի իր բոլոր ուղեկիցների հետ վերսկսելով մարտը, նա զոհվեց: Վրա հասավ նաև Կրատերոսը, որն իր զորքը բերում էր արագ ռազմերթով:

V. Այն նույն տեղում, որտեղ արքան ցրել էր թշնամու ուժերը, նա ամրապնդում է իր ճամբարը: Եվ թեպետ այս ու այն կողմ փախած թշնամին ընդունեց նրա հաղթանակը, սակայն շատ տեղերում փորված խոր ու զանազան խանդակները հատում էին ճանապարհը, և ստիպված նրանք առաջ էին շարժվում դանդաղ և զգուշորեն, ոչ միայն վախենալով թշնամու դարանից, այլև անհարմար տեղանքից: 2. Ծանապարհին արքային հանձնեցին արքայական դանձատան պահապան Տիրիդատի նամակը, ուր տեղեկացվում էր, որ քաղաքում մնացած բնակիչները¹⁸, լսելով նրա մոտենալու մասին, ցանկանում են թալանել գան-

ճամբարը. թող նա շտապի իր ձեռքը գցել այն. ճանապարհը բաց է. թեև այն հատում է Արաքս գետը: 3. Արքայի ուրիշ ոչ մի արիություն ես այդքան չէի գովարանի, որքան նրա արագաշարժությունը. թողնելով հետիոտն զորքը, նա հեծյալների հետ, այդքան երկար ճանապարհից հյուսիս, արևածագին հասավ Արաքս: 4. Շրջակայքում բնակավայրեր կային. քանդելով դրանք, նա դրանց գերաններից արագորեն կամուրջ գցեց՝ ամրապնդելով այն քարերով: 5. Արքան արդեն հեռու չէր քաղաքից, երբ նրան ընդառաջ դուրս եկավ մարդկանց մի խղճուկ ջոկատ, որն անհրաժեշտ է հիշատակության որպես հազվագյուտ երևույթ. դրանք հույն զորիներ էին, թվով մինչև չորս հազար¹⁹, որոնց պարսիկները տանջել էին ամենատարբեր խոշտանգումներով: 6. Նրանցից մի քանիսի ոտքերն էին կտրել, մյուսներին՝ ձեռքերն ու ականջները, ուրիշների մարմինների վրա փորագրել էին իրենց բարբարոս լեզվի տառերը և երկար պահել ծաղր ու ծանակի համար, իսկ երբ տեսան, որ իրենք են ընկել ուրիշի իշխանության տակ, ցանկացողներին շարզեցին զուրս գալ արքային ընդառաջ: 7. Այդպիսի անսովոր տեսքով նրանք նման չէին մարդկանց. նրանց մեջ մարդկային կարելի էր համարել միայն ձայնը, և նրանց նայողները ավելի շատ արջունք թափեցին, քան իրենք, քանզի նրանցից յուրաքանչյուրի՝ այդքան տարբեր դառն ճակատագրի պայմաններում, մարդկանց զգախտությունը, թեպետև տարբեր բստ բնույթի, իր չափով հավասար էր թվում, և զծվար էր որոշել, ով էր ամենադժբախտը: 8. Իսկ երբ նրանք գոչեցին, որ Հունաստանի համար վրիժառու Յուպիտերը վերջապես բացել է իր աչքերը, բոլորին սկսեց թվալ, որ նրանց բոլորին հավասար աղետ է բաժին ընկել: Արքան շորացնելով առատորեն թափվող արցունքները, հրամայեց նրանց քաջալերվել, խոստացավ, որ նրանք կտեսնեն իրենց քաղաքները և իրենց կանանց և որ նրանց համար ամրացված ճամբար է դնում քաղաքից երկու ասպարեզ հեռավորության վրա:

9. Դուրս գալով խանդակից այս կողմ, հույները սկսեցին քննարկել, թե ինչ խնդրեն արքայից. ոմանք Ասիայում բնակվելու տեղ էին ուզում, ուրիշները տուն վերադառնալ: Պատմում են, որ այդ ժամանակ կումացի Եվկտեմոնեսն այսպես է ասել, գիմելով նրանց. 10. «Մենք, որոնց բիշ առաջ ամոթ էր խավաբեց հետո մարդկանց աչքերին երևալ օգնություն խնդրելու

Համար, այժմ նոր պայմաններում ձգտում ենք հասնել նրան, որ ներկայացնենք Հունաստանում մեր վերքերի հաճելի տեսարանը, որը դեռ հայտնի չէ՝ թե ավելի շատ ինչ կբերի մեզ՝ տառապա՞նք թե ամոթ։ 11. Մակայն ավելի հեշտ են դժբախտությունը տանում նրանք, ովքեր թաքցնում են իրենց դժբախտությունը, և դժբախտ մարդկանց համար հայրենիքից սպասվող ամենալավ սփոփանքը մեկուսանայն է, իրենց նախկին վիճակը մոռացություն տալը։ Ով շատ հույսեր է կապում մերձավորների ցավակցությունների հետ, նա չգիտի, թե ինչքան շուտ են ցամաքում արցունքները։ 12. Ոչ որ չի կարող անձնվիրաբար սիրել մեկին, որը դարշանք է առաջացնում. ծանր է լինում ինչպես ուրիշի դժբախտությունը, այնպես էլ ամբարտաժան երջանկությունը։ Յուրաքանչյուրը, ով քննարկում է ուրիշի ճակատագիրը, մտածում է իր ճակատագրի մասին։ Եթե մենք փոխադարձաբար դժբախտ չլինեինք, մենք շուտով իրար մեջ զզվանք կառաջացնեինք։ Չկա ոչինչ դարմանալի, որ հաջողակները ընկերներ են փնտրում երջանիկների մեջ, 13. Հավատացեք ինձ, քանի որ մեր կյանքն արդեն ավարտվել է, ընտրենք մեզ համար մի այնպիսի վայր, որտեղ կկարողանանք հանգստացնել մեր քրքրված մարմինները, որտեղ մեկուսացումը կկոծկի մեր ահավոր վերքերը։ Ինչ խոսք, մեր կանանց հաճելի կլինի մեր վերադարձը, որոնց մենք պատանի մամանակ ենք կնություն առել։ Իսկ մեր երեխաները իրենց տարիքի և զործների ծաղկուն շրջանում են և կցանկանա՞ն արդյոք ընդունել խոշտանդումներից ալլանդակված իրենց հայրերին։ 14. Եվ բանիսը մեզանից կկարողանա այդքան երկրներ անցնել։ Կգի՞մանա՞նք արդյոք մենք՝ մեր մարմնի մասերից զրկված, տկար ծերուկներս, որոնց նվրտպայից նետել են հեռու, ծայրագույն ստիպկան երկրներ, այդքան ծանր ճանապարհին, որը հոգեմաշ է արել զիսկված մարդկանց ու հաղթողներին։ 15. Իսկ մեր կանանց, որոնց ճակատագիրը պարզեցել է գերիներին, որպես միակ սփոփանք իրենց վշտի մեջ, և մեր փոքրահասակ երեխաներին, հետներս սփտի տանե՞նք թե թողնենք այստեղ։ Եթե մենք վերադառնանք նրանց հետ, հայրենիքում մեզ ոչ որ չի ցանկանա ճանաչել։ 16. Մի՞թե մենք միանգամից կթողնենք մեզ թանկագին էականներին, երբ հայտնի էլ չէ, թե կտեսնե՞նք մենք արդյոք նրանց, որոնց մոտ շտապում ենք։ Մենք պետք է մնանք նրանց հետ,

ով մեզ սիրել է մեր դժբախտության մեջ»։ Այսպես էր խոսում նվազեցնողները։

17. Սրանից հետո խոսեց ամենացի Փեյետեոսը։ Ոչ մի բարեպաշտ մարդ, իբր, չի դատի իր հարազատի մասին ըստ նրա արտաքինի, հատկապես, եթե նա տուժել է թշնամու կատաղությունից և ոչ թե այդպիսին է եղել ի ծնե։ Անարգանքի են արժանի նրանք, ովքեր ամաչում են իրենց ճակատագրից. նա վատ կարծիք ունի մարդկանց մասին և զթասարտության հույս չունի, որովհետև նա ինքը մերժում է դրանում ուրիշներին։ 18. Աստվածները նրանց ուղարկում են այն, ինչ իրենք էլ չէին համարձակվի ցանկալ՝ հնարավորություն՝ տեսնելու հայրենիքը. կանանց, զավակներին և այն ամենը, ինչը մարդիկ գնահատում են ինչպես իրենց կյանքը և որի համար զոհում են այն։ 19. Ինչպես նրանք չձգտեն դուրս պրծնել այս բանտից. հայրենիքում ուրիշ կերպ է մարդ շնչում, և արևն էլ ուրիշ կերպ է լուսավորում. նույնիսկ բարբարոսներն են ձգտում գեպի հարազատ բարբերը, սրբավայրերը, մայրենի լեզուն, իսկ նրանք պատրաստվում են հրաժարվել հայրենի ամեն բանից, թեև դժբախտ են միայն նրանով, որ զրկված են այդ ամենից։ 20. Ինքը, իհարկե, կվերադառնա հարազատ տուն և հայրենիք ու կվառելի արբալի բարյացակամությունը։ Եթե որևէ մեկին հետ է պահում սերը գեպի կենակցուհիներն ու երեխաները, որոնց ստրկությունն է ստիպել ճանաչել, թող թողնեն նրանց այստեղ. չէ որ նրանց համար էլ հայրենիքից ավելի թանկ բան չկա։ 21. Քչերն էին կիսում այդ կարծիքը, ուրիշները ենթարկվում էին սովորությանը, որ բնությունից էլ ավելի ուժեղ է։ Նրանք որոշեցին արբալից բնակություն հաստատելու համար որևէ տեղ չեն ընտրել։ 22. Այդ նպատակով ընտրեցին հարյուր հոգի։ Ալեքսանդրը ենթադրելով, որ նրանք խնդրելու են այն, ինչը ինքն անհրաժեշտ է համարում, ասաց նրանց. «Ես արդեն հրաժայել եմ ձեզ տրամադրել բեռնակիր անասուններ, որոնք ձեզ կտանեն, և ձեզանից ամեն մեկին տալ հազար դինար։ Երբ դուք Հունաստան վերադառնանք, ես հոգ կտանեմ, որ այնտեղ ոչ որ չկարծի, որ իր վիճակը ձերից լավն է, բացառությամբ ձեր խնդրության»։ 23. Իսկ նրանք աչքներն արցունքով լի նայում էին գետնին և չէին համարձակվում ո՛չ զուլաները բարձրացնել, ո՛չ էլ մի բառ արտասանել։ Վերջապես, երբ արբան հարցրեց նրանց տխրության պատճառը, նրանց փոխարեն պատասխա-

նեց Եվկտեմոնէսը, ասելով մոտավորապէս նույն բանը, ինչ ինչ որ տակ էր մինչ այդ: 24. Արքան խղճահարմար ոչ միայն նրանց ճակատագրից, այլև նրանց հոգեկան դժվարին կացութիւնից և հրամայեց նրանցից ամեն մեկին տալ երեք հազար դինար, դրան ավելացրեց նաև տասական ձեռք հագուստ, ինչպէս նաև խոշոր և մանր անասուններ ու սերմեր, որպէսզի նրանց հատկացված հողը հնարավոր լինի մշակել ու ցանել²⁰:

VI. Հաջորդ օրը, հավաքելով զորքերի հրամանատարներին, արքան բացատրեց նրանց, որ հույների համար չկա ավելի առեւելի բաղաբ, քան Պարսկաստանի հնագույն արքաների մայրաքաղաքը. այստեղից են ճամփա ելել անթիլ անհամար հրոսակները, այստեղից են՝ սկզբից Դարեհը, և ապա Քսերքսեսը սկսել իրենց հանցավոր պատերազմները Եվրոպայի դեմ: Մեր պարտքն է ի հիշատակ նախնիների ավերել այդ քաղաքը: 2. Բարբարոսները, լքելով քաղաքը, արդեն փախել էին, ում ուր որ տարել էր վախը, և արքան առանց հապաղելու քաղաք մտցրեց փաղանգր: Նա արդեն գրավել և մասամբ ընդունել էր շատ հանձնվող քաղաքներ՝ արքայական հարստութեամբ, սակայն այս քաղաքը իր հարստութեամբ գերազանցում էր մնացած բոլորին: 3. Բարբարոսները այստեղ էին կենտրոնացրել ողջ Պարսկաստանի հարստութիւնը, ոսկին և արծաթը դրված էին կուտերով, շատ մեծ քանակութեամբ հագուստ կար, կահ-կարասին հավաքված էր ոչ միայն գործածութեան համար, այլև նաև շքեղութեան համար: 4. Այստեղից ռազմական ընդհարումներ առաջացան և իրենց՝ հաղթողների միջև. ով ավելի թանկարժեք ավար էր վերցնում, համարվում էր թշնամի, և քանի որ նրանք ի վիճակի չէին տանել ամեն ինչ, վերցնում էին միայն ամենաթանկարժեք իրերը: 5. Նրանք բոլորում էին արքայական հագուստները, թրերով ջարդուփշուր էին սնում թանկարժեք գեղարվեստական անոթները, ոչինչ չէին թողնում առանց ձեռք տալու, ոչ էլ տանում ամբողջական. տանում էին արձանի կոտորված մասերը, ով ինչ հափշտակեր: 6. Քողաքում ոչ միայն ազահութիւն, այլև դաժանութիւն էր ցուցաբերվում. ոսկով ու արծաթով ծանրացած հաղթողները սրախողխող էին անում գերիներին, որոնցից ոչինչ չկար վերցնելու, բոլոր նրանց հանդիպողները սպանվում էին, եթե նրանց աղքատ էին թվում: 7. Թշնամուց շատերն իրենց ձեռքով կամավոր մահ էին պատրաստում. հազնելով թանկարժեք հագուստներ, նրանք կա-

նանց ու երեսաների հետ նետվում էին պարիսպներից ցած: Թմանք իրենց աները կրակի էին մատնում, ենթադրելով, որ շատով ինքը՝ թշնամին է դա անելու, և ողջ-ողջ այրվում: 8. Վերջապէս արքան հրամայեց իր զինվորներին խուսափել կանանց վրա բռնութիւն գործադրելուց: Ըմանք այստեղ բռնագրաված ավարի այնպիսի քանակ են ասում, որ անհաշուեական է թվում: 9. Բայց և այնպէս, պետք է կամ կասկածել ոչինչ տեղեկութիւնների վրա կամ էլ հավատալ, որ այդ քաղաքի գանձարանում այդ ժամանակ եղել է 120 հազար տալանտ: Որպէսզի տանի այն, իսկ արքան ենթադրում էր իր հետ վերցնելու դա պատերազմի կարիքները հոգալու համար, նա հրամայեց բեռնակիր անասուններ և ուղտեր բերել Շոշից ու Բաբելոնից: 10. Նշված բռնագրաված գումարին ավելացավ ևս վեց հազար տալանտ Պասարգադի գրավումից հետո: Պասարգադ քաղաքը հիմնել էր Կյուրոսը. Ալեքսանդրին այն հանձնեց քաղաքի կառավարիչ Գոբարը:

11. Պերսեպոլիս ամրոցի պաշտպանութիւնն Ալեքսանդրը հանձնարարեց նիկարիդոսին, այդ նպատակի համար թողնելով երեք հազար մակեդոնացի. Տիրիդատը, որն Ալեքսանդրին էր հանձնել գանձարանը, շարունակեց վայելել այն հարգանքը, որը նա ուներ Դարեհի օրոք: Այդտեղ թողնելով նաև իր զորքի զգալի մասը և ողջ գումակը, նա դրանց ղեկավար նշանակեց Պարմենիոնին և Կրատերոսին: 12. Ինքն էլ հազար հեծյալներով և թեթևազեն զինվորների ջոկատով նետվեց Պարսկաստանի ներքին շրջանները, որոնք գտնվում են Վերգիլիոսի²¹ համաստեղութեան տակ և, ընայած ուժեղ անձրևներին ու գրեթե անտանելի հողմերին, շարունակեց ընթանալ իր ընտրած ուղղութեամբ: 13. Նա մոտեցավ ճանապարհի հատվածին, որը հավերժական ձյունով էր ծածկված. սաստիկ ցուրտը սառույցով էր պատել այն: Այդ վայրերի անապատային և ահեղ տեսքը սարսափեցնում էին հոգնած զինվորներին, որոնց թվում էր, թե իրենք տեսնում են աշխարհի ծայրը: Նրանք շուրջ բոլորն էին նայում, ապշելով անապատային տեղանքի տեսարանից, ուր մարդու բնակութեան որևէ հետք չկար և պահանջում էին վերադառնալ, քանի դեռ չեն զրկվել լույսից ու օդից: 14. Արքան ավելորդ համարեց պատժել վախկոտներին. դրա փոխարեն նա ցած թռավ ձիուց և ոտքով գնաց ձյան և սառույցի վրայով: Սկզբում ամաչեցին չհետևել նրան նրա ընկերները,

հետո՝ հրամանատարները, և վերջապես, մնացած զինվորները: Գնալով առջևից, արքան կացնով սառույցների մեջ իր համար ճանապարհ էր բացում. արքայի օրինակին հետևեցին և մնացածները: 15. Վերջապես, հաղթահարելով նաև համարյա անձամիտ անտառի թավուտը, նրանք հանդիպեցին մարդկային բնակության հազվադեպ հետքերի և անկանոն թափառող մանր անասունների, իսկ հազվադեպ հյուղակներում ծվարած բնակիչները, համոզված, որ իրենք բոլոր կողմերից անջրպետված են շնորհիվ ճանապարհների բացակայության, երբ նկատեցին զինվորների ջոկատները, կոտորեցին բոլոր նրանց, ովքեր չէին կարող փախչել իրենց հետ և նետվեցին ձյունապատ անմարդաբնակ սարերը: 16. Հետագայում գերիների միջոցով բանակցությունների մեջ մտնելով, նրանք որոշ շափով մեղմացրին իրենց վայրենությունը և հանձնվեցին արքայի ողորմությանը: Նրանց հանդեպ ոչ մի խստություն չկիրառվեց:

17. Այնուհետև, ամայացնելով Պարսկաստանի դաշտերն ու հնազանդեցնելով մեծ թվով բնակավայրեր, արքան եկավ մարդերի²² ցեղի մոտ՝ ազմատենչ և մնացած պարսիկներից իրենց ապրելակերպով սաստիկ տարբերվող: Նրանք լեռներում բարանձավներ են փորում և թաքնվում այնտեղ իրենց կանանց ու երեխաների հետ, սնվում ընտանի կենդանիների և վայրի գազանների մոտ: 18. Նրանց կանայք էլ իրենց բնությանը համապատասխան ավելի մեղմ բարբեր չունեն. նրանց մազերը զգզված են, հագուստը ծնկներից վերև, նրանք գլուխները փաթաթում են պարսատիկով, որը և՛ զարդ է, և՛ զենք: 19. Սակայն այս ցեղին էլ հնազանդեցրեց ճակատագրի հարվածը: Այսպիսով, արքան վերադարձավ Պերսիպոլիս այնտեղից մեկնելու երեսուներորդ օրը: Այստեղ նա մերձավորներին ու մնացածներին պարզեցրեց տվեց՝ յուրաքանչյուրին ըստ իր արժանիքի և համարյա ծախսեց այն ամենը, ինչ վերցրել էր այդ բազարում:

VII. Այնուհանդերձ, իր հոգու հիասքանչ հատկությունները, որոնցով նա գերազանցում էր մյուս բոլոր արքաներին՝ տոկունությունը վտանգի պահին, որոշումներ կայացնելու և մտածածն իրագործելու արագությունը, իրեն հանձնվողներին տրբվող խոսքին հավատարիմ մնալը, գերիների հետ սիրալիր վերաբերվելը, հաճույքների մեջ զսպվածությունը, թեև թուլատրելի և սովորական, այս ամենը նա արատավորում էր զինու հանդեպ

անեցած անհաղթահարելի տենչով: 2. Այն ժամանակ, երբ նրա արքայական իշխանության թշնամին ու խոսյանը շարունակում էր համառորեն պատերազմել, իսկ վերջերս նրա կողմից հաղթվածներն ու հնազանդեցվածները արհամարհանքով էին վերաբերվում նրա նոր իշխանությանը, նա չույսը չբացված նստում էր խնջույթի, որոնց մասնակցում էին նաև կանայք, բայց ոչ արքայիսինները, որոնց հնարավոր չէր անպատվել, այլ անառակ կանայք, վարժված զինվորականների հետ ապրելուն, ընդունվածից ավելի անբռնազրոսիկ: 3. Նրանցից մեկը՝ Տախը, հարբած ժամանակ ներշնչում է նրան, որ Ալեքսանդրը բոլոր հույներին խոր երախտապարտությունը կվայելի, եթե կրակի մատների պարսից արքաների պալատը. դրան, իբր, սպասում են բոլոր նրանք, ում քաղաքներն ավերել են բարբարոսները: 4. Նման կարևոր պործում հարբած լրբի կարծիքին են միանում երկու-երեք սեղանակիցներ, նույնպես գինուց հարբած. արքան այստեղ ցուցաբերեց ավելի շատ ընշաբազցություն, քան զբուզվածություն. «Եվ իսկապես, ինչո՞ւ վրեժխնդիր չլինել Հունաստանի համար և շայնել քաղաքները»: 5. Բոլորը գլուխները կորցրին գինուց և հարբած նետվեցին այրելու քաղաքը, որը մինչ այդ խնայել էին զինված թշնամիները: Արքան առաջինը այրեց պալատը, նրան հետևեցին հյուրերը, ծառաները, հարձները: Մեծածավալ պալատը կառուցված էր մայրի ծառից. նա արագ բոցավառվեց և հրդեհն արագորեն տարածվեց: 6. Երբ գա նկատեցին քաղաքից ոչ հեռու գտնվող ճամբարում, զինվորները, կարծելով, թե պատահական հրդեհ է, վազելով եկան օգնություն ցույց տալու: 7. Սակայն մոտենալով պալատի մուտքին, նրանք տեսան, որ ինքը՝ արքան զեռ կրակ է ավելացնում դրան: Թափելով իրենց հետ բերած ջուրը, նրանք իրենք սկսեցին կրակի մեջ վառելանչուժ նետել:

8. Այսպիսի ճակատագրի արժանացավ ողջ Արևելքի արքայանիստ քաղաքը: Ինչքան ժողովուրդներ են նախկինում այստեղ արդարադատություն փնտրել, սա եղել է բազմաթիվ արքաների ծննդավայրը, ժամանակին Հունաստանի սարսափի առարկան, այստեղից էին ուղարկվում հազարավոր նավերից բաղկացած նավատորմներն ու մեծ բանակները, որոնք հեղեղում էին Եվրոպան, որոնք ծովը քարերով էին լցնում, սարեր քանդում և տեղը նեղուցներ սարբում²³: 9. Սակայն քաղաքը վերականգնվեց նրա ավերումից ոչ շատ ուշ²⁴: Եվ ուրիշ շատ

բազաքները գրավեցին մակեդոնական արքաները, իսկ այժմ նրանց տիրում են պարթևները, Մայրաքաղաքի հետքերը հնարավոր էլ չէր լինի գտնել, եթե ուղեցույց չլիներ Արաքս գետը, որ հոսում էր քաղաքի պարիսպներից ոչ հեռու. այդ իսկ պատճառով շրջակայքի բնակիչները միայն հավատով են ընդունում ավանդությունն այն մասին, որ գետից քսան ասպարեզ հեռավորության վրա ինչ-որ քաղաք է եղել. 10. Մակեդոնացիները ամառում էին, որ այդպիսի փառավոր քաղաքը կործանել է խրախճանքի ժամանակ հարբած արքան, սակայն, լքողներն վերելելով դրան, նրանք ստիպեցին իրենց հավատալ, որ հենց այդպես էլ անհրաժեշտ էր կործանել այդ քաղաքը: 11. Հայտնի է, որ ինքն՝ արքան, երբ հարբածությունն անցել է և բնից հետո միտքը պարզվել, ասել է, որ պարսիկների համար ավելի ծանր պատիժ կլիներ հույների կողմից, եթե նրանք տեսնեին իրեն պալատում, Քսերքսեսի գահին բազմած: 12. Հաջորդ օրը նա երեսուն տաղանդ նվիրեց իրեն Պարսկաստան առաջնորդած լիկիացուն: Այստեղից նա անցավ Մարաստանի մարզը, որտեղ հանդիպեց նորակոչիկներին, որոնք գալիս էին Կիլիկիայից համալրելու զորքը: Հետևակալիները ընդամենը հինգ հազար էին, հեծյալները՝ հազար: Երկու խմբերն էլ ղեկավարում էր աթենացի Պլատոնեսը: Նման համալրում ստանալով, նա որոշեց հետապնդել Գարեհին:

VIII. Գարեհն այդ ժամանակ հասել էր Էկրատան քաղաքը: Դա Մարաստանի մայրաքաղաքն է. այժմ այն գտնվում է պարթևների տիրապետության տակ, և նրանց արքաների ամառային գահանիստն է: Այնուհետև Գարեհը ցանկանում էր գնալ Բակտրա, սակայն երկուց կրելով, որ այն կարող է ընկնել Ալեքսանդրի ձեռքը շնորհիվ նրա արագ տեղաշարժերի, փոխեց իր մտադրությունը և ուղիս: 2. Ալեքսանդրը նրանից հազար հինգ հարյուր ասպարեզ հեռու էր, սակայն նրա տեղաշարժերի արագության պայմաններում ոչ մի տարածություն հեռավոր չէր թվում, Այսպիսով Գարեհն ավելի շատ պատրաստվում էր հակառակորդի, քան փախուստը շարունակելու: 3. Նրան հետևում էին երեսուն հազար հետևակալիներ. նրանց մեջ մինչև վերջ արքային հավատարիմ չորս հազար հույներ: 4. Պարսատիկավորների և հրածիգների ջոկատն իր կազմում ուներ ևս չորս հազար մարդ, բացի այդ, նա ուներ երեք հազար երեք հարյուր հեծյալներ, զերգանցապես բակտրիացիներ: Նրանց

հրամանատարն էր Բեսը՝ Բակտրիայի մարզի պրեֆեկտը: 5. Այդ շուկատով Գարեհը որոշ չափով շեղվեց ուղիմական ճանապարհից, հրամայելով մարկիտանտներին և նորողի պահակախմբին առաջ անցնել: 6. Այնուհետև հավաք կազմակերպելով, նա ասաց. «Եթե ճակատագիրը կապեր ինձ վախկոտ մարդկանց հետ, որոնց համար կյանքն ինչպիսին էլ որ լինի, ավելի թանկ է, քան պատվավոր մահը, ես կլռեի և իզուր խոսքեր չեի վատնի: 7. Բայց ես փորձել եմ ձեր արիությունը և հավատարմությունը շատ ավելի լուրջ, քան ցանկալի կլիներ գործում, այնպես որ ինքս պետք է շանամ արժանի լինել այդպիսի ընկերներին, և ոչ թե կասկածել՝ արդյո՞ք նրանք իրենք իրենց հավատարիմ են մնացել: 8. Իմ հրամանատարության տակ գտնված հազարավոր մարդկանցից միայն դուք եք հետևում ինձ, երիցս ջարդված, երիցս փախուստի մատնված: Զեր հավատարմությունն ու տոկունությունն ինձ վստահություն է ներշնչում, որ ես դեռ արքա եմ: 9. Իմ քաղաքներում դավաճաններն ու փախստակներն են թագավորում. ոչ նրա համար, երզում եմ աստվածներով, որ նրանք արժանի են դրան, այլ որ իրենց պարզենիքով խռովեն ձեր հողիները: Բայց դուք՝ իմ հավատարիմ ընկերներ, զերգանցիք կիսել ճակատագիրն ինձ հետ, այլ ոչ թե հաղթողի, և եթե ես չլարողանամ, ապա իմ փոխարեն թող աստվածները պարզևատրեն ձեզ: 10. Եվ, երզում եմ ձեզ, նրանք ձեզ կպարզևատրեն: Սերունդները չեն կարող այդքան անզգալիներ, համբավն էլ՝ այնքան անշնորհակալ, որպեսզի ձեզ արժանավայել զովասանքներով երկինք չբարձրացնեն»:

«Այսպիսով, թեև ես նախկինում խորհում էի փախուստի մասին, որից նողկում էր իմ հողին, այժմ, հենվելով ձեր արիության վրա, ես կցանկանայի ելնել թշնամու դեմ: 11. Մինչև է՞րբ ես պետք է տարազիր լինեմ սեփական թագավորությանս մեջ և նրա սահմաններում փախչեմ օտար երկրից եկած արքայից, երբ ես կարող եմ փորձելով պատերազմի բախտը, կամ վերադարձնել այն, ինչ կորցրել եմ, կամ մեռնել պատվավոր մահով: 12. Թե՞ ավելի լավ է սպասել հաղթողի որոշմանը և Մազեի ու Միթրենի օրինակով ողորմություն թախանձելով՝ մի որևէ ցեղի վրա արքայության իրավունք ստանալ, քանզի թըշնամին զերգանցում է փառքի ձգտել, և ոչ թե բավարարել իր ցատումը: 13. Աստվածներն էլ թույլ չեն տա, որ որևէ մեկը իմ զլխի վրայից հանի իմ աստիճանի նշանները կամ էլ նվիրատրի

դրանք ինձ. բանի դեռ ողջ եմ, ես իշխանութունից չեմ հրա-
ժարվի, դրա վերջը կլինի և իմ կյանքի վերջը: 14. Եթե դուք
պահպանեք ձեր ոգին և ձեր օրենքները, ապա ձեզանից
ոչ ոք ազատությունից չի զրկվի, ոչ ոք ստիպված չի լինի հան-
դուրժել մակեդոնացիների ամբարտաճանությունն ու գոռոզու-
թյունը: Յուրաքանչյուրը իր ձեռքով կամ վրեժխնդիր կլինի
նման շարիքի համար կամ կկանխի այն: 15. Իմ ճակա-
տագիրը ցույց է տալիս, թե ինչքան փոփոխական է եր-
ջանկությունը: Եվ ոչ առանց հիմքի, ես սպասում եմ ճակատա-
դրիս շրջագարձին դեպի ավելի լավը: Իսկ եթե աստվածները
երես թեքեն մեզանից արդարացի և բարեպաշտ պատերազ-
մում, անձնուրաց այրերը միշտ էլ կարող են մեռնել ազնվորեն:
16. Որովհետև եմ ձեզ նախնիների փառքով, որոնք այդքան
քաջակորով տիրում էին ողջ Արևելքին և այն հերոսներով,
որոնց մի ժամանակ Մակեդոնիան տուրք էր տալիս. այդքան
շատ նավերից բաղկացած նավատորմերով, որոնք Հունաստան
էին ուղարկվում, ձեր արքաների այդքան շատ ավարներով:
17. Յուցաբերեք ձեր փառքին ու ձեր ցեղին արժանի արիու-
թյուն, որպեսզի մենք պատրաստ լինենք մեր ոգու կայունու-
թյան փորձությունը, որպիսին մենք վերապրել ենք անցյալում
և այն, որ կրեիր մեզ մեր հետագա ճակատագիրը: Ինձ, ան-
կասկած, հավիտյանս կփառաբանի կամ նշանավոր հաղթա-
նակը կամ փառավոր մահը:

IX. Մինչդեռ Գարեհը ասում էր դա, մոտալուռ վտանգի գի-
տակցման սարսափից սեղմվում էին սրտերն ու հոգիները և ոչ
մի կարծիք չհայտնվեց, չսվեց ոչ մի ձայն: Այնժամ, վերջա-
պես, արքայի հին ընկերներից Արտաբազը, որի մասին մենք
վերևում հիշատակել էինք որպես Փիլիպոսի²⁵ ընկերոջ, ասաց.
«Մենք, իհարկե, հագած թանկարժեք հագուստներ, հանդամա-
նորեն զինված մեր փառավոր զենքով, արքայի հետևից կգնանք
մարտի հաղթանակի հույսով, բայց և շնորհ հրածարվի մահն
ընդունելուց»: 2. Մնացածները համակրանքով ընդունեցին
նրա նոսքերը: Սակայն այդտեղ ներկա գտնվող Նաբարզանն ու
Բեսը, իբրև մեզ չսված հանցագործ զաշնակցություն կնքած,
որոշեցին իրենց հրամանատարության տակ գտնվող զորքերի
օգնությամբ բռնել արքային և շղթայել: Նրանք այսպես էին
դատում. եթե Ալեքսանդրը հասնի իրենց, նրանք Ալեքսանդրին
հանձնելով կենդանի արքային, կվաստակեն հաղթողի մեծ

կրթատաղիությունը և մեծ գին կնշանակեն Գարեհին բռնելու
համար. իսկ եթե հաջողվի խուսափել Ալեքսանդրի հետ հանդի-
պումից, ապա սպանելով Գարեհին, նրանք կգրավեն իշխանու-
թյունը և կշարունակեն սպառնալով: 3. Նրկար կշռադա-
տելով այդ մտահուցումը և նախապատրաստելով դրա իրա-
զործումը, Նաբարզանն ասաց արքային. «Ես գիտեմ, որ իմ
հայտնած կարծիքն առաջին հայացքից քեզ տհաճ է թվալու:
Քայց բժիշկներն էլ հաճախ հիվանդությունները բուժում են դա-
ժան միջոցներով, և նավավարն, էլ երկյուղելով նավարկությու-
նից, փրկում է, ինչ կարող է, զոհաբերելով մնացածները: 4. Իսկ
ես խորհուրդ եմ տալիս քեզ վնաս չհասցնել, և, այնուհանդերձ,
թագավորությունը և քեզ պահպանել խելացի ձևով: Մենք պա-
տերազմի մեջ ենք մտել առանց աստվածների օրհնության, և
դաժան ճակատագիրը չի դադարում հետևելու պարտիկներին:
Անհրաժեշտ է ամեն ինչ սկսել նորից, նոր խորհրդանշանի
պայմաններում: Ժամանակավորապես հանձնիր իշխանությունը
և հրամանատարությունը ուրիշին, որը թող կրի արքայի անու-
նը մինչև թշնամին լքի Ասիան: Այնժամ նա հաղթանակած քեզ
կվերագարձնի քո թագավորությունը: 5. Բանականությունը հա-
մոզում է, որ դա շուտով կկատարվի: Բակտրան դեռ ձեռք
արված չէ, հնդիկներն ու սակերը գտնվում են քո իշխանության
եներք, բազմաթիվ ժողովուրդներ, բազմաթիվ բանակներ, բաղ-
մահազար հետևակայիններ ու հեծյալներ ուժեր են նախապատ-
րաստում պատերազմը վերսկսելու. առաջիկա սուրբարք կզերա-
դանցի այն, ինչ արդեն եղել է: 6. Ինչո՞ւ պետք է մենք անբանա-
կան զազանների նման ձգտենք մեր կործանմանը առանց ան-
հրաժեշտության: Քաջ այրերին հատկանշական է ոչ թե առել
կյանքը, այլ արհամարհել մահը: 7. Աշխատանքից ահաճություն
զգալով, ծուլիբը հաճախ իրենց հասցրել են մինչև ոչնչու-
թյան. արիությունը, դրան հակառակ, ոչինչ առանց փորձելու
չի թողնում: Բոլորին մահ է սպասվում, սակայն դրան ընդա-
ռաջ պետք է գնալ առույգորձի: Մենք էլ զնամբ ամենահուսալի
ապաստարանը՝ Բակտրա, և նրա կառավարիչ Բեսին ժամանա-
կավոր արքա դարձնենք: Կարգավորելով բոլոր գործերը, նա
կհանձնի իր պայմանական իշխանությունը քեզ՝ օրինական ար-
քայիդ:»

9. Զարմանալի չէ, որ Գարեհը չզսպեց իրեն, թեև պիղծ
խոսքերը զեռ չէին մերկացրել հանցագործ մտադրությունը: 10.

Այսպէս, նա բացականչեց. «Անա՛րգ ստրուկ, այ թե ժամանակ
ես գտել քո զազրելի ոճրագործութեան համար»: Մերկացնելով
ակինակը, նա պատրաստ էր սրախողխող անել նրան, եթե նրան
հաշտեցնող տեսքով շրջապատեին բակտրացիները Քեսի
հետ միասին, ի դեպ, նաև պատրաստ բռնութեան, եթե արքան
շարունակէր բորբոքվել: 11. Այդ ժամանակ նաբարզանն ան-
նկատելի հեռացավ, նրա հետեից՝ նաև Քեսը: Պատրաստվելով
զազոնի իրագործել իրենց ծրագիրը, նրանք հրամայեցին
փրենց զորքերին անջատվել մնացած զորամասերից: 12. Ար-
տաբազն էլ, ելույթ ունենալով իրագրութեանը համապատաս-
խան խոսքերով, սկսեց հանդստացնել Գարեհին, պատճառ բե-
րելով պահի պայմանները. թող նա ավելի հանգիստ վերաբեր-
վի իր մարդկանցից որևէ մեկի չհասկանալուն կամ մոլորու-
թեանը: Ալեքսանդրի հարձակումը ծանր է նույնիսկ համընդհա-
նուր հնազանգութեան պայմաններում. իսկ ի՞նչ կլինի, երբ
նրանք շարունակելով փախուստը, օտարանան իրենց արքայից:
13. Գարեհը զժկամորեն ենթարկվեց Արտաբազին, և թեև մինչ
այդ որոշել էր լքել ճամբարը, այժմ տեսնելով համընդհանուր
իրաբանցումը, մնաց նույն տեղում: Ընկնելով տխրութեան ու
հուսալքութեան մեջ, նա մեկուսացավ իր վրանում: 14. Իսկ
ճամբարում, ուր ոչ մի կառավարում չկար, տարածվեցին տար-
բեր տրամադրություններ, սակայն գործերը քննարկվում էին ոչ
ընդհանուր ժողովներում, ինչպես առաջնորդում: 15. Հուլյաների
հրամանատար Պատրոնեսը հրամայում է իր մարդկանց վերցնել
զենքերը և պատրաստ լինել հրամանները կատարելու: 16.
Պարսիկները անջատվեցին, Քեսը բակտրացիների մեջ էր և
աշխատում էր իր կողմը գրավել պարսիկներին, ի ցույց դնելով
դեռ շավիրված Բակտրայի հարստությունները և մնացողներին
սպառնացող վտանգը: Սակայն բոլոր պարսիկները միաձայն
ասում էին, որ իրենց պատշաճ չէ լքել արքային: 17. Այդ ըն-
թացքում Արտաբազը կատարում էր գլխավոր հրամանատարի
բոլոր պարտականությունները. նա շրջայց էր կատարում պար-
սիկների վրանները և չէր դադարում քաջալերել մեկ առանձին
զինվորների, մեկ էլ բոլորին միասին, մինչև չհամոզվեց, որ
նրանք կկատարեն իր հրամանները: Իսկ Գարեհին նա զժկա-
րութեամբ համոզեց սնունդ ընդունել և վերադարձնել իր ար-
քայական ոգին:

X. Իսկ Քեսն ու նաբարզանը իշխանութեան կրթից բորբոք-

ված, որոշեցին իրագործել վաղուց մտածված ոճրագործութեանը.
սակայն Գարեհի կենդանութեան պայմաններում նրանք
հույս չունեին անհրաժեշտ ուժեր ձեռք բերել: 2. Չէ՞ որ
արքայան ջեղերի մոտ արքաներն ամենախորին հարգանք
են վայելում, բարբարոսները համախմբվում են արքայի ան-
վան շուրջը և մեծարում արքային թե հաջողութեան ժամա-
նակ և թե զժրախտութեան մեջ: 3. Իրենց ծրագրածի հաջո-
ղութեան համոզվածություն նրանց ներշնչում էին, այն մար-
դի պայմանները, որը նրանք կառավարում էին. այդ մարդը
չէր զիջում որևէ ուրիշի՝ զենքի, մարդկանց և տարածութեան
լայնարձակութեամբ, զբաղեցնելով բոլոր ասիական հողերի
մեկ երրորդ մասը. այնտեղի նորակառույցներն իրենց բանակով
կարող էին լրացնել Գարեհի զորքի բոլոր կորուստները: 4.
Այդ պատճառով նրանք վերևից էին նայում ոչ միայն Գարե-
հին, այլև Ալեքսանդրին, հուսալով ստանալ բավարար ուժ
իշխանութեան վերականգնման համար, եթե նրանց հաջողվեր
իրենց ձեռքը գցել մարզը: 5. Հիմնավորապես քննարկելով
ամեն ինչ, նրանք որոշեցին գերել արքային՝ ամեն ինչով
իրենց հնազանգ բակտրացի զինվորների օգնությամբ, և
Ալեքսանդրի մոտ լրաբեր ուղարկել: 6. Հայտնել նրան, որ
իշխան Ալեքսանդրի համար են ողջ սահայանում Գարեհին,
իսկ եթե Ալեքսանդրը մերժի իրենց զավաճանությունը, որից
նրանք վախենում էին, նրանք որոշեցին, որ կսպանեն Գարեհին
և կգրավեն Բակտրան իրենց ջեղերի մարդկանցից բաղկացած
չփախուցի: 7. Սակայն բացելուց գերել Գարեհին, անհնար էր.
բազմահազար պարսիկներ նրան օգնության կհասնեին, բացի
այդ, ստիպված էին երկյուղել հուլյաների հավատարմությունից:
8. Այսպիսով, ինչի նրանք չէին կարող հասնել ուժով, սկսե-
ցին հետամուտ լինել խաբուութեամբ. նրանք չհղծավորաբար
զղչացին, որ ձգտել են մեկուսանալ, և արքայից ներողություն
խնդրեցին անհանգստություն պատճառելու համար: Նույն
ժամանակ էլ նրանք մարդիկ էն ուղարկում խոտվելու պար-
սիկների հոգին: 9. Սրանք համոզում են զինվորներին մեկ
վախով, մեկ հույսերով. որ իբր զինվորները իրենց զուխը
զնում են ընդհանուր էրթանման տակ, ձգտում են իրենց
աշխատանքը, իսկ Բակտրան բաց է նրանց առջև և պատրաստ
ընդունելու նրանց ընծաներով ու այնպիսի առատութեամբ,
որպիսին նրանք պատկերացնել անգամ չեն կարող:

10. Այդ նույն ժամանակ դալիս է Արտաբազը և արքայի հրամանով կամ ինքն իրենից ասում, որ արքան մեղմացել է և պատրաստ է նախկին բարեկամությունը ցուցաբերել նրանց հանդեպ: 11. Արցունքներ թափելով, նրանք սկսեցին մեկ արգարանալ, մեկ աղաչել Արտաբազին, որ նա աջակցի իրենց և հազորդի իրենց պաղատանքները: 12. Այդպես անցավ գիշերը. առավոտյան նարարդանը բախտրացիներին հետ արդեն դբտնրվում է պրետորիայի մուտքի մոտ, թարցնելով իր մտադրությունները՝ պարտքի ցուցադրական կատարմամբ: Գարեհը դուրս գալով արված նշանով, սովորույթի համաձայն, պատրաստվում էր մարտակառք նստել: 13. Իսկ նարարդանը և մյուս ոճրագործներն այնքան անպատկառուութուն ցուցաբերեցին, որ գետնին ընկնելով, ոչ միայն մեծարեցին նրան, ում շուտով պատրաստվում էին շղթայել, այլև նույնիսկ կեղծ արցունքներ թափեցին: Ահա թե ինչպես կարող է մարդը կեղծել: 14. Այնուհետև խոնարհարար դիմելով արքային աղաչանքներով, նրանք ստիպեցին Գարեհին՝ փափկասիրտ ու ուղղամիտ մարդուն, ոչ միայն հավատալ իրենց խոսքերին, այլև նույնիսկ լաց լինել իրենց հետ միասին: 15. Եվ նույնիսկ այն ժամանակ նրանք լամաշեցին իրենց հանցագործ ծրագրից, երբ տեսան, թե ինչպիսի արքայի և մարդու են խաբում: Արքան իրեն անվտանգ զգաց վերահաս վտանգից և սկսեց շտապել, որպեսզի Ալեքսանդրի ձեռքը չընկնի, միակ բանը, որից վախենում էր:

XI. Իսկ հույների հրամանատար Պատրոնեսը հրամայեց յուրախիճներին զինվել զենքերով, որոնք մինչ այդ տանում էր գումակը, և պատրաստ լինել կատարելու իր հրամանները: 2. Ինքը հետևեց արքայի մարտակառքին, պատեհ առիթ փնտրելով նրա հետ զրուցելու համար, քանի որ նա կանխատեսում էր Բեսի դավաճանությունը: Սակայն Բեսը, վախենալով դրանից, հետ չէր մնում մարտակառքից ոչ որպես արքայի արբանյակ, այլ որպես լրտեսող: 3. Սկսպես, Պատրոնեսը երկար ժամանակ հապաղում էր, հաճախ շեղվելով զրուցից և, տատանվելով պարտքի ու վախի զգացումների միջև, աչքը չէր կտրում արքայից: 4. Արքան վերջապես շրջվեց նրա կողմը և ուղարկեց իր մարտակառքի հետևից ամենամոտ գնացող նեքրիի Բուբակին՝ հարցնելու, արդյո՞ք նա ցանկանում է որևէ բան ասել: Պատրոնեսը պատասխանեց, որ իսկապես ուզում է խոսել նրա հետ, միայն առանց վկանների: 5. Արքան հրամայեց նրան մոտենալ, և

ասանց թարգմանչի, քանի որ ինքը վատ չգիտեր հունարեն, և Պատրոնեսն ասաց. «Արքա, հիսուն հազար հույներից²⁶ մնացել ենք քչերս և մենք կիսում ենք քեզ հետ ցանկացած ճակատագիր, մենք նույնքան հավատարիմ ենք քեզ քո ներկա վիճակում, ինչպես և նախկինում, երբ այն ծաղկուն էր. ինչ հողեր էլ ընտրես, մենք կգնանք այնտեղ, ինչպես դեպի հայրենիք և հարազատ տները: Քո բախտավորությունը և դժբախտությունը անտորեն մեզ կապել է քեզ հետ: 6. Ազալում եմ քեզ, հանուն մեր անխախտ հավատարմության, խփիր քո վրանը մեր ճամբարում. թույլ տուր մենք լինենք քո թիկնապահները: Մենք կորցրինք Հունաստանը, ոչ մի Բակտրա էլ մենք չունենք, մեր մտքը հույսը քո վրա է: Եթե հնարավոր լիներ հույս դնել և ուրիշների վրա: Ավելին ասել չեմ կարող: Ես, օտարերկրացիս, չէի խնդրի ինձ վստահել քո պաշտպանությունը, եթե համոզված լինեի, սր ուրիշները բարեխղճորեն կկատարեն այդ պարտականությունը»:

7. Բեսը, թեև չգիտեր հունարեն, սակայն խղճի խայթից ասնջվելով, ենթադրեց, որ Պատրոնեսը, իհարկե, ամբաստանեց իր դեմ, իսկ երբ հույն թարգմանիչը հազորդեց նրան զրույցը, նրա բոլոր կասկածները փարատվեցին: 8. Իսկ Գարեհը, դատելով նրա դեմքի արտահայտությունից, ամենևին չվախենալով, սկսեց հարց ու փորձ անել Պատրոնեսին նման խորհրդի դերզապատճառի մասին: Սա դանելով, որ այլևս չի կարելի կոծկել, ասաց նրան. «Բեսը և նարարդանը, օգտվելով քո դժբախտությունից, դավեր են նյութում քո կյանքի դեմ: 9. Այսօրվա օրը վերջինը կլինի քո մարդասպանների կամ քեզ համար»: Եվ Պատրոնեսը մեծ փառքի արժանացավ արքայի մասին այդ հոգատարությունից համար: 10. Թող ծիծաղեն բոլոր նրանք, որոնք համոզված են, որ մարդկային գործերը անցնում ու փոփոխվում են պտտահանություն²⁷. Ես հակված եմ հավատալու, որ ամեն մեկն իրագործում է գործերի իր կարգը ըստ անխախտ կանոնի անհայտ պատճառների նախապես հաստատված կապի հիման վրա²⁸: 11. Գարեհն, իհարկե, պատասխանեց նրան, որ թեև հույների հավատարմությունը իրեն քաջ հայտնի է, սակայն նա երբեք հետ չի կանգնի իր համացեղակիցներից: Ինքն ավելի զժվարություն է մեղադրում որևէ մեկին, քան խաբվում է: Ինչ էլ որ ճակատագիրը կանխատեսած լինի իր համար, նա գերադասում է փորձություն ենթարկել այն յուրախիճների շրջանում և

փախստակ չի դառնա: Եթե իր զինվորները չեն ցանկանում պաշտպանել իր կյանքը, ապա ինքն առանց այդ էլ շափազանց ուշ է ընդունում մահը: 12. Պատրոններ, հուսահատված արքայի փրկութեան գործում, վերադարձավ նրանց մոտ, որոնց հրամանատարն էր, իր հավատարմութեամբ պատրաստ ամեն ինչի:

XII. Իր կողմից Բեսը ենթադրում էր անմիջապես սպանել արքային, սակայն երկյուղելով, որ Ալեքսանդրի երախտագիտությունը չի արժանանա, եթե Գարեհին ողջ չհանձնի նրան, իր մտադրության իրականացումը հետաձգեց մինչև մոտակա գիշերը. այժմ էլ սկսեց կեղծավորաբար շնորհակալություն հայտնել աստվածներին այն բանի համար, որ արքան այդքան խելամտորեն ու զգուշությամբ խուսափել էր երզնազանց մարդու դավերից, որը պարզեցնել էր ակնկալում Ալեքսանդրից. չէ որ նա ցանկանում էր թշնամուն ընծայել արքայի զուգոր: 2. Զարմանալի ոչինչ չկա. վարձկան մարդու համար ամեն ինչ ենթակա է վաճառքի. ոչ մի տեղ չունենալով ոսկի, օջախ, օտար՝ ողջ աշխարհում, առաջին իսկ պատեհ առիթով նա փոխում է տիրակալներին ու թշնամիներին: 3. Ի պատասխան նրա արդարացումների ու հայրենական աստվածներին ուղղված երդումների, Գարեհը կարեկցանքով նայում էր նրան, սակայն չէր կասկածում, որ հույների ասածը ճշմարտանման է: Սակայն բանը հասավ նրան, որ յուրայիններին շփոթահեղ զարձավ նույնքան վտանգավոր, որքան կեղծիքին հավատալը: 4. Մարդիկ, որոնցից պետք էր վախենալ, որ պատրաստվում են ոճրագործության, երեսուն հազար էին, իսկ Պատրոններ ուներ ընդամենը չորս հազար մարդ. եթե արքան վստահեր նրան, պարսավելով ցեղակիցների ուխտագրծությունը, նա, ինչպես իրեն էր թվում, դրանով իսկ կարդարացներ իր սպանությունը: 5. Սակայն նա գերադասեց փորձություն ենթարկել անօրինական բռնությունը, քան սպանվել իրավամբ: Ի պատասխան Բեսի դավաճանության կասկածների արդարացումներին, նա ասաց, որ գիտի Ալեքսանդրին ոչ միայն որպես քաջարի, այլև արդարացի մարդու: Մոլորվում են նրանք, ովքեր նրանից պարզե են սպասում դավաճանության դիմաց: Ոչ ոք այդքան խիստ չի պատուհան հավատարմության խախտման համար, որքան նա, 6. Արդեն մոտենում էր գիշերը, և պարսիկները, վաչր զնեկով զենքերը, ցրվեցին, որպեսզի մոտակա բնակավայրերում ճարեն իրենց

անհրաժեշտ բաները, իսկ բակտրացիները, ինչպես հրամայել էր Բեսը, կանգնած էին սպառազեն:

7. Այդ ընթացքում Գարեհը իր մաս է կանչում Արտաբազին. էլքը նա Արտաբազին հայտնեց Պատրոնեսի ասածները, սրա մոտ կասկած չմնաց, որ արքային անհրաժեշտ է անցնել հույների ճամբարը, չէ որ արքային կհետևեն նաև պարսիկները, եթե նրանց հայտնի դառնա դավադրության մասին: 8. Սակայն արքան, արդեն համակերպված իր ճակատագրին, խելացի խորհուրդներ չէր լսում: Նա գրկեց Արտաբազին, իր այդ ժամանակվա միակ ապավենին, որպեսզի հրաժեշտի մի հայացք նետի նրա վրա: Նրանք արցունքներով ողողում էին իրար, երբ արքան հրամայեց նրան լքել իրեն: Գլխի վրա ծածկոց նետելով, որպեսզի շտենի, թե ինչպես է Արտաբազը հեռանում, հեկեկալով, ասես թաղման ժամանակ, ինքը իջավ գետին: 9. Այնժամ քիկնապահները, որոնք պարտավոր էին պաշտպանել արքային նույնիսկ անձնական կյանքը վտանգելով, փախան, քանի որ սպասում էին զինված մարդկանց և վախենում, որ չեն հաղթահարի նրանց: Եվ այսպես. արքայի վրանում խոր լուծություն էր, արքայի մոտ մնացել էին ընդամենը մի քանի ներքինի, որոնք գնալու տեղ չունեին: 10. Իսկ նա, հրաժարվելով բոլոր խորհուրդներից, երկար մտորում էր, թե ինչ որոշում կայացնի: Վերջ ի վերջո, մենակությունը, որին մինչ այդ ձգտում էր, որպես թեթևություն, սկսեց նեղել նրան, և նա իր մոտ կանչեց Բուրակին: 11. Նայելով նրան, արքան ասաց. «Գնացե՛ք և հոգացե՛ք ինքներդ ձեզ համար. դուք, ինչպես որ ենթադրվում էր, մինչև վերջ կատարեցիք ձեր պարտքը ձեր արքայի առջև: Իսկ ես իմ ճակատագրին կսպասեմ այստեղ: Դու, միգուցե, զարմանում ես, որ ես ինքս վերջ չեմ տալիս իմ կյանքին, բայց ավելի լավ է ես մեռնեմ ուրիշի հանցագործ ձեռքով և ոչ իմ»: 12. Այդ բառերից հետո ներքինին հառաչանքներով լցրեց ոչ միայն վրանը, այլև ողջ ճամբարը: Մոտ վազեցին ուրիշները և իրենց հագուստները պատառոտելով, սկսեցին բարբարոսների սովորույթով ողբալ արքային: 13. Երբ այդ հառաչանքները հասան պարսիկների ականջներին, նրանք սարսափած ոչ համարձակվում էին զենք վերցնել, որպեսզի չբախվեն բակտրացիների հետ, ոչ էլ հանգիստ մնալ, որպեսզի չթվար, որ իրենք սրբապղծորեն լքել են արքային: 14. Բազմա-

ձայն ազազակները ողողեցին ողջ ճամբարը, որը զրկվել էր առաջնորդից ու կառավարումից:

Բևսին և Նարարդանին նրանց մարդիկ հայտնեցին, որ արքան ինքնասպանություն է գործել. նրանց թյուրիմացություն մեջ գցեց դահլեճը: 15. Այսպես, նրանք սլանում են բռնելով ձիերը, նրանց հետևում են իրենց ոճրագործության համար իրենց բնորոշ օգնականները: Մտնելով վրան և ներքինիներից տեղեկանալով, որ արքան ողջ է, նրանք բռնում են արքային և շրջափառում: 16. Եվ արքային, որը դեռ վերջերս ճամփորդում էր աստվածների օրհնանքով և սրբություն արժանանալով մարտակառքով, առանց թշնամական ուժերի միջամտության իր ստրուկների գերին դարձած, նստեցնում են ամեն կողմից կաշիներով փակված կեղտոտ մի սայլ: 17. Արքայի դրամն ու օնեցվածքը կողոպտվում է ասես պատերազմի իրավունքով, և հանցագործները, ծանրաբեռնված ավազակաբար ձեռք գցած ավարով, փախուստի են դիմում: 18. Արտաբազը արքային նվիրված մարդկանցով և հույն զինվորներով ուղևորվում է Պարթևաստան, ենթադրելով, որ ամենուր նա ավելի անվտանգ վիճակում կլինի, քան մարդասպանների աչքերի առջև: 19. Պարսիկները Բևսի խոստումների ազդեցության տակ՝ իսկ հիմնականում աչք պատճառով, որ առաջնորդ շունեին, միացան բակտրացիներին և երրորդ օրը հասան նրանց ջոկատին: 20. Իսկ ճակատագիրն այդ ընթացքում մի նոր զվարճալիք հնարեց. որպեսզի արքային շղթան պատշաճ պատվից, նրան շղթայեցին ռակյա կապանքներով: Իսկ որպեսզի ոչ ոք պատահաբար չճանաչի նրան արքայական այդ նշաններով, նրանք սայլը ծածկեցին կեղտոտ կաշեկտրոններով. բեռնակիր անասուններին քշում էին անծանոթ մարդիկ, որոնք ճանապարհին ոչ մի հարցի, ոչինչ չէին կարող պատասխանել: Պահակախումբը գնում էր որոշ հեռավորության վրա:

XIII. Ալեքսանդրը, լսելով, որ Գարեհը դուրս է եկել էկբատանից, թողնելով այն ճանապարհը, որով Մարաստան էր գնում, շտապեց փախչողի հետևից: 2. Այդպես նա հասավ Պարստակի ծայրագույն թաբաս քաղաքին: Այնտեղ փախստականները հայտնում են նրան, որ Գարեհը փախչելով ձգտում է հասնել Բակտրա: 3. Ավելի ճշգրիտ տեղեկություններ նա ստացավ բարեխոսացի Բագիստանից. իբր արքան դեռ ազատության մեջ է, սակայն գտնվում է մահվան կամ կապանքների մեջ հայտնվելու

ժամազի տակ: 4. Ալեքսանդրը, հավաքելով առաջնորդներին, ասաց. «Չեք առջև մեծ խնդիր է դրված, որը պահանջում է շուտագույն իրագործում: Գարեհին հավանաբար լքել կամ անարգել են յուրայինները: Վերցնել նրան կենդանի՝ ահա մեր հաղթանակի պսակը, սակայն դա գործողության արագություն է պահանջում»: 5. Բոլորը միաձայն գոչեցին, թե պատրաստ են հետևել նրան. թող նա լինայի իրենց ուժերը և չվախենա զառնանքներից: Այսպիսով նա իր ջոկատը տարավ ավելի շուտ զբաղվելով, քան սովորական քայլերով, լիողնելով, որ նույնիսկ ցերեկվա հոգնածությունից զիջերը հանգստանան: 6. Այսպես նա անցավ հինգ հարյուր ասպարեզ և ժամանեց այն բնակավայրը, որտեղ Բեսը գերել էր Գարեհին: 7. Այստեղ նա գտավ Գարեհի թարգմանիչ Մելոնեսին: Իր առողջության տկարության պատճառով նա չէր կարողացել հետևել ջոկատին. արագորեն ժամանած արքայի կողմից գերվածը իրեն փախստակ ներկայացրեց: 8. Նրանից Ալեքսանդրը տեղեկացավ կատարվածի մասին, սակայն հոգնած զինվորներին հանգիստ էր պետք: Երեք հազար լավագույն հեծյալներին նա միացրեց ևս երեք հարյուր այսպես կոչված կրկնարտիկներին՝ նրանց մեջքին ավելի ծանր զենք էր. սովորաբար նրանք ճամփորդում էին ձիերով, իսկ անհրաժեշտության դեպքում կոխում հետինում շարքում³⁰:

9. Այդ գործերով զբաղված Ալեքսանդրին են մոտենում Օրսին ու Միթրակենը. դատապարտելով Բևսի հանցագործությունը, նրանք անցան Ալեքսանդրի կողմը և հայտնեցին, որ սարսիկները գտնվում են հինգ հարյուր ասպարեզ հեռավորության վրա, սակայն իրենք ցույց կտան ամենակարճ ճանապարհը: 10. Փախստականների ներկայանալը հաճելի էր արքային: Այսպիսով, երկկոն վրա հասնելուն պես, նրանց ղեկավարությունը նա արագաշարժ ջոկատով գնաց ցույց տրված ճանապարհով, հրամայելով փաղանգին հետևել իրեն արագացված քայլերով: Ինքը, շարժվելով քառակուսի ռազմաշարքով, այնպես էր գնում, որ առաջատար մասի և վերջապահ զորքի միջև խզում չլիներ: 11. Եվ նրանք արդեն անցել էին երեք հարյուր ասպարեզ, երբ նրանց հանդիպեց Մազևի որդին՝ Քրոկուրելը՝ Ասորիքի նախկին պրետորը: Նա, նույնպես փախստակ դարձած, հայտնեց, որ Բեսը գտնվում է ոչ ավելի, քան երկու հարյուր ասպարեզ հեռավորության վրա. նրա զորքը շարժվում է անկանոն ձևով,

նախագորշական ոչ մի միջոց ձեռք չառած և, ըստ երևույթի, շարժվում է դեպի Վրկան: Եթե շտապեն, կարող են նրան անակնկալի բերել: Դարեհը դեռ ողջ է: 12. Փախուստակը առանց այդ էլ շտապող արքային Բեսին հասնելու անհազ ցանկություն ներշնչեց: Դրա համար էլ բոլորը խթանացին ձիերին և նետվեցին առաջ:

Վրա հասնողները արդեն լսում էին թշնամու շարժվելու ձայները, բայց նրանք ծածկված էին փոշու ամպով: Այսպիսով, արքան որոշ չափով կասեցրեց իր շարժումը, որպեսզի փոշին նըստի: 13. Բարբարոսները նույնպես նկատեցին նրանց, սակայն Ալեքսանդրը տեսավ իրենից հեռացող ջոկատը և հաշվարկեց, որ ուժերը անհավասար կլինեն, եթե Բեսը այնքան քաջություն ունենա ճակատամարտելու, որքան ունի հանցագործությունը կատարելիս:

Մարգարանակով և ուժով բարբարոսները առավելություն ունեին, բացի այդ առույգ մարդիկ պիտի կովենին ճանապարհին հյուժվածների հետ: 14. Սակայն Ալեքսանդրի անունը և նրա մասին պատմությունները, կարեւորագույն գրավականն այդ սյատերազմում, ստիպեցին նրանց սարսափահար փախչել: 15. Բեսը և նրա ոճրագործության մյուս մասնակիցները, որոնք գնում էին Դարեհի սայլի հետևից, սկսեցին համոզել արքային ձի նստել և փախչելով փրկվել թշնամուց: 16. Իսկ Դարեհը, հավատալով, որ գոյություն ունեն վրիժառու աստվածներ և հուշս զնկելով Ալեքսանդրի արիության վրա, հրաժարվեց հետևել իր մարդասպաններին: Այնժամ նրանք կատաղած նիղակները նետեցին նրա վրա և, բազմաթիվ վերքեր հասցնելով, թողեցին Երան:

17. Վիրավորեցին նաև բեռնակիր անասուններին, որպեսզի Երանք չկարողանան շարժվել առաջ, և սպանեցին արքային ուղեկցող երկու ծառաներին: 18. Կատարելով այդ ոճրագործությունը և որպեսզի թաքցնեն իրենց փախուստի հետքերը, նաբարզանը սլացավ Վրկան, իսկ Բեսը փոքրիկ հեծյալներով Բակտրա: Բարբարոսները, զրկվելով առաջնորդից, սկսեցին ցրվել, ում որտեղ տանում էր հուշը կամ ըջում սարսափը: Միայն հինգ հարյուր հեծյալներ միավորվեցին, լիժանալով ինչն է ավելի լավ՝ դիմադրել թե փախչել: 19. Ալեքսանդրը նկատելով հակառակորդի տատանվելը, առաջ ուղարկեց նիկանորոսին հեծելազորի մի մասի հետ, որպեսզի խանդարի նրանց փախուս-

տը, ինքն էլ մնացածների հետ հետևեց նրանց: Մոտ երեք հազար դիմադրություն ցույց տվողներ սպանվեցին. մնացած ջոկատին անվնաս քշեցին անասնահոտի նման, շանգի արքան հրամայել էր խուսափել սպանություններից: 20. Գերիներից ոչ ոք չկարողացավ ցույց տալ Դարեհի սայլը: Առանձին զինվորներ փորձում էին գտնել այն որևէ նկատելի նշաններով, սակայն արքայի փախուստից ոչ մի հետք չէր մնացել: 21. Շտապող Ալեքսանդրին հետևում էին հազիվ մի երեք հազար հեծյալներ, Իսկ դանդաղ շարժվողները գնմ էին առնում փախուստի ժամանակ ցրված ամբոխների: 22. Դժվար էր հավատալ, բայց գերիների թիվն ավելի շատ էր, քան նրանցը, ովքեր կարող էին գերել. սարսափը այնքան էր մթագնել նրանց գիտակցությունը, որ նրանք չէին նկատում ոչ իրենց բազմաթանկությունը, ոչ էլ թշնամու սակավաթվությունը: 23. Մինչ այդ Դարեհի սայլը տանող բեռնակիր անասունները, զրկվելով զնկավարումից, մնացած զորքի ճանապարհից շեղվեցին և, շարունակելով թափառել շորս ասպարեղ տարածության վրա, կանգ առան ինչ-որ գաշտավայրում, ուժասպառ եղած տսթից ու վերքերից: 24. Մոտակայքում աղբյուր կար. տեղացիների ցուցումով այդտեղ հասավ ծարավից տանջահար մակեդոնացի Պոլիստրատոսը և, երբ սաղավարտով, վերցնելով ջուրը, սկսեց խմել, նկատեց շունները փշոզ անասունների մարմինների մեջ ցցված նիղակները: 25. Զարմանալով, որ դրանք խրված են, բայց զուրս չեն հանված, կիսամեռ...³¹



ԳԻՐԶ VI

Նա՛ նետվեց ամենամտանգավոր տեղը և, կոտորելով ամենա-
կատաղի դիմադրողներին, թշնամու մեծ մասին փախուստի
մատնեց: 2. Հաղթողները վազեցին, և, մինչև հետապնդումով
տարվածներին ներքաշեցին տափարակ հարթավայր, նրանցից
շատերը զոհվեցին, բայց հենց հնարավորություն եղավ կանգ
առնել, ճակատամարտը շարունակվեց փոփոխական հաջողու-
թյամբ: 3. Սպարտացիների մեջ աչքի էր ընկնում նրանց ար-
քան, ոչ միայն արտաքինով ու զենքով, այլև քաջությամբ, որով
միայն նա էր անհաղթ: 4. Նրա վրա հարձակվում էին ամեն
կողմից՝ հեռվից և մոտիկից, սակայն երկար ժամանակ իր
զենքը թշնամուն ուղղած, նետերի մի մասից պաշտպանվում էր
վահանով, մյուսներից խույս տալիս, մինչև նիզակով չվիրա-
վորվեց ազդրից. արյան մեծ կորուստը նրան զուրս մղեց ճա-
կատամարտից: 5. Այսպիսով, գինվորները նրան վահանի վրա
դնելով, արագ տարան ճամբար. սակայն նա դժվարությամբ էր
տանում իր վերքի ցավը: 6. Սպարտացիները, սակայն, չզաղա-
րեցրին մարտը: Հենց նրանք կովի համար ավելի հարմար տեղ
գտան, հոծ շարքով ընդունեցին իրենց վրա սրբնթաց հարձակ-
վող թշնամու ռազմաշարքը: 7. Մարդիկ ավելի մոլեգին ճա-
կատամարտ չէին հիշում: Երկու երկրների զորքերը, առավել
փառարանված պատերազմելու ունակությամբ, կովում էին հա-
վասար հաջողությամբ: 8. Սպարտացիները ոգևորվում էին
նախկին ռազմական փառքով, մակեդոնացիները՝ նորով. նրանք
մարտնչում էին ազատության համար, սրանք՝ տիրակալության.
սպարտացիները զորավարի պակաս ունեին. մակեդոնացիները՝

մարտի համար տարածության: 9. Մի օրվա ընթացքում իրա-
դրության փոփոխությունները մի կողմում ուժեղացնում էին
հույսերը, մյուսում՝ սարսափը, ասես ինքը՝ ճակատագիրը փո-
ձում էր հավասարակշռել ուժեղագույնների մրցությունը:

10. Սակայն տեղանքի նեղվածությունը, որտեղ տեղի էր
առնում ճակատամարտը, հնարավորություն չէր տալիս կովի
մեջ դնել ողջ ուժերը. ավելի շատ մարդիկ նայում էին ճակա-
տամարտին, քան մասնակցում նրան, և նրանք, գտնվելով ան-
վտանգության մեջ, գոչումներով, հերթով ոգևորում էին յու-
րայիններին: 11. Վերջապես լակոնացիների շարքը, ձեռքով հա-
զիվ պահելով քրտինքից սայթաքող զենքը, սկսեց թուլանալ և
թշնամու ճնշման տակ բացահայտորեն փախուստի դիմեց:

12. Հաղթողները հետապնդում էին ցրված փախստականնե-
րին և անցնելով մինչ այդ լակոնացիների զբաղեցրած տարա-
ծությունը, սկսեցին հետապնդել իրեն՝ Ագիստսին: 13. Նա, տես-
նելով, որ իր մարդիկ փախում են, իսկ թշնամին արդեն մոտ է,
հրամայեց իրեն զետնի վրա իջեցնել: 14. Փորձարկելով, արդ-
յո՞ք իր մարմնի ուժերը համապատասխանում են ոգու քաջու-
թյանը և գտնելով այն թույլ, նա ծնկի եկավ, արագ գլխին դրեց
իր սաղավարտը, ծածկվեց վահանով և սկսեց թափահարել նի-
զակը աջ ձեռքով, մոտ կանչելով թշնամուն, թե ով կհամարձակ-
վի պառկածի վրայից հանել հանդերձանքը: 15. Սակայն ոչ ոք
չհամարձակվեց ձեռնամարտի բռնվել նրա հետ: Նրա վրա հա-
զիվ նիզակներ էին նետում, նա էլ զրանք հետ էր նետում թըշ-
նամու վրա, վերջապես, նիզակը խրվեց նրա մերկացած կուրծ-
քը: Երբ նիզակը հանեցին վերքից, Ագիստը, թուլացած, զու-
լը թեթևակի պահում էր վահանով. հետո, միաժամանակ կորց-
նելով արյունը և շնչառությունը, մեռած ընկավ իր իսկ զեն-
քի վրա: 16. Այդ ճակատամարտում զոհվեցին 5300 սպարտա-
ցիներ, իսկ մակեդոնացիներից՝ հազարից ոչ ավելի, սակայն
զրեթե ոչ ոք առանց վերքերի ճամբար չվերադարձավ:

Այս հաղթանակը ընկճեց ոչ միայն Սպարտային ու նրա դաշ-
նակիցներին, այլև բոլոր նրանց, ովքեր սպասում էին պատե-
րազմի արգունքներին: 17. Անտիպատրոսը շխաբվեց, որ իրեն
շնորհավորողների բառերը չէին համապատասխանում նրանց
զգացմունքներին, բայց ցանկանալով ավարտել պատերազմը,
նա ստիպված էր տեղի տալ այդ խաբեությունը. հաղթանակի

միտքը նրան բավականություն էր պատճառում, սակայն նա զգուշանում էր նախանձողներից, բանզի իր գործողություններով նա գերազանցել էր պրիֆեկտի պարտականությունները: 18. Չէ որ Ալեքսանդրը, թեև ցանկանում էր այդ հաղթանակը թշնամու հանդեպ, դժգոհ էր Անտիպատրոսի հաջողություններից և բարձրաձայն խոսում էր այդ մասին, գտնելով, որ ուրիշի փառքը վնասում է իր անձնականին: 19. Այդ իսկ պատճառով, Անտիպատրոսը, բաջատեղյակ արքայի զգացմունքներին, չհամարձակվեց ինքնուրույն կարգադրություններ անել և հույների խորհուրդ² ժողովեց, որոշելու, թե ինչ է հարկավոր անել: 20. Այդ խորհրդից սպարտացիները ոչնչի չհասան, բացի արքայի մոտ դեսպաններ առաքելու թույլտվությունից. իսկ Թեդեոսի բնակիչները, բացի խառնակիչներից, բոլորն էլ ներում ստացան, իսկ արայացիներն ու էտոլացիները պետք է 120 տաղանդ վճարեին Մեգալոպոլիսին, որը պաշարել էին խոռվարարները: 21. Այդպիսին էին պատերազմի արդյունքները, որը սկսվել էր հանկարծակի, սակայն վերջացավ ավելի շուտ, քան Ալեքսանդրը հաղթեց Գարեհին Արբելայի մոտ:

II. Ալեքսանդրը, որն ավելի հակված էր ռազմական գործողությունների, քան հանգստի և պարապության, հրատապ հոգսերից ազատվելուն պես անձնատուր եղավ հաճույքներին և, նա, ում չէր կարող խոցել պարսիկների զենքը, դարձավ արատների զոհ: Անժամանակ, ամբողջ գիշերներով անցկացվող խրախճանքներ, անառոջ գինարբուքներ և զվարճություններ անառակ կանանց ամբոխների հետ. և այս բոլորը օտարազգի սովորույթներով: 2. Ընդօրինակելով դրանք, ասես դրանք հարազատ սովորույթներից ավելի լավն էին, արքան վիրավորում էր իր ցեղակիցների զգացմունքներն ու հայացքները, և նախկին ընկերներից շատերը նրա հանդեպ թշնամաբար տրամադրվեցին: 3. Քանզի հարազատ սովորույթներին նվիրված մարդկանց, որոնք վարժված են բավարարել բնական քաղցը հասարակ ու հեշտություն մեղք բերվող սննդով, նա մղեց դեպի նվաճված ցեղերի իրենց համար խորթ արատները: 4. Այստեղից էլ նրա զեմ սկսեցին մեծ թվով դավադրությունները, զինվորների դժգոհությունը, փոխադարձ բողոքների ավելի բացերից արտահայտությունները, իսկ Ալեքսանդրին էլ մեկ ցասումն էր համակում, մեկ անհիմն սարսափից ծնված կասկածը և ուրիշ նման զգացումներ, որոնց մասին կպատ-

մենք ստորև: 5. Օրեր ու գիշերներ անցկացնելով անընդմեջ խրախճանքներում և դրանցից հղիացած, նա ձգտում էր փոփոխել զվարճությունները, սակայն չբավարարվելով Հունաստանից բերված արտիստների ամբոխից, նա ստիպում էր գերի կանանց իրենց երգերը երգել՝ աններգաշնակ ու ատելի օտարերկրացիների լսողության համար: 6. Այդ կանանց մեջ արքան նկատեց մեկին, որն ավելի թախճոտ էր մյուսներից և հրաժարվում էր առաջ դուրս գալ. նա աչքի էր ընկնում գեղեցկությամբ, ավելի ազնվացած իր համեստությամբ: Հայացքը միշտ իջեցնելով և փակելով աչքերը և հնարավորին շփոթ դեմքը, նա արքայի մեջ միտք հղացրեց, որ ինքն ազնիվ ցեղից է և լպետք է հայտնվեր խրախճանքներում: 7. Այն հարցին, թե ով է ինքը, նա պատասխանեց, որ պարսիկների նախկին արքա Օթոսի թոռն է, նրա որդու դուստրը և Հիստասպի կինն է եղել: Հիստասպը է, նրա որդու դուստրը և մեծ բանակի հրամանատար: 8. Արքայի հոգում դեռ պահպանվել էին նախկին վեհանձնության մնացորդները. այդքան բարձր տոհմի և Օթոսի փառավոր անվան հետ կապված կնոջ ճակատագրի հանդեպ հարգանքից ելնելով, ոչ միայն ազատ արձակեց գերուհուն, այլև վերադարձրեց նրան նրա ունեցվածքը, հրամայելով փետրել նրա ամուսնուն՝ կնոջը վերադարձնելու համար:

9. Հաջորդ օրը նա հանձնարարեց Հեփեստոնեսին բոլոր գերիներին հավաքել պալատում: Այստեղ, պարզելով ամեն մեկի ծագումը, նա ազնվականներին անջատեց խաժամուժից: Գտնվեցին մոտ հազար ազնվականներ. նրանց մեջ էր նաև Օթոսի թոռնուհի Գարեհի եղբայրը, որը համբավավոր էր ոչ միայն իր ծագումով, այլև հոգու հատկանիշներով: 10. Առաջին ավարը կազմեց 26 հազար տաղանդ, որից 12 հազարը արքան ծախսեց զինվորների նվերների վրա. ճիշտ այդքան գումար էլ հափըշտակել էին դրամապահները: 11. Օթոսի դուստրը պարսկական պալատական էր, սակայն նրան պահում էին կապանքների մեջ, բանի որ Գարեհը ցանկացել էր նրան մահապատժի ենթարկել: Ալեքսանդրը, ազատելով նրան, նշանակեց Մարաստանի սատրապ, իսկ Գարեհի³ եղբորը ընդունեց իր ընկերների շարքը, պահպանելով նրա նախկին դիրքի բոլոր մեծարանքները: 12. Այդտեղից արքան մեկնեց պարթևների մոտ՝ այն ժամանակ բիշ հայտնի ժողովրդի, իսկ այժմ Տրգրիսից և Եփրատից այն կողմ, մինչև կարմիր ծովը գտնվող բոլոր ժողովուրդների

գլուխ կանգնած: 13. Այդ տարածութեան հարթավայրային և բեր-
րի հողերը գրավել էին սկյուիթները, մինչև այժմ էլ վտանգավոր
հարեանները: Նրանք ապրում են Եվրոպայում և Ասիայում:
Նրանց, ովքեր ապրում են Բոսֆորից՝ այն կողմ, համարում
են ասիացիներ, իսկ Եվրոպայում ապրողները տարածվել են
Թրակիայի՝ ձախ սահմանի մարդից մինչև Բորիսֆեն և այն-
տեղից էլ մինչև մի ուրիշ գետը՝ Տանախը: 14. Տանախը հո-
սում է Եվրոպայի և Ասիայի մեջտեղով: Կասկած չկա, որ այն
սկյուիթները, որոնցից առաջացել են պարթևները, ոչ թե Բոսֆո-
րից են եկել, այլ Եվրոպական երկրներից: 15. Այդ ժամանակ
հռչակ է ունեցել Հեկատոմպուլոսը՝ քաղաքը, որը հիմնադրել են
հույները. արքան մի քանի օր մնաց այնտեղ, և այդտեղ ամեն
կողմից պարեն բերեցին: Դրա համար էլ պարսպ զինվորներն
անհիմն լուրեր տարածեցին, որ արքան, բավարարված ձեռք բե-
րածով, որոշել է առանց հետաձգելու վերադառնալ Մակեդոնիա:
16. Զինվորները խելագարի նման նետվում են դեպի իրենց
վրահները և սկսում կապկպել իրենց իրերը արշավի համար.
կարելի էր կարծել, թե ճամփա ընկնելու աղղանշան էր տրվել:
Ճամբարում ընկերներին փնտրող և սայլերը բարձող զինվորնե-
րի աղմուկ աղաղակը հասավ արքայի ականջին: 17. Այդ լուրի
տարածմանը նպաստել էին հույն զինվորները, որոնց թույլատ-
րել էին տուն վերադառնալ. և քանի որ ամեն մի հույն հեծյալ
ստացել էր 6 հազար դինար, մնացածներն էլ կարծել էին, որ
եկել է նաև իրենց զինվորական ծառայության վերջը: 18. Ինչ-
պես և պետք էր սպասել, զրանից անհանգստացած, արքան, որը
դեռ պատրաստվում էր Հնդկաստան գնալ և հասնել Արեւելի
ծայրագույն երկրները, իր վրանում հավաքում է զորավարներին
և արցունքն աչքերին բողբոսում, որ իրեն հարկադրում են իր
փառքի գազաթնակետին վերադառնալ հայրենիք ավելի շուտ
պարտված, քան հաղթանակած: 19. Եվ իրեն խանգարում է ոչ թե
զինվորների փոքրագույնությունը, այլ աստվածների նախանշը,
որոնք հանկարծակի իր քաջարի մարդկանց հոգում հայրենիքի
կարոտ են առաջացրել, ուր նրանք պիտի վերադառնային մի
բիշ ավելի ուշ, սակայն ավելի մեծ փառքով: 20. Այնժամ բոլոր
զորավարները, ամեն մեկը պատասխանատու իր ասածի հա-
մար, սկսեցին առաջարկել իրենց բարեկամությունը, պահան-
ջել ամենազովար գործերը, խոստանալ զինվորների հնազան-
գությունը, եթե Ալեքսանդրը զինվորներին դիմի մեղմ և իրա-

դարձյալ համապատասխան ճառով: 21. Զէ որ զինվորները
կորեք չեն հուսաբեկվել և չեն ընկրկել, եթե նրանց արքան ող-
բել է իր առուչությունը ու իր հանձարի մեծությունը: Արքան
ասաց, որ այդպես էլ կանի, սակայն խնդրեց նախապատրաստել
զինվորներին իրեն հնազանդվելով. երբ ամեն ինչ պատրաստ
էր, նա հրամայեց հավաքել զորքը և դիմեց նրան այսպիսի ճա-
ռով:

III. «Զինվորներ, եթե դուք հիշեք, թե ինչ գործեր ենք
մենք արել, ապա զարմանալի չէ, որ բոլորի մեջ ցանկություն է
առաջանում հանգստանալ և բավարարվել փառքով: 2. Էլ չա-
սած Իլլիրիայի, տրիբալների, Բեովտիայի, Թրակիայի, Սպար-
թայի, աքայացիների, Պելոպոնեսի մասին, որոնց մի մասը
հնազանդեցվեց իմ անձնական հրամանատարության ներքո,
մյուսը՝ իմ հրամանով և իմ ղեկավարությամբ. 3. հիշեք, որ
սկսելով պատերազմը Հելլեսպոնտոսի մոտ, մենք տիրացանք
Կարիային, Լիդիային, Կապադովկիային, Փոյուզիային, Պափլա-
գոնիային, Պամփիլիային, Պիսիդիային, Կիլիկիային, Ասորի-
քին, Փյունիկիային, Հայաստանին, Մարաստանին, Պարթևաստա-
նին: 4. Ես ավելի շատ երկրներ եմ գրավել, քան ուրիշ զորա-
վարներ՝ քաղաքներ, և նույնիսկ չգիտեմ, թվարկելիս շեմ մոռա-
ցել արդյոք զրանցից մի քանիսը շատություն պատճառով
5. Այսպիսով, եթե ես համոզված լինեի, որ մեր իշխանությունն
այդքան արագ գրավված երկրներում բավականին ամուր է, ես
ինքս, զինվորներ, եթե նույնիսկ դուք փորձեիք ինձ հետ պահել,
կվերադառնայի հայրենի տուն, մորս, բուրբուրիս, ցեղակիցնե-
րիս մոտ, որպեսզի հենց այնտեղ, ձեզ հետ միասին վայելեի
ձեռք բերած փառքս, որտեղ մեզ սպասում են մեր հաղթանակ-
ների ամենամեծ պարգևները՝ զավակների, կանանց ու ծնողնե-
րի ուրախությունը, խաղաղությունը, հանգիստը, այն ամենի
վայելումը, որ մեզ է պարգևել մեր արիությունը: 6. Սակայն
նոր, և ճշմարիտն ասած, անկայուն կայսրության մեջ, որի լծին
բարբարոսները բողբոսով են հնազանդվում, անհրաժեշտ է,
զինվորներ, ժամանակ, որպեսզի նրանք վարժվեն ավելի մեղմ
իշխանության, և որպեսզի նրանց բիրտ բարբեր մեղմանան:
7. Երկրային պտուղները նույնպես ժամանակ են պահանջում
հասունանալու համար, նույնիսկ բանականությունից զուրկ
իրերը փափկում են ժամանակի ընթացքում իրենց օրհնքների
համաձայն: 8. Եվ ի՞նչ: Թե դուք կարծում եք, որ այդքան ցե-

զեր, վարժված ուրիշ օրենքների ու իշխանությունների, չկապված մեզ հետ, ոչ կրոնով, ոչ բարքերով ու լեզվով, մեզ հպատակվեցին այն ժամանակից ի վեր, երբ պարտվեցին մարտում: Նրանց զսպում է ձեր զենքը, և ոչ թե համակրանքը. ով վախենում է մեզանից մեր ներկայությունը, թշնամի կդառնա մեր բացակայություն ժամանակ: Մենք գործ ունենք վայրի գազանների հետ, թեև նրանք դրված են վանդակների մեջ, սակայն նրանց կմեղմացնի ոչ թե բնությունը, այլ երկար ժամանակը»:

9. «Մինչդեռ ես պատմում եմ ձեզ, որ մեր զենքին է ենթարկված այն ամենը, ինչ գտնվել էր Գարեհի տիրակալության տակ, Նաբարզանը գրավել է Վրկանը, արքայասպան Բեսը ոչ միայն տիրակալություն է Բակտրայում, այլև մեզ է սպառնում. սողոգերը, դահերը, մասաղետները, սակերը և հնդիկները դեռ անկախ են, և նրանք բոլորը, տեսնելով մեր թիկունքը, կհետևեն մեզ, քանզի նրանք ցեղակիցներ են, իսկ մենք օտարազգիներ: 10. Յուրաքանչյուրը ավելի հաճույքով ենթարկվում է իր տիրակալին, նույնիսկ եթե նա մեծ սարսափ է ներշնչում: Այս իսկ պատճառով մենք պետք է հրաժարվենք նրանից, ինչ ունենք, կամ ձեռք գցենք այն, ինչ մենք դեռ չենք վերցրել: 11. Ինչպես բժիշկները հիվանդի մարմնի մեջ չեն թողնում ուլիշ, որ կարող է վնասել, այդպես էլ, ռադմիկներ, մենք կկտրենք այն ամենը, ինչ խանգարում է մեր իշխանությունը: Հաճախ աննշան կայծը մեծ հրդեհ է առաջացնում: Թշնամուն արհամարհելը անվտանգ չէ. ում ուշադրություն չդարձնենք, նրան ավելի շատ ուժ կհաղորդենք: 12. Գարեհն էլ ժառանգարար չի ստացել իշխանությունը պարսիկների վրա, այլ նստեցվել է Կյուրոսի գահին ներթիմի Բագասի՞ քարեհաճությունը: Գրա համար էլ մի կարծեք, որ Բեսին դժվար կլինի խլել թափուր գահը: 13. Մենք, իհարկե, սխալված կլինեինք, զինվորներ, եթե հաղթեինք Գարեհին այն բանի համար, որ իշխանությունը փոխանցեինք նրա ստրուկին, որը ծայրահեղ ոճրագործության է դիմել իր արքային շղթայելով, որն օտարերկրացիների օգնության կարիքն էր զգում, որին մենք, հաղթողներս, իհարկե, կօգնեինք, և վերջապես սպանել է արքային, որպեսզի մենք նրան չփրկենք: 14. Մի՞թե դուք թույլ կտաք, որ երկիրը ղեկավարի նա, ում ես ցանկանում եմ հնարավորին շափ շուտ խաչին գամված տեսնել, որպես արքաներին ու ժողովուրդներին տրված երդումը խախտելու արժանի պատիժ: 15. Եվ, երզվում եմ աստվածներով, եթե դուք հան-

կարծ իմանաք, որ նա ամայացնում է Հունաստանի ու Հելլասպոնտոսի բաղաբները, ինչքան դառը կլինի ձեզ համար այն միտքը, որ Բեսը գողացել է ձեր հաղթանակի պտուղները. հենց այդ ժամանակ էլ դուք կշտապեք վերադարձնել ձերը, այն ժամանակ էլ դուք զենք կվերցնեք ձեր ձեռքը: Սակայն ինչքան ավելի լավ է ճգնել նրան, քանի դեռ նա սարսափած է և հաղիվ է տիրակալություն իր գիտակցությանը: 16. Մեզ, որ անցել ենք այդքան ձյունների միջով, գետերով, հաղթահարել այդքան լեռնազապալներ, սպասվում է շորսօրյա արշավ: Ոչ ալիքներով ճանապարհը ծածկող ծովն է խոշորագույնում մեր ճանապարհը, ոչ կիրիկիայի կիրճերը. ողջ երկիրը տափարակ է և հարմար արշավի համար: 17. Մենք կանգնած ենք ուղղակի հաղթանակի շեմին: Մեզ մնացել է հաղթել իրենց տիրոջը սպանած մի քանի փախստակների: Դա ազնվարարո ինդիր է, երզվում եմ աստվածներով, և սերունդներին հանձնված մեր փառավոր գործերում կհիշատակվի, թե ինչպես եք դուք վրեժխնդիր եղել ձեր թշնամուն՝ Գարեհին սպանողին, որի հանդեպ նրա մահից հետո դուք այլևս ատելություն չեք ունեցել, ինչպես դուք թույլ չեք տվել ձեր ձեռքից պրծնի ոչ մի անազնիվ մարդ: 18. Երբ դա կատարվի, ինչքան ավելի հնազանդ կդառնան պարսիկները, բմբռնելով, որ դուք արդարացի պատերազմ եք վարում, և որ ձեր ցատումը ոչ թե Բեսի անունից է առաջանում, այլ նրա կատարած հանցագործությունից»:

IV. Զինվորներն արքայի ճառը ընդունեցին մեծ ոգևորությամբ և գուշեցին, որ նա առաջնորդի իրենց, ուր կամենում է: 2. Զսպելով նրանց կիրթը, արքան արդեն երրորդ օրը Պարթևաստանի միջով թափանցեց դեպի Վրկանի սահմանները: Պարթևաստանը պաշտպանելու համար նա թողեց Կրատերոսին Ամինտոսի ջոկատով և, բացի այդ, 600 հեծյալներ և այդքան էլ նետածիգներ: 3. Էրիգիոսին էլ հրամայեց տանել գումակը հարթ ճանապարհով, տալով նրան ոչ մեծ մի ջոկատ: Ինքը փաղանգով ու հեծելազորով, անցնելով 150 ասպարեզ, ճամբար խփեց դեպի Վրկան տանող դաշտավայրում: Այնտեղ կա ստվերախիտ և բարձր ծառերով պուրակ, քանի որ դաշտավայրի պարարտ հողը ռոտզվում է անվակներով, որոնք հոսում են կարկանդակ ժայռերից: 4. Լեռների ստորոտի մոտ հոսում է Զիորետ գետը, որը համարյա երեք ասպարեզ տարածությամբ հոսում է նույն հունով, այնուհետև նրա հոսանքը, բախվելով ընդհատող ժայռի,

բաժանվում է երկու վտակներին: 5. Հետո հոսանքը, որը քարերը հաղթահարելով ավելի սրընթաց է դառնում, անսպասելի մըրտնում է դեռնի տակ: Մոտ 300 ասպարեզ այդ գետը հոսում է թաքնված ուղիով, նորից դուրս գալիս գետնի երես, ասես ուրիշ աղբյուրից է ծնունդ առնում և ճեղքում նոր գետահուն, նախկինից մեկեկես անգամ ավելի լայն: 6. Այն հասնում է 13 ասպարեզ լայնության, հետո կրկին նեղանում ավելի սեղմ ավերի միջև և, վեղչապես, թափվում է մեկ այլ գետի մեջ, որի անունը Ռիդադն է: 7. Տեղաբնակները հավաստացնում էին, որ այն ամենը, ինչ նետվում է գետի վերին հոսանքում գտնվող քարանձավը, կրկին հայտնվում է նրա նոր գետաբերանում: Դրա համար Ալեքսանդրը հրամայեց երկու եզ գցել գետի այն մասում, ուր այն մտնում է գետնի տակ, և դրանք ջրից հանելու համար ուղարկված մարդիկ տեսել էին եղնների լեշերը, որոնք գետը դուրս էր գցել այն վայրերում, որտեղ այն կրկին դուրս է գալիս գետնի տակից:

8. Չորրորդ օրն այդտեղ դինվորներին հանգիստ տրվեց, այդտեղ էլ արքան նամակ ստացավ նաբարզանից, որը թեսի հետ միասին գերել էր Գարեհին: Նամակում ասված էր, որ նա Գարեհին թշնամի չի եղել, ընդհակառակը, նա Գարեհին խորհուրդ է տվել, որը օգտակար է համարել, սակայն այդ անկեղծ խորհրդի սլատճառով հաղիվ է ազատվել մահապատժից: 9. որ Գարեհը, հակառակ իրենց բոլոր օրհնքների, մտադրվել էր վըստահել իր անձի պաշտպանությունը օտարերկրացիներին, մերժել իրենց հավատարմությունը, որն իրենք 230 տարի սրբորեն պահպանել են իրենց տիրակալների հանդեպ: 10. Ինքն էլ, գտնվելով կապածների մեջ ու վտանգավոր վիճակում, ձեռնարկել է անհրաժեշտությունից բխող միջոցներ: Գարեհը նույնպես, սպանելով Բագոապին, իր մարդկանց առաջ արգարանում էր նրանով, որ սպանել էր իր զեմ դավադրության սագրիչին: 11. Գժբախտ մահկանացուների համար չկա կյանքից ավելի թանկ բան. դրա սիրուն նա ստիպված էր ծայրահեղությունների դիմել, սակայն նա գործել էր այլևի շատ ըստ անհրաժեշտության, քան ըստ ցանկության: Ընդհանուր գժբախտության դեպքում ամեն մեկը իր ճակատագիրն ունի: 12. Եթե արքան հրամայի իրեն ներկայանալ, նա կներկայանա առանց վախի նա չի վախենում, ր այդպիսի մեծ արքան կխախտի իր տված խոստումը. աստվածներին աստվածը չի կարող խաբել: 13. Ասենք, եթե

Ալեքսանդրը նրան վստահության արժանի չհամարի, վտարանգու համար բավականաչափ տեղ կգտնվի: Ինչպիսի տեղ իր համար ընտրի քաջ մարդը, այնտեղ էլ կլինի նրա հայրենիքը: 14. Ալեքսանդրն առանց տատանվելու՝ ըստ պարսկական սովորության, խոստացավ, որ, դալով իր մոտ, նաբարզանը անվնաս կմնա:

Այդ ընթացքում արքան շարունակեց ճանապարհը, շարելով զորքը խիտ քառակուսի շարքով, երբեմն հետախույզներ ուղարկելով տեղանքն ուսումնասիրելու: 15. Առջևից գնում էին թեթևազենները, նրանց հետևում էր փաղանգը, հետևակի հետևից գնում էր գումակը: Այդ դժվարանցանկի երկրի բնությունը և ազմատենը բնակչությունը լարեցին արքայի ուշադրությունը: 16. Այդ լայնարձակ հարթավայրը, հասնելով մինչև Կասպից ծով, մխրձվում է նրա մեջ երկու լեռնաձուլողով, որոնց մեջտեղում կիսակամար մի ծովածոց է մնում, նման նորալուսնի եղջյուրներին, երբ այն դեռ չի դարձել լիալուսին: 17. Չախից գտնվում են կերկևտները¹⁰, մոսիների և հալիբների երկրները, մյուս կողմից՝ լեկոսիրներինն ու ամաղոնուհիներինը¹¹. առաջիններն ապրում են դեպի արևմուտք ընկած տարածքում, վերջինները՝ դեպի հյուսիս: 18. Կասպից ծովում ջուրը սակավ աղի է, քան ուրիշ ծովերում, և նրանում լողում են հսկայական երկարության օձեր, իսկ ձկները տարբերվում են թեփուկների գույնով: Ոմանք այդ ծովն անվանում են Կասպից, ուրիշները՝ Վրկանաց, կան նաև այնպիսիները, որոնք գտնում են, թե նրա մեջ են թափվում Մեոտիսյան ճահճները, և ջուրն այնտեղ այդքան աղի չէ, ինչպես մյուս ծովերում, որովհետև այն փափկում է նրա մեջ թափվող ճահճների ջրից: 19. Հյուսիսային մասում լիճը ողողում է հսկայական մի օփ և, լայնորեն տարածվելով, ստեղծում մի մեծ ճահճ, սակայն օղի փոփոխության պատճառով կրկին վերադառնում է իր ափերի մեջ նույնպիսի ուժով, ինչպես նետվել էր առաջ, և երկրին վերադարձնում նրա նախկին տեսքը: Ոմանք կարծում էին, թե դա Կասպից ծովը չէ, այլ ինքն օվկիանոսն¹² է իրեն ճանապարհ բացում Հեղկաստանից դեպի Վրկան, որի բարձրավանդակը, ինչպես վերևում ասվեց, փոխվում է ընդհատվող տափարակ հարթավայրի:

20. Այստեղից արքան 20 ասպարեզ զնաց համարյա անանցանելի, անտառածածկ ճանապարհով. գետերն ու ջրհեղեղները խոչընդոտում էին նրա ճանապարհը. սակայն բշնամիներին

չհանդիպելով, նա թափանցեց մինչև հեռավոր վայրերը: 21. Ուրիշ պարենիք բացի, որն առատ է այս երկրում, այստեղ կան շատ մրդատու ծառեր և հիանալի հող խաղողի համար: 22. Այստեղ շատ ծառեր կան, որոնք կաղնի են հիշեցնում, որոնց տերևների վրա մեծ քանակությամբ մեղր է դուրս տալիս, սակայն եթե բնակիչները մինչև արևածագը չեն հավաքում, ապա մեղրը փչանում է առաջին խոտաբույսերից:

23. Այստեղից Ալեքսանդրը առաջ շարժվեց ևս 30 ասպարեզ և հանդիպեց Թրատաթերնին, որը նրան հանձնվեց Դարեհի մահից հետո փախածների հետ միասին. նրանց բարյացակամորեն ընդունելով, արքան մոտեցավ Արվա՝ քաղաքին: 24. Այստեղ նա միացավ Կրատերոսին և Էբիգիոսին. նրանք իրենց հետ էին բերել Փրազատին՝ տապուրների ցեղապետին. նրան ևս Ալեքսանդրը ողորմածաբար ընդունեց, և դա շատերին արքայի զինարտության օրինակ ծառայեց: 25. Այնուհետև նա Վրկանի սատրապ նշանակեց Մանապին. սա Օքոս արքայի ժամանակ վտարանդի էր և այն ժամանակ էլ եկել էր Փիլիպոսի մոտ. տապուրների ցեղի իշխանությունը Ալեքսանդրը վերադարձրեց Փրազատին:

V. Արքան արդեն ոտք էր դրել Վրկանի հեռավոր շրջանները, երբ Արտաբազը, որն, ինչպես արդեն ասացինք, նախկինում չափազանց նվիրված էր Դարեհին, դիմավորեց նրան իր գավախներով, Դարեհի ազդականներով և հույն զինվորների ոչ մեծ ջոկատով: 2. Արքան ժամանածին մեկնեց իր աջը, քանի որ սա եղև էր Փիլիպոսի հյուրը, երբ վտարանդի էր Օքոսի արքայության ժամանակ, սակայն իր արքայի հանդեպ ունեցած հավատարմությունը, որը նա մինչև վերջ պահպանել էր, նրա համար ավելի կարևոր էր հյուրասիրությունից: 3. Այսպիսով, սիրալիր ընդունելով, նա ասաց. «Արքա, ես պաղատում եմ աստվածներին, որ դու հավերժական երջանկություն վայելես, ես էլ, ուրիշ ամեն ինչում երջանիկ, ցավում եմ միայն, որ իմ խոր ծերության պատճառով չեմ կարողանա երկար օգտվել քո բարությունից»: 4. Բոլորել էր նրա 94 տարին: Ինը պատանիները, բոլորն էլ մի մորից, ուղեկցում էին իրենց հորը: Արտաբազը մոտեցրեց նրանց արքայի ձեռքին, աղոթելով աստվածներին, որ պեսդի նրանք այնքան ապրեն, ինչքան դեռ օգտակար կլինեն Ալեքսանդրին: 5. Արքան սովորաբար ճամփա էր ընկնում ոտքով, բայց հիմա հոսանքից ձիեր բերել իրեն և Արտաբազին,

որպեսզի ծերուկը անհարմար չզգա ձիով շրջելուց, եթե ինքը դեռ ոտքով: 6. Հետո, երբ ճամբար էին խփել, արքան հրամայեց ժողովել Արտաբազի բերած հույներին: Սակայն նրանք պատասխանեցին, որ եթե լակոնացիներին, ինչպես նաև սինոպցիներին անվտանգություն չտրվի, ապա իրենք կորոշեն, թե ինչ անեն: 7. Նրանք լակոնացիների ղեսպաններն էին Դարեհի մոտ և նրա պարտությունից հետո միացել էին պարսիկների մոտ թառայող վարձկան հույներին: 8. Արքան, ոչինչ չխոստանալով, հրամայեց նրանց ներկայանալ իրեն և իրենից լսել իրենց ճակատագրի որոշումը: Երկար տատանումներից ու քննարկումներից հետո նրանք վերջապես խոստացան գալ: 9. Սակայն մեկնողների իշխանության դեմ մշտապես վճռական ելույթ ունեցող ամենացի Դեմոկրատեսը ներում ստանալու հույս չունենալով, խոցեց իրեն սրով: Մնացածներն, ինչպես և որոշել էին, հանձնվեցին Ալեքսանդրի ողորմածությանը: 10. Նրանք ընդամենը 1500 զինվոր էին, և, բացի այդ, Դարեհի մոտ ուղարկված 90 հոգին: Զինվորներին ծառայության նշանակեցին պահեստային մասերում, մնացածներին ազատ արձակեցին առանց, բացի լակոնացիներից, որոնց արքան հսկողության տակ գրեց:

11. Վրկանի սահմանների մոտ էր ապրում մարգերի ցեղը, հուպիտ ապրելակերպով, վարժված ավազակության: Միայն նրանք ղեսպաններ չէին ուղարկել, և թվում էր, թե չէին էլ պատրաստվում ենթարկվելու: Այդ պատճառով արքան գրգռված, որ ինչ-որ ժողովուրդ կարող է զրկել իրեն «անհաղթի» փառքից, զումակը հսկողության թակ թողնելով, նրանց դեմ արշավեց անհաղթների ջոկատով: 12. Նա անցումը կատարեց գիշերը և լուսաբացին տեսավ թշնամուն. ավելի շուտ տուրուզմիոց տեղի ունեցավ, քան ճակատամարտ: Իրենց զբաղեցրած բլուրները՝ ցողուրս շարժված բարբարոսները փախուստի դիմեցին. գրավվեցին նաև բնակիչների լքած մոտակա գյուղերը: 13. Սակայն թափանցել այդ երկրի ներքին մասերը առանց զորքի մեծ լարման՝ անհնար էր. ճանապարհը փակում էին լեռնաշղթաները, խիտ անտառները և անանցանելի ժայռերը, իսկ հարթ վայրերը բարբարոսները ցանկապատել էին նոր ձևով: 14. Եվ ահա թե ինչպես. ծառերը դիմամբ հնարավորին չափ խիտ էր տնկում. մինչ ծառերի ճյուղերը նուրբ են, դրանք թեթև էր տնկում. իրար հյուսում և հողի մեջ մտցնում, հետո, ասես 27— Ալեքսանդր Մակեդոնացի 417

որիչ արմատից աճում են ավելի հաստ բներ: 15. Եվ նրանք
թույլ չեն տալիս, որ ծառերն աճեն ինչպես հաճո է բնութիանը,
այլ ասես կապում են նրանց միասին: Երբ ծառերը վրա շատ
տերևներ են լինում, դրանց ամբողջովին ծածկում են գետինը, և
այնժամ ճյուղերի հյուսվածքը ամբողջական պատի նման փա-
կում է ճանապարհը: 16. Միակ բանը, որ հնարավոր է՝ նրանց
միջով կացնով անցք բացելն էր, բայց և դա ծանր գործ էր. հա-
ճախակի հանգույցներից ծառերի բները կարծրանում են, իսկ
ծառերի հյուսված ճյուղերը կախված օղակների նման չեն են-
թարկվում կացնի հարվածներին իրենց ճկունության պատճա-
ռով: 17. Այդ երկրի բնակիչները, վարժված գաղանների նման
ճյուղերի տակով սողալով, նույնպես անտառ մտան և սկսեցին
թարսոցից նետեր արձակել թշնամիների վրա:

Ալեքսանդրը, որսորդի նման գտնելով նրանց դադարի կացա-
բանները, ջարդեց շատերին և, վերջապես, հրամայեց զինվոր-
ներին շրջապատել մացառուտները և ներխուժել այնտեղ, որտեղ
որ անցատեղի կար: 18. Սակայն, ծանոթ չլինելով տեղանքին,
շատերը մոլորվեցին և ոմանք գերի ընկան. նրանց հետ միա-
սին նաև արքայի ձին՝ Բուկեփալը, որին Ալեքսանդրը մնացած
բոլոր ձիերից բարձր էր գնահատում: Ձին ոչ մեկին թույլ չէր
տալիս հեծնել իրեն, իսկ երբ արքան էր հեծնում, նա ինքն էր
ծնկի գալիս, սպասելով հեծյալին, ասես հասկանում էր, թե ում
է տանում: 19. Արքան շափից ավելի դայրանալով և վշտանա-
լով, հրամայեց գանել ձին և թարգմանչի միջոցով հաղորդել,
որ և՛ թե ձին չվերագարձվի, նրանցից ոչ որ կենդանի չի մնա:
Սարսափած այդ սպանալիքից՝ թշնամիները այլ նվերների
հետ միասին բերեցին և ձին: 20. Սակայն, նույնիսկ դրանից
չմեղմացած, արքան հրամայեց հատել մացառուտները և սա-
րերից բերած հողով հավասարեցնել ճյուղերով ցանկապատված
հարթավայրը: 21. Գործը հաշտությունամբ առաջ էր գնում, և
արքարոսները, հույսները կտրած, թե կարող են պահել իրենց
դրաված տարածությունը, հանձնվեցին: Արքան, պատանդներին
լերցնելով, հրամայեց այդ ցեղը դնել Փրագատի իշխանու-
թյան տակ: Հինգերորդ օրը նա վերագարձավ իր ճամբարը:
22. Այս նա տուն ուղարկեց Արտաբազին՝ ավելի շատ մեծարե-
րով նրան, քան այդ արել էր Գարեհը: Շուտով մոտեցան Վրկան³³
քաղաքին, որտեղ Գարեհի պալատն էր: Այստեղ նարարդանը,
արքայից խոստումներ ստանալով, գիմավորեց նրան առատ

նվերներով: 23. Նրանց մեջ էր Բագոստը, պատանկություն ու
գեղեցկության ծաղիկման շրջանում գտնվող պատանի ներքինին,
որին սիրում էր Գարեհը, և որին շուտով սիրեց և Ալեքսանդրը:
Նա ինչպե՞ս և նարարդանին գլխավորապես այդ պատանու
ինզրանքով:

24. Ինչպես վերևում ասվեց, Վրկանի հետ սահմանակից էր
ամազոնուհիների ցեղը, որը բնակվում էր Թերմոզոնտոս գետի
նրկայնքով տարածված Թեմիսկիրայի դաշտերում: Նրանց թա-
գուհին էր Թալեստրիսը, որն իշխում էր Կովկասի ու Փասիս գե-
տի միջև ընկած տարածության ողջ բնակչության վրա: 25. Ցան-
կանալով տեսնել արքային, նա դուրս եկավ իր թագավորու-
թյան սահմաններից և արդեն մոտ տարածությունից Ալեքսանդ-
րին լուր ուղարկեց, որ ժամանել է թագուհին, որը կրքոտու-
թյամբ ցանկանում է տեսնել նրան և ծանոթանալ հետը: 26. Թա-
գուհին անմիջապես ժամանելու թույլտվություն ստացավ: Հրա-
մայելով իր շքախմբի մնացած մասին կանգ առնել և սպասել
իրեն, նա մոտեցավ երեք հարյուր կանանց ուղեկցությամբ.
տեսնելով արքային, նա ցած թռավ ձիուց, աչ ձեռքով երկու տեղ
բռնած: 27. Ամազոնուհու հագուստը լրիվ չի ծածկում նրա մար-
մինը. ձախ կուրծքը մերկ է, մնացած մասերը ծածկված են,
սակայն հագուստը, որի փեշը նրանք հանգույցով կապում են,
չի իջնում ծնկներից ցած: 28. Նրանք միայն մի կուրծքն են
թողնում, որով կերակրում են իդական սեռի երեխաներին, իսկ
աչ կուրծքն այրում են, որպեսզի ավելի հարմար լինի աղեղը
ձգել և նիզակ նետել: 29. Առանց որևէ վախի Թալեստրիսը նա-
յում էր արքային, ուշադրությամբ ուսումնասիրելով նրա փառ-
քին շամապատասխանող արտաքինը, քանզի բոլոր բարբարոս-
ները հարգանքի զգացում են տածում վեհասքանչ արտաքինին և
կարծում, թե մեծ գործերի ընդունակ են միայն բնությունից
ազդու տեսք ունեցող մարդիկ: 30. Այն հարցին, թե արդյոք չի
ցանկանում նա որևէ բան խնդրել արքայից, թագուհին, առանց
տատանվելու, խոստովանեց, որ նրանից երեխաներ է ուղում
ունենալ, քանզի ինքը (թագուհին) արժանի է, որպեսզի արքա-
յի ժառանգորդները լինեն իր երեխաները. իգական սեռի երե-
խային նա կպահի իրեն, արականը կտա հորը: 31. Ալեքսանդրը
հարցրեց, չի ցանկանում նա արդյոք կուլել իր կողմից, սակայն
թագուհին, արդարանալով, որ իր թագավորության համար
պաշտպանական ուժեր չի թողել, համառորեն խնդրեց, որպեսզի

Ալեքսանդրն իրեն հուսախար չանիւ 32. Կնոջ կիրքը, որն ավելի էր ծարավ սիրո, քան արքան, ստիպեց Ալեքսանդրին մի քանի օր մնալ այդտեղ: Ի հաճույս թագուհու ծախսուեց 13 օր Ալեքսանդրն նա մեկնեց իր թագավորութունը, իսկ Ալեքսանդրը՝ Պարսկաստան:

VI. Այստեղ նա բացահայտորեն ազատութուն սովեց իր կրթերին, և իր բարձր դիրքին արժանի հիանալի հատկանիշները՝ չափավորութունը և զսպվածութունը՝ փոխարինեց զոռոգութեամբ ու անառակութեամբ: 2. Իր հայրենիքի սովորութիւնները, մակեդոնական արքաների չափավորութունը և նրանց քաղաքացիական հագուստը նա համարում էր անհամապատասխան իր մեծութեանը, որը հավասար էր պարսկական արքաների մեծութեանը, և իր իշխանութեամբ մրցակցում էր աստվածների հետ: 3. Նա պահանջում էր, որ այդքան ժողովուրդներին հաղթողները իրեն ողջունելիս ոտքերն ընկնեն, հետզհետե վարժեցնելով նրանց ստրուկների պարտականութիւններին, վերաբերվում էր նրանց, ինչպես գերիների հետ: 4. Այսպես, նա զլխին էր դնում սպիտակով ծիրանի ակնախուլքը, որը կրում էր Դարեհը, և հագնում պարսկական հագուստներ, չվախենալով այն վատ կանխազուշակումից, որը ենթադրում էր հաղթողի տարբերակման նշանները պարտվողի հագուստով փոխելը: 5. Նա ասում էր, որ պարզապես կրում է պարսկական զենք ու զրահ, սակայն դրա հետ միասին նա ընդօրինակեց նաև պարսկական սովորութիւնները, իսկ հագուստի շքեղութեանը հաջորդեց և հոգու զոռոգութիւնը: 6. Եվբոպա ուղարկվող նամակները նա կնքում էր իր նախկին մատանիով, իսկ նրանք, որոնք Ասիա էին ուղարկվում՝ Դարեհի մատանիով, սակայն ակներև էր, որ մի մարդ չի կարող ունենալ երկուսի ճակատագիրը: 7. Ավելիքն, նա իր ընկերներին ու զորքերի հեծյալ հրամանատարներին, նրանց կամքին հակառակ, հազցրեց պարսկական զգեստներ, և նրանք լէին համարձակվում բողոքել: 8. Նրա պալատում 360 հարձ կար, ինչպես Դարեհի ժամանակ, շրջապատված ներքինիների ամբոխով, որոնք նույնպես վարժված էին տանելու կնոջ ճակատագիրը:

9. Այս ամենը, պերճանքի ու օտարերկրյա սովորութիւնների հետ համատեղ, արթնացնում էր ցոփութեանը անգլխակ Փիլիպոսի հին զինվորների բացեիբաց զժգո՛ւթիւնը, և ողջ ճամբարը լի էր խոհերով ու ճառերով, որ հաղթանակով

Նրանք ավելի շատ կորցրել են, քան ձեռք բերել պատերազմում, 10. որ հպատակվելով օտարազգի սովորութիւններին, իրենք են զարձել պարտվողներ: Եվ, վերջապես, ի՞նչ երեսով են նրանք տուն վերադառնալու. գերիների հագուստներով: Նրանք ամաչում են, իսկ իրենց արքան, ավելի շատ պարտվածի նման, քան հաղթողի, մակեդոնական տիրակալից վերածվել է Դարեհի սատրապի: 11. Եվ արքան, հասկանալով, որ սաստիկ վիրավորել է իր ընկերներին ու զինվորներին, փորձում էր նրանց հավատարմութիւնը վերադարձնել առատաձեռն նվերներով: Սակայն, ես կարծում եմ, որ ազատ մարդկանց ատելի է ստրկութեան փրկագինը: 12. Այսպես, որսկսգի զործը խոտվութեան շհամներ, զինվորների պարապութիւնը անհրաժեշտ էր ընդհատել պատերազմով, որի զրգապատճանները, ի դեպ, ավելի ու ավելի էին շատանում: 13. Քանզի Բևսը, իր վրա զցելով արքայական հագուստը, հրամայել էր անվանել իրեն Արտաքսերքսես և ժողովել էր սկյութներին ու Տանախս զետի ավազանում ապրող ուրիշ ժողովուրդներին: Այդ մասին հայտնեց Սատիրարզանը, որին ողորմածարար ընդունել էր Ալեքսանդրը և դարձրել էր նույն մարզի սատրապ, որը նա նախկինում կառավարել էր: 14. Եվ քանի որ ռազմավարով ու շքեղութեան առարկաներով ծանրաբեռնված բանակը չէր կարողանում արագ շարժվել, նա հրամայեց մի տեղ ժողովել սկզբից իր իրերը, այնուհետև նաև բոլոր զինվորների իրերը, բացի ամենամահաժեշտ բաներից: 15. Ավարով լեցուն սալերը նրանք տարան մի լայնարձակ հարթավայր: Երբ բոլորը սպասում էին արքայի հետագա հրամաններին, նա կարգազրեց հեռացնել կենդանիներին, իսկ մնացածը այրել, և առաջինը այրվող ջահը մոտեցրեց իր իրերին: 16. Իրենց տներերի ձեռքով այրվեցին այն գանձերը, որոնց համար մարդիկ հաճախ հանդիսանում էին հրդեհները, որպեսզի զրանք սնվնաս դուրս բերեն թշնամական քաղաքներից: Եվ ոչ ոք չհամարձակվեց ողբալ իր արջան զինը, քանզի նույն կրակը լափում էր նաև արքայի հարստութիւնը: 17. Այնուհետև մի կարճատև ճառ մտրմորեց նրանց վիշտը և նրանք՝ պատրաստ ծառայելու աշխարհի երեսին մնացած ամեն ինչին, ուրախանում էին, որ կորցրել են ավելորդ բեռը և ոչ իրենց կարգապահութիւնը: 18. Այսպես, նրանք ուղևորվեցին Բակտրիա:

Նիկանոորոսի՝ Պարմենիոսի որդու անսպասելի մահը համընդհանուր վիշտ առաջացրեց: 19. Բոլորից շատ վշտացած ար-

քան շատ էր ցանկանում մնալ այդտեղ և ներկա լինել հուշարկալորութիւնը, սակայն պարենի կարիքը ստիպեց նրան շտապել. եղբորը մեծարանքներ մատուցելու համար 2600 մարդկանցով թողնվեց Փիլոտեսը, իսկ արքան շտապեց Բեսին ընդունալ: 20. Ծանապարհին մոտակա սատրապներից նրան նամակներ հանձնվեցին, որոնցից նա տեղեկացավ, որ Բեսը թշնամական քանակով իր դեմ է ելել, ինչպես նաև որ Սատիրարզանը, որին նա արիացելների սատրապ էր նշանակել, իրեն դավաճաւել է: 21. Այդ իսկ պատճառով, թեև նա գնում էր Բեսի դեմ, որոշեց նախ և առաջ հաշվահարդար տեսնել Սատիրարզանի հետ: Նա, իր հետ վերցնելով թեթևազեններին և հեծելազորը, արագ ուղամերթով ամբողջ գիշերը, անակնկալ հարձակվեց թշնամու վրա: 22. Տեղեկանալով Ալեքսանդրի հայտնվելու մասին, Սատիրարզանը 2000 հեծյալով՝ ավելին հավաքելն անհնար էր, փախավ Բակտրիա. մնացածները դրաղեցրին հարևան լեռները: 23. Այնտեղ մի ժայռ կա, որը շատ զառիվեր է արևմտյան կողմից, սակայն ավելի սակավ զառիվայր արևելքից, ծածկված անտառի խիտ մացառուտով. այնտեղ առատ հոսող ջրի անսպառ աղբյուր կա: 24. Ժայռի շրջագիծը կազմում է 32 ասպարեզ: Նրա զագաթին խոտածածկ մաքագետին է: Այստեղ թշնամիները տեղադրել էին նրանց, ովքեր չէին մասնակցում ճակատամարտին. մնացածները ցանկապատել էին ժայռի կախված մասը ծառերի բներով ու քարերով: Զինված մարտիկների ընդհանուր քանակը 13 զագար հոգի էր: 25. Թողնելով Կրատերոսին նրանց պաշարման համար, Ալեքսանդրը շտապեց հետապնդել Սատիրարզանին:

Սակայն, տեղեկանալով, որ բարբարոսը հեռու է գտնվում, նա վերադարձավ գրոհելու լեռը դրաղեցրածներին: 26. Նախ նա հրամայեց մաքրել բոլոր այն տեղերը, որտեղով կարելի էր բարձրանալ, սակայն հետո, բախվելով անառիկ ժայռերին և թեթություններին, նա ընդունեց, որ բնության հետ պայքարելն անիմաստ է: 27. Խորընդոտների հաղթահարելու սիրահար Ալեքսանդրը, քանի որ առաջխաղացումը դժվար էր, իսկ վերադառնալը վտանգավոր, փորձում էր մեկ այս, մեկ այն, ինչպես միշտ լինում է, երբ ոչ մի միտք չի բավարարում: Նրա այդ դժվարութիւն մեջ, երբ բանականութունն անզոր էր, նրան հանկարծակի օգնութիւն եկավ քախալը: 28. Ուժեղ արևմտյան քամի բարձրացավ, իսկ զինվորները արդեն շատ ծառեր էին կտրել դրանց

վրայով ժայռը մազլցելու համար: 29. Այդ ծառերը, արևից կիզված, շիկացան ու ըոցավառվեցին. և Ալեքսանդրը հրամայեց էլի ծառեր կտրել և պահպանել կրակը: Կույտով դրված ծառերը արագորեն հասան ժայռի բարձրութիւնը: 30. Տարբեր կողմերից վառած կրակը բռնեց ողջ խարույկը: Քամին կրակը զարկեց հակառակորդ զեմքին և ծխի հսկա քուլաները ամպերի նման ծակեցին երկինքը: 31. Անտառները շլացին կրակից, և նույնիսկ այն, ինչ զինվորները չէին այրել, ինքնին կրակ գարծավ, և մոտակայքում գտնվող ամեն ինչ ըոցավառվեց: Բարբարոսները տանջալի մահից փորձում էին փախել այնտեղ, ուր կրակը մարում էր, սակայն որտեղ կրակ չկար, այնտեղ նրանց դարանակալել էին թշնամիները: 32. Եվ նրանք զոհվում էին տարբեր ձևերով. մի մասն այրվում էր, ոմանք թուրում էին ժայռից ցած, մյուսները նետվում թշնամուն ընդառաջ, բշերը գերի ընկան կիսաայրված:

33. Այդտեղից Ալեքսանդրը վերադարձավ Կրատերոսի մոտ, որը պաշարել էր Արտակոսանան: Կրատերոսը, նախապատրաստելով ամեն ինչ ինչպես հարկն է, սպասում էր արքային, որպեսզի, ինչպես կարգն է, քաղաքը վերցնելու փառքը մատուցի նրան: 34. Ալեքսանդրը հրամայեց մոտեցնել պաշարման մեքենաները. բարբարոսները սարսափած դրանց տեսքից, պարիսպների վրայից ձեռքերի ափերը վեր մեկնելով աղաչում են արքային իր ցասումը ուղղել խոռվութիւն սադրողի՝ Սատիրարզանի դեմ, իսկ իրենց, որոնք հանձնվում են արքայի ողորմածութիւնը, ներել: Արքան ներեց նրանց և ոչ միայն դադարեցրեց պաշարումը, այլ և բնակիչներին վերադարձրեց նրանց ողջ ունեցվածքը: 35. Երբ նա հեռացավ այդ քաղաքից, նրան համարում մոտեցավ. Զոխուսը Հուսաստանից 500 զինվոր էր բերել, Անտիպատրոսը 3000 զինվոր էր ուղարկել Իլիրիայից, Փիլոտեսի հետ ժամանել էին 130 թեսալական հեծյալներ, Լիդիայից 2600 օտարերկրացի զինվորներ և 300 հեծյալներ նույն ցեղից: 36. Ընդունելով այդ նոր ուժերը, արքան մտավ ուղամատեն զրանգներ ցեղի երկիրը: Նրանց սատրապը Բարսանգն էր՝ Բեսի մեղսակիցը իրենց արքայի դեմ կատարված ոճրագործութիւն մեջ: Վախենալով արժանի պատժից, նա փախել էր Հնդկաստան:

VII. Արքան արդեն իններորդ օրն էր ճամբար էր գրել. ոչ միայն թշնամու ուժերից անվտանգ, այլ և անհաղթ, երբ ան-

սպասելիորեն վտանգի ենթարկվեց ներքին թշնամուց, 2. Դիմ-
նոսը՝ արքայի մերձավորների մեջ միջին դիրքի ու կշռի մի
մարդ, գայթակղված միայն իրեն նվիրված մարդու հեղությամբ,
սիրով բոցավառվեց նիկոմաքոս անունով մի սեռամուլի հան-
դակ: 3. Ձեացնելով, թե անհանգստացած է, որը կարելի էր տես-
նել նաև նրա դեմքի արտահայտությունից, հեռացնելով վկա-
ներին, նա, խարելով պատանուն, տաճար տարավ և ասաց, որ
նրան շատ կարևոր գաղտնիք է հայտնելու: 4. Շարժելով նրա
հետաքրքրությունը, նա սկսեց աղաչել պատանուն հանուն իրենց
փոխադարձ սիրո և խոստումների երդվել լռել այն բանի մա-
սին, ինչ նա ասելու է: 5. Նիկոմաքոսը, ենթադրելով, թե նա չի
կարող այնպիսի մի բան ասել, որ կապված լինի ուխտադրու-
թյան հետ, երդվեց բոլոր աստվածներով: 6. Այնժամ Դիմ-
նոսը հայտնեց նրան, որ դավադրություն է կազմակերպված՝
երբորդ օրը սպանել արքային և, որ ինքն էլ է մասնակցում այդ
դավադրությանը քաջասիրտ ու նշանավոր այրերի հետ: 7. Կսե-
լով այդ, պատանին սկսեց համառորեն ժխտել, որ երդում է տվել
մասնակցելու նման ոճրագործությանը և ասաց, որ ոչ մի կրոն
չի ստիպի իրեն լռել դավաճանություն մասին: 8. Դիմնոսը, սի-
րուց ու վախից խելքը կորցրած, բռնեց պատանու ձեռքերը և
հեկեկալով սկսեց աղաչել նրան մասնակցել դավադրությանը:
9. Իսկ եթե չի կարող, ապա ծալրահեղ գնալու շմաստի իրեն:
չէ որ ինքն ապացուցել է իր սերը պատանու հանդեպ բացի
ամեն ինչից նաև նրանով, որ առանց փորձելու նրա հավատար-
մությունը, նրան է վստահել իր կյանքը: 10. Վերջապես, Դիմ-
նոսը սկսեց զայրույթով հրաժարվել շարունակող պատանու
վրա աղբյւլ վախով, ասելով, թե դավադիրները իրենց փառա-
վոր գործը կսկսեն նրան սպանելով: 11. Հետո նա փորձեց ազ-
դել նման ոճրագործությունից նողկանք զգացող պատանու վրա,
մեկ անվանելով նիկոմաքոսին վախկոտ կին, մեկ իր սիրեկանի
դավաճան, մեկ նրան մեծ խոստումներ տալ՝ ընդհուպ մինչև
արքայական իշխանություն: 12. Վերջապես, մերկացրած թուրը
զենելով նիկոմաքոսի կոկորդին, հետո իր կոկորդին, աղաչելով և
միաժամանակ սպառնալով, Դիմնոսը խոստում առավ ոչ միայն
լռել, այլև պաշտպանել դավադիրների գործը: 13. Սակայն
ամուր հոգով և անկաշառ պատանին շղթավաճանեց իր նախկին
երոշմանը, այլ միայն ձեացրեց, որ հանուն Դիմնոսի սիրո չի
կարողանում նրան մերժել: 14. Նա սկսեց Դիմնոսին հարց ու

փորձ անել, թե ում հետ է նա գործակցում. իբր մեծ նշանակու-
թյուն ունի, թե ինչպիսի մարդիկ են ձեռնարկելու այդքան փա-
ռավոր գործը: 15. Դիմնոսը, մթազած սիրուց ու ոճրագոր-
ծությունից, սկսեց շնորհակալություն հայտնել պատանուն և
շնորհավորել նրան, որ քաջություն հանդես բերելով, նա որո-
շել է միանալ Դեմետրոսին՝ թիկնապահներից մեկին, Պեկոյա-
յաֆին ու նիկանորոսին. նրանց նա ավելացրեց Ափորեատոսի,
Թուլյաոսի, Դիոքսենոսի, Արքեպոլիսի և Ամինտոսի անունները:
16. Երբ Դիմնոսն ազատ արձակեց նրան, նիկոմաքոսը Քե-
բալին անունով իր եղբորը հայտնեց այն ամենը, ինչ նա իմա-
ցել էր: Եղբայրները պայմանավորվեցին, որ նիկոմաքոսը կմնա
վրանում, քանզի եթե նա, որն արքային երբեք չի մոտեցիլ,
մտնի նրա վրանը, դավադիրները գլխի կընկնեն, որ իրենց
մատնել են: 17. Իսկ Քերալինը կանգնեց արքայական վրանի
մուտքի մոտ, ավելի մոտենալ նրան չէր թույլատրվում, սպա-
սելով իր ընկերներից որևէ մեկին առաջին կոհորտայից, որ-
պեսզի նա ուղեկցի իրեն արքայի մոտ: 18. Այնպես պատահեց,
որ երբ բոլորը ցրվեցին, միայն Փիլոտեսը՝ Պարմենիոնի որդին,
ինչ-որ պատճառով հապաղեց արքայի մոտ, նրան էլ Քերալի-
նը, հուզմունքից շփոթելով բռտերը, հայտնեց այն մասին, ինչ
իմացել էր իր եղբորից, և խնդրեց անմիջապես ղեկուցել արքա-
յին: 19. Փիլոտեսը զովեստի խոսքեր ասելով նրան, անմիջա-
պես գնում է Ալեքսանդրի մոտ, սակայն ուրիշ գործերի մասին
նրա հետ ունեցած երկարատև զրույցի ժամանակ ոչինչ չի
ասում նրան Քերալինից իմացածի մասին: 20. Քերալինը երե-
կոյան արքայական վրանի մոտ հանդիպելով Փիլոտեսին, հարց-
նում է, արդյո՞ք նա կատարել է իր հանձնարարությունը: Փի-
լոտեսը պատճառաբանում է, որ արքան ժամանակ չի ունեցել
իր հետ խոսելու և հեռանում է: 21. Հաջորդ օրը, երբ Փիլոտեսը
գնաց արքայի մոտ, նրա առջև հայտնվեց Քերալինը և հի-
շեցրեց նախօրեին հայտնած գործի մասին: Փիլոտեսը պա-
տասխանում է, որ հիշում է զրա մասին, սակայն այդ ժամա-
նակ էլ չի հայտնում արքային այն, ինչի մասին լռել էր: 22. Փի-
լոտեսը սկսում է Քերալինի մեջ կասկած առաջացնել, և գտնե-
լով, որ անհնար է հետաձգել, նա մտադրված ոճրագործության
մասին հայտնում է Մետրոնես անունով մի ազնիվ պատանու,
որը զենքի պահեստն էր տնօրինում: 23. Սա, թաքցնելով Քե-
բալինին զենքի պահեստում, անմիջապես շտապում է այդ ժա-

մանակ հանգստացող արքայի մոտ և պատմում նրան այն ամենը, ինչ հայտնել էր Քերալինը:

24. Արքան իր թիկնապահներին ուղարկելով Դիմնոսին ձերբակալելու, ինքը զնաց զինապահնու: Այստեղ Քերալինը, ուրախացած բացականչեց. «Ես թեզ տեսնում եմ ողջ և առողջ, փրկված սրբապիղծների ձեռքից»: 25. Ալեքսանդրը ամեն ինչի մասին նրան հարց ու փորձ անելով, իմացավ բոլոր մանրամասնությունները: Այս արքան հարցրեց, թե ճշգրիտ երբ է նկուսաբոսը հայտնել Քերալինին այդ տեղեկությունները: 26. Երբ սա խոստովանեց, որ արդեն երրորդ օրն է, արքան նման ձրգձգումը կասկածելի համարեց և հրամայեց շղթայիլ Քերալինին: 27. Սակայն Քերալինը սկսեց գոռգոռալ, որ հենց ինքն իմացել է դավադրության մասին, վաղել է Փիլոտեսի մոտ. թող արքան ինքը հարցնի նրան: 28. Արքան չարունակում էր հարցաթննել Քերալինին, արդյո՞ք նա փնտրել է Փիլոտեսին, արդյո՞ք պնդել է, որ Փիլոտեսը գնա արքայի մոտ, և քանի որ Քերալինը մըշտապես հաստատում էր այն, ինչ արդեն ասել էր, Ալեքսանդրը զկայի երկինք բարձրացնելով ձեռքերը, արցունքներն աչքերին սկսեց բողբոջել, թե ինչպես է վարձահատույց եղել իր երբեմնի մերձավորագույն ընկերը: 29. Այդ նույն ժամանակ Դիմնոսը պլիի ընկնելով, թե ինչու է արքան պահանջում իրեն, ծանր վեճը հասցրեց իրեն, իր մոտ պատահարար մնացած սրով, սակայն վրա հասած պահնորդները բռնեցին նրան ու տարան արքայական վրանը: 30. Արքան, նայելով նրա աչքերի մեջ, ասաց. «Ի՞նչ ոճրագործություն եմ ես որոշել գործել քո հանդեպ, Դիմնոս, որ դու Փիլոտեսին ավելի արժանի ես համարել ղեկավարելու Մակեդոնիան, քան ինձ»: Սակայն Դիմնոսը այլևս չէր կարողանում խոսել. հառաչելով և արքայից շրջվելով՝ նա կորցնում է զփտակցությունը և մեռնում:

31. Արքան, իր վրանը կանչելով Փիլոտեսին, ասաց. «Քերալինը խիստ պատժի է արժանի, եթե նա երկու օր թաքցրել է իմ զեմ կազմակերպված դավադրությունը, սակայն նա պնդում է, որ դրանում դու ես մեղավոր, Փիլոտես, քանի որ նա անմիջապես հայտնել է թեզ իր ստացած տեղեկությունների մասին: 32. Ինչքան ավելի սերտ է մեր բարեկամությունը, այնքան ավելի հանցավոր քո պարտակցությունը, և ես կասեի, որ այն ավելի համապատասխան է Քերալինին, քան Փիլոտեսին: Դու բարյացակամ դատավոր ունես, եթե ղեռ հնարավոր է հերքել այն,

ինչ լպնտք է արվեր»: 33. Դրան Փիլոտեսը, եթե դատելու լինեք նրա զեմքի արտահայտությունից, առանց իրեն կորցնելու պատասխանեց, որ Քերալինը իսկապես հայտնել է իրեն սեռամուխ խոսքերը, սակայն ինքը դրանց նշանակություն չի տվել, նրկյուղելով, թե ուրիշների ծիծաղը կառաջացնի, եթե պատմի նրկու սիրեկանների միջև եղած գծաուբյունների մասին, 34. Բայց քանի որ Դիմնոսն ինքնասպան է եղել, անշուշտ, պետք չէր լսել, ինչ էլ որ դա լիներ: Այնուհետև, զրկելով արքային, նա սկսեց աղաչել, որ նա իր մասին դատի անցյալով և ոչ իր սխալով, որը կայանում էր լսելու մեջ և ոչ թե գործողության: 35. Դժվարանում եմ ասել, հավատացե՞լ է արդյոք արքան նրան, թե թաքցրել իր ցատումը հոգու խորքում, բայց նա Փիլոտեսին է մեկնել իր աչք ի նշան բարեկամության վերականգնման և ասել, որ իրեն իսկապես թվում է, թե Փիլոտեսը արհամարհել է զաղտնի ամբաստանությունը և ոչ թե զփտավորյալ թաքցրել այն:

VIII. Այնուհետև, իր ընկերների խորհրդակցության ժամանակ, ուր Փիլոտեսը հրավիրված չէր, արքան հրամայում է բերել Նիկոմաքոսին: Պատանին բառացիորեն կրկնում է այն, ինչ մինչ այդ նրա եղբայրը հաղորդել էր արքային: 2. Կրատերոսը, որն արքային շատ-շատ ընկերներից ավելի թանկ էր, մրցակցությունից ելնելով, հակակրանք ուներ Փիլոտեսի հանդեպ: 3. Բացի այդ, նրան հայտնի էր, որ Փիլոտեսը հաճախ էր Ալեքսանդրին ձանձրացնում իր քաջության և իր ծառայությունների գովարանություններով, և դրանով իսկ կասկածանք հարուցում, եթե ոչ ոճրագործության, ապա գոռողության: 4. Մտածելով, որ հակառակորդին ոչնչացնելու ավելի պատե՞ պահ չի լինելու, Կրատերոսը, թաքցնելով իր ատելությունը արքային նվիրվածություն թողի տակ, ասաց հետևյալը. «Օ՞, եթե դու այս գործի հենց սկզբից խորհրդակցեիր մեզ հետ, 5. մենք թեզ կհամոզեինք, որ եթե դու ցանկանում էիր ներել Փիլոտեսին, ավելի լավ կլինեք չճիշեցնել նրան, թե ինչքան է նա թեզ պարտական, քան ստիպել նրան մեծ սարսափից ավելի շատ մտածել սեփական անվտանգություն մասին, քան քո բարություն: Զէ՞ որ նա միշտ էլ կարող է դավ նյութել քո զեմ, իսկ դու միշտ չէ, որ կկարողանաս ներել նրան: 6. Դու հիմք չունես կարծելու, որ այդքան հեռու զնացած մարդը, ստանալով քո ներումը, կփոխվի: նա զփտի, որ զթասրտության շարաշահողներն այլևս չեն կա-

րող հույս դնել նրա վրա: 7. Սակայն, նույնիսկ եթե նա պարտ-
ված քո բարութիւնից, ցանկանա հանդարտուել, ես գիտեմ, որ
նրա հայրը՝ Պարմենիոնը, որն այդքան մեծ բանակի ղեկավարն
է և վաղուց իր զինվորների վրա այնպիսի ազդեցութիւն ունի,
որը շատ քիչ է զիջում քոնին, անտարբեր չի վերաբերվի այն
փաստին, որ իր որդու կյանքով նա պարտական է քեզ: 8. Մեզ
ատելի են որոշ բարեգործութիւններ: Մարդու համար ամոթա-
բեր է գիտակցել, որ նա մահվան է արժանի: Փիլոտեսը գերա-
դասում է ձեռնցնել, թե քեզանից նա վիրավորանք է ստացել և
ոչ թե ներում: Գիտցիր, որ այդ մարդկանց հետ դու ստիպված
ես լինելու պայքարել քո կյանքի համար: 9. Իսկ դու զեռ բա-
վականաշափ թշնամիներ ունես, որոնց մենք պատրաստ ենք
հետապնդել: Զգուշացիր քո շրջապատի թշնամիներէ: Եթե դու
գրանցից գլուխ հանես, ապա ես արտաքինից սպասվող ոչնչից
չեմ վախենում»:

10. Այսպես էր խոսում Կրատերոսը. մյուսներն էլ չէին կաս-
կածում, որ Փիլոտեսը չէր թաքցնի դավադրութեան մասին եղած
տվյալները, եթե չլինէր նրա պարագլուխը կամ մասնակիցը:
Այլապես, ո՞ր բարի նպատակներ ունեցող հավատարիմ
մարդը, առավել ևս ընկերը, և նույնիսկ վերջին ուսմիկը, լսե-
լով այն, ինչ ասվել էր Փիլոտեսին, չէր շտապի հայտնել այդ
մասին արքային: 11. Իսկ Պարմենիոնի որդին, հեծելազորի
հրամանատարը, արքայի բոլոր գաղտնիքներին վստահվածը,
չէր սթափվել նույնիսկ Քերալինի օրինակով, որը իրեն էր
հայտնել եղբորից լսածը: Նա ստել էր, թե իրր արքան ժամանակ
չի ունեցել իր հետ զրուցելու, որպեսզի Քերալինը ուրիշ միջ-
նորդ չփնտրի: 12. Նույնիսկ աստվածներին երդումներ տված
Նիկեոմաքոսը շտապել էր թեթևացնել իր վիճակը, Իսկ Փիլոտե-
սը, անցկացնելով ողջ օրն ուրախութեան ու զվարճանքների մեջ,
իր դատարկ խոսակցութիւնների մեջ տեղ չի գտել մի քանի
բառի համար, որոնք կարևոր էին արքայի կյանքի համար:
13. Նա ասում է, որ չի հավատացել երկու հասարակ պատանի-
ների ասածին: Այդ դեպքում ինչու է նա երկու օր ձգձգել, իրր
թե հավատացել է նրանց: Եթե Փիլոտեսը չէր հավատում Քերա-
լինի հաղորդմանը, ապա պետք է վռնդեր նրան: 14. Անհրա-
ժեշտ է շափաղանց քաջ լինել, երբ ինքդ ես ենթարկվում վտան-
գի, բայց երբ որևէ բան վտանգի տակ է դնում արքայի բարո-
ւութիւնը, անհրաժեշտ է լարել ուշադրութիւնը և ականջ դնել

նույնիսկ դատարկ տեղեկութիւններ բերողներին: 15. Այսպի-
սով, բոլորը որոշում են Փիլոտեսի հանդեպ հետաքննութիւն
սկսել, որպեսզի նա տա դավադրութեան մյուս մասնակիցների
անունները: Արքան ազատ է արձակում բոլորին, հրամայելով
բան խորհրդակցութեան արդյունքների մասին:

Հետո նա հրամայում է հաջորդ օրը հայտարարել արշավի օր,
որպեսզի ոչնչով չմատնի ընդունված որոշումը: 16. Նույնիսկ
Փիլոտեսն էր հրավիրված իր վերջին խրախճանքին, իսկ արքան
ազու այնքան ամբուքիւն ցուցաբերեց, որ ոչ միայն քեֆ էր
առնում, այլև բարեկամաբար զրուցում մահվան դատապարտված
մարդու հետ: 17. Այնուհետև, երկրորդ պահակութեան փոփոխ-
ութեամբ, լուսեբը հանգցրին, և արքայական վրան մտան
մի քանի մարդ արքայի ընկերների՝ Հեփեստիոնեսի, Կրատերո-
սի, Քենոսի և Էրիդիոսի հետ, ինչպես նաև թիկնապահներ Պեր-
դիկոսը ու Լեոնատոսը: Նրանք վրանը պահպանող պահակա-
խմբին հրամայեցին զենքը ձեռքներին շարունակել պահակու-
թիւնը: 18. Ծամբարից դուրս տանող բոլոր ուղիներին զինվոր-
ներ էին կանգնած, հեծակներին ևս հրամայված էր զբաղեցնել
ճանապարհները, որպեսզի ոչ ոք չկարողանա գաղտնի գնալ
Պարմենիոնի մոտ: Նա այդ ժամանակ Մարաստանի կառավա-
րին էր և մեծաքանակ զինված ուժեր ունէր: 19. Իսկ Աթարիո-
սը արքայի վրանը մտալ էր և հարյուր զինված մարտիկնե-
րով: Նրան տրվում է 10 օգնական և ամեն մեկին կից 10 զին-
ված մարտիկ: 20. Նրանց ուղարկեցին ձերբակալելու դավա-
դրութեան մյուս մասնակիցներին: Աթարիոսը երեք հարյուր
մարդկանցով ուղարկվեց Փիլոտեսին բռնելու և նա սկսեց իր հի-
սուն քաջերի օգնութեամբ ջարդել նրա բնակարանի կողպած
գուռը, մնացածներին շարեց տան շուրջը, որպեսզի Փիլոտեսը
չկարողանա հեռանալ գաղտնի ելքով: 21. Սակայն Փիլոտեսն
իր անվտանգ լինելու գիտակցութիւնից, թե չափազանց հոգնա-
ծութիւնից, խոր քնած էր. երբ Աթարիոսը նրան ձերբակալեց,
նա զեռ բունը գլխին էր: 22. Երբ նա ամբողջովին սթափվեց և
նրան շղթայեցին, նա ասաց. «Օ, արքա, իմ թշնամիների դա-
ժանութիւնը հաղթեց քո զթասարտութեանը»: Եվ մինչ նրան գլու-
խը ծածկած տանում էին արքայի վրանը, նա այլևս ոչ մի բառ
չասաց: 23. Հաջորդ օրն արքան հրամայեց բոլորին հավաքվել
զենքը ձեռքներին: Հավաքվեց մոտ 6 հազար զինվոր, բացի այդ
մարկիտանաների ամբոխը և զումակի ծառանքը լցվեցին ար-

բայական վրանք: 24. Զինված ուղղակիներն իրենց մարմնով ծածկում էին Փիլոտոսին, որպեսզի ամբողջ շտաբնի նրան, մինչև արքան ճառով չդիմի զինվորներին: 25. Մակեդոնիայի հինավուրց սովորույթի համաձայն բրեհական հանցագործության համար դատավճիռը կայացնում էր զորքը. խաղաղ ժամանակ դա ժողովրդի իրավունքն էր, և արքաների իշխանությունը նշանակություն չի ունեցել, եթե նախապես չի պարզվել ժողովրդական զանգվածների կարծիքը: 26. Եվ այսպես, սկզբից բերեցին Դիմնոսի մարմինը, սակայն հավաքվածների մեծամասնությունը չգիտեր, թե ինչ է արել նա և ինչպես է զոհվել:

IX. Դրանից հետո Ալեքսանդրը հայտնվեց ժողովածուներին՝ հոգեկան կակժի արտահայտությունը դեմքին. նրա ընկերների թախիծն ու սպասումը լարվածություն էր հաղորդում սպասմանը: 2. Արքան երկար ժամանակ լուռ էր, իջեցնելով հայացքը այնպիսի մարդու տեսքով, որը ցնցված է կակժից: Վերջապես նա հոգեկան ուժ հավաքեց ու ասաց. «Զինվորներ՛ր, քիչ էր մնում ես զուրս մղվելի ձեր շրջանից մի քանիսի ոճրագործության պատճառով և կենդանի մնացի աստվածների ողորմածությամբ: Նայելով ձեր պատվարժան ժողովին, ես ստիպված եմ հատկապես զայրանալ դավաճանների վրա, քանզի իմ կյանքի առաջին և նույնիսկ միակ երջանկությունն այն է, որ ես դեռևս կարող եմ շնորհակալական խոսքեր ասել այնքան քաջ ալքերի, որոնք ինձ մեծագույն ծառայություններ են մատուցել»: 3. Նրա խոսքերն ընդհատվեցին զինվորների հառաչանքներով և բոլորի աչքերին արցունքներ հրեացին: Ապա արքան շարունակեց. «Որքան ավելի ես կհուզեմ ձեր հոգիները, եթե մեղմանեմ այդքան մեծ ոճրագործության հրահրողներին: Ես զեռ զգուշանում եմ անվանել նրանց և չեմ ասում նրանց անունները, կարծես դա կարող է նրանց փրկել: 3. Սակայն անհրաժեշտ է հաղթահարել նրանց հանդեպ ունեցած իմ նախկին համակրանքը, և ձեր առջև բացել անաղնիվ մարդկանց դավադրությունը: Այլապես ինչպե՞ս կարելի է լուր նման մեծ անազներվության մասին: Պարմենիոնը, որն իր տարիքում այդքան շատ շնորհներ է ստացել ինձանից և իմ հորից, մեր ընկերներից ամենաավագը, կանգնել է այդպիսի ոճրագործության գլուխ: 5. Նրա դործիքը՝ Փիլոտոսը, իմ կյանքի դեմ է հրահրել Պեկոլայոսին և Դեմետրիոսին և այն Դիմնոսին, որի մարմինը

դուք տեսնում եք ձեր առջև, և ուրիշներին, որոնք վարակվել են նույն խելացնորությունը»:

6. Բոլոր կողմերից վրդովմունքի և տրամոթյան աղաղակներ լսվեցին, ինչպես միշտ լինում է ամբոխի դեպքում և, հատկապես զինվորների կողմից, եթե նրանք բորբոքված են շանասիրությամբ կամ ցասումով: 7. Հետո բերում են նիկոմասին, Քերալինին և Մեարոնեսին, և նրանք կրկնում են այն, ինչ նրանցից ամեն մեկը հայտնել էր: Սակայն նրանցից ոչ ոք դավադիրների մեջ Փիլոտոսի անունը չտվեց: Այսպեսով, զինվորները զսպելով իրենց վրդովմունքը, լուսնությամբ լսեցին ամբաստանյալների խոսքերը: 8. Այնժամ արքան այսպես շարունակեց. «Երևի ի՞նչ կասեք մի մարդու մասին, ով թաքցրել է իրեն արված հայտարարությունը այնքան կարևոր գործի մասին: Դիմնոսի մահը ցույց է տալիս, որ դա իդուր չի եղել: 9. Քերալինը չվախեցավ խոշտանգումներից, հաղորդելով շտաբոված լուրեր, իսկ Մեարոնեսը այնքան էր շտապում թեթևացնել իր հոգին, որ ներխուժեց նույնիսկ այնտեղ, ուր ես լողանում էի: 10. Միայն Փիլոտոսը ոչնչից չէր վախենում և ոչնչի չէր հավատում: Ոգու ինչպիսի արիություն: Կհուզի՞ր արդյոք այդպիսի մարդուն արքային սպառնացող վտանգը, կփոխվի՞ր արդյոք նրա գեմքի արտահայտությունը, ուշադրությամբ կլսի՞ր արդյոք այդքան տաղնապալի տեղեկություններ բերած լրաբերին: 11. Անկասկած, նրա լուսնունքը թաքցնում է հանցագործ մտադրություններ. արքայական իշխանության կրթոտ ծաբավն է մղել նրան մեծագույն անպատվության: Նրա հայրը ղեկավարում է Մարաստանը. ինքն էլ իմ շնորհիվ մեծ ազդեցություն ունի իմ զորավարների շրջանում, սակայն ցանկանում է ավելին, քան կարող է ընդդրել: 12. Նա նույնիսկ ծիծաղում է իմ անդամակության վրա¹⁴: Բայց սխալվում է Փիլոտոսը, Քանզի դուք իմ զավակները, բարեկամներն ու արյունակից եղբայրները. ձեզ հետ ես միայնակ լինել չեմ կարող»:

13. Այնուհետև արքան ընթերցեց Պարմենիոնի կես ճամփին բռնված նամակը իր որդիներ Նիկանորոսին ու Փիլոտոսին, որը սակայն, առիթ չէր տալիս ավելի լուրջ կասկածանքների: 14. Հենց այդտեղ էր առված. «Սկզբից հոգ տարեք ձեր մասին, հետո ձեզ մոտ մարդկանց. այդպիսով մենք կհամենք ցանկալիին»: 15. Եվ արքան ավելացրեց, որ նամակը զրված է այնպես, որ եթե ընկնի իր որդիների ձեռքը, ճիշտ կհասկացվի, իսկ

եթե կես ճամփին բռնվի, ապա անտեղյակ մարդկանց թյուրի-
մացութեան մեջ կզցի: 16. Հետո նա շարունակեց. «Սակայն
կարող են ասել, թե Դիմնոսը բոլոր դավադիրներին թվարկելիս
չի տվել Փիլոտեսի անունը: Դա իհարկե ոչ թե նրա անմեղու-
թեան վկայութունն է, այլ նրա ուժի, քանզի նրանից այնքան
շատ էին վախենում նույնիսկ նրանք, ովքեր կարող էին նրան
մատնել, որ իրենք, խոստովանելով, չհիշատակեցին նրան: Ասենք
իր ողջ կյանքն է մատնում նրան: 17. Նա որպես ընկեր և գաշ-
նակից միացել էր Ամինտոսին՝ իմ աղգակախին, որը Մակեդո-
նիայում իմ դեմ անազնիվ դավ էր նյութել: Նա իր քրոջը կնու-
թեան տվեց իմ ամենամեծ թշնամուն՝ Ատալոսին: 18. Երբ ես,
այդքան մոտ բարեկամության իրավունքով, գրեցի նրան այն
մասին, թե ինչ էր ասել ինձ Յուպիտեր-Ամոնի պատգամախո-
սը, նա հանդանց ինձ պատասխանել, որ շնորհավորում է ինձ
աստվածների շարքը դասիկու կապակցութեամբ, բայց խղճում
է նրանց, ովքեր ստիպված են լինելու ապրել մարդկային սահ-
մաններն անցածի իշխանութեան տակ: 19. Սա այն բանի նշան
է, որ նրա հոգին վաղուց է հեռացել ինձանից, և նա նախանձում
է իմ փառքին: Սակայն, իմ զինվորներ՝ մինչև հիմա ինչքան
հնարավոր է եղել ես դա թաքցրել եմ իմ հոգում: Ինձ թվում էր,
թե ես իմ մարմնից մի կտոր պոկած կլինեմ, եթե դադարեմ զնա-
հատել նրանց, ում վրա այդքան հույսեր եմ դրել: 20. Սակայն
այժմ պատիվ են պահանջում ոչ արդեն հանդուգն խոսքերը.
հանդգնությունը խոսքից անցել է սրի: Իսկ սրերը, եթե դուք
ինձ հավատում եք, Փիլոտեսն ուղղել է իմ դեմ, և եթե նա
ինքն է հասել դրան, ապա ո՞ւմ դիմեմ ես, ով ուղմիկներ, ո՞ւմ
վստահեմ իմ կյանքը: 21. Եվ ես նրան նշանակել եմ հեծելազո-
րի՝ իմ բանակի լավագույն մասի գլխավոր, որը կազմված է
ամենաազնվատոճ ու պատանիներից, ես նրա խնամատարու-
թեանն էի վստահել իմ կյանքը, հույսերը, հաղթանակը: 22. Նրա
հորը ես հասցրի նույն բարձրության, ինչին դուք ինձ եք հասցը-
րել: Ես նրա իշխանութեան տակ եմ դրել Մարաստանը, որից
ավելի հարուստ երկիր չկա, ինչպես նաև հազարավոր համա-
քաղաքացիների ու դաշնակիցների: Սակայն այնտեղ, ուր ես
աջակցություն էի փնտրում, վտանգ առաջացավ: 23. Ինչքան
ավելի լավ կլիներ ինձ համար ճակատամարտում թշնամու զոճ
դառնալ, քան ընկնել հարազատ ցեղակցի ձեռքով: Այժմ խույս
տալով վտանգներից, որոնցից ես վախենում էի, ես այնպիսի-

ներին հանդիպեցի, որոնցից շատեր է վախենալի: 24. Զինվոր-
ներ, դուք սովորաբար խնդրում եք ինձ խնայել իմ կյանքը:
Գուց էլ կարող եք ինձ համար պահպանել այն, խոբհուրդ տալ,
քե ինչ անեմ ես: Ձեզ և ձեր զենքին եմ ես դիմում որպես փր-
կություն. ես չեմ ցանկանում ապրել հակառակ ձեր կամքի, իսկ
եթե դուք ուզում եք դա, ապա ես վրեժխնդիր կլինեմ:»
25. Այնուհետև նա կարգադրում է դուրս բերել Փիլոտեսին
մեջքին կապված ձեռքերով և մաշված թիկնոցով ծածկված:
Երևում էր, որ մարդիկ զգացված էին այն մարդու տեսքից, որին
գեռ վերջերս նայում էին նախանձով: 26. Գեռ երկի նրան տեսել
էին հեծելազորի հրամանատարի պաշտոնում, գիտեին, որ նա
արքայի մոտ խրախճանքի է եղել և, հանկարծ, տեսնում են
նրան ոչ միայն մեղադրյալի դերում, այլև դատապատված և
նույնիսկ կապկալված: 27. Հիշեցին նաև լավագույն փառավոր,
հարգարժան քաղաքացի Պարմենիոնի ճակատագրի մասին, որը
կորցնելով երկու որդիներին՝ Հեկտորին ու Նիկանորոսին, հե-
ռակա կերպով պիտի դատվեր ճակատագրի կողմից իրեն մնա-
ցած վերջին որդու հետ միասին: 28. Բայց ահա Ամինտոսը՝
արքայի զորավարներից մեկը, կրկին գրգռեց գթասրտության
հակված ամբոխին Փիլոտեսի դեմ հատուկ ելույթով: Նա ասաց,
որ իրենց ծախել են բարբարոսներին, որ ոչ ոք չի վերադառնա
հայրենիք՝ իր կնոջ և հարազատների մոտ, և որ դրա փոխարեն
նրանք կմամուլեն զլիսից, կյանքից ու անունից զուրկ մի մարմ-
նի՝ որպես խաղալիք իրենց թշնամիների ձեռքում օտար երկ-
րում: 29. Ամինտոսի ճառն աճքան էլ հաճելի չէր արքային,
ինչքան նա կարծում էր, քանզի հիշեցնելով զինվորներին նրանց
քնտանիքների ու հարազատ երկրի մասին, նա նրանց դարձրեց
վճար շանասեր գալիք սխրանքների իրագործման համար:
30. Այնուհետև Քենոսը, թեև նա ամուսնացած էր Փիլոտեսի
քրոջ հետ, մեղադրեց նրան, բոլորից շատ բղավելով, որ նա ար-
քայի, երկրի, զորքի դավաճան է, և ոտքերի մոտ ընկած քարը
վերցնելով, պատրաստվեց նրա վրա նետել, որպեսզի, ինչպես
շատերն էին կարծում, ազատի նրան խոշտանգումներից:
31. Սակայն արքան բռնեց նրա ձեռքը, ասելով, թե սկզբից ան-
հրաժեշտ է մեղադրողին հնարավորություն տալ արտահայտվե-
լու, և որ ինքը թույլ չի տա այլ կերպ դատելու: 32. Սակայն
Փիլոտեսը, երբ նրան հրամայեցին խոսել, կամ իր մեղավորու-
թեան գիտակցումից ճնշված, կամ էլ իրեն սպառնացող վտան-

զից ցնցված, չհամարձակվեց ոչ հայացքը բարձրացնել, ոչ էլ բերանը բացել: 33. Հետո, արցունքներով ողողվելով, նա կորցրեց գիտակցութիւնը և ընկավ իրեն բռնող զինվորի ձեռքերի վրա, և երբ նրա արցունքները սրբեցին իր թիկնոցով, նա նորից շունչ ու ձայն առավ և, թվում էր, պատրաստվում է խոսել: 34. Այնժամ արքան, ակնապիշ նայելով նրան, ասաց. «Քեզ պիտի դատեն մակեդոնացիները. ես քեզ հարց եմ տալիս, խոսելու՞ ևս արդո՞ք մեզ հետ մայրենի լեզվով¹⁵»: Դրան Փիլոտոսը պատասխանեց. 35. «Մակեդոնացիներից բացի կան շատ ուրիշներ, որոնք, ես կարծում եմ, ինձ ավելի լավ կհասկանան, եթե ես խոսեմ այն նույն լեզվով, որով խոսել ես դու, և ոչ ուրիշ բանի համար բացի նրանից, որ քեզ հասկանա մեծամասնութունը»: 36. Այնժամ արքան ասաց. «Տեսնում եք, Փիլոտոսը ինչպիսի՞ զզվանքով է վերաբերվում նույնիսկ իր մայրենի լեզվին: Միայն նա է քամահարում ուսումնասիրել այն: Սակայն թող խոսի ինչպես ցանկանում է, հիշեցեք միայն, որ նա արհամարհում է մեր սովորույթները, ինչպես և մեր լեզուն»: Այս խոսքերով արքան լքեց հավաքը:

X. Այնժամ Փիլոտոսն ասաց. «Անմեղին հեշտ է խոսքեր գտնել, զժբախտին դժվար է խոսքերը շափավորել: 2: Այդ իսկ պատճառով ես, մաքուր պահելով իմ խիղճը և ճնշված՝ ծանր իրադրությամբ, շգիտեմ, թե ինչպես կապակցեմ իմ զգացմունքները իմ վիճակի հետ: 3. Բացակայում է իմ լավագույն դատավորը. ես շգիտեմ, թե ինչու նա չցանկացավ անձամբ լսել ինձ, քանզի, երդվում եմ աստվածներով, լսելով երկու կողմերին, նա կարող է թե դատապարտել, թե արդարացնել ինձ, սակայն երբ ինձ չեն լսում, ես չեմ կարող հեռակա կարգով արդարացվել, քանի որ արդեն անձամբ նրա կողմից դատապարտված եմ: 4. Եվ, թեև շղթայակապ մարդուն պաշտպանելը ոչ միայն ավելորդ է, այլև վտանգավոր, քանի որ նա արդեն անդեկուսություններ չի հայտնում, այլ ասես մեղադրում է իր քատավորին, սակայն քանի որ ինձ թույլ է տրված խոսել, ես չեմ լռի և թույլ չեմ տա մտածել, թե դատապարտված եմ նաև իմ խղճի կողմից: 5. Եվ ինքս չեմ հասկանում, թե ինչի մեջ կարելի է ինձ մեղադրել. ոչ ոք իմ անունը դավադիրների մեջ չհայտնեց: Նիկոմաքոսը ոչինչ չասաց իմ մասին: Քեբալինը լսածից ավելի զիտեմալ չէր կարող: Եվ, այնուամենայնիվ, արքան հավատում է, որ ես դավադրության պարագլուխն եմ:

6. Մի՞թե Դիմնոսը կարող էր բաց թողնել այն մարդու անունը, որին հետևում էր: Նա պետք է, թեկուզ և սուտ, տար իմ անունը դավադրության մասնակիցների հարցի մասին խոսելիս, որպեսզի ավելի հեշտությամբ համոզեր նրան, ով իրեն փորձում էր: 7. Չէ՞ որ նա իմ անունը բաց է թողել ոչ թե ոճրագործութիւնը բացահայտվելուց հետո, այդ ժամանակ կարող է թվալ, որ նա խնայում է իր դաշնակցին: Նիկոմաքոսը տեղեկացրել է նրանց մասին, ուղբեր, ինչպես և ինքն է կարծում, չէին մտնի իր գաղտնիքը, սակայն տալով բուրբի անունները, միայն իմ անունն է բաց թողել: 8. Խնդրում եմ ձեզ, զինվոր ընկերներ, ասել, եթե Քեբալինը շղիմեր ինձ և ինձ լրիվ անտեղյակ պահեր դավադրության մասին, արդո՞ք ես այսօր կանգնած կլինեի ձեր դատի առջև, երբ ոչ ոք իմ անունը չէր տվել: 9. Դիմնոսը, եթե ողջ լիներ, իհարկե կպաշտպաներ ինձ: Իսկ մյուսները: Ով ցանկանում է խոստովանել իր մեղքը, նա, անշուշտ, ոչինչ չի ասի իմ մասին. շար բախտը դառն է, և իր մեղքերի համար տանջվողը անտարբեր է լինում ուրիշի տառապանքներին: 10. Մի՞թե այդքան մեղավորներից ոչ ոք ճշմարտութիւնը չի ասի, նույնիսկ խոշտանգումների ժամանակ: Եվ, այնուհանդերձ, ոչ ոք չի զթում մահվանը դատապարտվածին, այո, ըստ իս, նա ինքն էլ ոչ որի չի կարեկցում»:

11. «Ես պետք է վերադառնամ միակ ճշմարտացի մեղադրանքին, թե ինչու՞ եմ ես լուր ինձ ասվածի համար: Ինչու՞ եմ լսել այդքան անհոգությամբ: Ինչ էլ որ եղած լինի, սակայն այդ զանցանքը, երբ ես խոստովանեցի այն, դու, Ալեքսանդր, ներեցիր, և ինձ տվեցիր քո աջ ձեռքը ի նշան հաշտեցման, և ես մասնակցեցի քո խրախճանքին: 12. Եթե դու ինձ հավատացել ես, ապա ես մաքուր եմ կասկածներից, եթե դու ինձ խնայել ես, ապա մի փոխիր քո որոշումը: Ի՞նչ արեցի ես անցյալ զիշեր, երբ հեռացա քո սեղանից: Ո՞ր քեզ հայտնի դարձած նոր հանցադրծութիւնն է ստիպել քեզ փոխել որոշումդ: 13. Ես խոր քնած էի, երբ ինձ, իմ դժբախտություններով տանջվածիս, արթնացրին իմ թշնամիները, որպեսզի կապանքներ դնեն վրաս: 14. Այդ ե՞րբ է պատահել, որ դավադիրը և մարդասպանը խորքուն մտնի: Հանցագործները չեն կարող հանգիստ քնել. նրանց տանջում է խղճի խայթը, և վրեժի շատ աստվածուհիներ բերբերում են նրանց հոգին ոչ միայն այն ժամանակ, երբ հանցագործութիւնը կատարված է, այլև երբ այն դեռ միայն մտա-

դրությունն է: Ինձ սարսափից ազատել է ինչպես իմ անմեղութ-
յունը, աշնպես և քո աչքը. ևս չէի վախենում, որ դու կարող ևս
ավելի շուտ ենթարկվել ուրիշների դատանությանը, քան քո
գթասրտությանը: 15. Սակայն մի զոջա, որ հավատացել ևս
ինձ. չէ՞ որ ինձ ամեն ինչ պատմել էր մի հասարակ պատանի,
որն ի վիճակի չէր ներկայացնելու իր խոսքերի որևէ վկայի, որևէ
գրավական, և որը տակն ու վրա կաներ բոլորին, և թե նրան
լսեին: 16. Դժբախտաբար, ևս կարծեցի, թե իմ ականջին են
հասցնում սևուամուրի և նրա սիրեկանի դժտության մասին, և ինձ
կասկածելի թվաց, որ ինքն անձնապես չի եկել ինձ մոտ, այլ
ուղարկել է իր եղբորը: 17. Ես վախենում էի, որ նա կհրաժար-
վի Քերպլինին տրված իր հանձնարարությունից, և ևս արքայի
շատ ընկերների համար վտանգի պատճառ կդառնամ: 18. Նույ-
նիակ երբ ևս ոչ մեկին չեմ դիպել, գտնվել է մարդ, որ ցանկա-
ցել է իմ կործանումը, իսկ ինչքան թշնամիներ ևս ձեռք կրե-
րեի, և թե մեղադրեի անմեղներին: 19. Բայց դուք ասացեք, չէ՞
որ Դիմնոսը ինքնասպան է եղել: Իսկ կարո՞ղ էի ևս արդոք դա
կանխատեսել: Իհարկե, ոչ: Այսպիսով, հաղորդումը հաստա-
տող միակ փաստը ինձ վրա դեռ ազդել չէր կարող, երբ ևս խո-
սում էի Քերպլինի հետ:

20. «Երգվում ևս աստվածներով, և թե ևս Դիմնոսի մեղսու-
կիցը լինեի, ապա ամբողջ երկու օր ևս նրանից չէի թաքցնի, որ
մեզ դավաճանել են. չէ՞ որ հեշտ էր ճանապարհից վերացնել
հենց Քերպլինին: 21. Եվ վերջապես նրանից հետո, երբ ինձ այդ
լուրը հայտնում են, որից ևս պետք է մեռնեմ, ևս մենակ մտել
եմ արքայի ննջարանը սուրը ձեռքիս: Ինչո՞ւ ևս ոճրագործությու-
նը հենց այդ պահին չեմ կատարել: Թե՞ ևս չէի համարձակվի
այդ անել առանց Դիմնոսի: 22. Նա, ուրեմն, եղել է դավադրու-
թյան պարագլուխը, իսկ ևս, Փիլոտոսը, որը նրաղում է Մակե-
դոնիայի գահի մասին, թաքնվել եմ նրա ստվերում: Ձեզանից
որևէ մեկը կաշառվե՞լ է նվերներով: Առաջնորդներից ո՞ր մե-
կին, ո՞ր պրեֆեկտին եմ ևս հատուկ ուշադրության արժանաց-
րել: Ինձ նույնիսկ մեղադրում են այն բանում, որ ևս արհամար-
հում եմ իմ մայրենի լեզուն և Մակեդոնիայի սովորությունները:
Ստացվում է, թե ևս ձգտում եմ իշխանության այն բանի վրա,
ինչն արհամարհում եմ: Արդեն վաղուց իմ մայրենի լեզուն դա-
դարել է հաղորդակցության միջոց լինելուց ուրիշ ժողովուրդնե-
րի հետ. և թե՞ հաղթողները, թե՞ պարտավածները ստիպված են

ուրիշի լեզու սովորել: 24. Դա, երգվում ևս աստվածներով, դեռ
աշքան վիրավորական չէ ինձ համար, քան այն, որ Ամիլիա-
սը՝ Պերդիկոսի որդին, մասնակցել է արքայի դեմ կազմա-
կերպված դավադրությանը: Ես չեմ հրաժարվում նրա հետ
ընկերություն անելու նախատիքից: Թե՞ ևս լպետք է մտախու-
թյուն անեի արքայի եղբոր հետ: 25. Բայց ի՞նչ պետք է հար-
գել այդքան բարձր դիրք ունեցող մարդուն, հարց է առաջա-
նում, մեղավո՞ր եմ արդոք ևս, որ ևս չեմ գուշակել դա, թե
պետք է նաև մեռնեն հանցագործների՝ ոչնչում մեղք չունեցող
ընկերները: Եթե դա արդարացի է, ապա ինչո՞ւ եմ ևս մինչև
այժմ ողջ: 26. Ես իսկապես գրել եմ, որ խղճում եմ մարդկանց,
որոնք ստիպված են ապրել իրեն Յուպիտերի որդի համարող
անձնավորության գայիսոնի ներքո: Մ, հավատ բարեկամու-
թյան, օ՞, անկեղծ խորհուրդներ տալու վտանգավոր ազատու-
թյուն, դուք դավաճանեցիք ինձ, դուք ներշնչեցիք ինձ լուր
այն մասին, ինչ մտածում էի: 27. Ես ընդունում եմ, որ գրել եմ
այդ բայց իրեն արքային և ոչ արքայի մասին, ևս չէի ցանկա-
նում նրա հանդեպ ատելություն բորբոքել, այլ երկյուղում էի
նրա համար: Ինձ թվում էր, որ Ալեքսանդրին ավելի արժանա-
վայել է լուսթյամբ իր մեջ ճանաչել Յուպիտերի սերմերը, քան
այդ մասին ի լուր բոլորի հայտարարելը: 28. Բայց քանի որ
բոլորը հավատում են պատգամախոսին, թող աստված վկա լինի
իմ դործին, պահեք ինձ կապանքների մեջ մինչև Ամոնի շահրե-
նեք, արդո՞ք ևս գաղտնի հանցագործություն ծրագրել եմ:
Մեր արքային իր որդի ճանաչողը չի հանդուրժի, որպեսզի
գաղտնի մնան իր սերնդի դեմ նյութված դավերը: 29. Եթե դուք
գտնում եք, որ խոշտանգումներն ավելի ճիշտ միջոց են, քան
պատգամախոսը, ևս ճշմարտությունն իմանալու այդ միջոցից
չեմ հրաժարվում:

30. «Նման հանցագործություններում մեղադրյալները սովո-
րաբար դատի են բերում իրենց բարեկամներին: Ես վերջնա
կորցրեցի իմ երկու լեքայրներին, հորս չեմ կարող բերել և
նույնիսկ չեմ համարձակվում դիմել նրան, քանի որ ինքն էլ է
մեղադրված նույն հանցագործության մեջ: 31. Մի՞թե բավա-
կան չէ, որ այդքան որդիների հայրը, իսկ այժմ որպես մխի-
թարություն միայն մեկն ունեցողը, պիտի կորցնի և այդ վեր-
ջինին, և թե իհարկե նրան էլ չգնեն իմ թաղման խարույկի վրա:
32. Այսպիսով, թանկագին հայր, դու կմեռնես իմ պատճառով և

ինձ հետ միասին. այդ ես եմ խլում քո կյանքը, ես եմ կտրում քո կյանքի թելը: Ասա, ինչու՞ դու ինձ՝ դժբախտիս, աշխարհ բերեցիր աստվածների կամքին հակառակ: Արդո՞ք այն բանի համար, որ իմանաս իմ ճակատագրի և քեզ սպասվող ճակատագրի մասին: 33. Չգիտեմ, թե ինչն է ավելի արժանի արհուսանքի՝ իմ երիտասարդությունը թե քո ծեղուխությունը, Ես մեռնում եմ ուժերիս ծաղկման շրջանում, իսկ դահճը քո կյանքը կառնի, որք, եթե ճակատադիրը ցանկանար սպասել, բնությունը ինքն է արդեն պահանջում քեզանից: 34. Իմ հոր մասին հիշատակումը համոզում է ինձ, թե ինչպիսի երկշտուրթյամբ ու անվճռականությամբ պետք է ես հայտնեի այն մասին, ինչ ինձ ասել էր Քերպլինը: Չէ՞ որ, երբ Պարմենիոնը, տեղեկանալով, որ բժիշկ Փիլիպոսը արքայի համար թույն է պատրաստել, նրան նամակ էր գրել, որպեսզի նախազգուշացնի նրան շնորհունել զնդր, որը բժիշկը որոշել էր տալ նրան: 35. Մի՞թե հոքս հավատացին: Մի՞թե այդ նամակը որևէ նշանակություն ունեցաւ: Իսկ ես ինքս, հաճախ հայտնելով այն մասին, թե ինչ եմ լսել, ենթարկվում էի ծաղրանքի իմ գյուրահավատության համար: Եթե մեր երկուսից զգո՞հ են, երբ նախազգուշացնում ենք, և կասկածում են մեզ, երբ մենք լռում ենք, ապա ի՞նչ պիտի անենք: 36. Եվ երբ մոտիկ կանգնածներից մեկը բացականչեց. «Մեկական բարեգործների զեմ դավադրություն չկազմակերպել», Փիլոտոսը պատասխանեց. «Թու ճիշտ ես ասում, ով էլ որ լինես»: 37. Այսպես, եթե ես դավադիր եմ, ես շեմ խնդրում ազատել ինձ պատժից, և ավարտում եմ իմ ճառը, քանի որ իմ վերջին խոսքերը ձեզ ահա՞ թվացին: Եվ նրան հսկող մարդիկ տարան նրան:

XI. Զորավարների մեջ էր Բուրնեսը՝ քաղաքի մարտիկը, սակայն անփորձ խաղաղ ժամանակվա քաղաքացիական սովորույթներին, հին զինվոր հասարակ ժողովրդից, որը հասել էր իր բարձր աստիճանին, 2. Այն ժամանակ, երբ բոլորը լռում էին, նա սկսեց համառորեն հիշեցնել, թե քանի-քանի անգամներ իր մարդկանց բռնել են իրենց դբաղեցրած տեղերից, որպեսզի Փիլոտոսի ստրուկների կեղտերը լցնեն այնտեղ, որտեղից բռնել են զինվորներին: 3. Թե ինչպես Փիլոտոսի ոսկով ու արծաթով բռնված սալերը քաղաքում ամենուր կանգնած էին, այն ղեկավարում, երբ զինվորներից ոչ մեկին թույլ չէին տալիս մոտենալ նրա կացարանին, բայց նրանց բռնում էր այդ փափկասունի

քունը պաշտպանելու համար գրված պահակախումբը ոչ այնքան աղմուկի պատճառով, որքան նույնիսկ հազիվ լսելի շշուռոցի համար: 4. Իրր, գլուղաբնակները մշտապես ենթարկվել են նրա ծաղրին. փոշուղացիներ ու պափուգոնցիներ¹⁶ էր անվանում նրանց մեկը, որը ծնունդով մակեդոնացի լինելով, չէր ամառում իր հայրենակիցներին ունկնդրել թարգմանչի օգնությամբ: 5. Ինչու՞ է նա այժմ ցանկանում հարցում անել Ամոնին: Չէ՞ որ նա Ալեքսանդրին էր որդի ճանաչած Յուպիտերին մեղադրել է տաի մեջ, իսկապես երկյուղելով, որ աստվածների պարզեները նախանձ կառաջացնեն: 6. Երբ նա շարժմտում էր իր արքայի ու ընկերոջ զեմ, Յուպիտերից խորհուրդ չէր հարցնում, իսկ այժմ նա խնդրում է ուղարկել պատգամախոսի մոտ, որպեսզի այդ ընթացքում նրա հայրը, որը կառավարում է Մարաստանը, իրեն վստահված դրամով սրիկաներ վարձի հանցագործություններ մասնակից դարձնելու համար: 7. Նրանք իրենք կուղարկեն Յուպիտերի մոտ, բայց ոչ թե պատգամախոսին հարցնելու այն մասին, թե ինչ են իմացել արքայից, այլ աստծուն շնորհակալություն հայտնելու և մեծազույն արքայի անվտանգության համար տրված երդումները կատարելու նպատակով: 8. Այնժամ հուզվեց ողջ հավաքը, և առաջինը սկսեցին աղաղակել թիկնապահները, որ դավաճանին պետք է պատառոտեն իրենց ձեռքերով: Եվ Փիլոտոսին տհաճ չէր լսել այդ քանի որ նա վախենում էր ավելի դաժան խոշտանգումներից:

9. Արքան, վերադառնալով հավաքատեղի, կամ անձամբ դիտելու խոշտանգումը, կամ էլ ավելի մանրազնին հետաքննելու գործը, հետաձգեց ժողովը հաջորդ օրը, ու թեև երկկոն վրա հասավ, կարգադրեց հրավիրել իր ընկերներին: 10. Համարյա բոլորն առաջարկում էին բարկոծել Փիլոտոսին մակեդոնացիներին հինավուրց սովորույթի համաձայն, սակայն Հեփեստիոնեսը, Կրատերոսը ու Քենոսը պնդում էին, որ նրանից ճշմարտությունը կորզվի խոշտանգումներով և նրանք, ովքեր մինչ այդ ուրիշ բան էին խորհուրդ տալիս, հակվեցին սրանց կարծիքին: 11. Դբանով էլ խորհուրդը ցրվեց, և Հեփեստիոնեսը Քենոսի ու Կրատերոսի հետ գնաց Փիլոտոսին հարցաքննելու: 12. Արքան պահելով Կրատերոսին և խոսելով նրա հետ, թե ինչի մասին, մնաց անհայտ, հետացավ իր ննջարանի խորքերը և ազատ ւրձակելով բոլորին, մինչև ուշ գիշեր սպասեց հարցաքննության արդյունքներին: 13. Դահիճները խոշտանգման իրենց բոլոր

գործիքները շարեցին Փիլոտեսի աշքի առջև 14. նա էլ իր հերթին հարցրեց. «Ինչո՞ւ եք դանդաղում սպանել արքայի թըշնամուն, իր հանցագործությունը խոստովանած մարդասպանին: Ինչի՞ համար է խոշտանգումը: Ես եմ ծրարել դա, ես եմ դա ցանկացել»: Կրատերոսը պահանջեց, որ նա հաստատի իր ասածը խոշտանգման ժամանակ 15. Հետո նրան բռնեցին, և մինչդեռ կապում էին աչքերը և պատառատում վրայի հագուստը, նա զուր կանչում էր իր հայրենիքի աստվածներին և վկայաբերում բոլոր ժողովուրդների օրենքները, դիմելով խլացած ականջներին: Այնուհետև նրան սկսեցին տանջել հնարամիտ միջոցներով, բանդի նա դատապարտված էր դրան, և նրան տանջում էին իր թշնամիները ի հաճույս արքայի: 16. Սկզբում, երբ նրան տանջում էին մեկ մտրակով, մեկ կրակով և ոչ այն բանի համար, որ ճշմարտությունն իմանան, այլ որպեսզի պատժեն նրան, նա ոչ միայն ձայն չհանեց, այլև զսպում էր տնջողները: 17. Սակայն երբ նրա՝ բազմաթիվ վերքերից՝ ուռած մարմինն այլևս չէր կարող դիմանալ մերկացած ոսկորներին հարվածող մտրակի հարվածներին, նա խոստացավ, որ եթե շափավորեն իր տանջանքները, ապա կասի այն, ինչ նրանք իրենից ցանկանում են: 18. Սակայն նա խնդրում էր, որ նրանք երզվեն արքայի կյանքով, որ կղաղարեցնեն խոշտանգումները և կհեռացնեն դահիճներին: Հասնելով թե մեկին, թե մյուսին, նա ասաց. 19. «Ասա, Կրատերոս, ի՞նչ ես ուզում լսել ինձանից»: Եվ երբ Կրատերոսը, կատաղած այն բանից, որ Փիլոտեսը ծիծաղում է իր վրա, հետ կանչեց դահիճներին, Փիլոտեսը սկսեց աղաչել, որ ժամանակ տան իրեն շունչ քաշելու, խոստանալով ասել այն ամենը, ինչ որ գիտի:

20. Այդ ընթացքում հեծյալները, բոլորն էլ ազնվական ծագումով և հատկապես Պարմենիոնի մերձավոր բարեկամները, հենց որ լուր տարածվեց Փիլոտեսին ենթարկած խոշտանգումների մասին, վախենալով մակեդոնական հինավուրց օրենքից, որի համաձայն արքայի դեմ մահափորձ կատարողի բարեկամները ենթակա են մահապատժի մեղավորների հետ միասին, մասամբ ինքնասպանություն գործեցին, մասամբ էլ փախան սարերն ու անապատները: Ողջ ճամբարը համակված էր սարսափով, մինչև որ արքան, տեղեկանալով այդ հուզումների մասին, չհայտարարեց, թե շեղվալ է համարում մեղավորի բարեկամների մահապատժի օրենքը: 21. Դժվար է ասել, արդյո՞ք Փիլոտես-

ը ցանկանում էր վերջ տալ իր տանջանքներին՝ ճշմարտությունը թե ստով. բանդի թե ճշմարտությունն ասողի, թե ստողի վերջը նույնն է: 22. Համենայն դեպս Փիլոտեսն ասաց. «Զեղ հայտնի է, թե ինչքան մտերիմ է եղել հայրս Հեզեղոթոսի հետ. ես այն Հեզեղոթոսի մասին եմ խոսում, որը զոհվեց ճակատամարտում: Նրանից էլ սկսվեցին մեր բոլոր դժբախտությունները: 23. Երբ արքան հրամայեց մեծարել իրեն որպես Զուպիտերի որդու, դրանից վրդովված Հեզեղոթոսն ասաց. «Մի՞թե մենք կճանաչենք արքային, որը հրաժարվել է իր հորից՝ Փիլիպոսից: 24. Մենք կկործանվենք, եթե թույլ տանք դա: Ով պահանջում է, որ իրեն աստված ճանաչեն, արհամարհում է ոչ միայն մարդկանց, այլև աստվածներին: Մենք կորցրեցինք Ալեքսանդրին, կորցրեցինք արքային և ընկանք բռնակալի իշխանության տակ, որն անտանելի է թե աստվածների, որոնց հավասարեցնում է իրեն, թե մարդկանց համար, որոնցից նա իրեն զատում է: 25. Մի՞թե մենք մեր արյան գնով աստված տեղծեցինք, որն արհամարհում է մեզ, տահնություն զգում մահկանացուների խորհուրդներից: 26. Հավատացե՛ք ինձ, և մենք կորդեզրվենք աստվածների կողմից, եթե քաջարի լինենք: Ի՞՞վ վրեժխնդրի կլինի Ալեքսանդրի մահվան համար՝ այս արքայի նախնու, և հետո Արքելաոսի ու Պերդիկոսի՞»¹⁷ համար: Ես ինքը ներել է իր հոր մարդասպաններին»: 27. Այդպես էր ասում Հեզեղոթոսը ճաշի ժամանակ, իսկ հաջորդ օրվա լուսաբացին ինձ կանչեց հայրս: Նա վշտացած էր և նկատեց, որ ես տխուր եմ, բանդի այն, ինչ մենք լսել էինք, հուզել էր մեզ: 28. Եվ այսպես, իմանալու համար, արդյո՞ք Հեզեղոթոսն ասել էր դա հարբած ժամանակ, թե ավելի կարևոր պատճառով, մենք որոշեցինք կանչել նրան: Նա եկավ և, կրկնելով այն ամենը, ինչ ասել էր մինչ այդ, ավելացրեց, որ եթե մենք որոշենք զլխավորել նրա մտահղացումը, նա կդառնա մեր ամենամերձավոր գործակիցը, իսկ եթե մենք բավարար քաջություն չունենենք, ապա կբողարկի իր պլանները: 29. Պարմենիոնին պլանը տարածամ թվաց, քանի դեռ ողջ էր Դարեհը. չէ՞ որ այդպիսով նրանք Ալեքսանդրին սպանած կլինեին ոչ թե իրենց համար, այլ թշնամու: Բայց երբ Դարեհը չլինի, ապա արքայի մարդասպանների պարզել կլինի Ասիան և ողջ Արևելքը: Այդ պլանը բնորոշվեց և վավերացվեց փոխադարձ երդումներով: 30. Դիմենոսի մասին ես ոչինչ չգիտեմ, սակայն հասկանում եմ, որ իմ

խոստովանութիւնն ից հետո ինձ օգուտ չի տա հրաժարվելը նրա ոճրագործութեանը մասնակից լինելուց»:

31. Սակայն դահիճները, կրկին գործի դնելով խոշտանգումները և նիզակներով խփելով նրա երեսին ու աչքերին, ստիպեցին նրան խոստովանել նաև այդ ոճրագործութիւնը: 32. Իսկ երբ նրանք պահանջեցին, որ նա պատմի պլանի իրագործման հերթականութեան մասին, նա պատասխանեց, որ իրենք երկյուղում էին, որ Ալեքսանդրը երկար կմնա Բակտրայում, իսկ իր յոթանասունամյա հայրը, որը մեծ բանակ էր գլխավորում և պահպանում հարուստ գանձարանը, կմեռնի և, ինքը զրկվելով նման հնարավորութիւններից, առիթ չի ունենա սպանելու արքային: 33. Այդ պատճառով նա շտապում էր իրագործել իր պլանը, քանի ղեռ առավելութիւնն իր կողմն էր: Իր հայրն այդ պլանին մասնակցութիւն չունէր, եթէ նրանք չեն հավատում իրեն, ապա, թեև նա այլևս չի դիմանում տանջանքներին, նա չի հրաժարվի, որ շարունակեն խոշտանգել: 34. Իրար հետ խորհրդակցելով, հարցաքննողները որոշեցին, որ նա հարկ եղածն ասաց և վերագրածն արքայի մոտ: Նա հրամայեց հաջորդ օրը հայտարարել Փիլոտոսի ցուցմունքները և նրան բերել, քանի որ նա ի վիճակի չէր քայլել: 35. Երբ Փիլոտոսը խոստովանեց ամեն ինչ, բերեցին Գեմետրոսին, որը մեղադրվում էր վերջին դավադրութեան մեջ: Նա համառորեն, ոգու ավելի մեծ արիւթյամբ և դեմքի արտահայտութեան կայունութեամբ ժխտում էր արքայի դեմ որևէ հանցագործ մտադրութիւն և նույնիսկ պահանջեց, որ իրեն էլ խոշտանգեն: 36. Այդ ժամանակ Փիլոտոսը, շուրջը նայելով, նկատեց իր կողքին կանգնած ոմն Կալիսոսի և կանչեց իր մոտ, իսկ երբ Կալիսոսը շվարելով հրաժարվեց մտտենալ նրան, Փիլոտոսն ասաց. «Մի՞թե դու թույլ կտաս, որ Գեմետրոսը ստի, իսկ ինձ նորից տանջեն»: 37. Կալիսոսը գունատվեց և լեզուն կապ ընկավ, և մակեդոնացիները կարծեցին, թէ Փիլոտոսը ցանկանում է վարկաբեկել անմեղ մի մարդու, քանի որ այդ պատանու անունը ոչ նիկոմաքոսն էր տվել, ոչ էլ Փիլոտոսը խոշտանգման ժամանակ: Սակայն, տեսնելով, որ ինքը շրջապատված է արքայի պրեֆեկտներով, Կալիսոսը խոստովանեց, որ ինքը Գեմետրոսի հետ միասին մտահոգացել է այդ ոճրագործութիւնը: 38. Այնժամ բոլորը, ում անունները տվել էր Նիկոմաքոսը, ազդանշանի համաձայն քարկոծվեցին ըստ հայրենական սովորույթի: 39. Այսպես Ալեքսանդրն ազատվեց

ու միայն մահվան, այլև առելութեան մեծ վտանգից, քանզի Պարմենիոնին ու Փիլոտոսին՝ նրա առաջին ընկեցներին, հնարավոր էր դատապարտել միայն մեղավորութեան ակնհայտ հանցանշանների առկայութեան դեպքում, այլապես կընդվզեր ողջ բանակը: 40. Այսպիսով, այդ գործի տպավորութիւնը երկակի էր. մինչդեռ Փիլոտոսը ժխտում էր իր մեղքը, թվում էր, թէ խոշտանգումները չափազանց դաժան էին, իսկ խոստովանութիւնն ից հետո նա կարեկցանք չէր հարուցում նույնիսկ իր ընկերներին մոտ:



ԳԻՐԷ VII

Եթե Փիլոտոսի հանցագործության թարմ հետքերի ազդեցության տակ զինվորները գտնում էին, որ նրան ըստ արժանվույն են մահապատժի ենթարկել, ապա, երբ նա արդեն չկար, նրանց ատելությունը վերածվեց կարեկցանքի: 2. Դրան նպաստեց պատանու փառքը և որդեկորույս հոր ծերությունը: 3. Պարմենիոնը առաջինն էր արքային ճանապարհ բացել զեպի Ասիա, նրա հետ գիսել էր բոլոր վտանգները, բոլոր ճակատամարտերում թեև ընկր եղել էր նրա հրամանատարության տակ. նա Փիլիպոսի առաջին ընկերն էր եղել և այնքան նվիրված Ալեքսանդրին, որ նա չէր ցանկացել ուրիշ որևէ այլ օգնական Ատալոսի սպանության ժամանակ: 4. Նման մտորումները տարածվում էին զորքում, իսկ խռովարար խոսքերի մասին հայտնում էին արքային: Դրանք նրան չէին հուզում և, բաշ գիտակցելով, որ անբանությունից եկող վնասը վերացվում է գործով, նա կարգադրեց բոլորին հավաքվել իր վրանի մոտ: 5. Տեղեկանալով, որ զինվորների ամբոխը հավաքվել է, նա դուրս եկավ ժողովի Աթարիոսը, անկասկած արքայի հետ նախապես համաձայնության գալով, պահանջեց, որպեսզի բերեն Ալեքսանդր կինկետացուն, որն ավելի վաղ էր մտադրվել սպանել արքային, բան Փիլոտոսը: 6. Երկու վկաների կողմից, ինչպես վերևում ասվեց¹, մերկացված կինկետացին արդեն երեք տարի էր շղթայված կր: Հայտնի էր, որ նա նույնպես Պավսանիոսի հետ մասնակցել էր դավադրությանը, որի նպատակը Փիլիպոսին սպանելն էր. սակայն բանի որ նա առաջինն էր ողջունել Ալեքսանդրին որպես արքայի, նրան հաջողվեց խուսափել մահապատժից, բայց ոչ

մեղադրանքից: 7. Այդ ժամանակ էր, որ նրա աներոջ՝ Անտիպատոսի պաղատանքը զսպեց արքայի օրինական ցասումը: Սակայն Ալեքսանդրի հանդարտված ցասումը կրկին ուժգնացավ. նոր տազնապները ստիպեցին հիշել անցյալի վտանգները: 8. Այսպիսով Ալեքսանդրին (կինկետացուն) բերեցին կալանքի տեղից և հրամայեցին խոսել: Բայց թեև նա երեք տարիների ընթացքում խորհրդածել էր իր արդարացման ճանի շուրջը, շփոթմունքից ու հուզմունքից շատ քիչ բան ասաց այն ամենից, ինչ նախապատրաստել էր. վերջում նրան դավաճանեց ոչ միայն հիշողությունը, այլև բանականությունը: 9. Ոչ ոք չէր կասկածում, որ նրա հուզմունքը խղճի խայթի և ոչ թե տկար հիշողության վկայություն է: Այդպիսով, մոտիկ կանգնած զինվորները խոցեցին նրան նիզակներով, մինչ նա կպայքարեր իր մոռացկոտության դեմ:

10. Երբ նրա դիակը հեռացրին, արքան հրամայեց բերել Ամինտոսին և Սիմիոսին. նրանց կրտսեր եղբայրը՝ Պուլմոնեսը, փախել էր, տեղեկանալով, որ Փիլոտոսին ենթարկում են խոշտանգումների: 11. Սրանք Փիլոտոսի մերձավորագույն ընկերներն էին, որոնք առաջ էին քաշվել բարձր և պատվավոր պաշտոնների առավելապես նրա միջնորդությամբ, արքան հասկանում էր, թե ինչպիսի համառությամբ էր Փիլոտոսը ձգտում մերձեցնել նրանց իր անձին և դրա համար էլ չէր կասկածում, որ նրանք նույնպես մասնակցել են այս վերջին դավադրությանը: 12. Եվ այսպես, նա հայտարարեց, որ նրանք վաղուց արդեն իր մեջ կասկածներ են առաջացրել շնորհիվ իր մոր նախազգուշացումների, որն իրեն զբեւ էր, որ զգուշանա նրանցից: Թեև նա զժկամությամբ էր հավատում վատթարագույնին, այժմ ստիպված է նահանջել ակնհայտ հանցանշանների առջև և հրամայեց կապկպել նրանց: 13. Զե՞ որ, անկասկած, Փիլոտոսի շարագործության բացահայտման նախօրին նրանք գաղտնի տեսակցություն են ունեցել նրա հետ, նրանց եղբայրը փախել էր Փիլոտոսի գործի հետաքննության ժամանակ, և դրանով իսկ հայտնի դարձրել իր փախուստի պատճառը: 14. Վերջերս, հակառակ սովորույթի և ծառայելու բուռն ձգտման պատրվակի տակ, հետ մղելով մնացած ընկերներին, նրանք մոտեցան իրեն առանց որևէ ակնհայտ պատճառի, այնպես որ ինքը զարմացավ, թե ինչու են նրանք ծառայում ոչ իրենց հերթին և, վախեցած նրանց շվարումից, արագ հեռացավ զեպի իր հետևից եկող զինակիրներ-

ըր: 15. Բացի այդ, երբ Փիլոտեսի հանցագործության բացահայտման նախօրեին հեծելազորի գրագիր Անտիփանոսը Ամինտոսից պահանջեց, որպեսզի նա, սովորությի համաձայն, իր ձեռքից հատկացնի նրանց, ովքեր կորչրել են իրենցը, նա գոտոզբար պատասխանեց, որ եթե Անտիփանոսը չհրաժարվի իր պահանջներից, ապա շուտով կիմանա, թե ում հետ գործ ունի: 16. Այդ լկտի և անխոհեմ բառերը, որոնք իրականում ուղղված էին արքային, ոչ այլ ինչ են, քան հանցավոր մտադրությունների վկայություն: Եթե այդ ամենը ճշմարիտ է, ուրեմն նրանք էլ արժանի են նրան, ինչին և Փիլոտեսը, իսկ եթե ոչ, ապա նա պահանջում է, որ նրանց արդարացնեն: 17. Այնուհետև բերեցին անտիփանոսին, և նա ցուցում տվեց, որ մեղադրյալը ձեռք չի տվել և դրա հետ միասին գոտոզբար սպառնացել է:

18. Ամինտոսը, խոսելու թույլտվություն ստանալով, ասաց. «Եթե արքան համաձայնի, ես խնդրում եմ իմ վրայից կապանքները այնքան ժամանակ հանել, քանի դեռ ես խոսելու եմ»: Արքան հրամայեց երկուսին էլ ազատել կապանքներից և, բացի այդ, նիզակ տալ Ամինտոսին, որը ցանկանում էր, որպեսզի իրեն վերադարձնեն զինակրի տեսքը: 19. Չախ ձեռքով վերցնելով այն և հեռանալով այն տեղից, որտեղ քիչ առաջ ընկած էր Ալեքսանդրի դիակը, նա ասաց. «Արքա՛, ինչպիսի ճակատագիր էլ մեզ վիճակված լինի, մենք հայտարարում ենք, որ երջանկության համար մենք բեզ պարտական կլինենք, իսկ գժբախտության դեպքում կմեղադրենք ճակատագրին»: 20. Մենք ազատ մարմնով ու հոգով դատարանին պատասխանում ենք, չվախենալով վաղաժամ որոշումից: Դու մեզ նույնիսկ զենքը վերադարձրիր, որով մենք սովորաբար ուղեկցում ենք բեզ: Մենք չենք վախենա մեր գործից և կզաղարենք վախենալ ճակատագրից: 21. Խնդրում եմ թույլ տուր ինձ սկզբից պատասխանել քո վերջին մեղադրանքին: Արքա, մենք ամենեին չենք ընդունում այն մեղքը, որ իբր մտադրություն ենք ունեցել քո մեծությունը խոսքով՝ անպատվելու: Ես կասեի, որ դու արգեն վաղուց շատ ավելի բարձր ես կանգնած որևէ մեկին նախանձեղուց, եթե չեք կյուղեի, որ դու հանկարծ մտածես, թե շողքորթության մեջ ես ցանկանում եմ քավել իմ նախկին շարախոսությունը: 22. Այնուամենայնիվ, եթե որևէ մեկը նույնիսկ լսել է արշավանքից ուժասպառ եղած կամ ճակատագրի վտանգը զգացած կամ հիվանդ և վրանում իր վերջերը բուժող քո զինվորի ասած ինչ-որ զոհհիվ բառեր, ապա

ձեք սխաղործություններով մենք արժանացել ենք նրան, որ այդ բառերը չու վերագրես իրադրությունը և ոչ մեր կամքին: 23. Երբ որևէ գժբախտություն է պատահում, մեղավոր են բոլորը: այդ դեպքում մենք պատրաստ ենք վերջ տալ մեր կյանքին, թեև մենք ոչ մի ատելություն չունենք մեր հանդեպ: Եթե ծնողները հանդիպում են զավակներին, նույնիսկ նրանք են դառնում տհաճ ու ատելի:

Եվ ընդհակառակը, երբ մեղ առատորեն պարգևատրում են, երբ մենք վերադառնում ենք, ծանրացած պարգևներով, արդյոք բոլորի՞ն է հաճելի մեր տեսքը: Ո՛վ կարող է զսպել մեր երջանկության պոթիկումը: Զինվորի թե զայրույթը և թե ուրախությունը սահման չունի: Մենք ենթարկվում ենք կրքերի պոթիկումներ: Կշտամբում ենք մենք թե գովաբանում, կարեկցում ենք թե վրդովվում, այդ բոլորը կատարվում է տրամադրության ազդեցության տակ: Մենք մեկ ուզում ենք զնալ Հնդկաստան և օվկիանոսի ափերը, մեկ հիշում մեր կանանց, զավակներին և հայրենիքը: 25. Սակայն զրուցակիցների մտքերն ու խոսքերը ընդհատվում են ռազմերթի ազդանշանով: մենք բոլորս վազում ենք մեր շարքերը, և ողջ զայրույթը, որն առաջացել էր ձեռ վրաններում, թափում ենք թշնամու գլխին: Ա՛խ, եթե Փիլոտեսի մեղքն էլ միայն բառերը լինեին»:

26. «Սակայն ես վերադառնում եմ նրան, ինչում մեղ մեղադրում են: Ես չեմ պատրաստվում ժխտել այն բարեկամությունը, որը եղել է մեր և Փիլոտեսի միջև և ընդունում եմ, որ դրանցից մենք մեծ օգուտ ենք քաղել: 27. Բայց ինչո՞ւ ես զարմանում, որ մենք հարգել ենք Պարմենիոնի որդուն, որին դու ցանկացար դարձնել քո ամենամերձավորը: Զե՛ք որ Փիլոտեսն էլ իր դիրքով գերազանցեց քո բոլոր ընկերներին: 28. Երզվում եմ աստվածներով, որ դու ինքզ, արքա, եթե ցանկանում ես լսել ճշմարտությունը, մեղավոր ես մեղ սպառնացող վտանգի համար: Ուրիշ ո՞վ, եթե ոչ դու, բեզ հաճույանալ ցանկացողներին ստիպում էիր դիմել Փիլոտեսին: Նրա հանձնարարականներով մենք հասանք քո բարյացակամության այս աստիճանին: Նա քո մերձավորն էր: մենք ձգտում էինք նրա ողորմությանը և սարսափում ցասումից: 29. Արդյո՞ք մենք, քո հպատակները, չէինք կրքվում, համարյա քո հետից կրկնելով քո բառերը, որ քեզ հետ միասին պիտի ունենանք ընդհանուր թշնամիներ ու բարեկամներ: Արդյո՞ք, կապված լինելով այդ սրբազան երզու-

մով, մենք կարող էինք երես թեթիլ հենց այն մարդուց, որին դու առավելութիւն էիր տալիս: 30. Այսպիսով, եթե դա հանցագործութիւնն է, ապա ողջ գործում քիչ անմեղներ կըտանես. ես պատրաստ եմ երզնելու, որ նույնիսկ ոչ մի հոգու Չէ՞ որ բոլորն են ցանկացել Փիլոտոսին ընկեր դառնալ, բայց ոչ բոլորն են գրան հասել: Եթե դու տարբերութիւն չես տեսնում հանցագործութիւն մեղսակիցների և ընկերների միջև, դու չես կարողանա բարեկամներին տարբերել նրանցից, ովքեր ցանկացել են միայն այդպիսին դառնալ: 31. Եվ ինչպիսի՞նք են ապացուցում մեր մասնակցութիւնը նրա մտադրութիւններին: Ինչպես ես եմ վարժում, հենց նրանով, որ դավադրութիւնն քացահատման նախօրեին Փիլոտոսը գրուցել է մեզ հետ բարեկամարար և առանց վկաների: Ես, իհարկե, չէի կարողանա արդարանալ, եթե այդ օրը խախտած լինեի իմ նախկին կյանքի և սովորութիւնների ընթացքը: Իսկ եթե այդ ճակատագրական օրը մենք պահել ենք մեզ ինչպես սովորարար, ապա մեր սովորութիւնները պետք է ազատեն մեզ կասկածներից»:

32. «Բայց ասում են, թե մենք Անտիփանոսին ձիեր չենք տվել: Եվ այդ ընդհարումը Անտիփանոսի հետ տեղի է ունեցել Փիլոտոսի դավադրութիւն նախօրեին: Եթե Անտիփանոսը ցանկանում է կասկածներ հարուցել մեր դեմ, որովհետև մենք այդ օրը նրան ձիեր չենք տվել, ապա ինքն էլ չի կարող արդարանալ, քանզի ցանկացել է ստանալ ձիերը հենց այդ օրը: 33. Դժվար է որոշել, ով է մեղավոր, եթե իհարկե, հաշվի շառնենք, որ սեփականութիւնը պաշտպանողը ավելի ճիշտ է վարվում, քան ուրիշները պահանջողը: 34. Ի դեպ, արքա, սկզբից ես տասը ձի ունեի. Անտիփանոսը դրանցից ութը արդեն բաշխել էր նրանց, ովքեր կորցրել էին իրենցը: Այսպիսով, ինձ մնացել էր երկու ձի, որոնք նույնպես ուզում էր տանել այդ շափազանց գոռոզ, և, փհարկե, անարդարամիտ մարդը: Բայց ես ստիպված էի դրանք պահել ինձ, որպեսզի հետիտուն չկուլեմ: 35. Ես չեմ քացասում, որ անկաշկանդ եմ խոսել այն անբանի հետ, որը միայն հավակնում է ռազմական այն պարտականութիւնը, ըստ որի պետք է բաշխի ուրիշի ձիերը մարտի գնացողների միջև: Բայց ահա այնպիսի ժամանակներ եկան, որ ես ստիպված եմ իմ ճառում քաղատրութիւն տալ միաժամանակ թե՛ Ալեքսանդրի և թե՛ Անտիփանոսի առջև»: 36. Բայց քո մայրը մեր մասին քեզ գրել է որպես քո թշնամիների: Ա՛խ, եթե նա հոգար իր որդու մասին

ավելի խելամտորեն և իր անհանդստացած հոգում դատարկ ապահովներ շտնողծեր: Իսկ ինչո՞ւ նա չի նշել իր կասկածները պատճառը: Վերջապես ինչո՞ւ նա չի տվել այն մարդու անունը, որը զաղտնի ամբաստանել է նրան մեր մասին: Մեր ո՞ր գործադրութիւնները կամ խոսքերն են հարկադրել նրան գրել քեզ մայրքան տաղնապալից նամակ: 37. Ա՛խ, դառն է իմ վիճակը, երբ լուրը, թերևս, սակավ վտանգավոր է, քան խոսելը: Սափայն ինչով էլ վերջանա դատը, դու ավելի լավ է դատապարտիր իմ անխոհեմ ինքնապաշտպանութիւնը, քան իմ գործը: Գու, այնուհանդերձ, կընդունես այն, ինչ հիմա ես կասեմ. հիշո՞ւմ ես, թե ինչպես զորք հավաքելու համար Մակեդոնիա ուղարկելիս, ասացիր ինձ, որ շատ առողջ պատանիներ են թաքնվում մորդ տանը: 38. Դու ինձ պատվիրեցիր ենթարկվել միայն քո հրամանին և բերել զինվորական ծառայութիւնից խուսափողներին: Ես արեցի այդ և կատարեցի՝ քո հրամանը ավելի համարձակորեն, քան դա ինձ անհրաժեշտ էր, երևելով իմ շահերից: Ես բերեցի Գորգիսոսին, Հեկատոսոսին և Գորգիդեսոսին, որոնք քեզ բարի ծառայութիւն են մատուցում: 39. Եվ այսպես, ինչը՞ կարող է ավելի անարդարացի լինել, քան ինձ մահապատժի ենթարկելը այն բանի համար, որ ես կատարել եմ քո հրամանը, այն դեպքում, երբ չկատարելով քո հրամանը՝ ես պետք է համաձայն օրենքի պատիժ կրեի: Քո մայրը մեզ հետապնդելու ուրիշ պատճառ չունի, բացի նրանից, որ նրա կանացի բարյացակամութիւնն փոխարեն գերադասեցինք քո շահերը: 40. Ես բերեցի վեց հազար մակեդոնացի հետևակային և 600 հեծյալ, այդ մարդկանց մի մասը չէր հետևի ինձ, եթե ես ներողամիտ գտնվեի զինվորական ծառայութիւնից խուսափողների հանդեպ: Այդ պատճառով, հանդստացրու քո մորը, քանի որ նա զայրանում է մեզ վրա նշված պատճառով և դու ինքդ մեզ արժանացրիր նրա ցասմանը»:

II. Մինչդեռ Ամինտոսը ասում էր դա, անսպասելի ժամանեցին զինվորները, որոնք հասել և բռնել էին նրա փախստական եղբորը՝ Պոլեմոնեսին, որի մասին ասվել էր, և այժմ նրան կապկալված բերեցին: Դժվար էր զսպել զայրացած ամբուխին, որպեսզի նա, սովորութիւն համաձայն, չբարկոծեր նրան: 2. Սակայն նա առանց որևէ վախի ասաց. «Ես ներողամտութիւն չեմ խնդրում. միայն թող իմ փախուստը մեղադրանք չդառնա իմ անմեղ եղբայրների համար, թող դա լինի միայն

իմ հանցագործութիւնը: Նրանց վիճակն արդեն ավելի բարձր է իմից, քանզի իմ փախուստով միայն ես եմ կասկած առաջացնում: 3. Ողջ հավաքը հավանութիւն ավելց նրա խոսքին: Ապա բոլորը արտասովեցին. մարդկանց տրամադրութիւնը այնքան անսպասելի փոխվեց, որ այն ամենը, ինչ մինչ այդ ի վնաս նրա էր, այժմ հանդես էր դալիս հօգուտ նրա: 4. Նա հազիվ պատանի լիներ: Գտնվելով Փիլոտեսի խոշտանգումներից սարսափած հեծյալների միջև, նա տեղի էր ավել ընդհանուր խուճապին: Լքված իր ընկերների կողմից, նա տատանվում էր՝ վերադառնալ թե շարունակել փախուստը. հենց այդ ժամանակ էլ նրան բռնել էին հետապնդողները: 5. Նա սկսեց լաց լինել ժողովականների առջև և խփել իր դեմքին, զանգատվելով ոչ թե իր բախտից, այլ իր պատճառով վտանգի մեջ հայտնված եղբայրների ճակատագրից: 6. Նրան արդեն հաջողվել էր շարժել ոչ միայն զինվորների, այլև արքայի խղճմտանքը. անդրդվելի էր մնացել միայն եղբայրը: Նրա վրա նայելով կատաղի հայացքով, եղբայրն ասաց. «Նեկազար, դու այն ժամանակ պետք է լացեիր, երբ խթանում էիր ձեռք, լքելով եղբայրներիդ և միանալով դասալիքներին: Թշվառ, ո՞ւր և ինչի՞ց էիր փախչում: Դու ստիպեցիր ինձ, որին մեղադրել են քրեական հանցագործության մեջ, ելույթ ունենալ մեղադրողի ճառով»: 7. Նա խոստովանեց, որ մեղավոր է, սակայն ավելի շատ եղբայրների, քան իր առջև: Այդտեղ ամբոխը ազատութիւն ավելց արցունքներին և աղաղակներին, որոնցով այն, սովորաբար, արտահայտում է իր տրամադրութիւնը: Բոլորի ձայները մեկ դարձան, որ գթութիւն էր պահանջում անմեղ, քաջ մարդկանց համար: Եվ ընկերները, օգտվելով կարեկցութիւն առաջացնելու առիթից, վեր կացան և արցունքներն աչքներին գթութիւն պաղատեցին արքայից: 8. Երբ լուծութիւն տիրեց, նա ասաց. «Նա նույնպես իմ վճիռով հանում եմ մեղադրանքը Ամինտոսի և նրա եղբայրների վրայից: Իսկ ձեզ, պատանիներ, ևս ցանկանում եմ, որ դուք ավելի շուտ մոռանաք իմ ողորմածութիւնը, քան հիշեք անցկացրած վտանգի մասին: Վերադարձեք ինձ մոտ այն նույն հավատով, որով ես ձեզ կրկին ընդունում եմ: 9. Եթե ես չհետաքննեի ձեր հանդեպ արված դադանի ամբաստանութիւնը, ինձ կարող էին կասկածել մեծ երկիրեսանիութիւն մեջ: Սակայն ավելի լավ է արդարացված լինել, քան մնալ կասկածների ծանրութիւն տակ: Մտածեք, որ արդարացված կարող է լինել մի-

այն նա, ով պաշտպանվում է դատի ժամանակ: 10. Դու, Ամինտոս, ներիր եղբորդ: Դա ինձ համար էլ կլինի իմ հանդեպ քո ունեցած անկեղծ մտերմութիւն վերականգնման գրավական»: 11. Այնուհետև, ցրելով հավաքը, արքան հրամայում է կանչել Պոլիդամանտոսին: Նրան հատկապես սիրում էր Պարմենիոնը և ճակատամարտերում սովորաբար կանգնում էր նրա կողքին: 12. Նա արքայի վրան մտավ մարտը խղճով, սակայն, երբ նրան հրամայեցին բերել իր եղբայրներին՝ բոլորովին երիտասարդ և այդ պատճառով արքային անծանոթ, նրա հաստատակամութիւնը փոխարինվեց անհանգրստութիւն, և նա սկսեց հուզվել, ավելի շատ մտածելով այն մասին, թե ինչը կարող է իրեն վնասել, քան այն մասին, թե ինչպէս արդարանալ: 13. Եղբայրների հետևից ուղարկված զինակիրներն արդեն բերել էին նրանց, երբ սարսափից մեռելագույն Պոլիդամանտոսին արքան հրամայեց ավելի մոտենալ և հեռացնելով բոլորին, ասաց: 14. «Պարմենիոնի ոճրագործութիւնը հավասարաշափ վերաբերում է բոլորին, սակայն առավելապես ինձ և քեզ, որոնց նա խարել էր ընկեր ձեռնալով: Նրան հետապնդելու և պատժելու համար (տես, թե ես ինչքան եմ վստահում քո հավատարմութիւնը) ես որոշել եմ դիմել քո օգնութիւնը: Մինչ դու այն կկատարես, քո եղբայրները կմնան ինձ մոտ որպէս պատանդներ: 15. Մեկնիր Մարաստան և տեղ հասցրու իմ ձեռքով գրված նամակները իմ զորավարներին: Անհրաժեշտ է սրբնթացութիւն, առաջ անցնելու համար արագաշարժ լուրից: Ես ցանկանում եմ, որ դու այնտեղ հասնես զիշերով և հաջորդ օրը կատարես այն, ինչ գրված կլինի նամակում: 16. Դու նամակներ կտանես նաև Պարմենիոնին՝ մեկը ինձանից, մյուսը՝ Փիլոտեսի անունից. նրա կնիքով մատանին ինձ մոտ է: Եթե հայրը հավատա, որ կնիքը իր որդին է դրել, քո երևալը չի վախեցնի նրան»:

17. Վախից ձերբազատված Պոլիդամանտոսը խոստոցավ անել նույնիսկ ավելին, քան իրենից պահանջվում էր: Լսելով գովասանքի խոսքեր և խոստումներ, նա իր հագուստը փոխեց արաբականով: 18. Նրան, որպէս ուղեկիցներ, երկու արաբ տվեցին, որոնց կանայք ու երեխաները մնացին արքայի մոտ որպէս պատանդներ, նրանց հավատարմութիւնն ապահովելու համար: Ուղտերով անցնելով ջրի բացակայութիւն պատճառով ամայացած երկրով, նա տասնմեկերորդ օրը ժամանեց նշա-

նակված վայրը: 19. Մինչ նրա ժամանման մասին հաղորդելը, Պոլիդամանտոսը կրկին հագնում է մակեդոնական հագուստ և ըբբորդ պահնորդության ժամանակ գալիս է Կլեանդրոսի վրանը (սա փոխարքան էր): 20. Նամակները հանձնելուց հետո Կլեանդրոսն ու Պոլիդամանտոսը որոշում են լուսաբացին հանդիպել Պարմենիոնի մոտ: Մյուս զորավարներին նույնպես հանձնվեցին արքայի նամակները: Նրանք արդեն պատրաստվում էին գնալ Պարմենիոնի մոտ, որին սակայն արդեն հայտնել էին Պոլիդամանտոսի ժամանման մասին: 21. Ուրախանալով ընկերոջ ժամանման համար և միաժամանակ բուն ցանկություն ունենալով տեղեկանալ, թե ինչով է զբաղված արքան, քանի որ վաղուց նրանից նամակ չէր ստացել, նա հրամայեց հրավիրել Պոլիդամանտոսին: 22. Այդ երկրի օազիսներում կան մարդկանց ձեռքով տնկված լայն տարածք ունեցող ու մեկուսացված հաճելի պուրակներ. դրանք հատկապես արքաների ու սատրապների համար են: 23. Պարմենիոնը զրոսնում էր պուրակում՝ զորավարներով շրջապատված, որոնց արքան իր նամակներում պատվիրել էր սպանել նրան: Հրամանը կատարելու համար նրանք ընտրել էին այն պահ, երբ Պարմենիոնը կսկսի ընթերցել նամակները, որոնք նրան կհանձնի Պոլիդամանտոսը: 24. Վերջինս, հեռվից արդեն, հենց նրան նկատեց Պարմենիոնը, դեմքին ուրախության արտահայտություն ավել և վազեց, որպեսզի գրկի նրան: Երբ նրանք փոխադարձ ողջունեցին միմյանց, Պոլիդամանտոսը Պարմենիոնին հանձնեց արքայի գրած նամակը: 25. Պարմենիոնը, կտրելով նամակի կնիքը, հարցրեց արքայի որպիսությունը: Նա պատասխանեց, թե կիմանա այդ մասին նամակից: 26. Պարմենիոնը, ընթերցելով այն, ասաց. «Արքան արաքոսիացիների դեմ արշավանք է նախապատրաստում: Գործույժ մարդ է, երբև շփոթի, ինչ բան է հանգիստը, Սակայն հասնելով նման մեծ փառքի, նա արդեն պետք է խնայի իր կյանքը»: 27. Այնուհետև նա սկսեց կարգալ մյուս նամակը՝ գրված Փիլոտոսի անունից, և նրա դեմքին երջանկություն երևաց, Այդ պահին Կլեանդրոսը սուրբ խրեց նրա կողք, այնուհետև կտրեց վիզը. մյուսներն էլ խոցեցին նրա արդեն մեռած մարմինը:

28. Պուրակի մուտքի մոտ կանգնած զինակիրները, տեղեկանալով սպանության մասին, որի պատճառները նրանց անհասկանալի էին, նետվում են ճամբար և տագնապալի լուրով ոտքի

հանում զինվորներին: 29. Նրանք էլ, զինվելով, հավաքվում են պուրակում, որտեղ կատարվել էր սպանությունը, և հայտարարում, որ եթե Պոլիդամանտոսին և ոճրագործության մյուս մասնակիցներին չհանձնեն իրենց, ապա իրենք կբանդեն պուրակը շրջափակող պատնիշը և կթափեն նրանց արյունը իրենց զորավարի արյան դիմաց: 30. Կլեանդրոսը հրամայում է ներս թողնել նրանց պարագլուխներին և ընթերցում է զինվորներին ուղղված արքայի նամակը, որտեղ արքան գրում էր Պարմենիոնի խարդավանքների մասին և խնդրում վրժիխ դիր լինել: 31. Արքայի կամքի հրապարակումը վերջ դրեց եթե ոչ զայրույթին, ապա, համենայն դեպս, խռովությանը: Զինվորների մեծ մասը ցրվեց. մնացին քչերը, որոնք խնդրեցին գոնե թաղել իրենց զորավարի դին: 32. Կլեանդրոսը երկար ժամանակ մեղժում էր նրանց այդ խնդիրը, վախենալով անարգանք հասցնել արքային, Այնուհետև, երբ նրանց խնդրանքը ավելի համառ դարձավ, նա թույլատրեց թաղել զխատված մարմինը, գերադասելով վերացնել նրանց դժգոհության պատճառը: Պարմենիոնի գլուխը ուղարկվեց Ալեքսանդրին:

33. Այսպիսին էր Պարմենիոնի վերջը՝ փառավոր ինչպես պատերազմում, այնպես էլ խաղաղ ժամանակ: Նա շատ հաջողություններ էր ունեցել առանց արքայի, իսկ արքային զեռ չէր հաջողվել ոչ մի մեծ գործ առանց նրա: Նա կարողանում էր հաճոյանալ արքային, որը պահանջում էր, որ ամեն ինչ ենթարկվի իր երջանկությանը: 70 տարեկանում նա պատանու նման կատարում էր զորավարի և հաճախ նույնիսկ շարքային զինվորի պարտականություններ. արագ՝ որոշումներ կայացնելիս, խիզախ՝ դրանք իրականացնելիս, նա սիրված էր առաջնորդների և էլ ավելի զինվորների կողմից: 34. Գծվար է պարզել, արդյո՞ք այդ հատկություններն էին զրդում նրան գրավել արքայական իշխանությունը, թե պարզապես նրա վրա կասկածանք էին նետում. նույնիսկ երբ փաստերը զեռ թարմ էին և առավել հայտնի, կասկածներ կային, թե արդյո՞ք սարսափելի խոշտանգումներից շարդված Փիլոտոսը ասել էր ճշմարտությունը, որն անհնար էր ապացուցել, թե ստով ցանկացել էր վերջ տալ իր տանջանքներին: 35. Ալեքսանդրը, գտնելով, որ անհրաժեշտ է առանձնացնել, ինչպես ինքն իմացել էր, Պարմենիոնի մահը բացեիբաց ողբացողներին մնացած զորքից, նրանցից հատուկ ջոկատ կազմեց և նրա ղեկավար նշանակեց Լեոնիդոս-

ոին, որը Պարմենիոնի երեւմնի մտերիմ բարեկամն էր: 36. Դը-
րանք բոլորը ընդհանրապես արքային ատելի մարդիկ էին: Եվ
իսկապես, զինվորների տրամադրվածութունը իմանալու նպա-
տակով, նրանց, ովքեր նամակ էին գրելու Մակեդոնիա իրենց
բարեկամներին, նա խորհուրդ տվեց դրանք հանձնել արքայա-
կան սուրհանդակներին, որպեսզի դրանց տեղ հասցնելը հու-
սալի լինի: Ամեն մի զինվոր անկեղծորեն գրում էր իր մերձա-
վորին, թե ինչ զգացումներ ունեն. ոմանց համար զինվորական
ծառայությունը ծանր էր, իսկ մեծամասնության համար՝ դժ-
վարություն չէր ներկայացնում: Այդպես ձեռք գցած նամակնե-
րից հայտնի դարձավ, թե ով է փառաբանում արքային և ով
բողոքում նրանից: 37. Նրանց, ովքեր պատահաբար իրենց նա-
մակներում գրել էին զինվորական ծառայության ծանրության
մասին, արքան հրամայում է որպես անարգանք ճամբար խփել
մյուսներին առանձին, որպեսզի օգտագործի նրանց ուժը մար-
տում, բայց վերջ տա գյուրահավատ մարդկանց մոտ նրանց
ազատամիտ ճառերին: Այդ, թերևս անխոհեմ որոշումը, քանի
որ անարգանքը դաժանացրեց քաջակորով պատանիներին, ինչ-
պես և մնացած ամեն ինչ, վերածվեց հաջողության՝ արքայի
օգտին: 38. Ոչ ոք այնպես չէր նետվում մարտի, ինչպես այդ
զինվորները: Նրանց սլիությունը թափ էր առնում սեփական
պատվագրկությունը շտկելու ցանկությունից և այն բանից, որ
նրանց սխրագործությունները չէին կարող աննկատ մնալ
մարդկանց փոքրաթիվ խմբի մեջ:

III. Կարգավորելով այս գործերը և արիացիների վրա սատ-
րայ նշանակելով, Ալեքսանդրը կարգադրում է արշավանք հայ-
տարարել դեպի արիմասպաների երկիրը, որոնք էվերգեթներ²
նոր անունն էին ստացել այն ժամանակներից ի վեր, երբ
նրանք հանգրվան ու պարհն էին տվել ցրտից ու քաղցից տա-
ռապող Կյուրոսի զորքին: 2. Ալեքսանդրն այդ մարզը ժամանից
հինգերորդ օրը: Նա տեղեկացավ, որ Բեսի կողմն անցած Սա-
տիրբարդանը հեծյալների ջոկատով կրկին ներխուժել է արիա-
ցիների երկիրը: Այնտեղ Կարանոսի և Էրիգիոսի հետևից, Ար-
տաբազի, Անգրոնիկոսի և 6000 հույն հետևակայիների հետ
հետևեցին 600 հեծյալներ: 3. Իսկ ինքը՝ արքան 60 օրվա ընթաց-
քում կարգավորեց էվերգեթների ցեղի գործերը, նրանց տալով
բավական շատ դրամ և պարգև Կյուրոսին հավատարիմ լինելու
համար: 4. Այնուհետև նրանց գլխավոր կարգելով Ամեդիներն՝

Դարեհի նախկին բարտուղարին, նա հնազանդեցրեց արաթ-
աիացիներին, որոնց երկիրը տարածվում է մինչև Պոնտական
ծովը³: Այնտեղ նա միացավ նախկինում Պարմենիոնի հրամա-
նատարության տակ գտնված զորքին: Դրանք 6 000 մակեդո-
նացիներ էին, ազնվականության 200 ներկայացուցիչներ և
5000 հույներ 600 հեծյալներով՝ անկասկած արքայական ողջ
ազգական ուժերի լավագույն մասը: 5. Արաթոսիացիների փո-
խարքա նշանակվեց Մեմնոնը: Պաշտպանության համար թողնը-
վեց 4000 հետևակային և 600 հեծյալ: Իսկ ինքը՝ արքան զորքով
մտավ ցեղի երկիրը, որը քիչ էր հայտնի նույնիսկ հարևաններին,
քանի որ ոչ մեկի հետ չէր ցանկանում առևտուր անել: 6. Դրանք
պարապամիսադներն էին՝ վայրի և բարբարոսների մեջ առավել
քիչ քաղաքակրթված ցեղ: Խիստ կլիման կոպտացրել էր նաև
այդ մարդկանց բնավորությունը: 7. Նրանց երկրի մեծ մասը
ընկած է ցրտաշունչ հյուսիսային գոտում⁴. արևմուտքից այն
սահմանակից է Բակտրիային, հարավից նայում է Հնդկական
ծովի կողմը: 8. Խրճիթների հիմքը պարապամիսադները կառու-
ցում են աղյուսից և, քանի որ նրանց երկրում չկան անտառներ
նույնիսկ լեռնաշղթայի վրա, որոնք բացարձակապես լերկ են,
նրանք տունը, ընդհուպ մինչև տանիքը, կառուցում են նույն աղ-
յուսից: 9. Ներքևի մասում ավելի լայն շինությունները աստիճա-
նաբար նեղանում են և իրենց վերնամասով նավախել են հիշեց-
նում: Վերևում անցք է թողնվում, որտեղով թափանցում է
լույսը: 10. Այդքան խիստ կլիմային վարժված խաղողի վազերն
ու ծառերը նրանք ողջ ձմռանը կիսով չափ ծածկում են հողով,
այնուհետև, երբ գետինն ազատվում է հալչող ձյան ծածկից,
կրկին բացում են օդ ու արև առնելու համար: 11. Ձյունը, որն
այդտեղ ծածկում է գետինը, այնքան խոր է և այնքան քարա-
ցած անընդատ սառնամանիքներից, որ նույնիսկ թռչունների
կամ այլ կենդանիների հետքը չի մնում: Երկնքից գետնի վրա
լույսի փոխարեն ավելի շուտ սև, գիշերանման մշուշ է իջնում,
այնպես որ հաղիվ հնարավոր է տարբերել մոտակա առարկա-
ները:

12. Մարդկային քաղաքակրթության հետքերից զուրկ այդ
ամառի վայրը քշված զորքը ճաշակեց բոլոր հնարավոր զրկանք-
ները՝ քաղց, ցուրտ, ուժասպառություն, հուսահատություն:
13. Շատերը զոհվեցին անսովոր ցրտաշունչ ձյունից, շատերը
ցրտահարեցին ոտքները, իսկ մարդկանց մեծամասնության աշ-

բերը տուժեցին: Արշավանքից ուժասպառ պառկում էին ուղղա-
կի ձյան վրա, սակայն սառնամանիքը այնպիսի ուժով էր կաշ-
կանդում նրանց անշարժ մարմինները, որ նրանք ամենևին չէին
կարողանում ինքնուրույն ոտքի ելնել: 14. Անզղայացումը
նրանցից ընկերները վանում էին նրանով, որ ստիպում էին շարժ-
վել: Այնժամ վերադառնում էր կենսատու ջերմությունը, և նրանց
մարմնի անդամները ուժ էին ստանում: 15. Ում հաջողվում էր
մանկ բարբարոսների խրճիթները, արագ ուշքի էին գալիս: Սա-
կայն մշուշն այնքան խիտ էր, որ նրանք կացարանները հայտ-
նաբերում էին ծխի միջոցով: 16. Առաջներում երեք օտարերկ-
րացիներ շտեպած տեղացի բնակիչները ղինված մարդկանց
տեսնելով, սարսուռ էին սարսափից և առաջարկում նրանց այն
ամենը, ինչ կար իրենց խրճիթներում, պաղատելով խնայել
իրենց կյանքը: 17. Արքան ոտքով շրջում էր զորքի մեջ, ոտքի
բարձրացնում գետին ընկածներին և օգնում նրանց, ում դժվար
էր բայել: Նա, շինայելով իր ուժերը, մեկ հայտնվում էր առա-
ջատար շարքերում, մեկ կենտրոնում, մեկ վերջապահ զորքում:
18. Ի վերջո հասան նվազ վայրի տեղեր, և զորքը, լիուլի պարեն
ստանալով, ապաբինվեց. այդտեղ տեղադրված ճամբար եկան
նաև ճանապարհին հետ մնացած զինվորները:

19. Այդտեղից զորքը ուղևորվեց դեպի Կովկասյան լեռները⁵,
Գրանք անընդհատ շղթայով հատում են Ասիան: Մի կողմից
մոտենում են Կիլիկիայի մոտի ծովին, մյուս կողմից՝ Կասպից
ծովին, Արաքս գետին և Սկյութիայի ամայի վայրերին: 20. Կով-
կասին սահմանակցվում են ավելի ցածր Տավրոսյան լեռները.
սկիզբ առնելով Կասպոզովկիայից, նրանք անցնում են Կիլիկիայի
կողքով և միանում Հայաստանի լեռներին: 21. Այդպես իրար մեջ
հյուսվելով, այդ լեռնաշղթաները կազմում են մի անընդհատ
շղթա. այստեղից սկիզբ են առնում Ասիայի համարյա բոլոր
գետերը, որոնք թափվում են ինչպես Կարմիր ծովը, այնպես էլ
Կասպից՝ վրկանաց⁶ և Պոնտական ծովերը: 22. Զորքը Կովկասն
անցավ 17 օրում: Այնտեղ մի ժայռ կա, որն ունի 10 ասպարեզ
շրջագիծ և ավելի քան շորս ասպարեզ բարձրություն, որին, ըստ
հինավուրց ավանդության, գամված է եղել Պրոմեթևսը: 23.
Ժայռի ստորոտին քաղաք հիմնելու համար տեղ ընտրվեց: 7000
տարիքավոր մակեդոնացիներ և, բացի այդ, զինվորական ծա-
ռայության համար արդեն ոչ պիտանի զինվորներ թույլտվու-

թյան ստացան բնակություն հաստատելու նոր քաղաքում: Բնա-
կիչներն այն նույնպես Ալեքսանդրիա⁷ անվանեցին:

IV. Այդ ընթացքում Ալեքսանդրի արագաշարժությունից սար-
սափած Բեսը, այդ ցեղերի սովորույթի համաձայն հայրենի
առավածներին սովորական զոհ մատուցելուց հետո, խրախճան-
քի ժամանակ ընկերների ու զորավարների հետ խորհրդակցում
էր: 2. Գինուց տարտամած, նրանք սկսեցին դրվատել իրենց
ուժերը և ծիծաղել թշնամու անխոհեմության ու սակավաթվու-
թյան վրա: 3. Հատկապես Բեսը՝ հանդուգն իր խոսքերով և
հպարտ արքայական իշխանությամբ, որը նա ձեռք էր բերել
հանցավոր ճանապարհով, իրեն հաղիվ տիրապետելով, ասում
էր, որ թշնամիները իրենց փառքով պարտական են Գարեհի
բթամտությանը: 4. Չէ՞ որ նա ճակատամարտել էր թշնամու դեմ
Կիլիկիայի լափազանց նեղ կիրճում, իսկ նահանջելով՝ նա կարող
էր նրանց անհողությունից օգտվելով տանել նրանց այնպիսի
տեղեր, որոնք անանցանելի են տեղանքի պայմանների պատ-
ճառով, բազմաթիվ գետերով ու լեռնային կիրճերով, որոնց մեջ
գարան ընկած թշնամին ոչ միայն չէր կարող դիմադրել, այլ
նույնիսկ փախչել: 5. Իսկ ինքը որոշեց հեռանալ սողորթի մոտ
և թաքնվել թշնամուց Օքսոս գետի հետևում, ինչպես պատի
հետևում, մինչև այն ժամանակ, երբ հարևան ցեղերից կժամանեն
մեծ թվով համալրումներ: 6. Չէ՞ որ նրա մոտ կգան խորադո-
ներն ու դահերը, սակերն ու հնդիկները, ինչպես նաև Տանախ⁸
գետի այն կողմում բնակվող սկյութները, որոնք այնքան բարձ-
րահասակ են, որ մակեդոնացիները նրանց ուսերից են: 7. Գի-
նույցած, բոլորը գոշում էին, որ դա միակ խելացի որոշումն է, և
Բեսը հրամայեց ավելի առատորեն զինի լցնել բոլորին, քա-
նի որ ինքը պատրաստվում էր ավարտել հաղթանակը Ալեք-
սանդրի նկատմամբ խնջույթի սեղանի շուրջ: 8. Այդ խնջույթին
ներկա էր մարաստանցի Կորարը՝ ավելի հայտնի մոզուլթյան
արվեստի հանդես ունեցած իր հակվածությամբ (եթե, իհարկե,
դա արվեստ է և ոչ թե դատարկ մարդկանց խաբեություն), քան
նրա գիտությամբ, այնուհանդերձ, համեստ ու ազնիվ մի
մարդ: 9. Նա սկսեց խոսել այն մասին, որ ստրուկին, ինչպես
իրեն է հայտնի, ավելի օգտակար է ենթարկվել հրամաններին,
քան խորհուրդներ տալ, քանի որ ենթարկվողներին սպասվում
է նույնը, ինչ և մնացածներին, իսկ ով խորհուրդ է տալիս,
իրեն հատկապես ենթարկում է վտանգի⁹... Բեսը նրան փոխան-

ցնց գավաթը, որն իր ձեռքում էր: 10. Կորաբը, վերցնելով այն, շարունակեց. «Մարդու էությունը կարելի է անկայուն անվանել նաև այն բանի համար, որ ցանկացած որ ավելի վատ է տեսնում իր արածները, քան ուրիշները: 11. Մարդկանց կասկածելի են թվում իրենց իսկ ներշնչած որոշումները. ոմանց խանգարում է վախը, մյուսներին՝ կրքերը, երբորգնեիրին՝ բնական նվիրվածությունը սեփական գաղափարներին: Ոչ որ ինքն իրեն չի արհամարհում: Դու ինքդ փորձից գիտես. որ ամեն մեկը միակ լավ բանը համարում է այն, ինչ ինքն է մտածել: 12. Քո գլխին ծանր բեռ է դրված՝ արքայական թագը: Այն պետք է խելացի ձևով կրել, ապա ոչ, ինչից ես վախենում եմ, այն կճզմի քեզ: Այս հարցում անհրաժեշտ է շրջահայացություն և ոչ թի շտապողականություն»: 13. Այնուհետև նա վկայակոչեց բախտի աստվածի մեջ տարածված առածները՝ «վախկոտ շունը ավելի ուժեղ հաշում է, քան կծու» և «ամենախոր գետերը անձայն են հոսում»: Այս ամենը ես հիշատակեցի, որպեսզի ցույց տամ, թե ինչպիսին կարող է լինել բարբարոսների իմաստությունը: 14. Այդ խոսքերով Կորաբը դրավեց ներկա գտնվողների ուշադրությունը: Այնուհետև նա շարադրեց իր խորհուրդը, որն ավելի օգտակար էր Բեսի համար, քան հաճելի: «Քո պալատի շեմին, — ասաց նա, — գտնվում է մի արբա, որին յուրահատուկ է սրբնթացությունը: Նա ավելի արագ է հավաքում ճամբարը և ճանապարհ ընկնում, քան դու կշարժես այս սեղանը: 15. Իսկ դու Տանախի փեղեկից զորք ես կանչելու և զենքից պատասպարվելու ես գետերով: Կարծես թշնամին չի կարող հետևել քեզ ամենուր, ուր դու փախչես: Երկուսի համար էլ ճանապարհը ընդհանուր է, սակայն այն ավելի հուսալի է հաղթողի համար: Դու կարծում ես, թե վախն ավելի փութկոտ է դարձնում, սակայն հույսը ավելի շատ արագություն է հաղորդում: 16. Իսկ ինչու՞ դու չգիտես ուժեղ թշնամու ողորմածությունը և չճանձնվես նրա իշխանությունը: Ինչ էլ որ պատահի, հանձնվողը իրեն ավելի լավ ճակատագիր է ապահովում, քան թշնամին: 17. Դու տիրացել ես ուրիշի թագավորությանը, այնպես որ կարող ես ավելի հեշտությունը հրաժարվել դրանից: Կարող է պատահել, որ դու դառնաս օրինական արբա, եթե դա ցանկանա այն անձնավորությունը, ով կարող է տալ քեզ արքայական իշխանություն և զրկել քեզ դրանից: 18. Ահա քեզ իսկական խորհուրդ, որն

ավելորդ է այլևս զարգացնելու կամ ձիու համար բավական է հիպոտի սովերը, վատի համար բավական չէ նույնիսկ խթանը»:

19. Բնավորությունը դաժան Բեսը գինու ազդեցության տակ ախպես դայրացավ, որ նրա ընկերները դժվարություններ բռնեցին նրա ձեռքը, որի մեջ Կորաբին սպանելու ակինակ կար: Գլուխը քիչ վարցրած Բեսը դուրս նետվեց խնջույքի դահլիճից, Կորաբն էլ իրարանցումից օգտվելով փախավ և անցավ Ալեքսանդրի հողմը: 20. Բեսը 8000 զինված բախտի աստվածներ ուներ. մինչ նրանք կարծում էին, որ շոգ եղանակի պատճառով մակեդոնացիները կգերազանեն Հնդկաստան շարժվել, նրանք հեղորեն ենթարկվում էին Բեսին, իսկ տեղեկանալով Ալեքսանդրի մտեհնալու մասին, նրանք լքեցին Բեսին և փախան իրենց գյուղերը: 21. Վերջինս, անցնելով Օքսոս գետը, մի բուռ իրեն հավատարիմ մնացած ընկերներով, կրակի մատնեց իր նավակները, որպեսզի թշնամին չօգտագործի դրանք, և սկսեց նոր զորք հավաքել Սողդիանայում: 22. Այդ ընթացքում Ալեքսանդրը, ինչպես վերևում ասվեց, արդեն անցել էր Կովկասը, սակայն հացի պակասը քիչ էր մնում նրա զորքում սով առաջացնելու: 23. Զինվորները իրենց մարմիններին յուղի փոխարեն քնջութի հյութ էին քսում: Սակայն այդպիսի հյութի մեկ սափորը արժեք 240 զինար, նույնքան մեղրը՝ 390 զինար, գինին՝ 300 զինար. ցորեն ամենևին չէին գտնում կամ շատ քիչ: 24. Բարբարոսները սիրոս էին անվանում հացի շտեմարանները, որոնք այնպես էին բողբոջում, որ դրանք կարող էին հայտնաբերել միայն նրանք, ովքեր դրանք փորել էին: Դրանց մեջ նրանք թարցնում էին իրենց հացահատիկը: Հացի պակասի պատճառով զինվորները սնվում էին գետի ձկներով և խոտաբույսերով: 25. Հետո այդ սնունդն էլ սկսեց չբավականացնել և հրաման արձակվեց մորթել բեռնակիր անասունները, որոնցով տեղափոխում էին ունեցվածքը. դրանց միւսը պահեց նրանց մինչև Բախտիա հասնելը:

26. Բախտիայի բնությունը հարուստ է ու բազմազան: Որոշ տեղերում բազմաբանակ ծառերն ու խաղողի վազերը առատորեն հյութեղ պտուղներ են տալիս, պարարտ հողը բողբոջում են բազմաթիվ աղբյուրներ: Որտեղ հողը փափուկ է, այնտեղ հացահատիկ են ցանում, մնացած հողերը գործածվում են որպես արոտավայր: 27. Այդ երկրի մեծ մասը զբաղեցնում են անբերրի ավազուտները: Երաշտի պատճառով լքված այդ շրջաններում ոչ մարդիկ կան, ոչ էլ պտուղներ: Պոնտոսից¹⁰ փյուղ քամիները

բերում են հարթավայրերի ավազը. այդ ժամանակ նրանք նմանվում են մեծ բլուրների, այդտեղ անհետանում են ճանապարհների բոլոր նախկին հետքերը: 28. Այդ պատճառով, ուրբեր գիշերն են ճամփորդում այդ հարթավայրերով, նավաստիների նման հետևում են աստղերին, որոնց տեղաշարժերից էլ գտնում են իրենց ճանապարհը. և գիշերային խավարին ավելի շատ լույս է լինում, քան ցերեկը: 29. Այսպիսով, ցերեկը այդ մարզն անանցանելի է, քանի որ չկան հետքեր, որոնցով կարելի է գնալ, և աստղերի ցուրը սքողված է խավարով: Իսկ եթե ծովի կողմից փռող քամին որևէ մեկին հանդիպի ճանապարհին, այն նրան կծածկի ավազով: 30. Այնուամենայնիվ, որտեղ հողն ավելի բերրի է, շափաղանց շատ մարդիկ և ձիեր կան: Այդ պատճառով Բակտրիան 30 000 հեծյալ է տալիս: 31. Այդ մարդի մայրաքաղաքը՝ Բակտրան¹, գտնվում է Պարապամիսի ստորոտին: Նրա պարիսպների մոտով հոսում է Բակտր գետը: Այդ գետի անունով են կոչվում քաղաքն ու մարզը:

32. Այստեղ օթևանած արքային Հունաստանից լուրեր են հասնում լակոնացիների և ողջ Պելոպոնեսի անշատման մասին, Պառակալողները դուռես հնազանդված չէին, երբ լրաբերները ճանապարհ ընկան ապստամբության սկսելու մասին լուրը հայտնելու: Հայտնի է դառնում նաև մեկ այլ, մոտավոր վտանգի մասին. Բեսին օգնության են հասել Տանաիս գետի այն կողմում ապրող սկյուֆները: Այդ նույն ժամանակ նրան են հայտնում արիացիների երկրում Կարանի և էրիզիոսի գործողությունների մասին. 33. մակեդոնացիների ու արիացիների միջև ճակատամարտ է տեղի ունեցել: Բարբարոսներին առաջնորդել է փախստակ Սատրապը: Նկատելով, որ հակառակորդների հավասար ուժերի պայմաններում ճակատամարտը դանդաղ է ընթանում, նա ձին քշել է դեպի առջևի շարքերը և, հանելով սաղավարտն ու կանգնեցնելով նետածիգներին, սկսել մենամարտի հրավիրել որևէ մեկին, հայտարարելով, որ կկռվի գլուխը բաց: 34. Բարբարոսի ամբարտապանությանը չկարողացավ դիմանալ զորավար էրիզիոսը, արդեն տարիքն առած մարդ, որը, սակայն, ոգու և մարմնի ուժով չէր գիշում որևէ պատանու: Հանելով սաղավարտը, որի տակից երևացին ճերմակած մազերը, նա ասաց. «Ենկել է այն օրը, որ հաղթած թե պարտված պետք է ցույց տալ, թե ինչպիսին են Ալեքսանդրի ընկերներն ու զինվորները»: 35. Եվ այլևս ոչինչ շասելով, նա քշեց իր ձին

Քշնամու վրա: Կարելի էր կարծել, որ երկու կողմերն էլ հրաման էին ստացել շնեհաճարի: Զինվորներն իսկույն հեռաշղկեցին, թողնելով ազատ տարածություն, և լարվածությամբ հետևում էին մենամարտի ելքին, քանի որ իրենց էլ սպասում էր նույն ճակատագիրը, ինչ և իրենց առաջնորդներին: 36. Բարբարոսը առաջինը նետեց նիզակը, որի հարվածից էրիզիոսը խույսավեց, գլուխը մի քիչ թեքելով և իր հերթին, խթանելով ձին, այնպիսի կատաղությամբ իր նիզակով խփեց բարբարոսի կողմը, որ այն դուրս եկավ ծոծրակի կողմից: Բարբարոսը վայր ընկավ ձիուց, բայց դեռ դիմադրում էր: 37. Սակայն էրիզիոսը վերջից դուրս քաշելով նիզակը, կրկին ուղղեց այն թըշնամու դեմքին: Սատրապը ձեռքով բռնեց այն, և իր մահը արագացնելու նպատակով հեշտացրեց թշնամու հարվածը: 38. Առաջնորդին կորցրած բարբարոսները, որին նրանք հետևում էին ավելի շատ անհրաժեշտաբար, քան կամավոր, հիշեցին այն ժամ Ալեքսանդրի մեծահոգության մասին և հանձնեցին իրենց զենքերը էրիզիոսին: 39. Արքան ուրախացավ այդ հաջողության համար. ինչ վերաբերում է սպարտացիներին, նա ամենին էլ հանգիստ չէր, սակայն նրանց պառակտման լուրը ընդունեց արիաբար, ասելով, որ նրանք միայն այն ժամանակ են համարձակվել դրսևորել իրենց մտահոգումները, երբ տեղեկացել են, որ ինքը հասել է Հնդկաստանի սահմանին: 40. Ալեքսանդրը արդեն շարժել էր իր զորքը Բեսին հետապնդելու համար, երբ հանդիպեց էրիզիոսին, որը որպես պատվավոր ուղեմավար բերել էր բարբարոսի գլուխը:

V. Բակտրիացիների մարզը Արտաբազին հանձնելով, Ալեքսանդրը կայազորի հետ այնտեղ թողեց բեռները՝ և գումակը: Ինքն էլ արագընթաց զորքով մտավ Սողդիանայի անապատները, առաջ շարժվելով գիշերները: 2. Ինչպես վերևում ասվեց, ջուրը չէր բավարարում, և ծարավը ավելի շատ առաջանում էր հուսաբեկությունից, քան խմելու կարիքից: 400 ասպարեզ տարածության վրա խոնավության ոչ մի նշան չկա: 3. Ամառային արևի հուրը բոցավառում է անապատները. երբ նրանք սկսում են այրվել, անընդհատ հրդեհը խանձում է ողջ տարածությունը: 4. Այնուհետև, հողի գերշիկացումից առաջացած մշուշը ծածկում է լույսը և հարթավայրերը սկսում են նմանվել լայնարձակ ու խոր ծովի: 5. Գիշերային արշավանքը այնքան էլ դժվար չէր թվում, քանի որ առավոտյան ցողն ու ցուրտը թեթևություն էին

բերում: Ի դեպ, շոգը սկսում է արևածագին և շորտթյունը կլանում է բնության ողջ խոնավությունը. բերանում և մարմնի մեջ սկսվում է այրվել: 6. Եվ այսպես, սկզբից զինվորներին լրեց ոգին, իսկ հետո՝ ուժերը: Դժվար էր թե տեղում կանգնելը, թե առաջ շարժվելը: 7. Միայն քչերը տեղացի փորձառու մարդկանց խորհրդով ջրի սլաշար էին վերցրել: Դրանով նրանք կարճ ժամանակով որոշ շափով հագեցնում էին ծարավը, սակայն հետո ուժեղ տոթից կրկին ծարավում էին: Զինվորները մինչև վերջին կաթիլը խմում էին ողջ գինին ու յուղը, և դա այնպիսի բավականություն էր պատճառում, որ նրանք դադարում էին վախենալ, թե նորից կծարավեն: 8. Սովորաբար, փրվելով շափից դուրս խմած հեղուկից, նրանք չէին կարողանում ոչ զենք կրել, ոչ քայլել, և ջուր շունչողները այնժամ ավելի երջանիկ էին թվում, քանզի նրանց ընկերները սրտխառնոց էին ունենում, և ագահաբար խմած հեղուկը դուրս էր ժայթքում: 9. Այն ժամանակ, երբ արքան մտահոգված էր այդքան հոգսերով, նրան շրջապատող ընկերները աղաչում էին, որ նա մտածի իր մասին, քանի որ միայն իր արիությունը կարող էր նեցուկ լինել ուժասպառ զորքին: 10. Այդ ժամանակ, ճամբարի տեղ ընտրելու համար առաջ ուղարկված զինվորներից երկուսը վերադարձան, կաշվի տիկերի մեջ ջուր բերելով: Նրանք ջուրը բերել էին իրենց որդիներին, որոնք, ինչպես իրենց հայտնի էր, գտնվում էին այդ զորամասում և սարսափելի տառապում էին ծարավից: 11. Երբ նրանք հանդիպեցին արքային, նրանցից մեկը, տիկը բացելով, ջրով լցրեց իր մոտ եղած ամանը և մեկնեց այն արքային: Վերջինս վերցնելով այն, հարցրեց, թե ո՞ւմ են տանում ջուրը, և, տեղեկանալով, որ տանում են իրենց որդիներին, 12. վերադարձրեց լիքը գավաթը, որից դեռ չէր խմել, և ասաց. «Ես ի վիճակի չեմ խմել բոլորը մենակ և չեմ կարող այդ շնչին քանակը բաժանել բոլորի միջև: Վազեք և ձեր երեխաներին տվեք այն, ինչ բերել էիք նրանց համար»:

13. Վերջապես, երկոյնի մոտ նա հասավ Օթսոս գետին: Սակայն զորքի մեծ մասը չկարողացավ հասնել նրան, և նա հրամայեց բարձր լեռան վրա խարույկներ վառել, որպեսզի հետ մնացածները իմանան, որ մոտ են ճամբարին: 13. Նա առաջապահ զորքերին կարգադրեց նաև արագորեն սնվել և ջուր խմել և մի մասին ջուր լցնել տիկերը, մյուսներին այլ ամանները, որոնցով հնարավոր է ջուր տանել, և օգնել իրենց ընկերներին:

15. Սակայն անհագորեն ջուր խմողները շնչահեղձ էին լինում ու մահանում, և այդպիսիների թիվը շատ ավելի գերակշռող էր, քան Ալեքսանդրի կորուստները ցանկացած ճակատամարտում: 16. Իսկ ինքը՝ արքան դեռ զրահը չհանած և անունը ու ջուր չընգտնած, կանգնեց այնտեղ, որտեղով անցնում էր զորքը, և միայն այն ժամանակ գնաց հանգստի, երբ անցավ վերջին ջոկատը: Կմբողջ այդ գիշերը նա անցկացրեց առանց աչքը փակելու և հագեկան ծանր ապրումների մեջ: 17. Եվ հաջորդ օրը նրա համար հեշտ չէր. նա նավակներ շտնեք, և անհնար էր կամուրջ կառուցելը, քանի որ գետի ափերը լերկ էին և բոլորովին զուրկ բնառանյութից: Այսպիսով, նա ընդունեց իրադրությունից թելազրկված միակ ճիշտ որոշումը: 18. Նա զինվորներին բաժանեց իր շունչած բոլոր տիկերը, որոնք լիքը լցված էին հարդով. զինվորները, պառկելով դրանց վրա, անցան գետը¹²: Առաջինն անցածները պահակ էին կանգնում, քանի դեռ չէին անցել մնացածները: Այդպես միայն վեցերորդ օրը նա ողջ զորքն անցկացրեց գետի մյուս ափը:

19. Նա արդեն որոշել էր շարունակել հետապնդել Բեսին, երբ տեղեկացավ Սոզոգիանայի դեպքերի մասին: Բեսի բոլոր ընկերների մեջ Սպիտամենը վայելում էր նրա առանձնահատուկ համակրանքը: Սակայն դավաճանությունը չի կարելի հաղթահարել որևէ բարեգործությամբ: 20. Այնուհանդերձ Սպիտամենի մեջ դա ավելի նվազ հանցալից էր, քանի որ Բեսի՝ իր ալայի մարդասպանի դեմ ցանկացած միջոցները բուրդին լավ էին թվում: Դարեհի վրիժառությունը ի ցույց էր դրվում, որպես դավադրության որոշակի պատրվակ, բայց Սպիտամենը ատում էր Բեսին ոչ թե հանցագործության, այլ նրա հաջողության համար: 21. Եվ այսպես, հենց նրան հայտնի դարձավ, որ Ալեքսանդրը անցել է Օթսոս գետը, նա դավադրության մեջ ներգրավեց Դատաթերսին և Կատենին, որոնք վայելում էին Բեսի առանձնահատուկ վստահությունը: Սրանք ներկայանում են նույնիսկ ավելի շուտ, քան իրենց խնդրել էին: Վերցնելով իրենց հետ ութ ամենաքաջ երիտասարդների, նրանք այսպիսի խորամանկության են դիմում: 22. Սպիտամենը գնում է Բեսի մոտ և, հեռացնելով վկաներին, հայտարարում, որ իրեն հայտնի է դարձել Դատաթերսի և Կատենի խարդավանքի մասին, որոնք որոշել են Բեսին կենդանի հանձնել Ալեքսանդրին, և որ ինքը բռնել է նրանց ու շղթայել: 23. Բեսը իրեն պարտական զգալով նման ծառա-

յության համար, շնորհակալութիւն է հայտնում Սպիտամենին և, այլովիւով մեղավորներին մահապատժի ենթարկելու փափագով, հրամայում է ներս բերել նրանց: 24. Նրանց, ուրբեր թույլ էին տվել կապել իրենց ձեռքերը, ներս են բերում դավադրութեան մյուս մասնակիցները: Բեսը, ահարկու հայացք նետելով նրանց վրա .տաքի է ելնում՝ պատրաստ իր ձեռքով նրանց դատաստանը տեսնելու: Սակայն դավադիրները, մի կողմ թողնելով ձեացնելը, շրջապատում են նրան և, շնայած նրա դիմադրութեանը, կապկպում են, նրա գլխից հանում արթայական թաղը և պատառոտում սպանված Դարեհի վրայից նրա հանած հագուստը: 25. Բեսը, ընդունելով, որ աստվածները վրեժխնդիր են լինում իր ոճրադործութեան համար, ասաց, որ նրանք այնքան թշնամաբար չէին արամադրված Դարեհին, որի համար այժմ այսպես վրեժ են լուծում, որքան բարեհաճում են Ալեքսանդրին, որի հաղթանակին մշտապես օգնել են նույնիսկ թըշնամիները: 26. Հայտնի չէ դեռ կպաշտպանե՞ր արդոյր ամբոխը Բեսին, սակայն նրան շղթայած մարդիկ, խաբելով, որ գործում են Ալեքսանդրի հրամանով, սարսափեցրին դեռ տատանվողներին: Նստեցնելով Բեսին ձիու վրա, տարան, որպեսզի հանձնեն Ալեքսանդրին:

27. Այդ ընթացքում Ալեքսանդրը, ընտրելով 900 զինվոր, որոնց ծառայութեանն ավարտվել էր, տվեց յուրաքանչյուր հեծյալի երկու տաղանդ, իսկ հետևակայինի՝ 3000-ական զինար և տուն արձակեց¹³, խորհուրդ տալով նրանց շատ երկխաներ ունենալ: Մնացածներին շնորհակալութիւն հայտնեց մինչև պատերազմի վերջը ծառայել խոստանալու համար: (Այդ ծամանակ բերեցին Բեսին¹⁴): 28. Այնուհետև հասան բրանքիդներով մնակեցված մի փոքրիկ քաղաքի: Մի ժամանակ Հունաստանից վերադարձող Քսերքսեսի հրամանով նրանք Միլետից տեղափոխվել էին այդ վայրը որպես արքայազներ, քանի որ այդ արքային հաճոյանալու համար պղծել էին Դիդիմոն կոչվող տաճարը: 29. Նրանք դեռ չէին մոռացել նախնիների սովորութեանը, սակայն խոսում էին խառն լեզվով, հետզհետև հետ վարժվելով մայրենի լեզվից: Նրանք ուրախութեամբ ընդունեցին արքային և նրան հանձնվեցին ողջ քաղաքով: Սակայն նա հրամայում է հավաքել իր դրոշի ներքո ծառայած միլետացիներին: 30. Միլետացիները վաղուց ատում էին բրանքիդների ցեղին դավաճանութեան համար: Այդ պատճառով արքան միլետացիների

կամքին թողեց նրանց ճակատագրի որոշումը, հաշվի առնելով ինչպես նրանց մեղավորութիւնը, այնպես էլ նրանց ընդհանուր ծագումը:

31. Քանի որ միլետացիների կարծիքները բաժանվեցին, Ալեքսանդրը ասաց, որ ինքը կմտածի, թե որն է ամենալավ որոշումը: Երբ հաջորդ օրը նրանք եկան նրա մոտ, նա հրամայեց բրանքիդներին հետևել իրեն: Մոտենալով քաղաքին, նա դարպասից ներս մտավ թեթևադեն ջոկատի ուղեկցութեամբ: 32. Փաղանքը հրաման ստացավ շրջապատել քաղաքի պարիսպները և աղանջանով թալանել քաղաքը՝ դավաճանների ապաստանը, իսկ նրանց, մինչև վերջին մարդը, կոտորել: 33. Եվ ահա ամենուր կոտորվում են անդնները, և թշնամիներին չեն կարողանում խղճահարել ո՛չ սրբազան քողերը, ո՛չ աղերսանքը, որոնք հայցվում էին նրանցից մի ընդհանուր լեզվով¹⁵: Վերջապես, որպեսզի քաղաքից հետք չմնա, նրա պարիսպները հիմնահատակ ավերվում են: 34. Ոչ միայն կտրում են, այլև արմատախիլ են անում ծառերը սրբազան պուրակներում ու անտառակներում, որպեսզի այդ վայրը դառնա մի հսկա անապատ անբերրի հողով, զուրկ նույնիսկ ծառերի արմատներից: 35. Եթե այդ բոլոր միջոցները կիրառված լինեին ուղղակի դավաճանների հանդեպ, դա կարելի էր արդարացի վրեժ համարել և ոչ թե դավաճանութիւն, իսկ այժմ նախնիների մեղքը քաղեցին նրանց սերունդները, որոնք նույնիսկ չէին տեսել Միլետը, և, հետևաբար չէին կարող հանձնել այն Քսերքսեսին:

36. Այստեղից արքան ուղևորվեց դեպի Տանախ գետը: Հենց այնտեղ էլ բերեցին Բեսին՝ ոչ միայն շղթայված, այլև որևէ հագուստից զուրկ: Սպիտամենը բռնել էր շղթայից, որը կապված էր Բեսի վզից. հաճելի տեսարան թե բարբարոսների և թե մակեդոնացիների համար: 37. Սպիտամենն ասաց. «Միանգամից վրեժխնդիր լինելով քո և Դարեհի համար՝ իմ արքաների, ես բերել եմ իմ տիրոջը սպանողին, բռնելով նրան իր իսկ ցուց տված օրինակով: Երանի Դարեհը բացեր աչքերը հիանալու այս տեսարանով: Մեռած տեղից վեր կենար, քանի որ նա չէր վաստակել այդպիսի մահապատիժ և արժանի է վրեժխնդրութեան»: 38. Ալեքսանդրը, զովելով Սպիտամենին, դիմեց Բեսին. «Ո՞ր գաղանն էր իր կատաղութեամբ համակել քո հոգին, երբ դու այդպիսի հանդգնութեամբ շղթայեցիր և հետո սպանեցիր քո արքային ու բարերարին: Այդ ոճրագործութեամբ դու ձեռք բե-

րեցիր միայն կեղծ արքայական տիտղոս» 39. Այնժամ Քեսը, չհամարձակվելով արդարացնել իր ոճրագործությունը, հայտարարեց, թե արքայական տիտղոսը նա գրավել էր, որպեսզի իր ժողովրդին հանձներ Ալեքսանդրին, որ եթե ոչ ինքը, ապա արքայական իշխանությունը կգրավեր մեկ ուրիշը: 40. Այդ ժամանակ Ալեքսանդրը կարգադրեց Օքսաթրին՝ Գարեհի եղբորը, որը նրա թիկնապահներից էր, մտանալ և նրան հանձնեց Քեսին, որպեսզի բարբարոսները խաչին գամեն նրան և, կտրելով ականջներն ու քիթը, խոցեն նրան նետերով, իսկ հետո պահպանեն դիակը, շթողնելով նույնիսկ թռչուններին նստել նրա վրա: 41. Օքսաթրը խոստացավ իր վրա վերցնել այդ հոգսը, ավելացնելով, որ թռչուններին կարող է քշել միայն Կատենը: Այդ ասելով, նա ձգտում էր ցույց տալ բուրբին նրա հիասքանչ արվեստը: Եվ իսկապես, Կատենը այնպիսի ճշգրտությամբ էր նպատակակետին խփում, որ թռչուններին նույնիսկ սպառնում էր թռիչքի ժամանակ: 42. Եվ թեև այդ արվեստը նետածգության համընդհանուր տարածման պայմաններում կարող էր նվազ դարձանք առաջացնել, այնուհանդերձ, հանդիսատեսների աչքին այն շտեմնված հրաշք էր և Կատենին մեծ պատիվ բերեց: 43. Այնուհետև պարզվեցին տրվեցին Քեսին բերողներին: Ի դեպ, Ալեքսանդրը հետաձգեց նրա մահապատիժը, որպեսզի իրագործի դա այն վայրում, ուր Քեսը սպանել էր Գարեհին:

V1. Այդ ընթացքում մակեդոնացիների վրա, որոնք առանց ռազմակարգի զնացել էին անասնակեր հավաքելու, հարձակվեցին հարևան սարերից իջած բարբարոսները, որոնք սակայն ավելի շատ մարդկանց գերեցին, քան սպանեցին: 2. Իրենց առջևից քշելով գերիներին, բարբարոսները կրկին հեռացան սարերը: Այդ ավազակները թվով 20 000 հոգի էին: Նրանք խփում էին պարսատիկներով ու նետերով: 3. Նրանց պաշարման ժամանակ արքան ինքը կոպում էր առաջինների շարքում և նետով վիրավորվեց սրունքից, որի ծայրակալը մնացել էր վերքի մեջ: 4. Գրանից խիստ վշտացած մակեդոնացիները տեղափոխեցին նրան ճամբար. բարբարոսների աչքից էլ չլքիպեց այն, որ նրան դուրս բերեցին մարտից, քանի որ իրենց բարձունքից նրանց ամեն ինչ տեսանելի էր: 5. Եվ այսպես, հաջորդ օրը նրանք զենպաններ ուղարկեցին արքայի մոտ. արքան հրամայեց իսկույննեթ նրանց ներս բերել: Վերքի վրայից հեռացնելով վիրակապերը և թաքցնելով նրա բարդությունը, նա բար-

բարոսներին ցույց տվեց իր սրունքը: 6. Վերջիններս նստելու հրավեր ստանալով, հայտարարեցին, որ իրենք տեղեկանալով, որ նա վիրավորվել է, տխրել էին մակեդոնացիներից ոչ պակաս և եթե գտնեին մեղավորին, կհանձնեին նրան արքային. չէ՞ որ միայն սրբապիղծներն են կոպում աստվածների դեմ: 7. Ցնցված նրա արիությունը, նրանք իրենց ցեղով հանձնվում են Ալեքսանդրի ողորմածությանը: Արքան խոստանալով անվտանգություն և նրանցից հետ ստանալով գերիներին, հնազանդեցրեց այդ ցեղը: 8. Երբ զորքը հետո ճանապարհ ընկավ, Ալեքսանդրին դրեցին ռազմական պատգարակի վրա. թե հետևակայինները, թե հեծյալները ձգտում էին այն տանելու իրավունք ձեռք բերել: Հեծյալները, որոնց շարքերում էր սովորաբար կոպում արքան, գտնում էին, որ իրենք առավելություն ունեն, հետևակայիններն էլ, վարժված վիրավոր ընկերներին կրելու, բողոքում էին, թե իրենց թույլ շեն տալիս կատարել սովորական դարձած պարտականությունը, երբ անհրաժեշտ է տանել արքային: 9. Արքան, ընդունելով, որ իրեն ղեկավար կլինի լուծել այդ կրթոտ վեճը, և երկուդեղով, որ կարող է որևէ մեկին վիրավորել, կարգադրեց թե մեկին և թե մյուսներին տանել իրեն հերթով:

10. Այդտեղից շորրորդ օրը հասան Մարական¹⁶ քաղաքին: Նրա պարիսպները 70 ասպարեզ երկարություն ունեն, ամրոցը շրջափակված է երկրորդ պարսպով: Քաղաքում կայազոր թողնելով, Ալեքսանդրը ամայացնում և այրում է մոտակա գյուղերը: 11. Այնուհետև ժամանում են ամբիացի սկյութների զեսպանները, որոնք իրենց ազատությունը պահպանել էին Կյուրոսի մահից սկսած, իսկ այժմ էլ ցանկանում էին ենթարկվել Ալեքսանդրին: Նրանց ճանաչում էին որպես բարբարոսների ամենաարդարամիտ ցեղի. նրանք դիմում էին զենքին միայն այն ժամանակ, երբ իրենց դիպչում էին: Չափավոր և արդարացի ազատության փորձից հլնելով, նրանք իրենց մոտ հավասար էին դարձրել հասարակ մարդկանց և ավագանուն: 12. Արքան նրանց հետ զրուցում էր ողորմածաբար և եվրոպական¹⁷ սկյութների մոտ ուղարկեց Պենդոս անունով ընկերներից մեկին՝ հազորդելու նրանց, որպեսզի նրանք առանց իր թույլտվության շանցնեն իրենց մարզի սահմանը՝ Տանախ գետը: Սրան էլ հանձնարարվեց ծանոթանալ երկրի բնությանը և այցելել Բոսֆորի¹⁸ ափերին բնակվող սկյութներին: 13. Արքան Տանախ գետի ափին ար-

գին տեղ էր ընտրել քաղաքի հիմնադրման համար, որպես նվաճված տարածք պաշտպանական ամրոցի և նրա, ուր որոշել էր գեթ թափանցել: Սակայն այդ մտահղացման իրագործումը հետաձգվեց այն լուրի պատճառով, ըստ որի սողոգերը պառակտվել էին, իրենց հետևից տանելով նաև բախտարիացիներին: 14. Ապստամբել էին 7000 հեծյալներ, որոնց հետևել էին մնացածները: Ալեքսանդրը հրամայեց կանչել Սպիտամենին և Կատենին, որոնք իրեն էին հանձնել Բեսին, չկասկածելով, որ նրանք կկարողանան հնազանդեցնել ապստամբներին: 15. Իսկ սրանք լինելով ապստամբության սաղորդները, որը ճնշելու էին կոչում իրենց, արգեն մինչ այդ լուրեր էին տարածել, որ արքան իր մոտ է կանչում բախտարիական հեծյալներին, որպեսզի բոլորին կոտորի և որ իբր իրենք իրենց մեջ ուժ չեն գտել կատարելու այդ հանձնարարությունը, երկյուղելով անբավելի մեղք գործել իրենց հայրենակիցների հանդեպ. նրանք նույնպես չեն կարող տանել Ալեքսանդրի վայրագությունը, ինչպես և Բեսի ոճրագործությունը: Եվ այդպես, նրանք առանց դժվարության հրահրեցին զենք վերցնել մարդկանց, որոնք վախենալով հաշվեհարգարից, իրենք էին ձգտում դրան:

16. Ալեքսանդրը, տեղեկանալով փախտակների դավաճանություն մասին, հրամայում է Կրատերոսին պաշարել Կյուրոպոլիսը. ինքն էլ պաշարումով զբաղում է այդ նույն մարզի մյուս քաղաքը¹⁹: Նրա ազդանշանով կոտորում են բոլոր մեծահասակներին, մյուս բնակիչներին դարձնում հաղթողների ավարը: Քաղաքը ավերվեց, որպեսզի այդ օրինակով սարսափեցնեն մյուս ցեղերին: 17. Մեծաքենների ուժեղ ցեղը որոշեց փորձություն ենթարկել պաշարումը, գտնելով այն ոչ միայն ավելի պատվարեք, այլև ավելի հուսալի: Նրանց համառությունը սասանելու համար արքան ուղարկեց 50 հեծյալ, ուղարկեց, որպեսզի նրանք ի ցույց գնեն իր զիջողամտությունը՝ հանձնվողների և անողոր խստությունը՝ պարտվածների հանդեպ: 18. Նրանք պատասխանեցին, որ չեն կասկածում ինչպես արքայի խոստումներին, այնպես էլ նրա հզորությանը, և հեծյալներին առաջարկեցին տեղավորվել քաղաքի ամրություններից դուրս. այնուհետև նրանք առատորեն հյուրասիրեցին հեծյալներին, սակայն ուշ գիշերը հարձակվեցին նրանց վրա, որոնք լիովի կերել ու խոր քուն էին մտել, և կոտորեցին նրանց: 19. Բնականաբար, զայրույթով լի Ալեքսանդրը մեծ ուժերով շրջապատեց նրանց

քաղաքը, որն այնքան ամուր էր պաշտպանված, որ առաջին գրոհով վերցնել այն անհնար էր: Դրա համար Ալեքսանդրը պաշարման մասնակից դարձրեց Մելիագրոսին և Պերդիկոսին, որոնք, ինչպես ասվել էր, պաշարել էին Կյուրոպոլիսը²⁰: 20. Ակզբում արքան որոշեց խնայել Կյուրոսի հիմնադրած այդ քաղաքը: 21. որ այդ ցեղերի բոլոր արքաներից նրան ամենից ավելի հիացնում էին Կյուրոսը և Շամիրամը, որոնք, ինչպես ինքն էր գտնում, փառաբանվել էին հոգու վեհությունը և փառավոր գործերով: 21. Սակայն քաղաքաբնակների համառությունը զայրացրեց նրան: Այդ պատճառով նա հրամայեց զբաղվել քաղաքը, թալանել այն և ոչնչացնել: Արդարացիորեն զայրանալով մեծաքենների վրա, նա դիմեց Մելիագրոսի և Պերդիկոսի օգնությանը: 22. Ոչ մի ուրիշ քաղաք չէր դիմացել պաշարմանը ավելի համառությամբ. և նրա պարիսպների տակ ընկան քաղաքի ուղամիկներ, ինքը՝ արքան կործանման եզրին էր կանգնած: Մի բարայնպիսի ուժով դիպավ նրա վզին, որ նրա աչքերը մթազնեցին, և նա ընկավ գիտակցությունը կորցրած: Զորքը, իհարկե, սկսեց ողբալ նրան, կարծելով, որ նա զոհվել է: 23. Բայց լինելով անհաղթ այն բաներում, ինչ սարսափեցնում է մնացածներին, նա, վերքերը չապաքինված, շարունակեց պաշարումը ավելի մեծ անողորությամբ, քանի որ իրեն հատուկ կրթությունը զայրույթով բռնկվեց: Ականահատումով քանդված պարսպի վրա լայն անցք բացվեց, որտեղով նա ներխուժեց քաղաք, որին տիրանալով, հրամայեց ավերել այն:

24. Այստեղից արքան Մենեղեմոսին 3000 հետևակայիններով ու 800 հեծյալներով ուղարկեց Մարականդ քաղաքը: Փախստակ Սպիտամենը, վտարելով այդտեղի մակեդոնական կայազորը, փակվել էր այդ քաղաքի պարիսպների ներսում, թեև նրա բնակիչները ապստամբությանը հավանություն չէին տալիս: Սակայն թվում էր, թե իրենք էլ հարել են դավաճանությանը, քանի որ չեն կարողացել խոչընդոտել դրան: 25. Մինչ այդ Ալեքսանդրը վերադարձավ Տանաիս գետի ափը և պարսպապատ ճամբարի զբաղեցրած ողջ տարածքը: Պարիսպն ուներ 60 ասպարեղ երկարություն, այդ քաղաքը նա կարգադրեց նույնպես անվանել Ալեքսանդրիա²¹: Քաղաքն այնպիսի արագությամբ կառուցվեց, որ ամրությունների կառուցումից հետո տասնյոթերորդ²² օրը արգեն կառուցվել էին քաղաքի տները: Զինվորները համառությամբ մրցում էին միմյանց հետ, թե ով առաջինը կավարտի

աշխատանքը, քանզի ամեն մեկն ունի իր գործը: 27. Նոր քա-
զարում բնակեցրին գերիներին²³, որոնց Ալեքսանդրը փրկագնով
ազատել էր նրանց տերերից. նրանց սերունդները շափաղանց
երկար պահպանելով Ալեքսանդրի հիշատակը, չեն մոռացել
նրան մինչև այժմ:

VII. Սկյութների արքան, որի տերությունը այդ ժամանակնե-
րում տարածվում էր Տանախս գետի մյուս կողմում, գտնում էր,
որ մակեդոնացիների՝ գետի ափին հիմնադրած քաղաքը իր վրին
լուծ է: Այդ պատճառով նա Քարտագիս անունով իր եղբորը հեծ-
յալների մեծ ջոկատով ուղարկում է քանդելու այդ քաղաքը և
մակեդոնացիներին գետից հեռու բռնելու: 2. Տանախսը զատում է
բակտրիացիներին եվրոպական անվանվող սկյութներից: Բացի
այդ այն Ասիայի և Եվրոպայի սահմանն է: 3. Թրակիայից հե-
ռու գտնվելով, սկյութների ցեղը տարածվում է դեպի արևելք և
հյուսիս, սակայն սահմանակից չէ սարմատներին²⁴, ինչպես
սմանք էին ենթադրում, այլ կազմում է նրա մի մասը: 4. Նրանք
զբաղեցնում են և մեկ այլ մարզ, որն անմիջապես փոված է
Խտրոս գետի այն կողմը և միաժամանակ սահմանակից է Բակտ-
րիային²⁵, Ասիայի ծայրագույն սահմաններին: Նրանք զբաղեց-
նում են հյուսիսում գտնվող հողերը. դրանցից այն կողմ սկսում
են թավուտ անտառները և անմարդաբնակ հսկայական շրջան-
ները: Տանախսի երկայնքով փոված երկիրն ու Բակտրիան նույն
մշակութի հետքերն ունեն, 5. Ալեքսանդրն առանց նախա-
պատրաստվելու, որոշեց առաջինը կռվել այդ ցեղի դեմ. նրա
աչքի առջև հետ ու առաջ էին անում թշնամու հեծյալները, իսկ
ինքը դեռ չէր ապաքինվել վերքերից. շափավոր սնվելուց և ծոծ-
րակի ցավից հատկապես թուլացել էր նրա ձայնը: Եվ այսպես,
նա հրամայում է խորհրդի հավաքել ընկերներին: 6. Նրան ոչ
թե թշնամին էր վախեցնում, այլ անբարենպաստ վիճակ. բակտ-
րիացիները պառակտվեցին, սկյութները սկսեցին անհանգըս-
տացնել նրան, նա էլ չէր կարողանում ոչ կանգնել, ոչ ձի նըս-
տել, ոչ հրամաններ արձակել, ոչ ոգևորել զինվորներին: 7. Ծն-
թարկվելով կրկնակի վտանգի, դժգոհելով նույնիսկ աստվածնե-
րից, նա բողբոջում էր, որ գամված է անկողնին, այն դեպքում,
երբ նախկինում ոչ ոք չէր կարողանում խուսափել իր արագաշար-
ժությունից, իսկ զինվորներն էլ դժվարությամբ են հավատում,
թե ինքը հիվանդ չի ձևացնում:

8. Գարեհին հաղթելուց հետո դադարելով խորհրդակցել զու-

շակների ու մարգարեների հետ, նա կրկին տրվեց սնահավատու-
թյուններին, մարդկային մտքի դատարկ ճամարտակությանը:
Նա հրամայում է Արիստանդրին, որին հավատում էր, զոհեր
մատուցել գործերի կըր իմանալու նպատակով: Գուշակները
սովորություն ունեին արքայի րացակայության ժամանակ ուսում-
նասիրել կենդանիների փորոտիքը և հետո զեկուցել կանխագու-
շակությունների մասին: 9. Մինչ կենդանիների օրգանների մի-
ջոցով փորձում էին իմանալ ապագայի մասին, Ալեքսանդրը
խնդրում է ընկերներին մոտ նստել, որպեսզի ձայնի լարումից
չբացվի նրա դեռ լրիվ շապաքինված վերքը: Պահանջների հետ
միասին նրա վրան թուլատրել էին մտնել Հեփեստոսնեսին,
կրատերոսին և էրիգիոսին: 10. Են հանդիպել եմ վտանգի,—
ասաց Ալեքսանդրը,— այնպիսի պայմաններում, որոնք ափելի
նպաստավոր են թշնամու համար, քան ինձ համար: Սակայն
փորձանքը առաջ է անցնում գիտակցութունից հատկապես պա-
տերազմի ժամանակ, որի ընթացքում հազվադեպ է ժամանակ
տրվում ընտրություն կատարելու համար: 11. Մեղանից հեռա-
ցան ձեր ոտքերն ընկած բակտրիացիները և օտար ուժերի օգ-
նությամբ փորձության են ենթարկում մեր արիությունը: Բոլո-
րովին կասկած չկա, որ եթե անպատիժ թողնենք հանդուգն
սկյութներին, մենք անարգված կվերադառնանք դեպի մեզ լքած-
ները: 12. Իսկ եթե մենք անցնենք Տանախս և սկյութներին
արյունահեղ ծեծով ցույց տանք, որ ամենուր անհաղթելի ենք,
ապա ո՞վ կհապաղի իր հնազանդությունը ցուցաբերել նույնիսկ
Եվրոպան հաղթողներին: 13. Սխալվում է նա, ով մեր փառքի
սահմանները շափում է այն տարածությամբ, որը մենք դեռ
պետք է անցնենք: Մեր միջև միայն մի գետ է. անցնելով այն,
մենք զենքով կշարժվենք դեպի Եվրոպա: 14. Իսկ արդո՞ք մեզ
համար սլակաս արժեք ունի այն, որ նվաճելով Ասիան, կտա-
նենք ռազմավարը մեկ այլ աշխարհ, մի երկրի հաղթանակի գնով
միացնելով միանգամից երկրներ, որոնց, թվում է, թե բնությու-
նը ցրել է այդքան մեծ տարածության վրա: 15. Երդվում եմ,
որ եթե մենք նույնիսկ մի փոքր հապաղենք, ապա սկյութները
կշրջանցեն մեզ թիկունքից: Մի՞թե միայն մենք ենք կարողա-
նում գետանց կատարել: 16. Հենց մեր դեմ էլ դուրս կգա շատ
բան, ինչ մինչ այդ մեզ հաղթանակ է պարգևել: Ծակատագիրը
ռազմական արվեստ է սովորեցնում նաև հաղթվածներին: Վեր-
ջերս մենք օրինակ ցույց տվեցինք, թե ինչպես անցնել գետը

տիկերի վրա, և եթե սկզբները չկարողանան ընդօրինակել դա մեղանից, նրանց կոտորեցնեն բակտրիացիները: 17. Մինչ այժմ ժամանել է այդ ցեղի միայն մի ջոկատը, մյուս հրոսակներին դեռ սպասում են: Այդ ձևով, խուսափելով պատերազմից, մենք կհրահրենք այն և հարձակվելու փոխարեն ստիպված կլինենք պաշտպանվել: 18. Իմ որոշման դրդապատճառները պարզ են: Սակայն վախենում եմ, որ մակեդոնացիները թույլ շտան ինձ դործի դնել դրանք: չէ՞ որ վիրավորվելուց հետո ես դեռ ձի չեմ հեծել և ոչ էլ ոտքի կանգնել: 19. Սակայն եթե դուք, բարեկամներ, հետևեք ինձ, ապա ես առողջ եմ: Իմ մեջ բավարար ուժ կա, որպեսզի կրի այդ դժվարությունները: Իսկ եթե իմ վախճանը մոտեցնել է, ապա ո՞ր դեպքում արդյոք կկարողանամ գտնել ավելի փառավոր մահ: 20. Նա այդ խոսքերն արտասանեց թույլ, մարող ձայնով. նույնիսկ նրանք, ովքեր նրան շատ մոտ էին կանգնած, դժվարությամբ էին լսում նրան: Բոլոր ներկա գտնվողները փորձում էին հետ պահել արքային այդպիսի հապճեպ որոշում ընդունելուց: 21. Հատկապես էրիզիոսը, որը հավանաբար չէր կարողանում կոտրել Ալեքսանդրի համառությունը իր հեղինակությամբ, փորձեց դիմել նրա սնտրիապաշտությունը, որին արքան ուժ չունեիր դիմադրելու էրիզիոսն ասաց արքային, որ իրենք՝ աստվածները հավանություն չեն տալիս նրա մտադրությանը, և նրան մեծ վտանգ է սպառնում զետն անցնելու դեպքում: 22. Իրոք, էրիզիոսը արքայի վրանը մոտենուց առաջ հանդիպել էր Արիստանդրին, որը հայտնել էր, թե կանխագուշակում են անբարենպաստ են. այժմ էլ նա հայտնեց այն, ինչ իմացել էր գուշակից: 23. Ալեքսանդրը, իր մոտ պահելով նրան, հրամայում է կանչել Արիստանդրին. նա միաժամանակ զայրացած էր և շփոթված, բանի որ բացահայտվել էր իր թաքցրած սնահավատությունը: 24. Երբ նա ներս մտավ, Ալեքսանդրը, նայելով նրան, ասաց. «Ես հիմա քեզ համար արքա չեմ, այլ մասնավոր անձ: Ես քեզ հանձնարարել էի զոհ մատուցել: Հապա ինչու՞ ես դու կանխագուշակումը հայտնում ուրիշին և ոչ ինձ: Քո դավաճանության պատճառով էրիզիոսին հայտնի են դարձել իմ թաքուն մտքերը: Ես համոզված եմ, որ փորոտիքի վիճակը նա մեկնարանել է սեփական վախի ազդեցության տակ: Իսկ քեզ հետ ես խոսում եմ ավելի հանգիստ, բան անհրաժեշտ է: 25. Ասա ինձ, ի՞նչ է քեզ հայտնի դարձել փորոտիքից, որպեսզի հետագայում դու չկարողանաս հերքել քո իսկ խոսքերը»: 26. Ա-

քիտանդրը կանգնել էր մահացու գոնատ և ասես շանթահար Վախից նա կորցրել էր խոսելու ընդունակությունը: Վերջապես, նույն վախի ազդեցությունից, երկյուղելով չափից ավելի սպառնցնել արքային, նա ասաց. 27. «Ես կանխագուշակել եմ, որ քեզ սպասում են մեծ դժվարություններ և ոչ թե անհաջողություն, և ինձ ամաչեցնում է ոչ այնքան իմ փրտությունը, որքան քո հանգեպ ունեցած բարեհաճ վերաբերմունքը: Ես տեսնում եմ քո թույլ առողջությունը և գիտեմ, որ ողջ հաջողությունը կախված է միայն քեզանից: Ես երկյուղում եմ, որ քո ուժերը չեն բավականացնի գլուխ հանել նշված ճակատագրից»: 28. Արքան ազատ արձակեց Արիստանդրին, պատվիրելով նրան հավատալ իր բախտին, իբր աստվածները նրան փառք են խոստանում և ուրիշ գործերում: 29. Եվ երբ նա սկսեց խորհրդակցել այդ նույն մարդկանց հետ զետանցի միջոցների մասին, Արիստանդրը վերադարձավ և հայտարարեց, որ նա նախկինում երբեք չի տեսել այդքան բարենպաստ փորոտիք և որ դրանք սաստիկ տարբերվում են նախկիններից. մինչ այդ անհանգստանալու հիմք կար, իսկ այժմ զոհաբերությունը չափազանց բարենպաստ դուրս եկավ:

30. Սակայն դրանից հետո արքային հայտնված լուրերը խամրեցրին նրա անընդմեջ հաջողությունների փայլը: 31. Ինչպես վերևում ասվել էր, նա Մենեղեմոսին ուղարկել էր պաշարելու Սպիտամենին՝ բակտրիացիների պառակտման մեղավորին: Սա տեղեկանում է թշնամու մոտենալու մասին և, որպեսզի քաղաքում փակված չմնա, դարանակալում է, հույս ունենալով բռնացնել հակառակորդին այն ճանապարհին, որով, ինչպես իրեն հայտնի էր, նա պետք է անցներ: 32. Ճանապարհը անցնում էր անտառի միջով և հարմար էր դարանակալելու համար. այդտեղ նա թաքցրեց դահերին: Նրանք ձիերի վրա նստեցնում են երկուական զինված հեծյալներ, որոնք հերթով անսպասելիորեն ցատկում են զետնի վրա և խանգարում հակառակորդի հեծելամարտին: 33. Զինվորների ճարպկությունը համապատասխանում է ձիերի արագաշարժությանը: Սպիտամենը, հրամայելով շրջապատել անտառը, թշնամու դեմ տարավ իր մարտիկներին միաժամանակ թեքից, ճակատից և թիկունքից: 34. Մենեղեմոսը հայտնվեց փակուղու մեջ, իսկ նրա ջոկատը նույնիսկ ավելի փոքրաթիվ էր թշնամու ջոկատից, սակայն նա երկար ժամանակ դիմադրում էր, համոզելով յուրայիններին, որ անձանոթ

վայրում թակարդն ընկածներին ուրիշ ոչինչ չի մնում, քան փնտրել պատվավոր մահ, կոտորելով թշնամուն: 35. Նա ուժեղ ձի ունեւր. նա բազմիցս ձիով մխրճվում էր բարբարոսների շարքերը, հասցնելով նրանց սարսափելի կորուստներ: 36. Բայց քանի որ միայն նրա վրա էին նշան բռնել բոլոր ախոյանները, նա ուժասպառ եղավ վերքերից և պահանջեց իր ընկերներից մեկին՝ Հիպսիդեսին նստել իր ձիու վրա և փրկվել, փախուստի դիմելով: Այժմ ասելով նա հոգին փչեց, և նրա մարմինը ձիու վրայից ընկավ գետին: 37. Հիպսիդեսը իսկապես կարող էր ճեղքելով դուրս պրծնել, սակայն կորցնելով ընկերոջը, որոշեց և ինքը մեռնել: Նրա միակ հոգար դարձավ թշնամուց վրեժխնդիր լինելը: Եվ այդպես, խթանելով իր ձիուն, նա մխրճվեց թշնամու բազմութան մեջ և, փառավորապես կռվելով նրանց դեմ, զոհվեց ծակծկված թշնամու բազմաբանակ նետերով: 38. Ողջ մնացածները, տեսնելով այդ, գրավեցին ճակատամարտի դաշտի վրա խոչացած բլուրը: Սպիտամներ պաշարեց նրանց, որպեսզի քաղցով ստիպի անձնատուր լինել: 39. Այդ ճակատամարտում զոհվեց 2000 հետևակային և 300 հեծյալ: Այդ պարտությունը Ալեքսանդրը ճարպկորեն կոծկեց, ճակատամարտի վայրից եկածներին մահապատժով սպառնալով, եթե նրանք լուրեր տարածեն կատարվածի մասին:

VIII. Ձանձրանալով դեմքին իր հոգեկան վիճակին անհամապատասխան արտահայտություն տալուց, արքան հեռացավ վրան, որը դիտմամբ խփված էր գետի ափին: 2. Այնտեղ, առանց վկաների, ծանրութեթե անելով իր միտքը եկած որոշումները, նա ամբողջ գիշեր աչք շփակեց, հաճախ բարձրացնելով վրանի մորթիները, որպեսզի հայացք զցի թշնամու խարուկների վրա և ըստ դրանց գուշակի հակառակորդի բանակը: 3. Արդեն լուսաբաց էր, երբ արքան, հագնելով զենքն ու զրահը, հայտնվեց զինվորների առջև, առաջին անգամ վերջին վիրավորվելուց հետո: 4. Զինվորները այնքան շատ էին մեծարում արքային, որ նրա միայն ներկայությունը հեշտությունը ստիպեց նրանց մոռանալ սարսափելի վտանգի մասին: 5. Նրանք ողջունում էին արքային երջանկության արցունքներով և քաջասրտորեն պատերազմ պահանջում, որին առաջ դիմադրում էին: 6. Ալեքսանդրը հայտնում է, որ հեծելազորն ու փաղանգը լաստերով կտեղափոխի գետի մյուս ափը, իսկ թեթևազեններին հրամայում է միաժամանակ լողալով անցնել գետը տիկերի վրա

պատկած: 7. Ավելորդ բառեր չպահանջվեցին, բացի այդ էլ արքայի տկարությունը թույլ չէր տալիս նրան խոսել, իսկ զինվորները այնպիսի արագությունը էին կապում լաստերը, որ երեք օրվա ընթացքում պատրաստել էին 12 000 լաստ: 8. Եվ նրանք արդեն ամեն ինչ պատրաստել էին գետանցի համար, երբ 20 սկյութական դեսպաններ, իրենց սովորությունն համաձայն ձիերով անցնելով ճամբարի միջով, պահանջեցին զեկուցել արքային իրենց ցանկությունը՝ անձամբ նրան հայտնել իրենց առաջադրանքը: 9. Ներս թողնելով վրան, նրանց հրավիրեցին նստել. և նրանք աչքները հռոցեցին արքայի դեմքին. հավանաբար, նրանց, որ վարժված են ողու ուժի մասին դատել մարդու հասակով, արքայի անշուք տեսքը թվում էր, թե ամենևին չի համապատասխանում նրա փառքին: Սկյութների բնավորությունը, ի տարբերություն մնացած բարբարոսների, զարգացած է և մշակույթի հակվածություն ունի: 10. Ասում են, նրանցից ոմանց մատչելի է եակ փամաստնությունը այն չափով, որքանով այն կարող է լինել զենքից անբաժան ցեղի մոտ: 11. Հիշողությունը նույնիսկ պահպանել է այն ճառի բովանդակությունը, որով նրանք դիմել են արքային: Միգուցե նրանց ճարտասանությունը տարբերվում է մերիներից, ում բախտ է վիճակվել այրել լուսավոր ժամանակներում, բայց եթե նրանց ճառը նույնիսկ նողկանք առաջացնի, մեր արդարամտությունը պահանջում է, որպեսզի մենք հաղորդենք մեզ հայտնածը, ինչպիսին էլ որ այն լինի, առանց փոփոխությունների: 12. Եվ այսպես, ինչպես մեզ հայտնի դարձավ, նրանցից մեկը՝ ամենաավագը, ասաց. «Եթե աստվածները ցանկանային քո մարմնի մեծությունը սարքել քո ազահության չափով, դու չէիր տեղավորվի ողջ երկրի վրա. մի ձեռքով կդիպչիր արևելքին, մյուսով՝ արևմուտքին, և հասնելով այդպիսի սահմանների, դու կցանկանայիր իմանալ, թե որտեղ է աստվածային լույսի աղբյուրը: 13. Դու ցանկանում ես նույնիսկ այն, ինչ չես կարող ընդգրկել: Եվ որպայից սլանում ես Ասիա, Ասիայից՝ Եվրոպա. եթե քեզ հաջողվի նվաճել ողջ մարդկային ցեղը, դու կովի կմտնես անտառների, ձյունների, գետերի ու վայրի դադանների հետ: 14. Իսկ հետո՞ Մի՞թե դու չգիտես, որ մեծ ծառերը երկար ժամանակ են աճում, բայց արմատախիլ եմ արվում մեկ ժամվա ընթացքում: Հիմար է նա, ով աչք է գցում նրանց պտուղների վրա, առանց չափելու նրանց բարձրությունը: Տես, որ չստացվի այնպես, որ ձգտելով բարձրանալ նրանց դա-

գաթը, ընկնես այն ճյուղերի հետ միասին, որոնցից բռնվելու
ես: 15. Նույնիսկ առյուծը մի անգամ դարձել է մանր թռչունների
կեր: Ժանգը լափում է երկաթը: Գոյություն չունի այնպիսի
ամուր բան, որին վտանգ չսպառնա նույնիսկ թույլ արարածի
կողմից: 16. Որտեղի՞ց է ծնունդ առել թռչունների մեծ հան-
դեսը: Մենք երբեք չենք գրել թռչունների վրա: Մի՞թե մեր լայ-
նարձակ անտառներում մենք իրավունք չունենք իմանալ, թե ո՞վ
ես դու և որտեղի՞ց ես եկել: Մենք չենք կարող որևէ մեկին ծա-
ռայել և տիրելու ցանկություն էլ չունենք: 17. Գիտցի՞ր, մեզ՝
եկյուսթներին տրված է այսպիսի պարգև²⁶՝ եզան լուծ, խոփ, նի-
զակ, նետ ու գավաթ: Դրանցից ենք մենք օգտվում մեր բարեկ-
ամների ու թշնամիների հետ հաղորդակցվելիս: 18. Եզանե-
րի աշխատանքի պտուղները մենք մատուցում ենք բարեկամնե-
րին, գավաթից նրանց հետ միասին գինի ենք հեղում աստված-
ների, նետերով մենք թշնամիներին սպառնում ենք հեռվից, իսկ
նիզակներով՝ մոտիկից: Այդպես մենք հաղթեցինք Ասորիքի²⁷
արքային, այնուհետև պարսիկների և մարերի արքային և, այդ
հաղթանակների շնորհիվ, մեր առջև ճանապարհ բացվեց ընդ-
հույ մինչև Եգիպտոս: 19. Դու պարծենում ես, թե եկել ես այս-
տեղ հետապնդելու թալանիչներին, իսկ ինքդ Ասորիքը գրավե-
ցիր, Պարսկաստանը պահում ես, Բակտրիան թռչուններից
տակ է, Հնդկաստանին համարոհեն ձգտում ես. այժմ էլ մեկնել
ես թագահ ու անհագ ձեռքերը նաև դեպի մեր հոտերը: 20. Ին-
չի՞դ է պետք հարստությունը. այն միայն ավելի մեծ քաղց է
առաջացնում: Դու առաջինը կզգաս այդ գերհագեցվածությունը.
Ինչքան ավելի շատ ունես, այնքան ավելի մեծ ազահուլիցամը
ես ձգտում այն ամենին, ինչ չունես: 21. Մի՞թե չես հիշում, թե
ինչքա՞ն երկար ստիպված եղար մնալ Բակտրիայում: Մինչև
հնազանդեցիր բակտրիացիներին, պատերազմ սկսեցին սողոթերը:
Պատերազմը քեզ մոտ ծնվում է հաղթանակից: Իրականում, թեև
դու ամենամեծ ու հզորագույն մարդն ես, ոչ ոք, սակայն, չի
ցանկանում հանդուրժել օտարերկրյա տիրակալի»:

22. «Անցիր միայն Տանախը, և քեզ հայտնի կդառնա մեր
տարածքի լայնությունը, իսկ սկյուֆներին երբեք թո՛ղ ձեռք չի
հասնի: Մեր աղքատությունը ավելի արագաշարժ կլինի թո՛ղ դոր-
քից, որք իր հետ տանում է այդքան ժողովուրդներից թալանած
ավարը: Մի ուրիշ անգամ, կարծելով, թե մենք հեռու ենք, դու

կտեսնես մեղ թո՛ղ իսկ ճամբարում: 23. Դենք հավասարապես
արբնաց և՛ հետապնդում ենք, և՛ փախում: Ես լսել եմ, որ սկյու-
ֆական անապատների մասին հույների մոտ նույնիսկ ասաց-
վածք կա: Իսկ մենք ավելի հաճույքով թափառում ենք անապա-
տային և քաղաքակրթություն չգիպած վայրերով, քան քաղաք-
ներով ու բերքառատ դաշտերով: Դրա համար էլ ամուր կառչիք
քո ճակատագրից: 24. Ենչև ձեռքից դուրս է պրծնում և անհնար
է նրան ուժով պահել. ժամանակին դու ավելի լավ կհասկանաս
այդ խորհրդի օգուտը, քան այժմ: Սանձիր թո՛ղ բախտը. ավելի
հեշտ կլինի ղեկավարել այն: 25. Մեղանում ասում են, թե եր-
ջանկությունը ռոքեր չունի, այլ միայն ձեռքեր ու թևեր. մեկնե-
լով ձեռքերը, այն թույլ չի տալիս բռնել իրեն և թևերից: 26. Վեր-
ջապես, եթե դու աստված ես, ապա դու ինքդ պետք է մահկանա-
ցունեիր բարեզործություններ անես և ոչ թե խլես նրանցից
իրենց բարիքները, իսկ եթե դու մարդ ես, ապա հիշիր, որ դու
միշտ մարդ էլ կմնաս: Հիմարություն է մտածել այն մասին, հա-
նում որի դու կարող ես մոռանալ ինքդ քեզ: 27. Ում հետ դու
չես պատերազմի, նրանց մեշ կգտնես թո՛ղ հավատարիմ բարե-
կամներին: Ամենամոտ քարեկամությունը հաստատվում է հա-
վասարների միջև, իսկ հավասարները համարվում են միայն
նրանք, ովքեր մեկմեկու չեն սպառնացել ուժով: 28. Սի երևա-
կայիր, թե թո՛ղ կողմից պարտվածները թո՛ղ ընկերներն են: Տիրոջ ու
ստրուկի միջև բարեկամություն լինել չի կարող. պատերազմի
իրավունքները պահպանվում են նաև խաղաղ ժամանակ: 29. Մի
կարծիր, թե սկյուֆները բարեկամությունը հաստատում են եր-
զումով. նրանց համար երզումը հավասարմունքությունը պահպա-
նելու մեջ է: Այդ հույներն են, որ նախազգուշության նկատա-
ռումով պայմանագրեր են ստորագրում և վկայակոչում աստ-
վածներին: Մեր կրոնը հավատարմության պահպանումն է: Ով չի
հարգում մարդկանց, ես խաբում է աստվածներին: 30. Ոչ մե-
կին պետք չէ այնպիսի ընկեր, որի հավատարմությանը կասկա-
ծում ես: Ի՞ դեպ, ի՞ դեմ մեզ դու կարող ես ունենալ Ասիայի ու
Եվրոպայի պահպանների: Եթե մեզ չսահմանադատեր Տանախ-
ը, մենք փոխադարձ շփման մեջ կլինեինք Բակտրիայով: Տա-
նախ գետի այն կողմում մենք հողեր ենք բնակեցրել մինչև
Թրակիա, իսկ Թրակիան, ասում են, սահմանակից է Մակեդո-
նիային: Մենք թո՛ղ երկու կայսրությունների հարեաններն ենք»:

մտածիր, ի՞նչ կցանկանայիր մեր մեջ տեսնել՝ թշնամիներ թե բարեկամներին»:

IX. Այսպես էր խոսում բարբարոսը: Արքան պատասխանեց, որ կօգտվի և՛ իր բախտից, և՛ նրանց խորհուրդներից, կհետևի ճակատագրի կամքին, որին վստահում է, և նրանց կարծիքին՝ չգործել անխելամիտ ու հանդուգն: 2. Ազատ արձակելով ղեսուպաններին, նա ղինվորներին նստեցրեց նախապես պատրաստված լաստերի վրա: Լաստերի քթին նա տեղադրեց վահանակիրներին, կարգադրելով նրանց ծնկի՝ դալ նետերից խուսափելու համար: 3. Նրանց հետևում կանգնեցին նետողական ղինքերը գործի ղնողները: Վերջիններս թևերից և ճակատից շրջապատեցին ղինվորները, մյուսները, որոնք գտնվում էին նետողական ղինքերից հետո, կրիայով ծածկել էին թիավարներին, որոնք զրահ չունեին: 4. Նույն կարգը պահպանվում էր հեծելազորը տանող լաստերի վրա: Մեծամասնությունը սանձերից քաշում էր լաստերի հետևից լողացող ձիերին: Իսկ դարձանով լցված տիկերի վրա լողացողներին ծածկում էին առջևում գտնվող լաստերը: 5. Ինքը՝ արքան լավագույն ղինվորներով առաջինը արձակեց իր լաստը և հրամայեց այն ուղղել ղեսպի հանդիպակաց ափը: Նրա ղիմաց սկյութները հեծյալներին կանգնեցրել էին ուղղակի ջրի մեջ, որպեսզի խոչընդոտեն լաստերի նույնիսկ ափին մոտենալը: 6. Բացի այն, որ մակեդոնացիները տեսնում էին ուղիղ գետի ափին տեղավորված հակառակորդի զորքը, նրանք մի այլ վախ էլ ունեին, քանի որ լաստերը ղեկավարող թիավարները չէին կարողանում ղուլսի հանել իրենց քշող հոսանքից, իսկ ղինվորները, նեղվելով լաստերի ճոճումից, վախենում էին շուտ գալ և խանգարում էին թիավարների աշխատանքին: 7. Չնայած իրենց ջանքերին, մակեդոնացիները չէին կարողանում նույնիսկ նետեր արձակել, քանի որ նրանց առաջին հոգսը հավասարակշռությունը պահպանելն էր և ոչ թե թշնամուն խոցելը: Նրանց փրկում էին նետողական գործիքները, որոնցից նրանք հաջողությամբ տեղեր էին նետում թշնամու խիտ շարքերի մեջ, որոնք սեղգուշորեն կանգնել էին նրանց ղիմաց: 8. Բարբարոսները նույնպես բազմաթիվ նետեր էին ուղղում ղեսպի լաստերը: Հաղիվ թե մնացել էր մի որևէ վահան, որի մեջ մի քանի նետ մխրձված չլինեին:

9. Լաստերը ղեռ նոր էին մոտեցել ափին, երբ վահաններով ղրնված ղինվորները միանգամից ոտքի ելան և ազատ շարժու-

մանք, վստահորեն նիզակներ նետեցին լաստերի վրայից: Տեսնելով, որ թշնամու վախեցած ձիերը նահանջում են, նրանք իրար քշեցրելով, ճարպկորեն թռան գետին և կատաղորեն սկսեցին հարձակվել իրարանցման մեջ ընկած թշնամու վրա: 10. Այնուհետև, արդեն ձիերի վրա նստած հեծյալները ճեղքեցին բարբարոսների շարքերը: Միաժամանակ մնացածները, ծածկված կոլոդների ջոկատով, պատրաստվեցին մարտի: 11. Արքան իր ղեռնա թույլ մարմնի ուժի պակասությունը լրացնում էր ոգու հաստատակամությամբ: Զինվորներին ոգևորող նրա ձայնը չէր լսվում, քանի որ նրա վզի վերքը ղեռ լիովին չէր ապաքինվել, սակայն բոլորը տեսնում էին, թե ինչպես է նա մասնակցում ճակատամարտին: 12. Այդպիսով, ամեն մեկն իր համար առաջնորդ էր. իրար ոգևորելով և չհոգավով իրենց կյանքի մասին, նրանք սկսեցին նեղել թշնամուն: 13. Այստեղ բարբարոսները չկարողացան ղիմանալ թշնամիների ոչ հայացքին, ոչ ղենքին, ոչ էլ գոչույուններին և բոլորը, ամբողջ ուժով քշելով ձիերը (նրանց զորքը բաղկացած էր հեծելազորից), ղիմեցին փախուստի: Թեև արքան ուժասպառ էր եղել տանջանքներից, որ պատճառում էր նրան նրա թուլացող մարմինը, նա, այնուհանդերձ, համառությամբ հետապնդեց թշնամուն 80 ասպարեզ տարածություն վրա: 14. Ի վերջո, ուժասպառ լինելով, նա հրամայեց յուրայիններին անդադրում հետապնդել փախչողներին մինչև օրվա վերջը, իսկ ինքը, բոլորովին ուժից ընկած, վերադարձավ ճամբար և մնաց այնտեղ: 15. Նրա ղինվորներն արդեն անցել էին հայր կիբերոսի ուղևորությունների սահմանը, որը նշված էր իրար մոտ ղրված քարերով և բարձր, բաղեղներով փաթաթված ծառերով: 16. Սակայն կատաղությունը քեցի մակեդոնացիներին ավելի հեռու. նրանք վերադարձան կեսգիշերին մոտ, ջարդելով մեծ քանակությամբ թշնամիների, ավելի շատ գերի վերցրին և բերեցին 1800 ձի: Մակեդոնացիների կորուստները կազմեցին 60 հեծյալ և մոտ 100 սպանված հետևակային և հազար հոգի վիրավոր:

17. Այդ արշավանքը, շնորհիվ այդքան հաջող հաղթանակի համբավի տարածման, հնազանդեցրեց պառակտված Ասիայի ղզալի մասը, նրա բնակչությունը հավատում էր սկյութների անպարտելիությանը. նրանց պարտությունը ստիպեց ընդունել, որ մակեդոնացիների ղենքին ոչ մի ցեղ ի վիճակի չէ ղիմադրելու: Այդ կապակցությամբ սակերը ղեսպաններ ուղարկեցին

խոստում տալու, որ իրենց ցեղը հնազանդ կմնա Ալեքսանդրին և 18. Այդ քայլին նրանց զրդեց դիմել ոչ միայն արքայի քաջությունը, այլև նրա ներողամտությունը պարտված սկյուֆների նկատմամբ. նա բոլոր գերիներին ազատ արձակեց առանց փրկագնի, որպեսզի դրանով ապացուցի, որ ցեղերից ամենաքաջերի հետ նա մրցել է արիության և ոչ թե կատաղության համար: 19. Այսպիսով, ողորմաբար ընդունելով սակերի դեսպաններին, նա նրանց որպես ուղեկցորդ տվեց էքսցիպիտոսին՝ զեռ բոլորովին երիտասարդ մի մարդու, որին նա մերձեցրել էր իրեն նրա ծաղկող պատանեկության պատճառով: Մարմնի կազմվածքով հիշեցնելով Հեփեստոնեսին, նա, իհարկե, զիջում էր նրան կանացիությանը: 20. Ալեքսանդրը, հրամայելով Կրատերոսին զորքի մեծ մասով հետևել իրեն կարճատև անցումներով, հասավ Մարականդ քաղաքը, որտեղից, տեղեկանալով նրա մտենալու մասին, Սպիտամենը փախել էր Բակտրա²⁸, 21. Այսպիսով, չորս օրվա ընթացքում անցնելով ճանապարհի մեծ մասը, նա հասավ այն վայրը²⁹, որտեղ կորցրել էր Մենեզեմոսի հրամանատարության տակ գտնվող 2000 հետևակային և 300 հեծյալ: Նրանց ոսկորները հրամայեց թաղել և հարազատ սովորությամբ համաձայն մեռյալներին զոհ մատուցել: 22. Փազանգով նրան հետևելու հրաման ստացած Կրատերոսը արդեն միացել էր նրան: Որպեսզի իրենից պառակտվածները հավասար չափով իրենց վրա զզան պատերազմի արհավիրքները, Ալեքսանդրը մասնատեց իր զինվորական ուժերը և հրամայեց այրել գյուղերը և սրի մատնել բոլոր մեծահասակներին:

X. Սոզդիանան մի երկիր է, որի մեծ մասը անապատային է. տափաստանները տարածվում են համարյա 80 ասպարեզ լայնությամբ: Այդ երկիրը հսկայական տարածք ունի. այդտեղով անցնում է մի սրընթաց հեղեղ, որին տեղաբնակները անվանում են Պոլիտիմետոս: Նրա ափերը նեղացնում են հունը, այնուհետև այդ հեղեղը մտնում է քարանձավ և անհետանում գետնի տակ: 3. Նրա ջրերի աղմուկը ցույց է տալիս անտեսանելի հոսանքի ուղղությունը, այնուհանդերձ գետինը, որի տակով հոսում է այդքան մեծ մի գետ, ամենևին խոնավություն չի գոլորշիացնում: 4. Սոզդացի գերիներից արքայի մոտ բերվեցին 30 ազնվատոհմիկներ, որոնք աչքի էին ընկնում ֆիզիկական ուժով. երբ նրանց թարգմանչի միջոցով հայտնեցին, որ արքայի հրամանով իրենց տանում են մահապատժի, նրանք սկսեցին ուրախ

եքզ երգել և պարերով ու մարմնի չափազանց տարօրինակ շարժումներով երջանկության նշաններ ցույց տալ: 5. Արքան, զարմացած նրանց արիությանից, որով նրանք զիմալորում էին մահը, կարգադրեց հետ բերել նրանց և հարցնել մահապատժից առաջ այդ անշափ ցնծության պատճառը: 6. Նրանք պատասխանեցին, որ եթե իրենց մահապատժի ենթարկեր մեկ ուրիշը, նրանք կմենեհին թախիծով, սակայն իրենց նախնիների մոտ այդքան մեծ արքայի՝ բոլոր ցեղերի հաղթողի կողմից ուղարկվելը, իրենք, երգելով իրենց հարազատ երգերը և ուրախանալով, համարում են իրենց համար պատվավոր մահ՝ բոլոր քաջերի բաղձաբեր առարկա: 7. Այնժամ արքան հարցրեց. «Ի՞նչ լինի՞ր ցանկանա ապրել, եթե ես ձեզ կյանք պարգևեմ, բայց ոչ արդեն որպես իմ թշնամիները»: 8. Նրանք պատասխանեցին, որ երբեք արքայի թշնամիները չեն եղել, սակայն այդպիսին են դարձել պատերազմի մեջ ներքաշվելու պատճառով: Եթե որևէ մեկը ցանկանար փորձել նրանց ողորմածությանը և ոչ թե անարդարությանը, ապա նրանք ոչ որի թույլ չէին տա գերազանցել իրենց հավատարմության մեջ: 9. Այն հարցին, թե որն է նրանց հավատարմության հավաստիքը, նրանք պատասխանեցին՝ կյանքը, որը նրանք կստանան Ալեքսանդրի ձեռքից և կվերադարձնեն նրան, երբ էլ նա այն պահանջի: Եվ նրանք իրենց խոսքի տերը եղան. նրանք, ովքեր տուն վերադարձան, ժողովրդին հնազանդության մեջ պահեցին. չորս հոգի, որոնք ընդգրկվեցին արքայի թիկնապահների կազմի մեջ, հավատարմությանը չզիջեցին մակեդոնացիներից ոչ մեկին:

10. Սոզդիանայում թողնելով Պեկոլայոսին երեք հազարանոց հետևակով (ավելի մեծ կայազորի կարիք չկար), արքան ժամանեց Բակտրա: Այնտեղից նա կարգադրեց էկբատան ուղարկել Բեսին, որպեսզի նա գլխով պատասխան տա Գարհի սպանության համար: 11. Այդ նույն օրերին Պտղոմեոսը և Մենիդոսը բերեցին վարձկաններին՝ 3000 հետևակային և հազար հեծյալ: 12. Լիկիայից եկավ նաև Ալեքսանդրը նույնքան հետվակայիններով և հինգ հարյուր հեծյալով: Այդքան էլ եկան Ասորիքից Ասիլեպիոդորոսի հետ. Անտիպատրոսը ուղարկել էր 8000 հույն, որոնցից 500-ը հեծյալներ էին: 13. Համալրում ստանալով, արքան ճամփա ընկավ ապստամբությունը վերջնականապես ճնշելու նպատակով. մահապատժի ենթարկելով ապստամբություն սաղորդներին, նա շորրորդ օրը հասավ Օբսոս

գետին: Նրա ջուրը, որը տիրմ է տանում, միշտ պղտոր է և վնասակար խմելու համար: 14. Այդ պատճառով գինյութները սկսեցին ջրհորներ փորել: Սակայն ջուր չկարողացան գտնել նույնիսկ մեծ խորության վրա, և հանկարծ աղբյուր նկատեցին արքայի վրանում: Միանգամից այն շհայտնաբերելով, սկսեցին պնդել, թե այն հանկարծակի է հայտնվել: Ինքը՝ արքան էլ ցանկանում էր, որպեսզի հավատան, թե իբր այդ աղբյուրը աստվածների ընծան է: 15. Այնուհետև անցնելով Օրոս և Օրոսո գետերը, նա ժամանեց Մարգիանա³⁰ քաղաքը: Մոտակայքում տեղեր ընտրվեցին վեց ամրոցների հիմնադրման համար. նրանցից երկուսը դեպի հարավային կողմը, իսկ չորսը՝ այդ քաղաքից դեպի արևելք, բոլորն էլ իրար մոտ տարածություն վրա, որպեսզի օգնության դեպքում հեռու չլնան: 16. Նրանք բոլորը տեղադրված էին բարձր բլուրների վրա. նախկինում որպես լուծ նվաճված ցեղերի համար, այժմ, մոռանալով իրենց ծագման մասին, նրանք ծառայում են նրանց, ում վրա ժամանակին իշխել են:

XI. Արքան իրեն ենթարկեց նաև մնացած մարդերը: Մնացել էր միայն մի ժայռ, որը զբաղեցրել էր սողազցի Արիմազը 30.000 գինյութներով, նախապես այնտեղ հավաքելով պարեն, որը կրավարարեր այդ քանակությամբ մարդկանց համար ամբողջ երկու տարի: 2. Ժայռը 30 ասպարեզ բարձրություն ունի և 150 ասպարեզ շրջագիծ: Բոլոր կողմերից այն քարքարոտ է ու բարձրանալու համար կա միայն չափազանց նեղ մի արահետ: 3. Բարձունքի մեջտեղում կա մի քարանձավ, նեղ ու մութ մուտքով. աֆուհետև այն լայնանում է և խորքում լայնատարած ապաստարան ունի: Քարանձավում համարյա ամենուր աղբյուրներ կան, որոնց ջրերը իրար միանալով հոսում են լեռնալանջերով: 4. Արքան, տեսնելով այդ վայրի անառիկությունը, սկզբից որոշեց հեռանալ այդտեղից, սակայն հետո նրա մեջ բռնկվեց և բնությանը հաղթահարելու կիրքը: 5. Մինչ պաշարման փորձ անելը, նա բարբարոսների մոտ ուղարկեց Արտաբազի որդուն՝ Կոփենին, առաջարկելու նրանց հանձնել ժայռը: Արիմազի պատասխանը, որը հույսը դրել էր իր դիրքի վրա, լի էր հանդուգն բռնությամբ, իսկ վերջում նա հարցրեց՝ իսկ Ալեքսանդրը թուշ չգիտի: 6. Արքային հաղորդած այդ բառերը այնպես խոցեցին նրա ինքնասիրությունը, որ ժողովելով նրանց, ում հետ սովորաբար խորհրդակցում էր, հայտնեց նրանց բարբա-

բոսի հանդուգնության մասին, որը ձեռք էր առել իրենց, ասելով, որ իրենք թևեր չունեն. նա ավելացրեց, որ մոտակա գիշերվա ընթացքում կստիպի Արիմազին հավատալ, որ մակեդոնացիները կարող են և թուշել: 7. Վե՞մեն մեկը ձեզանից իր ջոկատից թողինձ մոտ բերի, — ասաց նա, — երեք հարյուր ամենաճարպիկ երիտասարդի, որոնք վարժված են տանը անասուններին բռնել արահետներով ու անանցանելի ժայռերով: 8. Նրանք շտապ կարգով բերեցին ճարպկությունը ու ջանասիրությամբ աչքի ընկած երիտասարդներին: Արքան, նրանց նայելով, ասաց. «Երիտասարդներ ու իմ հասակակիցներ, ձեզ հետ ես հաղթահարել եմ նախկինում անհաղթ քաղաքներ, անցել հավերժական ձյունով ծածկված լեռնաշղթաներով, թափանցել կիլիկիայի կիրճերը, առանց հոգնությանը տրվելու դիմացել Հնդկաստանի ցրտերին: Ես ձեզ օրինակ եմ ծառայել և ականատես եղել ձեր սխրանքներին: 9. Ժայռը, որը դուք տեսնում եք, ունի միայն մեկ անցուղի, որը զբաղեցրել են բարբարոսները. մնացած մասերը նրանք չեն պաշտպանում: Նրանց պահակախումբը միայն մեր ճամբարի կողմից է: 10. Դուք ճանապարհ կգտնեք, եթե ջանասիրաբար ուսումնասիրեք բարձունքի բոլոր մատուցները: Բնության մեջ չկա որևէ բարձունք, որի վրա չկարողանա բարձրանալ սխրանքը: Փորձելով այն, ինչն անհասանելի էր մյուսներին, մենք մեր իշխանությունը ենթարկեցինք Ասիան: 11. Հասեք մինչև դագաթ: Նվաճելով այն, դուք ինձ ազդանշան կտաք սպիտակ լաթերով. ես իմ ուժերը մոտեցնելով, թշնամու ուշադրությունը ինձ վրա կգրավեմ: 12. Ով առաջինը հասնի բարդությունը ինձ վրա կգրավեմ: 13. Ով առաջինը հասնի բարդությանը, մեկ տաղանդ պակաս կստանա երկրորդը և նույնքան կստանան հաջորդ տասը հոգին: Այնուհանդերձ ես համոզված եմ, որ դուք ավելի շատ կմտածեք իմ կամքը կատարելու մասին, քան պարզևատրություն: 13. Նրանք լսեցին արքային այնպիսի ոգևորությամբ, ասես արդեն գրավել էին բարձունքը: Երբ նրանց ազատ արձակեցին, նրանք սկսեցին երկաթյա սեպեր հավաքել քարերի արանքներում խփելու համար և ամուր պարաններ ձեռք բերել: 14. Արքան, ուսումնասիրելով ժայռը բոլոր կողմերից, հրամայեց նրանց սկսել վերելքը երկրորդ պահակության ժամին այն վայրում, որտեղ մատուցը առավել հեշտ էր ու գառիթափ չէր թվում, և հաջողություն ցանկացավ: Նրանք էլ, վերցնելով երկու օրվա պաշար և զինվելով միայն սրերով ու նիզակներով, սկսեցին վե-

բելքը: 11. Սկզբում բայում էին, հետո, հասնելով զառիթափ տեղերին, մի քանիսը վեր բարձրացան, ձեռքերով բռնելով քարերի ելուստներից, մյուսները բարձրացան պարանների օգնությամբ, նետելով դրանք քարերի մեջ խփված սեպերին, որպեսզի ոտքերով կանգնեն դրանց վրա: Ամբողջ օրը նրանք անցկացրին տաճնապալի աշխատանքի մեջ: 16. Այդքան ջանքերից հետո նրանց առջև բացվում էին նորանոր դժվարություններ և նրանց թվում էր, որ ինքը՝ ժայռ աճում է: Սրտաճմրիկ տեսարան էր, երբ որևէ մեկը սխալ բայ անելով պոկվում էր և ցած գահավիժում, դրանով իսկ մյուսներին մատնացույց անելով նրանց սպառնացող վտանգը: 17. Սակայն նրանք, հաղթահարելով այս խոչընդոտները, այնուամենայնիվ, հասան լեռան գագաթը, հյուծված անդադար ջանքերից, իսկ ունակ էլ նույնիսկ խեղանդամ դարձած. և գիշերվա քունը կլանեց նրանց: 18. Տրվելով ամեն կողմից անճամփա դժվարին ժայռերի վրա, մոռանալով սպառնացող վտանգը, նրանք քնեցին մինչև լուսաբաց, Արթնախալով, ասես խոր անզիտակցությունից, նրանք սկսեցին ուսումնասիրել բողբոջված, իրենց ոտքերի տակ փրված հովիտները, սակայն չգիտեին, թե ժայռի որ մասում են թաքնված թշնամու հիմնական ուժերը: Վերջապես, նրանք ծուխ նկատեցին, որը ելնում էր իրենց տակ գտնվող քարանձավից: 19. Նրանք հասկացան, որ այնտեղ է գտնվում թշնամու ապաստարանը, եվ այսպես, նրանք նիղակների վրա կապեցին պայմանական աղղանշանը, սակայն դրա հետ միասին պարզեցին, որ իրենց ջոկատից վերելքի ժամանակ զոհվել է 32 մարդ:

20. Մոլեգնաբար այդ վայրը գրավել ցանկացող արքան, նույն շափով անհանգստացած իր այդքան վտանգավոր գործի ուղարկվածների ճակատագրով, ողջ օրը աչքը չէր կտրում լեռնային բարձունքից: Նա միայն գիշերը հեռացավ քնելու, երբ մութը ամեն ինչ ծածկեց նրա հայացքից: 21. Հաջորդ օրը, դեռ լուսը լրիվ չբացված, նա առաջինը նկատեց լաթերը, որպես բարձունքը գրավելու նշան: Սակայն փոփոխական երկիները մեկ լուսավորվելով ճառագայթներով, մեկ մթազնելով, ստիպում էր կասկածել՝ արդո՞ք դա տեսիլք չէ: Իսկ երբ երկիներն այնպիսի ծառայում, նրա կասկածները փարատվեցին: Կանչելով Կոփենին, որի միջոցով նա արդեն գիմել էր բարբարոսներին, կրկին ուղարկեց նրան նրանց մոտ համոզելու, որ գոնե այժմ ավելի ողջամիտ որոշում կայացնեն, իսկ նրանց համառությունը ղեպ-

քում, որը հիմնավորվում էր նրանց գրաված դիրքով, ցույց տալ նրանց թիկունքից լեռան գագաթը գրաված գիմելորներին: 23. Թշնամու մոտ ուղարկված Կոփենը սկսեց խորհուրդ տալ Արիմազին հանձնել ժայռը, խոստանալով նրան արքայի ողորմաժախտը, եթե նա շտապի արքային նրա այդքան մեծ մտահաղացումների իրագործման ժամանակ հասպաղել մի ժայռի պաշարման համար: Սա ավելի զոռողաբար և ամբարտապանորեն, քան առաջ, հրամայեց Կոփենին հեռանալ: 24. Վերջինս, բռնելով բարբարոսի ձեռքը, խնդրեց նրան իր հետ դուրս գալ քարանձավից: Երբ Արիմազը դուրս եկավ, նա նրան ցույց տվեց լեռան գագաթի վրա կանգնած պատանիներին և, լիիրավ ծաղրի ենթարկելով նրա ամբարտապանությունը, ասաց, որ Ալեքսանդրի գիմելորներն իսկապես թևեր ունեն: 25. Եվ արդեն մակեդոնական ճամբարից լսելի էին փողերի ու գիմելորների գոչյունները: Այդ հանգամանքը, ինչպես և նման դատարկ ու աննշան շատ բաներ պատերազմի ժամանակ, հարկադրեցին բարբարոսներին անձնատուր լինել: Իրականում, սարսափից նրանք անկարող եղան նկատել իրենց թիկունքում գտնվողների փոքրաթվությունը: 26. Այդ իսկ պատճառով նրանք հապճեպորեն հետ վերադարձրին Կոփենին, որը հեռացել էր նրանց իրարանցման ժամանակ, և նրա հետ ուղարկեցին իրենց 30 առաջնորդներին, որպեսզի հանձնեն ժայռը և պայմանավորվեն անվնաս հեռանալու թույլտվության մասին: 27. Արքան, թեև երկյուղում էր, թե բարբարոսները կարող են նկատել պատանիների փոքրաթվությունը և ցած նետեն նրանց, այնուհանդերձ հավատալով իր բախտին և գագազած լինելով Արիմազի ամբարտապանությունից, պատասխանեց, որ պահանջում է անվերապահ անձնատուր լինել: 28. Արիմազը, իր վիճակից հուսալքված, թեև պարտված չէր, ճամբար իջավ իր մերձավորների ու ազնվատոհմիկ այրերի հետ: Ալեքսանդր հրամայեց բոլորին ճիպոտահարել և խաչել հենց ժայռի ստորոտին:

29. Գերի հանձնվածների ողջ բազմությունը խլված ունեցվածքի հետ միասին բաժանեցին նոր քաղաքների բնակիչներին, որպես ընծա: Արտաբազին թողեցին ժայռի և շրջակա մարզի պահպանության համար:



ԳԻՐՔ VIII

Ալեքսանդրը, գրավելով ժայռը, որը նրան ավելի շատ համարավ բերեց, քան իրական փառք, զորքը բաժանեց երեք մասի, որպեսզի շտկատներ ուղարկի թափառող թշնամիներին պատժելու համար: Մի զորամասի հրամանատար նշանակեց Հեփեստիոնեսին, մյուսի հրամանատար՝ Քննոսին, ինքն էլ դարձավ մնացածների գլխավորը: 2. Սակայն բարբարոսների միջև միաբանություն չկար: Ոմանք հնազանդեցվել էին զենքի ուժով, շատերը հանձնվել էին Ալեքսանդրին՝ գործը ճակատամարտի շհասցնելով: Արքան հրամայեց նրանց հանձնել աֆն ցեղերի քաղաքներն ու հողերը, որոնք համառում էին հնազանդվել: 3. Այդ ընթացքում վտարանդի բակտրիացիները 800 մասագետ հեծյալների հետ ամայացնում էին մերձակա գյուղերը: Նրանց սանձահարելու համար, այդ մարզի կառավարիչ Ատինոսը 300 հեծյալներով արշավի ելավ, չկասկածելով նախապատրաստվող դարանի մասին: 4. Իսկ թշնամին զինված մարտիկներին թաքցրեց դաշտի մոտակայքում գտնվող անտառում, իսկ մի քանի հոգի անասունը քշեցին, որպեսզի այդ խայծով ոչնչի մասին չկասկածող Ատինոսին զեպի դարանը բերեն: 5. Եվ սհտ Ատինոսը, շպահպանելով ռազմակարգը, զինվորների խառնիխուռն ամբոխով սլացավ առաջ, անասունների հոտը ձեռք գցելու փափազով: Հենց նա հասավ անտառին, աֆնտեղ դարան մտած մարդիկ անսպասելիորեն հարձակվեցին նրանց վրա և բոլորին կոտորեցին: 6. Այդ դժբախտ պատահարի լուրը արագ հասավ Կրատերոսին և իր հեծելազորով նա օգնության հասավ: Սակայն բոլոր մասագետները արդեն հեռացել էին. այնուհան-

դերձ, հազար դահեր կոտորվեցին: Նրանց կործանումով ավարտվեց ողջ մարզի զիմադրությունը: 7. Ալեքսանդրն էլ սողերին կրկին հնազանդեցնելուց հետո վերադարձավ Մարականդ: Այնտեղ, նրա մոտ եկավ Բերդոսը, որին նա ժամանակին ուղարկել էր Բոսֆորի այն կողմում ապրող սկյութների մոտ: Նա ժամանեց այդ ժողովրդի ղեկավարների հետ միասին: 8. Քրատաթեբը, որը հորեզմի կառավարիչն էր, միանալով հարևան մարզի մասագետների ու դահերի հետ, նույնպես մարդիկ ուղարկեց արքային իր հպատակությունը վկայելու: 9. Սկյութները առաջարկում էին Ալեքսանդրին կնություն վերցնել իրենց արքայադուստրը: Իսկ եթե Ալեքսանդրը, ասում էին նրանք, անարժան համարի այդպիսի ազգակցությունը, ապա զոնե թող թույլատրի ազնվատոհմ մակեդոնացիներին ամուսնանալ սկյութ ժողովրդի ազնվական կանանց հետ. նրանց արքան ինքը կգա Ալեքսանդրի մոտ: 10. Ալեքսանդրը երկու ղեկավարություններին էլ ունկնդրեց բարյացակամորեն և ճամբար խփեց, սպասելով Հեփեստիոնեսին ու Արտաբազին: Հենց որ նրանք միավորվեցին, նա շարժվեց Բազաիրա կոչվող երկիրը:

11. Այդ բարբարոս երկրի գլխավոր հարստությունը ոչ այլ ինչ էն, եթե ոչ ցեղական անասունների հոտերը, որոնք պահվում են մեծ թավտանքում ու պուրակներում: 12. Դրա համար նրանք լայնատարած անտառներ են ընտրում, որոնցում շատ են լցամաքող աղբյուրները. նրանք ցանկապատում են այդ պուրակները և աշտարակներ կառուցում որսորդներին պատսպարելու համար: 13. Հայտնի էր, որ այդպիսի փարախներից մեկում չորս սերունդների ընթացքում ոչ ոք որս չէր արել: Ալեքսանդրը ներս մտավ այդտեղ իր ողջ զորքով և հրամայեց ամենուր տեղահանել կենդանիներին: 14. Երբ հազվադեպ մեծություն մի առյուծ վազեց զեպի Ալեքսանդրը, ապա պատահականորեն մոտակայքում գտնվող կիսիմաքոսը¹, որը հետագայում արքա դարձավ, ցանկացավ որսատեղով զիմավորել գազանին: Արքան մի կողմ հրելով նրան և հրամայելով շփիջամտել, ասաց, որ ինքը մենակ, ինչպես կիսիմաքոսը, կարող է սպանել առյուծին: 15. Չէ՞ որ մի անգամ կիսիմաքոսը Ասորիքում որսորդության ժամանակ մենակ սպանել էր լափազանց մեծ մի առյուծ: Սակայն գազանը հասցրել էր պղկել նրա ձախ ուսի միսը մինչև ոսկորը, և սա կործանման եզրին էր եղել: 16. Հանդիմանանքով հիշեցնելով այդ զեպը կիսիմաքոսին, արքան խոսքերից ավելի

լավ ապացուցեց իր բաջութային գործով. նա ոչ միայն մտտիկ թողեց առյուծին, այլև մի հարվածով սպանեց նրան: 17. Այն հերյուրանքը, որ իբր Ալեքսանդրը Լիսիմաքոսին գցել է առյուծի առջև, որպեսզի վերջինս հռոտի նրան, ենթադրում են, ծնվել է հենց այդ դեպքի հետ կապված, 18. Թեև Ալեքսանդրի որսորդությունը բարեհաջող ավարտվեց, մակեդոնացիները, ըստ իրենց ժողովրդի սովորույթի, որոշեցին, որ արքան չպետք է ոտքով որսորդություն անի առանց ազնվականների ու մերձավորների ուղեկցությամբ: 19. Երբ սպանեցին շորս հաղար դադան, արքան հենց այդ անտառում ողջ զորքի հետ միասին խրախճանք կազմակերպեց:

Այդտեղից նա վերադարձավ Մարականդ: Ազատ արձակելով Արտաբազին, նրա դառաձյալ տարիքի պատճառով, նրա զավառք արքան հանձնեց Կլիտոսին: 20. Դա հենց այն Կլիտոսն էր, որը Գրանիկոս գետի մոտ իր վահանով ծածկեց անսաղավարտ գլխով կռվող Ալեքսանդրին և թրով կտրեց Ռեսակի ձեռքը, որը նա բարձրացրել էր հարվածելու արքայի գլխին: Նա Փիլիպոսի հին զինվորներից էր և համբավվոր էր դարձել ուղղակիան իր բազմաթիվ սխրագործություններով, 21. Նրա քրոջը՝ Հելանիկային, որը գաստիարակել էր Ալեքսանդրին, արքան սիրում էր մոր պես: Այդ պատճառով նա Կլիտոսին վստահեց իր թագավորության մեծ մասը: 22. Սա էլ հաջորդ օրը ճանապարհ ընկնելու հրաման ստացավ և հրավիրվեց այդ ժամանակ սկսած խրախճանքին մասնակցելու: Այդ կերուխումի ժամանակ գինուց տաքացած արքան սկսեց շափից դուրս գլուխ գովել, որը տհաճ էր լսել նույնիսկ նրանց, ում հայտնի էր, որ նա ճշմարտությունն է ասում: 23. Սակայն տարիքավորները լուսնուն էին պահպանում, մինչև Ալեքսանդրը չսկսեց նվաստացնել Փիլիպոսի՝ Քերովնեայի մոտ տարած փառավոր հաղթանակը, զտնելով, որ դա իր արժանիքն է, և պնդելով, որ այդ մեծ հաղթանակի փառքից նա զրկվել է իր հոր շարության և նախանձի պատճառով: 24. Նրա խոսքերով, երբ մակեդոնացի զինվորների և հույն վարձկանների միջև պառակտում սկսվեց, ընդհանուր տուրուղմիցի մեջ վիրավորված Փիլիպոսը, իր անվտանգության համար մեռած ձեռնալուծ, պառկեց գետին: Իսկ Ալեքսանդրը ծածկեց նրան իր վահանով և անձամբ կոտորեց բոլորին, ովքեր փորձում էին հարձակվել նրա վրա: 25. Հայրը դա էրբեր չէր խոստովանում, սրանեղելով, որ իր փրկությանը նա պարտական է որդուն:

Հաղթանակ տանելով նաև մի այլ պատերազմում, որն իլիրիացիների դեմ առանց Փիլիպոսի վարում էր Ալեքսանդրը, նա գրել էր հորը, որ թշնամին լիովին ջարդված է. սակայն ինքը՝ Փիլիպոսը իբր այդ արշավին չի մասնակցել: 26. Փառքի են արժանի ոչ թե նրանք, ովքեր գնում են գիտելու սամոթրակյան գաղտնա-ծիսությունները, երբ անհրաժեշտ է ամայացնել և կրակի մատնել Ասիան, այլ նրանք, ովքեր այնպիսի բաջագործություններ են կատարել, որոնք գերազանցում են այն ամենը, ինչ հնարավոր է պատկերացնել:

27. Երիտասարդները հաճույքով էին լսում նման ճառեր, որոնք տհաճ էին ծերունիներին գլխավորապես Փիլիպոսի պատճառով, բանդի նրա հրամանատարության ներքո նրանք երկար ժամանակ ծառայել էին: 28. Այն ժամանակ Կլիտոսը՝ ինքն էլ արդեն բավականաչափ զինույցած, դիմեց իրենից ներքևում նստածներին և արտասանեց էվրիպիդեսի² բանաստեղծությունը, այնպես որ արքայի ականջին հասնեն միայն բռների ձայները և ոչ թե դրանց իմաստը: 29. Այդ բանաստեղծության մեջ ասվում էր, որ հույները սխալ որոշում են կայացրել՝ հաղթանշանի վրա գրել միայն արքաների անունները, բանդի նրանք իրենց են վերագրում ուրիշի արյունով ձեռք բերված փառքը: Եվ ահա արքան կասկածելով, որ այդ բռները շար ականարկներ են պարունակում, սկսեց հարցնել կողքի նստածներին, թե ի՞նչ են նրանք լսել Կլիտոսից: 30. Նրանք համառորեն լուռ էին, իսկ Կլիտոսը, ձայնը մի քիչ էլ բարձրացնելով, սկսեց հիշեցնել Փիլիպոսի գործերը և նրա պատերազմները Հունաստանում, այդ ամենը ավելի բարձր դասելով Ալեքսանդրի արածներից: 31. Այստեղ երիտասարդների ու տարիքավորների միջև վեճ սկսվեց: Թվում էր, արքան համբերությամբ լսում է, թե ինչպես է Կլիտոսը նսեմացնում իր փառքը, իսկ իրականում ետում էր սաստիկ կատաղությունից: 32. Թերևս նա իսկապես կզսպեր իրեն, եթե Կլիտոսն ավարտեր իր այդքան հանդգնորեն սկսած ճառը, բայց քանի որ նա շէր դադարում խոսել, ապա արքան ավելի էր դայրանում: 33. Իսկ Կլիտոսն արդեն հանդգնում էր պաշտպանել Պարմենիոսին և Փիլիպոսի հաղթանակը ասեցիների հանդեպ հակադրում Թերեի³ կործանմանը: Նա դա անում էր ոչ միայն գինու ազդեցության տակ, այլև իր այն տխուր սովորույթի համաձայն, ըստ որի ամեն ինչի հակաճառում էր: 34. Վերջում նա հայտարարեց. «Եթե անհրաժեշտ է մեռնել քեզ

համար, ես՝ Կլիտոսս, պատրաստ եմ առաջինը լինել: Սակայն երբ դու պարզեցիր ես բաժանում հաղթանակի՝ համար, ապա առաջնությունը տրվում է նրանց, ովքեր շարամտորեն վարկաբեկում են քա հոր հիշատակը: 35. Դու ինձ ես հանձնում Սողոմոնյան, որն այդքան ապստամբել է և ոչ միայն դեռ նվաճված չէ, այլև չի կարող նվաճվել: Ինձ ուղարկում են վալրի բնության զոդմից շասնձահարված գազանների մոտ: Բայց ես անձամբ իմ մասին չեմ ասում: 36. Դու բամահրում ես Փիլիպոսի զինվորներին, մոռանալով, որ եթե այդ ծերուկ Աթարիոսը հետ չպահեր ճակատամարտից փախչող երիտասարդներին, ապա մենք մինչև այժմ նստած կլինեինք Հալիկաոնասի մոտերքում: 37. Եվ իսկուպես, ի՞նչ ձեռով դու այդ պատանյակների հետ նվաճեցիր Ասիան: Ես ճշմարիտ եմ համարում քո հորեղբոր ասած խոսքերը Իտալիայում: Ինչպես հայտնի է, նա ասել է, որ ինքը ղեկավարում էր հարձակումը այրերի վրա, իսկ դու՝ կանանց: 38. Կլիտոսի հանդուգն ու շղոադատված խոսքերից ոչ մեկն այնքան շվիրավորեց արքային, որքան Պարմենիոնին գովելը: Սակայն արքան զսպեց իրեն և միայն հրամայեց Կլիտոսին լքել խնջույքը: 39. Միաժամանակ ասաց, որ եթե Կլիտոսը շարունակի խոսել, ապա հենց ինքն էլ հետագայում կնախատի Ալեքսանդրին, որ իրեն չի սպանել: Կլիտոսը շատ հաճախ էր մեծամտանում: 40. Սակայն Կլիտոսը դանդաղում էր դուրս գալ, և նրա կողքին բազմածները փորձում էին ուժով դուրս բերել նրան, միաժամանակ հայհույելով ու համոզելով: 41. Երբ Կլիտոսին դուրս էին բերում, նա նախկին հանգստությունը փոխարինելով ցատկով, բացականչեց, որ իր կրծքով փակել է արքայի մեջքը, իսկ այժմ, երբ երկար ժամանակ է անցել, այդ ծառայության հիշողությունն անգամ ատելի է արքային: 42. Բացի այդ նա սկսեց նախատել Ալեքսանդրին Ատալոսի մահվան համար և, վերջապես, ծաղրելով Յուպիտերի պատգամախոսին, որին Ալեքսանդրը իր հայրն էր համարում, ասաց, որ իր՝ Կլիտոսի խոսքերը պատգամախոսի ասածներից ավելի ճշմարիտ են: 43. Այդտեղ արքան այնքան բարկացավ, որ չհարբած մարդն էլ հազիվ կպահպաներ հանգստությունը: Գինին խփեց գլխին, և նա սրբնթաց վեր թռավ տեղից: 44. Ցնցված ընկերներն էլ տեղներից վեր ելան գավաթները ոչ թե սեղանին դնելով, այլ մի կողմ նետելով, և լարվածությամբ հետևեցին, թե ինչ է անելու արքան իր կատաղության պահին: 45. Ալեքսանդրը զինակրի ձեռքից

խլելով նիզակը, փորձեց հարվածել Կլիտոսին, որը շարունակում էր գծություններ անել իր անպատկառ խոսքերով, սակայն Պտղոմեոսն ու Պերդիկոսը զսպեցին արքային: 46. Բռնելով նրան երկու կողմից, նրանք ուժով պահում էին դուրս պրծնել ցանկացող արքային, իսկ Լիսիմաքոսն ու Լեոնատոսը նույնիսկ խլեցին նրա նիզակը: 47. Արքան, հավատարմության կոչելով զինվորներին, բղավում էր, որ իրեն բռնել են մոտիկ ընկերները, ինչպես դա վերջերս պատահեց Դարեհի՞ հետ. նա հրամայեց շեփոթով ազդանշան տալ, որպեսզի զինված մարտիկները հավաքվեն արքայական վրանի մոտ: 48. Այնժամ Պտղոմեոսն ու Պերդիկոսը, ընկնելով նրա ոտքերը, պաղատեցին նրան շտրվել նման ահարկու զայրույթի և գոնե մի քիչ հանգստանալ. հաջորդ օրը, ասում էին նրանք, նա ամեն ինչ ավելի փշրամտորեն կդատի: 49. Սակայն կատաղած արքան ոչնչի ականջ չէր դնում. զույսը կորցրած նա վազեց վրանի շեմի մոտ, ժամապահի ձեռքից խլելով նիզակը, կանգնեց մուտքի մոտ, որտեղով պետք է դուրս գային խնջույքի մասնակիցները: 50. Բոլորը դուրս եկան. Կլիտոսը դուրս եկավ վերջինը, երբ կրակնորը արդեն հանգցված էին: Արքան հարցրեց՝ ո՞վ է գալիս: Նույնիսկ նրա ձայնից զգացվում էր, որ նա պատրաստ է ոճրագործության: 51. Իսկ սա, արդեն մոռանալով իր զոգոսությունը և տեսնելով արքայի զայրույթը, պատասխանեց, որ ինքն է՛ խնջույքից վերադարձող Կլիտոսը: 52. Հաղիվ էր հասցրել նա այդ ասել, երբ արքան նիզակը խրեց նրա կողքը. մեռնողի արյունով թաթախված նա բացականչեց. «Այժմ մեկնիր Փիլիպոսի, Պարմենիոնի և Ատալոսի մոտ»:

II. Բնությունը քիչ է հոգացել մարդկային հոգու մասին. չէ՞ որ մենք գնահատում ենք ոչ թե ապագան, այլ անցյալը: Այդպես էլ Ալեքսանդրը, սթափվելով կատաղության պոթիկումից և լրջանալով, չափազանց ուշ հասկացավ, թե ինչ ոճրագործություն է կատարել: 2. Այնժամ նա սկսեց գիտակցել, որ սպանել է մի մարդու, թեկուզև չափազանց հանդուգն, այնուհանդերձ պատերազմում քաջաբի, և ինչքան էլ ամոթ լինի խոստովանելը դա՛ նախկինում իր փրկարարին: Գահճի ստոր գործը կատարել էր արքան, անազնիվ սպանության մրեժխնդիր լինելով հանդուգն խոսքերի համար, որոնք կարող էին վերագրվել գինու ազդեցությանը: 3. Ամբողջ հատակին տարածվեց այն մարդու արյունը, որը դեռ քիչ առաջ հյուր էր: Ցնցված ու քար կտրած ծա-

մապահանքը կանգնել էին որոշ հեռավորության վրա: Այդ խորթացածությունը արքայի մեջ խղճի ուժեղ խայթ առաջացրեց: 4. Նա գետնին պռակածի կրծքից հանեց նիզակը և դրեց իր կրծքին, որպեսզի խոցի ինքն իրեն, սակայն մոտ են վազում ժամապահանքը և, շնայած դիմագրությունը, նրա ձեռքից խլում այն և ձեռքերի վրա արքային տանում նրա վրանը: 5. Նա ընկնում է գետնին, աղիողորմ լաց ու կոծով լցնում արքայական ննջասենյակները, եղունգներով ճանկոտոտում դեմքը, խնդրում շրջապատողներին թույլ շտալ իրեն ապրել այս աշխարհում այդպիսի խայտառակության մեջ: 6. Այդպիսի տրտունջներով անցավ ողջ գիշերը: Միտք անելով, արդյո՞ք աստվածների ցասումը չէ, որ ստիպել է նրան այդպիսի ոճրագործություն կատարել, նա հիշեց, որ սահմանված ժամանակին հայր կրեհոսին զոհ չի մատուցվել, և այդ պատճառով աստվածների զայրույթը արտահայտվել է խնջույթի ժամանակ հարբած վիճակում կատարված ոճրի մեջ:

7. Այնուհանդերձ նրան ավելի շատ անհանգստացնում էր այն, որ ինչպես ինքն էր նկատում, բոլոր ընկերները սարսափի մեջ էին. չէ՞ որ կատարվածից հետո ոչ ոք չէր համարձակվի իր հետ զրուցել. ինքը ստիպված կլինի մենակության մեջ ապրել որպես վայրի գաղան, որը ոմանց սարսափեցնում է, իսկ մյուսներից ինքն է վախենում: 8. Լուսարացին նա հրամայեց իր մոտ բերել Կլիտոսի գեռուս արնաշաղախ մարմինը: Երբ նրան դրին արքայի առջև, նա, արցունք թափելով, բացականչեց. «Ահա թե ինչպես ես վարձահատույց եղա իմ գայակին. նրա երկու որդիները իմ փառքի համար մեռան Միլետի գրավման ժամանակ. իսկ նրա եղբայրը՝ միայնակության միակ սփոփանքը, սպանվել է խնճույթի ժամանակ իմ ձեռքով: 9. Այժմ ո՞ւմ դիմի նա՞ թշվառ կինը, Բուրբից միայն ես եմ մնացել նրա համար, բայց հենց ինձ վրա էլ նա չի կարողանա հանդիստ նայել: Կարո՞ղ եմ ես՝ ինձ փրկողներին սպանողը, վերադառնալ հայրենիք և դայակիս այնպես մեկնել ձեռքս, որպեսզի չհիշեցնեմ նրան իր վշտի մասին»: 10. Թվում էր, նրա արցունքներին ու ուրբին վերջ չի լինելու, դրա համար էլ նրա ընկերների հրամանով Կլիտոսի մարմինը տարան: Իսկ արքան երեք օր փակված մնաց իր վրանում: 11. Զինակիրներն ու թիկնապահները մտածեցին, թե նա որոշել է մեռնել, և բոլորը ներխուժեցին նրա ննջասենյակը: Երկարատև թախանձանքներով նրանք դժվարությամբ կտրեցին

նրա համառությունը և ստիպեցին սնունդ ընդունել: 12. Եվ, որպեսզի արքան սպանությունից ավելի քիչ խղճի խայթ զգա, մակեդոնացիները հայտարարում են, որ Կլիտոսը սպանվել է օրինական ձևով և եուլիսկ ցանկանում էին արգելել թաղումը, սակայն արքան հրամայեց հողին հանձնել մարմինը:

13. Այսպիսով, Մաշականդի մոտերքում մնալով տասը օր, հիմնականում նրա համար, որպեսզի խղճի խայթն անցնի, նա շեփեսաիոնեսիս զորքի մի մասով ուղարկեց բակտրիական երկիր՝ ձմռան համար պարեն նախապատրաստելու: 14. Նախկինում Կլիտոսի համար նախատեսված դավառը նա տվեց Ամինտոսին⁵, ինքն էլ ժամանեց Քսենիպ: Այս մարզը սահմանակից է Սկյութիային և դյուդերն այնտեղ շատ խիստ էն բնակեցված, քանի որ բերրի հողերը ոչ միայն պահում են տեղաբնակներին, այլև հրապուրում եկվորներին: 15. Նախկինում դա եղել է այն բակտրիացի արտոբյալների ապաստարանը, որոնք պառակտվել էին Ալեքսանդրից: Երբ հայտնի դարձավ, որ ժամանել է արքան, տեղաբնակները քշեցին արտոբյալներին, որոնք համարյա 2500 հոգի էին: 16. Բակտրիացիները ձիերով էին նրանք վարժված էին ավազակությանը նույնիսկ խաղաղ ժամանակ, իսկ այժմ պատերազմ էր, և ներման հույս չունենալը ավելի էր դաժանացրել նրանց: Այսպես, նրանք հանկարծակի հարձակվեցին Ամինտոսի՝ Ալեքսանդրի փոխարքայի վրա և երկար ժամանակ անարդյունավետ կռիվ էին մղում: 17. Վերջապես, կորցնելով 700 լուրային, որոնցից 300-ը գերի ընկան, բակտրիացիները դիմեցին փախուստի, սակայն նրանք վրեժխնդիր եղան. սպանեցին 80 մակեդոնացու, 350-ին վերավորեցին: 18. Այնուհանդերձ կրկնակի դավաճանությունից հետո նրանց ներում շնորհվեց:

19. Նրանց իրենց հպատակության տակ ընդունելով, արքան իր ողջ զորքով ժամանեց Նավթակի կոշիղ մարզը: Մատրապը Միսիմիթրն էր, որն իր հարազատ մորից երկու որդի ուներ, քանի որ նրանց մոտ թույլատրվում է իրենց երեխաների հետ կապի մեջ մտնել: 20. Այդ Միսիմիթրը, զինելով իր հայրենակիցներին, մարդ մտնելու ամենանեղ տեղում ամուր պաշտպանական գիծ ստեղծեց: Մոտակալքով արագընթաց գետ էր հստում, իսկ թիկունքը փակում էր ժայռը. այդ ժայռի մեջ բնակիչները ձեռքով անցուղի էին բացել: 21. Անցուղու սկիզբը լուսավոր է, սակայն նեղուս, և թե կրակ շտանեն, տիրում է խավարը: Անընդ-

հատ ստորգետնյա ուղին, որը հայտնի է միայն տեղաբնակներին, գուրս է բերում դաշտ: 22. Թեև բարբարոսները ուժեղ ջոկատով պաշտպանում էին հենց բնության կողմից ամրացված կիրճը, Ալեքսանդրը մոտիկ բերված բաբաններով քանդեց մարդկային ձեռքով սարքված ամրությունները. նա տեղերով ու նետերով հեռ մղեց առջևում կռվող թշնամիների մեծ մասին: Ցրելով նրանց և փախուստի մատնելով, նա բարձրացավ ամրության փլատակների վրա և մոտեցրեց զորքը ժայռին: 23. Սակայն ճանապարհը արգելափակում էր գետը, որն իր մեջ էր ընդգրկում լեռների լանջերից հովիտ հոսող ջրերը: Թվում էր, ահռելի ջանքեր կպահանջվեին սանձահարելու այդ խորխորատը: 24. Այնուհանդերձ արքան հրամայեց ծառեր կտրել և քարեր թափել այդտեղ: Մի ակնթարթում ստեղծված հսկայական կույտի տեսքը սարսափ առաջացրեց մինչ այդ նման բան չտեսած բարբարոսների մեջ:

25. Այդպիսով, արքան հույս ունենալով սարսափով ստիպել նրանց անձնատուր լինել, նրանց մոտ ուղարկեց Օբսարտին, որը նույն ցեղից էր, սակայն՝ հնազանդ Ալեքսանդրին, որպեսզի սա համոզի առաջնորդին՝ հանձնել ժայռը: 26. Այդ ընթացքում, բարբարոսներին ավելի սարսափեցնելու նպատակով, սկսեցին մոտեցնել աշտարակները, և օդում երևացին նետողական մեքենաներից արձակված նետերը: Ոչ մի բանի հուշս չունեցող բարբարոսները փախան ժայռի դադաթը: 27. Օբսարտը սկսեց համոզել զոդողացող և իր ճակատագրի նկատմամբ հավատք կորցրած Միսիմիթրին՝ վստահել մակեդոնացիներին և փորձության շնորհիվ նրանց ուժը ու շխանգարել հաղթական զորքի առաջխաղացմանը շնորհատան. ով կանգնի այդ զորքի ճանապարհին, իր գլուխը կդնի փորձանքի տակ, որն ուրիշի համար է նախատեսված: 28. Ինքը՝ Միսիմիթրը պատրաստ էր հանձնվելու, սակայն նրա մայրը (և միաժամանակ նրա կինը) հայտարարեց, որ կզերադասի մեռնել, քան ընկնել ուրիշի իշխանության տակ: Այդպիսով, նա ստիպեց բարբարոսին ավելի շատ մտածել պատվի, քան անվտանգության մասին, և նա ամոթ զգաց, որ ազատությունը ավելի թանկ է կնոջ համար, քան տղամարդու: 29. Այդպիսով, ազատ արձակելով խաղաղության միջնորդին, Միսիմիթրը որոշեց դիմանալ պաշարմանը: Բայց երբ նա համեմատեց իր և թշնամու ուժերը, ապա կնոջ խորհուրդը նրան թվաց ավելի անխելամիտ, քան զործնական,

և նա զլջաց իր որոշման համար: 30. Շտապ հետ կանչելով Օբսարտին, նա ասաց, որ պատրաստ է հանձնվել Ալեքսանդրին. և խնդրեց միայն մի բան՝ արքային չհայտնել մոր կարծիքի և խորհրդի մասին, որպեսզի ավելի հեշտ լինի ներում ձեռք բերել նաև նրա համար: 31. Այնժամ, առաջ ուղարկելով Օբսարտին, նա մոր, երեխաների և բոլոր բարեկամների հետ միասին հետևեց նրան, չսպասելով նույնիսկ Օբսարտի խոստացած հավատարմության գրավականին: 32. Արքան հեծյալ ուղարկեց վարտարմության գրավականին: 32. Արքան հեծյալ ուղարկեց Միսիմիթրի մոտ, հրամայելով վերադառնալ և սպասել իր ժամանմանը, իսկ այնուհետև ինքը ժամանեց և, Միսիմիթրի ուշադրանակի պատվին սրախողխող անելով զոհաբերության համար նախատեսված անասունները, Միսիմիթրին վերադարձրեց նրա տիրությունը և նույնիսկ խոստացավ տալ նրան ավելի մեծ դավառ, եթե նա հավատարմորեն պահպանի բարեկամությունը իր հետ: 33. Ալեքսանդրի պահանջով Միսիմիթրը իր երկու որդիներին տվեց զինվորական ծառայության արքայական շքախմբում:

Այնուհետև թողնելով փաղանգը մնացած ցեղերին հնազանդեցնելու համար, Ալեքսանդրը հեծելազորով առաջ շարժվեց: 34. Նրանք սկզբում մի կերպ, գծվարություններով հաղթահարեցին քարքարոտ ճանապարհը, բայց հետո, նախ հյուժված ձիերը ջարդոտեցին իրենց սմբակները, շատերը սկսեցին հետ մնալ, և հեծելազորի շարքերը հետզհետև նոսրացան. չափից ավելի հրդեհածությունը, ինչպես դա հաճախ լինում է, գերազանցեց ամոհածությունը, և ինչպես դա հաճախ լինում է, գերազանցեց ամոհածությունը: 35. Սակայն արքան ձիերը հաճախ փոխելով, առանց հանգստի, հետապնդում էր փախուստականներին: Սովորաբար նրան ուղեկցող ազնվատոհմ երիտասարդները, բացառությամբ Փիլիպոսի, հետ մնացին: Փիլիպոսը՝ կիսիմաքոսի եղբայրը, որը զեռ վերջերս էր առնականացել, հեշտությամբ կարելի էր նկատել, որ հաղվագյուտ կարողություններով էր օժտված: 36. Դժվար էր հավատալ, բայց նա արշավող արքայի հետևից վազեց 500 ասպարեղ, թեև կիսիմաքոսը մի քանի անգամ նրան առաջարկեց իր ձին. նա մտածել անգամ չէր ցանկանում, որ կարող է հետ մնալ արքայից, թեև զենք ուներ և զրահ էր կրում: 37. Անտառում, ուր թաքնված էին բարբարոսները, նա հերոսաբար կռվեց և իր մարմնով ծածկեց Ալեքսանդրին, որը ձեռնամարտի էր բռնվել թշնամու հետ: 38. Սակայն երբ բարբարոսները փախուստի դիմեցին և լքեցին անտառը, կռվի պատճառով:

հին Փիլիպոսին պահող հոգեկան վերելքը լքեց նրան, նրա ողջ մարմինը հանկարծակի ծածկվեց քրտինքով, և զինվորը հենվեց մտախառն ծառի բնին: 39. Այնուհետև նա ուժ չգտավ օգտագործելու նաև այդ պատվարը, և արքան ձեռքերով բռնեց ընկնող մարտիկին. նրա ձեռքերի վրա էլ Փիլիպոսը շունչը փչեց: 40. Վշտացած արքային մի ուրիշ ծանր վիշտ էլ էր սպասում: Նրա փառապանծ առաջնորդների թվում էր էրիզիոսը: Արքան իմացավ, որ նա սպանվել է իր ճամբար վերադառնալուց քիչ առաջ: Երկու հեքսաների հուղարկավորումը կատարվեց բազմապիսի ճոխ ություններով ու պատիվներով:

III. Այնուհետև արքան որոշեց դուրս գալ դահերի դեմ. նրան հայտնի էր, որ այնտեղ է գտնվում Սպիտամենը: Սակայն նրան երբեք չդավաճանած բախտը այս անգամ էլ իրագործեց նրա մտահղացումը, նույնիսկ առանց իր մասնակցությունից: Սպիտամենը անսահման սիրում էր իր կնոջը, և սա կիսում էր նրա բոլոր ձախորդությունները, թեև նրան դժվար էր դիմանալ մշտական փախուստներին ու վտարանդիությունը: 2. Այդպիսի կյանքից տանջահար եղած, նա անընդհատ գործի էր դնում կանացի բոլոր հնարամտությունները, որպեսզի ստիպի ամուսնուն վերջ ի վերջո դադարեցնել փախուստը և ներում խնդրել հաղթողից՝ Ալեքսանդրից, որից, միևնույն է, անհնար է խուսափել: 3. Նա ամուսնուց երեք հասուն որդիներ ուներ: Հրամայելով նրանց ընկնել հոր կրծքին, նա սկսեց աղաչել Սպիտամենին խղճալ դոնև որդիներին: Եվ, քանի որ Ալեքսանդրը մտակալքում էր, նրա աղաչանքը համոզիչ թվաց: 4. Սակայն, կտրծելով, թե կինը դավաճանում է իրեն և ոչ թե համոզում, և հույսը դնելով իր գեղեցկության վրա, ցանկանում է առաջին իսկ հնարավորության դեպքում հանձնվել Ալեքսանդրին, Սպիտամենը մերկացրեց իր դաշույնը, որպեսզի սրախողխող անի նրան, սակայն վրա հասած կնոջ եղբայրները խանգարեցին նրան: 5. Այնուհանդերձ նա հրամայեց կնոջը չբավել իր աչքից, սպառնալով սպանել նրան, եթե նորից տեսնի: Իր կրքերը բավարարելու համար նա սկսեց գիշերներն անցկացնել պոռնիկների հետ: 6. Սակայն այդ կանանց նկատմամբ ունեցած զրգովանքը ավելի ուժգին է դարձնում նրա նախկին սերը: Այդ իսկ պատճառով կրկին ամբողջովին նվիրվելով կնոջը, նա չի դադարում խնդրել նրան հրաժարվել իր մտահղացումից և դիմանալ այն ամենին, ինչ նրանց կուղարկի ճակատագիրը: Ը՛հ՞ որ իրեն

ավելի հեշտ է մտնել, քան հանձնվել: 7. Իսկ կինը արգարանում էր նրանով, որ, թեկուզ իր կանացի խելքով, բայց փոխարենը մաքուր սրտով, խորհուրդ էր տալիս այն, ինչ օգտակար է. այնուհանդերձ նա ամեն ինչում պատրաստ էր ենթարկվել ամուսնուն: 8. Կեղծ հնադանդությունից խաբված, Սպիտամենը հրամայում է օրը ցերեկով խնջույք սկսել. նրան, գինուց ու կերակրից ծանրացած, բունը աչքերին տանում են ննջասենյակ: 9. Կինը, համոզվելով, որ նա խոր քնած է, մերկացնում է հագուստի տակ պահված սուրը և գլխատում ամուսնուն. արյունով ներկված, նա հանձնում է գլուխը ոճրագործություն մեղսակից իր ստրուկին:

10. Ստրուկի ուղեկցությամբ նա արյունոտված հագուստը շահնած դալիս է մակեդոնական ճամբար և պահանջում, որ հայտնեն Ալեքսանդրին, որ ինքը լուր է բերել, որն արքան պետք է լսի անձամբ իրենից: 11. Արքան իսկույն հրամայում է ներս թողնել բարբարոսուհուն, Տեսնելով նրան, արյան բծերը վրան, նա կարծում է, թե այդ կինը եկել է բողոքելու, թե իրեն բռնաբարել են, և թույլ է տալիս, որ նա ասի, ինչ ցանկանում է: 12. Կինը խնդրում է ներս թողնել ստրուկին, որին կարգադրել էր կանգնել դուռ մոտ: Հագուստի տակ Սպիտամենի գլուխը բռնած ստրուկը կասկածանք առաջացրեց: Խուզարկության ժամանակ նա ցույց տվեց, թե ինչ է թաքցրել: 13. Արևազուրկ գունաթափությունը այնպես էր այլապես Սպիտամենի դիմագծերը, որ անհնար էր հավաստիորեն ճանաչել, թե ում գլուխն է դա: Այսպիսով, արքան լսելով, որ իրեն մարդկային գլուխ են բերել, դուրս եկավ ննջասենյակից, հարցուփորձ արեց ստրուկին, թե բանն ինչ է, և ամեն ինչ իմացավ նրա տված տեղեկություններից: 14. Տարբեր ենթադրություններ էին մեկը մյուսի հետևից ներկայացրել: 15. Այդ ոճրագործության առաջացրած նողկանքը այնուհանդերձ ավելի ուժեղ գտնվեց, քան շնորհակալության զգացումը, և արքան հրամայեց ասել նրան, որ նա հեռանա ճամբարից. նա երկյուղում էր, որ բարբարոսական դաժանության օրինակը կարող է վարակել դուրաթեք հույներին:

բարբերն ու բնավորութիւնը: 16. Գահերը, տեղեկանալով, որ իրենց առաջնորդը սպանված է, Ալեքսանդրին են հանձնում շղթայված Գատաթերին՝ Սպիտամենի գործերի մեղսակցին, և իրենք նույնպես հանձնվում են: Արքան, ազատվելով այդ ժամանակվա հոգսերի մեծ մասից, սկսեց պատժել իր փոխարքաներին այն վիրավորանքների համար, որ նրանք հասցրել են իրենց ենթականերին սեփական ազահուստի մասին ու գոռոզութեան պատճառով: 17. Այսպես, նա թրատաթերին հանձնեց Վրկանը և մարդերի երկիրը Տապուրի հետ միասին, պատվիրեց պահակախմբի հսկողութեան տակ իր մոտ բերել Փրադատին, որի տեղը թողեց Թրատաթերին: Արսամի փոխարեն, որը գրանգների առաջնորդն էր, նշանակվեց Ստասանորոսը: Արսակը ուղարկվեց Մարաստան, որպեսզի այնտեղ փոխարինի Օբսիդատին: Բարելունիան Մազեյի մահից հետո հանձնվեց Ստամենի իշխանութեանը:

17. Կարգավորելով այդ բոլոր գործերը, երրորդ ամսում Ալեքսանդրը զորքով ձմեռային բանակատեղից ուղևորվեց Գաբազա կոչվող մարզը: 2. Առաջին օրը արշավը հանգիստ անցավ. հաջորդ օրն էլ դեռ սրնթաց չէր, սակայն արդեն ավելի մոռայ, քան առաջինը. ի հայտ եկան մոտալուտ փոթորիկի նշաններ: 3. Երրորդ օրը ամբողջ երկինքը ծածկվեց կայծակի փայլով: Լույսը մերթ փոյլատակելով, մերթ խավարելով կուրացնում էր առաջ շարժվող զինվորների աչքերը և սարսափեցնում նրանց: 4. Ամպրոպը որոտում էր համարյա առանց ընդմիջումների: Եվ բոլոր կողմերից երևում էին փայլատակող կայծակները. զինվորները կորցրին լսելու կարողությունը և քարացած, չէին համարձակվում ոչ առաջ գնալ և ոչ էլ կանգնած մնալ: 5. Այդ ժամանակ հանկարծակի հորդառատ անձրև և կարկուտ տեղաց: Սկզբում զինվորները դրանից ծածկվում էին իրենց զենքով, սակայն հետո նրանք ոչ միայն ի վիճակի չէին սառած ձեռքերով պահել թաց զենքը, այլև որոշել, թե որ կողմի վրա շրջվել, քանի որ փոթորիկը հսկայական ուժով նետվում էր նրանց վրա բոլոր կողմերից, և դրանից պատսպարվելն անհնար էր: 6. Եվ հաս, խախտելով ռազմաշարքը, զորքը ցրվեց լեռնանցքով մեկ. շատերը, ավելի շատ վախից ուժասպառ եղած, քան լարվածությունից, փուլեցին գետնին, թեև սաստիկացող սառնամանիքից անձրևը վերածվում էր կարկուտի: 7. Մյուսները թաքնվում էին ծառերի տակ, և շատերի համար դա ասպվեն էր ու

ապաստան: 8. Նրանք իրենց չէին խաբում, որ իրենք են տեղ ընտրել ձեռնելու համար, քանի որ անշարժ մնալով, նրանք կորցնում էին իրենց կենսական ջերմությունը, սակայն անշարժությունը հաճելի էր հոգնած մարմինն, և նրանք պատրաստ էին մեռնել հանգստություն մեջ: Իսկ փոթորիկը մոլեգնում էր կատաղորեն ու համառորեն: Եվ ցերեկային լույսը, բնութեան այդ պարզը, նույնպես ծածկում էին ամպերն ու գիշերվա նման սև անտառները: 9. Միայն արքան էր առույգորեն դիմանում այդ տարերքին. նա շրջալցում էր զինվորներին, հավաքում տարերկողմեր փախածներին, ոտքի կանգնեցնում ընկածներին, մատնացույց անում հեռավոր խրճիթներից ելնող ծուխը, համոզում շտապել մոտակա ապաստարանները: 10. Ոչինչ այդքան չէր ոգևորում զինվորներին և օգնում նրանց փրկությունը, որքան այն վախը, թե կարող են հետ մնալ արքայից, որը ողջ ուժերի լարման գնով դիմանում էր իրենց համար ուժերից վեր աղետին:

11. Վերջ ի վերջո՞ կարիքը, որը փորձանքի պահին ավելի գործուն է, քան բանականությունը, ցրտից փրկվելու ճար գտավ: Զինվորները սկսեցին կացիններով ծառեր կտրել և ամենուր խարույկներ վառել: 12. Կարելի էր կարծել, թե ողջ անտառը բռնկված է հրդեհով, և բոցերի մեջ զորքին տեղ չի մնացել: Այդ տարությունը ջերմացնում էր սառած մարմինները, և ցրտից բռնկված շնչառությունը դառնում էր ավելի ազատ: 13. Մի մասը պատսպարվեց անտառի եզրին գտնվող բարբարոսների խրբաքիթներում, ուր նրանց տարել էր կարիքը, մյուսները ճամբար ճիթներում, ուր նրանց քանի որ երկնային զայրությունն արդեն խփեցին թաց գետնին, քանի որ երկնային զայրությունն արդեն մեղմանում էր: Այդ աղետը կործանեց երկու հազար զինվոր, մարկիտանտներին ու գումակի ծառայողներին: 14. Հայտնում են, որ տեսել են, թե ինչպես է մահը վրա հասել մարդկանց այն բոպկին, երբ նրանք ծառին հենված զրուցել են միմյանց հետ և ստեղծ այդ դիրքով: 15. Պատահամամբ մի մակեդոնացի զինվոր, որը հաղիվ էր կանգնում ոտքի վրա, այնուհանդերձ, զենքը վրան հասել է ճամբար: Տեսնելով նրան, կրակի մոտ տաքացող արքան վեր է կացել տեղից և սառած ու գիտակցությունը կորցրած զինվորի վրա ից հանելով զենքը, նստեցրել իր տեղը: 16. Սա երկար ժամանակ չի գիտակցել, թե որտեղ է հանգստանում և ով է իրեն նստեցրել, երբ վերջապես կենսատու ջերմությունը վերադարձել է նրան, և նա, տեսնելով արքայական տեղը և իրեն արքային, տեղից սարսափահար վեր է թռել: Նրա վրա

նայելով, Ալեքսանդրն ասել է. «Գիտակցո՞ւմ ես արդո՞ք, զինչպէր, թէ ինչքանով ավելի լավ է իմ իշխանութիւնն տակ ապրելը, քան պարսից արքայի իշխանութիւնն տակ: 17. Զէ՞ որ այնտեղ մահապատժի կենթարկելին արքայական գահին նստողին, իսկ դաքնդ համար փրկութիւնն եղա՞ւ: 18. Հաջորդ օրը խորհրդակցութեան հավաքելով իր ընկերներին և զորավարներին, նա հրամայեց հայտարարել, որ կվերադարձնի այն ամենը, ինչ կորսված է: Եվ նա կատարեց խոստումը: 19. Իսկապէս, Սիսիմիթը բերեց բազմաթիվ բռնակիր անասուններ և երկու հազար ուղտ, ինչպէս նաև մանր և խոշոր եղջերավոր անասուններ, այդ բոլորը հավասարաչափ բաժանվեց զինվորների միջև, և փրկեց նրանց աղքատութիւնից ու սովից: 20. Արքան գնահատեց Սիսիմիթի իրեն ցուցաբերած ծառայությունը և հրամայեց զինվորներին շիշացող ուտելիք վերցնել վեց օրվա համար, քանի որ պատրաստվում էր արշավել սակերի դեմ: Ամայացնելով այդ ամբողջ երկիրը, նա ավարից Սիսիմիթին նվիրեց 30 հազար գլուխ անասուն:

21. Այնուհետև նա ժամանեց մի մարդ, որը կառավարում էր ճանաչված սատրապ Օքսիարտը՝ սա հանձնվեց արքայի ողորմածութիւնը: Իսկ արքան, վերադարձնելով նրան մարդը, միայն պահանջեց, որպեսզի Օքսիարտի երեք որդիներից երկուսը ծառային իր բանակում: 22. Սատրապը նրան հանձնեց նաև այն որդուն, որին թողել էին իրեն: Բարբարոսներին վայել ճոխութիւնը նա խնջույք կազմակերպեց, որին հրավիրեց արքային: 23. Խրախճանքի ետևն պահին սատրապը հրամայեց ներս բերել 30 ազնվատոհմ աղջիկներ: Նրանց մեջ էր իր դուստրը՝ Ռոքսանա անունով, որը առանձնանում էր բացառիկ գեղեցկութեամբ և բարբարոսներին ոչ բնորոշ գրավչութեամբ: 24. Թեև Ռոքսանան ներս մտավ հատուկ ընտրած գեղեցկուհիների ուղեկցութեամբ, նա գրավեց բոլորի ուշադրությունը, հատկապես արքայի՝ անգուսպ իր կրթերում՝ շնորհիվ բախտի հովանավորութեան, որին շի կարող դիմանալ մահկանացուներից և ոչ ոք: 25. Ժամանակին Ալեքսանդրը հայրական զգացմունքներով զմայլվում էր Դարեհի կնոջով և նրա երկու աղջնակ դուստրերով, որոնք իրենց գեղեցկութեամբ բացի Ռոքսանայից ոչ ոքի չէին գիշում: Իսկ այժմ նրա մեջ սիրտ կիրք առաջացավ ոչ այնքան անվանի տոհմից մի աղջկա հանդեպ, եթե նրա ծագումը համեմատենք արքայականի հետ: Ալեքսանդրն ասաց, որ իշխանու-

թիւն ամրապնդման համար անհրաժեշտ են ամուսնական կապեր պարսիկների և մակեդոնացիների միջև. միայն այդ ձևով կարելի է հաղթահարել պարտվածների ամոթի զգացումը և հաղթողների ամբարտավանութիւնը: 26. Զէ՞ որ Աքիլլեսն էլ, որից Ալեքսանդրը սերում էր, ամուսնական կապի մեջ էր մտել դերուհու հետ: Թող չկարծեն, թէ ինքը ցանկանում է պատվազրկել Ռոքսանային. նա մտադիր է օրենքով ամուսնանալ նրա հետ: 27. Հայրը անսպասելի բերկրանքից երջանկացած լսում էր Ալեքսանդրի խոսքերը: Իսկ արքան, բուն կրքերի մեջ հրամայում է պապենական սովորույթի համաձայն հաց բերել. մակեդոնացիների մոտ դա ամուսնութեան սրբազան գրավականն էր: Հացը թրով երկու կես արին, և Ալեքսանդրն ու Ռոքսանան համեստ արեցին այն: 28. Ես ենթադրում եմ, որ նրանք, ովքեր հաստատել են ժողովրդական սովորութիւնը, ցանկացել են այդ աննշան ու հեշտութեամբ ձեռք բերվող ուտելիքով ցույց տալ ամուսնացողներին, թէ ինչքան քշով պետք է նրանք բավարարվեն: 29. Այսպիսով Ասիայի ու Եվրոպայի արքան կնութեան վերցրեց մի աղջկա, որին բերել էին որպես խրախճանքի զվարճալիք, որպեսզի նրանից ծնվի նա, ով պետք է իշխի հաղթողներին: 30. Մերձավորներն ամաշում էին, որ արքայի աները ընտրվել է խնջույքի ու գինաբուրքի ժամանակ՝ նվաճվածների միջից: Սակայն Կլիտոսի մահից հետո աղատությունը կորսվել էր, և ստրկամտութեամբ սովոր դեմքերի վրա հավանութեան արտահայտություն կար:

V. Այդ ընթացքում արքան մտադրվեց գնալ Հնդկաստան, իսկ այնտեղից դեպի Օվկիանոս: Որպեսզի իր թիկունքում ոչինչ չպատահեր, որը կարող էր խոչընդոտել նրա մտահղացումներին, նա հրամայեց բոլոր գավառներից հավաքել 30 հազար երիտասարդների, զինել նրանց և բերել իր մոտ. նա ցանկանում էր, որպեսզի նրանք լինեն թէ պատանդներ և թէ զինվորներ: 2. Նա ուղարկեց Կրատերոսին հետապնդելու զավաճաններ Հավաստանոսին ու Կատենին. Հավաստանոսը գերվեց, իսկ Կատենը սպանվեց մարտում: Պոլիպերոնեսը նվաճեց Բուքաքենն կողմող երկիրը: 3. Ավարտելով այդ ամենը, Ալեքսանդրը իր մտքերը կենտրոնացրեց Հնդկաստանի դեմ պատերազմի վրա: Այդ երկիրը համարվում էր հարուստ ոսկով ու մարգարիտով, ինչպես նաև թանկարժեք քարերով, որոնք ավելի շատ շքեղութեան նշան էին, քան վեհութեան: 4. Աշխարհ տեսած մարդիկ

պատմում էին, թե Հնդկաստանում ամեն ինչ փայլում է ոսկուց ու փղոսկրից: Ալյապես, Ալեքսանդրը, գերազանցելով բոլորին և չկամենալով, որ ինչ-որ բանում իրեն գերազանցեն, արծաթապատում է վահանները, ձիերի վրա հազցնում ոսկյա սանձեր, որոշ զրահներ ոսկեզօծում, մյուսները՝ արծաթապատում. 120 հազար զինված մարտիկներ հետևում էին արքային դեպի պատերազմ: 5. Ավարտելով բոլոր պատրաստությունները, Ալեքսանդրը որոշեց, որ ժամանակը հասունացել է իրագործելու խնդիրներն կայացրած որոշումը. նա սկսեց մտածել, թե ինչպես իր համար աստվածային մեծարանքներ վաստակի: 6. Նա ցանկանում էր, որ իրեն ոչ միայն Յուպիտերի որդին համարեին, այլև հավատային դրան, կարծես ինքը կարող էր կարգադրել մարդկանց, ինչ մտածեն և ինչ խոսեն: Նա հրամայեց մակեդոնացիներին, պարսկական սովորույթի համաձայն, ստրկաբար ողջունել իրեն, զեմքով գետնին ընկնելով: Արքայի այդ ցանկությունը բոբրոբվում էր կործանարար բծանքով, որը սովորական շարիք է արքաների համար, քանզի հաճոյախատարությունը ավելի հաճախ է քայքայում նրանց ուժերը, քան նույնիսկ թրշնամին: 7. Սակայն դրանում մեղավորը մակեդոնացիները չէին (չէ որ նրանցից ոչ ոք չէր հանդուրժի պարսկական սովորույթներից հրաժարվելը), այլ հույները, որոնց արատավոր ազդեցությամբ խեղաթյուրվել էր ազնիվ զգացմունքների արտահայտությունը: 8. Արգիվացի ոմն Ադիսոս՝ երիրոսից հետո վատագույն ոտանավոր թխողը, և սիցիլիացի Կլեոնեսը, շողորորթ ոչ միայն իր բնավորությամբ, այլև իր ժողովրդին հատկանշական հակվածությամբ, և ուրիշ քաղաքային տակահրներ, որոնց արքան գերադասում էր նույնիսկ իր մերձավորներից ու մեծ բանակների առաջնորդներից, բոլոր սրանք ասես նրան ճանապարհ էին բացում դեպի երկինք և շողորորթաբար հայտարարում, որ Հերկուլեսը, հայր Լիբերոսը և Կաստորեսը Պուլոսեսի հետ միասին իրենց տեղը կդիջեն նոր աստվածությունը:

9. Ալյապես, Ալեքսանդրը տոնական մի օր հրամայեց փառահեղ ճաշկերույթ կազմակերպել՝ հրավիրելով ոչ միայն մակեդոնացիներին ու ամենամոտ հույն ընկերներին, այլև ազնվազարմ թշնամիներին: Արքան թիկնեց նրանց կողքին, մի քիչ քեֆ արեց և հետո հեռացավ: 10. Կլեոնեսը սկսեց արտասանել նախապես պատրաստած իր ճառը, որում գովարանում էր արքայի սխրանքները, այնուհետև սկսեց թվարկել (արքայի) ծառայու-

թյունները, որոնց համար, ըստ նրա, կարելի է շնորհակալություն հայտնել միայն մի ձևով՝ եթե նրանք արքային աստված են համարում, ապա թող բացեիրաց ընդունեն դա և խնկարկեն, ի նշան շնորհակալության նրա մեծ բարեգործությունների: 11. 21-րդ արքայի կերպը, որպես աստվածների մեծարելով իրենց արքաներին, ոչ միայն բարեպաշտություն են անում, այլև իմաստուն գործ կատարում, քանզի պետության վեհությունը իրենց իսկ բարեկեցության գրավականն է: Նույնիսկ Հերկուլեսը և հայր Լիբերոսը աստվածացվել են միայն այն ժամանակ, երբ հաղթահարել են իրենց ժամանակակիցների նախանձը: Գրա համար էր նրան կհավատան այնպես, ինչպես կբացահայտի դա մեր ժամանակաշրջանը: 12. Այդ պատճառով, եթե ոմանք տատանվում են, ապա ինքն անձամբ, երբ արքան վերադառնա խնդույթի, երեմելվայր կընկնի նրա առջև, մյուսներն էլ, հատկապես նրանք, ովքեր աչքի են ընկնում խոհեմությամբ, պետք է անեն նույնը: Հատկապես նրանք պետք է ցույց տան արքային մեծարելու կարգը: 13. Այդ ճառը առանց երկիմաստության ուղղված էր Կալիսթենեսի գեմ: Այդ մարդու հաստատակամությունը և բոլորին հայտնի անկախությունը ատելի էին արքային. ասես միայն Կալիսթենեսն էր հետ պահում մակեդոնացիներին ստրկամտությունից:

14. Երբ լուծվում տիրեց և բոլորի հայացքները ուղղվեցին միայն նրա վրա, նա ասաց. «Եթե արքան ներկա գտնվեր քո ճառի ժամանակ, ապա, անշուշտ, ոչ մեկը կարիք չէր ունենա քեզ պառասխախելու: Նա ինքը կարգելեր քեզ մտորել օտարոտի ու խորթ սովորույթների ներմուծման մասին և նման հաջողությունների դեպքում շարամտություն առաջացնել ստորաբարձությունը: 15. Բայց քանի որ արքան բացակայում է, ապա ևս կպատասխանեմ քեզ նրա փոխարեն: Ոչ մի վաղահաս պտուղ հավերժական չի լինում. դու ոչ թե պարզեում ես, այլ խլում արքայից երկնային մեծարանքները: Անհրաժեշտ է, որ որոշ ժամանակ անցնի, մինչև նրան աստված կճանաչեն, իսկ մեծ մարդկանց այդ մեծարանքը տրվում է սերունդների կողմից: 16. Ես ցանկանում եմ, որպեսզի արքային առաջիկայում ևս չդասեն անմահների շարքը, որպեսզի նրա կյանքը երկար լինի, իսկ մեծությունը՝ հավերժական: Աստվածային բարոյական արժեքը երբեք չի ուղեկցում մարդուն նրա կյանքի ժամանակ. դրա փոխարեն երբեմն այն գալիս է մահվանից հետո: 17. Որպես աստվա-

ծացման օրինակ դու բերեցիր Հերկուեսին ու հայր կրեբոսին: Մի՞թե բեզ թվում է, թե նրանք աստվածներ են դարձել ինչ-որ բեֆի ժամանակ կայացրած որոշման շնորհիվ: Ակզբում նրանց էությունը բողոքոված էր մահկանացուների շարքից, իսկ արդեն հետո նրանց փառքը երկինք հասավ: 18. Իսկ մենք բեզ հետ միասին, Կլեոնես, պատկերացնո՞ւմ եք, աստվածներ ենք ստեղծում: Արքան մեզանից կտանա իր աստվածայնություն հաստատումը: Եթե դու ցանկություն ունես փորձություն ենթարկել քո հզորությունը, որն է մեկին քո արքան դարձրու, եթե դու ի վիճակի ես աստված ստեղծել: Ի՞նչն է ավելի հեշտ նվիրարեբել՝ երկինքը թե պետությունը: 19. Թող զթխասիրտ աստվածները բարեսրտորեն լսեն, թե ինչ ասաց Կլեոնեսը, և թույլ տան, որ ամեն ինչ ընթանա իր նախկին ձևով: Թող նրանք համաձայնություն տան, որպեսզի մենք բավարարվենք մեր սեփական սովորություններով, Ես իմ հայրենիքից չեմ ամաչում և ցանկություն չունեմ սովորել պարտվածներից, թե ինչպես մեծարեմ արքային: Ստացվում է, որ նրանք են հաղթողները, եթե մենք նրանցից ենք ընդունում մեր կյանքի օրենքները»:

20. Բոլորը համակրանքով լսում էին Կալիսթենեսին, որպես հասարակական ազատության պաշտպանի: Նրա խոսքերը ոչ միայն լուռ համաձայնությամբ ընդունվեցին, այլև հավանություն բացականչություններով հատկապես մեծահասակների կողմից, որոնց համար ծանր էր փոխարինել հինավուրց սովորությունները օտարերկրացիների ձևով: 21. Սակայն այն ամենից, ինչ ասում էին հյուրերը, ոչինչ չսպրդեց արքայի ականջից, քանի որ նա կանգնած էր մահիճը ծածկող վարագույրի հետևում: Նա կանչել ավեց Ագիստոսին ու Կլեոնեսին, որպեսզի նրանք խոսակցություն ավարտելուց հետո հրամայեն գոնե բարբարոսներին խոնարհվել արքային իրենց սովորությի համաձայն, հենց որ նա ներս մտնի: Որոշ ժամանակ անց արքան վերադարձավ խնջույրի, ձևանալով, թե իրեն զբաղեցրել է ինչ-որ կարևոր գործ: 22. Երբ պարսիկները նրան հարգանքի նշաններ ցույց տվեցին, Պոլիպերբոնեսը, որը թիկն էր տվել ավելի բարձր տեղում, քան Ալեքսանդրը, սկսեց ձեռք առնել պարսիկներից մեկին, որի մտքուրբ գետնին էր հասնում, համոզելով, որ նա մարտերով ավելի ուժգին խփի գետնին: Այդ խոսքերը Ալեքսանդրի զայրություն առաջացրին, որը նա մինչ այդ հազիվ էր գուպում: 23. Այդ պատճառով արքան հարցրեց. «Իսկ դու չե՞ս ցանկանում ողջու-

նել ինձ: Թե միայն բեզ եմ արժանի թվում: ծաղրի»: Սա պատասխանեց, թե ոչ արքան է ծաղրի արժանի և ոչ էլ ինքը՝ նվաասացման: Այնժամ արքան Պոլիպերբոնեսին մահճից բարձր տվեց ցած, գցեց գետին և, քանի որ սա երեսնիվայր ընկավ, ասաց. «Ահա, տեսնո՞ւմ ես, դու էլ ես անում այն, ինչի վրա ծիծաղում ես»: Եվ հրամայելով ձեռքակալել նրան, խնջույքը համարեց ավարտված:

VI. Երկարատև շնորհազրկումից հետո արքան, այնուհանգիստ, ներեց Պոլիպերբոնեսին, իսկ Կալիսթենեսի վրա, որին վաղուց կասկածում էր անհնազանդություն մեջ, համառորեն զայրանում էր: Շուտով նա հնարավորություն ունեցավ բավարարելու իր ցատումը: 2. Ինչպես արդեն ասվել էր, մակեդոնական վերնախավը սովորությ ուներ արքաներին ծառայության հանձնել հասունացած որդիներին, որոնց պարտականությունները քիչ բանով էին տարբերվում սարուկների պարտականություններից: 3. Նրանք գիշերը հերթով պահակություն էին անում այն սրահի առջև, որտեղ բնում էր արքան: Նրանք արքայի մոտ էին բերում հարճերին այն մուտքով, որտեղ պահակներ չկային: 4. Հենց նրանք էլ ձիապաններից վերցնելով ձիերին, բերում էին արքայի մոտ, երբ նրան ձի էր հարկավոր, ուղեկցում էին որսի ժամանակ և բոլոր ճակատամարտերում, քանի որ նրանց վարժեցնում էին ազատ մարդկանց վայել տարբեր գործերի: 5. Առանձնահատուկ պատիվ էր համարվում արքայական սեղանին նստելու թույլտվություն ստանալը: Արքայից բացի, ոչ ոք իրավունք չուներ պատժել նրանց ճիպոտահարությամբ: 6. Մակեդոնացիների համար այդ կոչորտան ապագա զորավարների ու փոխարքաների յուրահատուկ մի դայրոց էր. նրանցից ժամանակին արքաներ էին դուրս եկել: Նրանց ծառանդներից երկար տարիներ անց հոռոմացիները խլեցին իշխանությունը:

7. Եվ ահա, այդ կոչորտայի ազնվատոհմ երիտասարդ Հերմոլայոսը մի անգամ նետահարում է մի վագր, որին ցանկանում էր սպանել ինքը՝ արքան. նրա հրամանով պատանուն ձիպոտահարում են: Ծանր տանկով այդ վիրավորանքը, նա սկսում է բողոքել Սոստրատոսին, որը նույն կոչորտայից էր և այրվում էր նրա սիրուց: 8. Սոստրատոսը տեսնում է իր սիրեցյալի ծեծված մարմինը. հնարավոր է, որ նա ինչ-որ ժամանակներից ի վեր թշնամաբար է տրամադրված եղել արքայի նկատմամբ ուրիշ պատճառով: Եվ ահա նա սկսում է բորբոքել առանց

այն էլ բորբոքված պատանուն. իրար փոխադարձ հավատարմության երդումներ տալով, նա համոզում է նրան իր հետ դաշինք կնքել, որպեսզի սպանեն արքային: 9. Նրանք գործը ձեռնարկեցին առանց մանկական տաքարյունություն և շափազանց զգուշորեն ընտրեցին նրանց, ում կարելի էր ներգրավել որպես դաշնակիցներ նման հանցավոր գործի մեջ: Նրանք անհրաժեշտ համարեցին հավաքագրել Նիկոտրատոսին, Անտիպատրոսին, Ասկլեպիոտրոսին և Փիլոտոսին: Նրանց միջոցով հաջողվեց ներգրավել Անտիկլեսին, էլպատոնիոսին և էպիմենոսին⁸: 10. Սակայն նպատակի իրագործման ճանապարհը դուրսին չէր. անհրաժեշտ էր, որպեսզի նույն գիշերվա ընթացքում բոլոր դավադիրները գտնվեին պահակախմբում, այլպես դավադրությանը շանչվողները կարող էին խանգարել: Սակայն ասես գիտավորյալ մի մասը հերթապահում էր մի գիշեր, մյուսը՝ հաջորդը: 11. Պահակային հերթափոխություններով և մտադրված գործի իրականացման նախապատրաստական աշխատանքներով անցավ 32 օր:

12. Վերջապես վրա հասավ գիշերը, երբ բոլոր դավադիրները պետք է միաժամանակ պահակախմբում գտնվեին. նրանք ուրախանում էին իրենց փոխադարձ հավատարմությամբ, որը փորձություն էր ենթարկվել այդքան օրերի ընթացքում: Նրանցից ոչ մեկին ոչ սարսափն էր կասեցնում, ոչ էլ սպառումը. այդպիսին էր կամ նրանց ատելությունը արքայի հանդեպ, կամ էլ հավատարմությունը միմյանց հանդեպ: 13. Այսպես, նրանք կանգնած էին այն դահլիճի դռան մոտ, ուր քեֆ էր աճում Ալեքսանդրը, որպեսզի խնջույքն ավարտվելուց հետո նրան տանեն ննջասենյակ: 14. Այնուհետև, թվում էր, թե ինքը՝ ճակատագիրն է գլուխները տաքացրած հյուրերին ստիպում ավելի շատ խմել. ժամանակն անցնում էր սեղանի շուրջը տարվող խաղերով: Մինչդեռ դավադիրները մեկ ուրախանում էին, որ հարձակվելու են քնատ արքայի վրա, մեկ էլ երկյուղում, որ խնջույքը կշարունակվի մինչև լույս: 15. Չէ՞ որ արշալույսին պահակության էին կանգնելու ուրիշները, իսկ իրենց պահակության հերթը կրկնվելու էր միայն 7 օր հետո. չէր կարելի հույս ունենալ, որ այդ ժամանակամիջոցում բոլոր դավադիրները հավատարիմ կմնան: 16. Սակայն երբ լույսը բացվեց, խնջույքն ավարտվեց, և դավադիրները դիմավորեցին արքային, ուրախանալով, որ վրա է հասել շարագործ մտադրության իրագործման պահը: Հանկարծ մի կին, որին խելագար էին համարում և, որը, սովորաբար, պա-

լատում էր կենում (հավատում էին, որ նա ինչ-որ ներշնչմամբ գուշակում է ապագան), վաղեց դահլիճից դուրս եկող արքային ընդառաջ և փակեց նրա ճամփան: Անհանգստություն արտահայտող դեմքով նա սկսեց համոզել արքային, որ նա վերագառնա դահլիճ: 17. Արքան կատակով պատասխանեց, ոչ աստվածները իրեն բարի խորհուրդ են տալիս, և, վերագարծնելով ընկերներին, մնաց խնջույքին համարյա մինչև ժամը երկուսը: 18. Կոհորտայից արդեն ուրիշները եկան պահակության, որպեսզի կանգնեն դռան մոտ, սակայն դավադիրները շարունակում էին կանգնած մնալ, թեև նրանց ծառայության ժամն արդեն ավարտվել էր. այդպես համառ է մարդու բոլոր զգացումները մթազնոդ հույսը: 19. Արքան, ավելի քան երբևիցե բարեհաճ գտնվելով նրանց հանդեպ, կարգադրեց նրանց գնալ հանգստի, բանի որ նրանք հերթապահել էին ողջ գիշերը: Ամեն մեկին տալով 50 սեստերցիա, նա նույնիսկ գովաբանեց նրանց այն բանի համար, որ վերջիններս շարունակել են պահակությունը նույնիսկ հերթափոխը ավարտվելուց հետո:

20. Եվ այսպես, հուսախաբ, նրանք ցրվում են տները. այնուամենայնիվ նրանք որոշում են սպասել իրենց հաջորդ հերթապահության գիշերվան: Սակայն էպիմենոսը, որին արքան առանձնացրել էր ուրիշներից, արքայական ողորմածություն ցուցաբերելու պատճառով, փոխելով իր որոշումը, կամ էլ համոզվելով, որ աստվածներն են խոչընդոտում իր մտադրությանը, բոլոր նախապատրաստությունների մասին պատմում է եղբորը՝ էվրիլոթոսին, թեև մինչ այդ չէր ցանկացել իրազեկ դարձնել նրան իր մտադրությանը: 21. Բոլորի հիշողության մեջ դեռ թաքմ էր Փիլոտոսի մահապատիժը: Դրա համար էլ էվրիլոթոսը իր եղբորը ձեռքը բռնած գալիս է թագավորական պալատ: Ժամապահներին արթնացնելով, նա հավաստեցնում է նրանց, թե արքայի անվտանգության համար կարևոր լուր է բերել: 22. Եվ նրանց դալու ժամը և նրանց հոգեկան ակնհայտ հուզմունքը և թե եղբայրներից մեկի ընկճված տեսքը ստիպեցին թագավորական ննջարանի առջև հերթապահող Պտղոմեոսին և Լեոնատոսին ոտքի ելնել: Բացելով դուռը և կրակ տանելով ներս, նրանք արթնացնում են Ալեքսանդրին, որը խոր քնած էր կերտվումից հետո, Հետզհետ սթափվելով, արքան հարցնում է, թե ինչ նպատակով են եկել: 23. Էվրիլոթոսը առանց հապաղելու ասում է, որ աստվածները լիովին երես չեն թեքել իր տնից, քանի որ իր

եղբայրը, թեև քիչ է մնացել անազնիվ քալլ կատարի, բայց հետո զըջացել է և ինքը որոշել կարևոր հաղորդում անել: Ն է որ նախորդ գիրչեր հեղաշրջում է նշանակված եղել Այդ հանցագործ մտադրության ոգեշնչողները եղել են նրանք, ում արքան կարող էր կասկածել ամենից քիչ: 24. Այնուհետև էպիմենուսը պատմեց ամեն ինչ ըստ հերթականության և տվեց դավադիրների անունները: Հայտնի է, որ Կալիսթենեսը չի հիշատակվել դավադիրների շարքում: Նա, իբր, միայն հաճույքով լսել է արքային անվանարկող ու պարսավող երիտասարդներին: 25. Ոմանք ավելացնում են, որ երբ Հերմոլայոսը բողոքել է արքայից կրած պատժի համար, Կալիսթենեսը խորհուրդ է տվել երիտասարդներին հիշել, որ նրանք արդեն հասունացած մարդիկ են: Գծվար է հասկանալ, դա սովել է, որպեսզի սփոփի ճիպտահարվածին թե ընդհակառակը, ավելի բորբոքի նրա ցասումը:

26. Արքան անմիջապես սթափվեց, քանի որ վտանգը, որից նա ազատվել էր, պարզորոշ կանգնեց նրա աչքի առջև: Նա միանգամից պարզեատրեց էվրիլոքոսին հիսուն տաղանդով և ոմն Տիրիդատի հարուստ ունեցվածքով և ներեց նրա եղբորը նույնիսկ ավելի շուտ, քան վերջինս ներում կխնդրեր: 27. Իսկ դավադրության ղեկավարներին, այդ թվում և Կալիսթենեսին, հրամայեց ձերբակալել և կալանքի տակ պահել: Երբ նրանց թագավորական պալատ բերեցին, արքան քնած էր: Գինաբերուրից ու անքնությունից հոգնած, նա քնեց ամբողջ օրը և ամբողջ հաջորդ գիրչերը: 28. Իսկ հաջորդ օրը նա բազմամարդ խորհուրդ ժողովեց, որտեղ ներկա էին այն անձնավորությունների հայրերն ու մերձավոր բարեկամները, որոնց գործը քննվում էր: Նրանք էլ անհանգիստ էին իրենց ճակատագրի համար, քանի որ մակեդոնական սովորույթի համաձայն իրենք էլ պետք է զոհվեին, քանզի մեղադրյալի հետ արյունակցական կապ ունեցողները դատապարտվում էին մահվան: 29. Արքան հրամայեց ներս բերել մեղադրյալներին, բացի Կալիսթենեսից, և նրանք առանց հապաղելու խոստովանեցին իրենց մտադրությունը: 30. Երբ բոլորը սկսեցին նրանց նախատել, այնժամ արքան ինքը հարցրեց նրանց, թե որն է իր մեղքը, որը մղել է նրանց նման հանցագործության:

VII. Բոլորը բար էին կտրել. միայն Հերմոլայոսն ասաց. «Եթե դու հարցնում ես զրդապատճառների մասին, ճշգրիտ չգիտես դրանք, ապա ես կպատասխանեմ: Մենք որոշել էինք սպա-

նել քեզ, որովհետև դու սկսել էիր մեզ վերաբերվել ոչ որպես ազատածինների, այլ ինչպես ստրուկների»: 2. Առաջինը տեղից վեր թռավ Սոպոլեսը, անվանելով որդուն հայրասպան, և, փակելով նրա բերանը, նա ասաց, որ շարժել լսել մի մարդու, որը հանցագործությունից ու շարիքից կորցրել է իր բանականությունը: 3. Արքան, ընդհատելով հորը, հրամայեց Հերմոլայոսին շարունակել պատմել այն, ինչ նա սովորել է իր խրատատու Կալիսթենեսից: Հերմոլայոսը շարունակեց. «Օգտվելով քո զթասարությունից, կասեմ, որ ինձ ուսուցանել են իմ դժբախտությունները: 4. Քանի՞ մակեդոնացիներ են, չնայած քո դաժանությունը, կենդանի մնացել՝ հատկապես անվանի մարդիկ՝ Ատալոսը, Փիլոտեսը Պարմենիոնը, Ալեքսանդր կինկետացին և Կլիտոսը, երբ անհրաժեշտ է կրվել թշնամու դեմ, նրանք ապրում են և կանգնած են շարքում, պաշտպանում են քեզ վահաններով, վերքեր են ստանում հանձն քր փառքի, հանուն հաղթանակի: 5. Նրանց չու մեծապես շնորհակալ եղար: Մեկը իր արյունով ներկեց քո լեզանը, մյուսը մեռավ տանջալի մահով. ցցի վրա հանված քո առաջնորդները դարձան դվարճանքի առարկա պարսիկների համար, որոնց հենց իրենք էին մինչ այդ հաղթել: Պարմենիոնը. որի օգնությամբ դու ժամանակին սպանեցիր Ատալոսին, սեռցվեց առանց դատի: 6. Գրծբախտ մարդկանց ձեռքերով դու հերթով մահապատիժներ ես անում, իսկ այդ սպանությունները վերջերս կատարածներին սպանում ես, հրամայելով ուրիշներին անել դա»: 7. Այստեղ բոլորը միաբերան բղավեցին Հերմոլայոսի վրա. հայրը քաշեց թուրը և, անկասկած, կսպաներ որդուն, սակայն արքան զսպեց նրան. նա հրամայեց Հերմոլայոսին խոսել և խնդրեց, որպեսզի բոլորը համբերությամբ լսեն, թե ինչպես է նա բազմացնում իր պատժի պատճառները:

8. Երբ արքան դժվարությամբ հանգստացրեց ներկա դստրվողներին, Հերմոլայոսը շարունակեց. «Որքան մեծահոգությամբ ես դու թուլատրում խոսել ճարտասանության մեջ անփորձ պատանիներին: Իսկ Կալիսթենեսի ձայնը խլացված է բանտի պատերի մեջ, որովհետև միայն այդ մարդն է կարողանում խոսել: 9. Ինչո՞ւ նրան չեն բերում, թեև լսում են նույնիսկ խոստովանածներին, Ուրեմն, դու ոչ միայն վախենում ես լսել անմեղի ազատ ձայնը, այլև նույնիսկ տանել շես կարող նրա տեսքը: Ես հաստատում եմ, որ նա ոչինչ չի արել: 10. Այստեղ են դստնվում

նրանք, ովքեր ինձ հետ միասին հիասքանչ գործ էին ձեռնարկել, սակայն մեզանից ոչ մեկը չի ասի, որ Կալիսթենեսը եղել է մեր օրոճակիցը, բլեև նա արդեն վաղուց դատապարտված է մահվան ամենաարդար ու ամենամեծահոգի արքայի կողմից: 11. Ահա թե ինչպիսին է Վակեղոնացիներին տրված պարզեւրդու հեղում ես նրան: արյունը, որպես ոչ պետքական և աղտոտված մի բան: Քո երեսուն հազար ջորիները կրում են թաւանված ոսկին, այն դեպքում, երբ վինվորները ոչինչ չունեն տուն տանելու բացի սպիներից, որոնք ոչ մեկին պետք չեն: 12. Սակայն այս ամենին մենք կարող էինք դիմանալ, մինչև դու շոտացար մեզ հանուն բարբարոսների և մեր վզին շղթիցիք նոր սովորությունների լուծը: Քեզ դուր է գալիս պարսկական հագուստը և պարսկական ապրելակերպը: Ստացվում է, որ մենք ցանկացել ենք սպանել պարսից և ոչ թե մակեդոնական արքային: Մենք քեզ հետապնդում ենք պատերազմի օրներով որպես փախստակի: 13. Դու ցանկացար, որպեսզի մակեդոնացիները քո առջև ծնկի գան և ողջունեն քեզ որպես աստծու. դու հրաժարվեցիր քո հորից՝ Փիլիպոսից, իսկ եթե աստվածներից որեէ մեկը Յուպիտերից բարձր լիներ, դու կարհամարհեիր նաև Յուպիտերին: 14. Դու զարմանում ես, որ մենք՝ ազատ մարդիկս, չենք կարող տանել քո գոռոզությունը: Քեզանից մենք ինչ սպասենք, որոնց առանց մեղքի սպասում է մահը կամ դրանից ավելի ծանր մի բան՝ ստրկության մեջ ապրելը: Իսկ դու, եթե չես կարող ես ուղղվել, շատ բանով պարտական կլինես ինձ: 9^ե որ ինձանից առաջին անգամ իմացար, թե ինչ չեն կարող տանել ազատածիները: Գթա նրանց, մի՞ ծանրացրու նրանց միայնակ ծերությունը տանջանքներով: Իսկ մեզ հրամայիր տանել, որպեսզի մենք մեր մահով ձեռք բերենք այն, ինչին ձգտում էինք քո մահվան գնով:

VII. Այսպես էր խոսում Հերմոլայոսը: Արքան էլ իր հերթին ասաց. «Իմ համբերությունը ապացուցում է, թե ինչքան կեղծ է այն, ինչ նա ասում էր, ընդօրինակելով իր ուսուցչին: Ես լսեցի նրա մեծագույն հանցագործության խոստովանությունը և ձեզ էլ ստիպեցի լսել, համոզված լինելով, որ երբ ես թույլ տամ խոսել այդ ավազակին, նա կբացահայտի իր ողջ շարությունը, որը հրահրել է նրան ինձ սպանելու, թեև նա պարտավոր էր մեծարել ինձ հոր հետ հավասար: 3. Դեռ վերջերս, երբ նա հանդուգն պահեց իրեն որսի ժամանակ, ես հրամայեցի

պատժել նրան հայրական սովորությամբ համաձայն, որը գալիս է հազույն մակեդոնական արքաներից: Այդպես էլ պետք է լինի՝ դատարարները պատժում են իրենց սաներին, ամուսինները՝ կանանց. մենք թույլ ենք տալիս նույնիսկ ստրուկներին հիպոտահարել իրենց տերերի այդ տարիքի երեխաներին: 4. Ահա թե որն է իմ դաժանությունը, որի համար նա ցանկացել է վրեժխնդիր լինել շարագործ սպանությունը: Իսկ թե ինչքան՞ զթասիրտ եմ ես նրանց հանդեպ, ովքեր թողնում են ինձ գործել իմ հայեցողությամբ, դուք ինքներդ գիտեք. այդ մասին հիշեցնելն ավելորդ է: 5. Երգվում եմ աստվածներով, ա՛հեհա՛քիչը ինձ զարմացնում է այն, որ Հերմոլայոսը հավանություն չի տալիս մարդասպանների պատժին. չէ՞ որ ինքն էլ աբժանացել է դրան: Դրվատելով Պարմենիոնին և Փիլոտեսին, նա փորձում է արդարացնել իրեն: 6. Ինչ վերաբերում է երկու անգամ իմ դեմ դավեր նյութած Ալեքսանդր Լինկեստացուն, ապա երկու անգամ էլ ես ներել եմ նրան: Նույնիսկ երբ նա կրկին մերկացվեց, ես երկու տարի ձեռնապահ էի մնում նրան պատժելուց, մինչև դուք չպահանջեցիք, որպեսզի նա քալի իր մեղքը արժանի հատուցմամբ: 7. Դուք հիշում եք, որ մինչև իմ արքա դառնալը Ատալոսը իմ թշնամին էր: Ա՛խ, եթե Կլիտոսը շտիպեր ինձ զայրանալ նրա վրա: Նրա հանդուգն լեզուն, որն այդքան զազրանք թափեց իմ և ձեր վրա, ես ավելի երկար հանդուրժեցի, քան կաներ նա նման բան ինձանից լսելիս: 8. Արքաների և առաջնորդների զթասրտությունը պայմանավորված է ոչ միայն իրենց, այլև իրենց ենթակաների բնույթով: Հնադանդությունը մեղմացնում է իշխանությունը. և իսկապես, եթե հոգում հարգանք չկա, և մենք տարբերություն չենք դնում վերևի ու ներքևի միջև, մենք ստիպված ենք լինում ուժին հակահարված տալ ուժով»:

9. «Իսկ ինչո՞ւ զարմանամ, որ ինձ դաժանության մեջ մեղադրում է մեկը, որը համարձակվել է հանդիմանել ինձ ազահություն մեջ: Չեզանից ոչ մեկին ես չեմ ցանկանում բորբոքել, որպեսզի իմ առատաձեռնությունը ատելի չդառնա, եթե դա դիպչում է ձեր ինքնասիրտությանը: Նայեք ողջ զորքին. նրանք, ովքեր զեռ վերջերս ոչինչ չունեին բացի զենքից, այժմ թիկն են տվել արծաթե մահիճներին, նրանց սեղանները լիքն են ոսկով, նրանք իրենց հետևից տանում են ստրուկներին ամբոխներ և ի վիճակի չեն կրելու հակառակորդից վերցված ավարը: 10. Պարսիկներին,

որոնց մենք հաղթեցինք, իհարկե, ես մեծապես հարգում եմ: Իմ շափաղորդության ամենաճշգրիտ ցուցանիշն այն է, որ նույնիսկ նվաճվածներին ես գոռոզաբար չեմ դեկավարում: 25^o որ ես Ասիա եկա ոչ թե ժողովուրդներ կործանելու և աշխարհի կեսը անապատ դարձնելու նպատակով, այլ նրա համար, որպեսզի շարտեզան իմ հաղթանակի համար նրանք, ովքեր պատերազմում հպատակվել են ինձ: 11. Դրա համար էլ նրանք կովում են ձեզ հետ միասին, արյուն թափում ձեր իշխանության համար, իսկ եթե նրանց հետ մենք վերաբերվեինք ինչպես բռնակալներ, նրանք կապտամբեին: Սրով ձեռք բերված տիրապետությունը կարճատև է, իսկ բարեգործության երախտագիտությունը՝ հարատև: 12. Եթե մենք ուզում ենք տիրանալ Ասիային և ոչ թե միայն անցնել նրա միջով, մեզ անհրաժեշտ է որոշ ներողամտություն ցուցաբերել այդ մարդկանց հանդեպ. նրանց հավատարմությունը մեր իշխանությունը կդարձնի ամուր ու մշտական: Իհարկե, մենք ավելին ունենք, քան կարող ենք պահել: Անվերջ լցնել այն, ինչ արդեն բերնեբերան լցված է, անկուշտ ագահության նշան է: 13. Իսկպես, ես նրանց սովորությունները պատվաստում եմ մակեդոնացիներին: Ես շատ թողովուրդների մոտ տեսնում եմ այնպիսի բաներ, որոնց ընդօրինակելը մեզ համար ամոթ չէ: Այսքան մեծ տերությունը անհնար է կառավարել առանց որոշ բաներ այդ ժողովուրդներին հանձնելու և նրանցից սովորելու: 14. «Իսկպես ծիծաղելի է, որ Հերմոլայոսը պահանջում է ինձանից, որ ես հրաժարվեմ Յուդիտներից, որի պատգամախոսի կողմից ես ճանաչված եմ: Եվ մի՞թե աստվածների պատասխանները իմ իշխանության տակ են: 15. Նա ինձ ավելի որդու անունը, որն ընդունելը շխանգարեց գործերին, որոնք մենք անում ենք: Ա՛խ, եթե հնդիկներն ինձ աստված ճանաչեին: Պատերազմների ելքը կախված է փառքից, և հաճախ այն սուտը, որին հավատում են, դառնում է իրականություն: 16. Զեզ արդյոք չի՞ թվում, որ ձեր զինքը ես զարգարել եմ ոսկով ու արծաթով նրա համար, որ հակված եմ ճոխությունը: Ես ցանկացա ցույց տալ նրանց, ով այդ մետաղից ավելի էժան քան չգիտի, որ մակեդոնացիներին ոչնչով հնարավոր չէ գերազանցել՝ նույնիսկ ոսկու առատությունը: 17. Առաջին հերթին ես կրպակում այն մարդկանց աչքերը, ովքեր սպասում էին, թե մեզ մոտ տեսնելու են միայն աղքատություն ու միջավայրություն, և կապացուցեմ, որ մենք եկել ենք ոչ թե

սակու կամ արծաթի ծարավից զրգված, այլ որչ աշխարհը նվաճելու նպատակով: Իսկ դու, մարդասպան, ցանկանում էիր ջնջել այդ փառքը, սպանել արքային, իսկ մակեդոնացիներին ծախել պարտված ազգերին: 18. Իսկ այժմ դու աղաչում ես ինձ խնայել ձեր ծնողներին: Իհարկե, դուք չպետք է իմանալիք, թե ինչպես եմ ես որոշել նրանց հետ վարվել, որպեսզի ձեզ համար ավելի ծանր լինի մեռնելը, եթե ձեր մեջ դեռ պահպանվել են ծնողների հանդեպ որևէ հիշողություն և հոգատարություն, Վերջերս ես շեղյալ եմ համարել հանցագործների հետ նրանց անմեղ բարեկամներին ու ծնողներին մահապատժի ենթարկելու սովորությունը և հայտարարում եմ, որ նրանք կպահպանեն իրենց ունեցած բոլոր իրավունքները: 19. Ես գիտեմ, թե ինչու ես ուզում, որ բերեն քո Կալիսթենեսին՝ միայն նրա աչքում ես դու աղամարդ երևում, քանի որ դու ավազակ ես: Դու ցանկանում ես, որ բոլորի ներկայությամբ նա էլ լուտանքներ թափի, որպիսիք թափեցիր դու ինձ վրա, որոնք լսել էիր նրանից: Եթե քո սուտցիլը մակեդոնացի լիներ, ես կհրամայեի բերել նրան քեզ հետ միասին, քանզի նա լիովին արժանի է այնպիսի աշակերտի, որպիսին դու ես. սակայն նա, որպես օլիմպացի, այդպիսի իրավունքներ չունի»:

20. Դրանից հետո արքան ազատ արձակեց խորհուրդը և հրամայեց մեղադրյալներին հանձնել իրենց իսկ կոհորտայի մարդկանց ձեռքը: Նրանք էլ, ցանկանալով իրենց խստությունը արտահայտել արքայի հանդեպ ունեցած հավատարմությունը, դաժանորեն խոշտանգեցին նրանց և սպանեցին: 21. Կալիսթենեսն էլ մեռավ խոշտանգումներից հետո, թեև մեղավոր չէր դավադրության մեջ. բանն այն է, որ նա ամենևին չէր կարողանում համակերպվել պալատական կյանքին և շողոքորթներին: 22. Այդ պատճառով, ոչ մեկի սպանությունը չէր կարող այդքան ատելություն առաջացնել Ալեքսանդրի հանդեպ, քանի որ նա ոչ միայն սպանեց, այլև առանց դատի տանջամահ արեց վեհանձն հատկություններով ու վարմունքով օժտված մարդու: չէ՞ որ հենց Կալիսթենեսը կյանքի վերադարձրեց Ալեքսանդրին, երբ նա ցանկանում էր մեռնել Կլիտոսի սպանությունից հետո: 23. Սակայն այդպիսի դաժանության համար Ալեքսանդրը չափազանց ուշ զղջաց:

IX. Դժգոհություն ծնող անգործությունը չզգճելու համար արքան շարժվեց դեպի Հնդկաստան. նրա փառքը միշտ ավելի

ցայտուն էր արտահայտվում պատերազմում, քան հաղթանակից հետո: 2. Համարյա ողջ Հնդկաստանը նայում է արևելք՝ նրա լայնութիւնն ավելի քիչ է, քան երկարութիւնը: 3. Հարավային քամիների առջև բաց շրջաններում⁹ կան բարձր լեռներ, մնացած մասերը հարթավայրային են: Նրանց դաշտերով հոսում են բազմաթիւ հայտնի գետեր, որոնք սկիզբ են առնում Կովկասյան լեռներից¹⁰: 4. Ինդոսը մնացած գետերից ամենասառն է. նրա ջուրը իր գոյնով քիչ է տարբերվում ծովի ջրից: 5. Գանգեսը՝ արևելքի ամենամեծ գետը, հոսում է դեպի հարավ և իր ուղղածից հունով հատում մեծ լեռնաշղթաները, այնուհետև ճանապարհին ծառայած ժայռերը թերում են նրա ճանապարհը դեպի արևելք: 6. Երբ Ինդոսը մոտենում է Կարմիր ծովին¹¹, այն ողողում է ափերը, թշուր-տանում է բազմաքանակ ծառեր՝ մեծ քանակութեամբ հողով, սակայն ճանապարհին, ժայռերի հանդիպելով, հաճախ փոխում է իր ուղղութիւնը: 7. Այնտեղ, ուր գետը հանդիպում է ավելի փափուկ հողի, այն տարածվում է և կղզիներ առաջացնում: 8. Այդ գետն է թափվում Ակեսիսը. Գանգեսը¹² ասես բռնում է նրան ծով թափվելու ճանապարհին: Երկու գետերը միախառնվում են, ստեղծելով սրբնթաց հոսանք, քանի որ Գանգեսը իր մեջ թափվող գետի համար սաստիկ անհարմար գետաբերան է ստեղծում և նրա ջրերը հոսում են խոչընդոտներ հաղթահարելով: 9. Դիարդան գետը պակաս հայտնի է, քանի որ այն հոսում է Հնդկաստանի ամենահեռավոր մասով. այնուհանդերձ, Նեզոսի նման, այնտեղ լիքն են ոչ միայն կոկորդիլոսներ, այլև դելֆիններ և մյուս ազգերին անհայտ կենդանիներ: 10. էթիոպիացիները հաճախ ոլորապտույտ է կատարում, և շրջակա բնակիչները օգտագործում են նրա ջրերը ոռոգման նպատակով: Դրանով է բացատրվում, որ մինչև ծովը հասնող նրա խղճուկ մնացորդները նույնիսկ անուններ չունեն:

11. Այս գետերից բացի, շատ այլ գետեր են հատում ամբողջ երկիրը, սակայն նրանք աննշան են և չեն նշում ոչ մի սահման: 12. Մովափնյա մարզերը շորային են հյուսիսային քամիների պատճառով, սակայն դրանք կասեցնում են լեռնաշղթաները, չեն թափանցում երկրի խորքը և դրա համար էլ չեն վնասում պտուղների հասունացմանը: 13. Այս երկրում այնքան չուրահատուկ է տարվա եղանակների փոփոխությունը, որ եթե ուրիշ տեղերում արեն այրում է, Հնդկաստանում ձյուն է գալիս, և հակառակը, երբ ամենուր ցուրտ է, այստեղ անասելի

շոգ է, և բնութիւնը չի բացատրում, թե ինչու է դա այդպես լինում: 14. Իհարկե, Հնդկաստանը ողողող ծովը գոյնով չի տարբերվում մյուսներից. այն անվանում են էրիթր արքայի անունով: Ահա թե ինչու տգետները կարծում են, թե ջուրն այդ ծովում կարմիր է¹³: Երկիրը հարուստ է վուշով, որից պատրաստվում են հնդիկների մեծամասնութեան հագուստները: 15. Մտների մատղաշ կեղևների վրա կարելի է գրել ինչպես թղթի վրա: 16. Այնտեղ թռչուններ կան, որոնք կարող են նմանակել մարդկային ձայնը¹⁴: Հանդիպում են գազանների տեսակներ, որոնք հայտնի են ուրիշ ժողովուրդներին միայն իրենց մոտ տարված առանձին նմուշներից: Այս երկրում արածում են ոնգեղջյուրներ, որոնք գալիս են ուրիշ տեղերից: 17. Հնդկական փղերն ավելի ուժեղ են, քան Աֆրիկայում վարժեցրածները. նրանց ուժը համապատասխանում է մեծութեանը: 18. Ոսկին գտնվում է գետերում, որոնց հանգիստ ջրերը հոսում են դանդաղ ու հավասարաչափ: 19. Մովը ափ է նետում թանկարժեք քարեր ու մարգարիտներ: Այն ժամանակներից ի վեր, երբ հրեղիկները ուրիշ ժողովուրդների մեջ տարածել են շքեղութեան առարկաների առևտուրը, նրանց ոչ մի այլ բան այդքան չի հարստացնում. չէ՞ որ փոթորկոտ ծովի գուրս նետած իրերի գինը որոշվում է ըստ քմահաճույքի: 20. Հնդիկների մոտ, ինչպես և ամենուր, բնական պայմանները բնորոշում են մարդկանց բնավորությունը: 21. Նրանք մինչև կրունկները հասնող թեթև կտորից հագուստ են հագնում, ոտքներին կոշիկներ են, գլուխները կապում են սրբիչներով, ականջներից կախված են թանկարժեք քարեր. հատկապես ազնվատոհմ և հարուստ բնիկները ձեռքները դաստակից մինչև ուսը ոսկով զարդարում են: 22. Մարդերը ավելի հաճախ են սանրում, քան խուզում, կզակը երբեք չեն սափրում. դեմքի մնացած մասը սափրում են մինչև այն լիովին ողորկ լինի:

23. Արքայական պերճութիւնը, որն իրենք հիասքանչութիւն են անվանում, գերազանցում է բոլոր ժողովուրդների փառացած ճաշակները: Երբ արքան բարեհաճում է երևալ ժողովրդին, նրա ծառաները արծաթի բուրվառներով անուշահոտութեամբ են լցնում այն ամբողջ ճանապարհը, որով արքան հրամայում է իրեն տանել: 24. Նա թիկն է տալիս ոսկե պատգարակին, որի վրայից կախված են մարգարիտներ. նրա կտավի հագուստը նախաշործված է ոսկով ու ծիրանիով, պատգարակին հետևում

են զինված թիկնապահները: 25. Նրանց միջև հյուղերի վրա
թռչուններ են տանում, որոնք վարժեցված են իրենց երգեցողու-
թյամբ զվարճացնել արքային նույնիսկ նրա լուրջ գործերի ժա-
մանակ: 26. Արքայական պալատում ոսկեղօծ սյուների կան.
Նրանց վրա փաթաթում են ոսկուց պատրաստված խաղողի ող-
կույզներ: Կան այնտեղ նաև արծաթից վարպետորեն պատրաստ-
ված թռչուններ, որոնք հիացմունք են առաջացնում իրենց գե-
ղեցկությամբ: 27. Թագավորական պալատը այցելուների հա-
մար բաց է այն ժամանակ, երբ սանրում են և հարգարում ար-
քայի մագերը. այդ ժամանակ նա պատասխանում է դեսպան-
ներին, կատարում հպատակների դատավարությունները: Ար-
քայի սանդղակները հանում են և ռաբերին անուշահոտություններ
բոսում: 28. Նրա ողջ գործը որսի ժամանակ այն է, որ հարձերի
երգեցողության ու աղոթքների ուղեկցությամբ նա խփում է գա-
ղանանոցում պահվող կենդանիներին: Մեծ դժվարությամբ են
նետում երկու կանգուն երկարություն ունեցող տեղերը: Արդ-
յունքը ստացվում է աննշան, քանի որ տեղի ողջ ուժը նրա թե-
թևության մեջ է, իսկ ծանր քաշի դեպքում այն թիչ է պիտանի:
29. Ոչ հեռավոր ճանապարհները արքան գնում է ձիով. եթե
ճամփորդութունը երկարատև է, ապա կառքը քաշում են փղերը,
և այդ հսկա կենդանիները ամբողջովին ծածկված են ոսկով: Եվ
կարծես նրա համար, որպեսզի լիարժեք ի ցույց դնեն բարբերի
այլանդակութունը, արքային հետևում է հարձերի երկար շա-
րասյունը՝ ոսկյա պատգարակներով: Այդ շքախումբը գնում է
թագուհու շքախմբից առանձին, սակայն նույն շքեղությամբ:
30. Կանայք կերակուր են պատրաստում, իրենք էլ զինի մատու-
ցում, իսկ բոլոր հնդիկները շափազանց շատ են խմում: Երբ
արքան դիտված քնում է, հարձերը տանում են նրան ննջա-
րան, ավանդական երգերով կանչելով գիշերային աստվածներին:
31. Ո՞վ կհավատա, որ այդ անբարոյականության մեջ կա-
րող է սեր լինել իմաստնության հանդեպ: Սակայն նրանց մեջ կա
վայրի և կոպիտ մարդկանց մի ցեղ, որոնց իմաստուններ են
անվանում: 32. Նրանք գտնում են, որ հիասքանչ է նախազգու-
շացնել ճակատագրով կանխատեսված վախճանը: Ով ծանր է
տանում ծերությունը կամ տանջվում է հիվանդություններից,
հրամայում է ողջ-ողջ այրել իրեն: Նրանց կարծիքով անար-
դանք է ապրել մահվան սպասման մեջ, և ծերությունից մա-
հացող մարդկանց մարմինները թաղվում են առանց որևէ պատ-

վի. նրանք ենթադրում են, որ կրակը անարդվում է, եթե այն
այրում է արդեն անշունչ մարմինը¹⁵: 33. Ասում են, թե քա-
ղաքներում բնակվող մարդիկ, որոնք պահպանում են հասա-
քակազան սովորութիւնները, հմտորեն հետևում են աստղերի
շարժմանը և կանխադուշակում ապագան¹⁶: Նրանք կարծում
են, որ այն մարդը, ով սարսափով սպասում է իր մահվան օր-
վան, դրանով իսկ մոտեցնում է այն: 34. Նրանք աստվածատուր
են համարում այն ամենը, ինչ մշակում են. հատկապես ծա-
ռերը, որոնք փշացնելը պատժվում է մահապատժով: 35. Ամեն
ամիս ունի 15 օր, սակայն տարին պահպանում է լրիվ տևողու-
թյունը: 36. Նրանք ժամանակը շափում են լուսնով, սակայն ոչ
սովորականի պես՝ լիալուսնից սկսած, այլ այն պահից, երբ
լուսինը սկսում է եղջյուրի տեսք ընդունել, և քանի որ նրանք
հաշիվը սկսում են լուսնի այդ փուլից, ապա նրանց ամիսն էլ
կարճ է ստացվում: 37. Շատ այլ բաներ էլ են հաղորդում, բայց
ես անհարմար եմ զգում պատմել դրանց մասին և ձգձգել սկսած
շարադրանքը:

X. Այսպիսով, Ալեքսանդրի՝ Հնդկաստանի տարածքը մասն-
լույց հետո, ժողովուրդների արքայիկները շտապում են նրան
ընդառաջ, պատրաստ կատարելու նրա կարգադրությունները:
Նրանք ասում են, թե իրենց մոտ է կելլ Յուպիտերի երրորդ որ-
դին, որ հայր կերևոսի և Հերկուլեսի մասին միայն լսել են,
իսկ Ալեքսանդրին տեսնում են իրենց աչքերով: 2. Բարեհամ-
բույր ընդունելով նրանց, արքան հրամայեց հետևել իրեն, որ-
պեսզի օգտագործի նրանց որպես ուղեկցորդներ: Այնուհետև,
քանի որ այլևս ոչ ոք նրան ընդառաջ չեկավ, նա զորքի մի մասի
հետ առաջ ուղարկեց Հեփեստիոնեսին և Պերդիկոսին, որպեսզի
նրանք հնազանդեցնեն նրանց, ովքեր չէին ցանկացել ենթարկ-
վել իր իշխանությանը: Նա հրամայեց սրանց հասնել մինչև Ին-
դոս գետը և զորքը մյուս ափը տեղափոխելու համար նավեր
պատրաստել: 3. Հաշվի առնելով, որ անհրաժեշտ էր լինելու
շատ գետեր անցնել, նավերը այնպես էին կառուցվում, որ
հնարավոր լիներ քանդել, սայլերով տեղափոխել և հետո կըր-
կին հավաքել: 4. Արքան, Կրատերոսին կարգադրելով հետևել
իրեն փաղանգով, ինքն արշավեց հեծելազորով և թեթևազան
զորքով և աննշան ճակատամարտից հետո մոտակա քաղաքը
բռնեց նրանց, ովքեր դուրս էին եկել իր դեմ: 5. Այդ ժամանակ
էլ մոտեցավ Կրատերոսը: Եվ ահա, ամենից առաջ ժողովրդին

սարսափեցնելու նպատակով, որը դեռևս ծանոթ չէր մակեդոնական ղեկերին, նա հրամայեց ոչ մեկին չխնայել՝ այն բանից հետո, երբ կրակի կմառնվին իրենց պաշարած քաղաքի ամրությունները: 6. Երբ արքան շրջանցում էր պարիսպները, նա վիրավորվեց նետի հարվածից: Այնուամենայնիվ նա գրավեց քաղաքը և կոտորեց բոլոր բնակիչներին. արքայի ցասումը տարածվեց նույնիսկ տների վրա:

7. Նվաճելով այդ անհայտ ժողովրդին, այդտեղից նա ժամանեց Նիսա քաղաքը: Նա ճամբար խփեց ուղղակի քաղաքի պարիսպների տակ, ծառաշատ վայրում: Գիշերային ցուրտը ավելի սաստկորեն քան երբեկից կաշկանդեց մարդկանց մարմինները: Այդ վիճակից դուրս գալու միակ միջոցը կրակ վանելն էր: 8. Դրա համար էլ, կտրելով ծառերը, խարույկներ վանեցին: Բոցն անցավ քաղաքացիների հին, մայրու փայտից պատրաստված դամբարանները. զրանց կպած կրակը արագորեն տարածվեց, մինչև ամեն ինչ մոխիր դարձավ: 9. Իսկ քաղաքից սկզբում շան հաշոց լսվեց, հետո մարդկային ձայների խուլ աղմուկ: Միայն այդ ժամանակ բնակիչները իմացան թըշնամու գալու մասին, իսկ մակեդոնացիները՝ քաղաքի մոտ լինելու մասին: 10. Արքան արգեն ոտքի էր հանել զորքը և սկսել քաղաքի պաշարումը, և թշնամիները, որոնք համարձակվեցին ճակատամարտի ելնել, նետահարվեցին: Նրանցից ոմանք ցանկանում էին հանձնվել, մյուսները՝ կռվել: Տեղեկանալով նրանց երկմտանքի մասին, արքան հրամայեց շարունակել պաշարումը և խուսափել կոտորածից: Վերջապես, պաշարումից տանջահար եղած, նրանք անձնատուր եղան: 11. Նրանք ասում էին, թե իրենց ցեղը սերում է հայր կիբերոսից, իսկ նրանց ծագումը իսկապես այդպիսին է: 12. Քաղաքն ընկած է լեռան ստորոտին, որը բնակիչներն անվանում են Մերոս: Դրա հիման վրա հույները հնարել են, իբր թե հայր կիբերոսը թաքցված է եղել Յուպիտերի ազդրի մեջ¹⁷:

13. Տեղեկանալով բնակիչներից լեռան զիրքի մասին և առնչ ուղարկելով գումակը, արքան իր ողջ զորքով բարձրացավ նրա գագաթը: Ամբողջ սարը ծածկված է բազևղով ու խաղողով, հոսում են շատ շքամաբող աղբյուրներ: 14. Այնտեղ հասունանում են հյուսիսի և սննդարար պտուղներ, հացազգիները աճում են իրենք իրենց, գետինն ընկած պատահական սերմերից: Այդ վայրի ծայրերի վրա շատ են դափնու ծառերը, հատապտուղ-

ներն ու կուսական անտառները: 15. Այնժամ զինվորները, ոչ իհարկե աստվածների ներշնչմամբ, այլ սեփական հաճույթի համար, սկսեցին բաղնի և խաղողի տերևներ պոկել և իրենց պսակներով զարդարելով վազել անտառով մեկ, ինչպես բաքոսյան պարերում: 16. Այդ անտառը հովանավորող աստծուն զիմող հազարավոր ձայներ թնդացրին լեռնաշղթաներն ու բլուրները: Գինարբուքը սկսեցին մի քանիսը, սակայն ինչպես սովորաբար լինում է, այն վարակեց բոլորին: 17. Ասես խաղաղ ժամանակներում, զինվորները փովեցին խոտի և տերևների կույտերի վրա: Արքային այնքան էլ տհաճ չէր այդ անսպասելի ուրախությունը: Շուտով այդ խրախճանքի համար անհրաժեշտ ամեն բան, նա թույլատրեց զորքին տասը օր տրվել հայր կիբերոսին: 18. Ո՞վ կժխտի, որ բացառիկ փառքը ավելի հաճախ ճակատագրի պարգևն է, քան քաջագործությունների արդյունքը: Զե՞ որ թշնամին անգամ չհամարձակվեց հարձակվել խրախճանք անող ու զինուց տուգած մարդկանց վրա: Գիվոտածների աղմուկից նա ավելի շատ վախեցավ, քան եթե լսեր ճակատամարտի գոչումը: Նույն բախտն էլ հովանավորեց մակեդոնացիներին, երբ նրանք վերադառնում էին օվկիանոսից¹⁸, թշնամու աչքի առջև զինարքուքի տրվելով:

19. Այդտեղից եկան Դեզալա կոչվող երկիրը: Բնակիչները լեցին տները ու փախան անանցանելի անտառներն ու լեռները: Արքան անցավ Ակադիրով, որը նույնպես կրակի էին մատնել և լքել փախստական բնակիչները: 20. Անհրաժեշտությունը ստիպեց փոխել ռազմական տակտիկան. մասնատելով իր զորքը, նա ցուցադրեց իր զենքի ուժը միաժամանակ տարբեր տեղերում: Բնակիչները կոտորվում էին այն վայրերում, ուր չէին սպասում հանդիպել թշնամուն, և այդպիսի պարտությունից հետո հնազանդվեցին:

21. Պտղոմեոսը շատ քաղաքներ գրավեց, բայց Ալեքսանդրը գրավեց ամենանշանակալիցները: Այնուհետև նա նորից միավորեց նախկինում մասնատված զորքը: 22. Անցնելով Քոասպ գետը, նա թողեց Քենոսին հարուստ քաղաքը պաշարելու (բնակիչներն այն անվանում էին Բեյրա), իսկ ինքն էլ շարժվեց դեպի մաղազները: Վերջերս, Ասականի մահանալուց հետո, որին և պատկանում էր այդ թագավորությունը, քաղաքի կառավարումը իր ձեռքն էր վերցրել նրա մայրը՝ Կլեոփիսը: 23. Քաղաքը, որն ամբացված էր ոչ միայն բնության կողմից, այլև ար-

հետախնայան շինություններ, պաշտպանում էին 38 հազար հետա-
կախները. արևելքից այն շրջապատված էր հորձանուտ գետով.
Նրա երկու զառիթափ ասիերը խոշորագույնում էին քաղաքին մո-
տենալուն: 24. Արևմուտքից ու հարավից բնությունը դիտմամբ
վեր է խոշացրել չափազանց բարձր ժայռեր, որոնց տակ երկար
ժամանակներ ընթացքում առաջացած քարանձավներ ու ան-
դունդներ էին, իսկ այնտեղ, որ նրանք վերջանում էին, սկսում էր
մեծ դժվարություններ փորված մի մեծ խանդակ: 25. Քաղաքը
շրջապատված էր 35 ասպարեղ երկարություն ունեցող պարսպով.
Նրա ներքին մասը շարված էր քարից, իսկ վերինը՝ շքեղ
աղյուսից: Աղյուսների միջև որպես կապող օղակներ դրված
էին քարեր, որպեսզի փխրուն նյութը ավելի կարծր հիմք ունե-
նար. օգտագործված էր նաև ջրով բացված հող՝ ցելս: 26. Իսկ
որպեսզի այդ բոլորը նստվածք չտար, պարսպի վրա դրված էին
ծանր գերաններ, իսկ դրանց վրա փռված տախտակները ծած-
կում էին պարսպը, այնպես որ հնարավոր լիներ նրա վրայով
քայլել: 27. Ալեքսանդրը գնում էր այդ ամրությունները և շփ-
տեր, թե ինչ ձեռնարկեր. քարանձավները հարթեցնել հնարավոր
էր միայն դրանք հողով լցնելով, իսկ առանց դրան անհնար էր
պարսպներին մոտեցնել նետողական գործիքները: Այդ ժամա-
նակ ինչ-որ մեկը պատի վրայից վիրավորեց նրան նետով: 28.
Նետը մխրձվեց արքայի սրնքամիսը: Դուրս քաշելով նրա ծայ-
րակալը, նա հրամայեց մոտ բերել ձին և, նույնիսկ առանց
վերքը կապելու, ձի նստեց և առանց հապաղելու՝ շարունակեց
սկսած գործը: 29. Սակայն վիրավոր ոտըր կախ էր ընկնում,
արյունը շորացավ և ցրտից վերքը սկսեց ավելի ցավել: Ինչպես
հազորդում են, արքան ասել է, թե իրեն թեև անվանում են Յու-
պիտերի որդի, նա այնուամենայնիվ զզուս է իր հիվանդ մարմ-
նի տանջանքները: 30. Նա ճամբար շփրադարձավ մինչև լու-
սումնասիրեց ամեն ինչ և մատնացույց շարեց, թե ինչ պետք է
անել:

Եվ ահա, ինչպես հրամայված էր, նրանք սկսեցին ջարդել
քաղաքի սահմաններից դուրս գտնվող շինությունները և մեծ
քանակությամբ շինանյութ տանել հողաթումբը կառուցելու,
մյուսները քարանձավներն էին նետում հսկա ծառերի բները
ճյուղերի հետ միասին, ինչպես նաև մեծ քարեր: 31. Խանդակն
արդեն հավասարվել էր գետինին: Այնժամ սկսեցին աշտարակներ
կառուցել, և գինվորները ինն օրվա ընթացքում այդ աշտատանքը

արեցին մեծագույն ոգևորությամբ: Ալեքսանդրը դուրս եկավ
գիտելու կատարված աշխատանքը, թեև նրա վերքը դեռ չէր լա-
վացել: Գովելով գինվորներին, նա հրամայեց մոտեցնել մեքե-
նաները, որոնցից նևտերի ամպեր տեղացին թշնամու առաջա-
տար շարքերի վրա: 32. Նրանց հատկապես սարսափեցնում էին
շարժական աշտարակները, քանի որ նման շինությունների
նրանք ծանոթ չէին և ենթադրում էին, որ այդ հսկաները շարժ-
վում են առանց մարդկանց որևէ օգնության, այլ աստվածների
կամքով: Նրանք ի վիճակի չէին հավատալու, որ մահկանացուները
կարող են պարսպաբանը նիզակներ և ծանր գերաններ նե-
տել, որպիսիք արձակվում էին մեքենաներից: 33. Այսպես, քա-
ղաքը պաշտպանելու հույսը կորցրած, նրանք նահանջեցին ամ-
բոց: Քանի որ պաշարյալներին ոչինչ չէր մնում անելու, քան
անձնատուր լինել, նրանք արքայի մոտ դեսպաններ ուղարկեցին
գթություն հայցելու: 34. Նրանք ստացան այն, և թագուհին էլ
եկավ աղնվազարմ տիկնանց մեծ շքամբով, որոնք ոսկե սա-
փորներից գինի էին հեղում Ալեքսանդրի պատվին: 35. Ինքը՝
թագուհին ծնկի իջեցրեց իր փոքրիկ որդուն արքայի առջև և ոչ
միայն ներվեց, այլև նրան թողնվեց նախկին պատվավոր վի-
ճակը. նա ճանաչվեց թագուհի: Ոմանք գտնում էին, որ դա ավե-
լի շատ արդունք էր նրա գեղեցկության, քան խղճահարություն:
36. Համենայն դեպս, հետագայում ինչ-որ մեկից ծնված նրա
որդուն տրվեց Ալեքսանդրի անունը:

XI. Այստեղից զորքով նրա քաղաք ուղարկված Պոլիպեր-
թոնեսը հաղթեց ճակատամարտին անպատրաստ քաղաքաբնակ-
ներին. թշնամուն հետապնդելով ամրությունների ներսում, նա
գրավեց քաղաքը: 2. Արքայի ձեռքն ընկան շատ ուրիշ սակավ
հայտնի քաղաքներ, որոնք լքել էին բնակիչները: Նրանց բնա-
կիչները գինվելով, զբաղեցրել էին Ահորն անունով լեռը:
Ասում են, իբր Հերկուլեսը¹⁹ ապարդյուն պաշարել է այդ լեռը
և ստիպված է եղել դադարեցնել պաշարումը երկրաշարժի
պատճառով: 3. Ալեքսանդրը չգիտեր, ինչ ձեռնարկել, քանի որ
ժայռը բոլոր կողմերից ուղղածից ու զառիթափ էր: Սակայն
նրա մոտ եկավ այդ տեղերին ծանոթ մի ծերուկ իր երկու որ-
դիներով, խոստանալով ցույց տալ ճանապարհը դեպի լեռան
զագաթը, եթե իրեն վճարեն աշխատանքի համար: 4. Արքան
որոշեց տալ նրան ութսուն տաղանդ և, պատանիներից մեկին
պատանդ թողնելով, ուղարկեց ծերուկին կատարել այն, ինչ նա

խոստացել էր: 5. Թեթևազենների ջոկատի հրամանատար էր նշանակվել արքայի գրագիր Մուլինսը: Այդ ջոկատը ցանկանում էր բարձրանալ լեռան գագաթը շրջանցիկ ճանապարհով, որպեսզի թյուրիմացության մեջ զցիթը թշնամուն: 6. Սարը սովորականի նման վեր շէր բարձրանում քիչ գառիվայր և հանդարտ լանջերով. այն վեր էր ելնում սյան նման: Նրա հիմքը լայն էր. դեպի վեր այն աստիճանաբար նեղանում էր և վերածվում սուր գագաթի: 7. Այդ լեռան լանջերը ողողում է Ինդոս գետը. այն չափազանց խոր է, ափերն էլ՝ դառիթափ: Նրա մյուս կողմից անդունդներ են և խոր փոստրակներ: Անհրաժեշտ էր դրանք լցնել. լեռանը տիրանալու այլ ուղի չկար: 8. Անտառը շատ մոտ էր, և արքան հրամայեց այնպես կտրել ծառերը, որպեսզի միայն բները նետվեն փոստրակների մեջ: Տերևներով ճյուղերը կխանգարեին տեղափոխության ժամանակ: Սկզբում արքան ինքը նետեց ճյուղերից մաքրված ծառը: Չորքում ոգևորություն արտահայտող աղմուկ բարձրացավ. ոչ ոք չէր հրաժարվում անել այն, ինչի օրինակը տվել էր արքան:

9. Յոթերորդ օրը անդունդները լցված էին, և արքան հրամայեց նետաձիգներին և ագրիանացիներին վերև բարձրանալ. բացի այդ նա իր կոճորտայից բնտրեց երեսուն ամենաքաջ երիտասարդներ: 10. Նրանց հրամանատարներ նշանակվեցին Քարոսն ու Ալեքսանդրը. վերջինին նա հիշեցրեց, որ իրենք երկուսով նույն անունն են կրում: Սկզբում, հաշվի առնելով ակնհայտ վտանգի առկայությունը, որոշվեց, որ արքան չպետք է ոխակի ենթարկի իրեն: 11. Բայց հենց տրվեց շեփոթի ազդանշանը, արքան, որպես մեծագույն քաջության տեր այր, դիմեց թիկնաւաճներին, հրամայեց նրանց հետևել իրեն և ինքը առաջինը բարձրացավ լեռը: Այնժամ մակեդոնացիներից ոչ ոք չմնաց իր տեղում: Թողնելով կայանատեղին, բոլորը նետվեցին արքայի հետևից: 12. Շատերին ցավալի վախճան էր սպասում՝ նրանք գահավիժում էին՝ կախված ժայռերից, և խեղդվում այդ տեղով հոսող գետում, որը սարսափելի տեսարան էր նաև վտանգից հեռու մարդկանց համար: Երբ նրանք տեսան, որ այդ տխուր ճակատագիրը սպասում է նաև իրենց, ապա կարեկցությունը դումարվեց նաև սաստափը, և նրանք սկսեցին ողբալ ոչ թե զոհվածներին, այլ իրենք իրենց: 13. Իսկ այդ ժամանակ նրանք արդեն մտան այնտեղ, որտեղից կարող էին վերադառնալ միայն որպես հաղթողներ, այլպես նրանք կզոհվեին. բարբարոսները

մազլցողների վրա հսկայական քարեր էին գլորում: Հավասարակշռությունը կորցրած մարդիկ գահավիժում էին ներքև, քանի որ ամուր չէին կանգնել սայլաբուն գետնին: 14. Սակայն Ալեքսանդրը և Քարոսը, որոնց արքան երեսուն լավագույն զինվորների հետ առաջ էր ուղարկել, բարձրացան լեռան վրա և արդեն թշնամու հետ ձեռնամարտի էին բռնվել: Բայց քանի որ բարբարոսները նետահարում էին վերևից, մակեդոնացիները ավելի շատ իրենք էին զոհվում, քան վիրավորում ուրիշներին: 15. Իսկ Ալեքսանդրը, հիշելով իր անվան և տրված խոստումի մասին, կոպում էր արիաբար, առանց զգուշության: Տարբեր կողմերից ուժեղ հարվածներ ստանալով, նա ընկավ: 16. Քարոսը, տեսնելով, որ նա պտուկած է, նետվեց թշնամու վրա, վրեժխնդրությունից բացի այլ բանի մասին չմտածելով, և շատերին խոցեց նիզակով, ոմանց էլ սրով: Նրա գլխավերևում բարձրացան բաղամթիվ ձեռքեր, և նա անկենդան ընկավ իր ընկ՝ որոշ մարմնի վրա: 17. Միանգամայն բնական էր, որ արքան, ճրնշված քաջարի երիտասարդների ու մյուս զինվորների կործանումից, նահանջի ազդանշան տվեց: 18. Մակեդոնացիների փրկությունը նրանում էր, որ նրանք նահանջում էին աստիճանաբար և առանց խուճապի և, որ բարբարոսները բավարարված նրանով, որ հետ են մղել հակառակորդին, չէին հետապնդում նահանջողներին:

19. Սակայն, թեև Ալեքսանդրը որոշեց հրաժարվել այդ մտազրույթությունից, քանի որ լեռը գրավելու ոչ մի հույս չկար, նա այնուամենայնիվ ձեացրեց, թե շարունակելու է պաշարումը: Նա հրամայեց զբաղեցնել ճանապարհները, մոտեցնել պաշարման մեքենաները և հյուծված զինվորների փոխարեն ուղարկել ուրիշներին: 20. Թեև հնդիկներին հայտնի էր նրա համառությունը, նրանք երկու օր ու գիշեր քեֆ էին անում, գլուխ գովելով ոչ միայն իրենց ինքնալստահությունը, այլև տարած հաղթանակով, ընդ որում, իրենց սովորույթի համաձայն, թմբուկներ էին զարկում: 21. Սակայն երրորդ գիշերը թմբուկների աղմուկը դադարեց և ողջ լեռան վրա բարբարոսները ջահերը վառեցին, որպեսզի մութ գիշերով անվտանգ փախչեն բարբարոս ճանապարհով: 22. Հետախուզության ուղարկած Բալակրոսից արքան իմացավ, որ հնդիկները լքել են լեռը և փախել. այնժամ նա ազդանշան տվեց բոլորին՝ միահամուռ աղմուկ բարձրացնել, և դրանով իսկ սարսափ առաջացրեց անկանոն փախչող

Յշնամու մեջ: 23. Շատերը, ասես Յշնամին արդեն հասել էր իրենց, սրբնթաց ընկնում էին սայթաբուն քարերի և անմատչելի ժայռերի վրայից: Անվնաս մնացածները ճակատագրի քմահաճույթին էին թողնում շատերին, ովքեր վնասվել էին, կամ ընկնելիս կտորել մարմնի որևէ մասը: 24. Արքան, հաղթելով ամենից ավելի տեղի բնությանը, քան Յշնամիներին, մեծ հաղթանակի տպավորություն ստեղծեց, կազմակերպելով հարուստ զոհարարություններ և այլ կրոնական արարողություններ: Ժայռի վրա կառուցվեց զոհասեղան Միներվա-հաղթողին: 25. Այն ուղեկցողներին, որոնց նա հրամայել էր առաջնորդել թեթևակեններին, բարեխղճորեն վճարեցին, թեև նրանք ավելի քիչ բան արեցին, քան խոստացել էին: Կեռան և նրա շրջապատի մարզի պաշտպանությունը հանձնարարվեց Սիստոկոստոսին:

XII. Այստեղից արքան ուղևորվեց էքրոլիմա և, տեղեկանալով, որ ճանապարհի նեղ տեղերը զբաղեցված են քսան հազար զինվածներով ոմն էրիկի գլխավորությամբ, նա հանձնարարեց Քեկոսին առանց աճապարհելու առաջնորդել զորքի ծանրազեն մասը: 2. Իսկ ինքը առաջ անցավ, պարսատիկավորների և նետաձիգների օգնությամբ անտառից դուրս բջեց Յշնամուն և զրանով ազատեց իրենց հետևող զորքի ճանապարհը: 3. Հրնդիկները, կամ իրենց առաջնորդի հանգեպ ունեցած ատելությունից, կամ թե հաղթողի ողորմությանն արժանանալու համար, հարձակվեցին փախչող էրիկի վրա և սպանեցին նրան, իսկ նրա գլուխը և զրահը բերեցին Ալեքսանդրին: Սա այդ արարքը անպատիժ թողեց, սակայն որպես խրատ պարզե շտվեց: 4. Այստեղից նա տասնվեց անցումով իր ճամբարով ժամանեց Ինդոս դեպը և տեսավ, որ գետանցի համար, համաձայն իր կարգադրության, Հեփեստիոնեսը ամեն ինչ պատրաստել է: 5. Այդ մարզում թագավորում էր Օմփիսը, որը մինչ այդ էլ համոզում էր իր հորը իշխանությունը հանձնել Ալեքսանդրին, իսկ ծնողի մահից հետո նա հարցրեց Ալեքսանդրին. պահպանի՞ ինքը առայժմ արքայական իշխանությունը թե սպասի նրա գալստին, որպես մասնավոր անձ: 6. Թագավորելու իրավունք ստանալով հանդերձ, նա շամարձակվեց օգտվել իրեն տրված այդ իրավունքից: Նա մեծարանքով ընդունեց Հեփեստիոնեսին և ձրի հաց տվեց նրա զորքին, սակայն նրան ընդառաջ չեկավ, որպեսզի գործ ունենա միայն արքայի հետ:

7. Դրա փոխարեն, մոտեցող արքային նա ինքն ընդառաջ

եկավ լրիվ սպառազեն զորքով. զինվորների միջև, իրարից որոշակի հեռավորության վրա, գնում էին փղերը, որոնք հետևից բերդեր էին հիշեցնում:

8. Ալեքսանդրին սկզբում թվաց, որ ոչ թե դաշնակից, այլ Յշնամի է մոտենում իրեն, և մարտի պատրաստվելով, քիչ էր մնում հրաման արձակել իր զինվորներին դիմել գնալի, իսկ հեծյալներին զբաղեցնել թեքերը: Սակայն հնդիկը, նկատելով մակեդոնացիների մոլորությունը, հրամայեց բոլորին կանգ առնել և ինքը ասպանդակեց իր ձին. նույնը արեց Ալեքսանդրը, շիմանալով, թե ով է իրեն ընդառաջ գալիս, Յշնամի՞ թե բարեկամ: Նա հուշը դրել էր կամ իր քաջասրտության, կամ հակառակ կողմի հավատարմության վրա: 9. Նրանք հանդիպեցին որպես բարեկամներ, որը երևում էր նրանց դեմքի արտահայտությունից, սակայն զրույցը չէր ստացվում առանց թարգմանչի: Երբ նրան բերեցին, բարբարոսն ասաց, որ նա զորքով հուրս եկել արքային դիմավորելու, որպեսզի անհապաղ նրան հանձնի իր պետության ողջ իշխանությունը, առանց սպասելու, մինչև զնսպանների միջոցով կտրվեն հավատարմության խոսքերը: 10. Նա ավելացրեց, որ հանձնում է իրեն և իր Բագավորությունը նրան, ով, ինչպես իրեն է հայտնի, կտրում է փառքի համար և ոչնչից այնպես չի երկյուղում, ինչպես ուխտագրում մարդու համբավից:

Ուրախանալով բարբարոսի պարզամտությամբ, արքան նրան մեկնեց իր աջը ի նշան հավատարմության և նրան վերադարձրեց թագավորությունը: 11. Օմփիսը Ալեքսանդրին տվեց հիսունվեց փիղ, ինչպես նաև մեծ քանակությամբ խոշոր եղջերավոր անասուններ և մոտ երեք հազար ցուլ, կենդանիներ, որոնք չափազանց բարձր են գնահատվում այդ երկրում և սիրված են արքաների կողմից: 12. Ալեքսանդրի այն հարցին, թե ովքե՞ր են ավելի շատ Հնդկաստանում՝ հողագործները թե զինվորները, Օմփիսը պատասխանեց, որ իրեն, որ պատերազմում է երկու արքաների դեմ, ավելի շատ զինվորներ են անհրաժեշտ, քան գյուղարնակներ: 13. Այդ երկու արքաները Արիսարը և Պորն էին, ընդ որում վերջինս ավելի հզոր էր: Երկուսն էլ բնակվում էին Հիդասպ գետի այն կողմում և երկուսն էլ որոշել էին փորձություն ենթարկել իրենց ճակատագրի, ով էլ որ նրանց դեմ գար պատերազմով: 14. Ալեքսանդրի թույլտվությամբ Օմփիսը ընդունեց արքայական իշխանություն:

նշանները և, իր ժողովրդի սովորույթի համաձայն՝ իր հոր անունը: Հայրենակիցներն անվանել էին նրան Տաքսիլ, և այդ անունը տրվում էր բոլոր գահ բարձրացողներին: 15. Օմփիսը երեք օր հյուրասիրում էր Ալեքսանդրին. շորորդ օրը նա հայտարարեց, թե ինչքան հաց է տրամադրել Հեփեստիոնների զորքին: Արքային և նրա մերձավորներին նա ոսկյա պսակներ նվիրեց և, բացի այդ, ութսուն տաղանդ դրոշմագիր արծաթ: 16. Ալեքսանդրը զարմացավ և ուրախացավ նրա առատաձեռնությամբ, սակայն հետ ուղարկեց այն աժենը, ինչ Օմփիսը նվիրել էր իրեն, դրան ավելացնելով հազար տաղանդ իր հետ տարվող ռազմավարից և տարբեր ոսկյա ու արծաթյա ամաններ խնջույքների համար, շատ մեծ քանակությամբ պարսկական հագուստ, երեսուն ձի սեփական ախոռից, որոնց վրա հագցնում էին այն ձիասարքերը, որոնցից արշավելիս օգտվում էր ինքը՝ արքան: 17. Այդ շոալույթյունը պարտավորեցրեց բարբառոսին, բայց և նեղացրեց Ալեքսանդրի մերձավորներին: Նրանցից մեկը՝ Մակեդոնացի, խնջույքի ժամանակ թունդ խմելով, շնորհավորեց Ալեքսանդրին, ասելով, որ նա վերջ է վերջո Հնդկաստանում հաղար տաղանդի արժանի մի մարդ գտավ: 18. Արքան, ուրիշ հիշողությամբ մեջ դեռ թարմ էր, թե ինչքան ծանր տարավ Կլիտոսի սպանությունը անզուսպ խոսքերի համար, զսպեց ցասումը, սակայն ասաց, որ նախանձ մարդիկ առաջին հերթին իրենց համար են մեծ տանջանքներ ստեղծում:

XIII. Հաջորդ օրը արքային ներկայացան Աբիսարի դեսպանները: Նրանք, ինչպես իրենց հանձնարարված էր, հանձնեցին նրա բոլոր ախրույթները. դեսպաններին հավատարմության խոսք տալով, ուղարկեցին իրենց արքայի մոտ: 2. Ալեքսանդրը, էնթադրելով, որ իր անվան փառքը կարող է համոզել Պորին հանձնվելու, ուղարկեց Կլեոքարեսին՝ Պորին հայտնելու, որ վերջինս պարալուր է իրեն հարկ տալ և արքային դիմավորել իր պետության սահմանների մոտ: Պորը պատասխանեց, որ այդ պահանջներից միայն մեկը կկատարվի՝ նա կդիմավորի իր երկիր մուտք գործող արքային, սակայն կանի դա զենքը ձեռքին, 3. Ալեքսանդրն արդեն որոշել էր անցնել Հիդասպ գետը, նրբ նրա մոտ բերեցին շղթայված Բարսանդին, որը համոզել էր արաբոսիացիներին ապստամբելու, և նրանից գրավված երեսուն փղեր: Դա խիստ ժամանակին օգնություն էր հրնդիկների դեմ պատերազմում, քանի որ նրանց հիմնական ուժը

այդ կենդանիներն էին և նրանց հետ ավելի շատ հույսեր էին կապում, քան զինվորներին: 4. Բերեցին նաև կապկաված Սամաքսին՝ Հնդկաստանի մի աննշան մասի արքային՝ Բարսանդի մեղսակցին: 5. Կալանքի տակ առնելով դավաճանին ու այդ արքայիկին և փղերը Տաքսիլին հանձնելով, Ալեքսանդրը ժամանեց Հիդասպ գետի ափը. գետի մյուս ափին տեղավորվել էր Պորը, որպեսզի խոչընդոտի թշնամու դատանցը: 6. Առջևում Պորը տեղադրել էր ութսունհինգ շատ ուժեղ փղեր, նրանց հետևելով երեք հարյուր մարտակառք²⁰ և համարյա երեսուն հազար հետևակային, այդ թվում այնպիսի ծանր նետեր արձակող նետաձիգների, որոնք, ինչպես վերևում ասվել էր, դժվարությամբ էին արձակվում: 7. Իրեն՝ Պորին տանում էր ամենամեծ փիղը: Նրա ոսկեզօծ ու արծաթապատ զենքը ավելի վեհ էր դարձնում առանց այն էլ հազվադեպ հասակ ունեցող արքայի արտաքինը: Նրա ողին համապատասխանում էր նրա ֆիզիկական ուժին. նա կոպիտ մարդկանց մատչելի իմաստնություն ուներ:

8. Մակեդոնացիներին սարսափեցնում էր ոչ միայն թշնամու տեսքը, այլև գետի մեծությունը, որը նրանք պետք է անցնեին: Լայնությամբ շորս ասպարեզ տարածված լինելով, շափազանց խոր և ոչ մի տեղ ծանծաղուտ չունենալով, գետը նրանց փոթորկալից մի ծով էր թվում: 9. Սակայն նրա ընթացքը դանդաղ չէր, ինչպես սովորաբար դա լինում է լայնատարած գետերում: Գետը ընթանում էր արագ ու մրրկոտ, ասես հոսում էր նեղ ափերի միջով. գլորվող ալիքները շատ տեղերում մերկացնում էին հատակի քարերը: 10. Սակայն ավելի սարսափելի էր ափը՝ լիքը մարդկանցով ու ձիերով: Այնտեղ կանգնած էին իրենց շափերով ահռելի փղեր. դիտմամբ կատաղեցված, նրանք խլացնում էին իրենց արձակած սարսափելի ռոնոցով: 11. Թե գետը և թե թշնամին միանգամից սարսափեցրին մակեդոնացիներին, թեև նրանց սրտերը, սովորաբար ինքնավստահությամբ լեցուն, շատ փորձությունների էին դիմացել: Նրանց թվում էր, որ երբևրացող լաստերի վրա անհնար է ոչ գետն անցնել, ոչ էլ անվտանգ մոտենալ: 12. Գետի մեջտեղում շատ կղզիներ կային, որոնց լողալով մոտենում էին զենքը գլխներին պահած թե հրնդիկները և թե մակեդոնացիները: Այնտեղ նրանք թեթև ընդհանրումներ էին ունենում, որոնց արդյունքով երկու արքաները կանխատեսում էին ողջ գործի ելքը: 13. Մակեդոնական զոր-

բում իրենց խենթ ու հանդուգն համարձակությամբ աչքի ընկան ազնվատոհմ պատանիներ Սիմաբոսն ու Նիկանորոսը: Հուշս դե՛լով իրենց համար սովորական դարձած բախտավորության վրա, նրանք արհամարհում էին ցանկացած վտանգ: 14. Նրանց առաջնորդությամբ առավել քաջասիրտ երիտասարդները, զինվելով միայն թնֆե նիզակներով, լողալով մոտենում էին կղզուն, որտեղ արդեն մեծ քանակությամբ թշնամիներ կային. հնդկիններից շատերին նրանք սպանեցին, ընդ որում նրանց գլխավոր զինքը իրենց քաջությունն էր: 15. Նրանք կարող էին փառքով վերադառնալ, եթե միայն նրանց արիությունը շափ ունենար հաջողության մեջ: Սակայն նրանք արհամարհանքով ու հպարտությամբ էին դիմավորում մոտեցող թշնամիներին, իսկ նրանք գաղտագողի մտտենալով, շրջապատեցին նրանց և հեռվից նետահարեցին: 16. Ովքեր փախան թշնամուց, նրանց բշեց տարավ գետի հոսանքը կամ էլ խեղդվեցին հորձանուտներում:

Այդ ճակատամարտը մեծ վստահություն հաղորդեց Պորին, որը ափից հետևում էր կատարվող ամեն ինչին: 17. Ալեքսանդրը, չեմանալով ինչ անել, վերջապես դիմեց խորամանկության, որպեսզի խաբի թշնամուն: Գետի մեջ կար մի մեծ կրդղի, որն անտառապատ էր և հարմար դարանակալման համար: Այնտեղ էր գտնվում նաև մի խոր խանդակ ոչ հեռու ափի այն մասից, ուր կանգնած էր փնքը՝ արքան: Այդ խանդակը կարող էր բողբոջել ոչ միայն հետևակայիններին, այլև հեծյալներին: 18. Եվ այսպես, թշնամու ուշադրությունը այդ շահավետ դիրքից շեղելու նպատակով, արքան հրամայեց Պտղոմեոսին բուրբ հեծյալներով հեռ ու առաջ անել այդ կղզուց հեռու և անընդհատ գոչուններով սարսափեցնել հնդկներին, ձևացնելով, թե պատրաստվում են գետանցի²¹: 19. Շատ օրեր Պտղոմեոսը այդպես վարվեց: Այդպիսի մարտավարությամբ նա ստիպեց Պորին ուղարկել իր զորքը դեպի այն վայրը, որտեղ Պտղոմեոսը ձևացնում էր, թե գետանցի է պատրաստվում: 20. Կղզին արդեն մնաց թշնամու տեսադաշտից դուրս. Ալեքսանդրը կարգադրեց տեղագրել իր վրանը հակառակ ափին, վրանի առջև տեղադրել սովորաբար իրեն ուղեկցող կոհորտան, և ամեն կերպ աշխատում էր հակառակորդին ցույց տալ իր ողջ արքայական շքեղությունը: 21. Քանի որ Ատալոսը նրա հասակակիցն էր և գեմքով ու մարմնի կազմությամբ նման արքային, հատկապես եթե նախին նրան հեռվից, Ալեքսանդրը նրան արքայական հա-

գուստ հագցրեց, որպեսզի տպավորություն ստեղծի, որ իբր ինքը՝ արքան գտնվում է ափին և մտադրություն չունի գետանց կատարելու: 22. Սկզբից այդ մտահոլացմանը խանդարեց եղանակը, սակայն շուտով այն, ընդհակառակը, սկսեց նպաստել: Ը՛հ՝ որ բախտը նույնիսկ ցանկացած անհարմարությունն անդամ հանգեցնում էր արքայի օգտին: 23. Արքան պատրաստվում էր իր ողջ զորքով անցնել գետը այն կղզու շրջանում, որի մասին արդեն խոսվել է, թշնամու ողջ ուշադրությունը հրավիրելով նրանց վրա, ովքեր Պտղոմեոսի հետ միասին զբաղեցնում էին հոսանքն ի վար տարածությունը: Այդ ժամանակ փոթորկոտ առատ անձրև տեղաց, որից նույնիսկ տանիքի տակ դժվար էր պատսպարվել: Փոթորկից վախեցած, զինվորները սկսեցին փրկություն փնտրել դետնի վրա, լքելով նավակներն ու լաստերը: Սակայն բամու ոռնոցի պատճառով թշնամին չէր լսում նրանց տաղնապալից աղաղակները: 24. Այնուհետև անձրևը միանգամից դադարեց, բայց ամպերն այնքան թուխպ էին, որ ծածկում էին արևը, և մաքդիկ դժվարությամբ էին տեսնում միմյանց ղեմքերը: 25. Երկինքը ծածկած գիշերը թերևս սարսափեցներ որևէ այլ մարդու, քանի որ պետք է նավարկեին անծանոթ դետով, և թշնամին կարող էր պատահականորեն զբաղեցրած լինել հենց այն ափը, ուր նրանք գնում էին մթությունից կուրացած, ձգտելով փառքի նույնիսկ վտանգի դեռով: 26. Սակայն արքան ուրիշների համար ահաբեկող մթությունը համարում էր բարեպատեհություն իր համար: Ազդանշան տալով բուրբին լուռ նստել լաստերը, նա հրամայեց առաջ թողնել այն մեկը, որի վրա գտնվում էր ինքը: 27. Ափը, ղեպի ուր նա ուղեվորվում էր, պարզվեց, որ ազատ է թշնամուց, քանի որ Պորը ղեռես հետևում էր միայն Պտղոմեոսին: Միայն մի նավակ դուրս լնկավ ջրից, որը խփվել էր ստորջրյա քարի. մնացածները բարեհաջող անցում կատարեցին: Արքան հրամայեց զինվորներին վերցնել զենքերը և ռազմաշարքով առաջ շարժվել:

XIV. Եվ արդեն ինքը՝ Ալեքսանդրը առաջնորդում էր երկու թևի բաժանած իր զորքը, երբ Պորին հայտնեցին, որ ափը զբաղեցված է զինված մարդկանցով և որ վրա է հասել վճռական պահը: Սակայն սկզբում մարդուն հատուկ թուլությունից Պորը հույսը չէր կորցնում և մտածում էր, որ դա իր պատերազմական դաշնակից Արխսարն է օգնության դալիս. այդպիսին էր նրանց պայմանը: 2. Սակայն, երբ լուսադեմին երևաց, որ

դա թշնամին է, նա մտակցող զորքի դեմ ուղարկեց հարյուր բառաձի մարտակառք և շորս հազար հեծյալ: Առաջ ուղարկած զորքի առաջնորդը նրա եղբայր Հագեսն էր: Նրա հիմնական ուժը մարտակառքերն էին: 3. Ամեն մեկի վրա կային վեց մարդ՝ երկու վահանակիր, երկու նետածիգ՝ տեղալորված կողքերից, մնացածները կառապաններն էին, նույնպես դիմված. չէ՞ որ երբ բանը հասնում էր ձեռնամարտին, նրանք մի կողմ էին նետում սանձերը և թշնամու վրա նետում բազմաթիվ տեղեր, 1. թեև այդ օրը նրանք համարյա չդիմեցին դրանց օգնությունը: Ինչպես ասվեց, անձերը, ինչպես կրքեր, ողողել էր դաշտերը և դարձրել դրանք սայթաքուն ու հեծելազորի համար անբարենպաստ. Պորի ծանր ու դժվարաշարժ մարտակառքերը խրվեցին ցեխի ու փոսորակների մեջ: 5. Հակառակը, Ալեքսանդրը շարժունակ ու թեթևակն զորքով արագությամբ մտեցավ: Սկյուֆներն ու դահերը առաջինը նետվեցին հնդիկների վրա: Այնուհետև արքան հեծյալների հետ Պերդիկոսին ուղարկեց հակառակորդի աջ թևի վրա, 6. Երբ սկսվեց համընդհանուր մարտը, կառապանները, գտնելով, որ իրենց վերջին օգնություն կարիքն է զգացվում, սկսեցին դեմ նետել սանձերը և նետվել մարտի: 7. Սակայն դա երկու կողմերի համար էլ վտանգավոր էր. մակեդոնական հեծյալներին վայր էին գցում առաջին իսկ ընդհարման ժամանակ, իսկ թշնամու մարտակառքերը խրվում էին սայթաքուն ու անանցանելի տեղերում, և կառապանները վայր էին ընկնում դրանց վրայից: 8. Խրտնած ձիերը շուռ էին տալիս որոշ մարտակառքեր ոչ միայն փոսորակները, այլև գետը: 9. Քշերը, փրկվելով թշնամու նետերից, վազեցին Պորի մոտ, որը համառորեն շարունակում էր մարտը:

Տեսնելով, որ մարտակառքերն առանց կառապանների անկարգ թշնամու են ամբողջ ճակատամարտի տարածքով մեկ, Պորը բաժանեց փղերին իրեն շրջապատող ընկերների միջև: 10. Նրանց հետևից նա տեղադրեց հետևակը ու նետածիգներին, որոնք սովորաբար թմբուկ էին զարկում, որը հնդիկների մոտ փոխարինում էր փողի ձայնին: Թմբուկների ձայնը չէր խրտնեցնում փղերին. նրանց ականջները վաղուց էին վարժվել նման ձայնի: 11. Հետևակի առջևից տանում էին Հերկուլեսի պատկերը. դա անչափ ոգևորում էր կովտոններին: Պաշտամունքի առարկան տանողներին լքելը բոլոր զինվորների համար ամոթ էր: 12. Մահվան էին դատապարտում նրանց, ովքեր

կուռքը դուրս չէին բերում ճակատամարտից. սարսափը, որը նրանց էր ներշնչել մինչ այդ թշնամական աստվածը, վերածվել էր պաշտամունքի և երկրպագության: Մակեդոնացիները կանգնեցին՝ կենդանիներին և իրեն՝ արքային տեսնելով: 13. Զինվորների միջև կանգնած փղերը հեռվից աշտարակների էին նման: Պորը սովորական մարդկանցից բարձրահասակ էր, բայց հակապես բարձր էր թվում շնորհիվ փղի, որի վրա նա նստած էր և որը այնքան խոշոր էր մյուսներից, որքան արքան բարձր՝ մյուս հնդիկներից:

14. Այդ իսկ պատճառով, Ալեքսանդրը, ուսումնասիրելով արքային և հնդկական զորքը, ասաց. «Վերջապես ես տեսնում եմ ինձ արժանի վտանգ: Գործ պիտի ունենանք գաղանների ու ոչ սովորական մարդկանց հետ»: 15. Եվ, գիմելով Քենոսին, շարունակեց. «Երբ ես Պտղոմեոսի, Պերդիկոսի և Հեփեստիոնեսի հետ հարձակվեմ թշնամու ձախ թևի վրա և դու ինձ տեսնես ճակատամարտի կիզակետում, ապա ինքզ շարժվիր դեպի աջ թևը և խուճապի մատնիր այն: Դու՛ Անտիգենոս, և դու, Լեոնատոս²², Տավրոնի հետ միասին հարձակվեք զորքի կենտրոնի վրա և հետ մղեք այն ճակատային գծից: 16. Մեր նիզակները բավական երկար են և ամուր, հենց դրանցով էլ կարելի է օգտվել փղերի և հեծյալների դեմ կովելիս. վայր ցցեք փղերի վրա նստածներին, իսկ գաղաններին նիզակահարեք: Այդ տեսակ պաշտպանությունը, ինչպիսիք փղերն են՝ վտանգավոր է: Զէ՞ որ նրանք էլ ավելի շարացած են լինում յուրայինների հանդեպ: Թշնամու վրա նրանք հարձակվում են ըստ հրամանի, իսկ յուրայինների վրա՝ սարսափից»: 17. Ասելով այս, արքան առաջինը ձին բռնեց առաջ: Եվ նա, ինչպես պայծառավորվել էին, արդեն հարձակվել էր թշնամու զորաշարքի վրա, երբ Քենոսը հսկայական ուժով կատաղաբար հարձակվեց ձախ թևի վրա: 18. Փաղանգը մեկ հարվածով ճեղքեց հնդկական զորքի միջնամասը:

Իսկ Պորը հրամայեց բռնել փղերին այն մասը, ուր, ինչպես ինքն էր նկատել, հարձակում էր գործել հեծելազորը, սակայն դանդաղաշարժ կենդանիներին դժվար է համեմատել արագաշարժ ձիերի հետ: 19. Բարբարոսները չէին կարողանում օգտագործել նույնիսկ նետերը, բանի որ դրանք չափազանց երկար էին ու ծանր. մինչև աղեղը գետնին չգրվեր, անհնար էր հիշտ տեղադրել նետը: Դա դժվարանում էր նաև այն բանով, որ գե-

տինը այդ ժամանակ սայթաքուն էր: Այդ պատճառով թշնամի-
ները կանխում էին նետահարելու փորձ անող հնդիկներին:
20. Այսպես, հնդիկները այլևս չէին լսում արքայի հրամանները,
սովորաբար այդպես է լինում, երբ վախեցած մարդկանց ավելի
շատ ղեկավարում է սարսափը, քան առաջնորդը, իսկ զորավար-
ների թիվը հավասարվում էր ցիրուցան եղած առանձին ջոկատ-
ների թվին: 21. Մեկը հրամայում էր զորքին խտացնել շարքերը,
մյուսը՝ իրարից հեռու գտնվել, ոմանք կարողադրում էին կանգ-
նած մնալ տեղում, ուրիշները՝ շրջանցել թշնամուն թիկունքից:
Ոչ մի որոշում ընդհանուր համաձայնություն չէր առաջացնում:
22. Իսկ Պորը մի քանի մարդկանց հետ, որոնց պատվի զգացու-
մը ավելի ուժեղ էր, քան վախը, շարունակում էր հավաքել ցր-
ված մարդկանց և գնում էր թշնամու դեմ. նա հրամայեց փղե-
րին տանել իր զորքի առջևից: 23. Գազանները մեծ վախ էին
ներշնչում. նրանց արձակած անսովոր աղմուկը սարսափեցնում
էր ոչ միայն վախկոտ ձիերին, այլև մարդկանց, և զորաշարքում
իրարանցում էր առաջացնում:

24. Մակեդոնացիները՝ այդ ղեռ վերջերս հաղթողները, ար-
գեն շուրջբոլորն էին նայում, փնտրելով, թե ուր փախչեն, երբ
Ալեքսանդրը փղերի դեմ ուղարկեց թեթևակեն ազրիանացիներ-
ին ու թրակացիներին, որոնք ավելի հմուտ էին նետ արձակում,
քան կալում ձեռնամարտում: 25. Նրանք բազմաթիվ նետեր ար-
ձակեցին փղերի և նրանց բշտղների վրա. իսկ փաղանգը սկսեց
անշնչորեն ճնշել վախեցած թշնամուն: 26. Մակայն ոմանք,
չափազանց անխելամիտ վերքեր հասցնելով գազաններին,
նրանց կատաղեցրին և ոտնատակ եղան. մյուսների համար դա
նախազգուշացում եղավ, որ անհրաժեշտ է ավելի զգույշ գոր-
ծել: 27. Հատկապես սարսափելի էր տեսնել, թե ինչպես փղերը
կնձիթներով բռնում էին զինված մարդկանց և գլխավերևով
մատուցում նրանց իրենց փղավարներին: 28. Այսպիսով, ճա-
կատամարան արդյունք չտվեց. մակեդոնացիները մեկ հետա-
պնդում էին փղերին, մեկ փախչում նրանցից, և մինչև ուշ
երեկո շարունակվեց այդպիսի փոփոխական հաջողությունը,
մինչև չսկսեցին հատկապես դրա համար պատրաստված տա-
պարներով կտրատել փղերի ոտքերը: 29. Թեթևակի կենացրած
թրերը, որոնք նման էին մանգաղների, կոշվում էին կոպիտներ:
Գրանցով կտրում էին փղերի կնձիթները: Ոչ միայն մահվան
սարսափը, այլև վախը մահամերձ վիճակի աչսովոր տան-

չանքներից ստիպում էին մարդկանց փորձել բոլոր միջոցները:

30. Եվ ահա, վերջապես, փղերը վերքերից ուժները կորցնե-
լով, վազքի ժամանակ ոտնատակ էին տալիս իրենց զինվորնե-
րին, ճգմում գետնին ընկած իրենց փղավարներին: 31. Այս-
պես, իրենց փղերից սարսափած, որոնց արդեն չէին կարողա-
նում սանձել, հնդիկները լքեցին մարտի դաշտը: Այնժամ Պորը,
շատերի կողմից լքված, իր փղի վրա նստած սկսեց ինքն արձա-
կել նախապես պատրաստ պահած նետերը իրեն շրջապատող
թշնամիների վրա: Նա շատերին վիրավորեց հետվից, բայց ինքն
էլ թիրախ էր ամեն կողմից նետահարվելու համար: 32. Արդեն
ինն անգամ նրան վիրավորել էին մեջքից ու կրծքից. նա շատ
արյուն էր կորցրել և թուլացող ձեռքերով ավելի շուտ նետերը
վայր էր գցում, քան կրակում թշնամու շարքերի վրա, մինչև
փղավարը շնկատեց, որ արքան լիովին սպառել է իր ուժերը,
ձեռքից ցած զցել զենքը ու գիտակցությունը կորցրել: 34. Այն-
ժամ նա ստիպեց փղին փախչել իրենց հետապնդող Ալեքսանդ-
րից: Սակայն արքայի ձին, բազմաթիվ վերքերից հետզհետե
թուլանալով, վայր ընկավ, ընդ որում ասես իջեցրեց և ոչ թե
վայր գցեց արքային: 35. Փոխելով ձին, արքան հետ մնաց Պո-
րից: Այդ ընթացքում հնդկական արքա Տաքսիլի եղբայրը, որին
Ալեքսանդրը առաջ էր ուղարկել, սկսեց համոզել Պորին իր հա-
մառություն մեջ չհասնել ծայրահեղություն և անձնատուր լինել
հաղթողին: 36. Թեև Պորի ուժերը սպառվել էին և նա շատ ար-
յուն էր կորցրել, նա, այնուհանդերձ, արձագանքեց իրեն ծանոթ
ձայնին և ասաց. «Ես ճանաչեցի Տաքսիլին՝ մեր հարազատ թա-
գավորության դավաճանին»: Եվ նրա վրա արձակեց պատահմամբ
մնացած նետը, որը ճեղքեց Տաքսիլի կուրծքը և դուրս եկավ
մյուս կողմից: 37. Կատարելով այդ վերջին սխրագործությունը,
նա ավելի արագ սլացավ, սակայն շատ վերքեր ստացած փիղը
նույնպես սկսեց թուլանալ: Այդ պատճառով Պորը գաղափարեց
փախուստը և հետևակը ուղղեց հետապնդող թշնամու դեմ: 38.
Ալեքսանդրը արդեն հասել էր Պորին և, տեսնելով նրա համառու-
թյունը, արգելեց գթալ դիմադրողներին: Այդպես, ամեն կողմից
նետեր արձակվեցին հետևակայինների ու իր՝ Պորի վրա, որը
թուլացած, վերջապես, սկսեց փղից վայր ընկնել: 39. Փղավար
հնդիկը կարծեց, թե արքան ցանկանում է գետնի վրա իջնել և
սովորական եղանակով ստիպեց կենդանուն ծնկի գալ: Հենց
փիղը ծնկի եկավ, մնացած փղերն էլ, ինչպես որ նրանց վար-

ժեցրել էին, նույնպես ծնկի հեկան: 40. Այդ հանդամանքը Պորին և մնացած հնդիկներին հանձնեց հաղթողների ձեռքը:

Ենթադրելով, որ Պորը մեռել է, արքան հրամայեց նրա վրայից զրահը հանել: Նրանք, ովքեր հրաման էին ստացել հանել զրահը և հագուստը, արդեն մոտենում էին Պորին, երբ գազանը հանկարծ սկսեց պաշտպանել իր տիրոջը և հարձակվել նրանց վրա, ովքեր փորձում էին հանել զրահը: Փիղը բարձրացրեց տիրոջ մարմինը և գրեց իր մեջքին: Ամեն կողմից փղի վրա տեղեր թռան, երբ նրան սպանեցին, Պորին տեղադրեցին մարտակառքի վրա: 41. Արքան, տեսնելով, որ Պորը բացում է աչքերը, առանց ատելություն, բայց կարեկցանքով ասաց. «Ինչպիսի խելագարություն ստիպեց քեզ, թշվառ, փորձության ենթարկել քո բախտը պատերազմում, երբ քեզ հայտնի էր իմ գործերի փառքը, երբ Տաբսիլի ճակատագիրը հնազանդողների նկատմամբ իմ զխարտության անմիջական օրինակ էր»: 42. Իսկ սա պատասխանեց. «Քանի որ դու հարցրեցիր, ես կպատասխանեմ նույն ազատությանը, ինչպես դու տվեցիր հարցը: Ես գտնում էի, որ ինձանից ուժեղը չկա. չէ որ ես գիտեի իմ ուժերը, իսկ քանին ծանոթ չէի. պատերազմի ելքը ապացուցեց, որ դու ավելի ուժեղ ես ինձանից: Սակայն ես երջանիկ եմ, որ քեզանից հետո երկրորդն եմ»: Իր հերթին Ալեքսանդրը հարցրեց, թե հաղթողը, ըստ Պորի, ի՞նչ պետք է անի: 43. Պորը պատասխանեց. «Այն, ինչ քեզ է հուշում այն օրը, երբ դու զգացել ես երջանկության անկայունությունը»: 44. Այդ նախազգուշացմամբ Պորը ավելիին հասավ, քան եթե նա սկսեր աղաչել: Նրա ողու անվահերությունը, որը չէր ճնշվել նույնիսկ ճակատագրի բերումով, Ալեքսանդրին արժանի թվաց ոչ միայն կարեկցության, այլև մեծարանքի: 45. Նա հիվանդին այնպես էր խնամում, ասես սա կովել էր նրա համար: Երբ Պորը կազդուրվեց, համընդհանուր սպասելիքներին հակառակ, Ալեքսանդրը ընդունեց նրան իր մերձավորների շարքը և շուտով ավելի մեծ տերություն պարգևեց, քան նա ուներ մինչ այդ: 46. Եվ իսկապես, արքան ոչ մի բանում այդքան անհողզող ու կայուն չէր, որքան իսկական քաջությանը ու փառքով հիանալու մեջ. սակայն, այնուհանդերձ, ավելի պարզամտորեն էր դատում թշնամու փառքի մասին, քան իր քաղաքացիների, քանի որ ենթադրում էր, որ յուրաքանչեք կարող են քայքայել իր վեհությունը, և այն ավելի փառապանեծ կլինի, որքանով նշանակալից լինեն իր թշնամիները:



ԳԻՐԹ IX

Ալեքսանդրը, ուրախանալով այդպիսի նշանավոր հաղթանակի համար, որ, ինչպես ինքը հույս ուներ, իրենց առջև բացեց արևելյան սահմանը, զոհ մատուցեց Արևին: Զինվորներին համաժողովի հրավիրելով նա գովեստի խոսքեր է ասում նրանց և համոզում կայտառ ոգով պատերազմը հասցնել իր ավարտին, և որ, իբր, հնդիկների ունեցած ողջ ուժերը ջարդվել են վերջին մարտում: 2. Մեացած ամեն ինչը հարուստ ավար է, իսկ այդ երկրում, ուր իրենք մտնում են, գտնվում են փառաբանված հարստություններ: Պարսիկներից վերցրած ավարը կթվա չնչին ու աղբատիկ. թանկարժեք քարերով ու մարգարիտներով, ոսկով ու փղոսկրով նրանք կողողեն ոչ միայն իրենց տները, այլև ողջ Մակեդոնիան ու Հունաստանը: 3. Դրամի և փառքի անկշտում զինվորները ջանասիրություն են խոստանում, քանի որ երբեք արքայի խոստումները չէին խաբել իրենց: Հուսադրելով նրանց, նա հրամայում է նավեր կառուցել, որպեսզի, անցնելով ողջ Ասիան, ծովով նավարկի մինչև աշխարհի ծայրը: 4. Մոտակա անտառներում նավաշինական շատ փայտ կուր: Դրանք կտրելու ժամանակ զինվորները գտան անսովոր մեծության օձեր: 5. Այդ լեռներում կային նաև ռնգեղջյուրներ, ուրիշ վայրերում հազ լեռներում կային նաև ռնգեղջյուրներ, ուրիշ վայրում նրանց վազուտ կենդանիներ: Ի միջի այլոց, այդ անունը նրանց տվել են հույները. այդ լեզուն չմացողները դրանց իրենց լեզվով այլ կերպ են անվանում: 6. Արքան, երկու քաղաք՝ հիմնադրելով իրենց անցած գետի երկու ափերին, իր զորքի առաջընորդներին ընծայում է մեկական պսակ և հազար ոսկե դրամ. մնացածները ևս մեծարվում են գործի կամ ընկերության մեջ

իրենց գրաված դիրքին համապատասխան: 7. Արխարը, որն Ալեքսանդրի մտ գեսպաններ էր ուղարկել մինչև Պորի հետ ճակատամարտ սկսելը, այժմ ուղարկեց ուրիշ գեսպանների, խոստանալով, որ կանի այն ամենը, ինչ արքան կհրամայի, պայմանով, որ ինքը մնա անձեռնմխելի: 24⁶ որ ինքը չի կարող ապրել արքայական իրավունքներից զրկված և չի կարող կառավարել՝ գտնվելով գերության մեջ: 8. Ալեքսանդրը հրամայեց հաղորդել նրան, որ եթե իրեն դժվար է գալ Ալեքսանդրի մոտ, ապա ինքը կհասնի նրա մոտ:

9. Պորին հաղթելուց հետո այստեղից նա շարժվեց Հնդկաստանի ներքին շրջանները: Այնտեղ, անծայրածիր տարածությունների վրա փռվել էին հսկա, սովաբարխտ բարձր ծառերով անտառները: 10. Շատերի ճյուղերը հաստ բների նման թևքով ևն դեպի դետին, հետո կրկին ուղղվում, այնպես որ նմանվում են ոչ թե ծոված ճյուղերի, այլ ծառերի, որոնք կարծես աճում են իրենց արմատներից: 11. Տեղի կլիման և օդը հաճելի են, քանի որ սովերը մեղմացնում է արևի ուժը, և աղբյուրներից առատ ջուր է հոսում: 12. Այստեղ նույնպես շատ են ոսկեփայլ կաշվով օձերը: Նրանց թուշը ցանկացած ուրիշ օձերի թուշից ուժեղ է, և մահը վրա էր հասնում խայթոցից անմիջապես հետո, մինչև բնակիչները ցույց չտվեցին դեղաբույսը: 13. Այստեղից, անմարդաբնակ տեղերով Ալեքսանդրը հասավ Հիարոս⁵ գետին. գետի հենց մոտակայքում սովերաշատ պուրակ կար՝ ուրիշ տեղերում անհայտ ծառերով և մեծ բանակությամբ վայրի սիրամարգերով: 14. Առաջ շարժվելով, նա գրավեց մերձակայքում գտնվող քաղաքը, նախապես պաշարելով այն. պատանդներ վերցնելով, նա հարկ գրեց այդ քաղաքի վրա:

Այնուհետև նա մոտեցավ այդ երկրի համար մի մեծ քաղաքի, որը պաշտպանված էր ոչ միայն պարսպով, այլև ճահիճներով⁶: 15. Այնուհանդերձ, նրա զեմ ելան բարբարոսները, որպեսզի իրար կապկպված սալերի վրա ճակատամարտ տան: Ոմանց զենքը նիզակն էր, մյուսներինը՝ կացինը: Երբ նրանք ցանկանում էին օգնել յուրայիններից որևէ մեկին, նրանք հեշտությամբ մի սալից թռչում էին մյուսը: 16. Սկզբում մարտի անսովոր պայմանները վախեցրին մակեդոնացիներին, քանի որ նրանց վերքեր էին հասցնում հեովից, Հետագայում, արհամարհելով թշնամու անկայուն արդելապատենեղները, նրանք վրա

ավեցին սալերին երկու կողմից և սկսեցին ջարդել պաշտպանվողներին: 17. Բացի այդ, Ալեքսանդրը հրամայեց կտրատել առանձին սալերի կապերը, որպեսզի ավելի հեշտ լինեք նրանց շրջադատելը: Բարբարոսները, կորցնելով ութ հազար մարդ, փախան քաղաք: 18. Հաջորդ օրը, բոլոր կողմերից աստիճաններ դնելով, մակեդոնացիները գրավեցին պարիսպները: Սակավաթիվ մարդիկ փրկվեցին, շուտափույթ փախուստի դիմելով: տեղեկանալով քաղաքի անկման մասին, նրանք լողալով կտրեցին անցան ճահիճը և հարևան քաղաքները ահավոր սարսափ լուր հասցրին, որ հարձակում է գործել անհաղթների մի բանակ, բոս երևույթին, աստվածներին պատկանող:

19. Արագաշարժ ջոկատի հետ Պերդիկոսին ուղարկելով այդ մարզը ամալացնելու, արքան զորքի մի մասը հանձնեց Եվրոսին, որպեսզի նա նույնպես հարկադրի բարբարոսներին հրնազանդվել, ինքը՝ Ալեքսանդրը մնացած զորքը տարավ դեպի ամրացված քաղաքը, ուր փախել էին ուրիշ քաղաքների բնակիչները: 20. Քաղաքացիները, թեև գեսպաններ էին առաքել արքայի զթասրտությունը հայցելու, այնուհանդերձ, պատրաստված էին պատերազմի: Սակայն նրանց միջև տարաձայնություններ առաջացան, որոնք մասնատեցին ժողովրդին. ոմանք ցանկացած պայման ավելի էին գերադասում քան հանձնվելը: մյուսները ենթադրում էին, որ իրենք դիմադրելու միջոցներ չունեն: 21. Եվ քանի որ նրանք անկարող էին ընդհանուր որոշում կայացնել, հանձնվելու կողմնակիցները բացեցին դարպասները և ներս թողեցին թշնամուն: 22. Ալեքսանդրը, թեև կարող էր զայրանալ դիմադրության կողմնակիցները վրա, բայց շուրթնեներում շնորհեց, պատանդներ ընդունեց և ճամբարը անդափոխեց մոտակա քաղաքի շրջանը: 23. Պատանդներին տանում էին ռազմաշարքի առջևից: Երբ քաղաքի պարսպի վրայից ճահիճեցին իրենց ցեղակիցներին, սկսեցին նրանց հետ բանակցություններ վարել: Պատմելով արքայի զթասրտության, ինչպես նաև ուժի մասին, նրանք այդ քաղաքի բնակիչներին նույնպես տրամադրեցին անձնատուր լինել: Նման ձևով արբան ողջորմա՞ծարար ընդունեց և մնացած քաղաքները:

24. Այստեղից եկան Սոփիտի⁷ թագավորությունը: Բարբարոսների կարծիքով, այդտեղի ցեղը աչքի է ընկնում իր իմաստնությամբ և առաջնորդվում է բարի սովորություններով: 25. Նրանց մոտ նորածիններին ընդունում⁸ և դաստիարակում են ոչ թե

ծնողները կամքով, այլ այն մարդկանց, որոնց հանձնարարված է դատարարակութեան հոգսը: Եթե նրանք երեխայի վրա նկատում են որևէ մարմնական թերութիւն, ապա հրամայում են սպանել նրան: 26. Ամուսնութիւնները կատարվում են ոչ թե ցեղային կապերով կամ ըստ ազնվատոհմութեան, այլ ամուսիններին ընտրում են ըստ նրանց ֆիզիկական արժանիքների, քանզի հենց դա էլ նրանք գնահատում են զավակների մեջ: 27. Այդ ցեղի քաղաքի, դեպի ուր Ալեքսանդրը ուղղել էր իր դորքը, կառավարիչն ինքը՝ Սոփիտն էր: Գարպասները փակ էին, և ոչ պարիսպների ու ոչ էլ աշտարակների վրա զինված մարդիկ չէին եղևում, այնպես որ մակեդոնացիները երկմտանքի մեջ ընկան՝ կամ բնակիչները լքել էին քաղաքը, կամ էլ դարան մտել: 28. Հանկարծ դարպասը բացվեց և այնտեղից իր երկու շափահաս որդիների հետ դուրս եկավ հնդիկների արքան, իր տեսքով խիստ տարբերվելով մնացած բոլոր բարբարոսներից: 29. Նրա հագուստը նախշակարված էր ոսկով ու ծիրանիով և ծածկում էր նույնիսկ սրունքները, ոսկյա կոշիկները նա դարդարել էր թանկարժեք քարերով, ձեռքերն ու նախաբազուկները զարդարված էին մարգարիտներով: 30. Ականջներից կախված էին առկայծող մեծ շափի բարեր. ոսկյա գավաղանք զարդարված էր ազնիվ բյուրեղաքարերով: Հանձնելով դա արքային, նա խնդրեց ընդունել այն որպես երջանկութեան նշան: Իսկ իրեն, իր զավակներին և ողջ ցեղը հանձնեց նրա ողորմածութեանը:

31. Այդ մարդում հուշակալի որսաշնոր կան: Նրանք զբաղում են հաշոցը, երբ տեսնում են զազանին, նրանք հատկապես ատում են առյուծներին: 32. Ալեքսանդրին նրանց ուժը ցույց տալու նպատակով, Սոփիտը կարգադրեց որսաշրջան թողնել մի մեծ առյուծ և նրա վրա բաց թողնեց ընդամենը շորս շուն, որոնք արագորեն բռնեցին զազանին: Այնժամ այդ գործին վարժ ծառաներից մեկը սկսեց ուրբել շներից մեկի ոտքը, որը մյուս շների հետ ատամները խրել էր առյուծի մարմնի մեջ, և, քանի որ շունը բաց չէր թողնում առյուծին, նա թրով կտրեց շան ոտքը: 33. Նույնիսկ այդ ձևով չկտրելով նրա համառութիւնը, ծառան սկսեց կտրել մարմնի մեկ այլ մասը, բայց սա դարձյալ չէր թողնում. և ծառան շարունակում էր կտոր-կտոր անել շանը: Նույնիսկ շունը փշելիս շունը ատամները չպոկեց վայրի գազանից, Այդպիսին է այդ կենդանիների կիրքը որսի հանդեպ, որը զրոշմով էլ զարերի հիշողութեան մեջ:

34. Ես ավելի շատ գրում եմ այն մասին, ինչին ինքս եմ հավատում և չեմ կարող հաստատել այն, ինչում կասկածում եմ և չեմ ցանկանում լսածներիցս որևէ բան բաց թողնել:

35. Թողնելով Սոփիտին նրա թագավորութիւնում, Ալեքսանդրը առաջ շարժվեց դեպի Հիփաս գետը, որտեղ միավորվեց ուրիշ շրջաններ նվաճած Հեփեստոնեսի հետ: 36. Մտաւկա ցեղի արքան էր Փեդեյը. սա հրամայում է իր ցեղակիցներին սովորականի նման զբաղվել հողագործութեամբ, իսկ ինքը նվերներով ընդառաջ էլնում Ալեքսանդրին, չհրաժարվելով կատարել նրա ցանկացած հրամանը:

II. Արքան նրա մոտ երկու օր մնաց, երրորդ օրը որոշեց անցնել գետը: Գետանցը դժվար էր ոչ միայն ջրի առատութեան, այլև նրա մեջ եղած քարերի պատճառով: 2. Փեդեյից անհրաժեշտ տեղեկութիւններ ստանալով, նա իմացավ, որ գետի այն կողմում տասնմեկ օրվա ճանապարհը անցնում է անապատային վայրերով, հետո մոտենում Գանգեսին՝ Հնդկաստանի բոլոր գետերից մեծագույնին: 3. Որ նրա հանդիպակաց ափին բնակվում են գանգարիդներն ու պրասիները, իսկ նրանց արքա Ադրամը փակել է ճանապարհը քսան հազար հեծյալներով և երկու հարյուր հազար հետևակայինով: 4. Բացի այդ նա իր հետ բերում է երկու հազար քառաձի մարտակառքեր և, ամենասարսափելին՝ փղեր, որոնցից նա, ասում են, ունի մինչև երեք հազար հատ: 5. Այս ամենը արքային անհատավախ թվաց. դրա համար էլ նա զիմեց Պորին (սա արքայի խմբում էր) հետևյալ հարցով՝ արդո՞ք ճիշտ է այն ամենը, ինչ իրեն ասում են: 6. Նա հաստատեց, որ այդ ցեղի և պետութեան մասին պատճածները ճշմարիտ են. այնուհանդերձ նրա տիրակալը ազնվատոհմ ցեղից չէ, այլ ունի ամենաստորին ծագում. հայրը սափրիչ է եղել, որը հազիվ օրվա հաց է վաստակել, ասկայն իր հաճելի արտաքինի շնորհիվ թագուհին սերել է նրան: 7. Թագուհին նրան մերձեցրել է այդ ժամանակ իշխող թագավորին: Գաղտնազոյի սպանելով նրան, նա տիրել է թագավորական իշխանութեանը որպես թագածառանգների խնամակալ: Սպանելով թագավորի զավակներին, նա ծնունդ է տվել նրան, ով այժմ այնտեղ թագավորում է: Ժողովուրդը նրան ատում է, և նա ծագմամբ ավելի համապատասխանում է իր հորը, քան իր արքայական աստիճանին:

8. Պորի հաղորդածները արքայի հոգում տարբեր մտածմունքներ առաջացրին: Թշնամուն և նրա գազաններին նա ար-

համարում էր, սակայն վախենում էր բնական պայմաններից ու գետերի ուժից: 9. Նրան թվում էր, որ մարդկության կեցութեան համարյա ծայրը նետված մարդկանց համար հեշտ չի լինի գանել և հաղթահարել աշխարհի սահմանագիծը: Մյուս կողմից, փառքի ու քաջագործությունների հանդեպ ունեցած անկշտում կրթից ելնելով, նա իր համար ոչինչ անհասանելի չէր համարում, ոչ էլ հեռավոր: 10. Ծշմարիտ է, երբեմն նա կասկածում էր, կցանկանա՞ն արդյոք իր մակեդոնացիները, որոնք այդքան երկրներ էին անցել, ծերացել մարտերում ու ճամբարային կյանքում, հետևել իրեն գետերի վրայով, հաղթահարել բնութեան արհավիրքները, շնորհիվ գերադասի արդյոք բավարարվել այն ավարով, որով նրանք արդեն ծանրաբեռնված են, և շնորհիվ շարժարի իրենց նորի հետևից ընկնելով: 11. Նրա և իր զինվորների ձգտումները տարբեր են: Նա իր հոգում փայփայում է ողջ աշխարհի նվաճումը և իր գործի դեռ սկզբում է գտնվում, իսկ զինվորները, արշավների դժվարություններից հյուսված, սպասում են ցանկացած առաջին հաջողությունը և վտանգների ավարտին:

12. Սակայն կիրքը հաղթահարից բանականությանը: Կանչելով զինվորներին հավաքի, նա զիմեց նրանց հետևյալ խոսքերով. «Եմ զինվորներ, ինձ քաջ հայտնի է, որ վերջերս Հընդկաստանի բնակիչները դիտմամբ ձեզ այնպիսի բաներ են պատմել, որոնք կարող են ձեզ սարսափեցնել, սակայն մեզ համար այդ դատարկ սուտը անսպասելի չէ: 13. Ե՛իշտ այդպես պարսիկները սարսափելի ձևով էին մեզ ներկայացնում Կիլիկիայի կիրճերը: Միջազատի տարածքները, Տիգրիսն ու Եփրատը, և այդ գետերից առաջինը դուք անցաք ծանծաղուտով, իսկ երկրորդը՝ կամբողով: 14. Խոսքն ու զրույցը երբեք լիովին ճշմարիտ չեն լինում, դրանց միջոցով հաղորդածները չափազանցված են լինում: Այդպես է և մեր փառքի համբավը. թեկուզ այն առաջացել է ճշմարիտ հիմքի վրա, այնուհանդերձ իսկական արվածներից շատ է: 15. Ով կարող էր մինչև վերջերս մտածել, թե կկարողանա դիմադրել պարսպաներ հիշեցնող զազաններին, անցնել Հիդասպ գետը և այլ բաներ, որոնք պատմածով ավելի սարսափելի են, քան իրականում. եթե մեզ կարողանային վախեցնել առականերով, մենք արդեն վաղուց փախած կլինեինք Ասիայից: 16. Մի՞թե դուք հավատում եք, որ նրանց նախրում ավելի շատ փղեր կան, քան սովորաբար ցուլեր են լինում, այն դեպքում,

երբ դրանք հազվագյուտ զազաններ են և դրանց բռնելը դժվար է և ավելի դժվար՝ վարժեցնելը: 17. Նման սուտ է նաև հետևակի և հեծելազորի հաշվարկները, իսկ գետերը որքան լայն են, այնքան ավելի հանդարտ են հոսում, իսկ սեղմված նեղ ավերի ու հունի մեջ, նրանց ջրերն ավելի մրբկոտ են և, ընդհակառակը, լայնարձակ հունով նրանք ավելի հանդարտ են հոսում: 18. Բայցի այդ, գլխավոր վտանգը լինում է ամփին, որտեղ թշնամին սպասում է մոտեցող նավերին: Այսպիսով, ինչպիսի գետ էլ որ հանդիպի, ավ դուրս գալու վտանգը նույնն է»:

19. «Բայց կնթաղենք, թե այդ ամենը ճիշտ է, ուրեմն ինչի՞ց եք դուք ավելի շատ վախենում՝ կենդանիների բազմությունից թե թշնամիներից. ինչ վերաբերում է փղերին, ապա մենք թարմ օրինակ ունենք՝ նրանք ավելի շատ ճգմեցին իրենց գինվորներին՝ քան մեզ, և նրանց հսկայական մարմինները կտրատվեցին տապարներով ու մանգաղներով: 20. Միևնույնը չէ՞ թե նրանք քանիսն են, Պորի ունեցածի շափ են թե երեք հազար, եթե մենք տեսանք, որ նրանցից մեկին կամ երկուսին վիրավորելուց հետո մնացածները դիմում են փախուստի: 21. Այնուհետև, նույնիսկ փոքրաթիվ փղերին զեկավարելը անհարմար է, իսկ եթե հավաքեք մի քանի հազար հատ, ապա նրանք խռնվում են և իրար ճգմում, քանի որ ոչ կարողանում են հանդիստ կանգնել, ոչ էլ վազել իրենց ծանրաշարժ ու հսկա մարմինների պատճառով: Ես ինքս այնքան եմ արհամարհում այդ կենդանիներին, որ եթե ունենայի դրանցից, ապա ուղղամաշարքի մեջ չէի դնի, քաջ դիտակցելով, որ դրանք ավելի վտանգավոր են յուրայինների համար, քան թշնամու: 22. Այսպես, ուրեմն, ձեզ շփոթմունքի մեջ է գցում հեծյալների և հետևակայինների քանակը: Երևում է, դուք վարժվել եք կռվել փոքրաթիվ թշնամու դեմ և, այժմ, առաջին անգամ ընդհարվելու եք անկարգ բազմության հետ: 23. Բայց չէ՞ որ մակեդոնացիների անհաղթ ուժի վկայությունը թշնամու հորդաների դեմ Գրանիկոսն է ու Կիլիկիան, հեղեղված պարսիկների արյունով, և Արբելան, որի դաշտերը ծածկված են ջախջախված բարբաբոսների ոսկորներով: 24. Դուք ուշացումով սկսեցիք հաշվել թշնամու լեզուները այն բանից հետո, երբ ձեր հաղթանակներով անմարդաբնակ դարձրիք Ասիան: Մեր փոքրաթիվության մասին պետք էր մտածել այն ժամանակ, երբ մենք անցնում էինք Հելլեսպոնտոսը. այժմ մեր հետևում են սկյուրները¹⁰, մեզ օգնում են բակտ-

րիացիները, մեզ հետ միասին կովում են դահերն ու սոգդերը:

25. «Սակայն իմ հույսը նրանց ամբոխները չեն: Ես հաշվի եմ նստում ձեր ջոկատների հետ և, նոր արշավանք սկսելով, հենվում եմ ձեր քաջության վրա: Քանի դեռ կանգնած կլինեմ ձեզ հետ մեկ շաբթում, ես չեմ հաշվի ոչ մեր, ոչ էլ թշնամու գնդերի քանակը: Դուք միայն հզոր եղեք ոգով, լի առույգությամբ և հավատով իմ հանդեպ: 26. Մենք կանգնած ենք ոչ թե մեր զործերի ու ջանքերի շեմին, այլ նրա վերջնագծին: Մենք շուտով կհասնենք արևածագին ու օվկիանոսին: Միայն թե մի արվեք փոքրոգությանը: Այնտեղից, նվաճելով աշխարհի ծայրը, մենք հայրենիք կվերադառնանք որպես հաղթողներ: Մի եղեք անբան հողագործների նման անփուլթ, որոնք իրենց ձեռքից բաց են թողնում, հասունացած պտուղը: 27. Պարզենք գերազանցում են վտանգները: Այս երկիրը հարուստ է և ոչ ուղմատենը: Այսպիսով, ես ձեզ առաջնորդում եմ ոչ այնքան փառք ձեռք բերելու, որքան՝ ավար: Դուք արժանի եք հայրենիք տանելու այն հարստությունների, որոնք ծովը նետում է Հնդկաստանի ափերին, դուք արժանի եք, որպեսզի ամեն ինչ փորձած լինեք, ոչինչ բաց չթողնեք վախի պատճառով: 28. Հանուն մարդկային մեր փառքի, որը գերազանցում է լափանիշները, հանուն մեր փոխադարձ ծառայությունների, որի ուժով կովում ենք պարտություն չիմանալով, ես կոչ եմ անում ձեզ՝ չլքել ձեր սանին ու զինակցին, էլ չեմ ասում արքային, որը կանգնած է մարդկային նվաճումների սահմանագծին: 29. Մնացած ամեն ինչ ես ձեզանից եմ պահանջել. դրա համար ես ձեզ պարտական կլինեմ: Ես դա խնդրում եմ ձեզանից, որովհետև նախկինում երբեք ես ձեզանից չեմ պահանջել այնպիսի բան, որի համար ես առաջինը գնացած չլինեմ վտանգների դեմ, հաճախ պաշտպանելով ձեր շարքերը իմ վահանով: Մի խլեք իմ ձեռքից արմավենու ճյուղը, որը բարեհաջող ճակատագրի զեպքում ինձ հավասար է դարձնելու Հերկուլեսին և հայր Լիբերոսին: 30. Ընդառաջեք իմ խնդրանքներին և, վերջապես, դադարեցրեք ձեր համառ լուծությունը: Ո՛ր եմ ձեզ բնորոշ բացականչությունները՝ ոգու առույգության արտահայտությունը:

Ո՛ր եմ ինձ համար սովորական դարձած մակեդոնական դեմքերը: Ես ձեզ չեմ ճանաչում, իմ զինվորներ. թվում է, դուք էլ փնձ չեք ճանաչում: Ես կոչ եմ անում խուլ ականջներին, փորձում հուզել անկոտորում ու ինձ օտարացած հոգիները:

31. Եվ քանի որ զինվորները համառորեն լուռ էին աչքները գետին հառած, նա շարունակեց. «Զորտեմ, ինչո՞վ եմ ես ձեզ անզգուշաբար նեղացրել, որ դուք նույնիսկ չեք ուզում ինձ նայել: Ինձ թվում է, ես միայնակ եմ: Ոչ ոք ինձ չի պատասխանում, բայց՝ ոչ ոք էլ չի մերժում: 32. Ո՞ւմ եմ ես դիմում: Ի՞նչ եմ պահանջում: Ցանկանում եմ հաստատել ձեր փառքն ու մեծությունը: Ուր են նրանք, ում արիությունը ես Կեսել եմ հենց վերջերս, ով շտապում էր իր գիրկն առնել իր վիրաւոր արքայի մարմինը: Դուք լքել եք ինձ, խաբել և մատնել թշնամուն: 33. Բայց ես մենակ կզնամ առաջ: Հանձնեցեք ինձ բեռերին ու զազաններին և այն ցեղերին, որոնց անունները ձեզ սարսափեցնում են: Ես կգտնեմ մարդիկ, որոնք կզնան ինձ հետ՝ ձեր լքածի հետ: Ինձ հետ կլինեն սկյութներն ու բակտրիացիները՝ դեռ վերջերս մեր թշնամիները, իսկ այժմ մեր զինվորները: 34. Ավելի լավ է զորավարը մեռնի, քան խնդրող բառաւ, վերադարձեք տուն, զնացեք, ցնծացեք, լքելով ձեր արքային: Ես այստեղ տեղ կգտնեմ հաղթանակի, որին դուք չեք հավատում, կամ էլ պատվավոր մահվան համար»:

III. Նույնիսկ այժմ էլ զինվորներից ոչ ոք ի վիճակի չեղավ ծպտուն հանել: Նրանք սպասում էին, որ առաջնորդներն ու ավագանին բացատրեն արքային, որ իրենք հյուժված են վերքերից և արշավանքի անընդմեջ շարժարանքներից և ոչ թե հրաժարվում են ծառայությունից. պարզապես այլևս ի վիճակի չեն տանել այն: 2. Նրանք կանգնած էին վախից կարկամած, աչքները գետին հառած: Սկզբում նրանց միջև հանպատրաստից ինչ-որ աղմուկ բարձրացավ, հետո լավեցին հոգոցներ, հետզհետե նրանց տառապանքը ավելի ազատորեն սկսվեց արտահայտվել, արցունքներ թափվեցին, այնպես որ արքայի ցասումը վերածվեց կարեկցանքի, և ինչն էլ, չնայած գործացասումը վերածվեց կարեկցանքի, և ինչն էլ, չնայած գործադրած ջանքերին, շարժացավ զսպել արցունքները: 3. Երբ, վերջապես, հավաքի բոլոր մասնակիցները սկսեցին անզուսպ լաց լինել, բոլորի միջից միայն Քենոսը համարձակվեց մոտեցանալ ամբիոնին և նշան արեց, որ խոսել է ուզում: 4. Երբ զինվորները տեսան, թե ինչպես է նա գլխից հանում սաղավարը (սովորույթ կար հենց այդպես խոսել արքայի հետ), նրանք խնդրեցին Քենոսին ելույթ ունենալ ողջ զորքի անունից:

5. Այնժամ Քենոսն այսպես սկսեց. «Թող աստվածները հեռու վանեն մեր հոգիներից պիղծ մտքերը, որոնք, իհարկե, մեթ

մեջ չկան: Քո զինվորները նույն ոգին ունեն, ինչպես և միշտ, նրանք պատրաստ են գնալ ուր հրամայես, կռվել, փորձություն ենթարկվել, իրենց արյունով հաստատել քո անունը սերունդների մեջ: Այդ պատճառով, եթե դու պնդում ես, մենք անզին, մերկ, արնաքամ, կզանք քո ետևից, կամ քո առջևից, ուր դու ցանկանաս: 6. Բայց եթե դու ուզում ես լսել քո զինվորների ծայրահեղությունից դրդված անկեղծ խոսքերը, ապա խնդրում եմ քեզ, բարյացակամորեն ուշք դարձրու նրանց, ովքեր հաստատակամորեն միշտ հետևել են և կհետևեն քեզ, ուր էլ որ դու գնաս: 7. Արբա, քո քաջագործությունների վեհություններ դու նվաճել ես ոչ միայն թշնամիներին, այլև քո զինվորներին: Մենք արել ենք այն ամենը, ինչին ընդունակ է մահկանացուն: Մեզ՝ ծովեր ու երկրներ շափածներին ամեն ինչ ավելի լավ է հայտնի, քան տեղաբնակներին: Մենք կանգնած ենք համարյա աշխարհի ծայրին: 8. Իսկ դու ցանկանում ես գնալ ուրիշ աշխարհ, թափանցել Հնդկաստան, որն անհայտ է նույնիսկ հրեզիկներին, ցանկանում ես իրենց տեղերից վեր հանել մարդկանց, որոնք ապրում են գազանների ու օձերի մեջ և քո հաղթանակներով ավելի շատ երկրներ լուսավորես, քան լուսավորում է արևը: 9. Այդ մտահղացումը արժանի է քո հանձարին, սակայն մեր ուժերից վեր է: Քո արիությունը գնալով կմեծանա, իսկ մեր ուժերը սպառվում են: 10. Նայիր մեր արնաքամ մարմիններին, որոնք ծակծկված են բյուրավոր վերքերով և թարախակալող սպիներով: Մեր զենքը բթացել է, չեն բավարարում պաշտպանական միջոցները: Մենք պարսկական հագուստ ենք հագել, որովհետև անհնար է մերը տեղ հասցնելը, մենք նմանվել ենք օտարերկրացի բարբարոսներին: 11. Շատե՞րն արդյոք գրահ ունեն: Ո՞ւմ մոտ են ձիեր մնացել: Հրամայիր պարզել, մեզանից շատերի՞ն են արդյոք ստրուկներ ուղեկցում, ում մոտ ինչ է մնացել ավարից: Բոլորին հաղթելով, մենք ամեն ինչի կարիք ունենք: Եվ մենք անշափավորությունից չէ, որ տառապում ենք. պատերազմի զենքը մենք պատերազմի վրա էլ ծախսել ենք: 12. Այսպիսի հրաշալի գորքը դու ուզում ես մերկացրած նետել գազանների առջև: Թող բարբարոսները դիտմամբ շափազանցեն նրանց քանակը. նրանց ստից արգեն ես համոզված եմ, որ գրանք շատ են: 13. Եթե կասկած չկա, որ մինչև այժմ մենք շարժվում էինք դեպի Հնդկաստան, ապա այս երկիրը իր հարավային մասում նեղանում է. նվաճելով այն, մենք

կարող ենք մոտենալ ծովին, որին բնությունը ստեղծել է որպես մարդկային ձգտումների վերջնակետ: 14. Ինչու շրջանցելով մոտենալ սեփական փառքին, երբ այն համարյա քո ձեռքում է: Այստեղ ևս մեր ճանապարհին օվկիանոս է: Եթե դու չես գերազանցում թափանցել, մենք կհասնենք այնտեղ, ուր քեզ տանում է քո ճակատագիրը: 15. Այս մասին էի ես ուզում խոսել քեզ հետ զինվորների ներկայությամբ, և ոչ նրա համար, որպեսզի վայելեմ նրանց երախտագիտությունը, այլ որպեսզի դու լսես մարդկային ավելի հստակ ձայն և ոչ թե հառաչանք ու արտունջ:

16. Երբ Քենոսն ավարտեց իր ճառը, ամենուր հառաչանք ու լաց սկսվեց. խլացած ձայներով Ալեքսանդրին անվանում էին արբա, հայր, տեր: 17. Այնուհետև նույն բանը սկսեցին խնդրել ուրիշ առաջնորդներ՝ զխավորապես տարիքավորները, որոնց տարիքի համար ավելի հեշտ էր ներել և սրանց հեղինակությունն ավելի բարձր էր: 18. Արբան չէր կարողանում ոչ նախատել համառներին, ոչ էլ մեղմացնել դժգոհներին: Այսպես, շփոթված նա ցած իջավ ամբիոնից և փակվեց իր վրանում, հրամայելով ոչ ոքի ներս չթողնել, բացի սովորական խորհրդատուներից: 19. Երկու օր արբան ցասման մեջ էր. երրորդ օրը նա դուրս եկավ և հրամայեց սրբատաշ քարերից 12 զոհասեղան կառուցել որպես իրենց արշավանքի հուշարձան: Հրամայեց նաև ընդարձակել ճամբարի պաշտպանական շինությունները և քնելու տեղեր պատրաստել, մարմնի սովորական շափերից մեծ, որպեսզի ստեղծվի վիթխարի կառույց¹¹. Նքնաղ, սակայն անիրական հուշարձան սերունդների համար: 20. Այդտեղից վերադառնալով անցած ճանապարհի մի մասը, նա ճամբար խփեց Ակեսին¹² գետի ափին: Այդտեղ հանկարծակի հիվանդացավ և մահացավ Քենոսը: Արբան ողբաց նրան. ընդ որում ասաց, որ մի քանի օր առաջ Քենոսը երկար ճառ էր արտասանել, իբր միայն ինքը հույս ուներ վերադառնալ Մակեդոնիա: 21. Սակայն ջրի վրա արդեն կանգնած էր նավատորմը, որը նա նախապես կարգադրել էր կառուցել: Այդ ընթացքում Մենոնը, որպես համալրում, Թրակիայից նրան բերեց հինգ հազար հեծյալ և, բացի այդ, յոթ հազար հետևակային Հարավարևմտից և ոսկով ու արծաթով դրոշմված քսանհինգ հազար սաղավարտ ու վահան: Բաժանելով զրանք զինվորներին, նա հրամայեց այրել հները: 22. Հնդկաստանի արբաներ Պորին ու Տաքսիլին, որոնք վաղեմի թշնամիներ էին, թողեց իրենց թագավորություններում,

որպեսզի իրենց արյունով նրա համար ճանապարհ բացեն դեպի օվկիանոս: 18. Իբր իրենց տանում են աստղերից ու արևից այն կողմ, ստիպում թափանցել այնպիսի վայրեր, որոնց ինքը՝ բնությունը մարդու հայացքից բողբոջել է: Անընդհատ ի հայտ են գալիս նոր թշնամիներ նոր զենքերով: Եթե նրանց այդ բուրբոն նույնիսկ ցրեն, ի՞նչ պարզև է իրենց սպասում՝ մշուշ, մառախուղ, հրեշներով լիցուն անհասակ ծովն իջած հավերժական գիշեր, անշարժ ջրեր, ուր բնությունն անկարող է կյանքին շունչ տալ: 19. Արքան, ավելի անհանգստացած դինվորների հուզումներից, քան իր հոգսերից, հավաքում է նրանց համաժողովի, համոզում, թե թշնամիները, որոնցից նրանք վախենում են, ռազմատենչ չեն: Այդ ցեղերից բացի, իբր, ուրիշ ոչինչ չկա, որ խոչընդոտի այդքան երկրներ գրավածներին հասնել աշխարհի ու իրենց տանջանքների վերջին: 20. Վախից նա հրաժարվեց Գանգեսից և նրա մյուս կողմում ապրող շատ ցեղերից: Նա փոխեց իր ճանապարհի ուղղությունը դեպի այն վայրերը, ուր կարելի էր հասնել նույն փառքին և որտեղ ավելի քիչ էին վտանգները: 21. Նա արդեն կանխազգուս է օվկիանոսը, արդեն զգացվում է ծովի շունչը: Թող նրանք շղրկեն իրենց այն փառքից, որին նա ձգտում է: Եթե նրանք անցնեն Հերկուլեսի ու հայր կրեթոսի ճանապարհները, ապա ոչ մեծ ջանքերի շնորհիվ իրենց արքային կպարզեն անմահ փառք: Թող նրանք թույլ տան իրեն հեռանալ և ոչ թե փախչել Հնդկաստանից:

22. Ողջ բազմությունը, հատկապես դինվորները, մեծ ոգևորություն ցուցաբերեցին: 23. Չէ՞ որ ավելի հեշտ է պոռթկում առաջացնել, քան ճնշել այն: Առաջներում զորքում երբևէ չէին լսվել այդպիսի առույգ բացականչություններ, որոնք կոչ էին անում արքային աստվածների օրհնանքով զորքը տանել և հնարավորություն տալ համեմատվելու փառքով նրանց հետ, որոնց նա նմանակում է: Զինվորների այդպիսի կոչերից ուրախացած, արքան միանգամից տարավ իր զորքը թշնամու դեմ: 24. Դրանք Հնդկաստանի ամենահզոր ցեղերն էին, որոնք համառ պատերազմի պատրաստություն էին տեսել: Նրանք իրենց առաջնորդ էին ընտրել օբսիդրակների ցեղից աչքի ընկնող քաջության տեր մի մարդու՝ Նա սեղադրից իր ճամբարը լիտան ստորոտին և տարբեր տեղերում կրակներ վառեց, որպեսզի բազմամարդու թյան սպավորություն ստեղծի: Բարբարոսները, իրենց անընդհատ աղաղակներով ու իրենց յուրահատուկ գոռում-գոչյուններ-

բով չէին թողնում մակեդոնացիներին քնել, նրանց վախեցնելու գուր ջանքեր թափելով: 25. Արդեն մոտենում էր լուսաբացը, երբ համողվածությամբ ու հույսերով լի արքան հրամայում է իր առույգ տրամադրված դինվորներին զենք վերցնել և ռազմաշարք կազմել: Սակայն այդ պահին վախից, թե ինչ-որ մաշարք կազմել: Սակայն այդ պահին վախից, թե ինչ-որ խառնաշփոթությունից բարբարոսներն իսկույն փախուստի դիմեցին և զբաղեցրին լեռների անմատչելի տեղերը: Արքան զուր էր փորձում նրանց հետապնդել, բայց իր ձեռքը պցեց նրանց գումակը:

26. Դրանից հետո արքան մոտեցավ օբսիդրակների քաղաքին, որտեղ շատերն էին թաքնվել՝ ավելի շատ հույսը դնելով իրենց զենքի, քան քաղաքի պարիսպների վրա: 27. Արքան արդեն պատրաստվում էր գրոհի, երբ գուշակը սկսեց համոզել նրան լանել այդ բանը կամ համենայն դեպս հետաձգել պաշտբուժը, քանզի նրա կյանքին վտանգ է սպառում: 28. Արքան, նայելով Դեմոփոնտեսին (այդպես էր գուշակի անունը), ասաց. «Եթե որևէ մեկը ընդհատի քեզ, երբ դու զբաղված ես բո աքվեստով՝ զոհի փորոտիքը ուսումնասիրելով, ես համոզված եմ, զա քեզ զուր չի գա»: 29. Եվ քանի որ սա պնդում էր, թե ճշմարտությունն է կանխատեսել, արքան ասաց նրան. «Ինչ ես կարծում, կարո՞ղ է աղջոք ինչ-որ մեկը ավելի շատ խանդարել մարդուն, որը զբաղված է մեծագույն գործերով և ոչ թե փորոտիքների զննությունը, քան սնտոիապաշտ բուրմը»: 30. Այդ խոսքերից անմիջապես հետո նա հրամայում է մոտեցնել աստիճանները պարիսպներին և, մինչև ուրիշները հասպաղում էին, փնքն առաջինը բարձրացավ պարսպի վրա¹⁷: Պարիսպների ընդգրկված տարածությունը մեծ չէր, և կուստները չէին լայնացնում դրանք, ինչպես ուրիշ դեպքերում, սակայն նրանց շուրջը եղած անսովոր պահապատը խոչընդոտում էր մոտենալուն: 31. Այդպիսով, արքան հաստատուն չէր կանգնած, այլ միայն կառչել էր պարսպի եզրից՝ իր վահանով հետ մղելով ամեն կողմերից իր վրա եկող նետերը, որոնք արձակվում էին հեռվում գանվող աշտարակներից: 32. Զինվորներն էլ չէին կարողանում մոտենալ նրան, քանի որ վերևից նրանց վրա էին թափվում մեծ քանակությամբ նիզակներ: Վերջապես ամոթի զգացումը հաղթահարեց վտանգի շափը, և զինվորները դիտակցեցին, որ իրենց հասպաղումը արքային մատնում է թշնամուն: 33. Սակայն նրանց շտապողականությունն ավելի էր ուշացնում օգնությունը: Քանի

որ ամեն մեկը ձգտում էր ավելի արագ բարձրանալ, նրանք ծանրաբեռնում էին աստիճանները. սրանց թիվը քիչ էր, և զինվորները ցած էին գլորվում, արքային զրկելով վերջին հույսից: Արքան կանգնած էր ողջ զորքի աչքի առջև և, այնուհանդերձ, կարծես, լքված էր բոլորի կողմից:

V. Վահանով հարվածները դիմագրավող նրա ձախ ձեռքը արդեն հոգնել էր. ընկերները գոռում էին, որ նա ցած թռչի ներքև, և պատրաստ էին բռնելու նրան, երբ նա ձեռնարկեց անհավատարի ու շաված մի բան, որն ավելի շատ կարող էր անխոհեմության, քան խիղախության համարում բերել նրան: 2. Նա պարսպի վրայից ուղիղ թռավ թշնամիներով լի քաղաքը, թեև հազիվ կարող էր հուսալ, որ կսպանվի ճակատամարտում և վրեժխնդիր կլինեն. չէ՞ որ նա կարող էր ողջ-ողջ բնավել, չհասցընելով նույնիսկ ոտքի կանգնել: 3. Սակայն նա այնքան հաջող թռավ, որ միանգամից ոտքի կանգնեց և անմիջապես կավի բռնվեց. և որպեսզի նրան հնարավոր չլիներ շրջապատել, այդ մասին հոգ տարավ ինքը բախտը: 4. Պարսպից ոչ հեռու, ասես դեպի վրայ, մի հին ծառ կար, որի լայնասաղարթ ճյուղերը՝ ծածկված խիտ տերևներով, պատսպարեցին արքային: Նա մեջքով հենվեց նրա հաստ բնին այնպես, որ նրան շրջանցելն անհնար դարձավ, իսկ հեռվից նրա վրա արձակված նետերը դիպչում էին վահանին: 5. Եվ թեև հեռու տարածությունից այդքան ձեռքեր էին բարձրացել մեկի վրա, ոչ ոք չէր համարձակվում շատ մոտենալ, իսկ նետերը ավելի շատ դիպչում էին ծառի ճյուղերին, քան նրա վահանին: 6. Արքայի համար պայքարում էին նախ նրա անվան փառքը, երկրորդ՝ հանդգնությունը, որը միշտ հրահրում է պատվավոր մահ փնտրել: 7. Բայց երբ թըշնամու բանակը սկսեց ավելանալ, վահանի վրա թափվող հարվածների ուժը սաստկացավ, քարերն արդեն ջարդեցին նրա սալավարար և նրա ծնկները սկսեցին ծալվել, թուլանալով անբեղհատ լարվածությունից: 8. Սակայն, երբ նրան ավելի մոտ կանգնածները անզուշարար, անտեսելով նրա ուժը, հարձակվեցին նրա վրա, նա իր թրով աֆսպես հարվածեց զրանցից երկուսին, որ նրանք անշնչացած ընկան արքայի ոտքերի առջև: Դրանից հետո ոչ ոք նրան մոտենալու քաջություն չունեցավ: Նետերն ու նիզակները նրա վրա արձակում էին հեռվից:

9. Բոլոր հարվածներից անպաշտպան, նա արդեն դժվարություններ էր պաշտպանում իր մարմինը, ամբողջությամբ ծան-

բանալով ծնկահանգների վրա, երբ մի հնդիկ այնպիսի ուժով երկու կանգուն երկարության մի նետ արձակեց նրա վրա (հենց այն երկարության, որոնք, ինչպես արդեն ասվել էր, գործածում էին հնդիկները), որ, խոցելով զրահը, այն խրվեց նրա ծծապտուկից քիչ վերև: 10. Ստանալով այդպիսի վերք և շատ արյուն կորցնելով, նա իջեցրեց վահանը, ասես մահամերձ, և այն աստիճան թուլացավ, որ ձեռքում ուժ չուներ նետը դուրս քաշելու: Դրա համար էլ նրան խոցողը հաղթական հրճվանքով նետովեց նրա վրա զենքն ու զրահը վրայից հանելու: 11. Բայց հենց արքան զգաց օտար ձեռքի հպումը իր մարմնին, նրանում սրվեց վրդովմունքի և ծայրահեղ պատվազրկության զգացումը. նա ողբկոչեց իր թուլացող ոգին և դաշույնը խրեց թշնամու բաց կողմը: 12. Արքայի շուրջը արդեն երեք դիակ էին ընկած, միտցածները հետ ընկրկեցին: Ցանկանալով հրաժեշտ տալ կյանքին պայքարի պահին, քանի դեռ իր մեջ շունչ կար, նա փորձեց ոտքի կանգնել, հենվելով վահանին: 13. Սակայն զրա համար նրա ուժերը չբավարարեցին և բարձրանալու համար նա ձեռքը գցեց իր գլխավերևի ճյուղերին, բայց դա էլ նրան չհաջողվեց: Նա կրկին ընկավ ծնկների վրա, ձեռքով մոտ կանչելով թշնամուն, թե արդյո՞ք որեէ մեկը կհամարձակվի իր հետ կռվել:

14. Վերջապես արքային օգնության հասավ Պեկեստեսը, որն իրեն ուղի էր բացել քաղաքի ուրիշ մասում¹⁸, պարսպից վայր գցելով պաշտպաններին: 15. Այլքսանզըր տեսավ նրան և, կարծելով, որ սա իրեն ոչ թե կյանքի, այլ մահվան հանգստություն է բերում, հոգնած մարմնով ընկավ վահանի վրա: Այնուհետև հայտնվեց Թիմեոսը, քիչ ավելի ուշ Լեոնատոսը, նրանց հետևից Արիստոնեսը: 16. Իսկ հնդիկները, տեղեկանալով, որ արքան իրենց քաղաքում է, թողնելով մյուսներին, վաղեցին նրա կողմը և նեղում էին նրան պաշտպանողներին: Սրանցից Թիմեոսը, կրծքին շատ վերքեր ստանալով, հերոսաբար ընկավ փառավոր մարտում: 17. Պեկեստեսը նույնպես վիրավորվել էր երեք պարսատիկների հարվածներից, բայց ոչ այնքան իրեն էր ծածկում վահանով, որքան արքային իր մարմնով: Լեոնատոսը, հետ մղելով ուժեղ ճնշում գործադրող թշնամիներին, ծանր հարված ստացավ վզին և ընկավ արքայի ոտքերի մոտ: 18. Արդեն վերքերից հյուժված՝ ցած իջեցրեց վահանը նաև Պեկեստեսը. վերջին հույսը Արիստոնեսի վրա էր: Սակայն նա էլ ծանր վիրավորված էր և այլևս անկարող էր զսպել այդքան շատ թշնամի-

ների 19. Այդ նույն ժամանակ մակեդոնացիներին լուր հասավ, որ արքան զոհվել է մարտում, Ուրիշներին այդ լուրը կարող էր վախեցնել, մակեդոնացիներին մեջ այն արիություն արթնացրեց: Մոռանալով որևէ վտանգի մասին, նրանք կացիինսարով Հեղբեցին պարիսպը, ճեղքի միջով ներխուժեցին քաղաք և շատ հրեղինների կոտորեցին, որոնք փախուստի դիմեցին և համարձակություն շունկոտան միավորվել: 20. Չէին խնայում ոչ ծեղերին, ոչ կանանց, ոչ երեխաներին: Ով նրանց պատահում էր, նրանք գտնում էին, թե հենց դա է վիրավորել արքային: Վերջապես, թշնամիների նման ջարդով հագուրդ տրվեց արգարացի ցասումին: 21. Պատմաբաններ կլիտարքոսն ու Թիմագենեսը հաստատում են, որ Պտղոմեոսը, որ հետագայում արքա է դարձել, այդ մարտին ներկա չի եղել: Իսկ ինքը իր ժառանգությունները շնամացնելու համար ժառանգների համար առասպել է հորինել¹⁹, իբր ինքը մասնակցել է այդ գործին, բայց ուղարկված է եղել հետախուզության: Այդպես են եղել հին ձեռագրերը ստեղծողների գրառումները նրանց սխրանքների մասին. կամ անփույթ, կամ էլ զրան հավասար արատ՝ դուրահավատ:

22. Արքային տեղափոխեցին վրան, և բժիշկները առաջին հերթին կտրեցին նրա մեջ խրված նետի փայտամասը, առանց ձեռք տալու ծայրակալին: 23. Հետո, մերկացնելով մարմինը, նրանք նկատեցին, որ նետը ատամնավոր է և որ այն հնարավոր է հանել միայն կտրվածքով վերքը մեծացնելու միջոցով: 24. Գրա հետ միասին, նրանք վախենում էին, որ արյան հոսքը կարող է խանգարել կտրվածք կատարելուն. նետը մեծ էր և, ինչպես հետո պարզվեց, թափանցել էր մինչև նրա ներքին օրգանները: 25. Բժշկի մեծագույն վարպետությունը տիրապետող կրիտոբուլոսը²⁰ ներկա ծանր վիճակում վախենում էր ձեռք տալ վերքին, որպեսզի հանկարծ այնպես շտաղկեր, որ անհաջող վիրահատման դեպքում դժբախտություն գար իր գլխին: 26. Արքան նայեց լացող և ծայրագույն տաղանայով լի, համարյա ուժասպառ եղած բժշկին և ասաց. «էլ ինչո՞ւ ես դանդաղում և հենց հիմա միանգամից չես ազատում ինձ՝ անկասկած մահվան դատապարտվածին տանջանքներից: Թե դու վախենում ես մեղավոր ճանաչվել, որ ես անբուժելի վերք եմ ստացել»: 27. Այն ժամ, հաղթահարելով կամ բողբոջելով իր վախը, Կրիտոբուլոսը սկսեց համոզել արքային, որպեսզի վերջինս թույլ տա իրեն կապել, մինչ նա կհանի ծայրակալը, քանի որ դա կարող է

ծայրահեղ վտանգավոր լինել նույնիսկ մարմնի աննշան շարժման ժամանակ: 28. Իսկ արքան, ասելով, թե իրեն կապելու կարիք չկա, իր մարմինը հանձնեց բժշկի հայեցողությանը և, ինչպես իրեն ասվել էր, պառկած մնաց լիովին անշարժ: Այդպես վերքը լայնացվեց և, երբ ծայրակալը հանվեց, արյունը հորդեց առատորեն: Ուժերը լքեցին արքային. նրա աչքերը մթազնեցին և նա պառկած էր մեռածի նման: 29. Բժիշկները մթազնեցին փորձեր էին անում զեղերով կանգնեցնելու արյան ապարդյուն փորձեր էին անում զեղերով կանգնեցնելու արյան հոսքը և, ընկերները, կարծելով թե արքան մահացավ, բարձրաձայն լաց ու աղաղակ սկսեցին: Սակայն արյունը, վերջապես, կանգ առավ, աստիճանաբար արքայի գիտակցությունը վերագարծավ, և նա սկսեց ճանաչել շրջապատողներին: 30. Այդ ամբողջ օրը և հաջորդ գիշերը զինված բանակը շրջապատել էր արքայի վրանը: Բոլորը տիտակցում էին, որ ապրում են մեկի շնչով և շքրվեցին այնքան ժամանակ, մինչև չհայտարարվեց, որ արքան քնել է: Փրկության հույս տվող այդ լուրը այստեղից տարածվեց ողջ ճամբարով մեկ:

VI. Յոթ օր բուժելով վերքը, թեև սպին դեռ էր պաթինվել, արքան, լսելով, որ բարբարոսների մեջ հաստատվել է իր մահվան լուրը, հրամայեց երկու իրար կապված նավերի միջև ամեն կողմից երևացող վրան խփել, որտեղից նա կարող էր երևալ բոլոր նրանց, ովքեր կարծում էին, թե նա զոհվել է: Հայտնվելով բնակիչների առջև, նա խորտակեց թշնամու սուտ լուրերի վրա հիմնված հույսերը: 2. Այնուհետև նա հոսանքով նավարկեց ներքև, պահելով իր նավը հիմնական նավատորմից որոշ հեռավորության վրա, որպեսզի թիերի ազմուկը շտանգարի հիվանդին անհրաժեշտ հանգիստը: 3. Ճանապարհի սկզբից հաշված շորթորդ օրը նա հասավ բնակիչների կողմից լքված, սակայն շորթորդ օրը նա հասավ բնակիչների կողմից լքված, սակայն հացով ու անասուններով հարուստ մի երկիր: Այդ տեղը գուր եկավ նրան և այդտեղ թե ինքը հանգստացավ և թե բոլոր զինվորները: Սովորույթ կար, որ արքայի վատառողջության ժամանակ նրա ամենամոտ ընկերներն ու թիկնապահները քնեն պրետորիայի մուտքի առջև: Պահպանելով այդ սովորույթը, այս անգամ էլ շատերը մտան նրա վրանը: 4. Արքան անհանգստացավ և հարցրեց, արդյոք որևէ լուր չե՞ն բերել, եթե բոլորը միասին են եկել, չե՞ն հայտնում արդյոք իրեն թշնամու նոր հարձակման մասին:

5. Սակայն Կրատերոսը, որին հանձնարարված էր արքային

հայտնել ընկերների խնդրանքը, ասաց. «Մի՞թե դու կարծում ես, թե մարդիկ կարող են անհանգստանալ միայն թշնամու հարևանքան պատճառով, թեև ոչ եւ արդեն գտնվի մեր հողաթմբի մոտ, բայց ոչ քո առողջութեան համար անհանգստանալ, ինչպէս այժմ այդպէս է, որը դու չես խնայում: Թող մեր դեմ դավեր նշույթն ուրբան ժողովուրդներ ցանկան, թող զինված մարդկանցով լցենք ողջ աշխարհը, ծածկեն ծովերը նավերով, բերեն անծանոթ դաշտները: Բեզ հետ միասին մենք անհաղթ կլինենք: 8. Բայց աստվածներից ո՞վ կարող է խոստանալ, որ դու՝ մեր լուսատուն ու Մակեդոնիայի հիմնական հենարանը, հավերժ ես լինելու, այն դեպքում, երբ դու այդպիսի կրքոտութեամբ վտանգում ես առողջութիւնդ, մոռանալով, որ զբանով իսկ վտանգի տակ ես դնում նաև այդքան քաղաքացիների կյանքը: 9. Ո՞վ է ցանկանում կամ ի վիճակի է բեզանից հետո ապրել: Մենք այստեղ ենք եկել հետեւելով քո կամքին ու մտահղացումներին և առանց քո առաջնորդութեան մեզանից ոչ ոք չի տեսնի իր տունը: 10. Եթե դու դեռ Գարեհի հետ կովելիս ջինկի Պարսից թագավորութեան համար, ապա ոչ ոք, եթե նույնիսկ ցանկանար, չէր կարողանա շահանալ քո քաջութեամբ ամեն անսակ վտանգի դեպքում, քանզի որտեղ պարգևը համապատասխանում է վտանգին, այնտեղ հաջողութեան դեպքում արդյունքն ավելին է, իսկ անհաջողութեան դեպքում՝ սփոփանքը: 11. Սակայն ո՞վ, ոչ միայն քո զինվորներից, այլև բարբարոսների ցանկացած ցեղի զինվորներից, որոնց հայտնի է քո մեծութիւնը, կհամակերպվի այն մտքին, որ քո կյանքի գնով գրավվի ինչ-որ շնչին քաղաք: 12. Մեր հոգիները սարսափում են այն հիշողութիւններից, որ վերջերս տեսանք: Ես նույնիսկ վախենում եմ ասել, որ եթե մեր հանգեպ ողորմած բախտը չփրկեր բեզ, անհաղթ մարմնի զրահին կդիպչեին ամենատեղի ձեռքերը: Մենք բոլորս, որ շահուէցի ենք բեզ՝ դավաճաններ ենք ու դասալիքներ: 13. Գու իրավունք ունես բոլոր զինվորներին անարգանքի սյունին դամիլու, ոչ ոք չի հրաժարվի մաքրել իր վրայից այն ամոթանքը, որը զսպելու համար ուժ չգտնվեց: Խեղդում եմ բեզ, թույլ տուր մեզ անընդհատ ցույց տալ մեր ոչնչութիւնը քո առջև: 14. Մենք կզնանք, ուր որ հրամայես, մենք մեզ համար անհայտ վտանգներ ու պատվազրկող ճակատամարտեր ենք պահանջում, բայց միայն պահպանիր բեզ այն գործերի համար, որոնք քո վսեմութիւնն են պահանջում: Ան-

արժան թշնամու հետ պայքարելիս փառքը արագ է խավարում, և չկա ավելի ստորացուցիչ բան. բան կորցնել այն այնպիսի տեղում, որտեղ անհնար է այն ցուցարները»:

15. Մոտավորապէս նույն բանն ասացին և՛ Պտղոմեոսը և՛ մյուսները: Անվճռական ծայրերով ու արշունքներով նրանք ազաւում էին արքային վերջ տալ իր արդեն չավարարված փառքի տենչին և հոգ տանել իր, ինչպէս նաև ընդհանուրի փրկութեան մասին: 16. Արքային հաճելի էին ընկերների նման զգացմունքները. նա ամեն մեկին առանձին գրկում էր և խնդրում նստել: 17. Շարժակեղծ սկսված խոսակցութիւնը, նա ասաց. «Շնորհակալութեան, իմ ամենամոլորակսն ընկերներ, իմ հավատարիմ քաղաքացիներ, ոչ միայն նրա համար, որ դուք այսօր իմ առողջութիւնը գնահատում եք ձեր ինքնից թափ, այլև նրա համար, որ պատերազմի հենց սկզբից դուք առիթ բաց չեք թողել ձեր համակրանքն ու հավատարմութեան հավաստիքն արտահայտելու իմ հանդեպ, այնպէս որ ես պետք է խոստովանեմ, որ կյանքն ինձ երբեք այնքան թանկ չի եղել, որքան այն ժամանակ, երբ այն վերածնվեց; որպէսզի ես կարողանամ առաջիկայում էլ հաճույք ստանալ ձեզ հետ ընկերութիւն անելուց: 18. Այնուհանդերձ մեր զգացմունքները նույնը չեն. նրանցը՝ ովքեր պատրաստ են մեռնել ինձ համար և իմը՝ ով զփրակեցում է, որ միայն իմ արիութեամբ եմ արժանացել ձեր համակրանքին: Գուք ցանկանում եք որպէս պարգև ինձանից ստանալ երկարատև, նույնիսկ անսահման ժամանակ, իսկ ես դնահատում եմ իմ գործերը ոչ թե ժամանակի, այլ փառքի շահանիշով: 19. Ես կարող էի, բավարարվելով հայրերի փառքով, մնալ Մակեդոնիայի սահմաններում և այնտեղ, առանց լարվածութեան, սպասել մտալ ու անփառունակ ծերութեան, թեև անբան մարդիկ իրենք չեն կոտում իրենց ճակատագիրը, սակայն, միակ բարիքը համարելով երկարատև կյանքը, հաճախ դատապարտվում են վաղաժամ և դաժան մահովան: Իսկ ես ոչ թե իմ տարիներն եմ հաշվում, այլ հաղթանակները, և եթե հիշեմ բախտի բոլոր նվիրատվութիւնները, ապա կարող եմ ասել, որ արդեն մեծ կյանք եմ ապրել: 20. Սկսելով Մակեդոնիայից, իմ իշխանութեան տակ եմ վերցրել ողջ Հունաստանը, նվաճել եմ Թրակիան և Իլիրիան, իշխում եմ արիբալների ու մարերի վրա, տիրում եմ Ասիային Հելլեսպոնտոսից մինչև Կարմիր ծով: Ահա ես արդեն մոտ եմ աշխարհի ծայրին, որն անցնելով, ես նպատակ

եմ որիւ հայտնաբերել նոր բնութիւն, նոր աշխարհ: 21. Ասիա-
յից Եվրոպայի²¹ սահմանները եւ անցա մի ժամվա ընթացքում
Դաունալով թե մեկ և թե մյուս մալճցամաքների հաղթող, իմ
տիրակալութիւն իններորդ և իմ կյանքի քսանութերորդ տա-
րում²² կարո՞ղ եմ ես արդոք ձեր կարծիքով դադարեցնել իմ
ուղին դեպի փառքը, միայն որին էլ ես նվիրել եմ ինձ ամբողջու-
վին: Հիրավի, ես չեմ հրաժարվի նրանից և որտեղ էլ ճակա-
տամարտեմ, միշտ պիտի դիտակցեմ, որ գործում եմ համաշ-
խարհային թատերաբեմի վրա: 22. Ես փառքով կծածկեմ ան-
հայտ վայրերը, ժողովուրդների համար նոր երկրներ կհայտ-
նագործեմ, որոնց բնութիւնը երկար ժամանակ թաքցրել է նրան-
ցից: Գեղեցիկ կլինի նաև իմ վախճանը այդ ճանապարհին, եթե
միայն ճակատագիրն ինձ չմերժի: Ես այնպիսի կենսածառից
եմ առաջացել, որ ստիպված եմ ցանկանալ ոչ այնքան երկար,
որքան գործերով լի կյանք: 23. Թախանձում եմ ձեզ մտածել այն
մասին, որ մենք միասին այն երկրներն ենք հասել, որտեղ իր
արիութեամբ փառքի է արժանացել կինը: Ի՞նչ քաղաքներ է կա-
ռուցել Շամիրամը, ինչպիսի ժողովուրդներ նվաճել, ինչպիսի՞
գործեր է կատարել: Մենք փառքով դեռ չենք հավասարվել կնո-
ջը և արդեն պետք է բավարարվե՞նք դրանով: Միայն թե ասո-
վածները գիտաիրտ լինեն. առջևում դեռ շատ անելիքներ կան:
24. Սակայն այն, ինչին մենք դեռ չենք հասել, մերը կդառնա,
միայն թե մենք շարժամարհենք, ինչը կարող է տեղ դնել
մեծադրող փառքում: Զերծ պահեք ինձ միայն ներքին թշնա-
միներէից, տնական խարդավանքներից, իսկ Մարսի՝ հետ ես
պայքարի մեջ կմտնեմ առանց վախի: 25. Փիլիպոսը՝ հայրս,
ավելի անվտանգ էր իրեն զգում ռազմաշարքում, քան թատրո-
նում²³. Նա բազմիցս խուսափել է թշնամական ճանկերից և
չկարողացավ խուսափել յուրայինների ձեռքից: Եթե դուք մտա-
րեք որիշ արքաների, ավելի շատ կլինեն նրանք, ովքեր
զոհվել են ներքին, քան օտարերկրյա թշնամիների կողմից:
26. Այնուհանդերձ, քանի որ այժմ առիթ է բնձնուված իրագոր-
ծել շատ վաղուց մտածված իմ գործը, իմ աշխատանքի ու գոր-
ծերի մեծագույն պարզեր կլինի այն, որ իմ մայրը՝ Օլիմպիա-
դան, անմահութեան արժանանա, երբ էլ որ հրաժեշտ տա
կյանքին: Եթե ճակատագիրը թույլ տա, ես ինքս կիրագործեմ
դա, իսկ եթե ճակատագիրը ինձ ավելի շուտ տանի, հիշեցեք
իմ այդ կտակի մասին: Այդ խոսքերից հետո նա ազատ ար-

ձակեց ընկերներին, սակայն դեռ մի քանի օր մնաց նույն տե-
ղում:

VII. Մինչդեռ սա տեղի էր ունենում Հնդկաստանում, վեթ-
չերս արքայի՝ Բակտրայի մոտակայքի դադութում թողնված
հույն զինվորները դավաճանեցին ոչ այնքան այն բանի՝ համար,
որ թշնամաբար էին վերաբերվում Ալեքսանդրին, որքան իրենց
միջև սկսված երկպառակութունների համար սպասվելիք
պատժի վախից: 2. Նրանք սպանեցին իրենց շրջապատի մի
քանի հեղինակավոր մարդկանց, սկսեցին գործի դնել զենքը,
գրավեցին անվտանգութեան մեջ գտնվող և այդ պատճառով
վատ պաշտպանված Բակտրայի ամրոցը և բարբարոսներին
հրահրեցին միանալ իրենց ապստամբութեանը: 3. Նրանց առաջ-
նորդը Աթինոգորոսն էր, որն իրեն արքա էր հռչակել ոչ այն-
քան հանուն իշխանութեան, այլ որպեսզի հայրենիք վեհադաո-
նա իրեն ընդունողների հետ: 4. Նրա ախոյանը՝ ոմն Բիկոն,
նույն ցեղից, սկսեց նրա դեմ դավեր նյութել՝ հրավիրեց նրան
խնջույքի և ոմն մակերինացի Բոքսի օգնութեամբ սպանեց
նրան: 5. Հաջորդ օրը համաժողովի ժամանակ Բիկոնը շատերին
համոզեց, որ ընդհակառակը, Աթինոգորոսն է իր դեմ դավ
նյութել: Սակայն մի քանիսը կասկածեցին Բիկոնին խաբու-
թեան մեջ, և հետզհետե կասկածանքը սկսեց համակել մյուսնե-
րին: 6. Այսպիսով, հույն զինվորները զենքի դիմեցին, որպես-
զի առաջին իսկ հնարավորութեան դեպքում հաշվհարդար
տեսնեն Բիկոնի հետ: Այնուհանդերձ պարագլուխները մեղմե-
ցին ամբոխի զայրույթը: 7. Իր սպասելիքներին հակառակ, այս
անգամ դուրսն ազատելով վտանգից, Բիկոնը, որոշ ժամանակ
անց սկսեց խարդավել իր իսկ փրկարարներին: Երբ նրա դա-
վերն ի հայտ եկան, նրան բռնեցին, նրա հետ միասին նաև Բոք-
սին: 8. Որոշեցին Բոքսին անմիջապես մահապատժի են-
թարկել, իսկ Բիկոնին սպանել տանջալից մահով: Նրա մարմնին
արդեն մոտեցրել էին խոշտանգման գործիքները, երբ հան-
կարծ հույները, անհայտ պատճառներով, խելագարների նման
նետվեցին դեպի զենքերը: 9. Նրանց աղմուկը լսելով, դահիճ-
ները կարծեցին, թե ամբոխի աղաղակներն արգելում են խոշ-
տանգել և ազատ արձակեցին Բիկոնին: 10. Նա, ինչպես որ
կար, մերկ վազեց դեպի հույները: Նրա խղճուկ տեսքը սն-
սպասելիորեն փոխեց զինվորների տրամադրությունը, և նրանք
որոշեցին ներել Բիկոնին: 11. Այսպես, երկու անգամ մահից

փրկվելով, նա հայրենիք վերագարձավ մյուսների հետ, որոնք լքել էին արքայի՝ իրենց տված գաղութը: Ահա թե ինչ էր կատարվում Բակտրայի մոտակայքում և սկյութների սահմանագծում:

12. Այդ նույն ժամանակ արքայի մոտ են ժամանում հարյուր դեպպան վերևում նշված երկու ցեղերի կողմից²⁴: Նրանք եկել էին մարտակոտորելով, բոլորը բարձրահասակ էին, և շքեղ հագնված՝ նրանց կտավի հագուստները նախշակարված էին ոսկով ու ծիրանիով: 13. Նրանք հանձնվեցին արքային և նրան հանձնեցին իրենց քաղաքներն ու հողերը: Նրանք առաջին անգամ վստահեցին շատ սերունդների ոչնչով չճնշված ազատութունը և հանձնվեցին նրա գթասրտությանը աստվածների ներշնչանքով, այլ ոչ թե վախից, քանզի նրանց զինվորական ուժերը ջլատված չէին: 14. Արքան, խորհուրդ ժողովելով, նրանց առավ իր հովանավորության տակ և նույն հարկը դրեց, որը երկու ցեղերն էլ վճարում էին արաքոսիացիներին: Բայց այդ նրանցից պահանջեց 2500 հեծյալ, և բարբարոսները խոնարհություն քոչորք կատարեցին: 15. Այնուհետև դեսպաններն ու բարբայրիկները հրավիրվեցին ճոխ ու հանգիստվոր խնջույթի: Հարյուրավոր ոսկեզօծ մահիճներ, որոնք դրված էին իրարից ոչ մեծ հեռավորության վրա, ծածկված էին գորգերով, որոնք պսպղում էին ոսկով ու ծիրանիով: Այդ խնջույքում ցուցադրվեց և պարսկական հինավուրց պերճությունը և մակեդոնացիների նոր փոխառվածները, որոնք իրենց ծայրահեղությունք արաքալոր ձևեր էին ընդունել: 16. Խնջույթին մասնակցում էր նաև աթենացի Դիոքսիպոսը՝ հռչակավոր բռնցքամարտիկը, արքայի հայտնի և սիրված իր ուժի ու արվեստի համար: Չարլեզու Կաթանանները կեսկատակ կեսլուրջ ասում էին, թե զորքի հետևից զինվորական թիկնոցով մի անբան կենդանի է քայլում, նրբ իրենք մարտի են մտնում, նա օժվում է յուզով, պատրաստելով փորը խնջույթի համար: 17. Հենց դրանում էլ սկսեց նրան նախատել խնջույթի ժամանակ զինված մակեդոնացի Հորատոսը և պահանջել, որ եթե նա իսկական տղամարդ է, թող հաջորդ օրը իր հետ թրով կռվի, արքան էլ, թող մեկին խելառի տեղ դնի, մյուսին՝ վախկոտի: 18. Քմժիժաղ տալով սրա ուղեմատենը տաքարյունության վրա, Դիոքսիպոսը ընդունեց նրա առաջարկը: Հաջորդ օրը նրանք պահանջեցին մրցույթան ափելի լուրջ ձև, և քանի որ արքան չկարողացավ նրանց հետ կանգնեց-

նել գրանից, իր համաձայնությունը տվեց նրանց պայմաններին: 19. Շատ զինվորներ հավաքվեցին, սրանց մեջ կային նաև Դիոքսիպոսին համակրող հույներ: Մակեդոնացին լրիվ սպառազինվել էր՝ ձախ ձեռքով բռնել էր պղնձե վահանը և «սարիս» կոչվող նիզակը, աջ ձեռքով՝ տեղը և մեջքին թուր կապել, ասես պատրաստվում էր կռվել մի քանի հոգու հետ միաժամանակ: 20. Դիոքսիպոսը փայլում էր վրան քսած յուզից և դարդարված էր պսակով, ձախ ձեռքում բռնել էր ալ կարմիր թիկնոց, աշում մեծ, կոշտակավոր մահակ: Այդ հանգամանքը բոլորի մեջ դրավիչ հետաքրքրություն առաջացրեց, քանի որ մերկ մարդուն զինվածի դեմ ելնելը ոչ միայն անխոհեմություն էր թվում, այլև խելագարություն:

21. Այսպիսով, մակեդոնացին, համոզված, որ կարելի է և սպանել հեռովից, նետեց տեղը հակառակորդի վրա: Դիոքսիպոսը թեթև շարժումով խույս տվեց դրանից, բայց մինչ թշնամին ձախ ձեռքից աջն էր տեղափոխում նիզակը, նա մոտեցավ և մահակի հարվածով երկու կես արեց նիզակը: 22. Կորցնելով երկու նետողական զենքերը, մակեդոնացին սկսեց թուրը վրայից արձակել: Մինչ նա զբաղված էր դրանով, Դիոքսիպոսը խփեց նրա ոտքերին և, գետին գցելով, խլեց նրանից թուրը, ոտքը դրեց պռակածի վզին, թափ առավ մահակով և շարդուփշուր էր անելու նրա գլուխը, եթե արքան չկանգնեցներ նրան: 23. Այդ տեսարանի ելքը հաճելի չէր ոչ միայն մակեդոնացիներին, այլև Ալեքսանդրի համար, քանի որ դրան ներկա էին նաև բարբարոսները. նա երկուզում էր, որ մակեդոնացիների արիությունը նրանց աչքում կարող է երեքալ: 24. Այդ պատճառով նա սկսեց ականջ դնել շարակամ անձանց դիտողություններին²⁵: Այսպես մի քանի օր հետո խնջույթներից դիտավորյալ վերացրին ոսկե ամանները և ծառաները սպասարկում էին արքային այնպես, ասես կորցրել են այն, ինչ իրականում իրենք էին վերացրել: 25. Սակայն հաճախ մարդիկ ամոթի զգացումից ավելի քիչ են կայունություն ցուցաբերում, քան իրենց մեղքի գիտակցումից: Այդպես էլ Դիոքսիպոսը շփմացավ իր կողմը նետված խեթ հայացքներին, որոնք ասես դատապարտում էին նրան որպես գողի²⁶: Հեռանալով խնջույթից, նա արքային հասցեագրված նամակ գրեց և սրով ինքնասպան եղավ: 26. Արքան ծանր տաքավ նրա մահը, ենթադրելով, որ այն ոչ թե զլջման, այլ զայ-

բուլթի արտահայտում էր, առավել ևս, որ նրան ատողը ոչ մի դիմակով չէր կարողանում սքողել իր շփոթից ավելի հրճվանքը:

VIII. Է՛նտ ուղարկված հնդկական դեսպանները մի քանի օր անց վերադարձա՞նք ընծաներով: Նրանք բերեցին 300 ձի, 1030 մարտակառք լծված շորսական ձիերով, կտավե հագուստներ, հագար հնդկական վահաններ, հարյուր տաղանդ սպիտակ երկաթ²⁷, ինչպես նաև հազվագյուտ մեծության առյուծներ և վագրեր, բոլորն էլ ձեռնասուն, հսկայական մողեսների կաշիներ²⁸ և կրիայի ոսկորներ (զրահներ): 3. Այնուհետև արքան հրամայում է կրահերոսին առաջնորդել ցամաքային զորքը գետին մոտ տարածության վրա, որով ինքը մտադրվել էր նստվարկել: Նա նստվերի վրա նստեցրեց իր սովորական ուղեկիցներին և գետն ի վար տարավ դեպի մալերի սահմանները²⁹, Այնտեղից նա գալիս է հնդկական ուժեղ ցեղի՝ սարարկների մոտ, որոնց իշխանությունը ժողովրդի և ոչ արքաների ձեռքում էր: Նրանք շորք էին կազմել վաթսուն հազար հետևակայինից և վեց հազարանոց հեծելազորից, այդ ուժերին հետևում էր 500 մարտակառք: Նրանք ընտրել էին ռազմական արիությունը աչքի ընկած երեք առաջնորդների: 5. Նրք գետի մոտակայքում բնակվողները (նրանք շատ բնակավայրեր ունեին գլխավորապես գետերի ափին) տեսան, որ ողջ գետը, որը նրանց տեսազաշտում էր, լիքն է նավերով և որ փայլփլում են հազարավոր տարրեր զենքեր, անսովոր տեսարանից վախեցած, կարծեցին, թե դա աստվածների բանակի հարձակումն է երկրորդ հայր կիբերոսի գլխավորությամբ, որի անունը քաջ հայտնի էր այդ ցեղին: 6. Բացի այդ, վախեցած բարբարոսների լողողությունը շանթահարված էր զինվորների գոյուններից, թիակների հարվածներից, տարբեր լեզուներով խոսող իրար քաջալերող նավաստիների բացականություններից: 7. Այսպես, բոլորը վազում են դեպի իրենց զինվորները և զոռում, որ խելագարություն է աստվածների հետ մարտի մտնելը. իբր անհնար է հաշվել անպարտելի հերոսներին տանող նավերի քանակը: Այդ գոռոզոցը այնպիսի սարսափ տարածեց նրանց զորքի վրա, որ նրանք արքայի մոտ դեսպաններ ուղարկեցին ողջ ցեղի հնազանդությունը հավաստիացնելու:

8. Ողորմածաբար ընդունելով նրանց, արքան շորրորդ օրը հասավ մյուս ցեղերին: Սրանց քաջությունն էլ մյուսներից ավելի չէր: Այսպես, նոր քաղաք հիմնելով այնտեղ, որը նա հրա-

մայեց Ալեքսանդրիա անվանել, արքան մտավ այսպես կոչված մուսիկանների³⁰ երկիրը: 9. Այստեղ նա հարցաքննեց իր իսկ նշանակած սատրապ Տերիոլտին, քանի որ նրա դեմ բողոքում էին հենց իրենք՝ պարսպամիսադները. մերիացնելով նրան ազահուսթյան և անբարտավանության բազմաթիվ դրսևորումներում, արքան հրամայեց մահապատժի ենթարկել նրան: 10. Բակտրիացիների կառավարիչ Օբսիարտը ոչ միայն արդարացվեց, այլև, որպես սիրո նշան, նրա իշխանության սահմանները ընդարձակվեցին, Իրեն ենթարկելով մուսիկաններին, արքան պաշտպանության նպատակով նրանց քաղաքում կայազոր թողեց: 11. Այդտեղից անցան մեկ այլ հնդկական ցեղի՝ պրեստների մոտ: Նրանց արքան Պորտիկանն էր. նա իր մարդկանցից կազմված մեծ ջոկատով փակվել էր ամբացված քաղաքում: Ալեքսանդրը գրավեց այն պաշարման կրորդ օրը: 12. Ամբոցում պատսպարված Պորտիկանը Ալեքսանդրի մոտ դեսպաններ ուղարկեց, որպեսզի համաձայնության գան հանձնման պայմանների մասին, բայց նրանք դեռ չէին հասցրել զալ արքայի մոտ, երբ երկու աշտարակ զորդունով փրվեցին: Նրանց փլատակների միջով մակեդոնացիները ներխուժեցին ամբոց, որի գրավման ժամանակ Պորտիկանը, մի քանի պաշտպանների հետ հարձակումը հետ մղելիս, սպանվեց:

13. Այսպես, ավերելով ամբոցը և ստրկության վաճառելով բոլոր գերիներին, արքան մտավ Սամբի արքայի տերության սահմանները. այնտեղ շատ քաղաքներ ողորմածաբար ընդունելով, այդ երկրի ուժեղագույն քաղաքը³¹ նա գրավեց ականահատման միջոցով: 14. Այդ գործում անփորձ բարբարոսները թշնամիներին հրեշների տեղ գրեցին, քանի որ սրանք քաղաքի կենտրոնում գետնի տակից զինված դուր: Էին գալիս, թեև մինչ այդ փորելու ոչ մի հետք չկար: 15. Այդ մարզում, ըստ կլիտարքոսի վկայության, սպանվեց մինչև 80 հազար հնդիկ. բազմաթիվ գերիներ ստրկության վաճառվեցին: 16. Մուսիկանները կրկին պառակտվեցին: Նրանց ճնշելու համար ուղարկվեց Պիթոնեսը: Նա բռնեց ցեղի առաջնորդին, որը և ապստամբության ղեկավարն էր, և բերեց նրան արքայի մոտ: Խաչելով նրան, Ալեքսանդրը վերադարձավ դեպի գետը, որտեղ նավատորմին հրամայված էր սպասել իրեն: 17. Այնտեղից նա նավարկման շորրորդ օրը մոտեցավ Սամբի մարզի փոքրիկ մի քաղաքի: Սամբը՝ ինքը վերջերս հանձնվել էր արքային, սակայն քաղա-

քացիները չընդունեցին նոր իշխանությունը և փակեցին դարպասը: 18. Արհամարհանքով վերաբերվելով նրանց փոքրաթվությունը, արքան հրամայեց հինգ հարյուր ազրիանացիներին մոտենալ քաղաքի պարիսպներին, այնուհետև նահանջելով, խորամանկությամբ դուրս բերել թշնամուն քաղաքի ներսից: Նրանք, անկասկած, կհետևեն ազրիանացիներին, հավատալով, որ վերջիններս գիմել են փախուստի: 19. Ազրիանացիներն այդպես էլ արեցին. գրգռելով հակառակորդին, նրանք հանկարծակի փախան, իսկ բարբարոսները նետվեցին նրանց հետևից և դեմ դիմաց դուրս եկան ուրիշ զինվորների, որոնց շարքերում էր ինքը՝ արքան: Մարտը վերականգնվեց և երեք հազար բարբարոսներից 600-ը սպանվեցին, հազարը գերվեցին, մնացածները փակվեցին քաղաքում:

20. Սակայն վերջում այդ հաղթանակի արդյունքն այնքան էլ բարենպաստ չէր, որքան թվում էր սկզբում. բարբարոսները կռվել էին թունա՝ որված զենքերով: Այդ պատճառով վիրավորվածները անսպառ լի մահանում էին, ու բժիշկները չէին կարողանում որոշել այդքան ծանր մահվան պատճառը, քանզի անրուժելի էին նույնիսկ թեթև վերքերը: 21. Բարբարոսները հույս ունեին նետահարել անզուշորեն և նույնիսկ թեթևամտորեն վարվող արքային: Իսկ նա, կռվելով առաջին շարքերում, պատահամբ մնաց անվնաս: 22. Արքան այդ ժամանակ անհանգստացած էր հատկապես Պտղոմեոսի ճակատագրով. վերջինս թեթևակի վիրավորված էր ձախ ուսից, սակայն նրան սպառնացող վտանգը վերքից ավելի էր: Նա արքայի հետ արյունակցական կապ ուներ. նույնիսկ պնդում էին, թե Կ. Ա. Փիլիպոսի որդին է, և, անկասկած, նրա հարձի զավակը: 23. Նա արքայի թիկնապահն էր, քաջարի մարտիկ և առավել պիտանի օգնական խաղաղ ժամանակ: Նա շափավորված քաղաքական դարձիչ էր, հաճելի՝ վարվեցողության մեջ, մարդամոտ. նրանում արքայական գոռոզության հետք անգամ չկար: 24. Դժվար էր ասել, թե ո՞ւմ է նա ավելի թանկ՝ արքային թե ժողովրդին: Այժմ առաջին անգամ նա կարող էր իմանալ չորայինների՝ իր հանգիստ տածած զգացմունքների մասին. մակեդոնացիները դժվարին պահին նրա հանգիստ ցուցաբերած սիրով կանխորոշեցին նրա ապագա փառավոր ճակատագիրը: 25. Նրանք Պտղոմեոսի հանգիստ ցուցաբերեցին ոչ պակաս հոգատարությամբ, քան արքայի, և արքան, հոգնած ճակատամարտից ու տաղնապից,

չէր հեռանում նրանից և նույնիսկ հրամայեց նրա վրանը տանել իր անկողինը: 26. Հենց նա պտոկեց անկողինն, միանգամից խորքուն մտավ: Արթնանալով, նա պատմեց, որ երազում իրեն հրեշ է հայտնվել, բերանով խոտ բռնած, որն էլ նա ցույց է տվել որպես թույնի դեմ միջոց: 27. Ընդ որում, արքան ճշգրիտ նկարագրեց այդ խոտաբույսի գույնը և հաստատում էր, որ եթե որևէ մեկը իրեն ցույց տա այն, նա կճանաչի: Խոտաբույսը գտան, քանի որ շատ շատերը միանգամից նետվեցին փնտրելու, և նա դրեց այն Պտղոմեոսի վերքին: Ցավն անմիջապես ընդհատվեց, իսկ շուտով և վերքը սպիացավ: 28. Իսկ բարբարոսները, տարահամուզվելով իրենց առաջին հաջողության մեջ, ամբողջ քաղաքով հանձնվեցին արքային: Այստեղից Ալեքսանդրը շարժվեց դեպի մոտակայքում գտնվող պատալները²² ցեղը: Նրանց արքա Մերիսը լքել էր քաղաքը և փախել էր լեռները: 29. Այսպես Ալեքսանդրը գրավեց քաղաքը և ամայացրեց երկիրը: Որպես ավար նրանք վերցրին մեծ քանակությամբ խոշոր ու մանր եղջերավոր անասուններ, գտան հացի մեծ պաշարներ: 30. Վերցնելով գետին քաջ ծանոթ ուղեկցորդների, արքան նավարկեց մինչև կղզի, որը դուրս էր եկել ջրից գրեթե գետի մեջտեղում:

IX. Այստեղ նա ստիպված եղավ ավելի շատ մնալ, քանի որ անփութորեն հսկվող ուղեկցորդները փախան, և նա մարդիկ ուղարկեց ուրիշներին բերելու: Նորերին չգտան, սակայն օվկիանոսը տեսնելու և աշխարհի ծայրը հասնելու ձգտումը ստիպեց արքային ուղեկցորդների բացակայության պայմաններում իր և բազմաթիվ խիզախ այրերի բախտը հանձնել անծանոթ գետին: 2. Այսպիսով, նրանք սկսեցին նավարկել, լրիվ անտեղյակ այն երկրին, որտեղով անցնում էին: Հեռու էր արդյոք մինչև ծովը, ի՞նչ ցեղեր էին ապրում այստեղ, որքանո՞վ էր հանգաբար գետաբերանը, կարո՞ղ էին արդյոք նավարկել ռազմաճակատները. այս բոլորի մասին նրանք միայն ազոտ պատկերացում ունեին: 3. Նման շտաժոված ձեռնարկման միակ սփոփանքը ամեն ինչում ուղեկցող անփոփոխ հաջողությունն էր: Նրանք մոտ 400 ասպարեղ անցել էին, երբ նավավարներն ասացին արքային, որ ծովային օդ են զգում և համոզված են, որ օվկիանոսը հեռու չէ: 4. Ուրախացած, նա համոզում է թիավարներին ավելի ուժ տալ թիերին. նրանց համար այդքան ցանկալի ճանապարհի վերջը մոտ է. ձեռք է բերված լիարժեք փառք, ոչինչ չի խոշորն-

դոտում նրանց արիութեանը: Աշխարհի վերջը նվաճված է առանց մարտի ու արյունահեղութեան. բնութիւնը՝ ինքն էլ սրանով ավարտվում է. շուտով նրանք կտեսնեն այն, ինչ հայտնի է միայն անմահներին: 5. Նա նավից մի քանի հոգու փոխարէն, որպէսզի մի քանի քոչվորներ բռնեն, հուսալով նրանցից որևէ բան իմանալ երկրի մասին: Սրանք ամեն տեղ հետախուզեցին և, վերջապես, գտան լավ քողարկված վրաններ: 6. Այն հարցին, թե հետո՞ է արդո՞ք ծովը, քոչվորները պատասխանեցին, որ ոչ մի ծովի մասին իրենք չեն լսել, բայց երեք օրվա ճանապարհ անցնելով կարելի էր հասնել դառը ջրի, որը փոխարինում է քաղցրին: Պարզ էր, որ մարդիկ այդպես են խոսում ծովի մասին, անտեղյակ նրա մյուս հատկութեաններին: 7. Այսպիսով, նավաստիները սկսեցին թիավարել ավելի ջանասիրտությամբ և օր օրի, որքանով ավելի էր մոտենում նրանց հույսերի իրականացումը, մեծանում էր նաև նրանց ոգևորութեանը: Երրորդ օրը, վերջապես, նրանք մոտեցան ծովին, որը դեռևս թույլ ալերախութեամբ էր խառնվում գետի ջրերին: 8. Այստեղ, ալիքների դիմադրութեան պատճառով, նրանք դանգաղորեն մոտեցան գետի մեջտեղում դանդաղ եմ մի կղզու, խարսխեցին նավերը և գնացին սնունդ հայթայթելու, չկանխատեսելով անսպասելիորեն իրենց վրա հասնող փորձանքը:

9. Մոտավորապես ժամը երեքն էր, երբ սահմանված ժամին օվկիանոսը սկսեց բարձրանալ և հետ մղել գետի ջրերը³³: Սկզբում այն դանդաղ էր, իսկ հետո սկսեց հոսել ավելի մեծ ուժով, բան սովորաբար հոսում էր իր հունով: 10. Օվկիանոսի այդ հատկութեանները հայտնի չէին Ալեքսանդրի մարդկանց, և նրանց թվում էր, թե հրաշք են տեսնում կամ էլ աստվածներն են զայրացել: Իսկ ծովը շարունակում էր բարձրանալ և հեղեղել մինչ այդ շոր փերերը: 11. Ալիքները վեր հանեցին նավերը և ցաք ու ցրիվ արին, ողջ նավատորմը այնպես, որ փոխարէն մարդիկ անսպասելի պատահասից սարսափած սկսեցին ամեն կողմից վազել դեպի նավակայանը: 12. Մակայն իրարանցման մեջ նույնիսկ արագաշարժութեանը չօգնեց: Ոմանք երկար փայտերով նավերը մոտեցնում էին ցամաքին, ուրիշները նստած փորձում էին գործի գնել թիերը: 13. Ոմանք շտապում էին հեռանալ փոխ, առանց սպասելու նրանց, ովքեր պետք է նավարկեին իրենց հետ, և դժվարությամբ էին շարժման մեջ գնում դանդաղաշարժ և անհնազանդ նավերը: Մյուս-

ներին չէր հաջողվում նավերի վրա բարձրացնել ամեն կողմից լողալով մոտեցող մարդկանց. արագորեն գործողներին խանգարում էր նաև մեծաթիվ մարդկանց խոնավածութեանն ու աշխատութի պակասը: 14. Աններդաշնակ ու համաձայնութեան չեկող աղաղակները, որոնք մեկ կողմ էին անում մարդկանց սպասել, մեկ՝ շտապել, խանգարում էին նրանց առաջնորդել ոչ միայն տեսողությամբ, այլև սողողությամբ: 15. Զէին կարողանում օգնել նաև նավավարները, քանի որ աղմուկից նրանց ոչ ոք չէր լսում և ջրում ցրիվ եկած մարդիկ սարսափից չէին կարողանում կատարել նրանց հրամանները: 16. Այսպես նավերը սկսեցին բախվել և խանգարել միմյանց, թիերը՝ շարժվել կարելի էր կարծել, որ դա ոչ թե մի նավատորմի կայան էր, այլ երկու թշնամական նավատորմների ծովային ճակատամարտ: 17. Նավերի բթերը խփված էին նավախելերին, հետևից եկող նավերը, հրելով առաջիններին, շեղում էին նրանց իրենց ուղուց. բոլորովա՞ծ մարդիկ սկսում էին իրար ծեծել:

18. Մակերնթացութեան արդեն ողողել էր գետի շրջակայքի բոլոր դաշտերը, այնպես որ բլուրները փոքրիկ կղզիների նման ջրից դուրս էին ցցվել, դեպի ուր շտապում էին լողալով մոտենալ նավերից հետ մնացածները: 19. Յրված նավատորմի մի մասը կանգնած էր խոր ջրի վրա, օրորվելով ալիքներից, մի մասն էլ, քանի որ ջուրը ծածկել է գետնի անհարթութեանները, խրվել էր ծանծաղուտներում, երբ հանկարծ տեղի ունեցավ մեկ այլ, ավելի սարսափելի երևույթ: 20. Մովը սկսեց նահանջել ալիքները աղմուկով հետ գնացին, հասնելով իրենց նախկին մակարդակին. ծովի ջրով թիշ առաջ ծածկված գետինը մերկացավ: Նավերը շուտ էին գալիս մի քանիսը բթի վրա, մյուսները՝ նավակողի: Ափը ծածկված էր սարքերով, ղեկերով, տախտակների ու թիակների կտորտանքով: 21. Զինվորները ոչ համարձակվում էին փոխել, ոչ էլ նավերի վրա մնալ, աճրողը ծամանակ սպասելով նոր, ավելի սարսափելի երևույթների: Նրանք չէին հավատում, որ տեսնում են, թե ինչ է կատարվում իրենց հետ՝ ցամաքում նավարկելուց, գետում՝ ծով: 22. Մակայն դրանով աղետը դեռ չավարտվեց: Անտեղյակ, որ շուտով նոր մակերնթացութեանը վերագարձնելու է ծովը և վեր հանելու նավերը, նրանք սովահարութեան և ծայրահեղ աղետ էին կանխատեսում: Բացի այդ, փոխ սողում էին ալիքների թողած սարսափելի ծովային հրեշները:

23. Արդեն գիշերը վրա էր հասնում, և արքան, նույնպես հուսալքված, տրվեց մռայլ մտորումների: Սակայն հոգեքը շկտրեցին նրա անասան ոգին. ողջ գիշեր նա անցկացրեց զիտաշտարակի վրա և զինվորներ ուղարկեց գեպի գետաբերան, հետևելու, թե երբ է սկսելու ջուրը բարձրանալ և հայտնելու այդ մասին, 24. Նա հրամայում է նաև նորոգել վնասված նավերը, ալիքները մոտենալու ժամանակ բարձրացնել ընկածները և պատրաստ լինել այն պահին, երբ ծովը կսկսի հեղեղել ցամաքը: 25. Ողջ գիշերը նա անցկացրեց առանց քնելու և խրատներ տալով: Առավոտյան կողմ արագորեն վերադարձան հեծյալները, և մակընթացությունն անմիջապես սկսվեց: Սկզբից դանդաղ շարժվող ալիքները սկսեցին բարձրացնել նավերը, իսկ հետո, հեղեղելով ողջ ափը, նրանք բշեցին ամբողջ նավատորմը: 26. Մովի և գետի ափերը թնդացին զինվորների և նավաստիների ուրախ գուշումներից, որոնք անշափ հրճվում էին անսպասելի փրկության դալստով: Նրանք զարմանքով հարց ու փորձ էին անում, թե որտեղից անսպասելիորեն վերադարձավ ծովը, ո՞ր էր այն հեռացել նախորդ օրը, ինչպիսին է այդ տարերքի բնությունը՝ կամայական է թե ենթարկվում է ժամանակի կանոններին: Տեղի ունեցածից արքան գլխի ընկավ, որ արևածագից հետո դա կայուն ժամանակահատված է: Մակընթացության մասին նախազգուշացնելու նպատակով, նա գիշերվա կեսին մի բանի նավերով իջավ գետի ստորին հոսանքը: Դուրս գալով գետաբերանից, նա շոքս հարյուր ասպարեզ անցավ ծովով. վերջապես բավարարելով իր ցանկությունը, զոհեր մատուցելով աւտվածներին՝ ծովի հովանավորողներին, նա վերադարձավ գեպի իր նավատորմը:

X. Այստեղից նավատորմը նավարկեց գետն ի վեր և հաջորդ օրը կանգ առավ լճի մոտակայքում: Շատերը, ծանոթ լինելով նրա հատկություններին, տուժեցին, անզգուշորեն ջուրը մտնելով: Նրանց մարմինները քոսով ծածկվեցին և ուրիշների հետ շփվելիս վարակում էին նրանց: Բուժվում էին յուզով: 2. Այնուհետև առաջ ուղարկելով կեռնապատին ջրհորներ փորելու այն ճանապարհին, որով նա մտածում էր տանել իր զորքը ցամաքային տարածքով, ինքը՝ արքան մնաց զորքի հետ, սպասելով գարնանը³⁴: 3. Այդ ժամանակ նա մի բանի քաղաք հիմնադրեց: Մովային գործում փորձառու նեարքոսին և Օնեսիկրիտոսին հրամայեց մի բանի ամուր նավեր իջեցնել ծովը և նավարկել,

բանի դեռ վտանդ չի սպառնա, և ուսումնասիրել այդ ծովի բնությունը: Երբ նրանք ցանկանան վերադառնալ իր մոտ, նրանք կարող են դա անել նույն գետով կամ Եփրատով: 4. Երբ ձմեռը մեղմացավ, նա այրեց ավելորդ նավերը և իր զորքը տարավ ցամաքով: 5. Մեն անցումով նա ժամանեց արաբիտների երկիրը, այնտեղից նույնքան ժամանակում հասավ գեղորոտների մարզը: Այդ ազատ ժողովուրդը, համընդհանուր հավաք կազմակերպելով, հանձնվեց արքային. հանձնվածներից նա ոչինչ չպահանջեց, բացի մթերքից: 6. Այստեղից հինգերորդ օրը նա մի գետի հասավ, որը տեղաբնակները արաբական էին անվանում: Այստեղ նա մտավ ջրով աղքատ մի երկիր, որն անցնելով եկավ օրթիտների մոտ: Այնտեղ նա զորքի մեծ մասը հանձնեց Հեփեստիոնեսին: Թեթևազենների զորամասերը կիսեց Պտղոմեոսի և Լեոնատոսի միջև: 7. Այդ երեք ջոկատները միաժամանակ թալանեցին հնդիկներին. նրանցից մեծ ավար վերցվեց: Մովափնյա շրջանում նրանց սնանկացնում էր Պտղոմեոսը, մնացածներին ինքը՝ արքան, մյուս կողմից էլ Լեոնատոսը: Այս երկրում էլ նա քաղաք հիմնեց, ուր արաբոսիացիների բնակեցրին:

8. Այստեղից նա թափանցեց ծովի ափին բնակվող հնդիկների մոտ: Նրանք լայնարձակ ու ամայի երկիր ունեն ու նույնիսկ հարևանների հետ ոչ մի առևտրական կապեր չունեն: 9. Բնությունից խիստ բարբեր ունենալով, նրանք լիովին վայրենացել էին մենախոսության մեջ: Նրանք երբևէ եղունգներ չեն կտրում, մաղերը խուզված չեն և զզվված են: 10. Նրանք իրենց հյուղակիները կառուցում են խեցիներից և ծովից դուրս նետված ալլ իրերից: Հագնում են գազանների մորթիներ, սնվում ապրիտած ձկնով ու ծովի դուրս նետած կենդանիների մսով: 11. Սպառելով սեփական պաշարները, մակեդոնացիները կարիքի մեջ ընկան, հետո սովը վրա տվեց և սկսեցին սնվել արմավենու արմատներով, քանի որ այդտեղ միայն այդ ծառերն էին աճում: 12. Իսկ երբ այդ սնունդն էլ սկսեց չբավականացնել, նրանք մորթեցին բեռնակիր անասուններին, լինայիցին նույնիսկ ձիերին, և երբ բեռները կրելու համար անասուն չմնաց, նրանք կրակի մատենցին թշնամուց վերցրած այն ավարը, հանուն որի նրանք հասել էին արևելյան ծայրագույն երկրները: 13. Մովին հետևեցին հիվանդությունները. վատ սննդի անսովոր համը, ճանապարհի դժվարություններն ու ողու ճնշված վիճակը օժանդակում էին դրանց տարածմանը, և անհնար էր առանց

մարդկային կորուստները: ոչ տեղում մնալ, ոչ էլ առաջ ընթա-
նալ: Ճամբարում նրանց ճնշում էր քաղցը, ճանապարհին՝ ավե-
լի շատ հիվանդությունները: 14. Սակայն ճանապարհին այն-
քան շատ դիակներ չէին մնում, որքան կիսակենդան, մահացող
մարդիկ: Բոլորի հետևից գնալ չէին կարողանում նույնիսկ թեթև
հիվանդները, քանի որ ջոկատի առաջխաղացումը գնալով արա-
զանում էր. մարդկանց թվում էր, որ ինչքան ավելի արագ շարժ-
վեն առաջ, այնքան ավելի մոտ կլինեն իրենց փրկությունը: 15.
Այդ պատճառով հետ մնացողները օգնություն էին խնդրում ծա-
նոթներից ու անծանոթներից: Բայց նրանց տեղափոխելու հա-
մար բեռնակիր անասուններ չկային, իսկ զինվորները հազիվ
իրենց զենքն էին քարշ տալիս, և նրանց աչքերի մեջ գալիք պա-
տուհասների սարսափն էր: Դրա համար էլ նրանք նույնիսկ
չէին շրջվում յուրաքանչյուրի հաճախակի կանչերին. սարսափի
զգացումը խեղդում էր կարեկցանքը: 16. Իսկ լքվածները վկա-
յակոչում էին աստվածներին և բոլորի համար ընդհանուր սըր-
բերին և արքայից օգնություն էին խնդրում, սակայն զուր. ոչ
որ նրանց ականջ չէր դնում: Այնժամ, հուսահատությունից
դաժանացած, նրանք մյուսներին ցանկանում էին նույն ճակա-
տագիրը, ինչ իրենց էր վիճակվել, ցանկանում նրանց նման
դաժան բարեկամներ ու բնկերներ ունենալ:

17. Արքան, որ տանջվում էր վշտից ու մտքից, քանի որ
հենց ինքն էր այդքան տառապանքների պատճառը, մարդիկ
ուղարկեց պարթևների սատրապ Թրատաթերին մոտ, որպեսզի
սա ուղտերով մթերք ուղարկի. մյուս մոտակա գավառների կա-
ռավարչներին էլ նա տեղեկացրեց իր աղետալի վիճակի մա-
սին: 18. Սրանք չհապաղեցին օգնության հասնել: Այդպիսով,
սովից փրկված զորքը, վերջապես, հասավ Գեղոտսիայի սահ-
մանները: 19. Մարդը, ուր արքան կանգ առավ զինվորների
հյուսիսում ուժերը վերականգնելու, շափազանց առատ էր գա-
նազան պաշարներով: Այստեղ նա նամակ ստացավ Լեոնատո-
սից, որտեղ հայտնվում էր, որ նա հաջողությամբ կռվել³⁵ է
օրիտների ութհազարանոց հետևակի և հինգ հարյուր հեծյալ-
ների դեմ: Կրատերոսից նույնպես լուր եկավ, որ պառակտվել
ցանկացող ազնվազարմ պարսիկներ Օզիսը և Զարիսապը բռն-
վել են և շղթայվել: 20. Մարդի զեկավար նշանակելով Սիրիբ-
տին (նրա կառավարիչ Մեհունը հանկարծակի մահացել էր),
արքան ինքը շարժվեց Կարմանիա: 21. Այդ ցեղի սատրապը

Ասպաստան էր Կասկած կար, որ սա ինչ-որ հեղաշրջում էր
ծրագրել, քանի ղեկ արքան գտնվել էր Հնդկաստանում: Երբ նա
արքային ընդառաջ նլավ, արքան բարեհամբույր վեճաբերվեց
նրան, բողաբկեղով իր ցատուժը, և պահպանեց նրա նախկին
պատվալոր պաշտոնը, աչքաբեղով ամբաստանության իսկու-
թյան ստուգմանը:

22. Երբ, այնուհետև, բլուր էնթալ: մարդերի կառավարչ-
ները, ինչպես նրանց հրամայված էր, ուղարկեցին մեծ բաժա-
կությամբ ձիեր, քարշող ու բեռնակիր անասուններ, արքան բա-
ժանեց զրանք բոլոր նրանց միջև, ովքեր դրանց կարիքն ունեին:
23. Այդպես լրացրեցին նաև զենքի պակասը, քանի որ նրանք
արդեն մոտ էին ոչ միայն խաղաղ, այլև հարուստ Պարսկաս-
տանին: 24. Այսպիսով, ինչպես վերևում էր նշվել, հայր կի-
բերոսի հետ մրցելով ոչ միայն այդ ժողովուրդների նկատմամբ
տարած հաղթանակներով, այլև փառքով, մարդկային հպար-
տություն սահմաններն անցած արքան որոշեց անցկացնել առա-
ջին անգամ իր սահմանած հաղթական երթը կամ բարոսառոն
կաղմակերպել: 25. Բնակավայրի ճանապարհները, որով ինքն
անցնելու էր, հրամայեց զարգարել ծաղկեպսակներով, աների
դռների առջև զինով լիքը կարասներ կամ այլ մեծ անոթներ
դնել, սալերի վրա տախտակներ դնել, որպեսզի դրանց վրա
ավելի շատ զինվորներ տեղավորեն, և զարգարել վրանների
նման, ծածկելով դրանց մի մասը սպիտակ հագուստներով,
մյուսները թանկարժեք ծաղկավոր շորերով: 26. Առջևից գնում
էին բաղմազույն սյակներով զարգարված բնկերները և ար-
քայական կոհորտան. տարբեր կողմերից լավում էին քնարների
ձայները և սրնդահարների երգեցողությունը. խնջույք անող
զինվորները գնում էին սալերի վրա, որոնք հնարավորին շափ
հարզարված էին, հատկապես փայլուն զենքերով: Ինքը՝ արքան
և նրա ուղեկիցները գնում էին ոսկե կարասներով և նույնպես
ոսկե մեծ գավաթներով առատորեն դասավորված սուլակառ-
քով: 27. Յոթ օր անընդմեջ գնում էր զորքը՝ այդպես անձնա-
տուր լինելով զինարբուրին, վերածվելով պատրաստի զոհի,
եթև միայն պարտվածները քաջություն ունենային հարձակվել
քեֆ անողների վրա: Երդվում էմ աստվածներով, հաղար զգաս-
այրեր բավարար կլինին ջարդելու հաղթական երթը - տոնող
զինվորներին, որոնք յոթ օր խմում էին և ծանրացել էին որկ-
րամուտությունից: 28. Սակայն ամեն ինչի ձևն ու արժեքը որո-

շող բանտը այս անգամ ևս խայտառակութիւնը փառքի վերածեց: Թե ժամանակակիցները և թե ապագա սերունդները զարմանում էին, որ հարբած դիւնավորները անցնում էին դեռ բավականաչափ շնորհալից ված երկրներով, իսկ բարբարոսներն ականհայտ թեթևամտութիւնն ընդունում էին ինքնավստահութեան տեղ: 29. Այդ երթին հետևում էր դահիճը, քանի որ հրաման էր արձակված մահապատժի ենթարկել վերոհիշյալ սատրապ Ասպաստոսին: 30. Չէ՞ որ դաժանութիւնը չի խոչընդոտում ցեծութեանը, նրան չի զսպում նուրբիսկ համընդհանուր տոնակատարութիւնը:



ԳԻՐՔ X

Գրեթե նույն օրերին ժամանում են Կլեանդրոսը, Սիտակեսը և Սղափոնոսը Հերակոնեսի հետ, որոնք արքայի հրամանով սպանել էին Պարմենիոնին. նրանց հետ եկան հինգ հազար հետևակային և հազար հեծյալ: 2. Սակայն նրանց հետևից գալիս էին նրանց մեղադրողները այն գավառներից, որոնց նրանք ղեկավարում էին: Արքային այդքան ցանկալի սպանութեան ծառայութեամբ հանդերձ, նրանք չէին կարող քավել իրենց կատարած բոլոր հանցանքների մեղքը: 3. Իսկապես, թալանելով ողջ մասնավոր ունեցվածքը, նրանք շղսպեցին իրենց տաճարները թալանելուց. բռնաբարել էին թե աղջիկներին և թե աղնվատահմ կանանց, և սրանք ողբում էին իրենց պղծված մաքրութիւնը: 4. Նրանց ազահութիւնն ու այլասերվածութիւնը մակեդոնացիների անունը ատելի էր դարձրել բարբարոսներին: 5. Բայց իր սանձարձակութեամբ բոլորից առանձնանում է Կլեանդրոսը. բռնաբարելով մի աղնվազարմ աղջկա, նրան տվել էր իր ստրուկին որպէս հարձ: 6. Ալեքսանդրի ընկերներից շատերը այնքան կարևորութիւն չէին տալիս բացահայտորեն իրենց՝ վերագրվող հանցանքների մեծութեանը, որքան նրանց ձեռքով սպանված Պարմենիոնի հիշատակին. դրա մասին լռելը կարող էր արքայի աչքում մեղավորների օգտին խոսել: Բացի այդ նրանք ուրախ էին, որ արքայի ցասումն ուղղված է նրա վրեժխնդրութիւնն իրագործող օգնականների վրա և որ հանցագործութեամբ ձեռք բերված իշխանութիւնը հարատև չէ: 7. Քննելով մեղադրանքները, արքան իր եղբակացութիւնը հայտնեց, որ մեղադրողները մոռացել են մի և, ընդ որում, շատ կարևոր հանցա-

գործը մասին, այն, որ մեղադրյալները հույս չեն ունեցել արքայի բարեհաջողության վրա: Նրանք երբեք չէին համարձակվի անել այն, ինչ արել են, եթե ցանկանային իր բարեհաջող վերադարձը Հնդկաստանից կամ հավատային, որ նա կ'ընդհատվեր: 8. Այդպես, նա մեղավորներին շղթայեց, իսկ հանցանքներում նրանց օգնած 600 զինվորներին՝ մահապատժի ենթարկեց: 9. Նույն օրը մահապատժի ենթարկվեցին, նույնպես Կրատերոսի բերած, պառակտումը հրահրող պարսիկները:

10. Քիչ ժամանակ անց ժամանում են Նեաբոսը և Օնեսիկրիտոսը, որոնց արքան կարգադրել էր շարունակել նավարկել օվկիանոսով: 11. Նրանք պատմեցին այն ամենի մասին, ինչ տեսել էին և լսել: մասնավորապես, որ գետաբերանի կղզին հարուստ է ոսկով, սակայն այնտեղ քիչ ձիեր կան և որ բնակիչները ձիեր գնում են մայրցամաքից կղզի նավարկել համարձակվող մարդկանցից, հատը մի տաղանդով, 12. որ ծովը լիքն է ծովային կենդանիներով: նրանք տեղաշարժվում են, հետևելով մակերևթացությանը, և իրենց շափերով նմանվում են մեծ նավերի: Բարձրաձայն երգեցողությամբ գրավված նրանք հետևում են նավատորմին և այնպիսի ազմուկով են սուղվում ջրի տակ, ասես նավեր են խորտակվում: 13. Բացի այդ, ճանապարհորդները հավատացրել են տեղաբնակներին, որ ծովը կարմիր է կոչվում ոչ թե իր գույնի համար, այլ էրիթր արքայի անունով, 14. որ ափից ոչ հեռու արմավենիներով խիտ մի կղզի կա, իսկ այդ կղզու պուրակի մեջտեղում հուշասյուն՝ նվիրված էրիթր արքային՝ այդ ժողովրդի լեզվով գրված մակագրությամբ, 15. որ մարկիտանտներին և առևտրականներին տանող նավերը, որոնց հավավարները դուրսված են հղել ոսկու մասին եղած լուրերով, իբր տարել են նրանց դեպի այդ կղզին և դրանից հետո նրանց ոչ ոք չի տեսել: 16. Դրանից շահագրգռված, արքան ցանկացավ ավելին իմանալ և հրամայեց նրանց նավարկել ափի երկայնքով, մինչև իրենց նավատորմը հասցնեն Եփրատի գետաբերանը, իսկ այնտեղից գետնիվեր նավարկին մինչև Բաբելոն:

17. Ինքը հոգում մեծ ծրագրեր էր փայփայում՝ ծովից արևելք ընկած բոլոր երկրները նվաճելուց հետո Ասորիքից անցնել Աֆրիկա (Կարթագենի³ հանդեպ ունեցած ոխից), այնուհետև անցնելով Նուբիդիայի լայնարձակ տարածությունները, ուղղել իր արշավանքը դեպի Հագիս (չէ որ ասում էին, թե

Հերկուլեսի սյուները գտնվում էին հենց այդ տեղում), 18. այնտեղից թափանցել Իսպանիա, որը հույներն անվանում էին Իբերիա (Իբեր գետի անունով) և Ալպերի մոտով անցնել դեպի Իտալիայի ափերը: այնտեղից մինչև Հայիրոս արդեն հեռու չէր: 19. Այդ պատճառով նա հրամայում է Միջագետքի կառավարիչներին շինանյութ հայթայթել կիրանանյան լեռներում, անգափոխել այն ասորական Քապսակոս քաղաքը, ղեկավարներ պատրաստել յոթ հարյուր նավի համար (դրանք բոլորը սեպտիբեմաներ էին) և ջրարկել դրանք դեպի Բաբելոնիա: Կիարոսի արքաներից նա պղինձ, վուշի կեղևաթել և առագաստներ պահանջեց: 20. Այդ կարգադրություններն անելիս արքային նամակ հանձնեցին արքաներ Պորից և Տաբսիլից, որոնք հայտնում էին, որ Արիսար արքան մահացել է հիվանդությունից, Ալեքսանդրի փոխարքա Փիլիպոսը՝ վերքից, և որ նրան սպանողները մահապատժի են ենթարկվել: 21. Դրա համար Փիլիպոսի փոխարեն նա նշանակեց էվրամոնեսին՝ թրակացիների առաջնորդին, իսկ Արիսարի արքայական իշխանությունը հանձնեց նրա որդուն:

22. Այնուհետև նա ժամանեց Պատարգադը: Դա պարսկական մարզ է, որի սատրապն Օրսինն էր, որը բոլոր բարբարոսներից ամենանշանավորն ու հարուստն էր: 23. Նա սերում էր հնագույն պարսից արքա Կյուրոսի տոհմից: նա հարստությունը ժառանգել էր իր նախնիներից, իսկ հետո բազմապատկել իշխանության երկարատև տիրապետման ընթացքում: 24. Նա ընդառաջ ելավ արքային ամենատարբեր ընծաներով, որպեսզի բաժանի դրանք ոչ միայն արքային, այլև նրա բնակիչներին: Նրան հետևում էին հեծնելու վարժեցրած ձիերի երամակներ, ոսկով ու արծաթով դարձրված մարտականքեր, բերում էին թանկարժեք ամանեղեն, թանկարժեք քարեր, ոսկյա ծանր անոթներ, ծիրանի և շորս հաղար տաղանդ գրողած արծաթ: 25. Սակայն բարբարոսի նման սրտաբացությունը նրա մահվան պատճառը դարձավ: Բանն այն է, որ արքայի բոլոր ընկերներին նվիրատվություններ անելով նրանց սպասելիքներից ավելին, նա ոչ մի պատվի շարժանացրեց ներքինի Բագոասին, որն իր մարմնի ու հոգու նվիրվածությամբ սաստիկ մտերմացել էր Ալեքսանդրի հետ: 26. Երբ ումանք հայտնեցին, թե նա ինչքան սիրելի է Ալեքսանդրին, Օրսինը պատասխանեց, որ նա սիրաշահում է Ալեքսանդրի ընկերներին և

ոչ նրա սիրեկաններին, և որ պարսիկները սովորություն չունեն հաճոյանալ ախ տղամարդկանց, ովքեր կանանց հատուկ անառակութեամբ են տառապում: 27. Լսելով այդ, ներքինին քրծնանքով ու խալտառակութեամբ ձեռք բերած իր աղղիցութեանն ուղղեց շափազանց ազնվատոհմ ու անմեղ մարդու դեմ: Իր ժողովրդի ծախու և իրեն հավատարիմ մարդկանց նա կեղծ մեղադրանքներ սովորեցրեց, որպեսզի վերջիններս դադարի ամբաստանություններ անեն, երբ ինքը հրամայի: 28. Այդ ընթացքում, ամեն օր, մենակ մնալով Ալեքսանդրի հետ, նա վարկարեկում էր Օրսինին դուրահավատ արքայի աջքում, բողաբեկելով իր զայրութի պատճառը մեղադրանքներին առավել կարևորություն տալու համար: 29. Օրսինի վրա դեռ կասկածներ չկային, սակայն նա արդեն կորցրել էր իր աղղիցութեանը: Նրա դեմ մեղադրանքները նախապատրաստվում էին գաղտնաբար, և նա անտեղյակ էր քողարկված վտանգին, իսկ սնարդ սիրեկանը, շմոռանալով զրպարտությունների մասին նույնիսկ կրթոտ ու ամոթալի ապրումների ժամանակ, ամեն անգամ իր հանդեպ արքայի մեջ կիրք առաջացնելիս, Օրսինի վրա ազահութեան և նույնիսկ դավաճանութեան մեղադրանքներ էր բարդում:

30. Արդեն պատրաստ էին անմեղի կործանմանը նպաստող կեղծ մեղադրանքները, և անխուսափելի ճակատագիրը մոտենում էր: Այնպես պատահեց, որ Ալեքսանդրը հրամայեց բացել Կյուրոսի դամբարանը, որտեղ հանդուժ էր նրա մարմինը. նա ցանկանում էր Կյուրոսին սահմանված հարգանքները մատուցել: 31. նա կարծում էր, որ դամբարանը լիքն է ոսկով ու արծաթով. այդպես էին պատմում պարսիկները, սակայն բացի Կյուրոսի կիսափտած վահանից, երկու սկյութական նետերից ու դաշույնից նա ոչինչ չգտավ: 32. Ոսկի պսակ դնելով, Ալեքսանդրը դամբարանի բարձրադիր մասը, որի վրա դրված էր մարմինը, ծածկեց իր սիրած թիկնոցով, զարմանալով, որ հրշտակավոր, այդպիսի հարստություններ ունեցող արքան թաղվել է ոսմիկին հատուկ ճոխութեամբ: 33. Արքայի կողքին ներքինին էր կանգնած. դիմելով արքային, նա ասաց. «Ի՞նչ զարմանալի բան կա, որ արքայական դամբարանը դատարկ է, երբ սատրապների տներում շեն տեղավորվում այդտեղից հանված հարստությունները: 34. Ինչ վերաբերում է ինձ, ապա ես ինքս նախկինում այդ դամբարանը շեմ տեսել, սակայն լսել եմ Դա-

րեսից, որ այստեղ, Կյուրոսի մարմնի հետ, գրված է եղել: Երևց հազար տաղանդ: 35. Ահա թե որտեղից է գալիս Օրսինի արեհաճությունը քո նկատմամբ. այն, ինչին նա ի վիճակի չէ: Երբանալու անպատիժ, ապահովեց իրեն ընծաների օղջութեամբ: 36. Այդ խոսքերով նա արքայի զայրութի սառալեց, առավել ևս, որ նրան օգնություն եկան իր սովորեցրած մարդիկ: Արքայի գրգռվածությունը կեղծ մեղադրանքներով սրեցին մի կողմից Բագուսը, մյուս կողմից նրա օգնակալները: 37. Մինչ Օրսինի մեջ կասկածներ կառաջանալին, որ իրեն ինչ-որ բանում մեղադրում են, նրան կալանավորեցին, Չրավարարվելով անմեղ մարդու մահապատժով, ներքինին սպանեց նրան իր ձեռքով: Այդ միջոցին Օրսինը բացականը. «ես լսել էի, որ ինչ-որ ժամանակ Ասիան կառավարել են կանայք, բայց որ նրան ամորձատվածն է կառավարում՝ չսված բան է»:

38. Այդպես եղավ ոչ միայն անմեղ, այլև Ալեքսանդրին շափազանց նվիրված ազնվատոհմ պարսիկներից մեկի վերջը: 39. Այդ նույն ժամանակ մահապատժի ենթարկվեց Փրադատը, որին կասկածում էին արքայական իշխանությունը հավակնելու մեջ: Ալեքսանդր սկսեց հակում ցուցաբերել մահապատժների և դյուրահավատություն՝ ամենավատ զրպարտանքների հանդեպ: 40. Այսպես են փոխում մարդու բնավորությունը մշտական հաջողությունները, և հազվագեպ է պատահում, որ որևէ մեկը բավականաչափ պաշտպանված լինի անձնական երջանկությունից: 41. Քիչ ժամանակ առաջ հենց ինքը չհամարձակվեց դատապարտել Ալեքսանդր կինկեսացուն, որին երկու մեղադրողներ էին մերկացրել: Հասարակ ծագում ունեցող մեղավորներին նա իր կամքին հակառակ ազատ արձակեց միայն այն պատճառով, որ ուրիշներին նրանք անմեղ էին թվում: 42. Իսկ վերջում նա այնքան փոխվեց, որ հոգու տենչին հակառակ, իր սիրեկանի հայեցողությամբ, ումանց արքայություն էր պարգևում, ուրիշների կյանքը խլում: 43. Մոտավորապես այդ օրերին նա նամակ ստացավ Քենոսից⁵, որտեղ հայտնում էր, թե ինչ է կատարվել Սլյոպայում ու Ասիայում, մինչ ինքը նվաճում էր Հնդկաստանը: 44. Թրակիայի կառավարիչ Զոպիրիոն իր ողջ զորքով ոչնչացել էր գեթերի դեմ արշավելիս հանկարծակի մոլեղնած ամպրոպից և փոթորկից⁶, 45. Տեղեկանալով այդ մասին, Սեթևսը զրդել էր իր ժողովրդին՝ օգրիաներին, պառակտվելու

Քրակիայի և նույնիսկ Հունաստանի լրիվ կորստի կապակցու-
թյամբ⁷...

II. Այսպիսով, նրանք երեսուն նավով շրջանցում են Սունիո-
նը՝ Ատիկայի հրվանդանը, որտեղից որոշում են հարձակվել
Աթենքի նավահանգստի վրա: 2. Տեղեկանալով այդ մասին,
արքան, որը թշնամաբար էր տրամադրված թե Հարպալուսի և
թե աթենացիների նկատմամբ, հրամայում է նախապատրաս-
տել նավատորմը, որպեսզի անհապաղ հարձակվի Աթենքի վրա:
3. Այդ կարգադրությունների ընթացքում նրան զաղտնի նամակ
են բերում՝ տուրով, որ Հարպալուսը այնուհանդերձ մտել է Աթենք,
դրամով իր կողմը գրավելով ազդեցիկ մարդկանց⁸. սակայն
շուտով, համաձայն ժողովրդական ժողովի որոշման, պիտի
լքի քաղաքը: Նա փախավ հույն զինվորների մոտ, սակայն
նրանք բռնեցին Հարպալուսին, և նրան դարանից սպանեց ոմն
Թիմոթիոնեսը: 4. Ուրախանալով այդ լուրերից, արքան շեղյալ
համարեց նվրուպա պատրաստվող արշավանքը, սակայն հրա-
մայեց բոլոր հունական քաղաքներին հետ ընդունել իրենց վտա-
րանդիներին⁹, բացի նրանցից, ովքեր իրենց համաքաղաքացի-
ների արյունն են թափել: 5. Եվ հույները չհամարձակվեցին
անտեսել այդ հրամանը, թեև հասկանում էին, որ դա իրենց
օրենքները շեղյալ համարելու սկիզբն է, և դատապարտյալնե-
րին վերադարձրին պահպանված ունեցվածքը: 6. Միայն աթե-
նացիները, որոնք պաշտպանում էին ոչ միայն իրենց, այլև
համընդհանուր ազատությունը, որոնք վարժված էին ոչ թե
հետևելու արքայական հրամաններին, այլ իրենց հայրենական
սովորություններին, շափազանց դժկամեցին վտարանդիների վե-
րադարձի համար և շթույլատրեցին նրանց վերադառնալ:
7. Նրանք համաձայն էին ցանկացած հետևանքների, միայն թե
չթողնեն հետ վերադառնալ իրենց քաղաքի տականքներին,
որոնք այժմ տականք էին դարձել նաև վտարանդիների մեջ:

8. Հայրենիք արձակելով ամենատարիքավոր զինվորներին¹⁰,
Ալեքսանդրը հրամայեց ընտրել տասներեք հազար հետևակա-
յին և երկու հազար հեծյալ Ասիայում թողնելու համար. նա են-
թադրում էր, որ կկարողանա պահպանել Ասիան այդքան փոք-
րաթիվ ուժերով, քանի որ նախապես շատ տեղերում նա կայա-
զորներ էր թողել: Բացի այդ, նա հույս ուներ, որ զաղութա-
րնականերով լեցուն նոր քաղաքները հակահարված կտան պա-
ռակտման բոլոր փորձերին: 9. Նախքան նրանց առանձնացնելը,

որոնց նա ցանկանում էր թողնել, նա հրամայեց բոլոր զինվոր-
ներին հայտարարել իրենց պարտքերի մասին. նրան հայտնի էր,
որ շատերը մեծ պարտքեր ունեն, ու թեև դրանցից շատերը ար-
վել էին ավելորդ նպատակներով, նա որոշեց դրանք բոլորը
վճարել: 10. Իսկ զինվորները կարծում էին, թե նա ցանկանում
է փորձության ենթարկել իրենց և համեստներին դատել մսխոդ-
ներից, և ձգձգում էին պատասխանը: Արքան, կռահելով, որ նրանք
ոչ թե համառությունից, այլ ամոթից են լուռ, հրամայեց ճամ-
բարով մեկ սեղաններ դնել և նրանց վրա տասը հազար տա-
ղանդ դնել: 11. Միայն այդ ժամանակ զինվորները վստահու-
թյամբ սկսեցին հայտնել իրենց պարտքերի մասին, և այդքան
դրամից մնաց միայն հարյուր հիսուն տաղանդ: Այսպիսով,
զորքը, որը հաղթել էր այդքան հարուստ ազգերի, Ասիայից
ավելի շատ փառք տարավ, քան դրամ:

12. Այնուհանդերձ, երբ հայտնի դարձավ, որ մի մասին
տուն էին արձակում, իսկ մյուսներին՝ պահում, զինվորները,
հնարավոր համարելով, որ արքան իր մշտական նստավայրը
ընտրելու է Ասիան, դժգոհ էին և, մոռանալով ամեն տեսակ
կարգապահություն, խռովարար զրույցներ էին անում ողջ ճամ-
բարով մեկ և միաժամանակ ուժգնացող հանդգնությամբ սկե-
ցին պահանջել արքայից ազատել ծառայությունից, մատնա-
ցույց անելով իրենց այնհեր գլուխները և սպիներից ու վերքե-
րից այլանդակված դեմքերը: 13. Նրանց չէին զսպում զորա-
վարների նախատիքները, ոչ էլ հարգանքը արքայի հանդեպ.
իրենց խռովահույզ ձայներով նրանք նույնիսկ չէին թողնում
արքային խոսել, իսկ իրենք զինվորական կոպտությամբ բացե-
լիքաց հայտարարում էին, որ այդտեղից այլևս ոչ մի տեղ չեն
գնա, բացի հայրենիքից: 14. Վերջապես, լուսթյուն հաստատե-
լով, ավելի շատ այն բանից, որ տեսան արքայի հուղմունքը,
և ոչ այն պատճառով, որ որևէ բան կարող էր իրենց գույթը
շարժել, սկսեցին սպասել, թե ինչ էլ ասելու արքան: 15. Այն-
ժամ արքան ասաց. «Ի՞նչ է նշանակում ձեր անակնկալ համա-
ռությունն ու հանդուգն սանձարձակությունը: Ես վախենում եմ
նույնիսկ ասել. դու, ականհայտորեն խախտել եք իմ հրամանը և
ինձ արքայից հայցող դարձրել, ինձ իրավունք չթողնելով ո՛չ
խոսել ձեզ հետ, ո՛չ հսկել, ո՛չ համոզել ձեզ, ո՛չ էլ կառավա-
րել: 16. Ես որոշում էի կայացրել ձեզանից մի մասին հայրե-
նիք ուղարկել հիմա, որպեսզի մյուսների հետ վերադառնամ

ավելի ուշ, իսկ հիմա տեսնում եմ, որ աղմկում են ոչ միայն նրանք, ովքեր պետք է մեկնեն այժմ, այլև նրանք, ում հետ ես որոշել էի հետևել առաջ զնայածներին: 17. Ուրեմն ի՞նչ է պատահել: Գտնվելով տարբեր պայմաններում, դուք ընդհանուր աղաղակ եք բարձրացնում: Ես շատ կուզեմ այի իմանալ, թե ձեզանից ով է բողոքում ինձանից՝ ովքեր գնում են թե ովքեր մնում են»: 18. Այստեղ ամբողջ հավաքը միարեբան պատասխանեց, որ բոլորն են բողոքում, այնպես որ կարելի էր կարծել, թե պատասխանը մի շրթից էլավ:

19. Այնժամ արքան շարունակեց. «Երբովում եմ աստվածներով, ես չեմ հավատում, որ բոլորիդ դժգոհությունն պատճառը նույնն է, այն, որի մասին ասում էի. չե՞ որ դա զորքի մեծ մասին չի վերաբերում, քանի որ ես ավելի շատ զինվորներ եմ ազատ արձակում, քան թողնում ինձ հետ: 20. Անկասկած, գոյություն ունի ավելի ծանրակշիռ պատճառ՝ դուք բոլորդ երես եք թեքել ինձանից: Այդ ե՞րբ է ողջ զորքը հետ կանգնել իր արքայից: Նույնիսկ ստրուկները բոլորը միասին չեն լքում իրենց տիրոջը. միշտ գտնվում են այնպիսիները, որոնց խիզճը թույլ չի տալիս լքել մյուսների կողմից լքվածին: 21. Բայց ես, ասես մոռանալով ձեր հրեշավոր անհնազանդությունն մասին, փորձում եմ անբուժելի շարիքի դեմ միշտ գտնել: Ես հրաժարվում եմ իմ բոլոր այն հույսերից, որ կապել էի ձեզ հետ, և որոշել եմ վերաբերվել ձեզ ոչ որպես իմ զինվորների, դուք դադարել եք այդպիսիք լինելուց, այլ որպես իրենց պարտքը մոռացած անշնորհակալներին: 22. Դուք տրվել եք խելահեղություն՝ ձեզ համար ստեղծված բարենպաստ պայմաններում, մոռանալով այն վիճակի մասին, որից ձեզ հանել էր իմ գթասրտությունը: Բայց, երբովում եմ աստվածներով, դուք արժանի եք, որ այդ վիճակում էլ ծերանաք, քանզի ավելի լավ եք գլուխ հանում թշվառ վիճակից, քան բարեկեցությունից: 23. Ի՞նչ է սա, վերջ է վերջո, իլիթիացիների և պարսիկների՝ երեկվա հարկատուներդ արհամարհում եք Ասիան և այդքան ժողովուրդներից հավաքած ավարը: Ձեզ, ովքեր դեռ երեկ մերկ էիք ման գալիս Փիլիպոսի օրոք, այսօր անհրապույր են թվում ծիրանիով զարդարված թիկնոցները: Ձեր աչքերը զզվել են ոսկուց ու արծաթից: Դուք կարտակել եք փայտե ամաններին, հյուսված վահաններին, ժանգոտած թրերին: 24. Ես ձեզ ծառայության եմ վերցրել ձեր այդպիսի զենքերով, հետն էլ հինգ հարյուր տա-

ղանդ պարտք: այն դեպքում, երբ արքայական ողջ ունեցվածքը իմ բոլոր զործների հիմքը, կազմում էր վաթսուն տաղանդից ոչ ավելի: Սակայն հիմք ընդունելով այդքանը, թող օրհնյալ լինի այդ ժամը, ես ստեղծեցի իմ իմպերիան, որն ընդգրկել է աշխարհի մեծ մասը: 25. Թե՞ ձեզ ձանձրացրել է Ասիան, որը ձեր սխարանների փառքով ձեզ դարձրել է աստվածներին հավասար: Դուք շտապում եք Եվրոպա վերադառնալ, լքել ձեր արքային այն ժամանակ, երբ ձեզանից շատերի դրամը չէր հերիքի ճանապարհի համար, եթե ես ձեր պարտքերը չմարելի ձերնց ասիական ավարով: 26. Եվ չե՞ք ամաչում վերադառնալ ձեր կանանց ու զավակների գիրկը՝ ձեր նշխարած մարմինների վրա պարտված ժողովուրդների դրանք հագած. ասե՛ք ձեզանից շատ քիչը կկարողանան տանը ցույց տալ հաղթանակի պարզանքներ, իսկ մնացածների համար նրանց իդձերի կատարման երաշխիքը՝ կմնա իրենց իսկ զենքը: 27. Ի՞նչ ասե՛մ, լավ զինվորներից եմ ես զրկվելու, որոնք շտապում են իրենց կենակցուհիների մոտ և որոնց մոտ ճիշտ այնքան է մնացել ողջ հարստությունից, որ վճարեն այդ հաճույթի համար: Բայց ինձանից փախչողների առջև բոլոր դռները բաց կլինեն. շտապ հեռացե՛ք այստեղից, իսկ ես պարսիկների հետ կպաշտպանեմ ձեր թիկունքը: Ես ոչ մեկին չեմ պահում, չե՛վեք աչքիցս, անշնորհակալ քաղաքացիներ: 28. Ուրախությամբ կընդունեն ձեզ ձեր ծնողներն ու զավակները, որ վերադարձել եք առանց արքայի: Կարո՞ղ է պատահել, որ նրանք ընդառաջ դուրս գան դասալիքներին և փախըստականներին: 29. Երբովում եմ աստվածներով, ես հրճվելու եմ ձեր փախուստով, և որտեղ էլ որ լինե՛մ, ես ինձ պարզևտրած կլինեմ հոգ տանելով և առավելությունը տալով նրանց, ում հետ դուք ինձ թողնում եք: Այնժամ էլ ձեզ հայտնի կդառնա, թե ինչքան ուժ ունի բանակն առանց արքայի և միայն իմ մեջ որքան ուժ կա»:

30. Այնուհետև նա զայրույթով լի իշավ ամբիոնից, խառնըվեց զինված ամբոխին և, նախապես աչքի տակ ունենալով նրանց, ովքեր հատկապես խիստ էին ընդդիմախոսում իրեն, ձեռքով առանձին-առանձին բռնեց նրանց և իր թիկնապահների հսկողության տակ հանձնեց արքային դիմադրել շահմարձակվող տասներեք մարդու:

III. Ով կարող էր հավատալ, որ այդպիսի բուռն հավաքը միանգամից կհանդարտվի անսպասելի սարսափից, երբ նրանք

տեսան, թե ինչպես են մահապատժի տանում մարդկանց, որոնք ոչնչով ավելի մեղավոր չէին, քան մնացած բոլորը: 2...¹³ 3. Կամ նրանց վրա այդպես ուժեղ ազդել էր արքայի անունը, որին նրա իշխանությունն տակ գտնվող բոլոր ժողովուրդները մեծարում էին աստվածներին հավասար, կամ նրա ներշնչած հարգանքը, կամ էլ հարգանքը մի մարդու հանդեպ, որն իրագործում է իր իշխանությունը այդպիսի ուժով: 4. Նրանք, իհարկե, ի հայտ բերեցին հնազանդության անասելի օրինակ և նույնիսկ ամենևին էլ չըրբորվեցին իրենց համախոհների մահապատժից, երբ հայտնի դարձավ, որ Երեկոյան նրանց հետ հաշվհարգար են տեսել. ընդհակառակը, ամեն մեկն առանձին շանք չէր խնայում հնարավորությունը բաց չթողնել իր հնազանդությունն ու խոնարհությունը ի ցույց դնելու: 5. Եվ իսկպես, երբ հաջորդ օրն արքան նրանց շրջողներն էր մոտ թողեց միայն ասիացի զինվորներին, նրանք ճամբարով մեկ վայնասուն բարձրացրին և բղավում էին, որ պատրաստ են անմիջապես վերջ տալ իրենց կյանքին, եթե արքան շարունակի զայրանալ:

6. Իսկ արքան, ցուցաբերելով իր բոլոր ձեռնարկումներում սովորական դարձած համառությունը, կազմակերպեց օտարերկրյա զինվորների¹⁴ հավաք, մակեդոնացիներին փակի տակ դնելով ճամբարում և, երբ շատ ժողովուրդ հավաքվեց, թարգմանիչներ կանչելով, դիմեց հավաքին այսպիսի ճառով: 7. «Ժշք ես նվիրույցից Ասիա էի անցնում, ես հուսով էի իմ կայսրությանը միացնել բազմաթիվ հիանալի ցեղերի, մարդկային մեծ ուժ: Եվ ես չսխալվեցի, հավատալով նրանց մասին պատմածներին: 8. Դրան զուգարվեց նաև այն, որ ես տեսնում եմ իրենց արքաներին անսասանորեն նվիրված քաջ մարդկանց: 9. Ես առաջ կարծում էի, թե այստեղ բոլորը թաղված են ճոխության մեջ և շափից ավելի բարեկեցությունից տրվում են կրթերի Բայց, երզվում եմ աստվածներով, դուք կրում եք զինվորական ծառայությունը ոգու ու մարմնի նույն դիմացկունությամբ և, լինելով արի մարդիկ, մեծարում եք հավատարմությունը քաջությունից ոչ պակաս: 10. Այժմ ես խոսում եմ այդ մասին առաջին անգամ, բայց դա ինձ վաղուց է հայտնի: Դրա համար էլ ես ձեզանից նորակոչիկներ եմ հավաքել և մտցրել իմ զորքի կազմի մեջ: Զեր վրա նույն հագուստն է, նույն զենքը, սակայն հնազանդությունն ու կարգապահությունն անհամեմատ ավելի բարձր է, քան ուրիշներինը: 11. Ես ինքս կնություն եմ վերցրել

պարսիկ Օքսիարտի դստերը, չեմ գարշել զավակներ ունենալ գերուհուց: 12. Հետագայում, երբ ես ցանկացա ավելի մեծ սերունդ ունենալ, ես կնություն վերցրի Դարեհի դստերը և մերձավորագույն ընկերներին խորհուրդ տվեցի Երեխաներ ունենալ գերուհիներից, որպեսզի այդպիսի սրբազան միությունը չնջեմ հաղթողների և պարտավածների միջև եղած տարբերությունը: 13. Այնպես որ գիտցեք. դուք իմ իսկական զինվորներն եք և ոչ թե վարձկաններ. Ասիայում ու Նվիրույցում միացյալ մի թագավորություն է, և ես ձեր ձեռքն եմ տալիս մակեդոնական զենքը: Ես ստիպեցի մոռանալ ձեր օտարերկրյա ծագման մասին. դուք իմ քաղաքացիներն եք ու զինվորները: Ամեն ինչ հավասարվեց: 14. Ինչպես պարսիկները չպետք է վարկաբեկեն մակեդոնացիների բարքերը, այնպես էլ մակեդոնացիները պետք է չամաչեն ընդօրինակել պարսիկների բարքերը... Նույնանման պիտի լինեն նաև բոլոր նրանց իրավունքները, ովքեր ապրելու են մի արքայի իշխանության ներքո...»¹⁵

IV. ... «Մինչև ե՞րբ,— ասաց նա,— պետք է դու հաճույք պատճառես քո հոգուն մահապատիժների տեսքով և այն էլ օտարերկրյա սովորույթներով արվող: Քո զինվորները, քո քաղաքացիները առանց զործի քննության ենթարկվում են մահապատժի իրենց իսկ գերիների կողմից: Եթե դու գտնում ես, որ որևէ մեկն արժանի է մահապատժի, գոնե փոխիր ի կատար ածողներին»: 2. Այսպես էր հորդորում նրան իսկական ընկերը, հուսալով, որ արքան ի վիճակի է ականջ դնելու ճշմարտությանը, սակայն արքայի զայրույթը վերածվեց կատաղության: Այսպես, նա մահապատիժը ի կատար ածողներին կրկին հրամայեց մի քանի Եստանվորների խեղդել գետում, դատապարտյալների հնա միասին կապկալված: 3. Սակայն մահապատժի այդ ձևն էլ տպավորություն չգործեց խոռվյալ զինվորների վրա, Զորավարներին և արքայի ընկերներին էլին մոտենում ամբողջ ջոկատներ և խնդրում, որ եթե նա որևէ մեկին նախկին մեղքերի մեղսակից ճանաչի, թող նույնպես մահապատժի ենթարկի. նրանք արքայի ցասման առջև են դնում իրենց մարմինները. թող նա ծվաթի դրանք...»¹⁶

V. ... Տեսնելով, թե ինչպես են բոլորը արցունք թափում, կարելի էր կարծել, թե զորքն արդեն տեսնում է ոչ թե արքային, այլ ներկա է նրա թաղմանը: Սակայն նրա մահճի շուրջը կանգնածների թախիծն ամենից ավելի խոր էր: 2. Նայելով նրանց,

արքան ասաց. «Արդյո՞ք կգտնեք այսպիսի այրերին արժանի մի նոր արքա, երբ ես արդեն չեմ լինի»: 3. Բուրբոն անհավատալի կթվա, որ նա ամենևին չփոխեց իր մարմնի ընդունած դիրքը, երբ որոշեց դորթին կանչել, և մինչև վերջին զինվորին հրաժեշտ տալը: Ազատ արձակելով զինվորներին, ասես կատարելով իր կյանքի պարտքը, նա հոգեպես ընկավ լրիվ ուժասպառ: 4. Մոտ կանչելով ընկերներին, նրա ձայնն արդեն սկսել էր թուլանալ, նա իր ձեռքից հանած մատանին հանձնեց Պերդիկոսին և կարգադրեց, որ իր մարմինը տանեն Ամոն՝ տաճար: 5. Երբ նրան հարցրեցին, թե ում է թողնում թագավորությունը, նա պատասխանեց, որ նրան, ով կպարզվի, որ լավագույնն է, որ, ի դեպ, նա կանխատեսում է, որ այդ մրցավազքի նպատակով ի պատիվ իր թաղման նախապատրաստվում են հուզարկավորություն մեծ խաղեր: 6. Այնժամ Պերդիկոսը, իր հերթին, հարցրեց, երբ է նա ցանկանում, որ իրեն աստվածային մեծարանքներ մատուցեն: Արքան պատասխանեց. «Երբ դուք ինքներդ երջանիկ լինեք»: Դրանք նրա վերջին խոսքերն էին. դրանից հետո շուտով նա վախճանվեց¹⁷:

7. Սկզբում ողջ արքայական պալատը ողողվեց լացով, բողբոջներով ու ողբով, իսկ հետո ասես ամեն ինչ քարացավ ընդարմածության մեջ. սուգը ապագայի մտորումների տեղիք տվեց: 8. Ազնվազարմ պատանիները, որոնք սովորաբար նրա թիկնապահներն էին, ի վիճակի չէին տանել իրենց վիշտն ամբողջ խորությունը և մնալ պալատում. նրանք խելագարների պես թափառում էին քաղաքով մեկ և լցնում այն իրենց ողբով ու վշտով, շոտանալով նման գեպրեբրում վշտից առաջացած ոչ մի բողբոջ: 9. Այդպես, պալատից դուրս կանգնած մակեդոնացիներն ու բարբարոսները իրար խառնվեցին, և ընդհանուր վշտի մեջ անհնար էր հաղթողներին առանձնացնել պարտվածներից: Նրանք ասես մրցում էին միմյանց հետ ողբով. պարսիկները բղբում էին ամենաարդարացի ու ամենազթասիրտ տիրոջը, մակեդոնացիները՝ ամենալավ ու ամենաքաջ արքային:

10. Սակայն վշտի ձայների կողքին լավում էին նաև վրդովմունքի ձայներ, որ աստվածների նախանձի պատճառով մարդկանցից խլեցին տարիքի և ուժերի ծաղկում ապրող և իր երջանիկ բախտին հասած արքային: Բոլորը վառ պատկերացնում էին նրա առնական դեմքը, երբ նա զինվորներին գրոհի էր տանում, երբ պաշարում էր քաղաքներ կամ գրոհով գրա-

վում էր պարիսպներ, կամ երբ հավաքներին ընծաներ էր բաժանում ամենաքաջերին: 11. Մակեդոնացիները զղջում էին, որ մերժել էին նրան աստվածային մեծարանքներ մատուցել. նրանք իրենց համարում էին անշնորհակալ ու սրբապիղծ այն բանի համար, որ անպատվել էին նրա լսողությունը, նրան մերժելով ցանկալի մեծարումից:

Երկար ժամանակ անցկացնելով բողբոջների ու արքային ողբալու վրա, նրանք հետո սկսեցին իրենք իրենց խղճալ: 12. Դուրս գալով Մակեդոնիայից և անցնելով Եփրատի մյուս կողմը, նրանք իրենց որբացած էին զգում նոր կայսրությունը շճանալող թշնամիների մեջ. առանց արքայի որոշակի ժառանգորդի, ամեն մեկն իր կողմն էր ձգելու ժողովուրդների ուժը: 13. Ներանք արդեն կանխատեսում էին դրան հետևող քաղաքացիական պատերազմները, գիտենալով, որ կրկին անհրաժեշտ է լինելու արյուն թափել, բայց արդեն ոչ թե Ասիայի թագավորության համար, այլ նոր արքայի, որ նոր վերքերը պատռելու են հին սպիտակը: Արդեն ուժասպառ ծերունիները, որոնք զեռ նոր արձակուրդ էին խնդրում իսկական արքայից, ստիպված կլինեն մեռնել ինչ-որ մեկի իշխանություն, միգուցե մի ողորմելի դրածոյի համար: 15. Այդպիսի մտորումների մեջ էին նրանք, երբ գիշերը վրա հասավ և ավելի սաստկացրեց նրանց տափապար: Զինվորները չէին քնում, զենքերը վրաներից չէին հանում. բարեկրնացիները բարձրանում էին պարիսպների վրա և ամեն մեկը իր տանիքի վրա, հուսալով ավելի լավ տեսնել որևէ բան: Ոչ ոք չէր համարձակվում կրակ վառել: 16. Եվ քանի որ արդեն անհնար էր նայելով տեսնել, նրանք ակառջ էին դնում ձայններին ու շշուկներին և ավելի հաճախ անտեղի սարսափով դես ու դեն էին նետվում մութ ճամփաներով, իրար բախվում, ինչ-որ բաներ կասկածելով, ահ զղում: 17. Պարսիկները իրենց սովորույթի համաձայն կտրելով մազերը, սգո հաղուստներ հագած, իրենց կանանց ու երեխաների հետ անկեղծորեն ողբում էին նրան ոչ որպես հաղթողի ու ոչ վաղուցվա թշնամու, այլ որպես իրենց ժողովրդի օրինական արքայի: Արքաների իշխանության տակ ապրելու սովոր, նրանք ընդունում էին, որ երբևէ չեն ունեցել ավելի արժանի տեր:

18. Վիշաբ դուրս եկավ քաղաքի պարիսպներից և տարածվեց մերձակա մարզում, իսկ այնուհետև այդպիսի մեծ դառնություն լուրը տարածվեց Եփրատի այս կողմում ընկած Ասիայի

մեծ մասում, 19. Շուտով այն հասավ և Գարեհի մորը Պատ-
ռելով վրայի հագուստը, նա սգո շորեր հագավ և, զգզելով մա-
ղբը, գետնին ընկավ: 20. Նրա կողքին էր թոռներից մեկը,
որը ողբում էր Հեփեսոփոնեսի կորուստը, որի հետ ամուսնացել
էր և իր անձնական վիշտը միացրեց ընդհանուր դժբախտությա-
նը: 21. Սակայն միայն Սիսիգամբիսն էր ի վիճակի ընդգրկել
իր բոլոր զավակների վիշտը. նա ողբում էր և՛ իր, և՛ իր թոռների
բախտը: Նոր վիշտը թարմացրեց անցածը: Թվում էր, թե նա
հենց նոր էր կորցրել Գարեհին և ինքը՝ դժբախտը, ստիպված էր
թաղել երկու որդիներին: 22. Նա ողբում էր ինչպես մեռածներ-
րին, այնպես էլ ողջերին: Ո՞վ է հոգալու որբերի՝ մասին: Ինչպիսի՞ն
կլինի նոր Ալեքսանդրը: Կրկին իրենք գերուհիներ
են, կրկին զրկվեցին թագավորությունից: Նրանք մի մարդ էին
գտել, որ պաշտպանում էր իրենց Գարեհի մահից հետո. Ալեք-
սանդրի մահից հետո՝ նրանք նման մարդու, իհարկե, չեն զբտ-
նի: 23. Ընդ որում հիշողության մեջ արթնացավ, որ իր ութսուն
եղբայրներին մեկ օրվա մեջ կոտորեց ամենադաժան արբան՝
Օթոսը: Այդքան որդիների կոտորածին ավելացավ նաև նրանց
հոր սպանությունը: Նրա ծնած յոթ երկխաններից կենդանի մնաց
միայն մեկը. ինքը՝ Գարեհն էլ երկար շվայելեց երջանկությունը և
առավել դաժան մահ ունեցավ: 24. Վերջ ի վերջո, նա շղիմա-
ցավ իր վշտին, մեկուսացավ իր հետ գտնվող տղա և աղչիկ
թոռներից և, դուրսը շորով ծածկելով, հրաժարվեց սննդից ու
լույսից: Նա մահացավ հինգերորդ օրը այն բանից հետո, երբ
որոշում էր կայացրել մահանալ: 25. Նրա մահը անժխտելի
սպացույց է բոլոր գերիների հանդեպ Ալեքսանդրի ցուցարե-
րած արդարամտության և նրա հանդեպ եղած հատուկ ուշադր-
ություն: Նա ուժ գտավ ապրել Գարեհի կործանումից հետո,
սակայն չկարողացավ ապրել Ալեքսանդրից հետո:

26. Եվ իրոք, եթե Ալեքսանդրի մասին արդարացի դատվի,
այս նրա բարի հատկությունները պետք է վերագրել իր բնա-
վորությանը, իսկ արատները՝ բախտավոր ճակատագրին կամ
տարիքին¹⁸: 27. Ոգու անհավատալի ուժը, աշխատանքի հան-
դեպ ունեցած համարյա անսահման տոկունությունը, խիղախու-
թյունը, որը բացառություն էր ոչ միայն արբաների համար,
այլև նրանց, ում համար դա միակ արժանիքն էր, 28. նրա
առատաձեռնությունը, որ մարդկանց տալիս էր նույնիսկ ավել-
յին, քան նրանք խնդրում էին աստվածներից, գթասրտությունը

պարտվածների նկատմամբ, բազմաթիվ թագավորություններ
առատաձեռնորեն վերագրածները և դրանց նվիրատրումը նը-
րանց, ումից նա վերցրել էր կոպով: 29. Մահը մշտապես ար-
համարհելը, որի վախը խլում է ուրիշների արիությունը, գո-
վասանքների ու փառքի ծաբայլը, թեև սովորականից ավելի
ուժեղ, սակայն լիովին բացատրելի իր երիտասարդ տարիքում և
այդքան մեծ սխրանքների առկայության դեպքում: 30. Նրա
ակնածանքը ծնողների հանդեպ. մորը՝ Օլիմպիադային նա որս-
չեց անմահացնել, հոր՝ Փիլիպոսի վրեժը լուծեց, 31. նրա բարե-
հաճությունը համարյա բոլոր ընկերների նկատմամբ, դիմվոր-
ների հանդեպ ունեցած բարչացակամությունը. իր հոգու
մեծությունը հավասար հոգատարությունը նրանց հանդեպ,
նրա գործունեության լարվածությունը, որը հազիվ համա-
տեղելի է նույնիսկ նրա երիտասարդ տարիքի հետ: 32. Իր
անափ կրքերը հմուտ զսպելը, տարփանքն ու սերը բնա-
կան ցանկությունների սահմաններում պահելը, կրքերի բավա-
րարումը միայն թուլատրելի ձևերով. այս ամենը, իհարկե,
մեծ արժանիքներ են: 33. Բայց ահա բախտի պարգևները. նա
հավասարեցնում էր իրեն աստվածներին և պահանջում մեծա-
րել որպես աստծու, հավատում էր պատգամախոսներին, որոնք
ներշնչել էին դա իրեն և սնարդարացի ցասմամբ էր բռնկվում
նրանց հանդեպ, ովքեր հրաժարվում էին մեծարել նրան որպես
աստծու: Նա օտարերկրայինի փոխեց իր հագուստն ու սովո-
րույթները, սկսեց փոխառնել պարտված ժողովուրդների բար-
քերը, որոնք մինչև իր հաղթանակն արհամարհում էր: 34. Նրա
դուրբորբորությունն ու պատանեկան տարիներից նրա մեջ
առաջացած հակումը գինու նկատմամբ կարող էին մեղմանալ
տարիքն անելուց հետո: 35. Այնուհանդերձ անհրաժեշտ է ըն-
դունել, որ եթե նա շատ բաներով պարտական էր իր արիությա-
նը, ապա ավելի շատ՝ իր բախտին, որին նա տիրապետում էր
ինչպես ոչ այլ ոք: Քանի անգամ է այն փրկել նրան մահից:
Քանի անգամ, երբ նա անխոհեմորեն վտանգել է իրեն,
բախտը պահպանել է նրա անփոփոխ երջանկությունը: 36. Ծա-
կատագիրը նրա կյանքի սահմանը որոշել էր փառքի սահմանի
հետ միասին: Ծակատագիրը սպասել էր մինչև Ալեքսանդրը,
նվաճելով Արևելքը և հասնելով օվկիանոս, իրագործի ամեն ինչ,
ինչ մատչելի է մարդուն: 37. Աշխարհի արքային ու առաջնորդին
պետք էր փոխարինող գտնել, սակայն նրա գործերի ծանրությու-

նր մի մարդու ուժերից վեր էր: Այսպես, նրա անունը և նրա գործերի փառքը մասնատեցին նրա թագավորութունը և արքաներին ցրեցին համարյա ամբողջ աշխարհով մեկ, և փառաբանվեցին նույնիսկ նրանք, ովքեր իրենց ճակատագիրը կապեցին նրա ճակատագրի աննշան մասնիկի հետ:

VI. Այդ նույն ժամանակ Բաբելոնում (այստեղ էլ ընդհատվել էր պատմությունը¹⁹) արքայի թիկնապահները պալատ հրավիրեցին նրա ընկերներին և առաջնորդներին: Նրանց հեռեկեց զինվորների ամբոխը, որոնք ցանկանում էին իմանալ, թե ո՞ւմ է անցնելու Ալեքսանդրի իշխանությունը: 2. Շատ առաջնորդներ, զինվորների ամբոխի մեջ ճշմված, շկարողացան պալատ մտնել: այդ պատճառով մունետիկը դադարեց ներս թողնել նրանց, ում անունը չգիտեր: Բայց նրա կարգադրություններն էլ վատ էին կատարում: 3. Ահրսկավեց բարձրաձայն ոգրն ու լացը, այնուհետև, սպասելով որոշմանը, բոլորը զսպեցին արցունքները, և լռություն հաստատվեց: 4. Այնժամ Պերդիկոսը բոլորի աչքերի առջև դրեց արքայական բազկաթուղ, որի վրա դրված էր ազամանդե թագը, Ալեքսանդրի հագուստն ու զենքը: այդ նույն բազկաթուղի վրա դրեց նաև նախօրեին արքայի նրան տված մատանին: այդ առարկաները տեսնելով, բոլորը վերսկսեցին արցունք թափել, և վիշտը վերսկսվեց:

5. Պերդիկոսը այսպես սկսեց խոսել. «Ահա այն մատանին, որով արքան սովորաբար վաճկարացնում էր կարևոր պետական որոշումները և որը արքան ինձ է տվել: Ես վերադարձնում եմ այն ձեզ: 6. Թեև դժվար է պատկերացնել, որ զայրացած աստվածները կարող են մեզ մի ուրիշ դժբախտություն ուղարկել, որը համարժեք լինի մեզ վրա այժմ իջածին, այնուհանդերձ Ալեքսանդրի կատարած գործերի մեծությունը ստիպում է հավատալ, որ այդպիսի մեծ հերոսը մերձեցրել է աստվածներին մարդկային գործերին և նրանք շուտափույթ իրենց շարքը կընդունեն արքային, որը կատարել է ճակատագրով իրեն սահմանվածը: 7. Այդ պատճառով, քանի որ նրանից միայն սովորական մահկանացուի աճյունն է մնացել, մենք առաջին հերթին պետք է պատշաճը մատուցենք նրա անվանը և մարմնին, ընդ որում շնորհակալով, թե որ քաղաքում և ինչ ժողովրդի մեջ ենք մենք գտնվում և ինչպիսի պաշտպանից ենք զրկվել: 8. Զինակիցներ, անհրաժեշտ է մտորել և որոշել, թե ինչպես պահպանենք հաղթանակը, զանվելով նրանց մեջ, ում հանդիպ մենք

հաղթանակ ենք տարել: Մեզ գլուխ է պետք, Միայն իմը, թե մի քանիսինը՝ ձեր իրավունքն է որոշել այդ: Սակայն դուր պետք է գիտակցեք, որ զինվորների ամբոխն առանց առաջնորդի նույնն է, ինչ մարմինն առանց հոգու 9. Արդեն վեց ամիս է Ռոքսանան հղի է, ցանկանք, որ նա որդի ծնի. նրան էլ կպատկանի թագավորությունը, երբ նա մեծանա: Իսկ այժմ որոշեցեք, ով է այն կառավարելու»:

10. Այդպես խոսեց Պերդիկոսը: Այնուհետև ելույթ ունեցավ նեարքոսը. «Ոչ մեկի համար զարմանալի չի կարող լինել,— ասաց նա,— որ Ալեքսանդրի արքայական մեծությունն ժառանգությունը վայել է միայն նրա արյունակցին: 11. Սակայն դեռ չձեռնարկեց արքային սպասելը և արդեն գոյություն ունեցողին շրթհանցելը չի համապատասխանում ոչ մակեդոնացիների սրտն, ոչ էլ իրերի վիճակին: Արքան Բարսինայից որդի ունի. նրան էլ պետք է հանձնել թագը»: 12. Ոչ ոք նրա ճառին հավանություն չտվեց: Իրենց սովորովի համաձայն բոլորն աղմկեցին և երկար ժամանակ նիզակները գետնին էին խփում, և քանի որ նեարքոսը պնդում էր իր կարծիքը, գործը քիչ էր մնում հասնել խոռովության: 13. Այնժամ ելույթ ունեցավ Պտղոմեոսը. «Իհարկե, Ռոքսանայի կամ Բարսինայի որդին արժանի ժառանգորդ կե, Ռոքսանական ժողովրդին կառավարելու համար,— ասաց է մակեդոնական ժողովրդին կառավարելու համար,— ասաց է մակեդոնական ժողովրդին տհաճ կլինի արտասանել նրա անունա,— սակայն Եվրոպային տհաճ կլինի արտասանել նրա անունը, որը կիսով չափ գերի է: 14. Արժե՞ր արդյոք հաղթել պարսիկներին, որպեսզի ծառայեինք իրենց իսկ տոհմին: 2 է որ դեռ նրանց օրինական արքաները՝ Դարեհն ու Քսերքսեսը, իրենց բազմահազար բանակներով ու նավատորմով զուր ձգտում էին նվաճել մեզ: 15. Իմ կարծիքն այսպիսին է. ամեն անգամ, երբ միացյալ բնաբլիճան կարիք զգացվի, թող Ալեքսանդրի խորհրդի անդամները հավաքվեն նրա բազկաթուղի շուրջը, որը զրված է պալատում. ինչ որոշի մեծամասնությունը, և պետք է որ բոլորը կանգնած լինեն, դրան էլ պետք է ենթարկվեն բոլոր առաջնորդներն ու զորավարները»:

16. Ոմանք համաձայնեցին Պտղոմեոսի հետ, ավելի քչերը՝ Պերդիկոսի: Այնժամ սկսեց խոսել Արխստոնեսը. «Երբ Ալեքսանդրին հարցրեցին, թե ում է թողնում թագավորությունը, նա ասաց, որ ցանկանում է, որ այն բաժին ընկնի լավագույնին. ինքն էլ որպես լավագույնի ճանաչել էր Պերդիկոսին, որին և հանձնել էր մատանին: 17. Պերդիկոսը մենակ չի եղել մեռնողի

մոտ, և արքան ընկերների խմբից է ընտրել, թե ում հանձնի մատանին, հայացքը շրջելով բոլորի վրա: Հետևապես, նա ցանկացել է, որպեսզի գերագույն իշխանությունը հանձնվի Պերդիկոսին: 18. Ոչ ոք չէր կասկածում, որ Արիստոնեսի առաջարկությունը արդարացի է: Եվ այսպես, բոլորն առաջարկեցին Պերդիկոսին առաջ անցնել և բազկաթոռից վերցնել արքայի մատանին: Սա տատանվում էր գորեղ ցանկություն և խղճմտանքի միջև, և միաժամանակ մտածում էր, որ որքան ավելի զբաղվածություն մը հետամուտ լինի ցանկացածին, այնքան ուրիշներն ավելի հաստատակամությամբ կառաջարկեն դա իրեն: 19. Այսպես, երկար տատանումներից հետո, շիմանալով, թե ինչ անի, նա այնուհանդերձ հեռացավ և կանգնեց ավելի մոտ նստածների հետևում:

20. Իսկ այդ ժամանակ առաջնորդներից մեկը՝ հաստատուն բնավորության տեր Մելիագրոսը, Պերդիկոսի տատանումներից դալբացած, առաջ եկավ և ասաց. «Աստվածները չեն էլ թողնի, որ Ալեքսանդրի ճակատագիրն ու նրա իշխանության վեհությունը դրվի այս մարդու ուսերին. սովորական մարդիկ դրան չեն դիմանում: Ես չեմ ասում ավելի ազնվազարմների մասին, քան նա է: Բայց ընդհանրապես մարդիկ չպետք է իրենց կամքին հակառակ որևէ ծանրություն կրեն: 21. Նշանակություն չունի արքա կղարձներ Ռոքսանայի որդուն, եթե նա ծնվի, թե Պերդիկոսին, քանի որ նա, միևնույն է, կրնանզարավի իշխանությունը խնամակալության իրավունքով: 22. Երբ նրան ոչ մի արքա դուր չի գալիս, բացի դեռ չծնվածից. լիովին օրինական և նույնիսկ անհրաժեշտ համբնդհանուր շտապողականության պայմաններում միայն նա է հաշվում ամիսները և նույնիսկ կանխազուշակում արու չավակի ծնունդ. իսկ դուք դեռ կասկածում եք՝ պատճառ է նա արդյոք բնդառաջելու: 22. Երբում եմ աստվածներով, եթե Ալեքսանդրը մեզ իր փոխարեն այս մարդուն արքա թողած լիներ, ապա իմ կարծիքը սա է, որ նրա բոլոր կարգադրություններից միայն այս մեկը չպետք է կատարել: 23. Ինչու՞ չեք վազում թալանելու արքայական գանձերը: Այդ հարստություններին ժառանգորդը, իհարկե, ժողովորդն է: 24. Այդպես խոսելով, նա ճեղքեց անցավ շարքերի միջով, իսկ նրան ճանապարհ ավողները հետևեցին նրան՝ հայտարարված ավարը վերցնելու:

VII. Մելիագրոսի շուրջն արդեն հավաքվել էր զինվածների մի մեծ ամբոխ, և ողջ հավաքը ապստամբության վերածվեց, երբ

ամենաստորիններից մեկը, որն անծանոթ էր մակեդոնացիների մեծամասնությանը, ասաց. «Ինչու՞ դիմել զենքի և քաղաքացիական պատերազմի, երբ դուք ունեք արքա, որին փրկություն է: 2. Դուք շրջանցում եք Փիլիպոսից ծնված Արիդեսոսին, մինչև այժմ ձեր արքայի՝ Ալեքսանդրի եղբորը: Նա սրբազան ծիսակատարությունների մասնակից է և միակ ժառանգորդը: Իսկ ինչու՞ է նա դրան արժանացել, ի՞նչ է արել, որ դուք զբոսնեք նրան բոլոր ժողովուրդների կողմից ճանաչված իրավունքներից: Եթե դուք փնտրում եք Ալեքսանդրի նմանին, ապա երբեք այդպիսինը չեք գտնի, իսկ եթե նրա մերձակա ազգականին, ապա Արիդեսոսը միակն է: 3. Լսելով սա, հավաքը սկզբում ասես հրամանով լռեց, այնուհետև բոլորը միանգամից ազմկեցին, որ անհրաժեշտ է կանչել Արիդեսոսին, որ մահվան են արժանի նրանք, ովքեր հավաքն առանց նրան են անցկացրել: 4. Այնժամ Պիթոնեսը արցունքն աչքերին սկսեց խոսել, որ Ալեքսանդրը հատկապես հիմա է մեղք, որը հավատացել է իբր բարի քաղաքացիների և զինվորների սուտ հավատարմությանն ու ծառայության պատրաստակամությանը: Նրանք մտածում են միայն արքայական անվան և ավանդույթների մասին, իսկ մնացած ամեն ինչ մշուշի մեջ է նրանց համար: 5. Լիովին պարզորոշ նա թվեց երիտասարդի արատները, որին առաջարկում էին հանձնել արքայությունը: Սակայն այն, ինչում նա կշտամբում էր նրան, ավելի շատ ատելություն առաջացրեց խոսողի հանդեպ, քան արհամարհանք Արիդեսոսի նկատմամբ, քանզի խղճալով նրան, բոլորը սկսեցին նրան հովանավորել: 6. Այսպիսով, բոլորը համառ գոշյուններով հայտարարում են, որ թույլ չեն տա հանձնել իշխանությունը որևէ մեկին, բացի նրանից, ով ծնվել է իշխելու համար, և պահանջում են կանչել Արիդեսոսին: 7. Մելիագրոսը Պերդիկոսի հանդեպ ունեցած ստելությունից ու թշնամանքից միանգամից Արիդեսոսին բերում է պալատ, և զինվորները ողջունում են նրան, կոչելով արքա Փիլիպոս:

8. Սակայն դա ժողովրդի խոսքն էր, այլ էր ավագանու կարծիքը: Նրանցից Պիթոնեսը սկսեց առաջ տանել Պերդիկոսի նախագիծը. նա Ռոքսանայի ապագա որդու խնամակալ է հայտարարում Պերդիկոսին և Լեոնատոսին, որոնք արքայական ժազում ունեին, 9. Բացի այդ, նա հանձնարարում է Կրատերոսին և Անտիպատրոսին Եվրոպայում վարել գործերը: Դրանից հետո ամեն

մեկից երդում ընդունվեց՝ ճանաչել Ալեքսանդրի որդու իշխանութունը: 10. Իսկ Մելեագրոսը, լինելին հիմք ունենալով վտանգից վախենալու, իր մարդկանցով հեռացավ: Հետո նա կրկին ներխուժեց պալատ, իր հետևից բերելով Փիլիպոսին և բղավելով, որ հանուն պետության շահերի նա օժանդակութուն է ցույց տալիս ընտրված արքային. թող բոլորը ստուգեն նրա տարիքը և համոզվեն, որ նա Փիլիպոսի զավակն է՝ արքայի որդին և եղբայրը: 11. Ոչ մի խորունկ ծով, ոչ մի ալեկոծված նեղուց ի վիճակի չէ այնպիսի ալիքներ բարձրացնել, որպիսիք լինում են ամբոխի շարժման ժամանակ, հատկապես երբ այն ըմբռնվում է նոր և կարճատև ազատությունը: 12. Միայն քչերը քվեարկեցին հենց նոր ընտրված Պերդիկոսի օգտին, մեծամասնությունը ցանկանում էր իշխանությունը տալ Փիլիպոսի ձեռքը, որին արհամարհում էին և երկար ժամանակ չէին կարողանում համաներդաշնակ ուղի ընտրել: Մեկ զղջում էին կայացրած որոշման համար, մեկ ամսուսում, որ զղջացել են: Վերջ ի վերջո համակրանքը ավելի շատ աճեց արքայի որդու օգտին: 13. Արիդեոսը հեռացավ ժողովից՝ ճնշված պալատականների ելույթներից: Նրա հեռանալու ժամանակ զինվորները ավելի շատ ձայները կտրեցին, քան հրաժարվեցին իրենց համակրանքից. նրան հետ կանչեցին, և նա հագավ արքայի այն հագուստը, որը դրված էր բազկաթոռին: 14. Իսկ Մելեագրոսը զրահ հագավ և դենք վերցրեց ձեռքը որպես նոր արքայի պաշտպան: Այնուհետև հայտնվեց փաղանգը, նիզակները վահաններին խփելով, պատբաստ ներկվել նրանց արյունով, ուժքը ամենևին իրենց համար չնախատեսված թագավորության հավակնություն ունեն: 15. Զինվորներն ուրախանում էին, որ թագավորության ուժերը մնալու են նույն ընտանիքի ու նույն տան ձեռքում: Ժառանգական իշխանությունը կամրապնդի արքայական տոհմը. նրանք վարժված էին մեծարել ու հարգել արքայի անունը և մտածում էին, որ ոչ ոք իրավունք չունի հավակնություն ունենալ, բացի թագավորելու համար ծնվածներից:

16. Այդ ընթացքում Պերդիկոսը, նախազգուշությունից կշնելով, հրամայեց փակել դահլիճի դռները, որտեղ դրված էր Ալեքսանդրի մարմինը: Նրա հետ եկել էին արիությանը աչքի ընկած վեց հարյուր զինվորներ. նրանց միացավ նաև Պաղոմեոսը և արքայական թիկնապահների կոհորտան: 17. Սակայն առանց որևէ դժվարության հազարանոց զինվածների ամբոխը

շարդեց փականքները: Ներխուժեց նաև (նոր) արքան²⁰, շրջապատված Մելեագրոսի գլխավորած կամակատարների ամբոխով: 18. Վրդովված Պերդիկոսը մի կողմ է կանչում Ալեքսանդրի մարմինը պաշտպանել ցանկացողներին, բայց ուժով ներխուժածները հեռվից նրա վրա նիզակներ և նետում: Շատերն արգեն վիրավորված էին, երբ պալատականները, սաղավարտեհները հանելով, որպեսզի ավելի հեշտ լինի ճանաչելը, սկսեցին խնդրել Պերդիկոսի կողմնակիցներին երկպառակություն չսկսել և փոխարենը զիջել արքային և մեծամասնությանը: 19. Պերդիկոսը առաջինը վալը գրեց գեները, մյուսները նույն բանն արեցին: Այնուհետև, հաշվի առնելով, որ Մելեագրոսը համոզում է նրանց շահոտանալ Ալեքսանդրի մարմնից, նրանք, ենթադրելով, որ նա ցանկանում է դարանակալել, դուրս եկան պալատի մյուս կողմից և փախան դեպի Եփրատ: 20. Աշնվատում երիտասարդներից բաղկացած հեծելազորի մեծ մասը հետևեց Պերդիկոսին և կեռնատոսին. նրանք ենթադրում էին դուրս գալ քաղաքից և տեղավորվել դաշտում: 21. Սակայն Պերդիկոսը, հույշունենալով, որ հետևակը կզա իրենց մոտ, որոշեց մնալ քաղաքում, որ տպավորություն չստեղծվեր, թե ինքը, հեռացնելով հեծելազորը, կտրել է այն մնացած զորքից:

VIII. Իսկ Մելեագրոսն անդադար համոզում էր արքային մահապատժի ենթարկել Պերդիկոսին իշխանության հանդեպ ունեցած հավակնությունների համար. եթե շահնձվի երաշխից ավելի հպարտությունը, նա հեղաշրջում կկազմակերպվու նա չի մոռացել իր ծառայությունները Ալեքսանդրի հանդեպ, ոչ ոքի չի վստահում և ոչ ոքից չի վախենում: 2. Արքան թուլատրում էր այդպես խոսել, բայց չէր համաձայնում նրա հետ: Մելեագրոսը նրա լուսությունը մեկնաբանեց որպես հրաման և արքայի անունից մարդիկ ուղարկեց Պերդիկոսին կանչելու: Նրանց հանձնարարվեց նաև սպանել Պերդիկոսին, եթե նա չհամաձայնի գալ: 3. Երբ Պերդիկոսին հայտնեցին արքայական հանոյակատարների գալստի մասին, նա տեղ գրավեց իր տան շեմին՝ արքայական կոհորտայի ընդամենը տասնվեց երիտասարդ քաջերով: Նա լուսանքներ թափեց եկածների գլխին, անվանեց նրանց Մելեագրոսի ստրուկներ և այնպես ապշեցրեց իր ողու հաստատակամությամբ, որ սրանք, գիտակցությունները կորցրած, փախուստի դիմեցին: 4. Իսկ Պերդիկոսը հրամայեց իր մարդկանց ձի նստել և մի քանի ընկերներով գնաց կեռնատոսի

մոտ, որպեսզի նոր հարձակման զեպքում ավելի ամուր պաշտպանութիւն հակադրի: 5. Հաշորդ օրը մակեղոնացիներն ընդունեցին, որ անվայել է Պերդիկոսին վտանգի ենթարկել, և նրանք որոշեցին զենքով պատժել Մելեագրոսին նրա հանդգնութեան համար: 6. Սակայն սա, կանխատեսելով այդ վրդովմունքը, դիմելով արքային, սկսեց խնդրել նրան հրաման արձակել Պերդիկոսին ձերբակալելու համար: Արքան պատասխանեց, որ Մելեագրոսի ցանկութեան համաձայն է արել կարգադրութիւնը, սակայն, այնուհանդերձ, այն որ Պերդիկոսը ողջ է, շպետք է խոռովութեան պատճառ հանդիսանա:

7. Այսպիսով, ազատ արձակելով ժողովը, Մելեագրոսը սաստիկ անհանգստացած հեծելազորի պառակտումից և շիմանալով ինչ ձեռնարկել (քանզի վտանգը, որ նա հենց նոր ուղղել էր զեպի թշնամին, այժմ շուտ է եկել իր դեմ), համարյա երեք օր մտածեց ապագա գործողութիւնների ծրագրի մշակման վրա: 8. Իսկ պալատում արտաքինից ամեն ինչ մնացել էր հնի պես. արքայի մոտ ցեղերից դեսպաններ էին գալիս, հավաքվում էին զորավարները, մուռքերը լիքն էին ծառաներով ու զինված մարդկանցով: 9. Բայց խոր, ակամա ճնշվածութիւնը մատնում էր իրագործական օգուտը անհուսալիութիւնը. բոլորն իրար կասկածում էին, ոչ ոք չէր համարձակվում մոտենալ որևէ մեկին և զրուցել, ամեն մեկն ինքն իրեն գաղտնի ծրագրեր էր մշակում, ուսումնասիրում էին նոր արքային, ավելի ու ավելի ողբում նախկինի կորուստը: 10. Բոլորն իրենց հարց էին տալիս, թե որտե՞ղ է այն արքան, որի կամքին նրանք ենթարկվում էին և որին հետևում էին: Նրանք որբացել էին թշնամական անհնազանդ ժողովուրդների մեջ, որոնք առաջին հնարավորութեան զեպքում վրեժխնդիր կլինեն իրենց կրած պարտութեան համար: 11. Այդպիսի մտորումներով նրանք թուլացնում էին իրենց ոգին, երբ հանկարծ հայտնեցին, որ հեծյալները, Պերդիկոսի գլխավորութեամբ, զբաղեցնելով Բաբելոնի շրջակա բոլոր դաշտերը, կասեցրել են քաղաք բերվող հացը: 12. Այդ պատճառով սկզբից զգացվեց պարենի պակաս, իսկ հետո սով սկսվեց, և քաղաքում գրեթե չկարողացան պահպանել, որպեսզի Պերդիկոսի հետ հաշտվեն կամ էլ զենքով նրա դեմ ելնեն: 13. Պատահամբ այնպես էր ստացվել, որ գլուղաբնակները, վախենալով գլուղերի ու ագարակների ամայացումից, փախել էին քաղաք, իսկ քաղաքացիները, երբ պարենը սկսեց չբավարարել,

լքեցին քաղաքը, և բոլորին թվում էր, թե մյուսների դրութիւնն ավելի լավ է, քան իրենցը:

14. Մակեղոնացիները, վախենալով այդպիսի համընդհանուր իրարանցումից, եկան արքայական պալատ և իրենց կարծիքն արտահայտեցին: Նրանք գտնում էին, որ անհրաժեշտ է զեսպաններ ուղարկել հեծյալների մոտ, որպեսզի վերջ տան երկպառակութիւններին և զենքը վայր դնեն: 15. Այսպիսով, արքան նրանց մոտ է ուղարկում թեսալացի Պասասին, մեզալուպիսի Ամիսոսին և Պերիլաոսին. երբ սրանք պատմեցին արքայի հանձնարարութեան մասին, հեծյալներն ասացին, որ իրենք զենքը վայր կդնեն միայն այն պայմանով, եթե արքան իրենց հանձնի տարածալիութիւնները հրահրողներին: 16. Երբ դա հայտնի դարձավ, արքայի զինվորները նույնպես դիմեցին զենքի: Փիլիպոսը, լսելով նրանց աղմուկը, զուրս եկավ պալատից և ասաց. «Պետք չեն երկպառակութիւններ: Մարտնչողներից նա պարզև կտանա, ով ավելի շուտ խաղաղվի: 17. Միաժամանակ մի մոռացեք, որ զուրբ գործ ունեք քաղաքացիների հետ. միանգամից զրկել նրանց հաշտութեան հույսից, կնշանակի արագացնել քաղաքացիական պատերազմի սկիզբը: 18. Փորձենք, գուցե հաշտվի մեզմացնել նրանց երկրորդ զեսպանութեամբ. ես համոզված եմ, որ քանի զեռ արքայի մարմինը թաղված չէ, բոլորը կհավաքվեն, որպեսզի նրան վերջին պարտքը տան: 19. Ինչ վերաբերում է ինձ, ես ամենից շատ ցանկանում եմ հրաժարվել այս իշխանութիւնից, որպեսզի քաղաքացիներին արյունահեղութիւն չառաջանա, և եթե ոչ մի հուշս չկա այլ կերպ համաձայնութեան գալու, ես թանխանձագին խնդրում եմ ձեզ, ընտրեք մեկ այլ ավելի արժանի արքայի»: 20. Արցունքն աչքերին նա իր գլխից հանեց թագը, աջ ձեռքով առաջ մեկնեց և առաջարկեց վերցնել, ով իրեն ավելի արժանի է համարում: 21. Այդ համեստ ճառը բոլորի մեջ հավատ ծնեց նրա հոգեկան բարձր հատկութիւնների հանդեպ, որոնք մինչ այդ սովերի տակ էին մնացել իր եղբոր պայծառ հիշատակի պատճառով: Այդպես, բոլորը սկսեցին պնդել, որպեսզի նա իրագործի իր մտածածը: 22. Նա նույն զեսպաններին ուղարկում է խնդրանքով, որպեսզի երկու առաջնորդներն իրենց մոտ ընդունեն Մելեագրոսին, որպես երրորդ: Առանց բարբութիւնների դրան համաձայնութիւն տրվեց, քանի որ Պերդիկոսը ձգտում էր

բաժանել արքային Մելիազրոսից և հաշվի էր առնում, որ ինքը մենակ իր ուժով հավասար չի լինի նրանց երկուսին: 23. Այդպիսով, փաղանգի հետ եկած Մելիազրոսին ընդառաջ ելավ Պերդիկոսը իր հեծելազորով: Երկու ջոկատները լռակյաց ողջունեցին միմյանց և միավորվեցին, ենթադրելով, որ ընդմիջտ ամբասանողն են խաղաղությունն ու համաձայնությունը:

IX. Սակայն ճակատագիրը մակեդոնական ժողովրդին բազաբացիական պատերազմներ էր նախատեսել, քանզի արքայական իշխանությունն անբաժանելի է, իսկ դրան ձգտում էին շատերը: 2. Այդպես սկզբից ուժերը հավաքվեցին, հետո ցրվեցին, և, քանի որ իրենց վրա ուժերից վեր բեռ էին վերցրել, մարմնի առանձին մասեր հրաժարվեցին ծառայել, և մեկի ուսերի վրա ամուր կանգնած իմպերիան քայքայվեց, հրը նրան սկսեցին դիմհարել մի քանի մարդ: 3. Այդ պատճառով հոռուական ժողովուրդը օրինավոր կերպով և արդարացիորեն ընդունում է, որ իր փրկությանը պարտական է պրինցեսպին, որը որպես մի նոր լուսատու հայտնվեց գիշերը, որը մենք արդեն վերջինն էինք համարում: 4. Հենց նրա հայտնվելը, այլ ոչ թե արեւածագը, խավարի մեջ թաղված աշխարհին լույս վերադարձրեց, որը զրկվել էր զլխից և երկպառակություններից դողողում էր իր մարմնի բոլոր մասերով: 5. Հրդեհի քանի՜-քանի՜ ջահեր նա հանգցրեց այն ժամանակ, քանի՜-քանի՜ թրեր դրեց պատանեները: Ինչպիսի՜ փոթորիկ փոխարինվեց պարզ եղանակով: Կայսրությունը ոչ միայն կյանք առավ, այլև սկսեց ծաղկել: 6. Թող նրան ոչ մի նախանձ շղիպչի, թող ծաղկի այն երկար տարիներ (ա՛խ, եթե հնարավոր լինեք հավիտյան), բարգավաճում նրա օջախին²¹:

7. Սակայն վերադառնամ շարադրանքին, որն ընդհատվեց ընդհանուր անվտանգության մասին մտորումներով: Պերդիկոսը իր փրկության միակ հույսը կապում էր Մելիազրոսի մահվան հետ և անհրաժեշտ էր համարում բռնել այդ դատարկ ու անհավատարիմ, անհապաղ հեղաշրջման պատրաստ և իրեն սաստիկ թշնամաբար տրամադրված մարդուն: 8. Բայց նա ջանասիրտությամբ բողաբկում էր իր մտադրությունը բոլորից, որպեսզի նրան անակնկալի բերի: Այսպիսով, նա դադունի դրդում է Մելիազրոսի հրամանատարության տակ գտնվող զորքից մի քանիսին, որպեսզի սրանք բացեիրաց, բայց իբր առանց իր տեղեկության, սկսեն բողոքել, որ Մելիազրոսն իր դիր-

քով հավասարեցվել է Պերդիկոսին: 9. Վերջինս ձևացրեց, իբր զարմացած է իր համար նոր իրադրությունը և, իբր ցավակցելով, հայտնեց նրան իր ամոստանքը: Վերջում նրանք համաձայնության եկան գտնել այդ խռովարար ճառերը հրահրողներին: 10. Մելիազրոսը շնորհակալություն է հայտնում և նույնիսկ զրկախառնվում Պերդիկոսի հետ, գովաբանում նրան իր հանդեպ ունեցած նման համակրանքի համար: 11. Դրանից հետո նրանք պայմանավորվում են միասին հետապնդել մեղաւորներին: Որոշում են ողջ զորքի ստուգում անցկացնել նախնիների սովորույթի համաձայն: Հարգելի պատճառ ճանաչվել էր վերջերս նրանց տարածայնությունները: 12. Մակեդոնական արքաները սովորաբար այսպես էին կատարում իրենց զորքի ստուգումը: դաշտի վերջում, ուր դուրս էր բերվում զորքը, երկու կողմից թափում էին մորթված շան փորոտիքը, իսկ այդ տարածության ներսում կանգնում էին բոլոր գինիվածները՝ մի կողմից հեծելազորը, մյուս կողմից՝ փաղանգը²²:

13. Այսպիսով, այն օրը, երբ նշանակված էր այդ սրբազան արարողությունը, արքան հեծելազորով ու փղերով կանգնեց հետևակի դիմաց, որը զլխավորում էր Մելիազրոսը: 14. Ահա շարժման մեջ է դրվում հեծելազորը, իսկ հետևակը, միանգամից տազնապելով վերջին երկպառակությունների պատճառով, ողից հետո դեռ չէր հանգստացել և ամբողջ ժամանակ ինչ-որ բանի էր սպասում, սկսեց երկյուղել, արդյո՞ք քաղաք են տանում հեծելազորը. բացի այդ հեծելազորի առջև մեծ հարթավայր էր: 15. Այնուհանդերձ, կասկածելով, արդյոք իրենք արդարացիորեն են կասկածել իրենց ընկերներին, հետևակայինները մնալով տեղում, պատրաստ լինելով ի սրտե հակահարված տալ, եթե որևէ մեկը հարձակվի իրենց վրա: Եվ ահա ջոկատներն արդեն մոտեցան և նրանց բաժանում էր ընդամենը մի փոքր տարածություն: 16. Այնժամ արքան մի դասակով սկսեց շրջալցել հետևակի շարքերը, Պերդիկոսի պնդմամբ պահանջելով խռովության մեղավորների նկատմամբ հաշվեհարդար տեսնել, որին անձամբ ինքը պետք է հետևեր: Նա սպասում էր համառության դեպքում նրանց վրա նետել ողջ հեծելազորը և փղերին: 17. Հետևակայինները շժմիլ էին իրենց վրա կախված անսպասելի վտանգից. և ինքը՝ Մելիազրոսն էլ կորցրեց իրեն և ընկճվեց: Ստեղծված իրադրությունում ամենաանվտանգը թվում էր սպասելն ու ճակատագրից առաջ լանցնելն էր: 18. Այնժամ Պերդի-

կուր, տեսնելով նրանց շվարումն ու հնազանդութիւնը, մնացածներինց առանձնացրեց մոտ երեք հարյուր մարդ, որոնք հետեւել էին Մելիազրոսին, երբ նա դուրս էր պրծել Ալեքսանդրի մահից հետո տեղի ունեցած անաշին ժողովից, և ողջ զորքի աչքի առջև նրանց դեմ տվեց փղերին: Նրանց բոլորին կոխկրտեցին այդ զագանները, և Փիլիպոսը²³ շարքելեց այդ: 19. Ակնհայտ էր, որ նա իրեն կվերագրի միայն այն, ինչը կարողարացվի ողջ միջադեպի էջով: Դա մակեդոնացիների միջև բաղաբացիական պատերազմների նախանշան և նույնիսկ սկիզբ դարձավ: 20. Մելիազրոսը ուշ հասկացավ Պերդիկոսի խորամանկութիւնը, բայց քանի որ իր հանգեպ ոչ մի բռնութիւն չէր կատարվել, հանգիստ մնաց իր ահողում, շարքի մեջ: 21. Սակայն շուտով, փրկութեան հույսը կորցնելով, քանի որ տեսնում էր, որ թշնամիները շարաշահում էին իր կործանման համար հենց նրա անունը, ում ինքն էր անձամբ արքա դրել, պատասխարվեց տաճարում: Բայց նույնիսկ տեղի սբրութիւնը չփրկեց նրան, և նա սպանվեց:


X. Պերդիկոսը, զորքը բաղաբ տանելով, խորհրդակցութեան համարեց ամենանշանավոր զորավարներին: Այդտեղ որոշվեց այնպես բաժանել կայսրութիւնը, որպեսզի արքան պահպանի զերագույն իշխանութիւնը: Եգիպտոսի և նրան ենթակա աֆրիկական ժողովուրդների սատրապ նշանակվեց Պտղոմեոսը: 2. Լատմեդոնտոսին տրվեց Ասորիքը և Փյունիկիան, Փիլոտեսին՝ Կիլիկիան, Անտիգոնոսը պետք է ընդուներ Լիկիան Պամփիլիայի և Մեծ Փոյուզիայի հետ միասին: Կարիա ուղարկվեց Կասանդրոսը, Լիդիա՝ Մենանդրոսը: 3. Հելլեսպոնտոսին սահմանակից Փոքր Փոյուզիան դարձրին Լեոնատոսի պրովինցիան: Կապադովկիան Պամփլագոնիայի հետ միասին անցավ Եվմեոսին: Նրան հրամայվեց պաշտպանել այդ երկիրը մինչև Տրապեզուս և պատերազմ վարել Արիարատի դեմ: Միայն նա կայսրութեան հավակնութիւն շունք: 4. Պիթոնեսին հրամայվեց կառավարել Մարաստանը, Լիսիմաքոսին՝ Թրակիան և նրան սահմանակից պոնտական ժողովուրդներին: Որոշում կայացվեց նաև, որ Հընդակատանի, Բակտրիայի, Սոգդիանայի և օվկիանոսի կամ Կարմիր ծովի ափերին բնակվող ցեղերի կառավարիչներին տրվի ռազմական իշխանութիւն իրենց ենթակա երկրներին սահմաններում: Պերդիկոսը պետք է գտնվեր արքայի մոտ և ղեկավարեր նրա մոտ գտնվող զորքերը: 5. Ոմանք կարծում էին, որ պրովինցիաները բաժանվել են համաձայն Ալեքսանդրի կտակի:

բայց այդ լուրերը, թեև ընդունվել են որոշ գրողների կողմից, մեր ստուգումներով պարզվեցին, որ կեղծ են: 6. Կայսրութեան մասնատումից հետո ամեն մեկը պահպանում էր իր դիզած հարստութիւնը այն հաշիվով, որ ինչ-որ ժամանակ վերջ կտրվի շափից դուրս նկատումներին: 7. Բանն այն է, որ դրանից քիչ առաջ արքայի ծառաները, ուրիշի թագավորութիւնները նվաճելու պատրվակի տակ, գրավեցին հսկայական տարածութիւններ, առանց պատերազմի որևէ պատճառների, քանի որ այդտեղի բնակիչները պատկանում էին մի ցեղի և ուրիշներից բաժանված էին իրենց թագավորութեան սահմաններով: 8. Սակայն դժվար է բավարարվել նրանով, ինչ դիպվածն է ընձեռում. երբ ավելի մեծ հավակնութիւններ ունես, ձեռքը ընկած առաջին քանն անհրապույր է թվում: Այդ պատճառով բոլորին թվում էր, թե ավելի լավ է իրենք լայնացնեն իրենց տիրակալութեան սահմանները, քան ընդունեն նախապես իրենց համար որոշածը:

9. Արդեն յոթերորդ օրն էր, որ արքայի մարմինը դրված էր դիակառքի վրա, բայց բոլորի հոգսերը նրա խնամքից ուղղված էին զեպի պետութեան կազմակերպման հարցերի լուծումը: 10. Ոչ մի այլ տեղ այդքան շուգ կլիմա չկա, ինչպես Միլազետում. արևը վրա հասնելով, մերկ գետնի վրա գտնվող կենդանիներին տեղնուտեղը սպանում է: Շիկացած օդի ուժը այնքան մեծ է, որ ամեն ինչ այրվում է ասես կրակից: 11. Աղբյուրներն այնտեղ հազվագայտ են, և բնակիչները թաքցնում են դրանք, իրենք օգտնվում են դրանցից, իսկ օտարերկրացիներին ցույց չեն տալիս: 12. Երբ ընկերները վերջապես ի վիճակի եղան տրվելու անշունչ մարմնի հոգսերին, նրանք, մտնելով դահլիճ, չնկատեցին նեխածութեան որևէ հետք, ոչ էլ նույնիսկ մահվան դավալութիւն. նրա ղեմքից չէր անհետացել նաև այն կենդանութիւնը, որը պահպանվում է շնչառութեամբ: 13. Այնպես որ եղիպտացիներն ու խալդերը, որոնց հրամայված էր նախապատրաստել մարմինը իրենց սովորութեան ճամաձայն, սկզբից չէին համարձակվում ձեռք տալ նրան, կարծելով, թե այն շնչում է. այնուհետև աղոթելով, որպեսզի իրենց՝ մահկանացուներին թույլ տրվի դիպել աստվածութեանը, նրանք մաքրեցին մարմինը, անուշահոտութիւններ լցրեցին և դրեցին ոսկե մահճի վրա, գլուխը զարդարելով նրա աստիճանի տարբերանշաններով:

14. Շատերը²⁴ կարծում են, թե նրան սպանել են թույնով և օր դա իր հոր հրամանով արքային տվել է Անտիպատրոսի²⁵

որդին, Իռլոս անունով, որը արքայի նախկին ծառաներից էր: Ճշմարիտ է, հաճախ լսել են Ալեքսանդրի այն խոսքերը, թե Անտիպատրոսը արքայական տիտղոսի հավակնություն ունի և որ նա, հպարտանալով սպարտացիների հանդեպ տարած հաղթանակով, իրեն հղորություն սովորական զորավարից ավելի բարձր է դասում և ամեն ինչ, որ ստանում է արքայից, վերագրում է իրեն: 15. Կարծում էին նաև, որ սպանության համար վետերանների ջոկատի հետ ուղարկել են Կրատերոսին: 16. Մակեդոնիայում պատրաստվող թույնի ուժն այնպիսին է, որ բայրայում է նույնիսկ պայտը, սակայն կենդանու սմբակը դիմանում է դրան: 17. Հանքազրյուրը, որտեղից ստանում են այդ թույնը, կոչվում է Մտիգուս: Այն բերել է Կասանդրոսը և հանձնել իր եղբայր Իռլոսին, իսկ սա լցրել է այն արքայի վերջին գավաթի մեջ: 18. Սակայն բազմաթիվ ազդեցիկ մարդիկ, վիրավորված այդ լուրերից, որքան էլ դրան հավատում էին, շուտով ստիպեցին մոռանալ դրա մասին: Չէ՞ որ Անտիպատրոսը գրավեց Մակեդոնական թագավորությունը, ինչպես նաև Հունաստանը: 19. Նրա իշխանությունն անցավ նրա սերունդներին, քանի որ Ալեքսանդրի հետ որևէ բարեկամական կապ ունեցող բոլոր մարդիկ ոչնչացվեցին: 20. Ալեքսանդրի մարմինը վերջ ի վերջո Պտղոմեոսը տեղափոխեց Մեմփիս, որին բաժին էր ընկել Եգիպտոսը, իսկ այնտեղից, մի քանի տարի հետո, այն տեղափոխվեց Ալեքսանդրիա: Նրա անվանը և հիշատակին մատուցվում են բոլոր մեծարանքները:



Ալեքսանդրի Մակեդոնացու արշավանքի



ԱՐԻԱՆՈՍ

ԱՆԵՔՍԱՆԳՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ

ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ

- Ա ր ա տ ա ն ն Ե ր — հնդկական անկախ ցեղ. բնակչության վայրն անհայտ է — VI.15.1;
- Ա ր դ Ե ր ա — քաղաք Թրակիայի Նեստոս գետի գետաբերանում, հիմնադրել են կաղոմենները, որի համար էլ կոչվում է «հելլենիստական քաղաք» — I.11.4;
- Ա ր ի դ ո ս — քաղաք Հելլեսպոնտոսի (այժմ Գարդանել) այն վայրում, որտեղ այդ նեղուցն ամենախորն է. Թրակիայի ծովափնյա թևը մասում է դանկում Աեսոսը — I.11.6;
- Ա գ ռ ի ա ն ա ց ի ն Ե ր — Հեմոս և Ռոդոպ լեռների միջով հոսող Ստրիմոն (այժմ Ստրոմա) գետի ափին բնակվող թրակիա-մակեդոնական ցեղ. հայտնի էին որպես հմուտ նետածիգներ. հիշատակվում են բազմիցս;
- Ա դ ր ա ի ս ա ն Ե ր — հնդկական անկախ ցեղ, որը բնակվել է Հիդրատոցի այն կողմ — V.22.3;
- Ա ք ու ռ ի ա — Ասորեստան — III.7.7;
- Ա լ ի յ ա ն հ ո Վ ի ա — պտղաբեր գետահովիտ Կիլիկիայում, Պիրամոս և Սարոս գետերի միջև — II.5.8;
- Ա լ ի ն դ ո ս — ամրացված տեղանք Կարիայում — I.23.8;
- Ա կ Ե ս ի ն — գետ Փենդարում (այժմ Չիբար) — VI.1.2, 3.1, 4.4, 13, 14.5, 15.1, 15;
- Ա ն ո ռ Ե — լեռնային ամրացների ընդհանուր անունը՝ Բակտրիայում — III.29.1, Հնդկաստանում — IV.28.1;
- Ա մ ա ր ո ս — քաղաք Կիպրոսի հարավային ափին. հայտնի է Աֆրոդիտի պաշտամունքով — II.22.2;
- Ա մ ա ն յ ա ն դ ա ր պ ա ս ն Ե ր — տե՛ս Կիլիկյան դարպասներ;
- Ա մ ր Ե ա կ ի ա — քաղաք Էպիրոսում — II.16.5;
- Ա դ Վ ա ն Ե ր — Ադվանքի բնակիչները (այժմ Դադաստան) — III.8.4, 11.4, 13.1;
- Ա մ ֆ ի լ ո ւ ֆ Ե ր — Ամֆիլոքիայի բնակիչները՝ Ամբրակիայի հյուսիսարևմտյան մասում — II.16.5;

- Ա մ ֆ ի լ ո լ ի ս — քաղաք Մակեդոնիայում, Ստրիմոնի գետաբերանից ոչ հեռու — I.1.5, 2.5;
- Ա ն դ ա կ ա — մարդ Հնդկաստանում. աշխարհագրական դիրքն անհայտ է — IV.23.5;
- Ա ն ր Ե մ ո ս — քաղաք Մակեդոնիայում — II.9.3;
- Ա ն ր ի ի ր ա ն Ե — Փյունիկիայի լեռնային շղթան. ձգվում է Լիրանանին զուգահեռ — II.20.4;
- Ա ն ֆ ի ա լ ո ս — քաղաք Կիլիկիայում — II.5.2—5;
- Ա պ ո լ լ ո ն ի ա — քաղաք Մակեդոնիայում — I. 12. 7;
- Ա ս ա կ Ե ն Ե ր — հնդկական ցեղ, որը բնակվում էր Քարսուս և Ինդոս գետերի միասնական տեղից հյուսիս — IV.23.1, 25.6, 30.5, V.20.7;
- Ա ս ո ռ Ե ս ա տ ա ն յ ա ն դ ա ր պ ա ս ն Ե ր — տե՛ս Կիլիկյան դարպասներ;
- Ա ս ո ռ ի ֆ — երկիր, որը գտնվում էր Եփրատի և Միջերկրական ծովի միջև. Կելեսիրտա («խորքի Ասորիք»)՝ հարթավայր Լիրանանի և Անթիլիբանանի միջև. երբեմն այն կոչում էին «Ներքին Ասորիք», «Ասորիք գետերի միջև», Միջագետք՝ երկիր Եփրատի և Տիգրիսի միջև — II.13.7, III.6.8, 8.6, 11.4, 16.9, IV.13.4, VII.9.8;
- Ա ս պ ա ս ի ն Ե ր — պարսպամիասդների մարզում Փոյ և Ինդոս գետերի միջև բնակվող ցեղ — IV.23.1;
- Ա ս պ Ե ն դ ո ս — քաղաք Պամֆիլիայում, էլիբիեդոնտոս գետի ափին. ագրիանացիների գաղութը — I.27.1, բանակցությունները Ալեքսանդրի հետ — I.26.2 և 5;
- Ա վ տ ա ր ի ա տ ն Ե ր — Դալմաթիայի լեռներում բնակվող իլիրիական ցեղ — I.5.1;
- Ա տ յ ա ս — բարձր լեռ հյուսիսարևմտյան Աֆրիկայում — VII.1.2;
- Ա ր ա ր ի ա — գետ Գեղոսիայում — VI.21.3.1;
- Ա ր ա ր ի տ ն Ե ր — հնդկական անկախ ցեղ — VI.21.4;
- Ա ր ա դ — քաղաք համանուն կղզում. որը գտնվում է Փյունիկիայի ափամերձ շրջանում (ամենախորքը Բարենյան կղզիներից) — II.13.7, 20.1;
- Ա ր ա Լ ո ս ի ա ց ի ն Ե ր — Արարոսիայի բնակիչները, Պարսից թագավորության ամենավերջին մարզը, Գեղոսիայից հարավ — III.8.4, 11.3, 21.6, 28.3, VI.17. 3, հեծյալ արաբոսիացիներ — V.11.3, VII.6.3;
- Ա ր ա ֆ ս — գետ Հայաստանում — VII.16.3, Պերսեպոլիսի մոտ — III.16.6;
- Ա ր Բ յ ա — քաղաք Հյուսիսային Ասորեստանում — III.8.7, VI.11.4;
- Ա ր գ ո ս — Պելոպոնեսի արևելյան մարզը — II.5.9, 16.1, IV.11.6;
- Ա ր ի ա կ ա մ Ա ր ի ա ն Ե — մարդ Պարսից թագավորությունում — III.8.4, 25.1, 28.2, IV.6.6;
- Ա ր ի գ ի յ — վայր Հնդկաստանում, աշխարհագրական դիրքն անհայտ է — IV.2.6;
- Ա ր ի ս ր ա — քաղաք Տրովադայում — I.12.6;
- Ա ր կ ա դ ի ա — Պելոպոնեսի կենտրոնական մարզը — I.9.4, 10.1;
- Ա ր տ ա կ ա ն Ե ա — Արիայի հնազույն մայրաքաղաքը — III.25.5;
- Ա ր տ Ե մ ի ս ի ն — էլիբեա կղզու հրավեղանքը և նրան հարակից ծովափնյա զոտին — VI.11.6;
- «Ա ֆ ա յ ա կ ա ն Ե ա վ ա ն Ե դ ի ս ա» — նավահանգիստ Սիմոնի և Փոսոնիս գետերի միասնական տեղին մոտ — I.11.6;

Բարեկենիա — մարդ Տիգրիս և Եփրատ գետերի միջև՝ Բարեւոյն քաղաքով — V.25.5, VII.5.8, 19.4:

Բազիրա — վայր Հնդկաստանում — IV.27.5, V.28.1:

Բակտրիա կամ Բակտրիանա — Պարսից թագավորության հյուսիսային մարզը — IV.16.4, IV.30.4, գլխավոր քաղաքը Բակտրան և Բակար գետի ափին — III.29.1:

Բեովտիա — մարդ միջին Հունաստանում, Ատիկայից հյուսիս — I. 7. 5, 8.3, II.7.8:

Բիրլուս — փյունիկյան հնագույն քաղաք — II.15.6, Բիրլուսի արքան — II.20.1:

Բյուզանդիոն — քաղաք թրակիական Բոսֆորում (այժմ՝ Կոստանդնուպոլիս) — I.3.3:

Բյուրանիական քահայեցիներ — Ստրիմոնի շրջակայքից Բյուրանիա վերաբնակվածները (մարդ Փոքր Ասիայի հյուսիսարևելյան մասում):

Բոսֆոր — Թրակիական, այսինքն Կոստանդնուպոլիսյան նեղուց — V.7.1:

Բուտիա — մարդ Մակեդոնիայում — 1.2.5:

Բեռտանների կղզի — Անգլիան և Շոտլանդիան — VII.1.4:

Բուկսիա — քաղաք Հիդասպի արևմտյան ափին — V.19.4, 29.5:

Բուսել — գետ Ասորեստանում — III.8.7, VI.11.5:

Փարա — վայր Սոգդիանայում, որն ուրիշ ոչ մի տեղ չի հիշատակվում — IV.17.4:

Փազա — 1) ամրոց Պաղեստինի և Եգիպտոսի միջև գտնվող սահմանում — II.25.4, 26.1...27.7, 2) քաղաք Սոգդիանայում — IV.21.1 և 3:

Փաղատիա — մարդ Փոքր Ասիայում — II.4.1:

Փավգամելա — գյուղ Աթուրիայի ասորեստանյան մարզում — VI.11.5:

Փեդրոսիա — Արիանայի մի մասը VI.22.1, 23.1, գլխավոր քաղաքը՝ Պուրա — VI.24.1, 27.1, նվաճել է Ալեքսանդրը — III.28.1, VI.27.1, Գեդրոսիայի անապատը — VII. 10. 7:

Փեքեր (գետեր) — թրակիական ցեղ, որը բնակվում էր Բասորոսի այն կողմում — I.3.2..., 4.3..., սանմահություն պարզեղողներ: Հերոդոտոսը (IV.94) պատմում է, որ գեթերը հինգ տարին մեկ անգամ դեսպանություն էին ընտրում, որը պետք է դնար նրանց ասածու՝ Զամոլիսիսի մոտ, որպեսզի նրան անձամբ ասեր ժողովրդի կարիքների մասին: Հողի մեջ տնկում էին ցցեր և, դեսպանների ձեռքերից ու ոտքերից բռնելով, նրանց զցում էին վերև աճեցնել, որ ուղիղ ցցերի վրա ընկնեն: Գոնում էին, որ այդ մարդիկ լեն մահանում, այլ անմահություն են ձեռք բերում, որը նրանց հնարավորություն է տալիս կատարել հանձնարարված պատգամը:

Փերեստոս — հրվանդան էվրես կղզու հարավարևելյան մասում. այնտեղ էր գտնվում նաև համանուն քաղաքը — II.1.2:

Փլավդանիկներ կամ զլավսեր — հնդկական ցեղ, հիշատակվում է Էփայն այստեղ — V.20.2:

Փորդիոն — փոյուզիական արքաների հնագույն մայրաքաղաքը — I.29.3..., III.3.1...:

Փրանիկոս — գետ Միսիսյում, որի մոտ Ալեքսանդրը առաջին անգամ հաղթեց Գարեհին — I.13.1—2:

Փուրեյցիներ — հնդկական ցեղ, բնակվում էին Գուրեյ գետի մոտ — IV.23.1, 25.6...:

«Փարպասներ» — Թերմոպիլյան զարգասներ՝ լեռնային անցում Հյուսիսային Հունաստանից Միջին Հունաստան — I.7.5:

Պաներ — բոլոր սկյութներ, որոնք բնակվել են Կասպից ծովից արևելք. առաջին անգամ նրանց մասին հիշատակվել է Ալեքսանդրի ժամանակներում. նրանք Գարեհին զաշնակից ցեղերից էին, հետո անցան Սպիտամենի կողմը. Սոզդանայի անպատմության ճնշումից հետո նրանց հեծյալները Ալեքսանդրի հետ գնացին Հնդկաստան. զահերը Գարեհի զորքում — III.11.3, Բեսի զորքում — III.28.9. Ալեքսանդրի մոտ — V.12.2:

Պամակոս — Կելեսիթիայի հնագույն մայրաքաղաքը — V.11.9, 15.1:

Պասիլիոն — քաղաք Բյուրանիայում, Միսիսի և Փոքր Փոյուզիայի սատրապների նստավայրն է եղել, որը երբեմն կոչվում էր «Դասիլիոսյան սատրապություն»: Գրանիկոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո Ալեքսանդրն այնտեղ թողեց Պարմենիոնին:

Պելիփի — քաղաք Փոսիսում, Պառնասի ստորոտում, Ալոլլոնի նշանավոր դուռակատեղին:

Պիոս — քաղաք Մակեդոնիայում. Մակեդոնիայի կարևորագույն ամրոցը նրա հարավային սահմանում. այստեղ կանգնեցված էին Գրանիկոսի մոտ զահեծած մակեդոնացիների կիսանդրիները, որոնք քանդակել էր Լիսիպոսը. հետագայում Մետելոսը դրանք տեղափոխեց Հոմ — I.16.4:

Պիրկեյան աղբյուր — հոսում էր Թերեոլ:

Պիրտոս — ասակենների քաղաքը — IV.30.5:

Պրանգներ — էթիմանդոս (Հելմանդ) գետի ստորին հոսանքում բնակվող իրանական ժողովուրդ: Այս անունը հանդիպում է միայն Ալեքսանդրի արշավանքներից հետո. նրանց սկզբնական անունը «զարանգներ» էր, զենդական «zrayanha»՝ ծով բառից: Ալեքսանդրը նրանց մարզի կառավարիչ նշանակեց Արսամին՝ Արիայի սատրապին, բայց Սոզդանայի ապստամբությունից հետո նրա փոխարեն նշանակեց Ստասանդրոսին՝ Սոլեից — III. 21.1, 28.1, հեծյալ զորանվաճող մակեդոնական բանակում — VII.6.3, 10.6:

Պրապսակ — քաղաք Բակտրիայում — III.29.1:

Սբովպիա — այժմ Նուրիա — V.4.4, VI.1.3, VII.1.2, 15.4:

Ջադրաֆրատա — տե՛ս Վրկան:

Ջարանգներ — տե՛ս Ղազնգներ:

Ջարիասպ — Ենթադրվում է, որ Միանոսը Թուրանյան մարզի գլխավոր քաղաքը անվանել է մե՛կ Զարիասպ. մե՛կ Բակտրա (այժմ Բալխ) — VI. 1.5, 7.1:

Ջելևա — քաղաք Միսիսի Իգոս լեռան ստորոտում — I.12.5, շելիաներ — I.17.2:

է գ Ե — մակեդոնական արքաների հնազույն մայրաքաղաքը և դամբարանը — I.11.1;

է գ Ե յ ա ն ծ ը վ — ծով Հունաստանի և Փոքր Ասիայի միջև (այժմ Արշիպե-լազ) — VII.20.1;

է գ Ի Ե ա — կղզի Սարոնիկոսյան ծովածոցում, Ատիկայի և Արգոլիսի միջև — VI.11.6;

է դ Ե փ Ե ր ո ս — գյուղ Ատիկայի և Բեոլիաի միջև գտնվող սահմանում — I.7.9;

է ր Ի մ ա ն ղ ր ո ս — այսպես էին անվանում հույները Հելմանդ գետը Հրեղ-կաստանում — IV.6.6;

է լ Ե փ ա ն Ե Ի Ե — քաղաք Նեղոսի համանուն կղզու վրա — III.2.7;

է լ Ի մ Ե ա — Մակեդոնիայի հարավարևելյան մարզը — I.7.5;

է լ Ի ս — մարզ Պելոպոնեսի արևմտյան մասում — 1.10.1, 29.4;

է լ Ե ս Ի ս — վայր Ատիկայում, Սալամին կղզու դիմաց. հռչակված էր Գե-մետրիայի և Պերսեպոնեսի պաշտամունքով ու նրանց պատվին արվող զաղա-նածիսություններով — III.16.8;

է կ ր ա տ ա ն — Մարաստանի գլխավոր քաղաքը. պարսից - թագավոր-ների մատաչին նստավայրը — III.19.2, IV.7.3, VII.14.1. և 5;

է կ ր ը ի մ ա — քաղաք Հնդկաստանում, հավանաբար այնտեղ, ուր Քարուլը լցվում է Ինդոսը (emballein՝ «լցվել») — IV. 28.7;

է դ Ե ս պ ո տ ա մ ա Բ ո ս — վայր Թրակիական իներսոնեսում, համանուն գետի մոտ — I.9.3;

Է ո ր ղ ա կ Ի ա — գետ Իլիրիայում (այժմ Գեոլ) — 1.5.5;

Է ո ր ղ Ե ա — մարզ Մակեդոնիայի հյուսիս-արևմուտքում, համանուն քաղա-քով — I.7.5, VI.28.4;

Է պ Ի զ ա վ ր ո ս — քաղաք Արգոլիսում Ասկլեպիադեսի՝ բժշկության աստծու տաճարով — VII.14.6;

Է վ ա կ Ե Ե Ե — բոլորովին անհայտ ցեղ. հնարավոր է, որ ցեղի անունը հունարենին է անցել սխալ արտասանությամբ — VII.6.3;

Է վ ա պ Ի ա — գետ Հնդկաստանում, հավանաբար սխալ գրություն է. Քոսսպ (այժմ Չոնար) — IV.24.1;

Է վ ր Ե ա — էջպյան ծովի ամենամեծ կղզին (այժմ Էվրոպո) — II.2.4, III.19.6;

Է վ ր Ի մ Ե դ Ե ն ո ս — նավարկելի գետ Պամփիլիայում — 1.27.1;

Է վ Բ ս Ի յ ա ն ծ ը ը վ կ ամ Է վ Բ ս Ի ն — Սև ծով — 1.3.2—3, 12.6, III.30.9, IV.15.4, V.27, VII.1.3;

Է վ ր Ի պ ս — Էվրոսի և Բեոլիաի միջև նեղ շրանցք — II.2.4;

Է տ Ի լ ա — մարզ միջին Հունաստանի արևմտյան մասում — I.7.4, 10.2;

Ե ր Ի զ Ե ն — գետ Մակեդոնիայում (այժմ Չերնա) — 1.5.5;

Ե ր Ի ր Ի ս — կղզի Հերակլեայան սյունների մոտ — II.16.5;

Փ ա պ ս ա կ Ե ս — անտարկան քաղաք Սփրատի ափին. զեպի Բարեյունի և Փահայի նորերը գետով գնացողները այստեղով էին անցնում — II.13.1, III.6.4, 7.1, VII.19.3;

Ք Ե ր Ե — Բեոլիաի գլխավոր քաղաքը. վերաբերմունքը Մակեդոնիայի նկատմամբ — II.15.2..., VII.9.4, Ալեքսանդրի նվաճելը Քերեն — I.8.1..., քաղաքի ավերումը — 1.9.9...;

Ք Ե ս ա յ Ի ա — Հունաստանի հյուսիսային մարզը, նվաճել է Փիլիպոսը VII.9.4. Արևանուր հաճախ է հիշատակում Ալեքսանդրի զորքում թեսա-լական հիանալի հեծելազորի մասին (Քեսալիան հռչակված էր իր ձիերով):

Ք Ե ր մ Ե ա — քաղաք Պիտիդիայի Տավրոս լեռան մոտ — 1.27.5, 28.2;

Ք Ե ա կ Ի ա — մարզ, որը հյուսիս-արևելքից հարակից էր Մակեդոնիային. միջև է Փիլիպոսը վտանգավոր հարևան էր — VII.9.2, նվաճել է Փիլիպոսը — VII.9.3. Ալեքսանդրն իրեն ենթարկեց այն Թրակիական ցեղերին, որոնք դեռ անկախ էին — 1.1.5..., Թրակիացիները Ալեքսանդրի բանակում որպես հեծյալներ և հեռանակ — 1.14.3, 28.4, II.5.1, 7.8, 9.3, III.12.4—5, նրանց սաղմախեն-չությունը — II.7.5;

Ք ո ւ ր Ի ա — հունական քաղաք Իտալիայի հարավում — II.22.2;

Ի ա ս — քաղաք կղզյակի վրա, որը գտնվում է Կարիայի ափամերձ շրջանում — 1.19.11;

Ի դ Ե ա կ ա ն լ Ե ն Ե Ե Ե Ե — անտառածածկ լեռներ Միսիայում. ունի բազմաթիվ աղբյուրներ — I.12.6;

Ի լ Ի ր Ի ա ց Ի Ե Ե Ե Ե — Քեսալիացի և Մակեդոնիացի արևմուտք ընկած Էլիրիայի բնակիչները. իրեն է ենթարկել Փիլիպոսը. նրա մահից հետո ապստամբեցին — 1.1.4, միշտ թշնամաբար են տրամադրված եղել մակե-դոնացիների նկատմամբ — V.26.6, VII.9.2;

Ի լ ա ի ն ֆ ա ց Ե Ե Ե Ե («ձկնակերներ») — ցեղ, որը բնակվում էր Կարսի բնակչության ափին գտնվող Գեդրոսիայում — VI.28.5;

Ի կ ա ր ո ս — 1) կղզի Էգեյան ծովի հարավարևելյան մասում, որը կոչվում է Իկարյան ծով — VII.20.5, 2) — կղզի Պարսից ծոցում, որին այդ անունը տվել է Ալեքսանդրը — VII.20.4;

Ի Ե դ Ե ս — գետ Հնդկաստանում. ակունքները — V.4.1, հոսանքը — V.5.5, մե-ծությամբ — V.4.1, 6.8, միախառնվում է Ակեսինին — VI.14.4, Ինդոսի գետին — 4.1, VI.18.2, 20.1, կամուրջ Ինդոսի վրա — VI.22.7, 30.9, V. 3.5, 7.1, 8.1, Ինդոսով նավարկելը — VI.18.4...;

Ի պ ս ս — քաղաք Փոլոսիայում. այստեղ մեկ թվարկությունից առաջ 321 թ. զոհվեց Պերդիկոսը, որն արշավանել էր դեպի Պաղոնեսի դեմ, իսկ 301 թ.՝ Անտիոնոսը, որին շախչախեցին Լիսիմաքոսը և Սելևկոսը — VII.18.5;

Ի ս ր մ ո ս — «պարանոց». մեծ մասամբ այսպես են անվանում Կորնթա-կոսյան և Սարոնիկոսյան ծոցի միջև ընկած պարանոցը, որը Պելոպոնեսը միացնում է մնացած Հունաստանին, — VI.11.6, VII.2.1;

Ի ս ո ս — համանուն քաղաք Կիլիկիայի ծովածոցի մոտ. հարուստ և ծաղկող քաղաք. Ատորիքում, որը նրան շատ էր գտնվում, Ալեքսանդրի քա-ղաքը կառուցելուց հետո կորցրեց իր նշանակությունը — II.7.1, ճակատա-մարտ Իսոսի մոտ — II.20.3, III.1.2, 8.7, 22.4, VI.11.4;

Ի ս տ ր ո ս — Գանուր, ակունքները, հոսանքը, մեծությամբ — 1.2.2..., Կե-տարիանը — 1.3.2, կամուրջ Իստրոսի վրա — V.7.1...;

Լ ա դ ն — կղզյակ. զտնվելով Միլեոսի դիմաց, ծածկում էր նրա նավահանգիստը — I.18.4—5, 19.3 և 9:

Լ ա կ ե ղ ն մ ո ն ց ր ի ն ե ր — Ալեքսանդրի հակառակորդները — I.1.2, 7.2, III.6.3, 16.10. Գարեհից փող են ստանում II.16.6, դեպանություն են ուղարկում նրա մոտ — II.15.2, III.24.4, պատերազմ Աթենքի հետ — I.9.3, Թերեի հետ — I.9.4, դաստիարակությունը պարսիկների և նրանց մոտ — V.4.5:

Լ ա մ պ ա կ լ ո ս — բովանդակներն նշանակալից քաղաք Հելլասպոնտոսի հյուսիսարևելյան մերձծովյան շրջանում, հիմնել են փոկնացիները — I.12.6. կոչվել է նաև «Պրիսպոսի քաղաք»՝ պողաբերության ասածու անունով, որին այստեղ հասկանալի հարգում էին — I.12.7:

Լ ե ս ր օ ս — մեծ կղզի էգեյան ծովում, Միսիայի ափերի մոտ. այժմ կոչվում է Միտիլեն՝ իր ղլխավոր քաղաքի անունով — II.1.1, 13.3, III.2.6:

Լ ի ր ի ա — Ասիայի մի մասը — III.30.9: Հոտ հետևում լայնորեն տարածված կարծիքի Աֆրիկան աշխարհի ինքնուրույն մասը չէր, այլ կազմում էր Ասիայի մի մասը:

Լ ի ր ի ա կ ա ն ց ո մ ա ղ ն Ե ր — Հյուսիսային Աֆրիկայի բնակիչների ընդհանուր անունը, որոնց այսպես էին կոչում հույները, ելնելով նրանց բուստրոֆան ապրելակերպից — III.30.9:

Լ ի զ ի ն — գետ թրակիայում, հիշատակվում է միայն մեկ անգամ — I.2.1:

Լ ի զ ի ա — նրկիր Փոքր Ասիայի արևմտյան մասում, կառավարել են սատրապները — I.12.8, 17.1, III.6.8, նվաճել է Ալեքսանդրը — I.17.4, V.25.4:

Լ ի կ ի ա — թերակղզի Փոքր Ասիայի հարավ-արևմուտքում — I.24. 3—5, նվաճել է Ալեքսանդրը — V.25.4:

Լ ի կ ո ս — Տիգրիսի արևելյան հոսանքը Ատորեստանում. Ալեքսանդրը, հետապնդելով Գարեհին, որին ջախջախել էր Գալգամեկայում, կիկոսի մոտ հասավ բազմաթիվ փախչող պարսիկների. անցնելով գետը կամրջով, որը Գարեհը վերջերս էր կառուցել և չէր համարձակվել քանդել, վախճնալով, որ կկտրի իր զորքի նահանջի ճանապարհը՝ Ալեքսանդրը զորքին հանգիստ տվեց — III.15.4, դեպի ասորական անունը «Ջարի» է, «zebu»՝ գալլ բառից, հունարեն «lykos»՝ «գայլ» տեղական անվան թարգմանությունն է:

Լ և կ Ե ր ա — քաղաք Բեոտիայում — I.9.4:

Լ ու կ ա ն Ե ի ա — Հարավային Իտալիայի արևմտյան մասը. բնակիչները լուկաններն էին, որը հելլենացված սամնիտյան ցեղն էր — VII.15.4:

Ե ու ր ա ս մ Ե ն Ե — Կասպից և Արալյան ծովերի միջև զտնվող Կարակումի անապատում բնակվող ցեղ — IV.15.4, V.5.2, VII.10.6:

Կ ա ղ մ Ե ա — միջնաբերդ Քերեսում. այսպես է կոչվել քաղաքի հիմնադրի՝ պոսպելական Կաղմոսի անունով — I.7.1, 7.9—10:

Կ ա ղ ո ս լ ի ն Ե ր — ռազմատենչ ցեղ, որը բնակվում էր Կասպից ծովից արևելք, Ատորոպատենի պարսկական մարզում — III.3.5, 11.3:

Կ ա ի կ — գետ Միսիայում — V.6.7, Կաիկի գետաճյուղի տոանձնանում էր իր բերքառատությամբ — V.6.4:

Կ ա ի ս Ե ր — գետ Լիդիայում — V.6.7, Կաիսոսի հովիտն առանձնանում էր իր բերքառատությամբ — V.6.4:

Կ ա լ ա թ ի ա — քաղաք Թրակիայում, Պոնտոսի մոտ — VI.28.5:

Կ ա լ ի պ լ ի ս — քաղաք Կարիայում — II.5.7:

Կ ա ն ք օ ս — քաղաք Նեղոսի գետաբերանի մոտ, ավելի քան քսան կիլոմետր Ալեքսանդրիայից հեռու — III.1.5:

Կ ա պ ա ղ ո վ կ ի — մարդ Փոքր Ասիայում, Փոյուդիայից արևելք, նվաճել է Ալեքսանդրը — II.4.2, V.25.4, Կապաղովկիայի փոխարքան — I.16.3, III.8.5, կապաղովկիական հեծելազորը Ալեքսանդրի զորքում — III.11.7:

Կ ա ս պ յ ա ն ց ղ Ե ր ա յ ա ս Ե ր — անցումը Տավրոս լեռան արևելյան կողմը, հյուսիսարևմտյան Ասիայից Պարսից թագավորության հյուսիսարևելյան մարզերն անցնելու միակ ուղին — III.19.2, 20.2 և 4, VII.10.6:

Կ ա վ Ե ո ս — քաղաք Կարիայում — II.5.7:

Կ ա ր ի ա — Փոքր Ասիայի հարավարևելյան մարզը. կառավարել են արքաները — I.23.7, նվաճել է Ալեքսանդրը — I.23.6, կարիացի ժովալիները Ալեքսանդրի նավատորմում — VI.1.6, կարիացի «արտաքավածները» — III.8.5, 11.5, 13.1, «կարիական հարթավայր», որը ռոտզում էր Մեանդրոսը — V.6.4:

Կ ա ր մ ա ն ի ա — ժովափնյա երկիր, որը ձգվում էր Պարսից ծոցի երկարությամբ — VI.17.3, 27.2, 28.1...:

Կ ա փ Ե ն Ե ր — հեղեղական անկախ և ռազմատենչ ցեղ, բնակվում էին կամ Հիդրասպի և Ակեսինի միջև կամ Ակեսինի և Հիդրասոսի միջև — V.29.1:

Կ Ե լ Ե ն Ե — Մեծ Փոյուդիայում խոշոր, ծաղկող քաղաք, Մեանդրոս գետից սլ հեռու — I.29.1:

Կ Ե ր կ ի Ե ի ղ յ ա ն լ ի ճ — լիճ Մակեդոնիայում, որից հոսում է Ստրիմոն գետը — I.11. 3:

Կ Ե փ ի ս օ ս — գետ Բեոտիայում:

Կ ի Բ Ե ո ս — Կիլիկիայան կղզիներից:

Կ ի լ ի կ ի ա — Փոքր Ասիայի ախամերձ շրջանը, Կապաղովկիայից հարավ III.7.4, 22.4, Պամփիլիայից անջատված էր Տավրոսով — III.28.5, V.5.2, սատրապությունը — II.12.1—2, բաժանված էր հարթավայրայինի և լեռնայինի, վերջին բնակիչները «լեռնային կիլիկիացիներն» էին — II.5.6, 6.4:

Կ ի լ ի կ յ ա ն ղ Ե ր ա յ ա ս Ե ր կ ա մ Ա մ ա ն յ ա ն ղ Ե ր ա յ ա ս Ե ր — Կիլիկիա մասնելու ղլխավոր ճանապարհը Տավրոսի և Կապաղովկիայի լեռնաշղթաներով, Տարոն քաղաքից հյուսիս-արևմուտք. այս անցումով է Ալեքսանդրը մտել Կիլիկիա — II.4.2, 5.1, 7.1, 8.2—2. զրանք կոչվում էին նաև Ատորեստանյան զարպաններ — II.6.1:

Կ ի կ յ ա ղ յ ա ն կ ղ զ ի ն Ե ր — (cyclos՝ հունարեն «շրջանակ») զտնվում են էգեյան ծովի Դելոս կղզու շուրջը — II.2.2:

Կ ի ր Ե ն Ե — Կիրենիկայի ղլխավոր քաղաքը, Կարթագենից հեռու ամենամեծը Աֆրիկայի հյուսիսում — III.28.7, VII.9.8, էրատոսթենեսի հայրենիքը — V.3.1:

Կ ղ զ ի ն Ե ր Բ Ե տ ա ն Ե ն Ե ր ի — տե ս Բ Ե տ ա ն Ե ն Ե ր ի կ ղ զ ի ն Ե ր լ Ե:

Կ յ ու ղ Ե ո ս — գետ Կիլիկիայում — II.4.7:

Կ ր Ե ն Ե — Բնդոսի վտակը (այժմ Քարուլ) — IV.22.5, V.1.1:

Կալքեան — քաղաք Միսիայում, հիմնադրել են միլեացիները — I.12.6:

Կաս — կղզի Կարիայի ափամերձ շրջանում — II.5.7, 13.4, III.2.6:

Հադիս — այժմ Կադիս — III.30.9, VII.1.2:

Հալիկառնաս — Կարիայի ամենամեծ քաղաքը. տեղի զինաստիանների մայրաքաղաքը — I.20.2—3:

Հալիս — Փոքր Ասիայի ամենամեծ գետը. հին հույների համար այն սահման էր «Ասիայի այս կողմի» (Հալիսից մինչև էգեյան ծովը) և Ասիայի այն կողմի միջև (մեացած մայր ցամաքը) — II.4.2:

Հերոս — Քրակիայի գլխավոր գետը (այժմ՝ Մարիցա) — I.11.4:

Հելլեսպոնտոս — այժմ՝ Գարդանել — I.11.3. և 6, 13.6, IV.15.6, VII.9.6: Հելլեսպոնտոսի վրա Քսերքսեսի կառուցած կամուրջը — V.7.1, պատճել է Քսերքսեսը — VII.14.5:

Հելևոստոս — քաղաք Քրակիայի հարավում, Մաստուզիա հրվանդանի մոտ — I.11.5—6:

Հելիոպոլիս — հնագույն քաղաք Նեղոսի զելուայից արևելք, Արևին ելվորված նշանավոր տաճարով (հունարեն՝ «Արևի քաղաք») — III.1.3:

Հեմուս — լեռ, այժմ Բալկաններ — I.1.5—6, 2.1:

Հերակլիսյան սյուներ — այս անունը զեռ հնում տարբեր ձևով էին բացատրում. մի մասի կարծիքով դրանք հատկապես սյուներ էին, որ Աֆրիկայի և Եվրոպայի ծայրագույն կետերում կանգնեցրել էր Հերակլեսը երևանավորումն իր ամենահռավոր ճանապարհորդության. մյուսները գտնում էին, որ դա Արիլն է, Մավրիտանիայում Ասլաս լեռան հյուսիսարևմտյան ամենաբարձր գագաթը և նրա զիմաց գտնվող Իսպանիայի Կալպե լեռը: Հերակլեսը ճեղքեց այդ լեռները, այդ ձևով իրար միացնելով Միջերկրական ծովը և Ատլանտյան օվկիանոսը — II.16.4, V.26.2:

Հերմոս — գետ. սկիզբ է առնում Փոլյուզիայից, հոսում է Լիդիայով և լցվում Հերմոսյան ծոցը — I.17.4, V.6.7, Հերմոսի գետահովիտը Սարգեսի մոտ, հայտնի է իր բերքառատությամբ — V.6.4:

Հերմոզոսոս — վայր, որը հիշատակվում է միայն այստեղ. գտնվում էր մոտավորապես Կոլոնների և կամպուսկոսի միջև — I.12.6:

Հերոպոլիս («հերոսների քաղաք») — քաղաք Եգիպտոսում — III.5.4, VII.20.8:

Հիդասպ — Ինդոսի վտակը (այժմ Ջելում), աղուները և ընթացքը — V.5.5, 9.4, մեծությամբ — V.4.2, 9.4, VI.4.2, միախառնվում է Ակեսինին — VI.1.5, 3.1, 4.4, 14.5, Ալեքսանդրի մոտենալը Հիդասպին — V.8.4, գետանցը — V.11.1... 20.1, VII. 10.6, Հիդասպով նավարկելը — VI.1.1... կղզի այդ գետում — V.11.1, 14.3, Հիդասպի ափերին Ալեքսանդրի կառուցած քաղաքները — V.19.4, 29.5:

Հիդրաստ (այժմ Ռավի) — գետ Փենջաբում. միանում է Ակեսինին — VI.5.7, 13.1, 14.4, լցվում է Ինդոս գետը. ակունքները — V.5.5, մեծությամբ — V.4.2, 21.4, գետափը — VI. 8. 4:

Հիպարեոս — ամրացված քաղաք Կարիայի սահմանում — I.24.4:

Հիփաս — Փենջաբի հինգ գետերից արևելյանը, ակունքները — V.5.5,

մեծությամբ — V.4.2. միախառնվում է Ակեսինին — VI.14.4. երկիր, որը ոռոգվում է Հիդասպով — V.25.1, 29.2:

Հեղիստան — երկիր — V.6.2, VII.20.2 և 8. լեռները — V.3.3. գետերը — III.29.2, V.4.1... 6.7. փղերի որսը — IV.30.8. մի քանի վայրերում ձիերի մասին պարտիար լուսնն — VI.3.4. իմաստունները — VI.16.5, VII.1.5, 2.2. սերը պարերի և երգեցողության նկատմամբ — VI.3.5. Ալեքսանդրի արշավանքը Հեղիստան — IV.26.6... VI.22.1:

Հոնիա — հունական մարզ Փոքր Ասիայի արևմտյան ծովափին — I.12.8. նվաճել է Ալեքսանդրը — III.22.3, V.25.4, VII.9.7:

Հոնիական ծովածոց — Ազրիատիկ ծովը — I.4.6:

Հոնոսոս — կղզի էգեյան ծովում — II.20.2:

Մագնեսիա — քաղաք Կարիայի Մեանդրոս գետի մոտ — I.18.1:

Մալեա — հրվանդան Լակիզոնիայի հարավ-արևելքում — II.1.2:

Մալեր և օֆուդրակներ — Հիզրաստ գետի նրկու ափերին բնակվող հնդկական անկախ ցեղեր, որոնք հռչակված էին իրենց բազուկով — V.22.2, VI.4.3, 5.4, 6.1, 14.1—2. մալերի քաղաքները — VI.6.2:

Մալոս — տե՛ս Մեգարոս — II.5.9, 6.1, 20.2:

Մաեաինես — քաղաք Արկադիայում — I.9.4:

Մաբարոս — քաղաք Փյունիկիայում, Արադի զիմաց — II.13.7, 14.1, 15.6:

Մաբականդ — Սոզոմանայի գլխավոր քաղաքը (այժմ Սամարղանդ) — III.30.6, IV.3.6, 5.2, 6.3, 16.2:

Մարդեր կամ սմարդեր — լեռնային ոռոգման ենթակա ցեղ, որը բնակվում էր Մաբաստանում և վրկանում — III.24.1, IV.13.2. Գարեհի զորքում նետածիգներ — III.11.5, 13.1:

Մաբիամա — քաղաք Կելեսիթիայում, ենթարկվում էր Արադի արքային — II.13.8:

Մարկոմաններ — կելտական ցեղ (Արիանոսի կարծիքով), որը բնակվում էր Գանուրի ափերին — I.3.2:

Մաոգամ — ասակենների գլխավոր քաղաքը — IV.26.1, 27.5, 28.4:

Մասագետներ — սկյութ-մասագետներ, որոնք բռնել էին Կասպից ծովի հյուսիսարևելյան ափերը — IV.16.4... 17.1:

Մեանդրոս — Փոլյուզիայով և Կարիայով հոսող գետ — I.19.7. Կարիայում Մեանդրոսի գետահովիտը — V.6.4:

Մեգարիս — մարզ Լուսնաստանում, Ատիկայից արևմուտք — III.6.7:

Մեգարոսոս — վայր Կիլիկիայի Պիրամոս գետի գետաբերանի մոտ: Այստեղ Աթենասի տաճար կարևորագույնագիտ Մալոս քաղաքի համար, որն, ըստ ավանդության, հիմնել է Ամփիարոսի որդին՝ Ամփիլոքոսը — II.5.9:

Մեթիմեա — քաղաք Լեռոս կղզու հյուսիսային մասում — III.2.4:

Մելոս — կղզյակ էգեյան ծովում — I.9.5. Պելոպոնեսյան պատերազմի ժամանակ Սպարտայի համախոհ լինելու համար աթենացիները բնակիչներին զստանորեն պատժեցին. նրանց կամ կոտորեցին կամ ստրկության մատնեցին (416 թ.):

39 — Ալեքսանդր Մակեդոնացի 609

Մեմֆիս — եգիպտոսի հնագույն մայրաքաղաքը, դանձում էր Նեղոսի ձախ ափին — III.1.4, 4.5, 5.1, 6.1:

Մեծ կամ Ներֆին ծով — Օվկիանոս. այսպես էին կոչում և Ատլանտյան և Հնդկական օվկիանոսները:

Մեռալան կամ Մեռաիս լիճ (այժմ Ազովի ծովը) — այսպես էր կոչվում հարևան մեռածների ցեղի անունով — III.30.8—9, V.5.4, VII.1.3:

Մերոս — հնդկների սուրբ լեռը — V.1.6, 2.5. ըստ հին առասպելի Սեմեկեն՝ Գիտնիսոսի մայրը և Զևսի սիրուհին, ցանկանում է նրան տեսնել իր աստվածային կերպարանքով և այրվում է՝ խանձվելով շանթերից: Զևսը վերցնում է շատունացած Գիտնիսոսին և ազդրի մեջ գրած տեղ հասցնում (հունարեն ազդր՝ meros). այս դեպքի հիշատակին էլ Գիտնիսոսը, ինչպես Արիանոսն է պատմում, լնոն անվանել է Մերոս:

Միլասա — Կարիայի ամենամեծ քաղաքը — 1.20.4, 21.1:

Միլետ — Հոնիայի կարևորագույն քաղաքը, որը Մեանդրոսի գետաբերանից ութսուն ասպարեզ հեռու էր — 1.18.3... 19.1:

Միլիաս — կիկիայի հնագույն անունն է՝ «մարզ Մեծ Փոյուզիայում» — 1.24.5:

Միկալիս — հրվանդան Հոնիայում, Մեանդրոս լեռան արևմտյան եզրի վերջավորությունը (կերտս կղզու դիմաց) — 1.18.5, 19.2 և 7:

Միկենեֆ — Արգոլիդայի հնագույն քաղաքը — II.16.5:

Միեդոս — ժողովրդի քաղաք Կարիայում, որն ընկած էր Հալիկաոնասից հյուսիս-արևմուտք — 1.20.5..., 11.5.7:

Միսիա — մարզ Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում — V.6.4:

Միբիանդրոս կամ Միբիանդ — փյունիկյան քաղաք Իսոսյան ծովածոցի ափին — II.6.2:

Միբոնոս — Թրակիայի հարավային մերձափնյա շրջանում հունական դադուս — 1.11.4:

Միսիլեն — քաղաք (կերտս կղզու արևելյան կողմում. նվաճել են պարսիկները — II.1.1—2. ազատագրել են մակեդոնացիները — III.2.6:

Ցագիզեն — սարմատական ցեղ — 1.3.2:

Ցակասար — Սիրգարյա — III.30.7, VII.16.3:

Նավրակի — քաղաք Սոդդիանայում — III.28.9, IV.18.2:

Նեստոս — գետ Քրակիայում, լցվում է կղզյան ծովը (այժմ Մեստո) — 1.1.5:

Ներֆին ծով — Միջերկրական ծով:

Նիկեա — 1) քաղաք Հնդկաստանում պարսկամիտոսների մարզի սահմանի մոտ — IV.22.6. 2) քաղաք Հիդասպ գետի մոտ, որը հիմնել է Ալեքսանդրը ի պատիվ Պորթի գեմ տարած հաղթանակի — V.19.4, 29.5:

Նիսա — քաղաք Հնդկաստանում, թև որտեղ է դանվել, անհայտ է — V.1.1: 2.1...26.5, VI.2.3:

Նիսեյան հովիտ Մարաստանում — հսկայական հարթություն, որ արածում էին պարսից արքայի ձիերի երամակները — VII.13.1:

Շոշ — պարսից արքաների ձեռնային նստավայրը — III.16.2 և 7, 17.1, 19.3: VI.27.5, VII.4.4, 10.7:

Պամփիլիա — մարզ Ասիայի հարավային մասում — V.24.3, V.25.4. Կիկիայից անջատված էր Տավրոսով — III.28.5:

Պանգեոն — լեռ Մակեդոնիայի Ստրիմոն և Նեստոս գետերի միջև — 1.11.4:

Պասարգադֆ («պարսիկների գանձարան») — Պարսկաստանի մայրաքաղաքը, որը հիմնել է Կյուրոս Մեծը Աթրահակին հաղթելուց հետո — III.18.10 — II, VI.29.1, VII.1.1, 19.2:

Պասիտիգրիս — գետ Սոդդիանայում — III.17.1:

Պատալա — Ինդոսի գելտան և քաղաք նրա ափին — V.4.1, VI.17.2, 18.3, 20.1, 21.3:

Պատարմոս — ժողովրդի մեծ քաղաք կիկիայում, հայանի էր Ապոլլոնի պատգամախոսական տաճարով — 1.24.4:

Պարապամիս — Հինդուկուշ — V.2.3, 5.3. պարսկամիտոսների (երանց երկրի այժմյան Քարսլուստանն է) — IV.22.4, V.3.2, VI.26.1:

Պարավա — մարզ Կարիսում, սահմանակից էր Իլիրիային և Մակեդոնիային — 1.7.5:

Պարեոակ (սլոններ) — Պարսից թագավորության շատ մարզերի անունը. Արիանոսը հիշատակում է երկուսը. 1) Մարաստանի և Պարսկաստանի միջև — III.19.2. 2) Օքսոսի և Ցակասարի միջև — IV.21.1, 22.1:

Պարեոնիոս — հրվանդան ունեցող քաղաք Կիկիայում — III.3.3:

Պարսկաստան — «պարսից երկիր» — VI.29.1, VII.3.1, 23.1. «Պարսկական դարպասներ»՝ այլ կերպ «Շոշյան մայրեր» կամ «Գարպասներ»՝ նեղ անցում ութների և Պարսկաստանի միջև, որով անցնում էր Շոշ տանող ճանապարհը — III.18.2. Պարսից ծոց — V.26.2, VI.19.5. Պարսից ծով — VII.1.1, 19.3՝ սա Պարսից ծոցն է (հնում Կարմիր ծով էին անվանում ամբողջ Հնդկական օվկիանոսը, ավելի ուշ՝ միայն Պարսից ծոցը) — III.8.5, VII.16.2:

Պամփիլիան — մարզ Փոքր Ասիայում, Սև ծովի մոտ — II.4.1, V.25.4:

Պիլա — մակեդոնական արքաների մայրաքաղաքը — 1.5.4, III.5.3:

Պելլոն — քաղաք Իլիրիայում — 1.5.5:

Պելոպոնես — Հունաստանի հարավային մասը (այժմ Մորեի թերակղզին) — I.1.1:

Պելոպոնեզ — քաղաք Նեղոսի արևելյան թևում. էլք դիպի եգիպտոս — III.1.1:

Պենեյոս — Թեսալիայի դիլավոր գետը, որը հոսում է Թեմպլյան հարթավայրով. լցվում է Փերմեյան ծոցը (այժմ Սալամբրիս) — IV.6.7:

Պենեոս — Պեոնիայի բնակիչները հյուսիսային Մակեդոնիայի մարզում, որոնց իրեն ենթարկեց Փիլիպոսը — 1.5.1. պեոններն Ալեքսանդրի բանակում — II.7.5, 9.2:

Պերգամոն — քաղաք Պամփիլիայում — 1.15.9, 26.1, 27.5:

Պերիերոս — քաղաք Թրակիայում, Պրոպոնտիսի մոտ (Մարմարի ծով): Գաժանորեն ճնշվելով Փիլիպոսի կողմից, այդ քաղաքը օգնություն և աջակցություն էր ստանում պարսիկներից: — II.14.5:

Պ ե ր կ ա տ Ե — քաղաք Միսիայում — I.12.6:
 Պ ե ր ս Ե յ ո լ ի օ («պարսիկների քաղաք») — Պարսկաստանի մայրաքաղաքը — VII.1.1:
 Պ ե տ ի կ ո ս — մարդ Թրակիայում — I.11.4:
 Պ յ ու ղ Ե ա — քաղաք Պիերիայում — III. 5. 3:
 Պ ի Ե ր ի ա — մարդ Մակեդոնիայում, Օլիմպոս լեռան մոտ, համարվում է Օրփեոսի հայրենիքը — I.12.2:
 Պ ի մ ա ր ա մ ա — աղբահատների քաղաքը — V.22.3:
 Պ ի ն ա ր ա մ ո ս — քաղաք Կիլիկիայում, Կրազոս լեռան ստորոտին — 1.24.4:
 Պ ի ն ա ր ո ս — գետ Կիլիկիայում — II.7.1, 8.5:
 Պ ի ր ա մ ո ս — գետ Կիլիկիայում — II.5.9:
 Պ լ ա տ Ե ա — քաղաք Բեովտիայում, որը հույն-պարսկական պատերազմի ժամանակ Աթենքի կողմնակիցն էր, ավերել է Քսերքսեսը: Պելոպոնեսյան պատերազմի ժամանակ նրա բնակիչների մի մասին կոտորեցին սպարտացիները, մի մասին վերաբնակեցրին, Աթենքի հետ կապեր ունենալու համար ավերել են Թերակոնիները և միայն Ալեքսանդրի ջանքերով է այն վերականգնվել — 1.9.5 և 7:
 Պ ո լ ի տ ի մ Ե ա ո ս — Հույներն այսպես էին անվանում Սոզոկրանան (նրա մյուս, տեղական անուններն են Կոզիկ և Ջերավշան՝ «տակերք գետ») — IV.5.6, գետի մեծությունը — VI.6.7:
 Պ ր ա կ տ ի ո ս — գետ Միսիայում — I.12.6:
 Պ ր ո ս յ ո ն Ե ի օ — Մարմարի ծով — IV.15.6:
 Պ Ե կ Ե — քաղաք Գանուրի գետաբերանի մոտ, որն իր անունը ստացել է սոճու անտառներից (peuke — հունարեն սոճի»), որոնք ծածկում էին քաղաքը — I.2.3:
 Պ Ե կ Ե լ ա տ ի ղ ո ս կ ա մ Պ Ե կ Ե լ ա — մարդ և քաղաք Ինդոսի արևելյան ափին — IV.22.7, 28.6:
 Ռ ա զ ա — մեծ քաղաք Մարաստանի արևելքում — III.20.2:
 Ռ ա մ ր ա կ ի ա — Գեդրոսիայում օրիտների գյուղը — VI.21.5:
 Ս ա զ ա լ ա ս — քաղաք Պիսիդիայում — 1.28.2:
 Ս ա լ մ ա կ ի ղ ա — Հալիկառնասի միջնաբերդը — 1.23.3:
 Ս ա կ Ե ս ի ն Ե Ե Ե Ե — ցեղ, որը բնակվել է Հայաստանի հյուսիս-արևելքում — III.8.4, 11.4:
 Ս ա կ Ե Ե Ե — սկյուրական ցեղ, որը բնակվել է Թակարիայից արևելք ընկած լեռներում և Սոզոկրանայում — III.8.3, 11.4, VII.10.5:
 Ս ա մ Ե ր ա կ Ե — կղզի Էգեյան ծովում, հռչակված էր խորհրդավոր կուտ-քերի պաշտամունքով, որոնք հայտնի են կարիրներ անվամբ: Սամոթրակի-յան գաղտնածիտությունները հակասարազոր էին համարվում էլևսին-յանին:
 Ս ա մ ո ս — կղզի, որը գտնվում է Միկալեի հրվանդանի դիմաց (այժմ Կե-ֆալոնիա) — I.19.8, V.5.2:
 Ս ա ն զ ա լ — կաթնիչների ամրոցը — V.22.2...:
 Ս ա ն զ ա ր ի ո ս — գետ Բյուրանիայում — I.29.5:

Ս ա վ ր ա մ ա տ Ե Ե Ե Ե — Սարմատիայում բնակվող ցեղերի ընդհանուր անու-նը — 1.3.2:
 Ս ա ր ղ Ե ա — լիդիական արքաների հնադույն մայրաքաղաքը, հետագայում պարսկական սատրապների նստավայրը, գտնվում էր Պակոսոս գետի երկու ափերին — I.17.3..., 24.3. Սարդես միջնաբերդը Թմուլ լեռան վրա հա-մարյա անտիկ էր — I.17.5, III.16.5:
 Ս Ե զ Ե ո ս — հրվանդան Տրովադայում, ամբողջ Փոքր Ասիայի հյուսիսարև-մայան վերջավորությունը, էգեյան ծովով Հելլեսպոնտոս մտնելիս հրվան-դանի վրա էր գտնվում համանուն քաղաքը — 1.12.1:
 Ս Ե ս ո ս — քաղաք Թրակիայում, Արիոսի դիմաց — I.11.5—6:
 Ս ի զ ո ս — անհայտ քաղաք — II.13.3:
 Ս ի զ ր ի ս — հրվանդան Լեսոս կղզու արևմտյան մասում — II.1.2:
 Ս ի ղ Ե — քաղաք Պամփիլիայում — 1.26.4:
 Ս ի ղ ո ն — փյունիկյան հնագույն քաղաք, կամավոր հանձնվել է Ալեքսանդր-րին — II.15.6, 19.5—6, 22.6:
 Ս ի լ ի ո ս — ամրացված տեղանք Պամփիլիայում, Ասպենդոսի և Սիդի միջև — I.26.5:
 Ս ի ն ո ս Ե — հունական գաղութ Պափլագոնիայում — VII.2.1, ենթադրվում էր պարսիկների — III.24.4:
 Ս ի տ ա կ Ե Ե — Ատրեստանի հարավային մարզը — III.8.5, 11.5:
 Ս ի փ Ե ո ս — Կիլիկիայի կղզիներից — II.2.4, 13.4:
 Ս կ ի ո ն ո ս — Պալեն Թերակոնի վրա փոքրիկ քաղաք, Պելոպոնեսյան պա-տերազմի ժամանակ աթենացիները զրավելով այն (421 թ.) կոտորեցին ամբողջ լափահաս արական բնակչությանը, իսկ կանանց և երեխաներին ստրկության մատնեցին — 1.9.5:
 Ս կ յ ու ր Ե Ե Ե Ե — Գանուրի ափին — I.3.2. Եվրոպայի ամենաբազմաբանակ ժողովուրդը — IV.1.1, զեսպանություն Ալեքսանդրի մոտ — IV.15.1..., VII. 15.4, սկյուրական սակերի ցեղը Ասիայում — III.8.3, Կյուրոսը և սկյութ-ները — III.27.4, IV.11.9, V.4.5, սկյութ հեծյալները պարսկական բանակ-ում — III.8.6, 11.6, 13.3, 19.3, մակեդոնական բանակում — V.12.2, «սկյութական անապատ» — IV.5.4, V.25.5, սկյութների ընդհանուր խորհուր-դը — IV.5.1:
 Ս ս գ ղ Ե Ե — հեղիական ցեղ, որը բնակվել է Ինդոսի ներքին հոսանքի մոտ — VI.15.4:
 Ս ս գ ղ ի ա Ե ա — մարդ Ամու և Սիրդարիայի միջև (այժմ Բոլխարա), ոսկե-մանակից էր մասագետների երկրին — IV.17.4, զլխավոր քաղաքը Մա-րաբանդն էր — III.30.6, «Սոզոկրան ժայռ» — IV.18.4, սոզոկական քաղաք-ների բնակեցումը — IV.17.3:
 Ս ո լ Ե — ծովափնյա քաղաք Կիլիկիայում — II.5.5...6.4, 12,2, 20.2:
 Ս ո Բ ո ս — անհայտ վայր — II.6.1:
 Ս տ ի մ փ Ե ա — էպիրոսում մերձափնյա վայր — 1.7.5:
 Ս տ ր ի մ ո ն — Մակեդոնիայի կարևորագույն գետերից մեկը (այժմ Սթրումա) — I.11.3:

Ս ու լ յ ն ան — հրվանդան Ատիկայի հարավում — VI.11.6:
Ս ու լ յ ա — քաղաք Արիայում, սահմանակից էր Պարթևաստանին — III.25.1:
Ս կ (Melas) — գետ Քրակիայում, որը լցվում է համանուն ծովածոցը — I.11.4—5:

Վ ե ռ ի ն Մ ա կ ե ղ ո ն ի ա — երկրի հյուսիսային և արևմտյան մասերում լեռնային շրջան — 1.2.5:

Վ ր կ ա ն — մարզ Ասիայում, Կասպից ծովից հյուսիս-արևելք. դիրքը և սահմանահատկությունները — III.23.1, զլխավոր քաղաքը՝ Չաղարարտա — III.25.1, վրկանցիները Դարեհի բանակում — III.8.4, 11.4, Վրկանում Ալեքսանդրի նշանակած սատրապը — IV.22.1:

Տ ա ն ա ի ս — 1) Դոն — III.30.8, 2) Ցարսարտ — Սիրդարյա — III.30.8, IV.1.3, 3.6, V.25.5, VII.10.6:

Տ ա պ ու ռ և ն և ռ — ցեղ, որը բնակվում էր Պարսկաստանի և Կասպյան դարպասների միջև գտնվող Մարաստանում — III.8.4, 11.4, 23.1, 24.3, VII.23.1:

Տ ա վ լ յ ա ն տ և ն և ռ — իլիրիական ցեղ — 1.5.1—6, 1—4:
Տ ա վ ռ ո ս — 1) լեռ, որը Կիլիկյան բաժանում է Պամփիլիայից — III.28.5, V.5.2. 2) Առաջավոր Ասիայի լեռների ընդհանուր անունը:

Տ ա ռ ս ո ն — Կիլիկիայի զխավոր քաղաքը Կյուրնոս գետի ափին — II.4.5:
Տ ա ֆ ս ի լ — հեղիական իշխան Տարսիլի զխավոր քաղաքը — V.3.6, 8.2, VII.2.2:

Տ ե լ մ ե ս ո ս — քաղաք Լիկիայում — 1.24.4, II.3.3:
Տ ե ն ա ռ ո ն — հրվանդան Հակոնիայի հարավային ծայրամասում (այժմ՝ Մաթանան հրվանդան) — II.13.6:

Տ ե ն ե ղ ո ս — կղզի Տրովադայի մոտ — II.2.2:
Տ ի ռ ե ն և ռ — լարուսներ — VII.15.4:

Տ ի ռ ի ն ս — Արգոսի հնագույն քաղաքը, որտեղ թագավորում էր Ամփիոբիոնը՝ Ալկմենեի ամուսինը, Հերակլեսի մայրը. ըստ առավել տարածված առասպելի, Հերակլեսը ծնվել է Քերեոսում, ուր Ամփիոբիոնին և Ալկմենեին արտաքսել էր Սփենեոսը. Ալեքսանդրը հետևում է այն վարկածին, ըստ որի նրանք արտաքսվել են Հերակլեսի ծնվելուց հետո — V.26.5:

Տ մ ո լ ո ս — լեռ Լիզիայում — V.1.2:
Տ յ ու ռ ո ս — առևտրական հարուստ քաղաք Փյունիկիայում, հիմնադրել են սեղանցիները — II.15.6—7, Ալեքսանդրի Տյուրոսը պաշարելը — II.18—34:

Տ ր ա լ ս — քաղաք Կարիայում — 1.18.1, 23.6:
Տ ր ա պ ե ղ ո ս — Սինոպիի զաղութը Պոնտոսի արևելյան մասում, Սև ծովի ափին — VII. 13.4:

Տ ր ի Ր ա լ յ ն և ռ — թրակիական ցեղ, բնակվում էին այժմյան Բուլղարիայի տերիտորիայում — 1.1.4, 2.2...3.3, 4.6, V.26.6, VII.9.2:

Տ ր ի ո պ ի ո ն — հրվանդան Կարիայում, Կնիդոսի մոտ. Փոքր Ասիայի հարավ-արևմտյան ծայրագույն կետը — II.5.7:

Տ ր ի պ ո լ ի ս — քաղաք Փյունիկիայում. բաժանված էր երեք մասի, որոնցից յուրաքանչյուրը մյուսից մեկ ասպարեղ հեռավորության վրա էր և պարզապատ — II.13.2:

Ռ փ ա ռ — քոսեների հարևան ավազակարար ցեղ — VII.15.1, Դարեհի զորքում — III.8.5, նվաճել է Ալեքսանդրը — III.17.1..., VII.10.6:

Փ ա ս յ ի ս — ծովափնյա քաղաք Պամփիլիայում — 1.24.5—6:
Փ ա ռ ո ս — կղզի, որն Ալեքսանդրը երկար թումբով միացրեց Ալեքսանդրիային. թմբի վրա կանգնած էր նշանավոր նշանացույցը, որը նույնպես կոչվում էր Փարոս — VII.23.7:

Փ լ ի ն ս ս — քաղաք Հեսթիոտիդոսի թեսալական մարզում — 1.7.5:
Փ և ռ ո ս — քաղաք Կարիայում — II.5.7:
Փ ի լ յ պ և — քաղաք Պանդեոս լեռան մոտ, հիմնադրել է Ալեքսանդրի հայրը՝ Փիլիպոսը — 1.1.5:

Փ յ ու ճ ի կ ի ա — հռչակված էր բերքառատությունը — VII.19.5, կառավարել են փյունիկիական արքաները — II.13.7, 20.6, նվաճել է Ալեքսանդրը III.1.2, 16,9, V.25.4. փյունիկացիները հմուտ նավագներ էին — 1.18.7, II.20.7, 24.1, III.6.3, VII.19.3. կարողանում էին աստղերի միջոցով ճանապարհը գտնել — VI.26.4:

Փ ս կ ե ա — մարզ Հունաստանի հյուսիսում — 1.8.8, VII.9.4:
Փ ո յ ու զ ի ա — կենտրոնական մարզ Փոքր Ասիայում, որը բաժանված էր Մեծ և Փոքր Փոյուզիաների — III.22.3, V.25.4, VII.9.7:

Փ ա ղ կ ե ղ ո ն — քաղաք թրակիական Բոսֆորի հարավային ծայրում, Կոստանդնուպոլսի դիմաց — III.24.5:

Փ ա ղ կ ի ս — քաղաք Էվրոս կղզու վրա — II.2.4:
Փ ի ո ս — կղզի Էղեյան ծովում — II.1.1—2, 13.4:
Փ ո յ — գետ Հնդկաստանում, հավանաբար Փարսլի վտակ Ալինդարն է — IV.23.2:

Փ ո ս ն և ն և ռ — ավազակարար ցեղ, բնակվում էին Շոշաստանի հյուսիսային լեռներում — VII.15.1, 23.1:

Փ ս ա թ ռ և ն և ռ — հնդկական անկախ ցեղ — VI.15.1:
Փ ս ա ն թ ո ս — մեծ քաղաք և համանուն գետ Լիկիայում — 1.24.4:
Ք վ ա ղ ն և ռ — Դանուբի ափին բնակվող կելտական ցեղ — 1.3.2:

Օ ղ ռ ի ս ն և ռ — թրակիական ցեղ. Ալեքսանդրի զորքում հեծյալներ — III.12.4:
Օ ն ն ս ա տ ս ս — Բեռտիայի հնագույն քաղաքը Կասպիդյան լճի մոտ, հիտուն ասպարեղ Քերեից հետո — 1.7.5—7:

Օ լ ի թ — թրակիական Փաղիդիկիի զխավոր քաղաքը — IV.10.1:
Օ պ ի ս — քաղաք Տիգրիսի ափին — VII.7.6:
Օ ս ա ղ ն և ռ — հնդկական անկախ ցեղ — VI.15.1:

Օ ռ ա — քաղաք Հնդկաստանում, աշխարհագրական դիրքն անհայտ է — IV. 27.5... 28.4:
Օ ռ թ յ ո ս — լեռ Մակեդոնիայի հյուսիս-արևելքում. Քրակիայի սահմանում — 1.1.5:

Օ ռ ե ս թ ի ս — Մակեդոնիայի մարզը — VI.28.4:
Օ ռ ի ա ն և ռ — Արարիա գետից արևելք բնակվող հնդկական անկախ ցեղ — VI.21.3, 22.3:

Օրոքատիղա — քաղաք Հնդկաստանում, հիշատակվում է միայն այստեղ
— IV.23.5:

Օրբոմենոս — Բեովախյի հնագույն քաղաքներից մեկը. Փոկեյան պատե-
րագմից հետո ավերել են թերեացիները և բնակիչները վաճառվել են
ստրկության. որոշ աղբյուրներ նրա վերականգնումը վերագրում են աշ-
ղհն Փիլիպոսին՝ Ալեքսանդրի հորը — I.9.10:

Օբսիդալներ. տե՛ս մալեր:

Օբոս — Ամուգարյա — III.28.9, IV.15.7, VII.10.6, ակունքները և մեծու-
թյունը — III.29.2, VII.16.3:



ԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐՄՆ

Ագոբա — քաղաքային հրապարակ:

«Ագոավներ» — ժամանակակից ամբարձիչ կոունկ հիշեցնող շինություն:

Աղերսողներ — որևէ հզոր մարզու հետապնդած և նրա ցամառն ար-
ժանացած մարդիկ փրկություն և հովանավորություն էին որոնում ցանկա-
ցած աստծու զոհասեղանի մոտ: Նրանք ձիթապտղի ելուղները ձեռքներին
նստում էին այդ զոհասեղանի մոտ: «Աղերսողին» զոհասեղանի մոտից
տանելը համարվում էր ծանրագույն հանցագործություն:

Ամոն — եգիպտացիների աստվածը, որին նույնացնում էին հունական Զևսի
հետ: Նրա տաճարներից զլխավորը գտնվում էր «Ամոնի օազիսում» (այժմ
Սիվախի օազիս):

Ամփիկտոնիա — քաղաքների միություն, որոնք գտնվում էին որևէ տա-
ճարի շրջակայքում: Միության նպատակը տաճարի պահպանությունն էր,
դաշնակիցների իրավունքների փոխադարձ պաշտպանությունը և ընդհա-
նուր տոնակատարությունների կազմակերպումը:

Ամփիոն — առասպելական հերոս և թերեի արքան, ուր նրա պատվին տա-
ճար էր կառուցված:

Անրենոս — առասպելական հսկա: Անպարտելի էր, քանի դեռ հաված էր
գետին: Սպանել է Հերակլեսը, կարելով նրան գետնից:

Անտալկաթիլյան պայմանագիր — կնքվել է Պարսկաստանի և
Հելլադայի միջև 387 թ.: Ըստ այդ պայմանագրի Ասիայում հունական քա-
ղաքները մնում էին պարսիկների իշխանության տակ:

Ասելոս — նշանավոր նկարիչ, Ալեքսանդրի ժամանակակիցը:

Ասկլեպիոս — առողջության և բժշկության աստվածը: Նրա զլխավոր
տաճարը Լսիդալիոսում էր (Արգոսում՝ Պելեպոնեսի արևելյան մարզում):

Արես — հույների պատերազմի աստվածը:

Աֆիլիս — հույների զլխավոր հերոսը հույն-տրոյական պատերազմում:

Բագո — ներքինի՝ Գարեհի արքունիքում:

Բարբարոսներ — հույներն այսպես էին անվանում բոլոր ոչ հույներին:

Բել — բարեխոնացիների զլխավոր աստվածը (այլ կերպ՝ Բաալ):

Բենավարճուներ — բեռնափական անկախ քաղաքների ներկայացուցիչներն ու մագիստրոսները. Թնջնում երկու բերովապարզու կար:

Բուսիբիս — Պոսեյդոնի որդին, Եգիպտոսի առասպելական թագավորը, որը բոլոր օտարերկրացիներին զուգարեում էր Ձևսին: Սպանել է Հերակլեսը:

Գելան — Հիերոսի եղբայրը, Գենա քաղաքի տիրակալը, իսկ հետո՝ Միքալուզայի:

Գիմնասիոն — գիմնաստիկական վարժությունների համար տեղ:

Գիմեկեյն — տան կանանց բաժանմունքը:

Գեմադես — հռետոր, մակեդոնական կուսակցության կողմնակիցն էր և Գեմոսթենեսի թշնամին:

Գեմետրա — հասկի արտերի աստվածուհին: Նրա դստերը՝ Պերսեփոնային, փախցրեց ստորերկրյա աստվածը: Ձևը խղճաց մորը և Պերսեփոնային թույլատրեց տարվա կեսը մոր հետ անցկացնել երկրի վրա, մյուս կես տարին նա մնում էր Աիդում: Այս առասպելն իր պաշարանական մեկնաբանությունը էլ կազմում էր էլևսինյան գաղտնածիտությունների բովանդակությունը:

Գեմոսթենես — աթենացի հայտնի հռետոր, Մակեդոնիայի կատաղի թշնամին: Աթենքում հակամակեդոնական կուսակցության ղեկավորն էր (385—322 թթ. մ.թ.ա.):

Գիֆիրամբոս (գովերգ) — խմբերգային երգ, որը կատարում էին երկու իրար ձայնակցող երգչախմբեր: Մ. թ. ա. IV դարում գիֆիրամբոսների առավել ճանաչված հեղինակներն են եղել Թելեստոսը և Փիլոքսենոսը:

Գիսեյաս — խաղողագործների, զինու և միստիկական մոլեղնության աստվածը: Նրա պատվին աղմկոտ տոնակատարություններ էին արվում, որոնց մասնակիցներն ընկնում էին էքստազի մեջ: Նրանց մասին ասում էին, որ նրանք «համակված են Դիոնիսոսով»:

Կոնդի դարպաս — երեք անցում ունեցող դարպաս, որոնցից մեկտեղները նախատեսված էր սայլերի համար, իսկ կողմնայինները՝ հեփիստին:

Կրիփիլ — առասպելական գուշակ Ամփիարոսի կինը, որը նրան զրոյեց մասնակցել թեթևի դեմ արշավանքին, նախապես կաշառվելով նրա թշնամիներին:

Կրկարպարիսպներ — Աթենքն իր ղեկավոր նավահանգիստ Պիրեոսին միացնող պարիսպներ: Պելոպոնեսյան պատերազմում Աթենքի պարտությունից հետո սպարտանական զորահրամանատար Լիսանդրոսը ավերեց դրանք, սակայն մ. թ. ա. 392 թ. այն վերականգնվեց:

Ջարբը, աղեմոս — հեծյալների ղվարդիս, որն ավելացված էր որպես 16-րդ հեծելավաշտ մյուս 15 հեծյալ ջոկատներին. աղեմոսը կազմված էր անվանի մարդկանց որդիներից. դա արքային ամենամոտ թիկնապահների խումբն էր մարտի ժամանակ. «վազողներ» — Չետախույզներ, կային և հետի-

տան և հեծյալ հետախույզներ. ճիպարիս — հեծյալների ջոկատ. ենթադրում են, որ դրանք եղել են շորքը, յուրաքանչյուրում 1000 հեծյալ. նիպարեոս (νιπαρτος) — ջոկատի հրամանատար (νιπος՝ ձի և նիպարեոս՝ զինվոր) հուլիոս — ծանրազեն հետեակային զինվոր վահանով և նիզակով, զրահապատ՝ սաղավարտով և սոնապաններով. «երկիպա» — զինվոր, որին բաշտվան համար, որպես պարզև, կրկնակի էին վարձատրում. բերեազեն ջոկատներ — միայն նետ ու աղեղով կամ պարսատիկներով. լոթոս — հետեվակային զնդի ստորաբաժանում. Փիլոտեսի մահից հետո Ալեքսանդրը հեծելավաշտերն էլ (իդոսները) բաժանեց երկուական լոթոսների, լոթոսի հրամանատարը կոչվում էր «լոթագոս». տախարեոս — զնդի հրամանատար, որը սովորաբար բաղկացած էր 4000 մարդուց. յուրաքանչյուր հազարի հրամանատարը կոչվում էր էփիարեոս. բրուտարեոս — զինվորական պահակակետի հրամանատար. վանեակիլներ — հետեակի յուրաքանչյուր ծանրազեն զինվոր կրում էր վահան, և այս իմաստով «վահանակիրներ» էր կոչվում ամբողջ հետեակը, բայց կար հատուկ հետեակային ջոկատ՝ արքայական լեյբգվարդիան, որոնք «վահանակիրներ» էին կոչվում, ելնելով իրենց զերազանցությունից. նրանց երբեմն անվանում էին «վահանակիրների աղեմոս»:

Էակոս — մեռյալ աշխարհում առասպելական դասավոր: Նրա տոհմից է սերվել Նեոպոլոմենոսը՝ Աթիլեսի որդին:

Էակոսներ — էակոսի հետնորդները:

Էդոնոգիներ — էդոնիայի կանաչը, փոքր մաքր Սարիմոն գետի մոտ:

Էպամիսոնոս — Թերեի քաղաքական և ռազմական խոշոր գործիչ (IV դար մ. թ. ա.): Փալլոս հաղթանակներ է տարել Սպարտայի դեմ Լևկտրայում (վայր Բեռլոտիայում) և Մանտինեայում (քաղաք Արկադիայում), որը սպանում էր Բեռլոտիայի անկախությունը:

Էսֆիես — աթենացի հռետոր, Գեմոսթենեսի ժամանակակիցը և քաղաքական հակառակորդը. Մակեդոնիայի կողմնակիցը:

Էվերգեթներ — բառացիորեն բարձրաներ, որոնք սուլից փրկեցին Կյուրոսին և նրա զորքը. բնակվում էին Գեղարտիայի սահմանի մոտ — 111.27. է:

Էվրիսթես — Միկենեի և Տրիբեսի արքան, որի մոտ ծառայում էր Հեփիստին:

Թալսանդոների լեյոնդեր — տե՛ս Թալսանդոններ:

Թեոփրաստոս — Աթիստոսելի աշակերտը, «բուսաբանության հայրը», որը երկու հիանալի աշխատություն է թողել բուսական աշխարհի մասին՝ Տեղը, որ ակնարկված է, հավանաբար վերցված է նրա «Երակի մասին» աշխատությունից:

Թեոքրես — զեսպանության անդամներ, որոնց պետությունը ուղարկում էր որևէ սուրբ վայր, որպեսզի զո՛ւ մատուցեն կամ պատգամախոսին հարցում անեն:

Թեաթի — Աթիլեսի մայրը, ծովերի աստվածուհին:

Թերոն — Ագրիդեստի բռնակալը (այժմ Ջիրջենտ Սիցիլիայում). Հելոնի հետ Կարժանեց Կարթագենը 480 թ.:

Լևոի դուստրեր — Աթենքը ժանտախտից փրկելու համար զոհարելու են: Լիկուրգոս — Բեբենացի հոնտոր և պետական գործիչ. Մակեդոնիայի հակառակորդը, պայքարում էր մակեդոնական ազդեցությունից ուժեղացման դեմ (396—325 թթ. մ. թ. ա.):

Լիսիպոս — Կլանավոր քանդակագործ, Ալեքսանդրի ժամանակակիցը:

Կանդիս — պարսկական վերնազգեստ, թևերով կապա:

Կելսփոտես — Թիվարների հրամանավոր մարդ: Նրա աված ազգանշանով թիվը տակտով բարձրանում և իշխում էին:

Կենտավրոմաֆիա — կենտավրոսների և լապիթների ճակատամարտ. կենտավրոսներ՝ առասպելական կենսաբան-կենսի էակներ. լապիթներ՝ Բենալիայում բնակվող լեռնային ցեղ:

Կիդարիս — պարսից արքաների գլխի ծածկոցը:

Կիրարադոս — կիթարա նվագող մարդ, այն ժամ հիշեցնող լարային գործիք էր:

Կլոդոնեսներ — Մակեդոնիայում այսպես էին անվանում բաքսուհիներին:

Կոմոս — Գիսիսոսի պատվին արվող ուրախ շքերթ:

«Կրիա» — շարժական ծածկ, որի տակ կազմակերպում էին պաշարողական աշխատանքները:

Հալմոլիոս և Արիստոգիտոնես — Բեբենացի բռնակալ Պիսիտրատոսին սպանողները, նրանց պատվին կիսանդրիներ են դրվել:

Հակիրյանեսներ — առասպելական Բեբենացի արքա էրեթթևի դուստրերը, որոնք իրենց զոհարելուց հայրենիքի փրկության համար:

Հեգեմոնիա — բարձրագույն իշխանություն:

Հեկատեսոս — մ. թ. ա. VI դարի հույն պատմիչ:

Հերա — Զևսի կինը և ցուլը:

Հերակլիդեսներ — հունական դիցաբանության մեծագույն հերոս Հերակլեսի հանորդները:

Հերիոն — առասպելական հերթալիսանի հսկա, որը զեղեցիկ հոտեր ուներ, որոնք նրանից խեց Հերակլեսը:

Հիերոն — Սիրակուզայի բռնակալը (V դ. մ. թ. ա.):

Հիմատիոն — երկար թիկնոց, որը հաղնում էին թիտոնի վրայից:

Հիպերիդոս — Բեբենացի հոնտոր, Գեմոսթենեսի և Լիկուրգոսի ճամանակակիցը և համախոհը:

Հյուպարֆոս (ὕπαρχος) — մարդի կառավարիչ, իշխան (հունարեն ὑπαρχος — բառից՝ լինել ավագի հպատակության տակ):

Մանտիա — գուլակելու արվեստը:

«Մեծարֆոս» — այսպես էին անվանում պարսից արքային:

Մեծգաղտնածիսուրյունեսներ — տե՛ս Դեմետրա:

Մետեկեսներ — հույներ, որոնք իրենց հայրենի քաղաքում չէին բնակվում և որպես ալյուսիսի չէին օգտվում քաղաքացիական բուլը իրավունքներից:

Միմալոնեսներ — բաքսուհիներ:

Միջագետք — Մեսոպոտամիա:

Նավատորմը. հիմիոլ — ծովահենական թեթև նավ. կերկուր — գետային փոքրիկ բռնանավ բռնների տեղափոխման համար, աբիս — եռաշարք թիկնով ազմական նավ. տետեր — խոշոր շորշարք թիանավ. պենտեր — հեղաշարք թիանավ:

Նավարֆոս — նավատորմի հրամանատար, ծովակալ:

Նեսպտոլոմեսոս — Աքիլեսի որդին:

Նեմիբամ — Ասորեստանյան թագավորության հիմնադիրը, Իրեն է ենթարկել մի շարք պետություններ. նրա արշավանքը զեպի Հեղկաստան անհաջող էր. Պատմության մեջ նրա խնդությունը այնպես է միահյուսված լեզենդի հետ, որ մեկը մյուսից տարբերելը դժվար է:

Պանկրատիստ — բռնցքամարտի և ըմբշամարտի վարպետ:

Պարալոս — Աթենքի պետական նավը, որով մեկնում էին պետական դեսպանությունները:

Պարասաեգ — պարսկական երկարության չափ, հավասար է 30 սասարեզի:

Պեան — երգ, որը երգում էին կարևոր և հանդիսավոր զեպերում, ինչպես նաև աստվածների պատվին:

Պելես — Աքիլեսի հայրը:

Պերսես — առասպելական հերոս, սպանել է Մեդուզային, որի հայացքը բոլոր իրեն նայողներին վերածում էր քարի: Ալկմենեն՝ Հերակլեսի մայրը, Պերսեսի թոռն էր:

Պիեդարոս — մ. թ. ա. V դարի թիբեացի հայտնի քնարական բանաստեղծ:

Պոսեյդոն — հույների ծովերի աստվածը:

Պրիամոս — Տրոյայի ծեր արքան, Հեկտորի և Պարիսի հայրը:

Պրիպոս — պտղաբերության, ալգինների, դաշտերի և անասունների հոտերի աստվածը, նրան հատկապես հարգում էին կամպանիոսում, որի համար էլ այդ քաղաքը կոչվում էր «Պրիպոսի քաղաք»: Հետագայում նրա պաշտամունքը տարածվեց Հունաստանում և Իտալիայում: Կամպանիոսը գտնվում էր Գարզանիի ափին:

Պրոտեպիլոնոս — Տրոյայի դեմ արշավների մասնակից: Նա առաջինը իջավ ցամաք և առաջին զինվորն էր, որ սպանվեց Տրոյայի մոտ:

Պրոֆեսեսոս — ինչպես ժամանակակից հյուպատոս. պետության քաղաքացի, որին մյուս պետությունը հանձնարարում էր պաշտպանել իր շահերը պրոֆեսեսոսի պետությունում: Աթենացիներն, օրինակ, իրենց համար պրոֆեսեսոս էին ընտրում Կորնթոսից կորնթոսցի քաղաքացու:

Պսեփիմա — ժողովրդական վճիռ:

Ռապսոդեսներ — զրուցառացներ, որոնք երգելով արտասանում էին դուցազներգական պոեմներ:



«Ս ե ր կ և ի ի կ ր ո ղ ն ե ր» — արքայական շքատոմբ, որոնց ներգանքների ծայրերը ոչ թե սուր էր, որը թույլ տար այն խորել հողի մեջ, այլ ոսկուց կամ արծաթից սերկնի էր:

Ս ա յ ա — սյունաղարդ նախարահ. այսպիսի նախարահի հետին մասը սովորաբար նկարազարդված էր, նրա մոտ կիսանդրիներ էին դնում:

10000-ի արշավանք — Կյուրոս կրտսերը զնաց իր նղբայր Արտաքսերքսես Մեմենի դեմ, իր արամադրության տակ ունենալով հունական վարձկան զորքը (10 000): Կյուրոսի մահից հետո, որը սպանվեց կռվում, զրկվելով իր զինավոր զորավարից, հունական զորքը շարժվեց հետ, դեպի ծով, այդ նահանջը ղեկավարում էր Փսենոֆոնը, որն այդ մասին գրել է իր «Անաբասիսում»:

Տ ր ա պ ե զ ա — դրամափոխ, նա մի պետության փողը փոխում էր մյուս պետության փողի և իրականացնում էր մի շարք դրամային գործարքներ: Իր անունը նա ստացել է սեղան բառից՝ trapeza, որի հետևում կանգնած կատարում էր իր գործերը: Տրապեզայի ներկայությամբ կազմում էին պարտքի անդորրագրերը և տարբեր պայմանագրեր:

Փ և ն ի ք ա — Աթիլիսի ծեր դաստիարակը:

Փ ի լ ի ս ա ռ ո ս — Սիցիլիայի պատմիչը (V դար մ. թ. ա.):

Փ ա մ ի ն ե ր. ր ո ռ ե ն ա — Հյուսիսային, խոկ ալվելի ուշ՝ Հյուսիսարևելյան, նոտոս — հարավային, յապիգոս — Հյուսիսարևմտյան, էրեպիանես — քամիների էզեյան ծովում, որոնք Մեծ շան (Սիրիոս) համաստեղության երևույցից հետո 40 օր փչում են Հյուսիսից կամ Հյուսիս-արևմուտքից, Հեղիական օվկիանոսում՝ մուսոն:

Փ և ր ո Վ ն ե ա — քաղաք Բեռլտիայում, որի մոտ Ալեքսանդրի հայրը՝ Փիլիպոսը, հաղթեց հունական զորքին, որը կազմում էր հունա-մակեդոնական կռալիցիան:

Փ ի ա ռ — ներքնաշապիկ:

Փ ղ ա մ ի ղ — լայն, կարճ թիկնոց, որը վզի մոտ ճարմանդով միանում էր: Այն հայտնում էին պատերազմի, որոտրոտության և ճանապարհորդության ժամանակ:

Փ ս ն ճ կ ր ա տ ե ա — փիլիսոփա, Պլատոնի աշակերտը: Աթենացիները նրան բազմիցս որպես զեսպան ուղարկել են Փիլիպոս Ալեքսանդրացու՝ Ալեքսանդրի հոր մոտ:

Օ ր փ ն ո ս — առասպելական երգիչ, որին հետազայում համարեցին օրփեսայան աղանդի հիմնադիր, որն ուներ իր խորհուրդները:

ՀՈՒՆԱԿԱՆ ՅՐԱՅՈՒՅՑ

Աթենքում տարին սկսվում էր ամառվա արևադարձից, այսինքն հունիսի 21-ից:

Հեկատոմբոն — հունիսի վերջը և հուլիսի զամելինոն — հունվար
 մեաահիանիոնես — օգոստոս անթեսանրիոն — փետրվար
 բոնդրոմիոն — սեպտեմբեր էլյափերոլիոն -- մարտ
 պիանեպսիոն — հոկտեմբեր մունիքիոն — ապրիլ
 մեմակակրիոն — նոյեմբեր թարգելիոն — մայիս
 պոսիյգեոն — դեկտեմբեր սկիրոփորիոն — հունիս

Վալերագրերը և դեպքերը թվագրվում էին տեղի զինավոր մագիստրոսի անունով: Աթենքում նա առաջին արքունտոսն էր՝ «այսինչ արքունտոսի աարին»:

Մ. թ. ա. IV դարից սկսեցին հաշվել օլիմպիադաներով, այսինքն մի օլիմպիական խաղից մինչև մյուսն ընկած ժամանակով: Փանի որ այդ ժամանակահատվածը հավասար էր չորս տարվա, ապա տարեթիվը նշվում էր այսպես. 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ կամ 4-րդ տարի Ահա ինչպես են վերածում այդ տարիները մեր թվարկության տարիների. Սալամիսի մոտ ճակատամարտը տեղի է ունեցել 75-րդ օլիմպիադայի առաջին տարում. 75-1x4=296: Այս թիվը հանում են 776-ից (օլիմպիադաների սկիզբը). 776-296=480 թ. մ. թ. ա.:

Մակեդոնացիների մոտ տարին սկսվում էր աշնանը, սեպտեմբերի 19-ի և հոկտեմբերի 16-ի միջև: Արտեմիսիոսն այդ տարվա 9-րդ ամիսն էր, դսիսիոսը՝ 10-րդ, դալը՝ 3-րդ:

ՀՈՒՆԱԿԱՆ 25ՓԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ

Երկար ության շափերը	Սորուն մարմինների շափը
ստնաշափ (Ֆոտ) = 0,3083 մ	մեղիմնոս = 52.53 լ
կանգուն = 0.4624 մ	Հեղուկ ների շափերը
օրդիս (թևերի բացվածքի	մետրետես = 39.39 լ
լայնությունը) = 1.850 մ	խոս = 3.283 լ
պլեթրոն = 30.085 մ	Դրամը
ասպարեզ = 184.98 մ	տաղանդ = 24 ոտը 25 կոպ ոսկով
	դրամ = 24.5 կոպ ոսկով



ՌՈՒՅՈՒՄ Գ. Կ.

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵՂՈՆԱՅՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մ Ա Ն Ո Ւ Մ Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

III ԳՐԷՆ ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Արիանոսը («Ալեքսանդրի արշավանքը», գիրք II, գլուխ 20, §5) նշում է, որ Կլեանդրոսը, վերադառնալով այդ ուղևորությունից, իր հետ բերեց 4090 զինվոր:
- 2 Մարսիոս գետի անվան ծագման մասին տե՛ս Քսենոֆոնի «Անաբասիսում», I, 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1970:
- 3 Ըստ Արիանոսի (գիրք I, գլուխ 29, §1) ամբողջում 1000 կարիացի և 100 հույն վարձակառուներ կային:
- 4 Հատիևական բնագրում լրարերը կոչվում է «կազուցիատոր», աստվածների լրարեր Մերկուրիի (Հերմես) զավազանի անունով՝ «կազուցի»:
- 5 Միզաս արքան առասպելից հայտնի է նրանով, որ հրաժշտությունից իր անհետություն պատճառով ստացել է էշի սկանչներ (Տե՛ս Օվիդիոս, Մետամորֆոզներ, XI):
- 6 Այստեղ Կուրցիուսը կրկնում է Ստրաբոնի XIII, գլուխ 1, § 3) և Պլինիոս Ավագի (N. H., VI, գլուխ 2, §7) աշխատություններում Փոքր Ասիայի աշխարհագրական գիրքի մասին սխալ պատկերացումը:
- 7 Արիանոսը, հանելով Արիստոբուլոսին՝ Ալեքսանդրի ժամանակակիցին, ասում է (գիրք II, գլուխ 3, §7), որ Ալեքսանդրը հանեց առեղի միջով անցկացրած ձողը և հետո նրանից դուրս քաշեց հանգույցը: Լեզնիցը հաստատել է Կուրցիուսի մեկնաբանությունը:
- 8 Վենետիկի ծագման մասին հին պատմիչներ Կուրցիուսը, Լիվիուսը, Պլինիոսը և մյուսները իրար չհամընկնող տեղեկություններ են տալիս:
- 9 Հերոդոտոսը (գիրք VII, գլուխ 59) պատմում է, որ Քսերքսեսը իր զորքի հաշվառումը կատարում էր ամրություն մտցնելով և հանելով 10 000-ական մարդ:
- 10 Հատիևական caetra կամ caetra բառը՝ կարճ ուղղանկյուն վահան:
- 11 Դարեհի զրույցը Քարիզմոսի հետ, Քսերքսեսի և Դամարտեսի զրույցի օրինակով, Կուրցիուսին հուշել է Հերոդոտոսը (գիրք VII, գլուխ 101—102):

- 12 Ակինակը կարճ, ուղիղ սուր է. պարսիկների սովորական զենքը:
- 13 Հոտմեացի հեղինակը Յուպիտեր է անվանում պարսկական Օրմուզդ աստծուն:
- 14 «Անմահներին» ընկառի մասին, և նույնպիսի քանակությամբ, ասում է արդեն նաև Հերոդոտոսը (գիրք VII, գլուխ 83):
- 15 «Արքայի ազգականները», հիմն դատները ըստ նրանց քանակի, անկասկած միայն պալատական աստիճանի պատվավոր կոչում է:
- 16 Դորիփորներ (հուն.) — բառացիորեն նիզակակիրներ:
- 17 Ինչ կամ Վիլ—Բարեյունի առասպելական հիմնադիրը:
- 18 «Կիզարիս» — ապարոշի տեսակ, առջևի մասում բարձր (համ. Եսթրալայի հետ):
- 19 Ասպարզը հունական շափի միավոր է, մոտավորապես 175 մետր:
- 20 Այլ աղբյուրներում՝ 365, ըստ տարվա օրերի քանակի (տե՛ս Գիոդրոս, XVII, գլուխ 77, §6):
- 21 Ըստ երևույթին այստեղ սխալ է. մ. թ. ա. 401 թվականին այս տեղերով Կյուրոս Կրտսերն է իր զորքը տարել (տե՛ս Քսենոֆոն, Անաբասիս, գիրք I, գլուխ 2, Արիանոս, գիրք II, գլուխ 4, § 3), սակայն Յուստինոսը (գիրք I, գլուխ 7, §4), ինչպես և Կուրցիուսը, այս վայրը կասում է Կյուրոս Մեծի մասին հիշողությունների հետ:
- 22 Քսենոֆոնը (Անաբասիս, գիրք I, գլուխ 2, §23) ասում է, որ նրա լայնությունը երկու պլեթրոն է, այսինքն մոտ 60 մետր:
- 23 Դա վկայում է նաև Ստրաբոնը (գիրք XIV, գլուխ 5, § 12):
- 24 Արիանոսն (գիրք II, գլուխ 4, §7) ասում է, որ Ալեքսանդրը հիվանդացել է գորհոգնածությունից: Իսկ Կուրցիուսը՝ անձնատուր է եղել զբաղմունքի և հետադարձության նկատմամբ իր հակմանը:
- 25 Արիանոսն (գիրք II, գլուխ 5, §8 և գլուխ 12, §2) ասում է, որ Ալեքսանդրը Տյուրոս քաղաքին պատժեց պարսիկներին համառոտն բարեհաճորեն վերաբերվելու համար: Իսոսի մոտ տեղի ունեցած նահատամարտից հետո նա քաղաքն ազատեց դեռ պարտք մնացած 50 տաղանդից:
- 26 Ալեքսանդրի զորքը կիրճ մտավ պարսիկներից առաջ և թշնամուն հանդիպելու համար պետք է նահատակ շրջվեր մյուս կողմը, այսինքն հարավ շարժվելուց հետո՝ հյուսիս:
- 27 Հալկական Տավրոսի արևմտյան լեռնաշղթան կոչվում էր Աման. այստեղից Ամանյան դարպասներ:
- 28 Ըստ Արիանոսի (գիրք II, գլուխ 7, §1, գլուխ 10, §1) Դարեհը Պինարոս գետը չի անցել (§28):
- 29 Հոտմեացիների մոտ երրորդ պահակահերթը գալիս էր կեսգիշերին:
- 30 Քսենոֆոնն այս գեան անվանում է Կարոս (տե՛ս Անաբասիս, գիրք I, գլուխ 4):
- 31 Ըստ Արիանոսի (գիրք II, գլուխ 8, §11) Իսոսի մոտ տեղի ունեցած նահատամարտում, այնպես ինչպես և Արբելայի մոտ (տե՛ս գիրք IV, գլուխ 14, § 8), Դարեհը գանձվում էր իր զորքի կենտրոնում. Քսենոֆոնը (Անաբասիս, գիրք I, գլուխ 8) դա համարում է պարսկական բոլոր զորահրամանատարների սովորական հնարքը:
- 32 Պարսիկների նույնպիսի սովորույթի մասին Քսենոֆոնն էլ է ասում (Անաբասիս, գիրք I, գլուխ 7):

- 33 Նկատի ունի Բերե քաղաքը:
- 34 Ճակատամարտի նույնպիսի ընթացքի մասին է պատմում Դիոգորոսը (գիրք XVII, գլուխ 7):
- 35 Նրկու կողմերի սպանվածների մասին տեղեկությունները տարբեր հեղինակների մոտ տարբեր են:
- 36 Հերոդոտոսն (գիրք I, գլուխ 140) ասում է, որ պարսիկները իրենց հանգրուցյալների վրա մեղքամեծ էին լցնում և զնում դամբարան:
- 37 Այստեղ բառախաղ է. հունարեն Ալեքսանդր նշանակում է «այրերին հաղթող»:
- 38 Նկատի ունի Հնդկական օվկիանոսը:
- 39 Պարսկական տերության պաշտոնները նշելու համար Կուրցիուսը կիրառում է հռոմեական անունները: Դամասկոսի կառավարչին նա անվանում է պրեֆեկտ:

IV ԳՐՔԻ ՄԱՆՈՔԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Գրանք Դարեհի մոտ ծառայության մեջ զանվող հույներն էին (տե՛ս I գրքի 3-րդ ծանոթագրությունը):
- 2 Դարեհը սկզբում Կողման անունն էր կրում, արքա զոռնալուց հետո ընդունեց Դարեհ անունը:
- 3 Այս Ստրատոնեսը նա չէ, որի մասին խոսվում է §6-ում (տե՛ս անվանաշանկը):
- 4 Արգալոնիմոսին զահն առաջորկելու պատմության մասին պատմում են և ուրիշ հեղինակներ (Յուստինոս, գիրք XI, գլուխ 10, Կիզորոս, գիրք XVIII, գլուխ 47, Պլուտարխոս, գլուխ II, § 8. համմ. Լիվիոսի հետ, գիրք III, գլուխ 10):
- 5 Համեմատել X գրքի 4-րդ գլխի, ինչպես նաև III գրքի 39-րդ ծանոթագրության հետ:
- 6 Հերկուլեսը հռոմեական ասածու անուն է, համապատասխանում է հունական Հերակլեսին, այուրտական Մեկարտին, կարթագենական Բելին:
- 7 Աֆրիկյան էր կոչվում հարավարևմտյան ժամին:
- 8 Ազապներ — կենդ տեսակ, որոնք արձակելով նետողական մեքենաներից, կառչում էին թշնամու նավերից և հետ էին քաշվում:
- 9 Կուրցիուսը տարբերություն չի դեում Լիբանանի և Անթիլիբանանի միջև:
- 10 «Վայրի արարներ» սրանք հավանաբար արար ավազակների թափառող հրոսակախմբեր էին:
- 11 Կվինկվերեմա — հինգշաբթի օրանվա:
- 12 Կվադրերեմա — չորսշաբթի օրանվա:
- 13 Այստեղ Կուրցիուսը սխալ է թույլ տվել. պատերազմը սիրկուդցիների և կարթագենցիների միջև տեղի է ունեցել 20 տարի ուշ, Ալզափոկլեսի օրոք (311—306 թթ. մ. թ. ա.):
- 4 Ըստ Դիոգորոսի (գիրք XVII, գլուխ 108) կարթագենցի զորահրամանատար Համիլկարոսը Տյուրոս քաղաքին նվիրեց Ապոլլոնի արձանը, որը 405 թ. հափշտակել է հունական Ալես քաղաքից:

- 15 Սատուրն. հռոմեական ասածու անուն, համապատասխանում է այուրտական Մուրքին:
- 16 Կարթագենը կործանվել է մ. թ. ա. 146 թ.:
- 17 Նկատի ունի խոշոր շնամուկ կամ ոչ մեծ կետ:
- 18 Ազենոք. Սիզոնի առաջակական որդին, Փյունիկսի, Կազմոսի, Եվրոպի հայր. նրանց է վերագրվում քաղաքների հիմնադրումը կամ երկրների բնակեցումը:
- 19 Բուլղարացի գիտնական Վլ. Գեորգիևը («Пронсхождение алфавита»-Вопросы языкознание, 1952, 56) գտնում է, որ փյունիկյան և հունական այուրենները առաջացել են միևնույն այուրենից:
- 20 Նկատի ունի Կուրցիուս Թուֆուսի ժամանակաշրջանը, մտավորապես մ. թ. I դարի կեսերը:
- 21 Արիանոսը նրան անվանում է Բարսիկա. Կուրցիուսն այսպես է անվանում Ալեքսանդրի հարճին:
- 22 Մելեոք և Փոքր Ասիայի մյուս քաղաքները պատերազմի ժամանակ ձեռքից ձեռք էին անցնում:
- 23 Հին պատմիչները սկյուֆներ էին անվանում այն նույն ցեղերին, որոնք բնակվում էին միջինասիական տափաստաններից մինչև Տյան-Շանի նախալեռները:
- 24 Չեռադրերում այստեղ մտավորապես մեկուկես տող բաց է թողնված:
- 25 Ալեքսանդրի մայրը՝ Օլիմպիազան սերում էր Աքիլլեսի ստճից:
- 26 Եզրպոտոսի զլխավոր ասածուն՝ Ամոնին Կուրցիուսն ըստ իր սովորության անվանում է Յուպիտեր:
- 27 Տրոգլոդիտներ — հունական troglē՝ փոս, անցք և dyō՝ ընկղմվել բաներից, այսինքն ջարանձավի բնակիչներ:
- 28 Խորհրդանիշ-նավը վկայում է, որ տաճարը սկզբում կանգնած էր ծովի ափին:
- 29 Տիփոնի և այգալույսի աստվածուհի էոսի որդու՝ առասպելական արքա Մեմնոնի պալատը գտնվում էր Թերեում, Նեղոսի ներքին հոսանքի մոտ:
- 30 Ալեքսանդրի զբրած հույները պարսիկների մոտ ծառայության մեջ էին (համեմատել III գրքի I գլխի §9-ի հետ):
- 31 Կուրցիուսը ոչ մի տեղ չի նշում Գավգամելան, որը հայտնի է Ալեքսանդրի արշավանքների մասին ուրիշ աղբյուրներից:
- 32 Լուանի խավարումը եղել է 112-րդ օլիմպիադայի երկրորդ տարվա սեպտեմբերի 20-ին, այսինքն մ. թ. ա. 330 թ.:
- 33 Պրեստրիա — պրեստրի վրանը այսինքն՝ հռոմեական ճամբարի զորավարի (համեմատել IV գրքի §8-ի հետ):
- 34 Կուրցիուսի նշած խավարման պատճառները շեն համապատասխանում այն ժամանակվա զիտուսիան տվյալներին:
- 35 Ցոթ ամենանավանի պարսիկների մասին ասում է և Հերոդոտոսը (III, 70):
- 36 Բելիտներ. ցեղի անհասկանալի անուն է. զրանք կա՛մ Բելի սերունդներն էին, կա՛մ Փյունիկիայի Բելուս գետի մոտ բնակվող ցեղ:
- 37 Արբելայի մոտ առդի ունեցած ճակատամարտին մասնակցած պարսկական զորքի ընդհանուր թիվը հեղինակները տարբեր են նշում՝ 245 հազարից մինչև 1 միլիոն: Ավելի ստույգ թիվը՝ 80 հազար հետևակային և 12 հազար

- հեծյալ Արիանոսը հիշատակում է նաև հույն վարձկաններին պարսկական գորաշարքի կենարեում:
- 38 Լատինացի պատմիչը Յուլիոսը և Միննրվա է անվանում հունական աստվածներ Զևսին և Աթենա Պալլասին:
- 39 Լատիներեն բնագրում արված է «agema» (հուն.) բառը, որը նշանակում է գործող ուժ:
- 40 Արծաթե վահանակիրներ — համապատասխանում է լատիներեն բնագրի հունական argyraspides բառին (համեմատել VIII գրքի 5 գլխի հետ):
- 41 Չնազորի այս մասը վնասված է. Balacros անվան նշանակությունն անհասկանալի է ներկայացված խմբագրման մեջ նշանակում է ժողովուրդ, որը բնակվում էր Մակեդոնիայի տարածքում՝ բաշակներ: Ուրիշ խմբագրումների մեջ այդ բառը հասկացվում է որպես առաջնորդի անուն՝ Բալակրոս:
- 42 Մակեդոնական զորքում մոտավորապես 40 հազար հետևակային և 8 հազար հեծյալ կար (տե՛ս Արիանոսի, Յուստինոսի, Դիոդորոսի մոտ):
- 43 Նախորդ վկայություններից կրեում է, որ ճակատամարտը տեղի է ունեցել Տիգրիսի այն կողմում:
- 44 Վերևում՝ 12-րդ գլխի §6-ում նշված է, որ բակարիացիները ձախ թևում էին գտնվում:
- 45 Արելլայի ճակատամարտում կողմերի կորուստները, ինչպես նաև ճակատամարտի մասնակիցների ընդհանուր թիվը պատմիչները տարբեր են նշում. 40 հազարից մինչև 900 հազար՝ պարսիկների մոտ, 100-ից մինչև 300 մարդ՝ մակեդոնացիների մոտ:

V ԳՐԻՆ ԵՄՆՈՒՅՎՐՈՒՅՈՒՆՆԵՐ

- 1 Ալեքսանդրի բացակայության ժամանակ Մակեդոնիայի և Հունաստանի կառավարումը հանձնված էր Անտիպատրոսին:
- 2 Նկատի ունի Գարեհին:
- 3 Լատիներեն բնագրում այստեղ սխալ է. իրականում Արարիան պետք է աջ կողմում լիներ:
- 4 Միջագետք— Mesopotamia (հուն.):
- 5 Այստեղ Կուրցիոսը Բաբելոնի հիմնադրման և Եամիրամի մասին բազմաթիվ առասպելներից հավանաբար հետևում է Կտեսիոսին. ըստ Դիոդորոսի (գիրք II, գլուխ 7, § 5) Բելը հիմնադրել է ամրոցը, իսկ Եամիրամը՝ քաղաքը:
- 6 Անտիկ պատմիչները Բաբելոնի պարիսպների և աշտարակների չափերը տարբեր են նշում. 50-ից մինչև 250 կանգուն բարձրությունը և 358-ից մինչև 480 ասպարեզ՝ երկարությունը:
- 7 Հռոմեական յուզեր — մոտավորապես քառորդ հեկտար Պլինիոս Ավագի, Կուրցիոսի և ուրիշ մի քանիսի մաս յուզերը երկարության միավոր է, հավասար պլեթրոնին (մոտ. 30 մ):
- 8 Հնարավոր է, որ բնակիչի շինությունների ընդհանուր երկարությունը 80 ասպարեզ էր: Դիոդորոսը և Հերոդոտոսը Բաբելոնը այլ կերպ են նկարագրում:
- 9 Փիլիսարքոս (հուն.) — 1000 հոգուց կազմված ջոկատի հրամանատար:
- 10 Պատմիչները տարբեր թվեր են նշում Եռշում զավթած փողեղի մասին:

- 11 Մադաթը չէր ուզում հանձնվել Ալեքսանդրին:
- 12 Հայանի չէ, թե որ քաղաքի. ըստ Էրևույթի զա լեռնային անցումում ռազմական ամրացված պահակակետ էր:
- 13 Կրիա (տեխնիկական տերմին) — վերևից և կողքից վահաններով կառուցված ծածկ:
- 14 Այստեղ աշխարհագրական անճշտություն է. ըստ էության Պարսկաստանը գտնվում է Եռլի դարպասներից արևելք, այլ ոչ թե արևմուտք:
- 15 Կարմիր ծով էր կոչվում նաև այժմյան Պարսից ծոցը:
- 16 Արաքս — այժմ Բունդ Ամիր գետը. հաջորդ գետը Մեղրոն է՝ այժմ Պոլվար. Կուրցիոսի այն հաստատումը, որ Արաքսը լցվում է Մեղրոսը, կարելի է բացատրել նրանով, որ հազարամյակների ընթացքում գետերը փոխում են իրենց հունը:
- 17 Արիանոսը (գիրք III, գլուխ 18, § 4) նետածիգներին և հեծյալներին առանձին է նշում:
- 18 Հատկապես Պերսեպոլիսում:
- 19 Ըստ Յուստինոսի և Դիոդորոսի նրանք 800 հոգի էին:
- 20 Դիոդորոսը (գիրք XVII, գլուխ 69, § 8) ավելի մանրամասնորեն է թվարկում այն ամենը, ինչ օրվել էր վերաբնակիչներին. յուրաքանչյուր տղամարդուն և կնոջը հինգ ձևք հագուստ, երկու զույգ եզ, 50 ոչխար, 30 մեղիմնուս հացահատիկ, ինչպես նաև հարկերից ազատում:
- 21 Վերգիլիոսի համաստեղությունը այլ կերպ կոչվում է Պլիադա:
- 22 Մարզեր — ըստ Էրևույթի սանրանց էթնիկական անունը չէ, այլ մականուն, որ նշանակում է սքաշափրոսներ:
- 23 Այստեղ ակնարկում է Քսերքսեսի արշավանքը V դ. սկզբում և Աթենական թերակղզում ջրանցքի փորումը:
- 24 Պերսեպոլիսն ամայացավ. Կուրցիոսի հիշատակումը համապատասխանում է իր ժամանակաշրջանին (I դ. մ. թ.):
- 25 Հնարավոր է, որ Կուրցիոսը Արտաբազին հիշատակել է որպես Փիլիպոսի՝ մակեդոնական արքայի ընկերոջ, որը նախորդ գրքերում չի պահպանվել:
- 26 Վերևում (գիրք III, գլուխ 2, § 9) Կիլիկիայի ճակատամարտից առաջ ասվում է 30 հազար հույների մասին, հնարավոր է, որ դրանից առաջ նրանց ավելի շատ լինեին:
- 27 Էպիկուրյանների ուսմունքի դրույթը:
- 28 Ստոիկյանների ուսմունքի դրույթը:
- 29 Ըստ Յուստինոսի (գիրք XI, գլուխ 5) զա Պարթևաստանի Տիր գյուղն էր:
- 30 Երկմարտիկներ — հունական dimachae տերմինի բառացի թարգմանությունը. Կուրցիոսի բնագրում նկարագրված մարտարվեստի հնարքի հայտնագործումը վերագրվում է իրեն՝ Ալեքսանդրին:
- 31 Չնազորերում հինգերորդ գրքի վերջը չի պահպանվել. ենթադրաբար այն ունեցել է հետևյալ բովանդակությունը. Պոլիսարատոսը գտավ մեռնող Գաունեցի է հետևյալ բովանդակությունը. Պոլիսարատոսը գտավ մեռնող Գաունեցին մորթիների տակ, որոնցով ծածկված էր սալակառքը, Գարեհը դիմեց նրան շատ կրկար ևստով: Նա զոչում է Ալեքսանդրի հանդեպ սածած իր թշնամանքի համար և Պոլիսարատոսի միջոցով նրան է տալիս իր օրհնությունը Պարսկական պետությունը երջանիկ կառավարելու համար և որ նա մարդասպանների հետ դաժան դատաստան տեսնի հանուն բոլոր արքաների անվտանգության: Այնուհետև ասվում է Ալեքսանդրի վշտի մասին, այն պահ...

տիվներին մասին, որոնք էւս մատուցեց Գարեհի դիակին, Գարեհի շան հա-
վատարմութեան մասին, ի հակադրութիւն նրան շրջապատող մարդկանց գա-
վառանութեանը:

VI ԳՐՔԻ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Լակունտուր: Ձեռագրերում VI գրքի սկիզբը չի պահպանվել: Հավանաբար այն ունեցել է հունկալ բովանդակությունը: V գրքի ղեպքերի նկարագրու-
թյան ժամանակ, այսինքն 330 թ. ամռանը, Հունաստանում և Մակեդոնիա-
յում անհանգստություն էր տիրում: Ալեքսանդրի բացակայության ժամանակ
սպարտանական արքա Ագիստոսին հաջողվեց զորք հավաքել և ռազմական
զործողություններ սկսել Կրետե կղզում և Փոքր Ասիայի հունական ափամերձ
շրջանում՝ Հունաստանը մակեդոնական լծից ազատելու համար. օգնությունը
մարդկանցով, նավերով ու փողով նա ստանում էր պարսիկներից: Մակե-
դոնիայի կառավարիչ Անտիպատրոսը զորք հավաքեց՝ 40 հազար մարդ, և
Ալեքսանդրին տեղեկացրեց Հունաստանի իրադարձությունների մասին: Ար-
քան նրան փող ուղարկեց պատերազմը մինչև լիակատար հաղթանակի հասց-
նելու համար: Պատերազմի սկիզբը հաջող էր լակեդեմոնացիների համար,
սակայն հույների միջև միաբանություն չկար: Պելոպոնեսում Անտիպատրոսը
զլիսավոր ճակատամարտը տվեց, որն ավարտվեց լակեդեմոնացիների պար-
տությունը, սակայն մարտը համառ էր և նրկար շարունակվեց փոփոխվող
հաջողություններով...
- 2 Դիոդորոսը (XVII, 4) այս առիթով ասում է հունական ավազանու սովո-
րական հավաքի մասին Կորնթոսում:
- 3 Պլուտարքոսը (Ալեքսանդր, 43) Գարեհի այս կողմը նշվածում է էքսաթրոս:
- 4 Այժմյան Կերչի թերակղզու տերիտորիան:
- 5 Թրակիայի ձախակողմյան սահմանը, այսինքն հյուսիսայինը:
- 6 Բորիսթեն՝ Գնեպր, Տանախ՝ Գոն:
- 7 Ըստ Ստրաբոնի (XI, 5, 14) և Պլինիոս Ավագի (VI, 26, 29) սա Մարաստանի
ստորապ Արսակի նստավայրն էր:
- 8 Միջին դարերում սերբերին երբեմն արիբալներ էին անվանում:
- 9 Գարեհ Կողմանց արքա դարձավ պալատական հեղաշրջման հետևանքով:
- 10 Կերկեաներին՝ այլ կերպ շերկեսներին, Կուրցիուսը սխալմամբ վերաբնա-
կեցրել է Կասպից ծովի հարավային ափին, ինչպես նաև մոսիններին և
լեկոսիներին:
- 11 Կուրցիուսը նկատի ունի ամպեդոնոսներին, որոնք ըստ ավանդության բնակ-
վում էին Ֆեմիսկիրի մոտակայքում:
- 12 Հնում այնպիսի կարծիք կար, որ հյուսիսային օվկիանոսը գտնվում էր շրջ-
կաստանից, Կասպից ծովից և Վրկանից ոչ հեռու:
- 13 Արիանոս (III, 23, 6) այս քաղաքն անվանում է Ջադրաքարում:
- 14 Ալեքսանդրը խոսում է իր իշխանության օրինական ժառանգների մասին:
- 15 Կուրցիուսի պնդմամբ Ալեքսանդրի ժամանակ հույները մակեդոնացիների
լեզուն չէին հասկանում:
- 16 Փուլոպոնեսիներ և պափլագոնցիներ հատկապես շատ կային ստրուկներին
մեջ:

17 Մակեդոնական արքաներ Ալեքսանդր՝ Փիլիպի, Արիստուսը և Պերդիկոսը,
Փիլիպոսի նախորդներն են:

VII ԳՐՔԻ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Ալեքսանդր Լինկեստացուն հանձնելու մասին ասված է այն երկու գրքերից
մեկում, որոնք միջ չեն հասել:
- 2 էվերգիստներ (հուն.) — բարեգործներ:
- 3 Հավանաբար Կուրցիուսը նկատի ունի Կասպից ծովը, որ նա հաճախ շփո-
թում է Սև ծովի հետ:
- 4 Բարձր լեռնային դիրքի պատճառով այս երկրի կլիման սառն է:
- 5 Հնում Իրանի և Հինգուկուշի լեռները համարվում էին Կովկասյան:
- 6 Վրկանաց ծով. Կասպից ծովի մյուս անունը:
- 7 Կովկասի Ալեքսանդրիա — այժմ Փարսլի մոտ:
- 8 Կուրցիուսը նույնացնում է Տանախը (Գոն) և Յակսարը (Սիրդարյա),
համարելով այդ դետը Ասիայի և Եվրոպայի սահմանագիծը:
- 9 Ըստ երևույթին ձեռագրերում այստեղ բացթողում է:
- 10 Կուրցիուսը այստեղ էլ Պոնտոսը շփոթում է Կասպից ծովի հետ:
- 11 Ալիզանտոսին հետազայում Բալիա վայրը:
- 12 Եփրատով նույնպիսի գետանցի նկարագրություն է տալիս Փանոֆոնը (Անա-
բասիս 1, 4):
- 13 Ըստ Արիանոսի (III, 29) այս դեպքը տեղի է ունեցել մինչև Օքսոս գետն
անցնելը:
- 14 Տե՛ս §36:
- 15 Ըստ հույների սովորույթի ասածուն դիմողները պետք է իրենց զուխները
ծածկեն: Բրանսիդեների լեզուն հունարենն էր:
- 16 Այժմյան Սամարղանդը:
- 17 «Եվրոպական» անունը բացատրվում է Տանախն ու Յակսարը սխալ-
մամբ նույնացնելով:
- 18 նկատի ունի Կիմերյան Բոսֆորը:
- 19 Ըստ երևույթին Գաղա քաղաքը (Արիանոս, IV, 2, 2) Յակսարի մոտ:
- 20 Վերևում (VI, 16) Կուրցիուսն ասում է, որ Կյուրոպոլիսը պաշարել էր Կրո-
տերոսը:
- 21 Տանախի Ալեքսանդրիա՝ հետազայում Խոզենտ, այժմ Լենինաբադ:
- 22 Նույն ժամկետն է նշում Յուստինոսը (XII, 5), Արիանոսը (IV, 4) խոսում
է 20 օրվա մասին:
- 23 Ըստ Արիանոսի (IV, 4, 1) նոր քաղաքը բնակեցվեց հույն վաճառական-
ներով:
- 24 Ստրաբոնը (XI, 2) սարմատներին նույնպես սկյութներ է համարում:
- 25 Բակտրիան ընդհանուր առմամբ, այսինքն Սոզդիանան ներառվալ:
- 26 Հերոդոտոսը պատմում է, որ դրանք երկնային պարզներ էին (IV, 5):
- 27 նկատի ունի Ատրեստանը:
- 28 Ըստ Արիանոսի (IV, 5) Բակտրա քաղաքը գտնվում էր Պոլիսիմենտոսի
ստորին հասանցի ուղղությամբ. հնարավոր է, զա այժմյան Բուխարան է:
- 29 Պոլիսիմենտոս գետի մոտ, այժմ Զերավշան:
- 30 Բակտրիայի մի մասը կառավող Մարդիոնա մարզում:

տիվների մասին, որոնք նա մատուցեց Գարեհի դեպի, Գարեհի շուն հա-
վատարմութիան մասին, ի հակադրություն նրան շրջապատող մարդկանց զա-
վուհանությունը:

VI ԳՐՔԻ ԵԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Լակոնտը: Ձևագրերում VI գրքի սկիզբը լի պահպանվել է Լավանաբար
այն ունեցել է հունեյալ բովանդակությունը: V գրքի դեպքերի նկարագրու-
թյան ժամանակ, այսինքն 330 թ. ամռանը, Հունաստանում և Մակեդոնիա-
յում անհանգստություն էր տիրում: Ալեքսանդրի բացակայության ժամանակ
սպարտանական արքա Ագիստոսի հաշտվեց զորք հավաքել և ուղարկեց
զործողություններ սկսել կրեոն կղզում և Փոքր Ասիայի հունական արմատեր
շրջանում՝ Հունաստանի մակեդոնական լծից ազատելու համար. օգնությունը
մարդկանցով, նավերով ու փողով նա ստանում էր պարսիկներից: Մակե-
դոնիայի կառավարիչ Անտիպատրոսը զորք հավաքեց՝ 40 հազար մարդ, և
Ալեքսանդրի տեղեկացրեց Հունաստանի իրազարծությունների մասին: Ար-
քան նրան փող ուղարկեց պատերազմ մինչև լիակատար հաղթանակի հաս-
նելու համար: Պատերազմի սկիզբը հաջող էր լակեդեմոնացիների համար,
սակայն հույների միջև միարանություն չկար: Պելոպոնեսում Անտիպատրոսը
զլիսավոր նահատամարտը տվեց, որն ավարտվեց լակեդեմոնացիների պար-
տություններ, սակայն մարտը համառ էր և երկար շարունակվեց փոփոխվող
հաջողությամբ...
- 2 Դիոդորոսը (XVII, 4) այս առիթով ասում է հունական ավազանու սովոր-
րական հավաքի մասին Կորնթոսում:
- 3 Պլուտարքոսը (Ալեքսանդր, 43) Գարեհի այս կորուստը նվաճում է էքսաթրոս:
- 4 Այժմյան Կերչի թերակղզու տերիտորիան:
- 5 Բորակիայի ձախակողման սահմանը, այսինքն հյուսիսայինը:
- 6 Բորսոթեն՝ Գենպը, Տանախ՝ Գոն:
- 7 Ըստ Ստրաբոնի (XI, 5, 14) և Պլինիոս Ավագի (VI, 26, 29) սա Մարաստանի
սատրապ Արսակի նստավայրն էր:
- 8 Միջին դարերում սերբերին երբեմն արիբալներ էին անվանում:
- 9 Գարեհ Կողմանը արքա զարձավ պալատական հեղաշրջման հետևանքով:
- 10 Կերկեսներին՝ այլ կերպ լեբկեսներին, Կուրցիուսը սխալմամբ վերորհնա-
կեցրել է Կասպից ծովի հարավային ափին, ինչպես նաև մոսիններին և
լեկոսիներին:
- 11 Կուրցիուսը նկատի ունի ամազոնուհիներին, որոնք ըստ ավանդության բնակ-
վում էին Ֆեմիսկիրի մոտակայքում:
- 12 Հնում այնպիսի կարծիք կար, որ հյուսիսային օվկիանոսը գտնվում էր Հընդ-
կաստանից, Կասպից ծովից և Վրկանից ոչ հեռու:
- 13 Արիանոս (III, 23, 6) այս քաղաքն անվանում է Զադրաբարտա:
- 14 Ալեքսանդրը խոսում է իր իշխանության օրինական ժառանգների մասին:
- 15 Կուրցիուսի պնդմամբ Ալեքսանդրի ժամանակ հույները մակեդոնացիների
լեզուն չէին հասկանում:
- 16 Փոլուզիացիներ և պափլագոնցիներ հատկապես շատ կային ստրուկներ
մեջ:

17 Մակեդոնական արքաներ Ալեքսանդրը՝ Փիլիպիսը, Արքեւայոսը և Պերդիպոսը,
Փիլիպոսի նախորդներն են:

VII ԳՐՔԻ ԵԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Ալեքսանդրը լիակատարուն հանձնելու մասին ասված է այն երկու գրքերից
մեկում, որոնք մեղ շն հասել:
- 2 Էվերգեսիներ (հուն.) — բարեգործներ:
- 3 Հավանաբար Կուրցիուսը նկատի ունի Կասպից ծովը, որ նա հաճախ շփու-
թում է Սև ծովի հետ:
- 4 Բարձր լեռնային զիրքի պատճառով այս երկրի կլիման սառն է:
- 5 Հնում Իրանի և Հինդուկուշի լեռները համարվում էին Կովկասյան:
- 6 Վրկանաց ծով. Կասպից ծովի մյուս անունը:
- 7 Կովկասի Ալեքսանդրիս — այժմ Փարսիի մոտ:
- 8 Կուրցիուսը նույնպես է Տանախը (Գոն) և Յակսարտը (Սիրդարյա),
համարելով այդ գետը Ասիայի և Եվրոպայի սահմանադիմար:
- 9 Ըստ երևույթին ձևագրերում այստեղ բացթողում է:
- 10 Կուրցիուսը այստեղ էլ Պոնտոսը շփոթում է Կասպից ծովի հետ:
- 11 Ավլանաստանի հետադարձում Բալկա վայրը:
- 12 Եփրատով նույնպիսի գետանցի նկարագրություն է տալիս Քսենոֆոնը (Անա-
բասիս 1, 4):
- 13 Ըստ Արիանոսի (III, 29) այս գետը տեղի է ունեցել մինչև Օթսոս գետն
անցնելը:
- 14 Տն՝ §36:
- 15 Ըստ հույների սովորույթի ասածուն զիմոդները պետք է իրենց գլուխները
ծածկեն: Իրանիդների լեզուն հունարենն էր:
- 16 Այժմյան Սամարղանդը:
- 17 «Եվրոպական» անունը բացատրվում է Տանախն ու Յակսարտը սխալ-
մամբ նույնացնելով:
- 18 Նկատի ունի Կիմերյան Բոսֆորը:
- 19 Ըստ նրանցից Գաղա քաղաքը (Արիանոս, IV, 2, 2) Յակսարտի մոտ:
- 20 Վերևում (VI, 16) Կուրցիուսն ասում է, որ Կյուրոպոլիսը պաշարել էր Կրա-
տերոսը:
- 21 Տանախի Ալեքսանդրիս՝ հետադարձում Խոչենա, այժմ կենինարգ:
- 22 Նույն ժամկետն է նշում Յուստինոսը (XII, 5), Արիանոսը (IV, 4) խոսում
է 20 օրվա մասին:
- 23 Ըստ Արիանոսի (IV, 4, 1) նոր քաղաքը բնակեցվեց հույն վաճառական-
ներով:
- 24 Ստրաբոնը (XI, 2) սարմատներին նույնպես սկյութներ է համարում:
- 25 Բակտրիան ընդհանուր առմամբ, այսինքն Սոգդիանան ներառվել:
- 26 Հնորոտոսը պատմում է, որ դրանք երկնային պարզաներ էին (IV, 5):
- 27 Նկատի ունի Ասորեստանը:
- 28 Ըստ Արիանոսի (IV, 5) Բակտրա քաղաքը գտնվում էր Պոլիտիմենտոսի
ստորին հոսանքի ուղղությամբ. հնարավոր է, դա այժմյան Բուխարան է:
- 29 Պոլիտիմենտոս դեռի մոտ, այժմ Զիրախան:
- 30 Բակտրիայի մի մասը կառմող Մարդիանա մարզում:

- 1 Յուստինոսը (XV, 3), Պլինիոսը (N. H. գիրք VIII, գլուխ 16, §21) նույնպես հիշատակում են առյուծի հետ դիպվածը:
- 2 Էվրիպիդես, «Անդրոմաքոս».
«... Ինչ անարդար է ամբոխի դատը, երբ հելլենացիք
Հաղթանշանն են բարձրացնում կրկին պարտված թշնամու
Բանակների մեջ. ապա նրանք չեն փառաբանվածը,
Ովքեր զոռ մարտում արյուն են սթել, այլ առաջնորդն է
Վերցնում անփույթ կ' ավար, կ' փառք...»
- 3 Թերեն 335 թ. նվաճեց և ավերեց Ալեքսանդրը:
- 4 Բեսի՝ Գարեհին սպանելու մասին տե՛ս վերևում (գիրք V, գլուխ 8, § 2):
- 5 Ամինտոս — նիկոլայոսի որդին, տե՛ս անվանացանկը:
- 6 Օբսիարտ — Բեսի մերձավորը, որն անցավ Ալեքսանդրի կողմը:
- 7 Տե՛ս «Իլիականը», երգ 1:
- 8 Երիտասարդների զնդի ապստամբությունը պատմական դրականության մեջ ստացել է «պատերի» դավադրություն անունը: Կուրցիտաի և Արիանոսի (IV, 9—12) տեղեկություններն այդ մասին համընկնում են:
- 9 Խոսքը Հնդկաստանի հյուսիսում գտնվող լեռների մասին է:
- 10 Կովկասյան լեռների մասին տե՛ս VII գրքի 5-րդ ծանոթագրությունը:
- 11 Կուրցիտաի մոտ «Կարմիր ծովը» Հնդկական օվկիանոսն է իր ծովածոցերով:
- 12 Ձեռագրերում այստեղ շատ է վնասված, քարոզմանությունն արված է ըստ ենթադրությունների:
- 13 Հունարեն erythros նշանակում է կարմիր:
- 14 Նկատի ունի թուփակներին:
- 15 Հնդիկների մոտ կրակը նվիրված է Շիվա աստծուն:
- 16 Հավանաբար նկատի ունի բրահմաններին:
- 17 Μεγος—աղբը. ըստ առասպելի Սեմելեն Հերայի խորդավանքներից ծամանակից շուտ ծննդաբերեց Լիբրոսին (Բաբոսին), բայց Ջևը (Յուպիտերը) տարավ նրան իր աղբի մեջ. պատանի աստծուն դաստարակեցին հավերժահարուրը նիսալից (այստեղից՝ Դիոնիսոս):
- 18 Ծանապարհն օվկիանոսից՝ հույների ճանապարհն էր՝ Ինդոսի գետաբերանից հարավային Իրանով:
- 19 Հնարավոր է այստեղ Հնդկույեք նույնացվել է Վիշնու աստծու կամ նրա մարմնացումներից մեկի՝ Կրիշնոսի հետ: Ահորնի գրավումը Ալեքսանդրի համար ճանապարհ բացեց դեպի Փենջաբ:
- 20 Ըստ Արիանոսի (V, 15, 4) 200 մարտակառք:
- 21 Հավանաբար Հիդասպն անցան Ջալապուրի մոտ:
- 22 Արիանոսը (V, 16, 2.3) կոնատոսի փոխարեն գրում է Սելևկոս:

IX ԳՐԳԻ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Դիոդորոսը (գիրք XVII, գլուխ 89, §3) զա բացատրում է որպես երախտագիտություն ողջ Արևելքը նվաճելու համար, որն Ալեքսանդրին էր շնորհել այդ աստվածը:

- 2 Ըստ Դիոդորոսի (գիրք XVII, գլուխ 90) օձի երկարությունը 16 կանգուն էր:
- 3 Հիմնադրվել էին Նիկեա և Բուկիֆալաս բաղաբերը (գլուխ 3, §23):
- 4 Այգրիսի ծառերի (ficus indica) նույնպիսի նկարագրություն են տալիս Ստրաբոնը (գիրք XV, գլուխ 1, §21) և Արիանոսը (Indica, գլուխ XI, §7):
- 5 Արիանոսի մոտ (գիրք V, գլուխ 4, § 2) այդ գետը Հիդրասոսն է, այժմ՝ Բավի:
- 6 Հավանաբար այժմյան Լագորի մոտակայքում:
- 7 «Սոփիստեհ» անունը, անկասկած, մտացածին է, հունական σοφός՝ իմաստուն բառից. այս ժողովրդի սովորույթները նման էին սպարտացիների սովորույթներին, որ վիսլում է ինչ-որ նախալակնյան աղբյուրի մասին:
- 8 Անտիկ հասարակության մեջ միայն այն երեխան ապրելու իրավունք ուներ, որին հայրը ընտրում էր:
- 9 Այս բաներով Կուրցիտաը բացատրում է իր պատմության բոլոր անճշտությունները:
- 10 Այստեղ և գլուխ VII-ի § 11-ում սկյութները Միջին Ասիայի շատ ժողովուրդների ընդանուր անունն է:
- 11 Այս տեղեկությունները հաստատվում են Դիոդորոսի, Պլուտարքոսի և Յուստինոսի մոտ:
- 12 Կուրցիտաը սխալմամբ այս գետն անվանում է Ալեխին. Դիոդորոսն ու Յուստինոսն այս գետն անվանում են Հիդասպ:
- 13 Դիոդորոսը (գիրք XVII, գլուխ 95, §5) նշում է նույն թիվը, Արիանոսը (գիրք VI, գլուխ 2, § 4) խոսում է կրկու հազար նավերի մասին:
- 14 Ալեխինի և Հիդասպի միախառնման տեղը:
- 15 Դիոդորոսը նշում է ընդամենը 80 հազար մարդ:
- 16 Այստեղ, ինչպես և ներքևում՝ §20, սխալմամբ Գանգեսը նշված է Ինդոսի փոխարեն:
- 17 Արիանոսը (գիրք VI, գլուխ 9, §2—3) ասում է, որ Ալեքսանդրը բաղաժ մտավ պարսպի ճեղքվածքով:
- 18 Ըստ Արիանոսի (գիրք VI, գլուխ 9, §3—4) Պեկեստեսը ճակատամարտի հիաց սկզբից Ալեքսանդրի հետ էր:
- 19 Պաղոմոսը՝ հետագայում Եգիպտոսի արքան, գրել է «Հիշողություններ», որը Ալեքսանդրի պատմության համար կարևոր աղբյուր է:
- 20 Արիանոսի մոտ (գիրք VI, գլուխ 2, §1) բովիզը կոչվում էր Կրիտոզեմոս:
- 21 Ձեռագրում այստեղ սխալ է. պետք է ասել «Եվրոպայից Ասիայի սահմանները»:
- 22 Այստեղ անճշտություն է. 326 թ. Ալեքսանդրի կառավարման տասներորդ և կյանքի երեսուներորդ տարին էր:
- 23 Փիլիպոսին սպանել է Պալսանիոսը 336 թ., թաթրոնում:
- 24 Մալերից և օբսիդրակներից (գլուխ 4, § 15):
- 25 Այդ մեղադրանքով հանդես եկավ Դիոսքիպոսը:
- 26 Դիոսքիպոսը իր հաղթանակով մակեդոնացիներից խլեց խիզախություն համբավը:
- 27 «Սպիտակ երկաթ». մեզ ոչ լրիվ հայտնի ձուլվածք:
- 28 Հավանաբար կոկորդիլոսներ:
- 29 Ըստ երևույթին այժմյան Մուլթանը:

- 30 Արխանոն (գիրք VI, գլուխ 15, §5) ու Գիողորոսը (գիրք XVII, գլուխ 102, §5) նշում են Մուսիկոս արքայի անունը:
- 31 Արխանոն (գիրք VI, գլուխ 16, §4) այն կոչում է Սինդիման:
- 32 Ըստ Ստրաբոնի (գիրք XV, գլուխ 1, §33) և Պլինիոսի (N. H, գիրք VI, գլուխ 23) այդ ժողովուրդը բնակվում է Բնդոսի գելալայում:
- 33 Այսպես է նկարագրվում մակեդոնացիները, իսկ ներքևում՝ տեղաբնակները:
- 34 Ըստ Արխանոսի (Ստրաբոնի մոտ՝ գիրք XV, գլուխ 1, §17) և Արխանոսի (գիրք VI, գլուխ 21, §1—2) այստեղ նկարագրվող գնացիները տեղի են ունեցել մ. թ. ա. 325 թ. հուլիսի վերջին:
- 35 Սրա մասին Գիողորոսի տեղեկությունները (գիրք XVII, գլուխ 105, §8) հակասական են:

X ԳՐԻՒ ԵՄՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Մեղադրանք էր ներկայացվում կլեանդրոսին, Սիտալիսին և ուրիշներին:
- 2 Պլինիոսը (N. H. գիրք VI, գլուխ 26) դրանք անվանում է hidri marini. դրանց ներկարությունը հասնում էր 20 կանգունի:
- 3 Կարթագենը պակցում էր Տյուրոս քաղաքին (գիրք IV, գլուխ 2—4):
- 4 Այստեղ նորից գրանցվում են Կուրցիոս Ռուֆոսի աշխարհադրական սխալ պատկերացումները:
- 5 Կուրցյուսը զեպի Հեղկաստան արշավանքի ժամանակ արգիև տեղեկացրել է (գիրք IX, գլուխ 3, 20) Քենոսի մահվան մասին:
- 6 Ըստ Յուստինոսի (գիրք XII, գլուխ 1, §4) Ջուլիբրոյի արշավանքի մասնակիցներին սպանեցին գեթիները:
- 7 Ձեռագրերում այստեղ մոտավորապես հետևյալ բովանդակությամբ բաց է թողնված. Քրակիայի հուզումներն անցան Հունաստան. դրանք զլխավորում էր ոմն Հարպալոս: Նա փախավ Հունաստան՝ ավենացիների մոտ, հույս ունենալով նրանցից ակտիվ աջակցություն ստանալ Ալեքսանդրի դեմ իր պայքարում:
- 8 Մեծ մասամբ կաշառվում էին հետերները, ընդ որում շափազանց տուժեց Դեմոսթենեսի համբավը (տե՛ս Պլուտարքոս, Դեմոսթենես, գլուխ XXV):
- 9 Ըստ Գիողորոսի վտարանդիների թիվն (գիրք XVIII, գլուխ 8, §5) անցնում էր 20 հազարից:
- 10 Ըստ Գիողորոսի (գիրք XVIII, գլուխ 109, § 1) տուն ուղարկվեց տասը հազար զինվոր:
- 11 Ամինտոս արքայի օրոք մակեդոնացիները հարկ էին տալիս իլլիրիացիներին: Հետո ձանաչեցին պարսիկների տիրապետությունը (տե՛ս Գիողորոս, գիրք XVI, գլուխ 2, § 2 և Յուստինոս, գիրք VII, գլուխ 1, § 1):
- 12 Ալեքսանդրի զինվորները հույս ունեին հայրենիք վերադառնալ:
- 13 Ձեռագրերում այստեղ բացթողում է մոտավորապես հետևյալ բովանդակությամբ. արքայի վճռական գործողությունները ապստամբած զինվորների արամադրության մեջ հեղաշրջում առաջացրին և նրանք հնազանդվեցին նրան:
- 14 Ալեքսանդրի զորքում օտարերկրացիները հիմնականում պարսիկներն էին:

- 15 Ձեռագրերում այստեղ բացթողում է մոտավորապես հետևյալ բովանդակությամբ. մակեդոնացիները բողոքում են Ալեքսանդրի անձնական պահպանությունը պարսիկներին հանձնելու դեմ, հուզումներ հրահրողներին շղթայում են և տանում մահապատժի, նրանցից ամենատարեցը դնում է արքային կշտամբանքով:
- 16 Ձեռագրերում այստեղ բացթողում է մոտավորապես այսպիսի բովանդակությամբ. շուտով արքան զիջեց և փութաց ծառայությունը վերջացրածներին և հիվանդներին հայրենիք ուղարկել: Նրանց զլխավորում էր Կրատոբոսը, նրան էլ հանձնված էր Մակեդոնիայի կառավարումը: Անտիպատրոսը երիտասարդ զինվորներով կանչվեց արքայի մոտ բանակը համալրելու համար:
Արքան մակեդոնական զորքի կորուստները համարեց քաշառի պարսիկներով և անձնական պահպանության համար առանձնացրեց պարսիկներին Գրանից հետո նա Շոշով և Սամբանով շարժվեց դեպի արևմուտք և ժամանեց Կելոն, որը բնակեցված էր բեովտացիներով, որոնք շարունակում էին խոսել մայրենի լեզվով: Այստեղից արքան մտավ հիատրանշ պտուղներով առատ Բագաստան: Նոր ձեռնարկումներից Ալեքսանդրին շեղեց նրա մեծ ընկերոջ՝ Հեփեստիոնեսի մահը: Արքան արշավանք ձեռնարկեց բոսնիցի ավազակաբարո ցեղի դեմ և քառասուն օրում հնազանդեցրեց նրանց: Նրանց երկրում նա հիմնեց մի քանի ամրոց և կաշառրներ թողեց այնտեղ: Բարելուում նա Հեփեստիոնեսին շքեղ թաղում կազմակերպեց և բոլոր երկրներից դեպատներ ընդունեց: Արարիայի սահմանամերձ շրջանում արքան քաղաք հիմնեց, որը բնակեցրեց արևելքում իրեն միացած հույներով:
Բարելուում մի խնջույթից հետո արքան հիվանդացավ: Նրա զինվորները, անհնազատացած արքայի առողջության համար, պահանջում էին, որ իրենց նրա մոտ թողնեն:
- 17 Մ. թ. ա. 323 թ. մայիսին կամ հունիսին:
- 18 Ալեքսանդրի հաջորդ բնութագրումները հավանաբար վերցված են ուրիշ աղբյուրներից:
- 19 Համեմատիք այս գրքի գլուխ 5-ի §18-ի հետ:
- 20 Արիզոս Փլիպոսը:
- 21 § 3—6-ը հիմք են տալիս մոտավորապես որոշելու Կուրցիոսի կյանքի և նրա գրած երկասիրության ժամանակաշրջանը:
- 22 Մակեդոնացիների նման սովորովի ավելի ուշ գրեստման մասին է խոսում և Լիվիոսը (գիրք XI, գլուխ 6):
- 23 Տե՛ս 20-րդ ծանոթագրությունը:
24. Այս մասին տեղեկացնում են Արխանոսը (գիրք VII, գլուխ 27, § 1—2), Յուստինոսը (գիրք XII, գլուխ 13, § 4) և Պլուտարքոսը (Ալեքսանդր, գլուխ LXXII, §1):
- 25 Անտիպատրոսին Ալեքսանդրի դեմ կասկածելու հիմք է տալիս այն, որ Ալեքսանդրը նրան զրկեց Մակեդոնիայի և Հունաստանի կառավարումից և կանչեց բանակ:



ԱՆՎԱՆԱՅՈՒՆ

- Արդալունի մոս — Սիզոնի ընտրված արքան:
- Արիենե — սկյութական ցեղերից:
- Արխար — Քաշմիրում արխարների ցեղի առաջնորդը, Հնդկաստանի արքան:
- Արիտամեն — Ալեքսանդրի փոխանորդը Կապադովկիայում:
- Աբալիտ — Շոշի փոխարքան:
- Ագենուրոս — Տյուրոսի առասպելական հիմնադիրը:
- Ագիստ II — սպարտանական արքա (338—330)։ Քվինտոս Կուրցիուս Ռուֆուս «Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը», IV, I, 39.VI, 1, 3 (այստեղ և հետագայում առաջին նրկու հոմոնիական թվերը նշում են զիրքը և զլուխը, արարականները՝ պարագրաֆը, որտեղ հիշատակվում է բացառաբովող բառը. ներկա զրբի էջերը նշվում են միայն այն դեպքում, երբ անուններից կամ անձնանունները համընկնում են):
- Ագիստոս — ազրիանացի բանաստեղծ — VIII, V, 8:
- Ագրամ — հնդկական արքա:
- Ագրիանացիներ — թրակիա-մակեդոնական ցեղ, որը բնակվում էր Ստրիմոն գետի ափին:
- Աքարիոս — քրիստոս, այսինքն 1000 մարդուց կազմված չոկատի հրամանատար:
- Արենագորոս — Քիոսի կառավարիչը:
- Ալեքսանդր — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից — VIII, II, 14, 15:
- Ալեքսանդր I (Փիլիպի) — մեկեդոնական արքա, Ալեքսանդր Մակեդոնացու նախապապը VI, II, 26:
- Ալեքսանդր Լիելկետացի — Անտիպատրոսի փեսան, Ալեքսանդր Մակեդոնացու դեմ զավազրովյան մասնակիցներից — VII, I, 5.VIII, VII, 4. VIII, VIII, 6.X, I, 40:
- Ալեքսանդր (կամ Ասանդրոս) — Փիլոտեսի որդին, Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից, Լիզիայի փոխարքան, զիազրուսների պատերազմի մասնակից — VII, X, 12:

- Ալեքսանդր Մալոսացի — էպիրոսի արքան (343—326 թթ. մ. թ. ա.)
- Ալեքսանդր Մակեդոնացու հորեղբայրը — VIII, I, 37:
- Ալադիր — քաղաք Հնդկաստանում:
- Ալեսիեն — գետ Հնդկաստանում, այժմյան Չինաբը:
- Անուր — լեռ Հնդկաստանում, Ինդոսի աջ ափին:
- Ամազոնուհիներ — առասպելական կին-ազմիրիներ:
- Ամալյան դարպասներ — նեղ անցում Ասորիքի և Կիլիկիայի միջև:
- Ամեդին — Գարեհի գրադիրը:
- Ամեդոս — Ալեքսանդր Մակեդոնացու զինվորներից — V, II, 5. VI, VII, 15:
- Ամեդոս — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից — VI, IX, 28, 29:
- Ամեդոս — Անզրոմենոսի որդին, Ալեքսանդր Մակեդոնացու զորահրամանատարներից — III, IX, 7.IV, VI, 30.IV, XIII, 28.V, I, 40.V, IV, 20, 30. VI, IV, 2.VII, I, 10 և հաջորդը:
- Ամեդոս — Անտիոքոսի որդին, սկզբում Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից, հետագայում փախստակ — III, XI, 9. IV, I, 27, VI, I, 33. IV, VII, I:
- Ամեդոս Լիելկետացի — զինվոր, որին պարգևատրել է Ալեքսանդր Մակեդոնացին — V, II, 9:
- Ամեդոս — Նիկոլաոսի որդին, Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից — VIII, II, 16:
- Ամեդոս — Պերդրիկոսի որդին, Ալեքսանդր Մակեդոնացու դեմ զավազրովյան մասնակից — VI, IX, 17.VI, X, 24:
- Ամիսոս — Մեգալոպոլիսի բնակիչ:
- Ամոն — եգիպտական աստված, որին հույները նույնացնում էին Ջեսի հետ:
- Ամոնիացիներ — Ամոնի օազիսի բնակիչները:
- Ամփոտերոս — մեկեդոնական նավատորմի հրամանատարը:
- Անդրոնիկոս — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից:
- Անդրոս — Կիկլադյան կղզիներից:
- Անկյուրա — քաղաք Փոյուդիայում, ժամանակակից Անկարան:
- Անտիգենոս — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից:
- Անտիգոնոս — Լիզիայում Ալեքսանդր Մակեդոնացու փոխանորդը, զիազրոսների մարտի ահաբիվ մասնակից:
- Անտիլիս — թրակիա-հնդկական զավազրովյան մասնակիցներից:
- Անտիպատրոս — Ալեքսանդր Մակեդոնացու արքայական կոհորտայի ազմիրիներից — VIII, VI, 9:
- Անտիպատրոս — Հունաստանում և Մակեդոնիայում Ալեքսանդր Մակեդոնացու փոխանորդը — III, I, 20. IV, I, 39. V, I, 40. VI, I, 18. VII, I, 7. VII, X, 12.X, VII, 9. X, X, 14.X, X, 18:
- Անտիփանոս — հեծելազորի գրադիրը:
- Ապոլլոն — Տյուրոսում հարգված լուսի, զուշակովյան, պոեզիայի աստվածը:
- Ապոլլոնիդոս — Քիոսի պահպանության հրամանատարը:
- Ապոլլոնիոս — Աֆրիկայի փոխարքան:
- Ապոլլոնիդոս — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից:
- Ասական — Հնդկաստանի բնակիչ:

Ա ս կ լ Ե պ ի յ զ ա ռ ո ս — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից — VII, X, 12:

Ա ս կ լ Ե պ ի ղ ո ռ ո ս — ռազմիկ արքայական կոնորտայից — VIII, VI, 9:

Ա ս ո ռ ի Բ — Երկիր Եփրատի, Միջերկրական ծովի, Տավրոսյան լեռնաշղթայի և Արարիայի միջև:

Ա ս պ ա ս տ ո ս — Կրամանիայի սատրապը:

Ա վ զ Ե ո ս — զինվոր, որին Ալեքսանդր Մակեդոնացին պարզևտորել է (տե՛ս Փիլիպոս Ավզեոս):

Ա տ ա լ ո ս — ազրինացիների հրամանատարը — IV, XIII, 31:

Ա տ ա լ ո ս — Անդրոմենոսի որդին, փազանգի հրամանատարը — VIII, XIII, 21:

Ա տ ա լ ո ս — Փիլիպոսի ազգականը, Ալեքսանդր Մակեդոնացու թշնամին — VI, IX, 17. VII, I, 3. VIII, I, 42, VIII, VII, 4. VIII, VIII, 7:

Ա տ ի զ ի ա — Փոյուզիայում Գարեհի պարսիկ սատրապը:

Ա տ ի Ե ո ս — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից:

Ա ռ ա ք ի ա — Գեա Գեղրոսիայում:

Ա ռ ա ք ի տ Ե Ե Ե Ե — ցեղ Գեղրոսիայում:

Ա ռ ա ղ ո ս — կղզի Փյունիկիայի ափամերձ շրջանում:

Ա ռ ա Բ ս — գեա Պերսեպոլիսի մոտ (ժամանակակից Բուեղ Ամիրը) — IV, V, 4. V, IV, 7. V, V, 2, 3. V, VII, 9:

Ա ռ ա Բ ս — գեա Հայաստանում (ժամանակակից Արաքսը) — VII, III, 19:

Ա ռ ա Բ ս ի ա ց ի Ե Ե Ե Ե — պարսկական Արաքոսիա մարզը բնակիչն ը (ժամանակակից Կանդաղարան):

Ա ռ ք Ե լ ա — քաղաք Ատրիքի հյուսիս-արևելքում:

Ա ռ Ե տ ո ս — Նիդակիկների առաջնորդը:

Ա ռ ի ա ռ ա Ո — Կապադովկիայի արքան:

Ա ռ ի ա Ե ո ս (մոտավորապես 95—180 թթ.) — պատմիչ, «Ալեքսանդրի անբասիս» ստեղծագործության հեղինակը:

Ա ռ ի ղ Ե ո ս Փ ի լ ի պ ո ս — Ալեքսանդր Մակեդոնացու խորթ եղբայրը:

Ա ռ ի ա ց ի Ե Ե Ե Ե — Բակտրիայից հարավ ընկած պարսկական Արիա մարզի բնակիչները — VII, III, 12. VII, IV, 32, 33:

Ա ռ ի մ ա զ — լեռ Գրանդիանայում:

Ա ռ ի մ ա ս ղ Ե Ե Ե — ցեղ Գրանդիանայում:

Ա ռ ի ռ ա ռ զ ա Ե — Պարսկաստանի սատրապը և Գարեհի զորահրամանատարներից:

Ա ռ ի ս տ ա Ե ղ Ե — գուշակ, որն ուղեկցում էր Ալեքսանդր Մակեդոնացուն:

Ա ռ ի ս տ ա զ ի ա Ե Ե Ե Ե — Գարեհի մոտ ուղարկված աթենացի զենպան:

Ա ռ ի ս տ ա մ Ե ղ Ե Ե Ք Ե ս ա լ ա ց ի — Գարեհի հրամանատարներից:

Ա ռ ի ս տ ա մ Ե ո ս — Գարեհի հրամանատարներից:

Ա ռ ի Ե ս ա Ե Ե Ե Ե — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից — IX, V, 15, 18. X, VI, 16:

Ա ռ ի ս տ ա Ե Ե Ե — պեոնների հեծակազորի հրամանատարը:

Ա ռ ի ս տ ա Ե ի կ ո ս — Մեթիմնայի բռնակալը:

Ա ռ ս ա կ — Մարաստանի սատրապը:

Ա ռ ս ա մ — Կիլիկիայի փոխարքան — III, IV, 3:

Ա ռ ս ա մ — Գրանդիանայի փոխարքան — VIII, III, 17:

Ա ռ վ ա — քաղաք Վրկանում:

Ա ռ տ ա ռ ա զ — Բակտրիայում Գարեհի փոխանորդը:

Ա ռ տ ա կ ո ա Ե Ե — քաղաք Արիանայում:

Ա ռ տ ա Բ ս Ե Բ ս Ե Ե — աեոն, որը յուրացրել էր բռնատեր Բեսը:

Ա ռ Բ Ե լ ա յ ո ս — մակեդոնական արքա (413—399 թթ. մ. թ. ա.) — VI, II, 26:

Ա ռ Բ Ե լ ա յ ո ս — Շոշում Ալեքսանդր Մակեդոնացու փոխանորդը — V, II, 16:

Ա ռ Բ Ե պ ո լ ի ս — Ալեքսանդր Մակեդոնացու զինվորներից:

Ա փ ո ռ Ե տ ո ս — Ալեքսանդր Մակեդոնացու զինվորներից:

Ա Բ ա յ ա — Հունաստան:

Ա Բ ա յ ա ց ի Ե Ե Ե — հույներ:

Ա Բ ի լ լ Ե ս — Տրոյական պատերազմի հերոս:

Բ ա զ ի ս տ ա Ե — բարելոնացի:

Բ ա զ ո ա ս — պարսիկ ներքինի, որին նվիրել էին Ալեքսանդրին — VI, V, 23. X, I, 25:

Բ ա զ ո ա ս — պարսիկ ներքինի, որին սպանեց Գարեհը — VI, III, 12. VI, IV, 10:

Բ ա զ ո փ ա Ե — պարսիկ:

Բ ա զ ա ի ռ ա — մարզ Բակտրիայում:

Բ ա կ տ ռ ա — Բակտրիայի զինավոր քաղաքը:

Բ ա կ տ ռ — գեա Բակտրիայում:

Բ ա կ տ ռ ի ա — Օթսոս զեաի միջին հոսանքի մոտ գտնվող երկիր:

Բ ա լ ա կ ռ Ե Ե Ե Ե — ժողովուրդ Մակեդոնիայում:

Բ ա յ ա կ ռ ո ս — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից:

Բ ա ռ կ ա Ե ց ի Ե Ե Ե Ե — ժողովուրդ Վրկանում:

Բ ա ռ ս ա Ե Ե Ե ղ — Գրանդիանայում պարսկական սատրապ:

Բ ա ռ ս ի Ե ա — Ալեքսանդրի հարձը Արիանոսը Բարսիա և անվանում Գարեհի դստերը:

Բ Ե ք ի ս — Գաղայի պաշտպանը:

Բ Ե լ — բարելոնա-ատրական աստված:

Բ Ե լ լ Ե Ե Ե Ե Ե — անհայտ ցեղ Ասիայում:

Բ Ե լ յ Ե — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից:

Բ Ե յ ռ ա — քաղաք Հնդկաստանում:

Բ Ե ո վ տ ի ա — մարզ Միջին Հունաստանում:

Բ Ե ս — Բակտրիայի սատրապը, Գարեհին սպանողը:

Բ Ե ք լ ո ս — ծովափնյա քաղաք Փյունիկիայում:

Բ ի ք ո Ե — Հնդկաստանում ապոստամբություն բարձրացրած հույներից:

Բ ի յ Ե — փախստակ Գարեհի ճամբարից:

Բ ո ռ ի ս ք Ե Ե — գեա սարմատների երկրում (այժմյան Գեկպը):

Բ ո Բ ս — Մարգիանայի բնակիչ:

Բ ռ ա Ե Բ ի ղ Ե Ե Ե — Դիադեմում (Միլետի մոտ) Ապոլլոնի տաճարի հույն քրմերը:

Բ ռ ո կ ո ռ Ե լ — պարսիկ Մազեյի որդին:

Բ ո ռ ա կ — Գարեհի ներքինին:

Բ ո ռ ա Բ Ե Ե Ե Ե — անհայտ մարզ Ասիայում:

Բ ո յ կ փ ա լ (հուե.) — եզան (բու) զլուխ (կեփալ). լատիներեն Բուցեփալ, Ալեքսանդր Մակեդոնացու ձին:

Քուկեփալա — Ալեքսանդր Մակեդոնացու հիմնադրած քաղաքը Հնդկաստանում, Հիդասպ գետի արևմտյան ափին:

Քուսադոս — ասորեստանյան գետ, որը լցվում է կիզուս գետը:

Քարագա (կամ Գաղարա) — մարզ Սոգդիանայում, նավթակիրք արևելք:

Քազա — նավահանգստային քաղաք Պաղեստինում, Երուսաղեմից հարավ-արևմուտք:

Քանգաբներ — պարսիկների մոտ բնակիչները:

Քանգարիդներ — Գանգես գետի գետաբերանում բնակվող հնդկական ժողովուրդ:

Քանգես — գետ Հյուսիսային Հնդկաստանում:

Քեդրոսիա — մարզ Պարսկաստանում (այժմյան Բելուջստանը):

Քեդրոսցիներ — Գեդրոսիայի բնակիչները:

Քենեաներ — տե՛ս վենեաներ:

Քերեր — Դանուբի ափին բնակվող թրակիական ցեղ:

Քարա — Պասարգադքի փոխարքան:

Քարգիդամոս — զինվոր, որին Ամինտոսը զուրս բերեց Մակեդոնիայից:

Քարդիոն — քաղաք, Փոյուզիական արքաների նստավայրը — III, I, 12:

Քարգիսոս — զինվոր, որին Ամինտոսը զուրս բերեց Մակեդոնիայից:

Քարգիսոս — Փոյուզիայի արքան, Միդասի հայրը — III, I, 14:

Քարդիացիներ — (կամ կորդոցիներ) — Գորդուքի բնակիչները (Կորդուք) Հայաստանի մարզում, Տիգրիսի վերին հոսանքում — V, X:

Քարգոսիան (Կորդոքյան) լեռներ — լեռներ Գորդուքում (Կորդուքում):

Քրաեիկոս — գետ Միսիայում, որը լցվում է Պրոպոնտիսը:

Քաներ — սկյութական ցեղ Սոգդիանայում:

Քամասկոս — Կելեսիթիայի մայրաքաղաքը:

Քատաբերն — Սպիտամենի սպանություն մասնակից:

Քարեհ Կոդոման — պարսից արքա (336—330 թթ.) — III, II, 2, 17, III, III, 2... III, VII, 1, III, IX—XI, III, XII, 5, IV, I, 7—9, IV, V, 1, IV, VI, 2, IV, IX, 2, IV, X, 19, IV, XI, 1, IV, XV, 16, IV, XVI, 8, V, I, 3... V, VIII, 1, V, IX, 2, V, X, 14, V, XI, 5, V, XII, 15—20, V, XIII, 16, VI, III, 3, 12, VI, V, 23:

Քարեհ — Հիստասպի որդին. պարսից արքա (521—485 թթ. մ.թ. ա.) — III, X, 8, IV, I, 10, V, VI, 1:

Քեդալա — Հյուսիսարևմտյան Հնդկաստանում Քոսսպ գետի ափին մարզ և քաղաք:

Քեմետրոս — Ալեքսանդր Մակեդոնացու թիկնապահներից:

Քեմակրատես — ամենացի:

Քեմափոնես — գուշակ:

Քերթիկներ — Օրոսոս գետի ներքին հոսանքի մոտ բնակվող ժողովուրդ, Կասպից ծովից արևելք:

Քերզոս — մակեդոնացի, որին Ալեքսանդր Մակեդոնացին ուղարկեց Սկյութիա:

Քիարգան (կամ էրան) — Գանգեսի վտակը, ներկայիս Բրահմապուտրան:

Քիդիմեն — Ասոլունի տաճարը Միլետի մոտ:

Քիմեոս — Ալեքսանդր Մակեդոնացու ղեմ ղազարություն մասնակից:

Քիդորոս Սիկիլիացի (մտավորագրես 90—21 թթ. մ.թ. ա.) —

պատմիչ, «Պատմական գրադարան» աշխատության հեղինակը:

Քիոֆսենոս — Ալեքսանդր Մակեդոնացու զինվորներից:

Քիոֆսիպոս — ամենացի նշանավոր բնեցրած արտիկ:

Քրանցներ — պարսկական Գրանգիան մարզի բնակիչները:

Քրոպիդոս — ամենացիների կողմից Գարեհի մոտ ուղարկված զենպան:

Եգիպտոսի Ալեֆանդրիա — IV, VIII, 2, 5, 6, X, X, 20:

Երավպիա — հրկիր Աֆրիկայում, Եգիպտոսից հարավ:

Զարթասպ — ազնվատոհմ պարսիկ:

Զիսթեո — գետ Պարսկաստանում:

Զոխոս — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից:

Զոպիբիոս — փոխարքա Քրակիայում:

Էրիմանդրոս *կամ էրիմանդրոս — հնդկական գետ:

Էլապտոնիոս (կամ էլապտոնիոս) — պատերի ղազարություն մասնակիցներից:

Էկրատան — Մարաստանի պիսավոր քաղաքը, պարսից արքաների ամառային նստավայրը (այժմյան Խամադանը):

Էկրալիմա — քաղաք Հնդկաստանում:

Էնլիդա — մարզ Փոքր Ասիայի արևմտյան ծովափնյա շրջանում:

Էպիմենոս — պատերի ղազարություն մասնակիցներից:

Էպիրոս — լեռնային մարզ Արևմտյան Հունաստանում:

Էսֆիլես — Եգիպտոսի հողատերի փոխարքան:

Էվդամոնես — թրակացիների առաջնորդը:

Էվկաեմոնես — կիմեացի:

Էվմենոս — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից, նրա մահից հետո Պափլագոնիայի և Կասպիցիանի փոխարքան:

Էվրիոնոս — էպիմենոսի եղբայրը, որը բացահայտեց պատերի ղազարությունը:

Էվրիպիդես — ամենացի բանաստեղծ-ողբերգակ (485—406 թթ. մ.թ. ա.):

Էտոլացիներ — Միջին Հունաստանի էտոլիա մարզի բնակիչները:

Էրիգիոս — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից:

Էրիբր — Արաբիայի և Պարսկաստանի առասպելական արքան:

Էրիբրեական ծով — Կարմիր ծովը (ներկայիս Հնդկական օվկիանոսը) իր բոլոր նեղուցներով:

Էրիկ — էկրոլիմա քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում 20 հազար հնդիկների հրամանատարը:

Էֆոցիպիենոս — Ալեքսանդր Մակեդոնացու մերձավորներից:

41—Ալեքսանդր Մակեդոնացի

Ք ա ր ա ս — քաղաք Պարեապոլիս:
 Ք ա լ Ե ս տ ր ի ս — ամաղոնուհիների թագուհին:
 Ք Ե ր Ե — Կենտրոնական Հունաստանի Բեոպոլիս մարզի մայրաքաղաքը — IV, IV, 20. VIII, I, 33:
 Ք Ե ր Ե — քաղաք Տրոյապոլիս — III, IV, 10:
 Ք Ե մ ի ս կ ի ր ա — քաղաք Կասպաղովկիայում:
 Ք Ե ս դ ա խ Ե ս — զինվոր, որին Ալեքսանդր Մակեդոնացին պարգևատրել է խիզախության համար:
 Ք Ե ս ա լ ա կ ա Ե ճ Ե ձ յ ա լ Ե Ե ր — հեծյալներ Հունաստանի հյուսիսում գտնվող Քեսալիայից:
 Ք Ե ր ս ի ս յ Ե ս — Ալեքսանդր Մակեդոնացու դեսպանը:
 Ք ի մ ր ի ռ Ե Ե ս — Հարպագոսին սպանողը:
 Ք ի մ Ե ս — զինվոր, որն օբսիդրակների հետ ճակատամարտի ժամանակ փրկեց Ալեքսանդր Մակեդոնացու կյանքը:
 Ք ի մ ղ Ե ս — Մենտորի որդին:
 Ք ր ա կ ա ց ի Ե Ե ր — Քրակիայի բնակիչները:
 Ք ր ա կ ի ա — երկիր Հունաստանի հյուսիս-արևելքում:
 Ք ր ա տ ա ք Ե ր Ե — Ալեքսանդր Մակեդոնացու սատրապը մի շարք երկրներում — VI, IV, 23. VIII, III, 17. IX, X, 17:
 Ք ր ա տ ա ք Ե ր Ե — խորագմների կառավարիչը — VIII, I, 8:

Ի ր Ե ր ի ա — հին Իսպանիայի բնակիչների՝ իբերիացիների երկիրը:
 Ի լ ի ռ Ե Ե ս — Արտաբազի որդին:
 Ի լ ի ր ի ա ց ի Ե Ե ր — Իլիրիայի ժողովուրդը:
 Ի լ ի ր ի ա — երկիր Ադրիատիկ ծովի արևելյան ափին:
 Ի մ ր Ե ս — կղզի Էգեյան ծովում:
 Ի ճ ղ Ե ս — գետ Հնդկաստանում:
 Ի ս յ ա յ Ե ս — Ալեքսանդր Մակեդոնացու զինվորներից:
 Ի ս յ ս — Անտիպատրոսի որդին:
 Ի ս ր մ ս յ ա Ե խ ա ղ Ե ր — Կորնթոսի պարանոցում նեպտոնի պատվին անցկացվող խաղեր:
 Ի ս Ե ս — ծովափնյա քաղաք Փյունիկիայում, Ասորիքի սահմանամերձ շրջանում:
 Ի ս ա ր Ե ս — այժմյան Դանուբի ներքին հոսանքը:
 Ի փ ի կ ր ա տ Ե ս — Դարեհի մոտ աթենացիների կողմից ուղարկված դեսպան:

Լ ա ռ մ Ե ղ ա ճ Ե ս — Ասորիքի փոխարքան:
 Լ Ե ս ճ ի ղ Ե ս — Ալեքսանդր Մակեդոնացու կոհերտայի զլխավորը:
 Լ Ե ս Ե ս — կղզի Էգեյան ծովում:
 Լ ի կ ա ճ Ե ի ա — Փոքր Ասիայում Փոյուզիայի և Կասպաղովկիայի միջև մարզ:
 Լ ի ր ա Ե ա Ե — Փյունիկիան Կելեսիրիայից բաժանող լեռնային շղթա:
 Լ ի ր Ե ր Ե ս — տե՛ս Բագրոս:
 Լ ի ղ ի ա — երկիր Փոքր Ասիայում:
 Լ ի ղ ի ա ց ի Ե Ե ր — Լիդիայի բնակիչները:

Լ ի լ ի ի ա — մարզ Փոքր Ասիայում, Կարիայի և Պամփիլիայի միջև:
 Լ ի կ ա ս — գետ Կարիայում (այլ կերպ Մարսիոս) որը Քարիվոմ է Մեասյ-
 րոսը III, I, 5:
 Լ ի կ ո ս — Տիդրիսը թափվող անձրևստանյան գետ — IV, IX, 9. IV, 16, 8. 16:
 Լ ի Ե կ Ե ս տ ա ց ի Ե Ե ր — ցեղ արևմտյան Մակեդոնիայում:
 Լ ի ս ի մ ա Բ Ե ս — Աղափոկլեսի որդին, Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից, հետագայում Քրակիայի արքան:
 Լ ի ր Ե Ե ս — քաղաք Տրոյապոլիսում:
 Լ ի ղ ի Ե ս (59 թ. մ. թ. ա. — 17 թ. մ. թ.) — հռոմեացի պատմիչ, շեռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած՝ աշխատության հեղինակը:
 Լ ո կ ր ա կ ա Ե ճ Ե ձ յ ա լ Ե Ե ր — Միջին Հունաստանի Լոկրադա մարզից:
 Լ Ե կ ս ի ր Ե Ե ր — (այսպես կոչված «սպիտակ ասորիներ») — Հալիս և Իրիս գետերի միջև ընկած Պոնտոսի բնակիչները:
 Խ ա յ ղ Ե ր — ժողովուրդ Բարելոնի հարավ-արևմուտքում:
 Խ Ե ր ի յ Ե ս — Ալեքսանդր Մակեդոնացուն ուղեկցող իսպից բանաստեղծ:
 Խ Ե ր ա զ մ Ե Ե Ե ր — ժողովուրդ Սոգդիանայում, Օքսոս գետի մոտ:
 Կ ա ղ ա ս ի Ե Ե ր — Կասպից ծովի ափին, Արարսից հարավ բնակվող սկյու-
 թական ռազմատենչ ցեղ:
 Կ ա լ ա ս — Պափլագոնիայի փոխարքան:
 Կ ա լ ի կ ր ա տ Ե ս — անձ, որին Ալեքսանդր Մակեդոնացին հանձնարարեց Շոշի գանձերի պահպանությունը:
 Կ ա լ ի կ ր ա տ ի ղ Ե ս — լակեդեմոնացիների կողմից Դարեհի մոտ ուղարկված դեսպան:
 Կ ա լ ի ս Ե Ե Ե Ե ս — հույն պատմիչ և փիլիսոփա Օլինթից, որն ուղեկցել է Ալեքսանդր Մակեդոնացուն և զբոլ է նրա արշավանքների մասին պատմություն:
 Կ ա լ ի ս Ե ս — Փիլոտոսի զավադրության մասնակից:
 Կ ա յ ա ղ ա ղ ի կ ի ա — մարզ Փոքր Ասիայի արևելյան մասում:
 Կ ա յ ա ղ ա ղ ի կ ի ա ց ի Ե Ե Ե ր — Կասպաղովկիայի բնակիչները:
 Կ ա ս ա ճ ղ Ե Ե ս — Անտիպատրոսի որդին:
 Կ ա ս յ ի ա ց ի Ե Ե Ե ր — Կասպից ծովի հարավային ափի բնակիչները:
 Կ ա ս տ ա ք ա լ — քաղաք Կիլիկիայում:
 Կ ա ս տ Ե ր և Պ Ե լ յ ո ս — Ելենայի և Կլիտեմնեստրայի եղբայրները, այսպես կոչված Դիոսկուրոսներ, որոնց հատկապես հարգում էին նավատիները:
 Կ ա տ ա ճ ց ի Ե Ե Ե ր — Հարավային Կասպաղովկիայի Կատանոնիա մարզի բնակիչները:
 Կ ա տ Ե Ե — դավաճան Ալեքսանդր Մակեդոնացու բանակում:
 Կ ա ղ Ե ս Ե Ե Ե Ե Ե ր — Կարիայի հարավարևելյան ծովափնյա շրջանում Կալ նոս քաղաքի բնակիչները:
 Կ ա ր ա Ե ս — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից:
 Կ ա ր Ե ա ղ Ե — փյունիկյան Տյուրոսի գաղութը Աֆրիկայի հյուսիսային մերձ ծովյա շրջանում:
 Կ ա ր ի ա — լեռնային մարզ Փոքր Ասիայի հարավարևմտյան մասում:
 Կ ա ր մ ա ճ ի ա — մարզ Ասիայում:

Կ ար փ ա ս ի ս — սկյուբի
 Կ ե լ ի ն ն — Մեծ Փոռուցիայի մայրաքաղաքը:
 Կ ե լ ի ս ի ռ ի ա — Ասորիքի մի մասը, Լիրանանի և Անթիլիբանանի միջև, նրան-
 ջից արևելք:
 Կ ե ռ կ ա ս օ ռ — քաղաք Ազրիպոսում, Նեղոսի ձախ ափին:
 Կ ե ռ կ ե տ ճ ե ռ — ժողովուրդ ասիական Սարմաթիայում, Պոնտոսի ափերին:
 Կ ի ղ ա ռ ի ս — պարսից արքաների ապարոջը:
 Կ ի լ ի կ ի ա — մարզ Փոքր Ասիայի հարավարևելյան մասում:
 Կ ի մ ե ռ յ ա ճ Բ ո ս ֆ ո ռ — այժմյան Կերչի նեղուցը:
 Կ ի ռ ե ն ե — քաղաք և մարզ Հյուսիսային Աֆրիկայում:
 Կ լ ե ա ճ դ ռ ո ս — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից:
 Կ լ ի ո ֆ ա ռ ե ս — ղեկավար, որին Ալեքսանդր Մակեդոնացին ուղարկեց Պորի
 մոտ:
 Կ լ ի ո մ ի ն ե ս — Ալեքսանդր Մակեդոնացու համատարմատար անձը, որը
 տեսրիկում էր եզրիպոսում հարկի հավաքումը:
 Կ լ ի ո ճ ե ս — սիցիլիացի:
 Կ լ ի ո փ ի ա — Հնդկաստանի թագուհին:
 Կ լ ի տ ա ռ ֆ ո ս — պատմիչ, որն ուղեկցում էր Ալեքսանդր Մակեդոնացուն:
 Կ լ ի տ ո ս — զորահրամանատար և Ալեքսանդր Մակեդոնացու ընկերը:
 Կ յ յ ո ղ ն ո ս — զեռ Կիլիկիայում:
 Կ յ յ ո ռ ո պ ո լ ի ս — քաղաք Սոգդիանայում:
 Կ յ յ ո ռ ո ս Մ ե ծ — պարսից արքա (559—529 թթ. մ. թ. ա.):
 Կ ո ռ ա ռ — մարտասանցի, որը փախավ Ալեքսանդր Մակեդոնացու մոտ:
 Կ ո ս — Կարիայի ափամերձ շրջանում Սպորադյան կղզիներից:
 Կ ո վ կ ա ս ի Ա լ ի ֆ ա ճ ղ ռ ի ա (Քարուլի մոտ) — VII, III, 23 (տե՛ս Կոլ-
 կաս):
 Կ ո ռ ի կ յ ա ճ պ ո ռ ա կ — Կիլիկիայում ժողովուրդ Կորիկ քաղաքի մոտ:
 Կ ո փ ն ե — Արտաբազի որդին:
 Կ տ ե ս ի ո ս (IV դ. մ. թ. ա.) — հույն պատմիչ, Պարսկաստանի պատմության
 մասին աշխատության հեղինակը:
 Կ ր ա տ ե ռ ո ս — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից:
 Կ ռ ե ս ո ս — Լիդիայի արքան (560—546 թ. մ. թ. ա.), որին հաղթեց Կյուրոսը:
 Կ ռ ի տ ը ո լ յ ո ս — Ալեքսանդր Մակեդոնացու բժիշկը:

 Հ ա ղ ի ս — կղզի և քաղաք Իսպանիայում, Տյուրոսի գաղութը:
 Հ ա լ ի թ ն ե ռ — ժողովուրդ Պոնտոսի, այլ ոչ թե Կասպից ծովի մոտ, ինչպես
 կարծում է Կուրցիոսը:
 Հ ա լ ի կ ա ճ ա ս — Կարիայում դորիական գաղութ:
 Հ ա լ ի ս — Փոքր Ասիայի ամենամեծ զեռը (ներկայիս Կլլ Իրմակը):
 Հ ա վ ս տ ա ճ ո ս — դավաճան Ալեքսանդր Մակեդոնացու բանակում:
 Հ ա ռ պ ա լ յ ո ս — Բարելոնի սատրապը և Ալեքսանդր Մակեդոնացու զանձա-
 պետը:
 Հ ե գ լ յ ո ֆ ո ս — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից III, I,
 19, IV, V, 14:
 Հ ե գ լ յ ո ֆ ո ս — Պարմենիոնի ընկերը — VI, II, 22, 27:
 Հ ե լ ա ճ ի կ ա — Կլիտոսի բույրը, Ալեքսանդր Մակեդոնացու դայակը:

Հ ե լ ա ճ ի կ ո ս — զինվոր, որին Ալեքսանդր Մակեդոնացին պարզեցարևել է:
 Հ ե լ լ ե ս տ յ ո ճ ո ս — այժմյան Դարգանիլը:
 Հ ե կ ա տ ն ո ս — զինվոր, որին Ամինտոսը զուրս բերեց Մակեդոնիայից:
 Հ ե կ ա տ ո մ պ ո լ յ ո ս — (հունարեն՝ հարյուր դարպաս) — պարթևների զեռ-
 խավոր քաղաքը:
 Հ ե ռ ա կ ո ճ ե ս — Պարմենիոնի սպանողներից:
 Հ ե ռ կ ո լ յ ե ս — Յուպիտերի և Ալեմենեի որդին, առասպելական հերոս:
 Հ ե ռ մ ո լ ա յ ո ս — Սոպոլեսի որդին, Ալեքսանդր Մակեդոնացու կոհորտայի
 զինվորներից, Ալեքսանդր Մակեդոնացու զեռ զավազրույթյան մասնակից:
 Հ ե ռ ո ղ ո թ ո ս (484—425 թթ. մ. թ. ա.) — հույն պատմիչ, նկարագրել է
 հույն-պարսկական պատերազմը:
 Հ ե փ ե ս տ ի ո ճ ե ս — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից:
 Հ ի ղ ա ս պ — զեռ Հնդկաստանում:
 Հ ի ղ ա ռ ճ — Դարեհի հրամանատարներից:
 Հ ի ղ ռ ո ս ա (կամ Հիրաս) — Ակեսինի վտակը Հնդկաստանում, ներկայիս
 Բամիլի:
 Հ ի տ յ ս ի ղ ե ս — Մենեղեմոսի ընկերը:
 Հ ի ս տ ա ս պ — ազնվատոհմ պարսիկ, Պարսից թագավորության արքայական
 ղեկապետայի հիմնադիրը:
 Հ ի փ ա ս ի ս (կամ Հիփաս) — Ակեսինի արևելյան վտակը:
 Հ ն ղ ի կ ե ն ե ռ — Հնդկաստանի բնակիչները:
 Հ ն ղ կ ա ս տ ա ճ ի Ա լ ի ֆ ս ա ճ ղ ռ ի ա — IX, VIII, 8:
 Հ ռ ճ ի ա կ ա ճ գ ա ղ ո լ ք ն ե ռ — Ասիայում հույների գաղութները:
 Հ ռ ճ ի ա ց ի ն ե ռ — Հոնանտանում շուրս հիմնական ցեղերից մեկը:
 Հ ո ռ ա տ ո ս — մակեդոնացի:
 Հ ո ռ տ ա յ ա ց ի ն ե ռ — Պարսկաստանում բնակություն հաստատած էլլուսյա-
 կան ցեղ:
 Հ ո ս ղ ո ս ց ի ն ե ռ — Փոքր Ասիայի հարավարևմտյան մերձափնյա շրջանում
 գտնվող Հոսոս կղզու բնակիչները:

Մ ա գ ա գ — քաղաք Հնդկաստանում (այժմյան Բիշաբը):
 Մ ա գ ա կ — Դարեհի հրամանատարներից, Մեմփիսի փոխարքան:
 Մ ա գ ե յ — Դարեհի հրամանատարներից:
 Մ ա յ ա տ — պարսիկ:
 Մ ա լ ա ց ի ն ե ռ — Մալեյան ժողովուրդի բնակիչները, Քեսալիայի հարավային
 մերձափնյա շրջանում:
 Մ ա լ ե ռ — հնդկական ցեղ Լիդորոտ զեռի ափին:
 Մ ա յ ո ս — քաղաք Կիլիկիայում:
 Մ ա կ ե ղ ո ճ ի ա — երկիր Լյուրոսի և Թրակիայի միջև:
 Մ ա ճ ա պ — Կրկանի սատրապը:
 Մ ա ս ա գ ե տ ն ե ռ — Կասպից ծովի ափին բնակվող ռազմատենչ քոլովոր ցեղը:
 Մ ա ռ ա ք ո ս — քաղաք Հյուսիսային Փյունիկիայում:
 Մ ա ռ ա կ ե ղ — Սոգդիանայի զլխավոր քաղաքը (այժմյան Սամարղանդը):
 Մ ա ռ ա ս տ ա ճ — խոշոր երկիր Միջին Ասիայում:
 Մ ա ռ ա ս տ ա ճ ց ի ն ե ռ — Մարաստանի բնակիչները:

Մ ար գ ի ա ն ա — Պարթևաստանի և Սոգդիանայի միջև պարսկական Մար-
գինա մարզի մայրաքաղաքը: Հնարավոր է՝ այժմյան Մուրգասը:
Մ ար դ ե ր — առաջնապետ Կասպից ծովի հարավային ափամերձ շրջանում,
Հայաստանում և Պարսկաստանում բնակվող ռազմատենչ ցեղերի ընդհանուր
անունը:
Մ ար զ ա ճ ի ո ս — Գարեհ Հիստասպի փեսան, Հոնաստանի դեմ առաջին ար-
շավանքի ղեկավարը (492 թ. մ. թ. ա.):
Մ ար ե ն ո թ ի ս յ ա ն և ա ճ ի և — Եգիպտոսում, Նեղոսի գետաբերանում:
Մ ար ս ի ո ս — Փոյուզիայում Մեանդրոսի վտակը:
Մ ե ա ճ դ ռ ո ս — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից:
Մ ե գ ա լ ո պ ո լ ի ս ց ի ն և — հարավային Արկադիայում Մեգալոպոլիս քա-
ղաքի բնակիչները:
Մ ե դ ր — թրակիական ցեղ Ստրիմոն գետի արևմտյան ափին:
Մ ե դ ա ս — Հայաստանում Արաքս գետի ձախ վտակը, այժմյան Պոլլարը:
Մ ե թ լ մ և ց ի ն և — Լեոքոս կղզում Մեթիմա քաղաքի բնակիչները:
Մ ե լ ե ա գ ռ ո ս — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից:
Մ ե լ ա ն և — Գարեհի թարգմանիչը:
Մ ե մ ա ֆ ն և ն և — Յակսարտ գետի ափին բնակվող ասիական ժողովուրդ:
Մ ե մ և ճ — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից, Ասորիքի
փոխարքան IV, VIII, 11, IX, III, 21:
Մ ե մ և ճ Հ ո ղ ա ս ց ի — Ալեքսանդր Մակեդոնացու դեմ պատերազմի մա-
մանակ Գարեհի զորահրամանատարներից — III, I, 21, III, II, 1, III,
IV, 3, III, XIII, 14:
Մ ե մ և ճ և — Տիֆոնի և Ալբորայի որդին, Արևելյան Եթովպիայի առասպելա-
կան արքան, այսինքն՝ Ասորեստանի — V, VIII, 3:
Մ ե մ փ ի ս — Հին Եգիպտոսի մայրաքաղաքը Նեղոսի ձախ ափին:
Մ ե ն ա պ ի ս — Վրկանի սատրապը:
Մ ե ն և ղ ե մ ո ս — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից:
Մ ե ն և ո ս — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից:
Մ ե ն ի դ ո ս — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից:
Մ ե ն ի ս — քաղաք Բաբելոնիայում:
Մ ե ն ճ — արաքոսիացիների մոտ Ալեքսանդր Մակեդոնացու փոխարքան:
Մ ե ն տ ո ր — Թիմոդեոսի հայրը:
Մ ե ո թ ի ս յ ա ն և ա ճ ի և — այժմյան Ազովի ծովը:
Մ ե ո ռ ճ և — զինանոցի ղեկավար նշանակված պեղվատուն պատանի:
Մ ե ռ ի ս — հնդկական արքա:
Մ ե ռ ո ս — լեռ Հնդկաստանում:
Մ ի դ ա — Փոյուզիայի առասպելական արքան, թրակիական արքա Գորգոսի
որդին:
Մ ի և — հին պարսիկների մոտ Արևի աստվածը:
Մ ի ր ր ա կ ե ն — պարսիկ, որը հանձնեց Սարգեսը:
Մ ի ր ր և — պարսիկ, որը հանձնեց Սարգեսը:
Մ ի շ ա ճ ե ա ֆ — Մարզ Տիգրիսի և Եփրատի միջև:
Մ ի լ ե տ — Փոքր Ասիայի կարիական մերձափնյա շրջանում խոշոր հունական
քաղաք:

Մ ի լ ե տ ց ի ն և — Միլետի բնակիչները:
Մ ի ն դ և — Կարիայում նավահանգստային քաղաքի բնակիչները:
Մ ի ն և ը վ ա — (հույների մոտ՝ Աթենաս-Պալլաս) — գիտություն, արհեստ-
ների և պատերազմի հովանավորող աստվածուհին:
Մ ի տ ի լ ե ն ց ի ն և — Միտիլեն քաղաքի բնակիչները:
Մ ի տ ի լ և — Լեոքոս կղզու ամենամեծ քաղաքը:
Մ ո ն ի մ ո ս — Գարեհի մոտ լակեդեմոնացիների ուղարկած դեսպանը:
Մ ո ս ի ն և — Էվբոսիան Պոնտոսի մոտ բնակվող ցեղ:
Մ ս լ ի ն ո ս — Ալեքսանդր Մակեդոնացու զորավորը:
Մ ս ս ի կ ա ն և ն և — Ինդոս գետի ափին բնակվող ցեղ:

Յ ո ս տ ի ն ո ս — (II—III դդ. մ. թ.) — հոմեացի զորդ, մ.թ.ա. 1-ին դարի
վերջի հոմեացի սպամագիր Պոմպեյ Տրոգի մեզ չհասած «Փիլիպոսի պատ-
մությունը» աշխատության կրճատված շարադրանքի հեղինակը:

Ն ար ար գ ա ն — Գարեհի հրամանատարը:
Ն ա ս ա մ ո ն և ն և — Կիրենականից հարավ-արևմուտք ընկած Մեծ Սիրտիբայում
բնակվող ցեղ:

Ն ա վ ր ա կ ի — մարզ Սոգդիանայում, Օքսոս գետի մոտ:
Ն ե ա ռ ֆ ո ս — Ալեքսանդր Մակեդոնացու նավատարների հրամանատարը:
Ն ե դ ո ս — գետ Եգիպտոսում:
Ն ե պ տ ո ւ ն (հույների մոտ՝ Պոսեյդոն) — ծովի աստվածը:
Ն ի կ ա ն ռ ո ս — ազնվատուն պատանի մակեդոնական բանակում, հիդրիների
հեմ հակադրոհի առաջնորդը — VIII, XIII, 13:
Ն ի կ ա ն ր ո ս — Ալեքսանդր Մակեդոնացու զինվորներից — VI, VII, 15:
Ն ի կ ա ն ռ ո ս — Պարթևների որդին — III, IX, 7, IV, XIII, 27, V, XIII, 19,
VI, VI, 18, VI, IX, 13, 27:

Ն ի կ ար ֆ ի դ ո ս — Պերսեպոլիս ամրոցի Ալեքսանդր Մակեդոնացու նշանա-
կած հրամանատարը:

Ն ի կ ե ա — Ալեքսանդր Մակեդոնացու հիմնադրած քաղաքը Հնդկաստանի Հի-
դասպ գետի ափին:

Ն ի կ ո մ ա ֆ ո ս — Քեբալիների եղբայրը:
Ն ի կ ո ս տ ր ա տ ո ս — զինվոր Ալեքսանդր Մակեդոնացու արքայական կոնոր-
տային:

Ն ի ն ո ս — Շամիրամի ամուսինը, Ասորեստանյան թագավորության հիմնա-
դիրը:

Ն ի ս — հնդկական քաղաք, որ հավերժադարձը դաստիարակեցին Բաքոսին:
Ն ո ռ ա (կամ Օրա) — քաղաք Հնդկաստանում:
Ն ո ս մ ի դ ի ա — երկիր Հյուսիսային Աֆրիկայում, Կարթագենի և Մավրի-
տանիայի միջև:

Շ ա մ ի ր ա մ — Ասորեստանի կրոնաառասպելական թագուհին:
Շ ո շ ի դ ա ր պ ա ն և ն և — նեղ անցում ութների մարզի և Պարսկաստանի միջև
(այժմյան Կալա Սեֆիդը):

Շ ո ղ → Շ ո շ ս ս ա ն ի (Susan) գլխավոր քաղաքը (այժմյան Խոսդրատանը), պարսից արքաների աթոռանիստը:

Պ ա լ ե խ յ ու ռ ո ս (Հին Տյուրսը) — քաղաք Փյունիկիայի մերձափնյա շրջանում:

Պ ա մ փ ի լ ի ա — մարդ Փոքր Ասիայում, Լիկիայի և Կիլիկիայի միջև:

Պ ա ս ս ա — թեմալացի:

Պ ա ս ա ը գ ա ղ ֆ — Պարսկաստանի Հնագույն մայրաքաղաքը, Պերսեպոլիսի մոտ:

Պ ա ս ի ա լ գ ռ ի ս — Պարսից ծոցը թափվող գետ (այժմյան Կարունը):

Պ ա վ ս ա ն ի ո ս — Փիլիպոս Մակեդոնացուն սպանողը:

Պ ա վ ս ի պ ո ս — Դարեհի մոտ լակեդեմոնացիների կողմից ուղարկված դեսպան:

Պ ա տ ա լ ի ա — Հնդկական ցեղ:

Պ ա տ ռ ո ճ ե ս — Դարեհի Հույն զինվորների հրամանատարը:

Պ ա ռ ա պ ա մ ի ս ա ղ ճ ե ռ — Պարսկաստանի բնակիչները:

Պ ա ռ ա պ ա մ ի ս — Բակարիայից հարավ գտնվող լեռնաշղթա, որտեղից հասում են Օքսոսը և Ինդոսը (ներկայիս Հինդուկուշը):

Պ ա ռ ե ա ա կ — մարդ Մարաստանի և Պարսկաստանի միջև:

Պ ա ռ բ լ ա ս տ ա ն — սկյութական երկիր Կասպից ծովից հարավ:

Պ ա ռ բ լ ճ ե ռ — Պարթևաստանի բնակիչները:

Պ ա ռ մ ճ ի ղ ո ճ — Ալեքսանդր Մակեդոնացու զորահրամանատարներից:

Պ ա ռ ս կ ս տ ա ն — մարդ Պարսից ծոցի մոտ (ներկայիս Ֆարսոստանը):

Պ ա փ լ ա գ ո ճ ի ա — մարդ Փոքր Ասիայում, Բյութանիայի և Պոնտոսի միջև:

Պ ա փ լ ա գ ո ճ ց ի ճ ե ռ — Պափլազոնիայի բնակիչները:

Պ ե լ ա պ ո ճ ե ս — Հարավային Հունաստանը:

Պ ե լ ա զ ի ո մ — քաղաք Եգիպտոսի հարավում, Նեղոսի ղելտայի արևելյան մասում:

Պ ե ղ ի ա — մարդ Հյուսիսային Մակեդոնիայում:

Պ ե ղ ճ ե ռ — Պոնիայի բնակիչները:

Պ ե ղ ղ ի կ ո ս — Ալեքսանդր Մակեդոնացու գլխավոր զորահրամանատարներից—III, IX, 7.IV, III, 1.IV, XVI, 32.VI, VIII, 17.VII, VI, 19, 21.VIII, I, 45, 48.VIII, X, 2.VIII, XIV, 5, 15.IX, I, 19.X, VI, 4-9, 17-18, 20.X, V, 4, X, VI, 16, X, VII, 7, 8, 16, 18-21, X, VIII, 1-6, II, XII, 22, 23.X, IX, 9, 7-10, 18, 20, X, X, 1, 4:

Պ ե ղ ղ ի կ ո ս — մակեդոնական արքա —VII, XI, 26:

Պ ե ռ ի լ ա յ ո ս — Պերդիկասի մոտ Արիդեոսի կողմից ուղարկված դեսպան:

Պ ե ռ ս ե պ ո լ ի ս — Պարսկաստանի մայրաքաղաքը, որը հիմնադրել է Դարեհ I-ը:

Պ ի բ ո ճ ե ս — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից:

Պ ի ս ի ղ ճ ե ռ — Փոքր Ասիայի հարավ-արևմտյան մասում գտնվող Պիսիդիա մարզի բնակիչները:

Պ ի ռ ա մ ո ս — գետ Արևելյան Կիլիկիայում:

Պ լ ա տ ո ճ — աթենացի, Կիլիկիայում հավաքազրկված զորքի հրամանատարը:

Պ լ ի ճ ի ո ս Ա վ ա գ (23 կամ 24-79 թթ.) հռոմեացի գրող, ռեանական պատմություն հանրագիտարանային աշխատություն հեղինակը:

Պ լ ու տ ա ռ ֆ ո ս (մոտավորապես 46-127 թթ.) Հույն գրող, շուրաֆուս կենսագրությունների հեղինակը:

Պ ճ ի ք ա գ ռ — Կիպրոսի արքան, Ալեքսանդր Մակեդոնացու դաշնակիցը:

Պ ո յ ե մ ո ճ ե ս — Անդրեմենոսի որդին, Սիմիոսի և Ամինտոսի եղբայրը—VII, I, 10, VII, II, 1:

Պ ո յ լ մ ճ ե ո ս — անձ, որին Ալեքսանդր Մակեդոնացին հանձնարարեց հսկել Նեղոսի շյուղները—IV, VIII, 4:

Պ ո լ ի ղ ա մ ա ճ տ ո ս — Պարմենիոսի մտերիմ ընկերը:

Պ ո լ ի պ ե ռ ֆ ո ճ ե ս — Ալեքսանդր Մակեդոնացու զորահրամանատարը, հետագայում Մակեդոնիայի կառավարիչը:

Պ ո լ ի ս ա ռ ա տ ո ս — մակեդոնացի:

Պ ո լ ի տ ի մ ճ ե տ ո ս — գետ Սոզոիանայում:

Պ ո լ ու լ կ ե ս — տե՛ս Կաստորեն:

Պ ո ճ տ ա կ ա ճ ծ ո վ — այսինքն էլիքսինյան Պոնտոս, այժմյան Սև ծովը:

Պ ո ռ — Փենջաբը կառավարող հնդկական արքա:

Պ ա ղ ո մ ճ ե ո ս — Հաղոսի որդին, Ալեքսանդր Մակեդոնացու զորահրամանատարը, հետագայում Եգիպտոսի արքան:

Պ ռ ա ս ի ճ ե ռ — Գանգեսի ստորին Հոսանքում բնակվող հնդկական ցեղ:

Պ ռ լ ս տ ճ ե ռ — Հնդկական ցեղ:

Պ ռ ո մ ճ բ լ ս — աթոսան, որը մարզկանց կրակ նվիրեց:

Պ ս ճ ի ա ջ ի ճ ե ռ — Կարթագենի բնակիչները:

Պ կ կ ե ս տ ե ս — Եգիպտոսի փոխարքան—V, III, 4:

Պ կ կ ե ս տ ե ս — ղիճվոր, որն օրսիդրակների հետ պատերազմի ժամանակ փրկեց Ալեքսանդր Մակեդոնացուն—V, V, 14, 17, 18:

Պ կ ղ ո լ ա յ ո ս — Ալեքսանդր Մակեդոնացու թիկնապահներից:

Ռ ե ո մ ի բ ռ — Դարեհի հրամանատարներից:

Ռ ե ս ա կ — սատրապ:

Ռ ի ղ ա զ ճ — գետ Պարթևաստանում, ուր լցվում է Զիորեսը:

Ռ ա ֆ ս ա ն ա — Օքսիարտի դուստրը, Ալեքսանդր Մակեդոնացու կինը:

Ս ա ռ ա ռ կ ճ ե ռ — Հնդկական ցեղ:

Ս ա գ ա ռ ի ս (Սանգարիք) — գետ Բյութանիայում, որը լցվում է Սև ծովը (ներկայիս Սակարյան):

Ս ա գ լ ե ռ — ցեղ կամ մարդ Սոզոիանիայում:

Ս ա կ լ ե ռ — սկյութական բռնվոր ցեղ, մասագետներից հարավ-արևելք:

Ս ա մ ա ռ ի տ ճ ե ռ — Պաղեստինի Սամարի մարզի բնակիչները:

Ս ա մ ա ֆ ո — Հնդկական արքա:

Ս ա մ ր ի — հնդկական արքա:

Ս ա մ ը ռ ա կ յ ա ճ գ ա ղ տ ճ ա ծ ի ս ու ը յ ու ճ ե ռ — գաղտնածիտություններ էգեյան ծովի Սամոթրակե կղզում, Թրակիայի մերձափնյա շրջանում:

Ս ա տ ա կ (կամ Սարաք) — Դարեհի հրամանատարը Եգիպտոսում:

Ս ա տ ի բ ա ը գ ա ճ — արիստոսների սատրապը:

Ս ա տ ռ ա պ ա տ — պարսկական հեծելազորի հրամանատարը:

Ս ա տ ու ռ ճ — Հին իտալական աստված, նույնացվել է Հունական Փրոնոսի հետ:

Ս ա ռ ղ ե ս — Վրդեայի մայրաքաղաքը:
 Ս ա ռ մ ա տ Ե ե ռ — Հնագույն ազգարնակչություն արեւելեանքական ցածրադիր վայրում:
 Ս ի բ ի ռ ա — Գեղրոսիայի փոխաբերան:
 Ս ի ռ ո ճ Ե ե ռ — Հնդկական ցեղ:
 Ս ի ղ ո ճ — Փյունիկյան հնագույն քաղաքը:
 Ս ի մ ա Բ ո ս — մակեդոնացի ազնվատուն պատանի, հիդրիկների ղեմ հակա-
 գրոհի ղեկավար:
 Ս ի մ ի ո ս — Անդրամենոսի որդին:
 Ս ի Ե ո ս յ ց ի Ե ե ռ — Պափլագոնիայում Սինոպե (այժմյան Սինոք) քաղաքի
 բնակիչները:
 Ս ի ս Ե Ե կ ա մ Ս ի ս Ե Ե — պարսիկ Ալեքսանդր Մակեդոնացու բռնակում:
 Ս ի ս ի զ ա մ ք ի ս — Դարեհի մայրը:
 Ս ի ս ի մ ի ք ռ — Նավթակի սողաքի սատրապը:
 Ս ի ս ո կ ո ս տ ո ս — անձ, որին Ալեքսանդր Մակեդոնացին հանձնարարեց
 Ահորնի պաշտպանութունը:
 Ս ի տ ա յ լ կ ե ս — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից:
 Ս ի տ ա կ Ե Ե յ ա Ե ս ա տ ռ ա տ յ ու ի յ ու Ե — քաղվածամարդ քաղաք Բարելու-
 նիայում:
 Ս ի ռ ա կ ու զ ա — խոշոր քաղաք Սիցիլիայում:
 Ս ի ռ տ ի Բ Ե ե ե ռ — Հյուսիսային Աֆրիկայի երկու ժովածոցների՝ Մեծ և Փոքր
 Սիրտքանների միջև բնակվող ցեղ:
 Ս ի փ Ե ո ս — Կիլիկյան կղզիներից:
 Ս կ ի Ե ի տ Ե ե ե ռ — արաբական քոչվոր ցեղեր՝ եթովպիացիներ:
 Ս ո զ ղ Ե ե ռ — Սողգիանայի բնակիչները:
 Ս ո զ ղ ի ա Ե ա — մարդ Օթսոսի և Յակսարտի միջև:
 Ս ո յ Ե — ժովափնյա քաղաք Կիլիկիայում:
 Ս ո կ ռ ա տ Ե ս — Կիլիկիայի սատրապը:
 Ս ո ս յ ո յ Ե ս — Հերմոլայոսի հայրը:
 Ս ո ս տ ռ ա տ ո ս — Ամինտոսի որդին, Ալեքսանդր Մակեդոնացու արքայական
 կոհորտայի ղեկավորներից:
 Ս ո փ ի տ — տեղացի հնդկական արքայիկներից:
 Ս ս ի տ ա մ Ե Ե — Բեսի մերձավորներից:
 Ս ս ի տ ա Բ — Պորի կղզալքը:
 Ս տ ա մ Ե Ե — Բարելունի սատրապը:
 Ս տ ա ս ա Ե ո ռ Ե ս — զրանգների փոխարքան:
 Ս տ ա տ ի ռ ա — Դարեհի աղջիկը. Արիանոսը նրան անվանում է Բարսինա:
 Ս տ ի զ ո ս — զետ Հյուսիսային Արկադիայում. նրա չուրը համարվում էր
 Բուենավոր (այժմյան Մավրոներոն):
 Ս տ ռ ա ք ո ճ (մոտավորապես 63 թ. մ. թ. ա. — 20 թ. մ. թ.) — հույն խո-
 շարազույն աշխարհադրագետ:
 Ս տ ռ ա տ ո ճ Ե ս — Արադ կղզու արքան — IV, I, 6:
 Ս տ ռ ա տ ո ճ Ե ս — Սիդոնի արքան — IV, I, 16:
 Ս ու զ ի ա — Շոշ:
 Ս ու զ ի ա ց ի Ե ե ե ռ — Շոշի բնակիչները:
 Ս ու Ե ի ո ճ — Ատիկայի հարավ-արևելյան հովանդանը:

Ս Ե Ր Ե ս — օդրիսների առաջնորդը:
 Վ Ր կ ա Ե ա ց ծ ո վ — ներկայիս Կասպից ծովը:
 Վ Ր կ ա Ե — մարդ Իրանի հյուսիս-արևելյան մասում, Պարթևաստանից հյուսիս:
 Վ Ր կ ա Ե ց ի Ե ե ե ռ — Վրկանի բնակիչները:
 Տ ա ի ս — աթենացի հետերա:
 Տ ա Ե ա ի ո ի Ա լ Ե Բ ա Ե ղ Ր ի ա (ներկայիս Լենինաբադը) — VII, VI, 25:
 Տ ա Ե ա ի ս — Կուրցիոսի մոտ սխալմամբ նույնացված է Յարսարտի (այժմ
 Սիրդարիա) հետ:
 Տ ա ս յ ու ռ Ե ե ե ռ — Կասպից ծովի մոտ, զերբիկների ու վրկանցիների երկրի
 միջև բնակվող ասիական ցեղ:
 Տ ա վ ռ ո ճ — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից:
 Տ ա վ ռ ո ս — լեոնաշղթա Միջին Ասիայում:
 Տ ա ռ ս ո ճ — Կիլիկիայի գլխավոր քաղաքը:
 Տ ա Բ ս ի լ Ե ե ե ռ (հայր և որդի) — հնդկական արքաներ:
 Տ Ե Ե Ե ղ ո ս — կղզի Տրովադալի մոտ, Հելլենսպոնտոսի մոտակայքում:
 Տ Ե Ե ս ո ս — Պերսեպոլիսում հույն զերի:
 Տ Ե Ր ի ո յ ի ա — պարսպամիսազների սատրապը:
 Տ Ե Ր մ ո ղ ո ճ տ — զետ Պոնտոսում, որը լցվում է էվթսիսյան Պոնտոսը:
 Տ ի զ Ր ի ս — Ասորեստանը Միջագետքից բաժանող զետ:
 Տ ի մ ա զ Ե Ե ե ս — պատմիչ, որն ուղեկցել է Ալեքսանդր Մակեդոնացուն:
 Տ ի Ր ի ղ ա տ — Պերսեպոլիսում Դարեհի արքայական զանձարանի պահպանը:
 Տ ի Ր ի ո տ — ներքինի:
 Տ ի փ ո ճ — հրաշունչ հսկա, որը բնակվում էր քարանձավում — III, IV, 10:
 Տ ի փ ո ճ — Մենեղմոսի հայրը — IV, VIII, 3:
 Տ յ ու ռ ո ս — Փյունիկիայի հնագույն մայրաքաղաքը:
 Տ յ ու ռ ո ս ս յ ի Ե ե ե ռ — Տյուրոսի բնակիչները:
 Տ ռ ա ս կ Ե զ ո ս — քաղաք Կասպոզիկյան Պոնտոսում, էվթսիսյան Պոնտոսի
 մոտ:
 Տ Ր ի Ր ա լ Ե ե ե ռ — Բրակիական ցեղ Մեդիայում:
 Տ Ր ի ս յ ո յ ի ս — ժովափնյա քաղաք Հյուսիսային Փյունիկիայում:
 Տ ռ ո զ լ ո ղ ի տ Ե ե ե ռ — կիսավայրի ցեղ Եթովպիայում, Արաբական ծոցի
 մերձափնյա շրջանում:
 Ռ ի Բ ս Ե ռ — Շոշաստանում՝ Պարսկաստանի սահմանի մոտ բնակվող ցեղ:
 Փ ա լ Ե կ ո ս — բալակների առաջնորդը:
 Փ ա ճ Ե ա Ր ա զ — Դարեհի հրամանատարներից:
 Փ ա ս ի ս — զետ Կոլխիդայում, որը լցվում է էվթսիսյան Պոնտոսը (ներկայիս
 Ռիոնը):
 Փ Ե զ Ե յ — հնդկական արքան:
 Փ ի լ ի պ ո ս — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից — IV, XIII, 23:
 Փ ի լ ի պ ո ս — Առափուկեսի որդին, Լիսիմաքոսի եղբայրը — VIII, II, 35:
 Փ ի լ ի պ ո ս Ա Ե ղ Ր Ե ե ս — տե՛ս Արիդես:

Փ ի ի լ յ ո ս Ա Բ ար ւ ց ց ի — Ալեքսանդր Մակեդոնացու թշնամին — III, VI, 1, 4, 9, 14, 17. IV, VI, 7. VI, X, 34:

Փ ի ի լ յ ո ս — Բեսալական հեծյալների հրամանատարը — IV, XIII, 29. VI, VI, 35:

Փ ի ի լ յ ո ս — Հնդկաստանի մի մասի սատրապը — X, 1, 20:

Փ ի ի լ յ ո ս — մակեդոնական արքա, Ալեքսանդրի հայրը (359—336 թթ. մ. թ. ա.) — III, VII, 11. III, X, 7. IV, 1, 2. IV, VII, 27. IV, X, 3. IV, XV, 8. V, IX, 1. VI, IV, 25. VI, V, 2. VI, XI, 23. VII, 1, 3. VIII, 1, 20. 33. IX, VI, 25. IX, VIII, 22. X, 11, 23. X, V, 30:

Փ ի լ ո ս ե ս — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարը, Տյուրոսի շրջակա մարզի փոխարքան — IV, V, 9:

Փ ի լ ո ս ե ս — անձ, որին հանձնարարված էր կիլիկիայի կառավարումը — X, X, 2:

Փ ի լ ո ս ե ս Ա վ գ ե ո ս — Ալեքսանդր Մակեդոնացու կողմից պարզկատարվել է խրզախություն համար — V, 11, 5:

Փ ի լ ո ս ե ս — զինվոր Ալեքսանդր Մակեդոնացու արքայական կոհորտայից — VIII, VI, 9:

Փ ի լ ո ս ե ս — Պարմենիոնի որդին, որը զավաճանեց Ալեքսանդր Մակեդոնացուն — IV, XIII, 26. V, 11, 15. V, IV, 20, 30. VI, VI, 19. VI, VII, 18. ... VI, VII, 27. VI, XI, 40. VII, 1, 1. VIII, VII, 4. VIII, VIII, 5:

Փ յ ո ս ն ի կ ի ա — երկիր Միջերկրական ծովի արևելյան ափին:

Փ ո յ ո ս զ ի ա — Փոքր Ասիայի արևմտյան մասում գտնվող երկիրը, որը բաժանված էր Մեծ և Փոքր Փոյուզիաների:

Փ ր ա դ ա տ — տապուրների փոխարքան:

Փ ո յ ո ս զ ի ա ց ի ն Ե ր — Փոյուզիայի բնակիչները:

Փ ար և տ ո ս — Միտիլենի զուգի կանգնած աթենացի, որը զրել է Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը:

Փ ար ի ղ Ե մ ո ս — աթենացի, որին Ալեքսանդր Մակեդոնացին վտարեց Աթենքից:

Փ ար ո ս — զինվորական հրամանատար Ալեքսանդր Մակեդոնացու արքայական կոհորտայից:

Փ Ե ր ա յ ի ն — նիկոմաքոսի եղբայրը:

Փ Ե ն ո ս — Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարներից — III, IX, 7. IV, XIII, 28. IV, XVI, 32. V, IV, 20, 30. VI, VIII, 17. VI, IX, 30. VI, VIII, 17. VI, IX, 30. VI, XI, 10, VIII, 1, 1. VIII, X, 22. VIII, XII, 1 ...

Փ Ե ն ո ս — անձ, որն Ալեքսանդր Մակեդոնացուն տեղեկացրեց Եվրոպայի և Ասիայի իրազրույթյան մասին — X, 1, 43:

Փ Ե ր ո վ Ե ն յ ա ն Ե ա կ ա տ ա մ ա ր Ե ա — Բեռովիայի Փերովնև քաղաքում Փիլիպոս Ալեքսանդրացու և հույների ճակատամարտը (338 թ.):

Փ ի ո ս — կղզի էգեյան ծովի հունական ափամերձ մասում, Սամոսի և Լեբոսի միջև:

Փ ո ս ս յ — գետ Մարաստանում և Շոշաստանում:

Փ ո ս Ե ն Ե ր — Շոշաստանը և Մարաստանը բաժանող լեռնալին տարածքի բնակիչները:

Փ ս ն Ե ի յ — վայր Սողդիանայի հյուսիս արևմտյան մասում:

Ք ս ն Ե ո փ ի լ — անձ, որին Ալեքսանդր Մակեդոնացին հանձնարարեց Շոշի ամրոցի տնօրինությունը:

Ք ս ն Ե ո Ֆ ո ն Ե (մոտավորապես 430—355 թթ. մ. թ. ա.) — հույն պոռչ, Արեւ վելքի մասին տեղեկություններն ընդհանրապես են նրա «Անարասիս» ստեղծագործության մեջ:

Ք ս Ե ր Բ ս Ե ս — պարսից արքա (486—465 թթ. մ. թ. ա.):

Ք ր ի ո լ ա յ ո ս — տիրան Մեթիմնայում:

Օ ղ ր ի ս Ե Ե ր — Բրակիական ցեղ Հերոս գետի վերին հոսանքում:

Օ զ ի Ե — ազնվատոհմ պարսիկ:

Օ լ ի մ յ ի ա ղ ա — Ալեքսանդր Մակեդոնացու մայրը, Փիլիպոսի կինը:

Օ լ ի ն Ե ր ա ց ի — Օլինթի բնակիչ, քաղաք Փաղկիդեկոնում, Տորոնեյան ծոցում (նկատի ունի Կալիսթենեսին):

Օ մ փ ի ս — Տաքսիլի որդին, Հնդկաստանի արքան:

Օ Ե ն ս ի կ ր ի տ ո ս — Ալեքսանդր Մակեդոնացուն ուղեկցող պատմիչ, նավատորմի հրամանատար:

Օ Ե ն մ ա ս ո՞ ր ի ղ Ե ս — զեհպան, որը Դարեհի մոտ է ուղարկվել լակեդեմոնացիների կողմից:

Օ Ե Գ ի — անհայտ քաղաք Ասորիքում:

Օ վ ի ղ ի ո ս (43 թ. մ. թ. ա. — 17 թ. մ. թ.) — հռոմեացի բանաստեղծ, «Անտամորֆոզներ» պոեմի հեղինակը:

Օ վ կ ի ա Ե ո ս — ըստ հին հույների ամբողջ Նրկիրը շրջհասող ծով:

Օ ր Ե ս Ե Ե Ե ր — էպիրոսում մոլոսների ցեղի ճյուղը:

Օ ր ի տ Ե Ե Ե ր — հնդկական ցեղ Գեղրոսիայում:

Օ ր Ե ն — գետ:

Օ ր Ե ն տ Ե ր ա տ — պարսիկների հրամանատար:

Օ ր ս ի լ — պարսիկ, որը Բեսից փախավ:

Օ ր ս ի Ե — Պասարգադիսի սատրապը:

Օ Բ ս ա Բ Ե — Ալեքսանդր Մակեդոնացու զեպպանը, որն ուղարկվեց նավթակի՝ հանձնվելու առաջարկով:

Օ Բ ս ա Բ Ե — Դարեհի եղբայրը:

Օ Բ ս ի ա Ե ա — պարսիկ, բակտրիացիների առաջնորդը, Ռոքսանայի հայրը, Բեսի վստահված անձը:

Օ Բ ո ս — գետ Միջին Ասիայում (այժմյան Տեջենաքը) — VII, X, 15:

Օ Բ ո ս — Դարեհի կողմանի որդին — VI, XI, 6. IV, XIV, 22:

Օ Բ ո ս — պարսից արքա Արտաքսերքես III-ի մականունը (359—338 թթ. մ. թ. ա.) — III, XII, 12, 13. VI, II, 7. VI, IV, 25. VI, V, 2. X, V, 23:

Օ Բ ս ի ղ ա տ — պարսիկ:

Օ Բ ս ի ղ ր ա կ Ե Ե Ե ր — ցեղ Հնդկաստանում:

Օ Բ ս ո ս — գետ Միջին Ասիայում (այժմյան Ամուդարյան):



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՐԻԱՆՈՍ. «ԱԼԵՔՍԱՆԻՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ»

Առաջաբան	3
Գիրք առաջին	8
Գիրք երկրորդ	53
Գիրք երրորդ	89
Գիրք չորրորդ	129
Գիրք հինգերորդ	171
Գիրք վեցերորդ	206
Գիրք յոթերորդ	241
ԲՈՒՅՈՒՍ Ք. Կ. «ԱԼԵՔՍԱՆԻՐ ՄԱԿԵԴՈՆԱՅՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»	277
Գրքեր I և II (բովանդակության համառոտ շարադրանքը)	278
Գիրք III	279
Գիրք IV	310
Գիրք V	369
Գիրք VI	409
Գիրք VII	444
Գիրք VIII	486
Գիրք IX	535
Գիրք X	571

ԱՐԻԱՆՈՍ. «ԱԼԵՔՍԱՆԻՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ»

ՀԱՎԵԼՎԱԾ	
Աշխարհադրական և էթնիկական անունների համառոտ բառարան	600
Անունների և ածնանունների համառոտ բառարան	617
Հունական օրացույց	623
Հունական շափի միավորները	623
ԲՈՒՅՈՒՍ Ք. Կ.	
«Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը»	
Ծանոթագրություններ	624
Անվանացանկ	636

ԱԼԵՔՍԱՆԻՐ ՄԱԿԵԴՈՆԱՅԻ

АЛЕКСАНДР МАКЕДОНСКИЙ

(На армянском языке)
Ереван «Айастан» 1987

Հրատ. խմբագիր՝ Ն. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Եկարիչ՝ Խ. Ս. ՀԱԿՈՐՅԱՆ
Գեղ. խմբագիր՝ Ս. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ
Տեխն. խմբագիր՝ Գ. Բ. ՆԱԶԱԳԵՏՅԱՆ
Վերատպող սրբագրիչ՝ Ա. Ա. ՀԱԿՈՐՋԱՆՅԱՆ

ИБ 4473

Հանձնված է շարվածքի՝ 16.12.1986 թ.: Ստորագրված է տպագրության
23.03.1987 թ.: Ֆորմատ՝ 84×108¹/₃₂: Քուղի տպագր.՝ № 2: Տարածեսակ՝
«Գրքի սովորական»: Տպագրություն՝ բարձր: 34,44 սլայմ. տպագր. մամ., 33,31
հրատ. մամուլ+1 ներդիր: Տպարանակ՝ 50000: Առաջին թողարկում (1—
30000): Պատվեր՝ 2068: Գինը՝ 4 ռ. 20 կոպ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Իսահակյան 28:

Издательство «Айастан», Ереван-9, ул. Исаакяна, 28.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի
պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան-10, Ալավերդյան 65:

Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и
книжной торговли Арм. ССР, Ереван-10, ул. Алавердяна, 65.